Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

1295

1-720

1.2.

2010

225
Ա-76

ՆՈՐ
ԿՏԱԿԱՐԱՆ

ՏԵԱՌՆ ՄԵՐՈՑ
ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

ՀԱՆԴԵՐՁ ԵԱՆՕԹՈՒԹԵԱՄԲ ԸՍՏ ՀԵԼԼԵՆԱԿԱՆ ՐՆԱԳՐԻՆ

ԱՐԴԵԱՄԲԲ ԵՒ ԾԱԽԻԽԲ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ ԳՐՈՑ

Հրատարակեալ ժողովոյ պաշտօնեից հաստատակաց կրթուխնեան

Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ
Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱԿՈԲ ՊՕՅԱՃԵԱՆ
1875

2001

43282 - ա.հ.

ՊԵՏԱԿԱՆ ԿՐԱԴԱՐԱՆ
ГОС. БИБЛИОТЕКА
ZUUՈ-Арм ССР
им. А. Мясн
ՍՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

35052-62

ՅԱՆԿ

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ

			Էջ
	ԱԻՏԱՐԱՆ		
1.	,,	ըստ Մատթէոսի . . .	1
2.	,,	ըստ Մարկոսի	88
3.	,,	ըստ Ղուկասու	143
4.	,,	ըստ Յովհաննու	233
5.	Գործք առաքելոց		302
	ԹՈՒՂԹ ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՑՆ		
6.	,, ,,	առ Հռովմայեցիսն . . .	395
7.	,, ,,	առ Կորնթ. առաջին . .	434
8.	,, ,,	առ Կորնթ. երկրորդ . .	471
9.	,, ,,	առ Գաղատացիսն . . .	496
10.	,, ,,	առ Եփեսացիսն	509
11.	,, ,,	առ Փիլիպեցիսն	522
12.	,, ,,	առ Կողոսացիսն	531
13.	,, ,,	առ Թեսաղ. առաջին . .	541
14.	,, ,,	առ Թեսաղ. երկրորդ . .	549
15.	,, ,,	առ Տիմոթէոս առաջին .	554
16.	,, ,,	առ Տիմոթէոս երկրորդ .	565
17.	,, ,,	առ Տիտոս	573
18.	,, ,,	առ Փիլիմոն	578
19.	,, ,,	առ Եբրայեցիսն	580

	ԹՈՒՂԹ ԿԱԹՈՒՂԻԿՆԱՑՑ			Էջ
20.	,,	,,	Յակովբոս	609
21.	,,	,,	Պետրոսի առաջին	620
22.	,,	,,	Պետրոսի երկրորդ	631
23.	,,	,,	Յովհաննու առաջին	638
24.	,,		Յովհաննու երկրորդ	649
25.	,,		Յովհաննու երրորդ	651
26.	,,	,,	Յուդայի առաքելոյ	652
27.	Յայտնութիւն		Յովհաննու	657

ԱԻԵՏԱՐԱՆ

ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ

Գ Լ· Ա

1 Գիրք ծննդեան Յիսուսի Քրիստոսի որդւոյ Դաւ-
2 թի որդւոյ Աբրահամու ։ Աբրահամ ծնաւ զԻսա-
հակ . Իսահակ ծնաւ զՅակովբ . Յակովբ ծնաւ
3 զՅուդա և զեղբարս նորա . Յուդա ծնաւ զՓարէս
և զԶարա ի Թամարայ . Փարէս ծնաւ զԵզրոմ .
4 Եզրոմ ծնաւ զԱրամ . Արամ ծնաւ զԱմինադաբ .
Ամինադաբ ծնաւ զՆաասոն . Նաասոն ծնաւ
5 զՍաղմոն . Սաղմոն ծնաւ զԲոոս ի Հռաքաբայ .
Բոոս ծնաւ զՈվբէթ ի Հռութայ . Ովբէթ ծնաւ
6 զՅեսսէ . Յեսսէ ծնաւ զԴաւիթ արքայ . Դաւիթ
7 արքայ ծնաւ զՍողոմոն ի կնոջէն Ուրիայ . Սող-
ոմոն ծնաւ զՐոբովամ . Րոբովամ ծնաւ զԱբիա .
8 Աբիա ծնաւ *զԱսափ . Ասափ՝ ծնաւ զՅովսափատ .
Յովսափատ ծնաւ զՅովրամ . Յովրամ ծնաւ զՈզիա .
9 Ոզիա ծնաւ զՅովաթամ . Յովաթամ ծնաւ զԱքազ .
10 Աքազ ծնաւ զԵզեկիա . Եզեկիա ծնաւ զՄանասէ .
Մանասէ ծնաւ զԱմոն . Ամոն ծնաւ զՅովսիա .
11 Յովսիա ծնաւ զՅեքոնիա և զեղբարս նորա առ գե-

* ի Յոյն՝ զԱսա . Ասա

12 բաբելացւոց ։ Յետ դերութեանն Բաբելացւոց Ծնաւ Ջեբոնիա զՍաղաթիէլ. Սաղաթիէլ
13 Ծնաւ զՋօրաբաբէլ. Ջօրաբաբէլ Ծնաւ զԱբիուդ.
Աբիուդ Ծնաւ զԵղիակիմ. Եղիակիմ Ծնաւ զԱզովր.
14 Ազովր Ծնաւ զՍադովկ. Սադովկ Ծնաւ զԱքին.
15 Աքին Ծնաւ զԵղիուդ. Եղիուդ Ծնաւ զԵղիազար.
Եղիազար Ծնաւ զՄատթան. Մատթան Ծնաւ զՅա-
16 կովբ. Յակովբ Ծնաւ զՅովսէփ զայրն Մարիամայ
*որում խոստացեալ զՄարիամ կոյս՝. Յորմէ Ծնաւ
17 Յիսուս, որ անուանեցաւ Քրիստոս ։ Արդ ամենայն
ազգք ՅԱբրահամէ մինչեւ ի Դաւիթ՝ ազգք չո-
րեքտասանք. և ի Դաւթէ մինչեւ ի գերութիւնն
Բաբելացւոց՝ ազգք չորեքտասանք. և ի գերու-
նէն Բաբելացւոց մինչեւ ի Քրիստոս ազգք չորեք-
տասանք ։

18 Եւ Յիսուսի Քրիստոսի Ծնունդն էր այսպէս. խո-
սեցեալ զմայր նորա Մարիամ Յովսեփու, մինչչեւ
եկեալ առ միմեանս՝ գտաւ յղացեալ ի Հոգւոյն
19 Սրբոյ ։ Եւ Յովսէփ այր նորա, քանզի արդար էր,
և ոչ կամէր առաւել զնա, խորհեցաւ լուծանել
20 զձառնել զնա ։ Եւ մինչդեռ նա զայս ածէր զմտաւ,
ահա հրեշտակ Տեառն ի տեսլեան երեւեցաւ նմա և
ասէ, Յովսէփ որդի Դաւթի, մի երկնչիր առնուլ
առ քեզ զՄարիամ կին քո. քանզի որ ի նմանէ
21 ծնեալ է՝ ի Հոգւոյն Սրբոյ է ։ Ծնցի որդի, և կո-
չեսցես զանուն նորա Յիսուս. զի նա փրկեսցէ զժո-
22 ղովուրդ իւր ի մեղաց իւրեանց ։ Այլ այս ամե-
նայն եղեւ, զի լցցի որ ասացաւն ի Տեառնէ ի ձեռն

* Ի Յայն էր ։

23 Եմայեայ մարգարէի. Ահա կոյս յղասցի և ծնցի
որդի, և կոչեսցեն զանուն նորա Էմմանուէլ, որ
24 թարգմանի՝ Ընդ մեզ Աստուած ։ Եւ զարթուցեալ
Յովսէփ ի քնոյ անտի, արար որպէս հրամայեաց
նմա հրեշտակն Տեառն, և առ զինեն զկինն իւր ։
25 Եւ ոչ գիտեր զնա մինչեւ ծնաւ զորդին իւր զան-
դրանիկ, և կոչեաց զանուն նորա Յիսուս ։

ԳԼ. Բ

1 Եւ ի ծնանիլն Յիսուսի ի Բեթղեհէմ Հրէաս-
տանի յաւուրս Հերովդէի արքայի, ահա մոգք յա-
2 րեւելից եկին Երուսաղէմ, և ասեն, Ո՞ւր է որ
ծնաւ արքայն Հրէից. զի տեսաք զաստղն նորա յա-
3 րեւելս, և եկաք երկիրպագանել նմա ։ Եւ իբրեւ
լուաւ արքայ Հերովդէս՝ խռովեցաւ, և ամենայն
4 Երուսաղէմ ընդ նմա ։ Եւ ժողովեալ զամենայն
գերահանայապետս և զդպիրս ժողովրդեանն, հար-
5 ցանէր ի նոցանէ՝ թէ ո՛ւր ծնանիցի Քրիստոս։ Եւ
նոքա ասեն ցնա, ի Բեթղեհէմ Հրէաստանի. զի
6 այսպէս գրեալ է ի ձեռն մարգարէին. Եւ դու,
Բեթղեհէմ՝ երկիր Յուդայ, ոչինչ կրասեր ես յիշ-
խանս Յուդայ. ի քէն ելցէ ինձ իշխան, որ հո-
7 վուեսցէ զժողովուրդ իմ զիսրայէլ ։ Յայնժամ Հե-
րովդէս գաղտ կոչեաց զմոգսն, և ստուգեաց ի նո-
8 ցանէ զժամանակ աստեղն երեւելոյ. Եւ արձակեալ
զնոսա ի Բեթղեհէմ, ասէ, Գնացէք, ստուգեցէք
վասն մանկանն, և յորժամ գտանիցէք՝ ազդ ա-

* Ի Յայն՝ մարգարէին.

9 բասջիք ինձ, զի և ես եկեալ երկիրպագից նմա։ Եւ
նոքա իբրեւ լուան ի թագաւորէն՝ գնացին. և ա-
հա աստղն զոր տեսին յարեւելս՝ առաջնորդեաց
նոցա, մինչեւ եկեալ եկաց ի վերոյ՝ ուր էր մա-
10 նուկն։ Իբրեւ տեսին զաստղն, խնդացին յոյժ սա-
11 բաւարձիւն մեծ։ Եւ իբրեւ մտին ի տունն՝ տեսին
զմանուկն Յեսուա Մարեմամբ մօրըն իւրով, և
անկեալ երկիրպագանէին նմա. և բացեալ զգանձս
իւրեանց, մատուցին նմա պատարագս՝ ոսկի և կըն-
12 դրուկ և զմուռս։ Եւ հրաման առեալ ի տեսլեան
չդառնալ անդրէն առ Հերովդէս, ընդ այլ ճանա-
13 պարհ գնացին յաշխարհն իւրեանց։ Եւ իբրեւ գը-
նացին նոքա անտի, ահա հրեշտակ Տեառն երեւեր
ի տեսլեան Յովսեփու և ասէր, Արի՛ առ զմանուկդ
և զմայր իւր, և փախիր յԵգիպտոս, և անդ լի-
նիջիր մինչեւ ցորժամ ասացից քեզ. քանզի ի խնդիր *է
14 Հերովդէս կորուսանել զմանուկդ։ Եւ նա յարու-
ցեալ առ զմանուկն և զմայր իւր գիշերի, և գնաց
յԵգիպտոս, և անդ էր մինչեւ ցվախճան Հերովդի.
15 Զի լցցի ասացեալն ի Տեառնէ ի ձեռն մարգարէին
16 որ ասէ, Ցեգիպտոսէ կոչեցից զորդի իմ։ Յայնժամ
իբրեւ տեսաւ Հերովդէս թէ խաբեցաւ ի մոգուց ան-
տի, բարկացաւ յոյժ. և առաքեաց կոտորեաց զա-
մենայն մանկունսն որ էին ի Բեթղեհեմ և յամե-
նայն սահմանս նորա՝ յերկեւամենից և ի խնամարհ, ըստ
17 ժամանակին զոր ստուգեաց ի մոգուցն։ Յայնժամ
կատարեցաւ ասացեալն ի ձեռն Երեմիայ մարգա-
18 բէի որ ասէ, Ձայն գոչեցաւ ի Հռամայ, ողբումն և

* Ի Յ՚՚՚

7 Եւ տեսեալ զբազումս ի սադուկեցւոցն և ի փա-
րիսեցւոց եկեալս ի մկրտութիւնն նորա, ասէ ցնոսա,
Ծնունդք լիւից, ո՞ եցոյց ձեզ փախչիլ ի բարկու-
8 թենէն որ գալոցն է։ Արարէք պտուղս հնազանդ
9 արժանի ապաշխարութեան։ Եւ մի համարիցիք ասել
յանձինս թէ ունիմք մեք հայր զԱբրահամ. ասեմ
ձեզ, զի կարող է Աստուած ի քարանցս յայսցա-
10 նէ յարուցանել որդիս Աբրահամու։ Զի աւասիկ
տապար առ արմատն ծառոց դնի. ամենայն ծառ որ
ոչ առնիցէ զպտուղ բարի, հատանի և ի հուր
11 արկանի։ Ես մկրտեմ զձեզ ջրով յապաշխարու-
թիւն, բայց որ գայիւ իմ զոյ՝ հզօրագոյն է քան
զիս, և ես չեմ բաւական բառնալ զկօշիկս նորա.
նա մկրտեսցէ զձեզ ի Հոգին Սուրբ և ի հուր.
12 Որոյ հեծանոցն ի ձեռին իւրում, և սրբեսցէ զկալ
իւր, և ժողովեսցէ զցորեանն ի շտեմարանս իւր,
13 և զարդն այրեսցէ անշէջ հրով։ Յայնժամ գայ
Յիսուս ի Գալիլեէ ի Յորդանան առ Յովհաննէս
14 մկրտել ի նմանէ։ Եւ Յովհաննէս արգելու զնա
և ասէ, Ինձ պիտոյ է ի քէն մկրտել, և դու առ
15 իս գաս։ Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնա,
Թոյլ տուր այժմ, զի այսպէս վայել է մեզ լնուլ
զամենայն արդարութիւն. և թոյլ ետ նմա։
16 Եւ իբրեւ մկրտեցաւ Յիսուս, ել վադվադակի ի
ջրոյ անտի. և ահա բացան նմա երկինք, և եհաս
զՀոգին Աստուծոյ՝ զի իջանէր իբրեւ զաղաւնի, և
17 գայր ի վերայ նորա։ Եւ ահա ձայն յերկնից որ ա-
սէր, Դա է որդի իմ սիրելի՝ ընդ որ հաճեցայ։

ԳԼ. Դ

1 Յայնժամ վարեցաւ Յիսուս յանապատ ի հո-
2 գւոյն՝ փորձիլ ի սատանայէ։ Եւ պահեալ զքառա-
սունն տիւ և զքառասունն գիշերս՝ ապա քաղցեաւ։
3 Եւ մատուցեալ փորձիչն ասէ ցնա, Եթէ Որդի ես
Աստուծոյ՝ ասա զի քարինքս այսոքիկ հաց լինի-
4 ցին։ Նա պատասխանի ետ և ասէ, Գրեալ է թէ
Ոչ հացիւ միայն կեցցէ մարդ, այլ ամենայն բա-
5 նիւ որ ելանէ ի բերանոյ Աստուծոյ։ Յայնժամ
առեալ սատկ զնա սատանայ ի քաղաքն սուրբ, և
կացուցանէ զնա ի վերայ աշտարակի տաճարին,
6 Եւ ասէ ցնա, Եթէ Որդի ես Աստուծոյ՝ արկ զքեզ
ատտի ի վայր. զի գրեալ է թէ Հրեշտակաց իւրոց
պատուիրեալ է վասն քո, և ի վերայ ձեռաց բարձ-
ցեն զքեզ, զի մի երբեք հարցես զքարի զոտն քո։
7 Ասէ ցնա *դարձեալ Յիսուս՝, Գրեալ է թէ Ոչ
8 փորձեսցես զՏէր Աստուած քո։ Դարձեալ առնու
սատկ զնա սատանայ ի լեառն մի բարձր յոյժ, և
ցուցանէ նմա զամենայն թագաւորութիւնս աշ-
9 խարհի և զփառս նոցա, Եւ ասէ ցնա, Զայս ա-
մենայն քեզ տայց՝ եթէ անկեալ երկիրպագանիցես
10 ինձ։ Յայնժամ ասէ ցնա Յիսուս, Երթ յետս իմ
սատանայ, զի գրեալ է, Տէառն Աստուծոյ քում
11 երկիրպագցես և զնա միայն պաշտեսցես։ Ապա ե-
թող զնա սատանայ, և ահա հրեշտակք մատեան
և պաշտէին զնա։

---

* Ի յոյն՝ Յիսուս, Դարձեալ

12 Եւ իբրեւ լուաւ Յիսուս եթէ Յովհաննէս մատ-
13 նեցաւ, մեկնեցաւ գնաց ի Գալիլեա. Եւ թողեալ
զնազարեթ՝ եկն բնակեցաւ ի Կափառնայում ի
ծովեզերին, ի սահմանս Զաբուղոնի և Նեփթաղի-
14 մայ. Զի լցցի բանն որ ասացաւ ի ձեռն Եսայեայ
15 մարգարէի, երկիր Զաբուղոնի և երկիր Նեփթա-
ղիմայ, ճանապարհ ծովու՝ յայնկոյս Յորդանանու,
16 Գալիլեա հեթանոսաց. ժողովուրդ որ նստէր ի խա-
ւարի՝ եռեաց լոյս մեծ. և որոց նստեին յաշխարհին
17 և ի ստուերս մահու՝ լոյս ծագեաց նոցա: Յայնմ
հետէ սկսաւ քարոզել Յիսուս և ասել, Ապաշ-
խարեցէք զի մերձեալ է արքայութիւն երկնից:
18 Մինչդեռ զդնայր Յիսուս ընդ եզր ծովուն Գալի-
լեացւոց, եռես երկուս եղբարս, զՍիմոն զկոչեցեալն
Պետրոս, և զԱնդրեաս եղբայր նորա՝ արկեալ ուռ-
19 կան ի ծով, քանզի ձկնորսք էին: Եւ ասէ ցնոսա,
Եկայք զկնի իմ, և արարից զձեզ որսորդս մարդ-
20 կան: Եւ նոցա թողեալ վաղվաղակի *զդործսն՝
21 դնացին զկնա նորա: Եւ մատուցեալ անտի յա-
ռաջ՝ եռես այլ երկուս եղբարս, զՅակովբոս Զեբե-
դեայ և զՅովհաննէս զեղբայր նորա ի նաւի՝ Զեբե-
դեաւ հանգերձ հարբն իւրեանց, մինչ կազմէին
22 զուռկանս իւրեանց, և կոչեաց զնոսա: Նոցա թո-
ղեալ վաղվաղակի զնաւն և զհայրն իւրեանց, դնա-
23 յին զկնա նորա: Եւ շրջէր Յիսուս ընդ ամենայն
կողմն Գալիլեացւոց. ուսուցանէր ի ժողովուրդս
նոցա և քարոզէր զաւետարանն արքայութեան, և
բժշկէր զամենայն հիւանդութիւնս և զամենայն

* Ի Յայնս՝ զուռկանան

24 ախտս ի ժողովրդեանն: Եւ եղ լուր նորա ընդ ա-
մենայն երկիրն Ասորւոց, և մատուցին առ նա զա-
մենայն հիւանդս՝ որ նեղեալ էին ի պէսպէս ցաւս
և ի տանջանս, և դդիւահարս և զլուսնոտս և
25 զանդամալոյծս, և բժշկեաց զնոսա: Եւ երթային
զկնա նորա ժողովուրդք բազումք ի Գալիլեէ և ի
Դեկապօլեայ և Երուսաղէմէ և ի Հրէաստանէ,
և յայնկոյս Յորդանանու*, և բժշկեաց զնոսա՝:

Գլ. Ե

1 Եւ տեսեալ զժողովուրդսն եղ ի լեառն. և իբ-
րեւ նստաւ անդ՝ մատեան առ նա աշակերտք նո-
2 ցա. Եւ բացեալ զբերան իւր ուսուցանէր զնոսա
3 և ասէր, Երանի աղքատաց հոգւով, զի նոցա է
4 արքայութիւն երկնից: Երանի սգաւորաց, զի նոքա
5 մխիթարեսցին: Երանի հեզոց, զի նոքա ժառան-
6 գեսցեն զերկիր: Երանի որ քաղցեալ և ծարաւի
7 իցեն արդարութեան, զի նոքա յագեսցին: Երանի
8 ողորմածաց, զի նոքա ողորմութիւն գտցեն: Եր-
նի այնոցիկ որ սուրբ են սրտիւք, զի նոքա զԱս-
9 տուած տեսցեն: Երանի խաղաղարարաց, զի նոքա
10 որդիք Աստուծոյ կոչեսցին: Երանի որ հալածեալ
իցեն վասն արդարութեան, զի նոցա է արքայու-
11 թիւն երկնից: Երանի է ձեզ՝ յորժամ նախատիցեն
զձեզ և հալածեսցեն, և ասիցեն զամենայն բան
12 չար զձենջ սուտ վասն իմ. Ցնծացէք և ուրախ լե-
ռուք, զի վարձք ձեր բազում են յերկինս. զի

* Ի Յայնս էին

պսպղէս հալածեցին զմարգարէան որ յառաջ քան
13 զձեզ էին : Դուք էք աղ երկրի . ապա թէ աղն
անհամի՝ ի՞ւ յաղիցի . ոչ իմիք աղդիցէ այնուհե-
տեւ , բայց եթէ ընկենուլ արտաքս և կոխան լինել
14 ի մարդկանէ : Դուք էք լոյս աշխարհի . ոչ կարէ
15 քաղաք թաղչել՝ որ ի վերայ լերին կայցէ : Եւ ոչ
լուցանեն ճրագ և դնեն ընդ գրուանաւ , այլ ի
վերայ աշտանակի , և լոյս տայ ամենեցուն որ ի
16 տանն իցեն : Այնպէս լուսաւորեսցէ լոյս ձեր ա-
ռաջի մարդկան , որպէս զի տեսցեն զգործս ձեր բա-
րիս , և փառաւորեսցեն զՀայր ձեր որ յերկինս է:
17 Մի համարիք եթէ եկի լուծանել զօրէնս կամ
18 զմարգարէս . ոչ եկի լուծանել՝ այլ ընդ՝ , Ամէն
ասեմ ձեզ , Մինչեւ անցցեն երկինք և երկիր , յոտ
մի՝ *որ նշանախեց մի է՝ ոչ անցցէ յօրինացն և ի
19 մարգարէից՝ մինչեւ ամենայն եղիցի : Որ ոք լուծցէ
մի ինչ ի պատուիրանացս յայսցանէ ի փոքունց ,
և ուսուսցէ այնպէս զմարդիկ , փոքր կոչեսցի յար-
քայութեան երկնից . իսկ որ արասցէ և ուսուսցէ ,
20 նա մեծ կոչեսցի յարքայութեան երկնից : Բայց ա-
սեմ ձեզ , Զի եթէ ոչ առաւելուցու արդարու-
թիւն ձեր աւելի քան զդպրացն և զփարիսեցւոց ,
21 ոչ մտանիցէք յարքայութիւն երկնից : Լուարուք
զի ասացաւ առաջնոցն թէ Մի սպանանիցէ . զի որ
22 սպանանիցէ՝ պարտական լիցի դատաստանի : Այլ
ես ասեմ ձեզ , եթէ ամենայն որ բարկանայ եղբօր
իւրում առանապարտուց , պարտաւոր լիցի դատաս-
տանի . և որ ասիցէ ցեղբայր իւր Լիմար , պարտա-

* Ի Յ՚ոյնն՝ կամ նշանախեց մի՝ ոչ անցցէ յօրինացն՝

ւոր լիցի ատենի . և որ ասիցէ ցեղբայր իւր մորթս ,
23 պարտաւոր լիցի ի գեհենն հրոյ : Եթէ մատուցա-
նիցես զպատարագ քո ի վերայ սեղանոյ , և անդ
յիշեսցես՝ եթէ եղբայր քո ունի ինչ խէթ ընդ քէն ,
24 թող զպատարագն քո առաջի սեղանոյն , երթ նախ
հաշտեաց ընդ եղբօր քումմ , և ապա եկեալ մա-
25 տուսցիր զպատարագն քո : Լեր իրաւախոհ ընդ
ոսոխի քումմ վաղագոյն , մինդեռ իցես ընդ նմա ի
ճանապարհի . գուցէ մատնիցէ զքեզ ոսոխն դատա-
ւորի , և դատաւորն՝ դահճի , և արկանիցիս ի բանտ:
26 Ամէն ասեմ քեզ , ոչ ելանիցես անտի մինչեւ հա-
27 տուցանիցես զվերջին նաբարակիսն : Լուարուք զի
28 ասացաւ , Մի շնար . Բայց ես ասեմ ձեզ թէ
Ամենայն որ հայի ի կին մարդ առ ի ցանկանալոյ
29 նմա , անդէն շնացաւ ընդ նմա ի սրտի իւրում : Ե-
թէ ակն քո աջ գայթակղեցուցանէ զքեզ , խլեա
զնա և ընկեա ի քէն . զի լաւ է քեզ եթէ մի
յանդամոց քոց կորիցէ , և մի ամենայն մարմինդ
30 քո անկանիցի ի գեհենն : Եւ եթէ աջ ձեռն քո գայ-
թակղեցուցանէ զքեզ , հատ զնա և ընկեա ի քէն .
զի լաւ է քեզ եթէ մի յանդամոց քոց կորիցէ , և
31 մի ամենայն մարմինդ քո արկանիցի ի գեհենն : Ա-
պաքէն ասացաւ եթէ Որ արձակիցէ զկին իւր՝
32 տացէ նմա զարձակմանն . Բայց ես ասեմ ձեզ ե-
թէ Ամենայն որ արձակէ զկին իւր առանց բանի
պոռնկութեան՝ նա տայ նմա շնալ , և որ զարձա-
33 կեալն առնէ՝ շնայ : Դարձեալ լուարուք զի ասացաւ
առաջնոցն , Մի երդնուցուս սուտ , բայց հատուս-
34 ցես Տեառն զերդմունս քո : Այլ ես ասեմ ձեզ ,
Ամենեւին մի երդնուլ , մի յերկինս՝ զի աթոռ է

35 Ա*ատուածդ, եւ մի յերկիր՝ զի պատուանդան է ո-
տից նորա, և մի յԵրուսաղէմ՝ զի քաղաք է մե-
36 ծի արքային. Եւ մի ՚ի գլուխ քո երդնուցուս, զի
ոչ կարես մազ մի սպիտակ առնել կամ թուխ։
37 Ա՛յլ եղիցի ձեր բան՝ այո այո, և ոչն ոչ. զի ա-
38 ւելին քան զայն ՚ի չարէն է։ Լուարուք զի ասա-
ցաւ, Ակն ընդ ական և ատամն ընդ ատաման։
39 Ա՛յլ ես ասեմ ձեզ, Մի կալ հակառակ չարին.
այլ եթէ ոք ածիցէ ապտակ յաջ ծնօտ քո, դարձ-
40 ո՛ն նմա և զմիւսն։ Եւ որ կամիցի ոք դատել և
առնուլ զշապիկն քո, թող ՚ի նա և զբաճկոնքո։
41 Եւ որ տարապարհակ վարիցէ զքեզ մղոն մի, երթ
42 ընդ նմա և երկուս։ Որում խնդրէ ՚ի քէն՝ տուր.
և որ կամի փոխ առնուլ ՚ի քէն՝ մի դարձուցաներ
43 զերեսս։ Լուարուք ասացաւ, Սիրես-
44 ցես զընկերն քո, և ատեսցես զթշնամին քո։ Ա՛յլ
ես ասեմ ձեզ, Սիրեցէք զթշնամիս ձեր, օրհնե-
ցէք զանիծիչս ձեր, բարի արարէք ատելեաց ձե-
րոց, և աղօթս արարէք ՚ի վերայ այնոցիկ՝ որ լըէ-
45 կենն զձեզ՝ և հալածեն. Զի եղիջիք որդիք Հօր ձերոյ
որ յերկինսն է. զի զարեգակն իւր ծագէ ՚ի վերայ
չարաց և բարեաց, և ածէ անձրեւ ՚ի վերայ ար-
46 դարոց և մեղաւորաց։ Զի եթէ սիրիցէք զայնոսիկ
որ սիրենն զձեզ՝ զի՞նչ վարձք իցեն. ո՞չ ապաքէն
47 և մաքսաւորք զնոյն գործեն։ Եւ եթէ ասացէք մի-
այն ողջոյն †բարեկամաց ձերոց՝ զի՞նչ աւելի առնէք.
ո՞չ ապաքէն մաքսաւորք †և մեղաւորք՝ զնոյն գոր-

* Ի Յայնն՝ եղբարց
† Ի Յայնն՝ և+

48 ծեն։ Ա՛րդ եղերուք դուք կատարեալք, որպէս և
Հայրն ձեր երկնաւոր կատարեալ է։

Գ.Լ. Զ

1 Զգուշ լերուք ողորմութեան ձերոյ մի առնել
առաջի մարդկան, որպէս թէ ՚ի ցոյց լինչ նոցա.
դուցէ և վարձս ոչ ընդունիցիք ՚ի Հօրէն ձերմէ՝ որ
2 յերկինսն է։ Ա՛յլ յորժամ առնիցես ողորմու-
թիւն, մի հարկաներ փող առաջի քո, որպէս
կեղծաւորքն առնեն ՚ի ժողովուրդս և ՚ի հրապարա-
կըս՝ որպէս զի փառաւորեսցին ՚ի մարդկանէ. ա-
3 մէն ասեմ ձեզ, այն իսկ են վարձք նոցա։ Ա՛յլ
դու յորժամ ողորմութիւն առնիցես, մի դիտաս-
4 ցէ ձախ քո զինչ գործէ աջ քո. Որպէս զի եղիցի
ողորմութիւն քո ՚ի ծածուկ, և Հայրն քո որ
տեսանէ ՚ի ծածուկ հատուսցէ քեզ յայտնա-
5 պէս։ Եւ յորժամ յաղօթս կայցես, մի լինիցիս
որպէս կեղծաւորքն. զի սիրեն ՚ի ժողովուրդս
կանգնիւնս հրապարակաց կալ յաղօթս, որ-
պէս զի երեւեսցին մարդկան. ամէն ասեմ ձեզ,
6 այն իսկ են վարձք նոցա։ Ա՛յլ դու յորժամ կայ-
ցես յաղօթս, մուտ ՚ի սենեակ քո, և փակեա դըռ-
դուրս քո, և կաց յաղօթս առ Հայր քո ՚ի ծա-
ծուկ. և Հայրն քո որ տեսանէ ՚ի ծածուկ, հա-
7 տուսցէ քեզ յայտնապէս։ Եւ յորժամ կայցէք
յաղօթս, մի շատախօս լինիք իբրեւ զհեթանոսսն.
զի համարին եթէ ՚ի բազում խօսից լսելի
8 լինիցին։ Ա՛րդ մի նմանիցէք նոցա. զի գիտէ Հայրն
ձեր զինչ պիտոյ է ձեզ, մինչչեւ ձեր խնդրեալ

9 ինչ ելեր ի նմանե ։ Եւ արդ այսպէս կացէք դուք
 յաղօթս . Հայր մեր որ յերկինս , սուրբ եղիցի
10 անուն քո ։ Եկեսցէ արքայութիւն քո , եղիցին
11 կամք քո որպէս յերկինս և յերկրի ։ Զհաց մեր
12 հանապազաղօրդ տուր մեզ այսօր ։ Եւ թող մեզ զը-
պարտիս մեր , որպէս և մեք թողումք մերոց պարտ-
13 տապանաց ։ Եւ մի տանիր զմեզ ի փորձութիւն ,
այլ փրկեա զմեզ ի չարէ . զի քո է արքայութիւն
14 և զօրութիւն և փառք յաւիտեանս . ամէն ։ Զի ե-
թէ թողուցէք մարդկան զյանցանս նոցա , թողիցէ և
15 ձեզ Հայրն ձեր երկնաւոր ։ Ապա թէ ոչ թողուցէք
մարդկան զյանցանս նոցա , և ոչ Հայրն ձեր թողիցէ
16 ձեզ զյանցանս ձեր ։ Եւ յորժամ պահիցէք՝ մի լինիք
իբրեւ զկեղծաւորան տրտմեալք . որ ապականեն
զերեսս իւրեանց , որպէս զի երեւեսցին մարդկան թէ
պահիցեն . ամէն ասեմ ձեզ , այն իսկ են վարձք
17 նոցա ։ Ա՛յլ դու յորժամ պահիցես , օծ զգլուխ
18 քո և լուա զերեսս քո , զի մի երեւեսցիս մարդ-
կան իբրեւ զպահող . այլ Հօրն քումմ՛ի ծածուկ .
և Հայրն քո որ տեսանէ ի ծածուկ , հատուսցէ
19 քեզ յայտնապէս ։ Մի գանձէք ձեզ գանձս յեր-
կրի . ուր ցեց և ուտիճ ապականեն , և ուր գողք
20 ական հատանեն և գողանան ։ Ա՛յլ գանձեցէք ձեզ
գանձս յերկինս , ուր ոչ ցեց և ոչ ուտիճ ապա-
կանեն , և ոչ գողք ական հատանեն և գողա-
21 նան ։ Զի ուր գանձք ձեր են , անդ և սիրտք ձեր
եղիցին ։
22 Ճրագ մարմնոյ ակն է . եթէ ակն քո առատ է ,
23 ամենայն մարմինդ լուսաւոր եղիցի ։ Ապա եթէ ակն
քո չար է , ամենայն մարմինդ խաւարին եղիցի . իսկ

արդ եթէ լոյսդ որ ի քեզ է՝ խաւար է , խաւարն
24 ո՞րչափ եւս ։ Ոչ ոք կարէ երկուց տերանց ծառա-
յել . կամ զմին ատիցէ և զմիւսն սիրիցէ . կամ
զմին մեծարիցէ և զմիւսն արհամարհիցէ . ոչ կա-
25 րէք Աստուծոյ ծառայել և մամոնայի ։ Վասն այ-
գորիկ ասեմ ձեզ , Մի հոգայք վասն ոգւոց ձերոց՝
զինչ ուտիցէք կամ զինչ ըմպիցէք . և մի վասն
մարմնոց ձերոց՝ թէ զի՛նչ ագանիցէք . ո՞չ ապա-
քէն ոգի առաւել է քան զկերակուր՝ և մարմին
26 քան զհանդերձ ։ Հայեցարուք ի թռչունս երկնից՝
զի ոչ վարեն և ոչ հնձեն և ոչ ժողովեն ի շտե-
մարանս , և Հայրն ձեր երկնաւոր կերակրէ զնոսա .
27 ո՞չ ապաքէն դուք առաւել եք քան զնոսա ։ Իսկ
արդ ո՞ ի ձէնջ առ հոգալ իւրում՝ յաւելուլ
28 կարիցէ ի հասակ իւր կանգուն մի ։ Եւ վասն հան-
դերձի զի՞ հոգայք . հայեցարուք ի շուշանն վայ-
29 րինի՝ ո՛րպէս աճէ . ոչ ջանայ և ոչ նիւթէ ։ Ասեմ
ձեզ՝ զի ոչ Սողոմն յամենայն ի փառս իւրում
30 զգեցաւ իբրեւ զմի ի նոցանէ . իսկ եթէ զխոտն
ի վայրի , որ այսօր է և վաղիւն ի հնոց արկանի ,
Աստուած այնպէս զգեցուցանէ . ո՞րչափ եւս առա-
31 ւել զձեզ , Թերահաւատք ։ Մի այսուհետեւ հո-
գայցէք և ասիցէք , Զի՞նչ կերիցուք՝ կամ զի՞նչ
32 արբցուք՝ կամ զի՞նչ զգեցցուք ։ Զի զայդ ամե-
նայն հեթանոսք խնդրեն . քանզի գիտէ Հայրն ձեր
33 երկնաւոր թէ պիտոյ է ձեզ այդ ամենայն ։ Խըն-
դրեցէք նախ զարքայութիւնն Աստուծոյ և զարդա-
րութիւնն նորա , և այդ ամենայն յաւելցի ձեզ ։
34 Մի այսուհետեւ հոգայցէք վասն վաղուին , զի վա-
ղիւն վասն իւր հոգասցի . շատ է առաւրն չար իւր ։

ԳԼ· Ե

1 Մի դատէք՝ զի մի դատիցիք. (2) Զի որով դա-
տաստանաւ դատէք՝ դատելոց էք. և որով չափով
3 չափէք՝ չափեսցի ձեզ։ Զի՞ տեսանես զշիւղ յա-
կան եղբօր քո, և ի քումմ ականդ զգերանդ ոչ տե-
4 սանես։ Կամ զի՞արդ ասես ցեղբայր քո, Թող
Հանից զշիւղդ յականէ քումմէ. և ահաւադիկ ի
5 քումմ ականդ գերան կայ։ Կեղծաւոր, Հան նախ
զգերանդ յականէ քումմէ, և ապա հայեսցես Հա-
6 նել զշիւղն յականէ եղբօր քո։ Մի տայք զսրբու-
թիւնն շանց. և մի արկանէք զմարգարիտս ձեր
առաջի խոզաց, զի մի առ ոտն կոխեսցեն զնոսա,
7 և դարձեալ երդիծուցանիցեն զձեզ։ Խնդրեցէք և
տացի ձեզ, հայցեցէք և գտջիք, բախեցէք և
8 բացցի ձեզ։ Զի ամենայն որ խնդրէ՝ առնու, և
9 որ հայցէ՝ գտանէ, և որ բախէ՝ բացցի նմա։ Ո
իցէ ի ձէնջ մարդ՝ զոր խնդրիցէ որդի իւր հաց,
10 միթէ քա՞ր տայցէ նմա։ Եւ կամ խնդրիցէ ձուկն,
11 միթէ օ՞ձ տայցէ նմա։ Արդ՝ եթէ դուք որ չարք
էք՝ գիտէք պարգեւս բարիս տալ որդւոց ձերոց,
ո՞րչափ եւս առաւել Հայրն ձեր որ յերկինս է՝
12 տացէ բարիս այնոցիկ որ խնդրեն զնա։ Զամենայն
որ միանգամ կամիջիք թէ արասցեն ձեզ մարդիկ, այնպէս և դուք արարէք նոցա, զի այն իսկ
13 են օրէնքն և մարգարէքն։ Մտէք ընդ նեղ դու-
ռըն. քանզի ընդարձակ է դուռն և համարձակ
ճանապարհն՝ որ տանի ի կորուստ. և բազումք են
14 որ մտանեն ընդ նա։ Քանզի անձուկ է դուռն և

նեղ ճանապարհն որ տանի ի կեանս, և սակաւք
15 են որ գտանեն զնա։ Զգուշ լերուք ի սուտ մար-
գարէիցն՝ որ գան առ ձեզ հանդերձիւք ոչխարաց,
16 և ի ներքոյ են գայլք յափշտակողք։ Ի պտղոց
նոցա ծանիջիք զնոսա. միթէ քաղիցե՞ն ի փշոց
17 խաղող՝ կամ ի տատասկէ թուզ։ Այսպէս ամե-
նայն ծառ բարի՝ պտուղ բարի առնէ, և ծառ չար՝
18 պտուղ չար առնէ։ Ոչ կարէ ծառ բարի՝ պտուղ
չար առնել՝ և ոչ ծառ չար՝ պտուղ բարի առնել։
19 Ամենայն ծառ որ ոչ առնէ պտուղ բարի, հատա-
20 նի և ի հուր արկանի։ Ապա ի պտղոց նոցա ծա-
21 նիջիք զնոսա։ Ոչ ամենայն որ ասէ ցիս, Տէր, Տէր,
մտցէ յարքայութիւն երկնից, այլ որ առնէ զկամս
22 Հօր իմոյ որ յերկինս է։ Բազումք ասիցեն ցիս
յաւուրն յայնմիկ, Տէր, Տէր, ո՞չ յանուն քո
մարգարէացաք, և յանուն քո դեւս հանաք, և
23 յանուն քո զօրութիւնս բազումս արարաք։ Եւ
յայնժամ ասացից ցնոսա եթէ Ոչ երբէք գիտէի
զձեզ. ի բաց կացէք յինէն *ամենեքեան՝ որք
24 գործէիք զանօրէնութիւն։ Ամենայն որ լսէ զբանս
իմ զայսոսիկ և առնէ զոսոսա, նմանեսցի առն ի-
մաստնոյ՝ որ շինեաց զտուն իւր ի վերայ վիմի.
25 իջին անձրեւք և խաղացին գետք, շնչեցին հողմք
և բախեցին զտունն, և ոչ կործանեցաւ, քանզի
26 ի վերայ վիմի հաստատեալ էր։ Եւ ամենայն որ լսէ
զբանս իմ զայսոսիկ և ոչ առնէ զոսոսա, նմանեսցի առն յիմարի՝ որ շինեաց զտուն իւր ի վերայ
27 աւազոյ։ Իջին անձրեւք, և յարձան գետք, շնչեցին

* Ի ցոյն ՝ի։

3505 2 - 62
ЗУУП-Арм ССР

հողմք , հարին զտունն , և անկաւ . և էր կործա-
28 նումն նորա մեծ յոյժ : Եւ եղեւ իբրեւ կատարեաց
Յիսուս *զամենայն զբանս զայսոսիկ , զարմանային
29 ժողովուրդքն ընդ վարդապետութիւնն նորա : Զի
իբրեւ իշխանութեամբ ուսուցանէր՝ և ոչ որպէս
դպիրքն :

ԳԼ· Ը

1 Ա՛յլ իբրեւ էջ ի լեռնէ անտի, գնացին ղինի նո-
2 րա ժողովուրդք բազումք : Եւ ահա մատուցեալ բո-
րոտ մի , երկիրպագանէր նմա և ասէր , Տէր , եթէ
3 կամիս՝ կարող ես զիս սրբել : Զգեաց զձեռն իւր և
հասոյց ի նա Յիսուս և ասէ , Կամիմ՝ սրբեաց , և
4 վաղվաղակի սրբեցաւ ի նմանէ բորոտութիւնն : Եւ
ասէ ցնա Յիսուս , Զգոյշ լեր՝ մի ումեք ասիցես , այլ
երթ ցոյց զանձն քո քահանային , և մատո զպա-
տարագն , զոր հրամայեաց Մովսէս ի վկայութիւն
5 նոցա : Եւ մտեալ ի Կափառնայում , մատեաւ տա-
6 նա հարիւրապետ մի , աղաչէր զնա , եւ ասէր , Տէր ,
մանուկ իմ անկեալ կայ ի տան անդամալոյծ՝ չա-
7 րաչար տանջեալ : Ասէ ցնա Յիսուս , Ես եկից և
8 բժշկեցից զնա : Պատասխանի ետ հարիւրապետն և
ասէ , Տէր , չեմ բաւական եթէ ընդ յարկաւ իմով
մտցես . այլ ասա բանիւ , և բժշկեսցի մանուկն
9 իմ: Քանզի և ես այր մի եմ ընդ իշխանութեամբ ,
ունիմ ընդ ինձ զինուորս , ասեմ ամա, երթ , և եր-
թայ . և այլում՝ թէ եկ , և գայ . և ծառայի

* ի ցայն ժամ :

10 իմում թէ Արա զայս , և առնէ : Իբրեւ լուաւ Յի-
սուս՝ զարմացաւ , և ասէ ցայնոսիկ որ զետեղ եր-
թային , Ամէն ասեմ ձեզ , և ոչ ի Իսրայէլի այս-
11 պիսի հաւատս գտի երբեք : Բայց ասեմ ձեզ զի
բազումք յարեւելից և յարեւմտից եկեսցեն և
բազմեսցին ընդ Աբրահամու և ընդ Սահակայ և
12 ընդ Յակովբայ յարքայութեան երկնից . Եւ որ-
դիքն արքայութեան ելցեն ի խաւարն արտաքին .
13 անդ եղիցի լալ և կրճել ատամանց : Եւ ասէ Յի-
սուս ցհարիւրապետն , Երթ և որպէս հաւատա-
ցեր՝ եղիցի քեզ . և ողջացաւ մանուկն նորա *յա-
14 րուր յայնմիկ : Եւ եկեալ Յիսուս ի տունն Պետ-
րոսի , ետես զի զբաթանէ նորա անկեալ դնէր տա-
15 պացեալ . կալաւ զձեռանէ նորա , և եթող զնա
16 ջերմն . յոտն եկաց և պաշտէր զնոսա : Իբրեւ ե-
ղեւ երեկոյ՝ մատուցին առ նա դիւահարս բա-
զումս , և եհան զոգիսն բանիւ և զամենայն հի-
17 ւանդսն բժշկեաց . Զի լցցի բանն որ ասացաւ ի
ձեռն Եսայեայ մարգարէի , Նա զհիւանդութիւնս
մեր վերացոյց և զցաւս մեր եբարձ :
18 Տեսեալ Յիսուս ժողովուրդս բազումս զիւրեւ ,
19 հրամայեաց երթալ յայնկոյս : Եւ մատուցեալ
դպիր մի ասէ ցնա , Վարդապետ , եկից և ես զինէ
20 քո յոր վայր և երթիցես : Ասէ ցնա Յիսուս , Ա-
ղուէսս օրջք գան, և թռչնոց երկնից բոյնք , այլ
Որդւոյ մարդոյ ոչ գոյ՝ ուր դիցէ զգլուխ իւր .
21 Եւ մի ոմն յաշակերտացն նորա ասէ ցնա , Տէր ,

*ի ցայն ի ժամուն

տուր ինձ հրաման՝ զի երթայց նախ թաղեցից զըզ
22 հայր իմ։ Ասէ ցնա Յիսուս, եկ զկնի իմ, և թոյլ
23 տուր մեռելոցն թաղել զմեռեալս իւրեանց։ Եւ
իբրեւ եմուտ ի նաւն, գնացին զկնի նորա աշա-
24 կերքն նորա։ Եւ ահա շարժումն մեծ եղեւ ի ծո-
վըն՝ մինչ նաւին ծածկել յալեացն անտի, և ինքն
25 ննջէր։ Եւ մատուցեալ աշակերտքն յարուցին զնա
26 և ասեն, Տէր, փրկեա զմեզ զի կորնչիմք։ Եւ ա-
սէ ցնոսա, Ընդէ՞ր վատասիրտք էք, սակաւահա-
ւատք. Յայնժամ յարուցեալ սաստեաց հողմոյն
27 և ծովուն, և եղեւ խաղաղութիւն մեծ։ Եւ մար-
դիկն զարմացան, և ասէին, Ո՞րպիսի ոք իցէ սա,
28 զի և հողմք և ծով հնազանդին սմա։ Եւ իբրեւ
անց յայնկոյս յերկիրն Գերգեսացւոց, պատահե-
ցին նմա դիւահարք երկու՝ ելեալք ի դերեզմա-
նացն, չարաչարք յոյժ, որպէս զի չէր հնար ան-
29 ցանել ուղիք ընդ այն ճանապարհ։ Եւ ահա ա-
ղաղակեցին և ասեն, Ձի՞ կայ մեր և քո, Յիսուս
Որդի Աստուծոյ, եկիր տաբաժամ տանջե՞լ զմեզ։
30 Եւ էր հեռագոյն ի նոցանէ երամակ մի խոզից ա-
31 րօտական։ Եւ դեւքն աղաչէին զնա և ասէին, Ե-
թէ հանես զմեզ ասէ, հրամայ տուր մեզ եր-
32 թալ յերամակ խոզից։ Եւ ասէ ցնոսա, Եր-
թայք. և նոքա ելեալ գնացին յերամակն խոզից.
և դիմեաց ամենայն երամակն ի դարձ անտի ի
33 ծով, և մեռան ի ջուրսն։ Եւ խոզաբուծքն փա-
խեան, և երթեալ ի քաղաքն պատմեցին զամե-
34 նայն, և զիւրս դիւահարացն։ Եւ ահա ամենայն
քաղաքն ել ընդ առաջ Յիսուսի. իբրեւ տեսին
զնա՝ աղաչեցին զի գնասցէ ի սահմանաց նոցա։

Գ Լ· Թ

1 Եւ մտեալ ի նաւ՝ անց յայնկոյս և եկն ի քա-
2 ղաք իւր։ Եւ ահա մատուցին առ նա անդամալոյծ
մի որ դնէր ի մահիճս, և տեսեալ Յիսուսի զհա-
ւատս նոցա՝ ասէ ցանդամալոյծն. *Թողեալ լի-
3 ցին քեզ մեղք քո, եւ ահա ոմանք ի դպրացն ա-
4 սեն ընդ միտս, Հայհոյէ դա։ Եւ ծանուցեալ Յի-
սուսի զխորհուրդս նոցա՝ ասէ ցնոսա, Ընդէր խոր-
5 հիք դուք չարիս ի սիրտս ձեր։ Զի՞նչ դիւրին է
ասել, Թողեալ լիցին քեզ մե՞ղք քո, թէ ասել,
6 Արի և շրջեաց։ Այլ զի գիտասջիք եթէ իշխա-
նութիւն ունի Որդի մարդոյ երկրի թողուլ զմեղս.
Յայնժամ ասէ ցանդամալոյծն, Արի առ զմահիճս
7 քո և երթ ի տուն քո։ Եւ յարուցեալ գնաց ի
8 տուն իւր։ Իրրեւ տեսին ժողովուրդքն, զարմացան
և փառաւորեցին զԱստուած զտուիչն այնպիսի
իշխանութեան մարդկան։

9 Եւ անցեալ ընդ այն Յիսուսի՝ տեսաւ զայր մի
զի նստէր ի մաքսաւորութեան Մատթէոս անուն,
և ասէ ցնա, Եկ զկնի իմ. և յարուցեալ գնաց
10 զկնի նորա։ Եւ եղեւ իբրեւ բազմեալ էր նա ի
տան, և ահա բազումք մաքսաւորք և մեղաւորք
եկեալ և բազմեալ էին ընդ Յիսուսի և ընդ աշա-
11 կերտս նորա։ Իրրեւ տեսին փարիսեցիքն՝ ասեն ցա-
շակերտս նորա, Ընդէ՞ր ընդ մաքսաւորս և ընդ մե-
12 ղաւորս ուտէ վարդապետն ձեր։ Իսկ Յիսուս իբրեւ

---

* ի Յոյն՝ Քաջալերեաց, որդեակ, Թողեալ

լուաւ՝ ասէ ցնոսա , Ոչ է պիտոյ բժիշկի կարողաց՝
13 այլ հիւանդաց : Երթայք , ուսարուք զի՞նչ է , Ո-
ղորմութիւն կամիմ և ոչ զզոհ . զի ոչ եկի կոչել
14 զարդարս՝ այլ զմեղաւորս : Յայնժամ մատեան առ
նա աշակերտքն Յովհաննու և ասեն , Ընդէ՞ր մեք
և փարիսեցիքն պահեմք յաճախ , և քո աշակերտ-
15 քդ ոչ պահեն : Ասէ ցնոսա Յիսուս , Միթէ մարթ
ի՞նչ իցէ մանկանց առագաստի սուգ առնուլ՝ մինչ
փեսայն ընդ նոսա իցէ . այլ եկեսցեն աւուրք՝ յոր-
ժամ բարձցի ի նոցանէ փեսայն , և ապա պահես-
16 ցեն : Ոչ ոք արկանէ կապերա անթափ ի վերայ
հնացեալ ձորձոյ . զի առնսա ելանէ զլրութիւնն
նորա ի հանդերձէն , և ևս չար պատառումն լինի :
17 Եւ ոչ արկանեն գինի նոր ի տիկս հինս . ապա
թէ ոչ՝ տիկքն պատառին և գինին հեղուս , և տիկ-
քըն կորնչին . այլ արկանեն գինի նոր ի տիկս
նորս , և երկոքին պահին :
18 Մինչդեռ նա զայս խօսէր ընդ նոսա , ահա իշ-
խան մի մատուցեալ երկիրպագանէր նմա և ասէր ,
Դուստր իմ արդ ևս վախճանեցաւ , այլ եկեալ դի-
19 ցես զձեռն քո ի վերայ նորա , և կեցցէ : Յարեաւ
Յիսուս և գնաց զկնի նորա աշակերտաւքն հանդերձ ,
20 Եւ ահա կին մի տեառատես երկոտասանամեայ մա-
տուցեալ յետոյ մերձեցաւ ի դրօշակ հանդերձի
21 նորա . Քանզի ասէր ի մտի իւրում , Թէ միայն
22 մերձենամ ի հանդերձս նորա՝ փրկիմ : Իսկ Յի-
սուս իբրեւ դարձաւ և տեես զնա՝ ասէ , Քաջա-
լերեաց , դուստր , հաւատք քո կեցուցին զքեզ . և
23 փրկեցաւ կինն ի ժամէն յայնմանէ : Իբրեւ եկն
Յիսուս ի տուն իշխանին , և տես զփողարան և

24 ամբոխ յոյժ , Ասէ ցնոսա , Ի բաց գնացէք , զի
25 ոչ է՛թէ մեռեալ է աղջիկդ՝ այլ ննջէ : Եւ ծաղր
առնէին զնա . և իբրեւ եւ ամբոխն ի բաց , եմուտ՝
26 կալաւ զձեռանէ նորա , և յարեաւ աղջիկն : Եւ
եւ համբաւս այս ընդ ամենայն երկիրն ընդ այն :
27 Եւ մինչդեռ անցանէր ընդ այն Յիսուս , զկետ
եղեն նորա կոյրք երկու , աղաղակէին և ասէին ,
28 Ողորմեաց մեզ , Որդի Դաւթի : Եւ իբրեւ եկն ի
տուն , մատեան առ նա կոյրքն . և ասէ ցնոսա Յի-
սուս , Հաւատա՞յք եթէ կարող եմ առնել ձեզ
29 զայդ . ասեն ցնա , Այո , Տէր : Յայնժամ մերձեցաւ
յաչս նոցա , և ասէ , Ըստ հաւատոց ձերոց եղիցի
30 ձեզ : Եւ բացան աչք նոցա . և սաստեաց նոցա
Յիսուս և ասէ , Զգոյշ կացէք , մի ոք գիտասցէ :
31 Եւ նոքա ելեալ համբաւեցին զնա ընդ ամենայն
32 երկիրն ընդ այն : Եւ յելանելն նոցա արտաքս , ա-
հա մատուցին առ նա այր մի համր դիւահար :
33 Եւ յելանել դիւին՝ խօսեցաւ համրն . և զարմա-
ցան ժողովուրդքն և ասեն Թէ եւ ոչ երբէք երե-
34 եցաւ այսպիսի ինչ յԻսրայէլ : Իսկ փարիսեցիքն
ասէին Թէ Իշխանաւն դիւաց հանէ դա զդեւս :
35 Եւ շրջէր Յիսուս ընդ ամենայն քաղաքս և ընդ
գիւղս , ուսուցանէր ի ժողովուրդս նոցա , և քա-
րոզէր զաւետարանն արքայութեան . և բժշկէր զա-
մենայն ախտս և զամենայն հիւանդութիւնս ի ժո-
36 ղովրդեանն : Եւ տեսեալ զժողովուրդն՝ գթացաւ
ի նոսա , զի էին աշխատեալք և ցրուեալք իբրեւ
37 զոչխարս , որոց ոչ իցէ հովիւ : Յայնժամ ասէ ցա-
շակերտան իւր , Հունձք բազումք են , և մշակք սա-

38 կաւ ։ Արդ աղաչեցէք զՏէր հնձոց , զի հանցէ մշակս
'ի հունձս իւր ։

ԳԼ· Ժ

1 Եւ կոչեցեալ առ ինքն զերկոտասանեսին աշա-
կերտան իւր , ետ նոցա իշխանութիւն այսոց պղծ-
ոց հանել զնոսա , և բժշկել զամենայն ցաւս և
2 զամենայն հիւանդութիւնս ։ Եւ առաքելոցն երկո-
տասանից էին անուանք այսոքիկ . առաջին Սիմոն՝
անուանեալն Պետրոս և Անդրէաս եղբայր նորա ,
3 Յակոբոս Զեբեդեայ և Յովհաննէս եղբայր նորա ,
Փիլիպպոս և Բարթողիմէոս , Թովմաս և Մատ-
թէոս մաքսաւոր , Յակոբոս Ալփեայ և Ղեբէոս՝ որ
4 անուանեցաւ Թադէոս , Սիմոն Կանանացի և
5 Յուդա Իսկարիովտացի , որ և մատնեացն զնա ։ Զնոսա
երկոտասանեսին առաքեաց Յիսուս , պատուիրեաց
նոցա և ասէ , Ի ճանապարհ Հեթանոսաց մի եր-
թայցէք , և 'ի քաղաք Սամարացւոց մի մտանիցէք ,
6 Այլ երթայք առաւել առ ոչխարն կորուսեալս
7 տանն Իսրայէլի ։ Եւ երբեք երթայցէք՝ քարոզեցէք
և ասացէք թէ Մերձեալ է արքայութիւն երկ-
8 նից ։ Զհիւանդս բժշկեցէք , զբորոտս սրբեցէք ,*
9 զդեւս հանէք , ձրի առէք և ձրի տուք ։ Մի
տոհմայք ոսկի և մի արծաթ և մի պղինձ 'ի գօ-
10 տիս ձեր ։ Մի պարկ 'ի ճանապարհ , և մի երկուս
հանդերձս , մի կօշիկս , մի ցուպ , զի արժանի է
11 մշակն կերակրոյ իւրոյ ։ Յոր քաղաք մտանիցէք կամ

* Ոմանք յաւելուն զմեռեալս յարուցէք ,

'ի գիւղ , հարցանիցէք թէ ո՞ է 'ի նմա արժանի ,
12 և անդ լինիջիք՝ մինչեւ ելանիցէք անտի ։ Եւ երբեք
մտանիցէք 'ի տունն , ողջոյն տացէք նմա՝ *և ասասց-
13 ջիք , Ողջոյն տանս այսմիկ" ։ Եթէ իցէ տունն ար-
ժանի , եկեսցէ ողջոյնն ձեր 'ի վերայ նորա . ապա թէ
ոչ իցէ արժանի , ողջոյնն ձեր առ ձեզ դարձցի ։
14 Եւ որ ոչ ընկալցի զձեզ և ոչ լսիցէ բանից ձերոց ,
երբեք ելանիցէք 'ի տանէն կամ 'ի քաղաքէն յայն-
15 մանէ , թօթափեսջիք զփոշին յոտից ձերոց ։ Ամէն
ասեմ ձեզ , դիւրագոյն լիցի երկրին Սոդոմացւոց և
Գոմորացւոց յաւուրն դատաստանի , քան քաղա-
քին այնմիկ ։
16 Ահաւասիկ ես առաքեմ զձեզ իբրեւ զոչխարս
'ի մէջ գայլոց . եղերուք այսուհետեւ խորագէտք
17 իբրեւ զօձս , և միամիտք իբրեւ զաղաւնիս ։ Զգոյշ
լինիջիք 'ի մարդկանէ , զի մատնեսցեն զձեզ յա-
ժեհանս , և 'ի ժողովուրդս իւրեանց տանջեսցեն զձ-
18 ձեզ ։ Եւ առաջի դատաւորաց և թագաւորաց տա-
նիցեն զձեզ վասն իմ 'ի վկայութիւն նոցա և հե-
19 թանոսաց ։ Այլ յորժամ մատնեսցեն զձեզ , մի
հոգայցէք թէ որպէս կամ զինչ խօսիցիք . զի
20 տացի ձեզ 'ի ժամուն յայնմիկ զինչ խօսիցիք ։ Զի
ոչ եթէ դուք իցէք՝ որ խօսիցիքն , այլ Հոգին Հօր
21 ձերոյ որ խօսիցի 'ի ձեզ ։ Մատնեսցէ եղբայր զեղ-
բայր 'ի մահ , և հայր զորդի . և յարիցեն որդիք
22 'ի վերայ հարց և սպանանիցեն զնոսա ։ Եւ եղիջիք
ատելեալք յամենեցունց վասն անուան իմոյ . իսկ

*Ի Յունարէն չեռագիրս ինչ չէ ։

23 որ համբերեսցէ ՚ի սպառ՝ նա կեցցէ ։ Եւ յորժամ
հալածեսցեն զձեզ ՚ի քաղաքիս յայսմիկ՝ փախիւ-
ջիք յայլ. և եթէ յայնմանէ հալածիցեն զձեզ՝
փախիջիք ՚ի միւս. ամէն ասեմ ձեզ, ոչ սպառեա-
ջիք զքաղաքս Իսրայէլի՝ մինչեւ եկեսցէ Որդի մար-
24 դոյ ։ Ոչ է աշակերտ առաւել քան զվարդապետ,
25 և ոչ ծառայ քան զտէր իւր ։ Շատ իցէ աշակեր-
տին եթէ եղիցի իբրեւ զվարդապետ իւր, և ծա-
ռային՝ իբրեւ զտէր իւր. եթէ զտանուտէրն Բէեղ-
զեբուղ կոչեցին, ո՞րչափ եւս առաւել զընտանիս
26 նորա ։ Մի այսուհետեւ երկնչիցիք ՚ի նոցանէ, զի
ոչ ինչ է ՚ի ծածուկ՝ որ ոչ յայտնեսցի, և գաղտ-
27 նի որ ոչ ծանիցի ։ Զոր ասեմ ձեզ ՚ի խաւարի՝
ասացէք ՚ի լոյս. և զոր ընկէց յունկանէ, քարոզե-
28 ցէք ՚ի վերայ տանեաց ։ Եւ մի երկնչիք յայնցանէ՝
որ սպանանեն զմարմին, և զոգի ոչ կարեն սպա-
նանել. այլ երկերուք դուք առաւել յայնմանէ՝
որ կարող ն է զոգի և զմարմին կորուսանել ՚ի գե-
29 հենի ։ Ո՞չ ապաքէն երկու ճնճղուկք դանկի միոջ
վաճառին, և մի ՚ի նոցանէ յերկիր ոչ անկցի ա-
30 ռանց Հօր ձերոյ ։ Ա՛յլ ձեր և ամենայն իսկ հեր
31 գլխոյ թուեալ է ։ Եւ արդ մի երկնչիցիք, զի լաւ
32 էք քան զբազումս ճնճղուկս ։ Ամենայն որ խոստո-
վանեսցի յիս առաջի մարդկան, խոստովանեցայց և
33 ես զնմանէ առաջի Հօր իմոյ՝ որ յերկինս է ։ Եւ որ
ուրասցի զիս առաջի մարդկան, ուրասցայց և ես
34 զնա առաջի Հօր իմոյ՝ որ յերկինս է ։ Մի համա-
րիք եթէ եկի արկանել խաղաղութիւն յերկիր.
ոչ եկի արկանել խաղաղութիւն, այլ սուր ։
35 Բանզի եկի քակել զայր ՚ի հօրէ իւրմէ, և զդուս-

տրը ՚ի մօրէ իւրմէ, և զհարսն ՚ի սկեսրէ իւրմէ ։
36 Եւ թշնամիք առն ընտանիք իւր ։ (37) Որ սիրէ
զհայր կամ զմայր առաւել քան զիս, ոչ է ինձ
արժանի. և որ սիրէ զորեստր կամ զդուստր առա-
38 ւել քան զիս, չէ ինձ արժանի ։ Եւ որ ոչ առնու
39 զխաչ իւր և գայ զկնի իմ, չէ ինձ արժանի ։ Որ
գտանէ զանձն իւր, կորուսցէ զնա. և որ կորոյս
40 զանձն իւր վասն իմ, գտցէ զնա ։ Որ ընդունի ըզ-
ձեզ՝ զիս ընդունի, և որ զիս ընդունի՝ ընդունի
41 զառաքիչն իմ ։ Որ ընդունի զմարգարէ յանուն
մարգարէի, զվարձս մարգարէի առցէ. և որ ընդու-
նի զարդար յանուն արդարոյ, զվարձս արդարոյ
42 առցէ ։ Եւ որ արբուսցէ միոյ ՚ի փոքրկանցս յայս-
ցանէ բաժակ մի ջուր ցուրտ միայն՝ յանուն ա-
շակերտի, ամէն ասեմ ձեզ, ոչ կորուսցէ զվարձս
իւր ։

ԳԼ. ԺԱ.

1 Եւ եղեւ իբրեւ կատարեաց Յիսուս զպատուէր եր-
կոտասանից աշակերտացն իւրոց, գնաց անտի քարո-
2 զել և ուսուցանել ՚ի քաղաքս նոցա ։ Իսկ Յովհան-
նէս իբրեւ լուաւ ՚ի բանտին զգործս Քրիստոսի,
3 առաքեաց ՚ի ձեռն աշակերտացն իւրոց, և ասէ
ցնա, Դո՞ւ ես որ գալոցն ես, եթէ այլոմ ակն
4 կալցուք ։ Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնոսա,
Գնացէք պատմեցէք Յովհաննու զոր լսէայք և
5 տեսէք ։ Կոյրք տեսանեն, կաղք գնան, բորոտք
սրբին, և խուլք լսեն, և մեռեալք յառնեն, և
6 աղքատք աւետարանին ։ Եւ երանեալ է որ ոչ

7 գայթակղեցայ յիս ։ Եւ իբրեւ նոքա գնացին , ըս-
կըսաւ Յիսուս ասել ցժողովուրդն զՅովհաննէ ,
Զի՞նչ ելէք տեսանել յանապատին , եղէ՞գն շար-
8 ժուն ի հողմոյ . Այլ զի՞նչ ելէք տեսանել . մա՞րդ
ի հանդերձս փափկութեան զարդարեալ . ահաւա-
նիկ որ զփափուկսն զգեցեալ են , ի տունս թագա-
9 ւորաց են ։ Այլ զի՞նչ ելէք տեսանել . մարգարէ՞ .
այո՝ ասեմ ձեզ , և առաւել եւս քան զմարգարէ ։
10 Զի նա է վասն որոյ գրեալն է , Ահա ես առաքեցից
զՀրեշտակ իմ առաջի երեսաց քոց , որ պատրաս-
11 տեսցէ զճանապարհս քո առաջի քո ։ Ամէն ասեմ
ձեզ , Չէ յարուցեալ ի ծնունդս կանանց մեծ քան
զՅովհաննէս Մկրտիչ . բայց փոքրիկն յարքայութեան
12 երկնից մեծ է քան զնա ։ Բայց յաւուրցն Յովհան-
նու Մկրտչէ մինչեւ ցայժմ արքայութիւնն երկնից
13 բռնադատի , և բռնաւորք յափշտակեն զնա ։ Քան-
զի ամենայն օրէնքն և մարգարէքն մինչեւ Յովհան-
14 նէս մարգարէացան ։ Եւ թէ կամիք ընդունել , նա
15 է Եղիա՝ որ գալոցն է ։ Որ ունիցի ականջս լսելոյ՝
16 լուիցէ ։ Ո՞եմ նմանեցուցից զազգս զայս . նման
է մանկտւոյ՝ որ նստիցին ի հրապարակս , կարդայ-
17 ցին զընկերս իւրեանց , եւ ասիցեն , փող հարաք
ձեզ և ոչ կաքաւեցէք , ողբացաք ձեզ և ոչ կո-
18 ծեցարուք ։ Եկն Յովհաննէս , ոչ ուտէր և ոչ ըմ-
19 պէր , և ասեն , Դեւ դոյ ի նմա ։ Եկն Որդի մարդոյ՝
ուտէ և ըմպէ . և ասեն , Ահա այր կերող և արբե-
ցող , բարեկամ մաքսաւորաց և մեղաւորաց , և
20 արդարացաւ իմաստութիւն յորդւոց իւրոց ։ Յայն-
ժամ սկսաւ նախատել զքաղաքսն՝ յորս եղեն բա-
զում զօրութիւնք նորա , և ոչ ապաշխարեցին ։

21 Վայ քեզ , Քորազին , վայ քեզ , Բեթսայիդա , զի
եթէ ի Տիւրոս և ի Սիդոն եղեալ էին զօրութիւնքն
որ ի ձեզ եղեն , վաղուց եւս արդեօք խորգով և
22 մխրճով ապաշխարեալ էր ։ Բայց ասեմ ձեզ , դիւ-
րագոյն լինի երկրին Տիւրոսի և Սիդոնի յաւուրն
23 դատաստանի՝ քան ձեզ ։ Եւ դու , Կափառնայում ,
*մի մինչեւ յերկինս բարձրացիս , այլ՝ մինչեւ ի
դժոխս իջցես . զի եթէ ի Սոդոմ եղեալ էին զօ-
րութիւնքն որ ի քեզ եղեն , ապաքէն կային եւս
24 մինչեւ ցայսօր ։ Բայց ասեմ ձեզ եթէ երկրին Սո-
դոմացւոց դիւրագոյն լինի յաւուրն դատաստանի ,
քան քեզ ։
25 Յայնմ ժամանակի պատասխանի ետ Յիսուս և
ասէ , Գոհանամ զքեզ , Հայր , Տէր երկնի և երկրի ,
զի ծածկեցեր զայս յիմաստնոց և ի դիտնոց , և
26 յայտնեցեր տղայոց ։ Այո , Հայր , զի այսպէս հա-
27 ճոյ եղեւ առաջի քո ։ Ամենայն ինչ տուաւ ինձ
ի Հօրէ իմմէ . և ոչ ոք ճանաչէ զՈրդի՝ եթէ ոչ
Հայր , և ոչ զՀայր ոք ճանաչէ՝ եթէ ոչ Որդի , և
28 ումմ Որդին կամիցի յայտնել ։ Եկայք առ իս ,
ամենայն վաստակեալք և բեռնաւորք , և ես հան-
29 գուցից զձեզ ։ Առէք զլուծ իմ ի ձեզ , և ուսա-
րուք յինէն , զի հեզ եմ և խոնարհ սրտիւ , և գըտ-
30 ջիք հանգիստ անձանց ձերոց ։ Զի լուծ իմ քաղցր
է , և բեռն իմ՝ փոքրոգի ։

---

* Ի Յայն՝ որ մինչեւ յերկինս բարձրացեալ ես ,

ԳԼ. ԺԲ

1 Յայնժամ գնաց Յիսուս ընդ արտորայն նոցա
'ի շաբաթու, և աշակերտքն նորա քաղցեան և
2 սկսան հասկ կորզել և ուտել։ Փարիսեցիքն իբրեւ
տեսին՝ ասեն ցնա, Ահաւասիկ աշակերտք քո
գործեն, զոր ոչ է արժան գործել 'ի շաբաթու։
3 Եւ նա ասէ ցնոսա, Ո՞չ իցէ ընթերցեալ ձեր զոր
արար Դաւիթ, յորժամ քաղցեաւն, և որ ընդ
4 նմանն էին։ Զիարդ եմուտ 'ի տունն Աստուծոյ և
եկեր զՀացն զառաջաւորութեան, զոր ոչ էր օրէն
նմա ուտել, և ոչ որոց ընդ նմանն էին, բայց մի-
5 այն քահանայից։ Կամ թէ չիցէ՞ ընթերցեալ յո-
բէնս՝ զի 'ի շաբաթս քահանայքն 'ի տաճարին պղծե-
6 ծեն զշաբաթն և անմեղք են։ Բայց ասեմ ձեզ,
7 զի մեծ քան զտաճարն է սա։ Եւ եթէ գիտէիք
զինչ է՝ Ողորմութիւն կամիմ՝ և ոչ պղծոյ, ապա
8 ոչ դատապարտէիք դուք զանպարտն։ Զի տէր է
9 շաբաթու Որդին մարդոյ։ Եւ գնացեալ անտի
10 *Յիսուս եկն 'ի ժողովուրդն նոցա։ Եւ անդ էր այր
մի՝ որոյ ձեռն իւր գօսացեալ էր. Հարցին ցնա և
ասեն եթէ պա՞րտ իցէ 'ի շաբաթու բժշկել, զի
11 չարախօսեսցեն զնմանէ։ Եւ նա ասէ ցնոսա, Ո՞վ
է 'ի ձենջ մարդ՝ որոյ իցէ ոչխար մի, և անկանիցի
այն 'ի խորխորատ 'ի շաբաթու, մի՞թէ ոչ ունիցի
12 և յարուցանիցէ զնա։ Իսկ արդ ո՞րչափ եւս առա-
ւել է մարդ քան զոչխար. ապա ուրեմն պարտ է

* Ի ցոյն՝ էր։

13 'ի շաբաթու բարիս գործել։ Ցայնժամ ասէ ցայրն,
Զձեռն քո, և նա ձգեաց և եղեւ ողջ իբ-
14 րեւ զմիւսն։ Իսկ փարիսեցիքն ելեալ արտաքս
խորհուրդ արարին զնմանէ՝ թէ ո՞րպէս կորուսցեն
15 զնա։ Եւ Յիսուս իբրեւ գիտաց, մեկնեցաւ անտի.
և գնացին զհետ նորա ժողովուրդք բազումք, և
16 բժշկեաց զամենեսեան։ Եւ սաստեաց նոցա զի մի
17 յայտնեսցեն զնմանէ ումեք։ Զի լցցի որ ասացաւն
18 'ի ձեռն Եսայեայ մարգարէի, Ահա մանուկ իմ
զոր ընտրեցի, և սիրելի իմ՝ ընդ որ հաճեցաւ անձն
իմ. եդից զՈգի իմ 'ի վերայ նորա, և իրաւունս
19 Հեթանոսաց պատմեսցէ։ Ոչ հակառակեսցի և ոչ
աղաղակեսցէ, և ոչ ոք լուիցէ 'ի հրապարակս
20 զբարբառ նորա։ Զեղէգն ջախջախեալ ոչ փշրեսցէ,
և զպատրոյկն առկայծեալ ոչ շիջուսցէ, մինչեւ
21 հանցէ 'ի յաղթութիւն զդատաստանն. Եւ յանուն
նորա Հեթանոսք յուսասցին։
22 Ցայնժամ մատուցաւ առ նա դիւահար մի կոյր
և համր, և բժշկեաց զնա. որպէս զի համրն և կոյրն
23 խօսիցի և տեսանիցէ։ Զարմացան ամենայն ժողո-
վուրդքն և ասէին, Միթէ սա՞ իցէ *Որբիստոսն
24 որդի Դաւթի։ Բայց փարիսեցիքն իբրեւ լուան՝
ասեն, Ոչ իւիք հանէ դա զդեւս, եթէ ոչ Բէելզե-
25 զեբուղաս իշխանաւն դիւաց։ Իբրեւ գիտաց Յի-
սուս զխորհուրդս նոցա՝ ասէ ցնոսա, Ամենայն թա-
գաւորութիւն բաժանեալ յանձն իւր՝ աւերի. և
ամենայն քաղաք կամ տուն բաժանեալ յանձն
26 իւր՝ ոչ կացցէ։ Եւ եթէ Սատանայ զՍատանայ

* Ի ցոյն՝ որդին Դաւթի։

հանէ, յանձն իւր բաժանեցաւ. արդ զի՞նչ կացցէ
27 թագաւորութիւն նորա։ Եւ եթէ ես բէեղզեբուղ
սաւ հանեմ զդեւս՝ որդիքն ձեր ի՞նչ հանիցեն,
28 վասն այնորիկ նոքա եղիցին ձեր դատաւորք։ Ապա
եթէ Հոգւով Աստուծոյ հանեմ ես զդեւս, ուրեմն
հասեալ է ի վերայ ձեր արքայութիւն Աստուծոյ։
29 Կամ զի՞նչ կարէ ոք մտանել ի տուն հզօրի՝ և
զգործիսն նորա յափշտակել, եթէ ոչ նախ կապիցէ
30 զհզօրն, և ապա զտունն նորա յափշտակիցէ։ Որ
ոչ ընդ իս է, հակառակ իմ է. և որ ոչ ժողովէ
31 ընդ իս՝ ցրուէ։ Վասն այդորիկ ասեմ ձեզ, Ամե-
նայն մեղք և հայհոյութիւնք թողցին մարդկան.
32 բայց զՀոգւոյն հայհոյութիւն մի *թողցի։ Եւ որ
ոք ասիցէ բան զՈրդւոյ մարդոյ՝ թողցի նմա. բայց
որ զՀոգւոյն Սրբոյ ասիցէ՝ մի թողցի նմա, մի
33 յայսմ աշխարհի և մի ի հանդերձեալումն։ Կամ
արարէք զծառն բարի՝ և զպտուղ նորա բարի,
կամ արարէք զծառն չար՝ և զպտուղ նորա չար.
34 քանզի ի պտղոյ անտի ծառն ճանաչի։ Ծնունդք
իժից, զի՞նչ կարիցէք բարիս խօսել՝ որ չարքդ
էք. քանզի ի յաւելուածոյ սրտի խօսի բերան։
35 Մարդ բարի ի բարի գանձուց սրտի իւրոյ հանէ
զբարիս. և մարդ չար ի չար գանձուց †սրտի իւ-
36 րոյ՝՝ հանէ զչարիս։ Բայց ասեմ ձեզ թէ ընդ ա-
մենայն դատարկ բանի զոր խօսիցին մարդիկ, տա-
37 ցեն համար յաւուրն դատաստանի։ Զի ի բանից
քոց արդարասցիս, և ի բանից քոց պարտաւորես-
ցիս։

* Ի Ցննն՝ Թողցի մարդկան † Ի Ցննն Էփ։

38 Յայնժամ պատասխանի ետուն նմա ոմանք ի
դպրացն և ի փարիսեցւոց, և ասեն, Վարդապետ
39 կամիմք նշան ինչ տեսանել ի քէն։ Նա պատաս-
խանի ետ և ասէ ցնոսա, Ազգ չար և շնացող նը-
շան խնդրէ. և նշան մի տացի նմա, բայց նշանն
40 Յովնանու մարգարէի։ Զի որպէս էր Յովնան ի փոր
կիտին զերիս տիւս և զերիս դիշերս, նոյնպէս եղիցի
և Որդի մարդոյ ի սիրտ երկրի զերիս տիւս և զերիս
41 դիշերս։ Արք Նինուէացիք յարիցեն ի դատաստա-
նի ընդ ազգիս ընդ այսմիկ՝ և դատապարտեսցեն
զսա, զի ղղջացան ի քարոզութեանն Յովնանու.
42 և արդ ահաւասիկ մեծ քան զՅովնան է աստ։ Դշխոյն
հարաւոյ յարիցէ ի դատաստանի ընդ ազգիս ընդ
այսմիկ և դատապարտեսցէ զսա. զի եկն ի ծագաց
երկրի՝ լսել զիմաստութիւնն Սողոմոնի, և ահա մեծ
43 քան զՍողոմոն է աստ։ Ահա յորժամ այսն պիղծ
ելանէ ի մարդոյ՝ շրջի ընդ անջրդին տեղիս. խնդրէ
44 հանգիստ և ոչ գտանէ։ Յայնժամ ասէ, Դար-
ձայց ի տուն իմ՝ ուստի ելի. և եկեալ գտանէ
45 զնա պարապորդ, մաքրեալ և յարդարեալ։ Յայն-
ժամ երթայ և առնու ընդ իւր եօթն այլ այսս
չարագոյնս քան զինքն, և մտեալ բնակէ անդ. և
լինի յետինն մարդոյն այնորիկ չար քան զառաջի-
46 նէն. այնպէս եղիցի և ազգիս այսմիկ չարի։ Մինչ-
դեռ նա ընդ ժողովրդոն խօսէր, ահա մայր նորա
և եղբարք նորա կային արտաքոյ՝ և խնդրէին խօսել
47 ընդ նմա։ Եւ ասէ ոմն ցնա, Ահա մայր քո և եղ-
բարք քո կան արտաքոյ և խնդրեն խօսել ընդ քեզ։
48 Նա պատասխանի ետ այնմիկ որ ասացն ցնա, Եւ
ասէ, Ո՞վ է իմ մայր, կամ ո՞վ են իմ եղբարք։

49 Եւ ձգեալ զձեռն իւր յաշակերտան՝ ասէ, Ահա
50 մայր իմ և եղբարք իմ։ Զի որ առնիցէ զկամն Հօր
իմոյ որ յերկինսն է, նա է իմ եղբայր և քոյր և
մայր։

Գլ. ԺԳ

4 Յաւուրը յայնմիկ ելեալ Յիսուս ի տանէն՝ նըս-
2 տաւ առ ծովեզերբն։ Եւ ժողովեցան առ նա ժողո-
վուրդք բազումք, մինչեւ մտանել նմա ի նաւն և
նստել. և ամենայն ժողովուրդն կայր առ ծովեզերբըն.
3 Եւ խօսեր ընդ նոսա բազումս առակօք և ասէր,
4 Ահա ել սերմանահան սերմանել. և ի սերմաննելն
իւրում էր որ անկաւ առ ճանապարհաւ, և եկն
5 թռչունն *երկնից և եկեր զնա։ Եւ այլ անկաւ յա-
պառաժի, ուր ոչ գոյր հող բազում. և վազվա-
6 զակի բուսաւ առ ի չդոյէ հիւթոյ երկրին. ի ծա-
գել արեւուս տապացաւ, և ոչ գոյին արմատք՝
7 չորացաւ։ Եւ այլ անկաւ ի մէջ փշոց, և եկին
8 փուշքն և հեղձուցին զնա։ Եւ այլ անկաւ յեր-
կիր բարի, և տայր պտուղ՝ էր որ հարիւրաւոր, և
9 էր որ վաթսնաւոր, և էր որ երեսնաւոր։ Որ ու-
10 նիցի ականջս լսելոյ, լուիցէ։ Եւ մատուցեալ աշա-
կերտքն ասեն ցնա, Ընդէ՞ր առակօք խօսիս ընդ
11 նոսա։ Նա պատասխանի եւ ասէ ցնոսա, Քանզի
ձեզ տուեալ է գիտել զխորհուրդս արքայութեան
12 երկնից, և նոցա չէ տուեալ։ Զի որ գուցէ՝ տացի
նմա և յաւելցի, և որ ոչն գուցէ, և զոր ունի-

* Ի ցայն չէ։

13 ցին՝ բարձցի ի նմանէ։ Վասն այնորիկ առակօք
խօսիմ ընդ նոսա, զի տեսանեն՝ և ոչ տեսանեն.
14 և լսեն՝ և ոչ լսեն և ոչ առնուն ի միտ։ Եւ կա-
տարի առ նոսա մարգարէութիւնն Եսայեայ՝ որ
ասէ, Լսելով լսիջիք՝ և մի խմասջիք, և տեսանե-
15 լով տեսջիք՝ և մի տեսջիք։ Զի թանձրացաւ սիրտ
ժողովրդեանս այսորիկ, և ականջօք իւրեանց ծա-
նրացնեն լսուան, և զաչս իւրեանց կափուցին. զի մի
երբեք տեսցեն աչօք և ականջօք լուիցեն և սրտիւք
16 խմասցին և դարձցին, և բժշկեցից զնոսա։ Բայց
ձեր երանի է աչացդ՝ զի տեսանեն, և ականջաց
17 ձերոց՝ զի լսեն։ Ամէն ասեմ ձեզ, զի բազում
մարգարէք և արդարք ցանկացան տեսանել զոր
տեսանէքդ՝ և ոչ տեսին, և լսել զոր լսէքդ՝ և ոչ
18 լսան։ Եւ արդ լսարուք դուք զառակ սերմնաս-
19 ցանին։ Յամենայնէ՝ որ լսէ զբանն արքայութեան
և ոչ առնու ի միտ, գայ չարն և յափշտակէ զսեր-
մանեալն ի սիրտ նորա. այն է որ առ ճանապար-
20 հաւն սերմանեցաւ։ Եւ որ յապառաժին սերմա-
նեցաւ՝ այն է, որ իբրեւ լսէ զբանն, և վազվազա-
21 կի խնդութեամբ ընդունի զնա։ Բայց քանզի ոչ
ունի արմատս յինքեան, այլ առ ժամանակ մի է,
ի լինել նեղութեան և հալածանաց վասն բանին՝
22 վազվազակի գայթակղի։ Իսկ որ ի մէջ փշոցն սեր-
մանեցաւ՝ այն է, որ իբրեւ լսէ զբանն, և հոգք
աշխարհիս և պատրանք մեծութեան հեղձուցանեն
23 զբանն, և լինի անպտուղ։ Իսկ որ յերկիրն բարի սերմանեցաւ՝ այն է, որ իբրեւ լսէ զբանն և ի միտ առնու, և տայ պտուղ՝ է որ հարիւր, և է որ վաթսուն, և է որ երեսուն։

24 Ա.ՀԼ առակ արկ առ նոսա և ասէ , Նմանեցաւ արքայութիւն երկնից առն , որ սերմանիցէ սերմն բարի
25 յագարակի իւրում։ Եւ ի քուն լինել մարդկան , եկն թշնամին նորա և ցանեաց ի վերոյ որոմն ի
26 մէջ ցորենոյն՝ և գնաց ։ Եւ իբրեւ բուսաւ խոտն՝
27 և արար պտուղ , ապա երեւեցաւ և որոմնն ։ Մատուցեալ ծառայք տանուտեառնն ասեն ցնա , Տէր , ո՞չ սերմն բարի սերմանեցեր յագարակին քումմ,
28 արդ ուստի՞ ունիցի զորոմնն ։ Եւ նա ասէ ցնոսա , Ա.ՀԼ թշնամի արար զայն . ասեն ցնա ծառայքն ,
29 կամի՞ս ղի երթիցուք քաղեսցուք զայն ի բաց ։ Եւ նա ասէ ցնոսա , Մի , գուցէ մինչ քաղիցէք զորոմնն ,
30 և զցորեանն ընդ նմին ի բաց խլիցէք ։ Թոյլ տուք երկոցունց աճել ի միասին մինչեւ ի հունձս , և ի ժամանակի հնձողն ասացից ցհնձողսն , Քաղեցէք նախ զորոմնդ և կապեցէք զայդ խրձունս առ ի
31 յայրել , և զցորեանն ժողովեցէք ի շտեմարանս իմ ։ Ա.ՀԼ առակ արկ առ նոսա և ասէ , Նման է արքայութիւն երկնից հատոյ մանանխոյ , զոր առեալ
32 մարդոյ՝ սերմանեաց յագարակի իւրում ։ Որ փոքր է քան զամենայն սերմանիս . և յորժամ աճիցէ , մեծ է քան զամենայն բանջարս . և լինի ծառ՝ մինչեւ գալ թռչնոց երկնից և հանդչել յոսպս նորա ։
33 Ա.ՀԼ առակ խօսեցաւ ընդ նոսա և ասէ , Նման է արքայութիւն երկնից խմորոյ , զոր առեալ կնոջ
34 թագոյց ի գրիւս երիս ալեւր՝ մինչեւ ամենայն խմո-
35 բեցաւ ։ Զայս ամենայն խօսեցաւ Յիսուս առակօք ընդ ժողովրդեան , և առանց առակի ոչինչ խօսէր
35 ընդ նոսա ։ Զի լցցի ասացեալն ի մարգարէէն , Բա-

ցիւ առակօք զբերան իմ , բղխեցից զծածկեալսն ի սկզբանէ աշխարհի ։
36 Յայնժամ թողեալ Յիսուս զժողովրդեան՝ եկն ի տուն . մատեան առ նա աշակերտքն նորա և ասեն , Մեկնեա մեզ զառակ որոմանցն ագարակի ։
37 Նա պատասխանի եւս և ասէ ցնոսա , Որ սերմանէ
38 զսերմն բարի՝ է Որդի մարդոյ ։ Եւ ագարակն աշխարհս է , սերմն բարի նոքա են՝ որ որդիքն արքայ-
39 յութեան են , իսկ որոմն որդիք չարին են ։ Եւ թշնամին որ վարեաց զայն՝ Սատանայ է , և հունձքն կատարած աշխարհիս է , և հնձողքն հրեշտակք են ։
40 Որպէս ժողովի որոմնն և ի հուր այրի , այնպէս եղիցի
41 ի կատարածի աշխարհիս ։ Առաքեսցէ Որդի մարդոյ զհրեշտակս իւր , և ժողովեսցեն յարքայութենէ նորա զամենայն գայթակղութիւնս , և զգայնոսիկ որք գոր-
42 ծեն զանօրէնութիւն։ Եւ արկցեն զնոսա ի հնոց հրոյ .
43 անդ եղիցի լալ և կրճելատամանց ։ Յայնժամ արդարքն ծագեսցին իբրեւ զարեգակն արքայութեան *երկնից ։ Որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ ։
44 Դարձեալ նման է արքայութիւն երկնից գանձի ծածկելոյ յագարակի , զոր գտեալ մարդոյ՝ թագոյց . և ի խնդութենէ անտի երթայ վաճառէ զա-
մենայն ինչ զոր ունի , և դնէ զագարակն զայն ։
45 Դարձեալ նման է արքայութիւն երկնից առն վաճառականի՝ որ խնդրիցէ մարգարիտս գեղեցիկս ։
46 Եւ գտեալ մի պատուական մարգարիտ՝ երթեալ վաճառեաց զամենայն զոր ինչ ունէր՝ և գնեաց զայն †մարգարիտ ։

---

* Ի Յոյն՝ Հօր իւրեանց ։ † Ի Յոյն՝ Ա՛ ։

Դարձեալ նման է արքայութիւն երկնից ուռկանի
48 արկելոյ ի ծով՝ և յամենայն ազգաց ժողովելոյ ։ Զոր
իբրեւ լցաւ , հանեալ ի ցամաք՝ և նստեալ ժողո-
վեցին զբարի բարին յամանս , և զվատանն ի բաց
49 ընկեցին ։ Այնպէս եղիցի ի կատարած աշխարհիս .
ելցեն հրեշտակք և մեկնեսցեն զչարս ի միջոյ ար-
50 դարոց , եւ արկցեն զնոսա ի հնոց հրոյն . անդ եղի-
51 ցի լալ և կրճելատամանց ։ Ասէ ցնոսա Յիսուս ,
Լա՞ւ գաբո՞ւք զայս ամենայն . ասեն ցնա , Այո ,
52 Տէր ։ Եւ նա ասէ ցնոսա , Վասն այսորիկ ամենայն
դպիր աշակերտեալ արքայութեան երկնից՝ նման է
առն տանուտեառն , որ հանէ ի գանձէ իւրմէ զնոր
և զհին ։
53 Եւ եղեւ իբրեւ կատարեաց Յիսուս զառակս զայ-
54 սոսիկ՝ փոխեցաւ անտի ։ Եւ եկեալ ի գաւառ իւր՝
ուսուցանէր զնոսա ի ժողովրդեանն նոցա , մինչեւ
զարմանալ նոցա և ասել , Սմա ուստի՞ իցէ այս
55 իմաստութիւն և զօրութիւնք ։ Ո՞չ սա է հիւսանն
որդի . ո՞չ մայր սորա կոչի Մարիամ՝ , և եղբարք սորա
56 Յակոբոս և Յովսէս և Սիմոն և Յուդա ։ Եւ քոյրք
սորա ամենեքեան առ մեզ են . արդ ուստի՞ է սմա
57 այս ամենայն ։ Եւ գայթակղէին ի նա . և Յիսուս
ասէ ցնոսա , Զի մարգարէ անարգ՝ եթէ ոչ հիւրուա՛
58 գաւառի և հիւրուա՛ տան ։ Եւ ոչ արար անդ զո-
րութիւնս բազումս վասն անհաւատութեան նոցա ։

Գ Լ · Ժ Դ

1 Յայնմ ժամանակի լուաւ Հերովդէս չորրորդապետ
2 զլուր Յիսուսի ։ Եւ ասէ ցծառայս իւր , Նա է Յով-

հաննէս մկրտիչ , նա յարեաւ ի մեռելոց , և վասն
3 այնորիկ զօրութիւնք լինին նովաւ ։ Քանզի Հերով-
դէս կալաւ զՅովհաննէս , կապեաց զնա և եդ ի
բանտի վասն Հերովդիայ կնոջ Փիլիպպոսի եղբօր
4 նորա ։ Զի ասէր ցնա Յովհաննէս , Չէ արժան քեզ
5 ունել զդա ։ Եւ կամէր զնա սպանանել , բայց եր-
կնչէր ի ժողովրդենէ անտի , քանզի իբրեւ զմար-
6 գարէ ունէին զնա ։ Եւ իբրեւ եղեւն ծնունդք Հե-
րովդի՝ կաքաւեաց դուստրն Հերովդիայ ի միջ բազ-
7 մականին . և հաճոյ թուեցաւ Հերովդի ։ Ուստի և
երդմամբ խոստացաւ տալ նմա զինչ և խնդրեսցէ ։
8 Եւ նա յառաջադոյն խրատեալ ի մօրէ իւրմէ ,
Տուր ինձ , ասէ , այսր ի վերոյ սկտեղ զգլուխն
9 Յովհաննու մկրտչի ։ Եւ արամեցաւ թագաւորն ,
բայց վասն երդմանցն և բարձակցացն հրամայեաց
10 տալ նմա ։ Եւ առաքեաց գլխատեաց զՅովհաննէս
11 ի բանտի ։ Եւ բերաւ գլուխ նորա սկտեղը և տուաւ
12 աղջկանն , և տարաւ առ մայր իւր ։ Եւ մատուե-
ցեալ աշակերտքն նորա՝ բարձին զմարմինն և թա-
ղեցին , և եկեալ պատմեցին Յիսուսի ։
13 Եւ իբրեւ լուաւ Յիսուս , գնաց անտի նաւու
յանապատ տեղի առանձին . իբրեւ լսան ժողո-
վուրդքն , գնացին զհետ նորա հետի ի քաղաքաց
14 անտի ։ Եւ իբրեւ* ել՝ եւս ժողովուրդ բազում ,
գթացաւ ի նոսա և բժշկեաց զհիւանդս նոցա ։
15 Իբրեւ ընդ երեկս եղեւ , մատեան առ նա աշակերտ-
քըն և ասեն , Տեղիս անապատ է և օրս տարա-
ժամեալ , արձակեա զժողովուրդսդ , զի երթիցեն

* Ոմն՝ Յիսուս ել՝

16 շուրջ ՚ի շէնան՝ գնեացին իւրեանց կերակուրս : Եւ
ասէ Յիսուս , Ոչինչ պիտոյ է դոցա երթալ , դուք
17 տուք դոցա ուտել : Եւ նոքա ասեն ցնա , Ոչինչ
ունիմք ասա՛ բայց հինգ նկանակ և երկուս ձկունս :
18 Եւ ասէ ցնոսա , Բերէք այսր զայն : (19) Եւ հրա-
մայեաց բազմեցուցանել զժողովուրդան ՚ի վերայ խո-
տոյ . և առեալ զհինգ նկանակն և զերկուս ձկունս
սըն՝ հայեցաւ յերկինս , օրհնեաց և երեկ և ետ
ցաշակերտան զնկանակն , և աշակերտքն՝ ժողովըր-
20 դոցն : Կերան ամենեքեան և յագեցան , և բար-
ձին զշշխարս կոտորոյն երկոտասան սակառի լի :
21 Եւ որք կերանն՝ էին արք իբրեւ հինգ հազար , թող
22 զկանայս և զմանկտի : Եւ սահեցաց վաղվաղակի
զաշակերտան մտանել ՚ի նաւ և յառաջել յայն-
կոյս , մինչ ինքն զժողովուրդան արձակեսցէ :
23 Եւ իբրեւ արձակեաց զժողովուրդան , ել ՚ի լեառն
առանձինն կալ յաղօթս . և իբրեւ ընդ երեկս է-
24 ղեւ , անդ էր միայն : Եւ նաւն *մեկնեալ էր ՚ի
ցամաքէն բազում ասպարիզօք՝՝ ծփեալ յալեացն .
25 քանզի ընդդէմ էր հողմն : Եւ ՚ի չորրորդում՝ պա-
հու գիշերոյն եկն առ նոսա Յիսուս գնալով ՚ի վե-
26 րայ ծովուն : Իբրեւ տեսին զնա աշակերտքն զի գը-
նայր ՚ի վերայ ծովուն , խռովեցան , և ասեն թէ
27 Աւաչօք ինչ իցէ . և առ ահին աղաղակեցին : Եւ
վաղվաղակի խօսեցաւ ընդ նոսա Յիսուս և ասէ ,
28 Քաջալերեցարուք , ես եմ , մի երկնչիք : Պատաս-
խանի ետ նմա Պետրոս և ասէ , Տէր , եթէ դու ես ,
29 հրամայեա ինձ դալ առ քեզ ՚ի վերայ ջրոցս : Եւ

* Ի ՅՈՒՆ՝ էր ՚ի մէջ ծովուն՝

նա ասէ , Եկ . և իջեալ ՚ի նաւէն Պետրոս՝ գնաց
30 ՚ի վերայ ջրոցն , *և եկն՝՝ առ Յիսուս : Եւ տեսեալ
զհողմն սաստիկ՝ երկեաւ . և իբրև սկսաւ ընկղմիլ՝
31 աղաղակեաց և ասէ , Տէր , փրկեա զիս : Եւ վաղ-
վաղակի Յիսուս ձգեաց զձեռն իւր՝ կալաւ զնա և
32 ասէ , Թերահաւատ , ընդէ՞ր երկմտեցեր : Եւ իբրեւ
33 ելին ՚ի նաւն՝ հանդարտեաց հողմն : Եւ որ ՚ի նա-
ւին էին՝ մատուցին , երկիրպագին նմա և ասեն , Ա-
34 ստուածդ իս դու : Եւ անցեալ եկին
35 ՚ի ցամաք ՚ի Գեննեսարեթ : Եւ իբրեւ ծանեան զնա
արք տեղւոյն այնորիկ , առաքեցին ընդ ամենայն
36 դաւառն՝ և ածին առ նա զամենայն հիւանդս , Եւ
աղաչէին զնա , զի գոնէ միայն ՚ի քղանցս հանդեր-
ձի նորա մերձենացին . և որ միանդամ՝ մերձեցան՝
փրկեցան ,

ԳԼ· ԺԵ

1 Յայնժամ մատեան առ Յիսուս՝ որ Երուսաղէմէ
2 փարիսեցիքն և դպիրք՝ և ասեն , Ընդէ՞ր աշակերտ-
քըն քո անցանեն զաւանդութեամբ ծերոցն . զի
3 ոչ լուանան զձեռս յորժամ հաց ուտեն : Նա պա-
տասխանի ետ և ասէ ցնոսա , Իսկ դուք ընդէ՞ր
անցանէք զպատուիրանսն Աստուածդ վասն ձերոյ
4 աւանդութեանն՝ Զի Աստուած †ասաց , Պատուեա
5 զՏայր քո և զմայր . Եւ որ բամբասէ զՏայր կամ
6 զմայր , մահու վախճանեսցի : Եւ դուք ասէք , Որ

* Ի ՅՈՒՆ՝ զի եկեսցէ

† Ի ՅՈՒՆ՝ պատուիրեաց՝ ասելով .

ասիցե ցհայր իւր կամ ցմայր իւր թէ Պատա-
բագ է՝ զոր չինէն օգտիցիս , և ոչ պատուիցե զը-
հայր իւր և զմայր իւր . և խոտեաք զբանն Աստու-
7 ծոյ վասն ձերոյ աւանդութեանն : Կեղծաւորք , բա-
րեաւ մարգարէացաւ ի վերայ ձեր Եսայի , և ասէ ,
8 ժողովրդս այս շրթամբք պատուէ զիս , և սիրտ
9 իւրեանց հեռացեալ մեկուսի է չինէն : Զուր պաշ-
տեն զիս , ուսուցանելն վարդապետութիւնս՝ զմարդ-
10 կան պատուիրեալս : Եւ կոչեցեալ առ ինքն զժողո-
վուրդն՝ ասէ ցնոսա , Լուարուք և ի միտ առէք .
11 Ոչ որ ինչ մտանէ ընդ բերան՝ պղծէ զմարդ , այլ
12 որ ինչ ելանէ ի բերանոյ՝ այն պղծէ զմարդ : Յայն-
ժամ մատուցեալ աշակերտացն նորա՝ ասեն ցնա ,
Գիտե՞ս զի փարիսեցիքն իրրեւ լուան զբանն՝ դայ-
13 թակղեցան : Նա պատասխանի եւ նոցա և ասէ ,
Ամենայն տունկ զոր ոչ տնկեաց Հայր իմ երկնաւոր ,
14 խլեսցի : Թոյլ տուք զնոսա . կոյրք են՝ կուրաց ա-
ռաջնորդք . կոյր կուրի յորժամ առաջնորդէ՝ *սը-
15 խալէ , և՝ երկոքեան ի խորխորատ անկանին : Պա-
տասխանի եւ Նմա Պետրոս և ասէ , Մեկնեա մեզ
16 զառակս զայս : Ասէ Յիսուս , Տակաւին և դո՞ւք ան-
17 միաք էք . Եւ ոչ խմանայք եթէ ամենայն որ մտա-
նէ ի բերան , յորովայն երթայ և արտաքս ելանէ :
18 Իսկ որ ելանէ ի բերանոյ՝ ի սրտէ անտի դայ , և այն
19 պղծէ զմարդն : Զի ի սրտէ ելանեն խորհուրդք չարք ,
սպանութիւնք , շնութիւնք , պոռնկութիւնք , գո-
ղութիւնք , սուտ վկայութիւնք , հայհոյութիւնք :
20 Ա՛յս ամենայն է՝ որ պղծէ զմարդն , այլ անլուայ
ձեռօք ուտել ոչ պղծէ զմարդ :

* Ի Յոյն՝ չէ :

21 Եւ ելեալ անտի Յիսուս գնաց ի կողմանս Տիւ-
22 րոսի և Սիդոնի : Եւ ահա կին մի Քանանացի ի
սահմանաց անտի նոցա ելեալ , աղաղակէր և ասէր ,
Ողորմեաց ինձ , Տէր՝ որդի Դաւթի , դուստր իմ չա-
23 րաչար այսահարի : Եւ նա ոչ ետ նմա պատասխանի .
և մատուցեալ աշակերտքն նորա՝ աղաչէին զնա և
ասէին , Արձակեա զնա զի աղաղակէ զհետ մեր :
24 Նա պատասխանի ետ և ասէ , ոչ ուրեք առաքե-
ցայ՝ եթէ ոչ առ ոչխարս կորուսեալս տանն Իսրա-
25 էլի : Եւ նա մատուցեալ երկիրպագանէր նմա և
26 ասէր , Տէր , օգնեա ինձ : Պատասխանի ետ նմա և
ասէ , Ոչ է բարւոք առնուլ զհաց մանկանց և ար-
27 կանել շանց : Եւ նա ասէ , Ա՛յո , Տէր , քանզի և
շունք կերակրին ի փշրանաց անկելոց ի սեղանոյ
28 տեառն իւրեանց : Յայնժամ պատասխանի ետ Նմա
Յիսուս և ասէ , Ով կին դու , մեծ են հաւատք քո ,
եղիցի քեզ որպէս և կամիս . և բժշկեցաւ դուստր
նորա ի նմին ժամու :
29 Եւ գնացեալ անտի Յիսուս , եկն ի ծովեզերն
Գալիլեացւոց , և ելեալ ի լեառն նստէր անդ :
30 Մատեան առ նա ժողովուրդք բազումք՝ որ ունէին
ընդ իւրեանս՝ կաղս , կոյրս , համրս , միակողմանիս
և այլս բազումս . և ընկեցին զնոսա առ ոտս *նորա՝
31 և բժշկեաց զնոսա : Մինչեւ զարմանալ ժողովրդոյն
որ տեսանէին , զի համրքն խօսէին , կաղք գնա-
յին , միակողմանիք բժշկէին , կոյրք տեսանէին . և
32 փառաւոր առնէին զԱստուած Իսրայէլի : Եւ կո-
չեցեալ առ ինքն Յիսուս զաշակերտան՝ ասէ , Գթամ

* Ի Յոյն՝ Յիսուսի՝

'ի ժողովուրդդ , զի արդ երեք աւուրք են՝ զի կան
առ իս , և ոչ ունին զինչ ուտիցեն . և արձակել
զդոսա նօթիս՝ չկամիմ՝ գուցէ նքթիցին ճանա-
33 պարհայն : Ասեն ցնա աշակերտքն , իսկ արդ մեղ
յանապատի աստ ուստի՞ իցէ այնչափ հաց՝ մինչեւ
34 յագեցուցանել զայսչափ ժողովուրդ : Եւ ասէ ցնո-
սա Յիսուս , քանի՞ նկանակ ունիք . և նոքա ասեն ,
35 եօթն և սակաւ ձկունս : Եւ հրամայեաց ժողո-
36 վըրդեանն բազմել 'ի վերայ գետնոյ : Եւ առեալ
զեօթն նկանակսն և զձկունսն՝ գոհացաւ և եբեկ
37 և ետ ցաշակերտսն , և նոքա ժողովրդեանն : Կերան
ամենեքեան և յագեցան . և բարձին զնշխարս կո-
38 տորոցն եօթն զամբիւղ լի : Եւ որք կերանն՝ էին
արք իբրեւ չորք հազարք , թող զկանայս և զման-
39 կտի : Իբրեւ արձակեաց զժողովուրդսն , եմ 'ի նաւ
և եկն 'ի սահմանս Մադդաղեայ :

ԳԼ · ԺԲ

1 Եւ մատուցեալ փարիսեցիքն և սադուկեցիք ,
փորձելով խնդրէին 'ի նմանէ նշան յերկնից ցու-
2 ցանել նոցա : Նա պատասխանի ետ և ասէ ցնոսա ,
Յորժամ երեկոյ լինի՝ ասէք , Պարզ լինիցի՝ զի կար-
3 մրացեալ է երկին : Եւ առաւօտուն՝ Այսօր մրրիկ ,
զի շառագունի *տրամաբեմամբ երկին . Արդ զերեսս
երկնի կարէք քննել , իսկ զնշան ժամանակիս ո՞չ
4 կարէք գիտել : Ազգ չար և շնացող նշան խնդրէ ,
և նշան մի տացի նմա , բայց նշանն Յովնանու մար-

* Ի Յունն՝ մրգագոյն

5 գարեի . և եթող զնոսա և գնաց : Գնացին և ա-
շակերտքն յայնկոյս , և մոռացան առնուլ հաց :
6 Ասէ ցնոսա Յիսուս , Տեսէք և զգայջ լերուք 'ի խմո-
7 րոյ սադուկեցւոցն և փարիսեցւոցն : Նոքա խորհէին
8 ընդ միմեանս և ասէին թէ Հաց ոչ բարձաք : Գի-
տաց Յիսուս և ասէ , Զի՞ խորհիք 'ի միտս ձեր , թե-
9 րահաւատք , եթէ հաց ոչ ունիք : Տակաւին չիմա-
նա՞յք և ո՞չ յիշէք զհինգ նկանակն 'ի հինգ հազար-
10 սն , և քանի՞ սակաւք բարձիք : Եւ ո՞չ զեօթն
նկանակն 'ի չորս հազարսն , և քանի՞ զամբիւղս
11 բարձէք : Արդ զիա՞րդ ոչ իմանայք եթէ ոչ վասն
հացի ասացի ձեզ՝ զգայջ լինել 'ի խմորոյ փարիսե-
ցւոցն և սադուկեցւոց :
12 Յայնժամ 'ի միտ առին , թէ ոչ ասաց զգուշա-
նալ *'ի խմորոյ , այլ յաղանդոյ փարիսեցւոցն և
13 սադուկեցւոց : Եւ եկեալ Յիսուս 'ի կողմանս Փի-
լիպպեայ Կեսարիոյն , հարցանէր ցաշակերտսն և
ասէր , Զո՞ ոք ասեն զինէն մարդիկն թէ իցէ Որդի
14 մարդոյ : Եւ նոքա ասեն , Ոմն զՅովհաննէս մկրտիչ ,
և այլք զեղիա , և կէսք զերեմիա կամ զմի ոք 'ի
15 մարգարէիցն : Ասէ ցնոսա , Իսկ դուք զո՞ ոք ասէք
16 զինէն թէ իցեմ : Պատասխանի ետ Սիմոն Պետրոս
և ասէ , Դու ես Քրիստոս Որդի Աստուծոյ կեն-
17 դանւոյ : Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնա ,
Երանի քեզ , Սիմոն որդի Յովնանու , զի մարմին և
արիւն ոչ յայտնեաց քեզ՝ այլ Հայրն իմ որ յեր-
18 կինս է : Եւ ես քեզ ասեմ , զի Դու ես †Վէմ , և
'ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ , և դը-

* Ի Յունն՝ 'ի խմորոյ հացի , † Ի Յունն՝ Պետրոս ,

19 բանը դժոխոց զնա մի յաղթահարեսցեն ։ Եւ
տաց քեզ փականս արքայութեան երկնից . և զոր
միանգամ կապեսցես յերկրի , եղիցի կապեալ
յերկինս . և զոր արձակեսցես յերկրի , եղիցի ար-
20 ձակեալ յերկինս ։ Յայնժամ սաստեաց աշակեր-
տացն , զի մի ոմեք ասիցեն թէ նա է Քրիստոս ։
21 Յայնմ հետէ սկսաւ Յիսուս ցուցանել աշակերտացն
իւրոց թէ պարտ է նմա երթալ Երուսաղէմ , և
բազում չարչարանս չարչարիլ ի քահանայապե-
տից և ի դպրաց և ի ծերոց ժողովրդեանն և ըս-
22 պանանիլ , և յերրորդ աւուր յառնել ։ Եւ առեալ
զնա մեկուսի Պետրոս , սկսաւ կշտել ընդ նմա և
ասել , Քաւ լիցի քեզ , Տէր , մի եղիցի քեզ այդ ։
23 Եւ նա դարձեալ ի Պետրոս՝ ասէ , Երթ յետս իմ ,
Սատանայ , դայթակղութիւն իմ ես . զի ոչ խոր-
24 հիս դու զԱստուծոյն՝ այլ զմարդկան ։ Յայնժամ
Յիսուս ասէ ցաշակերտան իւր , Եթէ ոք կամի գալ
իմ գալ՝ ուրասցի զանձն և առցէ զխաչ իւր և
25 եկեսցէ զկնի իմ ։ Զի որ կամիցի զանձն իւր կե-
ցուցանել՝ կորուսցէ զնա . և որ կորուսցէ զանձն իւր
26 վասն իմ՝ գտցէ զնա ։ Զի՞նչ օգտիցի մարդ՝ թէ
զաշխարհս ամենայն շահեսցի , և զանձն իւր տու-
ժեսցէ . կամ զի՞նչ տացէ մարդ փրկանս ընդ անձին
27 իւրոյ ։ Զի գալոց է Որդի մարդոյ փառօք Հօր իւրոյ՝
հանդերձ հրեշտակօք իւրովք , և յայնժամ հա-
28 տուսցէ իւրաքանչիւր ըստ գործոց իւրոց ։ Ամէն ասեմ
ձեզ , զի կան ոմանք ի սոցանէ որք աստ կան ,
որք ոչ ճաշակեսցեն զմահ՝ մինչեւ տեսցեն զՈրդի
մարդոյ եկեալ արքայութեամբ իւրով ։

ԳԼ · ԺԷ

1 Եւ յետ վեց աւուր առնու ընդ իւր Յիսուս զՊետրոս և զՅակոբոս և զՅովհաննէս զեղբայր նորա,
և հանէ զնոսա ի լեառն մի բարձր առանձինն ։
2 Եւ պայծառացաւ առաջի նոցա , և լուսաւորեցաւ
երեսք նորա իբրեւ զարեգակն , և հանդերձք նորա
3 եղեն սպիտակ իբրեւ զլոյս ։ Եւ ահա երեւեցան
4 նոցա Մովսէս և Եղիա՝ որ խօսէին ընդ նմա ։ Պա-
տասխանի Պետրոս և ասէ ցՅիսուս , Տէր , բա-
րւոք է մեզ աստ լինել . եթէ կամիս՝ արասցուք
երիս տաղաւարս՝ մի քեզ և մի Մովսիսի և մի Ե-
5 ղիայի ։ Եւ մինչդեռ նա խօսէր , ահա ամպ լուսա-
ւոր հովանի եղեւ ի վերայ նոցա . ձայն եղեւ յամ-
պէն և ասէ , Դա է Որդի իմ սիրելի՝ ընդ որ հա-
6 ճեցայ , դմա լուարուք ։ Իբրեւ լուան աշակերտքն՝
անկան ի վերայ երեսաց իւրեանց և երկեան յոյժ ։
7 Եւ մատուցեալ Յիսուս բուռն եհար զնոսանէ և
8 ասէ , Յոտն կացէք և մի երկնչիք ։ Ամբարձին զաչս
9 իւրեանց և ոչ ոք տեսին՝ բայց միայն ՅԻսուս ։ Եւ
մինչդեռ իջանէին ի լեռնէ անտի , պատուիրեաց
նոցա Յիսուս և ասէ , Մի ումեք ասիցէք զտեսիլդ՝
10 մինչեւ Որդի մարդոյ յիմեռելոց յարիցէ ։ Հարցին զնա
աշակերտքն և ասեն , Զիա՞րդ դպիրքն ասեն , եթէ
11 Եղիայի նախ պարտ է գալ ։ Պատասխանի եւ Յի-
սուս և ասէ ցնոսա , Եղիա գայ և հաստատեսցէ զա-
12 մենայն ։ Այլ ասեմ ձեզ , զի Եղիա եկեալ իսկ է ,
և ոչ ծանեան զնա , այլ արարին ընդ նա զոր ինչ
կամեցան . նոյնպէս և Որդի մարդոյ չարչարելոց է

43 ի նոցանէ ։ Յայնժամ ի միտ առին աշակերտքն
Թէ վասն Յովհաննու մկրտչի ասաց ցնոսա ։
44 Եւ իբրեւ եկին ի ժողովուրդն , մատեաւ այր մի
ի ծունր ի նէանէր և ասէր , Տէր , ողորմեաց որդւոյ
իմում , զի լուսնոտի և չարաչար հիւանդանայ ,
բազում անգամ անկանի ի հուր և երբեմն ի ջուր ։
45 Եւ մատուցի զնա աշակերտացն քոց , և ոչ կարա-
46 ցին բժշկել ։ Պատասխանի ետ Յիսուս և ասէ , Ով
ազգ անհաւատ և թիւր , մինչեւ ե՞րբ իցեմ ընդ
ձեզ , մինչեւ ե՞րբ անասցեմ ձեզ . ած զնա առ
47 իս ։ Եւ սատակաց ի նա Յիսուս , և ել ի նմանէ
դեւն , և բժշկեցաւ մանուկն ի ժամէն յայնմանէ ։
48 Յայնժամ մատեան աշակերտքն առ Յիսուս
առանձինն և ա-
սեն ցՅիսուս , Մեք ընդէ՞ր ոչ կարացաք հանել զնա ։
49 Եւ *նա ասէ ցնոսա , Վասն թերահաւատութեան
ձերոյ . ամէն ասեմ ձեզ , եթէ ունիցիք հաւատս
քան զհատն մանանխոյ , ասասջիք լերինս այսմիկ՝
փոխեաց աստի անդր , և փոխեսցի . և ոչ ինչ ան-
20 հնարին լինիցի ձեզ ։ Բայց այս ազգ ոչ ելանի՝ եթէ
ոչ աղօթիւք և պահովք ։
21 Եւ մինչդեռ շրջէին նոքա ի Գալիլեայ՝ ասէ ցնո-
ա Յիսուս , Մատնելոց է Որդի մարդոյ ի ձեռս
22 մարդկան , Եւ սպանցեն զնա , և յերիր աւուր յա-
23 րիցէ . և արամեցան յոյժ ։ Իբրեւ եկին նոքա ի
կափառնայում , մատեան որք զերկդրամեանն պա-
հանջէին՝ առ Պետրոս , և ասեն , Վարդապետն ձեր
24 ո՞չ տայ զերկդրամեանն . և ասէ , Այո ։ Եւ իբրեւ
եմուտ ի տուն՝ յառաջեաց քան զնա Յիսուս և

* ի Յոյն՝ Յիսուս

ասէ , Զի՞ոդ թուի քեզ , Սիմոն . թագաւորք *աշ-
դաց յումմէ՞ առնուն գՀարկս կամ գՀասն , յօր-
25 դւո՞ց իւրեանց՝ թէ յօտարաց ։ Եւ իբրեւ †ասաց
թէ Յօտարաց , ասէ ցնա Յիսուս , Ապա ուրեմն ա-
26 զատ են որդիքն ։ Բայց զի մի գայթակղեցուսցուք
զնոսա , ե՞րթ ի ծով և ընկեա կարթ , և զառա-
ջին ձուկն որ ելանիցէ՝ առ և բաց զբերան նորա ,
և գտանիցես ստատեր , և զայն առեալ տացես նո-
ա ընդ իմ և ընդ քո ։

ԳԼ· ԺԸ

1 Յայնմ աւուր մատեան աշակերտքն առ Յիսուս
և ասեն , Ո՞վ իցէ ‡ ի մէնջ մեծ յարքայութեան
2 երկնից ։ Եւ կոչեաց առ ինքն Յիսուս մանուկ մի ,
3 կացոյց զնա ի մէջ նոցա , Եւ ասէ , Ամէն ասեմ
ձեզ , եթէ ոչ դարձջիք և եղիջիք իբրեւ զմանկտի ,
4 ոչ մտանիջիք յարքայութիւն երկնից ։ Արդ որ խո-
նարհեցուցանէ զանձն իբրեւ զմանուկս զայս , նա
5 է մեծ յարքայութեան երկնից ։ Եւ որ ոք ընկալցի
6 մանուկ մի այսպիսի յանուն իմ , զիս ընդունի ։ Եւ
որ ոք գայթակղեցուցէ զմի ի փոքրկանցս յայս-
ցանէ յիս հաւատացելոց , լաւ է նմա եթէ կախե-
ցի երկան իշոյ ընդ պարանոց նորա՝ և ընկղմիցի ի
7 խորս ծովու ։ Վայ աշխարհի գայթակղութեանց .
Հարկ է գալ գայթակղութեանց , բայց վայ մար-
դոյն այնմիկ՝ յոր ձեռն գայցէ գայթակղութիւն ։

* ի Յոյն՝ երկրի † ի Յոյն՝ ասաց Պետրոս
‡ ի Յոյն՝ է ։

8 Եթէ ձեռն քո կամ ոտն գայթակղեցուցանէ զքեզ,
հատ զնա և ընկեա ի քէն. լաւ ի քեզ միա-
ձեռանի կամ կաղ մտանել ի կեանս, քան թէ ե-
րկուս ձեռս և երկուս ոտս ունել, և անկանել ի
9 հուրն յաւիտենական։ Եւ եթէ աչն քո գայթակ-
ղեցուցանէ զքեզ, խլեա զնա և ընկեա ի քէն. լաւ
ի քեզ միաչանի մտանել ի կեանս, քան ե-
րկուս աչս ունել՝ և անկանել ի գեհենն հրոյն։
10 Զգոյշ լերուք՝ մի արհամարհիցէք զմի ի փոքրո-
կանցս յայսցանէ. ասեմ ձեզ, զի հրեշտակք նո-
ցա յերկինս հանապազ տեսանեն զերեսս Հօր
11 իմոյ որ յերկինս է։ Զի եկն Որդի մարդոյ կեցու-
12 ցանել զկորուսեալն։ Զի՞ դու թուի ձեզ, եթէ
լինիցի մարդոյ հարիւր ոչխար՝ և մոլորիցի մի ի
նոցանէ, ո՞չ թողուցու զինսնսուն և զինն ոչխարն
13 ի լերինս, և երթիցէ խնդրիցէ զմոլորեալն։ Եւ ե-
թէ լինիցի գտանել զնա, ամէն ասեմ ձեզ, զի
ուրախ լինի ի վերայ նորա առաւել քան ի վերայ
14 իննսուն և հնուցն, որ չիցեն մոլորեալ։ Այսպէս
ոչ են կամք առաջի Հօր *իմոյ որ յերկինս է՝ եթէ
15 կորիցէ մի ի փոքրկանցս յայսցանէ։ Եթէ մեղիցէ
քեզ եղբայր քո, երթ յանդիմանեա զնա՝ յորժամ
դու և նա միայն իցէք. եթէ լուիցէ քեզ, շահե-
16 ցար զեղբայր քո։ Ապա թէ ոչ լուիցէ քեզ, առ
ընդ քեզ միւս եւս կամ երկուս, զի ի բերանոյ
երկուց և երից վկայից հաստատեսցի ամենայն բան։
17 Իսկ եթէ նոցա ոչ լուիցէ, ասասջիր յեկեղեցւոջ.
ապա թէ և եկեղեցւոյն ոչ լուիցէ, եղիցի քեզ

* Ի յն՝ ձերոյ

18 իբրեւ զհեթանոսն և զմաքսաւորս։ Ամէն ասեմ ձեզ,
Զոր կապիցէք յերկրի՝ եղիցի կապեալ յերկինս,
և զոր արձակիցէք յերկրի՝ եղիցի արձակեալ յեր-
19 կինս։ Դարձեալ ասեմ ձեզ, եթէ երկու ի ձէնջ
միաբանիցեն յերկրի վասն ամենայն իրաց, զինչ
և խնդրեսցեն՝ եղիցի նոցա ի Հօրէ իմմէ որ յերկին-
20 նս է։ Զի ուր իցեն երկու կամ երեք ժողովեալ
21 յանուն իմ, անդ եմ ես ի մէջ նոցա։ Յայնժամ
մատեաւ առ նա Պետրոս և ասէ, Տէր, քանի՞ցս
անգամ եթէ մեղիցէ ինձ եղբայր իմ և թողից
22 նմա, մինչեւ եօ՞թն անգամ։ Ասէ ցնա Յիսուս,
Ոչ ասեմ քեզ թէ մինչեւ եօթն անգամ, այլ
23 մինչեւ եւթանասնեկին եօթն։ Վասն այսորիկ նը-
մանեցաւ արքայութիւն երկնից առն թագաւորի,
որ կամեցաւ համար առնուլ ի մէջ ծառայից իւ-
24 րոց։ Եւ իբրեւ սկսաւ առնուլ, մատուցաւ առ
25 նա պարտապան մի բիւր քանքարոյ։ Իբրեւ ոչ
ունէր հատուցանել, հրամայեաց տէրն նորա
տալ զնա և զկին նորա և զորդիս և զամենայն
26 որ զինչ և ունիցի՝ և հատուցանել։ Եւ անկեալ
ծառայն երկիրպագանէր նմա և ասէր, *Երկայնա-
միա լեր առ իս՝ և զամենայն հատուցից քեզ։
27 Գթացեալ տէր ծառային այնորիկ արձակեաց զնա,
28 և զփոխն եթող նմա։ Եւ ելեալ ծառայն այն ե-
գիտ զմի ի ծառայակիցս իւրոց, որ պարտէր նմա
հարիւր դահեկան. և կալեալ զնա խեղդէր և ա-
29 սէր, Հատո ինձ զոր պարտիսդ։ Արդ անկեալ ծա-
ռայակիցն առ ոտս նորա, աղաչէր զնա և ասէր,

* Ի յն՝ Տէր,

Երկայնամիտ լեր առ իս՝ և զամենայն հատուցից
30 քեզ։ Եւ նա ոչ կամեր, այլ չոգաւ, արկ զնա ի
31 բանտ մինչև հատուսցէ զպարտսն։ Իբրեւ տեսին
ծառայակիցքն նորա որ ինչ եղեւն՝ տրամեցան
յոյժ, և եկեալ յուշին տեառն իւրեանց զամենայն
32 որ ինչ եղեւն։ Յայնժամ կոչեաց զնա տէրն իւր
և ասէ, Ծառայ չար, զամենայն զպարտսն թողի
33 քեզ՝ վասն զի աղաչեցեր զիս։ Իսկ արդ ո՞չ եր
պարտ և քեզ ողորմել ծառայակիցի քումմ, որպէս
34 և ես քեզ ողորմեցայ։ Եւ բարկացեալ տէրն նորա՝
մատնեաց զնա դահճաց, մինչեւ հատուսցէ զամե-
35 նայն զպարտսն։ Նոյնպէս և Հայր իմ որ յերկինս
է՝ արասցէ ձեզ, եթէ ոչ թողուցուք իւրաքանչիւր
եղբօր իւրում ի սրտից։ Երոց զՅանցանս նոցա։

ԳԼ. ԺԹ

4 Եւ եղեւ իբրեւ կատարեաց Յիսուս զբանս զայ-
սոսիկ, փոխեցաւ ի Գալիլէէ և եկն ի սահմանս
2 Հրէաստանի յայնկոյս Յորդանանու։ Եւ գնացին զհ-
ետ նորա ժողովուրդք բազումք, և բժշկեաց զնս-
3 սա անդ։ Եւ մատուցեալ առ նա փարիսեցիքն փոր-
ձէին զնա, և ասէին եթէ Արժա՞ն իցէ ուստեք ար-
4 ձակել զկին իւր ըստ ամենայն պատաս-
խանի ետ նոցա և ասէ, Ոչիցէ՞ ընթերցեալ ձեր թէ
որ Հաստատեացն ի սկզբանէ՝ արու և էգ արար
5 զնոսա, և ասէ, Վասն այսորիկ թողեսցէ այր զհայր
և զմայր՝ և երթիցէ զհետ կնոջ իւրոյ, և եղիցին
6 երկոքեան ի մարմին մի։ Ազգա ուրեմն ոչ են երկու
այլ մի մարմին. արդ զոր Աստուած զուգեաց, մարդ

7 մի մերկնեսցէ։ Ասեն ցնա, Իսկ Մովսէս ընդէ՞ր պա-
տուիրեաց մեզ տալ թուղթ մերկնելոյ և արձակել։
8 Ասէ ցնոսա, Մովսէս վասն խստասրտութեան ձե-
րոյ հրամայեաց ձեզ արձակել զկանայս ձեր, այլ
9 ի սկզբանէ ոչ եղեւ այնպէս։ Բայց ասեմ ձեզ, զի
Ամենայն որ արձակեսցէ զկին իւր, և ոչ վասն պոռ-
նկութեան, և առնիցէ այլ՝ շնայ, և որ զարձա-
10 կեալն առնիցէ՝ շնայ։ Ասեն ցնա աշակերտքն իւր,
Եթէ այդպէս ինչ վիճակ իցէ ընդ այր և ընդ կին,
11 լաւ է չամուսնանալ։ Եւ նա ասէ ցնոսա, Ոչ ա-
մենեքեան բանականն են այդմ բանի, այլ որոց
12 տուեալ է։ Զի են ներքինիք՝ որ յորովայնէ մօր իւ-
րեանց ծնան այնպէս. և են ներքինիք՝ որ ի մարդկա-
նէ եղեն ներքինիք. և են ներքինիք՝ որ զանձինս
իւրեանց արարին ներքինիս վասն արքայութեան
13 երկնից. որ կարողն է առնել՝ առցէ։ Յայնժամ
մատուցան առ նա մանկունք, զի ձեռն դիցէ ի վե-
րոյ նոցա և աղօթս արասցէ. և աշակերտքն նորա
14 սաստկին նոցա։ Ասէ Յիսուս, Թոյլ առէք ման-
կտւոյդ և մի արգելուք զդոսա գալ առ իս, զի
15 այդպիսեացդ է արքայութիւն երկնից։ Եւ եդեալ
ձեռն ի վերոյ նոցա՝ գնաց անտի։
16 Եւ ահա մատուցեալ ումն առ նա՝ ասէ, Վար-
դապետ բարի, զի՞նչ բարի գործեցից զի ընդունի-
17 ցիմ զկեանս յաւիտենականս։ Եւ նա ասէ ցնա,
Զի՞ *Հարցանես զիս զբարւոյ, մի է բարի. եթէ
կամիս ի կեանսն †յաւիտենականս մտանել, պա-

---

* Ի Յոյնն՝ ասես զիս բարի, չիք ոք բարի բայց մի, Աստուած.

† Ի Յոյնն չէ։

18 Հետ զպատուիրանն ։ Ասէ ցնա , Զո՞րս . ասէ ցնա
Յիսուս , զՄի սպանանիցես , և Մի շնար , և Մի
19 գողանար , և Մի սուտ վկայեր , Պատուեա զՀայր
քո և զմայրն , և Սիրեսցես զընկեր քո իբրեւ զան-
20 ձն քո ։ Ասէ ցնա պատանին , Զայդ ամենայն պա-
հեցի ի մանկութենէ իմմէ . արդ ի՞ւ իւիք պակաս
21 իցեմ ։ Ասէ ցնա Յիսուս , Եթէ կամիս կատարեալ
լինել , երթ վաճառեա զինչս քո և տուր աղքա-
տաց . և ունիցես գանձս յերկինս , և եկ զկնի
22 իմ ։ Իբրեւ լուաւ պատանին զբանն՝ գնաց տըրտ-
23 մեալ , զի ունէր ստացուածս բազումս ։ Ասէ Յի-
սուս ցաշակերտան , Ամէն ասեմ ձեզ զի դժուա-
24 բաւ մտցէ մեծատուն յարքայութիւն երկնից ։ Դար-
ձեալ ասեմ ձեզ , Դիւրին է մալլոյ մտանել ընդ
ծակ ասղան , քան մեծատան յարքայութիւն Ա-
25 տուծոյ մտանել ։ Իբրեւ լուան աշակերտքն՝ զար-
26 մացան յոյժ և ասեն , Իսկ ո՞ կարիցէ ապրել ։ Հա-
յեցաւ ի նոսա Յիսուս և ասէ , Առ ի մարդկանէ
այդ անկար է , այլ առ ԱԱստուծոյ ամենայն ինչ
27 զօրաւոր ։ Յայնժամ պատասխանի Պետրոս և
ասէ ցնա , Ահաւասիկ մեք թողաք զամենայն և եկաք
28 զկնի քո , արդ զի՞նչ լինիցի մեզ ։ Ասէ ցնոսա
Յիսուս , Ամէն ասեմ ձեզ զի դուք որ եկիք զկնի
իմ , ի միւսանգամ ծալատեան՝ յորժամ նստցի
Որդի մարդոյ յաթոռ փառաց իւրոց , նստջիք և
դուք յերկոտասան աթոռ՝ դատել զերկոտասան
29 ազգն Իսրայէլի ։ Եւ ամենայն որ որ եթող զտուն
կամ զեղբարս կամ զքոյր կամ զՀայր կամ զմայր
կամ զկին կամ զորդիս կամ զագարակս վասն ա-
նուան իմոյ , հարիւրապատիկ առցէ , և զկեանսն

30 յաւիտենականս ժառանգեսցէ ։ Բազումք եղիցին
առաջինք յետինք՝ և յետինք առաջինք ։

Գլ. Ի

1 Քանզի նման է արքայութիւն երկնից առն տա-
նուտեառն , որ ել ընդ առաւօտս ի վարձու ունել
2 մշակս յայգի իւր ։ Եւ արկ վարձս մշակացն աւուրն
3 դահեկան , և առաքեաց զնոսա յայգի իւր ։ Եւ
ելեալ զերրորդ ժամուն՝ եհաս այլս զի կային դա-
4 տարկ ի հրապարակս ։ Ասէ և ցնոսա , Երթայք և
դուք յայգի իմ , և որ ինչ արժան իցէ՝ տաց ձեզ ։
5 Գնացին և նոքա . և դարձեալ ելեալ զվեց ժամուն
6 և զինն ժամուն՝ արար նոյնպէս ։ Եւ զմետասաներ-
րորդ ժամուն ելեալ եգիտ այլս՝ զի կային դատարկ-
ասէ և ցնոսա , Ընդէ՞ր կայք ասա զօրս ցերեկ դա-
7 տարկ ։ Ասեն ցնա , Զի ոչ ոք կալաւ զմեզ ի վար-
ձու . ասէ ցնոսա , Երթայք և դուք յայգին , և
8 որ ինչ արժան է՝ առնուցուք ։ Եւ իբրեւ երեկոյ
եղեւ՝ ասէ տէր այգւոյն ցգաւառապետ իւր , կո-
չեա զվշական և տուր նոցա վարձս՝ սկսեալ ի յետ-
9 նոցն մինչեւ ցառաջինսն ։ Իբրեւ եկին որք զմետա-
10 սաներորդ ժամուն , առին մէն մի դահեկան ։ Ե-
կեալ և առաջինքն՝ համարեցին թէ աւելի առնուս-
11 ցուն , և առին մէն մի դահեկան և նոքա ։ Իբրեւ
առին , տրտնջէին զտանուտեառնէն և ասէին թէ
12 Դոքա յետինքդ մի ժամ գործեցին , և հաւասար-
կորդս մեզ արարեր զդոսա , որ զձանրութիւնն աւ-
13 աւրն բարձաք և զտօթ ։ Նա պատասխանի ետ
միում ի նոցանէ և ասէ , Ընկեր , չզրկեմ զքեզ ,

14 ո՞չ դահեկանի միոջ ասկ արկեր ընդ իս . Ա-
ը ըղ-
քայդ և երթ , եթէ կամիմ յետնոյս տալ՝ որպէս
15 և քեզ ։ Եթէ չիցէ՞ ինձ իշխանութիւն յիմոս առ-
նել զինչ և կամիմ . կամ թէ աչն քո չա՞ր է , զի
16 ես առատս եմ ։ Ա.յսպէս եղիցին յետինք առա-
ջինք , և առաջինք յետինք . զի բազումք են կոչե-
ցեալք , և սակաւք են ընտրեալք ։
17 Իբրեւ ելանէր Յիսուս Երուսաղէմ , առ *զեր-
կոտասանսն առանձինն , և ի ճանապարհին ասէ
18 ցնոսա , Ահաւասիկ ելանեմք Երուսաղէմ , և Որ-
դի մարդոյ մատնեսցի քահանայապետիցն և դպրաց ,
19 և դատապարտեսցեն զնա ի մահ . Եւ մատնեսցեն
զնա հեթանոսաց՝ այպանել և հարկանել և ի խաչ
20 հանել , և յերիր աւուր յարիցէ ։ Յայնժամ մա-
տեաւ առ նա մայր որդւոցն Զեբեդեայ որդւովքն
իւրովք հանդերձ , երկիրպագանէր և խնդրէր ինչ
21 ի նմանէ ։ Եւ նա ասէ ցնա , Զի՞նչ կամիս . ասէ
ցնա , Ասա զի նստցին սոքա երկու որդիքս իմ , մի
ընդ աջմէ քումմէ և մի ընդ ահեկէ , յարքայու-
22 թեան քումմ ։ Պատասխանի ետ Յիսուս և ասէ , Ոչ
գիտէք զինչ խնդրէք . կարէ՞ք ըմպել զբաժակն զոր
ես ըմպելոցն եմ , կամ զմկրտութիւնն զոր ես մկրը-
23 տելոցն եմ մկրտիլ . ասեն ցնա , կարող եմք ։ Ա-
սէ ցնոսա †Յիսուս , Զբաժակն իմ ըմպիցէք , և
զմկրտութիւնն զոր ես մկրտելոց եմ մկրտիցիք , բայց
‡նստուցանել ընդ աջմէ և ընդ ահեկէ իմմէ՝ ոչ
է իմ տալ , այլ որոց §տուեալ է ի Հօրէ իմմէ ։

* Ի Ցոյնս՝ զերկոտասան աշակերտսն †Ի Ցոյնն չէ։
‡ Ի Ցոյնս՝ նստիլն §Ի Ցոյնս՝ պատրաստեալ

21 Եւ լուեալ տասանցն՝ բարկացան ի վերայ երկուցն
23 եղբարցն ։ Յիսուս կոչեաց զնոսա առ ինքն և ասէ ,
Գիտէք զի իշխանք ազգաց տիրեն նոցա , և մեծա-
26 մեծքն իշխեն նոցա ։ Ոչ այնպէս իցէ և ի ձերում
միջի . այլ որ կամիցի ի ձէնջ մեծ լինել , եղիցի ձեր
27 պաշտօնեայ . Եւ որ կամիցի ի ձէնջ առաջին լի-
28 նել , եղիցի ձեր ծառայ ։ Որպէս որդի մարդոյ ոչ
եկն պաշտօն առնուլ՝ այլ պաշտել , և տալ զանձն
իւր փրկանս փոխանակ բազմաց ։
29 Եւ յելանելն նոցա Երիքովէ , դնացին զհետ
30 նորա ժողովուրդք բազումք ։ Եւ ահա կոյրք երկու
նստէին առ ճանապարհաւն . իբրեւ լուան թէ Յի-
սուս անցանէ՝ աղաղակեցին և ասեն , Ողորմեաց մեզ
31 *Յիսուս Որդի Դաւթի ։ Եւ ամբոխն սաստեաց նո-
ցա զի լռեսցեն . և նոքա եւս առաւել աղաղակէին
և ասէին , Տէր , ողորմեաց մեզ , Որդի Դաւթի ։
32 Ցառեալ առ Յիսուս , կոչեաց զնոսա և ասէ , Զի՞նչ
33 կամիք զի արարից ձեզ ։ Ասեն ցնա , Տէր , զի բաց-
34 ցին աչք մեր ։ Եւ գթացեալ Յիսուս մերձեցաւ
յաչս նոցա , և վաղվաղակի տեսին և գնացին
զհետ նորա ։

Գլ· ԻԱ.

1 Իբրեւ մօտ եղեն Երուսաղէմ և եկին ի Բեթ-
փագէ մերձ ի Լեառն Զիթենեաց , յայնժամ Յի-
2 սուս արձակեաց երկուս յաշակերտացն իւրոց ։ Եւ
ասէ ցնոսա , երթայք ի դէօղն՝ որ առաջի ձեր է ,

* Ի Ցոյնս՝ Տէր ,

և անդէն գտանէք էշ կապեալ՝ և յաւանակ ընդ-
3 նմին, լուծէք, ածէք ինձ։ Եւ եթէ ոք ասիցէ ինչ
ձեզ, ասասջիք եթէ Տէառն իւրեանց պիտոյ են.
4 և վաղվաղակի առաքեսցէ զնոսա։ Բայց այս ամե-
5 նայն եղեւ՝ զի լցցի բան մարգարէին որ ասէ, Ա-
սացէք դստեր Սիովնի, Ահա թագաւոր քո գայ
քեզ հեզ, և հեծեալ յէշ և յաւանակի իշոյ։
6 Գնացին աշակերտքն, և արարին որպէս հրամայեաց
7 նոցա Յիսուս։ Եւ ածին զէշն և զյաւանակն, և
արկին զնոքօք ձորձս իւրեանց. և նստաւ ի վերայ
8 նոցա։ Եւ բազումք ժողովրդոց տարածեցին զհան-
դերձս իւրեանց ի ճանապարհին, և այլք հատա-
նէին ոստս ի ծառոց՝ և տարածանէին ի ճանա-
9 պարհին։ Եւ ժողովուրդքն որ առաջին և զկնի
երթային՝ աղաղակէին և ասէին, *Օրհնութիւն Որ-
դւոյ Դաւթի, օրհնեալ որ գայ յանուն Տեառն.
10 Օրհնութիւն ի բարձունս։ Եւ ի մտանելն նորա
Երուսաղէմ, դղդեցաւ քաղաքն ամենայն, և ա-
11 սէ, Ո՞վ իցէ սա։ Եւ ժողովուրդքն ասէն, Սա է
մարգարէն Յիսուս որ ի Նազարեթէ Գալիլեացւոց։
12 Եւ եմուտ Յիսուս †ի տաճարն և եհան արտաքս
զամենեսին, որ վաճառէինն և գնէին ի տաճարի
անդ. և զսեղանս հատավաճառացն կործանեաց և
13 զաթոռս աղաւնեվաճառացն. Եւ ասէ ցնոսա,
Գրեալ է, Տուն իմ տուն աղօթից կոչեսցի, և դուք
14 արարիք զդա սպառս աւազակաց։ Եւ մատեան առ
նա կոյրք և կաղք ի տաճարին, և բժշկեաց զնոսա։

* Ի Յոյն՝ Ովսաննա

† Ի Յոյն՝ ի տաճարն Աստուծոյ

15 Իբրեւ տեսին քահանայապետքն և դպիրք զզար-
հելիան զոր արար, և զմանկտին որ աղաղակէին ի
տաճարին և ասէին, *Օրհնութիւն Որդւոյ Դաւ-
16 թի, բարկացան. Եւ ասեն ցնա, Լսե՞ս զի՞նչ ա-
սեն դոքա. ասէ ցնոսա Յիսուս, Այո, չիցէ՞ ընդ-
թերցեալ ձեր թէ ի բերանոյ տղայոց և ծնդեսից
17 կատարեցեր զօրհնութիւն։ Եւ թողեալ զնոսա եւ
արտաքոյ քաղաքին ի Բեթանիա, և անդ ագաւ։
18 Եւ այգուընդ իբրեւ դարձաւ անդրէն ի քաղաքն,
19 քաղցեաւ։ Եւ տեսեալ թզենի մի ի վերայ ճանա-
պարհին՝ եկն ի նա, և ոչինչ եգիտ ի նմա, բայց
միայն տերեւս. և ասէ ցնա, Մի այսուհետեւ ի քէն
պտուղ եղիցի յաւիտեան. և առժամայն չորացաւ
20 թզենին։ Իբրեւ տեսին աշակերտքն՝ զարմացան և
ասեն թէ Զիա՞րդ վաղվաղակի ցամաքեցաւ թզե-
21 նին։ Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնոսա, Ամէն
ասեմ ձեզ, եթէ ունիցիք հաւատս և ոչ երկմտիք-
եք, ոչ միայն թզենւոյդ առնիցէք, այլ թէպետ
և լերինդ ասիցէք, Բարձիր և անկիր ի ծով, եղի-
22 ցի։ Եւ զամենայն ինչ զոր և խնդրիցէք յաղօթս
23 հաւատով՝ առնուցուք։ Եւ իբրեւ եկն ի տաճարն,
մատեան առ նա, մինչդեռ ուսուցանէր, քահանա-
յապետքն և ծերք ժողովրդեանն և ասեն, Որո՞վ իշ-
խանութեամբ առնես զայդ՝ և ո՞վ ետ քեզ զիշխա-
24 նութիւնդ զայդ։ Պատասխանի ետ Յիսուս և ասէ
ցնոսա, Հարցից և ես զձեզ բան մի, զոր թէ ասի-
ցէք ինձ, և ես ձեզ ասացից՝ որո՞վ իշխանութեամբ
25 առնեմ զայս։ Մկրտութիւնն Յովհաննու ուստի՞ էր,

* Ի Յոյն՝ Ովսաննա

երկնի՞ց՝ թէ ի մարդկանէ. և նոքա խորհէին ընդ
26 միտս և ասէին ։ Եթէ ասեմք, Յերկնից , ասէ ցմեզ,
Իսկ ընդէ՞ր ոչ հաւատացիք նմա . և եթէ ասեմք, Ի
մարդկանէ , երկնչիմք ի ժողովրդենէն , զի ամենե-
27 քեան զՅովհաննէս իբրեւ զմարգարէ ունէին ։ Պա-
տասխանի ետուն Յիսուսի և ասեն , Ոչ գիտեմք .
ասէ ցնոսա և նա , Եւ ոչ ես ասեմ ձեզ որով
իշխանութեամբ առնեմ զայս ։
28 Բայց զի՞նչ թուի ձեզ . առն միոջ էին երկու
որդիք , և մատուցեալ առ առաջինն ասէ , Որդեակ ,
29 երթ այսօր , գործեա յայգւոջ ։ *Նա պատասխանի
30 ետ և ասէ , Երթամ , և ոչ չոգաւ ։ Մատեաւ
և առ միւսն , և ասէ նոյնպէս ։ Նա պատասխանի
ետ և ասէ , Ոչ կամիմ , բայց ետոյ զղջացաւ
31 և չոգաւ †յայգին ։ Արդ ո՞յ երկոցունց արար զկա-
մըն հօրն . ասեն , Յետինն . ասէ ցնոսա Յիսուս ,
Ամէն ասեմ ձեզ , զի մաքսաւորք և պոռնիկք յա-
32 ռաջացեն քան զձեզ ‡յարքայութիւն †երկնից։ Զի
եկեն Յովհաննէս ճանապարհաւ արդարութեան՝ և
ոչ հաւատացէք նմա . և մաքսաւորք և պոռնիկք
հաւատացին նմա , և դուք տեսէք՝ և ոչ զղջացաք
ետոյ հաւատալ նմա ։
33 Այլ առակ լուարուք . Այր մի էր տանուտէր որ
տնկեաց այգի և ցանգով պատեաց զնա, և փորեաց ի
նմա հնձան և շինեաց աշտարակ . և ետ զնա գլե-
34 կըս , և գնաց ի տար աշխարհ ։ Իբրեւ մերձեցաւ
ժամանակ պտղոյ , առաքեաց զծառայս իւր առ մը-

* Ի Յոյնն՝ 30 երորդ տեղն կանխէ զ29 երորդն ։
† Ի Յոյնն չէ ‡ Ի Յոյնն՝ Աստուծոյ

35 շական՝ առնուլ զպտուղս նորա ։ Եւ կալեալ մշա-
կացն զծառայս նորա , զոմն տանջեցին , զոմն սպանին ,
36 զոմն քարկոծեցին ։ Դարձեալ առաքեաց այլ ծա-
ռայս բազումս քան զառաջինսն , և արարին նոցա
37 նոյնպէս ։ Յետոյ առաքեաց առ նոսա զորդի իւր ,
և ասէ , Թերեւս ամաչեսցին յորդւոյ տատի իմմէ ։
38 Իսկ մշակքն իբրեւ տեսին զորդին , ասեն ընդ միտս ,
Սա է ժառանգն , եկայք սպանցուք զսա և կալ-
39 ցուք զժառանգութիւն նորա ։ Եւ առեալ հանին
40 զնա արտաքոյ քան զայգին և սպանին ։ Արդ յոր-
ժամ եկեսցէ տէր այգւոյն , զի՞նչ արասցէ մշակացն
41 այնոցիկ ։ Ասեն ցնա , Զչարսն չարաւ կորուսցէ , և
զայգին տացէ այլոց մշակաց , որք տացեն նմա ըղ-
42 պտուղս ի ժամու իւրեանց ։ Ասէ ցնոսա Յիսուս ,
Զիարդ՞ երբէք ընթերցեալ ձեր ի գիրս , Զվէմն զոր
անարգեցին շինողքն , նա եղեւ գլուխ անկեան . ի
43 Տեառնէ եղեւ այս , և է սքանչելի յաչս մեր։ Վասն
այսորիկ ասեմ ձեզ , զի բարձցի ի ձենջ արքայու-
թիւն Աստուծոյ , և տացի ազգի որ առնիցէ ըղ-
44 պտուղս նորա ։ Եւ որ անկցի ի վերայ վիմիս այ-
սորիկ՝ փշրեսցի , և յոյր վերայ անկցի՝ հոսեսցէ ըզ-
45 նա ։ Իբրեւ լուան քահանայապետքն *և դպիրք՝ և
փարիսեցիք զառակս նորա , գիտացին թէ վասն նո-
46 ցա ասաց ։ Եւ խնդրէին զնա ունել , բայց երկեան ի
ժողովրդոցն , քանզի իբրեւ զմարգարէ ունէին զնա ։

Գ.Լ· ԻԲ

1 Դարձեալ պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնո-

* Ի Յոյնն չէ ։

2 սա առակիւք, Նմանեցաւ արքայութիւն երկնից առն
թագաւորի որ արար հարսանիս որդւոյ իւրոյ ։
3 Եւ առաքեաց զծառայս իւր կոչել զկրաւիրեալսն
4 ի հարսանիս. և ոչ կամեցան գալ ։ Դարձեալ ա-
ռաքեաց այլ ծառայս՝ և ասէ, Ասացէք հրաւիրե-
լոցն, Ահաւասիկ զճաշ իմ պատրաստեցի, զըն-
րակք իմ և պարարակք զեներալ են, և ամենայն
5 ինչ պատրաստ է. եկայք ի հարսանիս ։ Եւ նոքա
յուշացեալ գնացին՝ ումն յագարակ իւր, և ումն ի
6 վաճառ իւր. Եւ այլք կալան զծառայսն նորա, թըշ-
7 նամանեցին և սպանին ։ Իսկ թագաւորն իրրեւ
լուաւ՝ բարկացաւ, և առաքեաց զզօրս իւր և սա-
տակեաց զսպանողսն զայնոսիկ, և զքաղաքն նոցա
8 այրեաց ։ Յայնժամ ասէ ցծառայս իւր, Հարսա-
նիքս պատրաստ են, և հրաւիրեալքն չէին արժա-
9 նի. պատրաստ երթայք յանցս ճանապարհաց, և զորս
10 միանգամ գտանիցէք՝ կոչեցէք ի հարսանիս ։ Եւ
ելեալ ծառայքն ի ճանապարհս՝ ժողովեցին զամե-
նեսեան զորս և գտին զչարս և զբարիս. և լցան
11 հարսանիքն բազմականօք ։ Եւ մտեալ թագաւորն
հայել զբազմականացն, եւրեւ անդ այր մի՝ որ ոչ
12 էր զգեցեալ հանդերձ հարսանեաց ։ Եւ ասէ ցնա,
Ընկեր, զիա՞րդ մտեր այսր, զի ոչ ունիցիր հանդերձ
13 հարսանեաց. և նա պապանձեցաւ ։ Յայնժամ ասէ
թագաւորն ցսպասաւորսն, կապեցէք զդորա զոտս
և զձեռս, և հանէք զդա ի խաւարն արտաքին.
14 անդ եղիցի լալ և կրճտել ատամանց. Զի բազումք
են կոչեցեալք՝ և սակաւք են ընտրեալք ։
15 Յայնժամ գնացեալ փարիսեցիքն, առին խոր-

հուրդ *զնմանէ՝ թէ որպէս զնիցեն նմա որոգայթ
16 բանիւք ։ Եւ առաքեն առ նա զաշակերտան իւ-
րեանց Հերովդիանոսօքն հանդերձ, և ասեն, Վար-
դապետ, գիտեմք զի ճշմարիտ ես, և զճանապար-
հըն Աստուծոյ ճշմարտութեամբ ուսուցանես, և
ոչ է քեզ փոյթ զոմանէ, և ոչ հայիս յերեսս մար-
17 դոյ ։ Արդ ասա մեզ, զի՞արդ թուի քեզ, պա՞րտ
18 է հարկս տալ կայսեր թէ ոչ։ Գիտաց Յիսուս ըզ-
խորամանկութիւնն նոցա և ասէ, Զի՞ փորձէք զիս,
19 կեղծաւորք. Ցուցէք ինձ †զդահեկան հարկին. Եւ
20 նոքա մատուցին նմա դահեկան մի ։ Եւ ասէ ցնոսա,
21 Ո՞ր է պատկերս այս կամ գիր ։ Ասեն, Կայսեր.
Յայնժամ ասէ ցնոսա, Երթայք, տուք զկայսերն
22 կայսեր, և զԱստուծոյն Աստուծոյ ։ Իրրեւ լուան՝
23 զարմացան, և թողին զնա և գնացին ։ Յայնմ ա-
ւուր մատեան առ նա սադուկեցիքն, որ ասէին
24 թէ Չիք յարութիւն. հարցին ցնա եւ ասեն, Վար-
դապետ, Մովսէս ասաց, Եթէ ոք մեռցի անորդի՝
արասցէ զկին նորա եղբայր իւր, և յարուսցէ զաւակ
25 եղբօր իւրոմ ։ Էին առ մեզ եղբարք եօթն. ա-
ռաջինն արար կին և մեռաւ. և զի ոչ ունէր զա-
26 ւակ, եթող զկինն իւր եղբօր իւրոմ. Նոյնպէս և
27 երկրորդն՝ և երրորդն՝ մինչեւ եւթներորդն ։ Յետ
28 ամենեցուն մեռաւ և կինն ։ Արդ ի յարութեան
ո՞ր յեօթանցն եղիցի նա կին, զի ամենեքին կալան
29 զնա կին ։ Պատասխանի եւ նոցա Յիսուս և ասէ,
Մոլորեալք, ոչ գիտէք զգիրս և ոչ զզօրութիւն
30 Աստուծոյ ։ Զի ի յարութեան ոչ կանայս առնեն

* Ի ՅՈՒՆ ԺԶ։ † Ի ՅՈՒՆ՝ զդրամ։

և ոչ արանց լինին, այլ են իբրեւ *ղՀրեշտակս
31 Յերկինս։ Բայց վասն յարութեան մեռելոց չէիք՞
32 ընթերցեալ ձեր զասացեալն ձեզ յԱստուծոյ, Ես
եմ Աստուած Աբրահամու, Աստուած Իսահակայ
և Աստուած Յակոբայ. և չէ Աստուած Աստուած
33 մեռելոց, այլ կենդանեաց։ Իբրեւ լուան ժողո-
վուրդքն՝ զարմանային ընդ վարդապետութիւնն նո-
34 ր։ Իսկ փարիսեցիքն իբրեւ լուան եթէ պապան-
35 ձեցոյց զսադուկեցիսն, ժողովեցան ի միասին. Եւ
հարց մի ոմն †ի նոցանէ զնա փորձելով, և ասէ,
36 Վարդապետ, ո՞ր պատուիրան է մեծ յօրէնս։
37 Եւ Յիսուս ասէ ցնա, Սիրեսցես զՏէր Աստուած քո
յամենայն սրտէ քումմէ՝ և յամենայն անձնէ քումմ
38 մէ՝ և յամենայն մտաց քոց։ Այս է մեծն և առաջին
39 պատուիրան։ Երկրորդն նմանն սմին, Սիրեսցես զըն-
40 կեր քո իբրեւ զանձն քո։ Ցայս երկուս պատուի-
րանս ամենայն օրէնքն և մարգարէքն կախեալ կան։
41 Եւ ի ժողովել փարիսեցւոցն՝ հարց զնոսա Յիսուս
42 և ասէ, Զի՞նչ թուի ձեզ վասն Քրիստոսի, ո՞յր
որդի է։ Ասեն ցնա, Դաւթի։ Ասէ ցնոսա ‡Յիսուս,
43 Իսկ զիա՞րդ Դաւիթ Հոգւովն կոչէ զնա Տէր՝ և ա-
44 սէ, Ասաց Տէր ցՏէր իմ, Նիստ ընդ աջմէ իմմէ՝
մինչեւ եդից զթշնամիս քո պատուանդան ոտից
45 քոց։ Իսկ եթէ Դաւիթ զնա Տէր կոչէ, զիա՞րդ
46 որդի նորա իցէ։ Եւ ոչ ոք կարէր տալ նմա պա-
տասխանի բան մի, և ոչ իշխէր ոք յայնմ օրէ
հարցանել զնա և ոչինչ։

* Ի ՅՈՒՆ՝ զՀրեշտակս Աստուծոյ
† Ի ՅՈՒՆ՝ ի նոցանէ օրինական մի ‡ Ի ՅՈՒՆ ՆԻԿ։

Գ Լ · Ի Գ

1 Յայնժամ խօսեցաւ Յիսուս ընդ ժողովրդեան և
2 ընդ աշակերտան իւր, և ասէ, Յաթոռն Մովսիսի
3 նստան դպիրքն և փարիսեցիքն։ Զամենայն ինչ զոր
ասիցեն ձեզ, արարէք և պահեցէք, բայց ըստ գոր-
4 ծոցն նոցա մի առնէք, զի ասեն և ոչ առնեն կա-
պեն բեռինս ծանուսնս և դժուարակիրս, և դնեն ի
վերայ ուսոց մարդկան, և մատամբ իւրեանց ոչ
5 կամին շարժել զնոսա։ Եւ զամենայն զգործս իւ-
րեանց առնեն ի ցոյց մարդկան. լայնեն զպարսպ
նակս իւրեանց, և երկայնեն զգեղմնցս հանդերձից
6 իւրեանց։ Սիրեն զպատուական ընթերցիս, և զնա
խաթոռս ի ժողովուրդս, և զողջոյնս ի հրապարա
7 րակս։ Եւ կոչել ի մարդկանէ Ռաբբի, Ռաբբի։
8 Բայց դուք մի *զգը կոչէք վարդապետ.՚՚ զի մի է
9 ձեր ուսուցիչ. և ամենեքեան դուք եղբարք էք։ Եւ
Հայր մի կոչէք ձեզ յերկրի, զի ձեր մի է Հայր՝ որ
10 յերկինսն է։ Եւ մի կոչիցիք ուսուցիչք, զի Ու-
11 սուցիչ ձեր †Քրիստոս է։՚՚ Եւ մեծն ի ձէնջ եղի-
12 ցի ձեր սպասաւոր։ Որ բարձրացուցանէ զանձն՝ խո-
նարհեսցի, և որ խոնարհեցուցանէ զանձն՝ բար-
13 ձրասցի. Վայ ձեզ դպրաց և փարիսեցւոց կեղծա-
ւորաց, զի փակէք զարքայութիւնն երկնից առաջի
մարդկան. դուք ոչ մտանէք, և որոց մտանելն՝
14 չտայք թող մտանել։ Վայ ձեզ դպրաց և փա-

* Ի ՅՈՒՆ՝ կոչիցիք Ռաբբի,
† Ի ՅՈՒՆ՝ մի է Քրիստոս։

բիսեցւոց կեղծաւորաց , զի ուտէք զտունս այրեաց ,
պատճառանօք երկարէք զաղօթս , վասն զի աւելի
13 դատաստան ընդունիցէք : Վայ ձեզ դպրաց և փա-
բիսեցւոց կեղծաւորաց , զի յածիք ընդ ծով և ընդ
ցամաք առնել եկամուտ մի . և յորժամ լինիցի ,
առնէք զնա որդի դժնեղի կրկին եւս քան զձեզ :
16 Վայ ձեզ , առաջնորդք կուրք , զի ասէք , Որ երդնու-
ի տաճարն՝ չէ ինչ , բայց որ երդնու յոսկին որ ի
17 տաճարին է՝ արժան է : Մոլոք և կուրք , զի՞նչ
18 մեծ է , ոսկի՞ն՝ եթէ տաճարն որ սրբէ զոսկին : Եւ
որ երդնու ի սեղանն՝ չէ ինչ , բայց որ երդնու ի
19 պատարագն որ ի վերայ նորա է՝ արժան է : Յիմարք
և կուրք , զի՞նչ մեծ է , պատարա՞գն եթէ սեղանն
20 որ սրբէ զպատարագն : Եւ արդ որ երդուաւ ի սե-
ղանն , երդնու ի նա և յամենայն որ ի վերայ նո-
21 րա է . Եւ որ երդուաւ ի տաճարն , երդնու ի նա
22 և ի բնակիչն նորա . Եւ որ երդուաւ յերկինս ,
երդնու յաթոռն Աստուծոյ՝ և յայն որ նստին ի
23 վերայ նորա : Վայ ձեզ դպրաց և փարիսեցւոց կեղ-
ծաւորաց , զի տասանորդէք զանանուխ և զսամիթ
և զչաման , և թողէք զծանր ծանր օրինացն , զդա-
տաստան և զողորմութիւն և զհաւատս . զայս ար-
24 ժան էր առնել և զայն չթողուլ : Առաջնորդք
25 կուրք , որ զմժղուկս քամէք և զուղտս կլանէք : Վայ
ձեզ դպրաց և փարիսեցւոց կեղծաւորաց , զի սրբէք
զարտաքին զբաժակին և զնկաւառակն , և ի ներ-
քոյ լի են յափշտակութեամբ և *անխտրութեամբ ,
26 փարիսեցի կոյր , սրբեա նախ զներքին բաժակին և

* Ոմանք՝ անիրաւութեամբ

զնկաւառակին , զի լինիցի և արտաքինն նոցա սուրբ :
27 Վայ ձեզ դպրաց և փարիսեցւոց կեղծաւորաց , զի
նման էք գերեզմանաց բռնելոց , որ արտաքոյ երեւին
դեղեցիկ , և ի ներքոյ լի են ոսկերօք մեռելոց և
28 ամենայն պղծութեամբ : Նոյնպէս և դուք արտաքոյ
երեւիք մարդկան արդարք , և ի ներքոյ լի էք կեղ-
29 ծաւորութեամբ և անօրէնութեամբ : Վայ ձեզ
դպրաց և փարիսեցւոց կեղծաւորաց , զի շինէք զշի-
30 րիմս մարգարէից և զարդարէք զգերեզմանս արդա-
31 րոց : Եւ ասէք , եթէ էաք յաւուրս հարցն մերոց ,
ոչ հաղորդեաք արեան մարգարէից : Ապա ուրե-
մն վկայէք զանձանց , եթէ որդիք էք այնոցիկ որ
32 կոտորէին զմարգարէսն : Եւ դուք լցէք զչափ հար-
33 ցին ձերոց : Օձք՝ ծնունդք իժից , զիա՞րդ փախ-
34 նուցուք ի դատաստանէ գեհենին : Վասն այդորիկ
ահաւասիկ ես առաքեմ առ ձեզ մարգարէս և ի-
մաստունս և դպիրս , և ի նոցանէ սպանանիցէք և
ի խաչ հանիցէք , և ի նոցանէ տանջիցէք ի ժո-
ղովուրդս ձեր , և հալածիցէք ի քաղաքէ ի քա-
35 ղաք : Որպէս զի եկեսցէ ի վերայ ձեր ամենայն ա-
րիւն արդար հեղեալ յերկրի , յարենէն Աբելի ար-
դարոյ մինչեւ զարիւնն Զաքարիայ որդւոյ Բա-
րաքիայ՝ զոր սպանիք ընդ միջ տաճարին և սե-
36 ղանոյ : Ամէն ասեմ ձեզ , եկեսցէ այն ամենայն ի
37 վերայ ազգիս այսորիկ : Երուսաղէմ , Երուսաղէմ ,
որ կոտորէիր զմարգարէսն և քարկոծ առնէիր զա-
ռաքեալսն առ քեզ , քանի՞ցս անգամ կամեցայ ժո-
ղովել զմանկունս քո՝ զոր օրինակ ժողովէ հաւ զճա-
38 գս իւր ընդ թեւովք , և ոչ կամեցարուք : Ահա
39 թողեալ լիցի ձեզ տունդ ձեր աւերակ : Բայց ասեմ

ձեզ թէ Ոչ եւս տեսանիցէք զնա յայսմ հետէ, մինչեւ ասիցէք, Օրհնեալ եկեալ յանուն Տեառն։

ԳԼ. ԻԴ

1 Եւ ելեալ Յիսուս ի տաճարէն՝ գնայր. և մատեան աշակերտքն ցուցանել նմա զշինուածս
2 տաճարին։ Եւ *նա պատասխանի ետ և՝ ասէ ցնոսա, Տեսանէ՞ք զայդ ամենայն, ամէն ասեմ ձեզ,
3 ոչ մնասցէ այդր քար ի քարի վերայ որ ոչ քակտեսցի։ Եւ մինչդեռ նստէր ի լերինն Ձիթենեաց, մատեան առ նա աշակերտքն առանձինն և ասեն,
4 Այսա մեզ, ե՞րբ լինիցի այդ, և կամ ինչ՞ նշան իցէ գալստեանն և վախճանի աշխարհիս։ Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնոսա, Զգայջ լերուք,
5 զգուշ եղէք զձեզ խաբիցէ. Զի բազումք գայցեն յանուն իմ և ասիցեն թէ Ես եմ Քրիստոսն, և զբազումս մոլորեցուցանիցեն։ Լսելոց էք պատերազմունս և համբաւս պատերազմաց. զգայջ լերուք՝ մի
6 խռովիջիք, զի պարտ է լինել այնմ ամենայնի, այլ չէ եւս է կատարած։ Յարիցէ ազգ յազգի վերայ,
7 և թագաւորութիւն ի թագաւորութեան վերայ, և եղիցին սով և սրածութիւնք և սասանութիւնք
8 ի տեղիս տեղիս։ Ակսկայն և այն ամենայն սկիզբն
9 է երկանց։ Յայնժամ մատնեսցեն զձեզ ի նեղութիւնս, և սպանանիցեն զձեզ, և եղիջիք ատե-
10 ցեալք յամենայն ազգաց վասն անուան իմոյ։ Եւ յայնժամ գայթակղեսցեն բազումք, և զմիմեանս

* Ի Յոյն՝ Յիսուս

11 մատնեսցեն և ատեսցեն զմիմեանս։ Եւ բազում սուտ մարգարէք յարիցեն և զբազումս մոլորեցու-
12 ցեն։ Եւ վասն բազմանալոյ անօրէնութեան ցամաքեսցի սէր բազմաց։ Բայց որ համբերեսցէ ի սպառ,
13 նա կեցցէ։ Եւ քարոզեսցի աւետարանս արքայութեան ընդ ամենայն տիեզերս՝ ի վկայութիւն ամենայն հեթանոսաց, և ապա եկեսցէ կատարած։
15 Արդ յորժամ տեսանիցէք զպղծութիւն աւերածին, որ ասացեալն է ի Դանիելէ մարգարէէ, զի կայցէ ի տեղւոջն սրբութեան. որ ընթեռնուն՝ ի
16 միտ առցէ։ Յայնժամ որ ի Հրէաստանի իցեն՝ փախիցեն ի լերինս։ Եւ որ ի տանիս կայցէ՝ մի իջցէ
17 առնուլ ինչ ի տանէ իւրմէ. Եւ որ յանգի իցէ՝
18 մի դարձցի յետս՝ առնուլ զձորձս իւր։ Բայց վայ
20 իցէ յղեաց և ստնտուաց յաւուրսն յայնոսիկ։ Յաղօթս կացէք զի մի լինիցի փախուստն ձեր ձմերան
21 և մի ի շաբաթու։ Զի եղիցի յայնժամ նեղութիւն մեծ, որպիսի ոչ եղեւ ի սկզբանէ արարածոց աշ-
22 խարհի մինչեւ ցայժմ, և ոչ այլ լիցի։ Եւ եթէ ոչ կարճեին աւուրքն այնոքիկ, ոչ ապրէր ամենայն մարմին. բայց վասն ընտրելոցն կարճեացին աւուրքն
23 այնոքիկ։ Յայնժամ թէ որ ասիցէ ձեզ, Այհաւասիկ
24 աստ է Քրիստոս կամ անդ, մի հաւատայցէք։ Զի յարիցեն սուտ քրիստոսք և սուտ մարգարէք, և տացեն նշանս մեծամեծս և արուեստս, մինչեւ մոլորեցուցանել, թէ հնար ինչ իցէ, և զընտրեալսն։
25 Այհա յառաջագոյն ասացի ձեզ։ (26) Ապա եթէ ասիցեն ձեզ, Այհաւանիկ յանապատի է, մի ելանիցէք, և թէ Այհա ի շտեմարանս է, մի հաւա-
27 տայցէք։ Զի որպէս փայլակն որ ելանէ յարեւելից

և երեւի մինչեւ յարեւմուտս , այնպէս եղիցի գա-
28 լուստն Որդւոյ մարդոյ : Զի ուր դիցէ իցէ , անդր
29 ժողովեսցին արծուիք : Վասն որոյ յետ նեղու-
թեան աւուրցն այնոցիկ արեգակն խաւարեսցի , և
լուսին ոչ տացէ զլոյս իւր , և աստեղք անկցին
30 յերկինից , և զօրութիւնք երկնից շարժեսցին : Եւ
յայնժամ երեւեսցի նշան Որդւոյ մարդոյ յերկինս , և
յայնժամ կոծեսցին ամենայն *ազգք . և տեսցեն
զՈրդի մարդոյ եկեալ ի վերոյ ամպոց երկնից զո-
31 րութեամբ և փառաւք բազմաւք : Եւ առաքեսցէ զՈ-
հրեշտակս իւր փողով մեծաւ , և ժողովեսցեն զընտ-
րեալսն նորա ի չորից հողմոց՝ ի ծագաց երկնից
32 մինչեւ ի ծագս նոցա : Ի թզենւոյ առեք ուսումն զ-
առակին . զի յորժամ նորա ոստքն կակղացին և
33 տերեւն ցոյսիցի , գիտէք թէ մերձ է ամառն : Նոյն-
պէս և դուք յորժամ տեսանիցէք զայս ամենայն ,
34 գիտասջիք թէ մերձ է ի դուրս : Ամէն ասեմ ձեզ ,
եթէ ոչ անցցէ ազգս այս՝ մինչեւ այս ամենայն ե-
35 ղիցի : Երկինք և երկիր անցցեն , և բանք իմ
36 ոչ անցցեն : Բայց վասն աւուրն այնորիկ և ժամու
ոչ ոք գիտէ , ոչ հրեշտակք երկնից՝ †և ոչ Որդի՝
37 բայց միայն Հայր : Այլ որպէս աւուրքն Նոյի ,
38 այնպէս եղիցի գալուստն Որդւոյ մարդոյ : Զի որպէս
էին յաւուրսն որ յառաջ քան զջրհեղեղն , ուտէին
և ըմպէին , կանայս առնէին և արանց լինէին , մին-
39 չեւ յօրն՝ յորում եմուտ Նոյ ի տապանն , Եւ ոչ
գիտացին մինչեւ եկն ջրհեղեղն և երար զամենե-

* Ի Յունն՝ ազգք երկրի
† Ի Յունարէն չէ՝ բայց միայն Հայր իմ։

սին . այնպէս եղիցի և գալուստն Որդւոյ մարդոյ :
40 Յայնժամ թէ իցեն երկու յագարակի , մին առցի
41 և միւսն թողցի : Եւ եթէ *երկու աղախնայն ի մի
42 երկանս , մին առցի և միւսն թողցի : Արթնուն կա-
ցէք , զի ոչ գիտէք յորում ժամու Տէրն ձեր գայ :
43 Զայն գիտասջիք եթէ գիտէր տանուտէրն՝ յորում
պահու գող գայ , հսկէր և ոչ տայր ական հատա-
44 նել զտան իւրոյ . վասն այսորիկ և դուք եղերուք
պատրաստք , զի յորում ժամու ոչ ակն ունիցիք՝
45 գայ Որդի մարդոյ : Իսկ ո՞վ իցէ հաւատարիմ ծա-
ռայ և խմաստուն , զոր կացոյց տէր իւր ի վերայ
ծառայից իւրոց՝ տալ նոցա կերակուր ի ժամու :
46 Երանի է ծառային այնմիկ զոր եկեալ տէրն գտա-
47 նիցէ արարեալ այնպէս : Ամէն ասեմ ձեզ , զի ի
վերայ ամենայն ընչից իւրոց կացուսցէ զնա : Ապա
թէ ասիցէ ծառային չար ի սրտի իւրում՝ Տէր իմ
49 յամէ ղգալ . Եւ սկսանիցի հարկանել զծառայս-
50 կիցս իւր , ուտիցէ և ըմպիցէ ընդ արբեցողս : Գայ-
ցէ տէր ծառային այնորիկ յաւուր յորում ոչ
51 ակն ունիցի , և ի ժամու յորում ոչ գիտիցէ . Եւ
կտրեսցէ զնա ընդ մէջ , և զբաժին նորա ընդ կեղ-
ծաւորս դիցէ . անդ եղիցի լալ և կրճել ատամանց :

Գլ. ԻԵ

1 Յայնժամ նմանեսցի արքայութիւն երկնից տասն
կուսանաց , որոց առեալ զլապտերս իւրեանց ելին
2 ընդ առաջ փեսային †և հարսին։ Էինդն ի նոցանէ

* Ի Յունն՝ երկու կանայք
† Ի Յունն էի։

3 Յիմարք էին և հինգն խնամտուանք ։ Յիմարքն առին
4 ղւսպտերան , և ձէթ ընդ իւրեանս ոչ բարձին, իսկ
խնամտուանքն առին ձէթ ամանովք ընդ լապտերս
5 իւրեանց ։ Եւ ի յամել փեսային՝ նիրհեցին ամե-
6 նեքեան և ի քուն մնին ։ Եւ ի մէջ գիշերի եղեւ
բարբառ , Ահա փեսայ գայ՝ արիք ընդ առաջ նո-
7 ցա ։ Յայնժամ յարեան ամենայն կուսանքն և կազ-
8 մեցին ղւսպտերս իւրեանց ։ Ասեն յիմարքն ցիմաս-
տունսն , Տուք մեզ յիւղոյդ ձերմէ , զի ահա շի-
9 ջանին լապտերք մեր ։ Պատասխանի եառնն խնամ-
տունքն և ասեն , Գուցէ ոչ իցէ մեզ և ձեզ բաւա-
կան, այլ երթայք ի վաճառականսն և գնեջիք ձեզ ։
10 Իբրեւ նոքա գնացին գնել՝ եկն փեսայն , և պատ-
րաստքն մնին ընդ նմա ի հարսանիսն , և փակեցաւ
11 դուռնն ։ Յետոյ գան և այլ կուսանքն և ասեն ,
12 Տէր , Տէր , բաց մեզ ։ Նա պատասխանի եւ ասէ ,
Ամէն ասեմ ձեզ թէ ոչ գիտեմ զձեզ ։
13 Արթուն կացէք զի ոչ գիտէք զօրն և ոչ զժամն ։
14 Որպէս այր մի գնացեալ ի տուր աշխարհ , կոչեաց
15 զծառայս իւր և եառ նոցա զինչս իւր . Ուժմն եառ
հինգ քանքար , և ուժմն երկուս , ուժմն մի , իւ-
16 րաքանչիւր ըստ իւրում կարի , և գնաց ։ Զոգաւ
վաղվաղակի որ առ զհինգն՝ գործեաց նոքօք և շա-
17 հեցաւ այլ եւս հինգ ։ Նոյնպէս և որ զերկուսն ,
18 շահեցաւ այլ եւս երկուս ։ Եւ որ զմին առ՝ գնաց,
փորեաց զերկիր , և թաղեաց զարծաթ տեառն իւ-
19 րոյ ։ Յետ բազում ժամանակի գայ տէր ծառայիցն
20 այնոցիկ՝ և առնէ համարս ի մէջ նոցա ։ Եւ մա-
տուցեալ որ զհինգ քանքարն առ , մատոյց այլ
եւս հինգ քանքար , և ասէ , Տէր , հինգ քանքար

եառեր ցիս , արդ ահաւիկ հինգ այլ եւս քանքար
21 ի վերայ շահեցայ ։ Ասէ ցնա տէրն իւր , Աղնիւ ,
ծառայ բարի և հաւատարիմ , որովհետեւ ի սա-
կաւուտ հաւատարիմ ես , ի վերայ բազմաց կա-
ցուցից զքեզ . մուտ յուրախութիւն տեառն քո ։
22 Մատուցեալ և որդի զերկուս քանքարան առեալ էր,
և ասէ , Տէր , երկուս քանքարս եառեր ցիս , ահաւիկ
երկուս եւս այլ քանքարս ղոր ի վերայ շահեցայ ։
23 Ասէ ցնա տէրն իւր , Աղնիւ , ծառայ բարի և հա-
ւատարիմ , որովհետեւ ի սակաւուտ հաւատարիմ
ես , ի վերայ բազմաց կացուցից զքեզ , մուտ յու-
24 րախութիւն տեառն քո ։ Մատուցեալ և որդի զմի
քանքարն առեալ էր , և ասէ , Տէր , գիտէի զի
այր մի խիստ ես , հնձես ղոր ոչ սերմանեցեր , և
25 ժողովես ուստի ոչ սփռեցեր . Երկեայ , գնացի և
թաղուցի զքանքարն քո յերկիր . արդ ահաւիկ
26 քոյդ ցքեզ ։ Պատասխանի եառ տէրն և ասէ ցնա ,
Ծառայ չար և վատ , գիտէիր եթէ հնձեմ ուստի
ոչ սերմանեցի , և ժողովեմ ուստի ոչ սփռեցի .
27 Պարտ էր քեզ արկանել զարծաթի իմ ի սեղանա-
28 տոս , և եկեալ ես տոկոսեաւք պահանջէի զնիմն։ Արդ
առէք ի դմանէ զքանքարդ , և տուք այնմ որ ու-
29 նի զտասն քանքարն ։ Զի ամենայնի որ ունիցի՝
տացի և յաւելցի , և որ ոչն ունիցի , և զոր ունի-
30 ցին՝ բարձցի ի նմանէ ։ Եւ զծառայդ անպիտան
հանէք ի խաւարն արտաքին , անդ եղիցի լալ և
31 կրճել ատամանց ։ Եւ յորժամ եկեսցէ Որդի մար-
դոյ փառաւք իւրովք և ամենայն հրեշտակք ընդ նմա,
32 յայնժամ նստցի յաթոռ փառաց իւրոց ։ Եւ ժո-
ղովեսցին առաջի նորա ամենայն ազգք, և մեկնեսցէ

զնոսա ՚ի միմեանց, որպէս հովիւ զի մեկնեսցէ զոդիս
33 յայծեաց ։ Եւ կացուսցէ զոդիան ընդ աջմէ իւրմէ՝
34 և զայծեան ՚ի ձախմէ ։ Յայնժամ ասասցէ Թագաւորն ցայնոսիկ՝ որ ընդ աջմէն իցեն . Եկայք , օրհնեալք Հօր իմոյ , ժառանգեցէք զպատրաստեալ
35 ձեզ զարքայութիւնն ՚ի սկզբանէ աշխարհի ։ Զի քաղցեայ՝ և ետուք ինձ ուտել , ծարաւեցի՝ և
36 արբուցէք ինձ . օտար էի՝ և ժողովեցէք զիս . Մերկ՝ և զգեցուցէք զիս . հիւանդ էի՝ և տեսէք զիս . ՚ի
37 բանտի էի՝ և եկէք առ իս։ Յայնժամ պատասխանի տացեն նմա արդարքն և ասասցեն , Տէր , ե՞րբ տեսաք զքեզ քաղցեալ՝ և կերակրեցաք , կամ ծա-
38 րաւի՝ և արբուցաք . ե՞րբ տեսաք զքեզ օտար՝ և
39 ժողովեցաք , կամ մերկ՝ և զգեցուցաք ։ ե՞րբ տեսաք զքեզ հիւանդ կամ ՚ի բանտի՝ և եկաք առ-
40 քեզ ։ Պատասխանի տացէ Թագաւորն և ասասցէ ցնոսա , Ամէն ասեմ ձեզ , Որովհետեւ արարիք միում յեղբարցս այսցոցիկ փոքրկանց՝ ինձ արարիք։
41 Յայնժամ ասասցէ և ցայնոսիկ որ ընդ ահեկէն իցեն , Երթայք յինէն , անիծեալք , ՚ի հուրն յաւիտենական , որ պատրաստեալ է Սատանայի և
42 հրեշտակաց նորա ։ Զի քաղցեայ՝ և ոչ ետուք ինձ
43 ուտել , ծարաւեցի՝ և ոչ արբուցիք զիս . Օտար էի՝ և ոչ ժողովեցիք զիս , մերկ էի՝ և ոչ զգեցուցիք զիս , հիւանդ և ՚ի բանտի՝ և ոչ տեսիք զիս ։
44 Յայնժամ պատասխանի տացեն և նոքա և ասասցեն , Տէր , ե՞րբ տեսաք զքեզ քաղցեալ կամ ծարաւի կամ օտար կամ մերկ կամ հիւանդ կամ ՚ի
45 բանտի , և ոչ պաշտեցաք զքեզ ։ Յայնժամ պատասխանի տացէ նոցա և ասասցէ , Ամէն ասեմ

ձեզ , Որովհետեւ ոչ արարէք միում ՚ի փոքրկանցս
46 յայսցանէ՝ և ոչ ինձ արարէք ։ Եւ երթիցեն նոքա ՚ի տանջանս յաւիտենականս, և արդարքն ՚ի կեանսն յաւիտենականս ։

Գլ· ԻԶ

1 Եւ եղեւ իբրեւ կատարեաց Յիսուս զամենայն
2 զբանս զայսոսիկ , ասէ ցաշակերտան իւր , Գիտէք զի յետ երկուց աւուրց զատիկ լինի , և Որդի մար-
3 դոյ մատնի ՚ի խաչ ելանել ։ Յայնժամ ժողովեցան քահանայապետքն և դպիրքն և ծերք ժողովրդեանն ՚ի սրահ քահանայապետին՝ որում անուն էր Կա-
4 յիափա . Եւ արարին խորհուրդ զի նենգութեամբ
5 կալցին զՅիսուս և սպանցեն ։ Բայց ասէին Թէ Մի ՚ի տօնի ասա , զի մի խռովութիւն լինիցի ՚ի ժո-
6 ղովրդեանն։ Իբրեւ եկն Յիսուս ՚ի Բեթանիա ՚ի տունն
7 Սիմոնի բորոտի , Մատեաւ առ նա կին մի՝ որ ունէր շիշ իւղոյ ծանրագնի , և Թափեաց ՚ի գլուխ
8 նորա ՚ի բազմականին ։ Իբրեւ տեսին աշակերտքն , բարկացան և ասեն , Ընդէ՞ր է կորուստ այդ իւ-
9 ղոյդ ։ Զի մարթ էր վաճառել զդա մեծագնի և
10 տալ աղքատաց ։ Գիտաց Յիսուս և ասէ ցնոսա , Զի՞ աշխատ առնէք զկինդ , գործ մի բարի գոր-
11 ծեաց դա յիս ։ Զամենայն ժամ զաղքատս ընդ ձեզ ունիք , բայց զիս ոչ հանապազ ընդ ձեզ ու-
12 նիք ։ Արկանել դորա զիւղդ ՚ի մարմին իմ՝ առ ՚ի
13 թաղելոյ զիս նշանակեաց ։ Բայց ամէն ասեմ ձեզ , զի ուր և քարոզեսցի աւետարանս այս ընդ ամենայն աշխարհ՝ խօսեսցի և զոր արար դա ՚ի յիշա-

44 տակ դորա ։ Յայնժամ գնաց մի յերկոտասանից
անուանեալ Յուդա Սկարիովտացի առ քահանա-
45 յապետան , և ասէ , Զի՞նչ կամիք տալ ինձ , և ես
մատնեցից զնա ձեզ . և նոքա *կշռեցին նմա երե-
46 սուն արծաթի ։ Եւ յայնմ հետէ խնդրէր պարապ
47 զի մատնեսցէ զնա նոցա ։ Եւ յառաջնում աւուր
բաղարջակերացն մատեան աշակերտքն առ Յիսուս
և ասեն , Ո՞ւր կամիս զի պատրաստեսցուք քեզ
48 ուտել զզատիկն ։ Եւ նա ասէ ցնոսա , Երթայք ի
քաղաքն առ այս անուն և ասացէք ցնա , Վար-
դապետ ասէ , Ժամանակ իմ մերձեալ է , առ քեզ
49 առնեմ զզատիկն աշակերտօքս հանդերձ ։ Եւ ա-
րարին աշակերտքն որպէս հրամայեաց նոցա Յիսուս ,
20 և պատրաստեցին զզատիկն ։ Եւ իբրեւ երեկոյ եղեւ՝
21 կայր բազմեալ ընդ երկոտասան աշակերտան ։ Եւ
մինչդեռ ուտէին նոքա՝ ասէ , Ամէն ասեմ ձեզ , զի
22 մի ոմն ի ձէնջ մատնելոց է զիս ։ Եւ արամեցան յոյժ ,
սկսան ասել ցնա իւրաքանչիւր ոք ի նոցանէ ,
23 Միթէ է՞ իցեմ , Տէր ։ Նա պատասխանի եւ
ասէ , Որ միասոյ ընդ իս զձեռն իւր ի սկաւառա-
24 կըս՝ նա մատնելոց է զիս ։ Որդի մարդոյ երթայ՝ որ-
պէս և գրեալ է վասն նորա , բայց վայ մարդոյն
այնմիկ՝ որով որդի մարդոյ մատնեսցի . լաւ
25 էր նմա թէ չէր ծնեալ մարդն այն ։ Պատասխանի
եւ Յուդա որ մատնելոցն էր զնա՝ և ասէ , Միթէ
է՞ իցեմ , վարդապետ . ասէ ցնա , Դու ասացեր ։
26 Եւ մինչդեռ ուտէին նոքա՝ առ Յիսուս հաց , օրհ-
նեաց և բեկ , և եւ աշակերտացն և ասէ , Առէք ,

* կամ՝ խոստացան

27 կերայք , այս է մարմին իմ ։ Եւ առեալ բաժակ գո-
հացաւ , եւ նոցա և ասէ , Արբէք ի դմանէ ամե-
28 նեքին . Զի այդ է արիւն իմ նորոյ ուխտի , որ ի
29 վերայ բազմաց հեղանի ի թողուածիւն մեղաց ։ Բայց
ասեմ ձեզ , Ոչ եւս արբից յայսմ հետէ ի բերոյ
որթոյ մինչեւ ցօրն ցայն , յորժամ արբից զդա
30 ընդ ձեզ նոր յարքայութեան Հօր իմոյ ։ Եւ օրհ-
31 նեցին , և ելին ի լեառն Ձիթենեաց ։ Յայնժամ
ասէ ցնոսա Յիսուս , Ամենեքեան դուք գայթագղե-
լոց էք յինէն յայսմ գիշերի . զի գրեալ է թէ Հա-
32 րիւ զՀովիւն և ցրուեսցին ոչխարքն Հօտին ։ Եւ
յետ յառնելոյն իմոյ՝ յառաջեցից քան զձեզ ի
33 Գալիլեա ։ Պատասխանի եւ Պետրոս և ասէ ցնա ,
Թէպէտ և ամենեքեան գայթագղեսցին ի քէն , սա-
34 կայն ես ոչ գայթագղեցայց ։ Այս ցնա Յիսուս , Ա-
մէն ասեմ քեզ զի Յայսմ գիշերի մինչչեւ հաւս
35 խօսեալ իցէ , երիցս ուրասցիս զիս ։ Ասէ ցնա Պետ-
րոս , Թէ և մեռանել հասանիցէ ընդ քեզ , զքեզ
ոչ ուրասցայց . նոյնպէս և ամենայն աշակերտքն
36 ասէին ։ Յայնժամ գայ Յիսուս ընդ նոսա ի գիւղ
մի՝ որում անուն էր Գեթսեմանի , և ասէ ցնոսա ,
Նստարուք այդր , մինչեւ երթայց կացից Յաղօթս
37 Եւ առեալ ընդ իւր զՊետրոս և զերկուս որդիսն
38 Զեբեդեայ , սկսաւ տրտմել և հոգալ ։ Յայնժամ
ասէ ցնոսա , Տրտում է ոգի իմ մինչեւ ի մահ ,
39 կացէք աստ և սկիզբ ընդ իս ։ Եւ մատուցեալ
յառաջ սակաւիկ մի՝ անկաւ ի վերայ երեսաց իւ-
րոց , եկաց Յաղօթս և ասէ , Հայր իմ , եթէ հնար

* ի Յունն՝ Յաղօթս անդր ։

է՝ անցցէ բաժակս այս յինէն . բայց ոչ որպէս ես
40 կամիմ, այլ որպէս դու : Գայ առ աշակերտան , եւ
գտանէ զնոսա ի քուն , և ասէ ցՊետրոս , Այդ-
պէս ոչ կարացիք մի ժամ արթուն կալ ընդ իս :
41 Արթուն կացէք և աղօթս արարէք՝ զի մի անկա-
նիցիք ի փորձութիւն . *Հոգիս յօժար է՝ բայց
42 մարմինս տկար :՝ Դարձեալ երկրորդ անգամ չո-
գաւ , եկաց յաղօթս Յիսուս և ասէ , Հայր իմ ,
եթէ հնար իցէ անցանել յինէն բաժակիս այսմիկ,
43 ապա թէ ոչ՝ արբից զսա , եղիցին կամք քո : Եւ
եկեալ միւսանգամ եգիտ զնոսա ի քուն , զի էին
44 աչք իւրեանց ծանրացեալք : Եթող զնոսա և դար-
նաց , եկաց յաղօթս երրորդ անգամ , և զարձեալ
45 զնոյն բան ասաց : Յայնժամ գայ առ աշակերտան
և ասէ ցնոսա , Ննջեցէք այսուհետեւ և հանգե-
ցուք , զի ահա հասեալ է ժամ , և Որդի մարդոյ
46 մատնի ի ձեռս մեղաւորաց : Արիք , երթիցուք ասա-
տէ , զի ահաւասիկ եհաս որ մատնելոցն է զիս :
47 Եւ մինչդեռ նա զայն խօսէր , ահա Յուդա մի ՚ի եր-
կոտասանից էն , և ընդ նմա ամբոխ բազում սը-
բով և բրօք ՚ի քահանայապետէն և ՚ի ծերոց ժո-
48 ղովրդեանն : Եւ որ մատնելոցն էր զնա՝ եւս նոցա
նշան և ասէ , Ընդ որում ես համբուրեցից՝ նա է,
49 զնա ունիցիք : Եւ վաղվաղակի մատուցեալ առ
Յիսուս՝ ասէ , Ողջ եր վարդապետ . և համբուրեաց
50 ընդ նմա : Եւ Յիսուս ասէ ցնա , Ընկեր , վասն որո՞յ
եկիր դ . Յայնժամ մատուցեալ արկին ձեռս ՚ի Յի-
51 սուս և կալան զնա : Եւ ահա մի ոմն յայնցանէ

* Ի Յայնմ՝ Հոգին յօժար է՝ բայց մարմինն տկար :

որ էին ընդ Յիսուսի , ձգեաց զձեռն և եհան զը-
սուր իւր և եհար զծառայ քահանայապետին , և
52 ՚ի բաց եհան զունկն նորա : Յայնժամ ասէ ցնա
Յիսուս , Դարձո զսուր քո ՚ի տեղի իւր , զի ամե-
նեքեան որ սուր առնուցուն՝ որով անկանիցին :
53 Թէ համարիցե՞ս թէ ոչ կարեմ *աղաչել զՀայր
իմ . և հասուցանիցէ ինձ †այժմ այսր՝ աւելի
54 քան զերկոտասան ‡գունդս հրեշտակաց : Այլ
զիա՞րդ լրասցուն գիրքն թէ այսպէս պարտ է լինել :
55 Յայնժամ ասաց Յիսուս ցամբոխն , Իբրեւ ՚ի վերայ
աւազակի՞ ելիք սուսերօք և բրօք ունել զիս . հա-
նապազ առ ձեզ ՚ի տաճարին նստէի և ուսուցա-
56 նէի , և ոչ կալաք զիս : Այլ այս ամենայն եղեւ
զի լցին գիրքն մարգարէիցն : Յայնժամ աշակերտ-
57 քն ամենեքեան թողին զնա և փախեան : Իսկ նոցա
կալեալ զՅիսուս՝ ածին առ Կայիափա քահանա-
58 յապետ , ուր դպիրքն և ծերքն ժողովեալ էին : Եւ
Պետրոս զվեր նորա երթայր բացագոյն մինչեւ ՚ի
սրահ քահանայապետին , և մտեալ ՚ի ներքս նըս-
59 տէր ընդ սպասաւորսն տեսանել զկատարածն : Իսկ
քահանայապետքն և ամենայն ատեանն խնդրէին
սուտ վկայութիւն զՅիսուսէ , զի սպանցեն զնա .
60 Եւ ոչ գտանէին ՚ի բազմաց սուտ վկայիցն մատու-
61 ցելոց . յետոյ մատուցեալ երկուս սուտ վկայք , Ա-
սէին թէ Սա ասէր , կարող եմ քակել զտաճարն
62 Աստուծոյ , և զերիս աւուրս շինել : Եւ յարու-
ցեալ քահանայապետն ասէ ցնա , Զո՞ւս ինչ պա-

* Ի Յայնմ՝ այժմ աղաչել † Ի Յայնմ ՚ի : ‡ Ի Յայնմ լեգէոնիս

63 տասխանի, զի՞նչ դոքա ամբաստանեն զքէն։ Եւ
Յիսուս լուռ կայր. Պատասխանի ետ քահանայա-
պետն և ասէ ցնա, Երդմնեցուցանեմ զքեզ ՅԱս-
տուածէ կենդանի, զիասացես մեզ՝ թէ դո՞ւ ես
64 Քրիստոսն որդի Աստուծոյ։ Ասէ ցնա Յիսուս, Դուն
ասացեր. բայց ասեմ ձեզ, Յայսմ հետէ տեսանի-
ցէք զՈրդի մարդոյ նստեալ ընդ աջմէ Զօրութեան
65 և եկեալ ընդ ամպս երկնից։ Յայնժամ քահանա-
յապետն պատառեաց զհանդերձս իւր, և ասէ,
Հայհոյեաց, զի՞ եւս պիտոյ են մեզ վկայք, ահա
66 արդ լուայք զՀայհոյութիւնն նորա. Զի՞նչ հաճոյ է
ձեզ. Նոքա պատասխանի ետուն և ասեն, Մահա-
67 պարտ է։ Յայնժամ թքին ընդ երեսս նորա և կըռ-
68 փեցին զնա, և ոմանք ապտակեցին, և ասեն, Մար-
գարէացո մեզ, Քրիստոսդ, ո՞վ է որ եհարն զքեզ։
69 Իսկ Պետրոս նստէր արտաքոյ ի դատին. մատեաւ
առ նա աղախին մի և ասէ, Եւ դու ընդ Յիսուսի
70 Գալիլեացւոյ էիր։ Նա ուրացաւ առաջի ամենե-
71 ցուն և ասէ Թէ Ոչ գիտեմ զինչ խօսիսդ։ Եւ իր-
բեւ ել նա արտաքս քան զդուռնն, տեսս զնա այլ
կին մի, և ասէ ցայնոսիկ որ անդն կային, Եւ սա
72 ընդ Յիսուսի Նազովրեցւոյ էր։ Եւ դարձեալ ու-
73 րացաւ երդմամբ Թէ Ոչ գիտեմ զայրն։ Եւ յետ
սակաւ մից մատուցեալ որք կային անդ, ասեն
ցՊետրոս, Արդարեւ և դու ի նոցանէ ես, քանզի
74 և խօսք քո յայտ առնեն զքեզ։ Յայնժամ սկսաւ
նզովել և երդնուլ Թէ Ոչ գիտեմ զայրն. և իսկոյն
75 հաւ խօսեցաւ։ Եւ յիշեաց Պետրոս զբանն Յիսու-
սի զոր ասաց Թէ Մինչչեւ հաւուս խօսեալ իցէ,

երիցս ուրասցիս զիս. և ելեալ արտաքս՝ ելաց դառ-
նապէս։

ԳԼ. ԻԷ

1 Իրրեւ այդ եղեւ, խորհուրդ արարին ամենայն
քահանայապետքն և ծերք ժողովրդեանն վասն Յի-
2 սուսի սպանանել զնա։ Կապեցին զնա և առին
զնացին, և ետուն ի ձեռս Պոնտացւոյ Պիղատոսի
3 դատաւորին։ Յայնժամ տեսեալ Յուդայի որ
մատնեացն զնա Թէ պարտաւորեցաւ, զղջացաւ և
դարձոյց *զարծաթսն առ քահանայապետսն և
4 ծերս ժողովրդեանն," Եւ ասէ, Մեղայ զի մատնեցի
զարիւն արդար. և նոքա ասեն, Մեզ չէ փոյթ,
5 դու գիտես։ Եւ ընկէց զարծաթսն ի տաճարին և
6 գնաց, և չոգաւ խեղդեցաւ։ Իսկ քահանայապե-
տիցն առեալ զարծաթսն՝ ասեն, Ոչ է արժան ըն-
դունել զայդ ի կորբանն, քանզի գինք արեան են։
7 Խորհուրդ առեալ, գնեցին այնու զագարակն բրտի
8 ի գերեզման օտարաց։ Վասն այնորիկ կոչեցաւ
ագարակն այն Ագարակ արեան մինչեւ ցայսօր։
9 Յայնժամ լցաւ որ ասացաւն ի ձեռն Երեմիայ մար-
գարէի, Եւ առին զերեսուն արծաթին զգինս վա-
10 ճառելոյն, զոր արկին յորդւոցն Իսրայելի։ Եւ ե-
տուն զնա յագարակն բրտի, որպէս հրամայեաց
11 ինձ Տէր։ Եւ Յիսուս եկաց առաջի դատաւորին.
եհարց զնա դատաւորն և ասէ, Դո՞ւ ես թագա-

* Ի Յոյնս՝ զերեսունն արծաթին առ քահանայա-
պետան և ծերս,

12 ւորն Հրէից. Եւ Յիսուս ասէ, Դու ասես։ Եւ ի
չարախօսելն նորա ի քահանայապետին և ի ծե-
13 րոց, ոչ ինչ ետ պատասխանի։ Յայնժամ ասէ ցնա
Պիղատոս, Ո՞չ լսես՝ որչափ դոքա կակուսալ քո
14 վկայեն։ Եւ ոչ ետ նմա պատասխանի և ոչ բան
15 մի, մինչեւ զարմանալ դատաւորին յոյժ։ Բայց
ըստ սովոր էր դատաւորն արձակել ժողովըր-
16 դեանն կապեալ մի զոր կամէին։ Ունէին յայնժամ
կապեալ մի նշանաւոր, որում անուն էր *Յեսու
17 Բարաբբա։ Իրրեւ ժողովեցան, ասէ ցնոսա Պիղա-
տոս, Զո՞ կամիք †ձերկուց ասի ձեզ արձակեցից
ձեզ, զՅեսու Բարաբբա՞։ Եթէ զՅիսուս զանուա-
18 նեալն Քրիստոս։ Գիտէր թէ առ նախանձ
19 ձուլ մատնեցին զնա։ Եւ մինչ նստէր յատենին,
առաքեաց առ նա կինն իւր և ասէ, Ձկայ ինչ քո
և արդարոյն այնորիկ, զի բազում անցք անցին
20 ընդ իս այսօր յանուրջս վասն նորա։ Իսկ քահա-
նայապետքն և ծերք հաւանեցուցին զժողովուրդսն,
զի խնդրեսցեն զԲարաբբայն՝ և զՅիսուս կորուսցեն։
21 Պատասխանի ետ դատաւորն և ասէ ցնոսա, Զո՞
կամիք զի արձակեցից ձեզ յերկուց այսր. և նո-
22 քա ասեն, զԲարաբբա։ Ասէ ցնոսա Պիղատոս, Իսկ
23 զի՞ արարից զՅիսուս զանուանեալն Քրիստոս։ Ասեն
ամենեքեան, խաչեսցի. և նա ասէ, Զի՞նչ չար
արար. և նոքա առաւել եւս աղաղակէին և ասէին,
24 խաչեսցի։ Եւ տեսեալ Պիղատոսի թէ ոչ ինչ օգնէ,
այլ առաւել խռովութիւն լինի, առեալ ջուր՝

* Ի Յոյն. էր։ † Ի Յոյն՝ զի արձակեցից ձեզ, զԲարաբբա՞

լուաց զձեռս առաջի ժողովրդեանն և ասէ, Ա-
ւետ եմ ես յարենէ արդարոյդ այդորիկ. դուք
25 դիտասջիք։ Պատասխանի ետ ամենայն ժողովուրդն
և ասէ, Արիւն դորա ի վերայ մեր և ի վերայ որ-
26 դւոց մերոց։ Յայնժամ արձակեաց նոցա զԲարաբ-
բայն, և զՅիսուս գան հարեալ՝ ետ ի ձեռս զի
27 խաչեսցի։ Յայնժամ զինուորք դատաւորին առին
զՅիսուս յապարանս, և ժողովեցին ի վերայ նորա
28 զամենայն զդունդն. Մերկացին զնա, և արկին զնա
29 վառ քղամիդ կարմիր։ Եւ բոլորեալ պսակ ի փշոց՝
եդին ի գլուխ նորա, և եղեգն յաջոյ ձեռին նորա.
ի ծունր իջեալ առաջի նորա՝ կատակէին և ասէին,
30 Ողջ եր թագաւոր Հրէից։ Եւ թքեալ ի նա՝ առ-
31 նուին զեղեգնն և ծեծէին զգլուխ նորա։ Եւ յոր-
ժամ ձաղեցին զնա, մերկացուցին ի նմանէ զքղա-
միդն և ապուցին նմա զիւր հանդերձն, և տարան
32 զնա ի խաչ հանել։ Եւ ելեալ արտաքս՝ գտին այր
մի Կիւրենացի անուն Սիմոն, զնա կալան պահակ
33 զի բարձցէ զխաչն նորա։ Եւ եկեալ ի տեղին ա-
34 նուանեալ Գողգոթա, որ է տեղի կառափնոյ, ե-
տուն նմա ըմպել գինի ընդ լեղի խառնեալ. և իր-
35 բեւ ճաշակեաց, ոչ կամեր ըմպել։ Եւ հանեալ զնա
ի խաչ բաժանեցին զհանդերձս նորա վիճակաւ. զի
լցցի բանն որ ասացաւ ի մարգարէէն, Բաժանեցին
զհանդերձս իմ ինքեանս, և ի վերայ պատմուճանի
36 իմոյ վիճակ արկանէին։ Եւ նստեալ պահէին զնա։
37 Եւ եդին ի վերայ գլխոյ նորա գրեալ զվնաս նորա,
38 Թէ Այս է Յիսուս Թագաւորն Հրէից։ Յայնժամ
հանին ընդ նմա ի խաչ երկուս աւազակս, մի յաջ-
39 մէ նորա և մի յահեկէ։ Եւ որ անցանէին՝ հայհո-

յԵրեն զնա , շարժեին զգլուխս իւրեանց , եւ ասէին,
40 Վահ , որ քակէիր զտաճարն եւ զերիս աւուրս շի-
նէիր զնա . ապրեցո զքեզ , թէ Որդի ես Աստուծոյ՝
41 էջ ի խաչէդ : Նոյնպէս և քահանայապետքն ձա-
42 ղէին հանդերձ դպրօքն և ծերովք և ասէին , Զայլս
ապրեցոյց , զինքն ոչ կարէ ապրեցուցանել . եթէ
թագաւոր է Իսրայէլի՝ իջցէ այժմ ի խաչէդ , և
43 հաւատասցուք դմա . Եթէ յուսացաւ Աստուծոյ,
փրկեսցէ այժմ զդա , եթէ կամի զդա . զանգի ա-
44 սաց եթէ Աստուծոյ Որդի եմ՝ Զնոյն և աւազակքն
45 որ խաչեալ էին ընդ նմա՝ նախատէին զնա : Եւ ի
վեց ժամէ աւուրն խաւար եղեւ ի վերայ ամենայն
46 երկրի մինչեւ ցիննն ժամ՝ : Եւ զիննն ժամուն դոչեաց
Յիսուս ի ձայն մեծ և ասէ , Էլի , Էլի , լամա սա-
բաքթանի . այսինքն է , Աստուած իմ՝ , Աստուած
47 իմ՝ , ընդէ՞ր թողեր զիս : Ոմանք յայնցանէ որ անդն
կային , իբրեւ լուան՝ ասէին , զեղիա կարդայ դա :
48 Եւ վաղվաղակի ընթացաւ մի ոմն ի նոցանէ՝ առ
սպունգ լի քացախով , հարեալ յեղեգան՝ եւ ըմ
49 պել նմա : Եւ կէսքն ասէին , Թող , տեսցուք եթէ
50 գա՞յ եղիա փրկել զդա : Եւ Յիսուս դարձեալ ա-
51 զաղակեաց ի ձայն մեծ և արձակեաց զոգին : Եւ
ահա վարագոյր տաճարին ցկլաւ յերկուս ի վերուստ
մինչեւ ի վայր , և երկիր շարժեցաւ , և վէմք պա-
52 տառեցան : Եւ գերեզմանք բացան և բազում՝ մար-
53 մինք ննջեցելոց սրբոց յարեան : Եւ ելեալ ի գե-
րեզմանաց յետ յարութեանն նորա , մտին ի քա-
54 ղաքն սուրբ և երեւեցան բազմոց : Իսկ Հարիւրա-
պետն և որ ընդ նմա պահէին զՅիսուս , իբրեւ տե-
սին զշարժումն և զեղեալսն , երկեան յոյժ և ա-

55 սեն , Արդարեւ Աստուծոյ Որդի էր սա : Էին անդ
կանայք բազումք , կային ի հեռաստանէ և հայէին,
որք եկին զկնի Յիսուսի ի Գալիլեէ պաշտել զնա .
56 Յորս էր Մարիամ Մագդաղենացի , և Մարիամ՝
Յակովբեայ և Յովսեայ մայր , և մայր որդւոցն Զե-
57 բեդեայ : Եւ իբրեւ երեկոյ եղեւ , եկն այր մի մե-
ծատուն Յովսեփ՝ որում անուն էր Յովսեփ ,
58 որ և աշակերտեցաւ իսկ Յիսուսի : Սա մատուցեալ
առ Պիղատոս , խնդրեաց զմարմինն Յիսուսի . յայն-
59 ժամ Պիղատոս հրամայեաց տալ զմարմինն : Եւ ա-
ռեալ զմարմինն Յովսեփ՝ պատեաց սուրբ կտաւով,
60 Եւ եդ ի նոր գերեզմանի ղոր փորեաց ի վիմի . և
թաւալեցուցեալ կափարիչ դրան գերեզմանին վէմ
61 մի մեծ՝ գնաց : Անդ էր Մարիամ Մագդաղենացի
և միւս Մարիամն , նստէին հանդէպ գերեզմանին :
62 Եւ ի վաղիւ անդր որ է յետ ուրբաթուն , ժողո-
վեցան քահանայապետքն և փարիսեցիքն առ Պի-
63 ղատոս , Եւ ասեն , Տէր , յիշեցաք զի մոլորեցու-
ցիչն այն ասէր մինչ կենդանին էր , Թէ յետ երից
64 աւուրց յառնեմ՝ . Արդ հրամայեա զդուշանալ գե-
րեզմանին մինչեւ յերից աւուրս , գուցէ եկեալ ա-
շակերտքն գիշերի՝ գողանայցեն զնա , և ասիցեն
ժողովրդեանն Թէ յարեաւ ի մեռելոց . և լինիցի
65 յետին մոլորութիւնն չար քան զառաջինն : Ասէ
ցնոսա Պիղատոս , Ունիք զզօրականն , երթայք ,
66 զդուշացարուք որպէս և գիտէք : Եւ նոքա երթեալ
զդուշացան գերեզմանին , և կնքեցին զվէմն հան-
դերձ զօրականօքն :

ԳԼ. ԻԸ

1 Եւ յերեկոյի շաբաթուն՝ յորում լուսանայր մի-
աշաբաթին, եկն Մարիամ Մադդաղենացի և միւս
2 Մարիամն տեսանել զգերեզմանն։ Եւ ահա շար-
ժումն մեծ եղեւ, զի հրեշտակ Տեառն իջեալ յեր-
կնից, մատուցեալ՝ ի բաց թաւալեցոյց զվէմն ի դը-
3 բանց անտի, և նստեր ի վերայ նորա. Եւ էր տե-
սիլ նորա իբրեւ զփայլակն, և հանդերձ նորա սպի-
4 տակ իբրեւ զձիւն։ Եւ յահէ անտի նորա խռովե-
5 ցան պահապանքն, և եղեն իբրեւ զմեռեալս։ Պա-
տասխանի եւ հրեշտակն և ասէ ցկանայսն, Մի
երկնչիք դուք, գիտեմ՝ զի զՅիսուս զխաչելեալն
6 խնդրէք. Չէ աստ, քանզի յարեաւ, որպէս ա-
7 սացն. եկայք, տեսէք զտեղին ուր *կայր։ Եւ վաղ-
վաղակի երթայք, ասացէք աշակերտացն նորա թէ
յարեաւ. և ահա յառաջանայ քան զձեզ ի Գա-
լիլեա, անդ տեսանիցէք զնա. ահա ասացի ձեզ։
8 Եւ ելեալ վաղվաղակի ի գերեզմանէ անտի ահիւ
և խնդութեամբ բազմաւ՝ ընթանային պատմել ա-
9 շակերտացն։ Եւ ահա պատահեաց նոցա Յիսուս և
ասէ, Ողջ էք. և նոքա մատուցեալ կալան զոտս
10 նորա և երկիրպագին նմա։ Յայնժամ ասէ ցնոսա
Յիսուս, Մի երկնչիք, երթայք, ասացէք եղբարցն
իմոց՝ զի երթիցեն ի Գալիլեա և անդ տեսցեն զիս։
11 Իբրեւ նոքա գնացին, ահա ոմանք ի զօրականացն
եկին ի քաղաքն, և պատմեցին քահանայապետիցն

* Ի Յոյն՝ կայր Տէրն։

12 զամենայն որ լինէր եղեւն։ Եւ նոքա ժողովեալ հան-
դերձ ծերովքն, խորհուրդ առեալ՝ արծաթ յայժ ե-
13 տուն զօրականացն, Եւ ասեն, Ասասջիք եթէ Աշա-
կերտքն նորա եկեալ գիշերի գողացան զնա՝ մինչ մեք
14 ի քուն էաք։ Եւ եթէ լուր լինի այդ առ դատաւորն,
մեք համեցուսցուք զնա և զձեզ անհոգս արասցուք։
15 Եւ նոցա առեալ զարծաթն, արարին որպէս ուսանն.
16 և եղ համբաւս այս ի Հրէից մինչեւ ցայսօր։ Իսկ
մետասան աշակերտքն գնացին ի Գալիլեա ի լեառ-
17 նն՝ ուր ժամադիր եղեւ նոցա Յիսուս։ Իբրեւ տե-
սին զնա՝ երկիրպագին նմա, և ոմանք յերկուացան։
18 Եւ մատուցեալ Յիսուս խօսեցաւ ընդ նոսա և ասէ,
տուաւ ինձ ամենայն իշխանութիւն յերկինս և յեր-
կրի. *որպէս առաքեաց զիս Հայր, և ես առաքեմ
19 զձեզ։" Գնացէք այսուհետեւ, աշակերտեցէք զա-
մենայն հեթանոսս, մկրտեցէք զնոսա յանուն Հօր
20 և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ։ Ուսուցէք նոցա պա-
հել զամենայն որ ինչ պատուիրեցի ձեզ. և ա-
հաւասիկ ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս, մին-
չեւ ի կատարած աշխարհի։

* Ի Յոյն՝ Ա+։

Ա.ԻԵՏԱՐԱՆ

ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ

ԳԼ. Ա.

1 Սկիզբն աւետարանի Յիսուսի Քրիստոսի Որդւոյ
2 Աստուծոյ։ Որպէս և գրեալ է ի մարգարէս, Ահա
ես առաքեմ զհրեշտակ իմ առաջի քո, որ
3 հանդերձեսցէ զճանապարհ քո առաջի քո։ Ձայն
բարբառոյ յանապատի, պատրաստ արարէք զճա-
նապարհ Տեառն, և ուղիղ արարէք զշաւիղս նորա։
4 Եւ եղեւ ի Յովհաննէս մկրտէր յանապատի, և
քարոզէր մկրտութիւն ապաշխարութեան ի թո-
5 ղութիւն մեղաց։ Եւ երթայր առ նա ամենայն
աշխարհն Հրէաստանի և երուսաղէմացիք ամենե-
քեան, և մկրտէին ի նմանէ ի Յորդանան գետ՝
6 խոստովանեալ զմեղս իւրեանց։ Եւ էր Յովհաննէս
զգեցեալ ստեր ուղտոյ, և գօտի մաշկեղէն ընդ
մէջ իւր. և կերակուր նորա մարախ և մեղր վայ-
7 րենի։ Քարոզէր և ասէր, Գայ զօրագոյնն քան
զիս զկնի իմ, որում չեմ բաւական խոնարհել՝
8 լուծանել զխցաց կօշկաց նորա։ Ես մկրտեցի զձեզ
9 ջրով, և նա մկրտեսցէ զձեզ Հոգւովն Սրբով։ Եւ
եղեւ յաւուրսն յայնոսիկ եկն Յիսուս ի Նազարեթէ
Գալիլեացւոց, և մկրտեցաւ ի Յովհաննէ ի Յոր-
10 դանան։ Եւ նոյնժամայն ընդ վերանալ ի ջրոցն

եառեալ զերկինս, և զՀոգին *Աստուծոյ իբրեւ
11 աղաւնի՝ գալ իջանէր ի վերայ նորա։ Ձայն եղեւ
յերկնից և ասէ, Դուն ես Որդի իմ սիրելի, ընդ
12 քեզ հաճեցայ։ Եւ նոյնժամայն Հոգին հանէ զնա
13 յանապատ։ Եւ էր նա անդ զաւուրս քառասուն
փորձեալ ի Սատանայէ, և էր ընդ գազանս. և
հրեշտակք պաշտէին զնա։
14 Եւ յետ մատնելոյն Յովհաննու եկն Յիսուս ի
Գալիլեա. քարոզէր զաւետարանն Աստուծոյ և ա-
15 սէր թէ կատարեալ է ժամանակ, և հասեալ է ար-
քայութիւնն Աստուծոյ, ապաշխարեցէք և հաւա-
16 տացէք յաւետարանն։ Իբրեւ անցանէր առ ծովե-
զերբն Գալիլեացւոց, եառես զՍիմոն և զԱնդրէաս
զեղբայր Սիմոնի, զի արկեալ էր նոցա ուռկանս
17 ի ծով, քանզի ձկնորք էին. Եւ ասէ ցնոսա Յի-
սուս, Եկայք զկնի իմ և արարից զձեզ լինել որ-
18 սոգս մարդկան։ Եւ վաղվաղակի թողեալ զուռ-
19 կանն՝ գնացին զկնի նորա։ Եւ մատուցեալ անտի
սակաւիկ մի յառաջ, եառես զՅակովբոս Զեբեդեայ
և զՅովհաննէս զեղբայր նորա, և զնոսա ի նաւին
20 մինչ կազմէին ուռկանս։ Եւ կոչեաց զնոսա և
վաղվաղակի թողեալ զՀայրն իւրեանց զԶեբեդէոս
ի նաւին վարձկանօքն հանդերձ՝ գնացին զկնի
նորա։
21 Եւ մտանեն ի Կափառնայում, և իսկ և իսկ ի
շաբաթուն մտեալ ի ժողովուրդն՝ ուսուցանէր
22 զնոսա։ Եւ զարմանային ընդ վարդապետութիւն
նորա, զի ուսուցանէր զնոսա իբրեւ իշխանութեամբ՝

* ի Ցովն. ա, ։

23 և ոչ որպէս գպիրքն ։ Եւ էր ի ժողովրդեանն նոցա
այր մի , յորում այս պիղծ դեւր ի նմա . որ աղա-
24 ղակեաց և ասէ , Թո՛ղ տուր , զի՞ կայ մեր և քո ,
Յիսուս Նազովրեցի , եկիր կորուսանել զմեզ . գի-
25 տեմք զքեզ , ով ես , Սո՛ւրբդ Աստուծոյ ։ Սաս-
տեաց ի նա Յիսուս և ասէ , կարկեաց և էլ ի դը-
26 մանէ ։ Եւ զարկեալ զնա այն պիղծ , և աղաղակեաց
27 ի ձայն մեծ և ել ի նմանէ ։ Եւ զարմացան ամե-
նեքեան , մինչեւ հծծել ընդ միմեանս և ասել , զի՞նչ
է այս նոր վարդապետութիւն , զի իշխանութեամբ
28 և այսոց պղծոց ասստ , և հնազանդին սմա ։ Եւ
եղ լուր նորա ընդ ամենայն կողմն Գալիլեացւոց ։
29 Եւ վաղվաղակի ելեալ ի ժողովրդենէն , եկն ի տունն
Սիմոնի և Անդրեայ՝ Յակոբայ և Յովհաննու հան-
30 դերձ ։ Եւ զքնանչ Սիմոնի դնէր ջերմացեալ , և
31 վաղվաղակի ասեն ցնա վասն նորա ։ Եւ մատուցեալ
յարոյց զնա՝ կալեալ զձեռանէ նորա . և եթող զնա
32 տենդն , և պաշտէր զնոսա ։ Եւ իբրեւ երեկոյ եղեւ
ի մտանել արեգականն , բերէին առ նա զամենայն
33 հիւանդս և զդիւահարս . Եւ էր ամենայն քաղաքն
34 ժողովեալ առ դրունսն . Եւ բժշկեաց բազումս հի-
ւանդս ի պէսպէս ախտից , և դեւս բազումս եհան .
և ոչ տայր խօսել դիւացն , զի գիտէին զնա *Թէ
Քրիստոս է " ։
35 Եւ ընդ այգն ընդ առաւօտն յարուցեալ էլ և
գնաց յանապատ տեղի , և անդ կայր յաղօթս ։
36 Եւ գնաց զհետ նորա Սիմոն և որ ընդ նմանն էին ։
37 Եւ իբրեւ գտին զնա՝ ասեն ցնա Թէ Ամենեքեան

* ի Յովհ. վ+ ։

38 խնդրեն զքեզ ։ Եւ ասէ ցնոսա , Եկայք երթիցուք
և յայլ մօտաւոր գիւղաքաղաքն , զի և անդ քա-
39 րոզեցից , զի այս իսկ եկեալ եմ ։ Եւ քարոզէր ի
ժողովուրդն նոցա ընդ ամենայն Գալիլեացիս , և
40 դեւս հանէր ։ Գայ առ նա բորոտ մի , աղաչէր ,
ի ծունր իջանէր և ասէր , *Տէր , եթէ կամիս , կա-
41 րող ես զիս սրբել ։ Իսկ Յիսուս գթացեալ ձգեաց
զձեռն , մերձեցաւ ի նա և ասէ ցնա , Կամիմ , սըբ-
42 ըեաց ։ Եւ իբրեւ ասացն ցնա , վաղվաղակի գնաց
43 ի նմանէ բորոտութիւնն , և սրբեցաւ ։ Եւ սաս-
տեալ նմա՝ եհան զնա արտաքս վաղվաղակի , և
44 ասէ , Զգոյշ լեր , մի ումեք ինչ ասիցես . այլ երթ ,
ցոյց զքեզ քահանային , և մատո վասն սրբութեան
քո պատարագ , զոր հրամայեաց Մովսէս ի վկայու-
45 թիւն նոցա ։ Եւ նա ելեալ սկսաւ քարոզել յոյժ
և հռչակ հարկանել զբանն , մինչ ոչ եւս կարող
լինել նմա յայտնապէս ի քաղաք մտանել , այլ
արտաքոյ յանապատ տեղիս էր . և գային առ նա
յամենայն կողմանց ։

ԳԼ· Բ

1 Եւ մտեալ դարձեալ ի Կափառնայում յետ ա-
2 ւուրց , լուր եղեւ եթէ ի տան է . և ժողովեցան
բազումք՝ մինչեւ տեղի եւս ոչ լինել և ոչ առ դը-
3 բանն . և խօսէր նոցա զբանն ։ Եւ գային առ նա ,
4 բերէին անդամալոյծ մի բարձեալ ի չորից ։ Եւ
իբրեւ ոչ կարէին մերձենալ առ նա յամբոխն ան-

* ի Յովհ. վ+ ։

տի , քակեցին զյարկն՝ ուր էր Յիսուս , և բացեալ
զառաստաղն՝ իջուցին զմահիճան յորում կայր ան-
5 դամալոյծն : Եւ տեսեալ Յիսուսի զհաւատս նոցա,
ասէ ցանդամալոյծն, Որդեակ, Թողեալ լինին քեզ
6 մեղք քո : Եւ էին ոմանք ի դպրաց անտի՝ որ անդ
7 նստէին . և խորհէին ի սիրտս իւրեանց , Զի՞նչ է
այս որ խօսի սա զՀայհոյութիւնս . ո՞վ կարէ Թո-
8 ղուլ զմեղս , եթէ ոչ մի Աստուած : Եւ գիտաց
Յիսուս յոգի իւր Թէ այնպէս խորհին ի սիրտս իւ-
րեանց , և ասէ , Զի՞ խորհիք զայդ ի սիրտս ձեր :
9 Զի՞նչ դիւրին է , ասել ցանդամալոյծն , Թողեա՞լ
լինին քեզ մեղք քո , եթէ ասել , Արի , առ զմա-
10 հիճս քո և *երթ ի տունս քո :՚՚ Աւյր զի գիտասջիք եթէ իշխանութիւն ունի Որդի մարդոյ ի վե-
րայ երկրի Թողուլ զմեղս , ասէ ցանդամալոյծն ,
11 Քեզ ասեմ՝ Արի , առ զմահիճս քո և երթ ի տուն
12 քո : Եւ յարեաւ վաղվաղակի առեալ զմահիճան ,
եւ առաջի ամենեցուն , մինչեւ զարմանալ ամե-
նեցուն , և փառաւորս առնել զԱստուած և ասել
Թէ Աւյսպիսի ինչ երբեք ոչ տեսաք :
13 Եւ եւ դարձեալ ի ծովեզրն , և ամենայն ժողո-
14 վուրդն գայր առ նա . և ուսուցանէր զնոսա : Եւ
մինչդեռ անցանէր , տեսս զՊ Եւի Աւլփեայ զի նըս-
տեր ի մաքսաւորութեան , և ասէ ցնա , Եկ զկնի
15 իմ՝ . և յարուցեալ գնաց զկնի նորա : Եւ եղեւ
ի բազմիլն նորա ի տան նորա , և բազում† մաք-
սաւորք բազմեալ էին ընդ Յիսուսի և ընդ աշա-

* Ի Յոյնս՝ շըջեաց :

† Ի Յոյնս՝ մաքսաւորք և մեղաւորք

կերտան նորա . քանզի էին բազումք որ երթային
16 զկնա նորա : Իսկ դպիրքն և փարիսեցիք իբրեւ տե-
սին Թէ ուտէ ընդ մաքսաւորս և ընդ մեղաւորս ,
ասեն ցաշակերտսն նորա , Զի՞ է զի ընդ մեղաւորս
17 և ընդ մաքսաւորս *ուտէք և ըմպէք :՚՚ Իբրեւ լուաւ
Յիսուս՝ ասէ ցնոսա , Ոչ ինչ է պիտոյ բժիշկ ողջոց ,
այլ հիւանդաց . և ոչ եկի կոչել զարդարս , այլ
18 զմեղաւորս : Եւ էին աշակերտքն Յովհաննու և †փա-
րիսեցիքն ի պահս . գան և ասեն ցնա , Ընդէ՞ր ա-
շակերտքն Յովհաննու և †փարիսեցիքն պահեն , և
19 քո աշակերտքդ ոչ պահեն : Եւ ասէ ցնոսա Յիսուս,
Ա՞ի Թէ մա՞րթ ինչ իցէ որդւոց առագաստի մինչ
ընդ նոսա իցէ փեսայն՝ պահել . ցորքան ընդ իւ-
20 րեանս ունիցին զփեսայն՝ ոչ է մարթ պահել : Աւյլ
եկեսցեն աւուրք՝ յորժամ վերասցի ի նոցանէ փե-
21 սայն , և ապա պահեսցեն յաւուրն յայնմիկ : Ոչ
ոք կտաւերա նոր անթափ արկանէ ի վերայ հնա-
ցեալ ձորձոյ . ապա Թէ ոչ՝ առնու լրութեամբն
իւրով նորն ի հնոյ անտի , և չար եւս պատառումն
22 լինի : Եւ ոչ ոք արկանէ գինի նոր ի տիկս հինս .
ապա Թէ ոչ պայթուցանէ գինին զտիկան , գինին
հեղու և տիկքն կորնչին . այլ գինի նոր ի տիկս
նորս արկանելի է :
23 Եւ եղեւ նմա ի շաբաթուս անցանել ընդ արտս
24 բայս . և աշակերտքն ի գնալն իւրեանց՝ սկսան
հասկ կորզել ‡և ուտել :՚՚ Եւ փարիսեցիքն ասեն
ցնա , Տես զի՞նչ գործեն ‡աշակերտքն քո՝՚՚ ի շա-

* Ի Յոյնս՝ ուտէ և ըմպէ : † Ի Յոյնս՝ փարիսեցւոցն
‡ Ի Յոյնս եւթ :

25 բաթիու, զոր չէ արժան ։ Եւ ասէ ցնոսա Յիսուս,
Ո՞չ երբեք լեգէ ընթերցեալ ձեր՝ զոր արարն Դա-
ւիթ, յորժամ պիտոյն եղեւ, և քաղցեաւ նա և
26 որ ընդ նմայն էին ։ Զի՞որ եմուտ ՚ի տունն Ա-
տուածոյ առ Աբիաթարաւ քահանայապետիւ, և
զՀացսն զառաջաւորութեան եկեր, և ետ այնոցիկ
որ ընդ նմայն էին, զոր ոչ էր օրէն ուտել, բայց
27 միայն քահանայիցն ։ Եւ ասէ ցնոսա, Շաբաթ վասն
մարդոյ եղեւ, և ոչ մարդ վասն շաբաթու ։
28 Ապա ուրեմն տէր է Որդի մարդոյ և շաբաթու ։

ԳԼ· Գ

1 Եւ եմուտ միւսանգամ ՚ի ժողովուրդն, և էր
2 անդ այր մի՝ որոյ ձեռն գօսացեալ էր ։ Եւ սպա-
սէին նմա եթէ բժշկիցէ զնա ՚ի շաբաթուն, զի
3 չարախօսեսցեն զնմանէ ։ Եւ ասէ ցայրն, որոյ ձեռնն
4 գօսացեալ էր. Արի, անց ՚ի մէջ ։ Եւ ասէ ցնոսա,
Զի՞նչ արժան է ՚ի շաբաթու, բարի՞ զործել
եթէ չար առնել, ոգի մի ապրեցուցանել եթէ կո-
5 րուսանել. և նոքա լռեցին ։ Եւ հայեցեալ Յիսուս
սի զնոքօք լի ցասմամբ, տրտմեալ վասն կուրու-
թեան սրտից նոցա՝ ասէ ցայրն, Զգեա զձեռն քո.
և նա ձգեաց, և ողջացաւ ձեռն նորա ։
6 Եւ ելեալ արտաքս վաղվաղակի վարիսեցիքն հե-
րովդիանոսեանքն հանդերձ, խորհուրդ առնէին վասն
7 նորա թէ զի՞նդ կորուսցեն զնա ։ Իսկ Յիսուս ա-
շակերտօքն իւրովք գնաց ՚ի ծովեզրն. և բազում
ժողովուրդ ՚ի գալիլեացւոց երթային զհետ նորա,

8 և ՚ի Հրէաստանէ, Եւ Յերուսաղէմէ և յայնկոյս
Յորդանանայ և որք ՚ի Տիւրոսէ և ՚ի Սիդովնէ, բա-
զում ժողովուրդ իբրեւ լսէին՝ որչափ ինչ առնէր,
9 գային առ նա ։ Եւ ասէ ցաշակերտան իւր զի նաւակ
մի պատրաստական կացցէ նմա վասն ամբոխին, զի
10 մի նեղեսցեն զնա ։ Զանգի զբազումս բժշկեաց.
մինչ գալ խառնել զնովաւ՝ զի մերձենսցին առ նա
11 որք ունէին ախտս ինչ ։ Եւ այսք պիղծք յորժամ
տեսանէին զնա, անկանէին առաջի նորա, աղա-
12 ղակէին և ասէին թէ Դու ես Որդին Աստուածոյ.
և նա յոյժ սաստեր նոցա, զի մի յայտնի առնի-
ցեն զնա ։
13 Ելանէ ՚ի լեառն և կոչէ առ ինքն զորս ինքն կա-
14 մեցաւ, և չոգան առ նա ։ Եւ արար երկոտասանսն՝
զի էցին զնովաւ, և զի առաքեսցէ զնոսա քարո-
15 զել, Եւ ունել իշխանութիւն բժշկելոյ զդեւս և
16 հանելոյ զդեւս ։ Եւ եդ անուն Սիմանի Պետրոս,
17 Եւ Յակովբոս Զեբեդեայ և Յովհաննու եղբօրն Յա-
կովբայ՝ եդ նոցա անուանս Բաներգէս, որ է Որ-
18 դիք որոտման. Եւ զԱնդրէաս, և զՓիլիպպոս, և
զԲարթողիմէոս, և զՄատթէոս զմաքսաւորն, և
զԹովմաս, և զՅակովբոս Ալփեայ, և զԹադէոս, և
19 զՍիմոն Կանանացի, Եւ զՅուդա Սկարիովտացի,
որ և մատնեացն զնա ։
20 Գան ՚ի տուն, և դայ միւսանգամ ընդ նոսա ժո-
ղովուրդն. մինչ զի և հաց եւս ոչ ժամանել ու-
21 տել նոցա ։ Եւ իբրեւ լսեան որ իւրքն էին՝ ելին
ունել զնա. զի համարէին թէ մոլեգնեալ է ։

---

* Ի Յոյն՝ Հերուսաղէմէ և Յեդոմայ

22 Եւ դպիրքն որ Երուսաղէմէ իջեալ էին, ասէին
թէ Բէեղզեբուղ ունի, և իշխանաւ դիւացն
23 հանէ դա զդեւս։ Եւ կոչեցեալ զնոսա առ ինքն,
առակօք խօսէր ընդ նոսա, Զիա՞րդ կարէ Սատա-
24 նայ զՍատանայ հանել։ Եւ արդ եթէ թագաւո-
րութիւն յանձն իւր բաժանեսցի, ոչ կարէ կալ
25 թագաւորութիւնն այն։ Եւ եթէ տուն յանձն իւր
26 բաժանեսցի, ոչ կարէ կալ տունն։ Եւ եթէ Սա-
տանայ ի վերայ անձին իւրոյ յարեաւ և բաժա-
27 նեալ է, ոչ կարէ կալ, այլ վախճանեալ է։ Ա՛յլ
ոչ ոք կարէ զկարասի հզօրի՝ մտեալ ի տուն նորա՝
առաւր հարկանել, եթէ ոչ նախ զհզօրն կապեսցէ,
28 և ապա զտունն նորա առաւր հարկանիցէ։ Ամէն ա-
մէմ ձեզ զի Ամենայն թողութ որդւոց մարդկան
մեղք և հայհոյութիւնք՝ որչափ և հայհոյեցեն.
29 Բայց որ հայհոյեսցէ զՀոգին Սուրբ, ոչ ունիցի թո-
ղութիւն յաւիտեան, այլ պարտապան լինի յա-
30 ւիտենից մեղաց. Զի ասէին թէ Ա՛յս պիղծ ոգի
ունի նմա։

31 Գան եղբարքն և մայր նորա, և արտաքոյ կա-
32 ցեալ՝ յղեցին և կոչէին զնա։ Եւ անդ ժողովուրդն
շուրջ զնովաւ նստէր. և իբրեւ ասացին ցնա, Ա-
հաւասիկ մայր քո և եղբարք քո կան արտաքոյ
33 և խնդրեն զքեզ, պատասխանի ետ նոցա և ասէ,
34 Ո՞վ է իմ մայր կամ եղբարք։ Հայեցեալ շուրջ զնե-
րեաւ յաշակերտան զնստեալսն, և ասէ, Ահաւա-
35 սիկ մայր իմ և եղբարք իմ. Զի որ առնիցէ զկամս
Աստուծոյ, նա է իմ եղբայր և քոյր և մայր։

ԳԼ. Դ

1 Դարձեալ սկսաւ ուսուցանել առ ծովեզերբն, և
խռնեցան զնովաւ ժողովուրդք բազումք, մինչեւ
ի նաւ մտանել նմա և նստել ի ծովուն, և ա-
մենայն ժողովուրդն զծովեզերբն ղեցմանքն ունէին։
2 Եւ ուսուցանէր զնոսա առակօք բազում. ինչ, և
3 ասէր նոցա ի վարդապետութեան իւրում։ Լուա-
4 րուք, ահաւասիկ ել սերմանող սերմանել։ Եւ եղեւ
ի սերմանելն, ոմն անկաւ առ ճանապարհաւ, և եկն
5 թռչունն և եկեր զնա։ Եւ այլն անկաւ յապառա-
ժի, ուր ոչ գոյր հող բազում. և վաղվաղակի բուս
6 սաւ, քանզի ոչ գոյր հիւմն երկրին. Եւ յորժամ
ծագեաց արեւ՝ ջեռաւ, և զի ոչ գոյն արմատք՝
7 ցամաքեցաւ։ Եւ այլն անկաւ ի մէջ փշոց. ելին
8 փուշքն և հեղձուցին զնա, և պտուղ ոչ ետ։ Եւ
այլն անկաւ յերկիր բարւոք, և ելեալ աճեցեալ
տայր պտուղ, և բերէր ընդ միոյ երեսուն և ընդ
9 միոյ վաթսուն և ընդ միոյ հարիւր։ Եւ ասէր, Որ
ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ։

10 Եւ իբրեւ եղեւ առանձինն, հարցին զնա որ
զնովաւն էին աշակերտացն հանդերձ զառակն։
11 Եւ ասէ ցնոսա, Ձեզ տուեալ է գիտել զխորհուր-
դս արքայութեան Աստուծոյ, բայց նոցա որ արտա-
12 քինքն են՝ ամենայն ինչ առակօք լինի՝ Զի տեսա-
նելով տեսցեն և մի՛ տեսցեն, և լսելով լուիցեն՝ և
մի՛ իմասցեն, զի մի՛ երբեք դարձցին, և թողցի նոցա։
13 Եւ ասէ ցնոսա, Ոչ գիտէք զառակս զայս, և զիա՞րդ
14 զամենայն առակսն գիտիցէք։ Որ սերմանէն՝ զբանն

15 սերմանել։ Եւ նոքա են որ առ ճանապարհաւն՝ ուր
բանն սերմանի, և յորժամ լսեն զնա, գայ Սա-
տանայ և հանէ զբանն սերմանեալ ի սիրտս նոցա։
16 Եւ նոքա են որ յապառաժին սերմանեցան, որք
յորժամ լսիցեն զբանն, վաղվաղակի խնդութեամբ
17 ընդունին. Եւ ոչ ունին արմատս յանձինս, այլ
առ ժամանակ մի են. ապա ի հասանել նեղու-
թեան կամ հալածման վասն բանին, վաղվաղակի
18 գայթակղին։ Իսկ որ ի մէջ փշոյն սերմանեցան՝
19 նոքա են, որ լսեն զբանն լսեն, Եւ հոգք աշխար-
հիս և պատրանք *մեծութեան մտանեն և հեղձու-
20 ցանեն զբանն՝ և անպտուղ լինի։ Եւ նոքա են որ
յերկիրն բարւոք սերմանեցան, որք լսեն զբանն և
ընդունին և տան պտուղ՝ ընդ միոյ երեսուն և ընդ
միոյ վաթսուն և ընդ միոյ հարիւր։
21 Եւ ասէ ցնոսա, Միթէ գա՞յ ճրագ դի ընդ գը-
բուանաւ դնիցի կամ ընդ մահճաւ. ո՞չ ապաքէն
22 ի վերայ աշտանակի դնիցի։ Զի չէ ինչ ի ծածուկ
որ թէ ոչ յայտնեսցի, և ոչ եղեւ ինչ գաղտնի՝
23 եթէ ոչ ի յայտ գայցէ։ Եթէ ոք ունիցի ականջս
24 լսելոյ, լուիցէ։ Եւ ասէ ցնոսա, Տեսէք զինչ լսէքդ,
և յաւելցի ձեզ որով լսէքդ. որով չափով չափէք,
25 նովքն չափեսցի ձեզ։ Որ ոք ունիցի՝ տացի նմա.
և որ ոչն ունիցի, և զոր ունին՝ բարձցի ի նմանէ։
26 Եւ ասէր, Այսպէս է արքայութիւն Աստուծոյ,
27 որպէս թէ այր մի արկանիցէ սերմանիս յերկիր. Եւ
ննջիցէ և յառնիցէ զցայգ և զցերեկ, և սերմանի-
28 քըն բուսանիցին և աճիցեն. և նա ոչ գիտէ թէ

* Ի յայնմ՝ մեծութեան և ցանկութիւն այլոց

երկիրն ինքնին բերէ զպտուղ. նախ զխոտն և ապա
29 զհասկն, ապա զցորեանն առատ ի հասկին։ Այլ
յորժամ տայցէ զպտուղն, վաղվաղակի առաքի
30 մանգաղ, զի հասեալ են հունձք։ Եւ ասէր, Ո՞ւմ
նմանեցուսցուք զարքայութիւնն Աստուծոյ, կամ
31 որո՞վ առակաւ առակեսցուք զնա։ Որպէս հատն
մանանխոյ՝ որ յորժամ սերմանիցի ի երկիր, փոք-
րագոյն է քան զամենայն սերմանիս որ են յերկրի.
32 Եւ յորժամ սերմանիցի, բուսանի և լինի մեծ քան
զամենայն բանջար, և արձակէ ոստս մեծամեծս,
մինչեւ բնաւական լինել ընդ հովանեաւ նորա թռչ-
33 չնոց երկնից բնակել։ Եւ այնպիսի առակօք խօսէր
34 ընդ նոսա զբանն, որպէս կարող լինէին լսել. Եւ
առանց առակի ոչինչ խօսէր ընդ նոսա, բայց ա-
ռանձինն աշակերտացն իւրոց մեկնէր զամենայն։
35 Եւ ասէ ցնոսա յաւուրն յայնմիկ իրրեւ ընդ
36 երեկս լինէր, եկայք անցցուք յայն կողմն։ Թո-
ղուն զժողովուրդն, և առնուն զնա նաւուն հան-
37 դերձ՝ և զայլ եւս նաւսն որ էին ընդ նմա։ Եւ
լինէր մրրիկ մեծ հողմոյ, և զալիսն ի նաւն զեղոյր,
38 մինչ դրեթէ լի իսկ լինել։ Եւ ինքն ննջէր ի խելս
նաւին ի վերայ բարձի. զարթուցանէին զնա և
ասէին, վարդապետ, ոչինչ է քեզ փոյթ, զի կո-
39 րընչիմք աւասիկ։ Եւ զարթուցեալ սաստեաց հող-
մոյն և ծովուն, ասէ, Դադարեա, կարկեաց. և
դադարեաց հողմն և եղեւ խաղաղութիւն մեծ։
40 Եւ ասէ ցնոսա, Ընդէ՞ր այդպէս վատասիրտք էք,
չէ՞ս ունիք հաւատս. և երկեան երկիւղ մեծ
և ասէին ցմիմեանս, Ո՛ ոք արդեօք իցէ սա, զի և
հողմ և ծով հնազանդին նմա։

ԳԼ. Ե

1 Եւ ելին յայնկոյս ծովեզն յաշխարհն Գերգեսա-
2 ցւոց։ Եւ ընդ ելանելն նորա ի նաւէ անտի, պա-
տահեաց նմա այր մի ի գերեզմանացն՝ զոր ունէր
3 այս պնդծ. Որոյ և բնակութիւնն իւր իսկ ի գե-
րեզմանս էր. և ոչ չղթայիւք ոք եւս կարէր կա-
4 պել զնա, վասն բազում անգամ ոտնակապօք և
չղթայիւք կապելոյ և խզելոյ ի նմանէ զչղթայսն,
և զոտնակապսն խորտակելոյ. և ոչ ոք կարէր պար-
5 տել զնա. Քանզի հանապազ զցայգ և զցերեկ ի
գերեզմանս և ի լերինս աղաղակէր, և կոծէր զան-
6 ձն իւր քարամբք։ Իբրեւ ետես զՅիսուս ի հե-
7 ռաստանէ, ընթացաւ և երկիրեպագ նմա։ Աղա-
ղակեաց ի ձայն մեծ և ասէ, Ձի՞ կայ իմ և քո,
Յիսուս՝ Որդի Աստուծոյ բարձրելոյ, երդմնեցու-
8 ցանեմ զքեզ յԱստուած, մի՛ տանջէր զիս։ Քան-
զի ասէր ցնա, Ել, այսպ պիղծ, ի մարդոյ այսի-
9 Եւ հարցանէր ցնա Թէ Ձի՞նչ անուն է քո. և ա-
սէ ցնա, Լեգեովն անուն է իմ, քանզի բազումք
10 եմք։ Եւ աղաչէին զնա յոյժ, զի մի առաքեսցէ
11 զնոսա արտաքս քան զաշխարհն։ Եւ անդ էր առ
12 լերամբն երամակ մի խոզից արօտական մեծ։ Աղա-
չեցին զնա ամենայն դեւքն և ասեն, Առաքեա զմեզ
13 մեզ ի խոզսն, զի մտցուք ի նոսա։ Եւ հրամայեաց
նոցա. և իբրեւ ելին այսքն պիղծք՝ մտին ի խոզսն,
և գիմեաց երամակն ի գարէ անտի ի ծովն. էին
իբրեւ երկու հազարք, և խեղդեցան ի ծովուն։
14 Եւ խոզարածքն փախեան և պատմեցին ի քաղա-

քի և յագարակս, և ելին տեսանել զինչ էր որ
15 գործեցաւն։ Գան առ Յիսուս, և տեսանեն զդի-
ւահարն զի նստեր զդեցեալ և զգաստացեալ, որ
16 ունէր զլեգէովնն, և զահի հարան։ Եւ պատմեցին
նոցա որոց տեսեալն էր, Թէ զի՛նչ եղեւ այսահա-
17 րին և զի՛նչ վասն խոզիցն։ Եւ սկսան աղաչել զնա
18 գնալ ի սահմանաց նոցա։ Եւ իբրեւ եմուտ նա
ի նաւն, աղաչէր զնա դիւահարն զի ընդ նմա իցէ,
19 Եւ Յիսուս ոչ եա նմա, Թող, այլ ասէ ցնա, Երթ
ի տուն քո առ ընտանիս քո, և պատմեա նոցա որ
ինչ միանգամ Տէր արար քեզ և ողորմեցաւ քեզ։
20 Եւ չոգաւ և սկսաւ քարոզել ի Դեկապօլին՝ զոր
ինչ արար նմա Յիսուս, և ամենեքեան զարմանային։
21 Եւ իբրեւ անց Յիսուս միւսանգամ յայն կողմն՝
ժողովեցաւ առ նա ժողովուրդ բազում, և էր առ
22 ծովեզերբն։ Եւ ահա մի ի ժողովրդապետացն դպրի,
որում անուն էր Յայրոս, և իբրեւ ետես զնա ան-
23 կաւ առ ոտս նորա. Աղաչէր զնա յոյժ և ասէր
Թէ Դուստր նորա մերձ է ի մահ, զի եկեալ դնիս
24 ցէ նմա ձեռն, որպէս զի ապրեսցի և կեցցէ։ Եւ
գնաց ընդ նմա. երթայր և ժողովուրդ բազում
25 զկետ նորա և նեղէին զնա։
26 Եւ կին մի էր ի տեառտեառութեան արեան զերկո-
տասան ամ. Եւ յոյժ վշտացեալ ի բազում բժշկաց,
և ծախեալ զինչս իւր զամենայն և չէր ինչ օգտեալ,
27 այլ եւս առաւել զայրացեալ։ Իբրեւ լուաւ զՅի-
սուսէ՝ եկն ի մէջ ամբոխին յետոյ և *բռնեն եկաթ
28 զհանդերձ՝՝ նորա. Քանզի խորհէր ի մտի Թէ Միայն

* ի Յ՚՚՚

29 մերձեցայց ՚ի հանդերձս նորա՝ փրկեցայց : եւ վաղ-
վաղակի ցամաքեցաւ աղբիւր արեան նորա . և գիտաց
30 ՚ի մարմին իւր թէ բժշկեցաւ ՚ի տանջանացն : եւ
անդէն վաղվաղակի գիտաց Յիսուս յանձն իւր զզո-
րութիւնն որ ել ՚ի նմանէ , դարձաւ յամբոխն և
31 ասէ , Ո՞վ մերձեցաւ ՚ի հանդերձս իմ : եւ ասեն
ցնա աշակերտքն, Տեսանես զի ամբոխդ նեղէ զքեզ,
32 և ասես թէ Ո՞վ մերձեցաւ ՚ի հանդերձս իմ : եւ
33 շուրջ հայեր տեսանել թէ ո՞վ զոյն արար : եւ
կինն զարհուրեալ և դողացեալ *վասն որոյ գաղտն
արար՝՝ . քանզի գիտեր զի՞նչ եղեւ նմա , եկն ան-
կաւ առաջի նորա , և ասաց զամենայն իրան ստուգ-
34 գութեամբ : եւ Յիսուս ասէ ցնա , Դուստր , հա-
ւատոք քո կեցուցին զքեզ, երթ ՚ի խաղաղութիւն
և եղիջիր ողջ ՚ի տանջանաց քոց :
35 Մինչդեռ նա զոյն խօսէր , գան ոմանք ՚ի տանէ
ժողովրդապետին և ասեն թէ Դուստրն քո մեռաւ,
36 զի՞ եւս աշխատ առնես զվարդապետդ : Իսկ Յիսուս
իբրեւ լուաւ զբանն ասացեալ , ասէ ցժողովրդա-
37 պետն , Մի երկնչիր , բայց միայն հաւատա : եւ
ոչ զոք եթող ընդ իւր երթալ , բայց միայն զՊետ-
րոս և զՅակովբոս և զՅովհաննէս զեղբայրն Յակովբոյ՝
38 գայ ՚ի տունն ժողովրդապետին , և տեսանէ ամբոխ
39 յայժ և լալականս և աղաղակ յայժ : եւ մտեալ ՚ի
ներքս ասէ ցնոսա , Ձի՞ խռովեալ եք և լայք ,
40 մանուկն ոչ է մեռեալ , այլ ննջէ : եւ ծաղր առ-
նէին զնա. և նորա հանեալ արտաքս զամենեսեան,
առնու ընդ իւր զհայր մանկանն և զմայր և զնոսա

* ի Յոյնս չէ ։

որ ընդ նմայն էին , և մտանէ ուր դներ մանուկն ,
41 եւ կալեալ զձեռանէ մանկանն՝ ասէ ցնա , Տալի-
թա , կումի . որ թարգմանի , Աղջիկ դու , քեզ
42 ասեմ՝ արի : Եւ վաղվաղակի յարեաւ աղջիկն և
գնայր , քանզի էր ամաց իբրեւ երկոտասանից . և
43 զարմացան մեծաւ զարմանալեօք : եւ պատուէր
տայր նոցա յոյժ , զի մի՛ ոք գիտասցէ զայն . և ասաց
տալ նմա ուտել :

ԳԼ. Զ

1 Եւ ել անտի եկն ՚ի գաւառս իւր . և երթային
2 զհետ նորա աշակերտքն իւր : եւ եղեւ ՚ի շաբա-
թուն՝ սկսաւ ուսուցանել ՚ի ժողովրդեանն . և բա-
զումք իբրեւ լսէին՝ զարմանային *ընդ վարդապե-
տութիւն նորա՝՝ և ասէին , Ուստի՞ է սմա այս ,
կամ զի՞նչ է իմաստութիւնս որ տուեալ է սմա ,
զի զօրութիւնք այսպիսիք ՚ի ձեռաց սորա լինին :
3 Ո՞չ սա է †մանուկ հիւսանն՝՝ և որդին Մարեմայ ,
եղբայր Յակովբայ և Յովսեայ և Յուդայի և Սիմոնի,
և չի՞են քորք նորա աստ առ մեզ . և գայթակ-
4 ղէին ՚ի նա : եւ ասէ ցնոսա , Ոչ է մարգարէ ա-
նարգ , բայց եթէ ՚ի գաւառի իւրում և յազգա-
5 ւոհմի և ՚ի տան իւրում : եւ ոչ կարէր անդ և
ոչ մի ինչ զօրութիւն առնել , բայց սակաւ հի-
6 ւանդաց ձեռն եդեալ բժշկէր զնոսա : եւ զարմա-
նայր վասն անհաւատութեան նոցա :
7 Եւ շրջէր շուրջ զգաւառօքն և ուսուցանէր : եւ
կոչեաց առ ինքն զերկոտասանսն , և սկսաւ առա-

* ի Յոյնս՝ չէ ։ † ի Յոյնս՝ հիւսն

քել զնոսա երկուս երկուս , և տայր նոցա իշխա-
8 նութիւն ի վերայ այսոց պղծոց ։ Եւ պատուիրեաց
նոցա զի մի՛ ինչ բարձցեն ի ճանապարհ , բայց
միայն գաւազան . մի՛ պարկ , մի՛ հաց , մի՛ պղինձ ի
9 գօտիս . Այլ ոտանել հողաթափս , և Մի՛ զգե-
10 նուցուք , ասէ , երկուս պարեգօտս ։ Եւ ասէր ցնո-
սա , Յոր տուն մտանիցէք , անդէն օթեւանս կալ-
11 ջիք մինչեւ ելանիցէք անտի ։ Եւ որ ոչ ընկալցին
զձեզ և ոչ լսիցեն ձեզ , յորժամ ելանիցէք ան-
տի՝ թօթափեսջիք զփոշի ոտից ձերոց ի վկայութիւն
12 նոցա ։ Եւ ելեալ քարոզէին զի ապաշխարեսցեն ։
13 Եւ դեւս բազումս հանէին , և օծանէին իւղով զբա-
զումս հիւանդս և բժշկէին զնոսա ։
14 Եւ լուաւ արքայ Հերովդէս , քանզի յայտնի ե-
ղեւ անուն նորա , և ասէր թէ Յովհաննէս մկրտիչ
յարեաւ ի մեռելոց , և վասն այնորիկ զօրութիւնք
15 լինին նովաւ ։ Այլք ասէին թէ Եղիա է , իսկ այլ-
քընդ՝ թէ Մարգարէ է , կամ թէ իբրեւ զմի ի
16 մարգարէից ։ Իբրեւ լուաւ Հերովդէս , ասէ , Զորոյ
ես զգլուխն հատի զՅովհաննու , սա է նա , յա-
17 րեաւ ի մեռելոց ։ Զի ինքն Հերովդէս առաքեաց
կալաւ զՅովհաննէս , և կապեաց զնա և եդ ի բան-
տի վասն Հերովդիայ կնոջ փիլիպպոսի եղբօր նորա,
18 զի նա կին արար զնա ։ Քանզի ասէր Յովհաննէս
ցՀերովդէս թէ Ոչ է օրէն քեզ ունել զկին եղբօր
19 քոյ ։ Եւ Հերովդիա սնացեալ էր ընդ նմա , և կա-
20 մէր սպանանել զնա և ոչ կարէր ։ Զի Հերովդէս
երկնչէր ի Յովհաննէ , քանզի գիտէր զնա այր ար-
դար և սուրբ , և սպասէր նմա . և լուեալ ի նմանէ
բազում ինչ առնէր , և քաղցրութեամբ լսէր նմա։

21 Իբրեւ օր մի լինէր պարապոյ , յորժամ ընթրիս
տայր Հերովդէս յաւուր ծննդոց իւրոց՝ նախարարաց
իւրոց և հազարապետաց և մեծամեծաց Գալիլեա-
22 ցւոց . Եւ ի մտանել դստերն Հերովդիայ և ի կա-
քաւել , հաճոյ եղեւ Հերովդի և բազմականացն .
ասէ թագաւորն ցաղջիկն , խնդրեա զինչ զոր ինչ
23 կամիս , և տաց քեզ ։ Եւ երդուաւ նմա *բազում
անգամ , Թէ Զոր ինչ և խնդրեսցես դու զինէն՝
տաց քեզ , մինչեւ ցկէս թագաւորութեան իմոյ ։
24 Նա ելեալ ասէ ցմայր իւր , Զի՞նչ խնդրեցից . և
25 Նա ասէ , Զգլուխն Յովհաննու մկրտչի ։ Եւ մտեալ
անգրկէն փութանակի առ թագաւորն՝ ասէ , կամիմ
զի այժմ տացես ինձ վաղվաղակի ի վերայ սկտեղ
26 զգլուխն Յովհաննու մկրտչի ։ Եւ տրամեցաւ յոյժ
թագաւորն , այլ վասն երդմանցն և կոչնականացն
27 ոչ կամեցաւ անարգել զնա ։ Եւ առաքեաց վաղ-
վաղակի թագաւորն դահիճ , և հրամայեաց բերել
զգլուխն նորա . և չոգաւ գլխատեաց զնա ի բան-
28 տին , Եւ եբեր զգլուխն նորա սկտեղը և ետ ցաղ-
29 ջիկն , և աղջիկն տարաւ ետ մօր իւրում ։ Իբրեւ
լուան աշակերտքն նորա , եկին , բարձին զմարմինն
և եդին ի գերեզմանի ։
30 Ժողովեցան առաքեալքն առ Յիսուս , և պատ-
մեցին նմա զամենայն ինչ զոր արարին և զոր ու-
31 սուցին ։ Եւ ասէ ցնոսա Յիսուս , Եկայք դուք ա-
ռանձինն յանապատ տեղի , և հանգիջիք սակաւ
մի , զի էին բազումք որ երթային և գային , և հաց
32 անգամ չժամանէին ուտել ։ Եւ գնացին նաւուս

* Ի Յոյն էէ ։

33 յանապատ տեղի առանձինն : Եւ տեսին զնոսա ղի
երթային , և զգացին բազումք . և հետի յամենայն
քաղաքաց խուռն ընթանային անդր , և մերձենա-
34 յին առ նոսա : Եւ ելեալ հետս ամբոխ բազում
և գթացաւ ի նոսա , ղի էին իբրեւ ոչխարք՝ որոց
ոչ իցէ հովիւ . և սկսաւ ուսուցանել զնոսա յայժ :
35 Եւ իբրեւ բազում ժամ եղեւ , մատուցեալ աշա-
կերտքն ասէին , Տեղիս անապատ է , մինչդեռ ա-
36 ւուր կայ՝ Արձակեա զժողովուրդսդ , ղի երթեալ
շուրջ յագարակս և ի գիւղս՝ գնեսցեն իւրեանց
37 ղինչ ուտիցեն , ղի սատ ուտել ինչ ոչ ունին : Նա
պատասխանի ետ և ասէ ցնոսա , Պուք տուք դոցա
ուտել . ասեն ցնա , Երթիցուք և գնեսցուք երկե-
բիւր դահեկանի հաց , և տացուք դոցա ուտել :
38 Ասէ ցնոսա , Քանի՞ նկանակ ունիք , երթայք տե-
սէք . իբրեւ գիտացին՝ ասեն ցնա , Հինգ՝ և երկուս
39 ձկունս : Եւ հրամայեաց նոցա բազմել երախանս
40 երախանս ի վերայ դալար խոտոյ : Եւ բազմեցան
41 դասք դասք՝ ուր հարիւր և ուր հիսուն : Եւ ա-
ռեալ զհինգ նկանակն և զերկուս ձկունսն , հայե-
ցաւ յերկինս , օրհնեաց , մանրեաց զնկանակսն և
ետ ցաշակերտսն զի արկցեն նոցա , և զերկուս ձը-
42 կունսն բաշխեաց ամենեցուն : Կերան և յագեցան .
43 Եւ բարձին զնշխարսն երկոտասան սակաւիկ լի , և
44 ի ձկանց անտի : Եւ էին որ կերանն՝ իբրեւ արք
հինգ հազար :
45 Եւ նոյն ժամայն ճեպեաց զաշակերտսն մտանել
ի նաւ , և յառաջագոյն քան զնա երթալ յայնկոյս
ի Բեթսայիդա , մինչ ինքն զժողովուրդսն արձ-
46 ակիցէ : Եւ հրաժարեալ ի նոցանէ եւ ի լեառն

47 կալ յաղօթս : Եւ իբրեւ երեկոյ եղեւ , էր նաւն
48 ի մէջ ծովուն , և ինքն ի ցամաքի : Եւ տեսս զնո-
սա հոգմակոծեալս ի վարելն , զի էր հողմն ընդդէմ
նոցա . և զչորրորդ պահու գիշերոյն գայ առ նոսա
գնալով ի վերայ ծովուն , և կամէր զանց առնել
49 առ նոքօք : Նոքա իբրեւ տեսին զի գնայր ի վերայ
ծովուն , համարեցան թէ առաչօք ինչ լինիցի , և
50 զաղաղակ բարձին : Քանզի ամենեքեան տեսին զնա
և խռովեցան . և նա անդէն վազվազակի խօսեցաւ
ընդ նոսա և ասէ , Քաջալերեցարուք , ես եմ , մի՛
51 երկնչիք : Եւ ել ի նաւն առ նոսա , և դադարեաց
հողմն . և առաւել եւս յիմարեալ էին ի միտս
52 իւրեանց և զարմանային յայժ : Քանզի և ի վե-
րայ հացին ոչ խնացան , զի էր սիրտ նոցա թմր-
53 բեալ : Եւ իբրեւ անցին յայնկոյս , եկին յերկիրն
54 Գեննեսարեթ* : Եւ իբրեւ ելին ի նաւէ անտի ,
իսկ և իսկ ծանեան զնա արք տեղւոյն այնորիկ :
55 Եւ ընթացեալ ամբոխ անդր ընդ ամենայն գաւառն ,
սկսան մահճօք բերել զհիւանդս , ուր լսէին թէ
56 անդ իցէ : Եւ ուր և մտանէր ի գիւղս կամ ի քա-
ղաքս կամ յագարակս , ի հրապարակս դնէին
զախտաժէտս , և աղաչէին զնա զի գոնէ ի քղան-
ցըս հանդերձից նորա մերձենայցեն . և որ միանգամ
մերձեցանն՝ փրկեցան :

Գլ. Ե

1 Եւ ժողովեցան առ նա փարիսեցիքն և ոմանք ի
2 դպրացն՝ որ եկեալ էին Երուսաղէմէ : Եւ տե-

* Ի Յունն յաւելու , և հանին զնաւն ի ցամաք :

սեալ զմանս յաշակերտացն անտի , զի խառնակ
ձեռօք՝ այսինքն է անլուայ ուտելին հաց , բամբա-
3 սեցին . Զի փարիսեցիքն և ամենայն Հրեայք եթէ
ոչ բռնալիր լուանան զձեռս , հաց ոչ ուտեն . քան-
4 զի ունին զաւանդութիւն ծերոցն . Եւ ի հրապա-
րակէ մտեալ՝ եթէ ոչ նախ մկրտիցին , ոչ ուտեն .
և այլ ինչ բազում է զոր ընկալան ունել , մկրտու-
թիւնս բաժակաց և ստամնաց և պղնձեաց և մահ-
5 ճաց : Ապա հարցանեն զնա փարիսեցիքն և դպիրք
թէ ընդէ՞ր աշակերտքն քո ոչ գնան ըստ աւան-
դութեան ծերոցն , այլ խառնակ ձեռօք հաց ու-
6 տեն : Նա պատասխանի ետ և ասէ ցնոսա թէ Բա-
րեւ մարգարէացաւ Եսայի վասն ձեր կեղծաւորաց ,
որպէս ասաց , ժողովրդս այս շրթամբք մեծարէ
զիս , և սիրտք նոցա հեռացեալ ի բացեայ են ի-
7 նէն . Զուր պաշտեն զիս , ուսուցանեն վարդապե-
8 տութիւնս զմարդկան պատուիրակս : Թողեալ զը-
պատուիրանն Աստուծոյ , ունիք զմարդկան աւան-
դութիւն , մկրտութիւնս ստամնաց և բաժակաց ,
9 և այլոց նմանեաց սոցին առնէք բազումս : Եւ ա-
սէ ցնոսա , Բարւոք խոտէք զպատուիրանն Աստու-
10 ծոյ , զի զձեր աւանդութիւնն հաստատիցէք : Զի
Մովսէս ասէ , Պատուեա զՏայր քո և զմայր . և
որ չարախօսեսցէ զՏօրն կամ զմօրն , մահու վախ-
11 ճանեսցի : Եւ դուք ասէք , եթէ ասիցէ ոք ցՏայր
կամ ցմայր , կորբան որ է պատարագ՝ զոր ինչն
12 օգտեսցիս . Եւ ոչ եւս տայք թոյլ նմա առնել ինչ
13 Տօրն կամ մօր : Եւ անարգէք զբանն Աստուծոյ
ձերով աւանդութեամբն , զոր աւանդեցէք , և բա-
14 զում ինչ այլ որ այսմ նման է՝ առնէք : Եւ կո-

չեալ առ ինքն զամենայն ժողովուրդն , ասէ ցնո-
սա , Լուարուք ինձ ամենեքեան և ի միտ առէք :
15 Ոչինչ արտաքուստ ի մարդ մտեալ եթէ կարիցէ
պղծել զնա , այլ որ ելանէ ի նմանէ , այն է որ
16 պղծէ զմարդն : Որ ունիցի ականջս լսելոյ՝ լսիցէ :
17 Եւ իբրեւ եմուտ ի տուն յամբոխէ անտի , հար-
18 ցանէին զնա աշակերտքն վասն առակին : Եւ ասէ
ցնոսա , Այդպէս և դուք անմի՞տ էք . ո՞չ իմա-
նայք եթէ ամենայն որ արտաքուստ ի ներքս մտա-
19 նէ ի մարդ , ոչ կարէ զնա պղծել . Զի ոչ եթէ ի
սիրտ նորա մտանէ , այլ յորովայն և արտաքս
20 ելանէ , և սրբէ զամենայն կերակուրան : Եւ ասէր
թէ Որ ինչ ի մարդոյն ելանէ՝ այն պղծէ զմարդ :
21 Զի ի ներքուստ ի սրտէ մարդկան խորհուրդք չա-
րութեան ելանեն , շնութիւնք , պոռնկութիւնք ,
22 գողութիւնք , սպանութիւնք , ագահութիւնք , չա-
րութիւնք , նենգութիւնք , գիջութիւնք , չարա-
հնութիւն , հայհոյութիւն , ամբարտաւանութիւն ,
23 անզգամութիւն : Ամենայն չարիքս ի ներքուստ
ելանեն և պղծեն զմարդ :
24 Եւ անտի յարուցեալ՝ եկն ի սահմանս Տիւրոսի
և Սիդովնի , և մտեալ ի տուն ոչ ումեք կամէր
25 յայտնել , և ոչ կարաց ծածկել : Լուաւ կին մի ըզ-
նմանէ , որոյ դուստր իւր նեղեալ էր յոգւոյ պղծոյ ,
26 եկն անկաւ առաջի նորա : Եւ կինն էր հեթանոս՝
փիւնիկ Ասորի յազգէ . և աղաչէր զնա զի զդեւն
27 հանցէ ի դստերէ նորա : Եւ Յիսուս ասէ ցնա ,
Թոյլ տուր նախ յագեցին մանկանցն , զի ոչ է
բարւոք առնուլ զՀաց մանկանց և արկանել շանց :
28 Նա պատասխանի ետ և ասէ , Տէր , և շունք ի

29 փշրանաց սեղանոյ մանկանցն կերակրին : Եւ ասէ
ցնա , վասն պդր բանի երթ , ել դեւն ի դստե-
30 ր քո եմմէ : Գնաց ի տուն իւր և եդիտ ելեալ
զդեւն , և զդուստրն զի անկեալ դներ ի մահիճս :
31 Եւ ելեալ միւսանգամ ի սահմանացն Տիւրոսի և
Սիդովնի , և եկն ի ծովեզրն Գալիլեացւոց ի մէջ
32 սահմանացն ի Դեկապօլիս : Եւ բերին առաջի նո-
ր խուլ մի և համր , և աղաչէին զի ձեռն դնիցէ
33 ի վերայ նորա : Եւ առեալ զնա մեկուսի յամբո-
խէ անտի , արկ զմատունս իւր ընդ ականջս նորա
34 և եթուք անգր . և կալաւ ղլեզուէ նորա , Հայե-
ցաւ յերկինս , յոգւոց եհան և ասէ , Եփփաթա ,
35 որ է բացիր : Եւ նոյն ժամայն բացան լսելիք նո-
ր , և լուծաւ կապանք լեզուի նորա և խօսէր ո-
36 ղիղ : Եւ պատուիրեաց նոցա զի մի՛ ոմեք ասիցեն .
և որչափ նա պատուիրէր նոցա , նոքա եւս առաւ-
37 ել քարոզէին . Եւ եւս քան զլուս զարմանային և
ասէին , Ջամենայն ինչ բարւոք գործեաց սա , զի
խլից լսել տայ և համրոց խօսել :

ԳԼ· Ը

1 Յաւուրսն յայնոսիկ դարձեալ ժողովուրդ բա-
զում էր , և ինչ ոչ ունէին ուտել . կոչեաց զա-
2 շակերտսն իւր և ասէ ցնոսա , Գթամ ես ի վերայ
ժողովրդեանդ , զի՝ արդ երեք աւուրք են մինչ
3 առ իս են , և ոչ ունին զինչ ուտիցեն . Եւ եթէ
արձակեմ զդոսա ծոմիս ի տունս իւրեանց՝ նըզթա-
ցեն ի ճանապարհի . զի ոմանք ի դոցանէ ի հե-
4 ռաստանէ եկեալ են : Պատասխանի ետուն նմա

աշակերտքն նորա , Ուստի՞ *կարիս յագեցուցանել
5 զդոսա հացիւ յանապատի տաս : Եւ հարցանէր
զնոսա , Քանի՞ նկանակ հաց ունիք . և նոքա ասեն,
6 Եօթն : Եւ հրամայեաց ժողովրդեանն բազմել ի
վերայ երկրի . և առեալ զեօթն նկանակն գոհա-
ցաւ , երեկ և տայր ցաշակերտսն զի արկցեն . և
7 արկին առաջի ժողովրդեանն : Եւ ձկունս սակաւ
ունէին , և զայն եւս օրհնեաց և հրամայեաց ար-
8 կանել : Կերան և յագեցան . և բարձին զնշխարս
9 ձոտորոցն եօթն զամբիւղ : Եւ էին որ կերանն իրրեւ
չորք հազարք , և արձակեաց զնոսա :
10 Եւ նոյն ժամայն մտեալ ի նաւ հանդերձ աշա-
11 կերտաքն՝ եկն ի կողմանս Դալմանուենայ : Եկին
փարիսեցիքն և սկսան վիճել ընդ նմա , և խնդրէին
12 ի նմանէ նշան յերկնից փորձելով զնա : Եւ զոյ-
ցաւաց յոգի իւր և ասէ , Զի՞ է զի ազգս այս նը-
շան խնդրէ . ամէն ասեմ ձեզ թէ տացի նշան ազ-
13 գիս այսմիկ : Եթող զնոսա , գարձեալ եմուտ ի
14 նաւ և գնաց յայնկոյս : Եւ մոռացան հաց բաւ-
նալ , բայց մի՛այն մի նկանակ ունէին ընդ իւրեանս
15 ի նաւին : Եւ պատուիրէր նոցա և ասէր , Զգուշ
եղերուք ի խմորոյ անտի փարիսեցւոց և ի խմորոյ
16 Հերովդիանոսաց : Եւ խորհէին ընդ միմեանս և ա-
17 սէին թէ Զի հաց ոչ ունիմք : Գիտաց Յիսուս և
ասէ ցնոսա , Զի՞ խորհիք *ի սիրտս ձեր , թէ հաց
չունիք ,՚՚ թէ հաց ոչ ունիք . տակաւին ո՞չ իմա-
նայք և ո՞չ յիշէք . տակաւ†թի՞ն ունի զսիրտս ձեր .
18 Աչք ջոն և ոչ տեսանէք , ականջք են և ոչ լսէք ,
19 †և ոչ իմանայք տակաւին ,՚՚ և ոչ յիշէք : Յոր-

* ի Յ**՝ կարիցէ ոք † ի Յ՝՝՝ չէ :

ժամ ղՀինդ նկանակն ի հինգ հազարսն , և քանի՞
սակաւս լի բարձէք զկտորոցն . և ասեն , Երկո-
20 տասան : Եւ յորժամ զեօթն նկանակն ի չորս հա-
զարսն , քանի՞ զամբիւղ լի բարձէք զկտորոցն . և
21 նոքա ասեն , Եօթն : Եւ ասէ ցնոսա , Իսկ զնա՞րդ
ոչ իմանայք :
22 Գան ի Բեթսայիդա , և ածեն առ նովքն կոյր
23 մի , և աղաչէին զնա զի մերձեսցի ի նա : Եւ ա-
ռեալ զձեռանէ կուրին՝ հՀան արտաքոյ շինին ,
եթուք յաչս նորա և ձեռն եդ ի վերայ նորա . և
24 հարցանէր ցնա թէ տեսանի՞ էնչ . Բացաւ , և
ասէր , Տեսանեմ զմարդիկս զի շրջին իբրեւ զծառս :
25 Դարձեալ եդ ձեռս ի վերայ աչաց նորա , և բաց , և
տեսանէր . աղջացաւ՝ և տեսանէր համօրէն զամե-
26 նայն : Աւրձակեաց զնա ի տուն իւր և ասէ , Ի շինդ
մի՛ մտանիցես , *այլ երթ ի տուն քո . և յորժամ
ի շէնն մտանիցես՝ մի՛ ուրուք ասիցես ի շինին :''
27 Եւ ել Յիսուս աշակերտաքն Հանդերձ ի շէնս կե-
սարեայ Փիլիպպեայ , և ի ճանապարհին Հարցա-
նէր ցաշակերտսն և ասէր , Զո՞ ուստեք ասեն զի-
28 նէն մարդիկս թէ իցեմ : Նոքա ետուն պատասխա-
նի և ասեն , ԶՅովհաննէս Մկրտիչ , և այլք՝ Զեղիա ,
29 և այլք՝ Զմի ոք ի մարգարէից անտի : Ասէ ցնոսա ,
Իսկ դուք զո՞ ուստեք ասէք զինէն թէ իցեմ . պա-
տասխանի ետ Պետրոս և ասէ ցնա , Դու ես Քրիս-
30 տոս : Եւ սաստեաց ի նոսա զի մի՛ ուրուք ասիցեն
31 զնմանէ : Եւ սկսաւ ուսուցանել զնոսա թէ պարտ
է Որդւոյ մարդոյ բազում չարչարանս ընդունել ,

* Ի Ցոյնն՝ և մի՛ ուրուք ասիցես ի շինին :

և անարգել յերիցանց և ի քահանայապետից և
ի դպրաց , և մեռանել և յերիր աւուր յառնել :
32 Եւ համարձակ զբանն խօսեցաւ . և առեալ զնա
33 Պետրոս՝ սկսաւ սաստել նմա : Եւ նա
դարձաւ տեսս զաշակերտսն , սաստեաց Պետրոսի
և ասէ , Երթ յետս իմ , Սատանայ , զի ոչ խորհիս
34 զոյ զԱստուածայն , այլ զմարդկան : Եւ կոչեցեալ
առ ինքն զժողովուրդն աշակերտաքն Հանդերձ՝ ա-
սէ ցնոսա , Եթէ ոք կամի գալ զկնի իմ՝ ուրասցի
զանձն իւր և բարձցէ զխաչ իւր և եկեսցէ զկնի
35 իմ : Զի որ կամիցի ապրեցուցանել զանձն իւր , կո-
րուսցէ զնա . և որ կորուսցէ զանձն իւր վասն ա-
36 ւետարանին , ապրեցուսցէ զնա : Զի՞նչ օգուտ է
մարդոյ եթէ զաշխարհ ամենայն շահեսցի , և զան-
37 ձն իւր տուժեսցէ : Քանզի զի՞նչ տացէ մարդ փո-
38 խանակ անձին իւրոյ : Զի որ ոք ամօթ համարեսցի
զիս և զբանս իմ ի ընացոզ և ի մեղաւոր ազգիս
այսմիկ , և Որդի մարդոյ յամօթ արասցէ զնա ,
յորժամ եկեսցէ փառաւք Հօր իւրոյ *և Հրեշտակաց
39 սրբոց :'' Եւ ասէ ցնոսա , Ամէն ասեմ ձեզ , զի են
ոմանք ի սոցանէ որ աստ կան , որք մի՛ ճաշակեսցեն
զմահ՝ մինչեւ տեսցեն զարքայութիւն Աստուա-
ծոյ եկեալ զօրութեամբ :

Գլ. Թ

1 Եւ յետ վեց աւուր առնու ընդ իւր Յիսուս զՊե-
տրոս և զՅակովբոս և զՅովհաննէս , և Հանէ զնո-
սա ի լեառն մի բարձր առանձինն , և յայլակեր-

* Ի Ցոյնն՝ Հանդերձ Հրեշտակօք սրբովք :

2 պըս եղեւ առաջի նոցա ։ Եւ ձորձք նորա եղեն
փայլուն սպիտակ լայժ , որպէս թափիչք երկրի ոչ
3 կարեն այնպէս սպիտակացուցանել ։ Եւ երեւեցաւ
նոցա Եղիա Մովսիսէ հանդերձ , և խօսէին ընդ Յի-
4 սուսի ։ Պատասխանի եւ Պետրոս և ասէ Յիսուսա ,
Ռաբբի , բարւոք է մեզ առ լինել . և արասցուք
երիս տաղաւարս՝ մի քեզ և մի Մովսիսի և մի Եղիա-
5 այի . Քանզի ոչ գիտեր զինչ խօսէր , զի զարհուրեալ
6 էին ։ Եւ եղեւ ամպ մի հովանի ի վերայ նոցա ,
ձայն եղեւ յամպոյ անտի և ասէ , Դա է որդի իմ
7 սիրելի , դմա լուարուք ։ Եւ յանկարծակի հայե-
ցեալ այսր անդր՝ ոչ եւս զոք ուրեք տեսին , բայց
8 միայն զՅիսուս ընդ իւրեանս ։ Եւ մինչդեռ իջանէ-
ին ի լեռնէ անտի , պատուիրեաց նոցա զի մի ու-
մեք պատմեացեն զոր տեսին , բայց յորժամ Որդի
9 մարդոյ ի մեռելոց յարիցէ ։ Եւ նոքա զբանն ի
մտի ունէին , և խնդրէին ընդ միմեանս Թէ զի՞նչ
10 իցէ ի մեռելոցն յառնել ։ Հարցին ցնա և ասեն ,
Զի՞նչ է այն զոր դպիրքն ասեն եթէ Նախ Եղիայի
11 պարտ է գալ ։ Նա պատասխանի եւ նոցա և ասէ ,
Եղիա նախ եկեալ յարդարեացէ զամենայն . իսկ
զի՞նչդ գրեալ է զՈրդւոյ մարդոյ , զի բազում ինչ
12 չարչարեացի և անգոնեացի ։ Այլ ես ասեմ ձեզ
եթէ Եղիա եկն , և արարին ընդ նմա զինչ և կա-
մեցան , որպէս և գրեալ է վասն նորա ։
13 Եւ եկեալ առ աշակերտսն , տեսին ամբոխ շուրջ
14 զնոքօք , և զդպիրսն՝ զի վիճէին ընդ նոսա ։ Եւ
վազվազակի ամենայն ժողովուրդն իբրեւ տեսին զը-
նա՝ զարմացան , և ընդ առաջ ընթացեալ ողջոյն
15 ասային նմա ։ Եւ հարց ցնոսա Թէ Զի՞նչ վիճէիք

16 ընդ նոսա ։ Պատասխանի ետ մի ումն ի ժողովրդե-
նէն և ասէ, Վարդապետ, ածի զորդի իմ առ քեզ ,
17 զոր ունի այս համր . Եւ ուր հասանի՝ զարկուցանէ
զնա . և փրփրէ և կրճտէ զատամունս իւր և ցա-
մաքի . և ասացի ցաշակերտսն քո զի հանցեն , և
18 ոչ կարացին հանել զնա ։ Պատասխանի ետ նոցա
և ասէ , Ո՛վ ազգ անհաւատ , մինչեւ ե՞րբ իցեմ
առ ձեզ , մինչեւ ե՞րբ անասցեմ ձեզ . ածէք զնա
19 առ իս ։ Եւ ածին զնա առ նա . իբրեւ եահս զնա
այսն , վազվազակի շարժեցաւ զնա , և անկեալ յեր-
20 կիր թաւալէր և փրփրայր ։ Եհարց ցհայր նորա և
ասէ , Քանի՞ ժամանակք են յորմէ հետէ այդ եղեւ
21 դմա . և նա ասէ , Ի մանկութենէ ։ Բազում ան-
գամ ի հուր արկանէ զդա և ի ջուր՝ զի կորուսցէ.
արդ եթէ կարող ինչ ես , օգնեա մեզ , Տէր , գթ-
22 թացեալ ի վերայ մեր ։ Եւ Յիսուս ասէ ցնա , *Ա-
սացեր Թէ կարող ես ,՚՛ ամենայն ինչ հնարաւոր
23 է այնմ , որ հաւատայն ։ Եւ վազվազակի աղաղա-
կեաց հայր մանկանն և ասէ , †Հաւատամ , օգնեա
24 անհաւատութեանս իմում ։ Իբրեւ եահս Յիսուս
եթէ կուտէ ժողովուրդն ի վերայ , սաստեաց պա-
սպն պղծոյ և ասէ , Համրդ և խուլ այս , ես տամ
քեզ հրաման , ել ի դմանէ , և այլ եւս մի մտա-
25 նիցես ի դա ։ Եւ աղաղակեաց և յայժ ւկեաց զնա
և ել . և եղեւ պատանեակն իբրեւ զմեռեալ , մին-
26 չեւ բազմաց իսկ ասել Թէ Մեռաւ ։ Եւ Յիսուս
կալաւ զձեռանէ նորա՝ յարոյց զնա , և կանգնե-

---

* ի Յոյնն՝ Թէ կարող ես Հաւատալ,
† ի Յոյնն՝ Հաւատամ, Տէր ,

27 ցաւ։ Եւ իբրեւ եմուտ նա ի տուն, աշակերտքն
առաջինն Հարցին ցնա, Մեք ընդէ՞ր ոչ կարացաք
28 հանել զնա։ Եւ ասէ ցնոսա, Այդ ազգ ոչ իւիք
ելանէ, եթէ ոչ պահովք և աղօթիւք։
29 Եւ անտի ելեալ անցանէին առ Գալիլեացւովք,
30 և ոչ կամէր եթէ ոք գիտասցէ։ Քանզի ուսուցա-
նէր զաշակերտսն իւր և ասէր ցնոսա Թէ Որդի մար-
դոյ մատնելոց է ի ձեռս մարդկան, և սպանցեն
զնա. և իբրեւ սպանցի՝ յերիր աւուր յարիցէ։
31 Եւ նոքա ոչ գիտէին զբանն, և երկնչէին Հարցա-
32 նել ցնա։ Եկն ի Կափառնայում՝ և իբրեւ եմուտ
ի տուն՝ Հարցանէր ցնոսա, Զի՞նչ վիճէիք ընդա-
33 պարհսն ընդ միմեանս։ Եւ նոքա լուռ լինէին,
քանզի ընդ միմեանս վիճէին ի ճանապարհին Թէ
34 ո՛վ մեծ իցէ։ Եւ իբրեւ նստաւ՝ կոչեաց զերկոտա-
սանսն և ասէ ցնոսա, Եթէ ոք կամի առաջինն լի-
նել, եղիցի ամենեցուն կրտսեր և ամենեցուն պաշ-
35 տօնեայ։ Եւ առեալ մանուկ մի կացոյց ի մէջ նո-
ցա. և ընկալեալ զնա ի գիրկս իւր՝ ասէ ցնոսա,
36 Որ միանգամ յայսպիսի մանկտւոյ ընկալցի յանուն
իմ, զիս ընդունի. և որ զիս ընդունիցի, ոչ զիս
37 ընդունի՝ այլ զայն որ առաքեացն զիս։ Պատաս-
խանի ետ նմա Յովհաննէս և ասէ, Վարդապետ,
տեսաք զոմն զի յանուն քո դեւս հանէր և զմեր
38 կին ոչ չըջէր, և արգելաք զնա։ Եւ նա ասէ, Մի
արգելուք զնա, զի ոչ ոք է որ առնէ զօրութիւնս
39 յանուն իմ, և կարիցէ հայհոյել զիս։ Զի որ ոչն
40 է ընդ մեզ հակառակ, ի մեր կոյս է։ Եւ որ ոք
արբուսցէ ձեզ ջուր բաժակաւ յանուանս յայս Թէ
դուք Քրիստոսի էք, ամէն ասեմ ձեզ, մի կորուսցէ

41 վարձս իւր։ Եւ որ ոք գայթագղեցուսցէ զմի ի
փոքրկանցս՝ որ հաւատան յիս, լաւ էր նմա առա-
ւել Եթէ արկեալ էր ընդ պարանոց նորա երկան
42 իշոյ, և ընկեցեալ ի ծով։ Եւ եթէ գայթակղե-
ցուսցէ զքեզ ձեռն քո, Հատ, ընկեա ի քէն. զի
լաւ իցէ քեզ խեղ մտանել ի կեանսն յաւիտենից,
քան երկուս ձեռս ունել և երթալ ի գեհեն ի
43 հուրն անշէջ։ Ուր որդն նոցա ոչ մեռանի և հու-
44 րըն ոչ շիջանի։ Եւ եթէ ոտն քո գայթակղեցուս-
ցէ զքեզ, Հատ ընկեա զնա ի քէն. լաւ իցէ քեզ
կաղ մտանել ի կեանսն *յաւիտենից, քան երկուս
ոտս ունել և անկանիլ ի գեհեն ի հուրն անշէջ։
45 Ուր որդն նոցա ոչ մեռանի և հուրն ոչ շիջանի։
46 Եւ եթէ ակն քո գայթակղեցուսցէ զքեզ, Հան
զնա ի բաց. լաւ իցէ քեզ միով ակամբ մտանել
յարքայութիւն Աստուծոյ, քան երկուս աչս ու-
47 նել և անկանիլ ի գեհեն։ Ուր որդն նոցա ոչ մե-
48 ռանի և հուրն ոչ շիջանի։ Զի ամենայն ինչ հրով
յաղեսցի, և ամենայն ողջակէզ աղիւ յաղեսցի։
49 Բարւոք է աղ. և եթէ աղն անհամեսցի, ի՛ւ հա-
մեմեսցի. արդ զոր կալարուք յանձինս ձեր զա-
ղըն, և խաղաղութիւն արարէք ընդ միմեանս։

Գլ. ժ.

1 Եւ անտի յարուցեալ գայ ի սահմանս Հրէաս-
տանի յայնկոյս Յորդանանու. և երթայր դարձեալ
խռնեալ ժողովուրդն առ նա, և որպէս սովոր էր՝

* Ի ցայն վէպ։

2 միւսանգամ ուսուցանէր զնոսա ։ Իսկ փարիսեցիքն
մատուցեալ փորձելով հարցանէին զնա եւ ասէին ,
3 Եթէ Արժա՞ն իցէ առն զկին իւր արձակել , նա
պատասխանի ետ նոցա եւ ասէ , Զի՞նչ պատուի-
4 րեաց ձեզ Մովսէս ։ Եւ նոքա ասեն , Մովսէս հրա-
5 ման ետ գիր մերկնելոյ գրել և արձակել ։ Պատաս-
խանի ետ Յիսուս և ասէ ցնոսա , Վասն խստասրբո-
ւթեան ձերոյ գրեաց ձեզ զպատուիրանն զայն .
6 Այլ ի սկզբանէ արարածոց արու և էգ արար զը-
7 նոսա Աստուած , և ասէ , Վասն այսորիկ թողեալ
այր զհայր իւր և զմայր , և երթիցէ զկնի կնոջ
8 իւրոյ ։ Եւ եղիցին երկուքն ի մարմին մի , և այնու-
9 հետեւ ոչ են երկու՝ այլ մարմին մի ։ Արդ զոր Ա-
10 ստուած զուգեաց , մարդ մի՛ մեկնեսցէ ։ Եւ ի տան
11 դարձեալ աշակերտքն զնոյն հարցին զնա ։ Եւ ասէ
ցնոսա , Եթէ այր արձակեսցէ զկին իւր և արասցէ
12 այլ , շնայ ։ Եւ կին եթէ ելցէ յառնէ իւրմէ , և
եղիցի առն այլում , շնայ ։
13 Եւ մատուցանէին առ նա մանկտի , զի ձեռն դի-
ցէ նոցա . իսկ աշակերտքն սաստէին այնոցիկ որ
14 մատուցանէին ։ Յորմէ տեսեալ Յիսուս , բարկացեալ
սաստեաց նոցա և ասէ , Թոյլ տուք մանկտւոյդ
գալ առ իս , և մի՛ արգելուք զդոսա . զի այդպի-
15 սեացդ է արքայութիւն Աստուծոյ ։ Ամէն ասեմ
ձեզ , Որ ոչ ընկալցի զարքայութիւն Աստուծոյ իւ-
16 րեւ զմանուկ՝ ոչ մտցէ ի նա ։ Եւ առեալ զնոսա
17 ի գիրկս ձեռն եդ ի վերայ և օրհնեաց զնոսա ։ Եւ
ընդ ելանելն նորա անտի ի ճանապարհ , ահաւա-
սիկ ոմն մեծատուն ընթացեալ ի ծունր իջանէր ,
հարցանէր ցնա և ասէր , Վարդապետ բարի , զի՞նչ

արարից զի զկեանն յաւիտենական ժառանգե-
18 ցից ։ Եւ Յիսուս ասէ ցնա , Զի՞ ասես զիս բարի .
19 չէ ոք բարի բայց մի Աստուած ։ Զպատուիրանս
գիտես . Մի՛ շնար , Մի՛ սպանաներ , Մի՛ գողանար ,
Մի՛ սուտ վկայեր , * Պատուեա զհայր քո և զմայր ։
20 Նա պատասխանի ետ և ասէ ցնա , Վարդապետ ,
զայդ ամենայն արարի ի մանկութենէ իմմէ . արդ
21 զի՞նչ եւս պակաս իցեմ ։ Եւ Յիսուս հայեցեալ ի
նա՝ սիրեաց զնա , և ասէ ցնա , Մի բնչ պակաս է
ի քէն . եթէ կամիս կատարեալ լինել , երթ՝ զոր
ինչ ունիս վաճառեա և տուր աղքատաց , և ու-
նիցես գանձս յերկինս . և առ զխաչն և եկ զկնի
22 իմ ։ Եւ նա խժռուեալ ընդ բանն՝ գնաց տրտում ,
23 զի ուներ բնչս բազումս ։ Եւ հայեցեալ Յիսուս
յայնկոյս Յիսուս՝ ասէ ցաշակերտսն , Զի՛արդ դը-
ժուարին է որ զինչսդ ունին , մտանել յարքայու-
24 թիւն Աստուծոյ ։ Եւ աշակերտքն զարմացեալ էին
ի վերայ բանիցն նորա . իսկ Յիսուս դարձեալ
պատասխանի ետ նոցա և ասէ , Որդեակք , ո՛ր-
չափ դժուարին է յուսացելոց յինչս մտանել յար-
25 քայութիւն Աստուծոյ ։ Դիւրին է մալեայ ընդ ծակ
ասղան անցանել , քան մեծատան յարքայութիւն
26 Աստուծոյ մտանել ։ Եւ նոքա առաւել եւս զար-
մանային և ասէին ընդ միմեանս , Իսկ ո՞ կարասցէ
27 ապրել ։ Հայեցեալ ընդ նոսա Յիսուս ասէ , Առ ի
մարդկանէ այդ անկնարելի է , այլ ոչ առ Աս-
տուածոյ ։
28 Սկսաւ ասել ցնա Պետրոս , Ահաւասիկ մեք թո-

* Ի Յայն յաւելու Մի՛ զրկեր .

29 զաք զամենայն և եկաք զկնի քո ։ Պատասխանի եւ
Յիսուս և ասէ , Ամէն ասեմ ձեզ , Ոչ ոք է որ եթող
զտուն կամ զեղբարս կամ զքոյր կամ զհայր կամ
զմայր կամ զորդիս կամ զագարակս վասն իմ կամ
30 վասն աւետարանին , եթէ ոչ առնուցու հարիւրա-
պատիկ այժմ յայսմ ժամանակի տուներս և եղբարս
և քոյրս և մայրս և որդիս և ագարակս հալածանօք
հանդերձ , և յաշխարհին որ գալոց է՝ զկեանն յա-
31 ւիտենականս ։ Զի բազումք եղիցին առաջինք ե-
32 տինք , և յետինք առաջինք ։ Եւ էին ի ճանա-
պարհի մինչդեռ ելանէին Երուսաղէմ. և եր-
թայր Յիսուս առաջի քան զնոսա , և զարմացեալ
էին որ զհետն երթային և երկնչէին ։

Եւ առեալ միւսանգամ զերկոտասանսն առա-
ձինն , սկսաւ ասել նոցա զինչ անցք անցանելոց
33 իցեն ընդ նա . Թէ ահաւասիկ ելանեմք Երուսա-
ղէմ , և Որդի մարդոյ մատնեսցի քահանայապե-
տաց և դպրաց , և դատեսցեն զնա ի մահ , և
34 մատնեսցեն զնա հեթանոսաց . Եւ կատակեսցեն
զնովաւ , և հարկանիցեն զնա , և թքանիցեն ի նա
35 և սպանցեն , և յերրորդ աւուր յարիցէ ։ Եւ երթա-
յին առ նովաւ Յակովբոս և Յովհաննէս որդիքն
Զեբեդեայ , և ասեն ցնա , Վարդապետ , կամիմք
36 զի զոր ինչ խնդրեսցուք ի քէն՝ արասցես մեզ ։ Եւ
նա ասէ ցնոսա , Զի՞նչ կամիք ի՛ւրիք զի արարից
37 ձեզ ։ Եւ նոքա ասեն ցնա , Տուր մեզ զի նստցուք
մի յաջմէ քումմէ և մի յահեկէ ի փառսն քում ։
38 Պատասխանի եւ Յիսուս և ասէ ցնոսա , Ոչ գի-
տէք զինչ խնդրէք . կարէ՞ք ըմպել զբաժակն՝ զոր
ես ըմպելոց եմ , կամ զմկրտութիւնն մկրտիլ՝ զոր

39 ես մկրտելոցն եմ ։ Եւ նոքա ասեն ցնա , Կարեմք .
և Յիսուս ասէ ցնոսա , Զբաժակն զոր ես ըմպելոց
եմ՝ ըմպիցէք , և զմկրտութիւնն զոր ես մկրտելոց
40 եմ՝ մկրտիցիք . Այլ *նստուցանել ընդ աջմէ իմմէ
և ընդ ահեկէ՝ ոչ է իմ տալ , այլ որոց պատրաս-
41 տեալ իցէ ։ Եւ լուեալ զայն տասանցն , սկսան
42 բարկանալ Յակովբայ և Յովհաննու ։ Եւ Յիսուս
կոչեաց զնոսա առ ինքն , և ասէ ցնոսա , Գիտէք
զի որ յանուանն իշխանքն են հեթանոսաց , տիրեն
43 նոցա . և մեծամեծք նոցա իշխեն նոցա ։ Ոչ նոյն-
պես իցէ և ի ձերում միջի . այլ որ կամիցի ի ձէնջ
44 մեծ լինել՝ եղիցի ձեր պաշտօնեայ . Եւ որ կամիցի
ի ձէնջ առաջին լինել՝ եղիցի ամենեցուն ծառայ ։
45 Քանզի և Որդի մարդոյ ոչ եկն առնուլ պաշտօն ,
այլ պաշտել և տալ զանձն իւր փրկանս փոխա-
նակ բազմաց ։

46 Եւ գան Երիքով . և ընդ ելանելն նորա Ե-
րիքովէ աշակերտաւքն և բազում ժողովրդով , որդի
Տիմէի Բարտիմէոս կոյր նստեր մուրացիկ յանցս
47 ճանապարհի ։ Իւրեւ լուաւ թէ Յիսուս Նազովրեցի
է , սկսաւ աղաղակել և ասել , Որդի Դաւթի Յի-
48 սուս , ողորմեաց ինձ ։ Եւ սաստէին նմա բազումք
զի լռեսցէ . և նա առաւել եւս աղաղակէր , Որդի
49 Դաւթի , ողորմեաց ինձ ։ Զատեղի առ Յիսուս և հրա-
մայեաց կոչել զնա . կոչեն զկոյրն և ասեն ցնա ,
50 Քաջալերեաց , արի , կոչէ զքեզ ։ Եւ նորա ընկե-
ցեալ զձորձս իւր , յարեաւ և եկն առ Յիսուս ։
51 Պատասխանի եւ նմա Յիսուս և ասէ , Զի՞նչ կա-

*Ի Ցոյն՝ նստիլն

միս թէ արարիչ քեզ. ասէ ցնա կոյրն ,
52 նի , ղի բացայց ։ Եւ Յիսուս ասէ ցնա , Երթ , հա-
ւատք քո կեցուցին զքեզ. և վաղվաղակի բացաւ ,
և երթայր ընդ *նորա ի ճանապարհին ։

ԳԼ. ԺԱ.

1 Եւ յորժամ մերձ եղեն Երուսաղէմ ի Բեթ-
փաքէ և ի Բեթանիա մօտ ի լեառն Ձիթենեաց ,
2 առաքէ երկուս յաշակերտաց անտի , եւ ասէ ցնո-
ա , Երթայք դուք ի գեօղդ որ ընդդէմ ձեր կայ .
և նոյն ժամայն իբրեւ մտանէք ի նա , գտանէք յա-
ւանակ մի կապեալ . յորոյ վերայ ոչ ոք ի մարդ-
3 կանէ նստաւ , լուծէք զնա և ածէք ։ Եւ եթէ ոք
ասացէ ձեզ Եթէ Ձի՞ լուծանէք զյաւանակդ ,
ասացէք եթէ Տեառն իւրում պիտոյ է . և վաղ-
4 վաղակի առաքեսցէ զնա այսր ։ Զոգան և գոլն
զյաւանակն կապեալ առ դուրս արտաքոյ ի փո-
5 ղոցի անդ , և լուծին զնա ։ Եւ ոմանք յորոց անդն
կային՝ ասեն ցնոսա , Ձի՞ գործէք , զի՞ լուծանէք
6 զյաւանակդ ։ Եւ նոքա ասեն ցնոսա որպէս ասացն
7 Յիսուս . և թոյլ տուեն նոցա ։ Ածեն զյաւանակն
առ Յիսուս , և արկանեն ի վերայ նորա հանդերձս , և
8 նստաւ ի վերայ նորա ։ Եւ բազումք զհանդերձս իւ-
րեանց տարածանէին ի վերայ ճանապարհին , և այլք
ոստս ի ծառոց հատանէին և արկանէին զճանա-
9 պարհսն ։ Եւ որ առաջին և զկնի երթային , ա-
10 ղաղակէին և ասէին , Ովսաննա †Բարձրելոյն . Օրհ-
նեալ որ գայդ յանուն Տեառն . Օրհնեալ թա-

* Ի Յոյն՝ Յիսուսի

† Ի Յոյն ՝ Ելից ։

գաւորութիւնդ եկեալ հօր մերոյ Դաւթի . * խա-
11 ղաղութիւն յերկինս և փառք՝՝ ի բարձունս ։ Եւ
եմուտ Յիսուս Երուսաղէմ ի տաճարն , և հայե-
ցաւ շուրջ զամենեսեան . և զի էր երեկոյացեալ
ժամն , էլ ի Բեթանիա երկոտասանիւքն հանդերձ ։
12 Եւ ի վաղիւ անդր մինչդեռ ելանէին ի Բեթա-
13 նիա , քաղցեաւ ։ Եւ հասեալ թզենի մի ի բացուստ
տերեւալից . և եկն թէ գտանիցէ ինչ ի նմա . և
իբրեւ եկն ի նա՝ ոչինչ եդիտ բայց միայն տերեւ ,
14 զի ոչ խնկ էր ժամանակ թզոյ ։ Պատասխանի եւ
ասէ ցնա , Մի եւս ոք յաւիտեան ի քէն պտուղ
15 կերիցէ . և լսէին աշակերտքն նորա ։ Գան Երու-
սաղէմ . և մտեալ ի տաճարն՝ սկսաւ հանել զվա-
ճառականսն և զդնողս որ էին ի տաճարին . և զսե-
ղանս հատուածճառացն շրուեաց , և զաթոռս ա-
16 ղաւնեվաճառացն կործանեաց . Եւ ոչ թողոյր եթէ
17 ոք անօթ ինչ անցուցանիցէ ընդ տաճարն ։ Եւ ու-
սուցանէր և ասէր ցնոսա , Գրեալ է , Տուն իմ
տուն աղօթից կոչեսցի ամենայն հեթանոսաց , և
18 դուք արարիք զդա այրս աւազակաց ։ Լուան քա-
հանայապետքն և դպիրք , և խնդրէին թէ ո՞րպէս
կորուսցեն զնա , բայց երկնչէին ի նմանէ . զի ամե-
նայն ժողովուրդն զարմացեալ էր ընդ ուսուցման նորա ։
19 Եւ իբրեւ երեկոյ լինէր՝ արտաքոյ քան զքաղաքն
20 ելանէին ։ Եւ մինչդեռ այգուցն առ նովաւ անցա-
21 նէին , տեսին զթզենին ցամաքեալ յարմատոց ։ Յի-
շեաց Պետրոս և ասէ ցնա , Ռաբբի , ահաւասիկ
22 թզենին զոր անիծեցեր՝ ցամաքեցաւ ։ Պատասխանի

* Ի Յոյն՝ Ովսաննա

*ետ Յիսուս և ասէ ցնոսա , *Եթէ ունիցիք ղՀա-
23 տատան Աստուծոյ ,՚՚ Ամէն ասեմ ձեզ , Որ զբ ասիցէ
լերինս այսմիկ , Բարձիր և անկիր ի ծով , և ոչ երկ-
մտիցէ ի սրտի իւրում , այլ հաւատայցէ թէ զոր
24 ասէն՝ լինի , եղիցի նմա զոր ինչ և ասիցէ ։ Վասն
այսորիկ ասեմ ձեզ , Զամենայն ինչ վասն որոյ ա-
ղօթս արարեալ խնդրիցէք , և հաւատայցէք թէ
25 առնուցուք , եղիցի ձեզ ։ Եւ յորժամ յաղօթս
կայցէք , թողուցուք եթէ ունիցիք ինչ զուժեքէ . զի
և Հայրն ձեր որ յերկինս է՝ թողցէ ձեզ զյանցանս
26 ձեր ։ Զի եթէ դուք ոչ թողուցուք , և ոչ Հայրն
ձեր որ յերկինս է՝ թողցէ ձեզ զյանցանս ձեր ։
27 Գան միւսանգամ Երուսաղէմ , և մինչդեռ ի
տաճարի անդ զընայր , գան առ նա քահանայա-
28 պետքն և դպիրք և ծերք ։ Եւ ասեն ցնա , Որո՞վ
իշխանութեամբ առնես զայդ , և ո՞վ ետ քեզ զիշ-
29 խանութիւնդ զայդ ։ Պատասխանի ետ Յիսուս և
ասէ ցնոսա , Հարցից և ես զձեզ բան մի , տուք
ինձ պատասխանի . և ես ասացից ձեզ որով իշխա-
30 նութեամբ առնեմ զայս ։ Մկրտութիւնն Յովհան-
նու յերկնի՞ց էր եթէ ի մարդկանէ , տուք ինձ
31 պատասխանի ։ Խորհէին ընդ միմեանս և ասէին ,
Եթէ ասեմք եթէ Յերկնից , ասէ ցմեզ , Իսկ ըն-
32 դէ՞ր ոչ հաւատայցէք նմա . Այլ եթէ ասեմք ի
մարդկանէ , երկնչիմք ի ժողովրդենէն , զի ամենե-
33 քեան զիտեին զՅովհաննէս թէ մարդարէ էր ։ Պա-
տասխանի ետուն և ասեն ցՅիսուս , Զգիտեմք ։ Եւ
Յիսուս ետ նոցա պատասխանի և ասէ , Եւ ոչ ես
ասեմ ձեզ , որով իշխանութեամբ առնեմ զայս ։

* Ի Յ՚՚՚՝ Ունիջի՛ք զՀաւատան Աստուծոյ .

ԳԼ· ԺԲ

1 Եւ սկսաւ խօսել ընդ նոսա առակօք և ասել ,
Այր մի անկեաց այգի և ած շուրջ զնովաւ ցանգ ,
և գուբ հնձան փորեաց և շինեաց աշտարակ , և
2 ետ զնա գիշակս և գնաց ի տար աշխարհ ։ Եւ ա-
ռաքեաց առ մշական ի ժամանակի ծառայ մի , զի
3 ի մշակաց առցէ ի պտղոյ այգւոյն ։ Եւ նո-
ցա կալեալ՝ դան հարին զնա և արձակեցին ունայն ։
4 Դարձեալ առաքեաց առ նոսա այլ ծառայ , և
զնա կառափնատեցին և արձակեցին անարգեալ ։
5 Եւ դարձեալ այլ առաքեաց , և զնա սպանին . և
զբազումս այլս՝ զոմանս հարկանէին և զոմանս սպա-
6 նանէին ։ Այլ որդի մի էր իւր սիրելի , զնա ա-
ռաքեաց առ նոսա յետոյ , և ասէ , Թերևս ամա-
7 չեացեն յորդւոյ տասի իմմէ ։ Իսկ մշակքն իւրեա-
նեանն զնա թէ դայ՝ ասեն ցմիմեանս , Սա է ժա-
ռանգն , եկայք սպանցուք զսա , և մեր լիցի ժա-
8 ռանգութիւնն ։ Եւ կալեալ զնա սպանին և հանին
9 արտաքոյ այգւոյն ։ Արդ զի՞նչ արասցէ տէր այ-
գւոյն . եկեսցէ և կորուսցէ զմշակսն , և տացէ զայ-
10 գին ի ձեռս այլոց ։ Եւ ո՞չ զգիրն զայն իցէ ըն-
թերցեալ ձեր , Թէ Զվէմն զոր անարգեցին շինողքն ,
11 Նա եղեւ գլուխ անկեան . Ի Տեառնէ եղեւ այս ,
12 և է սքանչելի յաչս մեր ։ Եւ խնդրէին զնա ունել ,
և երկեան ի ժողովրդենէ անտի , զի գիտացին թէ
առ նոսա ասաց զառակն . և թողին զնա և գնացին ,
13 Եւ առաքեն առ նա զոմանս ի փարիսեցւոց անտի
և ի Հերովդիանոսից , զի զնա որսացեն բանիւ ։

14 Եւ նոքա եկեալ հարցանէին զնա նենդութեամբ և
ասէին, Վարդապետ, գիտեմք զի ճշմարիտ ես,
և ոչինչ փոյթ ես քեզ ղումեքէ. զի ոչ հայիս ե-
րեսս մարդկան, այլ ճշմարտութեամբ զճանապար-
հըն Աստուծոյ ուսուցանես. արդ ասա մեզ, ար-
ժա՞ն է հարկ տալ կայսեր՝ թէ ոչ. տա՞ցուք եթէ
15 ոչ տացուք։ Եւ *Յիսուս գիտաց զկեղծաւորութիւն
նոցա, ասէ ցնոսա, Զի՞ փորձէք զիս, կեղծաւորք.
16 բերէք ինձ դահեկան մի զի տեսից։ Եւ նոքա բե-
րին. և ասէ ցնոսա, Ո՞ր է պատկերս այս կամ
17 գիր. և նոքա ասեն ցնա, կայսեր։ Պատասխանի
եւ Յիսուս և ասէ ցնոսա, *Երթայք, տուք ըզ-
կայսերն կայսեր, և զԱստուծոյն՝ Աստուծոյ. և
զարմացան ընդ նա։
18 Գան առ նա սադուկեցիքն որ ասեն թէ Զկեր-
19 ութիւն. հարցանէին ցնա և ասէին, Վարդա-
պետ, Մովսէս գրեաց մեզ եթէ ուրուք եղբայր մե-
ռանիցի և թողուցու կին՝ և որդի ոչ թողուցու.
զի առցէ եղբայր նորա զկին նորա, և յարուսցէ
20 զսաւակ եղբօր իւրում։ Արդ եղբարք եօթն էին *առ
մեզ. առաջինն առ կին և մեռաւ, և ոչ եթող
21 զսաւակ։ Եւ երկրորդն առ զնոյնն և մեռաւ, և ոչ
նա եթող զսաւակ. նոյնպէս և երրորդն առ զնոյն։
22 Եւ եօթնեքեան իսկ՝ և ոչ թողին զսաւակ, յետ ա-
23 մենեցուն մեռաւ և կինն։ Արդ ի յարութեանն
յորժամ յառնիցեն, ո՞յր ի նոցանէ լինիցի կինն.
24 զի եօթնեքեան կալան զնա կին։ Պատասխանի ետ
Յիսուս և ասէ ցնոսա, Ո՞չ վասն այդորիկ իսկ մո-

* Ի Յովհ. ՀԱ։

լորեալ էք. զի ոչ գիտէք զգիրս և ոչ զզօրութիւնն
25 Աստուծոյ։ Զի յորժամ ի մեռելոց յարիցեն, ոչ
արք կանայս առնեն, և ոչ կանայք արանց լինին,
26 այլ իբրեւ զհրեշտակս իցեն որ յերկինս են։ Այլ
վասն յարութեան մեռելոց զի յառնեն՝ ո՞չ իցէ
ընթերցեալ ձեր ի գիրսն Մովսիսի ի մորենւոջն,
որպէս ասաց ցնա Աստուած, Ես եմ, ասէ, Ա-
27 ստուած Աբրահամու, Աստուած Իսահակայ և Աս-
տուած Յակովբայ։ Եւ ոչ է Աստուած մեռելոց՝
այլ կենդանեաց. և արդ դուք յոյժ մոլորեալ
28 էք։ Եւ մատուցեալ մի ոմն ի դպրացն՝ լսէր նոցա
մինչ վիճեին. իբրեւ ետես եթէ բարւոք ետ նո-
ցա զպատասխանին, եհարց ցնա և ասէ, Ո՞ր պա-
29 տուիրան է առաջին։ Եւ Յիսուս ասէ ցնա, Ա-
ռաջին քան զամենայն՝ Լուր, Իսրայէլ, Տէր Ա-
30 ստուած մեր Տէր մի է. Եւ սիրեսցես զՏէր Աստուած
քո յամենայն սրտէ քումմէ, և յամենայն անձնէ
քումմէ, և յամենայն մտաց քոց, և յամենայն
զօրութենէ քումմէ. այս է առաջին պատուիրան։
31 Եւ երկրորդն նման սմին, սիրեսցես զընկեր քո իբ-
րեւ զանձն քո. մեծ քան զսոսա այլ պատուիրան
32 ոչ գոյ։ Եւ ասէ ցնա դպիրն, Բարւոք է, վար-
դապետ, ճշմարտութեամբ ասացեր թէ մի է Ա-
33 ստուած, և ոչ գոյ այլ բաց ի նմանէ։ Եւ սիրելն
զնա յամենայն սրտէ և յամենայն զօրութենէ և
յամենայն մտաց, և սիրելն զընկերն իբրեւ զանձն,
34 առաւել է քան զողջակէզս և զզոհս։ Եւ տեսեալ
Յիսուսի թէ իմաստութեամբ ետ զպատասխանին՝
ասէ ցնա, Ոչս հեռի յարքայութենէ Աստուծոյ.
և ոչ եւս ոք իշխեր ինչ հարցանել զնա։

35 Պատասխանի ետ Յիսուս և ասէ, մինչ ուսու-
ցանէր ի տաճարին, Զի՞նչ ասեն դպիրքն եթէ
36 Քրիստոսն որդի Դաւթի է։ Եւ ինքն Դաւիթ Հո-
գւովն Սրբով ասէ, Ասաց Տէր ցՏէր իմ, Նիստ ընդ
աջմէ իմմէ՝ մինչեւ եդից զթշնամիս քո պատուան-
37 դան ոտից քոց։ Արդ եթէ ինքն իսկ Դաւիթ զնա
Տէր կոչէ, զի՞նչ որդի նորա է. և բազում ժո-
38 ղովուրդ լսէր նմա քաղցրութեամբ։ Եւ ասէր ու-
սուցանելով ի վարդապետութեան իւրում, Զգույշ
լերուք ի գպրաց անտի, որ կամին ի հանդերձս
երեւելիս շրջիլ, զնախադասութիւնս խնդրել ի հրապա-
39 րակս, Եւ զնախաթոռս ի ժողովուրդս, և զպա-
40 հպանեալս յընթրիս։ Որ ուտեն զտունս այրեաց,
պատճառանաւք յերկարեալ ազօթս, զի աւելի եւս
41 դատաստանս ընկալցին։ Կայր Յիսուս ընդդէմ գան-
ձանակին, տեսանէր թէ զի՞նչ ժողովուրդն ար-
կանէր պղինձ ի գանձանակն. և բազում մեծա-
42 տունք արկին բազում ինչ։ Եկն այրի մի և արկ
43 երկուս լումայս, որ է նաբարակիտ մի։ Եւ կոչե-
ցեալ աւետ ինքն զաշակերտան իւր՝ ասէ ցնոսա, Ամէն
ասեմ ձեզ, զի այրին այն առատապեալ շատ արկ
44 քան զամենեսեան՝ որ արկին ի գանձանակն։ Քան-
զի ամենեքին յաւելորդաց իւրեանց արկին, այլ
նա ի չքաւորութենէ իւրմէ՝ զամենայն ինչ զոր ու-
նէր արկ զոյիւ չափ զկեանս իւր։

Գլ. ԻԳ

1 Եւ յիշանէն նորա ի տաճարէ անտի, ասէ ցնա
մի յաշակերտաց նորա, Վարդապետ, տես որպի-

2 սի են քարինքս, և որպիսի շինուածք։ Պատաս-
խանի ետ նմա Յիսուս և ասէ, Տեսանե՞ս զայդ ա-
մենայն շինուածս, ամէն ասեմ ձեզ եթէ ոչ թող-
ցի այդր քար ի քարի վերայ որ ոչ քակտեսցի։
3 Եւ մինչ նստէր նա ի լերինն Ձիթենեաց յանդի-
ման տաճարին, հարցանէին զնա առանձինն Պետրոս
4 և Յակովբոս և Յովհաննէս և Անդրէաս։ Ասա մեզ
ե՞րբ լինիցի այդ, և զի՞նչ նշան է՝ յորժամ կա-
5 տարելոց իցէ այդ ամենայն։ Պատասխանի ետ Յի-
սուս և ասէ ցնոսա, Զգույշ կացէք, մի ոք զձեզ
6 խաբեսցէ։ Զի բազումք եկեսցեն յանուն իմ, և ա-
սիցեն թէ Ես եմ Քրիստոս, և զբազումս մոլորե-
7 ցուսցեն։ Այլ յորժամ լսիցէք պատերազմունս և
համբաւս պատերազմաց՝ մի խռովիցիք, զի պարտ է
8 լինել, բայց չէ՛ կատարածն։ Զի յարիցէ ազգ
յազգի՛ վերայ, և թագաւորութիւն ի թագաւորու-
թեան վերայ, և եղիցին շարժմունք ի տեղիս տեղիս,
սովք և սրածոութիւնք և խռովութիւնք. այլ այն ա-
9 մենայն սկիզբն է երկանց։ Եւ զձեզ իսկ մատնեսցեն
յատեանս, և ի ժողովուրդս տանջիցիք, և առա-
ջի դատաւորաց և թագաւորաց կայցէք վասն
10 իմ՝ ի վկայութիւն նոցա, Եւ ամենայն ՀԷթանո-
սաց*. բայց՝՝ նախ պարտ է աւետարանիս քարոզել։
11 Այլ յորժամ տանիցին զձեզ մատնել մի՛ յառա-
ջագոյն հոգայցէք, և մի՛ զմտաւածիցէք թէ զի՞նչ
խօսիցիք. այլ որ ինչ տացի ձեզ ի ժամուն յայնմիկ՝
զայն խօսիցիք. զի ոչ դուք էք որ խօսիցիքն, այլ
12 Հոգին Սուրբ։ Մատնեսցէ եղբայր զեղբայր ի մահ՝

* Ի ցԱՒՒ ՎԻ։

և հայր ղրդի . և յարիցեն որդիք ի վերայ հարց
13 և սպանանիցեն զնոսա ։ Եւ եղիջիք ատելեալք յա-
մենեցուանց վասն անուան իմոյ , այլ որ համբերեա-
14 ցեն ի սպառ՝ նա կեցցէ ։ Եւ յորժամ տեսանիցէք
զպղծութիւնն աւերածին , զի կայցէ ի տեղւոջ ուր
չիցէ արժան . որ ընթեռնուն ի միտ առցէ ։ Յայն-
ժամ որ ի Հրէաստանի իցեն՝ փախիցեն ի լերինս .
15 Եւ որ ի վերայ տանեացն իցէ՝ մի՛ իջցէ ի տուն ,
16 և մի՛ մտցէ բառնալ ինչ ի տանէ իւրմէ . Եւ որ
յագարակին իցէ՝ մի՛ դարձցի յետս առնուլ զձոր-
17 ձըս իւր ։ Բայց վայ իցէ յղեաց և տնտուաց յա-
18 ւուրսն յայնոսիկ ։ Յաղօթս կացէք զի մի՛ ձմերանի
19 լինիցի այն ։ Եղիցին աւուրքն այնքիկ նեղութեանց,
որպիսի ոչ եղեն երբէք այնպիսիք ի սկզբանէ ա-
20 րարածոց մինչեւ ցայժմ , և մի՛ այլ լիցի ։ Եւ ե-
թէ ոչ էր կարճեալ Աստուածն զաւուրսն յայնոսիկ
վասն ընտրելոց իւրոց , ոչ ապրէր ամենայն մար-
մին . այլ վասն ընտրելոցն զորս ընտրեաց՝ կարճեաց
21 զաւուրսն յայնոսիկ ։ Յայնժամ եթէ ոք ասիցէ ձեզ
եթէ Ահաւասիկ է Քրիստոս՝ կամ աւանիկ , մի՛
22 հաւատայցէք ։ Զի յարիցեն սուտ քրիստոսք և
սուտ մարգարէք , և տացեն նշանս և արուեստս
առ ի մոլորեցուցանելոյ՝ եթէ հնար ինչ իցէ՝ և զընտ-
23 րեալսն ։ Բայց դուք զգոյշ լերուք , ահաւասիկ
24 յառաջագոյն ասացի ձեզ զամենայն ։ Այլ յա-
ւուրսն յայնոսիկ յետ նեղութեանն այնորիկ արե-
գակն խաւարեսցի , և լուսին ոչ տացէ զլոյս իւր ։
25 Եւ աստեղք յերկնից թօթափեսցին, և զօրութիւնք
26 յերկինս շարժեսցին ։ Եւ յայնժամ տեսցեն զՈրդի
մարդոյ եկեալ ամպովք զօրութեամբ և փառաւք

27 բազմօք։ Եւ յայնժամ առաքեսցէ զհրեշտակս իւր ,
և ժողովեսցէ զընտրեալս իւր ի չորից հողմոյ՝ ի ծա-
28 գոյ երկրի մինչեւ ի ծագս երկնից ։ Բայց դուք
ի թզենւոյ առեք առակն , յորժամ տակաւ
ոստքն նորա կակղանայցեն և տերեւս արձակիցէ ի
29 նմա , գիտէք թէ մերձ է ամառն . Նոյնպէս և դուք
յորժամ տեսանիցէք զայս ամենայն եղեալ , գի-
30 տասջիք թէ մերձ է առ դուրս ։ Ամէն ասեմ ձեզ
թէ ոչ անցցէ ազգս այս , մինչեւ այս ամենայն ե-
31 ղիցի ։ Երկինք և երկիր անցցեն , և բանք իմ ոչ ան-
32 ցանիցեն ։ Այլ վասն աւուրն այնորիկ և ժամուս ոչ
ոք գիտէ , ոչ հրեշտակք յերկինս և ոչ Որդի ,
33 բայց միայն Հայր ։ Զգոյշ եղերուք , սկեցէք և կա-
ցէք յաղօթս , զի ոչ գիտէք երբ ժամանակն իցէ ։
34 Որպէս այր մի գնացեալ ի տար աշխարհ՝ թողու-
ցու զտուն իւր , և տայցէ ծառայից իւրոց իշխա-
նութիւն , և իւրաքանչիւր զգործս իւր , և դռնա-
35 պանին պատուիրէ տայցէ , զի արթուն լինիցի ։ Արդ
արթուն կացէք , զի ոչ գիտէք երբ տէր տանն
գայցէ , յերեկորեայ , եթէ ի մէջ գիշերի , եթէ
36 ի հաւախօսի , եթէ ընդ առաւօտս ։ Գուցէ եկեալ
37 յանկարծակի՝ գտանիցէ զձեզ ի քուն ։ Բայց զոր
ձեզդ ասեմ , ամենեցուն ասեմ , Արթուն կացէք ։

ԳԼ. ԺԴ

1 Եւ էր զատիկն և բաղարջակերք յետ երկուց ա-
ւուրց , խնդրէին քահանայապետքն և դպիրք եթէ
2 զիա՛րդ զնա նենդաւ կալեալ սպանանիցեն ։ Բայց
ասէին թէ Մի՛ ի տօնի աստ , զի մի՛ խռովութիւն

3 լինիցի ՚ի ժողովրդեանն : Եւ մինչ էր ՚ի Բեթանիա
՚ի տան Սիմոնի բորոտի բազմեալ , եկն կին մի որ
ունէր շիշ իւղոյ նարդեան սպնուխ մեծագնոյ , և
4 բեկեալ զշիշն՝ եհեղ ՚ի վերայ գլխոյ նորա : Եւ ա-
շակերտքն զչարեցին և ասէին , Ընդէ՞ր եղեւ կո-
5 րուստ իւղոյդ այդորիկ · Մարթ էր զայդ իւղ վա-
ճառեալ աւելի քան երեք հարիւր դահեկանի , և
6 տալ աղքատաց · և զայրանային նմա յայժ : Եւ
Յիսուս ասէ ցնոսա , Թոյլ տուք դմա , զի՞ աչխատ
7 առնէք , զի գործ մի բարի գործեաց դա ՚ի իս : Զա-
մենայն ժամ զաղքատս ընդ ձեզ ունիք , և յոր-
ժամ կամիք՝ կարող էք առնել նոցա բարիս .
8 այլ զիս ոչ ՚ի ժամենայն ժամ ընդ ձեզ ունիք : Դա
զոր ունէրդ՝ արար . յառաջագոյն խնկեաց զմար-
9 մին իմ ՚ի նշան պատանաց : Ամէն ասեմ ձեզ , ուր
և քարոզեսցի աւետարանս այս ընդ ամենայն աշ-
խարհ , և զոր արար դա՝ խօսեսցի վասն յիշատա-
10 կի դորին : Եւ Յուդա Սկարիովտացի մի յերկոտա-
սանից անտի՝ գնաց առ քահանայապետսն զի մատ-
11 նեսցէ զնա նոցա : Նոքա իբրեւ լուան՝ խնդացին ,
և խոստացան տալ նմա արծաթ . և խնդրէր թէ
զի՞նդ պարապով մատնեսցէ զնա :
12 Եւ յառաջնում աւուր բաղարջակերացն յոր-
ժամ զաղաւիկն զենուին , ասեն ցնա աշակերտքն ,
Ո՞ւր կամիս , երթիցուք պատրաստեսցուք զի կե-
13 րիցես զաղաւիկն : Եւ առաքէ երկուս յաշակերտաց
անտի և ասէ ցնոսա , երթայք ՚ի քաղաք , և իբ-
րեւ մտանիցէք ՚ի քաղաքն՝ պատահեսցէ ձեզ այր
մի որ սափոր ջրոյ յուսս ունիցի , երթայք զհետ նո-
14 ա : Եւ յոր տունն մտանիցէ , ասասջիք ցտանուս-

տէրն , Վարդապետ ասէ , Ո՞ւր են իջեւանքն ,
15 ուր աշակերտօքս ուտիցեմ զզատիկն : Եւ նա ցուց-
ցէ ձեզ վերնատունն մի մեծ զարդարեալ , անդ
16 պատրաստեսջիք մեզ : Եւ գնացին պատրաստել ա-
շակերտքն նորա . եկն ՚ի քաղաքն և գտին որպէս
17 ասացն նոցա , և պատրաստեցին զզատիկն : Եւ իր-
բեւ երեկոյ եղեւ՝ գայ երկոտասանիւքն հանդերձ :
18 Եւ իբրեւ բազմեցան և դեռ ուտէին , ասէ Յիսուս ,
Ամէն ասեմ ձեզ զի մի ոմն ՚ի ձէնջ մատնելոց է զիս ,
19 որ ուտէ իսկ ընդ իս : Եւ նոքա սկսան տրտմել և
ասել մի ըստ միոջէ , Միթէ ե՞ս իցեմ , և միւսն՝ Մի-
20 թէ ե՞ս իցեմ : Նա պատասխանի ետ և ասէ ցնոսա ,
Մի յերկոտասանից այսր , որ մխեաց ընդ իս ՚ի սկա-
21 ւառակդ : Ամէն որդի մարդոյ երթայ որպէս և գրեալ
է վասն նորա , բայց վայ իցէ մարդոյն այնմիկ՝ որով
ձեռս որդի մարդոյ մատնեսցի . լաւ էր նմա թէ չէր
22 իսկ ծնեալ մարդն այն : Եւ մինչդեռ ուտէին , առեալ
Յիսուսի հաց՝ օրհնեաց և եբեկ , ետ նոցա և ասէ ,
23 Առէք , այդ է մարմին իմ : Եւ առեալ բաժակ՝ գո-
հացաւ և ետ նոցա , և արբին ՚ի նմանէ ամենե-
24 քեան : Եւ ասէ ցնոսա , Ա՛յս է արիւն իմ նորոյ
25 ուխտի , որ վասնակ բազմաց հեղանի : Ամէն ա-
սեմ ձեզ թէ Ոչ ես յաւելից ըմպել ՚ի բերոյ որ-
թոյ մինչեւ ցօրն յայն՝ յորժամ արբիցէ զնա նոր
26 յարքայութեան Աստուծոյ : Եւ գոհացեալ ելին
՚ի լեառն Ձիթենեաց :
27 Եւ ասէ ցնոսա Յիսուս , Ամենեքեան գայթակղե-
լոց էք յինէն յայսմ գիշերի . զի գրեալ է թէ
28 Հարից զհովիւն՝ և ոչխարքն ցրուեսցին : Այլ յետ
յարուԹեան իմոյ յառաջագոյն երթայց քան զը-

29 ձեզ՝ ի Գալիլեա՝ պատասխանի ետ Պետրոս և ա-
սէ ցնա, Թէպէտ և ամենեքեան դայթակղեսցին,
30 այլ ես ոչ։ Եւ ասէ ցնա Յիսուս, Ամէն ասեմ
քեզ թէ դու իսկ յայսմ գիշերի մինչչեւ հաւու
31 խօսեալ երիցս *ուրասցիս զիս։ Իսկ Պետրոս
առաւել եւս սիդէր և ասէր, Եթէ մեռանել եւս
հասանիցէ ընդ քեզ՝ զքեզ ոչ ուրասցայց. Նոյնպէս
32 և ամենեքեան ասէին։ Գան ի դեղն՝ որում ա-
նուն էր Գեթսեմանի, և ասէ ցաշակերտան, Նըս-
33 տարուք աստ՝ մինչեւ ես յաղօթս կացից։ Եւ առ-
նու ընդ իւր զՊետրոս և զՅակովբոս և զՅովհաննէս,
34 և սկսաւ տրտղալ և հոգալ։ Յայնժամ ասէ ցնոսա,
Տրտում է անձն իմ մինչեւ ի մահ, մնացէք աստ
35 և արթուն կացէք։ Եւ մատուցեալ սակաւիկ մի
յառաջ, անկաւ ի վերայ երկասց իւրոց յերկիր.
և կայր յաղօթս, զի եթէ հնար ինչ է, անցցէ ի
36 նմանէ ժամն։ Եւ ասէ, Աբբա Հայր, ամենայն
ինչ քեզ հնարաւոր է, անցո զբաժակս զայս ի-
նձնէն. բայց ոչ որպէս ես կամիմ, այլ որպէս դու
37 կամիս։ Եւ գայ գտանէ զնոսա զի ննջեին, և ասէ
ցՊետրոս, Սիմոն, ննջե՞ս. ո՞չ կարացեր ժամ մի
38 արթուն կալ։ Արթուն կացէք և յաղօթս կացէք,
զի մի՛ մտջիք ի փորձութիւն, †ոգին յօժար է,
39 բայց մարմինն տկար։" Եւ դարձեալ չոգաւ երկաց
40 յաղօթս, և զնոյն բանս ասաց։ Դարձաւ միւսանգամ
անդրէն և եգիտ զնոսա ի քուն. քանզի էին աչք
նոցա ծանրացեալ, և ոչ գիտէին թէ զինչ պա-

* Ի Յոյնն՝ երկիցս

† Ի Յոյնն՝ Հոգին յօժար է, բայց մարմինն տկար։

41 տասխանի տայցէն նմա։ Գայ երրորդ անգամ և
ասէ ցնոսա, Ննջեցէք այսուհետեւ և հանգերուք,
զի հասեալ է վախճան. եկն ժամ և ահա մատնի
42 Որդի մարդոյ ի ձեռս մեղաւորաց։ Ոտն արիք, գը-
նասցուք, զի ահաւասիկ մերձեցաւ որ մատնելոցն
43 է զիս։ Եւ մինչդեռ նա զայն խօսէր՝ գայ Յուդա
Սկարիովթացի, մի յերկոտասանից անտի, և ընդ
նմա ամբոխ սուսերօք և բրօք՝ ի քահանայապե-
44 տէն և ի դպրաց և ի ծերոց։ Տուեալ էր նշան
մատնչին և ասէր, Ընդ որում ես համբուրեցից՝
45 նա է. կալջիք զնա և տարջիք զգուշութեամբ։ Եւ
մատուցեալ վաղվաղակի՝ ասէ ցնա, Ռաբբի, Ռաբ-
46 բի, և համբուրեաց զնա։ Եւ նոքա արկին ի նա
47 ձեռս՝ և կալան զնա։ Եւ մի ոմն յայնցանէ որ ըզ-
նովաւն կային՝ հգեալ սուր, և հարեալ զծառայ քա-
48 հանայապետին, և ի բաց եհան զականջն նորա։ Պա-
տասխանի ետ Յիսուս և ասէ ցնոսա, Իբրեւ ի վե-
րայ աւազակի ելէք սուսերօք և բրօք ունել զիս։
49 Հանապազ առ ձեզ էի և ուսուցանէի ի տաճա-
րին, և ոչ կալայք զիս. այլ զի լցցին գիրքն մար-
50 գարէիցն։ Յայնժամ թողին զնա աշակերտքն ամենե-
51 քեան և փախեան։ Եւ ոմն երիտասարդ զկեա եր-
թայր նորա՝ արկեալ զնեբեւ կտաւ մի ի մերկութ-
52 ունէին զնա երիտասարդքն։ Եւ նորա թողեալ զըզ-
53 կտաւն՝ փախեաւ մերկ ի նոցանէ։ Եւ տարան զը-
Յիսուս առ քահանայապետն Կայիափա, և գայն
ընդ նմա ամենայն քահանայապետքն և գպիրքն և
54 ծերքն։ Եւ Պետրոս երթայր ի հեռուստանէ զկեա
նորա մինչեւ ի նեբբս իսկ ի գաւիթն քահանայա-
պետին, և նստեր ընդ սպասաւորսն և ջեռնոյր առ

55 լուսոյին ։ Իսկ քահանայապետքն և ամենայն ա-
տեանն խնդրէին հակառակ Յիսուսի վկայութիւն
56 ինչ, զի սպանանիցեն զնա, և ոչ գտանէին. Զի բա-
զումք սուտ վկայութիւն վկայէին զնմանէ, և նման
57 միմեանց ոչ էին վկայութիւնքն։ Ա.յլք յարուցեալ
58 վկայէին սուտ զնմանէ և ասէին, Թէ մեք լուաք
'ի դմանէ զի ասէր, Ես քակեցից զտաճարդ զայդ
ձեռագործ, և զերիս աւուրս շինեցից այլ առանց
59 ձեռագործի ։ Սակայն և այնպէս չէր նման վկա-
60 յութիւնն նոցա ։ Ապա յարուցեալ քահանայա-
պետն 'ի մէջ հարցանէր զՅիսուս և ասէր, Ոչի՞նչ
61 առս պատասխանի, զինչ դոքա զքէն վկայեն ։ Եւ
նա լուեա և եթ կայր և չառայր ինչ պատասխանի ։
Դարձեալ քահանայապետն հարցանէր զնա կրկին
անգամ և ասէր, Դո՞ւ ես Քրիստոս Որդի *Աստու-
62 ծոյ օրհնելոյն ։ †Պատասխանի ետ Յիսուս և ասէ
ցնա, Դու ասացեր թէ՝՝ ես եմ. բայց տեսանիցէք
զՈրդի մարդոյ նստեալ ընդ աջմէ Զօրութեանն, և
63 եկեալ ընդ ամպս երկնից ։ Եւ քահանայապետն
պատառեաց վաղվաղակի զպատմուճանս իւր և ա-
64 սէ, Զի՞նչ եւս պիտոյ են մեզ վկայք։ Ահա լուայք
ամենեքին զհայհոյութիւնն 'ի բերանոյ դորա, զին-
ա՞րդ Թուի ձեզ. և ամենեքեան դատապարտեցին
65 զնա թէ մահապարտ է ։ Եւ ոմանք սկսան թքա-
նել ընդ երեսս նորա, ձորձ զդլխով արկանել, կըռ-
փել և ասել, Մարգարէացդ մեզ, Քրիստոս, ո՞վ է
այն որ եհարր զքեզ. և սպասաւորքն ապտակս
66 հանէին նմա ։ Եւ Պետրոս մինչդեռ էր 'ի խնարհ

* Ի Յայն էր։ † Ի Յայն՝՝ Եւ Յիսուս ասէ,

'ի գաւթին, գայ աղախին մի քահանայապետին,
և տեսանէ զնա զի ջերմնայր. հայեցաւ ընդ նա և
67 ասէ, Եւ դու ընդ Յիսուսի Նազովրեցւոյ էիր ։
68 Նա ուրացաւ և ասէ, Ոչ ճանաչեմ և ոչ գիտեմ
զինչ դուդ ասես, և իբրեւ ել յարտաքին գաւթն,
69 թռչնոյ, և հաւ խօսեցաւ ։ Դարձեալ տեսես զնա ա-
ղախինն, և սկսաւ ասել ցայնոսիկ որ շուրջն կա-
70 յին Թէ եւ սա 'ի նոցանէ է ։ Եւ նա դարձեալ
ուրացաւ, և յետ սակաւ միոյ դարձեալ որ շուրջն
կային՝ ասեն ցՊետրոս, Արդարեւ և դու 'ի նոցա-
նէ ես, քանզի Գալիլեացի ես, և խօսքդ իսկ քո
71 նման են ։ Եւ նա սկսաւ նզովել, երդնուլ և ասել
72 Թէ Ոչ գիտեմ զայրն՝ զորմէ դուք ասէք ։ Եւ նոյն
ժամայն կրկին հաւ խօսեցաւ. և յիշեաց Պետրոս
զբանն՝ զոր ասաց ցնա Յիսուս Թէ Զեւ իցէ հաւս
երիցս խօսեալ, զի դու երիցս ուրացիս զիս, և
սկսաւ լալ։

ԳԼ. ԺԵ

1 Եւ վաղվաղակի ընդ առաւօտն խորհուրդ արա-
րեալ քահանայապետիցն հանդերձ ծերովքն և դպը-
րօք և ամենայն տեառնն, կապեցին զՅիսուս և
2 տարան, մատնեցին Պիղատոսի ։ Եհարց զնա Պիղա-
տոս և ասէ, Դո՞ւ ես Թագաւորն Հրէից. Նա պա-
3 տասխանի ետ նմա և ասէ, Դու ասես ։ Եւ չարա-
խօսէին զնմանէ յոյժ քահանայապետքն, և նա ո-
4 չինչ տայր պատասխանի ։ Իսկ Պիղատոս դարձեալ
հարցանէր զնա, Ոչի՞նչ տաս պատասխանի, տես
5 քանի ամբաստանեն զքէն ։ Եւ Յիսուս այնուհետեւ

ոչինչ ետ պատասխանի , մինչեւ զարմանալ յոյժ
6 Պիղատոսի : Բայց ըստ սոնի արձակէր նոցա զմի ոք
7 զկապեալ , զոր ինքեանք խնդրէին : Եւ էր որում՝
անուն էր Բարաբբա՝ կապեալ ընդ խռովիչսն , ո-
8 րոց ի խռովելն՝ այր մի սպանեալ էր : Ի ձայն բարձր
սկսաւ աղաղակել ամբոխն և խնդրել՝ որպես սովոր
9 էր , զի արձակեսցէ նոցա զԲարաբբասն : Պատաս-
խանի ետ Պիղատոս և ասէ ցնոսա , Կամի՞ք զի ար-
10 ձակեցից ձեզ զարքայն Հրէից : Գիտէր զի խնդր թէ
առ նախանձու մատնեցին զնա քահանայապետքն :
11 Որք և զամբոխն հաւանեցուցին , զի արձակեսցէ
12 նոցա զԲարաբբայն : Դարձեալ պատասխանի ետ
Պիղատոս և ասէ ցնոսա , Իսկ զի՞նչ կամիք թէ ա-
13 րարից զարքայն Հրէից : Եւ նորա դարձեալ աղա-
ղակէին , յօղելոյք ի քահանայապետէն , ի խաչ
14 հան զդա : Ասէ ցնոսա Պիղատոս , Զի՞նչ չինչ չար
արարեալ իցէ դորա . և նորա առաւել եւս աղա-
15 ղակէին և ասէին , ի խաչ հան զդա : Իսկ Պիղա-
տոս իբրեւ զմիտս կամեցաւ հաճել զամբոխն , ար-
ձակեաց նոցա զԲարաբբայն , և զՅիսուս ետ հա-
16 րեալ ետ ի ձեռս , զի ի խաչ ելանիցէ : Եւ զի-
նուորքն տարան զնա ի ներքս ի գաւիթն՝ ուր հր-
բապարակն էր . և կոչեն զամենայն զգունդն , Եւ զգեցուցանեն նմա քղամիդ կարմիր
17 և ծիրանիս , և եդին ի գլուխ նորա պսակ արա-
18 րեալ ի փշոց : Եւ սկսան ողջոյն տալ նմա և ա-
19 սէլ , Ողջ էր , արքայդ Հրէից : Եւ ծեծէին զգլու-
խն եղեգամբ , և թքանէին ընդ երեսս , և ի ծունր
20 իջեալ երկիրպագանէին նմա : Եւ իբրեւ կատակե-
ցին զնա , մերկացուցին զքղամիդն և զծիրանիս և

զգեցուցին նմա զիւր հանդերձն , և ածին արտաքս
21 զի ի խաչ հանցեն զնա : Եւ ունէին պահակ զՍի-
մոն Կիւրենացի , որ ընդ այն անցանէր՝ եկեալ յա-
գարակէ , զՀայրն Ալէքսանդրի և Ռուփոյ . զի
22 բարձցէ զխաչափայտն նորա : Եւ ածեն զնա ի Գող-
գոթա տեղի մի՝ որ Թարգմանի տեղի կառափելոյ :
23 Եւ տային նմա գինի զմռսեալ , և նա ոչ առ . և
24 հանեն զնա ի խաչ : Եւ բաժանեցին զհանդերձս
նորա , արկեալ վիճակս ի վերայ թէ ո զինչ առ-
25 նուցու : Էր ժամ երրորդ և հանեն զնա ի խաչ ,
26 Եւ էր գիր վնասուց նորա գրեալ թէ Թագաւոր է
27 Հրէից : Եւ ընդ նմա հանեն ի խաչ երկուս աւա-
28 զակս , մի ընդ աջմէ և մի ընդ ահեկէ նորա : Եւ
լցաւ գիրն որ ասէ թէ ընդ անօրէնս համարեցաւ :
29 Եւ որք անցանէին՝ հայհոյէին զնա շարժեալ զգլուխ
խս իւրեանց և ասէին , Վա՜հ , որ քակէիր զաս-
30 ճարն և վերիս աւուրս շինէիր . Ապրեցո զանձն քո
31 և էջ ի խաչէդ : Նոյնպէս և քահանայապետից
այն արարեալ ընդ միմեանս հանդերձ գպրօքն՝ ա-
սէին , Զայլս ապրեցոյց , զանձն ոչ կարէ ապրեցու-
32 ցանել : Քրիստոս , արքայդ Իսրայելի իջցէ այժմ
ի խաչէ այսր , զի տեսցուք և հաւատասցուք դմա .
և որ ընդ նմա ի խաչն էլեալ էին՝ նախատէին զնա :
33 Եւ իբրեւ վեց ժամ եղեւ , խաւար կալաւ զամե-
34 նայն երկիր մինչեւ ցիններ ժամ : Եւ ի իններ ժամն
ժամուն աղաղակեաց Յիսուս ի ձայն մեծ և ասէ ,
Էլի , Էլի , լամա՞ սաբաքթանի . որ Թարգմանի ,
Աստուած իմ , Աստուած իմ , ընդէ՞ր թողեր զիս :
35 Եւ ոմանք ի նոցանէ որ շուրջն կային զնովաւ , իբ-
36 րեւ լուան՝ ասէին թէ զեղիա կարդայ : Եւ ընթա-

ցեալ մի ոմն՝ ելից սպունդ մի քացախով, և հա-
բեալ յեղեգան՝ տայր ըմպել նմա, և ասէ, Թոյլ
37 տուր տեսցուք՝ գո՞յ եղիա իջուցանել զդա։ Եւ
38 Յիսուս արձակեաց ձայն մեծ և եհան զոգի։ Եւ
վարագոյր տաճարին պատառեցաւ յերկուս ի վե-
39 րուստ մինչեւ ի խոնարհ։ Եւ տեսեալ հարիւրա-
պետին որ կայր անդ եթէ աղաղակեաց և եհան զո-
գի, ասէ, Արդարեւ այրս այս Որդի Աստուծոյ էր։
40 Էին և կանայք որ հայէին ի հեռաստանէ, յորս
էր Մարիամ Մադդաղենացի և Մարիամ Յակով-
41 բու փոքրկան և Յովսեայ մայրն և Սողովմէ. Որք
յորժամ էին ի Գալիլեա՝ զկնի շրջէին նորա և
պաշտէին զնա. և այլ բազում կանայք որ ընդ
նմա իսկ ելեալ էին յԵրուսաղէմ։

42 Եւ իբրեւ երեկոյ եղեւ, քանզի ուրբաթ էր որ
43 ի շաբաթին մնասնէր, Եկեալ Յովսէփ որ յԱրիմա-
թեայն էր՝ այր պարկեշտ նախարար, որ և ինքն
իսկ անկն ուներ արքայութեանն Աստուծոյ, հա-
մարձակեցաւ եմուտ առ Պիղատոս, և խնդրեաց
44 զմարմինն Յիսուսի։ Եւ Պիղատոս զարմացաւ թէ
այնչափ վաղ մեռաւ. և կոչեցեալ առ ինքն զՀա-
բիւրապետն, եհարց զնա և ասէ թէ Արդարեւ
45 այնչափ վա՞ղ մեռաւ։ Եւ իբրեւ ստուգեաց ի հա-
բիւրապետէ անտի, շնորհեաց զմարմինն Յովսէփայ։
46 Եւ Յովսէփ գնեաց կտաւ, և իջուցեալ զնա՝ պա-
տեաց կտաւովն և եդ ի գերեզմանի, զոր էր փո-
րեալ ի վիմէ. և թաւալեցոյց վէմ մի ի դուռն
47 գերեզմանին։ Իսկ Մարիամ Մադդաղենացի և
Մարիամ Յակովբայ և Յովսեայ տեսին զտեղին ուր
եդաւ։

ԳԼ. ԺԶ

1 Եւ իբրեւ անց շաբաթն, Մարիամ Մադդաղե-
նացի և Մարիամ Յակովբայ և Սողովմէ չոգան
. պատրաստեցին խունկս, զի եկեսցեն օծցեն զնա։
2 Եւ ընդ առաւօտս միաշաբաթուն գան ի գերեզ-
3 մանն ընդ արեւագալն։ Եւ ասէին ցմիմեանս, Ո՞վ
թաւալեցուսցէ մեզ զվէմն ի դրաց գերեզմանին։
4 Եւ հայեցեալ տեսին՝ զի թաւալեցուցեալ էր զը-
5 վէմն ի գերեզմանէն. քանզի էր մեծ յոյժ։ Եւ
մտեալ ի ներքս ի գերեզմանն՝ տեսին երիտասարդ-
մի զի նստէր ընդ աջմէ կողմանէ՝ զգեցեալ պատ-
6 մուճճան սպիտակ, և զարհուրեցան։ Եւ նա ասէ
ցնոսա, Մի երկնչիք. զՅիսուս խնդրէք զնազովրե-
ցի զխաչելեալն, յարեաւ, չէ աստ. ահաւադիկ
7 տեղին ուր եդին զնա։ Այլ երթայք, ասացէք
ցաշակերտս նորա և ցՊետրոս, եթէ ահա յառա-
ջագոյն երթայ քան զձեզ ի Գալիլեա, անդ տե-
8 սանիցէք զնա, որպէս ասացն ձեզ։ Եւ իբրեւ լուան,
ելին և փախեան ի գերեզմանէն, քանզի զահի հա-
րեալ էին. և ոչ ումեք ինչ ասացին, զի երկնչէին։
9 Յարուցեալ Յիսուս առաւօտուն առաջին միա-
շաբաթուն՝ երեւեցաւ Մարիամու Մադդաղենա-
10 ցւոյ, յորմէ հանեալ էր զվեցն դեւն։ Եւ նա եր-
թեալ պատմեաց այնոցիկ որ ընդ նմայն էին, մինչ-
11 դեռ ագային և լային։ Նոքա իբրեւ լուան թէ կեն-
12 դանի է և երեւեցաւ նմա, ոչ հաւատացին։ Ետ-
ոց երեւեցաւ այլով կերպարանաւ †որք երթային՝

† Ի Յոյն՝ երկուցն ի նոցանէ, որք հետիոտս եր-
թային

13 յանդատաւոն : Նոքա չոգան պատմեցին այլոց , և
14 ոչ նոցա հաւատացին : Յետոյ մինչդեռ բազմեալ
էին մեռատանքն , երևեցաւ նոցա և թշնամանեաց
զանհաւատութիւն նոցա և զխստասրտութիւն . զի
որ երևեցաւ նոցա յարուցեալ ի մեռելոց , և նո-
15 քա ոչ հաւատացին : Եւ ասէ ցնոսա , երթայք
յաշխարհ ամենայն , և քարոզեցէք զաւետարանն
16 ամենայն արարածոց : Որ հաւատայ և մկրտեսցի՝
կեցցէ , և որ ոչն հաւատայ՝ դատապարտեսցի :
17 Նշանք այսոքիկ , որ հաւատանն՝ երթիցեն զկեա
այնոցիկ . Յանուն իմ դեւս հանցեն , լեզուս խո-
18 սեսցին , ի ձեռս իւրեանց օձս բարձցեն , և եթէ
մահացու ինչ դեղ արբցեն՝ նոցա ինչ ոչ վնասես-
ցէ . ի վերայ հիւանդաց ձեռս դիցեն , և բժշկես-
19 ցին : Եւ ինքն Տէր Յիսուս յետ խօսելոյն ընդ նոսա
համբարձաւ յերկինս , և նստաւ ընդ աջմէ Հօր :
20 Եւ նոքա ելեալ քարոզէին ընդ ամենայն երկիր՝
Տեառն գործակցութեամբ , և զբանն հաստատէին
ամենայն նշանօք որ երթայրն զկեա նոցա :

ԱԻԵՏԱՐԱՆ
ԸՍՏ ՂՈՒԿԱՍՈՒ

ԳԼ· Ա.

1 ԶԱՆԶԻ բազումք յօժարեցին վերատին կարգել
զպատմութիւնն վասն իրացն հաստատելոց ի մեզ·
2 Որպէս աւանդեցին մեզ որ ի սկզբանէ ականա-
3 տեսք և սպասաւորք եղեն բանին , կամ եղեւ և
ինձ , որ ի սկզբանէ զկեա երթեալ էի ամենայնի
ճշմարտութեամբ , կարգաւ գրել քեզ , քաջդ Թէո-
4 փիլէ , Զի ծանիցես զբանիցն որոց աշակերտեցար՝
զճշմարտութիւն :
5 Եւ եղեւ յաւուրս Հերովդէի արքային Հրէաստա-
նի , քահանայ ումն անուն Զաքարիա ի դասակար-
գէ Աբիայ , և կին նորա ի դստերաց Ահարոնի ,
6 և անուն նորա Եղիսաբեթ : Եւ էին արդարք եր-
կոքին առաջի Աստուծոյ , գնային յամենայն պա-
7 տուիրանս և յիրաւունս Տեառն անարատք : Եւ
ոչ դոյր նոցա որդեակ , քանզի Եղիսաբեթ ամուլ
էր , և երկոքեան անցեալ էին զաւուրըք իւրեանց :
8 Եւ եղեւ ի քահանայանալն նորա ըստ կարգի ա-
9 ւուրցն հասանելոյ առաջի Աստուծոյ , Ըստ օրինի
քահանայութեանն եկաց նմա խունկ արկանել՝ մը-
10 տեալ ի տաճարն Տեառն : Եւ ամենայն բազմու-
թիւն ժողովրդեանն կային յաղօթս արտաքոյ ի

11 ժամու խնկոյն : Եւ երեւեցաւ նմա հրեշտակ Տեա-
12 ռըն, ի կայր ընդ աջմէ սեղանոյ խնկոյն : Եւ խռո-
վեցաւ Զաքարիա՝ իբրեւ եաես , և անկաւ ահ ի
13 վերայ նորա : Ասէ ցնա հրեշտակն Տեառն , Մի եր-
կնչիր , Զաքարիա , զի լսելի եղեն աղօթք քո , և
կին քո Եղիսաբեթ ծնցի քեզ որդի , և կոչեսցես
14 զանուն նորա Յովհաննէս : Եւ եղիցի քեզ ուրա-
խութիւն և ցնծութիւն , և բազումք ի ծննդեան
15 նորա խնդասցեն . Զի եղիցի մեծ առաջի Տեառն ,
և գինի և օղի մի՛ արբցէ . և Հոգւով Սրբով լցցի
16 անդստին յորովայնէ մօր իւրոյ . Եւ զբազումս յոր-
դւոցն Իսրայէլի դարձուսցէ ի Տէր Աստուած իւ-
17 րեանց : Եւ ինքն եկեսցէ առաջի նորա Հոգւով և
զօրութեամբ Եղիայի , դարձուցանել զսիրտս Հարց
յորդիս, և զանհնազանս իմաստութիւն արդարոց,
18 պատրաստել Տեառն ժողովուրդ կազմեալ : Եւ ա-
սէ Զաքարիա ցհրեշտակն , Եւ ի՞նչ գիտասցից զայդ-
պիսի եւս ծեր եմ, և կին իմ անցեալ զաւուրըք իւ-
19 րով : Պատասխանի եաս հրեշտակն և ասէ ցնա ,
Ես եմ Գաբրիէլ՝ որ կամ առաջի Աստուծոյ , և
առաքեցայ խօսել ընդ քեզ և աւետարանել քեզ
20 զայդ : Եւ ահա եղիցիս համր , և մի՛ կարասցես
խօսել մինչեւ ցօրն՝ յորում այդ լինիցի . փոխա-
նակ զի ոչ հաւատացեր բանից իմոց , որք լցցին ի
21 ժամանակի իւրեանց : Եւ ժողովուրդն ակն ունէր
Զաքարիայ , և զարմանային ընդ յապրելն նորա ի
22 տաճարին : Եւ իբրեւ ել՝ ոչ կարէր խօսել ընդ նո-
սա . և իմացան թէ տեսիլ եաես ի տաճարին . և
նա նշանացի խօսէր ընդ նոսա և կայր պապանձեալ :
23 Եւ եղեւ իբրեւ լցան աւուրք պաշտամանն նորա ,

24 գնաց ի տուն իւր : Եւ յետ աւուրցն այնոցիկ
յղացաւ Եղիսաբեթ կինն նորա , և թաքուցանէր
25 զանձն ամիսս հինգ , և ասէր , Զի՛նչ գործ գոր-
ծեաց ընդ իս Տէր յաւուրս՝ յորս հայեցաւ յիս
բառնալ զնախատինս իմ ի մարդկանէ :
26 Եւ յամենանն վեցերորդի առաքեցաւ Գաբրիէլ
հրեշտակ յԱստուծոյ ի քաղաք մի Գալիլեացւոց,
27 որում անուն էր Նազարէթ , Առ կոյս խօսեցեալ
առն , որում անուն էր Յովսէփ , ի տանէ Դաւթի.
28 և անուն կուսին Մարիամ : Եւ եկեալ առ նա ա-
29 սէ , Ուրախ լեր , բերկրեալդ , Տէր ընդ քեզ : Եւ նա
ընդ բանն խռովեցաւ , և խորհէր ընդ միտս թէ
30 ո՛րպիսի ինչ իցէ ողջոյնս այս : Եւ ասէ ցնա հրեշ-
տակն , Մի՛ երկնչիր , Մարիամ, զի գտեր շնորհս
31 յԱստուծոյ : Եւ ահա յղասջիր և ծնցես որդի , և
32 կոչեսցես զանուն նորա Յիսուս : Նա եղիցի մեծ ,
և Որդի Բարձրելոյ կոչեսցի , և տացէ նմա Տէր
Աստուած զաթոռն Դաւթի հօր նորա . և թագա-
ւորեսցէ ի վերայ տանն Յակովբայ ի յաւիտեան-
33 նս , Եւ թագաւորութեան նորա վախճան մի լինի :
34 Եւ ասէ Մարիամ ցհրեշտակն , Զիա՞րդ լինիցի ինձ
35 այդ , քանզի զայր ոչ գիտեմ : Պատասխանի եաս հր-
եշտակն և ասէ ցնա, Հոգի Սուրբ եկեսցէ ի քեզ,
և զօրութիւն Բարձրելոյն հովանի լինի ի վերայ
քո . քանզի և որ ծնանելոցն է ի քէն՝ սուրբ է ,
36 և Որդի Աստուծոյ կոչեսցի : Եւ ահա Եղիսաբեթ
ազգական քո՝ և նա յղի է ի ծերութեան իւրում.
և այս վեցերորդ ամիս է նորա՝ որ ամուլն կոչե-
37 ցեալ էր . Զի ոչ տկարասցի առ Աստուծոյ ա-
38 մենայն բան : Եւ ասէ Մարիամ, Ահաւասիկ կամ

աղախին Տեառն , եղիցի ինձ ըստ բանի քումդ. և
դնաց ի նմանէ հրեշտակն ։
39 Յարուցեալ Մարիամ յաւուրսն յայնոսիկ , գնաց
40 ի լեռնակողմն փութապես ի քաղաքն Յուդայ . Եւ
եմուտ ի տունն Զաքարիայ և ետես զողջոյն Եղիսաբեթի ։
41 Եւ եղեւ իբրեւ լուաւ զողջոյնն Մարիամու Եղիսա-
բեթ , խաղաց մանուկն յորովայնի նորա . և լցաւ
42 Եղիսաբեթ Հոգւով Սրբով . Եւ ի ձայն բարձր ա-
ղաղակեաց և ասէ , Օրհնեալ ես դու ի կանայս ,
43 և օրհնեալ է պտուղ որովայնի քոյ ։ Եւ ուստի՞ է
ինձ այս , զի եկեսցէ մայր Տեառն իմոյ առ իս ։
44 Զի ահաւասիկ իբրեւ եղեւ ձայն ողջոյնի քոյ յա-
կանջս իմ , խաղաց ցնծալով մանուկս յորովայնի
45 իմում ։ Եւ երանի որ հաւատացեալ եղեւ եթէ եղիցի կա-
46 տարումն ասացելոցս նմա ի Տեառնէ ։ Եւ ասէ Մա-
47 րիամ , Մեծացուսցէ անձն իմ զՏէր . Եւ ցնծացաւ
48 հոգի իմ յԱստուած փրկիչ իմ ։ Զի հայեցաւ ի
խոնարհութիւն աղախնոյ իւրոյ . զի ահա յայսմ
49 հետէ երանելասցեն ինձ ամենայն ազգք ։ Զի արար
ինձ մեծամեծս Հզօրն , և սուրբ է անուն նորա ։
50 Եւ ողորմութիւն նորա ազգաց յազգս երկիւղածաց
51 իւրոց ։ Արար զօրութիւն բազկաւ իւրով , ցրուեաց
52 զամբարտաւանս մտօք սրտից իւրեանց ։ Քակեաց
զՀզօրս յաթոռոց , և բարձրացոյց զխոնարհս ։
53 Զքաղցեալսն լցոյց բարութեամբ , և զմեծատուն
54 արձակեաց ունայնս ։ Պաշտպանեաց Իսրայէլի ծա-
55 ռայի իւրոյմ՝ յիշել զողորմութիւնս ։ Որպէս խո-
սեցաւ առ Հարս մեր՝ Աբրահամու և զաւակի նո-
56 րա յաւիտեան ։ Եկաց Մարիամ առ նմա իբրեւ
ամիսս երիս , և դարձաւ ի տունն իւր ։

57 Եւ Եղիսաբեթի լցան ժամանակք ծննդելոյ , և
58 ծնաւ որդի ։ Եւ լուան որ շուրջ զնովաւ էին և ազ-
գատոհմ նորա , զի մեծ արար Տէր զողորմութիւնն
59 իւր ընդ նմա . և խնդային ընդ նմա ։ Եւ եղեւ յա-
ւուրն ութերորդի եկին թլփատել զմանուկն , և
60 կոչէին զնա յանուն հօր իւրոյ Զաքարիա ։ Պա-
տասխանի ետ մայր նորա և ասէ , Ոչ , այլ կոչես-
61 ցի Յովհաննէս . Եւ ասեն ցնա , Քանզի ոչ ոք է
62 յազգի քումմէ , որոյ կոչի անուն Յովհաննէս ։ Ակ-
նարկէին հօրն նորա թէ զի՞նչ կամիցի կոչել զնա .
63 Եւ խնդրեաց տախտակ , գրեաց և ասէ , Յովհան-
64 նէս է անուն դորա . և զարմացան ամենեքեան ։ Եւ
բացաւ բերան նորա վաղվաղակի և լեզու նորա ,
65 և խօսէր և օրհնէր զԱստուած ։ Եւ եղեւ ահ ի
վերայ ամենեցուն որ լսէին զայս , և որ շուրջ բը-
նակեալ էին զնոքօք . և ընդ ամենայն լեռնակողմն
Հրէաստանի պատմէին ամենայն բանքս այսոքիկ ։
66 Եւ եդին ամենեքեան որ լսէին՝ ի սիրտս իւրեանց ,
և ասէին , Զի՞նչ լինիցի մանուկս այս . և ձեռն
Տեառն էր ընդ նմա ։
67 Եւ Զաքարիա հայր նորա լցաւ Հոգւով Սրբով ,
68 մարգարէացաւ և ասէ , Օրհնեալ Տէր Աստուած
Իսրայէլի , զի յայց եւ մեզ , և արար փրկութիւն
69 ժողովրդեան իւրում ։ Եւ յարոյց եղջիւր փրկու-
70 թեան մեզ ի տանէ Դաւթի ծառայի իւրոյ ։ Որ-
պէս խօսեցաւ բերանով սրբոց՝ որ յաւիտենից մար-
71 գարէքն նորա էին . փրկութիւն ի թշնամեաց մե-
րոց , և ի ձեռաց ամենայն առելեաց մերոց .
72 Առնել ողորմութիւն ընդ հարս մեր , և յիշել
73 զսրբութիւն իւր սուրբ ։ Զերդուման զոր երդուաւ Աբ-

74 բահամեւ հօր մերում՝ տալ մեզ, Ա.ռանց եր-
75 կիւղի, ի ձեռաց թշնամեաց մերոց փրկեալս, պաշ-
տել զնա սրբութեամբ և արդարութեամբ առաջի
76 նորա զամենայն աւուրս կենաց մերոց։ Եւ դու,
մանուկ, մարգարէ Բարձրելոյ կոչեսցիս. զի երթիս
77 առաջի երեսաց Տեառն՝ պատրաստել զճանա-
պարհս նորա, Տալ գիտութիւն փրկութեան ժո-
78 ղովրդեան նորա՝ ի թողութիւն մեղաց նոցա։ Վասն
գթութեանց ողորմութեան Աստուծոյ մերոյ, որով
79 այց արասցէ մեզ արեգակն ի բարձանց։ *Երեւել
որոց ի խաւարի և ի ստուերս մահու նստեին,
ուղղել զոտս մեր ի ճանապարհս խաղաղութեան։
80 Եւ մանուկն աճէր և զօրանայր հոգւով, և էր յա-
նապատս մինչեւ յօր երեւելոյ նորա Իսրայէլի։

Գլ. Բ

1 Եւ եղեւ ընդ աւուրսն ընդ այնոսիկ ել հրաման
յՕգոստոս կայսերէ՝ աշխարհագիր առնել ընդ ա-
2 մենայն տիեզերս։ Այս առաջին աշխարհագիր եղեւ
3 ի դատաւորութեան Սուրբոց Կիւրենեայ։ Եւ եր-
թային ամենեքեան մտանել յաշխարհագիր յիւ-
4 րաքանչիւր քաղաքի։ Ել և Յովսէփ ի Գալիլեէ ի
քաղաքէ Նազարեթ ի Հրէաստան, ի քաղաք
Դաւթի՝ որ կոչի Բեթղհէմ, վասն լինելոյ նորա ի
5 տանէ և յազգէ Դաւթի, Մատնել յաշխարհագիր
Մարեամու հանդերձ՝ զոր խոսեալն էր նմա, և էր
6 յղի։ Եւ եղեւ ի հասանելն նոցա անդր, լցան ա-

*ի ցոյն՝ լոյս տալ

7 ւուրքն ծննդելոյ նորա։ Եւ ծնաւ զորդին իւր զան-
դրանիկ, և պատեաց ի խանձարուրս և եդ զնա ի
մսուր. զի ոչ տայր նոցա տեղի յիջեւանին։
8 Եւ հովիւք էին ի տեղւոջն յայնմիկ բացօթեայք,
որ պահէին զպահպանութիւնս գիշերոյ հօտից ի-
9 րեանց։ Եւ հրեշտակ Տեառն երեւեցաւ նոցա, և
փառք Տեառն ծագեցին առ նոսա, և երկեան եր-
10 կիւղ մեծ։ Եւ ասէ ցնոսա հրեշտակն, Մի երկնչի-
էք, զի ահաւասիկ աւետարանեմ ձեզ ուրախու-
11 թիւն մեծ, որ եղիցի ամենայն ժողովրդեանն։ Զի
ծնաւ ձեզ այսօր Փրկիչ, որ է Օծեալ Տէր, ի քա-
12 ղաքի Դաւթի։ Եւ այս նշանակ ձեզ. գտանիցէք
մանուկ պատեալ ի խանձարուրս և եդեալ ի մսուր։
13 Եւ յանկարծակի եղեւ ընդ հրեշտակին զօրաց երկնաւորաց, որ օրհնէին
14 զԱստուած և ասէին, փառք ի բարձունս Աստու-
ծոյ, և յերկրի խաղաղութիւն, ի մարդիկ հաճու-
15 թիւն։ Եւ եղեւ երբեւ վերացան ի նոցանէ հրեշ-
տակքն յերկինս, ասեն ցմիմեանս հովիւքն, Եկայք
երթիցուք մինչեւ ցԲեթղհէհէմ, և տեսցուք զլինչ է
16 բանս այս որ եղեւ, զոր Տէր եցոյց մեզ։ Եւ եկին
փութանակի, և գտին զՄարիամ և զՅովսէփ և
17 զմանուկն եդեալ ի մսուր։ Եւ ծանեան վասն բա-
18 նին՝ որ ասացաւ նոցա զմանկանէն. Եւ ամենե-
քեան որ լսէին, զարմանային վասն բանիցն՝ զոր խո-
19 սեցան ընդ նոսա հովիւքն։ Եւ Մարիամ զամենայն
զբանս զայսոսիկ պահէր և խելամուտ լինէր ի սրտի
20 իւրում։ Եւ դարձան հովիւքն, փառաւորեալ առնէին
և օրհնէին զԱստուած վասն ամենայնի՝ զոր լսեան
21 և տեսին, որպէս պատմեցաւ նոցա։ Եւ երբեւ լցան

աւուրը ութ թլփատել զնա , և կոչեցաւ անուն
նորա Յիսուս՝ որ կոչեցեալն էր ի հրեշտակէն , մինչ-
չեւ յղացեալ էր զնա յորովայնի :
22 Եւ իբրեւ լցան աւուրք սրբութեան նոցա ըստ
օրինացն Մովսիսի , ածին զնա Երուսաղէմ յան-
23 դիման առնել Տեառն , Որպէս և գրեալ է յօրէնս
Տեառն , Թէ Ամենայն արու որ բանայ զարգանդ՝
24 սուրբ Տեառն կոչեսցի : Եւ տալ պատարագս ըստ
ասացելոյն յօրէնս Տեառն , զոյգս տատրակաց կամ
25 երկուս ձագս աղաւնեաց : Եւ ահա այր մի էր
Երուսաղէմ , որոյ անուն էր Սիմէոն , և էր այրն
այն արդար և երկիւղած , և ակն ունէր մխիթա-
րութեանն Իսրայէլի . և Հոգի Սուրբ էր ի նմա :
26 Եւ էր նորա հրաման առեալ ի Հոգւոյն Սրբոյ մի'
տեսանել զմահ , մինչեւ տեսցէ զՕծեալն Տեառն :
27 Եւ եկն Հոգւովն ի տաճարն . և իբրեւ ածին ծնող-
քքն զմանուկն Յիսուս՝ առնել նոցա ըստ սովորու-
28 թեան օրինացն ի վերայ նորա . Եւ նա առ , ընկա-
լաւ զնա ի գիրկս իւր , և օրհնեաց զԱստուած և
29 ասէ , Արդ արձակես զծառայս քո , Տէր , ըստ բա-
30 նի քումմ ի խաղաղութիւն . Զի տեսին աչք իմ
31 զփրկութիւն քո , Զոր պատրաստեցեր առաջի ա-
32 մենայն ժողովրդոց : Լոյս ի յայտնութիւն հեթա-
նոսաց , և փառս ժողովրդեան քումմ Իսրայէլի :
33 Եւ էին հայրն և մայրն նորա զարմանացեալ ի վերայ
34 բանիցն , որ խօսէին զնմանէ : Եւ օրհնեաց զնոսա
Սիմէոն , և ասէ ցՄարիամ մայր նորա , Ահա սա
կայ ի գլորումն և ի կանգնումն բազմաց ի Հրէ-
ից , և ի նշան հակառակութեան : Եւ ընդ քո
35 հոգի անձն անցցէ սուր , զի յայտնեսցին ի բազում

36 սրտից խորհուրդք : Եւ անդ էր Աննա մարգարէ
դուստր Փանուէլի յազգէ Ասերայ . սա ինքն ան-
ցեալ էր զաւուրսն բազմաց՝ կեցեալ ընդ առն ամս
37 եօթն ի կուսութենէ իւրմէ : Եւ էր այրի ամաց
իբրեւ ութսուն և չորից , որ ոչ մեկնէր ի տաճա-
րէն , այլ պահօք և աղօթիւք պաշտէր զայգ և
38 զգիշեր : Եւ սա ի նմին ժամու յարուցեալ գոհա-
նայր զՏեառնէ , և խօսէր զնմանէ ընդ ամենեսին՝
39 որ սպն ունէին *փրկութեանն Երուսաղէմի : Եւ
իբրեւ կատարեցին զամենայն ըստ օրինացն Տեառն ,
դարձան անդրէն ի Գալիլեա ի քաղաքն իւրեանց
40 Նազարէթ : Եւ մանուկն աճէր և զօրանայր լի ի-
մաստութեամբ , և շնորհք Աստուծոյ էին ի վերայ
41 նորա : Եւ երթային ծնողք նորա ամի ամի Երու-
42 սաղէմ ի տօն զատկին : Եւ իբրեւ եղեն նորա ամք
երկոտասան , յելանել նոցա Երուսաղէմ ըստ
43 սովորութեան տօնին , Եւ կատարեալ զաւուրսն և
դառնալ անդրէն , մնաց Յիսուս մանուկն Երու-
44 սաղէմ . և ոչ գիտացին ծնողքն նորա : Կարծէին
զնմանէ թէ ընդ ուղեկիցսն իցէ . եկին իբրեւ աւուր
մի ճանապարհ և խնդրէին զնա ընդ գրացիսն և
45 ընդ ծանօթս : Եւ իբրեւ ոչ գտին , դարձան ան-
46 դրէն Երուսաղէմ խնդրել զնա : Եւ եղեւ յետ
երից աւուրց գտին զնա ի տաճարին , զի նստեր ընդ
վարդապետսն , լսէր ի նոցանէ և հարցանէր զնո-
47 սա : Զարմանային ամենեքեան որ լսէին ի նմանէ՝
ընդ իմաստութիւնն և ընդ պատասխանիս նորա :
48 Եւ իբրեւ տեսին զնա՝ սքանչացան . և ասէ ցնա

* Ի ցոյն՝ փրկութեան Երուսաղէմի

մայրն իւր , Որդեակ , ալի՞նչ գործ գործեցեր դու
ընդ մեզ. ահաւասիկ հայր քո և ես տառապեալք ,
49 խնդրէաք զքեզ : Եւ ասէ ցնոսա , Ձի՞ խնդրէիք զիս ,
ո՞չ գիտէիք եթէ ՚ի տան Հօր իմոյ պարտ է լինել
50 ինձ : Եւ նոքա ոչ իմացան զբանն՝ զոր խօսեցաւ
51 ընդ նոսա : Եւ էջ ընդ նոսա և գնաց ՚ի Նազարէթ ,
և էր նոցա հնազանդ . և մայր նորա պահէր զա-
52 մենայն զբանան ՚ի սրտի իւրում : Եւ Յիսուս զար-
դանայր իմաստութեամբ և հասակաւ և շնորհօք
յԱստուծոյ և ՚ի մարդկանէ :

Գլ. Գ

1 Ի հնգետասաներորդի ամի տէրութեանն Տիբե-
րեայ կայսեր , ՚ի դատաւորութեան Հրէաստանի
Պիղատոսի Պոնտացւոյ , և ՚ի չորրորդպետութեան
Գալիլեացւոց Հերովդէ , և ՚ի փիլիպպոսի եղբօր նո-
րա չորրորդպետութեան Իտուրացւոց և ՚ի Տրաքո-
նացւոց աշխարհին , և ՚ի չորրորդպետութեան Լիւ-
2 սանեայ Աբիլենացւոյ , Եւ ՚ի քահանայապետու-
թեան Աննայի և Կայիափայ՝ եղեւ բան Աստուծոյ
՚ի վերայ Յովհաննու որդւոյ Զաքարիայ յանապա-
3 տի անդ : Եւ եկն յամենայն կողմն Յորդանանու՝
քարոզել մկրտութիւն ապաշխարութեան ՚ի թո-
4 ղութիւն մեղաց : Որպէս և գրեալ է ՚ի գիրս պատ-
գամաց Եսայեայ մարգարէի , Ձայն բարբառոյ յա-
նապատի , Պատրաստ արարէք զճանապարհ Տեա-
5 ռըն , և ուղիղ արարէք զշաւիղս նորա : Ամենայն
ձորք լցցին , և ամենայն լերինք և բլուրք խոնար-
հեսցին , և եղիցին դժուարինքն ՚ի դիւրինս , և ա-
6 ռապարքն ՚ի հարթ ճանապարհս . Եւ տեսցէ ամե-

7 նայն մարմին զփրկութիւն Աստուծոյ : Եւ ասէր
ցժողովուրդսն ելեալս մկրտիլ ՚ի նմանէ , Ցնուդք
իժից , ո՞ եցոյց ձեզ փախչել ՚ի բարկութենէն որ
8 գալոց է : Արարէք այսուհետեւ պտուղս արժանի
ապաշխարութեան . և մի՛ սկսանիցիք *ասել եթէ
Ունիմք հայր զԱբրահամ . զայս ասեմ ձեզ , եթէ
կարող է Աստուած ՚ի քարանցս յայսցանէ յա-
9 րուցանել որդիս Աբրահամու : Բայց ահաւասիկ տա-
պար առ արմին ծառոց կայ . ամենայն ծառ որ ոչ
առնէ զպտուղ բարւոք , հատանի և ՚ի հուր ար-
10 կանի : Հարցանէին զնա ժողովուրդքն և ասէին ,
11 Իսկ արդ ալի՞նչ գործեսցուք : Պատասխանի ետ և
ասէ ցնոսա , Որ իցեն երկու հանդերձք , տացէ
զմին այնմ որ ոչն գուցէ . և որ կայցէ կերակուր ,
12 նոյնպէս արասցէ : Եկին և մաքսաւորք մկրտիլ , և
13 ասեն ցնա , Վարդապետ , ալի՞նչ գործեսցուք : Եւ
նա ասէ ցնոսա , Մի ինչ աւելի քան զկրամայեալն
14 ձեզ առնիցէք : Հարցանէին զնա և զնոսա զորք և
ասէին , Եւ մեք ալի՞նչ գործեսցուք . ասէ ցնոսա ,
Մի՛ զոք խուճիցէք և մի՛ զոք զրպարտիցէք , շատ լի-
15 ցին ձեզ թոշակքն ձեր : Մինչ ակն ունէր ժողո-
վուրդն՝ և խորհէին ամենեքեան ՚ի սիրտս իւրեանց
16 վասն Յովհաննու , միթէ սա՞ իցէ Քրիստոս : Պա-
տասխանի ետ ամենեցուն և ասէ , Ես մկրտեմ զը-
ձեզ ջրով , բայց գայ զօրագոյն քան զիս , զորոյ
չեմ բաւական բառնալ զկօշիկս , նա մկրտեսցէ
17 զձեզ Հոգւով Սրբով և հրով . Որոյ հեծանոցն ՚ի
ձեռին իւրում սրբել զկալ իւր , և ժողովել զգո-

* Ի Յոյն՝ ասել յանձինս

բեանն 'ի շահմարանս Լ-ը , և զլարդն այրեացէ ան-
18 շէջ հրով ։ Բազում և այլ ինչ մխիթարութեամբ
19 աւետարանէր ժողովրդեանն ։ Բայց Հերովդէս չոր-
ըորդապետ յանդիմանեալ 'ի նմանէ վասն Հերով-
դիայ կնոջ եղբօր իւրոյ՝ և վասն ամենայն չարեացն
20 զոր գործեաց Հերովդէս , յաւել և զայն եւս 'ի վե-
21 րայ ամենայնի , և եդ 'ի բանտի զՅովհաննէս ։ Եւ
եղեւ 'ի մկրտիլ ամենայն ժողովրդեանն և ընդ Յի-
սուսի մկրտիլն և կալ յաղօթս , բանալ երկնից ,
22 Եւ իջանել Հոգւոյն Սրբոյ մարմնաւոր տեսլեամբ
իբրեւ զաղաւնի 'ի վերայ նորա . և գալ ձայն յեր-
կնից՝ որ ասէր , Դու ես Որդի իմ սիրելի, ընդ քեզ
23 հաճեցայ ։ Եւ ինքն Յիսուս էր ամաց իբրեւ երես-
նից սկսեալ՝ որոց որպէս կարծէր որդի Յովսեփայ ,
*Որ Յակովբայն ,'' որ Հեղիայն , որ Մատաթիայն ,
24 Որ Ղեւեայն , որ Մելքեայն , որ Յաննեայն , որ
25 Յովսեփայն , Որ Մատթեայն , որ Ամովսայն , որ
26 Նաւումայն , որ Եսղեայն , որ Նանգեայն , Որ Մա-
հաթիայն , որ Մատաթեայն , որ Սեմեայն , որ Յով-
27 սեքեայն , որ Յովդայն , Որ Յովհաննայն , որ Րեսայն ,
որ Զօրաբաբելին , որ Սաղաթիելին , որ Ներոյն ,
28 Որ Մելքեայն , որ Ադդեայն , որ Կովսամայն , որ
29 Ելմովդադայն , որ Երայն , Որ Յեսուայն , որ Ե-
զիաղարայն , որ Յովրամայն , որ Մատթայն , որ
30 Ղեւեայն , Որ Սիմէոնին , որ Յուդայն , որ Յով-
31 սեփայն , որ Յովնամայն , որ Եղիակիմայն , Որ Մելք-
թեայն , որ Մեննայն , որ Մատաթայն , որ Նա-
32 թանայն , որ Դաւթին , Որ Յեսսեայն , որ Ովբե-

* Ի Յոյն ա՛ւ ։

դայն , որ Բոոսայն , որ Սաղմոնայն , որ Նաասսով-
33 նէն , Որ Ամինադաբայն , որ Արամայն , *որ Ար-
մեայն , որ Առնեայն ,'' որ Եսրովմայն , որ Փարե-
34 սին , որ Յուդայեն , Որ Յակովբայն , որ Իսահա-
կայն , որ Աբրահամեան , որ Թարայեն , որ Նա-
35 քովրայն , Որ Սերուքայն , որ Ռագաւայն , որ Փաղե-
36 կայն , որ Եբերայն , որ Սաղայեն , Որ Կայնանայն , որ
Արփաքսադայն , որ Սեմայն , որ Նոյեն , որ Ղամեքայն ,
37 Որ Մաթուսաղայեն , որ Ենովքայն , որ Յարեդեն ,
38 որ Մաղաղիելեն , որ Կայնանայն , Որ Ենոսայն ,
որ Սեթայն , որ Ադամայն , որ Աստուծոյ ։

ԳԼ. Դ

1 Եւ Յիսուս լի Հոգւով Սրբով դարձաւ 'ի Յորդա-
2 նանէ , և վարեր Հոգւովն յանապատ , Յաւուրս
քառասուն փորձեալ 'ի Սատանայէ . և ոչ եկեր և
ոչ արբ յաւուրսն յայնոսիկ . և 'ի կատարելն նո-
3 ցա քաղցեաւ ։ Եւ ասէ ցնա Սատանայ , Եթէ Որ-
դի ես Աստուծոյ , ասա քարիդ այդմիկ զի հաց լի-
4 չի ։ Պատասխանի ետ նմա Յիսուս և ասէ , Գրեալ
է եթէ Ոչ հացիւ միայն կեցցէ մարդ , այլ ամե-
5 նայն բանիւ Աստուծոյ ։ Եւ Հանեալ զնա 'ի լեա-
ռնէն մի բարձր , եցոյց նմա զամենայն թագաւորու-
6 թիւնս աշխարհի 'ի վայրկեան ժամանակի ։ Եւ
ասէ ցնա Սատանայ , Քեզ տաց զայս ամենայն իշ-
խանութիւն և զփառս սոցա , զի ինձ տուեալ է,
7 և ումդ կամիմ՝ տամ զնա ։ Արդ դու եթէ անկեալ
երկիրպագանիցես առաջի իմ , քեզ եղիցի ամե-

* Ի Յոյն ա՛ւ ։

8 Նայն : Պատասխանի ետ Նմա Յիսուս և ասէ , Գրեալ է , Երկիրպագցես Տեառն Աստուծոյ քումմ,
9 և զնա միայն պաշտեսցես : Եւ ած զնա Յերուսաղէմ , և կացոյց ի վերոյ աշտարակի տաճարին , և ասէ ցնա , Եթէ Որդի ես Աստուծոյ , արկ զքեզ
10 ասի ի վայր . Զի գրեալ է եթէ Հրեշտակաց իւրոց պատուիրեալ է վասն քո՝ պահել զքեզ .
11 Զի ի վերայ ձեռաց բարձցեն զքեզ , մի՛ երբեք հարցես
12 զքարի զոտն քո : Պատասխանի ետ Նմա Յիսուս և ասէ, Ասացեալ է Թէ Ոչ փորձեսցես զՏէր Աստուած
13 քո : Եւ կատարեալ զամենայն փորձութիւնն՝ Սատանայի , ի բաց եկաց ի նմանէ առ ժամանակ մի :
14 Եւ դարձաւ Յիսուս զօրութեամբ Հոգւոյն ի Գալիլեա . և ել համբաւ զնմանէ ընդ ամենայն կողմ
15 մանս գաւառին : Եւ Նա սւսուցանէր ի ժողովուրդս
16 դոս նոցա փառաւորեալ յամենեցունց : Եւ եկն ի Նազարէթ՝ ուր սնեալն էր . և եմուտ ըստ սովորութեան իւրում յաւուրն շաբաթուց ի ժողո-
17 վուրդն : Եւ ետուն Նմա գիրս Ղեսայեայ մարգարէի . և Յարեաւ ընթերցուել , և իւրում երաց ըզ-
18 գիրսն , եգիտ զոյն տեղի Յորում գրեալն էր , Հոգի Տեառն ի վերայ իմ , վասն որոյ և օծ իսկ զիս, աւետարանել աղքատաց առաքեաց զիս , բժշկել
19 զբեկեալս սրտիւք , քարոզել գերեաց զթողութիւն՝ և կուրաց տեսանել , արձակել զվիրաւորս ի թո-
20 ղութիւն , քարոզել զտարեկան Տեառն ընդունելի: Եւ ծալեալ զգիրսն՝ ետ ցպաշտօնեայն , և նստաւ. և ամենեցունն որ ի ժողովրդեանն էին աչք ի Նա
21 Հայէին : Եւ սկսաւ ասել ցնոսա , Այսօր լցան
22 գիրքս այս յականջս ձեր : Եւ ամենեքին վկայէին

նմա , և զարմանային ընդ բանս շնորհացն՝ որ ելանէին ի բերանոյ նորա , և ասէին , Ո՞չ սա է որդին
23 Յովսեփայ : Եւ ասէ ցնոսա , Ապաքէն ասիցէք առ իս զառակս զայս , Բժիշկ , բժշկեա զանձն քո . որչափ լուաք զոր արարեր ի Կափառնայում, արա և
24 աստ ի քում գաւառի : Եւ ասէ , Ամէն ասեմ ձեզ Թէ Ոչ մարգարէ ընդունելի ի քաղաքի իւ-
25 րում : Արդարեւ ասեմ ձեզ , զի բազում այրիք էին յաւուրս եղիայի ի մէջ Իսրայէլի՝ յորժամ փակեցաւն երկինք զերիս ամս և զվեց ամիս , և ե-
26 ղեւ սով մեծ ընդ ամենայն երկիր : Եւ ոչ առ մի ի նոցանէ առաքեցաւ եղիա , բայց միայն ի Սա-
27 րեփթա Սիդովնացւոց առ կին մի այրի : Եւ բազում բորոտք էին յիսրայէլի առ Եղիսէէ մարգարէին, և ոչ ոք ի նոցանէ սրբեցաւ , բայց միայն
28 Նեեման Ասորի : Եւ լցան ամենեքեան բարկութեամբ
29 ի ժողովրդեանն՝ իբրեւ լսէին զայս . Եւ յարուցեալ հանին զնա արտաքոյ քաղաքին , և ածին զնա մինչեւ յարտեւան լերինն՝ յորոյ վերայ քաղաքն նոցա շինեալ էր՝ գահավէժ առնել զնա :
30 Եւ Նա անցեալ ընդ մէջ նոցա՝ գնայր :
31 Եւ էջ ի Կափառնայում՝ ի քաղաքն Գալիլեա-
32 ցւոց , և ուսուցանէր զնոսա ի շաբաթին : Եւ զարմանային ընդ վարդապետութիւն նորա , զի իշխա-
33 նութեամբ էր բան նորա : Եւ էր ի ժողովրդեանն այր մի , զոր ունէր ոգի դիւի պղծոյ , և աղաղա-
34 կեաց ի ձայն մեծ , Ասէ , Թուլացո , զի՞ կայ մեր և քո , Յիսուս Նազովրեցի , եկիր կորուսանե՞լ զմեզ . գիտեմ զքեզ ով ես , Սուրբդ Աստուծոյ :
35 Սաստեաց ի նա Յիսուս և ասէ , Պապանձեաց և

եւ ի դմանէ . զդեահնեաց զնա դեւն ի միջի անդ
36 և եւ ի նմանէ , և ինչ ոչ վնասեաց նմա : Եւ եղեն
զարմանալիք ի վերայ ամենեցուն , խօսէին ընդ մի-
մեանս և ասէին , Չի՞նչ է բանս այս , զի իշխա-
նութեամբ և զօրութեամբ սաստէ պղծոց , և
37 ելանեն : Եւ երթայր հռչակ զնմանէ ընդ ամենայն
38 տեղիս շուրջ զգաւառսն : Եւ յարուցեալ ի ժո-
39 ղովրդենէ անտի , եմուտ ի տունն Սիմանի : Զոքանչ
Սիմանի տագնապեր ջերմամբ մեծաւ . և աղաչէին
40 զնա վասն նորա : Եկաց առ նմա , սաստեաց ջեր-
մանն , և եթող զնա . և վաղվաղակի յարեաւ և
41 պաշտէր զնոսա : Եւ ընդ արեւուն մտանել՝ ամե-
նեքեան որոց էին հիւանդք ի պէսպէս ցաւս՝ բե-
րէին զնոսա առ նա : Եւ նա իւրաքանչիւր ումեք
42 ի նոցանէ դնէր ձեռս և բժշկէր զնոսա : Ելանէին
դեւք ի բազմաց , աղաղակէին և ասէին եթէ Դու
ես Որդի Աստուծոյ . և նա սաստէր և ոչ տայր նո-
ցա թոյլ խօսել , զի գիտէին զնա թէ Քրիստոս է :
43 Եւ իբրեւ տիւ եղեւ՝ ել գնաց յանապատ տե-
ղի , և ժողովուրդքն խնդրէին զնա , եկին մինչեւ
առ նա և արգելուին զնա , զի մի՛ գնասցէ ի նո-
44 ցանէ : Եւ նա ասէ ցնոսա , Եւ այլոց քաղաքաց
պարտ է ինձ աւետարանել զարքայութիւն Աստու-
45 ծոյ , զի յայն իսկ առաքեցայ : Եւ քարոզէր ի
ժողովուրդսն Գալիլեացւոց :

Գ Լ· Ե

1 Եւ եղեւ ի խռնել զնովաւ ժողովրդեանն և լսել
զբանն Աստուծոյ , և ինքն կայր առ ծովակին Գեն-
2 նեսարեթացւոց : Եւ տեսս երկուս նաւս՝ զի կային առ

ծովակին , և ձկնորքն էլեալ ի նոցանէ լուանային
3 զդործիսն : Եւ նա ի մի նաւուցն որ էր Սիմանի ,
և աղաչեաց զնա՝ սակաւիկ մի տանել ի ներքս ի
ցամաքէն . նստաւ և ուսուցանէր ի նաւէ անտի
4 զժողովուրդսն : Եւ իբրեւ լռեաց ի խօսիցն , ասէ
ցՍիմոն , խաղացո ի խորն , և արկէք զդործիս ձեր
5 յորս : Պատասխանի ետ Սիմոն և ասէ ցնա , Վար-
դապետ , զամենայն գիշերս աշխատ եղեալք և ոչինչ
կալաք . բայց վասն քո բանիդ արկցուք զդործիսս :
6 Զայս իբրեւ արարին՝ փակեցին ի ներքս բազմու-
թիւն ձկանց յոյժ , մինչեւ պատռատէին ուռկանք
7 նոցա : Եւ անկարկէին որսակցացն ի միւս նաւն՝
գալ օգնել նոցա . և եկին , և լցան երկոքինն նաւ-
8 քն՝ մինչեւ մերձ չընկղմել նոցա : Իբրեւ եաես
Սիմոն Պետրոս՝ անկաւ առ ծունկսն Յիսուսի և ա-
սէ , Ի բաց գնա յինէն , Տէր , զի այր մեղաւոր եմ
9 ես : Քանզի ահ պատեաց զնա և զամենեսեան որ
ընդ նմանն էին , վասն որսոյ ձկանցն զորս ըմբռնե-
10 ցին . Նոյնպէս և զՅակովբոս և զՅովհաննէս զորդիսն
Զեբեդեայ , որ էին որսակիցք Սիմանի : Եւ ա-
սէ ցՍիմոն Յիսուս , Մի երկնչիր , չայսմ հետէ
11 զմարդիկ որսայցես ի կեանս : Եւ հանեալ զնաւն
ի ցամաք , թողին զամենայն և գնացին զհետ նորա :
12 Եւ եղեւ ի հասանելն նորա ի մի քաղաքացն ,
և ահա այր մի լի բորոտութեամբ իբրեւ եաես զՅի-
սուս , անկեալ ի վերայ երեսաց աղաչեաց զնա
և ասէ , Տէր , եթէ կամիս , կարող ես զիս սրբել :
13 Զգեաց զձեռն իւր՝ հասոյց ի նա և ասէ , Կամիմ ,
սրբեաց . և վաղվաղակի գնաց ի նմանէ բորոտու-
14 թիւնն : Եւ նա պատուիրեաց նմա մի՛ ումեք ասել ,

այլ թէ երթ ցոյց զանձն քո քահանային, և մատո պատարագ վասն սրբութեան քո, որպէս և
15 հրամայեաց Մովսէս ի վկայութիւն նոցա: Եւ յորդէր առաւել բանն ընդմէնէ. և ժողվէին ժողովուրդք բազումք լսել և բժշկել ի հիւանդութենէ իւրեանց: Եւ նա խոյս տայր յանապատ տեղիս և
16 կայր յաղօթս:
17 Եւ եղեւ ի միում աւուրց և ինքն ուսուցանէր, և փարիսեցիքն և օրինացն վարդապետք նստէին, որ ժողովեալ էին յամենայն քաղաքաց Գալիլեացւոց և Հրէաստանի և Երուսաղէմի. և զօրութիւն
18 Տեառն էր ի բժշկել զնոսա: Եւ ահա արք բերէին մահճաւք զայր մի՝ որ էր անդամալոյծ, և խնդրէին
19 զնա մուծանել ի ներքս և դնել առաջի նորա: Եւ իբրեւ ոչ գտանէին թէ ընդ որ մուծանիցեն զնա ի ներքս վասն ամբոխին, ելին ի տանիս և ի ցուոցն կախեցին զնա, և իջուցին մահճաքն հանդերձ ի
20 մէջ առաջի Յիսուսի: Եւ տեսեալ զհաւատսն նոցա՝ ասէ ցնա, Այր դու, թողեալ լինին քեզ
21 մեղք քո: Սկսան խորհել դպիրքն և փարիսեցիքն, և ասեն, Ո՞ է սա որ խօսի զհայհոյութիւնս, ո՞վ
22 կարէ թողուլ զմեղս բայց միայն Աստուած: Իբրեւ գիտաց Յիսուս զխորհուրդսն նոցա, պատասխանի
23 ետ և ասէ ցնոսա, Զի՞ խորհիք ի սիրտս ձեր: Զի՞նչ
24 դիւրագոյն է ասել, թողեա՞լ լինին քեզ մեղք քո, եթէ ասել, Արի և գնա: Այլ զի գիտասջիք եթէ իշխանութիւն ունի Որդի մարդոյ երկրի թողուլ զմեղս, ասէ ցանդամալոյծն, քեզ ասեմ, Արի,
25 առ զմահիճս քո և երթ ի տուն քո: Եւ առժամայն յարուցեալ առաջի ամենեցուն, առ զիւրեւ

յորոյ վերայ անկեալն դնէր, գնաց ի տուն իւր,
26 և փառաւորէ առնէր զԱստուած: Զարմանք կալան զամենեսեան, և փառաւորէ առնէին զԱստուած. լի եղեն ահիւ, և ասեն եթէ Տեսաք այսօր նոր նշան:
27 Եւ յետ այնորիկ ել անտի ևետես մաքսաւոր մի՝ որում անուն էր Ղեւի, զի նստեր ի մաքսա-
28 ւորութեան. և ասէ ցնա, Եկ զկնի իմ: Եւ թո-
29 ղեալ զամենայն՝ յարեաւ գնաց զկնի նորա: Եւ արար ընդունելութիւն մեծ նմա Ղեւի ի տան իւրում. և էր ժողովուրդ բազում մաքսաւորաց և
30 այլոց՝ որ էին բազմեալ ընդ նոսա: Եւ տրտնջէին փարիսեցիքն և դպիրքն նոցա *զնմանէ առ աշակերտան նորա և ասէին, Ընդէ՞ր ընդ մաքսաւորս
31 և ընդ մեղաւորս ուտէք և ըմպէք: Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնոսա, Ոչինչ են պիտոյ բժիշ-
32 կըք ողջոյ այլ հիւանդաց: Եւ ոչ եկի կոչել զարդարս, այլ զմեղաւորս յապաշխարութիւն: Եւ
33 նորա ասեն ցնա, Ընդէ՞ր աշակերտքն Յովհաննու պահեն յաճախ և խնդրուածս առնեն, նոյնպէս և
34 փարիսեցւոցն, և քոյդ ուտեն և ըմպեն: Եւ նա ասէ ցնոսա, Միթէ կարո՞ղ էք մանկանց առագաստի, մինչ փեսայն ընդ նոսա իցէ, հրաման տալ
35 պահել: Եկեսցեն աւուրք՝ յորժամ բարձցի ի նոցանէ փեսայն, ապա պահեսցեն յաւուրսն յայ-
36 նոսիկ: Ասաց և առակ մի առ նոսա թէ Ոչ ոք արկանէ ի նոր հանդերձէ ի վերայ հնացեալ ձորձոյ. ապա թէ ոչ՝ և զնորն պատառէ, և ընդ հը-
37 նոյն չվիպաբանի կապերան որ ի նորոյն: Եւ ոչ ոք

* Ի ցայն չէ:

արկանէ գինի նոր ՚ի տիկս հինս . ապա թէ ոչ՝ պայթուցանէ գինին նոր զտիկան հինս , ինքն հեղու և
38 տիկքն կորնչին ։ Այլ գինի նոր ՚ի տիկս նորս ար-
39 կանելի է , և երկոքին պահին ։ Եւ ոչ ոք ըմպէ ըզհինն և կամիցի ղնորն, քանզի ասէ թէ հինն քաղցրագոյն է ։

Գլ. Զ

1 Եւ եղեւ ՚ի շաբաթու յերկրորդումն առաջնոյն անցանել նմա ընդ արտորայսն , և աշակերտքն նո-
2 ա կորզէին հասկ , շփէին ընդ ափ և ուտէին ։ Եւ ոմանք ՚ի փարիսեցւոցն ասեն ցնոսա , Զի՞նչ գործէք՝ զոր չէ օրէն ՚ի շաբաթու ։ Պատասխանի ետ
3 նոցա Յիսուս և ասէ , Զայդ՞ ընթերցեալ ձեր ոչ արարն Դաւիթ , յորժամ քաղցեաւն ինքն և որ
4 ընդ նմանն էին ։ Զիա՞րդ եմուտ նա ՚ի տունն Աստուծոյ , և զհացն զառաջաւորութեան եկեր՝ և ետ այնոցիկ որ ընդ նմանն էին . զոր ոչ էր օրէն
5 ումեք ուտել , բայց միայն քահանայապետից ։ Եւ ասէ ցնոսա , Տէր է Որդի մարդոյ և շաբաթու ։
6 Եւ եղեւ ՚ի միւսում շաբաթուն մտանել նմա ՚ի ժողովուրդն և ուսուցանել . և էր անդ այր մի և
7 ձեռն իւր աջ դեւացեալ էր ։ Եւ սպասէին նմա դպիրքն և փարիսեցիք թէ ՚ի շաբաթուն բժշկիցէ՞,
8 զի գտանիցեն չարաբանութիւն ընդմանէ։ Եւ նա գիտէր զխորհուրդս նոցա . ասէ ցայրն՝ որոյ ձեռնն դեւացեալ էր , Արի , անց ՚ի մէջ . և նա յարուցեալ եկաց ։
9 Ասէ ցնոսա Յիսուս , Հարցից ինչ ըզձեզ , Զի՞նչ արժան է ՚ի շաբաթու , ՚բարի՞ ինչ առնել եթէ չար գործել , ոգի մի ապրեցուցանե՞լ

10 թէ կորուսանել ։ Եւ հայեցեալ շուրջ զամենեքումբք ցայրագին՝ ասէ ցնա , Զգեա զձեռն քո . և նա ձգեաց , և հաստատեցաւ ձեռն նորա իբրեւ
11 զմիւսն ։ Նոքա լցան յիմարութեամբ , և խօսէին ընդ միմեանս թէ զինչ առնիցեն Յիսուսի ։
12 Եւ եղեւ ընդ աւուրսն ընդ այնոսիկ՝ ել ՚ի լեառն կալ յաղօթս , և հաներ զդիշերն ՚ի գլուխ յա-
13 ղօթիւն Աստուծոյ ։ Եւ իբրեւ այգ եղեւ՝ կոչեաց զաշակերտան իւր , և ընտրեաց ՚ի նոցանէ երկոտասան , զորս և առաքեալս անուանեաց ։ Զսիմոն՝ զոր
14 և Պետրոս անուանեաց , և զԱնդրէաս զեղբայր նորին և զՅակովբոս , և զՅովհաննէս , և զՓիլիպպոս ,
15 և զԲարթողիմէոս , եւ զՄատթէոս , և զԹովմաս , և զՅակովբոս Ալփեայ , և զսիմոն զկոչեցեալն Նա-
16 խանձայոյզ , եւ զՅուդայ Յակովբոյ , և զՅուդա
17 Սկարիովթացի՝ որ եղեւ իսկ մատնիչ ։ Եւ իջեալ նոքօք հանդերձ ՚ի տեղի մի տափարակ . և ժողով աշակերտացն նորա՝ և բազմութիւն յոյժ ժողովրդեանն յամենայն Հրէաստանէ , և Յերուսաղեմէ և յայնմ կողմանէ , և ՚ի ծովեզերէն Տիւրոսի և
18 Սիդովնի . Որ եկին լսել ՚ի նմանէ և բժշկել ՚ի հիւանդութիւնէ իւրեանց . և նեղեալքն յայսոց պըղ-
19 ծոց բժշկէին ։ Եւ ամենայն ժողովուրդն խնդրէր մերձենալ ՚ի նա , զի զօրութիւն բազում ելանէր ՚ի նմանէ և բժշկէր զամենեսին ։ Եւ նա ամբարձ զաչս իւր յաշակերտան իւր և ասէ , Երանի աղքատացդ Հոգւով , զի ձեր է արքայութիւնն Ա-
21 ստուծոյ ։ Երանի որ քաղցեալ են այժմ , զի յագեացին ։ Երանի որ լան այժմ . զի ծիծաղեսցին ։
22 Երանի է ձեզ յորժամ ատիցեն զձեզ մարդիկ , և

յորժամ որոշիցեն զձեզ և նախատիցեն , և հանիցեն անուն չար զձէնջ վասն Որդւոյ մարդոյ : Ուրա-
23 բախ լինիջիք յաւուր յայնմիկ և ցնծասջիք , զի ա-
հա վարձք ձեր բազում են յերկինս , ըստ դմին օ-
24 րինակի առնէին մարգարէիցն հարք իւրեանց. Բայց
վայ ձեզ մեծատանդ , զի ընկալայք զմխիթարու-
25 թիւն ձեր : Վայ ձեզ որ յագեալք եք այժմ , զի
քաղցիցէք . վայ ձեզ որ ծիծաղիքդ այժմ , զի սո-
26 գայցէք և լայցէք : Վայ ձեզ յորժամ բարի ասիցեն զձէնջ ամենայն մարդիկ , զի այդպէս առնէին
27 սուտ մարգարէիցն հարք նոցա : Այլ ձեզ ասեմ
որ լսէդ , Սիրեցէք զթշնամիս ձեր , բարի արարէք
28 առելեաց ձերոց : Օրհնեցէք զանիծիչս ձեր , աղօթս
29 արարէք ի վերայ նեղչաց ձերոց : Որ հարկանէ զքո
ծնօտ քո , մատո նմա և զմիւսն . և որ հանէ ի
քէն զքաճկոն քո , մի՛ արգելուր ի նմանէ և զշա-
30 պկս : Ամենայնի որ խնդրէ ի քէն՝ տուր , և զոր
31 ինչ հանէ ոք ի քէն՝ մի՛ պահանջեր : Եւ որպէս
կամիք թէ արասցեն ձեզ մարդիկ , այնպէս արաս-
32 ջիք և դուք նոցա : Եւ եթէ սիրէք զսիրելիս
ձեր՝ զի՞նչ շնորհ է ձեր , զի և մեղաւորքն սիրեն զսի-
33 սիրելիս իւրեանց : Եւ եթէ բարի առնէք բարե-
բարոց ձերոց , ո՞ր շնորհ է ձեր , զի և մեղաւորքն
34 զնոյն գործեն : Եւ եթէ տայք փոխ այնոցիկ յորոց
ակն ունիցիք առնուլ , ո՞ր շնորհ է ձեր , քանզի
և մեղաւորք մեղաւորաց փոխ տան , զի առցեն ան-
35 դրեն զկշիռն : Բայց սիրեցէք զթշնամիս ձեր , և
բարի արարէք *առելեաց ձերոց .՚՚ և տուք փոխ՝

* Ի ցայն ևթ ։

ուստի ոչ ակն ունիցիք առնուլ . և եղիցին վարձք
ձեր բազում , և եղիջիք որդիք Բարձրելոյ . զի նա
36 քաղցր է ի վերայ չարաց և ապաշնորհաց : Եղէ-
37 րուք գթածք , որպէս և Հայրն ձեր գթած է : Մի՛
դատէք և ոչ դատիցիք . մի՛ պատժէք և ոչ պատ-
38 ժիցիք , արձակեցէք և արձակիցիք : Տուք և տացի
ձեզ . չափ բարւոք, թաւթաղուն, շարժուն , ղեղուն
տացին ի գոգս ձեր . նովին չափով որով չափէք՝
39 չափեացի ձեզ : Ասաց և առակ մի առ նոսա , Մի-
թէ կարիցէ՞ կոյր կուրի առաջնորդել , ո՞չ ապա-
40 քէն երկոքեան ի խորխորատ անկանիցին : Ոչ է ա-
շակերտ լուս քան զվարդապետ իւր . ամենայն կա-
41 տարեալն եղիցի իբրեւ վարդապետ իւր : Զի՞ տե-
սանես զշիւղ չարկան եղբօր քո , և ի քում ականն
42 ղգերանդ ոչ նշմարես , կամ զիա՞րդ կարես ասել
ցեղբայր քո , եղբայր , թող հանից զշիւղդ չա-
կանէ քումմէ , և դու ի քում ական զգերանդ ոչ
տեսանես , կեղծաւոր , հան նախ զգերանդ չա-
կանէ քումմէ , և ապա հայեսջիր հանել զշիւղ
43 չարկանէ եղբօր քո : Զի ոչ է ծառ բարի՝ որ առ-
նէ պտուղ չար , և ոչ դարձեալ ծառ չար՝ որ առ-
44 նէ պտուղ բարի : Զի իւրաքանչիւր ծառ ի պըտ-
ղոյ իւրմէ ճանաչի . զի ոչ եթէ ի փշոց քաղեն
45 թուզ , և ոչ ի մարենուց կթեն խաղող : Մարդ
բարի ի բարի գանձուց սրտի իւրոյ բղխէ զբարի ,
և մարդ չար ի չարէն բղխէ զչար . քանզի ի յա-
46 ւելուածոյ սրտին խօսի բերան նորա : Զի՞ կոչէք
47 զիս Տէր , Տէր , և զոր ասեմն ոչ առնէք : Ամենայն
որ դայ առ իս , և լսէ զբանս իմ և առնէ զնոսա ,
48 ցուցից ձեզ ումմ նման է : Նմանէ առն , որ շինի-

ցէ տուն որ փորեաց և խորեաց, և եդ հիմն 'ի վէ-
բայ վիմի. 'ի յառնել հեղեղաց բաղխեաց գետ ընդ
տունն, և ոչ կարաց շարժել զնա. զի հաստա-
49 տեալ էր հիմն 'ի վերայ վիմի։ Իսկ որ լսէ *զբանս
իմ՝՝ և ոչ առնէ, նման է առն՝ որ շինիցէ տուն 'ի
վերայ հողոյ առանց հիման. զոր բաղխեաց գետ,
և վաղվաղակի անկաւ, և եղեւ կործանումն տանն
այնորիկ մեծ։

ԳԼ. Է

1 Եւ իբրեւ կատարեաց զամենայն զբանս իւր 'ի
2 լսելիս ժողովրդեանն, եմուտ 'ի կափառնայում։ Հա-
բիւրապետի ուրումն ծառայ չարաչար հիւանդա-
ցեալ մերձ էր 'ի վախճանել, որ էր նմա պատուա-
3 կան։ Իբրեւ լուաւ զՅիսուսէ, առաքեաց զծերսն
'ի Հրէից, աղաչէր զնա զի եկեսցէ ապրեցուսցէ
4 զծառայն նորա։ Եւ նոքա եկեալ առ Յիսուս՝ ա-
ղաչէին զնա առատ և ասէին Թէ Արժանի է՝ որում
5 զայսորհս զայս առնես։ Զի սիրէ զազգս մեր, և զժո-
6 ղովրդեանցն նա շինեաց մեզ։ Եւ Յիսուս գնաց ընդ
նոսա. իբրեւ ոչինչ կարի հեռի էր 'ի տանէն,
յղեաց առ նա հարիւրապետն բարեկամս, և ասէ
ցնա, Տէր, մի՛ ինչ աշխատ լինիր, զի չեմ բաւա-
7 կան եթէ ընդ յարկաւ իմով մտանիցես. վասն
որոյ և ոչ զանձն համարեցայ արժանի առ քեզ
գալոյ. այլ ասա բանիւ՝ և բժշկեսցի մանուկս իմ։
8 Քանզի և ես այր մի եմ կարգեալ ընդ իշխանու-
թեամբ. ունիմ ընդ ինեւ զինուորս, և ասեմ սմա,

* ի Յովհ. ԺԴ։

երթ, և երթայ. և այլում թէ եկ, և գայ. և
9 ծառայի իմում Թէ Արա զայս, և առնէ։ Եւ իբ-
րեւ լուաւ զայս Յիսուս՝ զարմացաւ, դարձաւ առ
ժողովուրդն որ երթայնի զհետ նորա և ասէ, Ամէն
ասեմ ձեզ Թէ՝ և ոչ Իսրայէլի այսչափ հաւատս
10 գտի։ Եւ դարձան անդրէն պատգամաւորքն 'ի տուն,
և գտին զծառայն հիւանդ՝ բժշկեալ։
11 Եւ եղեւ 'ի վաղիւն երթայր 'ի քաղաք մի, որում
անուն էր Նային. երթային ընդ նմա և աշակերտք
12 նորա և ժողովուրդք բազում։ Իբրեւ մերձ եղեւ
'ի դուռն քաղաքին, և ահա ելանէր մեռեալ մի՝
որդի միամօր մոր իւրոյ, և նա էր այրի. և ժողո-
13 վուրդ բազում՝ քաղաքին էր ընդ նմա։ Իբրեւ ե-
տես զնա Տէր՝ գթացաւ 'ի նա և ասէ, Մի լար։
14 Եւ մատուցեալ մերձեցաւ 'ի դագաղն. և որք
բարձեալն տանէին՝ զտեղի առին. և ասէ, Պատա-
15 նի դու, քեզ ասեմ, արի։ Կանգնեցաւ և նստաւ
մեռեալն և սկսաւ խօսել. և ետ զնա ցմայր իւր։
16 Եւ ահ կալաւ զամենեսին, և փառաւորս առնէին
զԱստուած և ասէին Թէ Մարգարէ ոմն մեծ յա-
րուցեալ է 'ի մէջ մերում, և Թէ Այց արար Աս-
17 տուած ժողովրդեան իւրում 'ի բարութիւն։ Եւ
եղ զբոյցս այս ընդ ամենայն Հրէաստան վասն նորա,
18 և ընդ ամենայն կողմանս աշխարհին։ Եւ պատմե-
ցին Յովհաննու աշակերտքն իւր վասն ամենայնի
19 այսորիկ։ Եւ կոչեաց առ ինքն երկուս ոմանս յա-
շակերտացն իւրոց Յովհաննէս, առաքեաց առ Տէր
և ասէ, Դո՞ւ ես որ գալոցն ես, եթէ այլում ակն
20 կալցուք։ Եւ եկեալ արքն առ նա՝ ասեն, Յովհան-
նէս մկրտիչ առաքեաց զմեզ առ քեզ և ասէ,

Դո՞ւ ես որ գալոցն ես եթէ այլեա՛ւ ակն կալցուք ։
21 Եւ ի նմին ժամու բժշկեաց զբազումս ի հիւան-
դութեանց և ի չարուածոց և յայսոց չարաց , և
22 կուրաց բազմաց շնորհեաց տեսանել ։ Պատասխանի
ետ նոցա և ասէ , Երթայք պատմեցէք Յովհաննու՝
զոր տեսէքդ և լուայք , զի կոյրք տեսանեն , և
կաղք գնան , բորոտք սրբին , խուլք լսեն , մե-
23 ռեալք յառնեն , աղքատք աւետարանին . Եւ ե-
24 րանի իցէ՛ որ ոչ գայթակղեսցի ի իս ։ Եւ իբրեւ
գնացին հրեշտակքն Յովհաննու , սկսաւ խօսել ընդ
ժողովուրդսն վասն Յովհաննու , Զի՞նչ ելէք յա-
նապատն տեսանել , եղէ՞գն շարժուն ի հողմոյ ։
25 Ա՛յլ զի՞նչ ելէք տեսանել , այր ի հանդերձս փափ-
կութեան զարդարեալ . ահաւանիկ որք ի հանդերձս
երեւելիս և ի փափկութեան են՝ յարքունիս են ։
26 Ա՛յլ զի՞նչ ելէք տեսանել , մարգարէ՞ . այո՝ ասեմ
27 ձեզ , առաւել եւս քան զմարգարէ ։ Զի սա է՝ վասն
որոյ գրեալն է թէ Ահա առաքեմ զհրեշտակ իմ
առաջի քո՝ որ յարդարեսցէ զճանապարհս քո ա-
28 ռաջի քո ։ Ամէն ասեմ ձեզ , Մեծ ի ծնունդս կա-
նանց մարգարէ քան զՅովհաննէս ոչ ոք է , բայց
փոքրիկն յարքայութեան Աստուծոյ մեծ է քան
29 զնա ։ Եւ ամենայն ժողովուրդն իբրեւ լուաւ և
մաքսաւորքն , արդարացուցին զԱստուած . զի մե-
30 կըրտեցան ի մկրտութիւնն Յովհաննու ։ Իսկ փա-
րիսեցիքն և օրինականքն զխորհուրդն Աստուծոյ
անարգեցին յանձինս իւրեանց , զի ոչ մկրտեցան
31 ի նմանէ ։ Արդ ո՞ւմ նմանեցուցից զմարդիկ ազ-
32 գիս այսորիկ , և ո՞ւմ իցեն նմանողք ։ Նման են
մանկտւոյ՝ որ ի հրապարակս նստիլեն , կարդայցեն

զմիմեանս և ասիցեն , փողս հարաք ձեզ և ոչ կա-
33 քաւեցէք . ողբացաք և ոչ լացէք ։ Եկն Յովհաննէս
մկրտիչ , ոչ ուտէր և ոչ ըմպէր , և ասէիք , Դեւ
34 դոյ ի նմա ։ Եկն Որդի մարդոյ , ուտէ և ըմպէ , և
ասէք , Ահա այր կերող և արբեցող , բարեկամ
35 մաքսաւորաց և մեղաւորաց ։ Եւ արդարացաւ ի-
մաստութիւն յորդւոց իւրոց ։
36 Աղաչէր զնա ոմն ի փարիսեցւոցն՝ զի կերիցէ
ճաշ ընդ նմա . և մտեալ ի տունն փարիսեցւոյն՝
37 բազմեցաւ ։ Եւ կին մի էր ի քաղաքին մեղաւոր .
իբրեւ գիտաց թէ բազմեալ է ի տան փարիսեցւոյն ,
38 բերեալ շիշ մի իւղոյ ազնուի , կայր յետոյ առ
ոտս նորա՝ լայր , և արտասուօքն սկսաւ թանալ
զոտս նորա , և հերովք գլխոյ իւրոյ ջնջէր . և համ-
39 բուրէր զոտս նորա և օծանէր իւղովն ։ Եւ տեսեալ
փարիսեցւոյն՝ որ կոչեացն զնա , ասէր ընդ միտս
իւր , Սա թէ մարգարէ որ էր , ապա գիտէր թէ
ով և որպիսի որ կին մերձենայ ի սա . զի մեղաւոր
40 է ։ Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնա , Սիմո՛ն ,
ունիմ՛ ինչ ասել քեզ . և նա ասէ , Ասա , Վար-
41 դապետ . *և ասէ ,՝՝ Երկու պարտապանք էին ու-
րումն փոխատուի . մինն պարտէր հինգ հարիւր
42 դահեկան , և միւսն՝ յիսուն ։ Եւ իբրեւ ոչ դոյր
նոցա հատուցանել , երկոցունց շնորհեաց . արդ ա-
43 սա , ո՞վ առաւել սիրեսցէ զնա ։ Ասէ Սիմո՛ն , Ինձ
այսպէս թուի եթէ որում զբազումն շնորհեաց . և
44 նա ասէ ցնա , Ուղիղ դատեցար ։ Եւ դարձեալ ի
կինն կոչմն , ասէ ցՍիմո՛ն , Տեսանե՞ս զայս կին ,

* ի Յոյն ՚ա+ ։

մոի 'ի տուն քո՝ ջուր ոտից իմոց ոչ ետուր, իսկ
սա արտասուօք իւրովք եթաց զլաս իմ, և հերով
45 իւրով ջնջեաց։ Համբոյր մի ոչ ետուր ինձ,
սա աւասիկ յորմէ հետէ մտեալ եմ՝ ոչ դադա-
46 րեաց 'ի համբուրելոյ զլաս իմ։ Իւղով զգլուխ իմ
47 ոչ օծեր, սա իւղով անուշիւ *օծ։ Վասն որոյ ա-
սեմ քեզ, Թողեալ լիցին սմա մեղք իւր բազումք,
զի յոյժ սիրեաց. զի որում շատ թողուցաւ՝ շատ
48 սիրէ, և որում սակաւ՝ սակաւ։ Եւ ասէ ցնա,
49 Թողեալ լիցին քեզ մեղք քո։ Եւ սկսան որ բաղ-
մեալն էին ընդ նմա՝ ասել ընդ միտս իւրեանց, Ո՞վ
50 է սա որ զմեղս թողու։ Եւ նա ասէ ցկինն, Հաւատք
քո կեցուցին զքեզ, երթ 'ի խաղաղութիւն։

ԳԼ. Ը

1 Եւ եղեւ յետ այնորիկ՝ և ինքն շրջէր ընդ քա-
ղաքս և ընդ գեօղս, քարոզէր և աւետարանէր
զարքայութիւն Աստուծոյ, և երկոտասանքն ընդ
2 նմա. Եւ կանայք ոմանք՝ որ բժշկեալ էին յայսոց
չարաց և 'ի հիւանդութեանց. Մարիամ՝ որ կոչէր
3 Մագդաղենացի, յորմէ եօթն դեւն ելեալ էր. Եւ
Յովաննա կին Քուզայ՝ հաղարապետին Հերովդի, և
Շուշան և այլք բազումք, որք պաշտէին զնա յնո-
4 չէից իւրեանց։ Եւ 'ի ժողովել բազում ժողովրդոց,
և ըստ քաղաքաց քաղաքացն եկելոց առ նա, ասէ
5 առակաւ, Ել սերմանացան սերմանել զսերմանիս
իւր. և 'ի սերմանելն իւրում՝ էր որ անկաւ առ
ճանապարհաւ և եղեւ կոխան, և թռչունք եր-

* Ի Յայնն՝ օծ զլաս իմ։

6 կնից կերան զնա։ Եւ այլն անկաւ յապառաժի. և
7 ընդ բուսանելն՝ չորացաւ առ 'ի չգոյե հիւթոյ։ Եւ
այլն անկաւ 'ի մէջ փշոց, և ընդ նմին բուսեալ
8 փշոցն՝ հեղձուցին զնա։ Եւ այլն անկաւ յերկիրն
բարի և պարարտ, և բուսեալ՝ արար պտուղ հա-
րիւրապատիկ։ Զայս իրրեւ խօսեցաւ, ասէ, Որ
9 ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ։ Հարցանէին զնա
10 աշակերտքն թէ զի՞նչ իցէ առակն։ Եւ նա ասէ,
Ձեզ տուեալ է գիտել զխորհուրդս արքայութեան
Աստուծոյ, բայց այլոցն առակօք. զի տեսցեն և
11 մի՛ տեսցեն, և լուիցեն և մի՛ իմասցեն։ Բայց ա-
12 ռակն այս ինչ է. Սերմն բանն Աստուծոյ է։ Եւ
որք առ ճանապարհաւն, այնոքիկ են որ լսեն, և
ապա գայ Սատանայ՝ հանէ զբանն 'ի սրտից նոցա,
13 զի մի՛ հաւատասցեն և ապրեսցին։ Եւ որք յապա-
ռաժին, որք յորժամ լսիցեն, խնդութեամբ ըն-
դունին զբանն, և արմատս ոչ ունիցին. որք առ
ժամանակ մի հաւատան, և 'ի ժամանակի փորձու-
14 թեան հեռանան։ Իսկ որ 'ի մէջ փշոցն անկաւ՝
նոքա են, որ իրրեւ լսեն զբանն, և 'ի հոգս և 'ի
մեծութիւն և 'ի ցանկութիւն աշխարհիս զբաղեալ,
15 հեղձնուն և անպտուղ լինին։ Իսկ որ յերկիրն պա-
րարտ, որոց բարւոք և զուարթագին սրտիւ լուեալ
զբանն՝ ընդունին, և տան պտուղ համբերութեամբ։
16 Ոչ ոք լուցանէ ճրագ, և թաքուցանէ ընդ կարա-
սեաւ կամ՝ դնէ ընդ մահճաւք. այլ 'ի վերայ աշ-
17 տանակի դնէ, զի որ մտանեն՝ զլոյս տեսցեն։ Զիւր
ինչ ծածուկ՝ որ ոչ յայտ լիցի. և ոչ գաղտնի՝
18 որ ոչ ծանիցի և եկեսցէ 'ի յայտ։ Տեսէք այսուհետեւ զկարդ լսէքդ. զի որ ունիցէ՝ տացի նմա,

և այր ոչն գուցէ՝ և զոր կարծէն թէ ունիցի՝ բարձ-
19 ցի ի նմանէ : Եկին առ նա մայրն և եղբարք իւր ,
և ոչ կարէին հասանել ի նա վասն բազմութեանն :
20 Ազդ եղեւ նմա և ասէն , Մայր քո և եղբարք քո
21 կան արտաքոյ և կամին զքեզ տեսանել : Եւ ասէ
ցնոսա , Մայր իմ և եղբարք իմ սոքա են , որ
զբանն Աստուծոյ լսեն և առնեն :
22 Եւ եղեւ ի միում աւուրց ինքն ել ի նաւ և
աշակերտքն նորա , և ասէ ցնոսա , Եկայք , անց-
23 ցուք յայնկոյս ծովակիս , և գնացին : Եւ մինչդեռ
նաւէին՝ ի քուն եմուտ . և էջ մրրիկ հողմոյ ի
24 ծովակն և ուռնոյր , և տագնապէին : Մատուցեալ
զարթուցին զնա և ասեն , Վարդապետ , վարդա-
պետ , կորնչիմք աւասիկ . և նա յարուցեալ սաս-
տեաց հողմոյն և խռովութեան ջուրցն , և հան-
25 դարեցին , և եղեւ խաղաղութիւն : Ասէ ցնոսա ,
Ո՞ւր են հաւատք ձեր . և զարհի հարեալ զարմա-
ցան և ասէին ցմիմեանս , Ո՞վ արդեօք իցէ սա , զի
և հողմոյ և ջրոց հրամայ տայ , և հնազանդին
26 նմա : Եւ նաւեցին իջին յաշխարհն Գերգեսացւոց ,
27 որ է յայնկոյս հանդէպ Գալիլեայ : Եւ ընդ ելանելն
նորա ի ցամաք , պատահեաց այր մի ի քաղաքէն՝
յորմէ՛ էին դեւք . և բազում ժամանակս չէր
հանդերձ զգեցեալ և ոչ ի տան լինակեալ , այլ
28 ի գերեզմանս : Եւ տեսեալ զՅիսուս , աղաղակեաց
և անկաւ առաջի նորա , և ասէ մեծաձայն , Զի՞
կայ իմ և քո , Յիսուս Որդի Աստուծոյ բարձրելոյ ,
29 աղաչեմ զքեզ , մի տանջեր զիս : Քանզի հրամայն
տայր այսոյն պղծոյ ելանել ի մարդոյ անտի . զի
բազում ժամանակս յափշտակեալ էր զնա , և կա-

պէր ի շղթայս , և պահէր յերկաթս , և խզէր ըզ-
30 կապանսն , և վարէր ի դիւէն յանապատս . Եհարց
զնա Յիսուս և ասէ , Զի՞նչ անուն է քեզ՝ Եւ նա
ասէ , Լեգէովն . զի դեւք բազումք մտեալ էին ի
31 նա : Եւ աղաչէին զնա՝ զի մի հրամայն տացէ նո-
32 ցա երթալ յանդունդս : Եւ էր անդ երամակ մի
խոզից բազմաց արօտական ի լերինն , և աղաչեցին
զնա զի հրամայն տացէ նոցա մտանել ի նոսա . և
33 հրամայեաց նոցա : Եւ ելեալ դեւքն յառնէն մը-
տին ի խոզսն , և դիմեաց երամակն ի գահէ
34 անտի ի ծովակն և հեղձաւ : Իբրեւ տեսին խոզա-
բածքն զիրան որ եղեն՝ փախեան , և պատմեցին ի
35 քաղաքին և յագարակսն : Եւ իբրեւ ելին տեսա-
նել զդործսն , և եկին առ Յիսուս , և գտին զմարդն՝
ուստի դեւքն ելեալ էին , զգեցեալ և զգաստա-
36 ցեալ նստեր առ ոտս Յիսուսի , և երկեան : Պատ-
մեցին նոցա որոց տեսեալն էր թէ զիարդ փրկեցաւ
37 դիւահարն : Եւ աղաչէր զնա ամենայն բազմու-
թիւնն շուրջ զկողմանքն Գերգեսացւոց՝ գնալ ի
սահմանացն նոցա , քանզի ահիւ մեծաւ տագնա-
պէին . և նա մտեալ ի նաւ՝ դարձաւ անդրէն :
38 Աղաչէր զնա այրն ուստի դեւքն ելեալ էին՝ շըր-
39 ջել ընդ նմա . արձակեաց զնա և ասէ , Դարձ ի
տուն քո և պատմեա զոր միանգամ արար քեզ
Աստուած . գնաց ի քաղաքն և քարոզէր զոր ինչ
40 արար նմա Յիսուս : Եւ իբրեւ դարձաւ անդրէն
Յիսուս , ընկալաւ զնա ժողովուրդն , քանզի ամե-
41 նեքեան սպն ունէին նմա : Եւ ահա եկն այր մի՝
որում անուն էր Յայրոս , և նա էր իշխան ժողո-
վըրդեանն . անկեալ առ ոտս Յիսուսի՝ աղաչէր

42 զնա մտանել ի տուն նորա . ղի դուստր միամօր
էր նորա ամաց իբրեւ երկոտասանից, և էր մերձ ի
մահ ։ Եւ ընդ երթալն նորա ժողովուրդքն նեղէին
43 զնա ։ Եւ կին մի էր ի տեառատեսութեան արեան
ամաց երկոտասանից , որ ի բժիշկս ծախեալ էր
զամենայն ինչս իւր . որում ոչ էր լեալ հնար յու-
44 մեքէ բժշկիլ ։ Մատուցեալ յետոյ մերձեցաւ ի
քղանցս հանդերձի նորա . և նոյն ժամայն եկաց
45 բղխումն արեան նորա ։ Եւ ասէ Յիսուս , Ո՞վ է որ
մերձեցաւն յիս ։ Իբրեւ ամենեքեան ուրանային ,
ասէ Պետրոս և որ ընդ նմա էին , վարդապետ ,
46 ժողովուրդք պնդեն և նեղեն զքեզ ։ Եւ ասէ Յի-
սուս , Ոմն մերձեցաւ յիս , քանզի գիտացի եթէ
47 զօրութիւն ել յինէն ։ Իբրեւ եաես կինն եթէ ոչ
ծածկեցաւ ի նմանէ , եկն դողալով և անկաւ ա-
ռաջի նորա , թէ վասն որոյ իբրայ մերձեցաւ ի նա՝
պատմեաց առաջի ամենայն ժողովրդեանն , և թէ
48 որպէս բժշկեցաւ առժամայն ։ Եւ ասէ , Ջհաջալե-
բեաց , դուստր , հաւատք քո կեցուցին զքեզ , երթ
49 ի խաղաղութիւն ։ Եւ մինչդեռ նա խօսէր , դայ
ոմն ի տանէ ժողովրդապետին և ասէ ցնա , Մե-
ռաւ դուստրն քո , մի՛ նչ աշխատ առնես զդա ։
50 Իսկ Յիսուս իբրեւ լուաւ , պատասխանի ետ նմա և
ասէ , Մի՛ երկնչիր , միայն հաւատա , և կեցցէ ։
51 Եւ մտեալ ի տունն՝ ոչ զոք եթող մտանել , բայց
միայն զՊետրոս և զՅակովբոս և զՅովհաննէս և զհայր
52 մանկանն և զմայր նորա ։ Լային ամենեքեան և կո-
ծէին զնա . և նա ասէ , Մի լայք զի չէ մեռեալ ,
53 այլ ննջէ ։ Եւ նոքա ծաղր առնէին զնա , զի գի-
54 տէին թէ մեռաւ ։ Եւ նորա հանեալ զամենեսեան

55 արտաքս , կալաւ զձեռանէ նորա , բարբառեցաւ
56 և ասէ , Աբի , կաց , մանուկդ դու ։ Եւ դարձաւ ոգի
նորա , և կանգնեցաւ վաղվաղակի . և հրամայեաց
57 տալ նմա ուտել ։ Եւ զարմացան ծնողքն նորա . և
նա պատուիրէր մի՛ ումեք ասել որ ինչ եղեւն ։

Գլ. Թ

1 Եւ կոչեցեալ զերկոտասան առաքեալսն , ետ նո-
ցա զօրութիւն և իշխանութիւն ի վերայ ամենայն
2 դիւաց , և բժշկել զհիւանդութիւնս ։ Եւ առա-
քեաց զնոսա քարոզել զարքայութիւնն Աստուծոյ
3 և բժշկել զախտաժէտս ։ Եւ ասէ ցնոսա , Մի ինչ
բառնայք ի ճանապարհ , մի՛ գաւազան և մի մա-
խաղ , մի՛ հաց և մի՛ արծաթ , մի՛ երկուս հանդերձս
4 ունիցիք ։ Եւ յոր տուն մտանիցէք՝ անդ ապրիք և
5 անտի գնայցէք ։ Եւ որք ոչ ընդունիցին զձեզ , յոր-
ժամ ելանիցէք ի քաղաքէն յայնմանէ , զփոշի ո-
տից ձերոց թօթափեսջիք ի վկայութիւն նոցա ։
6 Եւ ելեալ շրջէին ընդ քաղաքս և ընդ գեօղս , ա-
ւետարանէին և բժշկէին ընդ ամենայն տեղիս ։
7 Լուաւ Հերովդէս չորրորդապետ զգործսն ամենայն ,
և զարմանայր վասն ասելոյն յոմանց թէ Յով-
8 հաննէս յարեաւ ի մեռելոց , և յոմանց՝ թէ Եղիա
յայտնեցաւ , և յայլոց՝ թէ Մարգարէ ոմն յա-
9 ռաջնոցն յարեաւ ։ Ասէ Հերովդէս , ԶՅովհաննէս
ես գլխատեցի , իսկ սա ո՞վ իցէ՝ զորմէ զայսպիսի
10 իրս լսեմ . և խնդրէր տեսանել զնա ։ Դարձան
առաքեալքն և պատմեցին նմա զամենայն զոր
արարին ։ Եւ առեալ զնոսա՝ խուսեաց առանձինն
ի տեղի անապատ քաղաքի միոյ , որում անուն էր

11 Բեթսայիդա ։ Եւ ժողովուրդքն իբրեւ գիտացին ,
գնացին ղՀետ նորա . և ընկալեալ զնոսա՝ խօսէր
ընդ նոսա վասն արքայութեան Աստուծոյ , և որոց
12 պէտք էին բժշկութեան՝ բժշկէր ։ Եւ օրն սկսաւ
տարաժամել . մատեան երկոտասանքն և ասեն ցնա,
Արձակեա զժողովուրդսդ , զի երթեալ շուրջ ի
գիւղսն և յագարակս , հանգիցեն և գտցեն կերու-
13 կուր , զի աստ յանապատ տեղւոջ եմք ։ Ասէ ցնո-
սա , Դուք տուք դոցա ուտել . և նորա ասեն , Ոչ
գոյ մեր աւելի քան զհինգ նկանակ և զերկուս ձը-
կունս , բայց երթ երթիցուք գնեացուք բաւական
14 ժողովրդեանդ կերակուր ։ (Քանզի էին արք իբ-
րեւ հինգ հազար ։) ասէ ցաշակերտսն , Բազմեցու-
15 ցեք զդոսա դասս դասս՝ հիսուն հիսուն ։ Եւ ա-
16 րարին այնպէս , և բազմեցուցին զամենեսեան ։ Եւ
առեալ զհինգ նկանակն և զերկուս ձկունսն՝ հա-
յեցաւ յերկինս , օրհնեաց և եբեկ և ետուր ցա-
17 շակերտան՝ արկանել ժողովրդեանն ։ Կերան և յա-
գեցան ամենեքեան , և բարձին զնշխարս կոտորոցն
երկոտասան սակաւի ։

18 Եւ եղեւ ի կալն նորա յաղօթս առանձինն , էին
ընդ նմա և աշակերտքն նորա . եհարց զնոսա և
ասէ , Զո՞ ոք ասեն զինէն ժողովրդքն թէ իցեմ ։
19 Եւ նոցա պատասխանի առեալ ասեն , զՅովհան-
նէս մկրտիչ . և այլք՝ զեղիա . իսկ այլք թէ Մար-
20 գարէ ոք յառաջնոցն յարեաւ ։ Ասէ ցնոսա ,
Դուք զո՞վ ոք ասէք զինէն , թէ իցեմ . պատաս-
խանի ետ Պետրոս և ասէ , զՔրիստոս Աստուծոյ ։
21 Նա սաստեաց ի նոսա , և պատուիրեաց մի՛ ումեք
22 ասել զայն ։ Եւ ասէ թէ Պարտ է Որդւոյ մարդոյ

բազում չարչարիլ և անարգիլ ի քահանայապե-
տից և ի ծերոց և ի դպրաց , և սպանանիլ և յե-
23 րիր աւուր յառնել ։ Եւ ասէր առ ամենեսին , Ե-
թէ ոք կամի զկնի իմ գալ , ուրասցի զանձն և առ-
24 ցե զխաչ իւր հանապազ և եկեսցէ զՀետ իմ ։ Զի
որ կամիցի զանձն իւր կեցուցանել՝ կորուսցէ զնա,
և որ կորուսցէ զանձն իւր վասն իմ՝ կեցուսցէ զնա։
25 Զի՞նչ օգուտ է մարդոյ եթէ *զաշխարհ շահեսցի ,
26 և զանձն իւր կորուսցէ կամ տուժեսցի ։ Զի որ ա-
մթէ համարեսցի զիս և զբանս իմ , զնա և Որդի
մարդոյ յամթէ արասցէ՝ յորժամ գայցէ փառօք
27 իւրովք և Հօր և հրեշտակաց սրբոց ։ Բայց արդա-
րեւ ասեմ ձեզ եթէ են ոմանք ի դոցանէ որ այդր
կան , որք մի՛ ճաշակեսցեն զմահ՝ մինչեւ տեսցեն
զարքայութիւն Աստուծոյ ։

28 Եւ եղեւ յետ այսց բանից իբրեւ աւուրք ութ , ա-
ռեալ զՊետրոս և զՅակովբոս և զՅովհաննէս՝ ել ի
29 լեառն կալ յաղօթս ։ Եւ ի կալ նմա յաղօթս՝ եղեւ
տեսիլ երեսաց նորա այլակերպ , և փոխեցաւ հան-
30 դերձ նորա և եղեւ սպիտակ փայլուն ։ Եւ ահա արք
31 երկու խօսէին ընդ նմա , որ էին Մովսէս և Եղիա ,
երեւեալ փառօք , և ասէին զելիցն նորա՝ զոր կատա-
32 րելոց էր Երուսաղէմ ։ Իսկ Պետրոս և որ ընդ նմանն
էին՝ ծանրացեալք ի քնոյ , զարթեան և տեսին զփառ-
33 սն նորա՝ և զերկուս արսն որ կային առ նմա ։ Եւ
եղեւ ի մեկնելն նոցա ի նմանէ , ասէ Պետրոս ցՅի-
սուս , Վարդապետ , բարւոք է մեզ աստ լինել , և
արասցուք երիս տաղաւարս , մի քեզ և մի Մովսէ

* ի ցայն՝ զաշխարհ ամենայն

34 սիսի և մի եղիայի, և ոչ գիտեր ղինչ խօսէր։ Եւ
իբրեւ ղայս ասաց, եկն ամպ և հովանի եղեւ ի
վերայ նոցա. և երկեան ի մտանելն նոցա ընդ ամ-
35 պովն։ Զայն եղեւ յամպոյն և ասէ, Դա է Որդի
36 իմ ընտրեալ, դմա լուարուք։ Եւ ընդ լինել բար-
բառոյն՝ գտաւ Յիսուս միայն։ Եւ ինքեանք լռե-
ցին, և ոչ ումեք պատմեցին յաւուրսն յայնոսիկ
և ոչինչ յորոց տեսին։

37 Եւ եղեւ ի վաղիւն միում իջանէին նոքա ի լեռ-
նէ անտի, ընդ առաջ եղեւ նմա ժողովրդական բա-
38 զում։ Եւ ահա այր մի ի ժողովրդենէ անտի աղաղա-
կեաց և ասէ, Վարդապետ, աղաչեմ զքեզ, հա-
39 յեաց յորդի իմ, զի միամօր է ինձ։ Եւ ահա այս
հարկանի ի նմա, և յանկարծ գոչէ. և զարկու-
ցանէ զնա և թաւալեցուցանէ զնա և փրփրեցու-
ցանէ, և հազիւ մեկնի ի նմանէ՝ խորտակեալ զը-
40 նա. Եւ աղաչեցի զաշակերտսն քո զի հանցեն զնա,
41 և ոչ կարացին։ Պատասխանի ետ Յիսուս և ասէ,
Ով ազգ անհաւատ և թիւր, մինչեւ ե՞րբ եղէց
ընդ ձեզ և անասցեմ ձեզ. մատո այսր զորդին
42 քո։ Եւ մինչդեռ մատչէր, զարկոյց զնա դեւն և
43 շարժեցոյց։ Սաստեաց Յիսուս այսոյն պղծոյ, և բը-
44 ժշկեաց զմանուկն և ետ զնա հօրն իւր։ Եւ զար-
մանային ամենեքեան ի վերայ մեծամեծացն Ա-
ստուծոյ. և ի զարմանալն ամենեցուն ի վերայ ա-
մենայնի զոր առնէր, ասէ ցաշակերտսն իւր, Դիք
դուք ի լսելիս ձեր զբանս զայսոսիկ, զի Որդի մար-
45 դոյ մատնեալ է ի ձեռս մարդկան։ Եւ նոքա ոչ
գիտէին զբանն, և էր ծածկեալ ի նոցանէ զի մի
գիտասցեն. և երկնչէին հարցանել ցնա վասն բա-

46 նին այնորիկ։ Եմուտ խորհուրդ ի նոսա թէ ո՛ ար-
47 դեօք մեծ իցէ ի նոցանէ։ Յիսուս իբրեւ ծանեաւ
զխորհուրդս սրտից նոցա, առ մանուկ մի, կացոյց
48 ի մէջ նոցա առ իւր, Եւ ասէ ցնոսա, Որ ընկալցի
զմանուկս զայս յանուն իմ՝ զիս ընդունի, և որ զիս
ընդունիցի՝ ընդունի զառաքիչն իմ. զի որ փոքրիկն
49 է յամենեսին ի ձեզ՝ նա եղիցի մեծ։ Պատասխանի
ետ Յովհաննէս և ասէ, Վարդապետ, տեսաք զոմն
որ յանուն քո դեւս հանէր, և արգելաք զնա, զի
50 ոչ շրջի ընդ մեզ։ Ասէ ցնոսա Յիսուս, Մի՛ արգե-
լուք, զի որ ոչն է ձեր հակառակ՝ ի ձեր կողմն է։
51 Եւ եղեւ ի կատարել աւուրց վերանալոյ նորա՝
և ինքն զերեսս հաստատեաց երթալ Յերուսաղէմ։
52 Եւ առաքեաց հրեշտակս առաջի երեսաց իւրոց.
և իբրեւ չոգան, մտին ի գիւղ մի Սամարացւոց՝
53 պատրաստել ինչ նմա։ Եւ ոչ ընկալան զնա, զի
54 դէմ եդեալ էր նորա երթալ Յերուսաղէմ։ Իբ-
րեւ տեսին աշակերտքն Յակովբոս և Յովհաննէս,
ասեն, Տէր, կամի՞ս զի ասասցուք, և իջցէ հուր
55 յերկնից և սատակեացէ զնոսա։ Դարձեալ սաստեաց
ի նոսա և ասէ, Ոչ գիտէք՝ որոյ հոգւոյ էք դուք.
56 Զի որդի մարդոյ ոչ եկն զոգիս մարդկան կորուսա-
57 նել՝ այլ կեցուցանել. և գնացին յայլ գեօղ։ Եւ
մինչդեռ երթային նոքա ի ճանապարհի, ասէ ոմն
58 ցնա, Եկից զկնի քո՝ յորում վայր և երթիցես։ Ասէ
ցնա Յիսուս, Աղուէսուց որջք դոն, և թռչնոց
երկնից՝ դադարք, և Որդւոյ մարդոյ ոչ գոյ՝ ուր
59 զիցէ զգլուխ։ Ասէ ցմիւս եւս, Եկ զկնի իմ. և
նա ասէ, Տէր, հրամայեա տուր ինձ՝ երթալ նախ
60 թաղել զհայր իմ։ Ասէ ցնա Յիսուս, Թող զմե-

ռեալըն թագել զմեռեալս իւրեանց , և դու երթ
61 պատմեա զարքայութիւն Աստուծոյ : Ասէ և այլ
ոմն , եկից զկնի քո, Տէր , բայց նախ հրամայ տուր
62 ինձ՝ հրաժարել ի տանէ իմմէ : Ասէ ցնա Յիսուս,
Ոչ ոք արկանէ ձեռն զմաճով և հայիցի յետս , և
թէ յաջողեալ իցէ արքայութեան Աստուծոյ :

Գլ· ժ

1 Յետ այսորիկ երեւեցոյց Տէր և այլ եւս *եօթա-
նասունս և երկուս .՝՝ և առաքեաց զնոսա երկուս
երկուս առաջի իւր յամենայն քաղաքս և ի տե-
2 զիս , ուր ինքն երթալոց էր : Եւ ասէ ցնոսա ,
Հունձք բազումք են՝ և մշակք սակաւ . արդ աղա-
չեցէք զՏէր հնձոց , զի հանցէ մշակս ի հունձս իւր :
3 Երթայք , ահա առաքեմ զձեզ իբրեւ զդառինս ի
4 միջ գայլոց : Մի՛ բառնայք քսակ , մի՛ մախաղ , մի՛
կօշիկս , և ի ճանապարհի ումեք ողջոյն մի՛ տայցէք :
5 Յոր տուն մտանիցէք , նախ ասասջիք Թէ Ողջոյն
6 տանս այսմիկ . Եւ եթէ իցէ անդ որդի ողջունի ,
հանգիցէ ի վերայ նորա ողջոյնն ձեր . ապա թէ ոչ՝
7 ի ձեզ դարձցի : Եւ ի նմին տան ագանիջիք , ու-
տիջիք և ըմպիջիք ի նոցանէ . զի արժանի է մշակն
8 վարձու իւրոյ . մի՛ փոխիցիք տանէ ի տուն : Յոր
քաղաք մտանիցէք և ընդունիցին զձեզ , ուտիջիք
9 զինչ առաջի դնիցեն ձեր . Եւ բժշկեսջիք որ ի նմա
հիւանդք իցեն , և ասասջիք նոցա , Մերձեալ է
10 ի վերայ ձեր արքայութիւն Աստուծոյ : Իսկ յոր
քաղաք մտանիցէք՝ և ոչ ընդունիցին զձեզ , ելբեւ

* Ի Ցոյնն՝ եօթանասուն .

11 ելանիցէք ի հրապարակս նորա , ասասջիք , Եւ զփո-
շիս որ կառուեալ է ի քաղաքէ ձերմէ յոտս մեր՝
թօթափեսցուք ի ձեզ . բայց զայս գիտասջիք զի
12 մերձեալ է արքայութիւն Աստուծոյ : Ասեմ ձեզ ,
զի Սոդոմացւոց ընդարձակագոյն լիցի յաւուրն յայն-
13 միկ քան քաղաքին այնմիկ : Վայ քեզ , Քորազին ,
վայ քեզ , Բեդսայիդա , զի եթէ ի Տիւրոս և ի
Սիդովն եղեալ էին զօրութիւնքն՝ որ եղեն ի ձեզ ,
վաղուց եւս արդեօք ի խորտ և ի մոխիր նստեալ
14 ապաշխարեալ էր : Բայց Տիւրոսի և Սիդովնի ըն-
15 դարձակագոյն լիցի ի դատաստանի քան ձեզ : Եւ
դու , Կափառնայում՝ որ մինչեւ յերկինս բարձա-
16 ցեալ ես , մինչեւ ի դժոխս իջցես : Որ ձեզ լսէ՝
ինձ լսէ , և որ զձեզ անարգէ՝ զիս անարգէ . և որ
զիս անարգէ՝ զառաքիչն իմ անարգէ . և որ ինձ
17 լսէ՝ լսէ այնմիկ որ զիս առաքեաց : Դարձան եօ-
թանասունն և երկուքն խնդութեամբ և ասեն , Տէր ,
18 և դեւք հնազանդին մեզ յանուն քո : Եւ ասէ
ցնոսա , Տեսանէի զՍատանայ անկեալ յերկնից իբ-
19 րեւ զփայլակն : Ահա ետու ձեզ իշխանութիւն կո-
խել զօձս և զկարիճս և զամենայն զօրութիւն թըշ-
20 նամւոյն , և ձեզ ոչինչ մեղանչիցէ : Բայց ընդ այն
մի խնդայք եթէ այսք հնազանդին ձեզ . այլ խընդ-
21 դացեք զի անուանք ձեր գրեալ են յերկինս : Ի նմին
ժամու ցնծացաւ Յիսուս *Հոգւովն Սրբով՝՝ և ասէ ,
Գոհանամ զքեզ , Հայր՝ Տէր երկնից և երկրի , զի
ծածկեցեր զայս յիմաստնոց և ի գիտնոց , և յայտ-
նեցեր զայս աղուոց . այո , Հայր , զի այսպէս հա-

* Ցոյնն՝ Հոգւով

22 ճշ եղեւ առաջի քո ։ Ամենայն ինչ տուաւ ինձ ի
Հօրէ իմմէ . և ոչ ոք գիտէ թէ ով է Որդի , եթէ
ոչ՝ Հայր , և ո է Հայր , եթէ ոչ՝ Որդի , և ումա
23 կամիցի Որդին յայտնել ։ Եւ դարձեալ առանձինն
առ աշակերտան ասէ , Երանի աչաց՝ որ տեսանիցեն
24 զոր տեսանէք դուք ։ Ասեմ՝ ձեզ , զի բազումք մարգարէք
և թագաւորք կամեցան տեսանել զոր դուք տեսա-
նէք , և ոչ տեսին . և լսել զոր լսէքդ , և ոչ լուան ։
25 Եւ ահա յարեաւ ոմն օրինական՝ փորձէր զնա և
ասէր , Վարդապետ , զի՞նչ գործեցից զի ղկեանն
26 յաւիտենականս ժառանգեցից ։ Եւ նա ասէ ցնա,
27 Յօրէնս զի՞նչ գրեալ է , ո՞րպէս ընթեռնուս ։ Նա
պատասխանի ետ և ասէ , Սիրեսցես զՏէր Աստուած
քո յամենայն սրտէ քումմէ և յամենայն անձնէ
քումմէ և յամենայն զօրութենէ քումմէ և յա-
մենայն մտաց քոց , և զընկեր քո իբրեւ զանձն քո ։
28 Եւ ասէ ցնա , Ուղիղ հատուր զպատասխանիդ , զայդ
29 արա և կեցցես ։ Նա իբրեւ կամեցաւ զանձն ար-
դարացուցանել՝ ասէ ցՅիսուս , Եւ ո՞վ է իմ ըն-
30 կեր ։ Պատասխանի ետ Յիսուս և ասէ , Այր մի ի-
ջանէր յԵրուսաղէմ յԵրիքով , և անկաւ ի ձեռս
աւազակաց , որք մերկացուցին զնա և վէրս ի վէ-
31 րայ եդին , թողին կիսամահ և գնացին ։ Դէպ եղեւ
քահանայի միոջ իջանել ընդ նոյն ճանապարհ , և
32 տեսեալ զնա՝ զանց արար ։ Նոյնպէս և Ղեւտացի
մի եկեալ ընդ նոյն տեղի՝ հատես և զանց արար ։
33 Սամարացի ոմն ճանապարհորդեալ եկն ընդ նոյն
34 առ նովաւ , և տեսեալ զնա գթացաւ ։ Եւ մա-
տուցեալ պատեաց զվէրս նորա , արկեալ ի վերայ
ձէթ և գինի . և եդեալ ի վերայ գրաստու իւրոյ՝

35 տաճ զնա ի պանդոկի մի , և դարմանեաց զնա ։ Եւ
ի վաղիւ անդր իբրեւ ելանէր անտի , հանեալ ետ
ցպանդոկապետն երկուս դահեկանս և ասէ , Դար-
մանն տար դմա , և զոր ինչ ծախեսցես ի դա՝ ի
միւսանգամ գալստեան իմում հատուցից քեզ ։
36 Արդ ո՞ յերեցուանց ի նոցանէ թուի քեզ մերձա-
37 ւոր լեալ անկելոյն ի ձեռս աւազակացն ։ Եւ նա
ասէ , Որ արար ողորմութիւնն ի վերայ նորա ։
38 Ասէ ցնա Յիսուս , Երթ և դու արա նոյնպէս ։ Եւ
եղեւ ի գնալն նոցա , և ինքն եմուտ ի գեօղ մի .
և կին ոմն անուն Մարթա ընկալաւ զնա ի տան
39 իւրում ։ Եւ նորա էր քոյր մի , որում անուն էր
Մարիամ , որ և եկն նստաւ առ ոտն Տեառն և
40 լսէր զբանս նորա ։ Եւ Մարթա զբաղեալ էր ի բա-
զում սպասու , եկն եկաց առ նմա և ասէ , Տէր ,
ոչինչ է փոյթ քեզ , զի քոյրդ իմ միայն եթող զիս
41 ի սպասու . արդ ասա դմա զի օգնեսցէ ինձ ։ Պա-
տասխանի ետ Յիսուս և ասէ , Մարթա , Մարթա ,
42 դու հոգաս և զբազում իւիք զբաղեալ ես , Բայց
ասա *սակաւ ինչ պիտոյ է . Մարիամ մասն բարի
ընտրեաց , որ ոչ բարձցի ի նմանէ ։

ԳԼ· ԺԱ

1 Եւ եղեւ ի տեղւոջ ուրեք կալ յաղօթս . և իբ-
րեւ դադարեաց՝ ասէ ցնա ոմն յաշակերտացն իւ-
րոց , Տէր , ուսո մեզ յաղօթս կալ , որպէս և Յով-
2 հաննէս ուսոյցն աշակերտաց իւրոց ։ Ասէ ցնոսա ,
Յորժամ կայցէք յաղօթս , ասասջիք , Հայր մեր ,

* Ի ՑԱՆՆ՝ մի

սուրբ եղիցի անուն քո . եկեսցէ արքայութիւն քո ։
3 Զհաց մեր հանապազորդ տուր մեզ զօրըստօրէն ։
4 Եւ թող մեզ զմեղս մեր , զի և մեք թողումք ամենայնի՝ որ պարտիցի մեզ . և մի տանիր զմեզ ի
5 փորձութիւն ։ Եւ ասէ ցնոսա , Ով է ի ձէնջ որոյ իցէ բարեկամ , և երթայցէ առ նա ի մէջ գիշերի և ասիցէ ցնա , Բարեկամ , տուր ինձ փոխ երիս նը-
6 կանակս ։ Զի բարեկամ իմ եկն առ իս յուղեւոյ ,
7 և ոչինչ ունիմ դնել առաջի նորա ։ Եւ նա ի ներքուստ տայցէ պատասխանի և ասիցէ , Մի աշխատ առներ զիս , զի դուրգդ փակեալ են , և մանկունքս ընդ ինեւ կան յանկողնի , ոչ կարեմ յառ-
8 նել և տալ քեզ ։ Ասեմ ձեզ , եթէ ոչ յարուցեալ տայցէ նմա վասն բարեկամութեանն , սակայն վասն ժուռթեանն յարուցեալ տայցէ նմա՝ զինչ
9 և պիտոյ իցէ ։ Եւ ես ասեմ ձեզ , խնդրեցէք և տացի ձեզ , հայցեցէք և գտջիք , բախեցէք և բաց-
10 ցի ձեզ ։ Զի ամենայն որ խնդրէ՝ առնու , և որ
11 հայցէ՝ գտանէ , և որ բախէ՝ բացցի նմա ։ Յո՞ր ի ձէնջ հայր՝ խնդրիցէ որդի իւր ձուկն , մինէ
12 փոխանակ ձկանն օ՞ձ տայցէ նմա ։ Եւ կամ՝ խնդրիցէ
13 ձու , մինէ կարի՞ճ տայցէ նմա ։ Իսկ եթէ դուք որ չարքդ էք՝ դիտէք պարգեւս բարիս տալ որդւոց ձերոց , ո՞րչափ եւս առաւել Հայր ձեր յերկնից տայցէ *բարիս այնոցիկ , որ խնդրենն ի նմանէ ։
14 Եւ հանէր դեւ մի համր , և եղեւ յելանել դիւին խօսեցաւ համրն , և զարմացան ամենայն ժողո-
15 վուրդքն ։ Եւ ոմանք ի նոցանէ ասեն , Բէեղզեբուղ

* Ի Յայնմ՝ Սուրբ Հոգին

16 զառ իշխանաւն դիւաց Հանէ դա զդեւս ։ Եւ այլք
17 փորձելին և նշան յերկնից խնդրէին ի նմանէ ։ Իսկ նորա դիտացեալ զխորհուրդս նոցա , ասէ ցնոսա , Ամենայն թագաւորութիւն բաժանեալ յանձն՝ ա-
18 ւերի , և տուն բաժանեալ յանձն՝ կործանի ։ Ապա եթէ և Սատանայ բաժանեցաւ յանձնէ , զիա՞րդ կայցէ թագաւորութիւն նորա . զի ասէք զինէն եթէ Բէեղզեբուղաւ իշխանաւն դիւաց Հանէ դա
19 զդեւս ։ Եթէ ես Բէեղզեբուղաւ Հանեմ զդեւս , որդիքն ձեր ի՞ւ Հանիցեն . վասն այդորիկ նոքին ե-
20 զիցին ձեր դատաւորք ։ Իսկ եթէ մատամբ Աստուծոյ Հանեմ զդեւս , ապա Հասեալ է ի վերայ ձեր
21 արքայութիւն Աստուծոյ ։ Յորժամ Հզօր վառեալ՝ պահիցէ զտուն իւր , ի խաղաղութեան են ինչք
22 նորա ։ Բայց եթէ Հզօրագոյն քան զնա ի վերայ եկեալ՝ յաղթեսցէ նմա , զսպառազինութիւնն Հանէ՝ յոր յուսացեալ էր , և զաւար նորա բաշխես-
23 ցէ ։ Որ ոչ է ընդ իս՝ Հակառակ իմ է , և որ ոչ
24 ժողովէ ընդ իս , ցրուէ ։ Յորժամ պանն պիղծ ելանիցէ ի մարդոյ՝ շրջի ընդ անջրդին տեղիս , խնդրէ Հանգիստ . և իբրեւ ոչ գտանէ , ասէ , Դարձայց
25 անդրէն ի տուն իմ ուստի ելի ։ Եւ գոյ գտանէ
26 մաքրեալ և յարդարեալ ։ Յայնժամ երթայ և առնու եօթն այլ ոգիս չար եւս քան զինքն , և մտանէ բնակէ անդ . և լինի յետինն մարդոյն այնորիկ
27 չար քան զառաջինն ։ Եւ եղեւ մինչդեռ խօսէր զայս , ձայն երարձ կին մի ի ժողովրդենէ անտի և ասէ , Երանի է որովայնին՝ որ կրեացն զքեզ , և
28 ստեանցն՝ որ դիեցուցին զքեզ ։ Եւ նա ասէ , Նա երանի այնոցիկ է , որ լսեն զբանն Աստուծոյ և

29 առնեն ։ Եւ ի դիզանել ի վերայ նորա ժողովրդա-
ցըն՝ սկսաւ ասել, Ազգս այս ազգ չար է, նշան
խնդրէ, և նշան չի երկինից ոչ տացի սմա՝ բայց նը-
30 շանն *Յովնանու ։ Զի որպէս եղեւ Յովնան նշան Նի-
նուէացւոց, այնպէս եղիցի և Որդի մարդոյ ազգիս
31 այսմիկ ։ Դշխոյն հարաւոյ յարիցէ ի դատաստանի
ընդ արս ազգիս այսորիկ և դատապարտեսցէ զսո-
սա, զի եկն ի ծագաց երկրի լսել զիմաստութիւնն
Սողոմոնի. և ահա առաւել քան զՍողոմոն է աստ։
32 Արք Նինուէացիք յարիցեն ի դատաստանի ընդ
ազգիս ընդ այսմիկ և դատապարտեսցեն զսա, զի
ապաշխարեցին ի քարոզութեանն Յովնանու. և
ահա առաւել քան զՅովնան է աստ։
33 Ոչ ուրուք լուցեալ ճրագ դնէ ի թաքստեան,
և ոչ ընդ գրուանաւ՝ այլ ի վերայ աշտանակի,
34 զի որ մտանեն՝ լոյս տեսանիցեն ։ Ճրագ մարմնոյ
ակն է. յորժամ ակն առատ է, ամենայն մար-
մինն լուսաւոր եղիցի. և երբ ակն չար է, և մար-
35 մինն խաւարին եղիցի ։ Արդ զգաշ լեր, զուցէ լոյ-
36 սըդ որ ի քեզ է՝ խաւար իցէ ։ Եթէ մարմինդ քո
ամենայն լուսաւոր է և չունի մասն ինչ խաւա-
րին, եղիցի լուսաւոր ամենայն. որպէս յորժամ
37 ճրագն նշուլիւք լուսաւորեսցէ զքեզ։ Եւ մինչդեռ
խօսէր զայս, աղաչէր զնա ոմն փարիսեցի զի ճաշ
38 կերիցէ առ նմա. և նա մտեալ բազմեցաւ ։ Իբրեւ
եւս փարիսեցին՝ զարմացաւ, զի նախ ոչ մկրտե-
39 ցաւ յառաջ քան զճաշ։ Ասէ ցնա Տէր, Այժմ
դուք փարիսեցիք զարտաքին բաժակին և զպնա-

* Ի ց՝՝՝

52 Յաղդէ Յայդմանէ ։ Վայ ձեզ օրինականացդ , զի
Թաքուցանէք զփականս գիտութեանն . դուք ոչ
53 մտանէք , և որ մտանելոցն են՝ արգելուք ։ Եւ ի
խօսիլն զայս ամենայն առ նոսա *առաջի ամենայն
ժողովրդեանն , զամօթի հարկանէին . և՝ սկսան
դպիրքն և փարիսեցիք զչարել և դրդռել ընդ նմա
54 վասն բազում երց . Եւ սպասել որսալ ինչ բանս
ի բերանոյ նորա , զի չարախօսեսցեն զնմանէ ։

Գլ· ԺԲ

1 Որովք ի կուտել բիւրաւորաց ժողովրդեանն՝
մինչեւ կոխել զմիմեանս , սկսաւ ասել ցաշակերտան
իւր · Նախ զդոյշ լերուք անձանց ի խմորոյ փարի-
2 սեցւոցն , որ է կեղծաւորութիւն ։ Զի ոչինչ է ի
ծածուկ որ ոչ յայտնեսցի , և գաղտնի՝ որ ոչ ծա-
3 նիցի ։ Վասն զի զոր ինչ ասիցէք ի խաւարի , լսե-
լի լիցի ի լոյս . և զոր յունկնանէն խօսեցարուք ի
4 շտեմարանս , քարոզեսցի ի վերայ տանեաց ։ Բայց
ձեզ ասեմ սիրելեաց իմոց , Մի՛ զարհուրիցէք յայն-
ցանէ որ սպանանէն զմարմին , և յետ այնորիկ ա-
5 ւելի ինչ ոչ ունիցին առնել ։ Այլ ցուցից ձեզ
յումմէ երկնչիցիք · Երկնչիջիք յայնմանէ՝ որ յետ
սպանանելոյ ունի իշխանութիւն արկանել ի գե-
6 հեն . այո՝ ասեմ ձեզ , ցայնմանէ երկնչիջիք ։ Ո՞չ
ապաքէն հինգ ճադ երկուց դանգաց վաճառի , և
մի ի նոցանէ ոչ է մոռացեալ առաջի Աստուծոյ ։
7 Այլ ձեր և ամենայն իսկ հեր գլխոյ թուեալ է .
մի երկնչիք , զի քան զբազում ճագս լաւ էք դուք ։

* Ի Յայն էր ։

8 Ասեմ ձեզ զի Ամենայն որ խոստովանեսցի յիս ա-
ռաջի մարդկան , և Որդի մարդոյ խոստովանեսցի
9 զնմանէ առաջի հրեշտակաց Աստուծոյ ։ Եւ որ ու-
րասցի զիս առաջի մարդկան , ուրացեալ լիցի ա-
10 ռաջի հրեշտակաց Աստուծոյ ։ Եւ ամենայն որ ա-
սէ բան զՈրդւոյ մարդոյ՝ թողցի նմա . բայց որ
11 զՀոգին Սուրբ հայհոյիցէ , մի թողցի նմա ։ Այլ
յորժամ տանիցին զձեզ ի ժողովուրդս և ի պե-
տութիւնս և յիշխանութիւնս , մի հոգայցէք՝ որ-
պես թէ զի՞նչ պատասխանի տայցէք կամ զի՞նչ
12 ասիցէք ։ Զի Հոգին Սուրբ ուսուսցէ ձեզ ի նմին
ժամու՝ զինչ պարտ իցէ խօսել ։
13 Ասէ ոմն ի ժողովրդենէն ցնա , Վարդապետ ,
ասա ցեղբայր իմ բաժանել ընդ իս զժառանգու-
14 թիւնն ։ Եւ նա ասէ ցնա , Այր դու , ո՞ կացոյց
զիս դատաւոր կամ բաժանարար ի վերայ ձեր ։
15 Եւ ասէ ցնոսա , Տեսէք և զգոյշ լերուք յամենայն
ագահութենէ , զի ոչ երէ ի մեծերից ընչից ուրուք
16 իցեն կեանք նորա ։ Խօսեցաւ առ նոսա առակ մի
և ասէ , Այն ուրումն մեծատան հաուն անդ տոհ-
17 մակոս . Եւ խորհէր ի միտս իւր և ասէր , Զի՞
գործեցից՝ զի ոչ գոյ տեղի ուր ժողովեցից զար-
18 դիւնս իմ ։ Եւ ասէ , *Գիտեմ զինչ՝՝ արարից ,
քակեցից զչտեմարանս իմ , և եւս մեծամեծս շի-
նեցից , և անդր ժողովեցից զցորեան և զամենայն
19 բարութիւնս իմ ։ Եւ ասացից ցանձն իմ , Անձն ,
ունիս բազում բարութիւնս համբարեալ ամաց
20 բազմաց · Հանգիր , կեր , արբ և ուրախ լեր ։ Ասէ

* Ի Յայն՝ Զայս

ցնա Աստուած, Անմիա, յայսմ գիշերի զոգիդ ի
քէն ի բաց պահանջիցեն, իսկ զոր պատրաստե-
21 ցերն՝ ո՞ւմ լինիցի։ Նոյնպէս և որ գանձ անձին,
22 և ոչ յԱստուած մեծանայցէ։ Ասէ ցաշակերտան
իւր, վասն այդորիկ ասեմ ձեզ, մի՛ հոգայք ընդ
ոգւոյ թէ զի՞նչ ուտիցէք, և մի ընդ մարմնոյ թէ
23 զի՞նչ զգենուցուք։ Զի ոգի առաւել է քան զկե-
24 րակուր՝ և մարմին քան զհանդերձ։ Հայեցարուք
ընդ ագռաւս, զի ոչ սերմանեն և ոչ հնձեն, որոց
ոչ գոն շտեմարանք և ոչ համբարանոցք, և Աս-
տուած կերակրէ զնոսա. ո՞րչափ եւս առաւել զձեզ՝
25 որ լաւ էք քան զթռչունս։ Ո՞վ ի ձէնջ առ հո-
գալ կարիցէ յաւելուլ ի հասակ իւր կանգուն մի։
26 Իսկ արդ եթէ ի փոքուն չէք բաւական, վասն այ-
լոցն զի՞ հոգայցէք։ Հայեցարուք ընդ շուշանն՝
որպէս աճէ, ոչ ջանայ և ոչ նիւթէ. ասեմ ձեզ,
և ոչ Սողոմն յամենայն ի փառան իւր զգեցաւ
28 իբրեւ զմի ի նոցանէ. Իսկ եթէ զխոտն՝ որ այսօր
ի բացի է և վաղիւ ի հնոց արկանելի, Աստուած
այնպէս զգեցուցանէ, ո՞րչափ եւս առաւել զձեզ,
29 թերահաւատք։ Եւ դուք մի՛ խնդրէք՝ զի՛նչ ուտի-
30 ցէք կամ զի՛նչ ըմպիցէք, և մի՛ զբաղնուք. Զի
զայն ամենայն հեթանոսք աշխարհի խնդրեն. այլ
31 ձեր Հայր գիտէ զի պիտոյ է այն ամենայն։ Բայց
խնդրեցէք զարքայութիւն Աստուծոյ, և այն ամե-
նայն յաւելցի ձեզ։
32 Մի՛ երկնչիր, հօտ փոքրիկ, զի հաճեցաւ Հայր
33 ձեր տալ ձեզ զարքայութիւն։ Վաճառեցէք զինչս
ձեր և տուք ողորմութիւն. և արարէք ձեզ քսակս
առանց հնանալոյ, գանձ անպակաս յերկինս. ուր

34 ոչ գող մերձենայ և ոչ ցեց ապականէ։ Զի ուր
35 գանձն ձեր է, անդ և սիրտք ձեր եղիցին։ Եղի-
ցին գօտիք ձեր պնդեալ ընդ մէջս, և ճրագունք
36 լուցեալք։ Եւ դուք նմանողք մարդկան՝ որ սպն
ունիցին տեառն իւրեանց թէ երբ դառնայցէ ի
հարսանեաց. զի յորժամ գայցէ և բաղխիցէ, վաղ-
37 վաղակի բանայցեն նմա։ Երանի իցէ ծառայիցն այ-
նոցիկ՝ զորս եկեալ տէրն գտցէ արթունս. ամէն
ասեմ ձեզ՝ զի գօտի ընդ մէջ ածցէ և բազմեցուս-
38 ցէ զնոսա, և անցեալ պաշտիցէ զնոսա։ Եւ եթէ
յերկրորդ կամ յերրորդ պահու եկեսցէ և գտցէ
39 այնպէս, երանելի են ծառայքն այնոքիկ։ Բայց
զայն գիտասջիք, եթէ գիտէր տանուտէրն յորում
ժամու գող գայ՝ հսկէր, և չտայր թող ական
40 հատանել ի տան իւրում։ Եւ դուք եղերուք պատ-
բաստք, զի յորում ժամու ոչ կարծիցէք, գայ
41 Որդի մարդոյ։ *Ասէ Պետրոս, Տէր, առ մե՞զ ա-
42 սացեր զառակդ զայդ եթէ առ ամենեսեան։ Եւ
ասէ Տէր, Ո՞վ իցէ հաւատարիմ անտես և խմա-
տուն, զոր կացուցէ տէր իւր ի վերայ դերդաստանի
43 իւրոյ տալ ի ժամու դկերակուրս։ Երանի իցէ ծա-
ռային այնմիկ՝ զոր եկեալ տէր իւր գտանիցէ ա-
44 րարեալ այնպէս։ Ամբարեւ ասեմ ձեզ զի ի վե-
45 րայ ամենայն ընչից իւրոց կացուսցէ զնա։ Ապա
եթէ ասիցէ ծառայն այն ի սրտի իւրում, Յամէ
տէր իմ ի գալ. և սկսանիցի հարկանել զծառայսն և
46 զաղախնեայս, ուտել և ըմպել և արբենալ։ Եկեսցէ
տէր ծառային այնոքիկ՝ յաւուր յորում ակն ոչ

---

* Ի ՅՈՒՆ՝ Ասէ ցնա

ունիցի, և ի ժամու յորում ոչ դիտիցէ· ընդ մէջ
կարեսցէ զնա, և զմասն նորա ընդ անհաւատս դի-
47 ցէ ։ Եւ ծառայ որ դիտիցէ զկամս տեառն իւրոյ
և ոչ պատրաստեսցէ ըստ կամաց նորա , արիցէ
48 դան բազումս ։ Եւ որ ոչն դիտիցէ և արժանի գա-
նի ինչ գործիցէ , արիցէ դան սակաւ . ամենայնի
որուն շատ տուաւ , շատ խնդրեսցի ի նմանէ , և
որուն բազում աւանդեցաւ , առաւել եւս պա-
հանջեսցեն ի նմանէ ։
49 Հուր եկի արկանել յերկիր . և զի՞նչ կամիմ
50 թէ արդէն խակ բորբոքեր ։ Եւ մկրտութիւն մի ու-
նիմ մկրտիլ , և զիա՞րդ փութամ մինչեւ կատա-
51 րեսցի ։ Համարի՞ք եթէ խաղաղութիւն եկի տալ
52 յերկիր · Ոչ, ասեմ ձեզ, այլ բաժին ։ Ձի եղի-
ցին յայսմ հետէ հինգ ի տան միում բաժանեալք,
53 երեքն յերկուց , և երկուքն յերից ։ Բաժանեսցի
հայր յորդւոյ և որդի ի հօրէ , մայր ի դստերէ և
դուստրն ի մօրէ , սկեսուր ի հարսնէ և հարսն ի
54 սկեսրէ իւրմէ ։ Ասաց և ցժողովուրդսն , Յորժամ տե-
սանիցէք ամպ ծագեալ յարեւմտից , իսկոյն ասէք
55 թէ Անձրեւ գայ , և լինի այնպէս . Եւ յորժամ
հարաւ հնչեալ, ասէք թէ խորշակ լինի , և լինի
56 այնպէս ։ Կեղծաւորք , զերեսս երկնի և երկրի դի-
տէք փորձել , իսկ զժամանակս զայս զիա՞րդ ոչ
57 փորձէք ։ Ընդէ՞ր և յանձանց իսկ ոչ ընարէք զար-
58 ժանն ։ Յորժամ երթայցես ընդ ոսոխի քում առ
իշխան , ի ճանապարհի տուր զհաշիւն զերծանել
ի նմանէ . զի գուցէ քաշիցէ զքեզ առ դատա-
ւորն , և դատաւորն մատնիցէ դահճի , և դահիճն
59 արկանիցէ ի բանտ ։ Ասեմ քեզ, Ոչ ելանիցես ան-
տի մինչեւ հատուցանիցես զվերին ընիսոն ։

Գ.Լ· ԺԳ

1 Եկին ոմանք ի նմին ժամանակի և պատմեցին
նմա վասն Գալիլեացւոցն , որոց զարիւնն Պիղատոս
2 խառնեաց ընդ զոհս նոցա ։ Պատասխանի ետ և ասէ
ցնոսա, Համարի՞ք եթէ այն Գալիլեացիք եղեն մե-
ղաւորք քան զամենայն Գալիլեացիս , զի զայնպիսի
3 անցս կրեցին . Ոչ, ասեմ ձեզ, այլ եթէ ոչ ա-
4 պաշխարիցէք՝ ամենեքին նոյնպէս կորնչիջիք ։ Կամ
նոքա ուժտասանքն , յորոց վերայ աշտարակն
անկաւ ի Սելովամ և սպան զնոսա . Համարի՞ք եթէ
նոքա պարտապանք եղեն քան զամենայն մարդիկ՝ որ
5 բնակեալ են Երուսաղէմ. Ոչ, ասեմ ձեզ· այլ եթէ
ոչ ապաշխարիցէք՝ ամենեքեան նոյնպէս կորնչիջիք ։
6 Ասաց և զառակս զայս . Թզենի մի էր ուրումն
տնկեալ յայգւոջ իւրում , և եկն խնդրել պտուղ
7 ի նմանէ և ոչ եգիտ ։ Ասէ ցայգեգործն , Ահա
երեք ամք են՝ յորմէ հետէ գամ խնդրել պտուղ ի
թզենւոյդ և ոչ գտանեմ. արդ կորեա զդա , ընդ-
8 դէ՞ր և զերկիրդ խափանէ ։ Նա պատասխանի ետ
և ասէ , Տէր , թող զդա այս ամ եւս , մինչեւ
9 շուրջ զդովաս բրեցից և արկից աղբ . Թերեւս ա-
բասցէ պտուղ . ապա թէ ոչ՝ յամէ եւս հատցես
զդա ։
10 Եւ ուսուցանէր ի միում ի ժողովրդանոցացն ի
11 շաբաթս ։ Եւ ահա կին մի՝ զոր ունէր ոգի հիւան-
դութեան ամ ութեւտասան , և էր կարկամեալ , և
12 ոչ կարէր ամենեւին ի վեր հայել ։ Եւ տեսեալ
զնա Յիսուսի՝ կոչեաց առ ինքն և ասէ ցնա , Կին

դա, արձակեալ ես 'ի հիւանդութենէ քումմէ։
13 Եւ եդ 'ի վերայ նորա ձեռն, և առժամայն ուղղե-
14 ցաւ և փառաւոր առնէր զԱստուած։ Պատասխա-
նի եւս ժողովրդապետն՝ ցասուցեալ թէ ընդէր 'ի
շաբաթու բժշկեաց Յիսուս, և ասէ ցժողովուրդն,
Վեց օր է՝ յորս արժան է գործել, յայնս եկեալք
15 բժշկեցարուք, և մի' յաւուր շաբաթու։ Պատաս-
խանի եւս նմա Տէր և ասէ, Կեղծաւորք, իւրա-
քանչիւր ոք 'ի ձէնջ 'ի շաբաթու ո՞չ արձակէ զեզն
16 իւր կամ զէշ 'ի մսրոյ՝ և տանի ապ ջուր։ Իսկ
այս՝ դուստր Աբրահամու էր. զոր կապեաց Սատա-
նայ ահաւադիկ ութետասան ամ, ո՞չ էր արժան
17 արձակել 'ի կապանաց անտի 'ի շաբաթու։ Եւ զայս
իրբեւ ասէր, յամօթ լինէին ամենեքին որ հակա-
ռակն կայն նմա. և ամենայն ժողովուրդն ուրախ
լինէր 'ի վերայ ամենայն փառաւորութեանցն, որ
18 գործէին 'ի նմանէ։ Եւ ասէր, Ո՞ւմ նման է սր-
քայութիւն Աստուծոյ, և որո՞ւմ նմանութեան
19 նմանեցուցից զնա։ Նման է հատոյ մանանխոյ, զոր
առեալ մարդոյ արկ 'ի պարտէզ իւր. աճեաց և
եղեւ ծառ, և թռչունք երկնից բնակեալ էին յոս-
20 պս նորա։ Եւ դարձեալ ասէ, Ո՞ւմ նմանեցուցից
21 զարքայութիւն Աստուծոյ. Նման է խմորոյ՝ զոր
առեալ կնոջ թաքոյց յալիր երից գրուանց՝ մինչեւ
խմորեցաւ ամենայն։
22 Եւ շրջէր ընդ քաղաքս և ընդ գեօղս՝ ուսուցա-
23 նէր. և ճանապարհ արարեալ Երուսաղէմ, Ասէ
ոմն ցնա, Տէր, եթէ սակաւք իցեն՝ որ ապրիլոց
24 իցեն. և նա ասէ ցնոսա, Ջանացարուք մտանել
ընդ դուռն նեղ. ասեմ ձեզ զի բազումք խնդրես-

25 ցեն մտանել և ոչ կարասցեն։ Յորմէ հետէ մոցէ
տանուտէրն և փակեսցէ դրուռնն, և սկսանիցիք
կալ արտաքոյ և բախել դրուռնն և ասել, Տէր,
Տէր, բաց մեզ. և պատասխանի տուեալ ասիցէ
26 ձեզ, Ոչ գիտեմ զձեզ ուստի էք։ Յայնժամ սկ-
կսանիցիք ասել, Կերաք առաջի քո և արբաք, և
27 'ի հրապարակս մեր ուսուցեր։ Եւ ասիցէ, Ասեմ
ձեզ, ոչ գիտեմ զձեզ ուստի էք. 'ի բաց կացէք
28 յինէն ամենայն մշակք անիրաւութեան։ Անդ
եղկեալ լալ և կրճել ատամանց. յորժամ տեսա-
նիցէք զԱբրահամ և զիսահակ և զՅակովբ և զա-
մենայն մարգարէս յարքայութեան Աստուծոյ, և
29 զձեզ հանեալ արտաքս։ Եւ եկեսցեն յարեւելից
և յարեւմտից և 'ի հիւսիսոյ և 'ի հարաւոյ, և բազ-
30 մացին յարքայութեան Աստուծոյ։ Եւ ահա իցեն
յետինք՝ որ եղիցին առաջինք, և իցեն առաջինք՝
31 որ լինիցին յետինք։ Ի նմին աւուր մատեան ոմանք
փարիսեցիք և ասեն ցնա, Ել և գնա աստ, զի հե-
32 րոդէս կամի սպանանել զքեզ։ Եւ ասէ ցնոսա,
Երթայք ասացէք աղուեսուն այնմիկ, Ահաւասիկ
հանեմ դեւս, և բժշկութիւնս կատարեմ այսօր և
33 վաղիւ, և յերրորդ աւուր կատարիմ։ Բայց պարտ է
այսօր և վաղիւ և 'ի միւսում աւուր գնալ. զի ոչ
է մարթ մարգարէի կորնչել արտաքոյ քան զԵրու-
34 սաղէմ։ Երուսաղէմ, Երուսաղէմ, որ կոտորէիր
զմարգարէս և քարկոծ առնէիր զառաքեալսն առ
քեզ, քանի՞ցս անգամ կամեցայ ժողովել զորդիս
քո, որպէս հաւ զձագս իւր ընդ թեւովք, և ոչ
35 կամեցարուք։ Ահա թողեալ լիցի ձեզ տուն ձեր.
բայց ասեմ ձեզ, եթէ ոչ ևս տեսանիցէք զիս,
մինչեւ ասիցէք, Օրհնեալ եկեալն յանուն Տեառն։

ԳԼ. ԺԴ

1 Եւ եղեւ ի մոռանելն Նոբա ի տուն ուրուման իշ-
խանացն փարիսեցւոց ի շաբաթու ուտել հաց, և
2 նոքա սպասէին նմա։ Եւ ահա այր ումն էր անդ
3 ջրդողեալ առաջի Նոբա։ Պատասխանի ետ Ցիսուս
և ասէ ցօրինաւորսն և ցփարիսեցիս, եթէ Արժա՞ն
4 իցէ ի շաբաթու բժշկել։ Եւ նոքա լուռ եղեն.
և բուռն հարեալ զնմանէ՝ բժշկեաց զնա և ար-
5 ձակեաց։ Եւ ասէ ցնոսա, Ո՞ր ուրուք ի ձէնջ էշ
կամ եզն անկանիցի ի ջրհոր, և ոչ վազվազակի
6 հանիցէ զնա յաւուր շաբաթու։ Եւ ոչ կարացին
7 տալ նմա պատասխանի առ այն։ Ասաց և առ կոչ-
նակեանն առակ մի, հայեցեալ թէ զիա՛րդ բարձրն-
8 տիր լինէին, ասէ ցնոսա, Յորժամ կոչիցէ որ զք-
քեզ ի հարսանիս կամ ի կոչունս, մի բազմիցիս
յառաջին բարձրն. գուցէ պատուականագոյն եւս
9 քան զքեզ իցէ կոչեցեալ ի նմանէ. Եւ եկեալ
որ զքեզն և զնա կոչեաց՝ ասիցէ ցքեզ, Տուր սմա
տեղի. և ապա սկսանիցիս ամօթով զետին տեղին
10 ունել։ Այլ Յորժամ կոչիցիս, երթիջիր բազմ-
ջիր ի յետին տեղւոջ, զի Յորժամ գայցէ որ կո-
չեացն զքեզ, ասիցէ ցքեզ, Բարեկամ, ի վեր
մատիր. Յայնժամ եղիցին քեզ փառք առաջի բար-
11 ձակացն քոց։ Զի ամենայն որ բարձրացուցանէ
զանձն, խոնարհեսցի. և որ խոնարհեցուցանէ զան-
ձըն, բարձրասցի։
12 Ասէ և ցկոչնատէրն, Յորժամ առնիցես ճաշ
կամ ընթրիս, մի՛ կոչեր զբարեկամս քո, և մի՛ զեղ-

բարս քո, և մի՛ զազգականս քո, և մի՛ *զդրացիս
քո և մի՛ զմեծատունս." զի մի և նոքա փոխարէն
13 կոչեսցեն զքեզ, և լինիցի քեզ հատուցումն։ Այլ
Յորժամ առնիցես ընդունելութիւն, կոչեա զաղ-
14 քատս և զխեղս և զկաղս և զկոյրս. Եւ երանելի
լինիցիս. զի ոչ ունին փոխարէն հատուցանելոյ
քեզ, և հատուսցի քեզ փոխարէն ի յարութեան
15 արդարոց։ Իբրեւ լուաւ զայս ումն ի բազմականացն
ասէ ցնա, Երանի որ կերիցէ ճաշ յարքայութեան
16 Աստուծոյ։ Եւ նա †ասէ, Այր ումն գործեաց ըն-
17 թրիս և հրաւիրեաց զբազումս։ Եւ առաքեաց զծա-
ռայ իւր ի ժամու ընթրեացն կոչել զհրաւիրեալսն,
թէ եկայք, զի ահաւասիկ պատրաստ է ամենայն
18 ինչ։ Եւ սկսան մի ըստ միոջէ ամենեքեան հրաժա-
րել. Առաջինն ասէ, Գտարակ գնեցի, և հարկ է
ելանել տեսանել զնա, աղաչեմ զքեզ՝ կալ զիս
19 հրաժարեալ։ Եւ միւսն ասէ, Լուծս հինգ եզանց
գնեցի և երթամ փորձել զնոսա, աղաչեմ զքեզ՝
20 կալ զիս հրաժարեալ։ Եւ միւսն ասէ, Կին ածի,
21 և վասն այնորիկ ոչ կարեմ գալ։ Եւ եկեալ ծա-
ռայն պատմեաց զայն տեառն իւրում. Յայնժամ
բարկացեալ տանուտէրն՝ ասէ ցծառայն իւր, Ել
վազվազակի ի հրապարակս և ի փողոցս քաղաքիդ,
և զաղքատս և զխեղս և զկաղս և զկոյրս մյծ այ-
22 սր։ Եւ ասէ ծառայն, Տէր, եղեւ զոր հրամայե-
23 ցեր և կայ եւս տեղի։ Եւ ասէ տէրն ցծառայն,
Ել ի ճանապարհս և ի ցանգս, և արա այսր մը-

* Ի Ց՚ԺԱ՚՝ զդրացիս քո մեծատունս.
† Ի Ց՚ԺԱ՚՝ ասէ ցնա.

24 առնել , զի լցցի տունս իմ : Ասեմ ձեզ , զի
Ոչ ոք յայնց կոչեցելոց ճաշակեսցէ յընթրեաց իմոց :
25 Եւ երթային ընդ նմա ժողովուրդք բազումք .
26 դարձաւ և ասէ ցնոսա , Եթէ ոք գայ առ իս , և
ոչ ատեայ զՀայր իւր և զմայր և զկին և զորդիս և
զեղբարս և զքոյր , նա և զանձն եւս իւր , ոչ կա-
27 րէ իմ աշակերտ լինել : Զի որ ոչ բառնայ զխաչ
իւր և գայ զկնի իմ , ոչ կարէ իմ աշակերտ լինել :
28 Ո՞վ ոք ի ձէնջ կամիցի շինել աշտարակ , և ոչ
նախ նստեալ համարիցի զծախսն՝ եթէ ունիցի բա-
29 ւական ի կատարումն . Զի գուցէ իբրեւ արկանիցէ
հիմն՝ և ոչ կարիցէ կատարել , ամենեքեան որ
30 տեսանիցեն , սկսանիցին ծաղր առնել զնա , Եւ
ասել Թէ Այս այր սկսաւ շինել , և ոչ կարաց կա-
31 տարել : Կամ ո՞ր թագաւոր երթեալ տայցէ պա-
տերազմ ընդ այլում թագաւորի , և ոչ նստեալ
նախ խորհիցի , եթէ կարող իցէ տասն հազարաւ
զդէմ ունել զայնորիկ՝ որ գայցէ ի վերայ նորա
32 քսան հազարաւ : Ապա թէ ոչ՝ մինչդեռ հեռագոյն
իցէ , հրեշտակութիւն առաքեալ աղաչեսցէ ի խա-
33 զաղութիւն : Այդ այսպէս ամենայն ոք ի ձէնջ՝ որ
ոչ հրաժարեսցէ յամենայն ընչից իւրոց , ոչ կարէ
34 իմ աշակերտ լինել : Բարւոք է աղ . ապա թէ աղն
35 անհամեսցի , ի՛ւ համեմեսցի : Ոչ յերկիր և ոչ
յաղբ է պիտանացու , այլ ընկենուլ զնա արտա-
քսս : Որ ունիցի ականջս լսելոյ՝ լսիցէ :

Գլ . ԺԵ

1 Եւ էին մերձ առ նա ամենայն մաքսաւորք և մե-
2 ղաւորք՝ լսել ի նմանէ : Տրանջէին փարիսեցիքն և

դպիրքն և ասէին , Ընդէ՞ր սա զմեղաւորս ընդունի
3 և ուտէ ընդ նոսա : Ասաց առ նոսա զառակս զայս .
4 Ո՞վ ոք իցէ ի ձէնջ մարդ՝ որոյ իցէ հարիւր ոչ-
խար , և կորուսանիցէ մի ի նոցանէ . ո՞չ թողու-
ցու զինսնսուն և զինն յանապատի , և երթայցէ
5 զկնի կորուսելոյն՝ մինչեւ գտանիցէ զնա : Եւ իբ-
րեւ գտանէ , դնէ զնա ի վերայ ուսոց իւրոց խընդ-
6 դալով , Եւ երթայ ի տուն , կոչէ զբարեկամս և
զդրացիս , և ասէ ցնոսա , Ուրախ եղերուք ընդ իս ,
7 զի գտի զոչխարս իմ զկորուսեալ : Ասեմ ձեզ , զի
Այսպէս է ուրախութիւն յերկինս վասն միոյ մե-
ղաւորի որ ապաշխարիցէ՝ քան վասն իննսուն և
հնն արդարոց՝ որոց չիցէ պիտոյ ապաշխարութիւն :
8 Կամ ո՞վ իցէ կին , որ իցէ դրամք տասն . և ե-
թէ կորուսանիցէ դրամ մի , ո՞չ լուսանիցէ ճրագ
և ածիցէ աւել ի տան , և խնդրիցէ ստէպ մինչ-
9 չեւ գտանիցէ : Եւ իբրեւ գտանէ , կոչէ զբարեկա-
մսն և զդրացիս և ասէ , Ուրախ լերուք ընդ իս ,
10 զի գտի զդրամն իմ զոր կորուսի : Այնպէս՝ ասեմ
ձեզ , Ուրախութիւն եղիցի առաջի հրեշտակաց Ա-
տուծոյ ի վերայ միոյ մեղաւորի՝ որ ապաշխարիցէ :
11 Եւ ասէ , Ումն միոջ էին երկու որդիք . (12) Ասէ
կրասերն ի նոցանէ ցՀայրն , Հայր , տուր ինձ բա-
ժինն , որ անկանի յընչիցդ . և նա բաժանեաց նո-
13 ցա զկեանսն : Եւ յետ ոչ բազում աւուրց ժողո-
վեալ զամենայն կրասեր որդեացն՝ գնաց յաշխարհ
հեռի . և անդ վատնեաց զինչս իւր , զի կեայր ա-
14 նառակութեամբ : Եւ իբրեւ սպառեաց զամենայն ,
եղեւ սով առատիկ յաշխարհին յայնմիկ , և սկսաւ
15 ինքն չբաւորել : Եւ գնացեալ յարեցաւ ի մի ումն

'ի քաղաքացւոց աշխարհին այնորիկ . և յղեաց
16 զնա յագարակ իւր՝ արածել խոզս : Նա ցանկայր
ընուլ ըղրովյայն իւր յեղջերէն զոր խոզքն ուտէին,
17 և ոչ ոք տայր նմա : Եւ եկեալ 'ի միտս իւր՝ ասէ,
Քանի՛ վարձկանք իցեն 'ի տան հօր իմոյ հացա-
18 լեցք , և ես սաստ սովամահ կորնչիմ : Յարուցեալ
գնացից առ հայր իմ և ասացից ցնա , Հայր , մե-
19 ղայ յերկինս և առաջի քո , եւ ոչ եւս եմ արժա-
նի կոչիլ որդի քո , արա զիս իբրեւ զմի 'ի վարձ-
20 կանաց քոց : Եւ յարուցեալ եկն առ հայր իւր :
և մինչդեռ հեռագոյն էր , տեսս զնա հայրն և գը-
թացաւ . յարեաւ և ընթացաւ ընդ առաջ , ան-
կաւ զպարանոցաւն նորա , և համբուրեաց զնա :
21 Եւ ասէ ցնա որդին , Հայր , մեղայ յերկինս և ա-
22 ռաջի քո , ոչ եւս եմ արժանի կոչիլ որդի քո : Ա-
սէ հայրն ցծառայս իւր , Վաղվաղակի հանէք զզ-
պատմուճանն առաջինն և ագուցէք նմա , և տուք
զմատանին 'ի ձեռն նորա , և կօշիկս յոտս նորա .
23 Եւ ածէք զեզն պարարակ , զնէք , կերիցուք և ու-
24 րախ լիցուք . Զի այս որդի իմ մեռեալ էր և ե-
կեաց , կորուսեալ էր և գտաւ . և սկսան ուրախ
25 լինել : Եւ էր երէց որդին նորա յագարակի . և
մինչդեռ գայր և մերձ եղեւ 'ի տունն , լուաւ զզ-
26 ձայն երգոց և զպարուց . Եւ կոչեցեալ առ ինքն
զմի 'ի ծառայիցն՝ հարցանէր Թէ զի՞նչ իցէ այն ,
27 Եւ նա ասէ ցնա , Զի եղբայր քո եկեալ է , և ե-
զեն հայր քո զեզն պարարակ , զի ողջամբ ընկալաւ
28 զնա : Բարկացաւ և ոչ կամէր մտանել , և հայրն
29 ելեալ արտաքս՝ աղաչէր զնա : Պատասխանի ետ
և ասէ ցհայրն , Ահա քանի ամք են , զի ծառայեմ

քեզ , և երբէք զպատուիրանաւ քով ոչ անցի .
ուլ մի երբէք ոչ ետուր ինձ՝ զի ուրախ եղէց ընդ
30 բարեկամս իմ : Յորժամ եկն որդիդ քո այդ՝ որ
եկեր զկեանս քո ընդ պոռնիկս , զեզներ դմա զեզն
31 պարարակ : Եւ ասէ ցնա , Որդեակ , դու հանա-
պազ ընդ իս ես , և ամենայն որ ինչ իմ է՝ քո է .
32 Ահա ուրախ լինել և խնդալ պարտ էր , զի եղ-
բայր քո այս մեռեալ էր և եկեաց , կորուսեալ էր
և գտաւ :

Գլ· ԺԶ

1 Եւ ասէ առ աշակերտան , Ահա մի էր մեծատուն,
որոյ էր տնտես . և եղեւ զնմանէ ամբաստանուե-
2 թիւն , որպէս Թէ վատնիցէ զինչս նորա : Կոչեաց
և ասէ ցնա , Զի՞նչ է այս զոր լսեմս զքէն , տուր
զհամար տնտեսութեան քո , զի ոչ եւս կարես լի-
3 նել տնտես : Ասէ ընդ միտս իւր տնտեսն , Զի՞նչ
գործեցից , զի տէր իմ հանէ զտնտեսութիւնս .
4 *Գործել ոչ կարեմ , մուրանալ ամաչեմ : Գիտեմ
զինչ արարից . զի յորժամ 'ի բաց լինիցիմ 'ի
տնտեսութենէս՝ ընկալցին զիս 'ի տունս իւրեանց :
5 Եւ կոչեցեալ առ ինքն մի ըստ միոջէ 'ի պարտա-
պանաց տեառն իւրոյ , ասէ ցառաջինն , Քանի՞
6 ինչ պարտիս տեառն իմում : Եւ նա ասէ , Հարիւր
մար ձիթոյ . ասէ ցնա , Կա զգիր քո , և նիստ
7 գրեա վաղվաղակի հիսուն : Գարձեալ ասէ ցմիւսն ,
Դու քանի՞ ինչ պարտիս . և նա ասէ , Հարիւր

* Ի ցայն՝ բրել

քոռ ցորենոյ . և ասէ ցնա , կա զդիր քո , և նիստ
8 գրեա ուրախ . և գովէաց տէրն զանտեառն անի-
րաւութեան , զի խմաստութեամբ արար . զի որդիք
աշխարհիս այսորիկ խմաստնագոյն են քան զորդիս
9 լուսոյ յազգս իւրեանց ։ Եւ ես ձեզ ասեմ , Արա-
րէք ձեզ բարեկամս ի մամոնայէ անիրաւութեան .
զի յորժամ պակասիցէ այն՝ ընկալցին զձեզ ի
10 յարկան յաւիտենականս ։ Որ ի փոքուն հաւատա-
րիմ է , և ի բազմին հաւատարիմ է , և որ ի փո-
11 քուն անիրաւ է , և ի բազմին անիրաւ է ։ Իսկ
արդ եթէ յանիրաւ մամոնայի չեղէք հաւատա-
12 րիմք , զշմարիտն ձեզ ո՞ հաւատասցէ ։ Եւ եթէ
յօտարին չեղէք հաւատարիմք , զձերն ո՞ տացէ
13 ձեզ ։ Ոչ ոք ծառայ կարէ երկուց տերանց ծառա-
յել . զի եթէ զմին ատիցէ , և զմիւսն սիրիցէ .
կամ զմին մեծարիցէ , և զմիւսն արհամարհիցէ .
14 ոչ կարէք Աստուծոյ ծառայել և մամոնայի ։ Իբրեւ
լսէին զայս ամենայն փարիսեցիքն , քանզի արծա-
15 թասէրք էին՝ և անդրանէին զնա ։ Եւ ասէ ցնոսա ,
Դուք էք որ արդարացուցանէք զանձինս առաջի
մարդկան , սակայն Աստուած գիտէ զսիրտս ձեր .
զի որ առաջի մարդկան բարձր է , պիղծ է առաջի
16 Աստուծոյ ։ Օրէնքն և մարգարէքն մինչեւ ցՅովհան-
նէս . յայնմ հետէ աւետարանի Աստուծոյ աւե-
17 տարանի , և ամենայն ոք զնա բռնաբարէ ։ Դիւ-
րին իցէ երկինից և երկրի անցանել , քան յօրինացն
18 միոյ նշանախեցի անկանել ։ Ամենայն որ արձակէ
զկին իւր և առնէ այլ , շնայ . և որ զարձակեալն
առնէ , շնայ ։

19 Այր ոմն էր մեծատուն , և ագանէր բեհեզս և ծի-

20 բանիս և ուրախ լիներ *Հանապազ առատապէս ։ Եւ
աղքատ ոմն անուն Ղազարոս անկեալ դնէր առ դրան
21 նորա վիրաւորեալ . Եւ ցանկայր ընդուլ զորովցն իւր
ի փշրանացն՝ որ անկանէին ի սեղանոյ մեծատանն .
այլ և շունք եւս գային և լիզուին զվէրս նորա ։
22 Եւ եղեւ մեռանել աղքատին , և տանել հրեշտա-
կաց զնա ի գոգն Աբրահամու . մեռաւ և մեծա-
23 տունն և թաղեցաւ ։ Եւ ի գժոխեան ամբարձ զաչս
իւր մինչ ի տանջանսն էր . հեռու զԱբրահամ ի
հեռատանէ , և զՂազարոս ի գոգ նորա *Հանգու-
24 ցեալ ։ Եւ նա աղաղակեաց և ասէ , Հայր Աբրա-
համ , ողորմեաց ինձ , և առաքեա զՂազարոս , զի
թաւցէ զծադ մատնի իւրոյ ի ջուր , և զովացուսցէ
25 զլեզու իմ , զի պապակիմ ի տապոյ սմանի ։ Եւ
ասէ ցնա Աբրահամ , Որդեակ , յիշեա զի ընկալար
անդրէն զբարիս քո ի կեանսն քումմ , և Ղազարոս
նոյնպէս զչարչարանս . արդ սա սմա մխիթարի , և
26 դու այդր պապակիս ։ Եւ ի վերոյ այսր ամենայնի
վիհ մեծ է բնդ մեզ և †բնդ ձեզ . եթէ կամիցեն
ասմի առ ձեզ անցանել՝ ոչ կարեն , և ոչ այսմ
27 ոք առ մեզ անցանել ։ Եւ ասէ , Արդ աղաչեմ
զքեզ , Հայր , զի արձակեսցես զդա ի տուն հօր
28 իմոյ . Են իմ անդ եղբարք հինգ , որպէս զի տացէ
նոցա վկայութիւն , զի մի՛ և նոքա գայցեն յայս տե-
29 զի տանջանացս ։ Եւ ասէ Աբրահամ , Ունին զՄովսէ
30 սէս և զմարգարէս , նոցա լսիցեն ։ Եւ նա ասէ ,
Ոչ , Հայր Աբրահամ , բայց եթէ ի մեռելոց ոք եր-
31 թիցէ առ նոսա , և ապաշխարեսցեն ։ Եւ ասէ ցնա ,

* Ի ցՅՈՆ ԺԱ ։ † Ի ցՅՈՆ՝ ընդ ձեզ հաստատեալ .

եթէ Մովսիսի և մարգարէիցն ոչ լսեն , և ոչ թէ
ի մեռելոց ոք յառնիցէ՝ հաւատասցեն ։

Գլ· ԺԶ

1 Ասաց և առ աշակերտան իւր , Ոչ է մարթ չգալ
գայթակղութեան , բայց վայ այնմիկ է՝ յոյր ձեռն
2 գայցէ ։ Լաւ էր նմա թէ վէմ երկանաքար կախէր
զպարանոցն նորա և անկանէր ի ծով , քան թէ
գայթակղեցուցանէ զմի ոք ի փոքրկանցս յայսցա-
3 նէ ։ Զգուշ կացէք անձանց , եթէ մեղիցէ եղբայր
քո , սաստեա նմա . և եթէ ապաշխարիցէ , թող
4 նմա ։ Եւ եթէ եօթն անգամ մեղիցէ քեզ , և
եօթն անգամ դարձցի ի քեզ և ասիցէ , Ապաշ-
5 խարեմ , թողցես նմա ։ Եւ ասեն առաքեալքն
6 Տեր , Յաւել մեզ հաւատս ։ Եւ ասէ Տէր , եթէ
ունիցիք հաւատս քան զհատ մանանխոյ , և ասի-
ցէք թթենւոյս այսմիկ , խլեաց և տնկեաց ի ծովու ,
7 և հնազանդեսցի ձեզ ։ Իսկ ո՛վ ոք ի ձէնջ , որ ու-
նիցի ծառայ հողագործ կամ հովիւ , որ իբրեւ մի-
տանիցէ յագարակէ՝ ասիցէ ցնա վաղվաղակի , Թէ
8 Անց բազմեաց ։ Այլ ո՞չ ասիցէ ցնա Թէ պատրաս-
տեա զինչ ընթրելոց իցեմ , և գօտի ածեալ պաշ-
տեա զիս՝ մինչեւ կերայց և արբից , և ապա կերի-
9 ցես և արբցես դու ։ Միթէ շնո՞րհ ինչ ունիցի ծա-
ռային այնմիկ , զի արար զամենայն հրամանսն ։
10 Նոյնպէս և դուք յորժամ առնիցէք զամենայն հր-
ամայեալսն ձեզ , ասասջիք Թէ Ծառայք անպի-
11 տանք եմք , զոր պարտեաքն առնել՝ արարաք ։ Եւ
եղեւ մինչեւ երթայր նա Յերուսաղէմ , և ինքն

անցանէր ընդ մէջ Սամարիայ և Գալիլեացւոց ։
12 Եւ մինչդեռ մտանէր ի գեօղ ուրեմն , պատահե-
ցան նմա տասն այր բորոտ՝ որք կացին ի հեռաս.
13 տանէ . Բարձին զձայնս և ասեն , Յիսուս վարդա-
14 պետ , ողորմեաց մեզ ։ Եւ իբրեւ հաւաս զնոսա ,
ասէ ցնոսա , Երթայք , ցուցէք զանձինս քահա-
նայիցն . և եղեւ իբրեւ գնացին , առ ժամայն սըր-
15 բեցան ։ Մի ոմն ի նոցանէ իբրեւ հաւաս եթէ ըզ-
ժըշկեցաւ , դարձաւ անդրէն , ի ձայն մեծ փառա-
16 աւոր առնէր զԱստուած . Անկաւ ի վերայ երեսաց
իւրոց առ ոտս նորա , և գոհանայր զնմանէ . և
17 ինքն էր Սամարացի ։ Պատասխանի Տէր Յիսուս և
ասէ , Ո՞չ տասն սրբեցան , իսկ արդ ինուանքն
18 ո՞ւր են ։ Զի ոչ գտան դառնալ տալ փառս Ա-
19 ստուծոյ , բայց միայն այլազգիս այս ։ Եւ ասէ ցնա ,
Արի գնա , զի հաւատք քո կեցուցին զքեզ ։
20 Իբրեւ հարցաւ ի փարիսեցւոցն Թէ ե՞րբ գայցէ
արքայութիւն Աստուծոյ . պատասխանի Տէր նոցա
21 և ասէ , Ոչ գայ արքայութիւն Աստուծոյ խարա-
նօք . Եւ չասիցեն Թէ Ահաւասիկ աստ է կամ անդ ,
զի ահա արքայութիւն Աստուծոյ ի ներքս ի ձեզ
22 է ։ Ասաց և առ աշակերտսն , Եկեսցեն աւուրք
ցանկանալոյ ձեզ մի յաւուրցն Որդւոյ մարդոյ տե-
23 սանել՝ և ոչ տեսանիցէք ։ Եւ եթէ ասիցեն ձեզ ե-
Թէ Ահաւասիկ է կամ անդ , մի երթայցէք զետ ,
24 Զի որպէս փայլակն փայլատակեալ ի ներքոյ եր-
կնից՝ *ընդ երկնիւք ծագիցէ , նոյնպէս և Որդի մար-

---

* ի ցայտ՝ ի միջէ կողմանէ մինչեւ ցմիւս կողմն
ընդ երկնիւք

25 զոյ յաւուրն իւրում ։ Բայց նախ պարտ է նմա
բազում չարչարիլ և խոտիլ յազգէս յայսմանէ ։
26 Եւ որպէս եղեւ յաւուրսն Նոյի , նոյնպէս եղիցի
27 և յաւուրս Որդւոյ մարդոյ ։ Ուտէին , ըմպէին ,
կանայս առնէին և արանց լինէին , մինչեւ յօրն
յորում եմուտ Նոյ ի տապանն , և եկն ջրհեղեղն
28 և կորոյս զամենեսեան ։ Նոյնպէս՝ և որպէս յաւուրսն
Ղովտայ եղեւ , ուտէին , ըմպէին , գնէին , վաճա-
29 ռէին , տնկէին , շինէին . Եւ յորում աւուր եւ
Ղովտ ի Սոդոմայ , տեղաց հուր և ծծումբ յեր-
30 կնից և կորոյս զամենեսեան ։ Ըստ նմին օրինակի եղիցի
և յաւուրսն յորում Որդի մարդոյ յայտնելոց է ։
31 Յայնմ աւուր որ կայցէ ի տանիս՝ և կարասի
իւր ի տան , մի իջցէ առնուլ զայն . և որ յանդի
32 իցէ , նոյնպէս մի դարձցի յետս ։ Յիշեցէք զկինն
33 Ղովտայ ։ Որ խնդրիցէ զանձն իւր ապրեցուցանել ,
կորուսցէ զնա . և որ կորուսցէ , ապրեցուսցէ զնա ։
34 Ասեմ ձեզ , Յայնմ գիշերի թէ եղիցին երկու ի
35 մի մահիճս , մին առցի և միւսն թողցի . Եւ երէք
եղիցին *երկու՝ աղալ ի միասին , մին առցի և միւս-
սն թողցի . և եթէ իցեն երկու յանդի , մին առ-
36 ցի և միւսն թողցի ։ Պատասխանի ետուն և ասեն
37 ցնա , Տ՞ , Տէր ։ Եւ նա ասէ ցնոսա , Ուր մարմին
է , անդր և արծուիք ժողովեսցին ։

* Ի Յայնմ՝ կանայք երկու՝

ԳԼ· ԺԸ

1 Ասաց և առակ մի նոցա առ այն՝ թէ պարտ է
յամենայն ժամ կալ նոցա յաղօթս և մի ձան-
2 ձրանալ ։ Ասէ , Դատաւոր մի էր ի քաղաքի ուրե-
մն , Աստուծոյ ոչ երկնչէր և ի մարդկանէ ոչ
3 ամաչէր ։ Եւ այրի մի էր ի նմին քաղաքի , գայր
4 առ նա և ասէր , Դատ արա ինձ յոսոխէ իմմէ ։ Եւ
ոչ կամէր ի ցաղցս ժամանակս . Յետ այնորիկ
ասէ ի մտի իւրում , Եթէ և Աստուծոյ ոչ եր-
5 կնչիմ , և ի մարդկանէ ոչ ամաչեմ , Գոնէ վասն
աշխատ առնելոյ զիս այրիոյն՝ արարից նմա դատ ,
6 զի մի խոպառ եկեալ թախանձիցէ զիս ։ Եւ ասէ
Տէր , լուարուք զինչ դատաւորն անիրաւութեան
7 ասէր ։ Իսկ Աստուած ո՞չ առնիցէ վրէժխնդրու-
թիւն ծառայից իւրոց , որ աղաղակեն առ նա ի
տաւէ և ի գիշերի , և երկայնամիտ միայն լինիցի
8 առ նոսա ։ Ասէ՝ ասեմ ձեզ , զի արասցէ վրէժ-
խնդրութիւն նոցա վաղվաղակի . Իսկ Որդի մարդոյ
9 եկեալ՝ գտանիցէ՞ արդեօք հաւատս յերկրի ։ Ասաց
և առ ոմանս պանծացեալս յանձինս , թէ արդարք
10 իցեն և խոտիցեն զաղաչմամն , զառակս զայս . Երկ
երկու ելին ի տաճարն կալ յաղօթս , մին փարի-
11 սեցի և միւսն մաքսաւոր ։ Փարիսեցին կայր *մեկու-
սի և զայս առանձինն աղօթս մատուցանէր . Աս-
տուած իմ , գոհանամ զքէն , զի ոչ եմ իբրեւ
զայլս ի մարդկանէ , զապիշտակողս և զանիրաւս և

* Ի Յայնմ չէ ։

12 զշունս կամ իբրեւ զայս մեքսաւորս : Ա.յլ պահեմ
երկիցս ի շաբաթու , և տամ տասանորդս յամե-
13 նայն ստացուածոց իմոց : Եւ մեքսաւորն կայր մե-
կուսի , և ոչ կամէր և ոչ զաչսն ընդ երկինս ամ
բառնալ , այլ կոծէր զկուրծս իւր և ասէր , Ա-
14 տուած , քաւեա զիս զմեղաւորս : Ասեմ ձեզ , Ի-
սա արդարացեալ ի տուն իւր քան զնա . զի ամե-
նայն որ բարձրացուցանէ զանձն իւր , խոնարհեցի.
և որ խոնարհեցուցանէ զանձն , բարձրասցի :
15 Ս՚ատուցանէին առ նա և մանկտի՝ զի մերձենայ-
ցէ ի նոսա . իբրեւ տեսին աշակերտքն՝ սաստէին
16 նոցա : Իսկ Յիսուս կոչեցեալ զնոսա առ ինքն՝ ա-
սէ , Թոյլ տուք մանկտւդ գալ առ իս , և մի՛
արգելուք զդոսա , զի այդպիսեացդ է արքայութիւն
17 Աստուծոյ : Ամէն ասեմ ձեզ , Որ ոչ ընդունիցի
զարքայութիւն Աստուծոյ իբրեւ զմանուկ , ոչ մըտ-
18 ցէ ի նա : Եւ հարց զնա ոմն իշխան և ասէ ,
Վարդապետ բարի , զի՞նչ գործեցից , զի կենդան
19 յաւիտենականս ժառանգեցից : Ասէ ցնա Յիսուս ,
Զի՞ ասես զիս բարի . չէք որ բարի բայց մի Ա-
20 տուած : Զպատուիրանս գիտես . Մի՛ շնար , Մի՛
սպանաներ , Մի՛ գողանար , Մի՛ սուտ վկայեր ,
21 Պատուեա զհայր քո և զմայր : Եւ նա ասէ , Զայդ
22 ամենայն պահեցի ի մանկութենէ իմմէ : Իբրեւ
լուաւ զայն Յիսուս՝ ասէ ցնա , Միւս եւս պակաս
է քեզ . զամենայն ինչ զոր ունիս , վաճառեա և
տուր աղքատաց , և ունիցես գանձս յերկինս , և
23 եկ զկնի իմ : Նա իբրեւ լուաւ զայս՝ արամեցաւ ,
24 քանզի էր մեծատուն յոյժ : Իբրեւ տեսս զնա Յի-
սուս տրտմեալ , ասէ , Որպէս դժուարաւ՝ որ ինչս

ունիցին , մտանիցեն յարքայութիւն Աստուծոյ :
25 Դիւրագոյն իցէ մալխոյ ընդ ծակ ասղան անցանել ,
քան մեծատան յարքայութիւն Աստուծոյ մտա-
26 նել : Եւ որ լուանն՝ ասէին , Եւ ո՞ կարիցէ ապրել :
27 Եւ նա ասէ , Անհնարինք առ ի մարդկանէ հնա-
28 րաւորք են յԱստուծոյ : Եւ ասէ Պետրոս , Ահա.
եասիկ մեք թողաք զամենայն ինչ զմեր , և եկաք
29 զկնի քո : Եւ նա ասէ ցնոսա , Ամէն ասեմ ձեզ
եթէ ոչ ոք է՝ որ եթող զտունս , կամ զծնողս ,
կամ զեղբարս , կամ զկին , կամ զորդիս՝ վասն ար-
30 քայութեան Աստուծոյ , եթէ ոչ առնուցու բազ-
մապատիկ ի ժամանակի յայսմիկ , և յաշխարհին
որ գալոցն է՝ զկեանն յաւիտենականս ժառան-
31 գեսցէ : Եւ առեալ զերկոտասանսն առանձինն՝ ա-
սէ ցնոսա , Ահաւասիկ ելանեմք Երուսաղէմ , և
կատարեսցին ամենայն գրեալքն մարգարէիւք վասն
32 Որդւոյ մարդոյ : Զի մատնեսցի հեթանոսաց , և
33 կատակեսցի . Եւ հարկանիցեն և սպանանիցեն զը-
34 նա , և յերիր աւուր յարիցէ : Եւ նոքա ոչինչ
իմացան յայնցանէ , այլ էր բանն ծածկեալ ի նո-
ցանէ , և ոչ գիտէին զասացեալսն :
35 Եւ եղեւ ի մտանելն նորա Յերիքով , կոյր ոմն նըս-
36 տէր առ ճանապարհաւն մուրացիկ : Իբրեւ լուաւ
զանցանել ժողովրդեանն , հարցանէր թէ Զի՞նչ
37 իցէ այն : Եւ պատմեցին նմա թէ Յիսուս Նազով-
38 րեցի անցանէ : Աղաղակեաց և ասէ , Յիսուս՝ Որ-
39 դի Դաւթի , ողորմեաց ինձ : Եւ որ առաջին երթա-
լին՝ սաստէին նմա զի լռեսցէ . և նա եւս առա-
ւել աղաղակէր , Որդի Դաւթի , ողորմեաց ինձ :
40 Ջտեղի առ Յիսուս , և հրամայեաց ածել զնա առ

իւր. և իբրեւ մերձ եղեւ առ նա, երդմոյց զնա և
41 ասէ, Զի՞նչ կամիս դու զի արարից քեզ. և նա
42 ասէ, Տէր, զի բացցին աչք իմ և տեսից։ Եւ Յի-
սուս ասէ ցնա, Ընդունեա, հաւատոք քո կեցուցին
43 զքեզ։ Եւ առաժամայն եառեալ երթայր ընդ նորա
և փառաւորէր զԱստուած. և ամենայն ժողո-
վուրդեանն տեսեալ՝ տայր օրհնութիւն Աստուծոյ։

Գլ. ԺԹ

1 Եւ մտեալ շրջէր ընդ Երիքով։ (?) Եւ ահա այր
մի անուն կոչեցեալ Զաքէոս, և նա էր մեծաս-
3 պետ և ինքն մեծատուն. Եւ խնդրէր տեսանել
եթէ ով իցէ Յիսուս, և ոչ կարէր ի բազմութե-
4 նէն, զի կարճ էր հասակաւ։ Եւ ընթացեալ յա-
ռաջս, ել ի ժանտաթզենին զի տեսանիցէ զնա.
5 քանզի ընդ այն իսկ անցանելոց էր։ Իբրեւ եկն ի
տեղին, հայեցաւ ի վեր Յիսուս և ասէ ցնա, Զա-
քէ, փութա էջ սյտի, զի այսօր ի տան քում աբ-
6 ժան է ինձ ագանել։ Փութացաւ և էջ և ընկալաւ
7 զնա ուրախութեամբ։ Իբրեւ տեսին ամենեքին,
տրտնջէին և ասէին թէ Առ առն մեղաւորի եմուտ
8 լուծանել։ Եկն եկաց Զաքէոս և ասէ ցՏէր, Տէր,
ահա զկէս ընչից իմոց տաց աղքատաց, և եթէ
9 զոք զրկեցի, հատուցից չորեքկին։ Եւ ասէ ցնա
Յիսուս, Այսօր եղեւ փրկութիւն տանս այսմիկ.
10 քանզի և սա որդի Աբրահամու է։ Զի եկն Որդի
11 մարդոյ խնդրել և կեցուցանել զկորուսեալն։ Եւ
մինչդեռ նոքա զայն լսէին, յաւել առակ մի և
ասէ, վասն մերձենալոյ նորա Երուսաղէմ, և հա-

մարէին նոցա եթէ առաժամայն յայտնելոց է արք-
12 քայութիւն Աստուծոյ։ Ասէ, Այր ոմն ազնուա-
կան գնաց յաշխարհ հեռի՝ առնուլ իւր թագա-
13 ւորութիւն և դառնալ։ Եւ կոչեցեալ զծառայս
իւր՝ եառ նոցա տասն մնաս, և ասէ ցնոսա, Յար-
14 գեցէք զայդ մինչեւ եկից։ Եւ քաղաքացիքն նորա
ատէին զնա, առաքեցին հրեշտակս զկնի նորա, և
ասեն թէ Ոչ կամիմք թագաւորել դմա ի վերայ
15 մեր։ Եւ եղեւ դառնալ նմա՝ առեալ զթագաւո-
րութիւնն, և կոչեալ զծառայսն՝ որոց տուեալ էր
զարծաթն, զի գիտասցէ թէ ո՞ զինչ շահեցաւ։
16 Եկն առաջինն և ասէ, Տէր, մնաս քո տասն մնաս
17 արար։ Եւ ասէ ցնա, Ընդունի, ծառայ *և բարի,
զի ի փոքուդ հաւատարիմ եղեր, լինիջիր իշխանութե-
18 ան տասանց քաղաքաց։ Եկն երկրորդն
19 և ասէ, Մնաս քո արար հինգ մնաս։ Ասէ և ցնա,
20 Եւ դու լինիջիր ի վերայ հինգ քաղաքաց։ Եկն միւսն
և ասէ, Տէր, ահա մնաս քո՝ զոր ունէի ծրարեալ
21 ի վարշամակի. Երկնչէի ի քէն, զի այր ստամբակ
ես. բառնաս զոր ոչ եդիր, և հնձես զոր ոչ սեր-
22 մանեցեր։ Եւ ասէ ցնա, Ի բերանոյ քումմէ դա-
տեցայց զքեզ, ծառայ †անհաւատ. գիտէիր թէ ես
այր մի ստամբակ եմ՝ բառնամ զոր ոչ եդի, և
23 հնձեմ՝ ուր ոչ սերմանեցի։ Եւ ընդէ՞ր ոչ ետուր
զարծաթն իմ ի սեղանաւորս, և եկեալ ես տո-
24 կոսօք պահանջէի։ Եւ ասէ ցպատասաւորսն, Առէք
ի դմանէ զմնասն, և տարայք տուք այնմ՝ որ ու-
25 նիցի զտասն մնասն։ Եւ ասեն ցնա, Տէր, ունի

* Ի ցոյն ԷՒ։ † Ի ցոյն՝ չար.

26 տան Ճնան ։ Ասեմ ձեզ եթէ Ամենայնի որ ու-
նիցի , տացի . և յայնմանէ որ ոչն ունիցի , և զոր
27 ունիցին՝ բարձցի ի նմանէ ։ Բայց զիշնամիսն իմ
զայնոսիկ , որ ոչն կամեցին զնս Թագաւորել ի վերայ
28 նոցա , ածէք այսր և սպանէք առաջի իմ ։ Եւ իբրեւ
զայս ասաց , գնաց յառաջ ելանել Յերուսաղէմ ։
29 Եւ եղեւ իբրեւ մերձեցաւ ի Բեթփագէ և ի Բե-
թանիա մօտ ի լեառնն՝ որ կոչի Զիթենեաց , ա-
30 ռաքեաց երկուս յաշակերտացն իւրոց և ասէ , Եր-
թայք դուք ի գեօղն՝ որ հանդէպ մեր կայ . յոր
իբրեւ մտանէք՝ գտանիցէք յաւանակ կապեալ ,
յորում ոք ի մարդկանէ երբէք ոչ նստաւ . լուծէք
31 զնա և ածէք ։ Եւ եթէ ոք հարցանիցէ զձեզ թէ
Ընդէ՞ր լուծանէք , այսպէս ասասջիք ցնա թէ Տեա-
32 ռն *իւրում պիտոյ է ։ Իբրեւ չոգան որ առաքե-
ցանն , գտին որպէս ասացն ցնոսա , *կայր յաւա-
33 նակն ։ Եւ մինչդեռ լուծանէին զյաւանակն , ասեն
տէրքն նորա ցնոսա , Զի՞ լուծանէք զյաւանակդ ։
34 Եւ նոքա ասեն , Տէառն *իւրում պիտոյ է ։ (35) Եւ
ածին զնա առ Յիսուս , և արկին զնովաւ հանդեր-
36 ձս և հեծուցին զՅիսուս ։ Եւ մինչդեռ երթայր ,
զհանդերձս իւրեանց տարածանէին ճանապարհաւն ։
37 Եւ իբրեւ այն ինչ մերձ եղեւ ի զառ ի վայր լե-
ռինն Զիթենեաց , սկսաւ ամենայն բազմութիւն
աշակերտացն ուրախութեամբ օրհնել զԱստուած
ի ձայն մեծ վասն ամենայն եղելոց զօրութեանցն՝
38 զոր տեսին . Եւ ասէին , Օրհնեալ որ գայ Թագաւորդ
յանուն Տեառն , խաղաղութիւն յերկինս , և փառք

* ի Յովհ. ԺԲ ։

39 ի բարձունս ։ Եւ ոմանք ի փարիսեցւոցն յամբոխէ
անտի՝ ասեն ցնա , Վարդապետ , սաստեա աշա-
40 կերտդ քոց ։ Պատասխանի եառ և ասէ , Ասեմ
ձեզ զի եթէ դոքա լռեսցեն , քարինքդ աղաղակես-
41 ցեն ։ Եւ իբրեւ մերձեցաւ , տեսեալ զքաղաքն՝ և-
42 լաց ի վերայ նորա , և ասէ , Եթէ գիտեիր դու
դոնէ *յաւուրս քո յայսմիկ՝ զխաղաղութիւնն քո .
43 բայց այժմ ծածկեցաւ յերեսաց քոց ։ Զի եկես-
ցեն աւուրք ի վերայ քո , և պատեսցեն զքեզ թըշ-
նամիք քո պատնէշ , և պաշարեսցեն զքեզ , և նե-
44 ղեսցեն զքեզ յամենայն կողմանց . Եւ յատակես-
ցեն զքեզ և զորդիս քո ի քեզ . և ոչ թողես-
ցուն քար ի քարի վերայ յամենայնի ի քեզ , փո-
խանակ զի ոչ ծանեար զժամանակ այցելութեան
45 քո ։ Եւ մտեալ ի տաճարն սկսաւ հանել զաղաս-
նելմաւանն և զդնողս , և զսեղանս հատավաճա-
46 ռացն ։ Եւ ասէ ցնոսա , Գրեալ է , Եւ
եղիցի տունն իմ տունն աղօթից , և դուք արարիք
47 զդա այրս աւազակաց ։ Եւ ուսուցանէր ընդոսա հա-
նապազ ի տաճարին . իսկ քահանայապետքն և գր-
պիրք և գլխաւորք ժողովրդեանն խնդրէին զնա կո-
48 րուսանել , Եւ ոչ գտանէին թէ զինչ արասցեն ,
զի ժողովուրդն ամենայն կախեալ կային զնմանէ
ի լսել ։

Գլ. Ի

1 Եւ եղեւ ի միում աւուրցն յայնցանէ , մինչդեռ
ուսուցանէր զժողովուրդն ի տաճարի անդ և աւե-

* ի Յովհ. *յաւուրս քում*

տարանէր , հասին 'ի վերայ քահանայապետին և
2 դպիրք ծերովքն հանդերձ , եւ ասեն ցնա , Ասա
մեզ , ո՞րով իշխանութեամբ գործես դու զայդ ,
3 կամ ո՞վ է որ եառ քեզ զայդ իշխանութիւն , Պա-
տասխանի եւ ասէ ցնոսա , Հարցից և ես ցձեզ
4 բան մի , և ասացէք ինձ . Մկրտութիւնն Յովհան-
5 նու յերկնի՞ց էր եթէ 'ի մարդկանէ : Եւ նոքա
6 խորհեցան 'ի միտս իւրեանց և ասեն , Եթէ ասեմք՝
ցերկնից , ասէ , իսկ ընդէ՞ր ոչ հաւատացէք նմա .
և եթէ ասեմք՝ 'ի մարդկանէ , ամենայն ժողովուրդն
քարկոծ առնեն զմեզ . զի հաստատեալ է 'ի միտս
7 զՅովհաննէ , թէ մարգարէ է : Եւ պատասխանի և-
8 տուն , չգիտեմ թէ ուստի իցէ : Եւ Յիսուս ասէ
ցնոսա , Եւ ոչ ես ասեմ ձեզ որով իշխանութեամբ
առնեմ զայս :
9 Սկսաւ ասել առ ժողովուրդն զառակս զայս ,
Այր ոմն տնկեաց այգի , և եառ զնա մշակաց . և
10 ինքն գնաց 'ի ճանապարհ ժամանակս բազումս : Եւ
'ի ժամու առաքեաց առ մշակսն ծառայ , զի 'ի
պտղոյ այգւոյն տացեն նմա . և մշակքն դան հա-
11 րին զնա , և արձակեցին ունայն : Եւ յաւել միւս
եւս ծառայ յղել . նոքա և զնա եւս գան հարին ,
12 անարգեցին և առաքեցին ունայն : Եւ յաւել զեր-
րորդն առաքել . նոքա և զնա վիրաւորեցին և հա-
13 նին արտաքս : Ասէ տէր այգւոյն , Զի՞նչ արարից ,
առաքեցից զորդի իմ սիրելի , Թերեւս 'ի տեսանել
14 պատկառեսցեն : Իբրեւ տեսին զնա մշակքն , խոր-
հեցան ընդ միմեանս և ասեն , Սա է ժառանգն ,
սպանցուք զնա , զի մեր լինիցի ժառանգութիւնն :
15 Եւ հանին զնա արտաքս քան զայգին և սպանին .

16 արդ զի՞նչ արասցէ ընդ նոսա տէր այգւոյն . Ո՞է
սպաքէն գայցէ և կորուսանիցէ զվշկան զայնոսիկ
և տացէ զայգին այլոց . իբրեւ լուան՝ ասեն , Քաւ
17 մի լիցի : Եւ նա հայեցեալ ընդ նոսա՝ ասէ , Իսկ
զի՞նչ իցէ այն որ գրեալն է Թէ Զվէմն զոր անար-
18 գեցին շինողքն , նա եղեւ գլուխ անկեան : Ամե-
նայն որ ընդհարցի ընդ վէմն ընդ այս՝ խորտակեա-
19 ցի , և յորոյ վերայ անկցի՝ հոսեսցէ զնա : Եւ խըն-
դրէին դպիրքն և քահանայապետք արկանել 'ի նա
ձեռս 'ի նմին ժամու , և երկեան 'ի ժողովրդենէն ,
զի գիտացին Թէ առ նոսա ասաց զառակն զայն :
20 Եւ ապա սպասեցին , և առաքեցին դաւաճանս
կեղծաւորեալս զանձինս առ արդարս ունել , զի
ըմբռնեսցեն զնա բանիւք , առ 'ի մատնել զնա
21 պետութեան և իշխանութեան դատաւորին : Հար-
ցին ցնա և ասեն , Վարդապետ , գիտեմք եթէ ու-
ղիղ խօսիս և ուսուցանես , և ոչ առնուս ակն , այլ
ճշմարտութեամբ զճանապարհն Աստուծոյ ուսու-
22 ցանես : Արժա՞ն է մեզ կայսեր հարկս տալ Թէ
23 ոչ : Եւ նայեցեալ ընդ խորամանկութիւնն նոցա՝
24 ասէ *ցնոսա , Ցուցէք ինձ զդահեկանն . †և նոքա ցու-
ցին . և ասէ , Զո՞յր պատկեր և զգիր ունի . պատաս-
25 խանի ետուն և ասեն , Կայսեր : Եւ նա ասէ ցնո-
սա , Արդ երթայք տուք զկայսերն կայսեր , և
26 զԱստուծոյն Աստուծոյ : Եւ ոչ կարացին զնա բմ-
բռնել բանիւք առաջի ժողովրդեանն . և զարմա-
ցեալ ընդ պատասխանին նորա՝ լռեցին :

---

* Ի Ցոյն՝ ցնոսա , Զի՞ փորձէք զիս .
† Ի Ցոյն՝ Եւ .

27 Մատուցեալ ոմանք ի սադուկեցւոցն որք հա-
28 կառակէին չլինել յարութեան, հարցին ցնա եւ
ասեն, Վարդապետ, Մովսէս գրեաց մեզ եթէ
ուրուք եղբայր մեռանիցի, որոյ իցէ կին, և նա ա-
նորդի *իցէ, ղի առնուցու եղբայր նորա զկինն, և
29 յարուսցէ զսաակ եղբօր իւրոմ։ Արդ եօթն եղ-
բարք էին. և առաջնոյն առեալ կին՝ մեռաւ անոր-
30 դի։ Ա. զնա և երկրորդն, մեռաւ և նա անորդի։
31 Ա. զնա և երրորդն նոյնպէս և եօթանեքեան, և ոչ
32 թողին որդիս։ †Մեռաւ և կինն։ (33) Արդ ի յա-
րութեան ո՞մ ի նոցանէ լինիցի կին. զի եօթա-
34 նեքին կալան զնա կին։ Պատասխանի ետ նոցա Յի-
սուս և ասէ, Որդիք աշխարհիս այսորիկ կանայս
35 առնեն և արանց լինին. Իսկ որ արժանի լինիցին
այնմ աշխարհի հասանել՝ և յարութեանն որ ի
մեռելոց, ոչ կանայս առնեն և ոչ արանց լինին։
36 Քանզի և ոչ մեռանել եւս կարեն, զի հաւասար
հրեշտակաց են՝ և որդիք Աստուծոյ, քանզի յա-
37 րութեան որդիք են։ Այլ զի յառնեն մեռեալք,
և Մովսէս դաշակեաց ի մերենաւոյն, որպէս ասէ
զՏեառնէ՝ Աստուածդ Աբրահամու և զԱստուածդ Իսա-
38 հակայ և զԱստուածդ Յակովբայ։ Եւ Աստուած չէ
մեռելոց՝ այլ կենդանեաց, զի ամենեքեան նմա կեն-
39 դանի են։ Պատասխանի ետուն ոմանք ի դպրացն և
40 ասեն, Վարդապետ, բարւոք ասացեր։ Եւ ոչ եւս
ոք իշխեր հարցանել զնա և ոչինչ։
41 Ասէ և առ նոսա, Զի՞ւրդ ասեն զՔրիստոսէ թէ

* Ի ՅՈՒՆ՝ իցէ ի մեռանելն,
† Ի ՅՈՒՆ՝ Զկնի ամենեցուն մեռաւ

42 որդի է Դաւթի. Զի ինքն Դաւիթ ասէ ի գիրս
Սաղմոսաց, Ասաց Տէր ցՏէր իմ, Նիստ ընդ աջմէ
43 իմմէ, Մինչեւ եդից զթշնամիս քո պատուհանդան
44 ոտից քոց։ Իսկ արդ եթէ Դաւիթ զնա Տէր կոչէ,
45 զի՞ւրդ որդի նորա իցէ։ Եւ լուաւ ի լուս ամենայն ժո-
46 ղովրդեանն ասէ ցաշակերտսն, Զգուշ լերուք ի
դպրացն, որ կամին պատմուճանօք շրջել, և սիրեն
ողջոյնս ի հրապարակս, և զնախաթոռս ի ժողո-
47 վուրդս, և զբարձերեցս յընթերցս. Որ ուտեն զըն-
տունս այրեաց, և պատճառանօք յերկարեն զա-
ղօթս. նոքա ընկալցին աւելի դատաստանս։

ԳԼ. ԻԱ

1 Եւ հայեցեալ եհաս զմեծատունսն՝ որ արկանէին
2 զտուրս իւրեանց ի գանձանակն։ Եհաս և զկին
ոմն այրի աղքատ, որ արկ անդր երկուս լումայս։
3 Եւ ասէ, Արդարեւ ասեմ ձեզ, զի այրին այն աղ-
4 քատ աւելի արկ քան զամենեսեան։ Ամենեքեան նո-
քա ի մէրերից իւրեանց արկին յընծայսն Աստու-
ծոյ, բայց նա ի կարօտութենէ իւրմէ զամենայն
զկեանս իւր զոր ունէր՝ արկ։
5 Եւ յասել ոմանց զտաճարին թէ գեղեցիկ վիմօք
6 և *աշտարակօք զարդարեալ է, ասէ, Զայդ ամե-
նայն զոր տեսանէք, եկեսցեն աւուրք յորս ոչ
թողցի այդր քար ի քարի վերայ, որ ոչ քակտես-
7 ցի։ Հարցին ցնա և ասեն, Վարդապետ, ե՞րբ լի-
նիցի այդ, և զի՞նչ նշան իցէ՝ յորժամ այդ լինե-

* Ի ՅՈՒՆ՝ նուիրօք

8 լոց իցէ ։ Եւ նա ասէ , Ձգաշ կացէք , մի՛ խարի-
ցիք . ղի բազում՛ գայցեն յանուն իմ , և ասիցեն
Թէ ես եմ , և մերձեցաւ ժամանակ . մի՛ երթայցէք
9 զկնի նոցա ։ Եւ յորժամ լսիցէք պատերազմունս
և խռովութիւնս՝ մի զարհուրիցէք. զի պարտ է նախ
10 այնմ լինել , այլ ոչ առժամայն կատարած ։ Յայն-
ժամ ասէ ցնոսա , Յարիցէ ազգ յազգի վերայ և
11 թագաւորութիւն՝ի թագաւորութեան վերայ . Եւ
շարժմունք մեծամեծք . և՝ի տեղիս տեղիս սովք և
սրածութիւնք , եղիցին արհաւիրք և նշանք մեծա-
12 մեծք յերկնից ։ Բայց յառաջ քան զայս ամենայն ,
միսեցեն զձեռս իւրեանց՝ի ձեզ և հալածեսցեն ,
մատնեսցեն՝ի ժողովուրդս և՝ի բանտս , և տանիջ-
ցին առաջի դատաւորաց և թագաւորաց վասն ա-
13 նուան իմոյ ։ Եւ լինիցի ձեզ այն՝ի վկայութիւն ։
14 Այդ դիք՝ի սիրտս ձեր՝ մի՛ յառաջագոյն կրթել
15 տալոյ պատասխանի ։ Զի ես տայց ձեզ բերան և
իմաստութիւն , որում՝ ոչ կարիցեն կալ հակառակ
կամ՝ տալ պատասխանի ամենայն հակառակորդքն
16 ձեր։ Մատնեսջիք և՝ի ծնողաց և յեղբարց և յազ-
գականաց և՝ի բարեկամաց , և սպանանիցեն՝ի
17 ձէնջ . Եւ եղիջիք ատելեալք յամենեցունց վասն
18 անուան իմոյ . Եւ մազ մի՝ի գլխոյ ձերմէ ոչ կորիցէ ։
19 Եւ համբերութեամբ ձերով սատասջիք զոգիս ձեր ։
20 Այլ յորժամ տեսանիցէք շուրջ պատեալ զո-
բօք զերուսաղէմ , յայնժամ գիտասջիք Թէ մերձ
21 է աւեր նորա ։ Յայնժամ որ՝ի Հրէաստանի իցեն՝
փախիցեն՝ի լերինս , և որ՝ի միջի նորա իցեն՝ խու-
սեսցեն , և որ՝ի դաշտսն իցեն՝ մի՛ մտցեն՝ի նա ։
22 Զի աւուրք վրէժխնդրութեան են այնոքիկ՝ առ՝ի

23 կատարելոյ ամենայն գրելոց ։ Բայց վայ իցէ յղեաց
և ստնտուաց յաւուրսն յայնոսիկ . զի եղիցի տագ-
նապ մեծ՝ի վերայ երկրի , և բարկութիւն՝ ժողո-
24 վրդեանն այնմիկ ։ Եւ անկցեն՝ի սուր սուսերի ,
և գերեսցին յամենայն հեթանոսս . և երուսաղէմ
եղիցի կոխան յազգաց՝ մինչեւ կատարեսցին ժա-
25 մանակք հեթանոսաց ։ Եւ եղիցին նշանք յարեգա-
կին և՝ի լուսին և յաստեղս , և *յերկրի տագնապ
հեթանոսաց՝ յահեղ բարբառոյ իբրեւ ծովու և
26 խռովութեան , ցելանելոյ ոգւոց՝՝ մարդկան յեր-
կիւղ՝ և՝ի կարծեաց եկելոց՝ի վերայ տիեզերաց .
27 զի զօրութիւնք երկնից շարժեսցին ։ Եւ յայնժամ
տեսցեն զՈրդի մարդոյ եկեալ ամպով զօրութեամբ
28 և փառաւք բազմաւ ։ Եւ յորժամ սկսանիցի այս լի-
նել , ամբարձէջիք և բարձրացուսջիք զգլուխս ձեր ,
29 զի մերձ է փրկութիւն ձեր ։ Եւ ասաց առակ մի
30 նոցա , Տեսէք զթզենիդ և զամենայն ծառ ։ Յոր-
ժամ ցուցանիցեն զպտուղ իւրեանց , տեսանէք և
31 ՚ի նոցանէ ճանաչէք Թէ մերձ է ամառն ։ Նոյնպէս
և դուք յորժամ տեսանիցէք զայս ամենայն եղելս ,
գիտասջիք Թէ մերձ է արքայութիւնն Աստուծոյ ։
32 Ամէն ասեմ ձեզ Թէ ՈՉ անցցէ ազգս այս , մինչեւ
33 այս ամենայն լինիցի ։ Երկինք և երկիր անցցեն , և
34 բանք իմ ոչ անցանիցեն ։ Զգոյշ լերուք անձանց ,
գուցէ ծանրանայցեն սիրտք ձեր շուայտութեամբ
և արբեցութեամբ և հոգովք աշխարհականօք , և

* Ի ՑՈՒՆ՝ ազգք տագնապեսցին ապշութեամբ յեր-
կրի , և ծով և ալիք գոռասցին . Նսեմացեսցին ոգիք
† Ի ՑՈՒՆ՝ լինքնին

Յանկարծակի հասանիցէ ՚ի վերայ ձեր օրն այն ։
35 Զի իբրեւ զորոգայթ հասանիցէ ՚ի վերայ ամենեցուն , որ բնակեալ են ընդ ամենայն երեսս երկրի ։
36 Արթուն կացէք այսուհետեւ , յամենայն ժամ աղօթս արարէք , զի արժանի լինիջիք զերծանել յայնմ յամենայնէ որ լինելոց է , և կալ առաջի
37 Որդւոյ մարդոյ ։ Եւ ՚ի տուէ ՚ի տաճարին ուսուցանէր , և զդիշերս ելեալ ագանէր ՚ի լերինն որ
38 կոչէր Ձիթենեաց ։ Եւ ամենայն ժողովուրդն կանխէր ընդ առաւօտս առ նա ՚ի տաճարն լսել ՚ի նմանէ ։

ԳԼ · ԻԲ

1 Մերձէնգաւ տօն բաղարջակերացն՝ որ կոչէր Պասքա ։ Եւ խնդրէին քահանայապետքն և դպիրք թէ
2 որպէս սպանանիցեն զնա , բայց երկնչէին ՚ի ժողովրդենէ անտի ։ Ապա եմուտ Սատանայ ՚ի Յուդա
3 զըրդենէ անտի ։ Ապա եմուտ Սատանայ ՚ի Յուդա ՚ի կոչեցեալն Սկարիովտացի , որ էր ՚ի թուոյ երկոտասանիցն ։ Գոգաւ երդ բանս ընդ քահանայապետան և ընդ դպիրս և ընդ իշխանս ժողովրդեանն ,
5 զի մատնեսցէ զնա նոցա ։ Եւ խնդացին և խոստացան տալ նմա արծաթ ։ Եւ յանձն առ և խնդրէր
6 պարապ մատնել զնա նոցա՝ մեկուսի յամբոխէն ։
7 Եկն օր բաղարջակերացն , յորում օրէն էր զնուալ
8 զպասկէն ։ Եւ առաքեաց զՊետրոս և զՅովհաննէս և ասէ , Երթայք պատրաստեցէք մեզ զպասկէն՝ զի
9 կերիցուք ։ Եւ նոքա ասեն , Ո՞ւր կամիս զի պատ-
10 րաստեսցուք ։ Եւ ասէ ցնոսա , ահա իբրեւ մտանիցէք ՚ի քաղաքն , պատահեսցէ ձեզ այր մի բար-

ձեալ սափոր ջրոյ · երթիջիք զհետ նորա ՚ի տունն
11 յոր մտանիցէ · Եւ ասասջիք ցտանուտէրն տանն , Վարդապետ ասէ քեզ , Ո՞ւր է վանքն իմ , յորում զպասկէն ուտիցեմ աշակերտօքս հանդերձ ։
12 Եւ նա ցուցցէ ձեզ վերնատուն մի մեծ զարդա-
13 րեալ , և անդ պատրաստեսջիք ։ Եւ գնացեալ գտին որպէս և ասացն նոցա , և պատրաստեցին զպասկէն ։
14 Եւ յորդ ժամ եղեւ՝ բազմեցաւ , և երկո-
15 տասան առաքեալքն ընդ նմա ։ Եւ ասէ ցնոսա , Ցանկանալով ցանկացայ զայս պասկէ ուտել ընդ
16 ձեզ՝ մինչչեւ չարչարեալ իցեմ ։ Բայց ասեմ ձեզ , Թէ ոչ ես կերայց ՚ի սմանէ՝ մինչեւ լցցի յարքա-
17 յութեան Աստուծոյ ։ Եւ ընկալեալ բաժակ՝ գոհացաւ և ասէ , Առէք զայդ և բաժանեցէք ՚ի ձեզ ։
18 Ասեմ ձեզ Թէ յայսմ հետէ ոչ արբից ՚ի բերոյ որթոյ՝ մինչեւ եկեսցէ արքայութիւն Աստուծոյ ։
19 Եւ առեալ հաց՝ գոհացաւ , երեկ և եհաս նոցա և ասէ , Այս է մարմին իմ , որ վասն բազմաց տուելոց ։
20 զայս արասջիք առ իմոյ յիշատակի ։ Նոյնպէս և զբաժակն յետ ընթրեացն առ և ասէ , Այս բաժակ է նոր ուխտ իմով արեամբ վասն ձեր հեղլոյ ։
21 Բայց աւասիկ ձեռն մատնչի իմոյ ընդ իս ՚ի սեղա-
22 նոյս ։ Եւ Որդի մարդոյ գնայ սահմանեալոյն երթայ , բայց վայ մարդոյն այնմիկ՝ որով ձեռն մատնիցի ։
23 Եւ նոքա սկսան խնդրել ընդ միմեանս , Թէ ով է
24 ՚ի նոցանէ՝ որ զայն գործելոց իցէ ։ Եւ եղեւ հակառակութիւն ՚ի մէջ նոցա , Թէ ո՛ ՚ի նոցանէ համարիցի մեծ ։ Եւ նա ասէ ցնոսա , Թագաւորք ազգաց տիրեն նոցա , և որ իշխենն նոցա՝ բարերարք
26 կոչին · Այլ դուք ոչ այնպէս , այլ որ մեծն է ՚ի

ձեզ՝ եղիցի իբրեւ զկրտաերն, և առաջնորդն իբ-
27 րեւ ղպատասուորն։ Ո՞վ է մեծ, բազմեա՞լն եթէ
սպասաւորն, ո՞չ սպաքէն բազմեալն. բայց ես եմ
28 ի միջի ձերում իբրեւ սպասաւոր։ Եւ դուք էք որ
29 ցանգ կայիք ընդ իս ի փորձութիւնս իմ. Եւ ես
ուխտեմ ձեզ՝ որպէս և Հայր իմ ուխտեաց ինձ
30 զարքայութիւն· Զի ուտիցէք և ըմպիցէք ի սեղան
իմ յարքայութեանն իմում, և նստիցէք յերկոտա-
սան աթոռ՝ դատել զերկոտասան ազգ Իսրայէլի։
31 Եւ ասէ Տէր, Սիմոն, Սիմոն, ահա Սատանայ
32 խնդրեաց զձեզ խաբեալել իբրեւ զցորեան. Ա.յլ
ես աղաչեցի վասն քո զի մի պակասեսցին հաւատք
քո. և դուք *երբեմն դարձեալ ի հաստատեացես զեղ-
33 բարս քո։ Եւ նա ասէ ցնա, Տէր, ընդ քեզ պատ-
34 րաստ եմ և ի բանտ և ի մահ երթալ։ Եւ նա
ասէ ցնա, Ա.սեմ քեզ, Պետրէ, չիցէ այսօր հա-
ւսւս խօսեալ՝ մինչեւ երիցս ուրասցիս զիս չդիտել։
35 Եւ ասէ ցնոսա, Յորժամ առաքեցի զձեզ առանց
քսակի և մախաղի և կօշկաց, միթէ կարօտացա՞ք
36 իմիք։ Եւ նոքա ասեն, Եւ ոչ իմիք. ապա ասէ,
Ա.յլ այժմ որ ունիցի քսակ՝ բարձցէ, նոյնպէս և
մախաղ. և որ ոչն ունիցի, վաճառեսցէ զձորձս
37 իւր և գնեսցէ իւր սուսեր։ Բայց ասեմ ձեզ, զի
այս եւս որ գրեալ է՝ պարտ է զի կատարեսցի յիս
թէ ընդ անօրէնս համարեցաւ. զի որ վասն իմ լինչ
38 է՝ վճարեալ է։ Եւ նոքա ասեն, Տէր, ահաւասիկ
են սուր երկու սուրք. և Նա ասէ ցնոսա, Բաւա-
39 կան են։ Եւ ելեալ գնաց ըստ սովորութեանն ի

* Ի ցոյն՝ յորժամ

լեառն Ձիթենեաց. գնացին զկնի նորա և աշա-
40 կերտքն։ Իբրեւ եհաս ի տեղին՝ ասէ ցնոսա, Յա-
41 ղթիա կացէք չմտանել ի փորձութիւն։ Եւ ինքն
մեկնեցաւ ի նոցանէ իբրեւ քարընկէց մի, եդ
42 ծունր, կայր յաղթիա, Եւ ասէր, Հայր, եթէ կամիս՝
անցո զբաժակս զայս յինէն. բայց ոչ իմ կամք,
43 այլ քոդ լիցին։ Եւ երեւեցաւ նմա հրեշտակ յեր-
կնից և զօրացուցանէր զնա. և էր ի տագնապի, և
44 մտադիւրութեամբ եւս կայր յաղթիա։ Եւ հոսէին
ի նմանէ քրտունք իբրեւ զկայլակս արեան՝ ոլոր-
45 ոլոն հեղեալ յերկիր։ Եւ յարուցեալ յաղթիա-
ցին՝ եկն առ աշակերտսն, եդիտ զնոսա ի քուն ի
46 տրտմութենէն. Եւ ասէ ցնոսա, Ձի՞ ննջէք, արիք,
կացէք յաղթիա՝ զի մի մտանիցէք ի փորձութիւն։
47 Եւ մինչդեռ խօսէր, ահաւասիկ ամբոխ, և որ կո-
չէրն Յուդա՝ մի յերկոտասանիցն առաջնորդէր նո-
ցա. իբրեւ մերձեցաւ առ Յիսուս՝ համբուրեաց
զնա. *քանզի զայն նշան տուեալ էր նոցա, թէ
ընդ որում ես համբուրեցից, նա է, զնա ունիցիք։"
48 Ասէ ցնա Յիսուս, Յուդա, համբուրելո՞վ մատնես
49 զՈրդի մարդոյ։ Իբրեւ տեսին որ զնովաւն էին՝ որ
ինչ եղեւն, ասեն ցնա, Տէր, †հարցուք զնոսա"
50 սրով։ Եւ եհար մի ոմն ի նոցանէ զքահանայապե-
տին ծառայ, և ի բաց եհան զաջդ ունկն նորա։
51 Պատասխանի եւս Յիսուս և ասէ, Թոյլ տուք մին-
չեւ ցայդ վայր. և մատուցեալ յականկն բժշկեաց
52 զնա։ Եւ ասէ ցեկեալսն ի վերայ նորա՝ ցքահա-
նայապետսն և ցիշխանս տաճարին և ցծերս, իբ-

* Ի ցոյն՝ էիւ։ † Ի ցոյն՝ հարցո՞ւք

բեւ 'ի վերայ աւազակի ելէք սուսերօք և բրօք ։
53 Հանապազ ընդ ձեզ էի 'ի տաճարին , և ոչ ձգե-
ցէք ձեռս յիս . այլ այս է ձեր ժամ և իշխա-
54 նութիւն խաւարի ։ Եւ կալեալ զնա՝ ածին և մու-
ծին 'ի տունն քահանայապետին . և Պետրոս եր-
55 թայր զկնի նորա հեռագոյն ։ Իբրեւ լուցին կրակ
'ի մէջ դաւթին՝ և նստան շուրջ , նստաւ և Պետ-
56 րոս 'ի մէջ նոցա ։ Եւ տես զնա աղախին ոմն՝ զի նըս-
տեր առ լոյսն , հայեցաւ ընդ նա և ասէ , Եւ սա
57 ընդ նմա էր՝ որ ընդ նմայն էին ։ Իսկ Պետրոս ու-
58 րացաւ և ասէ , Ոչ գիտեմ զնա , կին դու ։ Եւ յետ
սակաւ միոյ այլ ոմն տեսս զնա և ասէ , Եւ դու
'ի նոցանէ ես . և Պետրոս ասէ , Այր դու , չեմ
59 'ի նոցանէ ։ Եւ իբրեւ ժամ մի անց 'ի վերայ , այլ
ոմն վիճէր և ասէր , Ստոյգ և սա ընդ նմա էր ,
60 քանզի Գալիլեացի է ։ Ասէ Պետրոս , Այր դու , չգի-
տեմ զինչ խօսիս . և առ ժամայն մինչդեռ նա
61 զայն ասէր , խօսեցաւ հաւ ։ Դարձաւ Տէր և հա-
յեցաւ 'ի Պետրոս . և յիշեաց Պետրոս զբանն Տեա-
ռըն զոր ասաց ցնա , Մինչչեւ հաւուս խօսեալ ի-
62 ցէ , երիցս ուրասցիս չգիտել զիս ։ Եւ ելեալ ար-
63 տաքս՝ լալաց դառնապէս ։ Եւ արքն , որ պահէին
64 զնա , այպն առնէին զնովաւ և հարկանէին ։ Ծած-
կէին զերեսս նորա և առնջէին , և հարցանէին ցնա
և ասէին , Մարգարեաց , ո՞վ է որ եհարն զքեզ ։
65 Եւ այլ բազում ինչ հայհոյութեամբ խօսէին 'ի նա։
66 Եւ իբրեւ այգ եղեւ , ժողովեցաւ ծերակոյտ ժո-
ղովրդեանն՝ քահանայապետքն և դպիրք , և հանին
ածին զնա յատեանն իւրեանց և ասեն , Եթէ դու
67 ես Քրիստոս , ասա մեզ ։ Ասէ ցնոսա , Եթէ ա-

68 սացից ձեզ , սակայն ոչ հաւատայք . Եւ եթէ հար-
ցից ինչ զձեզ , չտայք ինձ պատասխանի կամ ար-
69 ձակիցէք ։ Բայց յայսմ հետէ Նստցի Որդի մարդոյ
70 ընդ աջմէ զօրութեանն Աստուծոյ ։ Եւ ասեն ա-
մենեքեան , Ուրեմն դո՞ւ ես Որդին Աստուծոյ . և
71 Նա ասէ ցնոսա , Դուք ասէք թէ ես եմ ։ Եւ նոքա
ասեն , Ձի՞նչ եւս պիտոյ է մեզ վկայութիւն , զի
մեզէն իսկ լուաք 'ի բերանոյ դորա ։

Գլ. ԻԳ

1 Եւ յարուցեալ ամենայն բազմութիւնն նոցա ,
2 ածին զնա առ Պիղատոս ։ Եւ սկսան չարախօս լի-
նել զնմանէ և ասել , Գտաք զսա՝ զի թիւրէր
զազգս մեր , և արգելլոյր 'ի տալոյ հարկս Կայսեր ,
և ասէր զանձնէ եթէ Քրիստոսն իցէ Թագաւոր ։
3 Իսկ-Պիղատոս եհարց զնա և ասէ , Դո՞ւ ես Թա-
գաւորն Հրէից . Նա պատասխանի ետ նմա և ասէ ,
4 Դու ասացեր ։ Ասէ Պիղատոս ցքահանայապետսն
և ցժողովուրդսն , Ոչ գտանեմ ինչ պատ յառնս
5 յայսմիկ ։ Եւ նոքա պնդէին և ասէին եթէ խռովէ
զժողովուրդս , ուսուցանէ ընդ ամենայն Հրէաս-
6 տան՝ սկսեալ 'ի Գալիլէէ մինչեւ ցայսր ։ Իսկ Պի-
ղատոս իբրեւ լուաւ զԳալիլէէ , եհարց եթէ Գա-
7 լիլեացի՞ իցէ այրն ։ Եւ իբրեւ գիտաց թէ յիշխա-
նութենէ Հերովդի է , ետ տանել զնա առ Հերով-
դէս . քանզի և նա յԵրուսաղէմ էր յաւուրսն
8 յայնոսիկ ։ Եւ Հերովդէս իբրեւ տեսս զՅիսուս ,
ուրախ եղեւ յոյժ , զի ցանկայր 'ի բազում ժամա-
նակաց տեսանել զնա . քանզի լսեր բազում ան-
գամ զնմանէ , և ակն ուներ նշան ինչ լեալ տե-

9 սանել ՚ի նմանէ ։ Չարցանէր զնա բանիւք բազմօք. և
10 նա ոչինչ էտ նմա պատասխանի ։ Կային քահա-
նայապետքն և գպիրքը և պնդագոյնս չարախօսէին
11 զնմանէ ։ Այրհամարհեաց զնա և Հերովդէս հանդերձ
իւրովք զօրականօքն, և այսպէս արարեալ՝ արկ զնովաւ
հանդերձս սպիտակս, և էտ տանել անդրէն առ
12 Պիղատոս ։ Եւ եղեն բարեկամք Պիղատոս և Հե-
րովդէս յաւուր յայնմիկ, քանզի յառաջ թշնա-
13 միք էին միմեանց ։ Կոչեաց Պիղատոս զքահանա-
14 յապետսն և զիշխանս և զժողովուրդն, եւ ասէ
ցնոսա, Ածէք մատուցէք ինձ զայս զայս իբրեւ
զխոտորեցուցիչ ժողովրդեանն. և ահաւասիկ ա-
ռաջի ձեր դատեցայ, և ինձս ինչ ոչ գտի յառնս
15 յայսմիկ՝ զորոյ դուք չարախօսէք զդմանէ ։ Այլ
և ոչ Հերովդէս, քանզի եւտս տանել զդա առ
նա. և արդ ոչինչ մահու արժանի է գործեալ դո-
16 քա, խրատեցից զդա և արձակեցից ։ (17) Զի հարկ
18 էր մի մի ըստ տոնի արձակել նոցա ։ Եւ նոքա ա-
ղաղակէին ամենայն բազմութեամբն և ասէին,
19 Բարձ զդա և արձակեա մեզ զԲարաբբաս. Որ էր
վասն խռովութեան իրիք եղելոյ ՚ի քաղաքին և սպա-
20 նութեան մտեալ ՚ի բանտ ։ Դարձեալ Պիղա-
տոս ակսաւ խօսել, քանզի կամէր արձակել զՅի-
21 սուս ։ Եւ նոքա անդրէն աղաղակէին և ասէին,
22 Ի խաչ հան զդա ։ Եւ նա երիցս ասէ ցնոսա, Զի՞նչ
չար արար սա. ոչինչ մեռս մահու գտի ՚ի սմա,
23 խրատեցից զսա և արձակեցից ։ Եւ նոքա ստիպէին
մեծաձայն և խնդրէին զնա ՚ի խաչ հանել, և զո-
րանայնն բարբառք նոցա և քահանայապետին ։
24 Եւ Պիղատոս հաւանեցաւ առնել զկայցուածս նո-

25 ցա ։ Արձակեաց նոցա *զԲարաբբայն՝ զոր վասն
խռովութեան և սպանութեան արկեալ էր ՚ի բանտ,
զոր և խնդրէին իսկ, և զՅիսուս մատնեաց կամս
26 նոցա ։ Իբրեւ առին գնացին զնա, ըմբռնեցին զսի-
մէն Կիւրենացի՝ որ գայր յանդէ, եդին ՚ի վր-
27 բայ նորա զխաչն բերել զկնի Յիսուսի ։ Եւ երթայր
զկնա նորա բազմութիւն ժողովրդեանն, և կանանց
28 որ կոծէին և աշխարէին զնա ։ Դարձաւ Յիսուս և
ասէ ցնոսա, Դստերք Երուսաղէմի, մի լայք ՚ի վե-
րայ իմ, այլ լացէք ՚ի վերայ անձանց և ՚ի վերայ
29 որդւոց ձերոց ։ Զի եկեսցեն աւուրք, յորս ասիցեն
թէ երանի ամլոց և որովայնից՝ որ ոչ ծնան, և
30 սեանց՝ որ ոչ դիեցուցին ։ Յայնժամ սկսանիցին
ասել լերանց թէ Անկերուք ՚ի վերայ մեր, և բլ-
31 լոց՝ թէ Ծածկեցէք զմեզ ։ Զի եթէ ընդ փայտ դա-
լար զայս առնեն, ընդ չորն զի՞նչ լինիցի ։
32 Ածին և այլ երկուս չարագործս՝ սպանանել ընդ
33 նմա ։ Իբրեւ չոգան ՚ի տեղին կոչեցեալ Գագաթն,
անդ հանին զնա ՚ի խաչ. և զչարագործսն՝ զմին
34 ընդ աջմէ և զմին ընդ ձախմէ խաչեցին ։ Եւ Յիսուս
ասէ, Հայր, թող դոցա, զի ոչ գիտեն զինչ գոր-
35 ծեն ։ Եւ ՚ի բաժանել զհանդերձս նորա արկին
վիճակս ։ Եւ կայր ժողովուրդն հայեցեալ, անդոս-
նէին զնա իշխանքն հանդերձ նոքօք և ասէին, Զայլս
ապրեցոյց, ապրեցուսցէ և զանձն՝ եթէ դա է Քրիս-
36 տոս Որդի Աստուծոյ ընտրեալն ։ Այսպէս առնէին
զնա և զհնուրբքն, եկեալ առաջի՝ մատուցանէին
37 նմա քացախ, եւ ասէին, եթէ դու ես թագաւորն

* Ի ցաւն էր ։

38 Հրէից, փրկեա զանձն քո։ Եւ էր գիր գրեալ ՚ի
վերայ նորա Յունարէն և Դաղմատերէն և Եբրայե-
39 ցերէն գրով եթէ Սա է արքայն Հրէից։ Իսկ մի
ոմն ՚ի կախելոց չարագործացն Հայհոյէր զնա և ասէր,
Ո՞չ դու ես Քրիստոս՝ փրկեա զանձն քո և զմեզ։
40 Պատասխանի եւս ընկերն սաստելով նմա և ասէ,
Զերկնչի՞ս դու Յաստուծոյ, զի ՚ի նմին պատժի կաս։
41 Եւ մեք յիրաւի, զի արժանի որոց գործեցաքն՝
առնումք զհատուցումն. և սա ապիրատ ինչ ոչ
42 գործեաց։ Եւ ասէ ցՅիսուս, Յիշեա զիս, Տէր,
43 յորժամ գայցես արքայութեամբ քով։ Եւ ասէ
ցնա Յիսուս, Ամէն ասեմ քեզ, Այսօր ընդ իս
44 իցես ՚ի դրախտին։ Եւ էր իբրեւ վեցերորդ ժամ,
և խաւար եղեւ ՚ի վերայ ամենայն երկրի մինչեւ
45 ցիններորդ ժամ. խաւարեցաւ արեգակն։ Եւ հեր-
46 ձաւ վարագոյր տաճարին ընդ մէջ։ Եւ կարդաց
Յիսուս ՚ի ձայն մեծ և ասէ, Հայր, ՚ի ձեռս քո
աւանդեմ զհոգի իմ. զայս իբրեւ ասաց՝ եհան զո-
47 գի։ Եւ տեսեալ հարիւրապետին զոր ինչ եղեւն,
փառաւոր արար զԱստուած և ասէ, Արդարեւ
48 այրս այս արդար էր։ Եւ ամենայն ժողովուրդքն որ
եկեալ էին, և տեսանէին զտեսիլն զայն և զգործ,
49 բախէին զկուրծս և դառնային։ Կային և ամենայն
ծանօթքն նորա ՚ի հեռաստանէ, և կանայք որ ե-
կեալ էին զհետ նորա ՚ի Գալիլեէ՝ տեսանէին զայն։
50 Եւ ահա այր մի անուն Յովսեփ, որ էր նախա-
51 րար՝ այր բարեգործ և արդար. Սա չէր միաբա-
նեալ ընդ խորհուրդս և ընդ գործս նոցա, ՅԱրի-
մաթեայ քաղաքէ Հրէից, որ և ինքն իսկ ակն ու-
52 նէր արքայութեան Աստուծոյ։ Սա մատուցեալ առ

53 Պիղատոս՝ խնդրեաց զմարմինն Յիսուսի. Եւ իջու-
ցեալ զնա՝ պատեաց պատառակալաւ, և եդ ՚ի
կռատծոյ գերեզմանին՝ ուր չէր ընաւ ոք եդեալ։
54 Եւ օրն էր ուրբաթ և շաբաթ լուսանայր։ (55) Եւ
երթային զհետ նորա կանայք՝ որ եկեալ էին ընդ
նմա ՚ի Գալիլեէ, տեսին զգերեզմանն, և որպէս
56 եդաւ մարմին նորա։ Դարձան և պատրաստեցին
խունկս և իւղս, և ՚ի շաբաթուն հանդարտեցին
ըստ պատուիրանին։

ԳԼ. ԻԴ

1 Բայց ՚ի միաշաբաթուն վաղ քաջ ընդ առաւօտն
եկին ՚ի գերեզմանն, բերին զխունկն զոր պատրաս-
2 տեցին, և այլ կանայք ընդ նոսա. Եւ գտին զվէմն
3 թաւալեցուցեալ ՚ի գերեզմանէ անտի։ Եւ մտեալ
4 ՚ի ներքս ոչ գտին զմարմինն Տեառն Յիսուսի։ Եւ
եղեւ ընդ հիանալն նոցա վասն այնորիկ, և ահա
արք երկու հասին առ նոսա ՚ի հանդերձս լուսա-
5 նորս։ Եւ իբրեւ զահի հարան և խոնարհեցուցին
զերեսս իւրեանց յերկիր, ասեն ցնոսա, Զի՞ խըն-
6 դրէք զկենդանին ընդ մեռեալս. Չէ աստ, այլ յա-
րեաւ. յիշեցէք որպէս խօսեցաւ ընդ ձեզ մինչ էրն
7 ՚ի Գալիլեա, Եւ ասէր Թէ Պարտ է Որդւոյ մար-
դոյ մատնիլ ՚ի ձեռս մարդոց մեղաւորաց, և ՚ի
8 խաչ ելանել և յերրորդ աւուր յառնել։ Եւ յիշե-
9 ցին զբանան նորա։ Եւ դարձան պատմեցին զայս
10 ամենայն մեստասանիցն և այլոցն ամենեցուն։ Եւ
էին Մարիամ Մագդաղենացի և Յովաննա և Մա-
րիամ Յակովբայ և այլք ընդ նոսա՝ որ պատմեցին
11 զայս առաքելոցն։ Եւ երեւեցան առաջի նոցա չաղ-

փաղփուռիէն բանքն նոցա և չՀաւատային նոցա ։
12 Բայց Պետրոս յարուցեալ ընթացաւ ի գերեզմանն ,
և Հայեցեալ տեսանէ զկտաւսն լոկ ղի կային , և
դնաց ընդ միտս զարմացեալ թէ զինչ եղեւ ։
13 Եւ ահա երկուք ի նոցանէ երթային ի նմին ա-
ւուր ի գեղ մի , որ Հեռի էր Երուսաղեմէ Հա-
րիւր և վաթսուն ասպարիսաւ , և էր անուն նորա
14 Եմմաուս ։ Եւ նոքա խօսէին ընդ միմեանս վասն
15 ամենայն անցելոյն անցելոց ։ Եւ եղեւ ընդ խօսելն
նոցա և ընդ վիճել , և ինքն իսկ Յիսուս մերձեցաւ
16 և երթայր ընդ նոսա ։ Եւ նոցա աչք կալեալ էին
17 առ ի ճանաչելոյ զնա ։ Եւ ասէ ցնոսա , Զի՞նչ են
բանքդ վասն որոց վիճիքդ ընդ միմեանս՝ մինչդեռ
18 գնայիքդ , և տրտմեալ էք ։ Պատասխանի ետ մի ոմն
ի նոցանէ որում անուն էր Կղէովպաս , և ասէ
ցնա , Դո՞ւ միայն կաս Երուսաղէմ , որ ոչ գիտա-
ցեր զինչ գործեցաւ ի նմա յաւուրսս յայսոսիկ ։
19 Եւ ասէ ցնոսա , Զի՞նչ . և նոքա ասեն , ԶՅիսուսէ
Նազովրեցւոյ , որ եղեւ այր մարգարէ Հզօր ար-
դեամբք և բանիւք առաջի Աստուծոյ և ամենայն
20 ժողովրդեանն ։ Որպէս մատնեցին զնա քահանա-
յապետքն և իշխանքն մեր ի դատաստան մահու
21 և Հանին զնա ի խաչ ։ Մեք ակն ունէաք թէ նա
է որ փրկելոցն էր զԻսրայէլ . այլ և Հանդերձ այ-
սոսիկ ամենայնիւ այս երրորդ օր է՝ յորմէ Հետէ այն
22 գործեցաւ . Այլ և կանայք ոմանք ի մէնջ զար-
մացուցին զմեզ , որք կանխեալ ընդ առաւօտս չո-
23 գան ի գերեզմանն , Եւ ոչ գտին զմարմինն նորա .
եկին և ասեն թէ և տեսիլ հրեշտակաց տեսին ,
24 որք ասէին զնմանէ թէ կենդանի է ։ Եւ գնացին

ոմանք ի մէնջ ի գերեզմանն , և գտին նոյնպէս՝
որպէս և կանայքն ասացին . բայց զնա ոչ տեսին ։
25 Եւ նա ասէ ցնոսա , Ո՛վ անմիտք և Հեղգասիրտք
26 ընդ : Ամենայնի , որք խօսեցան մարգա-
27 և մտանել ի փառս իւր ։ Եւ սկսեալ Քրիստոսէ ,
և յամենայն մարգարէիցն , մեկնէր նոցա որ ինչ
28 յամենայն գիրս գրեալ է զնմանէ ։ Իբրեւ մերձե-
ցան ի գեօղն յոր երթային , և նա պատճառէր
29 Հեռագոյն երես ուրեք երթալ ։ Եւ բռնադատեցին
զնա և ասեն , Աւ մնա ապիր , զի ընդ երեկս է և
տարաժամեալ է օրս . և եմուտ ապանել անդ ընդ
30 նոսա ։ Եւ եղեւ ի բազմել նորա ընդ նոսա , ա-
31 ռեալ զհացն՝ օրհնեաց , երեկ և բեր նոցա ։ Եւ
նոցա բացան աչք և ծանեան զնա . և նա եղեւ
32 ի նոցանէ աներեւոյթ ։ Եւ ասեն ցմիմեանս , Ո՞չ
իսկ և սիրտք մեր ճմլէին ի մեզ՝ մինչ խօսէրն ընդ
մեզ զճանապարհսն , և *որպէս բանայր մեզ զգիրս ։
33 Եւ յարուցեալ նոյն ժամուն՝ դարձան Երուսա-
ղէմ , և գտին ժողովեալ զմեռեալսն և զորս ընդ
34 նոսայն էին . Եւ ասեն թէ Արդարեւ յարեաւ Տէր
35 և երեւեցաւ Սիմոնի ։ Եւ նոքա պատմեցին զոյն
որ զճանապարհսն , և թէ զիարդ ետ ծանօթս
նոցա ի բեկանել հացին ։
36 Մինչդեռ զոյն խօսէին , ինքն իսկ Յիսուս եկաց
ի մէջ նոցա և ասէ ցնոսա , Խաղաղութիւն ընդ
37 ձեզ , *Ես եմ , մի՛ երկնչիք՝ ։ Եւ զարհի Հարեալ
38 երկնչէին , և Համարէին ոգի ինչ տեսանել ։ Եւ ա-

* Ի Յայն վէ ։

սէ ցնոսա , Զի՞ խոովեալ էք և ընդէ՞ր խորհուրդք
39 ելանեն ի սիրտս ձեր : Տեսէք զձեռս իմ և զոտս,
զի ես նոյն եմ. շօշափեցէք զիս և տեսէք , զի ոգի
մարմին և ոսկերս ոչ ունի՛ք ինձ տեսանել
40 զիս : Եւ մինչդեռ տակաւին չհաւատային ի խընդութենէն և զարմացեալ էին , ասէ ցնոսա , Ունի՞ք
42 ինչ կերակուր աստ : Եւ նոքա ետուն նմա ձկան
43 խորովելոյ մասն և խորիսխ մեղուս : Եւ առ եկեր
44 առաջի նոցա , *և զմնացորդսն ետ նոցա՝ : Եւ ասէ ցնոսա , Այս բանք են զոր խօսեցայ ընդ ձեզ,
մինչ առ ձեզն էի թէ Պարտ է լնուլ ամենայն գրեալսն յօրէնսն Մովսիսի և ի մարգարէս և ի սաղմոսն
45 վասն իմ : Յայնժամ եբաց զմիտս նոցա իմանալ
46 զգիրս : Եւ ասէ ցնոսա թէ Այսպէս պարտ էր չարչարիլ Քրիստոսի , և յառնել ի մեռելոց յաւուր
47 երրորդի . Եւ քարոզել յանուն նորա ապաշխարութիւն և թողութիւն մեղաց յամենայն ազգս՝
48 սկսեալ Երուսաղէմէ : Եւ դուք էք վկայք այսո-
49 ցիկ : Եւ ահա ես առաքեմ զաւետիս Հօր իմոյ ի ձեզ. և դուք նստարուք ի քաղաքիս Երուսաղէմ, մինչեւ զգենուցուք զօրութիւն ի բարձանց՝
50 Եհան զնոսա մինչեւ ի Բեթանիա , և ամբարձեալ
51 զձեռս իւր՝ օրհնեաց զնոսա : Եւ եղեւ օրհնելն նորա զնոսա , մեկնեցաւ ի նոցանէ և վերանայր յերկինս ;
52 Եւ նոցա երկիրպագեալ նմա՝ դարձան Երուսա-
53 ղէմ ուրախութեամբ մեծաւ : Եւ էին հանապազ
ի տաճարին , գովէին և օրհնէին զԱստուած :

* Ի Յայն չէ :

ԱՒԵՏԱՐԱՆ

ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ

ԳԼ· Ա

1 Ի սկզբանէ էր Բանն, և Բանն էր առ Աստուած,
2 և Աստուած էր Բանն : Նա էր ի սկզբանէ առ
3 Աստուած : Ամենայն ինչ նովաւ եղեւ , և առանց
4 նորա եղեւ և ոչինչ՝ որ ինչ եղեւն : Նովաւ կեանք
5 էր , և կեանքն էր լոյս մարդկան . Եւ լոյսն ի խաւարի անդ լուսաւորէ , և խաւար նմա ոչ եղեւ հա-
6 առ : Եղեւ այր մի առաքեալ յԱստուծոյ , անուն
7 նմա Յովհաննէս : Սա եկն ի վկայութիւն զի վկայեսցէ վասն Լուսոյն , զի ամենեքեան հաւատասցեն
8 նովաւ : Ոչ էր նա Լոյսն , այլ զի վկայեսցէ վասն
9 Լուսոյն : Էր Լոյսն ճշմարիտ , որ լուսաւորէ առնէ
10 զամենայն մարդ՝ որ գալոց է յաշխարհ : Յաշխարհի էր , և աշխարհ նովաւ եղեւ , և աշխարհ զնա ոչ
11 ծանեաւ : Յիւրան եկն , և իւրքն զնա ոչ ընկալան,
12 Իսկ որք ընկալանն զնա , ետ նոցա իշխանութիւն որդիս Աստուծոյ լինել՝ որոց հաւատասցեն յանուն
13 նորա . Որք ոչ յարեանէ և ոչ ի կամաց մարմնոյ և
14 ոչ ի կամաց առն , այլ յԱստուծոյ ծնան : Եւ

Բանն մարմին եղեւ և բնակեաց ի մեզ, և տեսաք
զփառս նորա, զփառս իբրեւ զմիածնի առ ի Հօրէ,
15 լի շնորհօք և ճշմարտութեամբ։ Յովհաննէս վկայէ
վասն նորա, աղաղակեաց և ասէ, Սա է՝ զորմէ
ասէի, Որ զկնի իմ գալոցն էր՝ առաջի իմ եղեւ,
16 զի նախ քան զիս էր։ Զի ի լրութենէ անտի նո-
ցա մեք ամենեքեան առաք շնորհս փոխանակ շնոր-
17 հաց։ Զի օրէնքն ի ձեռն Մովսիսի տուան, շնորհքն
և ճշմարտութիւն ի ձեռն Յիսուսի Քրիստոսի եղեն։
18 ԶԱստուած ոչ ոք եւս երբեք, բայց միածինն
19 Որդի որ է ի ծոց Հօր, նա պատմեաց։ Եւ այս է
վկայութիւնն Յովհաննու, յորժամ առաքեցին առ
նա Հրեայքն Երուսաղէմէ քահանայս և Ղեւտա-
20 ցիս, զի հարցցեն զնա Թէ Դու ո՞ւս։ Եւ խոստո-
վան եղեւ և ոչ ուրացաւ. խոստովան եղեւ Եթէ
21 Ես ոչ եմ Քրիստոս։ Եւ հարցին զնա, Իսկ ո՞վ
ես դու, Եղիա՞ ես. և ասէ, Ոչ եմ. իսկ մար-
22 գարէ՞ն ես դու. պատասխանի ետ Թէ Ոչ։ Իսկ
ասա մեզ, Դու ո՞վ ես, զի պատասխանի տար-
ցուք՝ որոց առաքեցինն զմեզ. զի՞ ասես վասն քո։
23 Ասէ, Ես՝ ձայն բարբառոյ յանապատի, ուղիղ
արարէք զճանապարհս Տեառն, որպէս ասաց Եսայի
24 մարգարէ։ Եւ որք առաքեցանն՝ ի փարիսեցւոց
25 անտի էին։ Հարցին զնա և ասեն, Իսկ զի՞ մկըր-
ասես՝ եթէ դու չես Քրիստոսն, և ոչ Եղիա, և ոչ
26 մարգարէն։ Պատասխանի ետ նոցա Յովհաննէս և
ասէ, Ես մկրտեմ զձեզ ջրով, ի միջի ձերում
27 կայ, զոր դուքն ոչ գիտէք. Որ զկնի իմ գալոցն
է, որում չեմն արժանի եթէ լուծից զկօշ-
28 կաց նորա։ Ահա ի Բեթաբարա եղեւ յայնկոյս

Յորդանանու, ուր էրն Յովհաննէս և մկրտէր։
29 Ի վաղիւ անդր տեսանէ զՅիսուս զի գայր առ
նա. և ասէ, Ահաւասիկ Գառն Աստուծոյ՝ որ
30 բառնայ զմեղս աշխարհի։ Սա է՝ վասն որոյ եմն
ասէի, զկնի իմ գայ այր՝ որ առաջի իմ եղեւ, զի
31 յառաջ իսկ էր քան զիս։ Եւ ես ոչ գիտէի զնա,
այլ զի յայտնի լինիցի Իսրայէլի, վասն այնորիկ
32 եկի ես ջրով մկրտել։ Վկայեաց Յովհաննէս և ասէ
Թէ Տեսանէի զՀոգին, զի իջանէր իբրեւ զաղաւնի
33 յերկնից, և հանգչէր ի վերայ նորա։ Եւ ես ոչ
գիտէի զնա, այլ որ առաքեացն զիս մկրտել ջրով՝
նա ասաց ցիս, Ցայր վերայ տեսանիցես զՀոգին,
զի իջանիցէ և հանգչիցի ի վերայ նորա, նա է որ
34 մկրտէ Հոգւովն Սրբով։ Եւ ես տեսի և վկայեցի
Եթէ Սա է Որդին Աստուծոյ։
35 Ի վաղիւ անդր կայր Յովհաննէս, և յաշակեր-
36 տաց անտի նորա երկու։ Եւ նայեցեալ ընդ Յի-
սուսի զի գնայր, ասէ, Ահաւասիկ *Քրիստոս Գառն
37 Աստուծոյ։ Լուան ի նմանէ երկու աշակերտքն զի
38 խօսէր, և գնացին զհետ Յիսուսի։ Իբրեւ դարձաւ
Յիսուս ևետես զնոսա զի երթային զհետ նորա,
ասէ ցնոսա, Զի՞նչ խնդրէք. Նոքա ասեն ցնա,
Ռաբբի, որ թարգմանեալ կոչի Վարդապետ, ո՞ւր
39 են օթեւանք քո։ Ասէ ցնոսա, Եկայք և տեսէք.
եկին և տեսին ուր էրն օթեւանք նորա, և առ
նմա ագան այն օր, զի ժամ էր իբրեւ տասներորդ։
40 Էր Անդրեաս եղբայր Սիմոնի Պետրի, մի յերկուց
անտի որ լուան ի Յովհաննէ և գնացին զկնի նո-

* Ի ցայն էթ։

41 բա ։ Գտանէ սա նախ զեղբայր իւր զՍիմոն, և ասէ
ցնա, Գտաք զՄեսիայն՝ որ Թարգմանի Քրիստոս ։
42 Սա առ զնա առ Յիսուս. Հայեցեալ ընդ նա Յի-
սուսի՝ ասէ, Դու ես Սիմոն որդի Յովհաննու, դու
կոչեցիս կեփաս, որ Թարգմանի Պետրոս ։
43 Ի վաղիւ անդր կամեցաւ ելանել ի Գալիլեա.
գտանէ զՓիլիպպոս, և ասէ ցնա Յիսուս, Եկ զկնի
44 իմ։ Եւ էր Փիլիպպոս ի Բեթսայիդա, ի քաղաքէ
45 Անդրեայ և Պետրոսի ։ Գտանէ Փիլիպպոս զՆա-
թանայէլ և ասէ ցնա, Զորմէ գրեաց Մովսէս յօ-
րէնսն՝ և մարգարէքն, գտաք զՅիսուս զորդի Յով-
46 սեփայ ի Նազարեթէ ։ Ասէ ցնա Նաթանայէլ, Իսկ
ի Նազարեթէ մարթ ի՞նչ իցէ բարւոյ իմիք լինել.
47 ասէ ցնա Փիլիպպոս, Եկ և տես ։ Իբրեւ տեսս Յի-
սուս զՆաթանայէլ զի գայր առ նա, ասէ վասն
նորա, Ահա արդարեւ Իսրայէլացի՝ յորում նէնդ
48 ոչ դոյ ։ Ասէ ցնա Նաթանայէլ, Ուստի՞
ճանաչես զիս. պատասխանի եւս Յիսուս և ասէ
ցնա, մինչչեւ էր Փիլիպպոսի կոչեցեալ զքեզ՝ զի
49 էիր ի ներքոյ թզենւոյն, տեսի զքեզ ։ Պատաս-
խանի եւս Նմա Նաթանայէլ և ասէ, Ռաբբի, դու
ես Որդի Աստուծոյ, Դու ես Թագաւորն Իսրայէլի ։
50 Պատասխանի եւս Նմա Յիսուս և ասէ, Փոխանակ
զի ասացի քեզ Թէ տեսի ի ներքոյ թզենւոյն,
51 Հաւատաս. մեծամեծս եւս քան զայս տեսցես ։ Եւ
ասէ ցնա, Ամէն ամէն ասեմ ձեզ, տեսանիցէք
զերկինս բացեալ, և զՀրեշտակս Աստուծոյ՝ զի ե-
լանիցեն և իջանիցեն ի վերայ Որդւոյ մարդոյ ։

ԳԼ · Բ

1 Եւ յաւուրն երրորդի հարսանիք էին ի Կանայ
2 Գալիլեացւոց, և անդ էր մայրն Յիսուսի ։ Կոչե-
ցաւ և Յիսուս և աշակերտքն նորա ի հարսանիսն ։
3 Եւ ի պակասել գինւոյն, ասէ մայրն Յիսուսի,
4 Գինի ոչ ունին ։ Եւ ասէ ցնա Յիսուս, Զի՞ կայ
իմ և քո, կին դու, չեւ է հասեալ ժամանակ իմ ։
5 Ասէ մայրն նորա ցսպասաւորսն, Որ ինչ ասիցէ
6 ձեզ՝ արասջիք ։ Անդ էին թակոյկք վեց
ըստ սրբութեան Հրէից, տանէին մի մի ի նոցանէ
7 մաս երկուս կամ երիս ։ Ասէ ցնոսա Յիսուս, Լ՚ցէք
8 զթակոյկսդ ջրով. և լցին զնոսա մինչեւ ի վեր ։ Եւ
ասէ ցնոսա, Արդ առէք և բերէք տաճարապետիդ.
9 և նոքա բերին ։ Եւ իբրեւ ճաշակեաց տաճարա-
պետն զջուրն գինի եղեալ, և ոչ գիտէր ուստի
իցէ (բայց սպասաւորքն գիտէին՝ որք արկին զջուրն),
10 խօսի ընդ փեսային տաճարապետն, Եւ ասէ, Ամե-
նայն մարդ զնոյշ գինին յառաջագոյն պաշտէ.
և յորժամ արբենան, յայնժամ զյոռին. դու
11 պահեցեր զնոյշ գինիդ մինչեւ ցայժմ ։ Զայս ա-
րար սկիզբն նշանաց Յիսուս ի Կանայ Գալիլեացւոց,
և յայտնեաց զփառս իւր, և հաւատացին ի նա
աշակերտքն նորա ։
12 Յետ այսորիկ էջ Յիսուս ի Կափառնայում՝ ինքն
և մայր իւր և եղբարք իւր*. և անդ լինէր ոչ բա-
13 զում ինչ աւուրս ։ Եւ էր մերձ զատիկն Հրէից,

* Ի Յոյն յաւելու՝ և աշակերտքն իւր.

44 Եւ եղ Յիսուս յերուսաղէմ. եւ եգիտ ի տաճարին
զնի վաճառեսին զարջառս եւ զոչխարս եւ զաղաւնիս,
45 եւ զլումափոխսն՝ որ նստեին։ Եւ արար խարազան
չուանեայ, եւ եհան զամենեսեան ի տաճարէն՝ զոչ-
խարսն եւ զարջառս, եւ զդրնիցն հատաւճառացն
46 ցրուեաց, եւ զսեղանսն կործանեաց։ Եւ որ զաղաւ-
նիսն վաճառէին՝ ասէ ցնոսա, Առէք զայդ ասա՛,
47 եւ մի առնէք զտուն Հօր իմոյ տուն վաճառի։ Այս
յիշեցին աշակերտքն նորա թէ գրեալ է, Նա-
48 խանձ տանն քո կերիցէ զիս։ Պատասխանի՛ետուն
Հրեայքն եւ ասեն ցնա, Զի՞նչ նշան ցուցանես դու
49 մեզ զի զայդ առնես։ Պատասխանի՛ետ Յիսուս եւ
ասէ ցնոսա, Փակեցէք զտաճարդ զայդ, եւ զերիս
20 աւուրս կանգնեցից զդա։ Ասեն ցնա Հրեայքն,
Զքառասուն եւ վեց ամ շինեցաւ տաճարս այս,
21 եւ դու զերիս աւուրս կանգնե՞ս զսա։ Բայց նա ա-
22 սէր վասն տաճարի մարմնոյն իւրոյ։ Իսկ յորժամ
յարեաւն ի մեռելոց, յիշեցին աշակերտքն նորա,
թէ այս է զոր ասացն, և հաւատացին գրոյն և բա-
նին զոր ասաց Յիսուս։
23 Եւ իբրեւ էր Յերուսաղէմ ի զատկին ի տօնի,
բազումք հաւատացին յանուն նորա, զի տեսանէին
24 զնշանս զոր առնէր։ Բայց ինքն Յիսուս ոչ հաւա-
տայր զանձն նոցա, քանզի ինքն գիտէր զամենայն.
25 Եւ զի ոչ էր պիտոյ եթէ ոք վկայեսցէ վասն մար-
դոյ, զի ինքն իսկ գիտէր զինչ կրէր ի մարդն։

Գլ. Գ

1 Եւ էր այր մի ի փարիսեցւոց անուն Նիկոդեմոս
2 անուն նորա իշխան Հրէից։ Սա եկն առ նա գի-

շերի և ասէ ցնա, Ռաբբի, գիտեմք եթէ ՚Ա՚ստուա-
ծոյ եկեալ ես վարդապետ. զի ոչ ոք կարէ զայդ
նշանսդ առնել զոր դուդ առնես, եթէ ոչ Ա-
3 ստուածն իցէ ընդ նմա։ Պատասխանի՛ետ Յիսուս և
ասէ ցնա, Ամէն ամէն ասեմ քեզ, եթէ ոչ ոք
ծնցի վերստին՝ ոչ կարէ տեսանել զարքայութիւն
4 Աստուծոյ։ Ասէ ցնա Նիկոդեմոս, Զի՞նդ կարէ
մարդ ծնանել որ ծերն իցէ. միթէ մա՞րթ ինչ իցէ
անդրէն յորովայն մօր իւրոյ կրկին մտանել և ծնա-
5 նել։ Պատասխանի՛ետ Յիսուս և ասէ, Ամէն ամէն
ասեմ քեզ, եթէ ոչ ոք ծնցի ի ջրոյ և ի Հոգւոյ,
6 ոչ կարէ մտանել յարքայութիւնն Աստուածոյ։ Զի
ծնեալն ի մարմնոյ մարմին է, և ծնեալն ի Հոգւոյ
7 Հոգի է։ Դու մի՛ զարմանար թէ ասացի քեզ, Պարտ
8 է ձեզ ծնանել վերստին։ Զի Հողմ՝ ուր կամի շնչէ,
և զձայն նորա լսես, այլ ոչ գիտես՝ ուստի գայ
և յո երթայ. այսպէս և ամենայն ծնեալն ի
9 Հոգւոյն։ Պատասխանի՛ետ Նիկոդեմոս և ասէ ցնա,
10 Զի՞նդ մարթի այդմ լինել։ Պատասխանի՛ետ Յի-
սուս և ասէ ցնա, դու ես վարդապետ Իսրայէլի և
11 զայդ ո՞չ գիտես։ Ամէն ամէն ասեմ քեզ, զի զոր
ինչ գիտեմք՝ խօսիմք, և զոր տեսաք՝ վկայեմք, և
12 զվկայութիւն մեր ոչ ընդունիք։ Իսկ արդ՝ եթէ
զերկրաւորս ասացի ձեզ՝ և ոչ հաւատայք, զի՞նդ
եթէ զերկնաւորսն ասացից՝ հաւատայցէք։
13 Եւ ոչ ոք եղ յերկինս, եթէ ոչ որ էջն յերկնից՝
14 Որդին մարդոյ, որ էն յերկինս։ Եւ որպես Մով-
սէս բարձրացոյց զօձն յանապատին, նոյնպէս բար-
15 ձրանալ պարտ է Որդւոյ մարդոյ։ Զի ամենայն որ
հաւատայ ի նա՝ մի՛ կորիցէ, այլ ընկալցի զկեանսն

16 յաւիտենականս : Զի այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ , մինչեւ զՈրդին իւր միածին ետ . զի ա-
մենայն որ հաւատայ ի նա՝ մի՛ կորիցէ , այլ ըն-
17 կալցի զկեանսն յաւիտենականս : Զի ոչ առաքեաց Աստուած զՈրդի իւր յաշխարհ՝ թէ դատեսցի զաշ-
18 խարհ , այլ զի փրկեսցի աշխարհ նովաւ : Որ հաւատայ ի նա՝ ոչ դատապարտեսցի . և որ ոչ հա-
ւատայ ի նա՝ արդէն իսկ դատապարտեալ է , զի ոչ հաւատաց յանուն միածնի Որդւոյն Աստուծոյ։
19 Եւ այս իսկ է դատաստան , զի լոյս եկն յաշխարհ, և սիրեցին մարդիկ զխաւար առաւել քան զլոյս ,
20 զի էին գործք իւրեանց չարութեան : Զի ամենայն որ զչար գործէ՝ ատեայ զլոյս, և ոչ գայ առ լոյսն,
21 զի մի՛ յանդիմանեսցին գործք նորա : Իսկ որ առնէ զճշմարտութիւն՝ գայ առ լոյսն , զի յայտնի լիցին
գործք նորա թէ Աստուծով գործեցան ։
22 Ցետ այսորիկ եկն Յիսուս և աշակերտքն նորա յերկիրն Հրէաստանի , և անդ շրջէր նոքօք հան-
23 դերձ և մկրտէր : Մկրտէր և Յովհաննէս ի Ա-Նոն մերձ առ Սաղիմ՝ , զի ջուրք բազումք էին անդ.
24 և գային և մկրտէին . Զի չէր եւս էր արկեալ ըզ-
25 Յովհաննէս ի բանտ : Եւ եղեւ խնդիր յաշակերտացն Յովհաննու ընդ Հրէից վասն սրբութեան ,
26 Եկին առ Յովհաննէս և ասեն ցնա , Ռաբբի , որ էրն ընդ քեզ յայնկոյս Յորդանանու , որումն դուն
վկայեցեր , ահաւանիկ նա մկրտէ , և ամենեքին
27 գան առ նա : Պատասխանի ետ Յովհաննէս և ա-
սէ, Ոչ կարէ մարդ առնուլ յանձնէ և ոչինչ , եթէ
28 ոչ իցէ տուեալ նմա յերկնից ի վերուստ : Դուք ձեղէն վկայէք ինձ , զի ասացի ձեզ թէ Ես եմ

Քրիստոսն , այլ թէ առաքեալ եմ առաջի նորա ։
29 Որ ունի հարսն՝ նա է փեսայ . իսկ բարեկամ փե-
սային որ կայ և լսէ նմա , ուրախութեամբ ուրախ
լինի վասն ձայնի փեսային . արդ այս ուրախութիւն
30 որ իմն է՝ լցեալ է : Նմա պարտ է աճել և ինձ
31 մեղմանալ ։ Որ ի վերուստն գայ՝ ի վերոյ է քան զամենայն . որ յերկրէ ասացեալ է՝ յերկրէ է և յեր-
32 կրէ խօսի ։ Որ յերկինքն գայ , զոր ինչ հաւատս և զոր լուաւ՝ վկայէ , և զվկայութիւն նորա ոչ ոք ընդու-
33 նի ։ Որ ընդունի զվկայութիւն նորա՝ կնքեաց թէ
34 Աստուած ճշմարիտ է ։ Զի զոր Աստուածն առա-
քեաց՝ զբանս Աստուծոյ խօսի . զի ոչ եթէ չափով
35 տայ Աստուած զՀոգին ։ Հայր սիրէ զՈրդի , և զա-
36 մենայն ինչ ետ ի ձեռս նորա ։ Որ հաւատայ յՈր-
դի , ընդունի զկեանսն յաւիտենականս . և որ ոչ հնազանդի Որդւոյ , ոչ տեսցէ զկեանս , այլ բար-
կութիւն Աստուծոյ մնայ ի վերոյ նորա ։

Գ Լ . Դ

1 Իբրեւ գիտաց Յիսուս եթէ լուան փարիսեցիքն՝
եթէ Յիսուս բազում աշակերտս առնէ և մկրտէ
2 քան զՅովհաննէս . թէպետ ոչ եթէ Յիսուս ինքնին
3 մկրտէր , այլ աշակերտքն նորա . Եթող զՀրէաս-
4 տան երկիր , և եկն միւսանգամ ի Գալիլեա ։ Եւ
5 էր նմա անցանել ընդ Սամարիա ։ Գայ նա ի քա-
ղաք մի Սամարացւոց՝ որում անուն էր Սիւքար ,
մերձ ի դեօղն զոր ետ Յակովբ որդւոյ իւրում Յով-
6 սեփայ ։ Եւ անդ էր աղբիւր մի Յակովբայ . և Յի-
սուս վաստակեալ ի ճանապարհէն՝ նստեր ի վերայ

7 աղբերն, և էր ժամ իբրեւ վեցերորդ։ Գայ կին մի
ի Սամարիայ հանել ջուր. ասէ ցնա Յիսուս, Տուր
8 ինձ ըմպել։ Զի աշակերտքն նորա երթեալ էին ի
9 քաղաք անդր՝ ղնել կերակուրս դնեսցեն։ Ասէ ցնա
կինն Սամարացի, Դու որ Հրեայդ ես, ղի՞ւդ ա՛ի-
նէն ըմպել խնդրես ի կնոջէ Սամարացւոյ. ղի ոչ
10 երբեք խառնակին Հրեայք ընդ Սամարացիս։ Պա-
տասխանի ետ Նմա Յիսուս և ասէ, Եթէ դիտէիր
դու ղպարգեւն Աստուծոյ, և ո՞վ է որ ասէդ ցքեզ
Թէ Տուր ինձ ըմպել, դու արդեօք խնդրէիր ի Նմա-
11 նէ, և տայր քեզ ջուր կենդանի։ Ասէ ցնա կինն,
Տէր, դու քանզի և դոյլ իսկ ոչ ունիս, և ջրհորս
խոր է, իսկ արդ ուստի՞ ունիցիս ղջուրն կենդանի։
12 Մի Թէ դու մե՞ծ ինչ ոք իցես քան զՅայրն մեր
Յակովբ՝ որ ղայս ջրհոր ետ մեզ. և ինքն ասէի արբ
13 և որդիք նորա և խաշինք նորա։ Պատասխանի ետ
Նմա Յիսուս և ասէ, Ամենայն որ ըմպէ ի ջրոյ յայդ-
մանէ՝ մի՛ւսանգամ ծարաւի՛, բայց որ ըմպէ ի ջրոյն՝
զոր ես տաց Նմա, մի՛ ծարաւիցէ յաւիտեան։
14 Ա՛յլ ջուրն զոր ես տաց Նմա, եղիցի Նմա աղբիւր
15 ջրոյ բղխելոյ ի կեանսն յաւիտենականս։ Ասէ ցնա
կինն, Տէր, տուր ինձ ղջուրն ղայն, ղի մի՛ ծա-
16 րաւիցեյց, և մի՛ եկից այսր՝ հանել ջուր։ Ասէ ցնա
17 Յիսուս, Երթ կոչեա զայր քո և եկ այսր։ Պատաս-
խանի ետ Նմա կինն և ասէ, Չիք իմ այր. ասէ
ցնա Յիսուս, Բարւոք ասացեր Թէ Չիք իմ այր.
18 Զի հինգ այր փոխեալ է քո, և զոր այժմ ունիս՝
19 չէ քո այր. զայդ արդար ասացեր։ Ասէ ցնա կինն,
20 Տէր, Թուի ինձ Թէ մարգարէ իցես դու։ Հարքն մեր
ի լերինս յայսմիկ երկիր պագին, և դուք ասէք

եթէ Յերուսաղէմ եւեթէ տեղի, ուր արժան իցէ
21 երկիր պագանել։ Ասէ ցնա Յիսուս, կին դու, հա-
ւատա ինձ, ղի եկեսցէ ժամանակ, յորժամ ոչ ի
լերինս յայսմիկ և ոչ Յերուսաղէմ երկիր պագա-
22 նիցէն Հօր։ Դուք երկիր պագանէք որում ոչն գի-
տէք, մեք երկիր պագանեմք որում գիտեմքն. ղի
23 փրկութիւն ի Հրեից է։ Ա՛յլ եկեսցէ ժամանակ և
այժմ իսկ է, յորժամ ճշմարիտքն երկրպագուք
երկիր պագանիցեն Հօր հոգւով և ճշմարտութեամբ,
քանզի և Հայր այնպիսի երկրպագուս իւր խնդրէ։
24 Հոգի է Աստուած, և երկրպագուսց նորա հո-
գւով և ճշմարտութեամբ պարտ է երկիր պագանել։
25 Ասէ ցնա կինն, Գիտեմ ղի Մեսիայ գայ՝ անուա-
նեալն Քրիստոս, յորժամ եկեսցէ, նա պատմեսցէ
26 մեզ զամենայն։ Ասէ ցնա Յիսուս, Ես եմ որ խօ-
27 սիմ ընդ քեզ։ Եւ յայն բան եկին աշակերտքն
նորա՝ և զարմանային ղի ընդ կնոջէն խօսէր. բայց
ոչ ոք ասաց ի նոցանէ Թէ Զի՞նչ խնդրես, կամ
28 Զի՞նչ խօսիս ընդ դմա։ Եթող կինն զսափորն իւր՝
29 և չոգաւ ի քաղաքն, և ասէ ցմարդիկն, Եկայք
տեսէք զայր մի, որ ասաց ինձ զամենայն՝ որ ինչ
30 իմ գործեալ է. միթէ նա՞ իցէ Քրիստոսն։ Ելին
31 ի քաղաքէն և գային առ նա։ Եւ մինչեւ եկեալ
էին նոքա, աղաչէին զնա աշակերտքն և ասէին,
32 Ռաբբի, հաց կեր։ Նա ասէ ցնոսա, Ես կերակուր
33 ունիմ ուտել, զոր դուքն ոչ գիտէք։ Ասէին ա-
շակերտքն ընդ միմեանս, Միթէ ելե՞ր ինչ ոք դմա
34 ուտել։ Ասէ ցնոսա Յիսուս, Իմ կերակուր այն է՝
ղի արարից զկամս այնորիկ որ առաքեացն զիս, և
35 կատարեցից զգործն Նորա։ Ո՞չ դուք ասէք եթէ

Ա.ՀԼ եւս չորք ամիսք են, և հունձք գան. ահա-
եաւիկ ես ասեմ ձեզ, Ամբարձէք զաչս ձեր և տե-
սէք զարտորայսն, զի սպիտակացեալ են և ի հունձս
36 հասեալ։ Եւ որ հնձէն՝ վարձս առնու, և ժողովէ
զպտուղ ի կեանսն յաւիտենականս. զի որ սերմա-
37 նէն և որ հնձէ՝ հասարակ ցնծասցեն։ Ցայսմ խակ
է բանն ճշմարիտ, զի Ա.ՀԼ է որ սերմանէ և այլ
38 է որ հնձէ։ Ես առաքեցի զձեզ հնձել՝ զոր ոչ դուք
վաստակեցէք. այլք վաստակեցին և դուք ի վաս-
39 տակս նոցա մտէք։ Եւ ի քաղաքէն յայնմանէ Սա-
մարացւոց բազումք հաւատացին ի նա վասն բա-
նի կնոջն վկայելոյ, եթէ Ասաց ինձ զամենայն՝ որ
40 ինչ իմ գործեալ էր։ Իսկ իբրեւ եկին առ նա
Սամարացիքն, աղաչէին զնա լինել առ նոսա. և
41 եղեւ անդ աւուրս երկուս։ Եւ եւս բազումք հա-
42 ւատացին ի նա վասն բանին նորա։ Եւ ասէին
ցկինն թէ Ոչ այսուհետեւ վասն քո խօսիցդ հա-
ւատամք, զի մեղքն իսկ լուաք ի դմանէ, և գի-
տեմք եթէ դա է ճշմարիտ փրկիչ *աշխարհաց։
43 Եւ յետ երկուց աւուրց ել անտի և գնաց ի
44 Գալիլեա։ Զի ինքն իսկ Յիսուս վկայեաց եթէ Մար-
45 գարէ յիւրում գաւառի պատիւ ոչ ունի։ Ա.ՀԼ
յորժամ եկն նա ի Գալիլեա, ընկալան զնա Գա-
լիլեացիքն. զի տեսեալ եւս էր զամենայն նշանս,
զոր արար Երուսաղէմ ի տօնին. քանզի և նոքա
46 եկեալ էին ի տօնն։ Եկն դարձեալ ի Կանայ Գա-
լիլեացւոց՝ ուր արար զջուրն գինի։ Եւ անդ էր
թագաւորազն մի, որոյ որդի նորա հիւանդ կայր ի

ի ցոյն՝ աշխարհի՝ Քրիստոս

47 Կափառնայում։ Նա իբրեւ լուաւ եթէ Յիսուս ե-
կեալ է ի Հրէաստանէ ի Գալիլեա, եկն առ նա
և աղաչէր զի իջցէ և բժշկեսցէ զորդի նորա, քան-
48 զի մերձ էր ի մեռանել։ Ասէ ցնա Յիսուս, Եթէ
ոչ նշանս ինչ և արուեստս տեսանէք՝ ոչ հաւա-
49 տայք։ Ասէ ցնա թագաւորազն, Տէր, էջ մինչչեւ
50 մեռանիլ իցէ մանուկն իմ։ Ասէ ցնա Յիսուս, Երթ,
որդին քո կենդանի է. և հաւատաց այրն բանին՝
51 զոր ասաց նմա Յիսուս, և գնաց։ Եւ մինչդեռ ի-
ջանէր, ընդ առաջ եղեն նմա ծառայքն նորա, ա-
ւետիս ետուն և ասեն թէ Մանուկն նորա կենդա-
52 նի է։ Հարցանէր ցնոսա վասն ժամուն՝ յորում
ապաքինեցաւ. և ասեն ցնա, Երեկ յութներորդ
53 ժամու եթող զնա ջերմն։ Գիտաց Հայրն նորա եթէ
յայնմ ժամու՝ յորում ասացն ցնա Յիսուս թէ
Որդին քո կենդանի է. և հաւատաց ինքն և ամե-
54 նայն տունն իւր։ Զայս դարձեալ երկրորդ նշան
արար Յիսուս՝ եկեալ ի Հրէաստանէ ի Գալիլեա։

Գ.Լ. Ե

1 Յետ այսորիկ ոմն էր Հրեից, և ել Յիսուս Յե-
2 րուսաղէմ։ Եւ էր Յերուսաղէմ ի Պրոբատիկէ *ա-
ւազանին, որ կոչէր Եբրայեցերէն Բեթհեզդա,
3 † հինգ սրահ։ Յորս անկեալ դնէր բազմութիւն
յոյժ հիւանդաց՝ կուրաց, կաղաց, գօսացելոց, որ
4 ակն ունէին ջրոյն յուզելոյ։ Եւ հրեշտակ Տեառն
իջանէր ըստ ժամանակի յաւազանն և յուզէր ըզ-
ջուրսն. և որ նախ ի շարժումն ջուրցն իջանէր,

ի ցոյն՝ աւազան, † ի ցոյն՝ որ ունի հինգ

5 բժշկէր՝ ոչ ունելով նշան հիւանդութեան՝ եւ անդ
էր այր մի, որոյ երեսունւ և ութ ամ էր ի հիւան-
6 դութեան իւրում։ Զնա իրրեւ տեսս Յիսուս զի
անկեալ դնէր, և գիտաց եթէ բազում ժամանակք
են այնուհետեւ, ասէ ցնա, Կամի՞ս ողջ լինել։
7 Պատասխանի ետ նմա հիւանդն, Տէր, ոչ զոք ու-
նիմ, թէ յորժամ ջուրքն յուզիցին՝ արկցէ զիս
յաւազանն. և մինչ ես դանդաղիմ, այլ որ քան
8 զիս յառաջագոյն իջանէ։ Ասէ ցնա Յիսուս, Արի
9 առ զմահիճս քո և գնա։ Եւ *ողջացաւ այրն, և
յարեաւ՝ առ զմահիճս իւր և շրջէր. և էր շաբաթ
10 յաւուրն յայնմիկ։ Ասեն Հրեայքն ցբժշկեալն, Շա-
բաթ է և ոչ է արժան քեզ առնուլ զմահիճս քո։
11 Պատասխանի ետ նոցա և ասէ, Որ բժշկեացն զիս,
12 նա ասաց ցիս, Առ զմահիճս քո և գնա։ Հարցին
ցնա և ասեն, Ո՞վ է այրն՝ որ ասաց ցքեզ, Առ
13 զմահիճս քո և շրջեաց։ Եւ բժշկեալն ոչ գիտէր
թէ ո՞վ իցէ. քանզի Յիսուս խոյս ետ վասն ամբո-
14 խին՝ ի տեղւոջէ անտի։ Ցետ այսորիկ գտանէ զնա
Յիսուս ի տաճարին, և ասէ ցնա, Ահաւադիկ ող-
ջացար, մի եւս մեղանչեր՝ զի մի չար եւս ինչ լի-
15 նիցի քեզ։ Գնաց այրն և պատմեաց Հրեից, եթէ
16 Յիսուս էր որ բժշկեացն զիս։ Եւ վասն այնորիկ
հալածէին զՅիսուս հրեայքն, զի զայն առնէր ի
17 շաբաթու։ Եւ Յիսուս պատասխանի ետ նոցա,
Հայր իմ մինչեւ ցայժմ գործէ և ես գործեմ։
18 Վասն այնորիկ առաւել խնդրէին Հրեայքն սպա-
նանել զնա, զի ոչ միայն լուծանէր զշաբաթս,

* Ի ցոյն՝ ողջացաւ առժամայն

այլ և Հայր իւր կոչէր զԱստուած, և հաւասար
առնէր զանձն Աստուծոյ։
19 Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնոսա, Ամէն
ամէն ասեմ ձեզ, ոչ կարէ Որդի *մարդոյ առնել
յանձնէ և ոչինչ, եթէ ոչ տեսանիցէ զՀայրն զի
առնէ. զի զոր նայն առնէ, զնոյն և Որդին նմին
20 նման գործէ։ Զի Հայր սիրէ զՈրդի, և զամենայն
ինչ ցուցանէ նմա՝ զոր ինքն առնէ. և մեծամեծս
եւս քան զսոյնս ցուցանէ նմա զգործս, զնդ որ
21 գուքդ զարմանայք։ Զի որպէս Հայր յարուցանէ
զմեռեալս և կենդանի առնէ, նոյնպէս և Որդի զորս
22 կամի՝ կենդանի առնէ։ Եւ ոչ եթէ Հայր դատի զոք,
23 այլ զամենայն դատաստան ետ Որդւոյ իւրոյ. Զի
ամենեքեան պատուեսցեն զՈրդի՝ որպէս պատուեն
զՀայր. որ ոչ պատուէ զՈրդին, ոչ պատուէ զՀայր
24 զառաքիչն նորա։ Ամէն ամէն ասեմ ձեզ, զի Որ
զբանն իմ լսէ, և հաւատայ այնմ որ առաքեացն
զիս, ընդունի զկեանսն յաւիտենականս. և ի դա-
տաստան ոչ մտանէ, այլ փոխեցաւ ի մահուանէ
25 ի կեանս։ Ամէն ամէն ասեմ ձեզ, զի գայ ժամա-
նակ և արդէն իսկ է, յորժամ մեռեալք լսիցեն
ձայնի Որդւոյն Աստուծոյ. և որք լսիցենն՝ կեցցեն։
26 Զի որպէս Հայր ունի կեանս յանձին իւրում, նոյն-
պէս եւս և Որդւոյ տուեալ կեանս յանձին իւրում.
27 Եւ իշխանութիւն ետ նմա դատաստան առնել, և
28 զի Որդի մարդոյ է։ Ընդ այն զի՞ զարմանայք, զի
եկեսցէ ժամանակ՝ յորում ամենեքին որ ի գերեզ-
29 մանս կայցեն, լուիցեն ձայնի նորա, Եւ եկեսցեն
արտաքս. որոց զբարիս գործեալ իցէ՝ ի յարու-

* Ի ցոյն Ա՛ի։

Թիւն կենաց. և որոց ղչար արարեալ՝ ի յարու-
30 թիւն դատաստանաց։ Ոչ կարեմ ես յանձնէ առ-
նել և ոչինչ. այլ որպէս լսեմ՝ դատեմ, և դա-
տաստանն իմ արդար է. զի ոչ խնդրեմ զկամս
31 իմ, այլ զկամն այնորիկ՝ որ առաքեացն զիս։ Եթէ
ես վկայեմ վասն իմ, վկայութիւնն իմ չէ ճըշ-
32 մարիտ։ Այլ է որ վկայէ վասն իմ. և *դուք
գիտէք՝ եթէ ճշմարիտ է վկայութիւնն զոր վկա-
33 յեաց վասն իմ։ Դուք առաքեցիք առ Յովհաննէս՝
34 և վկայեաց ճշմարտութեանն։ Այլ ես ոչ եթէ ի
մարդկանէ առնում վկայութիւն, այլ զայս ասեմ
35 զի դուք ապրեսջիք։ Նա էր ճրագն՝ որ լուսեալ էր
և ծագէր, և դուք կամեցարուք ցնծալ առ ժա-
36 մանակ մի ի լոյս նորա։ Այլ ես ունիմ վկայու-
թիւն մեծ եւս քան զՅովհաննու. զգործս զոր ետ
ցիս Հայր՝ զի կատարեցից զնոսա. նոքին իսկ գործքն
զոր գործեմ՝ վկայեն վասն իմ, եթէ Հայր առա-
37 քեաց զիս։ Եւ որ առաքեացն զիս Հայր՝ նա վկա-
յեաց վասն իմ. դուք ոչ ձայն նորա երբեք լսա-
38 րուք, և ոչ զտեսիլ նորա տեսէք։ Եւ ոչ զբան
նորա ունիք ի ձեզ բնակեալ. զի զոր նա առա-
39 քեաց՝ դուք նմա ոչ հաւատայք։ Քննեցէք զգիրս,
զի դուք համարիք նոքօք ունել զկեանն յաւիտե-
նական. և նոքին իսկ են՝ որ վկայեն վասն իմ,
40 †որովք համարիք ունել կեանս՝։ Եւ դուք ոչ կամիք
41 գալ առ իս զի կեանն ունիցիք։ Ես փառս ի
42 մարդկանէ ոչ առնում։ Այլ գիտեմ զձեզ թէ
43 զսէրն Աստուծոյ ոչ ունիք յանձինս։ Ես եկի յա-

* Ի Յոյն՝ ես գիտեմ † Ի Յոյն չէ։

նուն Հօր իմոյ, և ոչ ընդունիք զիս. եթէ այլ ոք
44 եկեսցէ յիւր անուն, զնա ընդ-դիմեալ։ Զի՞ըդ
դարձդ դուք հաւատալ, զի փառս ի միմեանց առ-
նուք, և զփառս զառ ի միոյն Աստուծոյ ոչ խըն-
45 դրէք։ Մի համարիք եթէ ես չարախօս լինիմ իմեմ
զձենջ առ Հօր. դոյ որ չարախօս կայ զձենջ՝ Մով-
46 սէս, յոր դուքն յուսացեալ էք։ Զի եթէ հաւա-
տայիք դուք Մովսիսի, հաւատայիք արդեօք և ինձ,
47 զի նա վասն իմ իսկ գրեաց։ Զի եթէ նորա գրոցն
ոչ հաւատայք, զի՞ըդ իմոյ բանիցս հաւատայցէք։

ԳԼ. Զ

1 Յետ այսորիկ գնաց Յիսուս յայնկոյս ծովուն
2 Գալիլեացւոց Տիբերեայ. Եւ զկետ երթայր նորա
ժողովուրդ բազում, զի տեսանէին զնշանսն՝ զոր
3 առնէր ի վերայ հիւանդաց։ Եւ ի լառն Յիսուս,
4 և անդ նստեր աշակերտօքն հանդերձ։ Եւ էր մերձ
5 զատիկ տօնն Հրէից։ Բարձ ի վեր զաչս իւր Յի-
սուս և տեսս, զի ժողովուրդ բազում գայր առ
նա, ասէ ցՓիլիպպոս, Ուստի գնեսցուք հաց զի
6 կերիցեն դոքա։ Զայս ասէր փորձելով զնա, այլ
7 ինքն գիտէր զինչ առնելոցն էր։ Պատասխանի ետ
նմա Փիլիպպոս, Երկերիւր դահեկանի հաց չէ դո-
ցա բաւական, թէպէտ և իւրաքանչիւր որ սակաւ
8 ինչ առնուցու։ Ասէ ցնա մի յաշակերտացն նորա՝
9 Անդրէաս եղբայր Սիմոնի Պետրի, Է աստ պատա-
նեակ մի, որ ունի հինդ նկանակ գարեղէն և եր-
կուս ձկունս, այլ այն զի՞նչ է առ այդչափ մարդ-
10 դիկ։ Ասէ Յիսուս, Բազմեցուցէք զմարդիկդ. և էր
խոտ յոյժ ի տեղւոյն, և բազմեցան մարդիկն

11 Թաւով իբրեւ հինգ հազար ։ Եւ առ զհացն Յի-
սուս . և գոհացաւ և բաշխեաց *բազմականացն ։
12 նոյնպէս և ի ձկանցն որչափ ա կա՜՜՜

Հացն կենաց . որ գայ առ իս՝ ոչ քաղցիցէ , և որ
36 Հաւատայ յիս՝ ոչ երբէք ծարաւեսցի : Այլ ասացի
37 ձեզ թէ տեսէք զիս և ոչ հաւատայք : Զամենայն
զոր տայ ինձ Հայր , առ իս եկեսցէ . և որ գայ առ
38 իս՝ ոչ հանից արտաքս : Զի իջի ես յերկնից՝ ոչ զի
զկամս իմ արարից , այլ զկամս այնորիկ՝ որ առա-
39 քեացն զիս : Այս են կամք Հօր իմոյ՝ որ առաքեացն
զիս , զի զամենայն զոր ետ ցիս Հայր՝ ոչ կորուսից ի
նմանէ , այլ յարուցից զնա յաւուրն յետնում :
40 Այս են կամք Հօր իմոյ , զի ամենայն որ տեսանիցէ
զՈրդի և հաւատայցէ ի նա , ընկալցի զկեանն
յաւիտենականս , և ես յարուցից զնա յաւուրն
յետնում :
41 Տրտնջէին զնմանէ Հրեայքն , զի ասաց թէ Ես եմ
42 Հացն իջեալ յերկնից , Եւ ասէին , ո՞չ սա է Ի-
սուս որդին Յովսեփու , զորոյ մեք գիտեմք զՀայրն
և զմայրն . իսկ արդ զիա՞րդ ասէ թէ Ես յերկնից
43 իջի : Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնոսա , Մի
44 քրթմնջէք ընդ միմեանս : Ոչ ոք կարէ գալ առ իս ,
եթէ ոչ Հայրն որ զիս առաքեաց՝ ձգեսցէ զնա . և
45 ես յարուցից զնա յաւուրն յետնում : Գրեալ է
ի մարգարէս , Եւ եղիցին ամենեքեան ուսեալք
Աստուծոյ . ամենայն որ լսէ ի Հօրէ և ուսանի ,
46 գայ առ իս : Իբրեւ ոչ եթէ զՀայր ուրուք տեսեալ
իցէ , եթէ ոչ որ էն Աստուծոյ՝ նա ետես զՀայր :
47 Ամէն ամէն ասեմ ձեզ զի Որ հաւատայ յիս՝ ըն-
48 դունի զկեանն յաւիտենականս : Ես եմ Հացն կե-
49 նաց : Հարքն ձեր կերան զմանանայն յանապատին
50 և մեռան : Այս է Հացն որ յերկնից իջեալ է ,
51 զի որ ուտիցէ ոք ի սմանէ՝ մի՛ մեռանիցի , Ես եմ

52 Հացն կենդանի , որ յերկնից իջեալ : Եթէ ոք ու-
տիցէ ի Հացէ յայմանէ՝ կեցցէ ի յաւիտեան . և
Հացն զոր ես տաց՝ մարմին իմ է , զոր ես տաց
53 վասն կենաց աշխարհի : Մարտնչէին ընդ միմեանս
Հրեայքն և ասէին , Զիա՞րդ կարէ սա տալ մեզ
54 զմարմինն իւր յուտել : Ասէ ցնոսա Յիսուս , Ամէն
ամէն ասեմ ձեզ , եթէ ոչ կերիջիք զմարմին Որդւոյ
մարդոյ և արբջիք զարիւնն նորա , ոչ ունիք կեանս յան-
55 ձինս : Որ ուտէ զմարմին իմ և ըմպէ զարիւն իմ , ունի
զկեանն յաւիտենականս , և ես յարուցից զնա յա-
56 ւուրն յետնում : Զի մարմին իմ ճշմարիտ կերակուր
57 է , և արիւն իմ ճշմարիտ ըմպելի է : Որ ուտէ զմար-
մին իմ և ըմպէ զարիւն իմ , յիս բնակեսցէ՝ և ես
58 ի նմա : Որպէս առաքեաց զիս կենդանին Հայր , և
ես կենդանի եմ վասն Հօր . և որ ուտէն զիս՝ և նա
59 կեցցէ վասն իմ : Այս է Հացն որ յերկնից իջեալ .
ոչ որպէս կերան Հարքն ձեր զմանանայն և մեռան .
որ ուտէ զՀացս զայս՝ կեցցէ յաւիտեան :
60 Զայս ասաց ի ժողովրդեանն յուսուցանելն ի Կա-
61 փառնայում : Եւ բազումք յաշակերտացն իւրեւ
լսեան՝ ասեն , խիստ է բանդ այդ , ո՞ կարէ լսել դմա :
62 Իբրեւ գիտաց Յիսուս յանձն իւր եթէ տրտնջեն
վասն այնորիկ աշակերտքն նորա , ասէ ցնոսա , Այդ
63 գայթակղեցուցանէ՞ զձեզ : Իսկ արդ , եթէ տեսա-
նիցէք զՈրդի մարդոյ , զի ելանիցէ ուր էր զառա-
64 ջինն : Հոգին է կենդանարար , մարմին ինչ ոչ օգ-
նէ . զբանն զոր ես խօսեցայ ընդ ձեզ՝ Հոգի է և
65 կեանք : Այլ են ոմանք ի ձէնջ՝ որ ոչ հաւատան .
քանզի գիտէր Յիսուս ի սկզբանէ՝ ով են այնորիկ
որ ոչն հաւատան , և ով է այն որ մատնելոցն է

66 ղնա ։ Եւ ասէր , վասն այնորիկ ասացի ձեզ թէ
ոչ ոք կարէ գալ առ իս, եթէ ոչ իցէ տուեալ նմա
67 ի Հօրէ իմմէ ։ Յայսմանէ բազումք յաշակերտացն
նորա չոգան յետս , և ոչ եւս շրջէին ընդ նմա ։
68 Ասէ Յիսուս ցերկոտասան աշակերտսն , Միթէ և
69 դո՞ւք կամիք երթալ ։ Պատասխանի ետ նմա Սիմոն
Պետրոս , Տէր , առ ո՞վ երթիցուք , բանս կենաց
70 յաւիտենականաց ունիս ։ Եւ մեք հաւատացաք և
ծանեաք եթէ դու ես Քրիստոս Որդի Աստուծոյ ։
71 Պատասխանի ետ նոցա Յիսուս , Ո՞չ ես զձեզ ընտ-
րեցի զերկոտասանսդ , և միդ ի ձէնջ սատանայ է ։
72 Եւ ասէր զՍիմոնեան Յուդայէ Սկարիովտացւոյ ,
զի նա իսկ մատնելոց էր զնա , և մի էր յերկոտա-
սանից ։

Գ Լ · Է

1 Եւ յետ այսորիկ շրջէր Յիսուս ի Գալիլեա , քանզի ոչ կամէր ի Հրեաստան շրջել , զի խնդրէին զնա
2 Հրեայքն սպանանել ։ Եւ էր մերձ տօնն Հրեից տա-
3 ղաւարահարաց ։ Ասեն ցնա եղբարքն նորա , Գնա
աստի և երթ ի Հրեաստան , զի և աշակերտքն քո
4 տեսցեն զգործսդ քո զոր գործես ։ Զի ոչ ոք է որ
ի ծածուկ ինչ գործէ՝ և խնդրէ ինքն համարձակ
լինել . եթէ զայդ գործես , յայտնեա զանձն քո
5 աշխարհի ։ Քանզի և եղբարքն իսկ չէին հաւատա-
6 ցեալ ի նա ։ Ասէ ցնոսա Յիսուս , ժամանակ իմ չէ
է հասեալ , բայց ձեր ժամանակ յամենայն ժամ
7 պատրաստ է ։ Ոչ կարէ աշխարհս ատել զձեզ , բայց
զիս ատէ , զի ես վկայեմ վասն նորա եթէ գործքն

8 իւր չարութեան են ։ Դուք երթայք յտօնն յայն ,
ես ոչ երթամ ի տօնն յայն , զի իմ ժամանակ
9 չէ է լցեալ ։ Զայս իրրեւ ասաց՝ ինքն մնաց անդ-
10 դէն ի Գալիլեա ։ Իրրեւ ելին եղբարքն նորա , ա-
պա և ինքն ել ի տօնն , ոչ յայտնի այլ իրրեւ
11 ի ծածուկ ։ Եւ Հրեայքն խնդրէին զնա ի տօնի
12 անդ և ասէին , Ո՞ր իցէ նա ։ Եւ քրթմնջիւն էր
զնմանէ ի ժողովրդեան . կէսքն ասէին թէ Բարւոք
է . այլքն ասէին , Ոչ , այլ մոլորեցուցանէ զժողո-
13 վուրդն ։ Եւ ոչ ոք համարձակ խօսէր զնմանէ վասն
երկիւղին Հրէից ։
14 Իրրեւ տօնն ընդմիջեցաւ , էլ Յիսուս ի տաճարն
15 և ուսուցանէր ։ Զարմանային Հրեայքն և ասէին ,
Զիա՞րդ զդիրս գիտէ սա , զի ուսեալ բնաւ չէր ։
16 Պատասխանի ետ նոցա Յիսուս և ասէ , Իմ վար-
դապետութիւնս չէ իմ , այլ այնորիկ որ առաքեացն
17 զիս ։ Եթէ ոք կամի զկամս նորա առնել՝ գիտասցէ
վասն վարդապետութեանս , Աստուծո՞յ իցէ սր-
18 դեօք եթէ ես ինչ յանձնէ խօսիմ ։ Որ յանձնէ
իւրմէ խօսի՝ փառս անձին իւրում խնդրէ , իսկ որ
խնդրէ զփառս այնորիկ որ առաքեացն զնա՝ նա ճըշ-
19 մարիտ է , և անիրաւութիւն ոչ գոյ ի նմա ։ Ո՞չ
Մովսէս ետ ձեզ զօրէնս , և ոչ ոք ի ձէնջ առնէ զօ-
20 րէնսն ։ Զի՞ խնդրէք զիս սպանանել . պատասխանի
ետ ժողովուրդն և ասէ , Դեւ գոյ ի քեզ , ո՞վ խնդրէ
21 զքեզ սպանանել ։ Պատասխանի ետ նոցա Յիսուս և
ասէ , Գործ մի գործեցի , և ամենեքեան զարմացեալ
22 էք ։ Վասն այնորիկ Մովսէս ետ ձեզ թլփատութիւն ,
զի ոչ եթէ ի Մովսիսէ էր , այլ ի հարց անտի . և
23 ի շաբաթու թլփատէք զմարդ ։ Իսկ արդ եթէ

ԹլփատուԹիւն առնու մարդ ի շաբաԹու, զի մի՛
օրէնքն Մովսիսի լուծցին, ընդ իս ցասուցանե՞Ք էք
24 զի ողջոյն իսկ մարդ բժշկեցի ի շաբաԹու։ Մի ըստ
աչս դատէք, այլ ուղիղ դատաստան արարէք։
25 Ասէին ոմանք Երուսաղէմացւոց անտի, Ո՞չ նա
26 է սա՝ զոր խնդրէինն սպանանել. Եւ աւասիկ յայտ-
նապէս խօսի, և չասեն ինչ ընդ դմա. դուցէ ար-
դեօք և իշխանքն դիտացին՝ԹԷ սա իցէ *Քրիստոս։
27 Այլ զսա գիտեմք ուստի է, իսկ Քրիստոս յոր-
28 ժամ գայցէ, ոչ ոք գիտէ ուստի է։ Աղաղակեաց
Յիսուս ի տաճարին, ուսուցանէր և ասէր, Եւ զիս
գիտէք և ուստի եմ գիտէք. և յանձնէ իմմէ ոչ
եմ եկեալ, այլ է ճշմարիտ որ առաքեացն զիս՝
29 զոր դուքն ոչ գիտէք։ Ես գիտեմ զնա, զի ի նո-
30 մանէ իսկ եմ, և նա առաքեաց զիս։ Խնդրէին
զնա ունել՝ †և էլ ի ձեռաց նոցա։՚՚ և ոչ ոք արկ
31 ի նա ձեռն. զի չէր էր հասեալ ժամ նորա. Եւ
բազումք ի ժողովրդենէն հաւատացին ի նա, և
ասէին, Քրիստոս յորժամ գայցէ՝ միթէ աւելի՞
32 քինչ նշանս առնիցէ՝ քան զոր սոյս առնէ։ Եւ լուան
փարիսեցիքն զորտունջ ժողովրդեանն զնմանէ. և
առաքեցին քահանայապետքն և փարիսեցիք սպա-
33 սաւորս զի կալցեն զնա։ Ասէ Յիսուս, Փոքր մի եւս
ժամանակ ընդ ձեզ եմ, և երթամ՝ առ այն որ
34 առաքեացն զիս։ Խնդրիցէք զիս և ոչ գտանիցէք,
35 և ուր եմն երթամ, դուք ոչ կարէք գալ։ Ասեն
Հրեայքն ընդ միմեանս, Իսկ յո՞ երթայցէ դա, զի
մեք ոչ գտանիցեմք զդա. միթէ ի սփիւռս հեթա-

* Ի ՑԱՅՆ՝ ճշմարիտ Քրիստոս։ † Ի ՑԱՅՆ ԷՒԽ։

Նոսա՞ց երթայցէ և ուսուցանիցէ զՀեթանոսս։
36 Զի՞նչ է բանն այն զոր ասաց, Խնդրիցէք զիս և
ոչ գտանիցէք. և ուր եմն երթամ՝՚՚ դուք ոչ կա-
րէք գալ։՚
37 Ի վերջնումն աւուրն մեծի տաճին կայր Յիսուս,
աղաղակեր և ասէր, Եթէ ոք ծարաւի իցէ՝ եկեա
38 ցէ առ իս և արբցէ։ Որ հաւատայ յիս՝ որպէս և
ասէն գիրք, Գետք յորովայնէ նորա բղխեսցեն ջուց
39 կենդանութեան։ Զայս ասէր վասն Հոգւոյն՝ զոր
ընդունելոց էին որ հաւատային ի նա. զի չէր էր
40 Հոգի, քանզի Յիսուս չէր էր փառաւորեալ։ Ոմանք
ի ժողովրդենէն իբրեւ լսէին զբանս զայս, ասէին
41 Սա է ճշմարիտ մարգարէն։ Այլքն ասէին, Սա է
Քրիստոս. իսկ կէսքն ասէին, Միթէ ի Գալիլէ՞
42 գալոց իցէ Քրիստոս։ Ո՞չ գիրքն ասեն եթէ ի զա-
ւակէ Դաւթի և ի Բեթղէհեմ գեղջէ՝ ուր Դաւիթն
43 էր, գալոց է Քրիստոս։ Եւ եղեւ հերձուած ի ժո-
44 ղովրդեանն վասն նորա։ Եւ ոմանք ի նոցանէ
կամեցան ունել զնա, այլ ոչ ոք մխեաց ի նա ձեռս։
45 Եւ եկին անդրէն սպասաւորքն առ քահանայա-
պետսն և փարիսեցիս, և ասեն ցոքա նոսա, Ընդ-
46 է՞ր ոչ ածէք զնա սոսք։ Պատասխանի ետուն
սպասաւորքն և ասեն, Ոչ երբէք այնպէս խօսեցաւ
47 մարդ՝ որպէս այրն այն։ Պատասխանի ետուն փա-
րիսեցիքն և ասեն, Միթէ և դո՞ւք մոլորեցարուք,
48 Միթէ ոք ի հեշխանացն հաւատա՞ց ի նա՝ կամ ի
49 փարիսեցւոց. Այլ այն խաժամուժ ամբոխ՝ որ ոչ
50 գիտէ զօրէնս, և նզովեալ են։ Ասէ Նիկոդեմոս
ցնոսա՝ որ եկեալն էր առ նա նախ գիշերի յառաջագոյն,
51 և մի էր ի նոցանէ, Միթէ օրէնքն մեր դատի՞ն

զմարգ, երթէ ոչ լսեն ինչ նախ ի նմանէ, կամ գի-
52 տեն զինչ գործէ : Պատասխանի ետուն նմա և ա-
սեն , Միթէ և դու եւս ի Գալիլէէ՞ եցեր . քննեա
53 և տես , զի մարգարէ ի Գալիլէէ ոչ յառնէ : Եւ
գնացին իւրաքանչիւր ոք ի տեղի իւր :

ԳԼ· Ը

1 Իսկ Յիսուս գնաց ի լեառն Ձիթենեաց : (2) Եւ
ընդ առաւօտն դարձեալ եկն ի տաճարն , և ժո-
ղով առ նա ամենայն ժողովուրդն , և նստեալ ուսու-
3 ցանէր զնոսա : Ածին առ նա դպիրքն *և քահա-
նայապետքն՝՝ և փարիսեցիք կին մի ըմբռնեալ ի
4 շնութեան . և կացուցեալ զնա առաջի, Ասեն ցնա,
Վարդապետ , կինս այս ըմբռնեալ՝ ինքն յայտնա-
5 պէս շնացեալ է : Եւ յօրէնս Մովսէս մեզ պատուի-
րեաց զայսպիսիս քարկոծել . արդ դու զինչ ասես
6 վասն դորա : Զայս ասէին փորձելով զնա , զի ու-
նիցին ամբաստանութիւն զնմանէ . իսկ Յիսուս ի
7 խոնարհ նայելով գրէր մատամբն յերկիր : Իսկ իբ-
րեւ ստիպեցին հարցանելով ցնա , հայեցեալ ի
վեր՝ ասէ ցնոսա , Անմեղն ի ձէնջ նախ նա ընկէս-
8 ցէ քար ի վերայ դորա : Եւ դարձեալ ի խոնարհ
9 նայելով գրէր յերկիր : Եւ լուեալ եղանէին մի ըստ
միոջէ՝ սկսեալ յառաջնոցն մինչեւ ի վերջինն . և
մնաց միայն Յիսուս , և կինն կայր առաջի նորա :
10 Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնա , Կին դու ,
11 ո՞ւր են , ոչ ոք դատեաց զքեզ դատապարտեաց : Եւ ասէ ,

* ի Յունն չէ :

Ոչ , Տէր . և ասէ Յիսուս , Եւ ոչ ես դատապար-
տեմ զքեզ , երթ՝ յայսմ հետէ մի մեղանչեր :
12 Դարձեալ խօսեցաւ ընդ նոսա Յիսուս և ասէ ,
Ես եմ լոյս աշխարհի . որ ինձ զկնի իմ , ընդ խա-
13 ւար մի գնասցէ , այլ ընկալցի զլոյսն կենաց : Ասեն
ցնա փարիսեցիքն , դու վասն անձին քո վկայես ,
14 և վկայութիւն քո չէ ճշմարիտ : Պատասխանի ետ
Յիսուս և ասէ ցնոսա , Թէպէտ և ես վկայեմ վասն
անձին իմոյ՝ վկայութիւն իմ ճշմարիտ է . զի գի-
տեմ ուստի եկի և յո երթամ . բայց դուք ոչ գի-
15 տէք ուստի գամ կամ յո երթամ : Դուք ըստ
16 մարմնոյ դատիք , ես ոչ դատիմ և ոչ զոք . Թէ-
պէտ և դատիմ եւս զոք , դատաստանն իմ ճշմա-
րիտ է . զի չեմ միայն , այլ ես և որ առաքեացն
17 զիս Հայր : Եւ յօրէնսն իսկ ձեր գրեալ է Թէ եր-
18 կուց մարդոյ վկայութիւն ճշմարիտ է : Ես եմ որ
վկայեմ վասն իմ , և վկայէ վասն իմ որ առաքեացն
19 զիս Հայր : Ասէին ցնա , Ո՞ւր է Հայր քո . պա-
տասխանի ետ Յիսուս *և ասէ ցնոսա՝՝ , Ոչ զիս գի-
տէք և ոչ զՀայրն իմ . եթէ զիս գիտէիք , և զՀայրն
20 իմ Թերեւս գիտէիք : Զայս բանս †խօսեցաւ
ի տան գանձին՝ յորժամ ուսուցանէր ի տաճարի
անդ . և ոչ ոք կալաւ զնա , զի չէր եւս հասեալ
էր ժամ նորա :
21 Ասէ դարձեալ ցնոսա Յիսուս , Ես երթամ , և
խնդրիցէք զիս , և ի մեղս ձեր մեռանիցիք . զի ուր
22 ես երթամ՝ , դուք ոչ կարէք գալ : Ասէին Հրէ-
րեայքն , Միթէ զիւրովի՞ն երթայցէ , զի ասէ Թէ

* ի Յունն չէ : † ի Յունն՝ խօսեցաւ Յիսուս

23 Ուր եան երթամ՝ դուք ոչ կարէք գալ ։ Եւ ասէ
ցնոսա , Դուք ի ներքուստ աստի էք , և ես ի վե-
րուստ անտի եմ . դուք յաշխարհէ աստի էք, ես
24 չեմ յայսմ աշխարհէ ։ Բայց ասացի ձեզ թէ ի
մեղս ձեր մեռանիցիք . զի թէ ոչ հաւատայցէք թէ
25 ես եմ , մեռանիցիք ի մեղս ձեր ։ Ասէն ցնա , Դու
ո՞վ ես . ասէ ցնոսա Յիսուս , *Նախ զի և՛՛ խօսիմս
26 իսկ ընդ ձեզ ։ Բազում ինչ ունիմ վասն ձեր խօ-
սել և դատել . այլ որ առաքեացն զիս՝ ճշմարիտ
է . և ես զոր լուայ ի նմանէ , զայն խօսիմ յաշ-
27 խարհի ։ Եւ ոչ գիտացին թէ զՀօրէ ասէր ցնոսա ։
28 Ասէ ցնոսա Յիսուս , Յորժամ բարձրացուցանիցէք
զՈրդի մարդոյ՝ յայնժամ գիտասջիք թէ ես եմ .
և յանձնէ իմմէ ոչ ինչ առնեմ , այլ որպէս ու-
29 սոյց զիս Հայրն իմ , զայն խօսիմ ։ Եւ որ առա-
քեացն զիս՝ ընդ իս է . ոչ եթող զիս միայն , զի
30 ես զՀաճոյս նորա առնեմ համապատ ։ Իբրեւ զայս
խօսեցաւ՝ բազումք հաւատացին ի նա ։
31 Եւ ասէր Յիսուս առ Հրեայսն հաւատացեալս ,
Եթէ դուք կացջիք ի բանին իմում , ճշմարիտ ա-
32 շակերտք իմ էք . Եւ ծանիջիք զճշմարտութիւնն ,
33 և ճշմարտութիւնն ազատեսցէ զձեզ ։ Պատասխա-
նի ետուն նմա և ասեն , Զաւակ Աբրահամու եմք ,
և ոչ ումիք երբեք ծառայեցաք . զիա՞րդ ասես Թէ
34 Ազատք լինիջիք ։ Պատասխանի ետ նոցա Յիսուս ,
Ամէն ամէն ասեմ ձեզ Եթէ Ամենայն որ առնէ
35 զմեղս , ծառայ է մեղաց ։ Եւ ծառայն ոչ յաւի-
տեան կայ ի տան , իսկ որդին յաւիտեան կայ ։

* Ի Յոյն՝ Զոր ինչ ի սկզբանէ

36 Իսկ արդ Եթէ Որդին զձեզ ազատեցուսցէ , ճշմա-
37 րիտ ազատք լինիջիք ։ Գիտեմ զի զաւակ Աբրա-
համու էք , այլ խնդրէք սպանանանել զիս , զի
38 բանին իմ չէիք տեղի ի ձեզ ։ Ես զոր տեսի առ
Հօր իմում՝ խօսիմ , և դուք զոր լուարուք ի հօ-
39 րէն ձերմէ՝ առնէք ։ Պատասխանի ետուն նմա և
ասեն , Հայր մեր Աբրահամ է . ասէ ցնոսա Յի-
սուս , Եթէ որդիք Աբրահամու էիք՝ զգործսն Աբ-
40 րահամու գործէիք ։ Այլ այժմիկ խնդրէք սպանա-
նել զիս , զայր մի՝ որ ձեզ զճշմարտութիւն խօ-
սեցայ՝ զոր լուայ ի Հօրէ իմմէ . զայդ Աբրահամ
41 ոչ արար ։ Դուք առնէք զգործս հօրն ձերոյ . ա-
սեն ցնա , Մեք ի պոռնկութենէ չեմք ծնեալ . մի
42 է Հայր մեր Աստուած ։ Ասէ ցնոսա Յիսուս , Եթէ
Աստուած էր Հայր ձեր , սիրէիք արդեօք զիս . զի
ես յԱստուծոյ ելի և եկի , և ոչ եթէ յանձնէ ինչ
43 եկի , այլ նա առաքեաց զիս ։ Ընդէ՞ր զխօսս իմ
ոչ գիտէք դուք . վասն զի ոչ կարէք լսել զբանն
44 իմ ։ Դուք ի Հօրէ ի Սատանայէ էք , և զցան-
կութիւնս Հօրն ձերոյ կամիք առնել . զի նա մար-
դասպան էր ի սկզբանէ , և ի ճշմարտութեան ոչ
եկաց , զի ոչ դայ ճշմարտութիւն ի նմա . յորժամ
խօսիցի սուտ , յիւրոյ անտի խօսի , զի սուտ է՝ և
45 Հայր նորա ։ Իսկ ես զի ճշմարտութիւն խօսիմ , ոչ
46 հաւատայք ինձ ։ Ո՞ ի ձէնջ յանդիմանէ զիս վա-
սըն մեղաց . եթէ ճշմարիտն ասեմ ձեզ՝ ընդէ՞ր
47 ոչ հաւատայք ինձ ։ Որ էն յԱստուծոյ՝ զբանս
Աստուծոյ լսէ . և դուք վասն այնորիկ ոչ լսէք , զի
48 չէք յԱստուծոյ ։ Պատասխանի ետուն Հրեայքն և
ասեն ցնա , Ո՞չ բարւոք ասեմք մեք եթէ Սամա-

49 բացի ես դու, և դեւ դուս ի քեզ։ Պատասխանի
եւ Յիսուս և ասէ, Յիս դեւ ոչ դուս, այլ պատուեմ
59 զՀայր իմ, և դուք անարգէք զիս։ Ես ոչ խընդ-
51 դրեմ զփառս իմ, է որ խնդրէն և դատի։ Ամէն
ամէն ասեմ ձեզ, Եթէ ոք զբանն իմ պահեսցէ՝
52 զմահ մի տեսցէ ի յաւիտեան։ Ասեն ցնա Հրեայք-
ն, Արդ գիտացաք թէ դեւ դուս ի քեզ. Աբրահամ
մեռաւ՝ և մարգարէքն, և դու ասես, Եթէ ոք ըզ-
բանն իմ պահեսցէ, մի ճաշակեսցէ զմահ ի յա-
53 ւիտեան։ Միթէ դու մե՞ծ ինչ ոք իցես քան զՀայր
մեր Աբրահամ, որ մեռաւ, և մարգարէքն մեռան.
54 արդ դու զո՞ առնես զքեզ։ Պատասխանի Յիսուս,
Եթէ ես փառաւորեմ զանձն իմ, փառք
իմ ոչինչ են. է Հայր որ փառաւորէ զիս, զորմէ
55 դուք ասէք թէ Աստուած մեր է. Եւ ոչ ճանա-
չէք զնա, բայց ես գիտեմ զնա. և թէ ասեմ թէ
ոչ գիտեմ զնա, ձեզ նման սուտ լինիմ. այլ գի-
56 տեմ զնա և զբան նորա պահեմ։ Աբրահամ Հայր
ձեր ցանկացաւ տեսանել զօր իմ, եւտես և ուրախ
57 եղեւ։ Ասեն ցնա Հրեայքն, Յիսուն ամ չէւ եւս
58 է քո, և զԱբրահամ տեսե՞ր։ Ասէ ցնոսա Յիսուս,
Ամէն ամէն ասեմ ձեզ, Յառաջ քան զլինելն
59 Աբրահամու եմ ես։ Վէմս առին զի արկցեն ի
վերայ նորա, և Յիսուս խոյս ետ և ել դնաց ի
տաճարէ անտի։

Գլ. Թ

1 Եւ մինչդեռ անցանէր՝ ետես այր մի կոյր ի ծնէ.
2 Եւ հարցին ցնա աշակերտքն նորա և ասեն, Ռաբ-

բի, ո՞վր վնաս է, սորա՞ թէ հօր և մօր իւրոյ,
3 զի կոյր ծնեալ։ Պատասխանի Յիսուս, Ոչ դորա
վնաս է, և ոչ հօր և մօր իւրոյ. այլ զի յայտնի
4 լինիցին գործքն Աստուծոյ ի դմա։ Եւ ինձ պարտ
է գործել զգործս այնորիկ որ առաքեացն զիս՝
մինչ աւուր կայ. գայ գիշեր՝ յորժամ ոչ ոք կա-
5 րէ գործել։ Մինչդեռ յաշխարհի եմ, լոյս եմ աշ-
6 խարհի։ Զայս իրբեւ ասաց, եթուքն ի գետին և
արար կաւ ի թքոյն, և ծեփեաց զկաւն ի վերայ
7 աչաց կուրին. Եւ ասէ ցնա, Երթ՝ լուա յաւա-
զանին Սելովմայ, որ թարգմանի Առաքեալ. էս-
8 գաւ լուացաւ, եկն և տեսանէր։ Իսկ դրացիքն՝
և որոց տեսեալն էր զնա յառաջագոյն թէ մուրա-
ցիկ էր, ասէին, Ո՞չ սա էր որ նստէրն և մուրա-
9 նայր. կէսքն ասէին, Նա է։ Այլքն ասէին, Ոչ,
10 այլ նման է նմա. և ինքն ասէր թէ Ես եմ։ Ասեն
11 ցնա, Իսկ զիա՞րդ բացան աչք քո։ Նա ետ պա-
տասխանի, Այր մի որում Յիսուն ասեն, կաւ
արար և ծեփեաց զաչս իմ, և ասէ ցիս, Երթ ի
Սելովամ և լուա. Չոգայ՝ լուացայ և տեսանեմ։
12 Ասեն ցնա, Ո՞ւր է նա. ասէ ցնոսա, Ոչ գիտեմ։
13 Ածին առ փարիսեցիսն զնա, որ երբեմն կոյր էր։
14 Եւ էր շաբաթ՝ յորժամ զկաւն արար Յիսուս, և
15 երաց զաչս կուրին։ Դարձեալ հարցանէին զնա
փարիսեցիքն թէ զիա՞րդ տեսանես. և նա ասէ
ցնոսա, Կաւ եդ ի վերայ աչաց իմոց, և լուացայ
16 և տեսանեմ։ Ասեն ոմանք ի փարիսեցւոցն, Ոչ է
այրն այն յԱստուծոյ, զի զշաբաթն ոչ պահէ.
կէսքն ասէին, Իսկ զիա՞րդ կարէ մարդ մեղաւոր
այսպիսի նշանս առնել. և էին հերձուածք ի մէջ

17 Նոցա՝ Ասեն դարձեալ ցկոյրն, Դու զի՞ ասես վասն
նորա՝ զի երաց զաչս քո. և նա ասէր թէ Մար-
18 գարէ է։ Եւ ոչ հաւատային Հրեայքն զնմանէ՝ թէ
կոյր եր և բացաւ, մինչեւ կոչեցին զծնողս բացե-
19 լոյն. Հարցին ցնոսա և ասեն, Սա՞ է որդին ձեր,
զորմէ դուք ասէիք եթէ կոյր ծնաւ, արդ զիա՞րդ
20 տեսանէ։ Պատասխանի հաւուն նոցա ծնողքն նորա
և ասեն, Գիտեմք զի սա է որդին մեր, և զի կոյր
21 ծնաւ. Բայց զիա՞րդ այժմ տեսանէ՝ ոչ գիտեմք.
կամ թէ ո՛ երաց զաչս դորա՝ մեք ոչ գիտեմք. ցդա
իսկ հարցէք, ինքնին ի չափ հասակաւ է, ինքն իսկ
22 խօսեսցի վասն իւր։ Զայս ասացին ծնողքն նորա,
զի երկնչէին ի Հրէից. քանզի ուխտ եդեալ էր
Հրէից, եթէ ոք խոստովանեսցի զնա Քրիստոս՝ ի
23 բաց կացցէ ի ժողովրդենէն։ Վասն այնորիկ ասա-
ցին ծնողքն նորա թէ ինքնին ի չափ հասակաւ է,
24 ցնա իսկ հարցէք։ Դարձեալ կրկին անգամ կոչե-
ցին զայրն՝ որ կոյրն էր, և ասեն ցնա, Տուր փառս
Աստուածոյ. մեք գիտեմք զի այրն այն մեղաւոր է։
25 Եւ նա ասէ, Թէ մեղաւոր իցէ՝ ես ոչ գիտեմ.
բայց զայս գիտեմ, զի կոյր էի և արդ տեսանեմ։
26 Դարձեալ ասեն ցնա, Զի՞նչ արար քեզ, զիա՞րդ
27 երաց զաչս քո։ Պատասխանի ետ նոցա, Ասացի
ասացի ձեզ և ոչ լուարուք. զի՞ կամիք միւսանգամ լսել. միթէ և դո՞ւք կամիք աշակերտել նմա։
28 Նոքա հայհոյեին զնա և ասէին, Դու լինիր նորա
29 աշակերտ, մեք Մովսիսի աշակերտք եմք։ Մեք գի-
տեմք զի ընդ Մովսիսի խօսեցաւ Աստուած, զսա
30 ոչ գիտեմք ուստի իցէ։ Պատասխանի ետ այրն և
ասէ ցնոսա, Այդ իսկ են սքանչելիք, զի դուք

31 ոչ գիտէք ուստի իցէ, և զիմ զաչս երաց։ Գի-
տեմք զի Աստուած մեղաւորաց ոչ լսէ, բայց եթէ
աստուածապաշտ ոք իցէ և զկամս նորա առնիցէ,
32 Նմա լսէ։ Ի յաւիտենից ոք ոչ լուաւ եթէ երաց
33 ոք զաչս կուրի՝ ի ծնէ կոյր ծնելոյ։ Եթէ ոչ Աս-
34 տուածոյ էր այրն այն՝ ոչ կարէր առնել ինչ։ Պա-
տասխանի հաւուն և ասեն ցնա, Ի մեղս իսկ ծնեալ
ես ամենեւին, և դու վարդապե՞տ լինիս մեր. և
35 հանին զնա արտաքս։ Լուաւ Յիսուս եթէ հանին
զնա արտաքս, և իբրեւ եգիտ զնա՝ ասէ ցնա, Դու
36 հաւատա՞ս Յորդւ Աստուծոյ։ Նա պատասխանի
ետ և ասէ, Տէր, ո՞վ է զի հաւատացից ի նա։
37 Ասէ ցնա Յիսուս, Եւ տեսեր զնա, և որ խօսիդ ընդ
38 քեզ՝ նա է։ Եւ նա ասէ, Հաւատամ, Տէր, և
39 երկիր եպագ նմա։ Եւ ասէ Յիսուս, Ի դատաս-
տան եկի յաշխարհս յայս, զի որ ոչն տեսանեն՝
40 տեսցեն, և որք տեսանեն՝ կուրասցին։ Լուան
ոմանք ի փարիսեցւոցն՝ որք ընդ նմա էին, և ա-
41 սեն ցնա, Միթէ և մեք կո՞յրք իցեմք։ Ասէ ցնոսա
Յիսուս, Եթէ կոյրք էիք՝ ոչ էր ձեր մեղ. բայց
արդ ասէք եթէ Տեսանեմք, և մեղքն ձեր ի ձեզ
հաստատեալ են։

ԳԼ. Ժ

1 Ամէն ամէն ասեմ ձեզ, Որ ոչ մտանէ ընդ դուռն
ի գաւիթ ոչխարաց, այլ ընդ այլ ելանէ՝ նա գող
2 է և աւազակ։ Իսկ որ մտանէ ընդ դուռն, հովիւ
3 է ոչխարաց։ Նմա դռնապանն բանայ, և ոչխարքն
ձայնի նորա լսեն, և զիւր ոչխարան կոչէ յանուա-

4 Նէ և Հանէ ընոսա ։ Եւ յորժամ *զնւբն զամենայն՝՝
Հանիցէ , առաջի նոցա երթայ , և ոչխարքն զհետ
5 նորա երթան , զի ճանաչեն զձայն նորա ։ Զօտարի
զհետ ոչ երթիցեն , այլ փախիցեն ի նմանէ , զի ոչ
6 ճանաչեն զձայն օտարաց ։ Զայս առակ ասաց Նո-
ցա Յիսուս , և նոքա ոչ գիտէին եթէ զինչ էր որ
7 խօսէրն ընդ նոսա ։ Ցարձակ ասէ ցնոսա Յիսուս ,
Ամէն ամէն ասեմ ձեզ զի ես եմ դուռն ոչխարաց ։
8 Ամենեքեան որ յառաջ քան զիս եկին , գողք էին
9 և աւազակք . այլ ոչ լուան նոցա ոչխարքն ։ Ես
եմ դուռն , ընդ իս եթէ ոք մտանիցէ , կեցցէ .
10 մտցէ և ելցէ և ճարակ գտցէ ։ Գող ոչ գայ՝ եթէ
ոչ զի գողասցի և սպանցէ և կորուսցէ . ես եկի զի
զկեանս ունիցին , և առաւել եւս ունիցին ։
11 Ես եմ հովիւն քաջ . հովիւ քաջ զանձն իւր դնէ
12 ի վերայ ոչխարաց ։ Իսկ վարձկանն՝ որ ոչ է հովիւ ,
որոյ ոչ իւր են ոչխարքն , իբրեւ տեսանէ զգայլն
զի գայ՝ թողու զոչխարան և փախչի . և գայլն յա-
13 փըշտակէ զնոսա և ցրուէ . Փանդի վարձկան է , և
14 չէ փոյթ նմա վասն ոչխարացն ։ Ես եմ հովիւն
15 քաջ , և ճանաչեմ զիմն և ճանաչիմ յիմանցն ։ Որ-
պէս գիտէ զիս Հայր , գիտեմ և ես զՀայր . և զանձն
16 իմ դնեմ ի վերայ ոչխարաց ։ Ունիմ և այլ եւս ոչ-
խարք են իմ , որ ոչ են յայսմ գաւթէ , և զայն
եւս պարտ է ինձ ածել այսր , և ձայնի իմում լսե-
17 ցեն , և եղիցին մի հօտ և մի հովիւ ։ Վասն այնո-
րիկ սիրէ զիս Հայր իմ . զի ես դնեմ զանձն իմ ,
18 զի միւսանգամ առից զնա ։ Ոչ ոք հանէ զնա յե-

* Ի ՅՈՒՆ՝ զիւրն ոչխարան

նէն , այլ ես դնեմ զնա անձամբ իմով . իշխանու-
թիւն ունիմ դնել զնա , և իշխանութիւն ունիմ
միւսանգամ առնուլ զնա . զայս պատուէր առի
19 ի Հօրէ իմմէ ։ Գարձեալ հերձուած լինէր ի մէջ
20 Հրէից վասն բանիցս այսոցիկ ։ Եւ ասէին բազումք
ի նոցանէ , Դեւ դոյ ի նմա և մոլեգնի , զի՞ բնաւ
21 լսէք նմա ։ Կէսքն ասէին , Ա՛յսպիսի բանք ոչ դի-
ւահարի են . միթէ դեւ կարէ՞ զաչս կուրի բանալ ։
22 Եղեն յայնժամ Նաւակատիքն Երուսաղէմ , և
23 ձմեռն էր . Եւ շրջէր Յիսուս ի տաճարին ի սրա-
24 հին Սողոմոնի ։ Շուրջ եղեն զնովաւ Հրեայքն և
ասեն , Մինչեւ ո՞րը թափես զոգիս մեր , եթէ
25 դու ես Քրիստոս՝ ասա մեզ համարձակ ։ Պատաս-
խանի ետ նոցա Յիսուս և ասէ , Ասացի ձեզ՝ և ոչ
հաւատայք ինձ . զգործսն զոր ես գործեմ յանուն
26 Հօր իմոյ՝ նոքին իսկ վկայեն վասն իմ ։ Ա՛յլ դուք
ոչ հաւատայք , զի չէք յոչխարաց անտի իմոց ։
27 Ոչխարք իմ՝ ձայնի իմում լսեն , և ես ճանաչեմ
28 զնոսա , և զկնի իմ գան . Եւ ես տամ նոցա զըն-
կեանն յաւիտենականս. և մի կորիցեն յաւիտեան,
և մի ոք յափշտակեսցէ զնոսա ի ձեռաց իմոց ։
29 Հայրն իմ՝ որ ետ ինձ զնոսա , մեծ է քան զամե-
նայն , և ոչ ոք կարէ յափշտակել ի ձեռաց Հօր
30 իմոյ ։ Ես և Հայր *իմ մի եմք ։ (31) Վ՛եմն առին
32 Հրեայքն զի քարկոծ արասցեն զնա ։ Պատասխանի
ետ նոցա Յիսուս , Բազում գործս բարիս ցուցի ձեզ
ի Հօրէ իմմէ . վասն որո՞յ գործոյ ի նոցանէ քար-
33 կոծ առնէք զիս ։ Պատասխանի ետուն նմա Հրեայ-

* Ի ՅՈՒՆ ԷՒ ։

քըն , վ ասն բարւոյ գործոյ ոչ առնեմք զքեզ քարկոծ , այլ վասն հայհոյութեան . և զի դու մարդ
34 ես , և զանձն քո Աստուած առնես : Պատասխանի
ետ նոցա Յիսուս , Ո՞չ յօրէնս ձեր գրեալ է , Ես
35 ասացի Թէ աստուածք իցէք : Իսկ եթէ զնոսա աս-
տուածս ասէ , առ որս բանն Աստուծոյ եղեւ , և
36 չէ մարթ եղծանել գրոյն . Իսկ զոր Հայր սրբեաց
և առաքեաց յաշխարհ , դուք ասէք Թէ Հայհո-
37 յես . զի ասացի Թէ Որդի Աստուծոյ եմ : Եթէ
ոչ գործեմ զգործս Հօր իմոյ , մի հաւատայք ինձ :
38 Ապա Թէ գործեմ , Թէ և ինձ ոչ հաւատայք ,
սակայն գործոցն հաւատացէք . զի գիտասջիք և
39 ծանիջիք եթէ Հայր յիս է , և ես ի Հայր : Դար-
ձեալ խնդրէին զնա ունել , և ել ի ձեռաց նոցա :
40 Եւ գնաց միւսանգամ յայնկոյս Յորդանանու ի
տեղին , ուր էր Յովհաննէս զառաջինն և մկրտէր ,
41 և անդ լինէր : Եկին բազումք առ նա և ասեն , զի
42 Յովհաննէս նշան ինչ ոչ արար : Բայց զամենայն
զոր ասաց Յովհաննէս վասն նորա , ճշմարիտ էր .
և բազումք հաւատացին ի նա անդ :

ԳԼ· ԺԱ

1 Եւ էր ոմն հիւանդ Ղազարոս ի Բեթանիա , ի
2 գեղջէ Մարիամայ և Մարթայի քեռւ նորա : Այս
այն Մարիամ էր որ օծ զՏէրն իւղով և ջնջեաց
զոտս նորա հերով իւրով . որոյ եղբայրն Ղազա-
3 րոս հիւանդ էր : Առաքեցին առ նա քոյրքն նորա
և ասեն , Տէր , ահաւասիկ զոր դուն սիրէիր՝ հի-
4 ւանդացեալ է : Իբրեւ լուաւ Յիսուս՝ ասէ , Այն

հիւանդութիւն չէ ի մահ , այլ վասն փառացն
Աստուծոյ . զի փառաւորը լիցի Որդի Աստուծոյ
5 այնուհետ : Եւ սիրէր Յիսուս զՄարթա և զքոյր նո-
6 րա զՄարիամ և զՂազար : Իբրեւ լուաւ Թէ հի-
ւանդացեալ է , զտեղի կալաւ անդէն ուր էրն՝ ա-
7 նուրս երկուս : Ապա յետ այնորիկ ասէ ցնոսա ,
8 Եկայք երթիցուք միւսանգամ ի Հրէաստան : Ասեն
ցնա աշակերտքն , Ռաբբի , այժմ եւս խնդրէին
զքեզ Հրեայքն քարկոծ առնել . և դարձեա՞լ եր-
9 թաս անդրէն : Պատասխանի ետ Յիսուս , Ո՞չ եր
կոտասան ժամ է աւուր . եթէ ոք գնայ ի տուբն
ջեան՝ ոչ գայթակղի , զի զլոյս աշխարհիս այսորիկ
10 տեսանէ . Ապա Թէ ոք գնայ գիշերի՝ գայթակղի ,
11 զի լոյս ոչ գոյ ընդ նմա : Զայս իբրեւ ասաց՝ յետ
այսորիկ ասէ ցնոսա , Ղազարոս բարեկամ մեր նըն-
12 ջեաց , այլ երթամ զի զարթուցից զնա : Ասեն ցնա
13 աշակերտքն , Տէր , եթէ ննջեաց՝ ապա ապրի : Այլ
Յիսուս վասն մահուն նորա ասէր . նոցա այսպէս
14 թուեցաւ Թէ վասն ննջելոյ քնոյն ասէ : Ցայնժամ
ասէ ցնոսա Յիսուս յայտնապէս , Ղազարոս մեռաւ .
15 Եւ ես ուրախ եմ վասն ձեր , զի դուք հաւատաս-
ջիք *ինձ , զի ես չէի անդ . բայց արդ *եկայք երթիւ-
16 ցուք առ նա : Ասէ Թովմաս անուանեալն Երկուս-
բաւակ՝ ցաշակերտակիցսն , Ոն †եկայք և մեք՝ զի ընդ
17 նմա մեռցուք : Եկն Յիսուս եդիտ զնա չորեքօրեայ
18 ի գերեզմանի : Եւ էր Բեթանիա մերձ Երուսա-
19 ղէմ իբրեւ ասպարիսօք հնգետասան , Բազումք ի
Հրէից անտի եկեալ էին առ Մարթա և Մարիամ ,

* Ի ց-ին է : † Ի ց-ին՝ երթիցուք

20 զի մխիթարեսցեն զնոսա վասն եղբօրն ։ Մարթա
իբրեւ լուաւ թէ Յիսուս գայ , ընդ առաջ գնաց
21 նորա , բայց Մարիամ նստեր անդէն ի տան ։ Ասէ
Մարթա ցՅիսուս , Տէր , եթէ աստ լեալ էիր , եղ-
22 բայրն իմ չէր մեռեալ . Ա՛յլ և արդ գիտեմ եթէ
զոր ինչ խնդրեսցես յԱստուծոյ՝ տացէ քեզ Աս-
23 տուած ։ Ասէ ցնա Յիսուս , Յարիցէ եղբայրն քո ։
24 Ասէ ցնա Մարթա , Գիտեմ զի յարիցէ ի յարու-
25 թեան յաւուրն յետնում ։ Ասէ ցնա Յիսուս , Ես
իսկ եմ յարութիւն և կեանք . որ հաւատայ ինս,
26 թէպէտ և մեռանի՝ կեցցէ . Եւ ամենայն որ կեն-
դանի է և հաւատայ ինս , մի մեռցի ի յաւի-
27 տեան . հաւատա՞ս այսմիկ ։ Ասէ ցնա, Այո, Տէր,
ես հաւատացի եթէ դու ես Քրիստոսն Որդի Աս-
28 տուծոյ , որ յաշխարհ գալոց էիր ։ Եւ զայս իբրեւ
ասաց , գնաց և կոչեաց զՄարիամ զքոյր իւր լռե-
լեայն և ասէ, Վարդապետ եկեալ է և կոչէ զքեզ ։
29 Նա իբրեւ լուաւ՝ յարեաւ վաղվաղակի և եկն
30 առ նա ։ Զեւ եւս էր եկեալ Յիսուս ի գեօղն , այլ
էր անդէն ի տեղւոյնն՝ ուր ընդ առաջ եղեւ նմա
31 Մարթա ։ Իսկ Հրեայքն՝ որ էին ընդ նմա ի տան
անդ և մխիթարէին զնա , իբրեւ տեսին զՄարիամ
թէ յարեաւ վաղվաղակի և գնաց , գնացին և նո-
քա զհետ նորա , համարեալք թէ ի գերեզմանն եր-
32 թայ զի լացցէ անդ ։ Իսկ Մարիամ իբրեւ եկն ուր
էրն Յիսուս և տեսս զնա , անկաւ առ ոտս նորա
և ասէ , Տէր , եթէ աստ էիր դիպեալ՝ ոչ էր մե-
33 ռեալ եղբայրն իմ ։ Յիսուս իբրեւ տեսս զնա զի
լայր , և որ ընդ նմա էին Հրեայքն՝ լային , խռովե-

31 ցաւ յոգի իւր *իբրեւ զայրացեալ ,” Եւ ասէ , Ո՞ւր
35 եդիք զնա . ասեն ցնա , Տէր , եկ և տես , Եւ ար-
36 տասուեաց Յիսուս ։ Ասէին Հրեայքն, Տեսէք որչափ
37 սիրէր զնա ։ Իսկ նոցանէ ասէին , Ո՞չ կարէր
սա , որ երաց զաչս կուրին , առնել զի և սա մի մեռ-
38 ցի ։ Յիսուս դարձեալ †զայրացեալ ընդ միտս իւր,”
գայ ի գերեզմանն . և էր այր մի , և վէմ մի եդեալ
39 ի վերայ նորա ։ Եւ ասէ Յիսուս , Ի բաց արարէք
զվէմդ . ասէ ցնա Մարթա քոյր մեռելոյն , Տէր ,
40 արդ հոտեալ իցէ, քանզի չորեքօրեայ է ։ Ասէ ցնա
Յիսուս , Ո՞չ ասացի քեզ , եթէ հաւատասցես՝
41 տեսցես զփառսն Աստուծոյ ։ Եւ իբրեւ ի վեր ա-
ռին զվէմն , Յիսուս ամբարձ զաչս իւր ի վեր և
42 ասէ , Հայր , գոհանամ զքէն զի լուար ինձ ։ Եւ
ես գիտէի զի յամենայն ժամ լսես ինձ . այլ վասն
ժողովրդեանս որ շուրջ կան՝ առնեմ , զի հաւա-
43 տասցեն թէ դու առաքեցեր զիս ։ Զայս իբրեւ ա-
սաց , ի ձայն մեծ աղաղակեաց և ասէ , Ղազարէ,
44 արի եկ արտաքս ։ Եւ էլ մեռեալն ոտիւք կապե-
լովք և ձեռօքն երիզապղծօք և երեսօքն վարշամա-
կապատօք . և ասէ ցնոսա Յիսուս , Լուծէք զդա
45 և թողէք երթալ ։ Բազումք ի Հրէից՝ որ եկեալ
էին առ Մարիամն , իբրեւ տեսին զոր արարն՝ հա-
46 ւատացին ի նա ։ Եւ ոմանք ի նոցանէ գնացին
առ փարիսեցիսն , պատմեցին նոցա զոր արարն
Յիսուս ։
47 Ժողովեցին քահանայապետքն և փարիսեցիքն

* Ի Ցոյն՝ հառաչելով,
† Ի Ցոյն՝ հառաչելով յինքեան ,

ատեան , և ասեն , Զի՞նչ արասցուք , զի այր այն
48 բազում նշանս առնէ : Եթէ թողումք զնա այն-
պես , ամենեքեան հաւատան ի նա . և գայցեն Հո-
49 ռոմք և բառնայցեն զազգս մեր և զտեղի : Մի ոմն
ի նոցանէ՝ անուն Կայիափա , որ քահանայապետ
50 էր տարւոյն այնորիկ , ասէ ցնոսա , Դուք ոչինչ
գիտէք , և ոչ ընաւ խորհիլ իսկ , Թէ լաւ է մեզ
զի այր մի մեռանիցի ի վերայ ժողովրդեանս , և մի
51 ամենայն ազգս կորիցէ : Զայս ոչ յանձնէ ինչ ա-
սաց , այլ զի քահանայապետ էր տարւոյն այնո-
րիկ , մարգարէացաւ եթէ մեռանելոց էր Յիսուս
52 ի վերայ ազգին . Եւ ոչ ի վերայ ազգին միայն ,
այլ զի և զորդիսն Աստուծոյ զցրուեալսն ժողո-
53 վեսցէ ի մի : Ապա յայնմ օրէ խորհուրդ արարին
54 զի սպանցեն զնա : Եւ Յիսուս այնուհետեւ ոչ եթէ
համարձակ շրջէր ի մէջ Հրէիցն , այլ գնաց անտի
յերկիրն մի որ մերձ էր յանապատ , ի քաղաք մի
որում անուն էր Եփրայիմ , և անդ լինէր աշա-
կերտօքն հանդերձ :
55 Եւ էր մերձ զատիկն Հրէից , և բազումք ելին
Երուսաղէմ ի գաւառէ անտի յառաջագոյն քան
56 զզատիկն , զի սրբեսցեն զանձինս իւրեանց : Խնդրէ-
ին զՅիսուս , և ասէին ընդ միմեանս մինչ կային ի
տաճարին , Զի՞րդ թուի ձեզ եթէ ո՞չ գայցէ ի
տօն այսր . պատուէր տուեալ էր քահանայապե-
տիցն և փարիսեցւոց , զի թէ ոք գիտասցէ թէ ուր
է , գուշակեսցէ զնմանէ զի կալցին զնա :

ԳԼ . ԺԲ

1 Իսկ Յիսուս վեց աւուրբը յառաջ քան զզատիկն
եկն ի Բեթանիա , ուր էր Ղազար մեռեալն , զոր
2 յարոյցն ի մեռելոց : Եւ արարին անդ նմա ընթ-
րիս և ի սպասու կայր Մարթա , և Ղազար մի էր
3 ի բազմելոց ընդ նմա : Իսկ Մարեամ առեալ լիտր
մի իւղոյ նարդեան սընծուի մեծագնոյ , օծ զտոն
Յիսուսի , և հերով իւրով մաքրէր զոտս նորա . և
4 տունն լի եղեւ ի հոտոյ իւղոյն : Ասէ մի ոմն յա-
շակերտաց անտի՝ Յուդա Սկարիովտացի , որ մատ-
5 նելոցն էր զնա , Ընդէ՞ր ոչ իւղդ այդ վաճառե-
ցաւ երեք հարիւր դինարի , և տուաւ աղքատաց :
6 Զայս ասաց՝ ոչ զի զաղքատաց ինչ փոյթ էր նմա ,
այլ զի գող էր և զարկղն ինքն ունէր , և որ ինչ
7 անկանէր՝ նա կրէր : Ասէ Յիսուս , Թոյլ տուր դմա ,
8 զի յօրն պատանաց իմոյ *պահեսցէ զայդ . Զաղքատս
յամենայն ժամ ընդ ձեզ ունիք , զիս ոչ հանա-
9 պազ ընդ ձեզ ունիք : Իբրեւ գիտաց ժողովուրդ
բազում ի Հրէից Թէ անդ է՝ եկին , ոչ միայն վասն
Յիսուսի , այլ զի և զՂազար տեսցեն , զոր յարոյցն
10 ի մեռելոց : Խորհուրդ արարին քահանայապետ-
11 քըն , զի և զՂազար սպանցեն . Քանզի բազումք
ի Հրէից †երթային և հաւատային ի Յիսուս :
12 Ի վաղիւ անդր ժողովուրդ բազում որ եկեալ էր
ի տօնն , իբրեւ լուան Թէ գայ Յիսուս Երուսա-
13 ղէմ , Առին ոստս արմաւենեաց և ելին ընդ առաջ
նորա , աղաղակէին և ասէին , Ովսաննա , օրհ-

* Ի Ց՚ԽՀ՚ պահեաց † Ի Ց՚ԽՀ՚ երթային վասն նորա

նեալ որ գասդ յանուն Տեառն , թադաւորդ Իս-
14 րայէլի : Եւ գտեալ Ցիսուա էշ մի , նստաւ ի վե-
15 րայ նորա , որպէս և գրեալ է , Մի երկնչիր , դուս-
տը Սիովնի , ահաւադիկ թագաւոր քո գայ նըս-
16 տեալ ի վերայ յաւանակի էշոյ : Եւ զայն ինչ ոչ
գիտացին աշակերտքն նորա զառաջինն , այլ յոր-
ժամ փառաւորեցաւ Ցիսուս , յայնժամ յիշեցին
եթէ այն էր՝ որ գրեալն էր վասն նորա , և զայն
17 արարին նմա : Եւ ժողովուրդն վկայէր որ էր ընդ
նմա , թէ զՂազար կոչեաց եւ եթե ի գերեզմանէն ,
18 և յարոյց զնա ի մեռելոց : Եւ վասն այնորիկ ընդ-
առաջ եղեւ նմա ժողովուրդն , զի լուան եթէ զայն
19 նշանս արարեալ էր նորա : Իսկ փարիսեցիքն ասէին
ընդ միմեանս , Տեսանէ՞ք զի ոչինչ օգտիք . ահա-
20 ւասիկ աշխարհ ամենայն զկնի նորա գնաց : Էին
ընդ ոմանք և Հեթանոսք յելելոցն անդր , զի եր-
21 կիրպագանիցեն ի տօնին : Նոքա մատեան առ փի-
լիպպոս՝ որ ի Բեթսայիդա Գալիլեացւոցն էր , ա-
ղաչէին զնա և ասէին , Տէր , կամիմք զՅիսուս տես-
22 սանել : Գայ փիլիպպոս և ասէ ցԱնդրէաս , Անդ-
23 րեաս և փիլիպպոս ասեն ցՅիսուս : Եւ Ցիսուս պա-
տասխանի ետ նոցա և ասէ , Եհաս ժամ զի փա-
24 ռաւորեսցի Որդի մարդոյ : Ամէն ամէն ասեմ
ձեզ , եթէ ոչ հատ ցորենոյ անկեալ յերկիր մե-
25 ռանիցի , ինքն միայն կայ . ապա եթէ մեռանիցի՝
բազում արդիւնս առնէ : Որ սիրէ զանձն իւր՝
արձակէ զնա . և որ ատեայ զանձն իւր յաշխար-
հիս յայսմիկ , ի կեանսն յաւիտենականս պահես-
26 ցէ զնա : Եթէ ոք զիս պաշտիցէ , զկնի իմ եկեսցէ .
և ուր եմն եմ , անդ և պաշտօնեայն իմ եղիցի .

եթէ ոք զիս պաշտիցէ՝ պատուեսցէ զնա Հայրն իմ :
27 Բայց այժմ անձն իմ խռովեալ է . և զի՞նչ ա-
սացից , եթէ , Հայր , ապրեցո զիս ի ժամէ ասի
յայսմանէ . այլ վասն այնորիկ եկի ի ժամս յայս :
28 Հայր , փառաւորեա զանուն քո . եկն բարբառ
յերկնից , Եւ փառաւորեցի արարի , և դարձեալ փա-
29 ռաւորեցից արարից : Եւ ժողովուրդն որ կայր և լսէր ,
ասէին Որոտումն լինել . կէսքն ասէին , Հրեշտակ
30 խօսեցաւ ընդ նմա : Պատասխանի ետ Ցիսուս և
ասէ , Ոչ վասն իմ ինչ եկն բարբառս այս , այլ
31 վասն ձեր : Այժմիկ դատաստան է աշխարհիս այ-
սորիկ , այժմիկ իշխան աշխարհիս այսորիկ ընկեցի
32 արտաքս : Եւ ես յորժամ բարձրացայց յերկրէ ,
33 զամենեսեան ձգեցից առ իս : Զայս ասէր՝ նշանա-
34 կեալ թէ որով մահու մեռանելոց իցէ : Պատաս-
խանի ետ նմա ժողովուրդն , Մեք լուաք յօրինաց
եթէ Քրիստոս յաւիտեան կայ , և դու զիա՞րդ
ասես թէ Պարտ է բարձրանալ Որդւոյ մարդոյ .
35 ո՞վ է այն Որդին մարդոյ : Ասէ ցնոսա Ցիսուս ,
փոքր ժիւս եւս ժամանակ լոյս ընդ ձեզ է . գնա-
ցէք մինչդեռ զլոյսն ունիք , զի մի խաւար ձեզ
հասցէ . զի որ գնայ ի խաւարի , ոչ գիտէ յո եր-
36 թայ : Մինչդեռ զլոյսն ընդ ձեզ ունիք՝ հաւատա-
ցէք ի լոյսն , զի որդիք լուսոյ եղիջիք . զայս խօսե-
ցաւ Ցիսուս , և չոգաւ թաքեաւ ի նոցանէ :
37 Եւ այնչափ նշանս արարեալ էր առաջի նոցա , և
38 նոքա ոչ հաւատային ի նա . Զի լցցի բանն Եսայ-
եայ մարգարէի զոր ասացն , Տէր , ո՞ հաւատաց ի
լուր մեր , և բազուկ Տեառն ո՞ւմ յայտնեցաւ :
39 Վասն այնորիկ ոչ կարէին հաւատալ , զի միւսան-

40 գամ՝ ասէ Եսայի, Թէ կուրացոյց զսէս նոցա և
ապշեցոյց զսիրտս նոցա, զի մի տեսցեն աչօք և
իմասցին սրտիւք և դարձցին, և բժշկեցից զնոսա։
41 Զայս ասաց Եսայի, զի տեսաւ զնորա և խո-
42 սեցաւ վասն նորա։ Բայց սակայն և յիշխանաց
անտի բազումք հաւատացին ՚ի նա, այլ վասն
փարիսեցւոցն ոչ յայտնէին, զի մի ՚ի ժողովրդե-
43 նէն ելանիցեն։ Քանզի սիրեցին զփառս մարդկան
առաւել քան զփառսն Աստուծոյ։
44 Եւ Յիսուս աղաղակեր և ասէր, Որ հաւատայ
յիս՝ ոչ հաւատայ յիս, այլ յայն որ առաքեացն
45 զիս։ Եւ որ տեսանէ զիս, զայն տեսանէ՝ որ առա-
46 քեացն զիս։ Ես լոյս յաշխարհ եկի, զի ամենայն
47 որ հաւատայ յիս՝ ՚ի խաւարի մի մնասցէ։ Եւ եթէ
ոք լսիցէ բանից իմոց և ոչ պահեսցէ, ես ոչ դա-
տիմ զնա. քանզի ոչ եկի թէ դատեցայց զաշ-
48 խարհ, այլ զի փրկեցից զաշխարհ։ Որ անարգէ
զիս և ոչ ընդունի զբանս իմ, դոյ որ դատի զնա.
բանն զոր ես խօսեցայ, նա դատի զնա յաւուրն
49 յետնում։ Զի ես յանձնէ իմմէ ոչ խօսեցայ, այլ
որ առաքեացն զիս Հայր, նա ետ ինձ պատուէր
50 զինչ ասացից և զինչ խօսեցայց։ Եւ գիտեմ եթէ
պատուէրն այն կեանք են յաւիտենականք. արդ
զոր ես խօսիմ, որպէս ասաց ինձ Հայրն՝ այնպէս
խօսիմ։

ԳԼ. ԺԳ

1 Ցառաջագոյն քան զտօնն զատկի գիտաց Յիսուս
Թէ հասեալ է ժամ նորա՝ զի փոխեսցի յաշխար-

հէ առտի առ Հայր, *սիրեաց զիւրսն՝ որ յաշխար-
2 հի աստ են, իսպառ սիրեաց զնոսա։ Եւ ՚ի լինել
ընթրեացն՝ Սատանայի իսկ արկեալ էր ՚ի սիրտ՝
զի մատնեսցէ զնա Յուդա Սիմոնի Սկարիովտացւոյ.
3 Գիտաց Յիսուս զի զամենայն ինչ ետ Հայր ՚ի ձեռս
նորա, և Թէ յԱստուծոյ ել և առ Աստուած եր-
4 թայ, Յառնէ յընթրեացն անտի և դնէ զհանդերձան,
5 և առեալ զընձեակ մի սփածաւ։ Եւ ապա առեալ
ջուր արկ ՚ի կոնք, և սկսաւ լուանալ զոտս աշա-
կերտացն, և սրբէր զընձեակաւն զոր սփածեալ էր։
6 Գայ առ Սիմոն Պետրոս. և նա ասէ ցնա, Տէր,
7 դո՞ւ զիմ զոտս լուանաս։ Պատասխանի ետ նմա
Յիսուս և ասէ, Զոր ինչ ես գործեմ, դու այժմ
8 ոչ գիտես. բայց ապա գիտասջիր։ Ասէ ցնա Պետ-
րոս, Ոչ լուասցես զոտս իմ յաւիտեան. պատաս-
խանի ետ նմա Յիսուս, Եթէ ոչ լուացից զքեզ՝ ոչ
9 ունիս բնդ ես մասն։ Ասէ ցնա Սիմոն Պետրոս,
Տէր, մի՛ միայն զոտս իմ, այլ և զձեռս և զգլուխս։
10 Ասէ ցնա Յիսուս, Լուացելոյն չէ ինչ պիտոյ՝ բայց
զի զոտսն լուանայցէ, քանզի ամենեւին սուրբ է.
11 և դուք սուրբ էք, այլ ոչ ամենեքին։ Զի գիտէր
զայն որ մատնելոցն էր զնա. վասն այնորիկ ասաց
12 Թէ Ոչ ամենեքին սուրբ էք։ Եւ յորժամ լուաց
զոտս նոցա, առ զհանդերձան իւր և դարձեալ բազ-
մեցաւ, և ասէ ցնոսա, Գիտէ՞ք զինչ արարի ձեզ.
13 Դուք կոչէք զիս վարդապետ և Տէր, և բարւոք
14 ասէք, քանզի եմ իսկ։ Իսկ արդ եթէ ես լուացի
զոտս ձեր Տէրս և վարդապետս, և դուք պարտիք

* Ի ցոյն՝ սիրեալ

15 զվիմեանց ոտս լուանալ ։ Զի օրինակ մի ետուի
ձեզ, զի որպէս ես ձեզ արարի, և դուք առնիջիք ։
16 Ամէն ամէն ասեմ ձեզ, Ոչ է ծառայ մեծ քան
զտէր իւր, և ոչ առաքեալ՝ մեծ քան զայն որ ա-
17 ռաքեացն զնա ։ Եթէ զայս գիտէք, երանելի եւս
18 էք՝ եթէ առնիցէք զայս ։ Ոչ վասն ամենեցուն ձեր
ասեմ, զի ես գիտեմ զորս ընտրեցի. այլ զի լցի
գիրն թէ Որ ուտէր ընդ իս հաց՝ *արար ինձ խա-
19 բէութիւն ։'' Յայսմհետէ իսկ ասեմ ձեզ մինչչեւ
եղեալ, զի յորժամ լինիցի՝ հաւատասջիք թէ ես
20 եմ ։ Ամէն ամէն ասեմ ձեզ, Որ ընդունի զոր ոք
ես առաքեցից, զիս ընդունի. և որ զիս ընդունի,
ընդունի զայն՝ որ առաքեացն զիս ։
21 Զայն իբրեւ ասաց Յիսուս՝ խռովեցաւ յոգի իւր,
վկայեաց և ասէ, Ամէն ամէն ասեմ ձեզ զի մի ոմն
22 ի ձէնջ մատնելոց է զիս ։ Էին ընդ միմեանս աշա-
23 կերտքն տարակուսեալք թէ զո՞ւմն ասիցէ ։ Եւ էր
մի ոմն յաշակերտացն բազմեալ առ Յիսուսիւ, զոր
24 սիրէրն Յիսուս ։ Ակնարկէ նմա Սիմոն Պետրոս հար-
25 ցանել, ո՞վ իցէ՝ վասն որոյ ասէն ։ Եւ նա անկեալ
26 զլանջսքն Յիսուսի՝ ասէ ցնա, Տէր, ո՞վ է ։ Պա-
տասխանի ետ Յիսուս †Է ասէ՝՝, Այն է՝ որում ես
թաթիղ զպատառն և տայց. և թաթիեալ զպատառն
27 տայ Յուդայի Սկարիովեացւոյ ։ Եւ յետ պատա-
ռոյն ապա եմուտ ի նա Սատանայ. և ասէ ցնա
Յիսուս, Արդ զոր ինչ առնելոց ես՝ արա վաղվա-
28 զակի։ Եւ զայս ոչ ոք իմացաւ ի բազմականաց ան-
29 ոի, թէ առ ինչ ասաց ցնա ։ Զի ոմանք համարէին

* Ի Ցհ՝՝՝ անկուշեաց ինձ ։ † Ի Ցհ՝՝՝ էէ ։

թէ զի զարկղն ունէր Յուդա, ասաց նմա Յիսուս,
Գնեա զինչ որ պիտոյ իցէ մեզ ի տօնիս, և կամ՝
30 զի ազքատաց ինչ տացէ ։ Իսկ նորա առեալ զպա-
տառն՝ եւ արագաւս վազվազակի, և էր գիշեր ։
31 Եւ իբրեւ եւ, ասէ Յիսուս, Այժմ փառաւորե-
ցաւ Որդի մարդոյ, և Աստուած փառաւորեցաւ
32 ի նմա։ Զի եթէ Աստուած փառաւորեցաւ ի նմա,
և Աստուած փառաւորեսցէ զնա յանձն իւր. և
33 վազվազակի փառաւորեսցէ զնա ։ Որդեակք իմ,
փոքր ինչ ժամանակ ընդ ձեզ եմ. խնդրիցէք զիս.
և որպէս ասացի հրէայեան եթէ Ուր եան երթամ,
34 դուք ոչ կարէք գալ, և արդ ձեզ ասեմ։ Պատուի-
րան նոր տամ ձեզ, զի սիրիցէք զմիմեանս. որպէս
սիրեցի ես զձեզ, զի և դուք սիրեսջիք զմիմեանս ։
35 Յայսմ գիտասցեն ամենեքեան եթէ իմ աշակերտք
36 էք, եթէ սիրիցէք զմիմեանս։ Ասէ ցնա Սիմոն Պետ-
րոս, Տէր, յո՞վ երթաս. պատասխանի ետ Յիսուս,
Ուր եան երթամ՝ դուս ոչ կարես այժմ գալ զկնի
37 իմ, բայց ապա եկեսցես զկնի իմ։ Ասէ ցնա Պետ-
րոս, Տէր, ընդէ՞ր ոչ կարիցեմ գալ այժմ զկնի
38 քո, արդէն զանձն իմ իսկ եդից ի վերայ քո ։ Պա-
տասխանի ետ Յիսուս, Զա՞նձն քո դիցես ի վերայ
իմ. ամէն ամէն ասեմ քեզ, Զերե իցէ հաւուս խո-
սեալ, մինչ դուս երիցս ուրասցիս զիս ։

Գլ. ԺԴ

1 Մի խռովեսցին սիրտք ձեր. այլ հաւատացէք
2 յԱստուած և յիս հաւատացէք ։ Ի տան Հօր իմոյ
օթեվանք բազումք են, ապա թէ ոչ՝ ասացեալ եր

3 իմ *ձեզ թէ՝ երթամ պատրաստեմ ձեզ տեղի՝ եւ
եթէ երթամ եւ պատրաստեմ ձեզ տեղի, դարձեալ
գամ եւ առնում զձեզ առ ինս . զի ուր եմն իցեմ,
4 եւ դուք անդ իցէք : եւ ուր երթայմն՝ գիտիցէք , եւ
5 զճանապարհն գիտիցէք : Ասէ ցնա Թովմաս , Տէր ,
ոչ գիտեմք յո՞ երթաս , եւ զիա՞րդ զճանապարհն
6 կարասցուք գիտել : Ասէ ցնա Յիսուս , Ես եմ ճա-
նապարհ եւ ճշմարտութիւն եւ կեանք . ոչ ոք գայ
7 առ Հայր՝ եթէ ոչ ինեւ : Եթէ զիս գիտէիք՝ ապա
եւ զՀայրն իմ գիտէիք , եւ այսուհետեւ գիտասջիք
8 զնա : Ասէ ցնա Փիլիպպոս , Տէր , ցոյց մեզ զՀայր ,
9 եւ շատ է մեզ : Ասէ ցնա Յիսուս , Այսչափ ժա-
մանակս ընդ ձեզ եմ , եւ ո՞չ ծանեար զիս , Փիլիպ-
պէ . որ տեսեն զիս՝ տեսս զՀայրն . եւ դու զիա՞րդ
10 ասես Եթէ ցոյց մեզ զՀայր : Ո՞չ հաւատաս՝ եթէ
ես ի Հայր եւ Հայր յիս է . զբանս զոր ես խօսիմ
ընդ ձեզ, ոչ եթէ յանձնէ ինչ խօսիմ, այլ Հայրն
11 որ յիս բնակեալ է, նա գործէ զգործսն: Հաւատա՞յք
12 ինձ , եթէ ես ի Հայր եւ Հայր յիս է : Այլապ Թէ
ոչ՝ գոնէ վասն գործոցն հաւատացէք ինձ . Ամէն
ամէն ասեմ ձեզ Թէ Որ հաւատայն յիս , զգործսն
զոր ես գործեմ՝ եւ նա գործեսցէ , եւ մեծամեծս
եւս քան զնոսա գործեսցէ . զի ես առ Հայր եր-
13 թամ : Եւ զոր ինչ խնդրիցէք յանուն իմ, արա-
14 րից զայն . զի փառաւորեսցի Հայր յՈրդի : Եթէ
զոր ինչ խնդրիցէք †յինէն՝ արարից զայն ,
15 Եթէ սիրէք զիս՝ զպատուիրանս իմ պահեսջիք :
16 Եւ ես աղաչեցից զՀայր , եւ այլ Մխիթարիչ տացէ

* Ի ցոյն՝ ձեզ : † Ի ցոյն՝ յանուն իմ՝

17 ձեզ , զի ընդ ձեզ բնակեսցէ ի յաւիտեան . ԶՀո-
գին ճշմարտութեան , զոր աշխարհս ոչ կարէ ըն-
դունել . զի ոչ տեսանէ զնա եւ ոչ ճանաչէ զնա .
բայց դուք ճանաչէք զնա , զի առ ձեզ բնակեսցէ
18 եւ ընդ ձեզ եղիցի : Ոչ Թողից զձեզ որբս , գամ
19 առ ձեզ : Փոքր միւս եւս եւ աշխարհս ոչ եւս տե-
սանէ զիս , բայց դուք տեսանիցէք զիս , զի ես
20 կենդանի եմ, եւ դուք կենդանի լինիցէք : Յայնմ
աւուր գիտասջիք դուք , զի ես ի Հօր իմում՝ եւ
21 դուք յիս՝ եւ ես ի ձեզ : Որ ունի զպատուիրանս
իմ եւ պահէ զնոսա , նա է որ սիրէ զիս . և որ սի-
րէն զիս՝ սիրեսցի ի Հօրէ իմմէ . և ես սիրեցից զնա,
22 և երեւեցուցից նմա զիս : Ասէ ցնա Յուդա ոչ Սկա-
րիովտացին , Տէր , զի՞ եղեւ՝ զի մեզ յայտնելոց
23 ես զքեզ և ոչ աշխարհի : Պատասխանի ետ Յի-
սուս և ասէ ցնա , Եթէ որ սիրէ զիս՝ զբանն իմ
պահեսցէ , և Հայր իմ սիրեսցէ զնա . և առ նա
24 եկեսցուք և օթեւանս առնեմս արասցուք . Եւ որ
ոչն սիրէ զիս՝ զբանս իմ ոչ պահէ . և բանն իմ
զոր լսէք՝ ոչ է իմ , այլ Հօրն՝ որ առաքեացն զիս :
25 Զայս խօսեցայ ընդ ձեզ՝ մինչ առ ձեզս եմ :
26 Իսկ Մխիթարիչն Հոգին Սուրբ՝ զոր առաքեսցէ
Հայր յանուն իմ, նա ուսուսցէ ձեզ զամենայն ,
27 և յիշեցուսցէ զամենայն որ ինչ ասացի ձեզ : Խա-
ղաղութիւն Թողում ձեզ , զխաղաղութիւն զիմ
տամ ձեզ . ոչ որպէս աշխարհս տայ՝ տամ ես ձեզ .
մի խռովեսցին սիրտք ձեր և մի զանգիտեսցեն :
28 Լուայք զի ասացի ես ձեզ Թէ երթամ և դամ
առ ձեզ . եթէ սիրէիք զիս՝ ապա ուրախ լեալ էր
ձեր Թէ ես առ Հայր երթամ, զի Հայր իմ մեծ է

29 քան զիս ։ Եւ այժմ ասացի ձեզ մինչչեւ եղեալ,
30 զի յորժամ լինիցի՝ հաւատասջիք ։ Ոչ եւս այլ
շատ խօսեցայց ընդ ձեզ. գայ իշխան աշխարհիս
31 այսորիկ և չիս ինչ ոչ գտանէ ։ Այլ զի ծանիցէ
աշխարհ եթէ սիրեմ զՀայր . և որպէս պատուի-
րեաց ինձ Հայր՝ այնպէս առնեմ. օն արիք գնասջուք ասէ ։

ԳԼ. ԺԵ

1 Ես եմ որթն ճշմարիտ , և Հայր իմ մշակ է ։
2 Ամենայն ուռ որ չիս է և ոչ բերէ պտուղ՝ կորէ
զնա . և ամենայն որ բերէ պտուղ՝ սրբէ զնա , զի
3 առաւել եւս պտղաբեր լիցի ։ Դուք արդէն իսկ
4 սուրբ էք վասն բանին՝ զոր խօսեցայ ընդ ձեզ ։ կա-
ցէք չիս և ես ի ձեզ. որպէս ուռն ոչ կարէ պը-
տուղ բերել չանձնէ իւրմէ, եթէ ոչ իցէ հաս-
տատեալ յորթն , նոյնպէս և դուք՝ եթէ ոչ չիս
5 հաստատեալ իցէք ։ Ես եմ որթ և դուք ուռ . որ
հաստատեալ է չիս և ես ի նա , նա բերէ պտուղ
6 յոյժ . զի առանց իմ ոչինչ կարէք առնել ։ Եթէ
ոք ոչ է հաստատեալ չիս , եղ նա արտաքս իբրեւ
զուռն և ցամաքեցաւ , և ժողովեն զնա և ի հուր
7 արկանեն , և այրի ։ Եթէ կայցէք չիս և բանք իմ
ի ձեզ կայցեն , որ ինչ կամիցիք՝ խնդրեսջիք, և լի-
8 նիցի ձեզ ։ Յայսմիկ փառաւորեցաւ Հայր իմ, զի
պտուղ յոյժ բերիցէք , և եղիջիք իմ աշակերտք ։
9 Որպէս սիրեաց զիս Հայր , և ես սիրեցի զձեզ .
10 հաստատուն կացէք ի սէր իմ ։ Եթէ պահիցէք
զպատուիրանս իմ, կացջիք ի սէր իմ. որպէս ես

զպատուիրանս Հօր իմոյ պահեցի , և կամ ի սէր
11 նորա ։ Զայս խօսեցայ ընդ ձեզ , զի ուրախութիւնն
իմ ի ձեզ իցէ , և ձեր ուրախութիւն լցեալ եղի-
12 ցի ։ Այս է պատուէր իմ, զի սիրեսջիք զմիմեանս,
13 որպէս և ես զձեզ սիրեցի ։ Մեծ եւս քան զայս
սէր ոչ ոք ունի , եթէ զանձն իւր դիցէ ի վերայ
14 բարեկամաց իւրոց ։ Դուք բարեկամք էք իմ, եթէ
15 առնիցէք զոր ես պատուիրեմ ձեզ ։ Ոչ եւս կո-
չեմ զձեզ ծառայս , զի ծառայն ոչ գիտէ զինչ
գործէ տէրն նորա . այլ զձեզ կոչեցի բարեկամս ,
զի զամենայն զոր լուայ ի Հօրէ իմմէ՝ ծանուցի ձեզ ։
16 Ոչ եթէ դուք ընտրեցէք զիս , այլ ես ընտրեցի
զձեզ, և եդի զձեզ զի դուք երթայցէք և պտղա-
բերք լինիցիք , և պտուղն ձեր կացցէ . և զոր ինչ
խնդրիցէք ի Հօրէ իմմէ յանուն իմ , տացէ ձեզ ։
17 Զայս *պատուիրեմ զի սիրեսջիք զմիմեանս։ (18) Եթէ
աշխարհ զձեզ ատէ , գիտասջիք զի նախ զիս
19 ատեաց ։ Եթէ յաշխարհէ էիք՝ աշխարհ
զիւրեան սիրէր արդեօք . բայց զի չէք յաշխարհէ ,
այլ ես ընտրեցի զձեզ յաշխարհէ , վասն այնորիկ
20 ատէ զձեզ աշխարհ ։ Յիշեցէք զբանն զոր ասացի
ձեզ, թէ Ոչ է ծառայ մեծ քան զտէր իւր . եթէ
զիս հալածեցին , ապա և զձեզ հալածեսցեն . եթէ
զբանն իմ պահեցին , ապա և զձերն պահեսցեն ։
21 Այլ զայնս արասցեն ընդ ձեզ վասն անուան իմոյ,
22 զի ոչ գիտեն զայն որ առաքեացն զիս ։ Եւ եթէ
չէր եկեալ և խօսեցեալ ընդ նոսա , մեղ չիք ոչ
ունին նոցա . բայց արդ չիք պատճառք վասն մեղացն

* Ի Յոյն՝ պատուիրեմ ձեզ

23 իւրեանց ։ Որ զիս ատեայ , և զՀայրն իմ ատեայ ։
24 Եթէ զգործսն չէր գործեալ ՚ի նոսա , զոր ոչ այլ
ոք գործեաց , մեղ ինչ ոչ գոյր նոցա , բայց արդ
25 տեսին և ատեցին և զիս և զՀայր իմ։ Այլ զի
լցցի բանն , որ յօրէնս նոցա գրեալ է , Թէ Ատե-
26 ցին զիս տարապարտուց ։ Բայց յորժամ եկեսցէ
Մխիթարիչն՝ զոր ես առաքեցից ձեզ ՚ի Հօրէ, զՀո-
գին ճշմարտութեան՝ որ ՚ի Հօրէ ելանէ , նա վկա-
27 յեսցէ վասն իմ. Եւ դուք վկայէք , զի ՚ի սկզբանէ
ընդ իս էք ։

ԳԼ. ԺԵ

1 Զայս խօսեցայ ընդ ձեզ զի մի գայթակղեսջիք ։
2 ի ժողովրդոց իւրեանց Հանիցեն զձեզ. այլ եկեսցէ
ժամանակ՝ զի ամենայն որ սպանանիցէ զձեզ, Հա-
3 մարիցի պաշտօն մատուցանել Աստուծոյ ։ Եւ զայն
արասցեն ընդ ձեզ, քանզի ոչ ծանեան զՀայր և
4 ոչ զիս ։ Այլ և զայս խօսեցայ ընդ ձեզ՝ զի յոր-
ժամ եկեսցէ ժամանակ՝ յիշեցէք թէ ես ասացի
5 ձեզ ։ Զայս ՚ի սկզբանէ ոչ ասացի ձեզ, քանզի ընդ
ձեզ էի ։ Բայց արդ երթամ ես առ առաքիչն իմ,
և ոչ ոք ՚ի ձէնջ Հարցանէ զիս թէ Ո՞ երթաս ։
6 Այլ զի զայս խօսեցայ ընդ ձեզ, տրտմութիւն ե-
7 լից զսիրտս ձեր ։ Այլ ես զճշմարիտն ասեմ ձեզ,
լաւ է ձեզ եթէ ես երթամ. զի եթէ ես ոչ եր-
թայց՝ Մխիթարիչն ոչ եկեսցէ առ ձեզ. ապա եթէ
8 երթամ, առաքեցից զնա առ ձեզ ։ Եւ նա եկեալ՝
յանդիմանեսցէ զաշխարհ վասն մեղացն և վասն ար-
9 դարութեան և վասն դատաստանի ։ վասն մեղացն՝

10 զի ոչ Հաւատան յիս . վասն արդարութեան՝ զի
առ Հայր իմ երթամ, և ոչ եւս տեսանէք զիս .
11 վասն դատաստանի՝ զի իշխան աշխարհիս այսորիկ
12 դատապարտեալ է ։ Եւս բազում ինչ ունիմ ասել
13 ձեզ՝ այլ ոչ կարէք Հանդարտել այժմիկ ։ Յորժամ
եկեսցէ նա՝ Հոգին ճշմարտութեան , առաջնորդեսցէ
ձեզ ամենայն ճշմարտութեամբ . զի ոչ ելէ յան-
ձնէ ինչ խօսիցի , այլ զոր լսիցէ՝ խօսիցի , և զգա-
14 լոցն պատմեսցէ ձեզ ։ Նա զիս փառաւորեսցէ , զի
15 յիմմէ առնուցու և պատմեսցէ ձեզ ։ Զա-
մենայն ինչ զոր ունի Հայր՝ իմ է . վասն այնորիկ
ասացի ձեզ թէ յիմմէ առնուցու և պատ-
մեսցէ ձեզ ։
16 Փոքր մի և ոչ եւս տեսանէք զիս , և ապա տա-
կաւիկ մի և տեսանիցէք զիս , և ես երթամ առ
17 Հայր։ Ասէին ոմանք յաշակերտաց անտի ցմիմեանս ,
Զի՞նչ է այս՝ զոր ասէ ցմեզ Թէ փոքր մի և ոչ տե-
սանէք զիս , և դարձեալ սակաւիկ մի և տեսանի-
18 ցէք զիս , և Թէ ես առ Հայր երթամ։ Եւ ասէին ,
Զի՞նչ իցէ այն փոքր միւս եւս . չգիտեմք զի՞նչ
19 խօսի ։ Գիտաց Յիսուս եթէ կամէին ցնա Հարցա-
նել , և ասէ ցնոսա , Վասն այդո՞րիկ խնդրէք ընդ
միմեանս՝ զի ասացի Թէ փոքր մի և ոչ տեսանէք
զիս , և դարձեալ սակաւիկ միւս եւս և տեսանի-
20 ցէք զիս ։ Ամէն ամէն ասեմ ձեզ, զի լացջիք և ող-
բասջիք դուք , և աշխարհ խնդասցէ . դուք տրըտ-
մեսջիք , այլ տրտմութիւնն ձեր յուրախութիւն
21 եղիցի ։ Կին յորժամ ծնանիցի՝ տրտմութիւն է
նմա, զի Հասեալ է ժամ նորա . այլ յորժամ ծնցի
զմանուկն , ոչ եւս յիշէ զնեղութիւնն վասն խնդու-

22 Թեաննն, զի ծնաւ մարդ յաշխարհ : Եւ դուք այժմ
տրտմութիւն ունիք , այլ դարձեալ տեսից զձեզ ,
և ուրախ լիցին սիրտք ձեր . և զուրախութիւնն ձեր
23 ոչ ոք հանիցէ ի ձենջ : Եւ յայնմ աւուր զիս ինչ
ոչ հարցանիցէք : Ամէն ամէն ասեմ ձեզ՝ զի զոր
ինչ խնդրիցէք ի Հօրէ իմմէ յանուն իմ , տացէ
24 ձեզ : Մինչեւ ցայժմ ոչինչ խնդրեցէք յանուն իմ .
խնդրեցէք և առնուցուք , զի ուրախութիւնն ձեր
25 լցեալ իցէ : Զայս առակօք խօսեցայ ընդ ձեզ . և
կեսցէ ժամանակ՝ յորժամ ոչ եւս առակօք խօսե-
ցայց ընդ ձեզ , այլ յայտնապէս զՀօրէ պատմեցից
26 ձեզ : Յայնմ աւուր խնդրեսջիք յանուն իմ . և ոչ
ասեմ ձեզ եթէ ես աղաչեցից զՀայր վասն ձեր .
27 Զի ինքն իսկ Հայր սիրէ զձեզ՝ զի դուք զիս սիրե-
28 ցէք , և հաւատացէք եթէ ես ԱՒտուծոյ ելի : Ելի
ի Հօրէ և եկի յաշխարհ , դարձեալ թողում զաշ-
29 խարհ և երթամ առ Հայր : Ասեն ցնա աշակերտքն ,
Ահա արդ յայտնութեամբ խօսիս , և առակ և ոչ
30 մի ինչ ասես : Այժմիկ գիտեմք եթէ գիտես զամե-
նայն , և ոչինչ պիտոյ է եթէ ոք հարցանիցէ զքեզ .
31 յայսմիկ հաւատամք եթէ ԱՒտուծոյ ելեր : Պա-
տասխանի ետ նոցա Յիսուս և ասէ , Այժմ հաւա-
32 տա՞յք . Ահա եկեսցէ ժամ և եկեալ իսկ է , զի
ցրուեսջիք իւրաքանչիւր տեղիս , և զիս միայն
թողուցուք . և չեմ միայն , զի Հայր ընդ իս է :
33 Զայս խօսեցայ ընդ ձեզ , զի ընդ իս խաղաղու-
թիւն ունիցիք . յաշխարհի ասա նեղութիւն ու-
նիցիք , այլ քաջալերացարուք , զի ես յաղթեցի
աշխարհի :

ԳԼ· ԺԷ

1 Զայս իբրեւ խօսեցաւ Յիսուս , ամբարձ զաչս իւր
յերկինս և ասէ , Հայր , հասեալ է ժամ , փառա-
ւորեա զՈրդի քո , զի և Որդի քո փառաւորեսցէ
2 զքեզ , Որպէսետուր նմա իշխանութիւն ամենայն
մարմնոյ , զի ամենայնի՝ զոր ետուր նմա , տացէ
3 զկեանն յաւիտենական : Ա՛յս են յաւիտենական
կեանք , զի ծանիցեն զքեզ միայն ճշմարիտ Ա-
4 ստուած՝ և զոր առաքեցեր զՅիսուս Քրիստոս : Ես
զքեզ փառաւորեցի յերկրի . զգործն կատարեցի՝
5 զոր ետուր ցիս զի արարից : Եւ այժմ փառաւորեա
զիս , Հայր , առ ի քէն փառօքն՝ զոր ունէի յա-
6 ռաջ քան զլինելն աշխարհի առ ի քէն : Յայտնեցի
զանուն քո մարդկան՝ զորս ետուր ինձ յաշխարհէ .
քո էին , և ինձ ետուր զնոսա , և զբանն քո պա-
7 հեցին : Արդ գիտացին եթէ զամենայն ինչ զոր ե-
8 տուր ինձ՝ առ ի քէն են . Զի զբանն զոր ետուր
ինձ՝ ետու նոցա . և նոքա ընկալան և ծանեան
ճշմարտութեամբ թէ առ ի քէն ելի , և հաւա-
9 տացին եթէ դու առաքեցեր զիս : Արդ ես վասն
նոցա աղաչեմ . և ոչ վասն աշխարհի աղաչեմ , այլ
10 վասն նոցա՝ զորս ետուրն ինձ , զի քո են : Եւ որ
ինչ իմ է՝ ամենայն քո է . և որ ինչ քո է՝ այն իմ
11 է , և փառաւորեալ եմ ի նոսա : Եւ ես ոչ եւս
եմ յաշխարհի , և նոքա յաշխարհի են , և ես առ
քեզ գամ . Հայր Սուրբ , պահեա զնոսա յանուն
քո՝ , որով ետուրն ինձ , զի եղիցին մի , որպէս և
12 մեք մի եմք : Մինչ էի յաշխարհի ընդ նոսա , ես

պահեի զնոսա յանուն քո. *որով տուր ինձ, և պահեցի.» և ոչ ոք ի նոցանէ կորեաւ, բայց որ-
13 դին կորստեան, զի գիրն լցցի։ Բայց արդ առ-
քեզ գամ, և զայս խօսիմ յաշխարհի, զի ունի-
ցին զուրախութիւնն իմ լիով յանձինս իւրեանց։
14 Ես տուի նոցա զբանն քո, և աշխարհսատեաց
զնոսա. զի չեն յաշխարհէ, որպէս և ես չեմ
15 յաշխարհէ։ Ոչ զայս աղաչեմ զի բարձցես զնո-
սա յաշխարհէ, այլ զի պահեսցես զնոսա ի չա-
16 րէ։ Յաշխարհէ աստի չեն, որպէս և ես չեմ
17 յաշխարհէ։ Սուրբ արա զնոսա ճշմարտութեամբ
18 քով, զի քո բանդ ճշմարտութիւն է։ Որպէս զիս
առաքեցեր յաշխարհ, և ես առաքեցի զնոսա յաշ-
19 խարհ։ Եւ ի վերայ նոցա ես սուրբ առնեմ զանձն
իմ, զի եղիցեն և նոքա սրբեալք ճշմարտութեամբ։
20 Ա՛յլ ոչ վասն նոցա միայն աղաչեմ, այլ և վասն
21 ամենայն հաւատացելոց բանիւն նոցա յիս. Զի
ամենեքին մի իցեն, որպէս դու, Հայր, յիս՝ և
ես ի քեզ, զի և նոքա ի մեզ իցեն. զի և աշխարհ
22 հաւատասցէ եթէ դու առաքեցեր զիս։ Եւ ես զըս-
փառսն զոր տուեր ինձ՝ տուի նոցա, զի իցեն մի՝
23 որպէս և մեք մի եմք։ Ես ի նոսա՝ և դու յիս, զի
եղիցին կատարեալք ի մի. և գիտասցէ աշխարհ
եթէ դու առաքեցեր զիս. և սիրեցի զնոսա որպէս
24 դու զիս սիրեցեր։ Հայր, զորս տուեր ինձ, կա-
միմ զի ուր եսն եմ, և նոքա իցեն ընդ իս, զի
տեսանիցեն զփառսն զիմ, զոր տուեր ցիս. զի սի-
25 րեցեր զիս յառաջ քան զլինելն աշխարհի։ Հայր

* ի ցոյն՝ զորս տուեր ինձ պահեցի.

արդար, և աշխարհ զքեզ ոչ ծանեաւ, այլ ես
զքեզ ծանեայ. և նոքա ծանեան եթէ դու առա-
26 քեցեր զիս։ Եւ ծանուցի նոցա զանուն քո և ծա-
նուցից. զի սէրն զոր սիրեցեր զիս՝ ի նոսա իցէ, և
ես ի նոսա։

ԳԼ. ԺԸ

1 Զայս իբրեւ ասաց Յիսուս, ել աշակերտաքն
հանդերձ յայնկոյս ձորոյն Կեդրոնի, ուր էր պար-
2 տէզ, յոր եմուտ ինքն և աշակերտքն իւր։ Գի-
տէր և Յուդա որ զնա մատնելոց էր՝ զտեղին,
զի բազում անգամ ժողովեալ էր անդր Յիսուս
3 աշակերտաքն հանդերձ։ Եւ Յուդայն առեալ ընդ
իւր զդունդն, և ի քահանայապետէն և ի փա-
րիսեցւոց սպասաւորս, գայ անդր ջահիւք և լապ-
4 տերօք և զէնուք։ Իսկ Յիսուս իբրեւ ետես զայն
ամենայն եկեալ ի վերայ նորա, ել և ասէ ցնոսա,
5 Զո՞ խնդրէք։ Պատասխանի ետուն նմա, զՅիսուս
Նազովրեցի. ասէ ցնոսա Յիսուս, Ես եմ. կայր ընդ
6 նոսա և Յուդա որ մատնէրն զնա։ Իբրեւ ասաց
Թէ Ես եմ, յետս յետս չոգան և զարկան գետնի։
7 Դարձեալ եհարց զնոսա, Զո՞ խնդրէք. և նոքա
8 ասեն, զՅիսուս Նազովրեցի։ Պատասխանի ետ նո-
ցա Յիսուս, Ասացի ձեզ Թէ Ես եմ. արդ եթէ զիս
9 խնդրէք՝ Թոյլ տուք դոցա երթալ։ Զի լցցի բանն
զոր ասաց Թէ Զոր ետուր ցիս՝ ոչ կորուսից ի նո-
10 ցանէ և ոչ զոք։ Իսկ Սիմոն Պետրոս քանզի ունէր
սուր, ձգեաց զնա, եհար զքահանայապետին ծա-
ռայ, և ի բաց առ զականջն նորա զաջմէ. և էր ա-

11 Նուէն ծառային Մադբոս ։ Ասէ Յիսուս ցՊետրոս ,
Արկ զսուրդ անդրէն ի պատեանս իւր . զբաժակն ,
12 զոր ետ ինձ Հայր՝ ո՞չ ըմպիցեմ զնա ։ Իսկ գունդն
և հազարապետն և սպասաւորք Հրէից կալան զՅ-
13 Յիսուս և կապեցին . Եւ ածին զնա նախ առ Ան-
նա որ էր աներ Կայիափայի , որ քահանայապետն
14 էր տարւոյն այնորիկ ։ Այս այն Կայիափա էր՝ որ
խրատն ետ Հրէից եթէ Լաւ է առն միում մեռա-
15 նել ի վերայ ժողովրդեանն ։ Եւ երթային զՀետ
Յիսուսի Սիմոն Պետրոս և միւս աշակերտն . և
աշակերտն այն քանզի ծանօթ էր քահանայապե-
տին՝ եմուտ ընդ Յիսուսի ի դատիճ քահանայա-
16 պետին ։ Եւ Պետրոս կայր առ դրանն արտաքոյ . ել
միւս աշակերտն որ էր ծանօթ քահանայապետին՝
և ասաց ցդռնապանն և եմոյծ ի ներքս զՊետրոս։
17 Ասէ աղջիկն որ դռնապանն էր՝ ցՊետրոս , Միթէ
և դո՞ւ յաշակերտաց առնն այնորիկ իցես . ԵՒ նա
18 ասէ , Ոչ եմ ։ Կային անդ ծառայքն և սպասաւորքն
խարոյկ արկեալ , քանզի ցուրտ էր , և ջեռնուին .
19 կայր ընդ նոսա և Պետրոս և ջեռնոյր ։ Եւ քահա-
նայապետն հարց՝ զՅիսուս վասն աշակերտացն և
20 վասն վարդապետութեան նորա ։ Պատասխանի ետ
նմա Յիսուս , Ես յայտնապէս խօսեցայ յաշխարհի .
ես յամենայն ժամ ուսուցի ի ժողովրդեանն , և ի
ասճարի անդ ուր ամենայն Հրեայք ժողովեալ էին ,
21 և ի ծածուկ ինչ ոչ խօսեցայ ։ Զի՞ հարցանես զիս ,
հարց զլսնսողսն՝ որ լուան , թէ զինչ խօսեցայ ընդ
նոսա . ահաւասիկ նոքա գիտեն զինչ խօսեցայ ։
22 Իբրեւ նա զսոյն ասաց , մի ոմն ի սպասաւորացն որ
անդ կայր , ած ապտակ Յիսուսի և ասէ , Այդպէս

23 պատասխանի տաս քահանայապետիդ ։ Եւ Յիսուս
ասէ ցնա , Եթէ չար ինչ խօսեցայ՝ վկայեա վասն
չարին , իսկ եթէ բարի , ընդէ՞ր հարկանես զիս ։
24 Եւ առաքեաց զնա Աննա կապեալ առ Կայիափա
25 քահանայապետ ։ Եւ Սիմոն Պետրոս կայր անդ և
ջեռնոյր . ասեն ցնա , Միթէ և դո՞ւ յաշակերտաց
26 անտի նորա իցես . Նա ուրացաւ և ասէ Թէ Չեմ ։ Եւ
ասէ մի ոմն ի ծառայից քահանայապետին՝ ազգա-
կան այնորիկ , զորոյ զունկն եհատ Պետրոս , Ո՞չ ես իսկ
27 տեսի զքեզ ի պարտիզն անդ ընդ նմա ։ Դարձեալ
ուրացաւ Պետրոս , և վաղվաղակի հաւ խօսեցաւ ։
28 Եւ ածին զՅիսուս ի վանացն Կայիափայ յապա-
րանս դատաւորին , և էր այդուհետ . և նոքա ոչ մտին
յապարանսն , զի մի պղծեսցին , այլ զի ուտիցեն
29 զզատիկն ։ Ել առ նոսա Պիղատոս արտաքս և ասէ ,
Զի՞նչ չարախօսութիւն մատուցանէք զառնէն զայն-
30 մանէ ։ Պատասխանի ետուն և ասեն ցնա , Եթէ
չէր չարագործ այրն այն , ապա ոչ մատնէաք զնա
31 քեզ ։ Ասէ ցնոսա Պիղատոս , Առէք զնա դուք , և
ըստ ձերոց օրինացն դատեցարուք . ասեն ցնա Հր-
32 էայքն , Մեզ ոչ է արժան սպանանել զոք ։ Զի լցցի
բանն Յիսուսի զոր ասաց , նշանակեալ թէ որով
33 մահու մեռանելոց էր ։ Եմուտ միւսանգամ յա-
պարանսն Պիղատոս , կոչեաց զՅիսուս և ասէ ցնա ,
34 Դո՞ւ ես թագաւորն Հրէից ։ Պատասխանի ետ Յի-
սուս , Ի քէ՞ն ասես զայդ՝ եթէ այլք ասացին քեզ
35 զինէն ։ Պատասխանի ետ Պիղատոս , Միթէ և ես
Հրեա՞յ իցեմ . ազգն քո և քահանայապետք մատ-
36 նեցին զքեզ ինձ . զի՞նչ գործ գործեալ ես քո ։ Պա-
տասխանի ետ Յիսուս , Իմ արքայութիւն չէ յայսմ

աշխարհէ. եթէ յաշխարհէ աստի էր արքայութիւնն
իմ, սպասաւորքն իմ մարտնչէին արդեօք՝ զի մի
մատնեցայց Հրէից, բայց արդ թագաւորութիւնն իմ
37 չէ աստի։ Ասէ ցնա Պիղատոս, Ապա թէ այդպէս իցէ,
թագաւոր ումն ես դու. պատասխանի ետ Յիսուս,
Դու ասես թէ թագաւոր իցեմ. բայց ես յայդ իսկ
ծնեալ եմ, և ի դոյն իսկ եկեալ եմ յաշխարհ,
զի վկայեցից ճշմարտութեանն. ամենայն որ ի ճըշ-
38 մարտութենէ է՝ լսէ բարբառոյ իմոյ։ Ասէ ցնա Պի-
ղատոս, Ջի՞նչ է ճշմարտութիւն. զայս իբրեւ ա-
սաց, դարձեալ ել առ Հրեայսն և ասէ ցնոսա, Ես
39 ոչ մի ինչ պատճառս գտանեմ ի նմա։ Բայց է ձեր
սովորութիւն, զի զմի ոք արձակեցից ձեզ ի զատ-
կիս. արդ կամի՞ք զի արձակեցից ձեզ զԹագաւորն
40 Հրէից։ Աղաղակեցին ամենեքեան և ասէին, Մի՛ զդա,
այլ զԲարաբբա. և էր Բարաբբայն այն աւազակ։

Գլ. ԺԹ

1 Յայնժամ առ Պիղատոս զՅիսուս և դան եհար։
2 Եւ զինուորացն արարեալ պսակ ի փշոց՝ եդին ի
գլուխ նորա, և զդեցուցին նմա հանդերձ ծիրանեի.
3 †Եւ գային առ նա՝ և ասէին, Ողջ եր, արքայ Հրէից.
4 և հանէին նմա ապտակս։ Եւ դարձեալ Պիղատոս
արտաքս և ասէ ցնոսա, Ահա ածեմ զնա արտաքս
առ ձեզ, զի գիտասջիք թէ ես զնաս ինչ ի նմա
5 ոչ գտանեմ։ Եւ Յիսուս արտաքս, և ունէր պսակն
ի փշոց և հանդերձ ծիրանի. և ասէ ցնոսա, Ահա

† Ի Յովհ. ԺԹ։

6 այրդ *ցձեզ, Իբրեւ տեսին զնա քահանայապետքն
և սպասաւորք, զաղաղակ բարձին և ասեն, Ի խաչ
հան, ի խաչ հան զդա. ասէ ցնոսա Պիղատոս,
Առէք զդա ի ձեզ, և ձեզէն հանէք ի խաչ. զի ես
7 ի դմա զնաս ոչ գտանեմ։ Պատասխանի ետուն նմա
Հրեայքն, Մեք օրէնս ունիմք, և ըստ օրինացս մե-
ռոց պարտի մեռանել, զի զանձն իւր Որդի Աստու-
8 ծոյ արար։ Իբրեւ լուաւ զբանս զայս Պիղատոս,
9 առաւել ևս երկեաւ։ Եմուտ դարձեալ անդրէն
յապարանսն, և ասէ ցՅիսուս, Ուստի՞ ես դու.
10 և Յիսուս ոչ ետ նմա պատասխանի։ Ասէ ցնա Պի-
ղատոս, Ընդ իս ո՞չ խօսիս, ո՞չ գիտես եթէ իշ-
խանութիւն ունիմ հանել զքեզ ի խաչ, և իշխա-
11 նութիւն ունիմ արձակել զքեզ։ Պատասխանի ետ
Յիսուս, Ոչ ունէիր դու իշխանութիւն ի վերայ
իմ և ոչ մի, եթէ ոչ էր տուեալ քեզ ի վերուստ.
վասն այնորիկ որ մատնեացն զնա քեզ, նորա մեծ
12 մեղք են։ Եւ յայնմանէ Պիղատոս խնդրէր արձա-
կել զնա. և Հրեայքն աղաղակէին և ասէին, Եթէ
զդա արձակես՝ չես բարեկամ Կայսեր. ամենայն ոք
որ թագաւոր կոչէ զանձն իւր, հակառակ է Կայ-
13 սեր։ Իսկ Պիղատոս իբրեւ լուաւ զբանս զայսոսիկ,
ած զՅիսուս արտաքս. և նստաւ ի վերայ բեմին
ի տեղւոջն որ կոչէր Քարայատակ, և Եբրայեցերէն
14 կապպաթա, էր ուրբաթն զատկի, և էր ժամ իբ-
րեւ վեցերորդ, և ասէ ցՀրեայսն, Ահա թագաւորդ
15 ձեր ցձեզ։ Եւ նոքա աղաղակէին, Բարձ *ի մէնջ,
բարձ *ի մէնջ, և հան զդա ի խաչ. ասէ ցնոսա

* Ի Յովհ. ԺԹ։

Պիղատոս, Ես զթագաւորդ ձեր ի խա՞չ հանիցեմ. պատասխանի ետուն քահանայապետքն, Չիք մեր
16 թագաւոր բայց ի Կայսերէ։ Յայնժամ ետ զնա ի ձեռս նոցա, զի ի խաչ ելանիցէ։
17 Եւ նոքա առեալ տանէին զնա. և բարձեալ էր ինքնին զխաչափայտն, և ելանէր ի տեղին որ ա-
նուանեալ էր Գագաթն, և կոչէր Եբրայեցերէն
18 Գողգոթա. Ուր և ի խաչն իսկ հանին զնա, և ընդ նմա երկուս եւս այլ աստի և անտի, և ի մէջ
19 զՅիսուս։ Գրեաց և տախտակ մի Պիղատոս, և եդ ի վերայ խաչին. և էր գրեալ, ՅԻՍՈՒՍ ՆԱԶՈՎ-
20 ՐԵՑԻ ԹԱԳԱՒՈՐ ՀՐԻՒԴԻ։ Զայն տախտակ ընթերցան բազումք ի Հրէից, զի մօտ էր ի քաղաք անդր տեղին ուր խաչեցաւն Յիսուս. և էր գրեալ Եբ-
21 րայեցերէն, Դաղմատերէն և Յունարէն։ Ասեն ցՊիղատոս քահանայապետքն Հրէից, Մի գրեր Թա-
22 գաւոր Հրէից, այլ Թէ Նա ասաց, Թագաւոր եմ Հրէից։ Պատասխանի ետ Պիղատոս, Զոր ինչ գրե-
23 ցի՝ գրեցի։ Իսկ զինուորքն իբրեւ հանին ի խաչ զՅիսուս, առին զՀանդերձս նորա և արարին չորս մասունս, իւրաքանչիւր զինուորի մասն. իսկ ըզ-
պատմուճանն՝ քանզի էր առանց կարանի ի վե-
24 րուստ փորանկեալ ամենեւին, Ասեն ցմիմեանս, Մի պատառեսցուք զայդ, այլ արկցուք վիճակս ի վերայ դորա՝ ումի և ելցէ. զի լցցի գիրն որ ասէ, Բաժանեցին զՀանդերձս իմ յիւրեանս, և ի վերայ պատմուճանի իմոյ վիճակս արկին. զինուորքն զայս
25 ինչ գործեցին։

Եւ կային առ խաչին Յիսուսի մայրն նորա, և քոյր մօր նորա Մարիամ Կղէովպայ և Մարիամ

26 Մագդաղենացի։ Յիսուս իբրեւ տեսս զմայրն և զաշակերտն զոր սիրէր, զի կայր մօտ, ասէ ցմայրն,
27 Կին դուե, ահա որդի քո։ Ապա ասէ ցաշակերտն, Ահա մայր քո. և յայնմ ժամանակէ առ աշակերտն
28 զնա առ իւր։ Յետ այսորիկ իբրեւ գիտաց Յիսուս, եթէ ահա ամենայն ինչ կատարեալ է, զի կատա-
29 րեսցի գիրն, ասէ, Ծարաւի եմ։ Եւ անդ կայր սաման ինչ լի քացախով. և նոցա սպունգ լցեալ քացախով *ընդ լեզու՝՝ շուրջ եդեալ †ըմշակաւ զո-
30 պայի՝՝ մատուցին ի բերան նորա։ Իբրեւ առ Յիսուս զքացախն *Հանդերձ լեզուին՝՝ ասէ, Ամենայն ինչ կատարեալ է. և խոնարհեցուցեալ զգլուխն՝
31 աւանդեաց զոգին։ Իսկ Հրեայքն՝ քանզի ուրբաթ էր, զի մի անդին ի խաչին մարմինքն մինչեւ ցշաբաթն, զի էր օր մեծ շաբաթուն այնո-
րիկ, աղաչեցին զՊիղատոս զի խորտակեսցեն զբարձս
32 նոցա, և բարձցին։ Եկին զինուորքն և զառաջինն խորտակեցին զբարձս, նոյնպէս և զմիւսոյն՝ որ ընդ
33 նմա ի խաչն ելեալ էր։ Բայց իբրեւ եկին առ Յիսուս, և տեսին զի այն ինչ մեռեալ էր, ոչ խոր-
34 տակեցին զբարձս նորա. Այլ մի ոմն ի զինուորացն տիգաւ խոցեաց զկողն նորա, և ել վաղվաղակի
35 արիւն և ջուր։ Եւ որ տեսեն՝ վկայեաց, և ճշմարիտ է վկայութիւն նորա, և նա գիտէ թէ ճշմա-
36 րիտ ասէ, զի և դուք հաւատասջիք։ Այս եղեւ զի
37 լցցի գիրն եթէ Ոսկր նորա մի փշրեսցի։ Եւ դարձեալ միւս գիր ասէ եթէ Հայեսցին ի նա՝ յոր խո-
ցեցինն։

---

* Ի Յոյն. չէ։ † Յոյն՝ զղոպայիւ՝

38 Յետ այսորիկ աղաչեաց զՊիղատոս Յովսէփ որ
ՀԱրիմաթեայ էր աշակերտ Յիսուսի՝ ի ծածուկ
վասն ահին Հրէից, զի բարձցէ զմարմինն Յիսուսի.
39 և հրամայեաց Պիղատոս. եկն և եբարձ զնա։ Եկն
և Նիկոդեմոս՝ որ եկեալն էր առ Յիսուս ի գիշերի
զառաջինն, և երեր զմուռս խառն ընդ Հալուէս
40 իրրեւ լետերս հարիւր։ Առին զմարմինն Յիսուսի,
և պատեցին կտաւովք ընկերովք հանդերձ, որպէս
41 օրէն էր Հրէից պատել։ Եւ էր ի տեղւոյն յորում
խաչեցաւ՝ պարտէզ. և ի պարտիզի անդ գերեզման
42 նոր, յորում ոչ ոք երբեք էր եդեալ։ Անդ վասն
ուրբաթուն Հրէից՝ զի մօտ էր գերեզմանն՝ եդին
զՅիսուս։

Գ Լ. Ի

1 Եւ ի միաշաբաթուոջն Մարիամ Մագդաղենացի
գայ առաւօտուն ընդ արշալոյսն ի գերեզման ան-
դրէ, և տեսանէ զվէմն բարձեալ ի դրաց գերեզ-
2 մանին։ Ապա ընթանայ և գայ առ Սիմոն Պետրոս
և առ միւս աշակերտն՝ զոր սիրէրն Յիսուս, և ա-
սէ ցնոսա, Բարձին զՏէրն ի գերեզմանէ անտի, և
3 ոչ գիտեմ ուր եդին զնա։ Եւ Պետրոս և միւս
4 աշակերտն և գային ի գերեզմանն։ Ընթանային
երկոքեան ի միասին, և միւս աշակերտն յառա-
ջեաց ընթացաւ վաղագոյն քան զՊետրոս և եկն
նախ ի գերեզմանն։ Եւ խոնարհեալ տեսանէ զի
կային անդ կտաւքն, բայց ի ներքս ոչ եմուտ։
6 Եկն և Սիմոն Պետրոս՝ որ գայրն զկնի նորա, և
եմուտ ի գերեզմանն, և տեսանէ զկտաւսն զի կա-

7 յին անդ. Եւ վաշխանակն որ էր ի գլուխ նորա,
ոչ ընդ այլ կտաւսն կայր, այլ ուրոյն ծալեալ ի
8 մի կողմն։ Յայնժամ եմուտ և միւս աշակերտն,
որ եկեալն էր յառաջագոյն ի գերեզմանն, եւտես
9 և հաւատաց. Զի չէր եւս գիտէին զգիրս Թէ Պարտ
10 է նմա ի մեռելոց յառնել։ Զոդան դարձեալ *առ
11 միմեանս աշակերտքն։ Բայց Մարիամ կայր ար-
տաքոյ գերեզմանին և լայր. և մինչդեռ լայր՝ խո-
12 նարհեցաւ ի գերեզմանն. Եւ տեսանէ երկուս հր-
եշտակս ի սպիտակս, զի նստէին մի ի մնարից և
13 մի յանոտից՝ ուր կայր մարմինն Յիսուսի։ Եւ նո-
քա ասեն ցնա, Կին դու, զի՞ լայս. ասէ ցնոսա,
Զի բարձին զՏէրն իմ †ի գերեզմանէ ասի՛, և ոչ
14 գիտեմ՝ ուր եդին զնա։ Զայս իրրեւ ասաց՝ դար-
ձաւ ի թիկունս կայս, և տեսանէ զՅիսուս զի կայր.
15 և ոչ գիտէր Թէ Յիսուս էջէ։ Ասէ ցնա Յիսուս,
Կին դու, զի՞ լայս, զո՞ խնդրես. Նմա այսպէս
Թուեցաւ Թէ պարտիզպանն էջէ, ասէ ցնա, Տէր,
եթէ դու բարձեր զնա՝ ասա ինձ ուր եդիր զնա,
16 զի ես առից զնա։ Ասէ ցնա Յիսուս, Մարիամ,
և նա դարձաւ և ասէ ցնա Եբրայեցերէն, Րա-
17 բունի, որ Թարգմանի վարդապետ։ Ասէ ցնա
Յիսուս, Մի մերձենար ինձ, զի չէր եւս ելեալ եմ
առ Հայր իմ. այլ երթ դու առ եղբարսն իմ, և
ասա ցնոսա, Ելանեմ ես առ Հայրն իմ և առ Հայր
18 ձեր, և Աստուածն իմ և Աստուած ձեր։ Գայ
Մարիամ Մագդաղենացի և պատմէ աշակերտացն
19 Եթէ տեսեալ նա զՏէր, և զայս ինչ ասաց ցնա։ Եւ

* Ի ցայն՝ ի տեղիս իւրեանց † Ի ցայն վե։

էր երեկոյ՝ ի միաշաբաթեաղ աւուրն, և դրօք փա-
կելովք ուր էին աշակերտքն Ժողովելոյ վասն ահին
Հրէից, եկն Յիսուս և եկաց ի միջի նոցա, և ասէ
20 ցնոսա, Ողջոյն ընդ ձեզ։ Իբրեւ զսոյս ասաց՝ եցոյց
նոցա զձեռսն և զկողն իւր. և խնդացին աշակերտքն
21 իբրեւ տեսին զՏէր։ Ասէ ցնոսա դարձեալ, Ողջոյն
ընդ ձեզ, որպէս առաքեաց զիս Հայր իմ, և ես
22 առաքեմ զձեզ։ Եւ զսոյս իբրեւ ասաց՝ փչեաց ի
23 նոսա և ասէ, Առէք Հոգի Սուրբ. եթէ ումեք
թողուցուք զմեղս՝ թողեալ լիցի նոցա. եթէ զու-
24 րուք ունիցիք՝ կալեալ լիցի։ Իսկ Թովմաս մի յեր-
կոտասանիցն անուանեալն Երկուորեակ ոչ էր ընդ
25 նոսա՝ յորժամ եկն Յիսուս։ Ասէին ցնա այլ ա-
շակերտքն, եթէ Տեսաք զՏէր. և նա ասէ ցնոսա,
եթէ ոչ տեսից ի ձեռս նորա զնշան բեւեռացն,
և արկից զմատունս իմ ի տեղիս բեւեռացն, և
մխեցից զձեռս իմ ի կողս նորա, ոչ Հաւատամ։
26 Եւ յետ ութ աւուր դարձեալ էին ի ներքս ա-
շակերտքն, և Թովմաս ընդ նոսա. գայ Յիսուս
դրօքն փակելովք և եկաց ի մէջ, և ասէ, Ողջոյն
27 ընդ ձեզ։ Ապա ասէ ցԹովմաս, Բեր զմատունս քո
և արկ այսր և տես զձեռս իմ, և բեր զձեռն քո
և մխեա ի կողս իմ, և մի լինիր անհաւատ, այլ
28 Հաւատացեալ։ Պատասխանի ետ Թովմաս և ասէ
29 ցնա, Տէր իմ և Աստուած իմ։ Ասէ ցնա Յիսուս,
Այդ զի տեսեր զիս և Հաւատացեր. երանի որոց
30 ոչ իցէ տեսեալ և Հաւատացեն։ Բազում և այլ
նշանս արար Յիսուս առաջի աշակերտաց իւրոց,
31 որ ոչ է գրեալ ի գիրս յայսմիկ։ Այլ *այս այն-

* Ի Յայն՝ այսոքիկ գրեցան,

չափ լինչ գրեցաւ,՚՚ զի Հաւատայցէք եթէ Յիսուս
Քրիստոս է Որդի Աստուծոյ. և զի Հաւատայցէք
և զկեանսն յաւիտենականս ընդունիցիք յանուն
նորա։

ԳԼ. ԻԱ

1 Յետ այսորիկ դարձեալ յայտնեաց զանձն իւր
Յիսուս աշակերտացն իւրոց առ ծովեզերբն Տիբե-
2 րեայ, և յայտնեաց այսպէս. Էին ի միասին Սի-
մոն Պետրոս, և Թովմաս անուանեալն Երկուորեակ
և Նաթանայէլ՝ որ ի Կանայ Գալիլեացւոց և որ-
դիքն Զեբեդեայ, և այլք յաշակերտաց անտի եր-
3 կու։ Ասէ ցնոսա Սիմոն Պետրոս, Երթամ ձուկն
որսալ. ասեն ցնա, Գամք և մեք ընդ քեզ. գնա-
ցին և մտին ի նաւ, և յայնմ դիշերի կալան և ո-
4 չինչ։ Իբրեւ այգ եղեւ՝ կայր Յիսուս յեզր ծովուն,
5 բայց ոչ ծանեան աշակերտքն թէ Յիսուս իցէ։ Ասէ
ցնոսա Յիսուս, Մանկունք, միթէ ունի՞ք լինչ ու-
տելոյ. պատասխանի ետուն և ասեն ցնա, Ոչ։
6 Ասէ ցնոսա, Արկէք յաջակողմն նաւին զուռկանդ
և գտանիցէք. արկին, և ոչ կարէին ձգել ի բազ-
7 մութենէ անտի ձկանցն։ Ասէ աշակերտն այն զոր
սիրէրն Յիսուս՝ ցՊետրոս, Տէր է այն. Սիմոն Պետ-
րոս իբրեւ լուաւ թէ Տէր է, արկաւ զիւրեւ զսփա-
ծանելին՝ քանզի մերկ էր, և ընկէց զինքն ի ծովն։
8 Եւ այլ աշակերտքն նաւուն իսկ գային, քանզի
չէին հեռի ի ցամաքէն, այլ իբրեւ երկերիւր կան-
9 գնաւ, քարշէին զդործն հանդերձ ձկամբքն։ Իբ-
րեւ ելին ի ցամաք, տեսանեն կրակեալ կայծա-

10 կանց և ձուկն մի ի վերոյ և հաց։ Ասէ ցնոսա
Յիսուս, Բերեք ի ձկանց այսմի՝ զոր դուք կալա-
11 րուք այժմիկ։ Եմուտ Սիմոն Պետրոս, և ձգէր
զգործին ի ցամաք լի մեծամեծ ձկամբք հարիւր
յիսուն և երիւք, և այնչափ ինչ կայր և ոչ պա-
12 տառեցաւ գործին։ Ասէ ցնոսա Յիսուս, Եկայք
ճաշակեցէք. և ոչ ոք յաշակերտացն իշխէր հար-
ցանել Թէ Դու ո՞վ ես, զի գիտէին Թէ Տէրն է։
13 Գայ Յիսուս և առնու զՀացն և տայ նոցա, նոյն-
14 պէս և զձուկնն։ Զայս երիցս անգամ երեւեցաւ
Յիսուս աշակերտացն՝ յարուցեալ ի մեռելոց։
15 Եւ իբրեւ ճաշեցին, ասէ ցՍիմոն Պետրոս Յի-
սուս, Սիմոն Յովհաննու, սիրե՞ս զիս առաւել քան
զդոսա. ասէ ցնա, Այո, Տէր, և դու գիտես զի
սիրեմ զքեզ. ասէ ցնա, Արածեա զգառինս իմ։
16 Դարձեալ ասէ ցնա, Սիմոն Յովհաննու, սիրե՞ս զիս.
ասէ ցնա, Այո, Տէր, և դու գիտես զի սիրեմ
17 զքեզ. ասէ ցնա, Արածեա զոչխարս իմ։ Ասէ ցնա
երիցս անգամ, Սիմոն Յովհաննու, սիրե՞ս զիս.
տրտմեցաւ Պետրոս, զի ասացն ցնա երիցս Թէ
Սիրե՞ս զիս. և ասէ ցնա, Տէր, դու ամենայն
գիտես, *և դու իսկ ամենայն ճանաչես, և՝ եթէ
սիրեմ զքեզ. ասէ ցնա Յիսուս, Արածեա զոչխարս
18 իմ։ Ամէն ամէն ասեմ քեզ՝ զի մինչ մանուկն էիր,
անձամբ անձին գօտի ածէիր և երթայիր յո և կա-
մէիր. և յորժամ ծերասցիս, ձեռս ի վեր կալցես,
և այլք ածցեն քեզ գօտի, և տարցեն՝ ուր ոչն
19 կամիցիս։ Զայս ասաց՝ նշանակեալ Թէ որով մա-

* Ի ցոյն՝ դու գիտես

հու փառաւորս առնիցէ զԱստուած. և զայս իբրեւ
20 ասաց, ասէ ցնա, Եկ զկնի իմ։ Դարձաւ Պետրոս
և տեսանէ զաշակերտն՝ զոր սիրէր Յիսուս, զի եր-
թայր զկնի, որ և անկաւ զլանջսն Նորա և ասէ,
21 Տէր, ո՞վ է որ մատնելոցն է զքեզ։ Զնա տեսեալ
22 Պետրոսի, ասէ ցՅիսուս, Տէր, իսկ սա զի՞։ Ասէ
ցնա Յիսուս, Եթէ կամիմ, զի կացցէ դա մինչեւ
23 ես գամ. քեզ զի՞ փոյթ է, դու եկ զկնի իմ։ Եւ
ել բանս այս յեղբարս՝ և համարեցան Թէ աշա-
կերտն այն ոչ մեռանիցի. *և ոչ ասաց նմա Յի-
սուս եթէ Ոչ մեռանիցի, այլ Թէ կամիմ ես Թէ
24 կացցէ դա՝ մինչեւ ես գամ։ Այս աշակերտ է որ
վկայէ վասն այսոցիկ, որ և գրեացն իսկ զայսոսիկ.
և գիտեմք եթէ ճշմարիտ է վկայութիւն Նորա։
25 Բայց է և այլ ինչ բազում զոր արար Յիսուս, զոր
եթէ գրեալ էր մի ըստ միոջէ, կարծեմ Թէ և ոչ
աշխարհս բաւական էր տանել զգիրսն՝ որ Թէ
գրեալ էին։

* Ի ցոյն՝ բայց

ԳՈՐԾՔ

Ա.Ռ.Ա.Ք.Ե.Լ.Ո.Ց

ԳԼ. Ա.

1 ԶԲԱՆՆ առաջին զոր արարի վասն ամենայնի, ո
Թեովփիլէ, զոր սկսաւ Յիսուս առնել և ուսուցա-
2 նել, Մինչեւ յօրն պատուիրելոյն առաքեալոցն †ի ձեռն
3 Հոգւոյն Սրբոյ, զորս ընտրեացն և վերացաւ։ Որոց
յանդիման կացոյց զինքն կենդանի յետ չարչարա-
նացն իւրոց †ի բազում *արուեստս՝ յաւուրս քա-
ռասուն երեւեալ նոցա, և ասել վասն արքայու-
4 թեանն Աստուծոյ։ Եւ †ի հաղորդել ընդ նոսա հա-
ցիւ, պատուէր տայր նոցա՝ Յերուսաղեմէ մի մեկ-
նել, այլ սպասել աւետեացն Հօր՝ զոր լուարուքն
5 յինէն։ Զի Յովհաննէս մկրտեաց †ի ջուր, այլ դուք
մկրտիցիք †ի Հոգին Սուրբ, ոչ յետ բազում* ինչ
6 աւուրցս այսոցիկ։ Եւ նոքա †մնաւուցեալ հարցա-
նէին զնա և ասէին, Տէր, եթէ †ի ժամանակի սմա
յայսմիկ հաստացանելո՞ց իցես զարքայութիւն Իս-
7 րայէլի։ Ասէ ցնոսա, Ոչ է ձեզ գիտել զժամս և
զժամանակս, զոր Հայր եդ յիւրում իշխանութեան.
8 Այլ առջիք զզօրութիւն †ի հաստանել Հոգւոյն Սրբոյ

* Ի Յոյն՝ ապացոյցս՝
† Ի Յոյն՝ մինչդեռ ժողովեալ էին՝

†ի վերայ ձեր. և եղիջիք ինձ վկայք Յերուսաղէմ
և յամենայն Հրէաստանի և †ի Սամարիա և մին-
9 չեւ †ի ծագս երկրի։ Եւ զայս իբրեւ ասաց, մինչ-
դեռ հայէին նոքա՝ վերացաւ. և ամպն կալաւ զնա
10 յաչաց նոցա։ Եւ մինչդեռ պղուցեալ էին ընդ եր-
կինն երթալոյ նորա, և ահաւասիկ արք երկու ե-
11 րեւեցան նոցա †ի հանդերձս սպիտակս, Որք և ասա-
ցին, Արք Գալիլեացիք, զի՞ կայք հայեցեալ ընդ
երկինս։ Այս Յիսուս որ վերացաւ †ի ձէնջ յեր-
կինս, այնպես եկեսցէ զոր օրինակ տեսէք զնա եր-
12 թալ յերկինս։ Ապա դարձան Յերուսաղէմ յա-
նուանեալ լեռնէն Ձիթենեաց, որ է մերձ Յերու-
13 սաղէմ ըստ շաբաթու ճանապարհի։ Եւ իբրեւ
մտին, ելին †ի վերնատունն ուր վանքն իսկ էին,
Պետրոս և Յակովբոս, Յովհաննէս և Անդրէաս,
Փիլիպպոս և Թովմաս, Բարթողիմէոս և Մատթէոս,
Յակովբոս Ալփեան և Շմաւոնն Նախանձայոյզ և
14 Յուդա Յակովբեան։ Սոքա ամենեքեան էին հանա-
պազորդեալ միաբան յաղօթս՝ հանդերձ կանանբք
և Մարեմամ մաւրբն Յիսուսի և եղբարբք նորա։
15 Եւ յաւուրսն յայնոսիկ յարուցեալ Պետրոս †ի
մէջ *եղբարցն՝ ասէ, և էր անդ բազմութիւն ա-
16 նուանց իբրեւ հարիւր և քսանից, Արք եղբարք,
պարտ էր կատարել գրոյն, զոր յառաջագոյն ասաց
Հոգին Սուրբ †ի բերանոյ Դաւթի վասն Յուդայի,
17 որ եղեւ առաջնորդ ունելեացն Յիսուսի. Զի †ի
թիւս մեր էր ընդ մեզ, և հասեալ էր նմա վիճակ
18 պաշտամանս այսորիկ։ Սա ստացաւ գեօղ †ի վար-

* Ի Յոյն՝ աշակերտացն՝

ձուց անիրաւութեան , և *ուրուագեալ հերձաւ ընդ
19 մէջ և հեղուս ամենայն փոր նորա ։ Եւ յայնմ
եղեւ ամենեցուն՝ որ բնակեալ են Յերուսաղէմ.
մինչեւ կոչել գեղջն այնմիկ բարբառովն իւրեանց
20 Ակեղդամայ , այսինքն է՝ Գեօղ արեան ։ Զի գր-
եալ է ի գիրս Սաղմոսաց , Եղիցի բնակութիւն
նորա աւերակ , և մի ոք իցէ որ բնակիցէ ի նմա .
21 և զկարգ նորա առցէ այլ ։ Արդ պարտ է յարանցս
յայսցանէ եկելոցս ընդ մեզ յամենայն ժամանակի ,
22 յորում եմուտ և ել առ մեզ Տէր Յիսուս , Սկը-
սեալ ի մկրտութենէն Յովհաննու մինչեւ յօրն՝
յորում վերացաւ ի մէնջ , վկայ յարութեան նո-
23 ցա ընդ մեզ լինել միում՝ ի սոցանէ ։ Եւ կացու-
ցին երկուս , զՅովսէփ՝ որում բարսաբայն կոչէին ,
24 որ անուանեցաւն Յուստոս , և զՄատաթիա ։ Եւ
կացեալ յաղօթս ասեն , Դու , Տէր , սրտագէտ
ամենայնի , յայտնեա զմի որ՝ զոր ընտրեցեր ի սո-
25 ցանէ յերկոցունց , Առնուլ զվիճակ պաշտամանս
այսորիկ և զառաքելութեան , յորմէ անկաւ Յու-
26 դաս գնալ ի տեղի իւր ։ Եւ ետուն վիճակս նոցա ,
և ելանէր վիճակն Մատաթիայ , և համարեցաւ
ընդ մեռեսան առաքեալսն ։

Գլ · Բ

1 Եւ ի կատարել աւուրցն Պենտեկոստէից էին
2 ամենեքեան միաբան ի միասին ։ Եւ եղեւ յանկար-
ծակի հնչիւն յերկնից՝ եկեալ իբրեւ սաստիկ հող-

* Ի ց՛՚՚՚՝ անկեալ գլխիվայր

3 մոյ , և ելից զամենայն տունն յորում նստէին ։ Եւ
երեւեցան նոցա բաժանեալ լեզուք իբրեւ ի հրոյ ,
4 և նստաւ իւրաքանչիւր ի վերայ նոցա ։ Եւ լցան
ամենեքեան Հոգւով Սրբով , և սկսան խօսել
յայլ լեզուս՝ որպէս և Հոգին տայր բարբառել
5 նոցա ։ Եւ էին Յերուսաղէմ բնակեալ Հրեայք՝
արք երկիւղածք՝ յամենայն ազգաց որ ի ներքոյ
6 երկնից ։ Եւ իբրեւ եղեւ բարբառս այս՝ եկն մի-
բան բազմութիւնն և *խռնեցաւ , զի լսէին յիւ-
7 րաքանչիւր լեզուս խօսել նոցա ։ Սքանչանային
ամենեքեան և զարմանային և ասէին ընդ միմեանս,
Ո՞չ աւասիկ ամենեքին սոքա որք խօսինն՝ Գալի-
8 լեացիք են . Եւ զիա՞րդ լսեմք մեք իւրաքանչիւր
9 բարբառս մեր՝ յորում ծնեալ եմք ։ Պարթեւք և
Մարք և Իլամացիք և որ բնակեալ են ի Միջա-
գետս , ի Հրէաստանի և ի Գամիրս , ի Պոնտոս և
10 Ասիա , ի Փռիւգիա և ի Պամփիւլիա , Եգիպ-
տոս և ի կողմանս Լիբէացւոց որ ընդ Կիւրենա-
11 յիս և որ եկք Հռովմայեցիք . Հրեայք և եկք նո-
ցունն , Կրետացիք և Արաբացիք՝ լսեմք խօսիլ նոցա
12 ի մեր լեզուս զմեծամեծս Աստուծոյ ։ Սքանչանա-
յին ամենեքեան †զարմացեալք , և ասէին ցմի-
13 մեանս , Զի՞նչ կամիցի այս լինել ։ Եւ կիսոցն ընդ
խաղ արկեալ ասէին Թէ Քաղցուալից իցեն ։
14 Յարուցեալ Պետրոս հանդերձ մեռեսանիւքն՝
ամբարձ զձայն իւր և խօսեցաւ ընդ նոսա , Արք
Հրէաստանեայք՝ և որ բնակեալ էք Յերուսաղէմ

* Ի ց՛՚՚՚՝ խռովեցաւ ,

† Ի ց՛՚՚՚՝ տարակուսեալք

ամենեքեան , այս ձեզ յայտնի լիցի , և ունկն դիք
15 բանից իմոց . Ոչ որպէս դուքդ կարծէք թէ սոքա
արբեալ իցեն , զի դեռ երեք ժամք են աւուրս ։
16 Ա՛յլ այս է որ ասացաւ ՚ի ձեռն մարգարէին Յո-
17 վէլեայ . Եւ եղիցի յետ այսորիկ յաւուրս յետինս ,
ասէ Աստուած , հեղից ՀՈԳւոյ իմմէ ՚ի վերայ ամե-
նայն մարմնոյ , և մարգարէասցին ուստերք ձեր և
դստերք ձեր , և երիտասարդք ձեր տեսիլս տես-
18 ցեն , և ծերք ձեր երազովք երազեսցին ։ Եւ ՚ի վե-
րայ ծառայից իմոց և ՚ի վերայ աղախնայց իմոց
յաւուրս յայնոսիկ հեղից ՀՈԳւոյ իմմէ , և մարգա-
19 րէասցին ։ Եւ տաց նշանս յերկինս ՚ի վեր , և
նշանս յերկիր ՚ի խոնարհ՝ արիւն և հուր և մրրիկ
20 ծխոյ ։ Արեգակն դարձցի ՚ի խաւար , և լուսին՝ յա-
րիւն , մինչչեւ եկեալ իցէ օր Տեառն մեծ և երե-
21 ւելի ։ Եւ եղիցի ամենայն որ կարդասցէ զանուն
Տեառն՝ կեցցէ ։
22 Արք Իսրայէլացիք , լուարուք զբանս զայսոսիկ .
զՅիսուս Նազովրեցի՝ զայր յուցեալ Աստուծոյ *՚ի
ձեզ զօրութեամբ և նշանօք և արուեստիւք , զոր
արար նովաւ Աստուած ՚ի միջի ձերում , որպէս և
23 դուք իսկ գիտէք . Զնա *նկատեալ խորհրդով՝ և
կանխագիտութեամբն †Աստուծոյ , մատնեալ ՚ի
ձեռս՝՝ անօրինաց բեւեռեալ ՚ի փայտ սպանէք .
24 Զոր Աստուած յարոյց՝ լուծեալ զերկունս մահու ,
25 քանզի ոչ էր հնար բռնուրնել նմա ՚ի նմանէ ։ Դա-
ւիթ իսկ ասէ զնմանէ , Յառաջագոյն տեսանէի

* Ի Յոյն. խորհրդոյն որոշելով

† Ի Յոյն՝ Աստուծոյ մատնեալ՝ առեալք և ՚ի ձեռն

զՏէր առաջի իմ յամենայն ժամ , զի ընդ աջմէ
26 իմմէ է , զի մի սասանեցայց . Վասն այսորիկ ու-
րախ եղեւ սիրտ իմ , և ցնծացաւ լեզու իմ , եւս
27 և մարմին իմ բնակեսցէ յուսով ։ Զի ոչ թողցես
զանձն իմ ՚ի դժոխս , և ոչ տացես Սրբոյ քումմ
28 տեսանել զապականութիւն ։ Ծանուցեր ինձ ճշմա-
րտապարշս կենաց . լցուցեր զիս ուրախութեամբ ե-
29 րեսաց քոց *՚ի քաղցրութենէն ։ Արք եղբարք ,
պարտ է համարձակութեամբ ասել վասն նահա-
պետին Դաւթի , զի մեռաւ և թաղեցաւ , և գե-
բեզմանն նորա կայ ՚ի մէջի մերում մինչեւ ցայսօր ։
30 Զի մարգարէ էր , և գիտէր երդմամբ եր-
դուաւ նմա Աստուած ՚ի պաղղ †որովայնի նորա
31 նստուցանել՝ յաթոռ նորա ։ Յառաջագոյն ծա-
նուցեալ խօսեցաւ վասն յարութեանն Քրիստոսի ,
զի ոչ թողաւ ոգի նորա ՚ի դժոխս՝ և ոչ մարմին
32 նորա հետես զապականութիւն ։ Զայս Յիսուս յա-
րոյց Աստուած , որումամենեքեան մեք վկայեմք ։
33 Աջմէն Աստուծոյ բարձրացեալ , զաւետիս Հոգւոյն
Սրբոյ ընկալեալ ՚ի Հօրէ՝ սփռեաց զայս , զոր դուք
34 իսկ տեսանէք և լսէք ։ Զի ոչ եթէ Դաւիթ եւ յեր-
կինս , ասէ իսկ ինքն , Ասաց Տէր յՏէր իմ , Նիստ
35 ընդ աջմէ իմմէ՝ Մինչեւ եդից զթշնամիս քո պա-
36 տուանդան ոտից քոց ։ Արդ ճշմարտիւ գիտասցէ
ամենայն տունն Իսրայէլի , զի և Տէր զնա և Օծեալ՝
Աստուած արար , զայն Յիսուս զոր դուքն խաչե-

* Ի Յոյն. էից ։

† Ի Յոյն՝ երիկամանց նորա ըստ մարմնոյ յարու-
ցանել զՔրիստոս նստիլ

37 ցեք ։ Եւ լուեալ զայս՝ զղջացան ի սիրտս իւրեանց ,
և ասեն ցՊետրոս և ցայլ առաքեալսն , Զի՞նչ
38 գործեսցուք , արք եղբարք ։ Ասէ ցնոսա Պետրոս ,
Ապաշաւեցէք՝ և մկրտեսցի իւրաքանչիւր ոք ի ձէնջ
յանուն *Տեառն Յիսուսի Քրիստոսի ի թողութիւն
39 մեղաց , և ընկալջիք զաւետիս Հոգւոյն Սրբոյ . Զի
ձեզ են աւետիքս և որդւոց ձերոց , և ամենայն
40 հեռաւորաց՝ զորս կոչեսցէ Տէր Աստուած մեր ։ Եւ
այլովք բազմիւք բազմօք վկայութիւն դնէր , և մխի-
թարէր զնոսա և ասէր , Ապրեցարուք յազգէ աս-
41 տի խոտորելոյ յայմանէ ։ Ոմանց յօժարութեամբ
ընկալեալ զբան նորա մկրտեցան , և յաւելան յա-
ւուրսն յայնմիկ ոգիք իբրեւ երեք հազարք ։
42 Եւ էին հանապազորդեալք վարդապետութեան
առաքելոցն և հաղորդութեան և բեկանելոյ հա-
43 ցին և աղօթից ։ Եւ լինէր ամենայն անձին ահ և
երկիւղ , բազում նշանք և արուեստք ի ձեռս ա-
44 ռաքելոցն գործէին ։ Ամենայն հաւատացեալքն էին
ի միասին , և ունէին զամենայն ինչ հասարակաց ։
45 Եւ զստացուածս և զինչս վաճառէին , և բաշխէին
զայն ամենեցուն՝ ուր զիարդ պէտ էր ինչ լինէր ։
46 Հանապազօր կանխեալ միաբանութեամբ ի տա-
ճարն , և առանին բեկանէին զհացն , և առնուին
կերակուր ուրախութեամբ և միամտութեամբ սրտի.
47 Օրհնէին զԱստուած և ունէին շնորհս առ ամենայն
ժողովուրդն . և Տէր յաւելոյր †ի փրկեալսն հանա-
պազօր ի նոյն ։՚՚

---

* Ի ՅՈՒՆ ԼԲ ։

† Ի ՅՈՒՆ՝ զփրկեալսն հանապազօր յեկեղեցին ։

ԳԼ· Գ

1 Պետրոս և Յովհաննէս ելանէին ի տաճար անդր
2 յիններորդ ժամու աղօթիցն ։ Եւ էր այր մի կաղ
յորովայնէ մօր իւրոյ՝ զոր բարձեալ գնէին հանա-
պազ առ դրան տաճարին , որ կոչէր Գեղեցիկ ,
խնդրել ողորմութիւն յայնցանէ՝ որ մտանէին ի
3 տաճարն ։ Որոյ տեսեալ զՊետրոս և զՅովհաննէս
զի մտանէին ի տաճարն , աղաչէր ողորմութիւն
4 առնուլ ։ Հայեցաւ ի նա Պետրոս Յովհաննու հան-
5 դերձ և ասէ , Հայեաց ի մեզ ։ Նա դարձաւ ի նո-
6 սա և ակն ունէր առնուլ ինչ ի նոցանէ ։ Եւ ասէ
Պետրոս , Արծաթ և ոսկի ոչ ունիմ , բայց զոր ու-
նիմ՝ զայս տաց քեզ . յանուն Յիսուսի Քրիստոսի
7 Նազովրեցւոյ արի և գնա ։ Եւ կալեալ զաջոյ ձե-
ռանէ նորա՝ յարոյց զնա . և անդէն հաստատեցան
8 *բարձք նորա և սրունք ։՚՚ Ի վեր վազեաց և սկսաւ
գնալ , և եմուտ ընդ նոսա ի տաճարն , գնայր և
9 վազվազէր և օրհնէր զԱստուած ։ Եւ տեսս ամե-
նայն ժողովուրդն զնա , զի գնայր և օրհնէր զԱս-
10 տուած . Եւ գիտէին զնա զի սա էր , որ նստէր
վասն ողորմութեան առ Գեղեցիկ դրան տաճարին ,
և լցան զարմանալեօք ի վերայ նշանին որ եղեւ ։
11 Եւ մինչ նա ունէր զՊետրոս և զՅովհաննէս , ընդ-
թացաւ ամենայն ժողովուրդն առ նոսա ի սրահն
12 որ կոչէր Սողոմոնի՝ զարմացեալք ։ Իբրեւ տեսս
Պետրոս՝ պատասխանի ետ ժողովրդեանն , Արք Իս-

---

* Ի ՅՈՒՆ՝ Թաթք ոտից նորա և կոճք ·

բայէլացիք , զի՞ զարմացեալ էք ՚ի վերայ այսորիկ՝
կամ ընդ մեզ զի՞ էք պշուցեալ , իբրու թէ անձին
զօրութեամբ ինչ կամ *քաջութեամբ արարեալ
13 իցէ գնալդ դմա ։ Աստուած Աբրահամու և Աս-
տուած Իսահակայ և Աստուած Յակովբայ , Աս-
տուած հարցն մերոց փառաւորեաց զՈրդի իւր զՅի-
սուս , զոր դուքն մատնեցէք և ուրացայք առաջի
14 Պիղատոսի , ՚ի դատել նորա արձակել ։ Եւ դուք
զՍուրբն և զԱրդարն ուրացայք և խնդրեցէք այր
15 մի †մահապարտ շնորհել ձեզ ։ Եւ զառաջնորդ կեա-
նացն սպանէք , զոր Աստուած յարոյց ՚ի մեռելոց,
16 որոյ մեք իսկ վկայեմք ։ Եւ հաւատովք անուան
նորա զսա զոր տեսանէք և գիտէք՝ հաստատեաց
անուն նորա . և հաւատքն որ նովաւ՝ ետուն դմա
զառողջութիւնս զայս յանդիման ձեր ամենեցուն։
17 Եւ արդ , եղբարք , գիտեմ զի անգիտութեամբ ա-
18 րարէք՝ որպէս և իշխանքն ձեր ։ Այլ Աստուած որ-
պէս յառաջագոյն պատմեաց ՚ի բերանոյ ամենայն
մարգարէից զչարչարելն Քրիստոսի իւրոյ՝ նոյնպէս
19 և կատարեաց ։ Արդ ապաշաւեցէք և դարձարուք
20 ՚ի ջնջել զմեղս ձեր . Որպէս զի եկեսցեն ժամանակք
հանգստեան յերեսաց Տեառն , և առաքեսցէ զյա-
21 ռաջագոյն ‡նկատեալն ձեզ՝ զՅիսուս Քրիստոս ։ Զոր
պարտ է երկնից ընդունել մինչեւ ՚ի ժամանակս
ամենեցուն հաստատելոյ . զորոց §խօսեցաւ Աս-
22 տուած ՚ի բերանոյ սրբոց մարգարէից ։ Մովսէս

* Ի ցոյն՝ բարեպաշտութեամբ
† Ի ցոյն՝ ապանող ‡ Ի ցոյն՝ քարոզեալն
§ Ի ցոյն՝ ՚ի սկզբանէ հետէ խօսեցաւ

ասաց ցՀարսն մեր թէ Մարգարէ յարուսցէ ձեզ
Տէր Աստուած ձեր յեղբարց ձերոց իբրեւ զիս, նմա
լուիջիք ըստ ամենայնի , որ զինչ և խօսեսցի առ
23 ձեզ ։ Եւ եղիցի ամենայն անձն՝ որ ոչ լուիցէ մար-
24 գարէին այնմիկ՝ սատակեսցի ՚ի ժողովրդենէն ։ Եւ
ամենայն մարգարէք որ ՚ի Սամուէլէ և այսր խօսե-
25 ցան , և պատմեցին զաւուրս զայսոսիկ ։ Դուք էք
որդիք մարգարէիցն և ուխտին , զոր ուխտեաց Աս-
տուած ընդ հարսն ձեր, և ասէ ցԱբրահամ՝. Ի զա-
26 ւակի քումմ օրհնեսցին ամենայն ազգք երկրի ։ Զեզ
նախ յարոյց Աստուած զՈրդի իւր և առաքեաց
զնա օրհնել զձեզ՝ ՚ի դառնալ ձեզ իւրաքանչիւր
՚ի չարեաց ձերոց ։

Գլ. Դ

1 Եւ մինչդեռ խօսէին նոքա ընդ ժողովրդեանն ,
հասին ՚ի վերայ նոցա քահանայապետքն և իշխանք
2 տաճարին և սադուկեցիքն , Զայրագնեալք վասն
ուսուցանելոյ նոցա զժողովուրդն և պատմելոյ Յի-
3 սուսիս զյարութիւն մեռելոց ։ Մխեցին ՚ի նոսա ըղ-
ձեռս իւրեանց , և եդին զնոսա ՚ի բանտի մինչեւ
4 ՚ի վաղիւն , զի էր ընդ երեկս ։ Իսկ բազումք ՚ի լսո-
ղաց բանին հաւատացին , և եղեւ թիւ մարդկան
5 իբրեւ հազարաց հնգից ։ Եւ եղեւ ՚ի վաղիւ անդր
ժողովել նոցա զիշխանսն և զերիցունս և զդպիրսն
6 Յերուսաղէմ, Եւ զԱննա քահանայապետ և զկա-
յիափա և զՅովհաննէս և զԱղեքսանդրոս , և որք
7 միանգամ էին յազգէ *քահանայութեան ։ Եւ կա-

* Ի ցոյն՝ քահանայապետութեան ։

ցուցեալ զնոսա ի մէջ՝ հարցանէին, Որո՞վ զօրութեամբ կամ որո՞վ անուամբ արարէք դուք զայս։
8 Յայնժամ Պետրոս լցեալ Հոգւով Սրբով ասէ ցնոսա, Իշխանք ժողովրդեան և երիցունք Իսրայէլի,
9 Եթէ *արժա՞ն ինչ իցէ դատել զմեզ՝ այսօր վասն երախտեաց առն միոյ տկարի, որով սա բժշկեցաւ,
10 Յայտնի լիցի ամենեցուն ձեզ և ամենայն ժողովրդեանդ Իսրայէլի, զի յանուն Յիսուսի Քրիստոսի Նազովրեցւոյ՝ զոր դուքն խաչեցէք, զոր Աստուած յարոյց ի մեռելոց, նովաւ սա կայ առաջի առա-
11 ջի ձեր ողջացեալ։ Նա է վէմն անարգեալ ի ձէնջ
12 շինողաց, որ եղեւ գլուխ անկեան. Եւ չիք այլով իւիք փրկութիւն, զի և ոչ անուն այլ գոյ ի ներքոյ երկնից տուեալ ի մարդիկ՝ որով արժան իցէ կեալ մեզ։
13 Հայեցեալ ի համարձակութիւնն Պետրոսի և Յովհաննու, և ի վերայ հասեալ թէ արք տգէտք և առանց դպրութեան են՝ զարմանային, զի ճա-
14 նաչէին զնոսա թէ ընդ Յիսուսի էին. Եւ զայրն եւս տեսանէին զբժշկեալն՝ զի կայր ընդ նոսա, և
15 ոչինչ կարէին տալ պատասխանի։ Եւ հրամայեալ նոցա արտաքս քան զատեանն ելանել, խորհէցան
16 ընդ միմեանս, Եւ ասեն, Զի՞նչ արասցուք արանցս այսոցիկ՝ զի երեւելի նշան եղեւ ի ձեռն նոցա, ամենայն իսկ բնակչաց Երուսաղէմի յայտ է և ոչ
17 կարեմք ուրանալ։ Այլ զի մի՛ առաւել ճարակեսցի ի ժողովրդեան, սպառնասցուք նոցա՝ մի՛ եւս
18 խօսել յանունն յայն մի՛ ումեք ի մարդկանէ։ Եւ

* Ի ՅՈՒՆ՝ դատիցիմք

կոչեցեալ զնոսա պատուիրեցին ամենեւին մի՛ խո-
19 սել և մի՛ ուսուցանել յանուն Յիսուսի։ Իսկ Պետրոս և Յովհաննէս պատասխանի ետուն և ասեն
ցնոսա, Եթէ արժան իցէ առաջի Աստուծոյ՝ ձեզ
20 լսել առաւել քան Աստուծոյ, ընտրեցէք։ Այլ մեք ոչ կարեմք՝ զոր տեսաքն և լսեաք՝ չխօսել։
21 Նոքա սպառնացեալ արձակեցին զնոսա, և ոչինչ գտեալ թէ որպէս պատուհասեսցեն զնոսա՝ վասն ժողովրդեանն, զի ամենեքեան փառաւոր առնէին
22 զԱստուած վասն իրացն եղելոց։ Զի ամաց էր այրն աւելի քան զքառասուն, յորոյ վերայ եղեւ նշանս
23 այս բժշկութեան։ Եւ անտի արձակեալ եկին առ իւրեանցն, և պատմեցին որչափ ինչ ասացին ցնոսա
24 քահանայապետքն և երիցունքն։ Եւ նոցա լուեալ *ամբարձին զձայնս իւրեանց առ Աստուած և ասեն,
Դու, Տէր Աստուած, որ արարեր զերկինս և զեր-
25 կիր և զծով և զամենայն որ ի նոսա, Որ ի բերանոյ †հօր մերոյ՝ Դաւթի ծառայի քո՝ †ի ձեռն Հոգւոյն Սրբոյ՝ ասացեր, Զի՞ խռովեցան հեթա-
26 նոսք, և ժողովուրդք խորհեցան ի սնոտիս. Յանդիման եղեն թագաւորք երկրի և իշխանք ժողովեցան ի միասին ‡վասն Տեառն և ‡վասն Օծելոյ նո-
27 ա։ Ժողովեցան արդարեւ ի քաղաքիս յայսմիկ ի վերայ սրբոյ Որդւոյ քո Յիսուսի՝ զոր օծեր՝ Հերովդէս և Պոնտոս Պիղատոս ազգօք և ժողովրդովք
28 Իսրայէլի, Առնել որչափ ձեռն քո և կամք յա-
29 ռաջագոյն սահմանեցին լինել։ Եւ արդ, Տէր, հա-

* Ի ՅՈՒՆ՝ միաբան ամբարձին
† Ի ՅՈՒՆ՝ ՀՒՒ։ ‡ Ի ՅՈՒՆ՝ ընդդէմ

յետոյ ի սպառնալիս նոցա, և տուր ծառայից քոց
ամենայն համարձակութեամբ խօսել զբանն քո.
30 ի ձգել զձեռն քո ի բժշկութիւն, և նշանս և
արուեստս լինել անուամբն սրբոյ Որդւոյ քո Յի-
31 սուսի։ Եւ մինչ կային նոքա յաղօթս՝ շարժեցաւ
տեղին յորում էին ժողովեալ, և լցան ամենեքին
Հոգւով Սրբով, և խօսէին զբանն Աստուծոյ հա-
մարձակութեամբ։

32 Եւ բազմութեան հաւատացելոցն էր սիրտ և ան-
ձն մի. և ոչ ոք ի նոցանէ ասէր զընչից իւրոց թէ
իւր իցէ, այլ էր նոցա ամենայն ինչ հասարակաց։
33 Եւ զօրութեամբ բազմաւ տային վկայութիւն ա-
ռաքեալքն զյարութեան Տեառն Յիսուսի *Քրիս-
տոսի. և շնորհք մեծամեծք էին ի վերայ ամենե-
34 ցուն նոցա։ Եւ ոչ ոք կարօտէր ի նոսա, զի որ
միանգամ տեարքն էին գեղից կամ ապարանից՝
35 վաճառէին և բերէին զգինս վաճառելոցն, դնէին
առ ոտս առաքելոցն. և բաշխէին իւրաքանչիւր՝
36 որպէս ուժք պիտոյ ինչ լինէր։ †Յովսէփ որ կոչե-
ցաւն Բառնաբաս յառաքելոց անուն, որ թարգ-
մանի որդի մխիթարութեան, Ղեւտացի, յազգէ
37 կիպրացի, էր նորա դիւղ, վաճառեաց և եբեր
զդինն՝ եդ առ ոտս առաքելոցն։

Գլ. Ե

1 Իսկ այր մի Անանիա անուն հանդերձ կնաւ իւ-
2 րով Սափիրաւ վաճառեաց ‡ագարակ. և խորհաց

* Ի յայլ էր։ † Ի յայլ՝ Յովսէս
‡ Ի յայլ՝ կալուածս ինչ.

ի գնոց անտի՝ դիտելով և կնոջն, և եբեր մաս
3 մինչ եդ առ ոտս առաքելոցն։ Ասէ Պետրոս, Ա-
նանիա, ընդէ՞ր ելից Սատանայ զսիրտ քո՝ ստել քեզ
4 Հոգւոյն Սրբոյ, և խորհել ի գնոց դեղջն. Ո՞չ ա-
պաքէն մինչ կայրն՝ քո էր, և ի վաճառելն ընդ
քո իշխանութեամբ էր. զի՞ է զի եդիր ի սրտի
քում զբրս զայս. ոչ ստեցեր մարդկան, այլ Ա-
5 ստուծոյ։ Եւ լուեալ Անանիա զբանս զայսոսիկ՝ ան-
կաւ և եհան զոգի. և եղեւ ահ մեծ ի վերայ ա-
6 մենեցուն՝ որ լսեանն զայն։ Յոտն կացին երիտա-
սարդքն և ամփոփեցին զնա, և տարան թաղեցին։
7 Եւ եղեւ իբրեւ ժամք երեք անցին, և կին նորա
8 ոչ գիտեր զինչ եղեալն էր, եմուտ ի ներքս։ Պա-
տասխանի ետ նմա Պետրոս և ասէ, Ասա դու ինձ
թէ այո՞ չափ գնոց զգեօղն վաճառեցէք. և նա ասէ,
9 Այո, այնչափ։ Եւ ասէ ցնա Պետրոս, Զի՞ է զի
միաբանեցէք դուք փորձել զՀոգին Տեառն. ահա
ոտքն որ թաղեցին զայրն քո ի դրանն՝ հանցեն և
10 զքեզ։ Եւ անկաւ անդէն առ ոտս նորա և եհան
զոգի. մտին երիտասարդքն, գտին զնա մեռեալ
11 և հանին թաղեցին առ առն իւրում։ Եւ եղեւ
երկիւղ մեծ ի վերայ ամենայն եկեղեցւոյն, և ի
վերայ ամենեցուն որ լսեան զայս։

12 Եւ ի ձեռս առաքելոց լինէին նշանք և արուեստք
բազումք ի ժողովրդեանն. և էին միաբան ամե-
13 նեքեան ի սրահսին Սողոմոնի։ Եւ յայլոց անտի
ոչ ոք իշխէր մերձենալ առ նոսա, այլ յարգէր
14 զնոսա ժողովուրդն։ Եւ առաւել եւս յաւելուին
հաւատացեալքն ի Տէր, բազմութիւն արանց և
15 կանանց. Մինչեւ ի հրապարակն հանել զհիւանդս,

և դնել պատգարակօք և մահճօք իւրեանց . զի ընդ
անցանելն Պետրոսի՝ գոնէ հովանի նորա հասցէ ու-
16 մեք ի նոցանէ : Եւ ժողովէր բազմութիւն շուրջ
ի քաղաքաց անտի Յերուսաղէմ , բերելին զհիւանդս
և զնեղեալս յայսոց պղծոց , որք և բժշկիէին ամե-
17 նեքեան : Յարուցեալ քահանայապետն և ամենե-
քին որ ընդ նմա *և աղանդ սադուկեցւոց , լցան
18 նախանձու : Եւ արկին զձեռս յառաքեալսն և եդին
19 զնոսա †հրապարակաւ ի բանտի :՝՝ Ապա հրեշտակ
Տեառն գիշերի երից դրունս բանտին , և հանեալ
20 զնոսա՝ ասէ , Գնացէք կացէք ի տաճարին , և խո-
սեցարուք ընդ ժողովրդեանն զամենայն պատգամն
21 կենացս այսոցիկ : Եւ իբրեւ լուան՝ մտին ընդ ա-
ւաւօտն ի տաճարն և ուսուցանէին : Եկն քահա-
նայապետն և որ ընդ նմա , կոչեցին միաբան զա-
տեանն և զամենայն ծերակոյտ որդւոցն Իսրայէլի ,
22 և առաքեցին ի բանտն ածել զնոսա : Եւ իբրեւ
եկին սպասաւորքն՝ ոչ գտին զնոսա ի բանտին .
23 դարձեալ անդրէն պատմեցին , Եւ ասեն Թէ Զբան-
տըն գտաք փակեալ ամենայն ղգուշութեամբ , և
զպահապանսն՝ զի կային առ դրանն , բացաք և ի
24 ներքս զոչ գտաք : Իբրեւ լուան զբանս զայս ‡քա-
հանք տաճարին և քահանայապետքն՝ հիանային
25 վասն նոցա , Թէ զի՞նչ արդեօք լինիցի այն : Եւ
եկն ոմն պատմեաց նոցա Թէ Ահա արքն՝ զորս ե-
դիք ի բանտի՝ կան ի տաճարին , և ուսուցանեն

* Ի Յայնս՝ որք էին
† Ի Յայնս՝ ի հասարակաց բանտի ,
‡ Ի Յայնս՝ քահանայն և իշխանք

26 զժողովուրդն : Յայնժամ երթեալ իշխանն սպա-
սաւորաւքն ՚հանդերձ՝ ած զնոսա ոչ բռնութեամբ ,
քանզի երկնչէին ի ժողովրդենէն զի մի քարկոծես-
27 ցին : Եւ ածեալ զնոսա՝ կացուցին յատենի . Հարց
28 ցնոսա քահանայապետն Եւ ասէ , Ո՞չ պատուիրե-
լով պատուիրեցաք ձեզ՝ մի ուսուցանել յանունն
Յայն . և արդ ահաւասիկ լցեք զԵրուսաղէմ ուս-
մամբ ձերով , և կամիք ածել ի վերայ մեր զա-
29 րիւն զառն զայնորիկ : Պատասխանի ետ Պետրոս
և այլ առաքեալքն և ասեն , Չնազանդել պարտ
30 է Աստուծոյ առաւել քան մարդկան : Աստուած
հարցն մերոց յարոյց զՅիսուս՝ զոր դուք սպանէք
31 կախեալ զփայտ : Զնա Աստուած առաջնորդ և
փրկիչ բարձրացոյց աջովն իւրով տալ ապաշխարու-
32 թիւն Իսրայէլի՝ և թողութիւն մեղաց : Եւ մեք եմք
վկայք բանիցս այսոցիկ , և Հոգին Սուրբ՝ զոր ետ
33 Աստուած հնազանդելոց իւրոց : Եւ նոքա իբրեւ
լուան , առատանային և խորհէին սպանանել զնոսա :
34 Յարուցեալ ոմն ի մէջ ատենին փարիսեցի՝ որում
անուն էր Գամաղիէլ , օրէնուսոյց , պատուական
ամենայն ժողովրդեանն , հրամայեաց սակաւիկ մի
35 *զարան արտաքս առնել : Եւ ասէ ցնոսա , Արք Իս-
րայէլացիք , Հայեցարուք ի ձեզ վասն արանցս այ-
36 սոցիկ՝ զինչ արժան իցէ գործել : Յառաջ քան զա-
ւուրս զայսոսիկ յարեաւ Թեւդաս ասել զանձն ,
Թէ իցէ ոմն . յոր անկան արք Թուով իբրեւ չորեք-
հարիւր , որ սպանաւ , և ամենեքեան որ †մխրան

* Ի Յայնս՝ զառաքեալսն
† Ի Յայնս՝ հնազանդէին նմա՝

37 էին ընդ նմա՝ քակտեցան և եղեն յոչինչ։ Յետ նո-
րա յարեաւ Յուդա Գալիլեացի յաւուրս աշխար-
հագրին, և ապստամբեցոյց ժողովուրդ բազում
զկնի իւր. և նա կորեաւ, և ամենեքեան որ նմին
38 հաւանեալ էին՝ ցրուեցան։ Եւ զարդիս ասեմ
ձեզ, ի բաց կացէք յայրանցդ այդոցանէ և թոյլ
տուք դոցա, զի թէ ի մարդկանէ իցէ խորհուրդդ
39 այդ կամ գործդ՝ քակտեսցի. Ապա թէ Աստուա-
ծոյ է՝ ոչ կարէք քակտել զդոսա, գուցէ և աս-
40 տուածամարտք գտանիցիք։ Հաւանեցան նմա, և
կոչեցեալ զառաքեալսն՝ գան հարին, և պատուի-
րեցին մի եւս խօսել յանուն Յիսուսի, և արձա-
41 կեցին զնոսա։ Եւ նոքա գնացին խնդալով յերե-
սաց առնին, զի վասն անուան Տեառն արժանի
42 եղեն անարգելոյ։ Եւ զամենայն օր ի տաճարին և
առանձին ոչ դադարէին ուսուցանել և աւետարա-
նել զՅիսուս Քրիստոս։

ԳԼ. Զ

1 Եւ յաւուրսն յայնոսիկ ի բազմանալ աշակեր-
տացն, եղեւ տրտունջ Յունաց առ Հերբայեցիսն,
զի արհամարհեալ լինէին ի պաշտամանն հանապա-
2 զորդ օրիք նոցա։ Կոչեցին երկոտասանքն զբազ-
մութիւն աշակերտացն և ասեն, Ոչ է հաճոյ մեզ
3 թողուլ զբանն Աստուծոյ և պաշտել զսեղանս։ Ըն-
տրեցէք, եղբարք, վկայեալս ի ձէնջ արս եօթն,
[լի Հոգւով Սրբով և իմաստութեամբ,] զորս կա-
4 ցուսցուք ի վերայ պիտոյիցս այսոցիկ. Եւ մեք ա-

զօթից և պաշտամանն *և բանին հպատակ լինցուք։
5 Եւ հաճոյ թուեցաւ բանն առաջի ամենայն բազ-
մութեանն. և ընտրեցին զՍտեփանոս՝ այր լի հա-
ւատով և Հոգւով Սրբով, և զՓիլիպպոս և զՊրո-
քորն և զՆիկանովրա և զՏիմովնա և զՊարմենաս և
6 զՆիկողայոս զկին Անտիոքացի. Զորս կացուցին ա-
ռաջի առաքելոցն, և աղօթս արարեալ՝ եդին ի
7 վերայ նոցա զձեռս։ Եւ բանն Աստուծոյ աճէր, և
բազմանայր թիւ աշակերտացն յոյժ յԵրուսա-
ղէմ. և բազում ժողովք ի քահանայիցն անսային
հաւատոցն։
8 Ստեփանոս՝ այր լի շնորհօք և զօրութեամբ, առ-
նէր արուեստս և նշանս մեծամեծս ի ժողովրդեանն։
9 Յարեան ոմանք ի ժողովրդենէն, որ կոչէր Լիբեա-
ցւոց և Կիւրենացւոց և Աղէքսանդրացւոց՝ և որ
ի Լիւղիկեցւոց և Ասիա, վիճել ընդ Ստեփանո-
10 սի. Եւ ոչ կարէին զդէմ ուռնել զիմաստութեանն
11 և զՀոգւոյն՝ որով խօսէր։ Յայնժամ հրապուրե-
ցին արս ոմանս ասել թէ Լուաք զդորա խօսել
բանս հայհոյութեան ի Մովսէս և Աստուած։
12 Եւ խռովեցին զժողովուրդն և զերիցունս և զդպիրսն.
եհասեալ ի վերայ՝ յափշտակեցին զնա և ածին
13 յատեան։ Եւ կացուցին վկայս սուտս որ ասէին,
Այրս այս ոչ դադարէ խօսել բանս հայհոյութեան
14 զտեղւոյն սրբոյ և զօրինացն։ Լուաք ի դմանէ զի
ասէր թէ Յիսուս Նազովրեցի, նա քակտեսցէ զտե-
ղիս զայս, և փոխեսցէ զօրէնս զոր ետ մեզ Մովսէս։
15 Եւ հայեցեալ ի նա ամենեցունց որ նստէին յատե-
նին, տեսին զերեսս նորա իբրեւ զերեսս հրեշտակի։

* Ի ցոյն ՀԶ։

ԳԼ· Է

1 Ասէ քահանայապետն Թէ Արդարեւ այդ այդ-
2 պէս իցէ : Եւ նա ասէ, Արք եղբարք և հարք, լսա-
բուք ինձ . Աստուած փառաց երեւեցաւ հօր մե-
բում Աբրահամու մինչդեռ ի Միջագետս էր, մինչ-
չեւ բնակեցուցեալ էր զնա ի Խառան . և ասէ
3 ցնա, Ել յերկրէ քումմէ և յազգէ քումմէ , և կէ
4 յերկիրն՝ զոր ցուցից քեզ : Յայնժամ ելեալ յեր-
կրէն Քաղդէացւոց բնակեցաւ ի Խառան , և անտի
յետ մեռանելոյ հօր նորա՝ փոխեաց և պանդխտե-
ցոյց զնա յերկիրս յայսմիկ , յորում դուք այժմ
5 բնակեալ էք : Եւ ոչ ետ նմա ժառանգութիւն ի
սմա և ոչ քայլ մի ոտին . և խոստացաւ տալ նմա
զսա ի բնակութիւն , և զաւակի նորա յետ նորա ,
6 մինչ ոչ գոյր նորա որդի : Խօսեցաւ Աստուած այս-
պէս , թէ եղիցի զաւակ նորա պանդխտ յօտար
երկրի , և ծառայեցուսցեն զնա և չարչարեսցեն
7 սմա չորեքհարիւր : Եւ զազգն որում ծառայեսցեն՝
դատեցայց ես , ասէ Աստուած , և յետ այսորիկ
8 ելցեն և պաշտեսցեն զիս ի տեղւոջս յայսմիկ : Եւ
ետ նմա ուխտ թլփատութեան . և ապա ծնաւ զի-
սահակ , և թլփատեաց զնա յաւուր ութերորդի .
և Իսահակ զՅակովբ , և Յակովբ զերկոտասան նա-
9 հապետսն : Եւ նահապետքն նախանձեալ ընդ Յով-
սեփայ՝ վաճառեցին Եգիպտոս . և էր Աստուած
10 ընդ նմա , Եւ փրկեաց զնա յամենայն նեղութեանց
նորա , և ետ նմա շնորհս և իմաստութիւն առաջի
փարաւոնի արքային Եգիպտացւոց . և կացոյց զնա

11 իշխան Եգիպտացւոցն և ամենայն տան նորա : Եւ
եկն սով յամենայն երկիրն Եգիպտոսի և ի Քանան՝
նեղութիւն մեծ , և ոչ գտանէին կերակուր հարքն
12 մեր : Եւ լուեալ Յակովբայ թէ գտանի կերակուր
յԵգիպտոս՝ առաքեաց զհարսն մեր յառաջագոյն :
13 Եւ յերկրորդումն ետ ծանօթս Յովսէփ եղբարց իւ-
րոց . և յայտնի եղեւ ազգն *նորա փարաւոնի :
14 Առաքեաց Յովսէփ և կոչեաց զհայրն զՅակովբ
և զամենայն ազգատոհմն՝ ոգիս եօթանասուն և
15 հինգ : Եւ էջ Յակովբ յԵգիպտոս , և վախճանե-
16 ցաւ ինքն և հարքն մեր : Եւ փոխեցան ի Սիւքեմ
և եդան յայրին , զոր ստացաւ Աբրահամ գնոց
17 արծաթով յորդւոցն Եմովրայ ի Սիւքեմ : Իբրեւ
մերձեցաւ ժամանակ աւետեացն՝ զոր խոստացաւ
Աստուած Աբրահամու , աճեաց ժողովուրդն և
18 բազմացաւ յԵգիպտոս . Մինչեւ յարեաւ այլ թա-
19 գաւոր †յԵգիպտոս՝ որ ոչ ճանաչէր զՅովսէփ : Նա
հնարեցաւ ազգին մերում , և չարչարեաց զհարսն
մեր առնել ընկեցիկ զմանկունս նոցա՝ զի մի՛ ապ-
20 րեսցին : Յորում ժամանակի ծնաւ և Մովսէս , և
էր կատարտ առաջի Աստուծոյ , որ և սնաւ ի տան
21 հօր իւրոյ ամիսս երիս : Եւ յընկեցիկն առնել զնա՝
եւրաթ զնա դուստր փարաւոնի , և սնոյց զնա իւր
22 յորդեդերս : Եւ վարժեցաւ Մովսէս ամենայն իմաս-
տութեամբ Եգիպտացւոցն , և էր զօրաւոր բանիւք
23 և գործովք իւրովք : Իբրեւ լցաւ նորա քառասա-
նամեայ ժամանակ , անկաւ ի սիրտ նորա շրջել
24 զեղբարսն իւրովք՝ զորդւովքն Իսրայէլի , Եւ տե-

* Ի ՅՃՀՀ՝ Յովսեփայ

† Ի ՅՃՀՀ ՀԷ ։

սեալ զմն զրկեալ՝ զչարեցաւ , և խնդրեաց զլրկե-
25 զրկելոյն՝ սպանեալ զԵգիպտացին : Զմտաւ ածէր
Թէ իմասցին եղբարք նորա , զի Աստուած ի ձեռն
նորա տալոյ էր զփրկութիւն նոցա , և նոքա ոչ
26 իմացան : Եւ ի վաղիւ անդր երեւեցաւ նոցա մինչ-
դեռ մարանչէին՝ և վարեաց զնոսա ի խաղաղու-
Թիւն , ասէ , Արք , եղբարք էք , ընդէ՞ր զրկէք զե-
27 միմեանս : Իսկ որ զրկէր զընկերն՝ մերժեաց զնա և
ասէ , Ո՞ կացոյց զքեզ իշխան և դատաւոր ի վե-
28 րայ մեր : Միթէ սպանանե՞լ կամիցես զիս՝ զոր օրի-
29 նակ սպաներ երէկ զԵգիպտացին : Եւ փախեաւ
Մովսէս ի բանիցս յայսցանէ , և եղեւ պանդուխտ
յերկրին Մադիամու , ուր ծնաւ երկուս որդիս :
30 Եւ ի կատարել ամացն քառասնից՝ երեւեցաւ նմա
յանապատի լերինն Սինայ հրեշտակ Տեառն ի բոց
31 հրոյ մորենւոյն : Եւ Մովսէս՝ տեսեալ՝ զարմացաւ
ընդ տեսիլն , և ի մտանելն նորա նշմարել՝ եղեւ
32 ձայն Տեառն , Ես եմ Աստուած հարց քոց , Աս-
տուած Աբրահամու և *Իսահակայ և Յակովբայ .՚՚
33 և զահի հարեալ Մովսէս՝ ոչ իշխէր հայել , Եւ ա-
սէ ցնա Տէր , Լոյծ զկօշիկս ոտից քոց , զի տեղի
34 յորում դուդ կացեր՝ երկիր սուրբ է : Տեսանելով
տեսի զչարչարանս ժողովրդեան իմոյ որ Եգիպ-
տոս , և լուայ հեծութեան նոցա և իջի փրկել զնո-
35 սա . և արդ եկ առաքեցից զքեզ Եգիպտոս : Զայն
Մովսէս՝ զոր ուրացան և ասէին , Ո՞ կացոյց զքեզ
իշխան և դատաւոր ի վերայ մեր , զնա Աստուած

* Ի Յայնն՝ Աստուած Իսահակայ և Աստուած Յա-
կովբայ .

իշխան և փրկիչ առաքեաց ի ձեռն հրեշտակին ,
36 որ երեւեցաւ նմա ի մորենւոջն : Նա հնոյն զնոսա՝
արարեալ նշանս և արուեստս յերկրին Եգիպտա-
ցւոց և ի կարմիր ծովեղն և յանապատին ամս քա-
37 ռասուն : Այս Մովսէս է , որ ասաց յորդիսն Իս-
րայէլի , Մարգարէ յարուսցէ Տէր Աստուած
38 ձեր յեղբարց ձերոց իբրեւ զիս , նմա լուիջիք : Սա
է որ եղեւ յեկեղեցւոջն յանապատին ընդ հրեշ-
տակին , որ խօսեցաւ ընդ նմա ի լերինն Սինայ և
ընդ հարսն մեր , որ ընկալաւ զպատգամս կենդա-
39 նիս՝ տալ մեզ : Որում՝ ոչ կամեցան հնազանդ լի-
նել հարքն մեր , այլ մերժեցին և դարձան սիրտ-
40 սիւք իւրեանց յԵգիպտոս : Եւ ասեն ցԱհարոնէ ,
Արա մեզ Աստուածս , որ երթայցեն առաջի մեր .
զի Մովսէսն այն՝ որ հհան զմեզ յերկրէն Եգիպ-
41 տացւոց , ոչ գիտեմք զի՞ եղեւ նմա : Եւ արարին
յաւուրսն յայնոսիկ օրէի , և մատուցին զոհս կռոց ,
42 և ուրախ լինէին ի գործս ձեռաց իւրեանց : Դար-
ձոյց Աստուած և մատնեաց զնոսա ի պաշտօն զո-
րութեան երկնից , որպէս և գրեալ է ի գիրս մար-
գարէիցն , Միթէ զոհս և պատարագս մատուցի՞ք
ինձ զամս քառասուն յանապատին , տունդ Իսրա-
43 յէլի . Եւ առէք զվրանն Մողոքայ և զաստղն *աս-
տուածոյն Հռեմփայ , զպատկերսն՝ զոր արարէք ե-
կիրպագանել նոցա . և փոխեցից զձեզ Բայն կողմն
44 Բաբելացւոց : Խորանն վկայութեան էր ընդ հարսն
մեր յանապատին . որպէս հրամայեաց որ խօսէրն
ընդ Մովսիսի , առնել զայն ըստ օրինակին՝ զոր ե-

* Ի Յայնն՝ աստուածոյն ձերոյ

45 տես ։ Զոր և *ընկալեալ բերին Հարքն մեր Հան-
դերձ Յեսուաւ ՚ի վիճակ ազգացն , զոր ժերժեաց
Աստուած յերեսաց Հարցն մերոց մինչեւ յաւուրս
46 Դաւթի , Որ եգիտ շնորհս առաջի Աստուծոյ , և
խնդրեաց գտանել զարկս Աստուծոյ Յակովբայ ։
47 Նա և Սողոմոն շինեաց նմա տուն ։ (48) Այլ ոչ
եթէ բարձրեալն ՚ի ձեռագործ տաճարս բնակէ .
49 այլ որպէս մարգարէն ասէ , Երկինք աթոռ իմ են ,
և երկիրս պատուանդան ոտից իմոց . ո՞րպիսի տուն
շինեցէք ինձ , ասէ Տէր , կամ ո՞վ՞նչ տեղի հան-
50 գըստեան իմոյ . Ո՞չ ձեռն իմ արար զայս ամենայն ։
51 Խստապարանոցք և անթլփատս սրտիւք և ական-
ջիք , դուք հանապազ Հոգւոյն Սրբոյ հակառակ
52 կայք , որպէս հարքն ձեր՝ և դուք ։ Զո՞ ՚ի մարգա-
բէից ոչ հալածեցին հարքն ձեր , և սպանին զայ-
նոսիկ՝ որ յառաջադոյն պատմեցին վասն գալստեան
Արդարոյն , որոյ դուք այժմ մատնիչք և սպանողք
53 եղէք ։ Որ առիք զօրէնս † ՚ի հրամանս հրեշտա-
54 կաց , և ոչ պահեցէք ։ Եւ լուեալ զայս՝ զայրանա-
յին ՚ի սիրտս իւրեանց , և կրճտեին զատամունս ՚ի
55 վերայ նորա ։ Եւ նա էր լի Հոգւով Սրբով , հայե-
ցաւ յերկինս և տեսս զփառս Աստուծոյ և զՅիսուս
զի կայր ընդ աջմէ Աստուծոյ , և ասէ , Ահա տես-
սանեմ՛ զերկինս բացեալ՝ և զՈրդի մարդոյ զի կայ
56 ընդ աջմէ Աստուծոյ ։ Աղաղակեալ ՚ի ձայն մեծ՝
խլին զականջս իւրեանց , և դիմեցին առ հասարակ
57 ՚ի վերայ նորա ։ Եւ հանեալ արտաքոյ քաղաքին՝

* Ի ՅԺԱ՝ յաջորդութեամբ ընկալեալ
† Ի ՅԺԱ՝ մատակարարութեամբ

քարկոծէին . և վկայքն դնէին զձորձս իւրեանց առ
58 ոտս երիտասարդի միոյ՝ որ կոչէր Սաւուղ ։ Եւ
քարկոծ առնէին զՍտեփանոս , որ կարդայր և ա-
59 ձէր , Տէր Յիսուս , ընկալ զոգի իմ ։ Եդ ծունր՝
աղաղակեաց ՚ի ձայն բարձր , Տէր , մի համարիր
դոցա զայս մեղս . և զայս իբրեւ ասաց՝ ննջեաց .
և Սօղոս էր համակից սպանման նորա ։

ԳԼ · Ը

1 Եւ եղեւ յաւուրսն յայնմիկ հալածումն մեծ ՚ի
վերայ եկեղեցւոյն Յերուսաղէմ . և ամենեքեան
ցրուեցան ՚ի դաշտս Հրէաստանի և ՚ի Սամարիա բաց
2 յառաքելոցն ։ Եւ բարձին զՍտեփանոս արք եր-
3 կիւղածք՝ և արարին կոծ մեծ ՚ի վերայ նորա ։ Բայց
Սօղոս վնասակար էր եկեղեցւոյն , ՚ի տունս տունս
մտանէր , քարշէր զարս և զկանայս՝ մատնէր ՚ի
4 բանտ ։ Եւ սփռեալքն շրջէին , աւետարանէին զբ-
5 բանն ։ Իսկ Փիլիպպոս իջեալ ՚ի քաղաքն Սամա-
6 րացւոց՝ քարոզէր նոցա զՔրիստոս ։ Ունկն դնէին
ժողովուրդքն բանիցն Փիլիպպոսի միաբան՝ ՚ի լսել
7 նոցա և ՚ի տեսանել զնշանսն , զոր առնէր ։ Զանդղ
բազումք որ ունէին զոյս պիղծս՝ աղաղակէին ՚ի
8 ձայն մեծ և ելանէին ։ Եւ բազում՝ անդամալոյծք
9 և կաղք բժշկէին . Եւ եղեւ ուրախութիւն մեծ ՚ի
քաղաքին այնմիկ ։ Այր ոմն անուն Սիմոն յառա-
ջագոյն էր ՚ի քաղաքին , մոգ էր և ապշեցուցանէր
զազգն Սամարացւոց , ասել զանձնէ թէ իցէ մեծ
10 ոմն ։ Յոր հայէին ամենեքեան ՚ի փոքուէ մինչեւ ՚ի
մեծամեծս , և ասէին , Սա է զօրութիւն Աստու-

41 ծոյ՝ որ կոչի մեծ։ Հայհէն ի նա վանն բազում
ժամանակաց մոգութեամբքն ապշեցուցանէր զնո-
42 սա։ Բայց յորժամ հաւատացին փիլիպպոսի, որ
աւետարանէր վանն արքայութեանն Աստուծոյ և
անուանն Յիսուսի Քրիստոսի, մկրտէին ամենեքեան
43 արք և կանայք։ Ա՛յլ և ինքն Սիմոն հաւատաց, և
մկրտեալ կանխէր առ փիլիպպոս. տեսեալ զնշանս և
զմեծամեծ զօրութիւնսն որք լինէին՝ զարմանայր։
44 Իբրեւ լուան որ յԵրուսաղէմ առաքեալքն էին թէ
և ի Սամարիա ընկալան զբանն Աստուծոյ, առաքե-
45 ցին առ նոսա զՊետրոս և զՅովհաննէս։ Որք իջեալ
կացին յաղօթս ի վերայ նոցա, որպէս զի առցեն
46 զՀոգին Սուրբ. Չի ցայժամ չէր եւս եր և ոչ ի
վերայ միոյ նոցա հասեալ, բայց միայն մկրտեալք
47 էին յանուն Տեառն Յիսուսի։ Յայնժամ եդին զձեռս
48 ի վերայ նոցա, և առնուին Հոգի Սուրբ։ Տեսեալ
Սիմոնի թէ ձեռն ի վերայ դնելով առաքելոցն՝
տուեալ լինի Հոգին Սուրբ, մատուցց նոցա ինչս և
49 ասէ, Տուք և ինձ զիշխանութիւնս զայս, զի յոր
20 վերայ դնիցեմ զձեռս՝ առցէ Հոգի Սուրբ։ Եւ
Պետրոս ասէ ցնա, Արծաթդ քո ընդ քեզ լիցի ի
կորուստ, զի զպարգեւն Աստուծոյ համարիցար
21 ընչեաք առանալ։ Ոչ գոյ քեզ մասն և վիճակ ի
բանիդ յայդմիկ, քանզի սիրտ քո ոչ է ուղիղ ա-
22 ռաջի Աստուծոյ։ Ապաշաւեա դու ի չարութենդ
քումմէ յայդմանէ, և աղաչեա զՏէր, թերեւս թո-
զութիւն լիցի քեզ ի *մեղանիս խորհրդոյ սրտի քո։
23 Զանգի ի դառնութիւն մաղձի և ի կնճիռն անի-

* ի Յունն էին։

24 րաւութեան տեսանեմ զքեզ։ Պատասխանի ետ
Սիմոն և ասէ, Աղաչեցէք դուք վասն իմ զՏէր,
զի մի՛ ինչ եկեսցէ ի վերայ իմ՝ յորոց դուք ա-
25 սացէք։ Եւ նոցա եդեալ վկայութիւն՝ խօսեցան
զբանն Աստուծոյ, և դարձան յԵրուսաղէմ. և ի
բազում գեօղս Սամարացւոցն աւետարանէին։
26 Հրեշտակ Տեառն խօսեցաւ առ փիլիպպոս և ա-
սէ, Արի և գնա դու ի կողմն հարաւոյ ընդ ճա-
նապարհ որ իջանէ յԵրուսաղէմէ ի Գազա, զի այս
27 է անապատ։ Եւ յարեաւ գնաց. և ահաւասիկ այր
մի Եթէովպացի, ներքինի հզօր կանդակա թագուհւոջ
Եթէովպացւոց, որ էր ի վերայ ամենայն գանձուց
նորա. որ եկեալ էր երկիրպագանել յԵրուսաղէմ,
28 Եւ էր անդրէն դարձեալ, և նստեալ ի կառս
29 իւրում՝ ընթեռնոյր զմարգարէն զԵսայի։ Ասէ Հո-
գին ցփիլիպպոս. Մատիր և յարեաց ի կառսդ
30 յայդոսիկ։ Եւ ընթացեալ փիլիպպոս *լսէր զի ըն-
թեռնոյր զԵսայի մարգարէ, և ասէ, Գիտիցե՞ս ար-
31 դեօք զոր ընթեռնուցուզդ։ Եւ նա ասէ, Զիա՞րդ
կարիցեմ, եթէ ոք ոչ առաջնորդեսցէ ինձ և ա-
32 ղաչեաց զփիլիպպոս ելանել նստել ընդ նմա։ Եւ
գլուխ գրոցն զոր ընթեռնոյր՝ էր այս. Իբրեւ ոչ-
խար ի սպանդ վարեցաւ, և իբրեւ գառնոջ առաջի
կտրչի իւրոյ անմռունչ՝ այնպէս ոչ բանայ զբերան
33 իւր։ Ի խոնարհութեան նորա դատաստան նորա
բարձաւ, և զազգատոհմ նորա ո՞ պատմեսցէ, զի
34 բառնան յերկրէ կեանք նորա։ Պատասխանի ետ
ներքինին փիլիպպոսի և ասէ, Աղաչեմ զքեզ, վասն

* ի Ցոյն՝ մատուցեալ լսէր

ո՞յր ասէ մարգարէն զայս , վասն ի՞նր եթէ վասն
35 այլոյ ուրուք : Եթող փիլիպպոս զբերան իւր , և
սկսեալ 'ի գրոցս յայսցանէ՝ աւետարանեաց նմա
36 զՅիսուս : Իբրեւ երթային ճանապարհին , եկին
'ի ջուր ինչ , և ասէ Նեեբքինին , Ահաւասիկ ջուր ,
37 զի՞նչ արգելու զիս 'ի մկրտելոյ : *Եւ ասէ ցնա ,
եթէ հաւատաս բովանդով սրտիւ քով մարթի է .
պատասխանի եւ ասէ , Հաւատամ եթէ Յիսուս
38 Քրիստոս է Որդի Աստուծոյ : Եւ հրամայեաց կա-
ցուցանել զկառսն . և իջին երկոքեան 'ի ջուրն՝ փի-
39 լիպպոս և Նեբքինին , և մկրեաց զնա : Եւ իբրեւ
ելին 'ի ջրոյ անտի՝ †Հոգին Սուրբ եկն 'ի վերայ
Նեբքինւոյն , և հրեշտակ Տեառն՝ յափշտակեաց զՓ-
փիլիպպոս , և ոչ եւս տեսս զնա Նեբքինին , և գը-
40 նայր զճանապարհ իւր ուրախութեամբ : Բայց փի-
լիպպոս գտաւ Ազովտոս . և շրջեալ աւետարանէր
ամենայն քաղաքացն , մինչեւ 'ի գալ նորա 'ի Կե-
սարիա :

Գլ. Թ

1 Իսկ Սողոս տակաւին լցեալ սպառնալեօք և սպան-
դամբ աշակերտացն Տեառն , մատուցեալ առ քա-
2 հանայապետն՝ խնդրեաց 'ի նմանէ թուղթս 'ի Դա-
մասկոս առ ժողովուրդսն . որպէս թէ զոք գտցէ
զայնր ճանապարհի՝ արս կամ կանայս , կապեալս
3 ածցէ Յերուսաղէմ : Եւ ընդ երթալ նորա՝ եղեւ
մերձենալ 'ի Դամասկոս . յանկարծակի շուրջ զնո-

* Ի ցայն՝ Եւ փիլիպպոս † Ի ցայն՝ Հոգի Տեառն

4 վաւ փայլատակեաց լոյս յերկնից : Եւ անկեալ
յերկիր՝ լուաւ բարբառ որ ասէր ցնա , Սաւուղ ,
5 Սաւուղ , զի՞ հալածես զիս : Եւ ասէ , Ո՞վ ես ,
Տէր . և նա ասէ , Ես եմ Յիսուս զոր դուն հա-
լածես . խիստ է քեզ ընդդէմ խթանի աքացել :
6 Եւ զարհուրեալ և *անշշուկնջ լեալ՝ ասաց , Տէր ,
7 զիս զի՞նչ կամիս առնել : Եւ ասէ ցնա Տէր , Ա-
յսո՛ն կաց և մտա՛ 'ի քաղաքդ , և պատմեսցի քեզ՝
զինչ պարտ իցէ առնել . իսկ արքն որ ընդ նմայն
երթային , կային *անշշուկնջ , զձայնն միայն լսէին՝
8 բայց տեսանէին և ոչինչ : Յարեաւ Սողոս յերկրէ
անտի , և աչօք բացօք ոչ զոք տեսանէր . զձեռանէ
9 առեալ նորա՝ մուծին 'ի Դամասկոս : Եւ էր անդ
աւուրս երիս և ոչ տեսանէր , և ոչ եկեր և ոչ արբ :
10 Եւ էր ոմն աշակերտ 'ի Դամասկոս Անանիա անուն .
ասէ ցնա Տէր 'ի տեսլեան , Անանիա . և նա ասէ ,
11 Ահաւասիկ եմ , Տէր : Եւ ասէ ցնա Տէր , Յոտն կաց
և գնա ընդ փողոցն որ կոչի Ուղիղ , և խնդրեսցես
յապարանսն Յուդայ Սողոս անուն զՏարսոնացի . զի
12 կայ դեռ յաղօթս : Եւ տեսս 'ի տեսլեան այր մի
Անանիա անուն՝ մտեալ և եդեալ 'ի վերայ նորա
13 ձեռն , որպէս զի տեսցէ : Պատասխանի եւ Անա-
նիա , Տէր , լուա 'ի բազմից վասն առնն այնորիկ՝
14 որչափ արար չարիս սրբոց քոց Յերուսաղէմ . Եւ
աստ ունի իշխանութիւն 'ի քահանայապետէն ,
15 կապեալ զամենեսեան որ կարդան զանուն քո : Ասէ
ցնա Տէր , Երթ դու , զի անօթ ընտրութեան է ինձ
նա , կրել զանուն իմ առաջի հեթանոսաց և թա-

* Ի ցայն՝ յապուշ

46 գաւօրաց և որդւոցն Իսրայէլի ։ Քանզի ես իսկ ցու-
ցից նմա՝ որչափ պարտ իցէ նմա չարչարիլ վասն
47 անուան իմոյ ։ Եւ գնաց Անանիա և եմուտ յայրա-
րանն, և եդեալ *ի վերայ նորա ձեռս՝ ասէ, Սա-
ւուղ եղբայր, *"ի վեր Հայեաց", Տէր առաքեաց
զիս, Յիսուս որ երեւեցաւն քեզ *ի ճանապարհին
յորում գայիր, որպէս զի տեսցես և լցցիս Հո-
48 գւով Սրբով ։ Եւ վազվազակի անկան յաչաց նորա
իբրեւ կեղեւանք. †տեսս և յարեաւ մկրտեցաւ ։
49 Եւ առեալ կերակուր զօրացաւ. և եղեւ *ի Դա-
20 մասկոս ընդ աշակերտսն աւուրս ինչ ։ Եւ վազվա-
կի *ի ժողովուրդսն քարոզեաց զՅիսուս, Թէ սա է
21 Որդին Աստուծոյ ։ Զարմացեալ էին ամենեքեան՝
որ լսէինն, և ասէին, Ո՞չ սա էր՝ որ աւեր հար-
կանէր Երուսաղէմ զկոչեցեալսն զայդ անուն,
Նոյն Յիսուսի՝. և այսր նմին իբրեւ եկեալ է, զի կա-
22 պեալս զսոսա տարցի առ քահանայապետսն ։ Այլ
Սօղոս առաւել եւս զօրանայր և յաղթահարէր
զՀրեայսն, որ բնակեալ էին *ի Դամասկոս. և խե-
23 լամեծուցանէր Թէ սա է Քրիստոսն ։ Իբրեւ կա-
տարէին աւուրք բազումք, խորհեցան Հրեայքն
24 սպանանել զնա ։ Յայտնեցաւ Սօղոսի նենգութիւն
նոցա, քանզի պահէին զդրունս *ի տուէ և *ի գի-
25 շերի՝ որպէս զի սպանցեն զնա ։ Եւ առեալ զնա
աշակերտացն *ի գիշերի՝ ընդ պարիսպն կախեալ ի-
26 ջուցին վանդակաւ ։ Իբրեւ եկն Սօղոս Երուսա-
ղէմ՝" ընդվզանէր յարել յաշակերտսն. և ամենե-

* Ի Յոյնն չէ ։ † Ի Յոյնն՝ տեսս առ ժամայն
‡ Ի Յոյնն՝ զանունս զայս.

քեան երկնչէին *ի նմանէ, չհաւատային Թէ իցէ
27 աշակերտ ։ Բայց Բառնաբաս առեալ զնա՝ ած առ
առաքեալսն, և պատմեաց նոցա՝ որպէս *ի ճանա-
պարհին տեսս զՏէր, և զի խօսեցաւ ընդ նմա. և
զի *ի Դամասկոս համարձակեցաւ յանուն Յիսուսի ։
28 Եւ էր ընդ նոսա՝ *ի մտանել և ելանել Երուսա-
29 ղէմ, համարձակեալ յանուն Տեառն ։ Խօսէր և
վիճէր ընդ Հրէայնսն. և նոքա խոկային սպանանել
30 զնա ։ Եւ ծանեալ եղբարց՝ իջուցին զնա *ի Կե-
31 սարիա, և առաքեցին զնա *ի Տարսոն ։ Բայց եկե-
ղեցին ընդ ամենայն Հրէաստան և *ի Սամարիա և
*ի Գալիլեա ունէր խաղաղութիւն, շինեալ և եր-
թեալ *ի երկիւղի Տեառն և *ի մխիթարութեամբ
Հոգւոյն Սրբոյ բազմանայր ։
32 Եւ եղեւ *ի շրջել Պետրոսի առ ամենեքեան,
իջանել նմա և առ սուրբսն՝ որ բնակեալ էին *ի
33 Լիւդիա ։ Եւ եգիտ անդ այր մի, որում՝ անուն
էր Ենէա, ութ ամեան դնէր *ի մահիճս անդամա-
34 լոյծ ։ Եւ ասէ ցնա Պետրոս, Ենէա, բժշկէ զքեզ
*Տէր Յիսուս Քրիստոս, արի և քեզէն թօթափեա
35 զանկողինս քո. և վազվազակի յարեաւ ։ Եւ տե-
սին զնա ամենեքեան, որ բնակեալ էին *ի Լիւդիա
36 և *ի Սարովնա, որք և դարձան իսկ *ի Տէր ։ Եւ
*ի Յոպպէ էր կին *ոմն աշակերտեալ անուն Տաբի-
թա՝ որ թարգմանեալ կոչի Ադաեմիկ. սա էր լի
գործովք բարեաւք և ողորմութեամբք զոր առնէր ։
37 Եւ եղեւ յաւուրսն յայնոսիկ հիւանդանալ նմա
և մեռանել. լուացին զնա և եդին *ի գաւիկոնի

* Ի Յոյնն չէ ։

38 անդ ։ Եւ մերձ էր Լիւդիա ի Յոպպէ . աշակերտացն լուեալ եթէ Պետրոս անդ է , առաքեցին երկուս առ նա աղաչել զի մի դանդաղեացի
39 գալ առ նոսա ։ Եւ յարուցեալ Պետրոս եկն ընդ նոսա , զոր իբրեւ եկն՝ հանին ի վերնատունն . և կացին շուրջ զնովաւ այրիքն ամենայն , լային և ցուցանէին զձորձս և զչանդերձս , որչափ առնէր
40 նոցա Աւծեմիկն ։ Եւ հանեալ արտաքս զամենեսեան Պետրոսի , եդ ծունր՝ եկաց յաղօթս . և դարձաւ ի մարմինն և ասէ , Տաբիթա , արի կաց ։ Յանուն Տեառն Յիսուսի Քրիստոսի՝ . և նա եբաց զաչս իւր , և տեսեալ զՊետրոս նստաւ կանգուն ։
41 Զեռն ետ նմա և յարոյց զնա , կոչեաց զսուրբսն
42 և զայրիս , առաջի կացոյց զնա կենդանի ։ Եւ յայտնի եղեւ ընդ ամենայն Յոպպէ , և հաւատացին
43 բազումք ի Տէր ։ Եւ եղեւ աւուրս բազումս լինել նմա ի Յոպպէ առ ումմն Սիմոնի խաղխորդի ։

Գլ· ժ

1 Այր մի էր ի Կեսարիա անուն Կոռնէլիոս հա-
2 րիւրապետ՝ ի գնդէ որ կոչէր Իտալացի . Բարեպաշտօն և երկիւղած Աստուածոյ ամենայն տամբ իւրով , առնէր ողորմութիւնս բազումս ի ժողովրդեանն , և յաղօթս կայր առ Աստուած յամենայն
3 ժամ՝ ։ Եւ ետես ի տեսլեան յայտնապէս ընդ ժամու աւուրն զհրեշտակ Աստուծոյ , զի մտանէր
4 առ նա և ասէր ցնա , Կոռնէլիէ . Եւ նա հայե-

* ի Յոյնս էփ ։

ցեալ ընդ նա՝ զարհուրեցաւ և ասէ , Զի՞ է , Տէր , և նա ասէ , Աղօթք քո և ողորմութիւնք
5 քո ելին յիշատակաւ առաջի Աստուածոյ ։ Եւ արդ յղեա արս ի Յոպպէ և կոչեա զՍիմոն զոմն՝
6 որ կոչի Պետրոս . Նա մտեալ *է առ Սիմոնի ումմն խաղխորդի , որոյ է տունն մերձ ի ծով ։
7 Եւ իբրեւ գնաց հրեշտակն որ խօսեր ընդ նմա , կոչեաց երկուս ի ծառայից իւրոց՝ և զնուիրս մի
8 բարեպաշտոն ի սպասաւորացն իւրոց , Եւ պատմեալ նոցա զամենայն՝ առաքեաց զնոսա ի Յոպպէ ։
9 Եւ ի վաղիւ անդր ի ճանապարհ անկանել նոցա և մտ ի քաղաքն լինել , Ել Պետրոս ի տանիսն
10 կալ յաղօթս զվեցերորդ ժամուն ։ Քաղցեաւ և կամեր ճաշակել . և ի պատրաստեն նոցա՝ եղեւ ի
11 վերայ նորա զարմացումն ։ Եւ տեսանէր զերկինս բացեալ , և զչորեցունց տանոց կապեալ անօթ մի նման իբրեւ զկտաւոյ մեծի , իջեալ նստեալ ի վերայ երկրի ։ Յորում էին ամենայն չորքոտանիք †և սողունք
12 երկրի և թռչունք երկնից ։ Եւ եղեւ ձայն առ նա,
13 Արի , Պետրոս , զնե և կեր ։ Եւ Պետրոս ասէ , Քաւ լիցի , Տէր , զի ոչ երբեք կերայ խառնակ ինչ և
14 անսուրբ ։ Ձայն եղեւ կրկին անգամ՝ առ նա , Զոր
15 Աստուած սրբեաց՝ դու մի պղծեր ։ Այս եղեւ երրորդ անգամ , և վերացաւ անօթն յերկինս ։ Եւ մինչդեռ զարմացեալ էր ընդ միտս Պետրոս թէ զի՞նչ իցէ տեսիլն զոր ետես . ահա արքն առաքեալք ի կոռնէլեայ հարցին զատարանիցն Սիմոնի , կացին առ
16 դրանն . կոչեցին և հարցանէին , եթէ Սիմոն որ

* ի Յոյնս՝ է իբրեւ հիւր † ի Յոյնս՝ և գազանք և

19 կոչի Պետրոս ասա մեռա՞լ իցէ ։ Եւ մինչդեռ Պետ-
րոս զմտաւ ածէր վասն տեսլեանն, ասէ Հոգին ցնա,
20 Ահաւասիկ արք *ոմանք խնդրեն զքեզ ։ Ա՛րի
էջ և երթ ընդ նոսա առանց իրիք խղճելոյ , զի ես
21 առաքեցի զնոսա ։ Եւ իջեալ Պետրոս առ նոսա՝
ասէ , Ահաւասիկ ես եմ զոր խնդրէքն . զի՞նչ իրք
22 են՝ վասն որոյ եկիքդ ։ Եւ նոքա ասեն , Կոռնէլիոս
հարիւրապետ՝ այր արդար և երկիւղած Աստու-
ծոյ , վկայեալ յամենայն ազգէն Հրէից , հրաման
առ ի հրեշտակէ սրբոյ՝ կոչել զքեզ ի տուն իւր
23 և լսել բանս ի քէն ։ Կոչեաց զնոսա ի ներքս և
առ իւր ագոյց . և ի վաղիւն անդր յարուցեալ
Պետրոս գնաց ընդ նոսա , և ոմանք յեղբարց անտի
24 որ ի Յոպպէ էին՝ եկին ընդ նմա։ Եւ ի վաղիւն անդր
մտին ի Կեսարիա . և Կոռնէլիոս մնայր նոցա , կո-
չեցեալ զազգատոհմն իւր և զկարեւորս բարեկամանն։
25 Եւ եղեւ ի մտանելն Պետրոսի ընդ առաջ եղեւ
նմա Կոռնէլիոս , անկեալ առ ոտն երկիրպագա-
26 նէր ։ Եւ Պետրոս կանգնեաց զնա և ասէ , Յոտն
27 կաց , և ես ինքն մարդ եմ ։ Եւ խօսելով ընդ նմա
եմուտ ի ներքս . և գտանէր անդ ժողովեալ բա-
28 զումս ։ Եւ ասէ ցնոսա , Դուք ինքնին գիտէք՝ որ-
պէս անմարթ է առն Հրէի հպել կամ մերձենալ
առ այլազգի . և ինձ Աստուած եցոյց մի զքեզ խառ-
29 նակ կամ անսուրբ ասել ի մարդկանէ ։ Վասն այ-
սորիկ և առանց ընդ բանս ինչ ածելոյ եկի կոչե-
ցեալ . բայց արդ Հարցանեմ՝ Ձի՞նչ պատս կոչեցէք
30 զիս ։ Եւ Կոռնէլիոս ասէ , Յառաջ քան զչորս ա-

* Ի Ց՚ԽԲ՝ երեք

ւուրս *մինչ ցայս ժամ կայի՝ յաղօթս յինն ժամն
ի տան իմում . և ահա այր մի եկն եկաց առաջի
31 իմ ի հանդերձս սպիտակս , և ասէ, Կոռնէլիե , լսե-
լի եղեն աղօթք քո , և ողորմութիւնք քո յիշե-
32 ցան առաջի Աստուծոյ . Եւ արդ յղեա ի Յոպպէ
և կոչեա զՍիմոն՝ որ կոչեցեալն է Պետրոս . սա մը-
տեալ †է ի տուն Սիմոնի ուրուսն խաղխորդի մերձ
33 ի ծովն . որ եկեսցէ և խօսեսցի բանս ընդ քեզ ։ Եւ
ես իսկ և իսկ յղեցի առ քեզ , դու բարւոք արա-
րեր զի եկիր . արդ ամենեքին մեք առաջի Աստու-
ծոյ կամք լսել զամենայն , զոր հրամայեալ է քեզ
34 ի Տեառնէ ։ Եւ բացեալ Պետրոս զբերան իւր և ասէ ,
Ճշմարտութեամբ հասեալ եմ , զի ոչ գոյ անկա-
35 նաչիւն առ ի Աստուծոյ . Ա՛յլ յամենայն ազգս
որ երկնչին ի նմանէ և գործէ զարդարութիւն ,
36 ընդունելի է նմա ։ Զբանն առաքեաց որդւոցն Իս-
րայելի՝ աւետարանել զխաղաղութիւն ի Յիսուս
37 Քրիստոսէ , սա է ամենայնի Տէր ։ Դուք ին-
քնին գիտէք զբանն՝ որ եղեւ ընդ ամենայն Հրէաս-
տան սկսեալ ի Գալիլեէ , յետ մկրտութեանն՝ զոր
38 քարոզեաց Յովհաննէս . ԶՅիսուս որ ի Նազարեթէ՝
զոր օծն Աստուած Հոգւով Սրբով և զօրութեամբ .
որ շրջեցաւ բարի առնել և բժշկել զամենայն ըմ-
բռնեալսն ի Սատանայէ , զի Աստուած էր ընդ
39 նմա ։ Եւ մեք վկայ եմք ամենայնի՝ զոր արար Հե-
րկրին Հրէաստանի և Երուսաղէմ . զոր և սպանին
40 կախեալ գիտցէ ։ Զնա Աստուած յարոյց երրորդ

* Ի Ց՚ԽԲ՝ պահէի մինչ ցայս ժամ, և կայի
† Ի Ց՚ԽԲ՝ է իրրեւ հիւր

41 աւուր, և ետ նմա յայտնի լինել, Ոչ ամենայն
ժողովրդեանն, այլ մեզ վկայիցս յառաջագոյն
ընտրելոցս Աստուծոյ, որք և կերաք և արբաք
42 ընդ նմա յետ յարութեան նորա ի մեռելոց։ Եւ
պատուիրեաց մեզ քարոզել ժողովրդեանն և վկա-
յութիւն դնել, թէ նա է սահմանեալն Աստուծոյ
43 դատաւոր կենդանեաց և մեռելոց։ Նմա ամենայն
մարգարէք վկայեն, թողութիւն մեղաց առնուլ
անուամբ նորա ամենայն հաւատացելոց ի նա։

44 Եւ մինչդեռ խօսէր Պետրոս զբանս զայս, հան-
դեաւ Հոգին Սուրբ ի վերայ ամենեցուն՝ որ լսէին
45 զբանն։ Զարմացան որք ի թլփատութենէ անտի
հաւատացեալք եկեալ էին ընդ Պետրոսի, զի և ի
հեթանոսս պարգեւաւք Հոգւոյն Սրբոյ զեղուին։
46 Քանզի լսէին ի նոցանէ խօսել լեզուս և մեծացու-
47 ցանել զԱստուած։ Յայնժամ պատասխանի ետ
Պետրոս, Միթէ զջուր որ արգելուլ կարէ՞ առ ի
չմկրտելոյ զսոսա, որք և զՀոգին Սուրբ ընկալան՝
48 որպէս և մեք։ Եւ հրամայեաց նոցա մկրտել յա-
նուն *Յիսուսի Քրիստոսի.՝ յայնժամ աղաչեցին
զնա լինել անդ աւուրս մի։

ԳԼ. ԺԱ.

1 Լուան առաքեալքն և եղբարքն որ էին ի կող-
մանս Հրէաստանի, զի և ի հեթանոսս ընկալան
2 զբանն Աստուծոյ։ Բայց յորժամ եկ Պետրոս Ե-
րուսաղէմ, †խոզէին ի նմանէ՝՝ որ ի թլփատութենէ

* Ի ՅԱՆ՝ Տեառն. † Ի ՅԱՆ՝ վիճէին ընդ նմա

3 անտի *հաւատացեալքն. Եւ ասէին թէ եմուտ
առ արս անթլփատս և եկեր ընդ նոսա։ Եւ սկը-
5 սաւ Պետրոս պատմել նոցա կարգաւ և ասէ, Ես
էի ի քաղաքին ի Յոպպէ յաղօթս, և տեսանէի
ի զարմացման տեսիլ, իջանել անօթ մի իբրեւ
կտաւոյ մեծի զչորեցունց ծայնոց կախեալ յեր-
6 կինից, և եկաց մինչեւ առ իս։ Յոր պլուցեալ հա-
յեի, և տեսի զչորքոտանիս երկրի և զգազանս և
7 զսողունս և զթռչունս երկնից։ Եւ լուայ բարբառ
8 որ ասէր ցիս, Արի, Պետրոս, զնա և կեր։ Եւ
ասեմ, Ոչ լիցի, Տէր, զի խառնակ ինչ և ան-
9 սուրբ ոչ երբեք եմուտ ի բերան իմ։ Պատասխանի
ետ ինձ երկրիցս անդամ բարբառն յերկնից, Զոր
Աստուած սրբեաց՝ դու մի՛ խառնակ համարիր։
10 Այս եղեւ երիցս, և վերացաւ ամենայն դարձեալ
11 յերկինս։ Եւ ահա անդրէն երեք արք եկին կացին
առ ապարանիցն՝ ուր եաս էի, առաքեալք ի Կե-
12 սարիայ առ իս։ Եւ ասէ ցիս Հոգին երթալ ընդ
նոսա՝ և մի՛ ինչ խղճել. եկին ընդ իս և սոքա վե-
ցեքին եղբարքս, և մտաք ի տունն առնն ոյնո-
13 րիկ։ Եւ պատմեաց մեզ որպէս ետես զհրեշտակն
ի տան իւրում՝ զի կայր և ասէր ցնա, Առաքեա
ի Յոպպէ, և կոչեա զՍիմոն զկոչեցեալն Պետրոս.
14 Որ խօսեսցի բանս ընդ քեզ, որովք կեցցես դու
15 և ամենայն տուն քո։ Եւ իբրեւ սկայ խօսել,
եկն Հոգին Սուրբ ի վերայ նոցա, որպէս և ի վե-
16 րայ մեր ի սկզբանն։ Յիշեցի զբանն Տեառն զոր
ասէրն, Յովհաննէս մկրտեաց ի ջուր, բայց դուք

* Ի ՅԱՆ՝ ՀԳ։

17 մկրտիցիք ի Հոգին Սուրբ։ Իսկ արդ եթէ զհաւա-
բակաց պարգեւն եւ Աստուած և նոցա՝ որպէս և
մեզ՝ ի հաւատալն ի Տէր Յիսուս Քրիստոս, ես
18 զի՞նչ կարող էի արգելուլ զԱստուած։ Եւ լուեալ
զայս լռեցին, և փառաւորս առնէին զԱստուած և
ասէին, Ուրեմն և ի հեթանոսս եւս Աստուած զա-
պաշխարութիւն կենաց։
19 Եւ ցրուեալքն ի նեղութենէն որ եղեւ ի վերայ
Ստեփանոսի՝ հասին մինչեւ ի փիւնիկէ և ի կիպ-
րոս և Յանտիոքիա. ոչ ումեք խօսէին զբանն,
20 բայց միայն Հրէից։ Եւ էին ոմանք ի նոցանէ արք
կիպրացիք և կիւրենացիք, որք մտեալ Յանտիոք՝
խօսէին ընդ Յոյնս աւետարանեալ զՏէր Յիսուս։
21 Եւ էր ձեռն Տեառն ընդ նոսա, և *բազմութիւն
22 հաւատացելոց դարձաւ՝ ի Տէր։ Լուաւ եղեւ բանս
այս յականջս եկեղեցւոյն՝ որ էր Երուսաղէմ,
վասն նոցա, և առաքեցին զԲառնաբաս մինչեւ
23 Յանտիոք. Որ իբրեւ եկն և տեսս զշնորհսն Աս-
տուծոյ՝ ուրախ եղեւ, և մխիթարէր զամենեսին՝
24 յաժարութեամբ սրտի կալ նոցա ի Տէր։ Զի էր
այր †զուարթամիտ և լի Հոգւով Սրբով և հաւա-
տով. և յաւելաւ ժողովուրդ բազում Տեառն։
25 Եւ ‡ել ի Տարսոն խնդրել զՍօղոս, և գտեալ զնա
26 ած Յանտիոք։ Եւ եղեւ նոցա ամի ողջոյն ժողո-
վել եկեղեցին՝ և ուսուցանել ժողովուրդ բա-
զում, և անուանել նախ Յանտիոք զաշակերտան
Քրիստոնեայս։

* Ի Յոյնս՝ բազումք հաւատացեալ դարձան
† Ի Յոյնս՝ բարի ‡ Ի Յոյնս՝ եւ Բառնաբաս

27 Ընդ աւուրսն ընդ այնոսիկ իջին Երուսաղէմէ
28 մարգարէք Յանտիոք։ Յարուցեալ մի ոմն ի նո-
ցանէ անուն Ագաբոս՝ նշանակեաց Հոգւովն սով
մեծ լինել ընդ ամենայն աշխարհ՝ որ եղեւ առ
29 կղօդեաս։ Բայց յաշակերտաց ոմանք, որպէս զիարդ
կարող ոք էր՝ իւրաքանչիւր ոք ի նոցանէ որոշե-
ցին առաքել ի պէտս եղբարցն որ բնակեալ էին
30 ի Հրէաստանի. Զոր և արարին իսկ՝ առաքեալ առ
երիցսունսն ի ձեռն Բառնաբայ և Սօղոսի։

Գլ. ԺԲ

1 Ընդ ժամանակն ընդ այնոսիկ արկ Հերովդէս ար-
2 քայ ձեռն՝ չարչարել զոմանս ի եկեղեցւոյն։ Եւ ըս-
3 պան զՅակովբոս զեղբայրն Յովհաննու սրով։ Եւտես
եթէ հաճոյ է Հրէից, յաւել եւս առնել զԿեփրոս.
4 և էին աւուրքն բազարջակերաց։ Զոր իբրեւ կալաւ՝
եդ ի բանտի, և մատանեաց չորից չորրորդաց զի-
նուորաց պահել զնա. և կամէր յետ զատկին ածել
5 զնա ժողովրդեանն։ Եւ Պետրոս ի պահեստի էր ի
բանտին, և ազօթք առէպ լինէին եկեղեցւոյն վա-
6 սն նորա առ Աստուած։ Իբրեւ կամեցաւ զնա
ածել Հերովդէս, ի գիշերին յայնմիկ էր Պետրոս
ի քուն ի մէջ երկուց զինուորաց՝ կապեալ կրկին
շղթայիւք, և պահապանքն առաջի դրանն պահէ-
7 ին զբանտն։ Եւ ահա հրեշտակ Տեառն եկն եւոց
ի վերայ, և լոյս ծագեաց ի տունն, և խթեաց
զկողն Պետրոսի, յարոյց զնա և ասէ, Արի վաղ-
8 վագակի. և անկան շղթայքն ի ձեռաց նորա։ Եւ
ասէ հրեշտակն ցնա, Ած զգեստ քո, և արկ զկո-

զաթաթս յոտս քո . և արար այնպէս . և ասէ ցնա,
9 Արկ զձորձս քո և եկ զկնի իմ ։ եւ ելեալ երթայր
զկնէտ , և ոչ գիտեր թէ ճշմարիտ իցէ որ ինչ եղեւն
10 ի հրեշտակէն . զի համարեր երազ տեսանել ։ եւ
իբրեւ անցին նոքա ըստ մի պահ և ըստ երկուս ,
եկին մինչեւ ի դուռն երկաթի՝ որ հաներ ի քա-
ղաքն . որ ինքնին բացաւ նոցա , և *մտեալ անցին
ընդ փողոց մի . և վաղվաղակի ի բաց եկաց ի նը-
11 մանէ հրեշտակն ։ եւ Պետրոս իբրեւ ի միտս եղեւ՝
ասէ , Արդ գիտեմ՝ ճշմարիտ եթէ առաքեաց Տէր
զհրեշտակ իւր , և փրկեաց զիս ի ձեռաց Հերովդի
և յամենայն ակնկալու թենէ ժողովրդեանն Հրէից ։
12 Եւ †ելեալ ի միտս՝ եկն ի տունն Մարեմայ մօր Յով-
հաննու , որ կոչեցաւն Մարկոս . ուր էին բազումք
13 ժողովեալ՝ և աղօթս առնէին ։ Եւ ի բախել զդ-
դուռն տանն , մատեաւ աղախին մի՝ ունկն դնէր ,
14 որում անուն էր Հռովդէ ։ Եւ ծանուցեալ զձայնն
Պետրոսի՝ ի խնդալոյն ոչ երաց զդուռն , ի ներքս
ընթացեալ պատմեաց թէ Պետրոս առ դրանն կայ ։
15 Նոքա ասեն ցնա , Մոլիս . և նա եւս պնդէր թէ
այսպէս է . և նոքա ասէին , Հրեշտակ նորա իցէ ։
16 Եւ Պետրոս առեալ բազմեր . իբրեւ բացին՝ տեսին
17 զնա և զարմացան ։ Եւ նա ձեռամբ լռեցուցեր նոցա
լռել , և պատմեաց՝ որպէս Տէր հնան զնա ի բան-
տէն , և ասէ , Պատմեցէք Յակովբայ և եղբարց զայս.
18 և ել գնաց յայլ տեղի ։ Եւ իբրեւ այդ եղեւ՝ էր
խռովութիւն մեծ ի մէջ զինուորացն , զի՞ արդեօք
19 Պետրոն եղեւ։ Իսկ Հերովդէս իբրեւ խնդրեաց զնա՝

* Ի ց՝՝՝՝՝ ելեալ † Ի ց՝՝՝՝՝ զմտաւ ածեալ

և ոչ եգիտ , հարցեալ զպահապանսն՝ հրամայեաց
սպանանել . և իջեալ ի Հրէաստանէ ի Կեսարիա
20 և անդ լինէր ։ Եւ էր Հերովդէս ցասմամբ ընդ Տիւ-
րացիս և ընդ Սիդովնացիս . և նոքա առ հասարակ
եկին առ նա , և ի բանի արարեալ զԲղաստոս սե-
նեկապետն արքայի , խնդրէին զհաշտութիւն վասն
21 կերակրելոյ երկրին նոցա յարքունեացն ։ Յաւուր
միում յերեւելոյ՝ Հերովդէս զգեցեալ էր զգան-
դերձ թագաւորութեան և նստեր յատենի , և
22 խօսէր ընդ նոսա հրապարակաւ ։ Եւ ամբոխն աղա-
ղակեր թէ Աստուածոյ բարբառ է , և ոչ մարդոյ ։
23 Եւ անդէն եհար զնա հրեշտակ Տեառն , փոխանակ
զի ոչ եառ փառս Աստուածոյ . և եղեալ որդնալից՝
24 սատակեցաւ ։ Եւ բանն Աստուածոյ աճէր և բազմա-
25 նայր ։ Բառնաբաս և Սաւղոս դարձան Երուսաղէ-
մէ՝ իբրեւ կատարեցին զպաշտօնն . առեալ էր ընդ
իւրեանս և զՅովհաննէս՝ որ կոչեցաւն էր Մարկոս ։

Գ.Լ . Ժ.Գ

1 Էին ոմանք Անտիոք ընդ եկեղեցւոյն մարգարէք
և վարդապետք , Բառնաբաս և Շմաւոնն կոչեցեալն
Նիւգէր , և Ղուկիոս Կիւրենացի և Մանայեն դա-
յեակորդի Հերովդի չորրորդապետի , և Սաւղոս ։
2 Մինչդեռ ի պաշտաման Տեառն կային և պահէին ,
ասէ Հոգին Սուրբ , Որոշեցէք ինձ զԲառնաբաս և
զՍաւղոս ի գործ՝ յոր կոչեցեալ է իմ զդոսա ։
3 Յայնժամ պահեալ և աղօթս արարեալ եդին ձեռն
4 ի վերայ նոցա և արձակեցին ։ Եւ նոքա առաքեալք
ի Հոգւոյն Սրբոյ՝ իջին ի Սելեւկիա , և անտի նա-

5 ւեցին ի կիպրոս ։ Եւ հասեալ ի Սաղամինա պատ-
մէին զբանն Աստուծոյ ի ժողովուրդս Հրէից . ու-
6 նէին և զՅովհաննէս պաշտօնեայ ։ Շրջեալ ընդ ա-
մենայն կղզին մինչեւ ի Պափոս , գտին անդ այր
զոմն մոգ սուտ մարգարէ Հրեայ , որումն անուն էր
7 Բարեյեսու ։ Որ էր ընդ փոխանակի բդեշխին Սեր-
գեայ Պօղոսի՝ առն խմաստնոյ , նորա աղաչեալ
զԲառնաբաս և Սօղոս խնդրէր լսել զբանն Աստու-
8 ծոյ ։ Ընդդէմ եկաց նոցա Եղիմաս մոգ , քանզի
այսպէս թարգմանի անուն նորա . խնդրէր շրջել
9 զփոխանակ բդեշխին ի հաւատոց ։ Իսկ Սօղոս որ
և Պօղոս՝ լցեալ Հոգւով Սրբով հայեցաւ ի նա ,
10 Եւ ասէ , Ով լի ամենայն նենգութեամբ և խորա-
մանկութեամբ՝ որդի Սատանային՝ թշնամի ամենայն
արդարութեան , ո՞չ *լռես ի թիւրելոյ զճանա-
11 պարհս Տեառն զուղիղս ։ Եւ արդ՝ ահա ձեռն Տեառն
ի վերայ քո , և եղիցիս կոյր՝ չտեսանել զարեւ
մինչեւ ի ժամանակ մի . և անդէն անկաւ ի վերայ
նորա մէգ և խաւար , և շրջեալ խնդրէր առաջ-
12 նորդս ։ Յայնժամ տեսեալ փոխանակի բդեշխին
զերծն որ եղեն՝ հաւատաց , զարմացեալ ընդ վար-
դապետութիւնն Տեառն ։
13 Եւ ամբարձեալ ի Պափեայ Պօղոսեանք՝ եկին
ի Պերգէ Պամփիլեայ . Յովհաննէս մեկնեալ ի
14 նոցանէ՝ դարձաւ Երուսաղէմ ։ Եւ նոքա զնացեալ
ի Պերգեայ՝ եկին Անտիոք Պիսիդեայ . և մտեալ
15 ի ժողովուրդն յաւուր շաբաթու՝ նստան ։ Եւ
յետ ընթեռնուլոյ զօրէնսն և զմարգարէս , առաքե-

* Ի Յոյն՝ դադարես

ցին առ նոսա ժողովրդապետքն և ասեն , Արք եղ-
բարք , եթէ իցէն ի ձեզ բանք մխիթարութեան
16 առ ժողովուրդ՝ խօսեցարուք ։ Յոտն եկաց Պօղոս
շարժեաց զձեռն և ասէ , Արք Իսրայելացիք և ոք
17 երկնչիք Աստուծոյ , լուարուք ։ Աստուած ժողո-
վրդեանս այսորիկ Իսրայէլի ընտրեաց զհարսն մեր,
և զժողովուրդն բարձրացոյց ի պանդխտութեան
յերկրին Եգիպտացւոց , և ի բազուկ բարձր եհան
18 զնոսա անտի ։ Եւ իբրեւ քառասնամեայ ժամանակ
19 կերակրեաց զնոսա յանապատի ։ Եւ քակեալ ազգս
եօթն յերկրին Քանանու՝ ժառանգեցոյց նոցա զեր-
20 կիր նոցա ։ *Իբրեւ ամս չորեքհարիւր և հնսուն , և
յետ այսորիկ՝՝ ետ նոցա դատաւորս մինչեւ ի Սա-
21 մուէլ մարգարէ ։ †Եւ անտի յառաջ՝՝ խնդրեցին
թագաւոր , և ետ նոցա Աստուած զԱւետուղ որդի
Կիսեայ՝ այր յազգէ Բենիամինի ամս քառասուն ։
22 Եւ իբրեւ փոխեաց զնա , յարոյց նոցա զԴաւիթ
թագաւոր , որումն և ասաց վկայութեամբ , Գտի
զԴաւիթ որդի Յեսսեայ այր ըստ սրտի խնամի , որ
23 արասցէ զամենայն զկամս իմ ։ Ի սորա զաւակէ Աս-
տուած ըստ աւետեացն յարոյց Իսրայէլի զփրկիչն
24 Յիսուս . Ըստ յառաջագոյն քարոզութեանն Յով-
հաննու առաջի երեսաց մտի նորա՝ մկրտութիւն
ապաշխարութեան՝ ամենայն ժողովրդեանն Իսրա-
25 յէլի ։ Եւ իբրեւ լնոյր Յովհաննէս զընթացսն ,
ասէր , Զո՞ զոր կարծէք զինէն թէ իցեմ . չեմ ես
այն , այլ ահա գայ զկնի իմ , որումն չեմ արժա-

* Ի Յոյն՝ Եւ յետ այնորիկ իբրեւ ամս չորեքհա-
րիւր և հնսուն
† Ի Յոյն՝ Եւ ապա

26 նի զկոչիկս ոտիցն լուծանել ։ Աբք եղբարք՝ որդիք
Աբրահամեան առհմին , և որ ի ձեզ երկիւղածք ի-
ցեն Յ Աստուծոյ , ձեզ բանս այս փրկութեան ա-
27 ռաքեցաւ ։ Քանզի որ բնակեալ են Երուսաղէմ ,
և իշխանք նոցա՝ *անծանօթ եղեն ի նմանէ , և
ըստ բարբառոյ՝՝ մարգարէիցն , որ զամենայն շա-
28 բաթան ընթեռնուին՝ †դատեալ կատարեցին . Եւ
ոչ մի ինչ պատճառս մահու գտեալ՝ խնդրեցին ի
29 Պիղատոսէ սպանանել զնա ։ Եւ իբրեւ կատարեցին
զամենայն՝ որ վասն նորա գրեալ էր , իջուցեալ ի
30 փայտէն՝ եդին ի գերեզմանի ։ Ա՛Յ Աստուած յա-
րոյց զնա ի մեռելոց . որ երեւեցաւ աւուրբք բազ-
31 մաք այնոցիկ , Որ ելեալ էին ընդ նմա ի Գալիլէէ
Երուսաղէմ . որք և արդ իսկ վկայք են նորա առ
32 ժողովուրդն ։ Եւ մեք ձեզ աւետարանեմք զխոս-
33 տումն՝ որ առ հարսն եղեալ էր ։ Զի զնոյն Ա-
ստուած կատարեաց առ մեզ որդիս նոցա՝ յարու-
ցեալ զՅեսուա , որպէս և ի Սաղմոսին գրեալ է
Երկրորդումն՝ Որդի իմ ես դու , և ես այսօր ծնայ
34 զքեզ ։ Եւ զի յարոյց զնա ի մեռելոց , և ոչ եւս
դառնալոց է յապականութիւն , այսպէս ասէ Եթէ
Տաց ձեզ զսրբութիւնսն Դաւթի զվստահարիմս ։
35 Քանզի և ի միւսումն ասէ , Ոչ տացես Սրբոյ քումմ
36 տեսանել զապականութիւն ։ Ա՛Յ Դաւիթ յաղթի
անդ իւրում՝ պաշտեաց և ի կամն Աստուծոյ նընջ-
եաց , և յաւելաւ առ հարս իւր՝ և ետես զապա-
37 կանութիւն ։ Բայց զոր Աստուածն յարոյց՝ ոչ ե-

* Ի ՅՈՒՆ՝ ոչ զնա ծանեան և ոչ զբարբառս
† Ի ՅՈՒՆ՝ այլ դատեալ

38 տես զապականութիւն ։ Յայտնի լիցին ձեզ , սրբ
եղբարբ , սոսկալ ձեզ թողութիւն մեղաց աւետա-
39 տարանի . Եւ յամենայնէ յորմէ ոչ կարացիք օրի-
նօքն Մովսիսի արդարանալ , սոսկալ ամենայն որ
40 հաւատայ՝ արդարանայ ։ Զգուշ կացէք՝ գուցէ ե-
41 կեսցէ ի վերայ ձեր ասացեալն ի մարգարէս ։ Տե-
սէք , արհամարհոտք , և զարմացարուք և եղծա-
րուք , զի գործ մի գործեմ ես յաւուրս ձեր , գործ՝
որում ոչ հաւատայցէք , եթէ ոք պատմեսցէ ձեզ ։
42 Եւ իբրեւ ելին անտի , աղաչէին ի միւսում շա-
43 բաթու խօսել նոցա զնոյն բանս ։ Իբրեւ արձա-
կեցաւ ժողովուրդն զէնս երթային բազումք ի Հը-
րէից անտի և ի պաշտօնէից եկամտից զՊօղոսի և
զԲառնաբայ . որք խօսէին ընդ նոսա , և հաւանե-
ցուցանէին զնոսա կալ մնալ ի շնորհն Աստուծոյ ։
44 Եւ ի գալ միւսոյ շաբաթուն , գրեթէ ամենայն
45 քաղաքն ժողովեցաւ լսել զբանն Աստուծոյ ։ Իբրեւ
տեսին Հրէայքն զամբոխն՝ լցան նախանձու , և *ընդ-
դէմ դարձեալ ասացելոցն ի Պօղոսէ՝ հայհոյէին ։
46 Համարձակեալ Պօղոսի և Բառնաբայ՝ ասէին , Ա-
ձեզ նախ պարտ էր խօսել զբանն Աստուծոյ . և
քանզի դուք մերժեցէք զնա , և ոչ արժանի հա-
մարիք զձեզ կենացն յաւիտենականաց , ահաւա-
47 սիկ դառնամք ի հեթանոսս ։ Զի այսպէս պատուի-
րեաց մեզ Տէր , Եդի զքեզ ի լոյս հեթանոսաց
լինել քեզ ի փրկութիւն մինչեւ ի ծագս երկրի ։
48 Զայս լուեալ հեթանոսացն՝ ուրախ լինէին , և փա-

* Ի ՅՈՒՆ՝ հակառակութեամբ ընդդէմ
† Ի ՅՈՒՆ՝ Տեառն

ռաւօր առնէին զբանն Տեառն. և հաւատացին
49 որք էին կարգեալ ի կեանսն յաւիտենականս։ Եւ
ընդէր բանն Աստուծոյ ընդ ամենայն գաւառն։
50 Բայց Հրեայքն դրդռեցին զպաշտօնեայ կանայս
զգաստս՝ և զղխաւորս քաղաքին, և յարուցեալ
հալածանս ի վերայ Պօղոսի և Բառնաբայ՝ հանին
51 զնոսա ի սահմանացն իւրեանց։ Եւ նոցա թօթա-
փեալ զփոշին յոտից ի վերայ նոցա, եկին Իկո-
52 նիան։ Եւ աշակերտքն լնուին խնդութեամբ և Հո-
գւով Սրբով։

Գլ. ԺԴ

1 Եւ եղև Իկոնիոն ի միասին մտանել նոցա ի ժո-
ղովուրդ Հրէից և խօսել նոյնպէս, մինչեւ հաւա-
2 տալ Հրէից և Յունաց բազմաց մեծ։ Բայց ան-
հաւան Հրէայքն յարուցին և չարացուցին զանձինս
3 հեթանոսացն ի վերայ եղբարց։ Բազում ժամանա-
կըս *ընդէին համարձակեալք Տեառն վկայութեամբ՝
բանիւ շնորհաց իւրոց, և տալ նշանս և արուեստս
4 լինելոյ ի ձեռս նոցա։ Եւ եղեն հերձուածք ի բազ-
մութեան քաղաքին, ոմանք էին ի Հրէայն և ո-
5 մանք յառաքեալսն։ Իբրեւ եղև գիմել հեթանո-
սացն և Հրէից իշխանօքն իւրեանց՝ ի թշնամանել
6 և ի քարկոծել զնոսա, Ագդ եղեալ նոցա՝ փախեան
ի քաղաքս Լիկայոնացւոց ի Լիւստրա և ի Դերբէ
և շուրջ զգաւառսն, և անդ աւետարանէին։
7 Եւ այր մի Լիւստրացի ակար յոտից նստէր՝ կաղ

* Ի Յոյն՝ մնային

յորովայնէ մերէ իւրոյ, որոյ երբէք չէր գնացեալ։
8 Սա լսեաւ զխօսսն Պօղոսի, որոյ հայեցեալ ի նա
9 և տեսեալ թէ ունի հաւատս *փրկութեան, Ասէ
մեծաձայն, †Ելիր ասէ՛ յանուն Տեառն մերոյ Յի-
սուսի փրիսատոսի։" Յոտն կաց ի վերոյ ոտից քոց
10 ուղիղ. և վազվղեալ և գնայր։ Եւ ժողովրդոցն
տեսեալ զոր արարն Պօղոս, բարձին զձայնս իւ-
րեանց Լիկայոնարէն և ասեն, Աստուածք նմա-
11 նեալք մարդկան իջին առ մեզ։ Եւ կոչէին զԲառ-
նաբաս Դիոս, և զՊօղոս Հերմէս, քանզի նա էր
12 առաջնորդ բանին։ Իսկ քուրմն Դիոսի որ կայր ա-
ռաջի քաղաքին, ցուլս և պսակս հասուցեալ ի
դուռն՝ հանդերձ բազմութեամբքն կամէր զոհել։
13 Եւ լուեալ առաքելոցն Բառնաբայ և Պօղոսի, պա-
տառեալ զհանդերձս իւրեանց՝ արտաքս վազեցին
14 յամբոխն. աղաղակէին եւ ասէին, Արք, զի՞նչ
գործէք զայդ. մեք ձեզ նմանողք կարեաք մարդիկ
եմք, աւետարանել ձեզ յայդպիսի ունայնութեանց
դառնալ յԱստուած կենդանի, որ արար զերկինս
15 և զերկիր և զծով և զամենայն որ ի նոսա։ Որ
յանցեալ ազգն Թոյլ ետ ամենայն հեթանոսաց
16 գնալ ի ճանապարհս իւրեանց։ Եւ սակայն ոչ ե-
թէ առանց վկայութեան զինքն եթող՝ բարերա-
րութեամբն տալ յերկինից ձեզ անձրեւս և ժամա-
նակս պտղաբերս, լնուլ կերակրովք և ուրախու-
17 թեամբ զսիրտս ձեր։ Եւ զայս ասացեալ՝ հազիւ
լռեցուցանէին զժողովուրդսն ի չզոհելոյ նոցա‡, այլ
գնալ յիւրաքանչիւր տեղիս՝։

* Ի Յոյն՝ բժշկութեան † Ի Յոյն՝ Արի ‡ Ի Յոյն՝ Ա՛ի։

18 Եւ *'ի շրջէն նոցա և ուսուցանել՝ եկին հասին
Յանտիոքէ և յԻկոնիէ Հրեայք. *և 'ի վիճել նոցա
համարձակութեամբ՝ †պատրեցին զժողովուրդսն՝
*'ի բաց կալ 'ի նոցանէ, և ասէին թէ Ընդէ՞ր
մարտուիլն ասեն, այլ զամենայն ատեն.՝ և քար-
կոծեալ զՊօղոս՝ քարշեցին արտաքս քան զքա-
19 ղաքն, և համարեին զնա մեռեալ, Եւ 'ի պատել
զնովաւ աշակերտացն՝ յարեաւ եմուտ 'ի քաղաքն,
և 'ի վաղիւ անդր եղ Բառնաբաւ հանդերձ 'ի Դեր-
20 բէ։ Աւետարանեալ 'ի քաղաքին յայնմիկ և ա-
շակերտեալ զբազումս, դարձան 'ի Լիւստրա և Ի-
21 կոնիոն և Յանտիոքիա. Հաստատեալ զանձինս աշա-
կերտելոցն՝ և մխիթարել կալ հաստատուն 'ի հա-
ւատսն. և թէ՝ Բազում նեղութեամբք պարտ է մեզ
22 մտանել յարքայութիւնն Աստուծոյ։ Զեռնադրե-
ցին նոցա ըստ եկեղեցւոյ՝ երիցունս, աղօթս արա-
րեալ հանդերձ պահօք՝ յանձն արարին զնոսա Տէա-
23 ռըն՝ յոր հաւատացեալն էին։ Եւ շրջեալ ընդ Պի-
24 սիդիա եկին 'ի Պամփիւլիա, Եւ խօսեցեալ 'ի Պեր-
25 գէ զբանն *Տեառն՝ իջին յԱտալիա. Եւ անտի
նաւարկեալ գնացին յԱնտիոք, ուստի էին յանձն
արարեալ շնորհացն Աստուծոյ 'ի գործն զոր կա-
26 տարեցին։ Եկեալ և ժողովեալ զեկեղեցին՝ պատ-
մեցին որչափ արար Աստուած ընդ նոսա. և զի
27 եբաց հեթանոսաց դուռն հաւատոց։ ‡Շրջէին ժա-
մանակս ոչ սակաւ ընդ աշակերտսն։

* Ի Յոյն՝ Էր։ † Ի Յոյն՝ Համոզեցին
‡ Ի Յոյն՝ Մնային

ԳԼ. ԺԵ

1 Եւ ոմանք իջեալ 'ի Հրէաստանէ ուսուցանէին
զեղբարս, եթէ ոչ թլփատիք ըստ օրինացն Մով-
2 սիսի՝ ոչ կարէք ապրել։ Եւ 'ի լինել ոչ սակաւ
հակառակութեան և խնդրոյ՝ Պօղոսի և Բառնաբայ
ընդ նոսա, *եդին ելանել Պօղոսի և Բառնաբայ
և ոմանց 'ի նոցանէ՝ առ առաքեալսն և երիցունս
3 Երուսաղէմ վասն խնդրոյն այնորիկ։ Նոքա յու-
զարկեալք եկեղեցւոյն, շրջէցան ընդ Փիւնիկէ
և ընդ Սամարիա՝ պատմէին զդարձն հեթանոսաց,
և առնէին ուրախութիւն մեծ ամենայն եղբարց։
4 Եւ հասեալ Երուսաղէմ, ընկալեալք եկեղեցւոյն
և յառաքելոցն և յերիցանց՝ պատմեցին որչափ
5 ինչ արար ընդ նոսա Աստուած։ Յարեան ոմանք
'ի հերձուածոյն փարիսեցւոց հաւատացեալք, և
ասեն թէ Պարտ է թլփատել զդոսա, և պատուի-
րել պահել զօրէնսն Մովսիսի։
6 Եւ ժողովեցան առաքեալքն և երիցունք տեսանել
7 վասն բանիս այսորիկ, Եւ յետ բազում խնդիր
լինելոյ յոտն եկաց Պետրոս և ասէ ցնոսա, Արք
եղբարք, դուք ինքնին գիտէք, զի յաւուրցն ա-
ռաջնոց 'ի միջի ձերում ընտրեաց Աստուած ձերա-
նով իմով լսել հեթանոսաց բանին աւետարանի
8 և հաւատալ։ Եւ սրտագէտն Աստուած վկայեաց
նոցա, տալով նոցա զՀոգին Սուրբ որպէս և մեզ։
9 Եւ ոչինչ ընտրութիւն արար 'ի մէջ նոցա և մեր,

* Ի Յոյն՝ եդին 'ի մտի

40 հաւատովք սրբեալ զսիրտս նոցա ։ Արդ ընդէ՞ր
փորձէք զԱստուած , դնել լուծ ի վերայ պարանոցի
աշակերտացն , զոր ոչ հարքն մեր և ոչ մեք կարա-
41 ցաք բառնալ ։ Այլ ընդհակառակն Տեառն Յիսուսի
Քրիստոսի հաւատամք ապրել , զոր օրինակ և նոքա ։
42 Լուեալ ամենայն ժողովրդեանն և լսելին բառնալով
և պողոսի պատմելոյն , որչափ արար Աստուած նշանս
և արուեստս ի հեթանոսս ի ձեռն նոցա ։
43 Եւ յետ լռելոյն նոցա պատասխանի ետ Յակովբ
44 բս և ասէ , Արք եղբարք , լուարուք ինձ . Շմա-
ւոն պատմեաց որպէս յառաջագոյն Աստուած այց
արար առնուլ ժողովուրդ ի հեթանոսաց անուան
45 իւրոյ ։ Եւ ընդ սմին միաբանին բանք մարգարէիցն որ-
46 պէս և գրեալ է , Յետ այսորիկ դարձայց և շինե-
ցից զվարկն Դաւթի զանկեալն , և զկործանեալն
47 նորա վերստին շինեցից , և կանգնեցից զնա . Որպէս
զի խնդրեսցեն մնացորդք մարդկան զՏէր , և ամե-
նայն հեթանոսք՝ յորոց վերայ կոչեցեալ է անուն
48 իմ՝ , ասէ Տէր , որ առնէ զայս ամենայն ։ Յայտնի
49 է ի յաւիտեանս Տեառն *գործ իւր ։ Վասն որոյ
և ես իրաւունս համարիմ մի՛ նեղել զդառնոսիկ՝
50 որք ի հեթանոսացն դառնան առ Աստուած ։ Այլ
տալ Թուղթ առ նոսա՝ խորհել ի կերակրոց կռոց
և ի պոռնկութենէ և ի մեռելոտից և յարենէ ։
51 Զի Մովսէս յազգացն առաջնոց ըստ քաղաքաց
զքարոզիչսն իւր ունի՝ ի ժողովն ըստ ամենայն
շաբաթուց ընթերցեալ ։
52 Յայնժամ՝ հաճոյ թուեցաւ առաքելոցն և երի-

* ի Յ՚՚՚՝ ամենայն գործք

ցանցն սմենայն եկեղեցեաւն՝ , ասս ընտրեալս ի նո-
ցանէ առաքել Յ Անտիոք ընդ Պողոսի և ընդ Բառ-
նաբայ , զՅուդա զկոչեցեալն Բարաբաս և զՇիղա՝
23 ասս գլխաւորս . Գրեալ առ եղբարս ի ձեռն նոցա
զայս ինչ . Առաքեալք և երիցունք և եղբարք ,
Յ Անտիոք և ի Սիւրիա և ի Կիլիկիա եղբարցդ՝
24 որ ի հեթանոսացդ էք , ողջոյն ։ Քանզի լուաք թէ
ոմանք իբրեւ ի մէնջ ելեալ վհատեցուցին զձեզ բանիւք՝
խախտել զանձինս ձեր , ասելն թլփատել և պա-
25 հել զօրէնսն , որոց ոչ հրամայեցաք ։ Հաճոյ թուե-
ցաւ մեզ միաբան ժողովեալոցս , ասս ընտրեալս
յղել առ ձեզ ընդ սիրելիս մեր՝ ընդ բառնաբայ
26 և ընդ Պողոսի , Արք՝ որք մատնեցին զանձինս իւ-
րեանց վասն անուան Տեառն մերոյ Յիսուսի Քրիս-
27 տոսի ։ Արդ առաքեցաք զՅուդա և զՇիղա , և նո-
28 ցա ի բանից ընդոյն պատմել ։ Զի հաճոյ թուեցաւ
Հոգւոյն Սրբոյ և մեզ մի՛ ինչ առելի բեռն դնել
29 ձեզ , բայց միայն ի կարեւորացս յայսոցիկ , ի բաց
կալ ի զոհելոյ կռոց և յարենէ և ի հեղձուցելոյ
և ի պոռնկութենէ . յորոց պահեալ զանձինս բա-
30 րւոք գործէք . ողջ լերուք ։ Եւ նոքա արձակեալք
իջին Յ Անտիոք , և ժողովեալ զժողովուրդն՝ ետուն
31 զԹուղթն ։ Եւ ընթերցեալ ուրախ եղեն ի վերայ
32 մխիթարութեանն ։ Յուդա և Շիղա ղի և նոքա
մարգարէք էին , բանիւք բազմօք մխիթարեցին զեղ-
33 բարս և հաստատեցին ։ Եւ եղեալ անդ ժամանակ՝
արձակեցան խաղաղութեամբ յեղբարց առ առա-
34 քեալսն ։ Եւ հաճոյ թուեցաւ Շիղայի մնալ անդէն ։
35 Բայց Պողոս և Բառնաբաս շրջէին Յ Անտիոք , ու-
սուցանել և աւետարանել և այլով բազմօք զբանն
Տեառն ։

36 Իսկ յետ աւուրց ինչ ասէ Պօղոս ցԲառնաբաս ,
Դարձցուք և երթեսցուք զղջարբք ըստ ամենայն
քաղաքաց՝ յորս քարոզեցաք զբանն Տեառն՝ թէ
37 որպէս ունիցին : Բառնաբաս կամէր առնուլ և զՅով-
38 հաննէս զկոչեցեալն Մարկոս . Բայց Պօղոս *աղաչէր
թէ զմեկնեալն ի նոցանէ ի Պամփիլիա և զչե-
կեալն ընդ նոսա ի գործն մի՛ առնուլ ընդ ին-
39 քեանս : Եւ եղեւ դժառաթիւն մինչեւ մեկնել նոցա
ի միմեանց , Բառնաբայ առնուլ զՄարկոս՝ նաւել
40 ի Կիպրոս : Եւ Պօղոսի ընտրեալ զՇիղա եւ յանձն
արարեալ շնորհացն Աստուծոյ յեղբարց անտի ,
41 Եւ երթէր ի կողմանս Ասորւոց և Կիլիկեցւոց , և
հաստատէր զեկեղեցիսն :

ԳԼ· ԺԶ

1 Եկն եհաս ի Դերբէ և ի Լիւստրա . և ահա ա-
շակերտ ոմն էր անդ անուն Տիմոթէոս , որդի կնոջ
2 Հրեի հաւատացելոյ և հօր Հեթանոսի , Որ վկայեալ
3 էր ի Լիւստրացւոց և Իկոնացւոց եղբարց : Զսա
կամեցաւ Պօղոս ընդ իւր տանել , և առեալ թլե-
փատեաց զնա վասն Հրեիցն՝ որ էին ի տեղիսն
յայնոսիկ , քանզի գիտէին ամենեքին զՀայր նորա
4 Թէ Հեթանոս էր : Իբրեւ անցանէին ընդ քաղաքսն՝
աւանդէին նոցա պահել զՀրամանսն պատուիրեալս
յառաքելոցն և յերիցանցն՝ որք Երուսաղէմ : Եւ
5 եկեղեցիքն հաստատէին ի հաւատս , և յաւելուին
ի թիւն հանապազօր :

* Ի Յոյն՝ արժան դատէր

6 Եւ շրջէցան ընդ Փռիւգիա և ընդ կողմանս Գա-
ղատացւոց , արգելեալք ի Հոգւոյն Սրբոյ խօսել
7 զբանն յԱսիա : Բայց եկեալ առ Միւսեաւս՝ Թեւա-
կոխէին երթալ ի Բիւթանիա , և ոչ համարձա-
8 կեաց նոցա Հոգին Յիսուսի : Եւ անցեալ ըստ Մի-
9 սիա՝ իջին ի Տրովադա : Եւ տեսիլ երեւեցաւ ի
գիշերի Պօղոսի . այր ոմն Մակեդոնացի կայր , աղա-
չէր զնա և ասէր , Անցեալ ի Մակեդոնիա օգ-
10 նեացես մեզ : Եւ իբրեւ զտեսիլն ետես , վաղվաղակի
խնդրեցաք ելանել ի Մակեդոնիա , տեղեկացեալք
թէ հրաւիրեաց զմեզ Տէր աւետարանել նոցա :
11 Եւ ելեալ ի Տրովադա դէպ ուղիղ գնացաք ի
Սամոթրակէ , և ի վաղիւ անդր ի Նէր քաղաքն .
12 Եւ անտի ի Փիլիպպոս , որ է առաջին վիճակ Մա-
կեդոնացւոց՝ քաղաք կողմնիա . և անդ ի քա-
13 ղաքն դադարեալ մեր աւուրս ինչ , Ցաւուրն շա-
բաթու ելաք արտաքոյ քաղաքին առ գետափն՝
ուր *Համարէր աղօթս մատուցանել , և նստեալ խո-
14 սեաք ընդ ժողովեալ կանայսն : Եւ կին ոմն անուն
Լիդիա ծիրանավաճառ ի Թիւատիր քաղաքէ , եր-
կիւղած Աստուծոյ , լսէաւ , զորոյ Տէր խոյ երա-
15 զսիրան անսալ խօսիցն Պօղոսի : Եւ իբրեւ մկրտե-
ցաւ ինքն և տուն իւր , աղաչէր և ասէր , Եթէ
համարիցիք զիս հաւատացեալ Տեառն , մտեալ ի
տուն իմ՝ ագերուք . և բռնադատեաց տարաւ զմեզ :
16 Եւ եղեւ մինչ երթայաք մեք յաղօթս , պատա-
հեաց մեզ աղախին ոմն՝ զոր ունէր ոգի Հարցուկ .

* Յոյն՝ սովորութիւն էր

որ շահս բազում տայր տերանց իւրոց մնալովիս։
17 Նա զՀետ եղեալ Պօղոսի և մեր՝ աղաղակէր և ա-
սէր, Աբբա այս ծառայք Աստուծոյ Բարձրելոյ են,
18 որ պատմեն ձեզ զճանապարհս փրկութեան։ Եւ
զայս առնէր ի բազում աւուրս. զայրացեալ Պօ-
ղոս՝ դարձաւ և ասէ ցոյն, Պատուիրեմ քեզ յա-
նուն Յիսուսի Քրիստոսի, ել ի դմանէ. և ել ի
19 նմին ժամու։ Իբրեւ տեսին տէրքն նորա եթէ հա-
տաւ յոյս շահի նոցա, առեալ զՊօղոս և զՇիղաս՝
20 ձգեցին ի հրապարակ առ իշխանսն։ Եւ ածեալ
զնոսա առ զօրագլուխսն՝ ասէին, Աբբա այս խռո-
վեցուցանեն զքաղաքս մեր. ինքեանք Հրեայք են,
21 Եւ պատմեն մեզ օրէնս՝ զոր չէ արժան մեզ ընդու-
22 նել և ոչ առնել, զի Հռովմայեցիք եմք։ Եւ կու-
տեցաւ ամբոխն ի վերայ նոցա. և զօրագլուխքն
պատառեցին զՀանդերձս *իւրեանց, հրամայեցին
23 գան Հարկանել. Եւ բազում՝ վերս եդեալ ի վերայ
նոցա՝ արկին ի բանտ, պատուիրեցին բանտապե-
24 տին զգուշութեամբ պահել զնոսա։ Որոյ առեալ
զայսպիսի պատուէր՝ արկ զնոսա ի ներքին բանտն,
25 և զոտս նոցա պնդեաց ի կոճղս։ Եւ ի մէջ գի-
շերոյն Պօղոս և Շիղաս կային յաղօթս և օրհնէին
զԱստուած. և ունկն դնէին նոցա կալանաւորքն։
26 Եւ եղեւ յանկարծակի շարժումն մեծ մինչեւ շար-
ժել հիմանց բանտին, և բացան անդրէն դրունքն
27 ամենայն, և ամենեցուն կապանք լուծան։ Իբրեւ
զարթեաւ բանտապետն և եւս բացեալ զդուրս
բանտին, ձգեաց զսուսեր և կամէր երթալ զի՛բո-

* Յոյն՝ նոցա,

28 վին, կարծեր փախուցեալ զկապեալսն։ Եւ կոչեաց
ի ձայն մեծ Պօղոս և ասէ, Մի՛ ինչ գործեր ընդ
29 անձն քո չար, քանզի ամենեքեան աստ եմք։ Խըն-
դրեաց լոյս և դիմեաց ի ներքս, և զահի հարեալ
30 անկաւ առաջի Պօղոսի և Շիղայի. Եւ ածեալ զնո-
սա արտաքս՝ ասէ, Տէրք, զի՞նչ պարտ է ինձ
31 առնել զի ապրեցայց։ Եւ նոքա ասեն, Հաւատա
ի Տէր Յիսուս Քրիստոս, և ապրեսցիս դու և *տա-
32 մենայն տունդ քո։ Եւ խօսեցան նմա զբանն Տեա-
33 ռըն՝ և ամենեցուն որ էին ի տան նորա։ Եւ ա-
ռեալ զնոսա ի նմին ժամու գիշերոյն՝ լուաց ի վէ-
րից անտի, և մկրտեցաւ ինքն և իւրքն ամենե-
34 քեան անդէն վաղվաղակի։ Եւ ածեալ զնոսա ի
տունն իւր՝ եդ առաջի նոցա սեղան. և ուրախ է-
ղեւ ամենայն տամբն հաւատացեալ ՅԱստուած։
35 Եւ իբրեւ այդ եղեւ՝ առաքեցին զօրագլուխքն զՊե-
նեհրական և ասեն, Արձակեա զարդ զայդոսիկ։
36 Եւ պատմեաց բանտապետն զբանն Պօղոսի, եթէ
առաքեցին զօրագլուխքն զի արձակիցիք. արդ ելէք
37 և երթայք խաղաղութեամբ։ Իսկ Պօղոս ասէ ցնո-
սա, Գան Հարեալ զմեզ Հրապարակաւ՝ արս ան-
մեղս Հռովմայեցիս արկին ի բանտ, և արդ լռե-
լեամբ Հանեն զմեզ. ոչ այդպէս, այլ եկեսցեն ին-
38 քեանք իսկ Հանցեն զմեզ։ Եւ պատմեցին զօրա-
գլխացն Նենհրականքն զբանսն. զնոսին Հարան իբրեւ
լուան թէ Հռովմայեցիք են, և եկեալ †աղաչեցին
39 զնոսա։ Եւ իբրեւ Հանին, աղաչէին գնալ ի քա-

* Ի Յ—ն՝ էր։ † Յոյն՝ քաղցրութեամբ խօսեցան ընդ նոսա։

40 զաքէն ։ Եւ ելեալ ի բանտէն մտին առ Լիւդիա, և տեսեալ զեղբարս՝ մխիթարեցին զնոսա և գնացին։

ԳԼ· ԺԷ

1 Եւ շրջեալ ընդ ամփիպօլիս և ընդ Ապողոնիա՝ եկին ի Թեսաղոնիկէ, ուր էր ժողովուրդ Հրէից ։
2 Եւ ըստ սովորութեանն Պօղոս եմուտ առ նոսա, և
3 ի շաբաթս երիս խօսեցաւ ընդ նոսա ի գրոց ։ Բանայր և դնէր առաջի եթէ պարտ էր Քրիստոսի չարչարել և յառնել ի մեռելոց, և Թէ նա է Քրիս-
4 տոս Յիսուս՝ զոր ես պատմեմ ձեզ ։ Եւ ոմանք ի նոցանէ *Հաւանեցան, և վիճակեցան Պօղոսի և Շիղայի, բայց պաշտօնէիցն Հեթանոսաց էր բազմութիւն յոյժ, և ի կանանց գլխաւորաց ոչ սակաւք ։
5 Եւ նախանձեցան †Հրէայքն, և առեալ արս ոմանս գեւհիկս անօրէնս, ամբոխ արարեալ խառնեցին զքաղաքն. և կուտեալ առ յարձարանն Յասոնի,
6 խնդրէցին զնոսա ածել ի հրապարակ ։ Եւ իբրեւ ոչ գտին զնոսա՝ քարշէին զՅասոնի և զոմանս եղբարս առ քաղաքապետսն, բողոք բարձեալ Թէ որք զաշխարհս խառնեցին՝ սոքա և այսր հասին.
7 Զորս ընկալեալ է Յասոնի. և սոքա ամենեքեան հակառակ հրամանացն Կայսեր գործեն, Թագաւոր
8 զոմն առեն զՅիսուս։ Եւ խառնեցուցին զժողովուրդսն
9 և զքաղաքապետսն, որ լսէին զայս ։ Եւ առեալ երաշխաւորութիւն առ ի Յասոնեայ և յայլոցն՝ ար-

* Յն՝՝ հաւատացին,
† Յն՝՝ Հրէայքն որք ոչն հաւատային,

10 ձակեցին զնոսա ։ Բայց եղբարք վաղվաղակի դիշերայն յուղարկեցին զՊօղոս և զՇիղա ի Բերիա. որք իբրեւ հասին անդր՝ ի ժողովուրդն Հրէից գնա-
11 ցին ։ Զի սոքա էին աղնուականագոյնք՝ քան որ ի Թեսաղոնիկէ էին. որք ընկալան զբանն ամենայն յօժարութեամբ, հանապազ քննելին զգիրս, եթէ
12 իցէ այս այսպէս ։ Եւ բազումք ի նոցանէ հաւատացին և ի ցուցից կանանց զգաստից և յարանց
13 ոչ սակաւք ։ Բայց իբրեւ գիտացին որ ի Թեսաղոնիկէ Հրեայքն էին եթէ և ի Բերիա պատմեցաւ ի Պօղոսէ բանն Աստուծոյ, եկին և անդր՝ շարժել
14 և խռովեցուցանել զժողովուրդսն ։ Յայնժամ վաղվաղակի զՊօղոս առաքեցին եղբարք գնալ մինչեւ ի ծովեզր. և մնացին Շիղա և Տիմոթէոս անդէն ։
15 Եւ որք տանէին զՊօղոս՝ ածին զնա մինչեւ Աթէնս. և առեալ պատուէր ի նմանէ առ Շիղա և Տիմոթէոս՝ զի վաղվաղակի եկեսցեն առ նա, և գնացին ։
16 Եւ Աթէնս ի մնալ նոցա Պօղոսի՝ զայրանայր հոգի նորա ի նմա, զի տեսանէր ի կռապաշտու-
17 թեան զքաղաքն ։ Եւ խօսէր ի ժողովրդեանն ընդ Հրեայս և ընդ պաշտօնեայսն, և ի հրապարակն
18 զամենայն օր՝ որոց և պատահէին ։ Ոմանք Epիկուրեանցն և Ստոյիկեանց փիլիսոփայից հակառակէին ընդ նմա. և ոմանք ասէին, Զի՞նչ կամիցի սերմանաբաղս այս խօսել. իսկ այլք՝ Թէ Օտարոտի իմն դից Թուի պատմիչ լինելոյ. քանզի զՅիսուս և
19 զյարութիւնն աւետարանէր ։ Եւ առեալ զնա ածին ՅԱրիսպագոն, և ասէին, Կարասցո՞ւք իմանալ Թէ զի՞նչ է նոր վարդապետութիւնդ՝ որ ի
20 քէն պատմի ։ Օտարացուցիչս իմն բերես ի լսելիս

մեր, կամիմք դիտել Թէ զի՞նչ կամիցի այս լինել։
21 Զի Ամենայնիւք ամենեքին և եկքն օտարք ոչ յայլ
ինչ պարապէին, բայց ասել ինչ կամ լսել նորա-
22 գոյնս։ Եկաց Պօղոս ի մէջ Արիսպագին և ասէ,
Արք Ամենայնիք, ըստ ամենայնի իբրեւ պաշտօնա-
23 սէրս տեսանեմ զձեզ։ Քանզի շրջեալ և տեսեալ
զպաշտամունս ձեր, գտի բագին մի՝ յորում գրեալ
էր Անծանօթի Աստուծոյ. զոր դուք յանծանօթս
24 պաշտեք, ես զնոյն պատմեմ ձեզ։ Աստուած որ ա-
րար զաշխարհս և զամենայն որ ի նմա, նա երկնից
և երկրի է Տէր, ոչ ի ձեռագործ տաճարս բնակէ,
25 եւ ոչ ի ձեռաց մարդկան պաշտի իբրեւ կարօտ
իմիք. նա տայ ամենայնի կեանս և շունչ և զամե-
26 նայն ինչ։ Արար ի միոջէ արեանէ զամենայն ազգս
մարդկան՝ բնակեալ ի վերայ ամենայն երեսաց եր-
կրի, հաստատեաց կարգեալ ժամանակս և սահ-
մանագրութիւնս բնակութեան նոցա՝ խնդրել զԱս-
27 տուած. Զի թերեւս զննիցեն զնա և գտանիցեն.
Նա՝ և ոչ հեռի իսկ է յիւրաքանչիւր ումեքն ի
28 մէնջ։ Զի նովաւ կեամք և շարժիմք և եմք, որպէս
և ոմանք ի ձերոց ճարտարաց ասացին, *Թէ նորա
29 և ազգ իսկ եմք։ Եւ արդ՝ որովհետեւ ազգ եմք
Աստուծոյ, ոչ պարտիմք համարել ոսկւոյ կամ ար-
ծաթոյ կամ քարի՝ որ ի ճարտարութենէ և ի
մտաց մարդոյ քանդակեալ իցէ, զաստուածականն
30 լինել նմանող։ Բայց զժամանակս անգիտութեանն
անտես արարեալ Աստուծոյ, արդ զայս պատուիրէ

* Յոյն՝ Քանզի

31 *մարդկան՝ ամենայն †ուրեք ապաշխարել։ Քանզի
հաստատեաց օր՝ յորում պարտ է դատել զաշ-
խարհս արդարութեամբ ի ձեռն առն՝ որով սահ-
մանեաց տալ հաւատս ամենեցուն՝ յարուցեալ զնա
32 ի մեռելոց։ Իբրեւ լուան յարութիւն մեռելոց,
ոմանք ծաղր առնէին, կէսքն ասէին, Լուիցուք ի
33 քէն վասն այդորիկ միւսանգամ։ Եւ ապա Պօղոս
34 եւ գնաց ի միջոյ նոցա։ Եւ ոմանք արք անկեալք
ի նա՝ հաւատացին, ընդ որս էր և Դիոնէսիոս Ա-
րիսպագացի և կին մի անուն Դամարիս և այլք
ընդ նոսա։

ԳԼ. ԺԸ

1 Ցետ այսորիկ մեկնեալ Պօղոսի յԱթենացւոց
2 անտի՝ եկն ի Կորնթոս. Եւ եգիտ Հրեայ զոմն
անուն Ակիւղաս՝ յազգէ Պոնտացի, այն ինչ եկեալ
էր յԻտալիա, և զՊրիսկիլլա կին նորա, վասն հրա-
մանին Կղօդեայ՝ որոշել զամենայն Հրեայս ի Հռով-
3 մայ. և էարեցաւ ի նոսա։ Եւ վասն զի համա-
րուեստ էր, եղեւ առ նոսա և գործէր, քանզի էին
4 խորանակարք արուեստիւ։ Եւ խօսէր ի ժողովրդ-
դեանն ըստ ամենայն շաբաթուց, և հաւանեցու-
5 ցանէր զՀրեայս և զԵթանոսս։ Իբրեւ իջին ի Մա-
կեդոնիայ Շիղա և Տիմոթէոս, ‡տոկեր հոգւովն
Պօղոս դնել վկայութիւն Հրեից Թէ Յիսուս է
6 Քրիստոս։ Եւ չընդդէմ դառնալ նոցա և ի

* Յոյն՝ ամենայն մարդկան † Յոյն՝ ուրեք
‡ Յոյն՝ եռայր

հայհոյել, թօթափեաց զձորձս և ասէ ցնոսա, Արիւն
ձեր ի գլուխս ձեր, քաւեալ եմ ես, յայսմ հե-
7 տէ ի հեթանոսս երթամ։ Եւ գնացեալ անտի՝
եմուտ ի տուն ուրումն, որում անուն էր Տիտոս
Յուստոս՝ պաշտօնեայ Աստուծոյ. որոյ ազարանքն
8 էին մերձ ի ժողովարանն։ Կրիսպոս ժողովրդապետ
հաւատաց ի Տէր ամենայն տամբ իւրով. և բազ-
մաց ի Կորնթացւոցն լուեալ՝ հաւատային և մկրը-
9 տեցան։ Եւ ասէ Տէր ի գիշերին տեսլեամբ ցՊօղոս,
10 Մի՛ երկնչիր, այլ խօսեաց և մի՛ լռեր, զի անդր ես
ընդ քեզ եմ, և ոչ ոք ընդդէմ դարձցի քո՝ ի չար-
չարել զքեզ. զի անդր ժողովուրդ է իմ բազում ի
11 քաղաքիս յայսմիկ։ Եւ նստաւ անդ տարի մի և
ամիսս վեց՝ ուսուցանել նոցա զբանն Աստուծոյ։
12 Եւ Գաղիովնէսու փոխանակաւ բդեշխին Աքայե-
ցւոց յարեան միաբան Հրեայքն ի վերայ Պօղոսի,
13 և տարին զնա յատեան. եւ ասէին եթէ Արտաքոյ
օրինաց պատրէ սա զմարդիկ՝ պաշտել զԱստուած։
14 Եւ իբրեւ մերձ էր Պօղոս բանալ զբերան իւր,
ասէ Գաղիովն ցՀրեայսն, եթէ էր ինչ անիրաւու-
թիւն կամ խարդախութիւն չարեաց, ով Հրեայք,
15 ի դէպ էր ինձ անսալ ձեզ։ Ապա եթէ խնդիրք
ինչ են վասն բանի և անուանց և օրինաց ձերոց՝
տեսէք ձեզէն, քանզի դատաւոր այդպիսի իրաց
16 չկամիմ լինել։ Եւ մերժեաց զնոսա յատենէ ան-
17 տի։ Եւ առեալ ամենեցուն Յունացն զՍոսթենէս
ժողովրդապետն՝ հարկանէին առաջի ատենին, և
18 ոչինչ զոյնմանէ Գաղիովնի փոյթ լինէր։ Բայց Պօ-
ղոսի տակաւին մնացեալ աւուրս բազումս, յետ
բարձ հրաժարեալ՝ նաւէր ի Ասորիս, և ընդ նմա

Պրիսկիղա և Ակիւղաս՝ փոքրել զգլուխ ի կենչրեա,
19 քանզի ուխտադիր էր։ Եւ հասեալ ի Եփեսոս՝ զնո-
սա եթող անդ, և ինքն մտեալ ի ժողովուրդն
20 խօսէր ընդ Հրեայսն։ Եւ աղաչեցին զնա բազում
21 ժամանակս լինել անդ, և ոչ առ յանձն. Այլ
հրաժարեաց ի նոցանէ և ասէ,* Դարձեալ շրջե-
ցայց առ ձեզ Աստուծոյ կամօք. ամբարձաւ յե-
22 փեսէայ, եւ իջեալ ի կեսարիա՝ ել և ետ ողջոյն
23 եկեղեցւոյն, էջ յԱնտիոք։ Եւ եղեալ անդ ժա-
մանակ մի՝ ել շրջել կարգաւ ընդ Գաղատացւոց
աշխարհն և ընդ Փռիւգիա, հաստատել զամենայն
աշակերտեալսն։
24 Հրեայ մին Ապեղէս անուն Աղէքսանդրացի յազ-
գէ, այր ճարտարաբան, եկն ևհաս Եփեսոս, զո-
25 րաւոր էր գրովք։ Սա էր տեղեկացեալ ճանապարհին Տեառն, և եռայր հոգւով, խօսէր և ուսոյց
ճշմարտութեամբ վասն †Յիսուսի. գիտէր
26 միայն զմկրտութիւնն Յովհաննու։ Սա սկսաւ հա-
մարձակել ի ժողովրդեանն. և լուեալ ի նմանէ
Ակիւղայ և Պրիսկիղայ, առին զնա առ իւրեանս,
և ճշմարտագոյնս պատմեցին նմա զճանապարհն
27 Աստուծոյ։ Իբրեւ կամեցաւ նա գնալ յԱքայիա,
‡յօժարեալ եղբարք՝՝ գրեցին առ աշակերտան ըն-
դունել զնա. որ իբրեւ եհաս անդր՝ բազում նը-
պաստ լինէր հաւատացելոցն ի ձեռն շնորհացն։
28 Քանզի պնդագոյն զՀրեայսն յանդիմանէր հրապա-
րակաւ. ցուցանել գրովք՝ եթէ Քրիստոս է Յիսուս։

---

* Ոմանք յաւելուն ի ցանկն, Պարտ է ինձ ապաքէն
զառաջիկայ տօնն կատարել Երուսաղէմ, բայց
† Ցայն՝ Տեառն ‡ Ցայն՝ քաջալերեալ եղբարցն՝

Գլ. ԺԹ.

1 Եւ եղեւ մինչդեռ Ապողոս ի Կորնթոս էր, Պո-
ղոսի շրջեալ վերին կողմանքն՝ և իջեալ Եփե-
2 սոս, և գտեալ զմանս զաշակերտս, Ասէ ցնոսա,
եթէ Հոգի Սուրբ ընկալարո՞ւք ի հաւատալն. Նո-
քա ասեն ցնա, Ա՛յլ և ոչ թէ Հոգի Սուրբ գո-
3 ցէ՝ լսեալ է մեր։ Եւ ասէ, Իսկ ի՞նչ մկրտեցա-
րո՞ւք. Նոքա ասեն, Ի Յովհաննու մկրտութիւնն։
4 Եւ ասէ Պողոս, Յովհաննէս մկրտեաց մկրտութիւն
ապաշխարութեան ամենայն ժողովրդեանն, և ա-
սէր զի որ գալոցն է յետ նորա՝ ի նա հաւատասց-
5 ցեն, այսինքն է ի Յիսուս Քրիստոս։ Եւ իբրեւ
6 լսեան, մկրտեցան յանուն Տեառն Յիսուսի։ Եւ
ի դնել ի վերայ նոցա Պողոսի զձեռն, եկն Հոգին
Սուրբ ի վերայ նոցա, խօսէին լեզուս և մարգա-
7 բէականս։ Եւ էին ամենեքեան արք իբրեւ երկո-
8 տասան։ Եւ մտեալ ի ժողովուրդն՝ համարձակէր
ամիսս երիս, խօսէր և հաւանեցուցանէր վասն ար-
9 քայութեանն Աստուծոյ։ Իբրեւ ոմանք խստա-
նային և ընդդէմ դառնային բամբասել զճանա-
պարհն առաջի բազմութեանն, մեկնեալ ի նոցանէ՝
որոշեաց զաշակերտսն, հանապազօր խօսէր ի դի-
10 ւանին Տիւրաննայ ուրումն։ Եւ այս եղեւ զերկամ
մի, մինչեւ ամենայն բնակչացն Ասիացւոց լսել
11 զբանն Տեառն՝ Հրէից և հեթանոսաց։ Եւ զօրու-
թիւնս ոչ *սակաւս առնէր Աստուած ի ձեռն

* Ց՝ՆՆ՝ աննշանս

12 Պողոսի. Մինչ զի և ի հիւանդս տանել *ի քրք-
ոանէ նորա թաշկինակս կամ վարշամակս, և մեր-
ժել ի նոցանէ ախտիցն, և այսոց չարաց ելանել։
13 Յանդգնեցան ոմանք և ի շրջող Հրէից՝ որ երդ-
մնեցուցիչքն էին, անուանեալ ի վերայ այնոցիկ՝
որ ունէին այսս չարս, զանուն Տեառն Յիսուսի,
և ասէին, Երդմնեցուցանեմ զձեզ ի Յիսուս զոր
14 Պողոս քարոզէ։ Էին ուրուք Սկեւեայ Հրէի քա-
15 հանայապետի եօթն որդի, որ զայս առնէին։ Պա-
տասխանի ետ այն չար և ասէ ցնոսա, ԶՅիսուս
գիտեմ և զՊողոս ճանաչեմ, բայց դուք ո՞վ էք։
16 Եւ վազեաց պրն՝ յորում էր այն չար՝ ըմբռնեալ
†չերկոսեան յաղթահարեաց զնոսա, մինչեւ մերկս
17 և վիրաւորս փախչել ի տանէ անտի։ Եւ այս յայտ-
նի եղեւ ամենայն Հրէից և հեթանոսաց՝ որ բնա-
կեալ էին Եփեսոս. և անկաւ երկիւղ յամենե-
սեան ի նոսա, և մեծանայր անուն Տեառն Յիսուսի։
18 Եւ բազումք ի հաւատացելոցն գային, և խոստո-
19 վան լինէին և պատմէին զգործս իւրեանց։ Եւ բա-
զումք ի կախարդասարացն բերէին զգիրսն, այրէին
առաջի ամենեցուն. և համարեցան զգինս նոցա և
20 գտանէին արծաթոյ բիւրս հինգ։ Եւ այսպէս բանն
Աստուծոյ աճէր և զօրանայր։
21 Եւ իբրեւ կատարեցաւ այս՝ եդ Պողոս ի մտի
շրջել ընդ Մակեդոնիա և ընդ Աքայիա և գալ
Երուսաղէմ. ասէ եթէ ցետ երթալոյն իմ անդր՝
22 պարտ է լինձ և զՀռովմ տեսանել։ Առաքեաց ի
Մակեդոնիա երկուս ի պաշտօնէիցն իւրոց, զՏի-

* Ց՝ՆՆ՝ ի մարմնոյ † Ց՝ՆՆ՝ զնոսա

մոթէոս և զերաստոս , և ինքն մնաց ժամանակ ինչ
23 Ասիա : Եւ եղեւ ի ժամանակին յայնմիկ խռո-
24 վումբ ոչ սակաւ վասն ճանապարհին : Իսկ Դե-
մետրիոս ոմն անուն արծաթագործ գործէր մեհենս
արծաթիս Արտեմի դից , և տայր ճարտարացն լի-
25 նել ոչ սակաւ շահ . Որ ժողովեաց իսկ զնեռագէտս
արուեստին և ասէ , Արք , դուք գիտէք ,
26 զի յայսմ գործոյ է շահ մեզ : Եւ տեսանէք և լսէք
եթէ ոչ միայն զնեփեսացւոց , այլ գրեթէ զամենայն
իսկ Ասիացւոց՝ Պողոս այս հաւանեցուցեալ շըր-
ջեաց բազում՝ ժողով՝ ասել թէ Ոչ են աստուածք
27 ձեռագործք : *Եւ ոչ միայն այս ճգնէ զմեր կողմնս՝՝
գալ ի յանդիմանութիւն , այլ և զմեծին աստուա-
ծոյ Արտեմեայ զմեհեանն յոչնչ համարել . նա և
քակելոց եւս իցէ մեծութիւն նորա , զոր ամենայն
28 Ասիա և տիեզերք պաշտեն : Եւ զայս իբրեւ լուան ,
լի եղեն բարկութեամբ . աղաղակէին և ասէին ,
29 Մեծ է Արտեմիս եփեսացւոց : Եւ լցաւ քաղաքն
խռովութեամբ , դիմեցին առ հասարակ ի թէատ-
րոնն , յափշտակէին զԳայիոս և զԱրիստարքոս Մա-
30 կեդոնացի՝ զուղեկիցսն Պողոսի : Բայց Պողոս իբրեւ
կամեցաւ մտանել յամբոխն , ոչ թոյլն զնա աշա-
31 կերտքն : Ոմանք և Ասիապետացն՝ որ էին նորա
բարեկամք , յղէին առ նա և աղաչէին , մի տալ
32 զանձն ի թէատրոնն : Այլք այլ ինչ աղաղակէին ,
զի էր ժողովն նոցա խռովեալ . և բազումք ի նո-
ցանէ ոչ գիտէին թէ վասն որ ժողովեալ էցեն :
33 Եւ յամբոխին բազմութենէ յառաջ կալան զԱ-

* Յոյն՝ Ուսոի վտանգ է մերում կողման ոչ միայն

ղէքսանդրոս . և իբրեւ ածին զնա Հրեայքն յա-
ռաջ , Ալէքսանդրոս շարժեաց զձեռն և կամէր պա-
34 տասխանի առնել ամբոխին : Իբրեւ գիտացին եթէ
այրն Հրեայ է , միաբարբառ եղեալ ամենեցունց՝
իբրեւ ժամ երկուս աղաղակել եթէ Մեծ է Ար-
35 տեմիս Եփեսացւոց : Լուեցոյց դպրապետն զամբոխն
և ասէ , Արք Եփեսացիք , իսկ ո՞ է ի մարդկանէ՝
որ ոչ գիտէ զեփեսացւոց քաղաքս մեհենադրդ
36 մեծին Արտեմեայ դիցն և Դիոսփետեայ : Եւ զի այդ
այդպէս է անշուշտ՝ ձեզ պարտ է հանդարտել և
37 մի՛ ինչ յանդգնութեամբ գործել : Ածէք զարբեդ
զայդոսիկ այսր , ոչ մեհենակապուտս և ոչ հայհո-
38 յիչս աստուածոյն *մերոյ : Զի եթէ Դեմետրիոս և որք
ընդ նմա ճարտարք ունիցին ինչ ընդ ումեք բանս ,
†յատեան երթիցեն , և դատաւորք՝՝ գոն , և ամ-
39 բաստան լիցին զմիմեանց : Ապա եթէ վասն այլ
իրիք խնդիր իցէ՝ յօրինաւոր ժողովն վճարեսցեն :
40 Քանզի և մեզ վիճ վտանգի է ընդ կառուցս այսր
աւուր՝ ‡առանց իրիք յանցանաց լինելոյ՝՝ , զորմէ
ոչ կարասցուք պատասխանի տալ վասն §ժողովոյս
այսորիկ : Եւ զայս ասացեալ՝ արձակեաց զժողովն :

* Յոյն՝ ձերոյ :
† Յոյն՝ աւուրք տանի և փոխանակ դգիշիի
‡ Յոյն՝ իբրեւ խռովայոյզս ամբաստանելոյ ,
§ Յոյն՝ ամբոխիս

Գլ. Ի

1 Եւ յետ դադարելոյ ամբոխին՝ կոչեաց Պօղոս զա-
շակերտսն, *եւ մխիթարեաց՝՝. ողջոյն ետ և եղ
2 գնաց ի Մակեդոնիա։ Եւ շրջեալ ընդ կողմանսն
ընդ այնոսիկ, և մխիթարեալ զնոսա բանիւք բազ-
3 մաք՝ եկն Յելլադա։ Իբրեւ արար անդ ամիսս երիս,
եղեւ նմա դաւ ի Հրէից, մինչդեռ կամէր ելանել
Ասորիա. խորհուրդ կալաւ դառնալ ընդ Մակե-
4 դոնիա։ Եւ երթայր ընդ նմա մինչեւ Ասիա Սո-
սիպատրոս Պիւռա Բերիացի, և ի Թեսաղոնիկեցւոց
Արիստարքոս և Սեկունդոս, և Գայիոս Դերբացի
և Տիմոթէոս, և Ասիացիք՝ Տիւքիկոս և Տրոփիմոս։
5 Սոքա յառաջ երթեալ մնային մեզ ի Տրովադա։
6 Եւ մեք նաւեցաք յետ աւուրցն բաղարջակերաց
ի Փիլիպպէից՝ և եկաք առ նոսա ի Տրովադա՝ մին-
չեւ յաւուրս հինգ, անդ դադարեցաք աւուրս եօ-
7 թըն։ Եւ յաւուրն †շաբաթուց՝ մինչդեռ ժողո-
վեալ էաք լեկանել զհացն, Պօղոս խօսէր ընդ նոսա՝
զի գնալոց էր ի վաղիւ անդր. և երկայնեաց զբանն
8 մինչեւ ի միջ գիշերոյն։ Էին լապտերք բազումք
9 ի վերնատանն, ուր էաքն ժողովեալ։ Եւ նստեր
ոմն երիտասարդ անուն Եւտիքոս ի վերայ պատու-
հանին, նիրհէր ի քուն թանձրութեան. ի խօսելն
Պօղոսի յաճախ, ընկղմեալ ի քնոյ անտի՝ անկաւ
յերրորդ դասիկոնէն ի վայր, և բարձաւ մեռեալ։

* Ի ցՆերն ւէր։
† ցՆնն՝ միաշաբաթուս՝

10 Եւ իջեալ Պօղոսի անկանէր զնովաւ, առնոյր զնա
ընդ գիրկս և ասէր, Մի՛ խռովիք, քանզի հոգի
11 սորա ի սմին է։ Եւ եւ երեկ զհացն և ճաշակեաց.
և բազում եւս խօսեցաւ մինչեւ յառաւօտ, և
12 ապա եւ գնաց։ Եւ ածին զպատանին կենդանի,
13 և մխիթարեցան ոչ սակաւ։ Եւ մեք մտեալ ի նաւն՝
ամբարձաք Ասոնէն, անտի ակն ունէաք միւսան-
գամ առնուլ զՊօղոս, զի այնպէս պատուիրեալ
14 էր՝ մինչ ինքն զսամաքաւս երթալոց էր։ Եւ իբ-
րեւ դիպեցաւ մեզ ի Ասոնէն, առեալ զնա եկաք
15 ի Մետիլենէ։ Եւ անտի նաւեալ՝ ի վաղիւ անդր
հասաք հանդէպ Քիոյ, և ի միւս օրն հասաք ի
16 Սամոս, *և ի վաղիւ անդր եկաք ի Մելիտոն։ Զի
ի մտի եդեալ էր Պօղոսի նաւել առ Եփեսոս՝
որպէս զի մի՛ լիցի նմա ժամանակ ինչ յամել Ա-
սիա. քանզի փութայր, եթէ հնար ինչ էցէ նմա՝
զօրն Պենտեկոստէից երթալ Երուսաղէմ։
17 Եւ ի Մելիտոյ յղեալ Եփեսոս՝ կոչեաց զե-
18 ղբարցունս եկեղեցւոյն։ Եւ իբրեւ եկին առ նա, ասէ
ցնոսա, Դուք ձեզէն գիտէք յօրէ յառաջնմէ՝ յոր-
մէ եկի Ասիա, որպէս ընդ ձեզ զամենայն ժա-
19 մանակս եղէ. Ծառայել Տեառն ամենայն խոնարհ-
հութեամբ, և բազում արտասուօք և փորձու-
թեամբք՝ որ դիպեցան ինձ ի նենգութեանց Հրէից։
20 Որպէս ոչինչ զանգիտեցի յօգտակարացն չպատմել
ձեզ և ուսուցանել զձեզ հրապարակաւ և առանձին.
21 Տալ վկայութիւն Հրէից և Հեթանոսաց զապաշ-
խարութեանն՝ որ առ Աստուած, և զՏեառնէն

* ցՆնն՝ և մնացեալ ի Տրոգիլիոն՝

22 որ ի Տէր մեր Յիսուս Քրիստոս : Եւ արդ ահաւա-
սիկ ես կապեալ Հոգւով երթամ Յերուսաղէմ, և
23 որ ինչ անդ ընդ իս անցանելոց իցէ՝ չգիտեմ : Բայց
զի Հոգին Սուրբ ըստ քաղաքաց վկայէ ինձ , և ասէ
24 եթէ կապանք և նեղութիւնք սպան քեզ : Ա.Յլ *և
ոչ իւիք" համարիմ զանձն իմ պատուական՝ որպէս
կատարել զընթացս իմ ուրախութեամբ , և զպաշ-
տօնն զոր առի ի Տեառնէ Յիսուսէ՝ վկայ լինել
25 աւետարանի շնորհացն Աստուծոյ : Եւ արդ ահա-
ւասիկ գիտեմ ես թէ ոչ եւս տեսանելոց էք զերեսս
իմ դուք ամենեքեան , յորս շրջեցայ քարոզել
26 †զարքայութիւնն : Վասն որոյ վկայութիւն դնեմ
ձեզ յաւուր յայսմիկ՝ զի սուրբ եմ յարենէ ամե-
27 նեցուն : Քանզի ոչ խորշեցայ ի պատմելոյ ձեզ զա-
28 մենայն կամս Աստուծոյ : Ձգոյշ կացէք անձանց և
ամենայն հօտիդ , յորում եդ զձեզ Հոգին Սուրբ
տեսուչս՝ հովուել զժողովուրդ Տեառն , զոր ‡ապ-
29 րեցոյց արեամբ իւրով : Քանզի գիտեմ ես եթէ
յետ իմոյ մեկնելոյ գայցեն գայլք յափշտակողք ի
30 ձեզ , որ ոչ խնայեսցեն հօտին : Եւ ի ձենջ յա-
րիցեն արք որք խօսեցին թիւրս՝ ձգել զաշակերտսն
31 զկնի իւրեանց : Վասն այսորիկ արթուն կացէք և
յիշեցէք զի §զերկուս ամ զցայդ և զցերեկ ոչ դա-
դարեցի արտասուօք խրատել զմի ի իւրաքանչիւր :
32 *Եւ արդ յանձն առնեմ զձեզ Աստուծոյ և բանի

* Յայլս՝ ոչ ինչ փայթ է ինձ և ոչ
† Յայլս՝ զարքայութիւնն Աստուծոյ :
‡ Յայլս՝ ստացաւ § Յայլս՝ զերեամ
* Յայլս՝ Եւ արդ , եղբարք ,

շնորհաց նորա , որ կարող է շինել՝ և տալ ձեզ
33 ժառանգութիւն ընդ սուրբսն ամենայն : Արծա-
թոյ կամ ոսկւոյ կամ հանդերձից ոչ ուրուք ի
34 ձենջ ցանկացայ : Դուք ինքնին գիտէք զի զպետան
իմ և որոց ընդ նմա էին՝ պաշտեին ձեռքս այս :
35 Եւ զամենայն ինչ ցուցի ձեզ, զի այսպէս պարտ է
վաստակել և զարմանել զկիւանդս , և յիշել
զբանն Տեառն Յիսուսի , զոր ինքն իսկ ասաց , Երա-
36 նելի է մանաւանդ տալ քան առնուլ : Եւ զայս
իբրեւ ասաց , եդեալ ծունր ամենեքեան՝ եկաց
37 յաղօթս : Բազում լալիւն եղեւ ամենեցուն , և ան-
կեալ զպարանոցսն Պօղոսի՝ համբուրէին զնա :
38 Մասնաւորապէս մանաւանդ ի վերայ բանին՝ զոր ասէր
թէ ոչ եւս տեսանելոց են զերեսս նորա . և յու-
զարկեցին զնա ի նաւ անդր :

ԳԼ. ԻԱ.

1 Եւ իբրեւ եղեւ ելանել մեզ և մեկնել ի նոցա-
նէ , *հանդէպ գնացեալ եկաք ի Կով , և ի վաղիւ
2 անդր ի Հռոդոս և անտի ի Պատարա : Եւ գտեալ
նաւ մի զի երթայր ի Փիւնիկէ , և ելեալ ի նա
3 գնացաք : Եւ յայտ եղեալ կիպրեայ՝ թողաք զնա
ի ձախակողմն , նաւեցաք Ասորիս և իջաք ի Տիւ-
4 րոս , քանզի անդ էր նաւն թափելոց զբեռինս : Եւ
գտեալ զաշակերտսն՝ կացաք անդ աւուրս եօթն .
որք ասէին ցՊօղոս ի ձեռն Հոգւոյն՝ մի ելանել
5 Յերուսաղէմ : Եւ իբրեւ եղեւ մեզ կատարել զա-

* Յայլս՝ դեպ ուղիղ

ւսւբան՝ ելեալ գնացաք , յուզարկեալ զմեզ ամե-
նեցունն հանդերձ կանամբք և որդւովք մինչեւ ար-
տաքոյ քաղաքին . և եդեալ ծունր առ ծովեզերին
6 կացաք յաղօթս : Եւ հրաժարեցաք ի միմեանց և
ելաք ի նաւն, և նոքա դարձան յիւրեանց տեղիս :
7 Եւ մեր զնաւն առեալեալ ի Տիւրոսէ՝ հասաք
ի Պտղոմայիդա , և ողջոյն տուեալ եղբարց՝ եղաք
8 օր մի առ նոսա : Եւ ի վաղիւ անդր ելեալ անտի՝
եկաք ի Կեսարիա , և մտեալ յապարանն Փիլիպ-
պոսի աւետարանչի՝ որ էր յեօթանց անտի , ադաք
9 առ նմա : Նորա էին դստերք չորք կոյսք մարգա-
10 րէք : Եւ ի լինելն մեր անդ աւուրս բազումս , էջ
11 ոմն ի Հրէաստանէ մարգարէ անուն Ագաբոս . Եւ
եկեալ առ մեզ , առեալ զգօտին Պօղոսի՝ կապեաց
զոտս և զձեռս իւր , և ասէ , Այսպէս ասէ Հոգին
Սուրբ , զայրն որոյ գօտիս այս է՝ այսպէս կապես-
ցեն Հրեայքն Երուսաղէմ Հրէայք և մատնեսցեն ի ձեռս
12 հեթանոսաց : Եւ իբրեւ լուաք զայն՝ աղաչէաք մեք
և որ ի տեղւոջն էին՝ չելանել նմա Երուսաղէմ :
13 Յայնժամ պատասխանի եւս Պօղոս , Զինչ գործէք ,
*ղի՞ լայբդ և ճմլեցուցանէք զսիրտ իմ . քանզի ես
ոչ միայն կապելոյ՝ այլ և մեռանելոյ Երուսաղէմ
պատրաստ եմ վասն անուանն Տեառն Յիսուսի
14 *Քրիստոսի : Եւ ի չանսալն նորա լռեցաք , ասեմք ,
Տեառն կամք լիցին :
15 Եւ յետ աւուրցն այնոցիկ հանդերձեալ ելա-
16 նեաք Երուսաղէմ : Եկին ընդ մեզ և յաշակեր-
տաց անտի կեսարացւոց , և տանէին *զմեզ առ

* ի ց-ն՝ չ+ :

որում վասն ունելոց էաք՝ Մնասոնի ումեմն կիպ-
17 բացւոյ առաջին աշակերտի : Եւ ի մտանելն մեր
Երուսաղէմ , խնդութեամբ ընկալան զմեզ եղ-
18 բարք : Ի վաղիւն անդր եմուտ Պօղոս ընդ մեզ առ
19 Յակովբոս , և եկին ամենայն երիցունքն : Եւ ողջ
ջոյն տուեալ նոցա՝ պատմէր մի ըստ միոջէ զոր ա-
բար Աստուած ի հեթանոսս ի ձեռն պաշտաման
20 նորա : Եւ նոցա լուեալ փառաւորք առնէին զԱս-
տուած , և ասեն ցնա , Տեսանե՞ս , եղբայր , քա-
նի բիւրք են հաւատացելոցն Հրէից , և ամենեքեան
21 նախանձաւորք օրինացն են : Բայց իրաղեկ եղեն վասն
քո՝ թէ ապստամբութիւն ուսուցանես ի Մովսիսէ՝
որոց ի հեթանոսս ամենայն Հրէայք են . ասես , մի
թլփատել զորդիս նոցա , և ի ըստ կրօնիցն գնալ :
22 Արդ զի՞նչ լինիցի՝ *ապաքէն լսեն եթէ եկեալ ես :
23 Արդ զայս որա զոր ասեմք քեզ . Են ի մեզ արք
24 չորք ուխտադիրք յանձինս իւրեանց . Զնոսա ա-
ռեալ՝ սրբեացիս ընդ նոսա . և ծախեա ինչ ի նոսա
զի գերծցեն զղլուխս . և գիտասցեն ամենեքին թէ
զորոց իրաղեկ եղեն զքեզ՝ ոչինչ է , այլ միաբա-
25 նիս և դու պահել զօրէնս : Բայց վասն հաւատա-
ցելոցն հեթանոսաց՝ մեք առաքեցաք օրպէս ընտրե-
ցաք , մի ինչ այնպիսի պահել նոցա . բայց միայն
զդուշանալ ի կուռց զոհելոյ և յարեանէ և ի հեղ-
26 ձուցելոյ և ի պոռնկութենէ : Յայնժամ Պօղոս
առեալ զարսն՝ ի վաղիւ անդր ընդ նոսա սրբեալ
եմուտ ի տաճարն . յայտ առնել զկատարումն
աւուրցն սրբութեան , մինչեւ մատուաւ ի վերայ

* Յ-ն՝ ապաքէն խնդրելոց է ամբոխ , զի

իւրաքանչիւր ուրուք ի նոցանէ պատարագ ։
27 Եւ իբրեւ մերձ էին հոմն աւուրքն ի կատարել,
տեսեալ զնա ի տաճարին Ասիացւոց Հրէիցն՝ *զե-
ղուին զնովաւ՝ զամենայն զամբոխն . և արկեալ ի
28 նա ձեռս՝ աղաղակէին , Արք Իսրայէլացիք , օգնե-
ցէք . այս այր է՝ որ հակառակ ժողովրդեանն և
օրինաց և տեղւոյս այսորիկ ամենեցուն ամենայն
ուրեք ուսուցանէ , մինչեւ Հեթանոսս եւս եմոյծ ի
29 տաճարն և պղծեաց զսուրբ տեղին ։ Քանզի էր յա-
ռաջագոյն տեսեալ զՏրոփիմոս զնեփեսացի ի քա-
ղաքին ընդ նմա . զոր կարծէին եթէ ի տաճար
30 անդր եմոյծ Պօղոս ։ Շարժեցաւ քաղաքն ամենայն,
և կուտեցաւ ժողովուրդն , և առեալ զՊօղոս՝ ձգէին
արտաքոյ տաճարին . և վաղվաղակի փակեցան դը-
31 րունքն ։ Եւ խնդրէին զնա սպանանել , եկաս զլուխ
ի հաղարապետ գնդին , եթէ խառնեալ է ամենայն
32 Երուսաղէմ՝ Որոյ անդէն առեալ զօրականս և հա-
րիւրապետս՝ դիմեաց ի վերայ նոցա . և նոցա տե-
սեալ զհաղարապետն և զօրականսն , դադարեցին
33 ի հարկանելոյ զՊօղոս ։ Յայնժամ մատուցեալ հա-
զարապետն կալաւ զնա , և հրամայեաց կապել կրկ-
կին շղթայիւք՝ և հարցանէր թէ ո՞ իցէ , և զի՞նչ
34 իցէ արարեալ ։ Այլք այլ ինչ աղաղակէին զնմանէ
ժամբոխին . իբրեւ ոչ կարաց գիտել զստոյգն վասն
35 ամբոխին , հրամայեաց ածել զնա ի բանակն ։ Եւ
իբրեւ եհաս յաստիճանսն , դեպ եղեւ բառնալ
բերել զնա ի զօրականացն վասն բռնութիւնն ամ-
36 բոխին ։ Քանզի զհետ երթայր բազմութիւն ժողո-

* Ց՝ «խառնեցուցին»

37 վըրդեանն և ասէին , Բարձ զդա ։ Մինչդեռ մուտ-
նելոց էր Պօղոս ի բանակն , ասէ ցհազարապետն
եթէ արժա՞ն իցէ ինձ խօսել ընդ քեզ . և նա ա-
38 սէ , Ցունաբէն գիտե՞ս . Մի՞ արդեօք դու իցես Ե-
գիպտացին , որ յառաջ քան զայս աւուրս ապըս-
տամբեցուցեր՝ և հաներ յանապատ չորս հազարս
39 արս սիկարեանս ։ Եւ ասէ Պօղոս , Ես եմ այր Հրէայ
ի Տարսոնէ Կիլիկեցւոց , ոչ աննշան քաղաքի քա-
ղաքացի . աղաչեմ զքեզ հրամայեա ինձ խօսել առ
40 ժողովուրդդ ։ Եւ ի հրամայելն նորա , Պօղոս կա-
ցեալ ի վերայ աշտիճանացն շարժեաց զձեռն ժողո-
վըրդեանն . իբրեւ բազում լռութիւն լինէր , սկսաւ
բարբառել Հերբայեցւոց բարբառովն և ասէ ,

Գլ. ԻԲ

1 Արք եղբարք և հարք , լուարուք ինձ այժմ առ
2 ձեզ պատասխանատուութեանս ։ Իբրեւ լուան եթէ
Հերբայեցւոց լեզուաւն բարբառեցաւ նոցա՝ առա-
3 ւել եւս դադարեցին ի լռութիւն ։ Եւ ասէ , Ես
եմ այր Հրէայ ծնեալ ի Տարսոնի Կիլիկեցւոց՝ սը-
նեալ ի քաղաքիս յոյսմիկ առ ոտս Գամաղիէլի ,
խրատեալ ըստ ճշմարտութեան հայրենի օրինաց ,
նախանձայոյզ էի Աստուծոյ՝ որպէս ամենեքին դուք
4 այսօր ։ Որ զսոյն ճանապարհ վարեցի մինչեւ ի
մահ , կապել և մատնել ի բանտս արս և կանայս .
5 Որպէս և քահանայապետդ վկայէ ինձ և ամենայն
ծերակուտդ , յորոց և թուղթս առեալ առ եղբարս
ի Դամասկոս երթայի , *ածել և անտի՝ կապեալս

* Ց՝ «ածել զոմն անդ էին»

6 Յերուսաղէմ, զի պատժեացին՝ եւ եղիցի ինձ ի
գնալն և ի մերձենալ ի Դամասկոս, զմիջաւուրըն
Յանկարծակի յերկնից փայլատակեալ լոյս սաստիկ
7 զնեղէ. Եւ անկայ յերկիր, և լուայ բարբառ որ
ասէր ցիս, Սաւուղ, Սաւուղ, զի՞ հալածես զիս։
8 Եւ ես ետուս պատասխանի Թէ Ո՞վ ես, Տէր. և
ասէ ցիս, Ես եմ Յիսուս Նազովրեցի՝ զոր դուն
9 հալածես։ Բայց որ ընդ իս էին՝ զլոյսն տեսանէին*,
10 այլ զձայնն ոչ լսէին որ խօսէր ընդ իս։ Եւ ասեմ,
Զի՞նչ արարից, Տէր. և ասէ ցիս Տէր, Յարուցեալ
երթիցես ի Դամասկոս, և անդ պատմեսցի քեզ
11 վասն ամենայնի որ հրաման է քեզ առնել։ Իբրեւ
ոչ տեսանէի ի փառաց լուսոյն այնորիկ, զեւեռանէ
ձգեալ ի նոցանէ՝ որ ընդ իս էին, մտի ի Դա-
12 մասկոս։ Անանիա ոմն այր երկիւղած բուռ օրինաց,
վկայեալ յամենայն բնակչաց՝ որ † ի Դամասկոս
13 Հրեայքն էին. Եկն ինաց առ իս և ասէ, Սաւուղ
14 եղբայր, ի վեր հայեաց։ Եւ ես նոյնժամայն ի վեր
հայեցայ ի նա. և նա ասէ ցիս, Աստուած հարցն
մերոց յաւաջագոյն ընտրեաց զքեզ՝ ճանաչել զը-
կամս նորա, և տեսանել զԱրդարն և լսել բարբառ
15 ի բերանոյ նորա. Զի եղիցիս վկայ նորա առ ամե-
16 նայն մարդիկ՝ որոց տեսերն և լուար։ Եւ արդ զի՞
հեզդաս, արի մկրտեաց և լուա զքեզ քո ի կար-
17 դալ զնունն նորա։ Եւ եղեւ ինձ ի դառնալն Յե-
րուսաղէմ և կալ յաղօթս ի տաճարին, լինել ի
18 զարմացման. Եւ տեսանել զնա զի ասէր ցիս, Փու-

* Յոյն՝ յօ-ե-լը-, և ահ պատեր զնոսա,
† ի Յո-նի էր։

թա եւ յերուսաղէմ վաղվաղակի, քանզի չեն ըն-
19 դունելոց զքո վկայութիւնդ վասն իմ։ Եւ ես ա-
սեմ, Տէր, ինքեանք իսկ գիտեն՝ զի ես էի որ ի
բանտն տայի և զդոն հարկանէի ըստ ժողովրդոց
20 զՅաւատացեալսն ի քեզ։ Եւ յորժամ հեղոյր ա-
րիւնն Ստեփանոսի վկայի քո, ես ինքն էի՝ որ ի
վերայ կայի, և կամակից լինէի սպանման նորա, և
21 պահէի զՀանդերձս սպանողացն նորա։ Եւ ասէ
ցիս, Գնա, զի ես ի հեթանոսս հեռաւորս առա-
քեցից զքեզ։
22 Եւ ունկն դնէին նմա մինչեւ ցայս բան, ապա
բարձին զձայնս իւրեանց և ասեն, Բարձ յերկրէ
23 զայդպիսիդ՝ զի չէ պարտ այդպիսւոյդ կեալ։ Եւ
յաղաղակելն նոցա և ընկենուլ զՀանդերձս և զփո-
24 շին ցանել յօդն, Հրամայեաց հազարապետն մու-
ծանել զնա ի բանակն, ասէր, գանիւ հարցանել
զնա, զի գիտասցից վասն որոյ Յանցման այնպես
25 աղաղակէին զնմանէ։ Եւ իբրեւ պրկեցին զնա փո-
կովք, ասէ Պօղոս ցՀարիւրապետն որ ի վերայ կայր,
Եթէ Ձայր Հռովմայեցի և *անարատ պա՞րտ իցէ ձեզ
26 գան հարկանել։ Իբրեւ լուաւ Հարիւրապետն, մա-
տուցեալ առ Հազարապետն՝ պատմեաց և ասէ,
Զի՞նչ կամիս առնել՝ քանզի այրս այս Հռովմայեցի է։
27 Եւ մատուցեալ Հազարապետն՝ ասէ ցնա, Ասա դու
28 ցիս, Հռովմայեցի՞ ես. և նա ասէ, Այո։ Պատաս-
խանի ետ Հազարապետն, Ես բազում գլխով զդինուո-
րութիւնս զայս ստացայ. ասէ Պօղոս, Ես ծնեալ իսկ
29 ի դմին եմ։ Եւ վաղվաղակի ի բաց կացին ի նմանէ՝

* Յոյն՝ անպարտ

որ *Հարկանելոցն էին զնա . և հազարապետն իսկ երկեաւ , իբրեւ գիտաց եթէ Հռովմայեցի է , և զի կապեալն եւս էր զնա ։
30 Եւ ի վաղիւ անդր կամեր գիտել զճշմարիտն , Թէ զի՞նչ չարախօսութիւն իցէ † Հրէիցն , արձակեաց զնա , և հրամայեաց կոչել զքահանայապետսն և զամենայն ատեանն . և իջուցեալ զՊօղոս՝ կացոյց ի մէջ նոցա ։

ԳԼ· ԻԳ

1 Եւ Հայեցեալ Պօղոսի յատեանն՝ ասէ , Արք եղբարք , ես ամենայն ուղիղ մտօք գնացեալ եմ առաջի Աստուծոյ մինչեւ ցայսօր ։ Եւ քահանայապետն Անանիա հրամայեաց սպասաւորացն Հարկա-
3 նել զբերան նորա ։ Յայնժամ Պօղոս ասէ ցնա , Հարկանելոց է զքեզ Աստուած , որմ բռեալ , և դու նստիս դատել զիս ըստ օրինաց , և առանց
4 օրինաց հրամայես զիս Հարկանել ։ Եւ որ շուրջն կային՝ ասեն , զքահանայապե՞տ Աստուծոյ հայհո-
5 յես ։ Եւ ասէ Պօղոս , Ոչ գիտէի , եղբարք , եթէ իցէ քահանայապետ . գրեալ իսկ է , Զիշխան ժո-
6 ղովրդեան քո ոչ հայհոյեսցես ։ Իբրեւ գիտաց Պօղոս եթէ մի կողմն Սադուկեցւոց է՝ և միւսն փարիսեցւոց , աղաղակէր ի մէջ ատենին , Արք եղբարք , ես փարիսեցի եմ , որդի փարիսեցւոյ . վասն յուսոյ և յարութեան մեռելոց ես առաւիկ դա-
7 տիմ ։ Եւ զայս իբրեւ ասաց՝ եղեն հերձուածք փա-

* Յայնմ՝ քննելոցն † Յայնմ՝ Հրէիցն զնմանէ

բիսեցւոցն և սադուկեցւոց , և պատառեցաւ բազ-
8 մութիւնն ։ Քանզի սադուկեցիքն ասեն , Չէք յարութիւն և ոչ հրեշտակ և ոչ հոգի , բայց փարի-
9 սեցիքն խոստովանին զերկոսեան ։ Եւ եղեւ աղաղակ մեծ . յոմն կացին ոմանք ի դպրաց անտի ի կողմանէ փարիսեցւոց , հակառակէին և ասէին , Ոչինչ չարութիւն գտանեմք յառնս յայսմիկ , բայց
10 թէ հոգի խօսեցաւ ի դմա կամ հրեշտակ ։ Եւ ի բազմանալ ամբոխին՝ երկուցեալ հազարապետն թէ գուցէ ճեղքիցի Պօղոս ի նոցանէ , հրամայեաց զօրականին իջանել յափշտակել զնա ի միջոյ նոցա ,
11 և առնել ի բանակն ։ Եւ ի վաղուձան գիշերին եկաց առ նմա Տէր և ասէ , Քաջալերեաց , Պօղո՛ , զի որպէս վկայեցեր վասն իմ՝ Երուսաղէմ , նոյնպէս պարտ է քեզ և ի Հռովմ վկայել ։
12 Եւ իբրեւ այգ եղեւ՝ *արարեալ ժողով՝ Հրէիցն՝ նզովեցին զանձինս , ոչ ուտել և ոչ ըմպել՝ մինչեւ
13 սպանցեն զՊօղոս ։ Եւ էին աւելի քան զքառասունն՝ որոց զայս ընդ միմեանս երդմունս արարեալ էր ։
14 Որք մատեան առ քահանայապետսն և երիցունս և ասեն , Նզովիւք նզովեցաք զանձինս ոչինչ ճաշա-
15 կել՝ մինչեւ սպանցուք զՊօղոս ։ Բայց դուք զգացուցէք հազարապետին հանդերձ ատենիւ , զի կրկնեսցէ զնա առ ձեզ , որպէս թէ կամիցիք ճշմարտագոյնս քննել գիտել զնմանէ . և մեք յառաջ քան զմօտել նորա՝ պատրաստ եմք ի սպանանել զնա ։
16 Եւ լուեալ քեռորդւոյն Պօղոսի զդաւաճանութիւնն , եկն եմուտ ի բանակ անդր՝ պատմեաց Պօղոսի ։

* Յայնմ՝ միաբանեալ ոմանց

17 Եւ կոչեցեալ Պօղոսի առ իւր զմի ի հարիւրապե-
տաց անտի՝ ասէ, Զպատանիս զայս տար առ հա-
18 զարապետն, զի ունի ինչ պատմել նմա։ Եւ նորա
առեալ զնա տուրաւ առ հազարապետն և ասէ,
Կապեալն Պօղոս կոչեաց զիս, և աղաչեաց զպա-
տանիս զայսածել առ քեզ. ունի ինչ խօսել ընդ
19 քեզ։ Առեալ զձեռանէ նորա հազարապետին՝ դնաց
մեկուսի, հարցանէր թէ զի՞նչ ունիս խօսել ընդ
20 իս։ Եւ նա ասէ, Հրեայք միաբանեցին աղաչել
զքեզ, զի ի վաղիւ զՊօղոս իջուսցես յատեան,
իբրեւ թէ կամիցին ինչ ճշմարտագոյնս հարցանել
21 վասն նորա. Արդ դու մի՛ անսայցես նոցա, քան-
զի դարան գօրծեալ է նմա ի նոցանէ արանց ա-
ւելի քան զքառասունն, որ նզովեցին զանձինս՝ ոչ
ուտել և ոչ ըմպել՝ մինչեւ սպանցեն զնա. արդ
22 պատրաստ են և սպասեն քումմ հրամանի։ Ապա
հազարապետն արձակեաց զպատանին՝ պատուիրեալ
23 մի՛ ումեք ասել թէ զայս զգացուցեր ինձ։ Եւ կո-
չեաց երկուս ի հարիւրապետաց և ասէ, Պատրաս-
տեցէք զօրականս երկերիւր, որպէս զի երթիցեն
մինչեւ ի Կեսարիա, և հեծեալս եօթանասունս՝ և
տիգաւորս երկերիւր, ի յերից ժամու գիշերոյն,
24 Եւ գրաստս պատրաստական՝ որպէս զի *իջուցեալ
25 զՊօղոս ապրեցուսցեն առ Փելիքս դատաւոր. Գը-
26 րեալ թուղթ որ ունէր օրինակ զայս. Կղովդիոս
Լիւսիաս՝ առ քաջ դատաւորդ Փելիքս ողջոյն։
27 Զայրս զայս կալեալ ի Հրէից և մերձ ի սպանանել
ի նոցանէ, հասեալ ի վերայ զօրականաւ ապրե-

* Յոյնն՝ հեծուցեալ

28 ցուցի, խնդրեալ թէ հռովմայեցի է։ Կամեցայ
դիտել զվնասն՝ վասն որոյ ամբաստանէին զդմանէ,
29 իջուցի զդա յատեան նոցա։ Զոր գտի ամբաստա-
նեալ վասն խնդրոյ իրիք իւրեանց օրինաց. և ոչինչ
30 արժանի մահու կամ կապանաց ունէր վնաս։ Իբ-
րեւ ազդ եղեւ ինձ նենգութեան յայդ լինելոյ ի
նոցանէ՝ *յղեցի առ քեզ. հրաման տուեալ և զա-
րախօսացն խօսել զդմանէ առաջի քո. ողջ լեր։
31 Եւ զօրականացն ըստ հրամանի նորա առեալ զՊօ-
32 ղոս՝ ածին գիշերայն յԱնտիպատրիս։ Եւ ի վաղիւ
անդր արձակեալ զհեծեալսն ընդ նմա երթալ՝ դար-
33 ձան ի բանակն։ Որոց մտին ի Կեսարիա. և տը-
ւեալ ցդատաւորն զթուղթն, առաջի կացուցին
34 նորա և զՊօղոս։ Իբրեւ ընթերցաւ՝ եհարց թէ
յորմէ՞ նահանգէ իցէ. և առաւգեալ եթէ ի Կի-
35 լիկիայ է. Լուայց քեզ, ասէ, յորժամ և չարա-
խօսքն քո եկեսցեն. և հրամայեաց յատպարանս
Հերովդի պահել զնա։

Գլ. ԻԴ

1 Եւ յետ հինգ աւուր էջ քահանայապետն Ա-
նանիա հանդերձ ծերովք ոմամբք, և ճարտարա-
խօսաւ Տերտիւղեաւ ոմամբ, որք և զդացուցին †գա-
2 տաւորին վասն Պօղոսի։ Եւ ի կոչէն զնա՝ սկսաւ
Տերտիւղոսն ամբաստանն լինել և ասել, Բազում
խաղաղութիւն գտեալ է ի քէն՝ և իրաց ուղղու-
3 թիւն ազգիս այսորիկ քով խնամով. Ամենայնիւ

* Յոյնն՝ իսկ և իսկ յղեցի † Յոյնն՝ կուսակալին

և ամենայն ուրեք ընդ[ո]րկալ եմք, քաջդ փեղկեաց,
4 ամենայն գոհութեամբ։ Բայց զի մի՛ աւելի եւս
աչխատ արարից զքեզ, աղաչեմ լսել մեզ կարճ
5 ՚ի կարճ՚ բանին հեղութեամբդ։ Գտանք գտաք
զայրս զայս ապականիչ և խռովիչ ամենայն հրէից՝
որք են ընդ տիեզերս, և առաջնորդ Նազովրեցւոց
6 հերձուածոյն։ Որ և զտաճարն իսկ կամեցաւ պղծել
ծել. զոր և կալաք, և ըստ մերոց օրինաց դատել
7 կամեցաք։ Եկեալ Լիւսիաս հազարապետ՝ մեծաւ
բռնութեամբ ՚ի ձեռաց մերոց եհան։ Հրամայեաց
և չարախօսացն նորա գալ առ քեզ. յորմէ դու
իսկ բաւական լինիցիս վերատես դատաւոր, ամենայ-
նի հասու լինել՝ զորոց մեքս ամբաստանեմք զդէ-
9 մանէ. Միաբանեցին և Հրեայքն, ասեն, Այդ-
10 պէս է։ Պատասխանի ետ Պօղոս, յակնարկել նմա
դատաւորին խօսել, ի բազում ամաց լինել քեզ
դատաւոր ազգիս այսորիկ գիտեմ, յօժարութեամբ
11 վասն իմոց իրաց պատասխանի առնեմ։ Զի կա-
րող ես գիտել, զի ոչ[ինչ] աւելի է իմ քան զա-
ւուրս երկոտասան՝ յորմէ հետէ ելի երկիրպագա-
12 նել Երուսաղէմ։ Եւ ոչ ՚ի տաճարի անդ գտին
զիս ընդ ումեք *խօսեցեալ, և կամ ժողով արա-
13 րեալ բազմաց, ոչ ՚ի ժողովուրդս եւ ոչ ՚ի քա-
ղաքի. և ոչ յանդիման առնել կարեն քեզ՝ վասն
14 որոյ այժմ չարախօսեն զինեն։ Բայց զայս խոստա-
նամ քեզ, եթէ ըստ ճանապարհին զոր ասեն հեր-
ձուած, այնպէս պաշտեմ զՏէրն Աստուածն.
հաւատացեալ ամենայնի՝ որ[ինչ] յօրէնս և ՚ի

* Յայն՝ վիճեալ,

15 մարգարէս գրեալ է։ Ունիմ յոյս առ Աստուած,
որում և դոքա իսկ ակն ունին թէ յարութիւն
16 լինելոց *է արդարոց և մեղաւորաց։ Յորում և ես
իսկ ճգնիմ, անխիղճ միտս ունել առ Աստուած և
17 առ մարդիկ յամենայն ժամ։ Ի բազում ամաց ո-
ղորմութիւնս եկի առնել յազգդ իմ, և †ետուս
18 պատարագիս. Որովք գտին զիս սրբեալ ՚ի տաճա-
19 րին՝ ոչ բազմաք և ոչ ամբոխիւ՝ Որոնք Ասիացւոց
անտի չերեայք, որոց պարտ էր գալ առաջի քո և
20 ամբաստան լինել, եթէ ունիցին[ինչ] զինեն։ Եւ կամ
ինքեանք սոքա ասասցեն, զինչ գտին յիս անիրա-
21 ւութիւն՝ մինչդեռ կայի յատենին. Բայց միայն
վասն միոյ բարբառոյս այսորիկ՝ զոր աղաղակեցի
մինչ կայի ՚ի մէջ նոցա, եթէ վասն յարութեան
22 մեռելոց դատիմ ես այսօր ՚ի ձէնջ։ Եւ յապաղեաց
զնոսա փեղկեաց, զի ստուգագոյնս գիտէր վասն ճա-
նապարհին, ասէ, Յորժամ Լիւսիաս հազարապետ
23 իջցէ ‡այսր՝ տեղեկացայց վասն ձեր։ Հրամայեաց
հարիւրապետին պահել զնա և ունել յընդարձակի,
և մի՛ զոք յիւրոց անտի արգելուլ ՚ի պաշտելոյ
զնա‡։

24 Եւ յետ աւուրց[ինչ] եկն փեղկեաց հանդերձ Դրու-
սեզաւ կնաւ իւրով, որ էր Հրեայ, կոչեաց զՊօղոս
և լուաւ ՚ի նմանէ վասն որ ՚ի Յիսուս Քրիստոս հա-
25 ւատոյն։ Եւ ՚ի խօսելն նորա վասն արդարութեան
և ժուժկալութեան և հանդերձեալ դատաստանին,
զսին հարեալ փեղկեաց ետ պատասխանի, Դուս առ

* Յայն՝ է մեռելոց, † ի յայնմ վէ։
‡ Յայն յոյնս, կամ յերթալոյ առնա։

այժմ երթ, և յորժամ ժամ լիցի՝ կոչեցից զքեզ։
26 Միանգամայն և ահն ունէր թէ տացի ինչ նմա ի
Պօղոսէ, վասն որոյ ստէպ կոչեցեալ զնա խօսէր ընդ
27 նմա։ Եւ ի կատարել երկուց ամաց՝ եկն փոխանակ
Փելիքսի Փեստոս Պորկիոս. իբրեւ կամեցաւ շնորհս
առնել Հրեից Փելիքս, եթող զՊօղոս կապեալ։

Գլ. Իե

1 Փեստոս իբրեւ եհաս յիշխանութիւնն, յետ ե-
2 րից աւուրց էլ յԵրուսաղէմ ի կեսարիայ։ Եւ
զգացուցին նմա քահանայապետքն և գլխաւորք
3 Հրեից զՊօղոսէ, եւ աղաչէին խնդրել շնորհս ի
նմանէ. զի կոչեցէ զնա յԵրուսաղէմ. դարան
4 գործեալ սպանանել զնա ի ճանապարհի։ Իսկ Փես-
տոս արար պատասխանի՝ պահել զնա ի կեսարիա,
5 թէ ինքն իսկ ընդ հուպ անդր երթալոց է։ Եւ որ
ի ձէնջ կարողք իցեն, ասէ, ընդ իս իջցեն, և
եթէ իցէ ինչ յառնն ի նա՝ ամբաստան լիցին զնմա-
6 նէ։ Եւ լեալ անդ աւուրս՝ ոչ աւելի քան զտասն
կամ զտասն, եկն էջ ի կեսարիա. և ի վաղիւ
անդր նստեալ յատեանի՝ հրամայեաց ածել զՊօղոս։
7 Եւ իբրեւ եկն՝ կացին շուրջ զնովաւ որ յԵրուսա-
ղեմէ իջեալ էին Հրեայք, բազում և ծանր ինաս
8 *դնէին՝ զոր ոչ կարէին ցուցանել, Քանզի առնէր
պատասխանի Պօղոս եթէ Ոչ յօրէնս Հրեից և ոչ
9 ի տաճարն և ոչ ի կայսր ինչ ինաս արարի եմ։ Բայց
Փեստոս կամեցեալ Հրեից շնորհս առնել՝ պատաս-

* Յայլս՝ ի մէջ բերելին զՊօղոսէ՝

խանի առ Պօղոսի և ասէ, Կամի՞ս յԵրուսաղէմ
ելանել, և անդ վասն դոցին իրաց դատել առաջի
10 իմ։ Եւ ասէ Պօղոս, Յատենի կայսեր հաստել
կամ, ուր պարտ է ինձ դատել. Հրեից ինչ չեմ
11 ինասակար, որպէս և դուն իսկ քաջ գիտես։ Ա-
պա թէ ինասակար իցեմ՝ և արժանի մահու ինչ
գործեցի, ոչ զանգիտեմ ի մեռանելոյ. իսկ եթէ
ոչինչ իցէ՝ զորոց սոքա ամբաստան լինին զինէն,
ոչ ոք կարէ զնա դոցա շնորհել. ի կայսր բողոքեմ։
12 Յայնժամ Փեստոս խօսեցեալ ընդ խորհրդակցին՝
արար պատասխանի, ի կայսր բողոքեցեր, առ կայսր
երթիջիր։
13 Իբրեւ անցին աւուրք ինչ՝ Ագրիպպաս արքայ և
14 Բերենիկէ եկին ի կեսարիա յողջոյն Փեստոսի։ Եւ
իբրեւ աւուրս բազումս հանէին անդր, Փեստոս
զկեսր արքայի զՊօղոսէ և ասէ, Այր մի է աստ
15 մնացեալ կապեալ ի Փելիքսէ։ Վասն որոյ իբրեւ
էդայ յԵրուսաղէմ, զգացուցին ինձ քահանայա-
պետքն և *գլխաւորք Հրեից, խնդրէին †յինէն
16 առնել նմա՝՝ պատուհաս։ Որոց ետուս պատասխա-
նի, Չէ օրէն Հռովմայեցւոց շնորհել ումեք ‡զոք,
մինչչեւ ամբաստանեալն յանդիման ունիցի զդա-
տախազսն և տեղի պատասխանւոյ առնուցու վասն
17 ամբաստանութեանն։ Եւ իբրեւ եկին այսր՝ ոչինչ
յապաղեցի, այլ ի վաղիւն նստեալ յատենի՝ հրա-
18 մայեցի ածել զայրն։ Վասն որոյ մնաուցեալ ամ-
բաստանքն՝ և ոչ մի ինչ ինաս չարութեան ի մէջ

* Յայլս՝ երիցունք † Յայլս՝ վասն նորա
‡ Յայլս՝ զայր ի սատակումն

19 բերէին՝ զորոց եան կարծէի. Բայց խնդիրս ինչ վասն
իւրեանց պաշտաման ունէին ընդ նմա, և վասն
Յիսուսի ուրումն մեռելոյ, զորմէ ասէր Պողոս թէ
20 կենդանի է։ Իբրեւ յանկնարս մտի վասն այսպիսի
իրաց քննութեան, ասեմ եթէ կամիցի՞ երթալ
Յերուսաղէմ, և անդ դատել վասն նոցին իրաց։
21 Բայց ի Պողոսէ բողոքելն՝ զի պահեցի ի գաջի ա-
բանցն յանդիմանութիւն, հրամայեցի պահել զնա՝
22 մինչեւ տաց տանել առ կայսր։ Ագրիպպաս ցՖես-
տոս ասէ, կամէի և ես լսել առնն. ԵՒ նա ասէ,
վաղիւ լսիցես։
23 Եւ ի վաղիւ անդր իբրեւ եկն Ագրիպպաս և Բե-
րինիկէ բազում երեւելի սպասուք, և մտին յա-
տեանն հանդերձ հազարապետօքն և արամբք պա-
տուականօք քաղաքին. և հրամայեալ փեստոսի՝
24 ածին զՊօղոս։ Եւ ասէ Փեստոս, Ագրիպ-
պա, և ամենայն արք որք ընդ մեզ էք, տեսանէք
զսա. վասն որոյ ամենայն ժողովք Հրէից *ամբաս-
տան եղեն ինձ Յերուսաղէմ և աստ. աղաղակելին
25 թէ Չէ պարտ դմա կեալ։ Բայց ես ի վերայ հասի
թէ ոչինչ է դորա արժանի մահու գործեալ, և դո-
րա ինքնին բողոք կալեալ առ գաջ արանցն, խոր-
26 հեցայ յղել։ Վասն որոյ ստուգութեամբ ինչ գրել
տեառն իմում ոչ ունիմ. վասն այնորիկ ածի ղդա
առաջի ձեր՝ և մանաւանդ առաջի քո, արքայ Ա-
գրիպպա. որպէս վերստին քննեալ՝ մարթացից ինչ
27 գրել։ Քանզի անպատեհ իմն թուի ինձ՝ տալ տա-
նել կապեալ մի, և ոչինչ ինչպէս զնմանէ նշանակել։

* Յոյն՝ Յանդիման

ԳԼ. ԻԶ

1 Եւ Ագրիպպաս ասէ ցՊօղոս, Հրամայեալ է քեզ
վասն քո խօսել. յայնժամ Պողոս ձգեալ զձեռն
2 առնէր պատասխանի. վասն ամենայն ամբաստա-
նութեան Հրէից զինէն, արքայ Ագրիպպա, հա-
մարիմ զանձն երանելի, զի քո առաջի այսօր տա-
3 լոց եմ պատասխանի. Մանաւանդ զի գիտակ իսկ
ես ամենայն կրօնից և խնդրոց Հրէից. վասն որոյ
4 աղաչեմ երկայնմտութեամբ լսել ինձ։ Զկեն-
նաց իմոց որ ի մանկութենէ, ի սկզբանէ լեալ
յազգի իմում Յերուսաղէմ, տեղեակ են ամենայն
5 Հրեայք։ Յառաջագոյն *գիտեն ի վաղուց հետէ,
եթէ կամիցին վկայել, զի ըստ ճշմարտագոյն կրօ-
6 նից օրինացն մերոց կեցեալ եմ փարիսեցի. Եւ
արդ վասն յուսոյն՝ առ Տէրն եղելոյ աւետեացն
7 յԱստուածոյ՝ դատեալ կամ †յատենի. Յոր երկո-
տասան ազգատոհմիս մերոյ անպակաս զղայդ և
զգերեկ պաշտեալ ակն ունին հասանել. վասն որոյ
8 յուսոյ ամբաստանիմ, արքայ, ի Հրէից։ Զի՞նչ,
անհաւա՞տ թուի ձեզ եթէ Աստուած զմեռեալս
9 յարուցանէ։ Եւ իսկ ինքնին պատշաճ համարէի՛
զբազում ինչ հակառակ անուանն Յիսուսի Նա-
10 զովրեցւոյ գործել։ Զոր և արարի իսկ Յերուսա-
ղէմ. և զբազումս ի սրբոցն ես բանտարգել առ-
նէի, ի քահանայապետութեան առեալ իշխանութիւն.

* Յոյն՝ գիտեն զիս † ի Յունին ՀԲ։

11 և *զսպանելոցն նոցա բերէի համար»։ Եւ ըստ ա-
մենայն ժողովրդոցն՝ բազում անգամ պատժեալ
զնոսա՝ բռնադատէի հայհոյել. առաւել եւս մո-
լեալ ՚ի վերայ նոցա՝ հալածէի մինչեւ յարտաքին
12 քաղաքան։ Որովք գնացեալ ՚ի Դամասկոս՝ իշխա-
13 նութեամբ և հրամանօք քահանայապետին, Ջմե-
ռնաւուրըն ՚ի ճանապարհի տեսի, արքայ, յերկնից
առաւել քան զլուսաւորութիւն արեգական ծա-
գեալ զինեւ լոյս, և զնոքօք որ ընդ իս երթային։
14 Եւ յամենեցունն մեր անկանել յերկիր, լուայ ձայն
որ ասէր ցիս Հեբրայեցւոց բարբառովին, Սաւուղ,
Սաւուղ, զի՞ հալածես զիս. խիստ է քեզ ընդդէմ
15 խթանի ոտքացել։ Եւ ես ասեմ, Ո՞ ես, Տէր. և
Տէրն ասէ, Ես եմ Յիսուս՝ զոր դուն հալածես։
16 Այլ արի և կաց ՚ի վերայ ոտից քոց, զի վասն
այսորիկ երեւեցայ քեզ՝ առնուլ զքեզ ՚ի ձեռն
պաշտօնեայ և վկայ՝ որոց տեսերդ †զիս, և որոց ե-
17 րեւեցայց քեզ. փրկել զքեզ ՚ի ժողովրդենէդ և
18 ՚ի հեթանոսաց, յորս ես առաքեցից զքեզ. բանալ
զաչս նոցա, դարձուցանել ՚ի խաւարէ ՚ի լոյս, և
յիշխանութենէն Սատանայի Աստուած. առնուլ
նոցա զթողութիւն մեղաց, և վիճակ ընդ սուրբս՝
19 հաւատովքն որ յիս։ Ուստի, արքայ Ագրիպպա,
20 ոչ եղէ անհնազան երկնաւոր տեսլեանն. Այլ նախ
որոց ՚ի Դամասկոս և Երուսաղէմ էին, և ընդ
ամենայն գաւառս Հրէաստանի և ՚ի հեթանոսս,
պատմեցի զղջանալ և դառնալ Աստուած †կենդ-

* Յոյն՝ ՚ի սպանանել նոցա տայի հաւանութիւն։
† Ի յոյնն էր։

գանի, արժանի ապաշխարութեան գործս գործել։
21 Վասն այսորիկ Հրեից կալեալ զիս ՚ի տաճարին,
22 կամէին սպանանել։ Օգնութիւն հասեալ առ Աս-
տուածոյ՝ մինչեւ ցայսօր կացի վկայեալ փոքուս և մե-
ծի. ոչինչ արտաքոյ ասել քան զոր մարգարէքն և
23 Մովսէս խօսեցան զհանդերձելոցն լինելոյ. Եթէ
չարչարելոց է Քրիստոս, եթէ առաջինն ՚ի յարու-
թենէ մեռելոց՝ լոյս պատմելոց է ժողովրդեանն և
24 հեթանոսաց։ Եւ նորա զայս պատասխանի տուեալ,
Փեստոս ՚ի ձայն մեծ ասէ, Պողոս, բազում
դպրութիւնքդ զքեզ ՚ի մոլութիւն դարձուցանեն։
25 Իսկ Պողոս ասէ, Ոչ մոլիմ, քաջդ Փեստոս, այլ
զգածութեան և զճշմարտութեան բանս բարբա-
26 ռիմ։ Գիտակ իսկ է այսոցիկ արքայ, ընդ որում
և համարձակեալդ խօսիմ. քանզի ծածկել ՚ի քէն
իմիք ՚ի սոցանէ՝ *չառնուիմ յանձն։ զի ոչ եթէ
27 յանկեան ուրեք գործեալ իցէ այս։ Հաւատա՞ս,
արքայ Ագրիպպա, մարգարէից. գիտեմ զի հաւա-
28 տաս։ Եւ ասէ Ագրիպպաս ցՊողոս, փոքուս լիմն հա-
29 ւանեցուցանես զիս լինել քրիստոնեայ։ Եւ Պողոս
ասէ, Ինդրեմ Աստուծոյ և փոքուս և մեծաս ոչ
միայն զքեզ, այլ զամենեսեան որ լսեն ինձ այսօր՝
լինել այսպիսի որպէս և ես եմ, բաց ՚ի կապանաց
սոսկ։
30 Յոտն եկաց արքայն և դատաւորն և Բերինիկէ,
31 և որ ընդ նոսայն նստէին։ Եւ իբրեւ դնացին, խո-
սէին ընդ միմեանս և ասէին թէ Ոչինչ արժանի
32 մահու կամ կապանաց գործէ այրս այս։ Իսկ Ագ-

* Յոյն՝ ոչ կարծեմ.

բիզպաս ցիթեսաոս ասէ , Աբձակել մարթ՝ էր զայրս զայս՝ եթէ ոչ էր բողբեալ ՚ի կայսր ։

Գլ· Իէ

1 Իբրեւ *հրամայեցաւ մեզ նաւել՝ յիտալիա , տային զՊօղոս և զայլս ոմանս կապեալս ցՅարիւբաղետս մի , որում՝ անուն էր Յուլիոս , Սեբաստեան
2 գնդին ։ Եւ ելեալ ՚ի նաւ մի Անդրամիւտացի , որ երթալոց էր ՚ի կողմանս Ասիացւոց , գնացաք . էր ընդ մեզ և Արիստարքոս Մակեդոն Թեսաղոնիկեցի ։
3 Եւ ՚ի վաղիւ անդր իջաք ՚ի Սիդովն . և մարդասիրութիւն ցուցեալ Յուլիոս առ Պօղոս , հրամայեաց
4 առ բարեկամսն երթալ և դարման գտանել ։ Եւ անտի ելեալ խոնարհադոյն նաւեցաք †՚ի կիպրոս
5 վասն հողմոյն ընդդէմ լինելոյ ։ Յայնժամ ընդ մէջ ծովուն Կիլիկեայ և Պամփիլիայ նաւեալ՝ իջաք ՚ի
6 Միւռա Լիկիացւոց ։ Եւ անդ գտեալ հարիւրապետին նաւ մի Աղէքսանդրացի որ երթայր Իտալիա , եմոյծ զմեզ անդր ։ Եւ ՚ի բազում աւուրս
7 ծանրանաւելաք՝ հազիւ հասաք առ Կնիդաւ . և ՚ի չթողացուցանել մեզ հողմոյն , նաւեցաք խոնարհագոյն ՚ի կրետէ առ Սաղամինեաւս ։ Հազիւ անցեալ առ նովաւ՝ եկաք ՚ի տեղի մի որ կոչէր Գեղեցիկ Նաւահանգիստ . յոր հուպ էր քաղաքն Ղասեա ։
9 Եւ իբրեւ բազում ժամանակք անցանէին , և ‡սեալ եւս լինէր նաւելոյն . և վասն այն մինչ

* Յայլսն՝ վճռեցաւ նաւել մեզ
† Յայլսն՝ քան զկիպրոս ‡ Յայլսն՝ վասնզ

10 եւս պահոցն անցանելոյ , տայր խրատ Պօղոս , եւ ասէ ցնոսա , Արք , տեսանեմ զի *թշնամանօք և բազում՝ ինասուս՝ ոչ միայն բեռինդ և նաւիդ , այլ և
11 անձանց մերոց լինելոց է նաւարկութիւնս։ Իսկ հարբերապետն նաւապետին և նաւավարին առաւել
12 անսայր՝ քան ընդ Պօղոսի։ Իբրեւ գժպատեհ լմն թառէր նաւահանգիստն առ ՚ի ձմերել , բազումք խորհեցան գնալ անտի . թերեւս կարասցեն հասանել ՚ի փիւնիկէ՝ ձմերել ՚ի նաւահանգստին կղետացւոց , որ հայէր ընդ հարաւակողմն և ընդ
13 հաչխարհն ։ Եւ ՚ի շնչել հարաւոյն , համարեցան ուր դիմեալն էին հասանել . և արկեալ՝ մտ անցանէին զկրետեաւս ։ Եւ ոչ յետ բազում ժամուց
14 անկաւ զնովաս հողմ ուռուցիկ , որ կոչի Եւրաքիւղիս ։ Ընդ յափշտակել նաւին և ՚ի չհանգուցանել ընդդէմ հողմոյն , թոյլ տուեալ երթայաք և
16 գայաք ։ Ի կղզի մի՝ որ կոչի Կղովդա , հազիւ կարացաք ըմբռնել զմակոյկն . Զոր առեալ՝ ‡յօգնականութիւն կապկին ընդ նաւն՝ . երկուցեալ թէ գուցէ ՚ի յորձանուտն անկանիցին , իջուցեալ զառագաստն՝ այնպէս երթայրն և գային ։
18 Եւ §՚ի սաստկագոյն վշտանալոյն մերոյ՝ ՚ի վաղիւ
19 անդր զկարասին ընկեցիկ առնէին ։ Եւ յերրորդ ա-

* Յայլսն՝ տառապանօք
† Յայլսն՝ հիւսիսակողմն արեւմտեան
‡ Յայլսն՝ արկեալ օգնութիւնս ՚ի կիր , կապեցին ՚ի ներքուստ զնաւն .
§ Յայլսն՝ յալեկոծել մեր սաստկագոյնս

ւսուբ ընդ *իւրեանց ձեռն զգործին նաւին ՚ընկե-
29 ցին : Իբրեւ ոչ արեւ և ոչ աստեղք երեւէին ՚ի
բազում աւուրս , և ձիւնն ոչ սակաւ կայր ՚ի
վերայ , ապա բառնայր ամենայն յոյս փրկութեան
21 մերոյ : Եւ զի բազում աւուրս նոքաի էին , յայն-
ժամ Պօղոս կացեալ ՚ի միջ նոցա՝ ասէ , Պարտ էր
ձեզ , օվ արք , անսալ ինձ և ոչ ելանել ՚ի Կրէ-
22 տէայ՝ և շահել զվնաս զայս և զվնաս : Եւ արդ
խրատեմ զձեզ քաջալերել , զի վնաս անձին և ոչ
23 միւսի ՚ի ձէնջ լինիցի բաց ՚ի նաւէդ : Քանզի ե-
րեւեցաւ ինձ յայսմ գիշերի հրեշտակ Աստուծոյ՝
24 որոյ եմ եմ և պաշտեմ զնա , եւ ասէ , Մի եր-
կնչիր , Պօղէ , կայսեր եւս պարտ է քեզ յանդի-
մանն լինել . և ահա շնորհեալ է քեզ Աստուծոյ
25 զամենեսեան , որ են ընդ քեզ ՚ի նաւիդ : Վասն
այսորիկ քաջալերեցարուք , արք , զի հաւատամ
յԱստուած թէ այսպէս լինիցի՝ զոր օրինակ խօսեցաւ
26 ընդ իս : Բայց ՚ի կղզի ինչ հասանիլ մեզ անկանել ,
27 Իբրեւ չորեքտասաներորդ գիշեր լինէր՝ մինչդեռ
ծփեաք ՚ի Հանդրին անդունդս , ՚ի միջ գիշերին
կարծէին նաւավարքն եթէ հասեալ իցեն յաշխարհ
28 ուրեք , եւ ընկեցեալ զդունդն՝ գտին գիրկս քսան.
և սակաւ ինչ †դադարեալ՝ դարձեալ ընկեցին և
29 գտին գիրկս հնգետասան : Զայնի հարեալ թէ գու-
ցէ ՚ի խիստ ինչ տեղիս անկանիցին , յետուստ կողմ-
մանէ ընկեցին խարիսխս չորս , ըղձանային այգուն
30 լինելոյ : Բայց նաւավարքն խնդրէին փախչել ՚ի նա-

* Յայլս՝ մեր † Յայլս՝ ընկեցաք ։
‡ Յայլս՝ յառաջ գնացեալ

ւէ անտի , և իջուցեալ զկուրն ՚ի ծով՝ անդր՝
պատճառանօք որպէս թէ առաջոյ կողմանէ զխա-
31 րիսխան ձգելոց իցեն : Ասէ Պօղոս ցհարիւրապետն և
ցզօրականսն , Եթէ ոչ դոքա մնան ՚ի նաւիս՝ դուք
32 ապրել ոչ կարէք : Յայնժամ զօրականքն հատին
33 զլարս կրին և ՚ի բաց ընկեցին , Եւ մինչդեռ այգն
կամէր լինել , աղաչէր Պօղոս զամենեսեան առնուլ
կերակուր , ասէ , Այս չորեքտասաներորդ օր է՝ ո-
րում ակն ունիք նոքաիս կատարել , և չէ ինչ ճա-
34 շակեալ : Վասն որոյ աղաչեմ զձեզ՝ ճաշակել կե-
րակուր , զի այն իսկ վնաս ձերոյ փրկութեան է . զի
35 ոչ սրունք ՚ի ձէնջ մազ մի ՚ի գլխոյ կորիցէ : Եւ
իբրեւ ասաց զայս , առեալ հաց՝ գոհացաւ զԱս-
տուծոյ առաջի ամենեցուն , երեկ և սկսաւ ուտել :
36 Եւ քաջալերեցան ամենեքին , և նոքա առին կերա-
37 կուր : Եւ էաք ամենայն հոգիք ՚ի նաւին երկերիւր
38 եօթանասուն և վեց : Իբրեւ յագեցան կերակրոյն ,
թեթեւացուցին զնաւն՝ թափեալ զցորեանն ՚ի ծովն :
39 Եւ իբրեւ այգ եղեւ՝ զերկիրն ոչ ճանաչէին , բայց
զդոգ մի նշմարէին թէ ափն ծովուն էիցէ . յոր խոր-
40 հէին թէ հնար ինչ իցէ՝ զերծուցանել զնաւն : Եւ
զխարիսխան հատեալ՝ ընկեցին ՚ի ծովն , թողացու-
ցին զխառնելիս թևուցն , և *՚ի բաց առին՝՚՚ զառա-
ջասան , †և ետուն՚՚ հողմոյն յափն կոյս ծովուն :
41 Անկեալ ՚ի տեղի մի երկծով՝ թիւրեցին զնաւն . և
առաջին կողմն նաւին խրեալ անշարժ մնայր , և
42 յետին կողմն քակէր ‡՚ի բռնութենէն : Եւ զբա-

* Յայլս՝ բացին † Ի Յ՚՚ին էր ։
‡ Յայլս՝ ՚ի բռնութենէ ալեացն ։

կանացն խորհուրդ արարեալ զի զկապեալն սպան-
43 ցեն, և զի մի՛ որք լուղիցի և փախիցէ: Եւ հարիւ-
բապետն քանզի կամեցաւ ապրեցուցանել զՊօղոս՝
արգել զնոսա ի խորհրդոյն. հրամայեաց զի որ կա-
րողն իցեն լուղել՝ անկանիցին նախ և ի ցամաք ե-
44 լանիցեն. Եւ զայլն՝ զորս ի տախտակս, և զորս
յայլ ինչ կամ ի նաւէ անտի. և այսպէս եղեւ
ամենեցունն փրծանել յերկիր:

ԳԼ. ԻԸ

1 Եւ ապրեալք՝ յայնժամ գիտացաք թէ Մելիտի-
նէ էր անուն կղզոյն. բայց բարբարոսքն շնորհե-
2 ցին ոչ սակաւ մարդասիրութիւն մեզ. Քանզի լու-
ցին խարոյկ, և ընկալան զամենեսին զմեզ վասն ան-
3 ձրեւին որ առկախ և վասն ցրտոյն: Եւ ի ժողովել
Պօղոսի խուրձ ինչ բազում և դնել ի վերայ խա-
րուկին, իժ մի ի ջերմութենէն ելեալ՝ կալաւ զձե-
4 ռանէ նորա: Եւ իբրեւ տեսին բարբարոսքն կա-
խեալ զգազանն զձեռանէ նորա, ասէին ցմիմեանս,
Ուրեմն սպանող է այրս այս՝ որ թէպէտ և ապրե-
5 ցաւ ի ծովէն, իբրաւունքն չեհոսն կեալ: Եւ նորա
թօթափեալ զգազանն ի հուրն, եղեւ նմա չար և
6 ոչինչ: Եւ նոքա սկն ունէին նմա այտնելոյ կամ
անկանելոյ և յանկարծակի մեռանելոյ. իբրեւ շատ
սկն կալեալ՝ և տեսանէին թէ ոչինչ վնաս եղեւ
նմա, դարձեալ դարձուցեալ զբանն՝ ասէին թէ
7 աստուած ումն է: Եւ շուրջ զտեղեաւն զայնուիկ
էին գիւղք գլխաւորի կղզոյն՝ որում անուն էր
Պոպղիոս. որ առ զմեզ յերաշխի ընդիս աւուրս՝ և

8 սիրով ընկալաւ: Եւ եղեւ հօրն Պոպղիոսի ի ջերմն
և յախտ թանչելոյ հիւանդանալ դնել. առ որ
մտեալ Պօղոս և կացեալ յաղօթս՝ եդ զձեռն և
9 բժշկեաց զնա: Եւ իբրեւ այս եղեւ՝ այլ հիւանդք
10 որ էին ի կղզւոջէն՝ գային և բժշկէին Որք և բա-
զում պատուովք պատուեցին զմեզ. և իբրեւ գնա-
ցաք, եւս ունչ պէտք էին:
11 Եւ յետ երից ամսոց ելաք ի նաւ մի Աղէքսան-
դրացի՝ որ ձմերեալ էր ի կղզւոջն նշանաւորաւ
12 Դիոսկուրացւոց: Եւ իջեալ ի Սիրակուսա՝ եղաք
13 աւուրս երիս: Ուստի գնացեալ հասաք ի Հռե-
գիոն. և յետ աւուր միոյ ի շնչել հարաւայն, եր-
14 կօրեայք եկաք ի Պատիողոս: Ուր և գտաք եղբարս,
աղաչեցեալք ի նոցանէ լինել աւուրս եօթն. և
15 ապա ելաք ի Հռովմ: Եւ անտի լուեալ եղբարց
զմեզնջ՝ ելին ընդ առաջ մեր մինչեւ Յորգոսատայն
Ապիոյ և Երիցն կրպակաց. զորս տեսեալ Պօղոսի
16 գոհացաւ զԱստուածոյ և քաջալերեցաւ: Եւ իբրեւ
մտաք ի Հռովմ, *հրամայեցաւ Պօղոսի լինել ա-
ռանձինն հանդերձ զինուորաւն պահպանաւ իւ-
17 րով: Եւ եղեւ յետ երից աւուրց կոչել նմա զոք
Հրէից զգլխաւորս. և իբրեւ եկին, ասէ ցնոսա,
Ես, արք եղբարք, ոչինչ հակառակ գործեալ ժո-
ղովրդեանն կամ կրօնից հայրենեաց, կապեալ
Երուսաղէմէ մատնեցայ ի ձեռս Հռովմայեցւոց:
18 Որք իբրեւ դատեցան զիս՝ կամեցան արձակել,
19 վասն և ոչ մի ինչ վնաս մահու գտանելոյ յիս: Ի

---

*Յոյնն՝ յանձն արար հարիւրապետն զկապեալն
ղօրապետին, և հրամայեցաւ

Հակառակել Հրեից՝ հարկ եղեւ բողոքել ի կայսր,
իբր ոչ եթէ զազգէն իմմէ ունելի ինչ չարախօսել։
20 Վասն այսր պատճառանացս աղաչեցի զձեզ՝ տեսա-
նել և խօսել. քանզի վասն յուսոյն Իսրայէլի կամ
21 ի շղթայս յայսոսիկ։ Եւ նոքա ասեն ցնա, Մեք
ո՛չ թուղթս ինչ վասն քո ընկալաք ի Հրէաստա-
նէ, և ոչ եկեալ ոք յեղբարց պատմեաց կամ խօ-
22 սեցաւ ինչ վասն քո չարութիւն։ Բայց աղաչեմք
ի քէն լսել թէ զինչ խորհիցիս. զի վասն հերձուա-
ծոյդ այդորիկ յայտ իսկ է մեզ, զի ամենայն ու-
23 րեք հակառակութիւն կրէ։ Ժամ եդեալ նմա օր
մի, եկին ի վանն առ նա բազումք, որոց պատ-
մէր վկայութեամբ զարքայութիւն Աստուծոյ. և
համառնեցուցանէր զնոսա վասն Յիսուսի յօրինացն
Մովսիսի և ի մարգարէից յայգուէ մինչեւ ցերե-
24 կոյ։ Եւ ոմանք հաւանէին բանիցն, և կէսքն չՀա-
25 ւատային։ Եւ անմիաբանք լեալ միմեանց՝ արձա-
կէին, յասելն Պօղոսի բան մի թէ բարւոք խօսե-
ցաւ Հոգին Սուրբ ի ձեռն Եսայեայ մարգարէի առ
26 հարսն մեր, Եւ ասէ, Երթ առ ժողովուրդն, և
ասասցես, Լսելով լսիջիք և մի իմասջիք, և տե-
27 սանելով տեսջիք և մի տեսջիք. Զի թանձրացաւ
սիրտ ժողովրդեանն այնորիկ, և ականջօք իւրեանց
ծանր լսեան, և զաչս իւրեանց կափուցին, զի մի
երբեք տեսցեն աչօք, և ականջօք լսիցեն, և սրտիւք
իմասցին և դարձցին, և բժշկեցից զնոսա։
28 Եւ արդ յայտնի լիցի ձեզ, զի հեթանոսաց առա-
քեցաւ փրկութիւնս Աստուծոյ, նոքին և լսիցեն։
29 Եւ իբրեւ զայս ասաց՝ արտաքս գնացին ի նմանէ
Հրեայքն, որք ունէին ի մէջ ինքեանց զբազում

30 խնդիրս։ Եւ եղեւ զերկեամ մի լիովանդակ իւրով
31 վարձու։ Եւ ընդունէր զամենեսեան որ մտանէին
32 առ նա։ քարոզէր զքարքայութիւնն Աստուծոյ, և
ուսուցանէր վասն Տեառն Յիսուսի Քրիստոսի ան-
խափան ամենայն համարձակութեամբ։

ԹՈՒՂԹ
ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ
ԱՌ ՀՌՈՎՄԱՅԵՑԻՍ

ԳԼ. Ա

1 Պօղոս ծառայ Յիսուսի Քրիստոսի, կոչեցեալ
առաքեալ, որշնեալ յաւետարանն Աստուծոյ.
2 Որ յառաջ խոստացաւ ի ձեռն մարգարէից իւրոց
3 գրովք սրբովք, վասն Որդւոյ իւրոյ եղելոյ ի զա-
4 ւակէ Դաւթի ըստ մարմնոյ, Սահմանելոյ Որդւոյն
Աստուծոյ զօրութեամբ ըստ Հոգւոյն սրբութեան.
ի յարութենէ մեռելոց Յիսուսի Քրիստոսի Տեառն
5 մերոյ. Որով ընկալաք շնորհս և առաքելութիւն՝
ի հնազանդութիւն հաւատոյ յամենայն հեթա-
6 նոսս վասն անուան նորա. Յորս և դուք էք կո-
7 չեցեալ Յիսուսի Քրիստոսի։ Ամենեցուն որոց էք
ի Հռոմ՝ սիրելեաց Աստուծոյ կոչեցելոց սրբոց,
շնորհք ընդ ձեզ և խաղաղութիւն յԱստուծոյ Հօ-

8 ըէ մերմէ և ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ։ Նախ
գոհանամ զԱստուծոյ իմոյ ի ձեռն Յիսուսի Քրիս-
տոսի վասն ձեր ամենեցուն. զի հաւատք ձեր պատ-
9 մեալ են ընդ ամենայն աշխարհ։ Վկայ է ինձ Ա-
ստուած, զոր պաշտեմ հոգւով իմով յաւետարա-
նի Որդւոյ նորա, թէ որպէս զյիշատակ ձեր *առ-
10 նեմ. Ցամենայն ժամ յաղօթս իմ աղաչելով՝ զի
թերևս երբէք յաջողեսցի ինձ կամքն Աստուծոյ
11 գալ առ ձեզ։ Քանզի անձկացեալ եմ տեսանել
զձեզ, զի փոխեցից ի ձեզ շնորհս ինչ հոգևորս
12 առ ի հաստատել զձեզ. Այսինքն է մխիթարա-
կից լինել ձեզ վասն ընդ միմեանց իմոյ և ձերդ
13 հաւատոց։ Ոչ կամիմ ելթէ տգիտաք իցէք, եղբարք,
զի բազում անգամ յաժարեցի գալ առ ձեզ, և
արգելայ մինչեւ ցայժմ. զի և ի ձեզ գտից պտուղ
14 ինչ որպէս և յայլ հեթանոսս։ Քանզի Յունաց և
բարբարոսաց, իմաստնոց և անմտից պարտապան
15 եմ. Այնպէս՝ որչափ իմովհանն յաժարութեամբ,
16 և ձեզ որ ի Հռովմ էք՝ աւետարանել։ Զի ոչ ե-
թէ ամենեւին ինչ համարիմ զաւետարանն, քանզի
զօրութիւն Աստուծոյ է ի փրկութիւն ամենայն
հաւատացելոց. Նախ Հրէի և ապա հեթանոսի։
17 Զի արդարութիւնն Աստուծոյ նովաւ յայտնի ի
հաւատոց ի հաւատս. որպէս և գրեալ է թէ
Արդարն ի հաւատոց կեցցէ։
18 Քանզի յայտնեալոց է բարկութիւնն Աստուծոյ
յերկնից ի վերայ ամենայն ամբարշտութեան և ա-
նիրաւութեան մարդկան, որք զճշմարտութիւնն

* Յոյն՝ առնեմ անդադար.

19 անիրաւութեամբ ունին. վասն զի գիտութիւնն
* Աստուծոյ յայտնի է ի նոսա. քանզի Աստուած
20 իւրեանց յայտնեաց նոցա։ Զի աներեւոյթք նորա ի
սկզբանէ աշխարհի արարածովքս իմացեալ տեսա-
նին, այսինքն է †մշտնջենաւորութիւն և զօրու-
թիւն՝ և աստուածութիւն նորա. զի ոչ գտանիցեն
21 ամենեւին տալ պատասխանի։ Զի ծանեան զԱս-
տուած, և ոչ իբրեւ զԱստուած փառաւորեցին
կամ գոհացան. այլ նանրացան ի խորհուրդս իւ-
րեանց, և խաւարեցան անմտութեամբ սիրտք նո-
22 ցա։ Ձանձինս առ իմաստունս ունէին՝ յիմարե-
23 ցան։ Եւ փոխեցին զփառս անեղին Աստուծոյ ի
նմանութիւն պատկերի եղծանելի մարդոյ և թռ-
24 չնոց և չորքոտանեաց և սողոց։ Վասն որոյ մատ-
նեաց զնոսա Աստուած ի ցանկութիւն սրտից նո-
ցա ի պղծութիւն, անարգել զմարմինս իւրեանց
25 յանձինս. Որք փոխանակեցին զճշմարտութիւն Ա-
ստուծոյ ընդ ստութեան. ‡Հնազանդեցան և պաշ-
տեցին զարարածս և ոչ զԱրարիչն, որ է օրհնեալ
26 յաւիտեանս։ Ամէն։ Վասն այնորիկ մատնեաց զնո-
սա Աստուած ի կարիս անարգութեան. զի եգք
նոցա փոխանակեցին զպէտս բնականս ի պէտս ան-
27 բնականս։ Նոյնպէս և արուացն թողեալ զբնա-
կան պէտս իգութեանն, բորբոքեցան ցանկու-
թեամբք իւրեանց ի միմեանս, արուք ընդ արուս
զխայտառակութիւն գործէին, և զզարձ փոխարի-
նին որ պարտ էր մոլորութեանն նոցա՝ յանձինս

† Յոյն՝ մշտնջենաւոր զօրութիւն
‡ Յոյն՝ երկրպագին

28 իբրեանց ընդունէին ։ Եւ որպէս ղի ոչ ընարեցին
զԱստուած ունել ՚ի գիտութեան , մատնեաց զնո-
սա Աստուած ՚ի միտս անարգութեան՝ գործել
29 զանարժանս . Զլեալսն ամենայն անիրաւութեամբ ,
պոռնկութեամբ , անզգամութեամբ , ագահու-
թեամբ , չարութեամբ , լի նախանձու , սպանու-
թեամբ , հեւիւ , նենգութեամբ , չարաբարու-
30 թեամբ , ղղմտիզք . Զաբանաւօսք , աստուածատեացք ,
թշնամանողք , ամբարտաւանք , ամբարհաւաճք ,
31 գտիչք չարեաց , զծնողս անարգուք . Անմիտք ,
ուխտադրուժք , անագորոյնք , աննուէրք , անո-
32 ղորմք ։ Որ՛ք գիտեալ էին զԱստուծոյ իրաւանցն
վերայ , եթէ որ՛ք զայսպիսիսն գործեն՝ արժանի են
մահու . և *ոչ միայն որ զայն առնեն , այլ և որ
համակիցն՚՚ լինին գործելեացն ։

Գլ . Բ

1 Վասն որոյ առանց պատասխանի տալոյ ես , ով
մարդ , որ դատիդ . զի որով դատիս զընկերն ,
զանձն քո դատապարտես , զի դու զնոյն գործես՝
2 որով դատիս ։ Քանզի գիտեմք , եթէ Աստուծոյ
դատաստանն ճշմարտութեամբ է ՚ի վերայ այնոցիկ՝
3 որ զայնպիսիսն գործեն ։ Իսկ արդ խորհիցի՞ս զայս ,
ով մարդ , որ դատիս զայնոսիկ՝ որ զայնպիսիսն գոր-
4 ծեն , և դու զնոյն գործես , եթէ դու սպրիցես ի ձեռ
՚ի դատաստանաց անտի Աստուծոյ ։ Եթէ զհեծու-
թեամբ քաղցրութեան նորա և զներելութիւն և զերկ-

* Յայլս՝ ոչ միայն զայն առնեն՝ այլ և կամակից

կայնմտութեամբն արհամարհիցես , չգիտիցե՞ս զի
քաղցրութիւնն Աստուծոյ զքեզ յապաշխարու-
5 թիւն առնէ ։ Այլ ըստ խստութեան քում՝ և ըստ
անզղջ սրտի՝ դանձես անձին քում բարկութիւն
յաւուր բարկութեան և յայտնութեանն արդար
6 դատաստանին Աստուծոյ . Որ հատուցանէ իւ-
7 րաքանչիւր ըստ գործս իւրեանց . Որ համբերու-
թեամբ են ՚ի գործս բարութեան՝ զփառս և զպա-
տիւ և զանեղծութիւն խնդրեն , զկեանսն յաւի-
8 տենից ։ Իսկ որ ՚ի հակառակութենէ անտի են , և
ապստամբք ՚ի ճշմարտութենէն և զհետ երթեալ
զանիրաւութեան , բարկութիւն և սրտմտութիւն ,
9 նեղութիւն և անձկութիւն ՚ի վերայ ամենայն մարդ-
ոյ՝ որ գործէ զչար , նախ Հրէի և ապա հեթա-
10 նոսի ։ փառք , պատիւ և խաղաղութիւն ամենայնի
որ գործէ զբարի , նախ Հրէի և ապա հեթանոսի ։
11 Զի ոչ է ակնառութիւն առաջի Աստուծոյ ։ (12) Որք
միանգամ սրտաբոյ օրինացն մեղան , սրտաբոյ օ-
րինացն և կորնչին . և որք ընդ օրինօքն մեղան , օրի-
13 նօքն և դատեսցին ։ Զի ոչ եթէ որ լսելիք օրինացն
են՝ արդարացեալ են առաջի Աստուծոյ , այլ առ-
14 նելիք օրինացն արդարասցին ։ Այլ յորժամ հե-
թանոսք որ զօրէնս ոչ ունին , բնութեամբ զօրի-
նացն գործիցեն , նոքա որ զօրէնս ոչ ունին՝ ան-
15 ձանց իւրեանց իսկ են օրէնք . Որք ցուցանեն զգ-
գործս օրինացն գրեալ ՚ի սիրտս իւրեանց՝ վկա-
յութեամբ մտաց իւրեանց , *և յանդիմանել զմի
միանս ՚ի խորհրդոց իւրեանց ,՚՚ կամ թէ պատաս-

* Յայլս՝ յանդիմանելով զմիմեանս խորհրդոց նոցա ,

16 խանի իսկ *տալ. Յաւուրն յորում դատիցի Ա-
տուածն զգաղտնիս մարդկան ըստ աւետարանիս ի-
17 մում՝ ի ձեռն Յիսուսի Քրիստոսի ։ Ապա եթէ դու
Հրեայ անուանեալ ես, և յեցեալ ես յօրէնսն,
18 և պարծիս Ա.Աստուած, եւ գիտես զկամն նորա,
և ընտրես զլաւն, և խրատեալ ես յօրինացն.
19 վստահ ես յանձն քո առաջնորդ լինել կուրաց,
20 լոյս խաւարելոց. խրատիչ անզգամաց, վարդապետ
տղայոց. ունել զկերպարանս գիտութեան և ճշ-
21 մարտութեան օրինացն ։ Իսկ արդ որ ուսուցանես
զընկերն, զանձն քո ո՞չ ուսուցանես. որ քարոզես
22 չգողանալ՝ գողանա՞ս. Որ ասես չշնալ՝ շնա՞ս. որ
23 գարշիս ի մեհենից՝ զսեղա՞նս կողոպտես. Որ օրի-
նօքն պարծիս՝ անցանել ըստ օրէնսն զԱստուա՞ծ
24 անարգես ։ Զի անուն Ա.Աստուծոյ վասն ձեր հայհոյի
ի մէջ հեթանոսաց, որպէս և գրեալ է ։
25 Թլփատութիւն օգնէ եթէ զօրէնսն պահիցես.
ապա եթէ յանցաւոր օրինացն լիցես, Թլփատու-
26 թիւն քո անթլփատութիւն եղեւ ։ Իսկ եթէ ան-
թլփատութիւնն զկրաւունս օրինացն պահիցէ, ո՞չ
ապաքէն անթլփատութիւնն նորա ի թլփատութիւն
27 համարեսցի. Եւ դատիցի որ ի բնէ անթլփատու-
թիւն է՝ զօրէնսն կատարելով, զքեզ որ գրոմբ և
28 թլփատութեամբն յանցաւոր օրինացն լիցես ։ Զի
ոչ եթէ որ յայտնի Հրեայն է, և ոչ որ յայտնի
29 մարմնով թլփատութիւն. Այլ որ ի ծածուկ Հր-
էայն է, և թլփատութիւն սրտի՝ հոգւով և ոչ
գրով. որոյ գովութիւնն ոչ ի մարդկանէ է, այլ
Ա.Աստուծոյ ։

* Յայն՝ տալով.

Գլ. Գ

1 Իսկ արդ զի՞նչ աւելի է Հրէին, կամ զի՞նչ օգուտ
2 ի թլփատութենէ անտի ։ Բազում ինչ ամենայն
իրօք. նախ այն իսկ զի հաւատարիմ եղեն պատ-
3 գամքն Ա.Աստուծոյ ։ Իսկ արդ՝ եթէ չէր հաւատա-
ցեալ ոմանց, միթէ անհաւատութիւն նոցա զԱս-
4 տուծոյ հաւատան խափանէ՞ր. քաւ լիցի ։ Այլ ե-
լիցի Աստուած ճշմարիտ, և ամենայն մարդ սուտ,
որպէս և գրեալ է, Որպէս արդար եղիցիս ի բանս
5 քո, և յաղթեսցես ի դատել քեզ ։ Իսկ արդ՝ ե-
թէ անիրաւութիւն մեր զԱստուծոյ արդարութիւն
յանդիման կացուցանէ՝ զի՞նչ ասեմք. միթէ անի-
6 րաւ ինչ է Աստուած՝ որ ածէ զբարկութիւն. Ըստ
մարդկութեան ասեմ, քաւ լիցի. ապա թէ ոչ՝
7 զիա՞րդ դատի Աստուած զաշխարհ ։ Զի եթէ ճըշ-
մարտութիւնն Աստուծոյ յիմում սուտութեանն ա-
ռաւելեալ ի փառս նորա, զի՞ և ես իբրեւ զմե-
8 զաւոր դատիմ՝ Եւ կամ թէ որպէս հայհոյիմքն,
և որպէս ասեն զմեզ ոմանք ասել թէ Արասցուք
զչար՝ զի եկեսցէ բարի. որոց դատաստանքն յիրա-
9 ւի են ։ Եւ արդ ի՞ւր իւիք առաւել ևս եմք. ապա-
քէն և ոչ իւիք. քանզի յառաջագոյն իսկ մեղա-
դիր եղեաք Հրէից և հեթանոսաց՝ ամենեցուն ընդ
10 մեղաւք լինելոյ ։ Որպէս և գրեալ է թէ Ոչ ոք է ար-
11 դար և ոչ մի. Եւ ոչ գոյ որ իմանայ, և ոչ ոք է
12 որ խնդրէ զԱստուած ։ Ամենեքեան խոտորեցան ի
միասին և անպիտանացան. ոչ ոք է որ առնէ բա-
13 քաղցրութիւն, և ոչ ոք է մինչեւ ի մի ։ Գերեզ-

ման բաց է կոկորդ նոցա . լեզուօք իւրեանց նենդ-
գաւօրք եղեն . թոյնք խժից ՚ի ներքոյ շրթանց նո-
14 ցա . Որոց բերանք անիծիւք և դառնութեամբ լի
15 են ; երագ են ոտք նոցա հեղուլ զարիւն . (16) Բե-
17 կումն և թշուառութիւն ՚ի ճանապարհս նոցա . Եւ
18 զճանապարհն խաղաղութեան ոչ ծանեան ։ Ոչ է
երկիւղ Աստուծոյ առաջի աչաց նոցա ։

19 Բայց գիտեմք՝ որ ինչ միանգամ օրէնքն ասէն ,
այնոցիկ որ ընդ օրինաւքն են՝ ասեն . զի ամենայն
բերան խցի , և դատապարտ լիցի ամենայն աշ-
20 խարհ՝ Աստուծոյ ։ Զի ՚ի գործոց օրինաց ոչ արդա-
րասցի ամենայն մարմին առաջի նորա , քանզի օ-
21 րինաւքն է գիտութիւն մեղաց ։ Բայց արդ առանց
օրինացն իսկ արդարութիւնն Աստուծոյ յայտնեալ
է՝ վկայեալ յօրինաց անտի և ՚ի մարգարէից ։
22 Քանզի արդարութիւնն Աստուծոյ ՚ի հաւատոց ան-
տի Յիսուսի Քրիստոսի *յամենայն հաւատացեալս՚՚ .
23 և ոչինչ է խտիր ։ Քանզի ամենեքեան մեղան , և
24 նուազեալ են ՚ի փառաց անտի Աստուծոյ ։ Եւ ար-
դարանան ձրի նորին շնորհօք ՚ի ձեռն փրկութեան
25 որ ՚ի Քրիստոս Յիսուս . Զոր յառաջն եդ Աստուած
՚ի քաւութիւն ՚ի ձեռն հաւատոց †արեամբն նորա ,
՚ի հանդէս արդարութեան նորա՝ վասն թողութեան
26 յառաջագոյն մեղացն գործելոց ի ներքին Աստու-
ծոյ , ՚ի հանդէս արդարութեան նորա ՚ի ժամանա-
կի յայսմիկ . զի եղիցի նա արդար , և արդարա-
27 ցուսցէ զայն՝ որ ՚ի հաւատոյն Յիսուսի ։ Իսկ արդ

* Յայնմ՝ յամենեսեան և ՚ի վերայ ամենեցուն որ հա-
ւատանեն .

† Յայնմ՝ յարիւն

ո՞ւր են պարծանքն . արգելան . յորո՞ց օրինաց ,
՚ի գործո՞ց անտի . ոչ . այլ ՚ի հաւատոյն օրինաց ։
28 Քանզի համարիմք հաւատովք արդարանալ մար-
29 դ՝՝ առանց գործոց օրինացն ։ Եթէ Հրէի՞ միայն
էիցէ Աստուած՝ և հեթանոսաց ո՞չ . այո , և հեթա-
30 նոսաց ։ Զի եթէ մի է Աստուած՝ որ արդարացու-
ցանէ զթլփատութիւնն ՚ի հաւատոց , ապա և զան-
31 թլփատութիւնն *նովին հաւատովք ։ Արդ զօրէնսն
ինչ խափանե՞մք հաւատովքս . քաւ լիցի . այլ
զօրէնսն հաստատեմք ։

Գլ . Դ

1 Իսկ արդ զի՞նչ ասիցեմք զգտանելն Աբրահամու
2 նահապետին մերոյ ըստ մարմնոյ ։ Զի եթէ Աբրա-
համու գործովք էր արդարացեալ՝ ունէր ունէր
3 պարծանս՝ այլ ոչառ Աստուած ։ Իսկ զի՞նչ ասի-
ցէ գիր . Հաւատաց Աբրահամ՝ Աստուած՝՝ և հա-
4 մարեցաւ նմա յարդարութիւն ։ Բայց նմա՝ որ
գործիցէն , ոչ համարին վարձքն ըստ շնորհաց՝ այլ
5 ըստ պարտեաց ։ Իսկ այնմ՝ որ ոչն գործիցէ՝ բայց
հաւատայցէ յայն , որ արդարացուցանէ զամբա-
րիշտան , համարին հաւատք նորա յարդարութիւն ։
6 Որպէս և Դաւիթ ասէ զերանութիւն մարդոյ՝ ո-
րում՝ Աստուած համարի՝ արդարութիւն առանց
7 գործոց , երանի որոց թողան անօրէնութիւնք , և
8 որոց ծածկեցան մեղք իւրեանց , երանեալ է այր՝
9 որում՝ ոչ համարեսցի Տէր զվեղս նորա ։ Արդ երա-

* Ի Յ—ՆԻՆ_ԼԷ ։

նուիրելոյն այս 'ի վերայ թլփատութեա՞ն է, եթէ
'ի վերայ անթլփատութեան. քանզի ասեմք եթէ
հաւատոյն Աբրահամու հաւատացեալ յարդարուե-
10 ցաւ։ Արդ զի՞նչ համարեցաւ. մինչդեռ 'ի թլփ-
ատութե՞ն էր՝ եթէ յանթլփատութեան. ոչ 'ի
11 թլփատութեանն, այլ յանթլփատութեան։ Եւ
նշանակ առ թլփատութիւնն կնիք արդարու-
թեան հաւատոցն՝ որ յանթլփատութենէ անտի.
զի եղիցի նա հայր ամենայն հաւատացելոց որ յան-
թլփատութենէ անտի իցեն, առ 'ի համարելոյ և
12 նոցա արդարութիւն. Եւ հայր թլփատութեան՝
որոց ոչ 'ի թլփատութենէ անտի և եթ, այլ և
որոց երթայցեն ընդ հետս անթլփատութեան հա-
ւատոց հօր մերոյ Աբրահամու։
13 Զի ոչ եթէ օրինօքն են աւետիքն Աբրահամու
և զաւակի նորա ժառանգ լինել աշխարհի, այլ 'ի
14 հաւատոցն արդարութենէ։ Զի եթէ որք յօրինացն
են՝ ժառանգ իցեն, ապա ընդունայն են հաւատքն,
15 և դատարկ՝ աւետիքն։ Քանզի օրէնքն զբարկու-
թիւն գործեն. բայց ուր ոչ են օրէնք՝ և ոչ յան-
16 ցանք լինի։ Վասն այնօրիկ 'ի հաւատոց անտի, զի
ըստ շնորհացն իցէ, առ 'ի լինելոյ հաստատուն ա-
ւետեացն ամենայն զաւակին, ոչ այնմ միայն՝ որ
յօրինաց անտի, այլ և այնմ՝ որ 'ի հաւատոցն Ա-
17 բրահամու, որ է հայր մեր ամենեցուն. Որպէս և
գրեալ է թէ Հայր ազգաց բազմաց †արարից զքեզ,
առաջի Աստուծոյ որում՝ հաւատաց՝ ‡եղէ կեն-

* Յայլն՝ անթլփատութեան եւս

† Յայլն՝ արարի ‡ Յայլն՝ որ

դանի առնէ զմեռեալսն, և կոչէ զգոյն իբրեւ զգոյ։
18 Որ յանյոյսն յոյսով հաւատաց լինել նմա հայր
ազգաց բազմաց. որպէս և ասացաւն թէ Այնպէս
19 եղիցի զաւակ քո։ Եւ նա ոչ երկմտեաց 'ի հաւա-
տոցն *թէպէտ և՝ հայեցաւ 'ի մարմին իւր՝ այնու-
հետեւ իբրեւ 'ի մեռեալ. քանզի զհարիւրամեայսն
ուրեմն էր, և 'ի մեռելութիւն յարգանդին Սա-
20 ռայի։ Բայց յաւետեացն Աստուծոյ ոչ երկմտեաց
անհաւատութեամբ, այլ զօրացաւ հաւատովք,
21 եւ փառս Աստուծոյ, Եւ հաստատեցաւ 'ի միտս
22 իւր եթէ որ խոստացաւն՝ կարող է առնել։ Վասն
23 որոյ համարեցաւ նմա յարդարութիւն։ Արդ զի
գրեցաւն ոչ եթէ վասն նորա միայն՝ եթէ համա-
24 րեցաւ նմա. Այլ և վասն մեր որոց համարելոց է,
որք հաւատամք յայն՝ որ յարոյցն զՅիսուս զՏէր
25 մեր 'ի մեռելոց. Որ մատնեցաւ վասն յանցանաց
մերոց, և յարեաւ վասն զմեզ արդարացուցանելոյ։

Գլ. Ե

1 Այսուհետեւ արդարացեալք 'ի հաւատոց անտի,
խաղաղութիւն կալցուք առ Աստուած 'ի Տէրն
2 Ցեսուէ մերոյ Յիսուսէ Քրիստոսէ. Որով և զընծայու-
թիւնն ընկալաք հաւատովք 'ի շնորհս յայսոսիկ՝ յո-
րում կայք, և պարծիմք յուսով փառացն Ա-
3 ստուծոյ։ Եւ ոչ այսչափ միայն, այլ և պարծիմք
եւս 'ի նեղութիւնս մեր. քանզի գիտեմք եթէ նե-
4 ղութիւնք զհամբերութիւն գործեն, Համբերու-

* Յայլն՝ և ոչ

5 Թիւն զՀանդէս, Հանդէս զՀոյս. Ցոյս ոչ երբէք
ամաչեցուցանէ. զի սէրն Աստուածոյ սփռեալ է 'ի
սիրտս մեր, 'ի ձեռն Հոգւոյն Սրբոյ՝ որ տուաւ մեզ։
6 Զի մինչդեռ տակաւին էաք՝ Քրիստոս *վասն մեր՝՝ 'ի
7 ժամանակի 'ի վերայ ամբարշտաց մեռաւ։ Զի վասն
արդարոյ Հազիւ ոք թէ մեռանիցի, այլ վասն բարւոյ
8 թերեւս Համարձակիցի ոք մեռանել։ †Յայտնեաց
Աստուած զսէրն իւր 'ի մեզ, զի մինչդեռ մեղա-
9 ւորքն էաք, Քրիստոս վասն մեր մեռաւ. ո՛րչափ
եւս առաւել յարդարանալս մերում՝ այժմիկ ա-
րեամբն նորա՝ ապրեսցուք նովաւ 'ի բարկութենէն
10 անտի։ Զի եթէ մինչ թշնամիքն էաք՝ Հաշտեցաք
ընդ Աստուծոյ մահուամբ Որդւոյ նորա. ո՛րչափ
եւս առաւել 'ի Հաշտելս մերում՝ ապրեսցուք կե-
11 նօքն նորա։ Եւ ոչ այսչափ միայն, այլ և պար-
ծիմք եւս յԱստուած 'ի ձեռն Տեառն մերոյ Յի-
սուսի Քրիստոսի, որով և զՀաշտութիւնն իսկ ըն-
կալաք։

12 Զի որպէս 'ի միոջէ մարդոյ մեղք յաշխարհ մտին՝
և 'ի մեղաց անտի՝ մահ, և այնպէս յամենայն մար-
դիկ տարածեցաւ մահ՝ որով ամենեքին մեղան։
13 Քանզի մինչեւ յօրէնսն մեղք էին յաշխարհի, բայց
14 մեղք ոչ Համարին, ուր օրէնք ոչ իցեն։ Աւասիկ թա-
գաւորեաց մահ յԱդամայ մինչեւ ցՄովսէս և 'ի
վերայ չյանցուցելոցն ըստ նմանութեան յանցու-
15 ածոյն Ադամայ, որ է օրինակ հանդերձելոցն։ Այլ
ոչ որպէս յանցանքն՝ նոյնպէս և շնորհքն. զի եթէ
միոյն յանցանօք բազումք մեռան, ո՛րչափ եւս ա-

* Ի ցաւոյն չէ։ † Ցոյն՝ Բայց յայտնեաց

ռաւել շնորհքն Աստուածոյ և պարգեւքն՝ շնորհօք
միոյն մարդոյ Յիսուսի Քրիստոսի 'ի բազումս առա-
16 ւելաւ։ Եւ ոչ որպէս 'ի միոջէ յանցուցելոյն պար-
գեւքս. զի դատաստանն՝ 'ի միոջէ *յանցուածոյ
անտի՝՝ 'ի դատապարտութիւն, այլ շնորհքն 'ի բազ-
17 մաց յանցուածոյն յարդարութիւն։ Զի եթէ 'ի
միոյն յանցանաց մահ թագաւորեաց միովն, ո՛րչափ
եւս առաւել՝ որք զառաւելութիւն շնորհաց և
զպարգեւաց արդարութեանն առնուցուն, կենօք
թագաւորեսցեն 'ի ձեռն միոյն Յիսուսի Քրիստոսի։
18 Ապա ուրեմն որպէս միոյն յանցանօք՝ յամենայն
մարդիկ դատապարտութիւն, նոյնպէս և միոյն ար-
դարութեամբն՝ յամենայն մարդիկ արդարութիւն
19 կենաց։ Զի որպէս անհնազանդութեամբ միոյն մար-
դոյ մեղաւորք բազումք եղեն, նոյնպէս և հնազան-
20 դութեամբ միոյն արդարք բազումք եղիցին։ Բայց
օրէնքն 'ի ներքս անկան, զի յանցանքն բազմասցին.
†զի ուր առաւել եղեն մեղքն, առաւել եւս յա-
21 ւելան շնորհքն։ Զի որպէս թագաւորեցին մեղքն
'ի մահու անդ, նոյնպէս և շնորհքն թագաւորես-
ցեն արդարութեամբ 'ի կեանս յաւիտենից 'ի ձեռն
Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ։

Գ.Լ. Զ

1 Իսկ արդ զի՞նչ ասիցեմք, յամեմատեսցո՞ւք 'ի
2 մեղսն՝ զի շնորհքն բազմասցին։ Քաւ լիցի. որք մե-
ռաք մեղացն, զիա՞րդ տակաւին 'ի նմին կեցցեմք։

* Ի ցաւոյն չէ։ † Ցոյն՝ բայց

3 Եթէ ո՞չ գիտէք զի որ միանգամ մկրտեցաք ՚ի
Քրիստոս Յիսուս՝ ՚ի մահ անդր նորա մկրտեցաք ։
4 Թաղեցաք ընդ նմին մկրտութեամբն ՚ի մահ , զի
որպէս յարեաւ Քրիստոս ՚ի մեռելոց փառաւքն Հօր ,
5 նոյնպէս և մեք ՚ի նորոգութիւն կենաց շրջեցցուք ։ Զի
եթէ անկակից եղեալ նմանութեան մահուս նորա .
6 այլ և յարուցեան նորա լինիցիմք ։ Զայս գիտասջիք՝ զի հին մարդն մեր խաչակից եղեւ նորա , զի
խափանեսցի մարմին մեղացն մի՛ եւս ծառայել մեզ
7 մեղացն ։ Զի որ մեռանին՝ արդարացեալ է ՚ի մե-
8 ղաց անտի ։ Իսկ եթէ մեռաք ընդ Քրիստոսի , հաւատամք թէ՝ և կեցցուք ընդ նմա ։ Գիտեմք եթէ
Քրիստոս յարուցեալ է ՚ի մեռելոց , այսուհետեւ
10 ոչ մեռանի , մահ նմա ոչ եւս տիրէ ։ Զի որ մեռաւն՝ մեղացն մեռաւ միանգամ , և որ կենդանին
11 է՝ կենդանի է Աստուծոյ ։ Նոյնպէս և դուք համարեսջիք զանձինս մեռեալս մեղացն , և կենդանիս
12 Աստուծոյ ՚ի Քրիստոս Յիսուս ՚ի Տէր մեր ։ Մի՛ այսուհետեւ թագաւորեսցէն մեղք ՚ի մահկանացու
մարմինս ձեր՝ հնազանդել ցանկութեանց նորա .
13 եւ մի՛ պատրաստէք զանդամս ձեր զէն անիրաւութեան մեղացն , այլ պատրաստեցէք զանձինս ձեր
Աստուծոյ՝ որպէս ՚ի մեռելոց ՚ի կենդանիս , և զան-
14 դամս ձեր զէն արդարութեանն Աստուծոյ ։ Զի մեղք
ձեզ ոչ տիրեսցեն . քանզի ոչ էք ընդ օրինօք՝
15 այլ ընդ շնորհօք ։ Իսկ արդ ւմի՞ն . մեղիցո՞ւք զի չեմք ընդ օրինօք՝ այլ ընդ շնորհօք . քաւ լի-
16 ցի ։ Ո՞չ գիտէք թէ որում պատրաստէք զանձինս
ձեր ծառայս ՚ի հնազանդութիւն , ծառայ էք ո-
րում հնազանդիքն , եթէ մեղաց՝ ՚ի մահ , և եթէ

* ՚ի հնազանդութիւն արդարութեան՝ ՚ի կեանս ։՚՚
17 Աստ ընդ շնորհս Աստուծոյ . զի էիք ծառայք մեղաց ,
հնազանդեցայք ՚ի սրտէ որում աւանդեցայք՝ յառակ
18 վարդապետութեան ։ Արդ ազատեցեալք ՚ի մեղաց՝
19 ծառայեցէք արդարութեան ։ Մարդկօրէն ասեմ
վասն տկարութեան մարմնոյ ձերոյ . զի որպէս պատրաստեցիք զանդամս ձեր ծառայս պղծութեան և
անօրէնութեան յանօրէնութիւն , նոյնպէս և այժմ
պատրաստեցէք զանդամս ձեր ծառայս արդարո-
20 թեան ՚ի սրբութիւն ։ Զի մինչ ծառայքն էիք մե-
21 ղաց՝ ազատացեալք էիք յարդարութենէ ։ Իսկ արդ
զի՞նչ պտուղ ունէիք յայնժամ՝ որովք այժմ ի-
մանալի հարեալ էք . զի վախճան նոցա մահ է ։
22 Բայց արդ ազատացեալք ՚ի մեղացն և ծառայեալք
Աստուծոյ , ունիք զպտուղ ձեր ՚ի սրբութիւն , և
23 վախճան նորա կեանք յաւիտենից ։ Զի թոշակն
մեղացն մահ է , այլ շնորհքն Աստուծոյ կեանք յաւիտենից ՚ի Քրիստոս Յիսուս ՚ի Տէր մեր ։

Գլ . Է

1 Եթէ ո՞չ գիտէք , եղբարք , զի ընդ գիտուսն օրինաց խօսիմ՝ զի օրէնքն տիրեն մարդոյ՝ որչափ ժա-
2 մանակս կենդանի իցէ ։ Քանզի կին առնականին ՚ի
կենդանի այր իւր կապեալ կայ օրինօք . իսկ եթէ
3 մեռցի այրն , սրձակեալ է յօրինաց առն ։ Ապա
ուրեմն մինչ կենդանի է այրն , շուն կոչի՝ եթէ լինիցի առն այլում . և եթէ մեռցի այրն՝ ազատ է

* Յայնմ՝ հնազանդութեան՝ յարդարութիւն ։

յօրինացն, չՀամարեալ շուն՝ եթէ լինիցի առն
4 այլում։ Ա.յսուհետեւ և դուք, եղբարք, մեռայք
օրինացն մարմնովն Քրիստոսի, լինել այլում որ ի
մեռելոցն յարուցեալ է, զի պտղաբեր լիցուք Աս-
5 տուծոյ. Քանզի մինչ էաքն մարմնով, կիրք մե-
ղաց որ օրինաքն էին՝ զործանային յանդամս մեր,
6 առ ի պտղաբեր առնելոյ զմեզ մահու։ Բայց այժմ
*դատարկացաք յօրինաց անտի. քանզի մեռաք
այնմիկ՝ որով ըմբռնեալն էաք, առ ի ծառայել
մեզ նորոգութեամբ Հոգւոյն և ոչ հնութեամբ
7 գրոյն։ Իսկ արդ զի՞նչ ասեմք. օրէնքն մե՞ղք ի-
ցեն. քաւ լիցի. այլ զմեղս ոչ գիտէի՝ եթէ ոչ
օրինաւք. և զցանկութիւն ոչ ճանաչէի՝ եթէ ոչ
8 օրինացն էր ասացեալ, Մի ցանկանայցես։ †Պատ-
ճառս առեալ մեղքն պատուիրանաւն, և գործեցին
յիս զամենայն ցանկութիւն. զի առանց օրինացն
9 մեղքն մեռեալ էին։ Եւ ես առանց օրինացն եր-
բեմն էի կենդանի, այլ իբրեւ եկաս յիս պատուի-
10 րանն, մեղքն կենդանացան, Եւ ես մեռայ. և
գտաւ ինձ պատուիրանն՝ որ ի կեանան էր, նոյն
11 ի մահ։ Զի մեղացն պատճառս առեալ պատուի-
րանաւն՝ խաբեցին զիս, և նովին սպանին։
12 Ա.յսուհետեւ օրէնքն սուրբ են, և պատուիրանն
13 սուրբ և արդար և ‡բարեբար։ Իսկ արդ ինձ բա-
րին մա՞հ եղեւ. քաւ լիցի. այլ մեղքն, զի երե-
ւեսցին մեղքն բարեաւն գործել ինձ զմահ, զի ե-
զիցին ըստ առաւելապատիկ մեղքն մեղաւոր ի

* Ց՝ՅՆՆ՝ արձակեցաք † Ց՝ՅՆՆ՝ Բայց պատճառս
‡ Ց՝ՅՆՆ՝ բարի

14 ձեռն պատուիրանին։ Գիտեմք զի օրէնքն հոգեւոր
են, այլ ես մարմնաւոր եմ՝ ընդ մեղաւք վաճառեալ։
15 Զի զոր գործեմն ոչ գիտեմ, ոչ եթէ զոր կամիմն
16 զայն առնեմ, այլ զոր ատեամն՝ զայն գործեմ։ Ա-
պա թէ զոր ոչն կամիմ՝ զայն առնեմ, վկայեմ օրէ-
17 նացն եթէ բարւոք են։ Ա.յլ արդ՝ ոչ եթէ ես
18 գործեմ զայն, այլ բնակեալ յիս մեղքն։ Գիտեմ
զի ոչ բնակեալ է յիս, այսինքն է ի մարմնի ի-
մում, բարի ինչ. զի կամքն առաջի կան ինձ, և
19 առնել զբարին՝ ոչ։ Զի ոչ եթէ զոր կամիմ զբարին
առնեմ, այլ զոր ոչն կամիմ զչարն՝ զայն գործեմ։
20 Ապա եթէ զոր ոչն կամիմ՝ զայն առնեմ, ոչ ևս
21 ես առնեմ զայն՝ այլ բնակեալ յիս մեղքն։ *Եւ
արդ՝ գտանեմ զօրէնս այնորիկ՝ որ կամիցին առ-
22 նել յիս զբարին. և ինձ՝՝ չարն առաջի կայ։ Հա-
ճեալ եմ ընդ օրէնսն Աստուծոյ ըստ ներքին մար-
23 դոյն. Բայց տեսանեմ այլ օրէնս յանդամս իմ,
զնեալ հակառակ օրինաց մտաց իմոց, և գերեալ
24 զիս †օրինաքն մեղաց՝ որ են յանդամս իմ։ Ա.յր
մի տառապեալ եմ ես. ո՞վ ապրեցուսցէ զիս ի
25 մարմնոյ մասէ մահու։ Ա.յլ ‡շնորհքն Աստուծոյ
ի ձեռն Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ։ Ապա
ուրեմն ես ինքնին մտօք իմովք ծառայեմ օրինացն
Աստուծոյ. և մարմնով՝ օրինացն մեղաց։

* Ց՝ՅՆՆ՝ Եւ արդ գտանեմ զօրէնս ինչ՝ զի յորժամ
կամիմ առնել զբարին, ինձ
† Ց՝ՅՆՆ՝ օրինացն ‡ Ց՝ՅՆՆ՝ շնորհք

Գ Լ · Ը

1 *Թէ այդպէս իցէ՝ ոչինչ գատապարտութիւն է
2 այնոցիկ որ ՚ի Քրիստոս Յիսուս, † ՚ի օրէնք հո-
գևոյն կենաց ՚ի Քրիստոս Յիսուս ազատեցին զիս
3 յօրինաց մեղացն և մահու։ Զի որ անհնարին էր
օրինացն՝ որով տկարանայր մարմնով, Աստուած
զՈրդին իւր առաքեաց ՚ի նմանութիւն մարմնոյ մե-
ղաց, և վասն մեղաց, և դատապարտեաց զմեղս
4 ՚ի մարմնի անդ. Զի արդարութիւն օրինացն կա-
տարեսցի ՚ի մեզ, որք ոչ ըստ մարմնոյ գնայցեմք՝
5 այլ ըստ հոգւոյն։ Զի որք ըստ մարմնոյն են՝ զը-
մարմնոյն խորհին, և որք ըստ հոգւոյն՝ զհոգւոյն։
6 Զի խորհուրդ մարմնոյ մահ է, և խորհուրդ հոգւոյն՝
7 կեանք և խաղաղութիւն։ Քանզի խորհուրդ մար-
մնոյ թշնամութիւն է Աստուած՝ զի օրինացն Ա-
8 ստուծոյ ոչ հնազանդի. Նա՛ և կարէ իսկ ոչ։ Զի որ
մարմնովք են, Աստուծոյ հաճոյ լինել ոչ կարեն։
9 Բայց դուք ոչ էք մարմնով՝ այլ հոգւով, եթէ ի-
ցէ Հոգին Աստուծոյ ՚ի ձեզ բնակեալ. ապա եթէ
10 ոք զՀոգի Քրիստոսի ոչ ունի, սա չէ նորա։ Իսկ
եթէ Քրիստոս ՚ի ձեզ է՝ ապա մարմին մեռեալ է
վասն մեղաց. և Հոգին կենդանի է վասն արդա-
11 րութեան։ Եթէ Հոգի այնորիկ՝ որ յարոյց զՅիսուս
՚ի մեռելոց, բնակեալ է ՚ի ձեզ, ապա և որ յա-
րոյց զՅիսուս Քրիստոս ՚ի մեռելոց՝ կենդանացուս-

* Յոյն՝ Եւ արդ

† Յոյն յաւելու, որք ոչն գնան ըստ մարմնոյ ։

ցէ զմահկանացու մարմինս ձեր բնակեալ Հոգւով
իւրով ՚ի ձեզ։
12 Ա՛յնուհետեւ, եղբարք, պարտապան եմք ոչ մար-
13 մնոյ՝ ըստ մարմնոյ կեալ։ Զի թէ ըստ մարմնոյ կե-
ցէք՝ մեռանելոց եք. իսկ եթէ Հոգւով զգործս
14 մարմնոյ սպանանիցէք՝ կեցջիք։ Զի որ Հոգւովն Ա-
15 ստուծոյ վարին, նոքա են որդիք Աստուծոյ։ Զի ոչ
առէք զՀոգին ծառայութեան միւսանգամ՝ յեր-
կիւղ, այլ առէք զՀոգին որդեգրութեան, որով
16 աղաղակեմք Աբբայ Հայր։ Նոյն ինքն Հոգին վկայէ
17 Հոգւոյս մերում, եթէ եմք որդիք Աստուծոյ։ Եւ
եթէ որդիք, ապա և ժառանգք. ժառանգք Ա-
ստուծոյ՝ և ժառանգակիցք Քրիստոսի. եթէ չար-
չարանացն կրօրդ լինիմք, և փառացն հաղորդ լի-
18 նելոց եմք։ Ինձ այսպէս թուի՝ եթէ ոչ են արժա-
նի չարչարանք ժամանակիս հանդերձելոց փառացն՝
19 որ յայտնելոց են ՚ի մեզ։ Զի ակնկալութիւն արա-
րածոյ յայտնութեան *Որդւոյն Աստուծոյ սպասէ։
20 Զի ընդունայնութեան արարածք հնազանդեցան,
ոչ իւրեանց կամաւ, այլ վասն այնորիկ որ հնա-
21 զանդեցոյցն յուսով, Զի և ինքեանք իսկ արա-
րածքն ազատեսցին ՚ի ծառայութենէ ապականու-
թեան յազատութիւն փառաց *Որդւոյն Աստու-
22 ծոյ։ Քանզի գիտեմք եթէ ամենայն արարածք հե-
23 ծեն և երկնեն մինչեւ ցայժմ։ Եւ ոչ այսչափ միայն,
այլ և մեք իսկ որ զպտուղ Հոգւոյն ունիմք՝ ան-
ձամբ յանձինս մեր հեծեմք, որդեգրութեան ակն
24 կալեալ՝ փրկութեան մարմնոյ մերոյ։ Զի յուսով

* Յոյն՝ որդւոցն

ապրեցաք. այլ յոյս տեսանելի չէ յոյս. զի զոր
25 տեսանէ ոք՝ զի՞ եւս յուսայ։ Ապա թէ զոր ոչն
տեսանեմք՝ յուսամք, համբերութեամբ ակն ու-
26 նիմք։ Նոյնպէս և Հոգին ի թիկունս հասանէ տիւ-
րութեան մերում. զի զոր կամքն չգոլեմք՝ որպէս
արժան իցէ ոչ գիտեմք. այլ ինքնին Հոգին բարե-
27 խօս լինի ի հեծութիւնս անմռունչս։ Բայց որ քննէն
զսիրտս՝ գիտէ զինչ խորհուրդ է Հոգւոյն, զի
28 ըստ Աստուծոյ բարեխօսէ վասն սրբոց։ Բայց գի-
տեմք եթէ որոց սիրենն զԱստուած՝ *յամենայնի
գործակից լինի ի բարիս՝ որք † հրաւիրանաւն կո-
29 չեցան։ Զի զորս յառաջն ճանաչէր, յառաջա-
գոյն և հրաւիրեաց կերպարանակից լինել պատկերի
Որդւոյն իւրոյ. զի եղիցի նա անդրանիկ ի մէջ եղ-
30 բարց բազմաց։ Եւ զորս յառաջագոյնն հրաւի-
րեաց՝ զնոսին և կոչեաց. և զորս կոչեացն՝ զնոսին
և արդարացոյց. և զորս արդարացոյցն՝ զնոսին և
31 փառաւորս արար։ Իսկ արդ զի՞նչ ասեմք առ այս.
եթէ Աստուած ի մեր կոյս է, ո՞վ իցէ մեր հա-
32 կառակ։ Որ յիւր Որդին ոչ խնայեաց, այլ վասն
մեր ամենեցուն մատնեաց զնա, զիա՞րդ ոչ նովաւ
33 հանդերձ զամենայն շնորհիցէ մեզ։ Ո՞վ իցէ որ մե-
ղադիր լինիցի ընտրելոց Աստուծոյ. Աստուած է
34 որ արդարացուցանէ, իսկ արդ ո՞վ է որ դատա-
պարտ առնիցէ. Քրիստոս ‡Յիսուս որ մեռաւն մա-
նաւանդ թէ յարուցեալ իսկ է, և է ընդ աջմէ
35 Աստուծոյ, որ և բարեխօս իսկ է վասն մեր։ Արդ

* Յոյնն՝ ամենայն ինչ
† Յոյնն՝ առաջադրութեամբն ‡ Ի Յոյնին չէ։

ո՞վ մեկնեացէ զմեզ ի սիրոյն Քրիստոսի, նեղու-
թի՞ւն, թէ անձկութի՞ւն, թէ հալածա՞նք, թէ
սո՞վ, թէ մերկութի՞ւն, թէ վի՞շտք, թէ սո՞ւր.
36 Որպէս և գրեալ է, վասն քո մեռանիմք զօրհա-
նապազ, համարեցաք իբրեւ զոչխար ի սպանդ։
37 Այլ յայսմ ամենայնի առաւել յաղթեմք նովաւ՝
38 որ սիրեացն զմեզ։ Քանզի հաստատեալ եմ եթէ
ոչ մահ և ոչ կեանք և ոչ հրեշտակ և ոչ իշխանու-
թիւնք, և ոչ որ կանս և ոչ հանդերձեալքն, և ոչ
39 զօրութիւնք, եւ ոչ բարձրութիւն և ոչ խորու-
թիւն, և ոչ այլ ինչ արարած կարէ մեկնել զմեզ
ի սիրոյ անտի Աստուծոյ, որ ի Քրիստոս Յիսուս
ի Տէր մեր։

Գլ. Թ

1 Ճշմարտութեամբ ասեմ ի Քրիստոս և ոչ ստեմ,
2 վկայեն ինձ միտք իմ ի Հոգի Սուրբ, Զի սրտմու-
թիւն է ինձ յոյժ և անպակաս ցաւք սրտի իմոյ։
3 Զի *ուխտիւք ինքրեալ ես իսկ ինքնին նզովք լինել
ի Քրիստոսէ՝ վասն եղբարց իմոց և ազգականաց
4 ըստ մարմնոյ, Որ են Իսրայէլացիք. որոց՝ որդե-
գրութիւնն և փառքն և կտակարանքն և օրէնսդրու-
5 թիւնն և պաշտօնն և աւետիքն, Որոց՝ հարքն, յո-
րոց՝ և Քրիստոս ըստ մարմնոյն, որ է ի վերոյ ա-
մենեցուն Աստուած օրհնեալ յաւիտեանս։ Ամէն։
6 † Ոչինչ է մարթ եթէ անկած լինիցի՝՝ բանն Ա-

* Ի Յոյնին չէ։
† Յոյնն՝ Ոչ որպէս թէ անկեալ իցէ

տուածոյ . զի ոչ ամենևքեան որ Իսրայելէն են , նո-
7 քա Իսրայելեանք էին . եւ ոչ որ զաւակն Աբրա-
համ են՝ ամենևքեան որդիք էին . այլ Իսահա-
8 կաւ կոչեսցի քեզ զաւակ : Այսինքն ոչ եթէ որ
որդիք մարմնոյ են՝ են որդիք Աստուծոյ , այլ որդիք
9 աւետեացն համարին ի զաւակ : Քանզի աւետեաց
իսկ է բանս այս , եթէ ի ժամանակի յայսմիկ եկից ,
10 և եղիցի որդի Սառայի : Եւ ոչ այնչափ միայն՝
այլ և ի Հռեբեկայ ի միոջէ անկողնոյ Իսահակայ
11 հօր մերոյ : Զի մինչչեւ ծնեալ էին , և մինչչեւ
բարի ինչ կամ չար գործեալ էին , զի ըստ ըն-
տրութեանն աստուածային Աստուծոյ հաստա-
12 տեսցի , Ոչ ի գործոց , այլ յայնմանէ որ կոչեացն ,
13 ասացաւ նմա , Թէ երէցն կրասերսյն ծառայեսցէ ,
որպէս և գրեալ է Թէ ԶՅակովբ սիրեցի և զԵսաւ
14 ատեցի : Իսկ արդ զի՞նչ ասեմք . միթէ անիրաւու-
15 թի՞ւն իցէ Աստուծոյ . քաւ լիցի : Զի Մովսիսի
ասէ , Ողորմեցայց որում ողորմեցայցն , և գթա-
16 ցայց յոր գթացայցն : Ապա ոչ ըստ այնմ՝ ինչ է
որ կամիցին , և ոչ ըստ այնմ՝ որ ընթանայցէ .
17 այլ ըստ Աստուծոյ որ ողորմին : Քանզի ասէ գիր
ցփարաւոն , Թէ վասն այնորիկ *գրգռեցի զքեզ ,
զի ի քեզ ցուցից զզօրութիւն իմ , և պատմեսցի
18 անուն իմ ընդ ամենայն երկիր : Ապա ուրեմն ում
կամի ողորմի , և †ում կամի խստանայ :" Իսկ արդ
19 ‡ասիցե՞ս , Թէ մեղ եւս զի՞ դնէ՝ զի կամաց նորա

* Յայլն՝ յարուցի
† Յայլն՝ զոր կամի՝ խստացուցանէ ,
‡ Յայլն՝ ասիցես ինձ

20 ոչ ոք կայ հակառակ ։ Իսկ արդ դու ո՞վ ես մարդ .
որ *պատասխանի տաս Աստուծոյ . միթէ ասիցէ՞
ստեղծուածն ցՍտեղծիչն Թէ Ընդէ՞ր այդպէս արա-
21 բեր զիս ։ Եթէ ո՞չ ունիցի իշխանութիւն բրուտն
կաւոյն , ի նմին զանգուածոյ առնել անօթ՝ զմի
22 ի պատիւ և զմի յանարգանս ։ Ապա եթէ կամէր
Աստուած ցուցանել զբարկութիւն , և յայտնի
առնել զզօրութիւն իւր , որ համբերն բազում եր-
կայնմտութեամբ անօթոցն բարկութեան՝ պատ-
23 րաստելոցն ի կորուստ . Զի յայտնի արասցէ զմե-
ծութիւն փառաց իւրոց ի վերայ անօթոցն ողոր-
24 մելեան , զոր †պատրաստեաց ի փառս ։ Զորս և
կոչեաց զմեզ , ոչ միայն ի Հրեից՝ այլ և ի հեթա-
25 նոսաց ։ Որպէս և յՕվսէէ ասէ , կոչեցից զոր ոչ ժո-
ղովուրդն իմ ժողովուրդ լինի , և զչսիրեցեալն՝ սի-
26 րեցեալ ։ Եւ եղիցի ի տեղւոջ յորում ասացաւ
նոցա Թէ Ոչ ժողովուրդ իմ դուք , անդ կոչեսցին
27 նոքա որդիք Աստուածոյ կենդանւոյ ։ Եսայի աղա-
ղակէ վասն Իսրայէլի , Եթէ իցէ Թիւ որդւոցն Իս-
րայելի իբրեւ զաւազ ծովուն՝ ‡սակաւ ինչ՝՝ մնա-
28 ցորդք մնասցեն ։ Զի բան մի հակիրճ և համառօտ
արդարութեամբ . զբանն հակիրճ արասցէ Տէր ի
29 վերայ երկրի ։ Եւ որպէս ասէ Եսայի , Եթէ ոչ Տէա-
ռըն զօրութեանց Թողեալ էր մեզ զաւակ , իբրեւ
զՍոդոմ լինեաք և Գոմորայ նմանեաք ։
30 Իսկ արդ զի՞նչ ասիցեմք . զի հեթանոսք որ ոչ

* Յայլն՝ հակառակ պատասխանի
† Յայլն՝ յառաջագոյն պատրաստեաց
‡ Ի Յ—ին Ա+

երթային ղՀետ արդարութեան՝ հաճին արդարութեան, այնմ արդարութեան՝ որ ի հաւատոց անմ
31 տի։ Ա.ՀԼ Իսրայէլ երթայր ղՀետ օրինացն արդարութեան՝ և յօրէնս արդարութեան ոչ ժամա
32 նեաց։ Ընդէ՞ր. զի ոչ ի հաւատոց այլ իբրեւ ի գործոց օրինաց. քանզի դեղեցին նոքա առ վիմին
33 գայթակղութեան. Որպէս և գրեալ է, Ա.Հաւասիկ դնեմ ի Սիովն քար գայթակղութեան և վէմ գլորման, և ամենայն որ հաւատասցէ ի՛նա՝ մի՛ ամաչեսցէ։

Գլ. ժ

1 Եղբարք, իմ կամք սրտի և աղօթք առ Աստուած
2 վասն *նոցա են ի փրկութիւն։ Քանզի վկայեմ նոցա թէ զնախանձն Աստուծոյ ունին, այլ ոչ գի
3 տութեամբ։ Զի տգէտ են Աստուծոյ արդարութեան, և զիւրեանցն խնդրեն կացուցանել, զի արդարութեանն Աստուծոյ ոչ հնազանդեցան։ Քանզի կատարած օրինացն Քրիստոս է յարդարութիւն
5 ամենայն հաւատացելոյ։ Մովսէս գրէ զարդարութիւնն, որ յօրինաց անմ
6 տի է, եթէ արասցէ զայն մարդ՝ կեցցէ նովին։ Իսկ զՀաւատոցն արդարութենէ այսպէս ասէ. Մի ասիցես ի սրտի քումմ, ո՞վ ելանիցէ յերկինս, այ
7 սինքն է զՔրիստոս իջուցանել. Կամ ո՞վ իջանիցէ յանդունդս, այսինքն է զՔրիստոս հանել ի մեռելոց։ Ա.ՀԼ զի՞նչ ասէ †գիր. Մերձ է ‡բանն, ի

* Յայն՝ Իսրայէլի † Ի Յոհ. Վէ։
‡ Յայն՝ բանն ի քեզ,

բերան քո և ի սրտի քումմ է, այսինքն է բանն Հա
9 ւատոց զոր քարոզեմք։ Զի եթէ խոստովանեսցես բերանով քով Տէր զՅիսուս, և Հաւատասցես ի սրտի քումմ թէ Աստուած յարոյց զնա ի մեռե
10 լոց, կեցցես։ Զի սրտիւ Հաւատայք յարդարութիւն, և բերանով խոստովանիք ի փրկութիւն։
11 Քանզի ասէ գիր, Ամենայն որ Հաւատասցէ ի նա՝
12 մի՛ ամաչեսցէ։ Զի ոչ գոյ խտիր Հրէի և Հեթանոսի. քանզի նոյն Տէր է ամենեցուն, բաւական յա
13 մենեսին զոր կարդան առ նա. Զի ամենայն որ կար
14 դասցէ զանուն Տեառն՝ կեցցէ։ Իսկ զի՞նդ կարդասցեն՝ յոր ոչն Հաւատացին. կամ զի՞նդ Հաւատասցեն՝ որում ոչ լուան. կամ զի՞նդ լուիցեն
15 առանց ուրուք քարոզելոյ. Կամ զի՞նդ քարոզեսցեն, եթէ ոչ առաքեսցին. որպէս և գրեալ է, Իբրեւ զի գեղեցիկ են ոտք աւետարանչացն խաղաղութեան և աւետարանչացն բարութեան։ Ա.ՀԼ
16 ոչ ամենեքեան Հնազանդ եղեն աւետարանին. Եսայի աղաղակէ, Տէր, ո՞ Հաւատաց լսոյ մերում։
17 Ապա ուրեմն Հաւատք ի լսելոյ են, և լուր ի բանէն Քրիստոսի։
18 Ա.ՀԼ ասեմ, միթէ ո՞չ լուան. Մանաւանդ զի ընդ ամենայն երկիր ել բարբառ նոցա, և ընդ ծագս
19 տիեզերաց՝ խօսք նոցա։ Ա.ՀԼ ասեմ, միթէ Իսրա
ՀՀԼ ո՞չ *լուաւ. Նախ Մովսէս ասէ, Ես նախանձեցուցից զձեզ ոչինչ ժողովրդեամբ, և ազգաւ անմ
20 միտաւ զկծեցուցից զձեզ։ Բայց Եսայի համարձակի իսկ և ասէ, Գտայ այնոցիկ՝ որ զիս ոչ խնդրէին,

* Յայն՝ գիտացք

Յայտնի եղէ այնոցիկ՝ որ զինէն ոչ հարցանէին ։
21 Ասէ առ Իսրայէլ ասէ, Զօր ամենայն ձգեցի զձեռս
իմ առ ժողովուրդ անհնազան և հակառակող ։

ԳԼ· ԺԱ

1 Իսկ արդ ասեմ, միթէ մերժեա՞ց Աստուած զՂ-
ժողովուրդ իւր · քան լիցի, քանզի և ես Իսրա-
էլացի եմ, ի զաւակէ Աբրահամու, յազգէ Բե-
2 նեամինայ։ Ոչ մերժեաց Աստուած զժողովուրդ իւր,
զոր յառաջն ծանեաւ. Թէ ո՞չ գիտէք ի Եղիա
զինչ ասէ գիր, ա՛րդեօք ամբաստան լինի Աստուծոյ
3 դիմայելէն, Տէր, զմարգարէս քո կատորեցին և զա-
զանս քո կործանեցին. ես մնացի միայն, և խըն-
4 դրեն զանձն իմ։ Այլ զինչ ասէ նմա պատասխանին.
Թողի ինձ, ասէ, եօթն հազար այր, որ ոչ կրկնեցին
5 ծունր բահաղու։ Նոյնպես և յայսմ ժամանակի
6 մնացորդք ըստ ընտրութեան շնորհացն եղեն։ Իսկ
եթէ շնորհօք, ոչ եւս ի գործոց · ապա թէ ոչ՝
7 շնորհքն ոչ եւս շնորհք լինին։* Իսկ արդ զոր խըն-
դրէրն Իսրայէլ, այնմ ոչ եհաս. բայց †ընտրու-
8 թեանն եհաս, և այլքն կուրացան, (Որպէս գրեալ
է, Ետ նոցա Աստուած հոգի լիմարութեան, աչս
որովք ոչ տեսանիցեն, և ականջս՝ որովք ոչ լսի-
9 ցեն.) մինչեւ ցայսօր ժամանակի։ Եւ Դաւիթ ա-
սէ, Եղիցին սեղանք նոցա յորոգայթ և ի որս և

* Որում յաւելուն ի Յունէն, Իսկ եթէ ի գործոց, ոչ
եւս են շնորհք · ապա թէ ոչ՝ գործն ոչ եւս գործ
լինի ։ † Յունն՝ ընտրութիւնն

10 ի գայթակղութիւն և ի հատուցումն նոցին ։ Խա-
ւարեսցին աչք նոցա զի մի տեսցին, և զթիկունս
11 նոցա համապազ կորացո ։ Իսկ արդ ասեմ, միթէ
վասն այնորիկ յանցեան՝ զի կործանեսցին · քան
լիցի · այլ նոցա յանցանօքն փրկութիւն հեթանո-
12 սաց, զի նախանձ արկցէ նոցա ։ Իսկ եթէ յան-
ցանքն նոցա՝ մեծութիւն աշխարհի, և պարտու-
թիւնն նոցա՝ մեծութիւն հեթանոսաց, որչափ եւս
առաւել լրութիւն նոցա ։
13 Այլ ձեզ ասեմ հեթանոսաց՝ ցորչափ ժամանակս
իցեմ հեթանոսաց առաքեալ, զպաշտօնն իմ փա-
14 ռաւոր առնեմ, Զի թերեւս նախանձ *արկից նոցա
մարմնով իմով՝՝ և ապրեցուցից զոմանս ի նոցանէ։
15 Զի եթէ մերժումն նոցա հաշտութիւն աշխարհի է,
իսկ ընդունելութիւնն զի՞նչ իցէ, եթէ ոչ՝ կենդա-
16 նութիւն ի մեռելոց ։ Իսկ եթէ սկիզբն սուրբ է՝ և
17 զանգուածն. և եթէ արմատն՝ սուրբ և ոստքն ։ Ե-
թէ յոմանց ոստից ոմանք փշրեցան, և դու որ ձի-
թենիդ վայրենի էիր՝ պատուաստեցար ի նոսա, և
բաժանորդ եղեր արմատոյն և պարարութեան
18 ձիթենւոյն, Մի պարծիր առ ոստսն · ապա եթէ
եթէ պարծիցիս՝ ոչ եթէ դու զարմատն ի վեր ու-
19 նիս, այլ արմատն զքեզ ։ Իսկ արդ ասիցես, Ոստքն
20 փշրեցան, զի ես պատուաստեցայց ։ Բարւոյ է, ան-
հաւատութեամբն փշրեցան, և դու հաւատովք
21 հաստատեցար · Մի՛ հպարտանար՝ այլ երկիր ։ Զի
եթէ Աստուած ի բուն ոստան ոչ խնայեաց, գուցէ
22 երբեք և ի քեզ ոչ խնայիցէ ։ Արդ տես զքաղցրու-

* Յունն՝ արկից մարմնոյ իմում

թիւն և զսատկութիւնն Աստուծոյ , ի վերայ կործանելոցն սատկութիւն , և ի վերայ քո քաղցրութիւն Աստուծոյ , եթէ կացցես ի նմին քաղցրու-
23 թեան . ապա թէ ոչ՝ և դու կտճատիցիս : Եւ նոքա եթէ ոչ ի նմին անհաւատութեան կայցեն , պատուաստեսցին . զի կարող է Աստուած ժխտան-
24 գամ պատուաստել զնոսա : Զի եթէ դու ի բունէ ի վայրենի ձիթենւոյ անտի հատար , և յանբուն ի բարի ձիթենւոյն պատուաստեցար , որչափ եւս առաւել նոքա որ բունքն իսկ են՝ պատուաստեսցին յիւրեանց ձիթենւոյն :
25 Ոչ կամիմ , եղբարք , եթէ տգէտք իցէք խորհըրդոյս այսմիկ , զի մի յանձինս ձեր իցէք իմաստունք . զի կուրութիւն փորը ի շատ եղեւ Իսրայէլի , մինչ-
26 եւ լրումն հեթանոսաց մտցէ , եւ ապա ամենայն Իսրայէլ կեցցէ . որպէս և գրեալ է , եկեսցէ ի Սիովնէ փրկիչ , և դարձուսցէ զամբարշտութիւնն
27 ի Յակովբայ : Եւ այս նոցա որ յինէն ուխտ , յորժամ բարձից զմեղս նոցա :
28 Ըստ աւետարանին թըշնամիք են վասն ձեր , բայց ընտրութեանն՝ սիրելիք
29 վասն հարցն : Քանզի անզղջ են շնորհքն և կոչումն
30 Աստուծոյ : Զի որպէս և դուք երբեմն ապստամբք եիք յԱստուծոյ , և արդ ողորմութիւն գտէք առ
31 նոցա ապստամբութեամբն , նոյնպէս և նոքա այժմ ապստամբ * եղեն առ ձերով ողորմութեամբդ , զի
32 և՝ նոքա ողորմութիւն գտցեն : Քանզի արգել Աստուած զամենեսին յանհաւատութիւն , զի ամենեցուն ողորմեսցի :
33 Ո՛վ խորք մեծութեան և իմաս-

* ՚ի ցաւս՝ եղեն , զի առ ձերով ողորմութեամբդ և

տութեան և գիտութեանն Աստուծոյ . ո՛րպէս զի առանց քննելոյ են դատաստանք նորա , և առանց
34 զննելոյ են ճանապարհք նորա : Զի ո՞վ գիտաց զմիտս Տեառն , կամ ո՞վ խորհրդակից եղեւ նմա .
35 կամ ո՞վ եառ նմա *փոխ , և առնուցու զփոխարէն
36 ՚ի նմանէ : Զի ՚ի նմանէ և նովաւ և ՚ի նոյն՝ ամենայն . նմա փառք յաւիտեանս : Ամէն :

Գլ· ԺԲ

1 Աղաչեմ զձեզ , եղբարք , գթութեամբքն Աստուծոյ՝ պատարաստել զմարմինս ձեր պատարագ կենդանի , սուրբ , հաճոյ Աստուծոյ , զխոստուն պաշտօնդ
2 ձեր . Եւ մի՛ կերպարանիք կերպարանօք աշխարհիս այսորիկ , այլ նորոգեցարուք ի նորոգութիւն մտաց ձերոց , առ ի քննել ձեզ *զլաւն , և՝ եթէ զինչ են կամքն Աստուծոյ՝ բարին և հաճոյն և կատա-
3 րեալն : Զայս ասեմ շնորհօքն Աստուծոյ՝ որ տուեալ են ինձ , ամենայնի որ է ի ձեզ , մի՛ առաւել ինչ խորհել քան զարժանն խորհելոյ , այլ խորհել ի զգաստանալ իւրաքանչիւր՝ որպէս և բաժանեաց
4 Աստուած չափ հաւատոց : Որպէս ի միում մարմնի անդամս բազումս ունիմք , և անդամքն ամենայն
5 ոչ զնոյն գործ ունին . Նոյնպէս և բազումքս մի մարմին եմք ի Քրիստոս , այլ իւրաքանչիւր միմեանց անդամք եմք : Բայց ունիմք մեք շնորհս ըստ շնորհացն , որ տուեալ են մեզ ազգս ազգս , եթէ
7 մարգարէութիւն՝ ըստ չափուն հաւատոց , եթէ

* ի ցաւ՝ զէ ։

պաշտօն՝ ըստ պաշտամանն, եթէ որ ուսուցանէն՝
8 ըստ վարդապետութեանն. եթէ որ մխիթարէն՝
ըստ մխիթարութեանն. որ առատն է՝ *զուարթու-
թեամբ, որ վերակացուն է՝ փութով, որ ողորմին՝
9 լրջմտութեամբ։ Սէր առանց կեղծաւորութեան,
10 ատել զչար, զկետ երթալ բարեաց. ցեղայրսի-
րութեան առ միմեանս գթածք. ի պատիւ զմի-
11 մեամբք ելանել. ի փոյթ՝ մի վհերոտք. հոգւով
12 եռացեք, Տեառն ծառայեցէք, ցուսով խնդացէք,
նեղութեան համբերեցէք, աղօթից ատեպ կացէք,
13 ի պէտս սրբոց հաղորդեցարուք, զհիւրասիրութեան
14 զկետ երթայք։ Օրհնեցէք զհալածիչս ձեր, օրհ-
15 նեցէք և մի անիծանէք։ Խնդալ ընդ խնդացողս,
16 լալ ընդ լացողս. զնոյն միմեանց խորհիջէք. մի
ամբարտաւանէք, այլ ընդ խոնարհս զիջանիցէք. մի
17 լինիք իմաստունք յանձինս ձեր. Մի ումեք չարի
չար հատուցանէք. խորհեցարուք զբարիս առաջի
18 ամենայն մարդկան։ Եթէ հնար ինչ իցէ ձեզ՝ ընդ
19 ամենայն մարդկան զխաղաղութիւն կալջիք։ Մի
զանձանց վրէժ խնդրէք, սիրելիք, այլ տուք տեղի
բարկութեան. քանզի գրեալ է, Իմ է վրէժխընդ-
20 րութիւն, և ես հատուցից՝ ասէ Տէր։ Ա՛յլ եթէ
քաղցեալ իցէ թիւնամին քո՝ հաց տուր նմա, և ե-
թէ ծարաւի՝ ջուր տուր նմա. զայս արարեալ կայ-
21 ծակունս հրոյ կուտեսցես ի գլուխ նորա։ Մի յաղ-
թիր ի չարէն, այլ յաղթեա բարեաւն չարին։

* Յ՚ԱՆ՝ պարզութեամբ,

Գլ. ԺԳ.

1 Ամենայն անձն որ ընդ իշխանութեամբ իցէ՝ ի
հնազանդութեան կայցէ. քանզի ոչ ուստեք է իշ-
խանութիւն, եթէ ոչ յԱստուծոյ. և որ են՝
2 յԱստուծոյ կարգեալ են։ Այսուհետեւ որ հա-
կառակ կայ իշխանութեանն, Աստուծոյ հրամանին
հակառակ կայ, և որք հակառակին կան, անձանց
3 դատաստանս ընդունին։ Զի իշխանքն ոչ են յեր-
կիւղ բարեաց գործոց՝ այլ չարաց. կամի՞ս չեր-
կընչել յիշխանութենէ անտի. զբարիս գործեա, և
4 ընկալցիս զդովութիւն ի նմանէ. Զի Աստուծոյ
պաշտօնեայ է քեզ ի բարիս. ապա եթէ չար գոր-
ծիցես, երկիր. զի ոչ եթէ վայրապար սաճառ է
սուսեր ընդ մէջ, Աստուծոյ սպասաւոր է վրէժ-
խնդիր ի բարկութիւն այնմ՝ որ զչարն գործիցէ։
5 Վասն որոյ հարկ է հնազանդ լինել՝ ոչ միայն վասն
6 բարկութեանն, այլ և վասն մտացն խղճի։ Վասն
այնորիկ և հարկս հարկանէք, զի Աստուծոյ սպա-
7 սաւորք են՝ ի նոյն կանխակալք։ Արդ հատուցէք
իւրաքանչիւր զպարտս. որում՝ զհարկ՝ զհարկն,
որում՝ զմաքս՝ զմաքսն, որում՝ զերկիւղ՝ զերկիւղն,
որում՝ զպատիւ՝ զպատիւն։
8 Եւ մի՛ ումեք պարտապան գտանիցէք, բայց զմի-
մեանս սիրելոյ. զի որ սիրէ զընկերն, զօրէնսն կատա-
9 րէ. Զմի՛ շնայցեաս, և մի՛ սպանանիցես, և մի՛ գողա-
նայցես, և մի՛ սուտ վկայիցես, և մի՛ ցանկանայցես.
և եթէ այլ ինչ պատուիրան է՝ յայն բան բովանդա-
10 կի, եթէ սիրեսցես զընկեր քո իբրեւ զանձն քո։ Սէր

ընկերի իւրում չար ոչ առնէ. լրումն օրինացն սէր
11 է։ Եւ զայս գիտասջիք վասն ժամանակիս, զի արդ
ժամ իսկ է մեզ ի քնոյ զարթնուլ. զի այժմ մերձ
է մեզ փրկութիւն՝ քան յորժամ հաւատացաք.
12 Գիշերն մերձեցաւ և տիւն մերձեցաւ. ի բաց
արասցուք այսուհետեւ զգործսն խաւարի, և զգես-
13 ցուք զզէնն լուսոյ։ Իբրեւ ի տուընջեան զգաս-
տացեալք շրջեսցուք, մի՛ անառակութեամբք և
արբեցութեամբք, և մի՛ խառն անկողնով և պղծ-
ծութեամբք, և մի՛ նախանձու և հակառակու-
14 թեամբ. Այլ զգեցարուք զՏէր Յիսուս Քրիստոս,
և մսոյն խնամ մի՛ տանիք ի ցանկութիւնս։

Գլ. ԺԴ

1 Այլ զտկարացեալն ի հաւատս ընկալարուք՝ մի՛
2 խզճիւ երկմտութեանց։ Ոմն հաւատայ ուտել զա-
3 մենայն, և որ հիւանդն է՝ բանջար կերիցէ։ Որ
ուտէն, զայն որ ոչն ուտէ՝ մի՛ անգոսնեսցէ, և
որ ոչն ուտէ, զայն որ ուտէն՝ մի՛ դատեսցի.
4 քանզի Աստուած զնա ընկալաւ։ Դու ո՞վ ես որ
դատիս զայլոյ ծառայ. իւրում Տեառն կայ կամ
անկանի. բայց կացցէ, զի կարող է Տէր հաստա-
5 տել զնա։ Ոմն պահէ օր *ըստ օրէ՝՝ և ոմն պահէ
զօր հանապազ. իւրաքանչիւր որ զիւր միտս հա-
6 ճեսցէ։ Որ խորհի զօրն՝ Տեառն խորհի, և որ ոչն
խորհի զօրն, Տեառն չխորհի. և որ ուտէ, Տեառն
ուտէ, և գոհանայ զԱստուծոյ. և որ ոչն ուտէ,

* Յոյնն՝ քան զօր

7 Տեառն չուտէ, և գոհանայ զԱստուծոյ։ Զի ոչ ոք
ի մեզ անձամբ կեայ, և ոչ անձամբ մեռանի։
8 Եթէ կեամք՝ Տեառն կեամք, և եթէ մեռանիմք՝
Տեառն մեռանիմք. և արդ եթէ կեամք և եթէ
9 մեռանիմք՝ Տեառն եմք։ Քանզի ի նոյն իսկ և
Քրիստոս մեռաւ և եկեաց, զի մեռելոց և կենդա-
10 նեաց առ։ Դու զի՞ դատիս զեղբայր քո, կամ ընդէ՞ր անգոսնես զեղբայր քո՝
քանզի ամենեքին կալցուք եմք առաջի աւետնին
11 Քրիստոսի։ Զի գրեալ է, կենդանի եմ ես, ասէ
Տէր, զի ինձ կրնկեսցի ամենայն ծունր, և ամենայն
12 լեզու խոստովան լիցի Աստուծոյ։ Ապա ուրեմն իւ-
րաքանչիւր ոք ի մեզ ընդ անձին համարս տացէ
13 Աստուծոյ։ Այսուհետեւ մի՛ զմիմեանս դատես-
ցուք, այլ առաւել զայս դիք ի մտի՝ չդնել *գայ-
14 թակղութիւն եղբօրն։ Զայս գիտեմ և հաստա-
տեալ եմ ի Քրիստոս Յիսուս, զի ոչինչ է պիղծ
նովաւ, բայց այնմ՝ որ համարիցի ոք ինչ պիղծ,
15 նմա է պիղծ։ Զի եթէ վասն կերակրոյ եղբայրն քո
տրտմի, ոչ եւս սիրով գնացեր. մի՛ կերակրովն
քով զնա կորուսաներ, վասն որոյ Քրիստոսն մե-
16 ռաւ։ Մի՛ հայհոյեսցի բարին ձեր։ (17) Զի ոչ է
արքայութիւնն Աստուծոյ կերակուր և ըմպելի, այլ
արդարութիւն և խաղաղութիւն, և խնդութիւն ի
18 Հոգին Սուրբ։ Զի որ յայսմ ծառայէ Քրիստոսի,
19 հաճոյ է Աստուծոյ, և ընտիր՝ մարդկան։ Ապա այ-
սուհետեւ զնետ երթիցուք զխաղաղութեան և զի-
20 նութեան որ առ միմեանս։ Մի՛ վասն կերակրոյ

* Յոյնն՝ խոչ կամ գայթակղութիւն

քակեր զգործ Աստուծոյ. ամենայն ինչ սուրբ է,
21 այլ չար այնմ մարդոյ է՝ որ *խղճիւն ուտիցէ։ Լաւ
է ոչ ուտել միս և ոչ ըմպել գինի, և ոչ որով
եղբայրն քո գայթակղի կամ գիճէ կամ տկարա-
22 նայ։ Դու ապաւքէն հաւատս ունիս, կալ առանձ-
ինն առաջի Աստուծոյ. երանի որ †ոչ դատիցի
23 զանձն, որով զընկերն փորձիցէ։'' Բայց որ խըղճ-
ճէն, թէպէտ և ուտիցէ՝ դատապարտեալ է, զի
24 ոչ ըստ հաւատոց է, զի ամենայն ինչ որ ոչ ի
հաւատոց է՝ մեղք են։ ‡Այլ այնմ, որ կարող
է հաստատել զձեզ ըստ աւետարանիս խմամ և
ըստ քարոզութեանն Յիսուսի Քրիստոսի, ըստ
յայտնութեան խորհրդոյն՝ ժամանակօքն լաւ-
25 տեւնից լռեցելոյ, եւ յայտնելոյ այժմիկ ի ձեռն
գրոց մարգարէականաց՝ ըստ հրամանի մշտնջենա-
ւորին Աստուծոյ ի հնազանդութիւն հաւատոց,
26 յամենայն հեթանոս ծանուցելոյ՝ Միայնոյ խմաս-
տնոյն Աստուծոյ, ի ձեռն Յիսուսի Քրիստոսի,
որում փառք յաւիտեանս։ Ամէն։''

Գլ. ԺԵ

1 Պարտ է մեզ որ կարողս եմք՝ զտկարութիւն տը-
կարացն բառնալ, և մի՛ անձանց և ևթ հաճոյ լի-

* Յոյն՝ ի գայթակղութիւն

† Յոյն՝ ոչ դատի զանձն յայնմ զոր փորձէ։

‡ Ի պատմ օրինակի Յունաց գտանիմք և երկ ընդերձամ
պատ վերջին երես գտանս, այսինքն յամ ասա՝ և յամ ի վեր-
ճանի բղխոյս. երկու օրինակի յերկուսին գերէս ևս գտնեն
զսա Հայ թարգմանութեանս։

2 նել, Այլ իւրաքանչիւր ոք ի մէնջ ընկերին հա-
3 ճոյ լիցի ի բարիս վասն շինութեան։ Քանզի և
Քրիստոս ոչ եթէ անձին հաճոյ եղեւ, այլ որպէս
և գրեալ է, Նախատինք նախատելոց քոց անկան
4 ի վերայ իմ։ Բայց որ ինչ գրեցաւն՝ ի մեր վար-
դապետութիւն գրեցաւ, զի համբերութեամբ և
5 մխիթարութեամբ գրոց զյոյսն ընկալցուք։ Այլ
Աստուած համբերութեան և *ամենայն մխիթա-
րութեան՝ տացէ ձեզ զնոյն խորհել ընդ միմեանս
6 ըստ Յիսուսի Քրիստոսի։ Զի միաբանութեամբ ի
մի բերան փառաւորս առնիցէք զԱստուած և զՀայր
7 Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Վասն որոյ ըն-
կալարուք զմիմեանս, որպէս և Քրիստոս ընկալաւ
8 զձեզ ի փառս Աստուծոյ։ Ասեմ թէ †Քրիստոսի
սպասաւոր թլփատութեանն լինել վասն ճշմարտա-
թեանն Աստուծոյ էր, առ ի հաստատուն առնել
9 լոյ զաւետիս հարցն։ Այլ հեթանոսք վասն ողոր-
մութեան փառաւորս առնեն զԱստուած. որպէս և
գրեալ է, վասն այսորիկ գոհացայց զքէն ի հե-
10 թանոսս, և անուանն քումմ առաջիս ասացից։ Եւ
դարձեալ ասէ, Ուրախ լերուք, հեթանոսք, ընդ
11 ժողովրդեան նորա։ Եւ դարձեալ թէ Օրհնեցէք,
ամենայն հեթանոսք, զՏէր, և գովեցէք զնա, ա-
12 մենայն ժողովուրդք։ Եւ դարձեալ Եսայի ասէ,
Եղիցի արմատն Յեսսեայ, և որ կանգնելոցն է իշ-
խան հեթանոսաց, ի նա հեթանոսք յուսասցին։
13 Այլ Աստուած յուսոյ լի արասցէ զձեզ ամենայն

* ի Յոյնն չէ։

† Յոյն՝ Յիսուս Քրիստոսի

խնդութեամբ և խաղաղութեամբ, առաւելուլ ձեզ
յուսով զօրութեամբ Հոգւոյն Սրբոյ ։
11 Հաստատեալ եմ և ես ինքնին, եղբարք իմ,
վասն ձեր, զի և դուք լի էք բարութեամբ, լի էք
ամենայն գիտութեամբ, կարող էք և զմիմեանս
13 խրատել։ Ա՛յլ համարձակագոյնս գրեցի առ ձեզ,
եղբարք իմ, փոքր ի շատէ, իբրեւ յիշեցուցանել
ձեզ վասն շնորհացն՝ որ տուեալ են ինձ Աս-
16 տուծոյ · Լինել ինձ սպասաւոր Յիսուսի Քրիստոսի
ի հեթանոսս, *ըղձակերպս առնել՝ պատարանն
Աստուծոյ, զի եղիցի պատարագն հեթանոսաց ըն-
17 դունելի՝ սրբեալ Հոգւովն Սրբով։ Ունիմ այսու-
հետեւ պարծանս ի Քրիստոս Յիսուս առ Աս-
18 տուած ։ Քանզի ոչ իշխեմ խօսել ինչ՝ զոր ոչ գոր-
ծեաց Քրիստոս ինեւ ի հնազանդութիւն հեթա-
19 նոսաց՝ բանիւք և արդեամբք , Զօրութեամբ նշա-
նաց և սքանչելեաց, զօրութեամբ Հոգւոյն Սրբոյ ,
որպէս ինձ յերուսաղէմէ և շուրջ մինչեւ ի կող-
մանս Լիւրիկացւոց լնուլ զաւետարանն Քրիստոսի ։
20 Ա՛յնպէս առատացեալ յաւետարանել, ոչ ուր
անուանեցաւ Քրիստոս, զի մի՛ իբրեւ յայլոյ հի-
21 ման վերայ շինիցեմ, այլ որպէս և գրեալ է թէ
Որոց ոչ պատմեցաւ վասն նորա՝ տեսցեն, և որոց
22 ոչ էջեւ լուեալ՝ ի միտ առցեն։ Վասն որոյ շատ
23 խափանեցայ գալ առ ձեզ։ Բայց արդ ոչ եւս գոյ
ինձ տեղի ի կողմանս յայսոսիկ, և անձուկ յոյժ
24 ունիմ ի բազում ամաց գալ առ ձեզ։ Յորժամ
անցանիցեմ ի Սպանիա, ակն ունիմ յանցանելն

* Յոյնն՝ մատակարարել

առ նոսա՝ տեսանել զձեզ, և ի ձէնջ յուղարկիլ
անդր, եթէ նախ իսկ փոքր ի շատէ ձեզ լցայց ։
25 Բայց այժմ երթամ յերուսաղէմ պաշտել զՊ
26 սուրբսն ։ Քանզի հաճեալ Թուեցաւ Մակեդոնացւոցն
և Աքայեցւոցն հաղորդութիւն ինչ առնել ընդ
27 աղքատս սրբոցն՝ որ ենն յերուսաղէմ։ Հաճեալ
Թուեցաւ, քանզի և պարտապան իսկ էին նոցա ։
զի եթէ հոգեւորացն նոցա հաղորդ եղեն հեթա-
նոսք, պարտին և մարմնաւորացն կցորդ լինել նոցա ։
28 Արդ զայս կատարեալ և կնքեալ զպտուղ նոցա,
29 անցից առ ձեզ ի Սպանիա ։ Գայց գիտեմ զի
ի գալն առ ձեզ, լրութեամբ օրհնութեան աւե-
տարանին Քրիստոսի եկից ։
30 Աղաչեմ զձեզ, եղբարք, ի ձեռն Տեառն մերոյ
Յիսուսի Քրիստոսի և սիրոյ Հոգւոյն, պատերազ-
մակից լինել ինձ յաղօթս վասն իմ առ Աստուած ։
31 Զի ապրեցայց *յապստամբացն որ ի Հրէաստանի
ենն ։ և պաշտօնն իմ որ յերուսաղէմ՝ ընդունելի լիցի
32 սրբոցն ։ Զի խնդութեամբ եկեալ առ ձեզ ի կամս
33 Աստուծոյ, հանգեայց ընդ ձեզ։ Եւ Աստուած
խաղաղութեան եղիցի ընդ ձեզ ամենեսեան ։ Ամէն ։

Գլ· ԺԶ

1 Յանձն առնեմ ձեզ զՓիբէ զքոյր մեր, որ է սպա-
2 սաւոր եկեղեցւոյն Կենքրեացւոց · Զի զնա ընկալջիք
ի Տէր՝ արժանի սրբոց, և վերակացու լինիջիք նմա՝
յոր պէտս իրաց և կոչեսցէ զձեզ · քանզի և նա
վերակացու եղեւ բազմաց, և ինձ իսկ գլխովին ։

* Յոյնն՝ յանհաւատիցն

3 Ողջոյն տալիք Պրիսկեայ և Ակիւղայ՝ գործակցաց
4 իմոց ի Քրիստոս Յիսուս. Որք ընդ անձին իմոյ զլե-
բեանց պարանոցս մատուցին. զորոց ոչ ես միայն
գոհանամ, այլ և ամենայն եկեղեցիք հեթանոսաց.
5 Եւ առանձին եկեղեցւոյն նոցա։ Ողջոյն տալիք Ե-
պենետայ սիրելւոյ իմոյ՝ որ է պտուղ Ասիացւոց ի
6 Քրիստոս։ Ողջոյն տալիք Մարեայ՝ որ բազում
7 վաստակ վաստակեաց ի ձեզ։ Ողջոյն տալիք Ան-
դրոնիկեայ և Յունեայ ազգականաց իմոց և գերեկ-
ցաց, որք երեւելիքն իսկ են յառաքեալս, որք և
8 յառաջ իսկ քան զիս եղեն ի Քրիստոս։ Ողջոյն
9 տալիք Ամպղեայ սիրելւոյ իմոյ ի Տէր, Ողջոյն տա-
լիք Ուրբանեայ գործակցի իմոյ ի Տէր, և Ստաքեայ
10 սիրելւոյ իմոյ։ Ողջոյն տալիք Ապելեայ՝ որ ընտիրն
11 է ի Տէր։ Ողջոյն տալիք նոցա, որ յԱրիստաբու-
ղեայ ազգականի են. ողջոյն տալիք Հերովդիովն
նայ ազգականի իմոյ, ողջոյն տալիք այնոցիկ՝ որք
12 ի Տարկիսեայ տանէն իցեն ի Տէր։ Ողջոյն տալիք
Տրիփոնեայ և Տրիփոսեայ վաստակաւորաց ի Տէր.
ողջոյն տալիք Պերսիդեայ սիրելւոյ, որ բազում
13 վաստակ վաստակեաց ի Տէր։ Ողջոյն տալիք Ռու-
14 փեայ ընտրելւոյ ի Տէր, և մօր նորա և իմոյ։ Ող-
ջոյն տալիք Ասինկրիտեայ, Փլեգոնտեայ, Երմեայ,
Պատրոբայ, Երմոյ, և որ ընդ նոսա եղբարք իցեն։
15 Ողջոյն տալիք Փիղղողոգեայ, Յուղեայ, Նեբեայ և
քեռ նորա, և Ոլիմպեայ, և որ ընդ նոսա սուրբք
16 ամենեքեան իցեն։ Ողջոյն տալիք միմեանց ի համ
բոյր սրբութեան. ողջոյն տան ձեզ ամենայն եկե-
ղեցիք Քրիստոսի։

17 Աղաչեմ զձեզ, եղբարք, դիտել զայնպիսիսն,
որ հերձուածս և գայթակղութիւնս առնիցեն աք-

տառոյ վարդապետութեանն՝ զոր դուք ուսայք. և
18 խորշեցարուք ի նոցանէ. Զի այնպիսիքն Տեառն մե-
ծում Քրիստոսի ոչ ծառայեն, այլ իւրեանց որո-
վայնին. և քաղցրաբանութեամբ և օրհնութեամբ
19 պատրեն զսիրտս անմեղաց։ Զի ձեր հնազանդու-
թիւնն առ ամենեսեան հասեալ է. և արդ ի ձեզ
ուրախ եմ. բայց կամիմ զձեզ իմաստունս լինել
20 ի բարիս՝ և անմեղս ի չարիս։ Եւ Աստուած խա-
ղաղութեան խորտակեսցէ զՍատանայ ընդ ոտիւք
ձերովք մերձ ընդ մերձ. շնորհք Տեառն մերոյ Յի-
սուսի Քրիստոսի ընդ ձեզ։

21 Ողջոյն տայ ձեզ Տիմոթէոս եղբայր և գործակից
իմ և Ղուկիոս և Յասոնէ և Սոսիպատրոս՝ ազգա-
22 կանք իմ։ Ողջոյն տամ ձեզ և ես Տերտիոս որ գրե-
23 թուղթս գրեցի ի Տէր։ Ողջոյն տայ ձեզ Գայիոս
ասպնջական իմ և ամենայն եկեղեցւոյն։ Ողջոյն
տայ ձեզ Երաստոս շահապետ քաղաքիս և Կուարտոս
24 եղբայր։ Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի
ընդ ձեզ ընդ ամենեսին։ Ամէն։

25 Ա՛յժմ այնմ, որ կարող է հաստատել զձեզ ըստ
աւետարանիս իմում, և ըստ քարոզութեան Յի-
սուսի Քրիստոսի, ըստ յայտնութեան խորհրդոյս
26 այսորիկ՝ ժամանակօք յաւիտենից լռեցելոյ, Եւ
յայտնելոյ այժմիկ ի ձեռն գրոց մարգարէականաց
ըստ հրամանի մշտնջենաւորին Աստուծոյ, ի հնա-
զանդութիւն հաւատոց, յամենայն հեթանոսս ծա-
27 նուցեալ, Միայնոյ իմաստնոյն Աստուծոյ ի ձեռն
Յիսուսի Քրիստոսի, նմա պատիւ և փառք յաւի-
տեանս յաւիտենից։ Ամէն։

Ա՛ Հռովմայեցւոց գրեցաւ ի Կորնթոս ի չեռն Փիբեայ
սարկաւագի։

ԹՈՒՂԹ

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԱՌ ԿՈՐՆԹԱՑԻՍ ԱՌԱՋԻՆ

Գ.Լ. Ա.

1 ՊՕՂՈՍ կոչեցեալ առաքեալ Յիսուսի Քրիստոսի
2 կամքն Աստուծոյ, և Սոսթենէս եղբայր. Եկեղե-
ցւոյդ Աստուծոյ որ է ի Կորնթոս՝ նուիրելոց ի
Քրիստոս Յիսուս, կոչեցելոց սրբոց՝ ամենեքեան-
միաք
Հանդերձ որք կարդան զանուն Տեառն մերոյ Յի-
սուսի Քրիստոսի յամենայն տեղիս՝ նոցա և մեր.
3 Շնորհք ընդ ձեզ և խաղաղութիւն յԱստուծոյ
Հօրէ մերմէ և ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ.
4 Գոհանամ զԱստուծոյ իմոյ յամենայն ժամ վասն
ձեր ի վերայ շնորհացն Աստուծոյ՝ որ տուեալ են
5 ձեզ ի Քրիստոս Յիսուս. Զի յամենայնի մեծա-
ցարուք դուք նովաւ ամենայն բանիւ և ամենայն
6 գիտութեամբ. Որպէս վկայութիւնն իսկ Աստու-
7 ծոյ հաստատեցաւ ի ձեզ. Զի դուք մի նուազիցիք
և մի իւիք շնորհօք, ակնկալեալ յայտնութեան
8 Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. Որ և հաստա-
տեսցէ զձեզ մինչեւ ի կատարած անարատս յօրն
9 Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, Հաւատարիմ է
Աստուած, որով կոչեցարուք ի հաղորդութիւն
Որդւոյ նորա Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ։

10 Աղաչեմ զձեզ, եղբարք, անուամբն Տեառն մե-
րոյ Յիսուսի Քրիստոսի. զի զնոյն բան ունիցիք ա-
մենեքեան, և մի իցեն ի ձեզ հերձուածք. *քան-
զի էիք" հաստատեալք ի նոյն միտս և ի նոյն հան-
11 ճար։ Այդ եղեւ ինձ վասն ձեր, եղբարք, ի գրուա-
ցւոց անտի, թէ հակառակութիւնք են ի ձեզ։
12 Եւ արդ ասեմ իսկ, եթէ իւրաքանչիւր ոք ի ձէնջ
ասէ, Ես Պօղոսեան եմ, և միւսն՝ եթէ Ես Ապո-
ղոսեան և †միւսն՝ եթէ Ես Կեփայեան. և †միւսն՝
13 եթէ Ես Քրիստոսեան։ Իսկ արդ բաժանեա՞լ է
իցե Քրիստոս. միթէ Պօղո՞ս ի խաչ ելեալ իցէ
վասն ձեր, կամ յանուն Պօղոսի՞ մկրտեցարուք։
14 Գոհանամ զԱստուծոյ †իմոյ՝ զի ոչ ոք ի ձէնջ
մկրտեցի՝ բայց միայն զԿրիսպոս և զԳայիոս, զի
15 մի ոք ասիցէ, թէ յիմ անուն մկրտեցարուք։
16 Տալ եւս կնիք և տունն Ստեփանեայ. և զայլ ոք
17 ոչ գիտեմ ամենեւին թէ մկրտեցի։ Զի ոչ առա-
քեաց զիս Քրիստոս մկրտել, այլ աւետարանել.
ոչ ճարտարութեամբ բանից, զի մի ընդունայն լի-
18 ցի խաչն Քրիստոսի։ Զի ճառ խաչին կորուսելոցն
յիմարութիւն է, այլ փրկելոցս մեզ զօրութիւն
19 Աստուծոյ։ Զի գրեալ է, կորուսից զիմաստութիւն
իմաստնոց, և զխորհուրդս խորհրդականաց արհա-
20 մարհեցից։ Ո՞ւր իմաստուն, ո՞ւր գպիր, ո՞ւր քըն-
նիչ աշխարհիս այսորիկ. ո՞չ ապաքէն յիմարեցոյց
Աստուած զիմաստութիւն աշխարհիս այսորիկ։
21 Քանզի իմաստութեամբն Աստուծոյ՝ ոչ ծանեաւ
աշխարհ իմաստութեամբն զԱստուած, հաճեցաւ

*. Յոյնն՝ այլ զի իցէք † Ի Յոյնն՝ Ես։

Աստուած յիմարութեամբ քարոզութեանն ապրե-
22 ցուցանել զնաւատացեալս, իսկ որովհետեւ Հրեայք
նշան հայցեն, և Հեթանոսք զիմաստութիւն խըն-
23 դրեն. Մեք քարոզեացուք զխաչելեալն Քրիստոս,
Հրէից գայթակղութիւն և հեթանոսաց յիմարու-
24 թիւն. Բայց նոցին իսկ կոչեցելոցն Հրէից և հե-
թանոսաց, զՔրիստոս՝ Աստուծոյ զօրութիւն և Աս-
25 տուծոյ իմաստութիւն. Զի յիմարն Աստուծոյ ի-
26 մաստնագոյն է քան զմարդիկ, և տկարն Աստու-
ծոյ զօրագոյն է քան զմարդիկ: Թեպէտ և զձեր
իսկ կոչումդ տեսէք, եղբարք, զի ոչ բազում ի-
մաստունք ըստ մարմնոյ, և ոչ բազում հզօրք, և
27 ոչ բազում ազնուականք. Այլ զյիմարս աշխար-
հիս ընտրեաց Աստուած, զի յամօթ արասցէ զի-
մաստունս. և զտկարս աշխարհիս ընտրեաց Աս-
28 տուած, զի յամօթ արասցէ զհզօրս. Եւ զանտոմն
աշխարհի և զարհամարհեալս ընտրեաց Աստուած
29 և զոչինսն, զի զեան իմն խափանեսցէ. Որպէս զի
մի պարծեսցի ամենայն մարմին առաջի Աստուծոյ:
30 Զի ի նմանէ դուք էք ի Քրիստոս Յիսուս, որ ե-
ղեւ մեզ իմաստութիւն յԱստուծոյ, արդարու-
31 թիւն և սրբութիւն և փրկութիւն. Զի որպէս և
գրեալ է, Որ պարծի՝ ի Տէր պարծեսցի:

ԳԼ· Բ

1 Եւ ես Թէպէտ և եկի առ ձեզ, եղբարք, ոչ ըստ
առաւելութեան ինչ բանից *իմաստութեան պատ-

* Յոյն՝ կամ իմաստութեան

2 մել ձեզ զվկայութիւնն Աստուծոյ: Զի ոչ եթէ
ի մտի եդի գիտել ինչ ի ձեզ, բայց միայն զՅի-
3 սուս Քրիստոս՝ և զնոյն ի խաչ ելելոյ: Եւ ես տկա-
րութեամբ և երկիւղիւ և դողութեամբ բազմաս
4 եղէ առ ձեզ. Եւ բանն իմ և քարոզութիւն ոչ
պատիր բանիւք իմաստութեան՝ այլ ապացոյցիւք
5 Հոգւոյն և զօրութեամբ. Զի հաւատք ձեր մի՛ իցեն
իմաստութեամբ մարդկան, այլ զօրութեամբ Աս-
6 տուծոյ: Զիմաստութիւն խօսիմք ընդ կատարեալս,
զիմաստութիւն՝ ոչ զաշխարհիս այսորիկ և ոչ զիշ-
7 խանացն աշխարհիս այսորիկ զոփանելեացս. Այլ
խօսիմք զԱստուծոյ իմաստութիւնն ծածուկ խոր-
հրդով, զոր յառաջ քան զյաւիտեանս սահմա-
8 նեաց Աստուած՝ ի փառս մեր. Զոր ոչ ոք յիշխա-
նաց աշխարհիս այսորիկ ծանեաւ. զի եթէ էր ծա-
նուցեալ՝ ոչ արդեօք զՏէրն փառաց՝ ի խաչ հա-
9 նէին: Այլ որպէս և գրեալ է, Զոր ակն ոչ տեսե
և ունկն ոչ լուաւ և ի սիրտ մարդոյ ոչ անկաւ,
10 պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց: Այլ
մեզ յայտնեաց Աստուած Հոգւովն իւրով. զի Հո-
11 գին զամենայն քննէ և զխորս Աստուծոյ: Զի ո՞ ոք
ի մարդկանէ գիտէ ինչ զմարդոյն, եթէ ոչ՝ Հոգի
մարդոյն որ ի նմա. Նոյնպէս և ոչ զԱստուծոյն
12 ոք գիտէ՝ եթէ ոչ՝ Հոգին Աստուծոյ: Այլ մեք ոչ
եթէ զՀոգի աշխարհիս առաք, այլ զՀոգին որ յԱս-
տուծոյ. զի ծանիցուք զայն որ յԱստուծոյն ընդո-
13 հեցաւ մեզ: Եւ զոր խօսիմք՝ ոչ եթէ մարդկե-
ղէն ուսմամբ ճարտարութեամբ բանից, այլ վար-
դապետութեամբ Հոգւոյն, ընդ հոգեւորս զՀոգե-
14 ւորսն համեմատեմք: Բայց մարդ ոչ ըն-

դուռնի զՀոգեւոյն Աստուծոյ , զի յիմարութիւն է նմա . և ոչ կարէ գիտել՝ *եթէ Հոգեպէս քննիցի ։
15 Իսկ Հոգեւորն քննէ զամենայն , և ինքն յոչմէկէ
16 ոչ քննի ։ Իսկ արդ ո՞վ գիտաց զմիտս Տեառն, որ և խրատուէ զինիցի նմա . այլ մեք զմիտս Քրիստոսի ունիմք ։

Գ Ի · Գ

1 Եւ ես , եղբարք , ոչ կարացի խօսել ընդ ձեզ իբրեւ ընդ Հոգեւորս, այլ իբրեւ ընդ մարմնաւորս,
2 իբրեւ տղայոց ի Քրիստոս կաթն ջամբեցի ձեզ և ոչ կերակուր , զի ոչ եւս կարէիք . նաեւ արդ իսկ
3 ոչ կարէք , քանզի դեռ մարմնաւոր էք ։ Ուր և արդ են իսկ ի ձեզ հեռս և †նախանձ , ո՞չ ապաքէն
4 մարմնաւոր էք և ըստ մարդկան գնայք ։ Զորժամ ասէ ոք ‡ի ձէնջ՝ Ես Պօղոսեան եմ , և միւսն թէ Ես Ապողոսեան , ո՞չ մարդիկ էք . իսկ արդ ո՞վ է
5 Պօղոս կամ ո՞վ է Ապողոս . Պաշտօնեայք՝ որովք հաւատացէքն , և իւրաքանչիւր որպէս և Տէր ետ ։
6 Ես տնկեցի , Ապողոս ջուր ետ , այլ Աստուած աճեցոյց ։
7 Այսուհետեւ ոչ այն ոք ինչ է՝ որ տընկացն , և ոչ այն՝ որ զջուրն ետ , այլ որ աճեցոյցն
8 Աստուած ։ Ուր տնկացն և որ զջուրն ետ՝ մի են . բայց իւրաքանչիւր ոք զիւր վարձս առնուցու ըստ
9 իւրում վաստակոց ։ Զի Աստուծոյ գործակից եմք ,

* Յայլն՝ քանզի Հոգեպէս քննի ։
† Յայլն՝ Նախանձ և հերձուածք ,
‡ Ի Յ—ին չէ ։

10 Աստուածոյ *արդիւնք էք , Աստուածոյ շինած էք ։ Ըստ շնորհացն Աստուծոյ որ տուեալ են ինձ , իբրեւ իմաստուն ճարտարապետ հիմն եդի , բայց այլ է որ շինէն . այլ իւրաքանչիւր ոք զգայշ լիցի թէ որպէս
11 շինիցէ ։ Զի հիմն այլ ոք ոչ կարէ դնել քան զեդեալն , որ է Յիսուս Քրիստոս ։
12 Եթէ ոք շինէ ի վերայ հիմանս այսորիկ ոսկի , արծաթ , ականս պատուականս , փայտ , խոտ , ե-
13 ղէգն , իւրաքանչիւր գործն յայտնելոց է . զի օրն
14 ընտրեսցէ զի Հրովն յայտնելոց է . Եւ զիւրաքանչիւր
15 գործն զիարդ և իցէ՝ Հուրն փորձեսցէ ։ Եթէ ումեք գործն զոր շինեաց՝ կացցէ , վարձս առցէ . և եթէ ումեք գործն այրեսցի՝ տուժեսցի, բայց ինքն
16 կեցցէ , այլ այնպէս՝ որպէս թէ †ի Հուր , Ոչ գիտէք եթէ տաճար էք Աստուծոյ , և Հոգի Աստու-
17 ծոյ բնակեալ է ի ձեզ , եթէ ոք զտաճար Աստուծոյ ապականէ , ապականեսցէ զնա Աստուած . զի
18 տաճար Աստուծոյ սուրբ է , որ էք դուք ։ Մի ոք զանձն խաբեսցէ , եթէ ոք կամիցի ի ձէնջ իմաստուն լինել յաշխարհիս յայսմիկ , յիմար լիցի՝ զի
19 եղիցի իմաստուն ։ Զի իմաստութիւն աշխարհիս այսորիկ յիմարութիւն է առաջի Աստուծոյ , քանզի գրեալ է թէ՝ Որ ըմբռնէ զիմաստունս ի խորագի-
20 տութեան իւրեանց ։ Եւ դարձեալ թէ Տէր ճանա-
21 չէ զխորհուրդս իմաստնոց՝ զի են ընդունայն ։ Այ-
22 սուհետեւ մի ոք պարծեսցի ի մարդկանէ . Զի ամենայն ինչ ձեր է , եթէ Պօղոս , եթէ Ապողոս , եթէ կեփաս , եթէ աշխարհ , եթէ կեանք , եթէ

* Յայլն՝ մշակութիւն † Յայլն՝ ընդ Հուր

մահ, եթէ որ կանս, եթէ հանդերձեալքն՝ ամե-
23 նայն ինչ ձեր է. Դուք Քրիստոսի, Քրիստոս՝ Ա-
ստուծոյ։

ԳԼ. Դ

1 Այսպէս համարեսցին զմեզ մարդիկ, իբրեւ ըղ-
պաշտօնեայս Քրիստոսի և հազարապետս խորհըր-
2 դոյն Աստուծոյ։ Արդ խնդիր է՝ ի մէջ հազարա-
3 պետաց եթէ որ հաւատարիմ գտցի։ Ա՛ւլ ինձ և
այս *անարգանք են,՛՛ եթէ՝ ի ձէնջ դատեցայց
կամ բնաւ իսկ՝ ի մարդկանէ, նաեւ զանձն իմ ոչ
4 քննեմ։ Զի ոչինչ գիտեմ զանձին իմմէ. այլ ոչ
եթէ այսու արդարանամ, զի որ քննէն զիս՝ Տէր
5 է։ Այսուհետեւ մի յառաջ քան զժամանակն
դատիք, մինչեւ եկեսցէ Տէր, որ լուսաւոր առնիցէ զդաղտնիս խաւարի, և յայտնիցէ զխորհուրդս
սրտից. և ապա իւրաքանչիւր գովեստիւն եղիցի
6 յԱստուծոյ, Զայս, եղբարք, առակեցի յանձն իմ
և յԱպողոս վասն ձեր. զի՝ ի մէնջ ուսջիք՝ մի ինչ
առաւել քան զգրեալն իմանալ, զի մի այր քան
7 զընկեր հպարտանայցէք՝ ի վերայ ընկերին։ Իսկ
արդ ո՞վ է՝ որ քննիցէ զքեզ. զի՞նչ ունիս՝ զոր ոչ
իցէ առեալ. և եթէ առեր՝ զի՞ պարծիս իբրեւ
ոչառեալ։
8 Արդէն իսկ յագեալ իցէք և արդէն մեծացա-
բուք, առանց մեր թագաւորեցէք, և երանի թէ
թագաւորէիք, զի և մեք ընդ ձեզ թագաւորեաք։

* Յոյնն՝ դայլն ինչ է,

9 Ինձ այսպէս թուի եթէ զմեզ զառաքեալսն յետ-
նորդս արար Աստուած իբրեւ զմահապարտս. զի
տեսիլ եղեաք աշխարհի և հրեշտակաց և մարդ-
10 կան։ Մեք յիմարք վասն Քրիստոսի, և դուք ի-
մաստունք՝ ի Քրիստոս. մեք տկարք՝ և դուք հզօրք.
11 դուք փառաւորեալք՝ և մեք անարգք։ Մինչեւ-
ցայսօր ժամանակի և քաղցեաք և ծարաւեցաք և
մերկ գնացաք և կռփահարեցաք և անհանգիստ
12 եղեաք, Եւ աշխատեցաք ձեռօք մերովք. բամբա-
սեին զմեզ՝ օրհնէաք. հալածէին՝ յանձն առնուաք.
13 Հայհոյեին՝ աղաչեաք. իբրեւ առակ նշաւակի ե-
ղեաք ամենայն աշխարհի, ամենեցուն փարելի լի-
14 նել մինչեւ ցայժմ։ Ոչ եթէ յամօթ ինչ առնե-
լով զձեզ գրեմ զայս, այլ իբրեւ զորդիս սիրելիս
15 խրատեմ։ Թէպէտ և բիւր դաստիարակս ունիցիք
՝ի Քրիստոս, այլ ոչ եթէ բազում հարս, զի ՝ի
Քրիստոս Յիսուս աւետարանաւն ես ծնայ զձեզ։
16 Արդ աղաչեմ զձեզ՝ նմանողք ինձ եղիջիք, *որպէս և
17 ես Քրիստոսի։՛՛ Վասն այնորիկ առաքեցի առ ձեզ
զՏիմոթէոս, որ է իմ որդի սիրելի՝ և հաւատարիմ
՝ի Տէր. որ յիշեցուսցէ ձեզ զճանապարհս իմ, որ ՝ի
Քրիստոս Յիսուս. որպէս և ամենայն ուրեք յամենայն
18 եկեղեցիս ուսուցանեմ։ Որպէս թէ ես չիցեմ գալոց
19 առ ձեզ՝ ոմանք հպարտացան։ Ա՛ւլ եկից հուսկ
ընդ հուսկ՝ եթէ Տէր կամեսցի. և ՝ի միտ առից ոչ
20 զբանս հպարտացելոցն, այլ զզօրութիւն։ Զի ոչ
եթէ բանիւք է արքայութիւնն Աստուծոյ, այլ
21 զօրութեամբ։ Արդ ո՞րպէս կամիք, գաւազանա՞ւ

* Ի յոյնն ՝ի։

եկից առ ձեզ, եթէ *սիրով հոգւոյն հեզութեան
և արդարութեան և խոնարհութեան։''

Գլ. Ե

1 Բնաւ և անուանի իսկ 'ի ձեզ ընդէ՞ր պոռնկու-
թիւն, և այնպիսի պոռնկութիւն՝ որ ոչ և 'ի հե-
2 թանոսս, որպէս թէ զկին հօր իւրոյ ունել։ Եւ դուք
հպարտացեալ էք, և ոչ առաւել †ղգացարուք, զի
բարձցի 'ի միջոյ ձերմէ որ զգործն զայն գործեաց։
3 Զի ես թէպէտ մարմնով մեկուսի եմ, սակայն հո-
գւով մերձ եմ. լայց արդէն իսկ իբրեւ 'ի մէսոյ
4 ընտրեցի. զայն որ այնպէսն գործեաց, Յանուն Տեա-
ռըն մերոյ Յիսուսի Քրիստոսի ժողովել ձեզ 'ի միա-
սին և իմոյ հոգւոյս՝ զօրութեամբն Տանդերձ Տեա-
5 ռըն մերոյ Յիսուսի Քրիստոսի, Մատնել զայնպիսին
Սատանայի 'ի սատակումն մարմնոյ, զի ոգին ապ-
րեսցի յաւուրն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։
6 Ոչ բարւոք են պարծանքդ ձեր. ո՞չ գիտէք եթէ
7 փոքր մի խմոր զամենայն զանգուածն խմորէ։ Սըր-
բեցէք 'ի բաց զհին խմորն, զի եղիջիք նոր զան-
գուած, որպէս էքդ անխմորք. քանզի զատիկ մեր
8 զԵնաւ Քրիստոս։ Ա՛յսուհետեւ արասցուք տօնս՝
մի՛ 'ի խմորն հին և մի 'ի խմորն չարութեան և ա-
նըզգամտութեան, այլ յանխմորս ‡սուգութեան և
9 ճշմարտութեան։ Գրեցի ձեզ 'ի թղթի այդր չխառ-
10 նակել ընդ պոռնիկս։ Եւ ոչ եթէ ընդ պոռնիկս

* Յայնմ՝ եթէ սիրով և հոգւով հեզութեան։
† Յայնմ՝ սգացարուք ‡ Յայնմ՝ անկեղծութեան

աշխարհիս այսորիկ կամ ընդ ագահս կամ ընդ յա-
փրշտակողս կամ ընդ կռապաշտիւս. ապա թէ ոչ՝
11 պարտ եիք և յաշխարհէ իսկ ելանել։ Բայց արդ
գրեցի ձեզ չխառնակել, եթէ ոք եղբայր անուա-
նեալ կամ պոռնիկ իցէ՝ կամ կռապաշտիւ՝ կամ
ագահ՝ կամ բամբասող՝ կամ արբեցող՝ կամ յա-
12 փշտակող, ընդ այնպիսւոյն և հաց մի ուտել։ Զի՞
կայ իմ և զարտաքինսն դատելոյ. ո՞չ ապաքէն
13 դուք զներքինսդ դատիցիք. Եւ զարտաքինսն Աս-
տուածդ դատեսցի. բարձէք զչարն 'ի միջոյ ձերմէ։

Գլ. Զ

1 Իչխէ՞ ոք 'ի ձէնջ՝ եթէ իրք ինչ իցեն ընդ ընկեր-
ի իւրում, դատել առաջի անիրաւաց՝ և ոչ առա-
2 ջի սրբոց։ Եթէ ո՞չ գիտէք զի սուրբք զաշխարհ
դատին և եթէ ձեզ դատ աշխարհ, ապա ոչ
3 էք արժանի անարդ առենից։ Ո՞չ գիտէք եթէ զոր-
4 հեչտակս դատիմք, թող թէ զերկրաւորս։ Զեր-
կրաւոր առենս եթէ յանձն առնուցուք, զա-
5 նարգսն եկեղեցւոյ դատաւորս նատուցէք։ Առ ա-
մօթ ձերոյ ասեմ. այնչափ ո՞չ գոյ ոք իմաստուն
'ի ձեզ, որ կարիցէ իրաւունս ընտրել 'ի մէջ եղբօր
6 իւրոյ։ Այլ եղբայր ընդ եղբօր դատի, և զայն՝
7 'ի մէջ անհաւատից։ Եւ արդ ամենեւին իսկ վատ-
թարութիւն է 'ի ձեզ, զի դատաստանք իսկ գոն
'ի միջի ձերում. ընդէ՞ր ոչ դուք զրկիք, և ոչ դուք
8 առաւել նեղիք։ Այլ դուք զրկէք և նեղէք. և
9 այդ՝ զեղբարս եւս։ Եթէ ո՞չ գիտէք զի անիրաւք
զարքայութիւնն Աստուծոյ ոչ ժառանգեն. մի՛ խա-

բիք , ոչ պոռնիկք ոչ կռապարիշտք , ոչ շունք ,
10 ՈՉ իգացեալք , ոչ արուագիտք , ոչ գողք , ոչ ա-
գահք , ոչ արբեցողք , ոչ բամբասողք և ոչ յա-
փշտակողք զարքայութիւն Աստուծոյ ոչ ժառանգե-
11 ն : Եւ գուք այնպիսիք ոմանք էիք . այլ լուա-
ցարուք , այլ սրբեցարուք , այլ արդարացարուք
յանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի և ի Հո-
գին Աստուծոյ մերոյ :
12 Ամենայն ինչ ինձ մարթ է , այլ ոչ ամենայն ինչ
օգուտ է . ամենայն ինչ ինձ մարթ է , այլ ոչ եթէ
13 ես ընդ իշխանութեամբ ուրուք լինիցիմ : Կերա-
կուր՝ որովայնի , և որովայն՝ կերակրոյ . այլ Աս-
տուած զսա և զնոսա խափանեսցէ . բայց մարմին
ոչ պոռնկութեան , այլ Տեառն , և Տէր՝ մարմնոյ ,
14 Ամէն Աստուած որ զՏէրն յարոյց , և զձեզ յա-
15 րուցէ զօրութեամբ իւրով : Ո՞չ գիտէք եթէ մար-
մինք ձեր անդամք են Քրիստոսի . արդ առեալ
զանդամս Քրիստոսի՝ առնիցեմք անդամս պոռնկի՞.
16 քաւ լիցի : Եթէ ո՞չ գիտէք զի որ մերձենայ ի
պոռնիկ՝ մի մարմին է . եղիցին , ասէ , երկոքեան ի
17 մարմին մի : Եւ որ մերձենայ ի Տէր՝ մի հոգի է :
18 Փախերուք ի պոռնկութենէ . զամենայն մեղս զոր
և գործէ մարդ , արտաքոյ մարմնոյ իւրոյ է . իսկ
19 որ պոռնկին՝ յիւր մարմինն մեղանչէ : Եթէ ո՞չ
գիտէք՝ զի մարմինք ձեր տաճար են Հոգւոյն Սրբոյ
որ է ի ձեզ՝ զոր ունիքն յԱստուծոյ , և չէք ան-
20 ձանց տէր : Գանղի գնոյ գնեցայք . փառաւորեցարուք զԱստուած ի մարմինս ձեր և յոգիս , որ է
Աստուծոյ :

Գլ· Է

1 Ա յլ վասն որոյ գրեցէքն առ իս, բարւոք է մար-
2 դոյ ի կին մարդ չմերձենալ : Բայց վասն պոռնկու-
թեան իւրաքանչիւր որ զկիր կին կալցի , և իւրա-
3 քանչիւր որ կին զկիր այր կալցի : Կնոջ այր իւր
զպարտսն հատուսցէ , նոյնպէս և կինն՝ առն իւ-
4 րում : Զի կին մարմնոյ իւրում ոչ իշխէ , այլ այրն.
նոյնպէս և այրն իւրում մարմնոյ ոչ իշխէ , այլ
5 կինն : Մի զրկէք զմիմեանս, բայց եթէ ինչ ի միա-
բանութենէ առ ժամանակ մի , զի ուխտիցն պա-
րապիցէք , և դարձեալ ի նոյն դարձջիք , զի մի
փորձեացէ զձեզ Սատանայ վասն անխառնութեան
6 ձերոյ : Զայս ասեմ՝ ներելով և ոչ հրաման տալով :
7 Գանդի կամիմ եթէ ամենայն մարդ լինէր իբրեւ
զիս . այլ իւրաքանչիւր որ զիւր շնորհս ունի յԱս-
8 տուծոյ՝ ոմն այսպէս և ոմն այնպէս : Բայց ամու-
րեացն և այրեացն ասեմ , Լաւ է նոցա եթէ կաց-
9 ցեն իբրեւ զիս : Ապա թէ ոչ ունիցեն ժպժ՝ ա-
մուսնասցին , զի լաւ է ամուսնանալ քան զկռա-
10 նուլ : Ա յլ կանամբեացն պատուիրեմ ոչ ես , այլ
11 Տէր , կնոջ յառնէ մի՛ մեկնել . Ապա եթէ մեկնես-
ցի , անայր մնասցէ կամ անդրէն ընդ առն իւրում
հաշտեսցի , և առն զկին իւր մի՛ թողուլ :
12 Բայց այլոց ես պատուիրեմ, ոչ եթէ Տէր . Եթէ
ոք եղբայր կին ունիցի անհաւատ , և նմա հաճոյ
13 իցէ բնակել ընդ նմա , մի՛ թողցէ զնա : Եւ կին որ
ունիցի զայր անհաւատ , և նմա կամ իցէ բնակել
14 ընդ նմա , մի՛ թողցէ զայրն . Զի սուրբ է այրն ան-

հաւատ կնաւն, և սուրբ է կինն անհաւատ ա-
րամնէն. ապա թէ ոչ՝ որդիքն ձեր պիղծ են, բայց
15 այժմ՛ սուրբ են։ Ապա եթէ անհաւատն մեկնեսցի,
մեկնեսցի. զի ոչինչ հարկ ի վերայ կայ եղբօրն կամ
քեռն յայնպիսի իրս, քանզի ի խաղաղութիւն կո-
16 չեաց զմեզ Աստուած։ Զի՞ գիտես, կին դու, եթէ
ղայրն քո ապրեցուսցես. կամ զի՞ գիտես, այր
17 դու, եթէ զկին քո ապրեցուսցես. Եթէ ոչ՝ իւ-
րաքանչիւր ումեք որպէս և բաժանեաց Տէր, զիւ-
րաքանչիւր ոք որպէս և կոչեաց Աստուած՝ այն-
պէս գնասցէ. և այսպէս ընդ ամենայն եկեղեցիս
18 պատուէր տամ։ Թլփատեալ ոք կոչեցաւ, մի ցան-
կասցի անթլփատութեան. յանթլփատութենէ ոք
19 կոչեցաւ, մի՛ թլփատեսցի. Զի թլփատութիւն ո-
չինչ է, և անթլփատութիւն ոչինչ, այլ պահպա-
20 նութիւն Աստուծոյ պատուիրանացն։ Բայց իւրա-
քանչիւր ոք յոր կոչումն կոչեցաւ՝ ի նմին կացցէ։
21 Ծառա՞յ կոչեցար, մի՛ փոյթ լիցի քեզ. այլ թէ
կարիցես և ազատ լինել, քեզ այնպէս լաւ իցէ։
22 Զի որ ի Տէր կոչեցեալ է ծառայն՝ ազատ Տեառն
է. նոյնպէս և որ ազատն կոչեցեալ է՝ ծառայ Քրիս-
23 տոսի է։ Գնոց գնեցայք, մի լինիք ծառայք մարդ-
24 կան։ Իւրաքանչիւր ոք յոր կոչումն կոչեցաւ, եղ-
բարք, ի նմին կացցէ առաջի Աստուծոյ։
25 Ա՛յլ վասն կուսանաց հրաման ինչ ի Տեառնէ
ոչ ունիմ, բայց խրատ տամ *որպէս ողորմելոյ ու-
26 րուք՝ ի Տեառնէ հաւատարիմ լինել։ Համարիմ

* Յայլն՝ որպէս ողորմեալ ոք

թէ այնպէս *լաւ իցէ, բայց վասն վտանգին՝ որ
ի վերայ կայ, †իւրաքանչիւր ոք մարդոյ թէ այնպէս իցէ։
27 Կապեալ ես ի կին, մի՛ խնդրեր արձակել. արձա-
28 կեալ ես ի կնոջէ, մի՛ խնդրեր կին։ Զի եթէ ա-
մուսնանայցես՝ ոչ մեղաւ. և եթէ ամուսնանայցէ
կոյսն՝ ոչ մեղաւ, բայց նեղութիւն մարմնով ունե-
29 ցին այնպիսիքն. այլ ես խնայեցի ի ձեզ։ Բայց
զայս ասեմ, եղբարք, եթէ ժամանակս կարճեալ է
այսուհետեւ. զի որ ունիցին կանայս՝ որպէս թէ
30 չունիցին, եւ որ լացեն՝ որպէս թէ ոչ լացեն, և
որ խնդասցեն՝ որպէս թէ չխնդայցեն, և որ գնեն՝
31 որպէս թէ չունիցին, եւ որ վարեն զաշխարհս՝ որ-
պէս թէ ‡չվայելիցեն. զի §անցեալ է վայելչու-
32 թիւն՝ աշխարհիս այսորիկ։ Ա՛յլ կամիմ զձեզ ան-
հոգս լինել. զի որ անկինն է՝ հոգայ զՏեառն, թէ
33 որպէս հաճոյ լիցի Տեառն. Եւ որ կանամբին է,
հոգայ զաշխարհիս՝ թէ որպէս հաճոյ լիցի կնոջ իւ-
34 րում, Եւ ահա մեկնեցան ի միմեանց առնակինն
և կոյսն. զի կոյսն հոգայ զՏեառն՝ զի իցէ սուրբ
հոգւով և մարմնով, և առնակինն հոգայ զաշխար-
35 հիս՝ թէ որպէս հաճոյ լիցի առն իւրում։ Ա՛յլ
զայս վասն ձերոյ օգտի ասեմ. ոչ եթէ խեղդ ինչ
արկանեմ ձեզ, այլ վասն պարկեշտութեան և հը-
36 պատակութեան Տեառն առանց զբաղանաց։ Ապա
թէ ոք ամօթ համարեսցի վասն կուսին իւրոյ՝ եթէ

* Յայլն՝ լաւ իցէ վասն վտանգին
† Յայլն՝ զի բարւոք
‡ Յայլն՝ ոչ վարիցեն չարաչար.
§ Յայլն՝ անցանեն կերպարանք

լեկ ելեալ ըստ չափ , և այնպէս ինչ պարտ լեկ լինել· զոր կամեցեր արասցե , ոչ մեղանչէ՝ ամեա-
37 նասցի ; իսկ որ հաստատեալ է ի սրտի իւրում , և վասնզ ինչ ոչ լեկ նմա , իշխանութիւն ունի ի վերայ կամաց իւրոց . և զայն ընտրեաց ի սրտի
38 իւրում՝ պահել զկոյս իւր , բարւոք առնէ ; եւ որ ամուսնացուցանէ †զկոյս իւր՝՝ բարւոք առնէ . և
39 որ ոչ ամուսնացուցանէ՝ լաւ եւս առնէ ; կին կապեալ է՝ ցորքան ժամանակս կենդանի է այր նորա. ապա եթէ ննջիցէ այր նորա , ազատ է՝ ուր կա-
40 միցի ամուսնանալ , այլ միայն Տէրամբ ; Բայց երանելի եւս է՝ թէ այնպէս կացցէ ըստ իմում խրատու . ես այսպէս համարիմ եթէ և ինձ լեկ Հոգի Աստուծոյ ։

ԳԼ· Ը

1 Ա.ՅԼ վասն զոհից կռոցն , գիտեմք եթէ ամենեքին գիտութիւն ունիմք . գիտութիւն հպարտա-
2 ցուցանէ , այլ սէր շինէ ; եթէ ոք կամիցի գիտել ինչ , չէ եւս գիտաց՝ որպէս արժանն էր գիտել ։
3 Բայց որ սիրէ զԱստուած , նա է տեղեկացեալ ի
4 նմանէ ։ Ա.ՅԼ վասն կերակրոցն զոհելոց գիտեմք եթէ ոչինչ իսկ կուռքդ են յաշխարհի , ևի չիք ոք
5 Աստուած բաց ի միոյն ։ Զի թէպէտ և իցեն աստուածք եթէ յերկինս և եթէ յերկրի , որպէս և են աստուածք բազումք և տէրք
6 բազումք , Ա.ՅԼ մեզ մի է Աստուած Հայր , և մեք

† Ի ՑՈՒՆԷ ԷԻ ։

ի նա . և մի Տէր Յիսուս Քրիստոս՝ որով ամենայն,
7 և մեք նովաւ ։ Ա.ՅԼ ոչ յամենեսեան գիտութիւն է. ոմանք առ խղճի մտաց մինչեւ ցայժմ զկռոցն իբրեւ զզոհեալ ուտեն . և խիղճ մտացն նոցա, քանզի տկար
8 է , պղծի ։ Ա.ՅԼ կերակուր զմեզ առաջի Աստուծոյ ոչ կացուցանէ . ոչ եթէ չուտեմք՝ պակասիմք ինչ,
9 և ոչ եթէ ուտեմք՝ առաւելութեամբ ինչ ։ Բայց զգո՛ւշ լերուք , գուցէ իշխանութիւնդ ձեր այդ գայթակ-
10 զութիւն լինիցի տկարացն ։ Եթէ ոք տեսանիցէ զքեզ որ զգիտութիւնդ ունիս՝ բազմեալ ի մեհենի , ո՞չ ապաքէն խղճ մտաց նորա՝ որ տկարութեամբ
11 զգածեալ է , անդրէն շինիցի ուտել զզոհեալն . Եւ կորնչիցի տկար եղբայրն ի քում գիտութեանն ,
12 վասն որոյ Քրիստոս մեռաւ ։ Եւ այսպէս յանցուցեալ յեղբարս , և զխիղճ մտաց տկարացն զայրացուցեալ , ի Քրիստոս մեղանչէ ։ Վասն որոյ եթէ
13 կերակուր գայթակղեցուցանէ զեղբայրն իմ, ոչ կերբայց միս յաւիտեան , զի մի՛ զեղբայրն իմ գայթակղեցուցից ։

ԳԼ· Թ

1 Ո՞չ ապաքէն ազատ եմ , ո՞չ ապաքէն առաքեալ եմ , ո՞չ ապաքէն զՏէր մեր Յիսուս Քրիստոս *աչքը
2 իմով՛՛ տեսի , ո՞չ ապաքէն գործ իմ դուք էք ի
3 Տէր ։ Թէպէտ և այլոց չիցեմ առաքեալ՝ այլ դէպ ձեզ եմ . զի կնիք իսկ առաքելութեան իմոյ դուք
4 էք ի Տէր ։ Իմ պատասխանի՝ ուր զիս հարցանիցեն՝
5 այս է · Միթէ ո՞չ ունիցիմք իշխանութիւն ուտել

* Ի ՑՈՒՆԷ ԷԻ ։

5 և ընդել։ Մեթէ ո՞չ ունիցիմք իշխանութիւն ըզ-
քոյս կանայս շրջեցուցանել *ընդ մեզ՝. որպէս և
այլ առաքեալքն և եղբարքն Տեառն և Կեփաս ։
6 Եթէ միայն ես և Բառնաբա՞ս ոչ ունիցիմք իշխա-
7 նութիւն չգործել ինչ ։ Ո՞ր երբեք զինուորիցի
իւրով թոշակօք . ո՞ր տնկիցէ այգի՝ և ի պտղոյ
նորա ոչ ուտիցէ . ո՞ր արածիցէ խաշն՝ և ի կա-
8 թանէ խաշինն ոչ ուտիցէ ։ Մեթէ ըստ մարդկու-
թե՞ան խօսիցիմ զայս . կամ Թէ՝ և օրէնքն զսոյն
9 ո՞չ ասիցեն ։ Ի Մովսիսի իսկ յօրէնսն գրեալ է ,
Ոչ կապեսցես զգառուկ եղին կալատուց . մեթէ զե-
10 զա՞նց ինչ փոյթ էր Աստուծոյ ։ Ո՞չ ապաքէն վասն
մեր ասէ , քանզի վասն մեր գրեցաւ . զի յուսով
պարտի որ սերմանէն՝ սերմանել , և որ կաստուն՝
11 յուսով վայելել ։ Եթէ մեք ի ձեզ զհոգեւորսն սեր-
մանեցաք , մեծ ի՞նչ է՝ եթէ ի ձենջ զմարմնաւորսդ
12 հնձիցեմք ։ Եթէ այլք ձերով իշխանութեամբդ վա-
յելեն , ո՞չ առաւել եւս մեք . այլ ոչ ի գործ
ինչ արկաք զիշխանութիւնս զայս . բայց ամենայնի
համբերեմք , զի մի խափան ինչ լինիցիմք աւետա-
13 րանին Քրիստոսի ։ Ո՞չ գիտէք եթէ որ ի տաճա-
րին գործեն , ի տաճարէ անտի ուտեն . և որ սե-
զանոյն պաշտօնեայք են , ի սեղանոյ անտի վայելեն ։
14 Նոյնպէս և Տէր հրաման ետ , որոց զաւետարանն
15 աւետարանեն՝ յաւետարանէ անտի կեալ ։ Բայց ես
և ոչ զմի ինչ յայսցանէ արկի ի գործ , և ոչ գրեցի
զայդ՝ զի ինձ այսպէս ինչ լինիցի . լաւ է ինձ մա-
նաւանդ մեռանել , և ոչ զի զպարծանս իմ ոք ըն-

* Ի յոյնն՝ չէ ։

16 դատնայն համարիցի ։ Զի եթէ աւետարանեմ , ո-
չինչ են ինձ պարծանք , քանզի հարկ ի վերայ կայ .
17 բայց վայ է ինձ՝ եթէ ոչ աւետարանեմ ։ Եթէ կա-
մաւ զայն առնեմ , վարձք են ինձ . և եթէ ակա-
18 մայ՝ տնտեսութիւն յանձն է ինձ ։ Եւ արդ զի՞նչ
վարձք իցեն ինձ . *եթէ յաւետարանելն ձրի տայց
† զաւետարանն՝ զի մի զչգիթիցիմ ինչ իշխանու-
19 թեամբս իմով յաւետարանի անդ ։ Քանզի ազատ
էի յամենայնէ՝ և ամենեցուն զանձն ի ծառայու-
20 թեան կացուցի , զի զբազումս շահեցայց ։ Եղէ ընդ
Հրեայսն իբրեւ զՀրեայ , զի զՀրեայսն շահեցայց ։
21 Եղէ ընդ օրինօք իբրեւ զայնոսիկ՝ որ ընդ օրինօքն
էին , իբր ոչ եթէ ընդ օրինօքն էի , այլ զի որ ընդ
օրինօքն իցեն՝ և զնոսա շահեցայց . ընդ անօրէնս
եղէ իբրեւ զանօրէն , իբր ոչ եթէ անօրէն ինչ էի
Աստուծոյ , այլ ընդ օրինօքն Քրիստոսի , զի շա-
22 հեցայց զանօրէնսն ։ Եղէ ընդ տկարս իբրեւ զտկար ,
զի զտկարսն շահեցայց . ընդ ամենայնի ամենայն
23 եղէ , զի թերեւս ապրեցուցից զոմանս ։ Զայս ամե-
նայն առնեմ վասն աւետարանին , զի կցորդ եղէց
24 նմա ։ Ո՞չ գիտէք եթէ որ յասպարիսին ընթանան ,
ընթանալ ամենեքին ընթանան , բայց մի ոք առ-
նու զյաղթութեանն . այնպէս ընթացարուք զի կա-
25 նիցէք ։ Ամենայն որ պատերազմի՝ ամենայնի
ժուժկալ լինի . նոքա զի զեղծանելի պսակն առ-
26 նուցուն , և մեք զանեղծութեանն ։ Արդ ես իսկ
այնպէս ընթանամ , ոչ որպէս յաներեւոյթս . այն-
պէս մրցիմ , որպէս ոչ Թէ զՀողմն ինչ կոծելով ·

* Յոյնն՝ զի † Յոյնն՝ զաւետարանն Քրիստոսի

27 Ա.ՀԼ ՃՆՂԵՄ զմարմինս իմ և հնազանդեցուցանեմ, զի գուցէ որ այլոցն քարոզեցեալ՝ ես ինքնին անպիտան գտանիցիմ։

ԳԼ. Ժ

1 Ոչ կամիմ եղբարք, զի չարքն մեր ամենեքին ընդ ամպովն էին, և ամենեքին ընդ
2 ծովն անցին. Եւ ամենեքին ի Մովսէս մկրտեցան
3 յամէն և ի ծովն. Եւ ամենեքին զնոյն հոգեւոր
4 կերակուրն կերան. Եւ ամենեքին զնոյն հոգեւոր ըմպելին արբին, զի ըմպէին ի հոգեւոր վիմէն՝ որ երթայր ղհետ նոցա. և վէմն էր ինքն Քրիստոս.
5 Ա.ՀԼ ոչ եթէ ընդ բազումս ի նոցանէ հաճեցաւ Աստուած, քանզի տապաստ անկան յանապատի
6 անդ։ Եւ այն օրինակաւ լինէր վասն մեր, զի մի լինցուք ցանկացողք չարեաց, որպէս նոքայն ցան-
7 կացան։ Եւ մի կռապարիշտք լինիք՝ որպէս ոմանք ի նոցանէ, որպէս և գրեալ է, Նստաւ ժողովուրդն
8 ուտել և ըմպել և յարեան ի խաղալ։ Եւ մի պոռնկեսցուք, որպէս ոմանք պոռնկեցան ի նոցանէ, և անկան ի միում աւուր քսան և *չորք հազարք։
9 Եւ մի փորձեսցուք զՏէր. որպէս ոմանք ի նոցանէ
10 փորձեցին, և յօձից անտի սատակեցան։ Եւ մի տրտնջեսցուք. որպէս ոմանք ի նոցանէ տրտնջեցին.
11 և կորեան ի սատակիչէ անտի։ Ա.ՀԼ այն ամենայն օրինակաւ անցանէր ընդ նոսա. բայց գրեցաւ վասն մերոյ խրատու, յորս վախճան յաւիտեանցն եհաս։

* Յոյնն՝ երեք

12 Ա.յսուհետեւ որ համարիցի հաստատուն կալ՝ զգոյշ
13 լիցի, գուցէ անկանիցի։ փորձութիւն ի ձեր վերայ ոչ է եկեալ բաց ի մարդկանէ. այլ հաւատարիմ է Աստուած՝ որ ոչ արկցէ զձեզ ի փորձութիւն առաւել քան զկար ձեր, այլ արասցէ ընդ փորձութեանն և ելս, զի համբերել կարասջիք։
14 Վասն որոյ, սիրելիք իմ, փախերուք ի կռապաշտ-
15 տութենէ։ Իբրեւ ընդ իմաստունս խօսիմ. ընդ-
16 արեցէք ձեզէն զոր ասեմս։ Բաժակն օրհնութեան զոր օրհնեմք՝ ո՞չ ապաքէն հաղորդութիւն է արեանն Քրիստոսի. հացն զոր բեկանեմք՝ ո՞չ ապաքէն հա-
17 ղորդութիւն է մարմնոյն Քրիստոսի։ Զի մի հաց, մի մարմին եմք բազումքս, զի ամենեքին ի միոջէ
18 հացէ անտի վայելեմք։ Տեսէք զիսրայէլն ըստ մարմնոյ. ո՞չ ապաքէն որ ուտեն ի զոհիցն՝ հաղորդ
19 են սեղանոյն։ Իսկ արդ զի՞նչ ասեմ, թէ զոհեալն
20 իցէ՞ ինչ. և կամ թէ կուռքն իսկ իցէ՞ն ինչ։ Ա.ՀԼ զոր զոհեն հեթանոսք, դիւաց և ոչ Աստուծոյ զոհեն. ոչ կամիմ զձեզ հաղորդս դիւաց լինել.
21 քանզի ոչ կարէք զբաժակն Տեառն ըմպել և զբա-
22 ժակն դիւաց. Եւ ոչ կարէք ի սեղանոյ Տեառն վայելել և ի սեղանոյ դիւաց։ Եթէ նախա՞նձ ինչ արկանիցեմք Տեառն, միթէ զօրագո՞յնք իցեմք քան զնա։
23 Ամենայն ինչ լինի մարթ է, այլ ոչ ամենայն ինչ օգուտ է. ամենայն ինչ լինի մարթ է, այլ ոչ
24 ամենայն ինչ շինէ։ Մի՛ որ զանձին եւեթ խըն-
25 դրիցէ՝ այլ և զընկերին։ Ամենայն ինչ որ ի սպանդանոցի վաճառի, կերայք և մի խորհք վասն խղճի
26 մտաց. Զի Տեառն է երկիր լրիւ իւրով։ (27) Եթէ

որ կոչեսցէ զձեզ յանհաւատից՝ և կամիցիք երթալ. զամենայն ինչ որ առաջի դնիցի, կերայք և
28 մի՛ խարէք վասն խղճի մտաց ։ Ապա եթէ ոք ասասցէ ձեզ թէ Այդ զոհեալ է, մի՛ ուտիցէք վասն նորա
29 որ գուշակն եղեւ, և վասն խղճի մտացն ։ Այլ ընդ խիղճ մտացն ասեմ՝ ոչ զիւրն, այլ զընկերին. իսկ ընդէ՞ր ընաւ ազատութիւնս իմ դատիցի յայլոյ
30 խղճէն մտաց ։ Եթէ ես շնորհօք վայելեմ, ընդէ՞ր
31 հայհոյիցիմ, վասն որոյ եմն գոհանամ ։ Արդ եթէ ուտիցէք, եթէ ըմպիցէք, եթէ զինչ և առնիցէք, զամենայն ինչ ի փառս Աստուծոյ արասջիք ։
32 Առանց գայթակղութիւն դնելոյ Հրէից և Հեթանոսաց լինիջիք և եկեղեցւոյն Աստուծոյ ։ Որպէս և ես
33 ամենեւեքին ամենեցուն հաճոյ լինիմ, ոչ խնդրեմ զանձին օգուտ, այլ զբազմաց՝ զի ապրեսցին ։

ԳԼ. ԺԱ.

1 Նմանողք լինիջ եղերուք, որպէս և ես Քրիստոսի ։
2 *Գովեմ զձեզ՝ զի զամենայն ինչ զիս յիշէք, և որպէս աւանդեցի ձեզ՝ զաւանդութիւնն ունիցիք ։
3 Կամիմ զի գիտիցէք դուք, եթէ առն ամենայնի գլուխ Քրիստոս է, և գլուխ կնոջ այր, և գլուխ
4 Քրիստոսի՝ Աստուած ։ Ամենայն այր յորժամ յաղօթս կայցէ կամ մարգարէանայցէ և զգլուխն ծած-
5 կեալ ունիցի, յամօթ առնէ զգլուխն իւր ։ Եւ ամենայն կին յորժամ յաղօթս կայցէ կամ մարգարէանայցէ բացաւ գլխով՝ յամօթ առնէ զգլուխն

* Յայլն՝ Արդ, եղբարք, գովեմ

6 իւր, զի այնպէս համարի թէ ղերծեալ իցէ ։ Զի եթէ ոչ սբողեսցի կինն, փոքրեսցէ զկերս իւր. ապա եթէ անպատեհ է կնոջ փոքրել կամ գերծուել,
7 սբողեսցի ։ Առն մարդոյ չէ պարտ ծածկել զգլուխ իւր, զի պատկեր և փառք Աստուծոյ է. իսկ կինն
8 փառք առն իւրոյ է ։ Զի ոչ եթէ այր ի կնոջէ է, այլ
9 կին՝ յառնէ ։ Քանզի ոչ իսկ հաստատեցաւ այր
10 վասն կնոջ, այլ կին՝ վասն առն ։ Վասն այնորիկ պարտի կինն շուք դնել գլխոյն վասն հրեշտակաց ։
11 Բայց ոչ կին՝ առանց առն, և ոչ այր՝ առանց կնոջ
12 ի Տէր ։ Զի որպէս կին՝ յառնէ, նոյնպէս և այր՝ ի
13 կնոջէ, բայց ամենայն՝ յԱստուծոյ ։ Այլ դուք ձեզէն տուք ղերծուած. արժա՞ն է կնոջ մարդոյ հո-
14 լանի յաղօթս կալ առաջի Աստուծոյ ։ Եւ ո՞չ բնութիւնն իսկ ուսուցանէ զձեզ, զի այր եթէ գի-
15 սաւոր է՝ անարգանք են նմա. Բայց կին եթէ գիսաւոր է՝ փառք են նմա. զի գեղք փոխանակ զգեստու տուեալ են նմա ։ Ապա թէ ոք կամի հակառակող լինել, մեք չունիմք այնպիսի սովորութիւն, և ոչ եկեղեցիքն Աստուծոյ ։
17 Այլ զայս պատուիրեմ, ոչ որպէս թէ գովիցեմ, զի ոչ ի լաւ անդր՝ այլ ի վատթարն *նկրտիք ։
18 Նախ՝ յորժամ ի մի վայր ժողովիցիք ձեկեղեցին, լսեմ եթէ հերձուածք գոն ի ձեզ, և սակաւ ինչ
19 հաւատացի։ Բայց և հերձուածք լինելոց են ի ձեզ,
20 զի որ ընտիրքն իցեն ի ձեզ՝ երեւեսցին ։ Եւ արդ ի ժողովիլն ձեզ ի միասին՝ †ոչ է տուն Տեառն

* Յայլն՝ ժողովիք ։
† Յայլն՝ ոչ է պղ զՏերունական ընթրիսն ուտել ։

21 ձեզ տեղի հաց ուտելոյ ։" Զի իւրաքանչիւր որ զիւր
ընթրիս յառաջանայ ուտել. և ոմն քաղցեալ և
22 ոմն արբեալ ։ Միթէ տուն ո՞չ ունիցիք ուտելոյ
կամ ըմպելոյ . եթէ զեկեղեցեա՞ն Աստուծոյ ար-
համարհիցէք , և յամօթ առնէք զչքաւորսն . զի՞նչ
23 *ասացից . գովեցի՞ց զձեզ. յայդմ ոչ գովեմ։ Զի
ես ընկալայ ՚ի Տեառնէ՝ զոր և ձեզն ուսանդեցի ,
եթէ Տէր Յիսուս ՚ի գիշերին յորում մատնէր , առ
24 հաց , Գոհացաւ , եբեկ և ասէ , Առէք և կերայք .
այս է մարմին իմ, որ վասն ձեր բաշխի . զայս ա-
25 րարէք առ իմոյ յիշատակի ։ Նոյնպէս և զբաժակն
յետ ընթրեացն առ և ասէ , Այս բաժակ նոր ուխտ
է իմով արեամբ . զայս արարէք քանիցս անգամ
26 Թէ ըմպիցէք՝ առ իմոյ յիշատակի ։ Քանիցս ան-
գամ Թէ ուտիցէք զՀացս զայս և զբաժակս ըմպիւ-
ցէք , զմահն Տեառն պատմեցէք՝ մինչեւ եկեսցէ նա ։
27 Ա.յսուհետեւ որ ուտիցէ զՀացս , կամ ըմպիցէ զբա-
ժակս Տեառն անարժանութեամբ , պարտական է-
28 զիցի մարմնոյ և արեանն Տեառն ։ փորձեսցէ մարդ
զանձն իւր , և ապա ՚ի հացէ անտի կերիցէ և ՚ի
29 բաժակէն արբցէ ։ Զի որ ուտէ և ըմպէ անարժա-
նութեամբ , դատաստանս անձին իւրում ուտէ և
30 ըմպէ , զի ոչ խորէ զմարմինն Տեառն ։ Վասն այ-
նորիկ իսկ են ՚ի ձեզ բազում հիւանդք և սխտա-
ժէք , և շատ եւս այն են , որ և ննջեցեալք իսկ
31 իցեն ։ Զի եթէ զանձինս քննէաք՝ ապա ոչ դա-
32 տապարտէաք ։ Եւ եթէ դատիմք՝ ՚ի Տեառնէ խրա-
տիմք . զի մի՛ ընդ աշխարհի դատապարտեսցուք ։

* Յայնմ՝ ասացից ձեզ .

33 Ա.յսուհետեւ , եղբարք , յորժամ ՚ի մի վայր ժո-
34 ղովիցիք ուտել՝ միմեանց սպասջիք ։ Ապա թէ ոք
քաղցեալ իցէ՝ ՚ի տան իւրում կերիցէ , զի մի՛ ՚ի
դատապարտութիւն ժողովիցիք ։ Բայց զայլ ինչ՝
յորժամ եկիցէ՝ յայնժամ պատուիրեցից ։

Գլ. ԺԲ

1 Ա.յլ վասն հոգեւորացն , եղբարք , ոչ կամիմ ե-
2 թէ տգէտք իցէք ։ Գիտէք իսկ զի մինչ հեթանոսքն
էիք , առ կուռսն անմունչն որպես երթայիք , և
3 գայիք ։ Վասն որոյ ցուցանեմ ձեզ, զի ոչ ոք Հո-
գւով Աստուծոյ խօսի՝ և ասիցէ Թէ նզովեալ Յի-
սուս . և ոչ ոք կարէ ասել Տէր զՅիսուս՝ եթէ ոչ
4 Հոգւովն Սրբով ։ Թէպէտ և բաժինք շնորհաց են՝
5 այլ Հոգի նոյն է ։ Եւթէ բաժինք պաշտամանց են ,
6 այլ Տէր նոյն է ։ Եթէ բաժինք յաջողութեանց
են , այլ Աստուած նոյն է՝ որ յաջողէ զամենայն
7 յամենայնի ։ Բայց իւրաքանչիւր ումեք տուեալ է
յայտնութիւն Հոգւոյն՝ *առ իւրաքանչիւր օգուտ ։"
8 Ումեմն ՚ի Հոգւոյն տուեալ է բան իմաստութեան .
9 այլում բան գիտութեան՝ ըստ նմին Հոգւոյ . Մի-
ւսում հաւատք՝ նովին Հոգւով . այլում շնորհք բը-
10 ժշկութեանց՝ նովին Հոգւով . Ա.յլում՝ յաջողու-
թիւնք զօրութեանց , այլում՝ մարգարէութիւն ,
այլում՝ ընտրութիւն Հոգւոց , այլում՝ տգիք լե-
11 զուաց , այլում՝ թարգմանութիւն լեզուաց ։ Ա.յլ
զայս ամենայն յաջողէ մի և նոյն Հոգի , և բա-
ժանէ իւրաքանչիւր՝ որպէս և կամի ։

* Յայնմ՝ առ ՚ի յօգուտ ։

12 Որպէս մարմին մի է և անդամս բազումս ունի,
և ամենայն բազում անդամք մարմնոյն մի մարմին
13 է, նոյնպէս և Քրիստոս։ Քանզի միով Հոգւով մեք
ամենեքեան ի մի մարմին մկրտեցաք, եթէ Հրեայք,
եթէ հեթանոսք, եթէ ծառայք, եթէ ազատք,
14 ամենեքեան զմի Հոգի արբաք։ Քանզի մարմին ոչ մի
15 անդամ է, այլ բազում։ Եթէ ասիցէ ոտն, Զի
չեմ ձեռն՝ չեմ ի մարմնոյ անտի, ոչ այնու չիցէ
16 ի մարմնոյ անտի։ Եւ եթէ ասիցէ ունկն, Վասն
զի չեմ ակն՝ չեմ ի մարմնոյ անտի, ոչ այնու չիցէ
17 ի մարմնոյ անտի։ Եթէ ամենայն մարմին ակն էր՝
ո՞ւր էր ունկն. և եթէ ամենայն լսելիք էր՝ ո՞ւր
18 էին հոտառելիք։ Բայց արդ Աստուած եդ զան-
դամսն՝ զմի ի նոցանէ ի մարմնին,
19 որպէս և կամեցաւ։ Ապա թէ էր ամենայն մի ան-
20 դամ, ո՞ւր էր մարմին։ Բայց արդ անդամք բա-
21 զումք են, և մարմին մի։ Ոչ կարէ ակն ասել ցձեռն
թէ Զես ինձ պիտոյ, և կամ դարձեալ գլուխ ցոտս
22 թէ Զէք ինձ պիտոյ։ Այլ առաւել որ թուին ան-
դամք մարմնոյն թէ տկարագոյնք իցեն, կարեւորք
23 են. Եւ որ թուինն թէ անարգագոյնք իցեն մար-
մնոյն, այնց առաւելագոյն պատիւ առնեմք. և ա-
մօթագոյնքն մեր առաւել եւս պարկեշտութիւն ունին։
24 Եւ պարկեշտիցն մերոց չէ ինչ պիտոյ. քանզի Աս-
տուած խառնեաց զմարմինն, և նուազլին առաւել
25 եւս պատիւ ետ. Զի մի՛ իցեն հերձուածք ի մարմնի
անդ, այլ զի նոյնք զմիմեանց հոգայցեն անդամքն։
26 Եւ եթէ վշտանայ ինչ մի անդամն, վշտանան ա-
մենայն անդամքն ընդ նմա. և եթէ փառաւորի մի
անդամն, խնդան ամենայն անդամքն ընդ նմա։

27 Ա՛յլ դուք մարմին Քրիստոսի էք և *անդամք յան-
դամոց նորա։
28 Եւ զորս եդ Աստուած յեկեղեցւոջ այս են. Նախ
զառաքեալսն, երկրորդ զմարգարէս, երրորդ զվար-
դապետս, ապա զօրութիւնս, ապա շնորհս բժշկ-
կութեանց, օգնութիւնս, վարիչս, տգս լեզուաց,
29 †թարգմանութիւնս լեզուաց։ Միթէ ամենեքեան
առաքեա՞լք իցեն. միթէ ամենեքեան մարգարէ՞ք
30 իցեն. միթէ ամենեքեան վարդապե՞տք իցեն. Միթէ
ամենեքեան զօրութի՞ւնք իցեն. միթէ ամենեքեան
շնորհս բժշկութեա՞ն ունիցին. միթէ ամենեքեան զի
լեզո՞ւս խօսիցին. միթէ ամենեքեան թարգմանիցէ՞ն։
31 Բայց նախանձաւորք լերուք շնորհացն՝ որ լաւն են.
այլ ես առաւել եւս ճանապարհ ցուցանեմ ձեզ։

Գլ. ԺԳ

1 Եթէ զլեզուս մարդկան խօսիցիմ և զհրեշտակաց
և սէր ոչ ունիցիմ, եղէ ես իբրեւ զպղինձ որ հնչէ,
2 կամ իբրեւ զձնծղայս որ զօղանջեն։ Եւ եթէ ու-
նիցիմ զմարգարէութիւն, և գիտիցեմ զխորհուրդս
ամենայն և զամենայն գիտութիւն, և եթէ ունի-
ցիմ զամենայն հաւատս՝ մինչեւ զլերինս փոփոխե-
3 լոյ, և սէր ոչ ունիցիմ՝ ոչինչ եմ։ Եւ եթէ ջամ
բիցեմ զամենայն ինչս իմ աղքատաց, և մատնե-
ցեմ զմարմինս իմ յայրումն, և սէր ոչ ունիցիմ՝
4 ոչինչ օգտիմ։ Սէր երկայնամիտ է, քաղցրանայ.
սէր ոչ նախանձի, ոչ ամբարհաւաճձէ, ոչ հպար-

* Յոյն՝ անդամք ի մասնէ։ † Ի յոյն չէ։

5 տանայ · Ոչ յանդգնի , ոչ խնդրե զնւբ , ոչ գրգռի ,
6 ոչ խորհի զչար · Ոչ խնդայ ընդ անիրաւութիւն՝
7 այլ խնդայ ընդ ատուգութիւն . Ամենայնի տեւէ ,
ամենայնի հաւատայ , ամենեւին յուսայ , ամենայնի
8 համբերէ : Սէր ոչ երբէք անկանի . եթէ մարգա-
րէութիւնք են՝ խափանեսցին , եթէ լեզուք՝ լռեսցեն ,
9 եթէ գիտութիւն՝ խափանեսցի : Զի մասամբ գիտեմք
10 ի շատ գիտեմք , և մասամբ մարգարէանամք :
Ա.Յ.Ժ յորժամ եկեսցէ կատարումն , մասն՝ ի շա-
11 տէս խափանեսցի : Մինչ տղայն էի՝ իբրեւ զտղայ
խօսէի , իբրեւ զտղայ խորհէի , իբրեւ զտղայ հա-
մարէի . այլ յորժամ եղէ այր՝ զտղայութեանն ի
12 բաց խափանեցի : Ա.յժմ տեսանեմք իբրեւ ընդ
հայելի օրինակաւ , այլ յայնժամ դէմ յանդիման . այժմ
խելամասւ եմ մասամբ՝ ի շատ , այլ
յայնժամ գիտացից՝ որպէս և նայն ծանեաւ զիս :
13 Բայց արդ մնան հաւատք , յոյս , սէր՝ սոքա երե-
քեան , և մեծ քան զսոսա սէր է :

Գ.Լ · ԺԴ

1 Զհետ երթայք սիրոյ , և նախանձաւորք լերուք
հոգեւորացն՝ առաւել զի և դուք մարգարէանայ-
2 ցէք : Զի որ խօսի ի լեզուս՝ ոչ ընդ մարդկան խօ-
սի , այլ ընդ Ա.ստուծոյ · զի ոչ ոք է՝ որ լսէ , բայց
3 Հոգւով խօսի խորհուրդս : Իսկ որ մարգարէանայն ,
մարդկան խօսի շինութիւն և մխիթարութիւն և
4 սփոփութիւն : Որ խօսի ի լեզուս՝ զանձն իւր շի-
5 նէ . և որ մարգարէանայն՝ զեկեղեցին շինէ : Կա-
միմ զի ամենեքեան դուք ի լեզուս խօսիցիք՝ առա-

ւել զի մարգարէանայցէք , զի լաւ է որ մարգարէ-
նայն՝ քան զայն որ ի լեզուս խօսիցի . բայց եթէ
թարգմանիցէ՝ զի եկեղեցին շինութիւն առնուցու :
6 Բայց այժմ , եղբարք , եթէ եկից առ ձեզ ի լե-
զուս խօսելով , զինչ օգուտ լինիցիմ ձեզ եթէ ոչ
խօսիցիմ կամ յայտնութեամբ կամ գիտութեամբ
կամ մարգարէութեամբ կամ վարդապետութեամբ ,
7 Ա.յնպէս՝ որպէս անշունչքն ձայն տայցեն , եթէ
փող և եթէ քնար . զի եթէ ընտրութիւն ինչ բար-
բառոյն չառնիցեն , զիա՞րդ ճանաչիցի փողոյն հար-
8 կանել կամ քնարին հնչել , փանդի եթէ խառնա-
ձայն արձակիցի փողն , ո՞վ պատրաստեսցի ի պա-
9 տերազմ : Նոյնպէս և դուք եթէ լեզուօք ոչ նշա-
նակիցէք զբանն՝ զիա՞րդ ճանաչիցին խօսքն . զի լի-
10 նիցիք այնուհետեւ իբրեւ ընդ օդս խօսեցեալք : Զի
այնչափ տեղք ձայնից են յաշխարհի , և ոչինչ ան-
11 ձայն է : Իսկ արդ՝ եթէ ոչ գիտիցեմ զղօրութիւնն
ձայնին , լինիցիմ այնմ որ խօսիցին ընդ իս՝ խաւժ ,
12 և նա որ խօսիցին ընդ իս՝ դուժ : Նոյնպէս և դուք
քանզի նախանձաւորդք էք հոգեւորացն , վասն շի-
նուածոյ եկեղեցւոյն՝ *խնդրէք զի առաւել եւս իցէք ,
13 վասն որոյ որ խօսին ի լեզուս , աղօթս արասցէ՝
14 զի և թարգմանիցէ : Եթէ կամ յաղօթս լեզուաւ՝
հոգին իմ կայ յաղօթս , այլ միտք իմ անպտուղ
15 են : Իսկ արդ՝ զի՞նչ իցէ . կացից յաղօթս հոգւով ,
կացից յաղօթս և մտաւք . սաղմոս ասացից հոգւով ,
16 սաղմոս ասացից և մտաւք : Ապա թէ ոչ՝ եթէ օրհ-
նեսցես հոգւով , որ կայցէ ի տեղւոջ տգիտին ,

* Յոյն՝ խնդրեցէք

զի՞րդ ասիցէ ՚ի քէմ գովութեանն զԱ.մինն . քանզի զի զըր ասեան՝ նա ոչ գիտէ ։ Զի դու բարւոք գո-
18 հանաս , այլ ընկերն ոչ շինի ։ Գոհանամ զԱստուծոյ *վասն ամենեցուն ձեր՝ առաւել լեզուաւ խօսիմ ։՚՚
19 Ա.յլ ՚ի մէջ եկեղեցւոյ կամիմ բանս հինգ մտօք խօսել՝ զի և զայլս խրատիցեմ, քան զբազում բանս՝ լեզուաւ ։
20 Եղբարք , մի՛ լինիք տղայք մտօք , այլ ՚ի չարեաց տղայացարուք , և մտօք կատարեալ լինիջիք ։
21 Գ.անդի և յօրէնսն գրեալ է եթէ Յօտար լեզուս և ՚ի շրթունս օտարոտիս խօսեցայց ընդ ժողովրդեանդ ընդ այդմիկ , սակայն և ոչ այնպէս լսելիցեն ինձ ,
22 ասէ Տէր ։ Ա.պա ուրեմն լեզուք նշանակի վասն են՝ ոչ հաւատացելոց , այլ անհաւատից . իսկ մարգարէութիւն՝ ոչ անհաւատից , այլ հաւատացելոց ։
23 Ա.պա եթէ գայցէ եկեղեցին ամենայն ՚ի մի վայր , և ամենեքին ՚ի լեզուս խօսիցին , և մտանիցեն անդր տգէտք կամ անհաւատք , ո՞չ ասիցեն եթէ զի մի-
24 լիդ ։ Իսկ եթէ ամենեքին մարգարէանայցեն , և մտանիցէ ոք անդր անհաւատ կամ տգէտ , յան-
25 դիմանիցէ յամենեցունց , և քննի յամենեցունց . Եւ գաղտնիք սրտի նորա յայտնի լինին . և ապա անկեալ ՚ի վերայ երեսաց՝ երկիրպագանիցէ Աստուծոյ , և խոստովան լինիցի Թէ Ա.ստուած է ՚ի ձեզ ։
26 Եւ արդ զի՞նչ իցէ՝ եղբարք , յորժամ ՚ի մի վայր ժողովիցիք , իւրաքանչիւր ոք ՚ի ձէնջ եթէ

* Յոյնն՝ զի քան զամենեսին զձեզ առաւել լեզուօք խօսիմ ։

սաղմոս ունիցի , եթէ վարդապետութիւն ունիցի , եթէ յայտնութիւն ունիցի , եթէ լեզուս ունիցի ,
27 եթէ թարգմանութիւն ունիցի , ամենայն ՚ի շինած լինիցի ։ Եթէ ՚ի լեզուս ոք խօսեսցի՝ երկուք , և եթէ եւս աւելի՝ երեք , և ապա մի ըստ միոջէ , և մինն
28 թարգմանիցէ ։ Ա.պա եթէ չիցէ ոք որ թարգմանիցէ , լուռ լիցի յեկեղեցւոջն , ընդ միտս իւր և ընդ Ա-
29 ստուծոյ խօսեսցի ։ Բայց մարգարէք երկուս կամ երեք խօսեսցին , և այլքն քննեսցեն ։ Ա.պա եթէ այլ ումեք որ նստիցին՝ յայտնեսցի , առաջինն լռեսցէ ։
31 Գ.անզի կարող էք ամենեքին մի ըստ միոջէ մարգարէանալ , զի ամենեքեան ուսանիցին և ամենեքեան
32 մխիթարեսցին ։ Գ.անդի և հոգիք իսկ մարգարէից
33 մարգարէից հնազանդին ։ Զի ոչ եթէ խռովութեան է Աստուած՝ այլ խաղաղութեան , որպէս յամենայն եկեղեցիս սրբոց ։
34 Կանայք յամենայն եկեղեցիս լուռ լիցին , զի ոչ հրամայի նոցա խօսել՝ այլ հնազանդ լինել , որպէս
35 և օրէնքն իսկ ասեն ։ Ա.պա եթէ ուսանել ինչ կամիցին , ՚ի տան զարս իւրեանց հարցանիցեն . քանզի անպատեհ է կնոջ մարդոյ եկեղեցւոջ խօսել ։
36 Եթէ ՚ի ձէ՞նջ բանն Աստուծոյ ել , և կամ առ ձէ՞ղ
37 միայն եհաս ։ Իսկ եթէ ոք համարիցի մարգարէ լինել կամ հոգեւոր , *գիտասցէ զոր գրեցիդ առ
38 ձեզ Թէ Տեառն պատուիրանք են ։ Ա.պա Թէ ոք
39 տգիտանայցէ , տգիտասցի ։ Ա.յսուհետեւ , եղբարք , նախանձեցարուք մարգարէանալ , և զխօսելն լե-

* Յոյնն՝ ստուգիւ գիտասցէ

40 զօրաք մի՛ արգելուք ։ Եւ ամենայն ինչ *ձեր պարկեշտութեամբ և ըստ կարգի լինիցի ։

Գլ. ԺԵ

1 Յուշացանեմ ձեզ, եղբարք, զաւետարանն *իմ, զոր աւետարանեցի ձեզ, զոր և ընկալարուք, յոր և
2 հաստատեալդ էք · Որով †ապրեցեքն, որով բանիւ աւետարանեցի ձեզ Թէ ունիցիք · բայց եթէ ի
3 զուր ինչ հաւատացէք ։ Զի ես ձեզ զայն նախ աւանդեցի՝ զոր և եան ընկալայ, Թէ՝ և Քրիստոս
4 մեռաւ վասն մեղաց մերոց ըստ գրոց, եւ զի թաղեցաւ, Թէ՝ և յարեաւ յաւուր երրորդի՝ ըստ գրոց ·
5 Եւ Թէ երեւեցաւ Կեփայի, և ապա երկոտասանիցն ։ Ապա երեւեցաւ աւելի եւս քան զհինգ
6 հարիւր եղբարց միանգամայն · յորոց բազումք կան մինչեւ ցայժմ, և ոմանք ննջեցին ։ Եւ ապա երե-
7 ւեցաւ Յակոբայ, ապա առաքելոցն ամենեցուն ։
8 Յուսկ յետոյ քան զամենեսին իբրեւ ‡անարգի մի-
9 ոյ՝ երեւեցաւ և ինձ ։ Զի ես իսկ եմ տրուսպն առաքելոց, որ չեմ իսկ արժանի Թէ կոչեցայց առա-
10 քեալ, զի հալածեցի զեկեղեցին Աստուծոյ ։ Այլ շնորհօքն Աստուծոյ եմ · զինչ և իցեմ. և շնորհք
նորա որ յիս՝ ընդունայն ինչ ոչ եղեն · այլ առաւել քան զնոսա ամենեսին վաստակեցի, և ոչ եթէ
11 ես՝ այլ շնորհքն Աստուծոյ որ ընդ իս ։ Արդ եթէ ես, և եթէ նոքա այսպէս քարոզեցաք, և դուք այսպէս հաւատացէք ։

* Ի §ոմանս չէ ։ † §այլն՝ ապրիցիք
‡ §այլն՝ գուցէ § §այլն՝ վիժածի

12 Այսպ եթէ Քրիստոս քարոզի Թէ ի մեռելոց յարուցեալ է, զիա՞րդ ասեն ոմանք ի ձէնջ եթէ
13 յարութիւն մեռելոց չէք ։ Եթէ յարութիւն մեռե-
14 լոց չէք, ապա և Քրիստոս չէ յարուցեալ, Եւ եթէ
15 Քրիստոս չիցէ յարուցեալ, ընդունայն է քարոզու-
թիւնն մեր, ընդունայն են և հաւատքն ձեր · Եւ գտանիցիմք սուտ վկայք Աստուծոյ · զի վկայեցաք զԱստուածոյ Թէ յարոյց զՔրիստոս · զոր ոչն արգեօք
16 յարոյց՝ եթէ մեռեալք ոչ յառնիցեն ։ *Իսկ եթէ մեռեալք ոչ յառնեն, ապա և Քրիստոս չէ յարու-
17 ցեալ ։ Եւ եթէ Քրիստոս չիցէ յարուցեալ, ընդունայն են հաւատքն ձեր · և տակաւին †ի նմին մեղս
18 կայցէք։՝ Իսկ արդ որ ննջեցինն ի Քրիստոս, ‡կորեան։՝
19 Եա՞ն արդեօք։՝ եթէ այսու կենաւքս միայն յուսացեալ եմք ի Քրիստոս, ողբալիք եմք քան զամենայն
20 մարդիկ։ Այլ արդ Քրիստոս յարուցեալ է ի մեռելոց՝ առաջին պտուղ ննջեցելոց ։ Քանզի մարդով
21 եղեւ մահ, և մարդով յարութիւն մեռելոց ։ Որպէս Ադամաւն ամենեքեան մեռանին, նոյնպէս և Քրիս-
22 տոսիւ ամենեքեան կենդանասցին ։ Իւրաքանչիւր յիւրում կարգի · նախ Քրիստոս, և ապա Քրիս-
23 տոսեանք ի գալստեան նորա ։ Եւ ապա կատարած, յորժամ տացէ ի ձեռս ղԹադաւորութիւնն Աստուծոյ և Հօր, յորժամ խափանեսցէ զամենայն իշխանութիւնս և զամենայն պետութիւն
25 և զզօրութիւն ։ Զի պարտ է նմա թագաւորել՝ մինչեւ դիցէ զամենայն թշնամիս ի ներքոյ ոտից իւրոց։

* §այլն՝ Զի † §այլն՝ ի մեղս ձեր կայք ։
‡ §այլն՝ կորեան ։

26 Յետին Թշնամին խափանի մահ . *Եւ զամենայն ինչ
27 հնազանդ արար ի ներքոյ ոտից նորա : Ա.ՀԼ յոր-
ժամ ասիցէ թէ հնազանդեալ է նմա ամենայն ,
յայտ է թէ բաց յայնմանէ՝ որ հնազանդեցոյց
28 նմա զամենայն : Ա.ՀԼ յորժամ հնազանդեսցի նմա
ամենայն՝ յայնժամ և ինքն Որդի հնազանդեսցի
այնմ , որ հնազանդեցոյց նմա զամենայն . զի եղիցի
29 Աստուած ամենայն յամենայնի : Ապա թէ ոչ՝ զի՞նչ
դործիցեն , որ մկրտիցինն վասն մեռելոց , եթէ ա-
դարեւ մեռեալք ոչ յառնիցեն . ընդէ՞ր իսկ բնաւ
30 մկրտին վասն նոցա , Ընդէ՞ր և մեք ճգնիմք յա-
31 մենայն ժամ. Եւ հանապազ †մեռանիմք . ի պար-
ծանս ձեր երդնում՝ ‡եղբարք , զոր ունիմ ի Քրիս-
32 տոս Յիսուս ի Տէր մեր : Եթէ §վասն մարդոյ՝ ի
դաղանամարտի լեալ էի Եփեսոս , զի՞նչ օգուտ
էր ինձ , եթէ մեռեալք ոչ յառնեն . կերիցուք
33 արբցուք՝ քանզի վաղիւ մեռանիմք : Մի՛ խաբիք .
34 ապականեն զբարս քաղցունս բանք չարք : Սթա-
փեցարուք արդարութեամբ և մի՛ մեղանչէք , զի
դիտութիւն Աստուծոյ ոչ ունին ոմանք . առ ա-
մօթոյ ձերոյ ասեմ :
35 Ա.ՀԼ ասիցէ ոք , Զի՞նդ յառնեն մեռեալք՝
36 կամ որո՞վ մարմնով դայցեն : Անմիտ , դու զոր
սերմանեան , ոչ կենդանանայ՝ եթէ ոչ մեռանիցի :
37 Եւ զոր սերմանեան , ոչ զնոյն մարմին որ ծնանելոցն
իցէ՝ սերմանեա , այլ հատ մերկ . եթէ ցորենոյ իցէ
38 և եթէ այլոց ‡սերմանեաց : Եւ աստուած տայ նմա

* Յոյն՝ Զի
† Յոյն՝ մեռանիմ
‡ Ի Յոյն էր :
§ Յոյն՝ մարդկօրէն

մարմին՝ որպէս և կամի , և իւրաքանչիւր սերմա-
39 նեաց զիւր մարմին : Ոչ ամենայն մարմին նոյն մար-
մին է , այլ այլ մարմին է մարդկան և այլ մարմին
անասնոց , այլ մարմին թռչնոց և այլ մարմին
40 ձկանց : Եւ մարմինք երկնաւորք , և մարմինք երկ-
րաւորք . այլ այլ փառք երկնաւորաց , և այլ փառք
41 երկրաւորաց . Ա.ՀԼ փառք արեգական , և այլ
փառք լուսնի , և այլ փառք աստեղաց . և աստղ
42 քան զաստղ առաւել է փառօք : Նոյնպէս և յա-
րութիւն մեռելոց . սերմանի ապականութեամբ և
43 յառնէ առանց ապականութեան . Սերմանի անար-
դութեամբ և յառնէ փառօք . սերմանի տկարու-
44 թեամբ և յառնէ զօրութեամբ . Սերմանի մարմին
հնչասւոր և յառնէ մարմին հոգեւոր . եթէ գոյ
45 մարմին հնչասւոր , գոյ և հոգեւոր : Որպէս և գրեալ
է , եղեւ մարդն առաջին Ադամ ի շունչ կենդա-
46 նի , երկրորդ Ադամ ի հոգի կենդանարար : Բայց
ոչ նախ հոգեւորն . այլ հնչասւորն , և ապա հոգե-
47 ւորն : Առաջին մարդն յերկրէ հողեղէն , իսկ երկ-
48 րորդ մարդն՝ Տէր յերկնից : Որպէս հողեղէնն , նոյն-
պէս և հողեղէնքս , և որպէս երկնաւորն , նոյնպէս
49 և երկնաւորքն : Եւ որպէս զգեցաք զպատկեր հողե-
50 ղինն , զգեցցուք և զպատկեր երկնաւորին : Բայց
զայս ասեմ , եղբարք , եթէ մարմին և արիւն զար-
քայութիւնն Աստուծոյ ժառանգել ոչ կարեն . և ոչ
ապականութիւն զանապականութիւնն ժառանգէ :
51 Այր խորհուրդ մի ասեմ ձեզ , *Ամենեքեան

* Յոյն՝ Ոչ ամենեքեան ննջեսցուք, այլ ամենեքեան
նորոգեսցուք ,

ննջեսցուք , այլ ոչ ամենեքեան նորոգեսցուք ,՚՚
52 Յանկարծակի յակա՛ն թո՛թափել՝ ՚ի փող յետին ,
քանզի փող հարկանի, և մեռեալք յարիցեն առանց
53 ապականութեան , և մեք նորոգեսցուք : Զի պարտ
է ապականութեանս այսմիկ զգենուլ զանապակա-
նութիւն , և մահկանացուիս այսմիկ զգենուլ զան-
54 մահութիւն : Ա՛յլ յորժամ մահկանացուս այս
զգեցցի զանմահութիւն , և ապականութիւնս՝ զա-
նապականութիւն , յայնժամ եղիցի բանն որ գրե-
55 ցաւ եթէ Ընկլաւ մահ ՚ի յաղթութիւն : *Ո՞ւր
է , մա՛հ , յաղթութիւն քո . ո՞ւր է , դժոխք , խայ-
56 թոց քո :՚՚ Խայթոց մահու մեղք են , և զօրութիւն
57 մեղաց՝ օրէնք : Ա՛յլ շնորհ Աստուծոյ , որ ետ մեզ
զյաղթութիւն ՚ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի
58 Քրիստոսի : Ա՛յսուհետեւ , եղբարք իմ սիրելիք ,
հաստատուն եղերուք , անշարժ †կացէք , առաւել
լերուք ՚ի գործս Տեառն յամենայն ժամ . գիտասջիք զի վաստակք ձեր ոչ են ընդունայն առաջի
Տեառն :

ԳԼ. Ժ.Զ

1 Ա՛յլ վասն հաշուին որ ՚ի սուրբսն է , որպէս պա-
տուէր ետուս եկեղեցեացն Գաղատացւոց , նոյնպէս
2 և դուք առնիջիք : Ըստ իւրաքանչիւր միաշաբա-
թուցն իւրաքանչիւր ոք ՚ի ձէնջ ‡անձին իւրում՚՚՚

* Յայլն՝ Ո՞ւր է , մա՛հ , խայթոց քո . ո՞ւր , դժոխք ,
յաղթութիւն քո :
† Ի յայլն կէտ :
‡ Յայլն՝ առ իւր

3 գանձեսցէ՝ որ ինչ և յաջողեսցի : Զի մի՛ յորժամ
դայցեմ , յայնժամ հաշիւք լինիցին . այլ յորժամ
եկից՝ զոր միանգամ ընտրեցէք թղթովք , զնոսա
առաքեցից տանել զշնորհն ձեր Յերուսաղէմ :
4 Ապա թէ արժան լցէ և ինձ երթալ՝ ընդ իս երթի-
5 ցեն : Ա՛յլ եկից առ ձեզ յորժամ ՚ի Մակեդովնիա անցանիցեմ , *բայց իբրեւ ընդ Մա-
6 կեդոնիա ,՚՚ թէ դեպ լիցի՝ առ ձեզ մնացից և կամ
ձմերեցից , զի և դուք յուղարկիցէք զիս՝ ուր և
7 երթալցն եմ : Զի ոչ կամիմ զձեզ այժմ ՚ի հա-
րեւանցի տեսանել . ակն ունիմ ժամանակ ինչ առ-
8 նել առ ձեզ , եթէ Տէր հրամայեսցէ : Բայց այժմ
9 լինիմ Եփեսոս մինչեւ ցՊենտեկոստէ . Զի դուռն
բացեալ է ինձ մեծ և կարեւոր , և հակառակորդք
բազումք են :
10 Ա՛րդ եթէ եկեսցէ Տիմոթէոս՝ տեսջիք զի արդ ա-
ներկիւղ լինիցի առ ձեզ . զի զգործ Տեառն գործէ՝
11 որպէս և ես : Մի՛ ոք զնա անդունեսցէ , և յու-
ղարկեսջիք զնա խաղաղութեամբ զի եկեսցէ առ ես .
12 քանզի ակն ունիմ նմա եղբարբք հանդերձ : Ա՛յլ
վասն Ապողոսի եղբօր յոյժ աղաչեցի զնա՝ զի եկեսցէ
առ ձեզ եղբարբք հանդերձ . և արդեօք ոչ էին
կամք՝ զի այժմ եկեսցէ , այլ եկեսցէ յորժամ և
պարապեսցէ :
13 Հակեցէք , հաստատուն կացէք ՚ի հաւատս , ժրա-
14 ջարեցէք , զօրացարուք : Ա՛մենայն ինչ ձեր սիրով
լինիցի :

* Յայլն՝ քանզի ընդ Մակեդոնիա՛ս անցանիցեմ ,

15 Աղաչեմ զձեզ, եղբարք, գիտէք զտունն *Սաե-
փանեայ և փորտունատեայ՝ որ են պտուղ Ա-
քայեցւոց.՝՝ և ի պաշտօն սրբոցն կարգ եղեն զան-
16 ձինս. Զի և դուք հնազանդ լինիցիք այնպիսեացն,
և ամենայնի որ գործակից եղեալ և վաստակակից։
17 Ուրախ եղէ ի գալ Սաեփանեայ և փորտունատեայ
և Աքայիկոսի, զի զձեր պակասութիւնդ նոքա լը-
18 ցին. Քանզի հանգուցին զոգի իմ և զձեր. արդ
ծանիջիք զայնպիսիսն։
19 Որչափ տան ձեզ եկեղեցիքն Ասիացւոց. ողջոյն
շատ տան ձեզ ի Տէր Ակիւղաս և Պրիսկիլլա հան-
20 դերձ առանին եկեղեցեաւն իւրեանց։ Ողջոյն տան
ձեզ եղբարք ամենեքեան։ Ողջոյն տուք միմեանց
21 ի համբոյր սրբութեան։ Ողջոյնդ այդ իմոյ ձեռնն
22 Պօղոսի է։ Եթէ ոք ոչ սիրէ զՏէր †Յիսուս, եղիցի
23 նզովեալ՝ մարան աթա։ Շնորհք Տեառն մերոյ Յի-
24 սուսի Քրիստոսի ընդ ձեզ։ Եւ սէրն իմ ընդ ամե-
նեսեան ձեզ ի Քրիստոս Յիսուս։ Ամէն։

---

* Յոյն՝ Սաեփանեայ որ է առաջին պտուղ Ա-
քայեցւոց. † Յոյն՝ Յիսուս Քրիստոս

Ա՝ կրնթացքս առաջին խօսքի ծրեցաւ ի փիլիպէսի՝
ի յետ Սաեփանեայ և փորտունատեայ և Աքայիկոսի։

ԹՈՒՂԹ

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼԻՑ

ԱՌ ԿՈՐՆԹԱՑԻՍ ԵՐԿՐՈՐԴ

ԳԼ. Ա

1 Պօղոս առաքեալ Յիսուսի Քրիստոսի կամաւն
Աստուծոյ, և Տիմոթէոս եղբայր. Եկեղեցւոյդ Ա-
ստուծոյ որ է ի Կորնթոս՝ սրբովքդ ամենեքեամբք
2 որ են յամենայն կողմանս Աքայեցւոց. Շնորհք
ընդ ձեզ և խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ մեր-
մէ և ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ։
3 Օրհնեալ է Աստուած և Հայր Տեառն մերոյ Յի-
սուսի Քրիստոսի, Հայր գթութեանց և Աստուած
4 ամենայն մխիթարութեան. Որ մխիթարէն զմեզ
յամենայն նեղութիւնս մեր, առ ի կարող լինել
մեզ մխիթարել զայնոսիկ՝ որ յամենայն նեղու-
թիւնս իցեն, մխիթարութեամբն՝ որով մեք մխի-
5 թարիմք յԱստուծոյ։ Զի որպէս առատանան չար-
չարանքն Քրիստոսի ի մեզ, նոյնպէս և ի մեզն
Քրիստոսի առատանայ մխիթարութիւնն մեր։
6 Զի եթէ նեղիմք, վասն ձերոյ մխիթարութեան և
փրկութեան, և եթէ մխիթարիմք, վասն ձերոյ
մխիթարութեան և փրկութեան, որ յաջողեալն է
համբերութեամբ նոցին չարչարանաց՝ զոր և մեքն

7 չարչարիմք . Եւ յայն մեր հաստատուն է վասն ձեր ,
քանզի դիտեմք եթէ որպէս կցորդ եմք չարչարա-
8 նացն , նոյնպէս և մխիթարութեանն : Քանզի ոչ
կամիմ տգէտ լինել ձեզ , եղբարբ , վասն նեղու-
թեանն մերոյ եղելոյ ՚ի Ասիա . զի առաւել քան
զկար մեր ծանրացաք , մինչեւ անյոյս լինելոյ մեզ
9 և ՚ի կենաց : Այլ անձամբ † յանձինս զվճիռ մահու
ընկալաք , զի մի՛ յանձինս ապաստանիցիմք , այլ
10 յԱստուած որ յարուցանէ զեռելսն . Որ յայնմ-
11 պիսի մահուանէ փրկեաց զմեզ և փրկեսցէ . *Քան-
զի յուսացեալ եմք , եթէ տակաւին փրկեսցէ օգ-
նականութեամբ աղօթից ձերոց վասն մեր . զի ՚ի
բազմադէմ շնորհացն՝ որ ՚ի մեզ , բազմօք յաճա-
խեսցեն գոհութիւնքն վասն մեր :
12 Քանզի պարծանք մեր այս են , վկայութիւն մի-
տաց մերոց , զի †սրբութեամբ և ստուգութեամբ
Աստուծոյ ,՚՚ և ոչ մարմնեղէն իմաստութեամբ ,
այլ շնորհօքն Աստուծոյ շրջեցաք յաշխարհի , բայց
13 առաւել եւս առ ձեզ : Քանզի ոչ եթէ այլ ազգ
ինչ գրեմք առ ձեզ , այլ զոր ընթեռնուցուքն և
դիտակ լինիցիք . քանզի յուսամ եթէ մինչեւ ՚ի
14 վախճան դիտիցէք . Որպէս և խելամուտ եղէք մեզ
փոքր ՚ի շատէ , զի պարծանք ձեր եմք , որպէս և
դուք մեր՝ յաւուրն ‡Տեառն մերոյ Յիսուսի Քրիս-
տոսի :՚՚
15 Եւ յայս ապաստան՝ կամէի նախ առ ձեզ գալ ,

* Յոյն՝ Յոր
†Յոյն՝ պարզութեամբ և անկեղծութեամբ աստ՚ւած
Աստուծոյ , ‡ Յոյն՝ Տեառն Յիսուսի

16 զի դուք կրկին շնորհս ընդունիջիք . Եւ ՚ի ձէնջ
երթալ ՚ի Մակեդոնիա . և դարձեալ ՚ի Մակե-
դոնիայ գալ առ ձեզ , և ՚ի ձէնջ յուղարկել ՚ի
17 Հրէաստան : Իսկ եթէ զայս խորհեցայ՝ միթէ թե-
թեւութեա՞մբ ինչ գնացի . և կամ զոր խորհիմ՝
ըստ մարմնո՞յ ինչ խորհիցիմ , այլ զի եղիցի Այնէն
18 կողմանէ այո՛ այո , և ոչն՝ ոչ : Հաւատարիմ է
Աստուած՝ զի բանն մեր որ առ ձեզ *Եհաս՝ ոչ է
19 այո և ոչ : Քանզի Որդին Աստուծոյ Յիսուս Քրիս-
տոս , որ ՚ի ձեզ մեօք քարոզեցաւ , ինեւ և Սի-
ղուանոսիւ և Տիմոթէոսիւ , ոչ եղեւ այո և ոչ , այլ
20 այոն ՚ի նմին եղեւ : Զի որչափ աւետիքն Աստու-
ծոյ՝ են ՚ի նմա Այո՛ն , *վասն որոյ՚՚ և նովին Ամէնն՝
21 մեօք ՚ի փառս Աստուծոյ : Այլ որ հաստատեացն
զմեզ ձեօք հանդերձ ՚ի Քրիստոս , և որ օծ զմեզ ,
22 Աստուած է . Որ և կնքեաց զմեզ , և ետ զաւհա-
23 ւստիայ Հոգւոյն ՚ի սիրտս մեր : Այլ ես վկայ
զԱստուած կոչեմ անձին իմոյ , զի վասն խնայելոյ
՚ի ձեզ ոչ եւս եկի ՚ի Կորնթոս . զի ոչ եթէ տի-
րեմք ձեզ հաւատովքս՝ այլ գործակից եմք շնոր-
հացդ ձերոց . քանզի հաւատովք հաստատեալ
կայք :

Գլ . Բ

1 Բայց զայս †և եթ՚՚ ընտրեցի , զի մի՛ միւսանգամ
2 տրտմութեամբ եկից առ ձեզ . Զի եթէ ես տրըտ-
մեցուցանեմ զձեզ , և ո՞վ է որ ուրախ առնիցէ

* Ի Յոյն չէ :

† Յոյն՝ անձամբ

3 զիս, եթէ ոչ՝ որ տրամիցին յ(ինէն։ Եւ զայս զի
գրեցի՝ զի մի՛ յորժամ գայցեմ, տրտմութիւն ինչ
կրիցեմ, ուստի արժանդ իցէ ինձ ուրախ լինել.
յուսացեալ եմ՝ ի ձեզ ամենեսին, զի իմ ուրա-
4 խութիւնս ձեր ամենեցուն է։ Զի ի բազում վըշ-
տաց և ի նեղութենէ սրտի գրեցի առ ձեզ բա-
զում՝ արտասուօք. ոչ զի տրտմիջիք, այլ զի զսէրն
իմ գիտասջիք՝ զոր ունիմ առաւելապէս առ ձեզ։
5 Ապա եթէ ոք տրամեցոյց, ոչ եթէ զիս տրամեցոյց,
այլ փոքր ի շատէ, զի մի՛ ծանրացայց ամենեցուն
6 ձեզ։ Շատ է այնպիսւոյն պատուհասն այն՝ որ ի
7 բազմաց անաի է։ Այսուհետեւ նմին հակառակ՝
մանաւանդ շնորհել ձեզ նմա և մխիթարել. զի մի՛
յառաւել տրտմութենէն ընկղմեսցի այնպիսին։
8 Վասն որոյ աղաչեմ զձեզ՝ հաստատել ի նա զսէրն։
9 Վասն այնորիկ իսկ և գրեցի, զի գիտիցէ առ-
10 ից զձեր եթէ յամենայնի հպատակ իցէք։ Զի եթէ ումեք
շնորհիցէք՝ և ես. քանզի և ես եթէ շնորհիցեմ,
զոր ինչ շնորհիցեմն՝ վասն ձեր ի դէմս Քրիստոսի.
11 Զի մի՛ զրկեցիմք ի Սատանայէ. քանզի չեմք ինչ
անտեղեակ խորհրդոցն նորա։
12 Այլ իբրեւ հասի ես ի Տրովադա յաւետարանն
13 Քրիստոսի, և դուռն բաց էր ինձ ի Տէր, Ոչ ետու
հանգիստ հոգւոյ իմում. քանզի ոչ գտի ես անդ
զՏիտոս զեղբայր իմ. այլ հրաժարեալ ի նոցանէ՝
14 գնացի ի Մակեդոնիա։ Այլ Աստուծոյ շնորհքն
որ յամենայնի հաւակ հարկանէ զմեզ ի Քրիստոս
*յիսուս, և զհոտ գիտութեանն իւրոյ յայտնի

* Ի ցոյն չէ։

15 առնէ մեզ յամենայն տեղիս. Զի հոտ անոյշ եմք
Քրիստոսի առ Աստուած՝ ի մէջ փրկելոցն և ի մէջ
16 կորուսեալոցն. Ոմանց հոտ մահուանէ ի մահ, և ո-
մանց հոտ կենդանութենէ ի կեանս. և առ այս ո՞
17 բաւական իցէ։ Քանզի ոչ եմք իբրեւ զայլսն, որ
վաճառական լինին բանին Աստուծոյ. այլ իբրեւ
ի հաստատութենէ, այլ իբրեւ յԱստուծոյ՝ ա-
ռաջի Աստուծոյ ի Քրիստոս խօսիմք։

Գլ. Գ

1 Սկսանիմք այսուհետեւ վերստին զանձինս ընծա-
յեցուցանել. թէպէտ և ոչ պիտոյ իցեն մեզ, որ-
պէս ոմանց՝ թուղթք ընծայութենեան առ ձեզ կամ
2 ի ձէնջ։ Այլ թուղթք մեր գուք էք՝ գրեալ ի
սիրտս մեր, ծանուցեալ և ընթերցեալ յամենայն
3 մարդկանէ. Յայտնեալք՝ զի էք թուղթք Քրիստոսի,
պաշտեցեալ ի մէնջ. և գրեալ՝ ոչ մրով, այլ
Հոգւովն Աստուծոյ կենդանւոյ. ոչ ի տախտակս
քարեղէնս, այլ ի տախտակս սրտի մարմնեղէնս։
4 Յայս մի այսպիսի ունիմք ի ձեռն Քրիստոսի առ
5 Աստուած. Իբր ոչ եթէ անձամբ բաւական եմք
խորհել ինչ իբրեւ ի մէնջ. այլ բաւականութիւնն
6 մեր յԱստուծոյ է. Որ և բաւականս արար զմեզ՝
պաշտօնեայս Նորոց կտակարանացս՝ ոչ գրով, այլ
Հոգւով. զի գիրն սպանանէ, այլ Հոգին կեցու-
7 ցանէ։ Զի եթէ պաշտօնն մահու գրով գրոշմեալ
ի տախտակսն քարեղէնս՝ եղեւ փառաւք, զի մի՛ կա-
րասցեն հայել որդիքն Իսրայէլի յերեսան Մովսիսի՝
վասն փառաց երեսաց նորա, որ խափանելոցն էր.

8 Ո՞րչափ եւս առաւել պաշտօն հոգւոյն եղիցի փա-
9 ռաք ։ Զի եթէ պաշտօն դատապարտութեանն փա-
ռաք էր , ո՞րչափ եւս առաւել պաշտօն արդարու-
10 թեանն փառաք ։ Քանզի ոչ եթէ փառաւորի փա-
ռաւորեալն յայսմ մասին՝ վասն առաւելութեան
11 փառացն ։ Զի եթէ որ խափանելոցն էր՝ այն փա-
ռաք էր , ո՞րչափ եւս առաւել որ գալոցն է՝ փա-
12 ռաք իցէ ։ Եւ արդ՝ զի ունիմք այսպիսի յոյս , բա-
13 զում համարձակութեամբ վարեսցուք . Եւ ոչ որ-
պէս Մովսէս արկանէր քող ի վերայ երեսաց իւրոց ,
վասն չհայելոյ որդւոցն Իսրայէլի ի վախճան խա-
14 փանելոցն ։ Այլ կուրացան միտք նոցա . քանզի
մինչեւ ցայսօր ժամանակի նոյն քող ձգեալ կայ ի
վերայ ընթերցուածոյ Հին Կտակարանացն . Եւ ոչ
15 վերանայ , զի Քրիստոսիւ խափանելոց է ։ Այլ մին-
չեւ ցայսօր՝ յորժամ ընթեռնուն զՄովսէս նոյն
16 առագաստ կայ ի վերայ սրտից նոցա ։ Այլ յոր-
ժամ դարձցին առ Տէր , ապա վերասցի առագաստն։
17 Զի Տէր Հոգին է . ուր Հոգի Տեառն է , անդ աղա-
18 տութիւն է ։ Բայց մեր ամենեցուն բացաւ երեսօք
զփառան Տեառն իբրեւ ընդ հայելի տեսեալ՝ ի նոյն
պատկեր նորոգիմք փառաց ի փառս , որպէս եւ ի
Տեառն Հոգւոյ ։

ԳԼ· Դ

1 Վասն այսորիկ ունիմք զպաշտօնս զայս՝ որպէս եւ
2 գտաք ողորմութիւն , եւ ոչ ձանձրանամք · Այլ
հրաժարեցաք ի գաղտնեաց ամօթոյն , զի մի՛ գե-
նասցուք խորամանկութեամբ , եւ մի՛ նենգեսցուք

զբանն Աստուծոյ · այլ յայտնութեամբ ճշմարտու-
թեանն ընծայեցուսցուք զանձինս մեր առ ամենայն
3 միտս մարդկան առաջի Աստուծոյ ։ Ապա թէ իցէ
եւս ծածկեալ աւետարանն մեր , ի մեջ կորուսե-
4 լոցն է ծածկեալ · Որոց՝ աստուած աշխարհիս այ-
սորիկ կուրացոյց զսիրտս անհաւատիցն , զի մի՛ ծա-
գեսցէ ի նոսա լուսաւորութիւն աւետարանի փա-
ռացն Քրիստոսի . որ է պատկեր *անեռեւութեին
5 Աստուծոյ ։ Զի ոչ եթէ զանձինս քարոզեմք , այլ
զՅիսուս Քրիստոս զՏէր , եւ զմեզ ծառայս ձեզ
6 վասն Քրիստոսի ։ Զի Աստուած որ ասաց ի խա-
ւարէ լոյս ծագել , որ եւ ծագեաց իսկ ի սիրտս մեր
ի լուսաւորութիւն գիտութեան փառացն Աստու-
7 ծոյ ի դէմս Յիսուսի Քրիստոսի ։ Ա՛յսուհետեւ ու-
նիմք զգանձս զայս յամանս խեցեղէնս , զի առա-
ւելութիւն զօրութեանն իցէ Աստուծոյ , եւ ոչ ի
8 մէնջ ։ Յամենայնի նեղեալք՝ այլ ոչ նուաղեալք ·
9 կարօտեալք՝ այլ ոչ տարակուսեալք · Հալածեալք՝
այլ ոչ լքեալք · չարչարեալք՝ այլ ոչ սատակեալք ·
10 Յամենայն ժամ զմահն Յիսուսի ի մարմինս մեր
կրեսցուք , զի եւ կեանքն Յիսուսի ի մարմինս մեր
11 յայտնեսցին · Քանզի միշտ մեք որ կենդանիքս եմք՝
ի մահ մատնիմք վասն Յիսուսի , զի եւ կեանքն Յի-
սուսի յայտնի լիցին ի մահկանացու մարմինս մեր ։
12 Այսուհետեւ մահ ի մեզ զօրանայ , եւ կեանք՝ ի
13 ձեզ ։ Արդ ունիմք զնոյն հոգի հաւատոյ , որպէս եւ
գրեալ է , Հաւատացի , վասն որոյ եւ խօսեցայ . եւ
14 մեք հաւատամք , վասն որոյ եւ խօսիմք իսկ ։ Զայս

* ի ցոյնին էէ ։

գիտեմք եթէ որ յարոյցն զՅիսուս, և զմեզ ընդ
Յիսուսի յարուսցէ և յանգիման կացուսցէ ձեօք
15 հանդերձ. Քանզի ամենայն ինչ վասն ձեր է, զի
շնորհքն յաճախեալք ի բազմից ի գոհութիւնէ
16 անտի՝ առաւելեսցին ի փառս Աստուծոյ: Վասն
որոյ և ոչ ձանձրանամք. այլ թէպէտ և արտաքին
մարդս մեր ապականի, այլ ներքին մարդն մեր նո-
17 րոգի օր ըստ օրէ: Զի առժամայն յաճախութիւն
թեթեւ նեղութեանս մերում՝ ի յաւիտենական
առաւելութիւն զվեծութիւն փառացն գործէ ի
18 մեզ: Քանզի ոչ գիտեմք զերեւելիսն՝ այլ զանե-
րեւոյթսն. զի երեւելիքս առ ժամանակ մի են, և
աներեւոյթքն՝ յաւիտենականք:

Գլ. Ե

1 Քանզի գիտեմք եթէ երկրաւոր տաճար շինուա-
ծոյս մերոյ քակտեսցի, շինած յԱստուծոյ ունիմք՝
տաճար առանց ձեռագործի, յաւիտենական յեր-
2 կինս: Եւ ընդ այս տաղտկամք, քանզի զնակու-
3 թիւնն երկնից փափագեմք զգենուլ. Միայն թէ
4 յորժամ զգենուիցուքն՝ ոչ մերկ գտանիցիմք: Քանզի
որ եմք ընդ յարկաւս ընդ այսուիկ՝ տաղտկամք
ծանրացեալք, զի ոչ կամիմք մերկանալ, այլ զգես
ի վերոյ այսր զգենուլ, զի ընկղմեսցի մահկանաւ-
5 ցուս ի կենաց անտի: Աւյլ որ յաջողէն մեզ ի սոյն՝
Աստուած է, որ եւս մեզ զառհաւատչեայ Հոգւոյն:
6 Ուրդ համարձակիմք յամենայն ժամ՝, և գիտեմք
եթէ որչափ յամեմք ի մարմնի աստ՝ օտարանամք
7 ի Տեառնէ: Զի հաւատովք գնամք և ոչ կարծեօք:

8 Աւյլ համարձակիմք՝ և առաւել եւս հաճեալ եմք
ելանել ի մարմնոյ աստի և մնանել առ Աստուած:
9 Վասն որոյ և առատանամք, զի եթէ յամիցեմք
10 և եթէ ելանիցեմք՝ հաճոյ և եթ իցեմք նմա: Քան-
զի ամենեցուն մեզ յանգիման լինել կայ առաջի
ատենին Քրիստոսի, զի ընկալցի *իւրաքանչիւր իւ-
րով մարմնով՝ զոր ինչ գործեաց յառաջ՝ եթէ բա-
11 րի և եթէ չար: Իսկ արդ զսոն Տեառն գիտելով
չարի՝ զմարդիան լինչ միտս հաճեմք. սակայն առա-
ջի Աստուծոյ †յայտնելոց եմք. բայց ես յուսամ
12 և ի ձեր միտս յայտնի լինել: Իբր ոչ եթէ միւս-
անգամ՝ զանձինս լինչ ընծայեցուցանեմք ձեզ, այլ
պատճառս տամք ձեզ պարծանաց վասն մեր. զի
ունիցիք առ այնոսիկ՝ որ առ տէսն պարծիցին և
13 ոչ սրտիւք: Զի եթէ առանցաք լինչ՝ այն Աստու-
14 ծոյ է. և եթէ զգաստանամք՝ այն ձեր է: Զի սէրն
Քրիստոսի ատիպէ զմեզ, քննել զայս, զի եթէ մին
վասն ամենեցուն մեռաւ, ապա ուրեմն ամե-
15 նեքեան մեռեալ էին. Եւ ի վերոյ ամենեցուն մե-
ռաւ, զի որ կենդանիքն իցեն՝ մի անձանց իցեն
կենդանիք, այլ այնմ որ ի վերոյ նոցայն մեռաւ
16 և յարեաւ: Աւյսուհետեւ մեք ոչ զոք գիտեմք
մարմնով. զի թէպէտ և գիտեաք մարմնով զՔրիս-
17 տոս, այլ արդ ոչ ևս նոյնպէս գիտեմք: Բայց ե-
թէ ինչ ի Քրիստոս նոր արարած իցէ. զի հինն
18 անց, և արդ նոր եղեւ ամենայն: Աւյլ ամենայն
ինչ յԱստուծոյ՝ որ հաշտեցոյցն զմեզ ընդ իւր ի

* Յոյն՝ իւրաքանչիւր զոյնս ի մարմնի
† Յոյն՝ յայտնի

ձեռն *Քրիստոսի, և ետ մեզ զպաշտօնն հաշտու-
19 թեան։ Եւ քանզի Աստուած էր՝ Քրիստոսիւ
զաշխարհս հաշտեցուցանել ընդ իւր, և չհամա-
րել նոցա զմեղս իւրեանց, և եդ ի մեզ զբանն
20 հաշտութեան։ Արդ վասն Քրիստոսի պատգամա-
ւորիմք՝ որպէս և Աստուծոյ բարեխօսութեամբ
21 մեօք, աղաչեմք վասն Քրիստոսի՝ հաշտեցարուք ընդ
Աստուծոյ։ Զի զայն՝ որ ոչն գիտէր զմեղս, վասն
մեր մեզս արար, զի մեք եղիցուք նովաւ արդարու-
թիւն Աստուծոյ։

Գլ. Զ

1 Գործակից եմք ձեր և աղաչեմք, մի ընդունայն
2 զշնորհսն Աստուծոյ ընդունել ձեզ։ Զի ի ժամա-
նակի ընդունելութեան, ասէ, լուայ քեզ, և յա-
ւուր փրկութեան օգնեցի քեզ. ահաւասիկ ժամա-
3 նակ ընդունելի, ահա օր փրկութեան։ Մի՛ և մի՛
իւիք †տայցէք պատճառս, զի մի արատասցի պաշ-
4 տօնն. Այլ յամենայնի ‡ընծայեցուցէք զանձինս
§ձեր իբրեւ զպաշտօնեայս Աստուծոյ՝ համբերու-
թեամբ բազմաւ՝ ի նեղութիւնս, ի վիշտս, ի չար-
5 չարանս, ի գանս, ի բանտս, ի խռովութիւնս,
6 յաշխատութիւնս, ի հսկմունս, ի պահս, ի սըր-
բութեան, ի գիտութեան, յերկայնմտութեան,
ի քաղցրութեան, ի Հոգի Սուրբ, ի սէր՝ առանց
7 կեղծաւորութեան, ի բանս ճշմարտութեան, ի

* Յայլն՝ Յիսուսի Քրիստոսի
† Յայլն՝ տուեալ
‡ Յայլն՝ ընծայեցուցեալ
§ Ի Յունէն էր։

զօրութեան Աստուծոյ. *վասն զինուն՝ արդարու-
8 թեան որ ընդ աջմէն և ընդ ահեկէն է. փառաւք
և անարգութեամբ, դժուարութեամբ և պարսաւա-
9 նօք, իբրեւ մոլորք՝ և ճշմարիտք, իբրեւ անծա-
նօթք՝ և ծանուցեալք. իբրեւ մահկանացուք՝ և
ահաւասիկ կենդանի եմք. իբրեւ խրատեալք՝ և
10 ոչ մահատարատեալք. Իբրեւ արտմեալք՝ և հանա-
պազ ուրախ եմք. իբրեւ տնանկք՝ և զբաղումս
մեծացուցանեմք. իբրեւ ոչինչ ունիցիմք, և զա-
11 մենայն ինչ ունիմք։ Բերանք մեր բացեալ են առ
ձեզ, Կորնթացիք, և սիրտք մեր ընդարձակեալ է։
12 Ոչինչ նեղիք ի մէնջ՝ բայց եթէ ի դուխս ձեր նե-
13 ղիցէք. †Արդ զնոյն հատուցումն իբրեւ ընդ որդեակս
14 ունիմ,'' ընդարձակեցարուք և դուք։ Եւ մի լի-
նիք լծակիցք անհաւատից. քանզի զի՞նչ հաղոր-
դութիւն է արդարութեան ընդ անօրէնութեան.
և կամ զի՞նչ հաւասարութիւն է լուսոյ ընդ խա-
15 ւարի. Եւ կամ զի՞նչ միաբանութիւն է Քրիստո-
16 սի ընդ Բելիարայ. կամ զի՞նչ բաժին կայ հաւա-
տացելոյն ընդ անհաւատին. կամ զի՞նչ նմանու-
թիւն է տաճարի Աստուծոյ՝ մեհենից. ապաքէն
դուք տաճար Աստուծոյ կենդանւոյ էք, որպէս և
ասաց Աստուած թէ բնակեցայց ի նոսա և գնա-
ցից ի նոսա, և եղէց նոցա Աստուած և նոքա
17 եղիցին իմ ժողովուրդք։ Վասն որոյ ելէք ի միջոյ
նոցա և մեկնեցարուք, ասէ Տէր, և ի պիղծս մի

* Յայլն՝ ի ձեռն գինուցն
† Յայլն՝ Արդ ի նոյն հատուցումն, (իբրեւ ընդ որ-
դեակս խօսիմ,)

18 մերձենայք. Եւ ես ընկալայց զձեզ, և ես եղէց
ձեզ ի Հայր, և դուք եղիջիք ինձ յուստերս և ի
դստերս, ասէ Տէր ամենակալ։

ԳԼ. Ե

1 Իսկ որովհետեւ զայս աւետիս ունիմք, սիրելիք,
սրբեսցուք զանձինս մեր յամենայն պղծութենէ
մարմնոյ և հոգւոյ, կատարեսցուք զսրբութիւն ա-
2 հիւն Աստուծոյ։ Տարապոյք մեզ, զի ոչ ումեք մե-
3 զսաք, և ոչ զոք եղծաք, և ոչ զոք զրկեցաք։ Ոչ
եթէ ի դատապարտութիւն ինչ ասեմ, քանզի
յառաջ իսկ ասացի եթէ ի սրտի մերում կայք՝ ի
կեալ և ի մեռանել ընդ ձեզ։
4 Բազում համարձակութիւն է ինձ առ ձեզ. բա-
զում պարծանք են ինձ վասն ձեր. լի եմ մխիթա-
րութեամբ, առաւելեալ եմ ուրախութեամբ յա-
5 մենայն նեղութիւնս մեր։ Քանզի յորժամ հասաք
մեք ի Մակեդոնիա, և ոչ միով իւրեք հանգիստ
գտաւ մարմնոյ մերում, այլ յամենայնի նեղեալք.
քանզի արտաքոյ մարտք՝ և ի ներքոյ արհաւիրք։
6 Այլ որ մխիթարէն զխոնարհս, մխիթարեաց զմեզ
7 Աստուած ի գալստեանն Տիտոսի։ Ոչ միայն ի
գալստեան նորա, այլ և ի մխիթարութեանն՝ զոր
մխիթարեցաւ նա ի ձեզ, ի պատմել մեզ զան-
ձուկն ձեր, զողբումն ձեր, զնախանձն ձեր վասն
8 իմ, մինչ առաւել ուրախ լինել ինձ։ Զի թէ և
արտմեցուցի զձեզ թղթովն՝ ոչ զղջանամ, թէպէտ
և զղջացեալ էի. քանզի տեսանեմ զի թուղթն այն
9 թէ և առ ժամանակ մի արտմեցոյց զձեզ. Այժ

ուրախ եմ, ոչ զի արտմիցէք՝ այլ զի յապաշխա-
րութիւն արտմեցարուք. քանզի արտմեցայք դուք
10 ըստ Աստուծոյ, զի մի իւրեք զրկիցէք ի մէնջ։ Զի
որ ըստ Աստուծոյն արտմութիւն է՝ ապաշխարու-
թիւն ի փրկութիւն առանց զղջանալոյ գործէ, իսկ
11 աշխարհի արտմութիւն մահ գործէ։ Այժ նոյն իսկ
որ ըստ Աստուծոյն արտմեցարուք, որչափ ինչ
փոյթ գործեաց ի ձեզ, կամ պաշտօն, կամ սաստ,
կամ երկիւղ, կամ անձուկ, կամ նախանձ, կամ
վրէժխնդրութիւն. քանզի յամենայնի ընծայեցու-
ցէք զանձինս ձեր՝ սուրբս լինել յիրիդ յայդմիկ։
12 Այսպէս ուրեմն թէ և գրեցի ես առ ձեզ, ոչ վասն
այնորիկ որ զրկեացն, և ոչ վասն այնորիկ որ զրկ-
կեցաւն. այլ վասն յայտնի լինելոյ փութոյն *ձե-
րոյ որ վասն մեր՝ առ ձեզ առաջի Աստուծոյ։
13 Վասն այնորիկ մխիթարեալ եմք ի վերայ մխիթա-
րութեանն †մերոյ. առաւել եւս խնդացաք ի վե-
րայ խնդութեանն Տիտոսի. քանզի հանգուցեալ
14 եր հոգի նորա ի ձէնջ ամենեցունց։ Զի զինչ և
պարծեցայ առ նմա վասն ձեր՝ ոչ ամաչեցի, այլ
որպէս զամենայն ճշմարտութեամբ խօսեցաք ընդ
ձեզ, նոյնպէս և պարծանքն մեր առ Տիտոս ճշմա-
15 րիտ եղեն։ Եւ առաւել եւս են
ի ձեզ, քանզի ‡յիշեցուցանէր մեզ՝ զամենեցուն
զձեր հնազանդութիւն, թէ որպէս սիրէ և դո-
16 ղութեամբ ընկալարուք զնա։ Եւ արդ ուրախ եմ,
զի յամենայնի համարձակ եմ առ ձեզ։

---

* Յոյն՝ մերոյ զոր ունիմք վասն ձեր
† Յոյն՝ ձերոյ. ‡ Յոյն՝ յիշէր

ԳԼ· Ը

1 Յուցանեմ ձեզ, եղբարք, զշնորհն Աստուծոյ՝ որ
2 տուեալ են եկեղեցեացն Մակեդոնացւոց. Զի մե-
ծաւ հանդիսիւ նեղութեան՝ առաւելութիւն խըն-
դութեանն նոցա, և ծանր աղքատութիւնն նոցա
առաւել եղեւ ի մեծութիւն առատութեան նո-
3 ցա, Զի ըստ կարի նոցա, վկայեմ, և աւելի քան
4 զկար, Ինքնակամ բազում աղաչանօք աղաչէին՝
զշնորհն և զհաղորդութիւն պաշտամանն որ ի
5 սուրբսն՝ տալ ցմեզ։ Ոչ որչափ ակն ունէաք, այլ
և զանձինս եւս եառուն, նախ Տեառն և ապա մեզ՝
6 կամօքն Աստուծոյ, * Աղաչել զՏիտոս զի որպէս
սկսաւն յառաջագոյն, նոյնպէս և կատարեսցէ ի
7 ձեզ և զայդ եւս շնորհ։ Այլ որպէս յամենայնի
առաւել եք հաւատովք և բանիւ և գիտութեամբ
և ամենայն փութով, և որ †ի մէնջ ի ձեզ՝ սէրն
8 է, զի և յայդմ եւս շնորհի առաւել լինիցիք։ Ոչ
որպէս հրաման տալով ասեմ, այլ վասն այլոց փու-
թոյ, և վասն ձերոյ սիրոյ զմաերմութիւնդ ‡փոր-
9 ձեմ։ Գիտէք զիտակ զշնորհն Տեառն մերոյ Յիսու-
սի Քրիստոսի, զի վասն ձեր աղքատացաւ՝ որ մե-
ծատունն էր, զի դուք նորա աղքատութեամբն
10 մեծասջիք։ Եւ խրատ մի յայսմիկ տամ. զի այն
իսկ յօգուտ է ձեզ, որք ոչ միայն զառնելն՝ այլ
և զկամելն յառաջագոյն սկսայք ի հերուն հեռէ։

* Յոյնն՝ Յաղաչելն մեր
† Յոյնն՝ ի ձէնջ առ մեզ ‡ Յոյնն՝ փորձելոյ։

11 Բայց արդ և զառնելն իսկ կատարեցէք. զի որպէս
յօժարութիւնն ի կամսն է, նոյնպէս և առնելն
12 ըստ գոյին։ Զի եթէ յօժարութիւնն առաջի կայ,
ըստ գոյին ընդունելի է՝ և ոչ եթէ ըստ չգոյին։
13 Զի ոչ եթէ այլոց հանդիստ *կամիցիմ, և ձեզ նե-
14 ղութիւն։ Այլ հաւասարութեամբ՝ յայժմու
ժամանակիս ձեր առաւելութիւնդ ի նոցա պակա-
սութեանն, զի և նոցա առաւելութիւնն եղիցի
ի ձերում պակասութեանդ, զի եղիցի հաւասա-
15 րութիւն, որպէս և գրեալ է, Թէ Որ բազումն
*առ՝ ոչ առաւելոյր, և որ սակաւն՝ ոչ նուազե-
16 ցաւ։ Բայց շնորհք Աստուծոյ, որ արկ զնոյն փոյթ
17 վասն ձեր ի սիրտ Տիտոսի. Զի զաղաչանն ընկա-
լաւ՝ և փութացաւ յօժարագոյնս դիմեաց *գալ
18 առ ձեզ։ Եւ առաքեցաք ընդ նմա զեղբայրն, որոյ
գովութիւնն յաւետարանի անդ է ընդ ամենայն
19 եկեղեցիս։ Եւ ոչ այսչափ միայն, այլ և ձեռնա-
դրեալ յեկեղեցեաց անտի՝ ընդհակից մեր եղեւ
ի շնորհս յայսոսիկ, որ պաշտին ի մէնջ ի փառս
20 Տեառն և ի մեր յօժարութիւն։ Բայց զայս խորհ-
ճեաք իսկ՝ թէ գուցէ արատ ոք լինչ դնիցէ †ի հաս-
տատութեանս յայսմիկ՝ որ պաշտեցաւս ի մէնջ։
21 Գիտողի խորհիմք զբարիս՝ ոչ միայն առաջի Տեառն,
22 այլ և առաջի մարդկան։ Եւ առաքեցաք ընդ նո-
սա զեղբայրն մեր զոր ընտրեցաք ի բազում իրս՝
բազում անգամ պինդ գտեալ, և առաւել եւս
23 այժմ պնդագոյն՝ յուսով մեծաւ ի ձեզ։ Բայց ե-
թէ վասն Տիտոսի ինչ բանք են, իմ հաւասար է

* Ի Յունէն լէ։ † Յոյնն՝ հաստատութեանս

և ձեր դործակից . և եթէ *եղբարք մեր՝՝ , առա-
21 քեալքն եկեղեցւոյ՝ և փառը Քրիստոսի ։ Եւ արդ
ցՀանդէս սիրոյ ձերոյ և ըմբերոյ պարծանացն վասն
ձեր՝ ՚ի դոսա ցուցչիք յանդիման ամենայն եկե-
ղեցւոյ ։

Գլ· Թ

1 Ա.ՀԼ վասն պաշտամանն որ ՚ի սուրբսն է, աւելի
2 է ինձ և գրել առ ձեզ։ Զի գիտեմ զյօժարու-
թիւն ձեր , զոր վասն ձեր պարծեցեալ եմ ՚ի մէջ
Մակեդոնացւոց, թէ Ա.քայեցիքն ՚ի հերուն հետէ
պատրաստ են , և ձեր նախանձն զբազումս յորդո-
3 րեաց ։ Եւ առաքեցաք զեղբարսն, զի մի պարծանքն
մեր որ վասն ձեր՝ ընդունայն լինիցին ՚ի մասինդ
յայդմիկ , այլ որպէս ասէի իսկ, պատրաստացիք
4 դատանիջիք· Գուցէ յորժամ դայցեն ընդ մեզ Մա-
կեդոնացիքն՝ և դատանիցեն զձեզ անպատրաստս ,
և ամաչեսցուք մեք , զի մի ասասցուք թէ դուք ,
5 ՚ի մասինդ յայդմիկ պարծանաց։ Աւրդ կարեւոր
համարեցայ աղաչել զեղբարս , զի յառաջագոյն
իսկ եկեսցեն առ ձեզ , և յառաջագոյն պատրաս-
տեսցեն զյառաջագոյն խոստացեալ օրհնութիւնն
ձեր ՚ի պատրաստի ունել , այնպէս իբրեւ զօրհնու-
6 թիւն, և մի իբրեւ զպահանջութիւն։ Գիտեմ զի որ սեր-
մանէ ճշդելով՝ ճշդելով հնձեսցէ , և որ սերմանէ
7 առատութեամբ՝ առատութեամբ և հնձեսցէ ։ Ի-
րաքանչիւր որպէս և յօժարեսցի ոք սրտիւ, մի առ

* Յոյնն՝ վասն եղբարց մերոց ,

Հարկի և տրտմութեան, քանզի զտուրս ղուարթա-
8 ռատս սիրէ Ա.ստուած ։ Ա.ՀԼ կարող է Ա.ստուած
զամենայն շնորհս առատացուցանել ՚ի ձեզ , զի յամե-
նայնի յամենայն ժամ զամենայն բաւականութիւն
ընկալեալ՝ առատացուցանիցէք յամենայն գործս բարու-
9 թեան, որպէս և գրեալ է , Սփռեաց և ետ տնանե-
10 կաց , արդարութիւն նորա մնայ յաւիտեան ։ Ա.ՀԼ
այն որ պարգեւէ սերմն սերմանահանաց , և հաց՝ ՚ի
կերակուր , պարգեւեսցէ և բազմացուսցէ զսերմա-
նիս ձեր , և աճեցուսցէ զպտղիս արդարութեան
11 ձերոյ . Յամենայնի մեծացեալք ամենայն առատաս-
թեամբ՝ որ յօրինէն մեզ գոհութիւն Ա.ստուծոյ ։
12 Զի պաշտօն հարկիս այսորիկ ոչ միայն առ ՚ի լնուլ
զպակասութիւն սրբոցն է, այլ և առատանալ բազ-
13 մաք գոհութիւնս Ա.ստուծոյ . Զանգիսիս պաշտա-
մանս այսորիկ փառաւորել զԱ.ստուած ՚ի վերայ
հնազանդութեան խոստովանութեան ձերոյ յաւե-
տարանն Քրիստոսի, և առատութեամբ հաղորդու-
14 թեանն ՚ի նոսա և յամենեսին . Եւ նոցա աղօթիւք
վասն ձեր , քանզի անձկացեալ են առ ձեզ վասն
15 առատութիւն շնորհացն Ա.ստուծոյ՝ որ ՚ի ձեզ ։ Ա.ՀԼ
շնորհք Ա.ստուծոյ՝ ՚ի վերայ անպատում պարգե-
ւացն նորա

Գլ· Ժ

1 Ա.ՀԼ ես իսկ Պօղոս աղաչեմ զձեզ հեղութեամբն
և հանդարտութեամբն Քրիստոսի , որ յանդիման
ձեզ իբրեւ տատապկալ մի եմ ՚ի մէջ ձերում ,
2 բայց ՚ի հեռուստ համարձակիմ առ ձեզ ։ Աղաչեմ

ղի մի ի մեռոյ եւ եթե համարձակիցիմ վստահու-
թեամբ , *կամ համարիցիմ յանդգնել ի վերայ
ոմանց՝ որ կարծեն զինչ եթե ըստ մարմնոյ գնայ-
3 ցեմք ։ Զի թէպէտ և մարմնով գնամք , այլ ոչ ե-
4 թէ ըստ մարմնոյ զինուորիմք ։ Զի զէն զինուորու-
թեան մերոյ ոչ է մարմնաւոր , այլ զօրաւոր ՅԱս-
տուածոյ՝ առ ի քակել զամուրս . զխորհուրդս քա-
5 կեմք , եւ զամենայն բարձրութիւն հպարտացեալ
ի վերայ գիտութեանն Աստուծոյ , և գերեմք զա-
6 մենայն միտս ի հնազանդութիւն Քրիստոսի . եւ
ի պատրաստի ունիմք խնդրել զվրէժ ամենայն ան-
հնազանդութեան՝ յորժամ ձեր եւս հնազանդու-
7 թիւնդ կատարեսցի ։ †Ըստ իւրաքանչիւր երեսաց
դիտեսջիք՝՝ . եթէ ոք վստահ յանձն իցէ Քրիստոսի
լինել , զայս խորհեսցի դարձեալ ի միտս իւր , թէ
8 որպէս նայն Քրիստոսի է՝ նոյնպէս և մեք ։ Զի թէ
առաւել եւս պարծեցայց վասն իշխանութեանս
մերոյ , զոր ետ մեզ Տէր ի շինել՝ և ոչ ի քակել
9 զձեզ , ոչինչ ամաչեցից ։ Զի մի՛ թուիցայց իբրեւ ահ
10 ինչ արկանել ձեզ թղթովք ։ Ասացէ՛ք , թուղթքս
ծանուցանք են և սաստիկք , բայց տեսիլ մարմնոյ՝ տը-
11 կար , և բանն՝ արհամարհեալ . Զայս խորհեսցի այն-
պիսին , զի որպիսիք եմք բանիւք թղթոցդ ի հե-
12 ռուստ , նոյնպիսիք և ի մեռոյ արդեամբք ։ Քանզի
ոչ իշխեմք կշռել և հաւասարել զանձինս մեր ոմանց ,
որ զանձինս իւրեանց ‡ձեզ ընծայեցուցանեն , այլ
անձամբ յանձինս՝ զանձինս չափեն , և ի կշռել ան-

* Յոյնն՝ որով

† Յոյնն՝ ըստ երեսա՞ց դիտէք . ‡ Ի Յոյնն չէ ։

13 ձամբ յանձինս՝ ոչ առնուն ի միտ ։ Այլ մեք ոչ
եթէ յանչափս ինչ պարծեսցուք , այլ ըստ չափոյ
կանոնին՝ զոր բաժանեաց մեզ Աստուած չափով
14 հասանել մինչեւ առ ձեզ ։ Իբր ոչ եթէ հասու
ինչ չիցեմք ի ձեզ , և ձկտեցուցանիցեմք զանձինս ,
քանզի մինչեւ առ ձեզ հասաք աւետարանաւն
15 Քրիստոսի ։ Եւ ոչ յանչափս ինչ պարծիմք օտար
վաստակօք , բայց յոյս մի ունիմք զաճմանն հա-
ւատոց ձերոց՝ այդրէն ի ձեզ մեծանալոյ ըստ կա-
16 նոնիս մերոյ յառաւելութիւն . Ի վեր եւս քան
զձեզ աւետարանել՝ ոչ օտար կանոնաւ ի պատ-
17 րաստականս ինչ պարծել ։ Զի որ պարծին՝ ի Տէր
18 պարծեսցի ։ Զի ոչ եթէ որ զանձն իւր ընծայեցու-
ցանէ՝ նա է ընտրեալ , այլ զոր Տէրն ընծայեցու-
ցանէ ։

Գ Լ · Ժ Ա

1 Լաւ էր եթէ ներէիք փոքր մի և իմում անզգա-
2 միութեանս . այլ և անսացէք իսկ ։ Նախանձեցու-
ցանեմ զձեզ ի նախանձն Աստուծոյ . զի խօսեցայ
զձեզ առն միում՝ իբրեւ զկոյս մի սուրբ յանդի-
3 մանն կացուցանել Քրիստոսի ։ Բայց երկնչիմ՝՝ գուցէ
որպէս օձն խաբեաց զԵւա խորամանկութեամբն իւ-
րով՝ ապականեսցին միտք ձեր ի միամտութենէն
4 որ ի Քրիստոս ։ Զի եթէ որ գալոցն իցէ՝ այլ *Քրիս-
տոս քարոզիցէ զոր մեքն ոչ քարոզեցաք , կամ ոգի
օտար առնուցուք՝ զոր ոչ առեք , կամ աւետա-

* Յոյնն՝ Յիսուս

բան օտար՝ զոր ոչ ընկալաբուք , բարւոք անապրիք
5 *նոցա ։ Բայց ես այսպէս համարիմ, թէ ոչինչ ի-
6 ւիք պակաս իցեմ քան զլաւ առաքեալսն ։ Թէպէտ
և տգէտ եւս իցեմ բանիւ , այլ ոչ եթէ գիտու-
թեամբ . ապակայն յամենայնի յայտնեցաք ընդ ձեզ
7 ամենեւին առ ձեզ ։ Եւ եթէ վնա՞ս ինչ դործեցի՝
զի զանձն խոնարհեցուցի , և այն՝ զի դուք բար-
ձրասջիք , զի ձրի զաւետարանն Աստուծոյ աւետա-
8 րանեցի ձեզ ։ Զայլ եկեղեցիս կողոպտեցի , առեալ
9 թոշակ ի ձեր սպասաւորութիւն ։ Եւ յորժամ
եկի առ ձեզ, թէպէտ և պակասեաց ինչ, ոչ զոք
ի ձէնջ ձանձրացուցի , զի զպակասութիւնն իմ
լցին եղբարքն եկեալք ի Մակեդոնիայէ . և յա-
մենայնի առանց ծանրանալոյ ձեզ զանձն իմ պա-
10 հեցի և պահեցից ։ Ճանզի դոյ ճշմարտութիւնն
Քրիստոսի , զի պարծանքս այս ոչ արգելցին ինձն
11 ի կողմանս Աքայեցւոց ։ Ընդէ՞ր . խրոտ թէ ո՞չ
12 սիրեցեմ զձեզ. զոյն Աստուածդիտէ · Զոր առ-
նեմ՝ և արարից , զի հատից զպատճառս այնոցիկ՝
որ զպատճառան կամիցին . զի որով պարծիցինն ,
13 և նոքա իբրեւ զմեզ դտանիցին ։ Զի այնպիսիքն
սուտ առաքեալք , մշակք նենդաւորք , կերպարա-
14 նին ի կերպարանս առաքելոց Քրիստոսի ։ Եւ չէն
ինչ զարմանք , քանզի և ինքն Սատանայ կերպա-
15 րանի ի հրեշտակ լուսոյ ։ Եւ ոչինչ է մեծ թէ և
պաշտօնեայք նորա կերպարանին իբրեւ պաշտօ-
նեայք արդարութեան . որոց կատարածն եղիցի
16 ըստ գործոց իւրեանց ։ Դարձեալ ասեմ, Մի՛ ոք

* Ի յունին չէ ։

համարեսցի զիս անզգամ, ապա թէ ոչ՝ դոնէ իբ-
րեւ զանզգամ ընկալարուք զիս , զի և ես փոքր մի
17 ինչ պարծեցայց ։ Եւ զոր խօսիմ՝ ոչ եթէ ըստ
Տեառն խօսիմ, այլ իբրեւ անզգամութեամբ՝ ըստ
18 կարգի այդց պարծանաց ։ Եւ քանզի բազումք
19 պարծին ըստ մարմնոյ՝ և ես պարծեցայց ։ Ա՞ստ-
դիւք լիւն անապրիք անմտացն ձերովք իմաստու-
20 թեամբ ։ Քանզի անապրք *եթէ ոք խաբէ զձեզ,՚՚
եթէ ոք ծառայեցուցանէ , եթէ ոք ուտէ զձեր ,
եթէ ոք առնու ինչ, եթէ ոք հպարտանայ , եթէ
21 ոք զձեզ յանդիման հարկանէ . Ըստ անարգանացդ
ասեմ, իբրեւ թէ մեք տկարացաք արդեօք . յոր
ինչ ոք համարձակիցի , անզգամութեամբ ասեմ,
22 համարձակիմ և ես ։ Ե՞բրայեցի՞ք իցեն , և ես .
Իսրայէլացի՞ք իցեն , և ես . զաւակ Աբրահամո՞ւ
23 իցեն , և ես . Պաշտօնեայք Քրիստոսի՞ իցեն ,
յանդգնագոյնս ասացից՝ թէ առաւել եւս ես .
եթէ վաստակօք՝ առաւել , եթէ դանիւք՝ եւս առա-
ւել . եթէ բանտիւ՝ աւելի քան զնոսա , եթէ մա-
24 հուամբք՝ բազում անգամ . ի Հրէից հնդիցս քա-
25 ռասուն միով պակաս արբի . երիցս ձաղկեցայ . մի-
անգամ քարկոծ եղէ . երիցս նաւակոծ եղէ . զտիւ և
26 զդիշեր յանդունդս տառապեցայ . ի ճանապարհս
բազում անգամ, վնասս ի գետոց , վնասս յաւազա-
կաց , վնասս յազգէ , վնասս ի հեթանոսաց , վնասս
ի քաղաքի , վնասս յանապատի , վնասս ի ծովու ,
27 վնասս ի սուտ եղբարց . ի ջանս և ի վաստակս , ի
տքնութիւնս բազում անգամ, ի քաղց և ի ծա-

* Ի յունին չէ ։

բաւ, 'ի պահս բազում անգամ, 'ի ցուրտ և 'ի
28 մերկութեան։ Թող *զայլ նեղութիւնն,'' և զի
Հանապազ խուժանն 'ի վերայ իմ կուտէր՝ և հոգ
29 ամենայն եկեղեցեացն։ Ո՞ հիւանդանայ, և ոչ ես
հիւանդանամ. ո՞ գայթագղի, և ոչ ես տապանամ։
30 Եթէ պարծել ինչ պարտ իցէ, զտկարութեանն
31 պարծեցայց։ Աստուած և Հայր Տեառն մերոյ Յի-
սուսի Քրիստոսի գիտէ՝ որ է օրհնեալ յաւիտեանս,
32 զի ոչ ստեմ։ Ի Դամասկոս ազգապետն Արետա
արքային պահէր զքաղաքն Դամասկացւոց ունել
33 զիս. Եւ ընդ պատուհանն վանդակաւ կախեցայ
ընդ պարիսպն, և փախեայ 'ի ձեռաց նորա։

ԳԼ. ԺՌ

1 Արդ պարծել †ինչ պարտ իցէ, այլ օգնէ ինչ ոչ.
բայց եկից 'ի տեսիլս և 'ի յայտնութիւնս Տեառն։
2 Գիտեմ այր մի 'ի Քրիստոս յառաջ քան զչորեք-
տասան ամ. եթէ մարմնով՝ ոչ գիտեմ, և եթէ
առանց մարմնոյ՝ ոչ գիտեմ, Աստուած գիտէ. յա-
փշտակեալ զայնպիսին մինչեւ յերրորդ երկինս։
3 Եւ գիտեմ զայնպիսի այր. եթէ մարմնով և եթէ
4 առանց մարմնոյ՝ ոչ գիտեմ, Աստուած գիտէ. Զի
յափշտակեցաւ 'ի դրախտն, և լուաւ բանս ան-
5 ճառս, զոր ոչ է պարտ մարդոյ խօսել։ Վասն այն-
պիսւոյն պարծեցայց. այլ վասն անձին ինչ ոչ
6 պարծեցայց, բայց եթէ 'ի տկարութիւնս։ Զի եթէ
և կամիցիմ պարծել՝ ոչ եղէց անզգամ, քանզի

* Յոյնն՝ զայլսն,

† Յոյնն՝ ինձ

զարդարեն ասեմ. այլ անխոյեմ, գուցէ ոք համա-
բերիցի ինչ յիս աւելի՝ քան զոր տեսանիցէ յիս
7 կամ լսիցէ յինէն։ Եւ զի մի՛ առաւելութեամբ
յայտնութեանցն հպարտացայց, տաւաւ ինձ խոյթ
մարմնոյ՝ հրեշտակ Սատանայ, կռփել զիս, զի մի՛
8 հպարտացայց։ Եւ վասն այնորիկ երիցս աղաչեցի
9 զՏէր՝ զի 'ի բաց արասցէ յինէն. Եւ ասէ
ցիս, Շատ են քեզ ընդհարք իմ, զի զօրութիւն իմ
'ի տկարութեան կատարի. և արդ լաւ եւս լիցի
ինձ պարծել 'ի տկարութիւնս, զի բնակեսցէ յիս
10 զօրութիւնն Քրիստոսի։ Վասն որոյ հաճեալ եմ
ընդ տկարութիւնս, ընդ թշնամանս, ընդ վիշտս,
ընդ հալածանս և ընդ նեղութիւնս վասն Քրիստոսի.
զի յորժամ տկարանամ, յայնժամ զօրանամ։
11 Եղէ անզգամ, քանզի դուք *ստիպեցէք. զի ինձ
պարտ էր 'ի ձէնջ վկայութիւն առնուլ թէ ոչինչ
պակաս գտայ քան զլաւ առաքեալսն, †զի թէպէտ
12 և ես ոչինչ եմ։ ‡Սակայն նշանք առաքելոյ գործե-
ցան 'ի ձեզ ամենայն համբերութեամբ, նշանօք և
13 արուեստիւք և զօրութեամբք։ Եւ արդ զի՞նչ իցէ,
որո՞վ պակաս գտայք քան զայլ եկեղեցիս, բայց
եթէ պանուս զի ես զձեզ ոչ ձանձրացուցի. ընդհե-
14 ցէք ինձ զայնասդ զայդ։ Ահաւասիկ այս երիցս ան-
գամ պատրաստեալ եմ գալ առ ձեզ, և ձեզ
բեռն ինչ ոչ եղէց, զի ոչ խնդրեմ ինչ զձեր՝ այլ
զձեզ. քանզի ոչ պարտին որդիքն հարց գանձել,
15 այլ հարքն՝ որդւոց։ Բայց ես մեծագործութեամբ

* Յոյնն ստիպեցէք զիս

† Ի Յոյնին կէտ։

‡ Յոյնն՝ Ապաքէն

ծախեցից, և ծախեցայց վասն անձանց ձերոց, ղի
թէպէտ և յառաւել սիրոյն ղձեզ սակաւ սիրեցեմ։
16 Ա.ՀԱ դրեթէ ես սչինչ ծանրացայ ձեզ, այլ
17 քանզի խորագէտ էի, խելօք կալայ զձեզ։ Մթէ
որովք առաքեցին առ ձեզ՝ նոքօք ինչ ագահեցի՞
18 ի ձէնջ։ Աղաչեցի զՏիտոս և առաքեցի ընդ նմա
զեղբայրն, միթէ ագահե՞ց ինչ ձեր Տիտոս. ո՞չ
նոյնի ոգւով գնացաք. ո՞չ նոյնի շաւղօք *շրջեցաք։
19 Դարձեալ համարիցիք եթէ յաղագ անկեալ ինչ
ձեզ արեւսիցե՞մք. առաջի Աստուծոյ ի Քրիստոս
խօսիմք, զի ամենայն ինչ, սիրելիք, վասն ձերոյ
20 շինուածեան է։ Ա.ՀԱ երկնչիմ, դուք եկեալ՝ ոչ
որպէս ես կամիմն գտանիցեմ զձեզ. և ես գտանիցի՛մ ձեզ՝ որպէս և դուք ոչ կամիցիք. գուցէ դարձեալ հիւռ, նախանձ, սրտմտութիւնք, զրդռութիւնք, չարախօսութիւնք, քսութիւնք, հպարտութիւնք, ամբարտաւանութիւնք, խռովու-
21 թիւնք։ Գուցէ դարձեալ յորժամ գայցեմ՝ նկուն ինչ առնիցէ զիս Աստուած իմ առ ձեզ. և սուգ առնուցում վասն բազմոց յառաջադոյն մեղուցելոց, և ոչ ապաշխարելոց ի վերայ պղծութեան և պոռնկութեան և գիջութեան՝ զոր գործեցին։

Գ.Ի. ԺԳ

1 Ա.յս երրիցս անգամ գամ առ ձեզ, զի ի բերա-
նոյ երկուց և երից վկայից հաստատեսցի ամենայն
2 բան։ Յառաջ ասացի, և դարձեալ կանխաւ ա-

* Ի_յ-ՆՆ ՀԲ։

ւեմ *յանդիման երկիցս՝՝ անգամ, և այժմ ի բա-
ցուստ գրեմ յառաջադոյն յանցուցելոցն և ա-
յլոցն ամենեցուն, զի եթէ եկից դարձեալ՝ ոչ խնա-
3 յեցից. † Եթէ զփորձ ինչ խնդրէք զՔրիստոսի՝ որ
ինեւս ընդ ձեզ խօսի, որ հզօրացեալն է ի ձեզ,
4 և ոչ տկարացեալ։ Զի թէպէտ և խաչեցաւ ‡ ի
մերմէ տկարութենէ,՝՝ այլ կենդանի է զօրութեամբն
Աստուծոյ. և մեք թէպէտ և տկարանայցեմք §վա-
սըն նորա՝՝, այլ կենդանի լիցուք ընդ նմա զօրու-
5 թեամբն ‖Աստուծոյ։ Փորձեցէք զանձինս ձեր, և-
թէ կայցէք ի նոյն հաւատս. քննեցէք զանձինս,
եթէ ո՞չ գիտէք զանձինս, զի Քրիստոս Յիսուս ի
6 ձեզ է, բայց եթէ անպիտանք իցէք։ Ա.ՀԱ ակն
ունիմ թէ գիտիցէք՝ զի մեք ոչ եմք անպիտանք։
7 Ա.ՀԱ խնդրեմք Ա.Աստուծոյ՝ զի մի՛ ինչ ¶ արասցէ
ձեզ չար.՝՝ ոչ զի մեք ընտիրք երեւեսցուք, այլ զի
դուք զբարիս գործիցէք, և մեք անպիտանք գտա-
8 նիցիմք։ Զի ոչ կարեմք ինչ հակառակ կալ ճըշ-
մարտութեանն, այլ վերակացու եմք ճշմարտու-
9 թեանն։ Ուրախ եմք՝ յորժամ մեք տկարանայցեմք,
և դուք զօրաւորք իցէք. զդոյն խնդրեմք և աղօթեմ առ-
10 նեմք զձեր հաստատութիւնդ։ Վասն այնորիկ զայս
ի հեռուստ գրեմ, զի մի յորժամ եկից՝ ասաստ-
կութեամբ վարեցայց ըստ իշխանութեանն, զոր տ-
ւեալ Տէր ի շինել և ոչ ի քակել։

* Յ-ՆՆ՝ որպէս թէ յանդիման երկիցս
† Յ-ՆՆ՝ Քանզի ‡ Յ-ՆՆ՝ տկարութեամբ,
§ Յ-ՆՆ՝ նովաւ, ‖ Յ-ՆՆ՝ Աստուծոյ ի ձեզ։
¶ Յ-ՆՆ՝ արասջիք դուք չար.

11 Ա.յսուհետեւ, եղբարք, ողջ լերուք, հաստա-
տուն կացէք, մխիթարեցարուք, միաբան լերուք,
խաղաղութիւն արարէք. և Աստուած խաղաղու-
12 թեան և սիրոյ եղիցի ընդ ձեզ։ Ողջոյն տուք մի-
մեանց ի համբոյր սրբութեան։ Ողջոյն տան ձեզ
13 սուրբք ամենայն։ Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի
Քրիստոսի և սէրն Աստուծոյ և հաղորդութիւնն
Հոգւոյն Սրբոյ ընդ ձեզ ամենեսեան։ Ամէն։

Ա՝ կորնթոսէ երէորդ էրեցա՝ ի Փիլիպէ՝ ի յեր-
Տէրոյ ։ Ղ՝ոյ։

ԹՈՒՂԹ

ՊՕՂՈՍԻ Ա.Ո.Ա.Ք.Ե.Լ.Ո.Ց

ԱՌ ԳԱՂԱՏԱՑԻՍ

ԳԼ. Ա

1 ՊՕՂՈՍ առաքեալ ոչ ի մարդկանէ և ոչ ի ձեռն
մարդոյ, այլ ի ձեռն Յիսուսի Քրիստոսի և Ա-
2 տուծոյ Հօր՝ որ յարոյց զնա ի մեռելոց, եւ որ
ընդ իս են եղբարք ամենեքեան՝ եկեղեցեացդ Գա-
3 ղատացւոց. Շնորհք ընդ ձեզ և խաղաղութիւն
յԱստուծոյ ի Հօրէ և ի Տեառնէ մերմէ Յիսուսէ
4 Քրիստոսէ. Որ ետ զանձն իւր վասն մեղաց մերոց,

զի զմեզ փրկեսցէ յաշխարհէ աստի չարէ ըստ կա-
5 մացն Աստուծոյ և Հօր մերոյ. Որում փառք յա-
ւիտեանս յաւիտենից։ Ամէն։
6 Զարմանամ զի այդպէս վազվազակի փոփոխիք
յայնմանէ որ կոչեացն զձեզ ի շնորհն Քրիստոսի
7 յայլ աւետարան. Որ ոչ էդ այլ, բայց եթէ ե-
ցեն ոմանք որ խռովեցուցանիցեն զձեզ, և կամի-
8 ցին շրջել զաւետարանն Քրիստոսի։ Այլ թէ մեք
կամ հրեշտակ յերկնից աւետարանեսցէ ձեզ աւե-
լի քան զոր աւետարանեցաքն ձեզ, նզովեալ լիցի։
9 Որպէս յառաջագոյնն ասացաք՝ և արդ դարձեալ
ասեմ, եթէ ոք աւետարանեսցէ ձեզ աւելի քան
10 զոր առիքն, նզովեալ լիցի։ Արդ մարդկո՞ն հա-
ճոյ լինիցիմ՝ թէ Աստուծոյ. կամ խնդրիցեմ մարդ-
կո՞ն հաճոյ լինել. եթէ տակաւին մարդկան հա-
ճոյ լինէի, ապա Քրիստոսի ծառայ ոչ էի։
11 Յուցանեմ ձեզ, եղբարք, զաւետարանն՝ որ ա-
12 ւետարանեցաւ լինէն, զի ոչ է ըստ մարդոյ. Քան-
զի և ոչ ես ի մարդոյ առի, և ոչ ուսայ յումեք,
այլ ի յայտնութենէն Յիսուսի Քրիստոսի։
13 Քանզի լուեալ իսկ է ձեր զիմ դնացն որ երբեմն
ի Հրէութեան անդ, զի անչափ հալածէի զեկեղե-
14 ցին Աստուծոյ, և *աւար հարկանէի՝ զնա։ Եւ
յառաջադէմ էի ի Հրէութեանն քան զբազումս
հասակակիցս իմ՝ որ յազգին իմում էին. առա-
ւել նախանձախնդիր էի իմոյ հայրենի աւանդու-
15 թեանցն։ Այլ յորժամ կամեցաւ Աստուած՝ ո-
րոշեաց զիս յորովայնէ մօր իմոյ, և կոչեաց ի ձեռն

* Յոյն՝ կործանէի

16 Հնորհաց իւրոց, յայտնել զՈրդին իւր ինձ, զի
աւետարանեցից զնա ի հեթանոսս. անդէն վաղ-
17 վաղակի ոչինչ զդացուցի մարմնոյ և արեան, եւ
ոչ ելի Երուսաղէմ առ որ յառաջագոյն քան
զիս առաքեալքն էին. այլ չոգայ Արաբիա, և
18 դարձեալ դարձայ ի Դամասկոս։ Ապա յետ երից
ամաց ելի Երուսաղէմ տեսանել զՊետրոս, և ե-
19 ղէ առ նմա աւուրս հնգետասան։ Զայլ ոք յա-
ռաքելոց անտի ոչ տեսի, բայց միայն զՅակովբոս
20 եղբայրն Տեառն։ Ահա զոր գրեմս առ ձեզ, ա-
21 հաւասիկ առաջի Աստուծոյ՝ զի ոչ ստեմ։ Ապա
22 եկի ի կողմանս Ասորւոց և Կիլիկեցւոց։ Եւ յան-
ծանօթս էի երեսօք եկեղեցեացն՝ որ *ի Քրիստոս
23 Թենէ անտի՝ էին ի Քրիստոս։ Բայց զի լսէլով
լսեալ էր թէ Որ հալածէրն զմեզ յայնժամ, արդ
24 աւետարանէ զհաւատսն զոր երբեմն խախտէր. Եւ
փառաւորս առնէին ինձ զԱստուած։

ԳԼ· Բ

1 Ապա յետ ամաց չորեքտասանից միւսանգամ ելի
Երուսաղէմ ընդ Բառնաբայ, առեալ ընդ իս և
2 զՏիտոս։ Եւ ելի ըստ յայտնութեանն. և զդա-
ցուցի նոցա զաւետարանն՝ զոր քարոզէի ի հեթա-
նոսս, առանձինն այնոցիկ որ կարծելքն էին,
գուցէ ընդունայն ինչ ընթացեալ իցեմ կամ ըն-
3 թանայցեմ։ Այլ և ոչ Տիտոս որ ընդ իս ի հե-
4 թանոսաց էր, բռնադատեցաւ թլփատիլ։ Այլ

* Յայնմ՝ ի Հրէաստանի

վասն սպրդողաց սուտ եղբարցն, որք սպրդեցին
մտանել դիտել զազատութիւնն մեր՝ զոր ունիմք
ի Քրիստոս Յիսուս, զի զմեզ ծառայեցուցեն։
5 Որոց և ոչ առ ժամանակ մի անսացաք հնազան-
դութեանն, զի ճշմարտութիւն աւետարանին հաս-
6 տատեցի առ ձեզ։ Բայց զկարծելոցն երէ իցեն
ինչ, որպիսի որ երբեմն էին, չէ ինչ ինձ փոյթ.
քանզի Աստուած ակն մարդկան ոչ առնու. զի
7 ինձ կարծելքն այնպիսի ինչ ոչ զդացուցին. Այլ
զնորին հակառակն՝ իբրեւ տեսին թէ հաւատա-
գեալ է ինձ աւետարանն անթլփատութեան, որ-
8 պէս Պետրոսի՝ թլփատութեան. Զի որ յաջողեացն
Պետրոսի յառաքելութիւն թլփատութեանն, յա-
9 ջողեաց և ինձ ի հեթանոսս. Իբրեւ գիտացին
զշնորհսն որ տուեալ էին ինձ, Յակովբոս և Կեփաս
և Յովհաննէս՝ որ կարծեալ սիւնքն էին, ձեռն
ետուն հաւանութեան ինձ և Բառնաբայ. զի մեք
10 ի հեթանոսս՝ և նոքա ի թլփատութեանն. Բայց
միայն զի զաղքատսն յիշեսցուք, զոր և ես փու-
11 թացայ զնոյն առնել։ Այլ յորժամ եկն *Կեփաս
Անտիոք, ընդդէմ դարձայ նորա, քանզի դող
12 իբրեւ ստգտեալ ինն էր։ Քանզի մինչչեւ եկեալ
էին ումանք առ ի Յակովբոյ, ընդ հեթանոսս ու-
տէր անխտիր. իսկ իբրեւ եկին, զատանէր և որո-
շէր զանձն, երկուցեալ յայնցանէ որ ի թլփա-
13 տութենէ անտի էին։ Եւ կեղծաւորեցան ընդ նմա
և այլ Հրեայքն, մինչեւ Բառնաբաս անգամ խո-
նարհեցաւ ի նոցա կեղծաւորութիւնն։ Այլ իբ-

* Յայնմ՝ Պետրոս

14 բեւ տեսի Թէ ոչ ուղիղ գնան ՚ի ճշմարտութիւն
աւետարանին, ասեմ ցկեփաս առաջի ամենեցուն.
Եթէ դու որ Հրեայդ ես՝ հեթանոսաբար և ոչ Հրեա-
բար կեաս, զիա՞րդ սակաւս հեթանոսաց լինել
15 Հրեարէն։ Զի մեք բունն Հրեայք եմք, և ոչ ՚ի հե-
16 թանոսաց մեղաւորք։ Զայս գիտեմք՝ եթէ ոչ ար-
դարանայ մարդ ՚ի գործոց օրինաց, եթէ ոչ ՚ի հա-
ւատոյն Յիսուսի Քրիստոսի. և մեք ՚ի Քրիստոս
Յիսուս հաւատացաք, զի արդարասցուք ՚ի հաւա-
տոյն Քրիստոսի, և ոչ ՚ի գործոց օրինաց. զի ՚ի
գործոց օրինաց ոչ արդարասցի ամենայն մարմին։
17 Իսկ եթէ մինչ խնդրիցեմք արդարանալ ՚ի Քրիս-
տոս, և գտանիցիմք մեղաւորք. ապա ուրեմն Քրիս-
18 տոս մեղա՞ց պաշտօնեայ եղիցէ. քաւ լիցի։ Զի եթէ
զոր քակեցի՝ զնոյն միւսանգամ շինիցեմ, ապա
յանցաւոր զանձն իմ ես ինձէն երեւեցուցանեմ։
19 Զի ես օրինօք՝ օրինացն մեռայ, զի Աստուծոյ կե-
20 ցից. և ընդ Քրիստոսի ՚ի խաչ *եղից. Եւ կենդա-
նի եմ այսուհետեւ, ոչ ես՝ այլ կենդանի է յիս
Քրիստոս. այլ որ այժմ կեամ մարմնով, հաւա-
տովք Որդւոյն Աստուծոյ կեամ, որ սիրեացն զիս,
21 և մատնեաց զանձն վասն իմ։ Եւ ես ոչ անարգեմ
զշնորհսն Աստուծոյ. զի եթէ յօրինաց անաւ էր
արդարութիւն, ապա Քրիստոս զուր մեռաւ։

Գլ. Գ՚

1 Ո անմիտ Գաղատացիք, ո՞ †նախանձ արար՚՚

* Յայլս՝ եղի։ † Յայլս՝ հրապուրեաց

զձեզ՝ [ոչ հնազանդել ճշմարտութեան]. որոց գրե-
թէ առաջի աչաց Քրիստոս Յիսուս գրեցաւ ՚ի խաչ
2 եւեալ։ Զայս միայն կամիմ ուսանել ՚ի ձէնջ. ՚ի
գործո՞ց օրինաց զՀոգին ընկալարուք՝ եթէ ՚ի լուր
3 հաւատոց. Այդպէս անմի՞տ էք. սկսեալ Հոգւով՝
4 և արդ մարմնով վախճանիք։ Եւ այնչափ անգո
5 անցին ընդ ձեզ ՚ի զուր՝ եթէ իցէ զուր։ Իսկ արդ
որ բաշխեաց ՚ի ձեզ զՀոգին և յայնոցանէ ՚ի ձեզ
զզօրութիւնս, ՚ի գործո՞ց օրինաց է՝ եթէ ՚ի լուր
6 հաւատոց։ Որպէս Աբրահամ հաւատաց Աստուծոյ,
7 և համարեցաւ նմա յարդարութիւն։ Գիտիցէ՞ք
արդեօք. զի որք ՚ի հաւատոց անտի են, նոքա են
8 որդիք Աբրահամու։ Յառաջագոյն գիտեր գիր,
եթէ ՚ի հաւատոց անտի արդարացուցանէ Աստուած
զհեթանոսս, յառաջագոյն խոստացաւ Աբրահա-
9 մու, թէ ի քեզ օրհնեացին ամենայն ազգք։ Այ-
սուհետեւ որք ՚ի հաւատոց անտի են՝ օրհնին ընդ
10 հաւատացելոյն Աբրահամու։ Զի որ միանգամ ՚ի
գործոց օրինացն են, ընդ անիծիւք են. քանզի
գրեալ է թէ Անիծեալ ամենայն մարդ՝ որ ոչ կաց-
ցէ յամենայն գրեալսն ՚ի գիրս օրինաց՝ առնել
11 զամենայն։ Զի օրինօքն ոչ ոք արդարանայ առա-
ջի Աստուծոյ, այն յայտ իսկ է. զի Արդարն, ասէ,
՚ի հաւատոց կեցցէ։
12 Բայց օրէնքն չեն ՚ի հաւատոց, այլ որ արասցէ
13 զսոյն՝ կեցցէ ՚ի նոսին։ Քրիստոս զնեաց զմեզ յա-
նիծից օրինացն, եղեալ վասն մեր անէծք. զի գրեալ
է թէ Անիծեալ ամենայն, որ կախեալ կայցէ
14 զփայտէ. զի ՚ի հեթանոսս օրհնութիւնն Աբրահա-
մու եղիցի ՚ի Քրիստոս Յիսուս. զի մեք զաւետիս

15 Հոգւոյն Սրբոյ առցուք հաւատովք : Ըստ մարդ-
կութեան ասեմ, եղբարք . Ա.պաքէն զմարդկան
հաստատեալ կտակ ոչ ոք կարէ անարգել, և ոչ
16 այլ հրաման ի վերայ այնր տալ : Իսկ Աբրահամու
խոստացան աւետիքն և զաւակի նորա . և ոչ ասէ ,
Ձաւակաց՝ իբրեւ զբազմաց , այլ իբրեւ զմիոյ , թէ՝
17 Եւ զաւակի քումմ, որ է Քրիստոս : Բայց զայս ա-
սեմ, զկտակն յառաջագոյն հաստատեալ Ա.Ա-
ստուծոյ ի Քրիստոս , օրէնքն որ յետ չորեքհարիւր
և երեսուն ամի եղան , ոչ կարեն խափտել առ ի
18 խափանելոյ զաւետիսն : Եթէ յօրինաց անտի է
ժառանգութիւնն , ապա ոչ եւս յաւետեացն .
բայց Աբրահամու աւետեօք շնորհեաց Ա.ստուածն :
19 Իսկ զի՞նչ իցէն օրէնքն . յանցուածոց վասն յա-
ւելան , մինչեւ եկեսցէ զաւակն , որում խոստա-
ցեալն էր՝ կարգեալ հրեշտակօք ի ձեռն միջնորդի :
20 Իսկ միջնորդ միոյ ուրուք ոչ է՝ բայց Ա.ստուածն
21 մի է : Իսկ արդ օրէնքն հակառա՞կ ինչ իցեն ա-
ւետեացն Ա.ստուծոյ . քաւ լիցի . զի եթէ տուեալ
էին օրէնքն՝ որ կարող էին կենդանի առնել , ապա
22 հաստատ յօրինաց անտի էր արդարութիւն : Ա.յլ
փակեցին գիրք զամենեսին ընդ մեղս , զի աւե-
տիքն ի հաւատոց անտի Յիսուսի Քրիստոսի տա-
23 ցին հաւատացելոց : Մինչչեւ հաւատն եկեալ էին՝
ընդ օրինաւքն փակեալ պահէաք ի հանդերձեալ
24 հաւատն , որ յայտնելոց էին ի մեզ : Ա.պա օրէնքն
դաստիարակ եղեն մեզ ի Քրիստոս Յիսուս , զի ի
25 հաւատոյն արդարասցուք : Ա.յլ իբրեւ եկին հա-
26 ւատքն , ոչ եւս ընդ դաստիարակաւ եմք : Քանզի
ամենեքեան որդիք Ա.ստուծոյ էք հաւատովք ի Յի-

27 սուս Քրիստոս : Որք միանգամ՝ ի Քրիստոս մկրտե-
28 ցարուք , զՔրիստոս զգեցեալ էք . չիք Խոիր , Ո՛չ
Հրեի և ոչ Հեթանոսի , ոչ ծառայի և ոչ ազատի ,
ոչ արուի և ոչ իգի . զի ամենեքեան դուք մի էք
29 ի Քրիստոս Յիսուս : Ա.պա եթէ դուք Քրիստոսի
էք , ուրեմն Աբրահամու զաւակ էք , ըստ աւե-
տեացն ժառանգք :

Գ.Լ. Դ

1 Ձայս առեմ, ցորքան ժամանակս ժառանգն տղայ
է՝ չէ ինչ առաւել քան զծառայն , թէպէտ և
2 տէր իցէ ամենեցուն . Ա.յլ ընդ հաղարապետօք է
և ընդ գաւառապետօք մինչեւ ի ժամանակակէտ
3 հօրն : Նոյնպէս և մեք մինչ տղայքն էաք , ընդ տա-
4 րերբք աշխարհիս ի ծառայութեան կայաք : Ա.յլ
իբրեւ եկն լրումն ժամանակին , առաքեաց Ա.-
ստուած զՈրդին իւր՝ որ եղեւ ի կնոջէ , և եմեւտ
5 ընդ օրինօք . Ձի զնոսա որ ընդ օրինաւքն իցեն՝ գը-
6 նեսցէ , զի մեք զորդեգրութիւն ընկալցուք : Եւ զի
էք դուք որդիք , առաքեաց Ա.ստուած զՀոգի Որ-
դւոյն իւրոյ ի սիրտս մեր՝ որ աղաղակէ Աբբայ Հայր :
7 Ա.յսուհետեւ չէս ծառայ , այլ որդի . եթէ որդի՝
8 և ժառանգ *Ա.ստուծոյ : Ա.յլ յայնժամ մինչ ոչն
գիտէիք զԱ.ստուած՝ ծառայէիք այնոցիկ որ ոչն
9 էին ի բնէ Ա.ստուածք : Ա.յլ այժմիկ ծաներ ուք
զԱ.ստուած , մանաւանդ թէ ծանուցայք իսկ Ա.Ա-
ստուծոյ , զիա՞րդ դառնայք միւսանգամ անդրէն

* Յոյնն՝ Ա.ստուծոյ ի Քրիստոս :

'ի տարերսն 'ի տկարս և յաղքատս , որոց միւսան-
10 գամ ընդձգինս ծառայեցուցանել կամիք ։ Ձաւուրս
11 խարեք՝ և զամիսս և զժամանակս և զտարիս ։ Եր-
կնչիմ 'ի ձէնջ , գուցե թէ 'ի զուր ինչ վաստա-
12 կեցի 'ի ձեզ ։ Եղերուք իբրեւ զիս , քանզի և ես
իբրեւ զձեզդ էի . եղբարք , աղաչեմ զձեզ , չէք
13 ինչ ձեր մեղուցեալ առ իս ։ Գիտէք գուք զի տը-
կարութեամբ մարմնոյ աւետարանեցի ձեզ զառա-
14 ջինն . և զփորձանսն որ 'ի մարմնի իմում էին՝ ոչ
անարգեցիք և ոչ անգոնեցիք . այլ իբրեւ զհրեշ-
տակ Աստուծոյ ընկալարուք զիս՝ իբրեւ զՔրիստոս
15 Յիսուս . իսկ արդ ո՞ւր է երանութիւնն ձեր . վկա-
յեմ ձեզ եթէ հնար ինչ էր՝ զաչս ձեր հանէիք
16 և տայիք ինձ ։ Արդ զի՞ թշնամի իմն եղէ ձեզ , զի
17 ըստուգն խօսեցայ ։ Այլ նախանձեցուցանեն զձեզ
ոչ 'ի բարի , և արգելուլ կամին զձեզ՝ զի նոցա
18 նախանձաւորք լինիցիք ։ Բայց լաւ է նախանձաւոր
լինել 'ի բարիս յամենայն ժամ , և ոչ միայն յոր-
19 ժամ 'ի ձերում միջի իցեմ ։ Որդեակք իմ , զորս
դարձեալ վերստին երկնեմ , մինչեւ նկարեսցի
20 Քրիստոս 'ի ձեզ ։ Կամէի այժմ գալ առ ձեզ՝ և
փոխել զբարբառ իմ , զի տարակուսեալ եմ ես
վասն ձեր ։

21 Ասէք ինչ ինձ՝ որ ընդ օրինօքն կամիք լինել ,
22 չիցէ՞ *ընթերցեալ ձեր զօրէնս ։ Զի գրեալ է թէ
Աբրահամու երկու որդիք էին , մի յաղախնոյ ան-
23 տի , և մի՝ յազատէն ։ Այլ որ յաղախնոյն էր՝
ըստ մարմնոյ ծնեալ էր , և որ յազատէն՝ ըստ ա-

* Յոյնն՝ լուեալ

24 ւետեաց ։ Որ է առակ օրինակի . զի այս ինքն են
երկու կտակարանք , մի 'ի լերանէ Սինեայ 'ի ծառա-
25 յութիւն ծնեալ՝ որ է Հագար . Քանզի Հագարն
լերան Սինայ է յԱրաբիա , հաւասար է այժմ Ե-
րուսաղէմի , զի ծառայէ որդւովք իւրովք հան-
26 դերձ ։ Այլ վերինն Երուսաղէմ ազատ է , որ է
27 մայր մեր ամենեցուն ։ Զի գրեալ է , Ուրախ լեր ,
ամուլ , որ ոչ ծնանիցիր . գոչեա և աղաղակեա՝ որ
ոչդ երկնիցիր . զի բազում են որդիք սկնդկիդ ա-
28 ւաւել քան զարամբնոյն ։ Այլ մեք , եղբարք ,
29 ըստ Սահակայ աւետեացն որդիք եմք ։ Այլ որպէս
յայնժամ , որ ըստ մարմնոյն ծնեալ էր՝ հալածէր
30 զայն որ ըստ հոգւոյն , նոյնպէս և այժմ ։ Այլ զի՞նչ
ասէ գիր . Ի բաց հան զաղախինդ և զորդի դորա ,
զի մի ժառանգեսցէ որդի աղախնոյն ընդ որդւոյն
31 ազատի ։ Վասն որոյ , եղբարք , չեմք որդիք աղախ-
նոյն , այլ ազատին . *ազատութեամբն , որով Քրիս-
տոս զմեզ ազատեցոյց ։

Գլ. Ե

1 Պինդ կացէք այսուհետեւ , և մի' միւսանգամ
2 ընդ լծով ծառայութեան մտանէք ։ Ահաւասիկ
ես Պօղոս ասեմ ձեզ , զի եթէ թլփատիք , Քրիս-
3 տոս ինչ ձեզ ոչ օգնէ ։ Վկայեմ ամենայն մարդոյ՝
որ թլփատիցի , թէ պարտական է զամենայն օրէնսն
4 կատարել ։ Խափանեալ էք 'ի Քրիստոսէ՝ որ օրինօքն
արդարանայք , և անկեալ էք 'ի շնորհաց անտի ։

* Ի Յոյն բնագիրն ասդին ինչ կայ որ դէպ չէ ։

5 Զի մեք Հոգւովն ՚ի հաւատոյ՝ յուսոյն արդարու-
6 թեան ակն ունիմք ։ Զի ՚ի Քրիստոս Յիսուս ոչ
թլփատութիւն ինչ կարող է՝ և ոչ անթլփատու-
7 թիւն . այլ հաւատք սիրով յաջողեալք ։ Բարւոք
ընթանայիք , ո՞ կասեցոյց զձեզ ճշմարտութեան
8 չհաւանել ։ Զի այն հրապոյրք ոչ յորմանէ են որ
9 կոչեացն զձեզ ։ Փոքր մի խմոր զամենայն զանգուածն
10 խմորէ ։ Ես յաւացեալ եմ ՚ի ձեզ Տեառնէ՝
թէ ոչ այլազգ ինչ խորհիցիք , և որ խռովեցուցանէ
11 զձեզ, կրեսցէ դատաստան՝ ո՛ւր և իցէ ։ Ես ես ,
եղբարք , եթէ թլփատութիւն քարոզեմ՝ ընդէ՞ր
տակաւին հալածիմ . ապա ուրեմն խափանեալ իցէ
12 գայթակղութիւն խաչին ։ Երանի թէ մնատակտուր
13 իսկ լինէին՝ որ զձեզ խռովեցուցանեն ։ Զի դուք
յազատութիւն կոչեցեալ էք , եղբարք . միայն
մի ազատութիւն ձեր ոչ լինիցի ՚ի պատճառս
14 մարմնոյ , այլ սիրով ծառայեցէք միմեանց ։ Զի
ամենայն օրէնք ՚ի մի բան կատարին , ի սիրես-
15 ցեան զընկեր քո իբրեւ զանձն քո ։ Ապա եթէ
զմիմեանս խածատիցէք և ուտիցէք , զդուշ լերուք՝
16 գուցէ ՚ի միմեանց սատակիցիք ։ Բայց զայս ասեմ .
Հոգւով գնացէք , և զցանկութիւն մարմնոյ մի՛ կա-
17 տարէք ։ Զի մարմին ցանկայ հակառակ հոգւոյ , և
հոգի՝ հակառակ մարմնոյ . և մի սոքա միմեանց
հակառակ են , մի՛ զոր կամիցիքն՝ զայն առնիցէք ։
18 Իսկ եթէ Հոգւով վարիք , ապա չէք ընդ օրինաւք ։
19 Զի յայտնի են գործք մարմնոյ , այսինքն են շնու-
թիւն , պոռնկութիւն , պղծութիւն , դիւղութիւն ,
20 կռապաշտութիւն , կախարդութիւն , թշնամու-
թիւն , հերձ , նախանձ , բարկութիւն , հակառա-

21 կութիւնք , երկպառակութիւնք , հերձուածք , զա-
բաւնութիւնք , ապանութիւնք , արբեցութիւնք ,
անառակութիւնք , և որ ինչ սոցին նման են . զոր
յառաջագոյն իսկ ասեմ՝ ձեզ , որպէս կանխաւն ա-
սէի թէ որ զայսպիսի ինչ գործեն՝ զարքայութիւն
22 Աստուծոյ ոչ ժառանգեն ։ Իսկ պտուղ Հոգւոյն
այս է . սէր , խնդութիւն , խաղաղութիւն , երկայն-
23 մտութիւն , քաղցրութիւն , բարութիւն , հա-
ւատք , հեզութիւն , ժուժկալութիւն . զայսպիս-
24 սեաց ոչ օրէնքն չեն հակառակ ։ Իսկ որ Քրիս-
տոսինն են , զմարմինս իւրեանց ՚ի խաչ հանին
25 կարէոքն և ցանկութեամբն հանդերձ ։ Եթէ կեանք
26 Հոգւով՝ ընդ Հոգւոյն և միաբանեսցուք ։ Եւ մի՛
լիցուք մնապարծք՝ միմեանց ձայն տալով և ընդ
միմեանս նախանձելով ։

Գլ· Զ

1 Եղբարք , եթէ յանկարծ ըմբռնեսցի ոք *՚ի ձէնջ
յինչ և իցէ յանցանս , դուք որ հոգեւորքդ էք՝
հաստատեցէք զայնպիսին հոգւով հեզութեան .
զդուշ լինիցիք անձանց դուք մի՛ և դուք փորձիցիք ։
2 Զմիմեանց բեռն բարձէք , և այնպէս կատարեցէք
3 զօրէնն Քրիստոսի ։ Եթէ համարիցի ոք լինել ինչ՝
4 և չիցէ , զանձն իւր խաբէ ։ Զգործ իւր կշռեսցէ
իւրաքանչիւր ոք , և ապա անձին իւրում միայն
5 պարծանս տացէ , և մի՛ առ ընկերասն ։ Զի իւրա-
քանչիւր ոք զիւր բեռն բառնալոց է ։

* ի Յունին չէ ։

6 Հաղորդութիւն արասցէ *աշակերտն վարդապե-
7 տին յամենայն բարութիւնս : Մի՛ խաբիք , Ա-
8 տուածդ ոչ արհամարհի : Զի զոր ինչ սերմանէ մարդ՝
զնոյն և հնձեսցէ . որ սերմանէ ի մարմին իւր , ի
մարմնոյ անտի հնձեսցէ զապականութիւն . և որ
սերմանէ ի հոգին՝ ի հոգւոյ անտի հնձեսցէ զկեանն
9 յաւիտենից : Ա.յլ զբարիս գործել մի՛ ձանձրաս-
ցուք , զի ի ժամանակի իւրում հնձեսցուք †առանց
10 լքանելոյ՛՛ : Ա.յսուհետեւ մինչդեռ ժամանակս ի
ձեռս է՝ գործեսցուք զբարիս առ ամենեսեան , մա-
նաւանդ առ ընտանիսն հաւատոց :
11 Տեսէք որպիսի գրով գրեցի առ ձեզ իմով ձե-
12 ռամբ : Զի որ միանգամ կամին բարեմարդիկ լինել
մարմնով , նոքա ստիպեն զձեզ թլփատել . միայն
13 զի մի ‡զխաչին Քրիստոսի զհետ երթայցեն ։՛՛ Քան-
զի որ թլփատեալքն իսկ են՝ նոքա զօրէնսն ոչ պա-
հեն , այլ կամին զի դուք թլփատեսջիք , զի ձերով
14 մարմնովք պարծեսցին : Ա.յլ ինձ քաւ լիցի պար-
ծել , բայց միայն ի խաչն Տեառն մերոյ Յիսուսի
Քրիստոսի , որով ինձ աշխարհ ի խաչ ելեալ է՝ և ես
15 աշխարհի : Զի ի Քրիստոս Յիսուս ոչ թլփատու-
թիւն ինչ է՝ և ոչ անթլփատութիւն , այլ նոր արա-
16 րածս : Եւ որ միանգամ այսմ կանոնի միաբան լինին ,
խաղաղութիւն ի վերայ նոցա և ողորմութիւն , և ի
17 վերայ Իսրայէլին Ա.տուածոյ : Ա.յսուհետեւ աշխատ

* Յայլն՝ աշակերտ բանին
† Յայլն՝ եթէ ոչ լքանիցիմք :
‡ Յայլն՝ վասն խաչին Քրիստոսի հալածեսցին :

ող ոք ինձ մի արասցէ , զի ես *զչարչարանսն Քրիս-
18 տոսի ի մարմնի իմում կրեմ : Շնորհք Տեառն մե-
րոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ոգւոյդ ձերում , եղ-
բարք : Ա.մէն :

Ա՚ Գալատացւոց գրեցաւ ի Հռովմէ :

ԹՈՒՂԹ
ՊՕՂՈՍԻ Ա.ՌԱ.ՔԵԼՈՅ
ԱՌ ԵՓԵՍԱՑԻՍ

ԳԼ. Ա

1 ՊՕՂՈՍ առաքեալ Յիսուսի Քրիստոսի կամաւն
Ա.ստուածոյ՝ սրբոց որ են յԵփեսոս , և հաւատա-
2 ցելոց ի Քրիստոս Յիսուս . Շնորհք ընդ ձեզ և խա-
ղաղութիւն յԱ.ստուծոյ Հօրէ մերմէ և ի Տեառ-
3 նէ Յիսուսէ Քրիստոսէ : Օրհնեալ է Ա.ստուած և
Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի , որ օրհ-
նեաց զմեզ ամենայն հոգեւոր օրհնութեամբ յեր-
4 կնաւորս ի Քրիստոս . որպէս ընտրեաց զմեզ նովաւ
յառաջ քան զլինելն աշխարհի , լինել մեզ սուրբս

* Յայլն՝ զերաշխեպան

5 և անարատս առաջի նորա սիրով։ Յառաջագոյն
սահմանեաց զմեզ յորդեգրութիւն ի ձեռն Յիսու-
սի Քրիստոսի ի նոյն՝ ըստ հաճութեան կամաց իւ-
6 րոց, ի գովեստ փառաց շնորհացն իւրոց՝ որով
7 ընտրացոյց զմեզ սիրելեաւն ։ Որով ունիմք զփրկու-
թիւն ի ձեռն արեան նորա, զթողութիւն մե-
8 ղաց՝ ըստ մեծութեան շնորհացն իւրոց · Որ առա-
տեալս ի մեզ ամենայն իմաստութեամբ և գիտու-
9 թեամբ ։ Եցոյց մեզ զխորհուրդս կամաց իւրոց ըստ
հաճութեան իւրում. զոր յառաջագոյն եդ նովաւ,
10 ի անտեսութիւն լման ժամանակաց, բովանդա-
կել զամենայն Քրիստոսիս, որ ինչ յերկինս և որ
11 ինչ յերկրի ի նմա ։ Որով և վիճակեցաք յառա-
ջագոյն հրաւիրեալք՝ ըստ յառաջադրութեանն
*Աստուծոյ · որ զամենայն յաջողէ ըստ խորհրդոց
12 կամաց իւրոց · Լինել մեզ ի գովեստ փառաց նո-
13 րա՝ յառաջագոյն յուսացելոցս ի Քրիստոս ։ Որով
և դուք իբրեւ լուարուք զբանն ճշմարտութեան,
զաւետարանն փրկութեան ձերոյ, որով և հաւա-
14 տացեալ կնքեցայք Հոգւովն Սրբոյ աւետեաց · Որ
է առհաւատչեայ ժառանգութեան մերոյ, ի փրկու-
թիւն †նուաճութեան, ի գովեստ փառաց նորա։
15 Վասն այնորիկ և ես իբրեւ լուայ զհաւատսն զձեր՝
որ ի Տէր Յիսուս, և զսէրն որ ընդ ամենայն սուրբ-
16 բսն, Ոչ դադարեմ՝ ի գոհանալոյ վասն ձեր՝ յի-
17 շել զձեզ յաղօթս · Զի Աստուած Տէառն մերոյ
Յիսուսի Քրիստոսի՝ Հայրն փառաց՝ տացէ ձեզ զՀո-
գին իմաստութեան և յայտնութեան՝ գիտու-

* Յոյնն՝ նորա

† Յոյնն՝ աստուածոյ

18 թեամբն իւրով. Լուսաւորս առնել զաչս *սրտից՝
առ ի գիտելոյ մեզ՝ զի՛նչ է յոյս կոչման նորա, և
զի՛նչ մեծութիւն փառաց ժառանգութեան նորա
19 ի սուրբս . Եւ զի՛նչ է առաւելութիւն մեծութեան
զօրութեան նորա ի մեզ հաւատացեալս՝ ըստ յա-
20 ջողութեան կարողութեան զօրութեան իւրոյ , Զոր
յաջողեաց ի Քրիստոս, զի յարոյց զնա ի մեռե-
21 լոց , և նստոյց ընդ աջմէ իւրմէ յերկնաւորս ի վե-
րոյ ամենայն իշխանութեան և պետութեան և զո-
րութեան և տէրութեան և ամենայն անուան ան-
ուանելոյ , ոչ միայն յաշխարհիս յայսմիկ՝ այլ և
22 ի հանդերձեալսն ։ Եւ զամենայն ինչ հնազանդ ա-
րար ի ներքոյ ոտից նորա , և զնա եդ գլուխ ի վե-
23 րոյ ամենայն իրիք եկեղեցւոյ , Որ է մարմին նորա ,
լրումն՝ որ զամենայն յամենայնի ընդ։

Գլ. Բ

1 Եւ դուք որ մեռեալք էիք ի մեղս ձեր և յան-
2 ցանս , Յորս երբեմն գնայիք ըստ յաւիտենի աշ-
խարհիս այսորիկ՝ ըստ իշխանին իշխանութեան օ-
դոյս այսոյ , որ այժմ ընդգործեալ է յորդիսն ապըս-
3 տամբութեան . Յորս և մեք ամենեքեան շրջեաք
երբեմն ի ցանկութիւնս մարմնոյ մերոյ , և առնեաք
զկամս մարմնոյ և զմտաց , և էաք †արդարեւ որդիք
4 բարկութեան իբրեւ այլքն ։ Այլ Աստուած որ
մեծն է ողորմութեամբ , վասն բազում՝ սիրոյն ի-

* Յոյնն՝ սրտի ձերոյ՝ առ ի գիտելոյ ձեզ

† Յոյնն՝ ի բնէ

5 բոյ՝ զոր սիրեացն վաղ, Մինչդեռ մեռեալն էաք
'ի մեղս մեր, կենդանիս արար զմեզ 'ի Քրիստոս.
6 քանզի շնորհօք ապրեցաք. Ընդ նմին յարոյց, և
ընդ նմին նստոյց յերկնաւորս 'ի Քրիստոս Յիսուս.
7 Զի ցուցցէ 'ի յաւիտեանսն որ գալոցն են՝ զառա-
ւել մեծութիւն շնորհացն իւրոց՝ քաղցրութեամբ
8 'ի մեզ 'ի Քրիստոս Յիսուս. Զի շնորհօք *նորա էք
փրկեալք 'ի ձեռն հաւատոցն. և այս ոչ 'ի ձէնջ,
9 այլ Աստուծոյ պարգեւ է. Ոչ 'ի գործոց, զի մի
10 ոք պարծեսցի. Զի նորա արարածք եմք՝ հաստա-
տեալք Քրիստոսիս Յիսուսիս 'ի գործս բարութեան,
յորս յառաջագոյն պատրաստեաց Աստուած, զի
'ի նոսին գնասցուք.
11 Վասն որոյ և դուք յիշեցէք՝ զի երբեմն հեթա-
նոսք էիք մարմնով, որ կոչեցեալն են անթլփատու-
թիւն յանուանեալ թլփատութենէ անտի մար-
12 մնաւոր ձեռագործին. Զի էիք 'ի ժամանակին յայն-
միկ առանց Քրիստոսի, և օտարացեալք յառա-
քինութենէն Իսրայէլի, և տարագիրք յուխտից
աւետեացն, և յոյս ինչ ոչ ունէիք և անաստուածք
13 էիք յաշխարհի. Իսկ այժմիկ 'ի ձեռն Յիսուսի
Քրիստոսի դուք որ երբեմն հեռաւորքն էիք՝ մեր-
14 ձաւորք եղերուք արեամբն Քրիստոսի. Զի նա է
խաղաղութիւն մեր՝ որ արար զերկոսեան մի, և
զմիջնորմն ցանկոյն քակեաց զթշնամութիւն 'ի մարմ-
15 նի իւրում. Եւ զօրէնս պատուիրանացն հրամանօքն՝
խափանեաց, զի զերկոսին հաստատեսցէ ինքեամբ
16 'ի մի նոր մարդ, և արասցէ խաղաղութիւն. Եւ

* Ի յ--ին էփ։

հաշտեցուսցէ զերկոսին *միով մարմնով'' ընդ Ա-
ստուծոյ խաչիւն իւրով. քանզի սպան զթշնամու-
17 թիւն յանձին իւրում։ Եւ եկն աւետարանեաց
խաղաղութիւն ձեզ հեռաւորաց, և խաղաղութիւն
18 մերձաւորաց. Զի նովաւ ունիմք զնաւանութիւն
19 երկոքին միով հոգւով առ Հայր։ Ապա այսուհե-
տեւ ոչ էք օտարք և պանդուխտք, այլ քաղա-
20 քակից սրբոց և ընտանիք Աստուծոյ, շինեալք
'ի վերայ հիման առաքելոց և մարգարէից, որոյ է
21 գլուխ անկեանն Քրիստոս Յիսուս. Յորում ամե-
նայն շինուածն յօգեալ և պատշաճեալ՝ աճէ 'ի
22 տաճար սուրբ Տեառն, Յորում և դուք ընդ նմին
շինիք 'ի բնակութիւն Աստուծոյ Հոգւով։

Գ Լ · Գ

1 Վասն այսորիկ ես Պօղոս կապեալ Յիսուսի
2 Քրիստոսի վասն ձեր հեթանոսաց. Թերեւս լուեալ
էք ձեր զնտեսութիւն շնորհացն Աստուծոյ, որ
3 տուեալ են ինձ 'ի ձեզ։ Զի ըստ յայտնութեանն
ցուցաւ ինձ խորհուրդն, որպէս յառաջագոյն գրե-
4 ցի առ ձեզ սակաւուք. Առ 'ի կարդալ լինելոյ ըն-
թեռնուլ և 'ի միտ առնուլ զիմաստութիւնն զիմ
5 'ի խորհրդեանն Քրիստոսի։ Զի այլոց ազգաց ոչ
ցուցաւ որդւոց մարդկան, որպէս այժմ յայտնե-
ցաւ սրբոց իւրոց առաքելոց և մարգարէից՝ Հո-
6 գւովն. Լինել հեթանոսաց ժառանգակիցս և մար-
մնակիցս, և հաղորդս աւետեացն 'ի Քրիստոս †Յի-

* Յ---ն՝ 'ի միում մարմնի † Ի Յ---ին էփ

7 սուս առեւտրանաւն , Որոյ եղէ ես սպասաւորը ըստ
պարգեւաց շնորհացն Աստուծոյ՝ որ տուան ինձ
8 ըստ յայտնութեան զօրութեան նորա ։ Ինձ՝ որ
տրուպս եմ՝ ամենայն սրբոց , տուան շնորհս այս՝
ի հեթանոսս աւետարանել զանքնին մեծութիւնն
9 Քրիստոսի , Եւ լուսաւորը առնել զամենեսին , թէ
զինչ է տնտեսութիւն խորհրդոյն , որ ծածկեալ էր
յամենայն յաւիտեանց առ Աստուծոյ՝ որ զամե-
10 նայն ինչ արար . Զի յայտնեսցի արդ իշխանու-
թեանց և պետութեանց որ յերկինս են՝ ի ձեռն
եկեղեցւոյ բազմազգատիկ իմաստութիւնն Աստու-
11 ծոյ , Ըստ յաւիտենից յաւիտեանցն՝ զոր
արար ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ։
12 Որով ունիմք զհամարձակութիւն և զնուաճութիւն
յուսով ի ձեռն հաւատոյ նորա ։
13 Վասն որոյ աղաչեմ՝ մի՛ ձանձրանալ ի նեղու-
թեանս *մերում՝ որ վասն ձեր է, որ է փառք ձեր ։
14 Վասն այսորիկ դնեմ ծունր առ Հայր Տեառն մե-
15 րոյ Յիսուսի Քրիստոսի , Որմէ ամենայն նահա-
16 պետութիւն յերկինս և յերկրի անուանի, Զի տացէ
ձեզ ըստ մեծութեան փառացն իւրոց , հաստատել
զօրութեամբ ի ձեռն Հոգւոյն իւրոյ ի ներքինն մար-
17 դն . Բնակել Քրիստոս հաւատովք ի սիրտս ձեր ,
18 սիրով արմատացեալք և հաստատեալք ։ Զի կա-
րող լինիջիք հասանել ընդ ամենայն սուրբս , զինչ
է լայնութիւն և երկայնութիւն և բարձրութիւն
19 և խորութիւն . Ճանաչել զառաւելութիւն գիտու-
թեան սիրոյն Քրիստոսի , զի լցջիք ամենայն լցու-

* Յայնմ իմում

20 թեամբն Աստուծոյ ։ Ա՛յլ այնմ՝ որ կարողն է ա-
ռաւել քան զամենայն ինչ առնել յաճախու-
թեամբ՝ քան զոր խնդրեմքն և իմանամք , ըստ զո-
21 րութեանն որ յաջողեալն է ի մեզ , Նմա փառք
ի եկեղեցւոջն * և ի Քրիստոս Յիսուս յամենայն
ազգս յաւիտենից յաւիտեանս ։ Ամէն ։

Գլ· Դ·

1 Արդ աղաչեմ զձեզ ես որ կապեալս եմ ի Տէր,
2 արժանի գնալ կոչմանն՝ յոր կոչեցարուք , Ա՛մե-
նայն խոնարհութեամբ և հեզութեամբ և երկայն-
3 մտութեամբ անսալ միմեանց սիրով . փութալ պա-
հել զմիաբանութիւն Հոգւոյն յօդիւ խաղաղու-
4 թեան ։ Մի մարմին և մի հոգի , որպէս և կոչե-
5 ցարուք ի մի յոյս կոչմանն ձերոյ ։ Մի է Տէր , մի
6 հաւատք, մի մկրտութիւն . Մի Աստուած և Հայր
ամենեցուն՝ որ ի վերոյ ամենայնի և ընդ ամենե-
7 սին և յամենեսին ի մեզ ։ Ա՛յլ իւրաքանչիւր ու-
մեք ի մէնջ տուեալ են շնորհք ըստ չափոյ պար-
8 գեւացն Քրիստոսի ։ Վասն որոյ և ասէ , Եւ ի
բարձանելն , գերեաց զգերութիւն ևետ պարգեւս
9 մարդկան ։ Որ եղն , զի՞նչ է , եթէ ոչ՝ զի էջ նախ
10 ի ստորին կողմն երկրի ։ Որ էջն , նոյն է՝ և որ եկն
ի վերոյ քան զամենայն երկինս , զի լցցէ զամե-
11 նայն ։ Եւ նա ետ զմանս առաքեալս, զմանս մար-
գարէս , զմանս աւետարանիչս , զմանս հովիւս և
12 վարդապետս . ի հաստատութիւն սրբոց , ի գործ

* Ի Յոհ·ին ՀԱ ։

13 պաշտամանն, 'ի շինուած մարմնոյն Քրիստոսի. Մինչեւ
չեւ հասցուք ամենեքեան 'ի մի միաբանութիւն
հաւատոյ և գիտութեան Որդւոյն Աստուծոյ, յայր
կատարեալ 'ի չափ հասակի կատարմանն Քրիստո-
14 սի : Զի մի՛ յայսմհետէ իցեմք տղայք խռովեալք
և տատանեալք յամենայն հողմոյ վարդապետու-
թեան՝ խաբէութեամբ մարդկան, խորամանկու-
15 թեամբ 'ի խաբեութիւն մոլորութեան. Այլ ճըշ-
մարտեալք սիրով՝ աճեցուսցուք 'ի նա զամենայն,
16 որ է գլուխ՝ Քրիստոս. Ուստի ամենայն մարմինն
յօդեալ և պատշաճեալ ամենայն խաղալեօք տար-
բերութեան՝ ըստ ազդեցութեան չափով ըստ իւ-
րաքանչիւր մասին՝ զաճումն մարմնոյ գործէ 'ի շի-
նած անձին իւրոյ սիրով։
17 Այրդ զայս ասեմ և ուխտեմ 'ի Տէր, մի՛ եւս ձեզ
զնոյն օրինակ գնալ՝ որպէս և այլ հեթանոսք գնան
18 ունայնութեամբ մտաց իւրեանց. Որոց խաւարեալ
են սիրտք իւրեանց, և օտարացեալ են 'ի կենաց
անտի Աստուծոյ վասն տգիտութեանն որ է 'ի նո-
19 սա, վասն կուրութեան սրտից իւրեանց։ Որք *զան-
ձանց իւրեաց ղՀոյսն հատին, և՝ մատնեցին զան-
ձինս գիշութեան, 'ի գործս ամենայն պղծութեան
20 ագահութեամբ։ Այլ դուք ոչ այսպէս ուսարուք
21 զՔրիստոս, Թէպէտ և լսեարուք զնմանէ և նովաւ
22 ուսայք, որպէս է ճշմարտութիւնն Յիսուսի. Ի բաց
մերկանալ 'ի ձէնջ ըստ առաջինն գնացիցն զմարդն
հինն՝ զապականեալն ցանկութեամբք խաբէութեա-
23 նըն. Եւ նորոգել հոգւովն մտաց ձերոց, (24) Եւ

* Յ-ՅՅՅ՝ անզգայացեալք

զգենուլ զնոր մարդն՝ որ ըստ Աստուծոյն հաստա-
տեալ է արդարութեամբ և սրբութեամբ ճշմար-
25 տութեանն։ Վասն որոյ 'ի բաց ընկեցէք զսուտ-
թիւն, խօսեցարուք զճշմարտութիւն իւրաքանչիւր
ընդ ընկերի իւրում՝ զի եմք միմեանց անդամք։
26 Բարկանայք՝ և մի՛ մեղանչէք. արեգակն 'ի վերայ
27 բարկութեան ձերոյ մի՛ մտցէ։ Եւ մի՛ տայք տեղի
28 Սատանայի։ Որ գողանայրն՝ մի՛ եւս գողասցի, այլ
մանաւանդ վաստակեսցէ գործել ձեռօք իւրով
զբարիս. զի բաւական իցէ տալ՝ ումՙ պիտոյ իցէ։
29 Ամենայն բան տգեղ 'ի բերանոյ ձերմէ մի՛ ելցէ,
այլ որ ինչ բարին է 'ի շինած պիտոյից, զի տացէ
30 շնորհս այնոցիկ՝ որ լսենն։ Եւ մի՛ տրամեցուցանէք
զՀոգին Սուրբ Աստուծոյ, որով կնքեցարուք յա-
31 ւուրն փրկութեան։ Ամենայն դառնութիւն և բար-
կութիւն և սրտմտութիւն և աղաղակ և հայհո-
յութիւն բարձցի 'ի ձէնջ ամենայն չարութեամբն
32 հանդերձ։ Լերուք ընդ միմեանս քաղցունք, գթածք՝
շնորհել միմեանց, որպէս և Աստուած Քրիստոսիս
շնորհեաց մեզ։

Գլ. Ե

1 Եղերուք նմանողք Աստուծոյ իբրեւ որդիք սի-
2 րելիք, Եւ գնացէք սիրով՝ որպէս և Քրիստոս սի-
րեաց զմեզ, և մատնեաց զանձն իւր վասն մեր պա-
տարագ և զենումն Աստուծոյ 'ի հոտ անուշից։
3 Այլ պոռնկութիւն և ամենայն պղծութիւն կամ
ագահութիւն և անուանեսցի մի՛ 'ի միջի ձերում,
4 որպէս և վայել է սրբոց. Եւ շաղթութիւն կամ

խօսք յիմարութեան կամ խեղկատակութիւն որ
5 ոչ վայել է, այլ մանաւանդ գոհութիւն։ Զայս
տեղեկացեալ գիտասջիք թէ ամենայն պոռնիկ կամ
պիղծ կամ ագահ որ է կռապարիշտ՝ ոչ ունի ժա-
ռանգութիւն յարքայութեան Քրիստոսի և Աս-
6 տուծոյ։ Մի՛ ոք զձեզ խաբեսցէ բանիւք սնոտւովք,
զի վասն այսորիկ իսկ գայ բարկութիւն Աստուծոյ
7 ի վերայ որդւոցն անհնազանդութեան։ Մի՛ այսու-
8 հետեւ լինիք բաժանորդք նոցա։ Զի թէպէտ և
երբեմն էիք խաւար, արդ լոյս էք ի Տէր. իբրեւ
9 զորդիս լուսոյ գնացէք. Զի պտուղ լուսոյ ամենայն
բարութեամբ է և արդարութեամբ և ճշմարտու-
10 թեամբ, փորձեցէք զինչ է հաճոյ Տեառն. (11) եւ
մի՛ կցորդ լինիք անպտղութեան գործոցն խաւարի,
12 այլ մանաւանդ յանդիմանեցէք։ Զի որ ի ծածուկ
13 ինչ գործի ի նմանէ՝ ջոյն և խօսել աղտեղի է։ Ա՛յլ
ամենայն ինչ յանդիմանեալ՝ ի լուսոյ յայտնի լի-
14 նի. զի ամենայն ինչ որ յայտնի է՝ լոյս է։ Վասն
որոյ և ասէ, Արի որ ննջեսդ, և կանգնեաց ի մե-
ռելոց, և լուսաւոր լիցի քեզ Քրիստոս։
15 Տեսջիք՝ որպէս ճշմարտիւ գնայցէք. մի՛ իբրեւ
16 անիմաստք, Ա՛յլ իբրեւ իմաստունք. գնեցէք ըզ-
17 ժամանակս, զի աւուրքս չարութեան են։ Վասն
այնորիկ մի՛ լինիք անմիտք, այլ իմացարուք զինչ
18 կամք են Տեառն։ Եւ մի՛ արբենայք գինւով յո-
րում զեղխութիւն է, այլ մանաւանդ լցարուք Հո-
19 գւով, խօսել *ի սիրտս ձեր՝ սաղմոսիւք և օրհ-
նութեամբք և երգովք հոգեւորօք, երգել և սաղ-

* Յայն՝ ընդ միմեանս

20 մոս ասել ի սիրտս ձեր Տեառն։ Գոհացարուք յա-
մենայն ժամ ի վերայ ամենայնի՝ յանուն Տեառն
մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ Հօր և Աստուծոյ։
21 Հնազանդ լերուք միմեանց երկիւղիւն Քրիստոսի։
22 Կանայք իւրեանց արանց հնազանդ լիցին իբրեւ
23 Տեառն. Զի այր է գլուխ կնոջ, որպէս և Քրիստոս
գլուխ է եկեղեցւոյ, և ինքն է փրկիչ մարմնոյ։
24 Ա՛յլ որպէս եկեղեցին հնազանդ լինի Քրիստոսի,
նոյնպէս և կանայք՝ իւրեանց արանց յամենայնի։
25 Արք, սիրեցէք զկանայս ձեր, որպէս և Քրիստոս
սիրեաց զեկեղեցի, և զանձն իւր մատնեաց վասն
26 նորա. Զի զնա սրբեսցէ սրբութեամբ աւազանին՝
27 բանիւ. Զի կացուսցէ ինքն իւր յանդիման փա-
ռաւոր զեկեղեցի, զի մի՛ ունիցի ինչ արատ կամ
*աղտեղութիւն կամ այլ ինչ յայնպիսեաց, այլ
28 զի իցէ սուրբ և անարատ։ Նոյնպէս պարտին արք
սիրել զիւրեանց կանայս իբրեւ զիւրեանց մարմինս.
29 որ սիրէ զկին իւր՝ զանձն իւր սիրէ. Զի ոչ ոք ե-
րբէք ատեաց զանձն իւր, այլ սնուցանէ և դարմա-
30 նէ զնա, որպէս և Քրիստոս զեկեղեցի. Զի ան-
դամք եմք մարմնոյ նորա, ի մարմնոյ նորա և յոս-
31 կերաց նորա։ Վասն այսորիկ թողցէ այր զհայր և
զմայր իւր, և երթիցէ զկնի կնոջ իւրոյ, և եղի-
32 ցին երկոքեան ի մարմին մի։ Խորհուրդս այս մեծ է,
33 բայց ես ասեմ ի Քրիստոս և յեկեղեցի։ Ա՛յլ և
դուք նոյնպէս մի ըստ միոջէ, զի իւրաքանչիւր ոք
զկնոջ կին այնպէս սիրեսցէ իբրեւ զիւր անձն, և
կին երկնչիցի յառնէ իւրմէ։

* Յայն՝ կնճիռն

ԳԼ· Զ

1 Որդիք, հնազանդ լերուք ծնողաց ձերոց ի Տէր,
2 զի այն է արժանն։ Պատուեա զՀայր քո և զմայր,
3 որ է առաջին պատուիրան յաւետիսն, Զի քեզ
բարի եղիցի, և երկայնակեաց լինիցիս ի վերայ
4 երկրի։ Հարք, մի՛ զայրացուցանէք զորդիս ձեր,
այլ սնուցանիջիք զնոսա խրատու և ուսմամբ Տեա-
5 ւըն։ Ծառայք, հնազանդ լերուք տերանց ձերոց
մարմնաւորաց ահիւ և դողութեամբ և սիրտս ա-
6 թեամբ սրտից ձերոց՝ որպէս և Քրիստոսի։ Մի՛ առ
ականէք ծառայել իբրեւ մարդահաճոյք, այլ իբ-
րեւ ծառայք Քրիստոսի առնել զկամս Աստուծոյ.
7 Սրտի մտօք ծառայել իբրեւ Տեառն՝ և մի՛ իբրեւ
8 մարդկան։ Գիտասջիք թէ իւրաքանչիւր ոք որ զինչ
առնէ զբարին, զնոյն ընդունի և ի Տեառնէ՝ եթէ
9 ծառայ և եթէ ազատ։ Եւ դուք, տեարք, զնոյն
առնիջիք առ նոսա, ներելով առնել զպատուհասն,
գիտասջիք թէ և նոցա և ձեր Տէր գոյ յերկինս.
և անձնառութիւն ոչ գոյ առաջի նորա։
10 *Ա յաւուրհառաւ զօրացարուք Տերամբ և կարողու-
11 թեամբ զօրութեանն նորա։ Եւ զգեցարուք զսպառա-
զինութիւնն Աստուծոյ, զի կարող լինիջիք կալ ընդ-
12 դէմ հնարից Սատանայի։ Զի ոչ է մեզ պատերազմ
ընդ մարմնով և ընդ արեան, այլ ընդ իշխանութիւնս
և ընդ պետութիւնս և ընդ աշխարհակալս խաւարիս
այսորիկ, ընդ ոգիս չարութեան՝ որ ի ներքոյ երկնից։

* Յոյնն՝ Ա յաւուրհառաւ, եղբարք իմ,

13 վասն այսորիկ առէք զսպառազինութիւնն Ա-
ստուծոյ, զի կարող լինիջիք ի դիմի հարկանել *չա-
14 րին յաւուրն չարութեան։ Եւ իբրեւ զամենայն
ինչ կատարիցէք՝ հաստատուն կացէք, զգեղի կալ-
ջիք, պնդեալ զմէջս ձեր ճշմարտութեամբ, և զգ-
15 եցեալ զզրահան արդարութեան, Եւ ագուցեալ
զոտս պատրաստութեամբ աւետարանին խաղաղու-
16 թեան։ Յեան և ի վերայ ամենայնի առէք զվահանն հա-
ւատոց, որով կարող լինիջիք զամենայն նետս մեխս
17 չարին շիջուցանել։ Եւ առէք զսաղաւարտն փրկու-
թեան և զսուսեր Հոգւոյն, որ է բանն Աստուծոյ.
18 Ամենայն աղօթիւք և խնդրուածովք աղօթս առ-
նել յամենայն ժամանակի Հոգւով, և ի նոյն
աքնիջիք ամենայն ժուժկալութեամբ և խնդրուա-
19 ծով վասն ամենայն սրբոց, Եւ վասն իմ, զի ինձ
տացի բան ի բանալ բերանոյ իմոյ՝ համարձակու-
20 թեամբ ցուցանել զխորհուրդ աւետարանին. Վասն
որոյ պատգամաւորիմ կապանօքս, զի նովին հա-
մարձակեցայց՝ որպէս և պարտ իցէ ինձ խօսել։
21 Բայց զի գիտիցէք և դուք զինչն՝ զինչ գործիցեմ, զամենայն ինչ ցուցցէ ձեզ Տիւքիկոս սիրելի
22 եղբայր և հաւատարիմ պաշտօնեայ ի Տէր. Զոր
առաքեցի առ ձեզ դմին իրի, զի գիտասջիք զուք
23 զմինչ, և մխիթարեսցէ զսիրտս ձեր։ Խաղաղու-
թիւն ընդ եղբարս, և սէր հաւատովքն Հանդերձ
Յաստուծոյ ի Հօրէ և ի Տեառնէ Յիսուսէ Քրիս-
24 տոսէ։ Շնորհք ընդ ամենեսին՝ որք սիրեն զՏէր մեր
Յիսուս Քրիստոս անեղծութեամբ։ Ամէն։

* ի յոյնն չէ։
Ա· եփեսոսէ գրեցաւ ի Հռովմէ ի ձեռն Տիւքիկոսի։

ԹՈՒՂԹ

ՊՕՂՈՍԻ Ա.Ո.Ա.ՔԵԼՈՅ

ԱՌ ՓԻԼԻՊԵՑԻՍ

ԳԼ. Ա

1 ՊՕՂՈՍ և Տիմոթէոս, ծառայք Յիսուսի Քրիստոսի՝ ամենայն սրբոց ի Քրիստոս Յիսուս, որ են ի
2 Փողմանս Փիլիպեցւոց, եպիսկոպոսակցօք և սարկաւագօք. Շնորհք ընդ ձեզ և խաղաղութիւն Աստուծոյ Հօրէ մերմէ և ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ։
3 Գոհանամ զԱստուծոյ իմոյ ի վերայ ամենայն
4 յիշատակաց ձերոց, Յամենայն ժամ յամենայն խնդրուածս իմ՝ վասն ձեր ամենեցուն առնել ա-
5 ղօթս խնդութեամբ, վասն հաղորդութեան ձերոյ ընդ աւետարանին յօրէ յառաջնումէ մինչեւ ցայժմ.
6 վստահ եմ յայդ թէ որ սկսաւն ի ձեզ զգործս բարեաց՝ կատարեսցէ մինչեւ յօրն Յիսուսի Քրիս-
7 տոսի. Որպէս իրաւ իսկ թուի ինձ խորհել զայս վասն ձեր ամենեցուն, վասն ունելոյ ինձ զձեզ ի սրտի ի կապանս իմում, և ի պատասխանատուութեան և ի հաստատութեան աւետարանին,
8 կցորդս ինձ շնորհացդ զձեզ ամենեսին լինել, վկայ է ինձ Աստուած, որպէս անձկացեալ եմ առ ձեզ

9 ամենեսին գթովքն Քրիստոսի Յիսուսի. Եւ զայն աղօթս առնեմ, զի սէրն ձեր եւս քան զեւս առաւել լիցի ի գիտութեան և յամենայն իմաս-
10 տութեան, Ընտրել ձեզ զլաւն՝ զի իցէք *հաստատունք և առանց դպիրակղութեան յաւուրն
11 Քրիստոսի. Լցեալ պտղովք արդարութեան ի ձեռն Յիսուսի Քրիստոսի ի փառս և ի գովեստ Աստուծոյ։
12 Կամիմ թէ գիտիցէք, եղբարք, զի որ ինչ վասն իմ էր, եւս քան զեւս ի յառաջադիմութիւն ա-
13 ւետարանին եկն. Մինչեւ կապանաց իմոց յայտնի լինել ի Քրիստոս յամենայն հրապարակիս և առ
14 այլս ամենեսին. Եւ առ բազում եղբարս ի Տէր, որ վստահ են կապանաւքս իմովք՝ առաւել եւս համարձակել՝ առանց երկիւղի զբանն †Աստուծոյ խո-
15 սել, Ոմանք առ նախանձու և հակառակութեան, և ոմանք մտադիւրութեամբ իսկ զՔրիստոս քարո-
16 զեն. Եւ ոմանք ի սիրոյ, քանզի գիտեն եթէ ի
17 պատասխանատուութիւն աւետարանին կամ. Եւ ոմանք առ հեռուստութեան զՔրիստոս պատմեն, այլ ոչ սրբութեամբ. քանզի համարին նեղութիւնս
18 յարուցանել ի վերայ կապանաց իմոց։ Բայց այս զի՞նչ է. որով օրինակաւ և իցէ՝ եթէ պատճառանօք և եթէ ճշմարտութեամբ՝ Քրիստոս պատմի,
19 և ընդ այս խնդամ՝ այլ և ուրախ եւս եղեց։ Զի գիտեմ եթէ այս պտիւղ ինձ ի փրկութիւն ի ձերոց խնդրուածոց և ի պարգեւաց Հոգւոյն Յիսու-
20 սի Քրիստոսի, Ըստ ակնկալութեան և յուսոյն ի-

---

* Յոյն՝ անկեղծք

† ի ցաւն վի։

մով , զի մի՛ իւիք յամեթ եղեց , այլ ամենայն հա-
մարձակութեամբ՝ որպէս և յամենայն ժամ, և
այժմ մեծասցի Քրիստոս ՚ի մարմնի իմում՝ եթէ կե-
21 նօք և եթէ մահու : Զի ինձ կեանք Քրիստոս է, և
22 մեռանել՝ շահ : Ապա եթէ կեանքս մարմնով՝ այս
ինձ պտուղ գործոյ է , և զի՛նչ ընտրեցից՝ զայն ոչ
23 գիտեմ: Ընդհակառ եմ յերկոցունց , զցանկալն ելա-
նել և ընդ Քրիստոսի լինել՝ առաւել լաւ համա-
24 րիմ. Եւ կալ մնալ աստէն ՚ի մարմնի՝ կարեւոր
25 եւս վասն ձեր : Եւ զայս յուսացեալ գիտեմ, և-
թէ կացից և մնացից ամենեցուն ձեզ, ՚ի ձեր զար-
26 գանալ և խրախ լինել ՚ի հաւատս . Զի պարծանք
ձեր առաւել լիցին ՚ի Քրիստոս Յիսուս ինեւ՝ ՚ի
միւսանգամ գալստեանն իմում առ ձեզ :
27 Միայն թէ արժանի աւետարանին Քրիստոսի
գնայցէք . զի եթէ գայցեմ և տեսանիցեմ զձեզ,
և եթէ հեռի եցեմ և լսիցեմ զձէնջ, զի հաստա-
տուն կայցէք ՚ի մի հոգի , և միով ընդվղ նահա-
28 տակիցէք ՚ի հաւատս աւետարանին . Եւ մի՛ զան-
դիտիցէք և մի՛ իւիք ՚ի հակառակորդաց անտի , որ
է նոցա հանդէս կորստեան , և ձերոյ փրկութեան :
29 Եւ այդ Աստուծոյ է , որ ձեզ շնորհեցաւ վասն
Քրիստոսի , ոչ միայն ՚ի նա հաւատալ, այլ և վասն
30 նորա չարչարիլ, Զնոյն պատերազմ ունել՝ զոր լիսն
տեսէք և այժմ լսէք *լինին :

Գլ· Բ

1 Արդ եթէ մխիթարութիւն լինչ եցէ ՚ի Քրիստոս,

* Յայժմ՝ լիս :

եթէ սփոփութիւն սիրոյ , եթէ հաղորդութիւն Հո-
2 գւոյ , եթէ գթութիւն և ողորմութիւն , Լցէք զիմն
գութիւնս իմ, զնոյն խորհիլք. զնոյն սէր յանձին
3 ունիջիք , համաշունչք , միախորհուրդք . Մի՛ ինչ
ըստ գրգռութեան , և մի՛ ինչ ըստ սնապարծու-
թեան , այլ խոնարհութեամբ զմիմեանս լաւ հա-
4 մարել առաւել քան զանձինս . Մի՛ զանձանց եւ-
5 եթ գիտել՝ այլ իւրաքանչիւր ոք զընկերին : Զայն
խորհեցի իւրաքանչիւր ոք ՚ի ձէնջ՝ որ և ՚ի Քրիս-
6 տոս Յիսուս . Որ ՚ի կերպարանս Աստուծոյ է , ո-
չինչ յափշտակութիւն համարեցաւ զհաւա-
7 սար Աստուծոյ . Այլ զանձն ունայնացոյց՝ զկեր-
պարանս ծառայի առեալ , ՚ի նմանութիւն մարդ-
կան եղեալ . և կերպարանօք գտեալ իբրեւ զմարդ,
8 խոնարհեցոյց զանձն , լեալ հնազանդ մահու չափ
9 և մահու խաչի : Վասն որոյ և Աստուած զնա ա-
ռաւել բարձրացոյց , և շնորհեաց նմա անուն՝ որ
10 ՚ի վեր է քան զամենայն անուն . Զի յանուն Յի-
սուսի * Քրիստոսի ամենայն ծունր կրկնեսցի՝ երկ-
նաւորաց և երկրաւորաց և անդրամետականաց,
11 Եւ ամենայն լեզու խոստովան լիցի թէ Տէր է Յի-
12 սուս Քրիստոս ՚ի փառս Աստուծոյ Հօր : Ա,յսուհե-
տեւ , սիրելիք իմ, որպէս ժամենայնի հնազանդե-
ցարուք , մի՛ միայն ՚ի գալստեան իմում՝ այլ ա-
ռաւել եւս այժմ՝ յորժամ հեռիս եմ ՚ի ձէնջ,
ահիւ և դողութեամբ զանձանց փրկութիւն գործե-
13 ցէք : Զի Աստուած է՝ որ յայջողէ ՚ի ձեզ կամել
14 և զաւնել վասն հաճութեան : Զամենայն ինչ

* Ի Յունէն կէ :

15 գործեցէք առանց տրտնջելոյ և *քրթմնջելոյ. զի
եղիջիք ամբիծք և անարատք՝ որդիք Աստուծոյ,
անմեղք ի մէջ կամակոր և խեղաթիւր ազգին,
յորոց միջի երեւիցիք իբրեւ լուսաւորք յաշխարհի.
16 Զբանն կենաց ունելլ յանձինս՝ ի պարծանս ինձ
յաւուրն Քրիստոսի, զի ոչ ընդունայն ինչ ընթա-
17 ցայ և ոչ ընդունայն վաստակեցի։ Այլ թէպէտ և
նուիրիմ ի վերայ պատարագի և պաշտաման հա-
ւատոյ ձերոյ, խնդամ և ուրախակից եմ ամենե-
18 ցուն ձեր։ Նոյնպէս և դուք խնդացէք և ուրախա-
կից եղերուք ինձ։
19 Բայց յուսամ՝ ի Տէր Յիսուս զՏիմոթէոս վաղ-
վաղակի արձակել առ ձեզ, զի և ինձ սրտի դիւր
20 լինիցի, յորժամ գիտիցեմ զինչ զձէնջ. Զի ոչ ոք
ունիմ համաշունչ՝ եթէ ընտանեբար հոգայցէ վա-
21 սըն ձեր։ Զի ամենեքին զանձանց խնդրեն, և ոչ
22 զՅիսուսի Քրիստոսի։ Բայց զփորձ նորա գիտէք և
դուք, զի իբրեւ որդի հօր ծառայեաց ընդ իս յա-
23 ւետարանին։ Որդ զսա ակնուհիմ արձակել որ-
24 պէս նայնհետայն զանձնէ տեսուդեցից։ Այլ յու-
սացեալ եմ ի Տէր թէ՝ և ես իսկ ընդ հուպ եկից։
25 Բայց լաւ համարեցայ ղկպափրոդիտոս ղեղբայր և
զգործակից և զընտրակից իմ, զձեր առաքեալ և
զպաշտօնեայ իմոց պիտոյից՝ առաքել առ ձեզ։
26 Քանզի և ինքն իսկ յոյժ անձկացեալ է տեսանել
զամենեսեան զձեզ. և հոգայր՝ զի ձեր լուեալ էր
27 թէ խոթացաւ։ Եւ արդարեւ խոթացաւ մերձ ի
մահ, այլ Աստուած ողորմեցաւ նմա. ոչ նմա միայն՝

* Յայլն՝ վիճելոյ.

այլ և ինձ, զի մի՛ տրտմութիւն ի վերայ տրտմու-
28 թեան կրիցեմ։ Արդ փութապէս յղեցի զնա, զի
տեսեալ զնա միւսանգամ ուրախ լինիցիք, և ես
29 առանց տրտմութեան եղէց։ Ընկալէք զնա ի Տէր
ամենայն խնդութեամբ, և զպայնպիսիսն առ պա-
30 տուականս ունիջիք. Զի վասն գործոյ Տեառն մին-
չեւ ի մահ մերձեցաւ, գուն գործեալ ոգւովք
չափ, զի լցեւ զձեր պակասութիւն քմոյ սպասա-
ւորութեան։

Գլ. Գ

4 Ա.յսուհետեւ, եղբարք իմ, ուրախ լերուք ի
Տէր. զնոյն գրել առ ձեզ՝ ինձ ոչինչ դանդաղելի
2 է, և ձեզ կարի զգուշալի։ Զգոյշ եղերուք ի շանց
անտի, զգոյշ եղերուք ի չար մշակաց անտի, զգոյշ
3 եղերուք ի կրճատութենէ անտի։ Զի Թլփատու-
թիւն մեք եմք, որ *հոգւովն Աստուծոյ՝ պաշտեմք,
և պարծիմք ի Քրիստոս Յիսուս, և ոչ ի մարմին
4 պանծացեալ եմք։ Թէպէտ և ես իսկ զնոյն վստա-
հութիւն ունիմ ի մարմին. եթէ †ոք համարիցի
այլազգ՝ վստահ լինել ի մարմին, առաւել ես
5 ես. Թլփատութեամբ ութօրեայ, յազգէ Իսրայէ-
լի, ի ցեղէ Բենիամինի, Եբրայեցի Եբրայեցւոց,
6 ըստ օրինացն փարիսեցի. Ըստ նախանձայոյզ լի-
նելոյ՝ հալածէի զեկեղեցին. ըստ արդարութեան
7 օրինացն լեալ անարատ։ Այլ որ ինձ շահն

* Յայլն՝ հոգւով զԱստուած

† Յայլն՝ այլ ոք համարիցի

8 էք՝ զոյն ինքս համարիմ վասն Քրիստոսի ։ Ա.ՀԼ
և համարիմ իսկ զամենայն ինքս՝ վասն առաւել
գիտութեանն Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ ,
վասն որոյ զամենայնէ զրկեցայ՝ և համարիմ կըզ-
9 կղջնս, զի զՔրիստոս շահեցայց , եւ գտայց ի նմա.
իրրեւ ոչ ելեմ զիմ ինչ արդարութիւն որ յօրի-
նաց անտի է՝ ունկնիմ, այլ *զհաւատացն Քրիս-
10 տոսի , որ Աստուածոյ արդարութիւնն է՝՝ Հաւա-
տովք . ճանաչել զնա և զզօրութիւն յարութեան
նորա և զհաղորդութիւն չարչարանաց նորա , կեր-
11 պարանակից լինել մահու նորա . թէ որպէս հասից
12 ի մեռելոցն յարութիւն ։ Իբր ոչ ելեմ արդէն ա-
ռեալ իցեմ, կամ արդէն կատարեալ իցեմ. զկնա
մնեալ եմ թէ հասից , ֆմանուանդ թէ ըմբռնեալ
13 իսկ իցեմ՝՝՝ ի Քրիստոսէ Յիսուսէ ։ Եղբարք , ես
ոչ համարիմ զանձն իմ թէ հասեալ իցեմ. բայց
մի ինչ է՝ զի զառ ի յետոյն մոռացեալ եմ, և
14 ի յառաջագէմսն նկրտեալ եմ. Ուղ եդեալ՝ ըն-
թանամ ‡ի կէտ կոչմանն Աստուծոյ ի Քրիստոս
15 Յիսուս ։ Ա.յսուհետեւ ոք միանդամ կատարեալքդ
էք՝ զայս խորհեցարուք , և եթէ այլազգ ինչ խոր-
հիցիք՝ սակայն և զայն Աստուած ձեզ յայտնեսցէ։
16 Բայց յոր ժամանեցաքս , զոյն խորհել՝ և սմին կա-
17 նոնի միաբան լինել ։ Ղմանողք ինձ եղիջիք , եղ-
բարք , և դիտասջիք զոյնպիսիսն , որ այնպէսն գը-
18 նայցեն , որպէս ունիքդ զմեզ §ձեզ օրինակ ։ Զի

* Յոյն՝ զարդացութիւն հաւատովքն Քրիստոսի որ յԱստուածոյ է † Յոյն՝ որոյ վասն ըմբռնեալ եմ՝
‡ Յոյն՝ ի մրցանակ վերին § Ի Յոյնն էր ։

բազումք գնան՝ զորոց բազում անգամ ասէի ձեզ ,
բայց արդ և լալով իսկ ասեմ, զթշնամեաց խաչին
19 Քրիստոսի ։ Որոց կատարածն կորուստ է , որոց Ա-
ստուած որովայնն *իւրեանց է , և փառք՝ ամօթն
20 իւրեանց , որք զերկրաւորս եւ†թ խորհին ։ Ա.յլ
մեր առաքինութիւն յերկինս է , ուստի և Փրկչին
21 ակն ունիմք՝ Տեառն Յիսուսի Քրիստոսի . Որ նորո-
գեսցէ զմարմին խոնարհութեան մերոյ՝ կերպարա-
նակից լինել մարմնոյ փառաց իւրոց , ըստ զօրու-
թեանն առ ի կարող լինելոյ հնազանդեցուցանել
ընդ իւրեւ զամենայն ։

Գ.Լ. Գ

1 Ա.յսուհետեւ , եղբարք իմ սիրելիք և անձկա-
լիք , ուրախութիւն իմ և պսակ , այսպէս հաստա-
2 տուն կացէք ի Տէր , սիրելիք ։ Զեւոդիա աղաչեմ
3 և զՍինտիքէ աղաչեմ, զնոյն խորհել ի Տէր ։ Ա.յո,
աղաչեմ և զքեզ , մաերիմ *իմ և՝՝ ձմակից , և
դու օգնական լինիջիր նոցա՝ որք յաւետարանին
նահատակեցան ընդ իս կղեմնտ հանդերձ և այլովք
գործակցօք իմովք , որոց անուանքն են ի գպրու-
4 թեան կենաց ։ Ուրախ լերուք ի Տէր յամենայն
5 ժամ. դարձեալ ասեմ, ուրախ լերուք ։ Հեզութիւն
ձեր յայտնի լիցի ամենայն մարդկան . Տէր մերձ է։
6 Մի՛ ինչ հոգայք , այլ †ամենայն աղօթիւք և խըն-
դրուածովք , գոհութեամբ խնդրուածք ձեր յայտ-
7 նի լիցին առ Աստուած ։ Եւ խաղաղութիւնն Աս-

* Ի Յոյնն էր ։ † Յոյն՝ յամենայնի

տուծոյ որ ի վեր է քան զամենայն միտս, պահեսց-
8 ցէ զսիրտս ձեր և զմիտս ի Քրիստոս Յիսուս։ Ա.Յ-
սուհետեւ, եղբարք, որ ինչ ճշմարտութեամբ է,
որ ինչ պարկեշտութեամբ, որ ինչ արդարութեամբ,
որ ինչ սրբութեամբ, որ ինչ սիրով, որ ինչ համ-
բաւ բարեաց, որ ինչ քաջութեամբ, որ ինչ գո-
9 վութեամբ՝ զայն խորհիջիք։ Զոր ուսարուք և ըն-
կալարուք և լուայք և տեսէք յիս, զայն արարէք.
և Աստուած խաղաղութեան եղիցի ընդ ձեզ։
10 Ուրախ եղէ ես ի Տէր յոյժ, զի և դուք զմտաւ-
ածէք հոգալ ինչ վասն իմ, որպէս և հոգայիքն,
11 բայց ըստրըարեիք իմեն։ Իբր ոչ առ կարօտութեան
ինչ ասեմ, զի ես ուսայ՝ որովք կարեմ բաւական
12 լինել։ Գիտեմ նուաղել, գիտեմ առատանալ.
յամենայնի ամենեւին խելամուտ եմ և յագել և
13 քաղցենալ, և առատանալ և նուաղել։ Յամենայ-
14 նի կարող եմ այնու՝ որ զօրացուցն զիս։ Բայց լա-
բուրք արարէք՝ զի կցորդ եղերուք լինիմ ի նեղու-
15 թեանս։ Գիտէք և դուք, փիլիպեցիք, զի ի սկզբ
բան աւետարանին իբրեւ ելի ես ի Մակեդոնիայ,
և ոչ մի եկեղեցի հաղորդեաց ինձ յաղագս տալոյ
16 և առնլոյ, բայց միայն դուք. Զի և ի Թեսաղո-
նիկ միանգամ և երկիցս զպէտս իմ եառուք բերել։
17 Իբր ոչ եթէ խնդրեմ զտուրսն, այլ խնդրեմ զպ-
18 պտուղն՝ որ յաճախէ ի բան ձեր։ Ա.յլ իմ ա-
ռեալ զամենայն և առատանալ եմ. ընկալայ՝ և լի
եմ ի ձեռն Եպափրոդիտեայ, որ է ի ձէնջ հոտ ա-
նուշից, պատարագ ընդունելի, հաճոյ Աստուծոյ։
19 Եւ Աստուած իմ լի արասցէ զամենայն պէտս ձեր
ըստ իւրում մեծութեանն փառաւք ի Քրիստոս Յի-

20 սուս։ Ա.յլ Աստուծոյ և Հօր մերում փառք յաւի-
տեանս յաւիտենից։ Ամէն։
21 Ողջոյն տայջիք ամենայն սրբոյ ի Քրիստոս Յի-
22 սուս։ Ողջոյն տան ձեզ որ ընդ իս են եղբարք։
23 Ողջոյն տան ձեզ ամենայն սուրբքն, մանաւանդ որ
24 ի տանէ կայսեր են։ Շնորհք Տեառն Յիսուսի
Քրիստոսի *ընդ ոգւոյդ ձերում։'' Ամէն։

Աւ- Փիլիպեացւոց ցբեցաւ ի Հռովմէ ի Նեռն Եպափրոդի-
տոսէ։

ԹՈՒՂԹ

ՊՕՂՈՍԻ Ա.Ռ Ա.ՔԵԼՈՅ

Ա.Ռ ԿՈՂՈՍԱՑԻՍ

ԳԼ. Ա.

1 **ՊՕՂՈՍ** առաքեալ Յիսուսի Քրիստոսի կամաւքն
2 Աստուծոյ, և Տիմոթէոս եղբայր, Ա.ռ Կողոսացիս
սուրբս և հաւատացեալս եղբարս ի Քրիստոս։
3 Շնորհք ընդ ձեզ և խաղաղութիւն Յ.Աստուծոյ
Հօրէ մերմէ [և ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ]։

* Յայն՝ ընդ ձեզ ընդ ամենեսին։

Գոհանամ զԱստուածոյ և զՀօրէ Տեառն մերոյ
Յիսուսի Քրիստոսի, յամենայն ժամ վասն ձեր ա-
4 ղօթս առնեմ, Իբրեւ լուաք զհաւատսն ձեր՝ որ ի
Քրիստոս Յիսուս *Տէր մեր,՚՚ և զսէրն որ ընդ ա-
5 մենայն սուրբս *ունիք. Վասն յուսոյն՝ որ պահի
ձեզ յերկինս, զորմէ †լուարուք բանիւն ճշմար-
6 տութեան աւետարանին, Որ եկաս առ ձեզ՝ որ-
պէս ընդ ամենայն աշխարհ, ածէ և պտղաբերէ,
որպէս և ի ձերում միջի, յօրէ յորմէ լուարուք
և ծանեայք զշնորհսն Աստուծոյ ճշմարտութեամբ.
7 Որպէս և ուսաբուք Եպափրեայ սիրելւոյ ծառա-
յակից մերմէ, որ է հաւատարիմ վասն ձեր՝ պաշ-
8 տօնեայ ‡Յիսուսի. Որ և պատմեաց մեզ զձեր սէրն
Հոգւով։
9 Վասն այնորիկ և մեք յօրէ յորմէ լուաք՝ ոչ
դադարեմք վասն ձեր աղօթս առնել և խնդրուածս
մատուցանել, զի լցուցուք զգիտութիւն կամացն
Նորա ամենայն իմաստութեամբ և հոգեւոր հան-
10 ճարով. Գնալ ձեզ արժանի Տեառն յամենայն հա-
ճութեան, յամենայն գործս բարութեան պտղա-
11 բերք, և աճեցուն՚ք գիտութեամբն Աստուծոյ. Ա-
մենայն զօրութեամբ զօրացեալք ըստ զօրութեան
փառաց Նորա յամենայն համբերութիւն և երկայն-
12 մտութիւն ուրախութեամբ. Գոհանալ *զԱստու-
ծոյ Հօրէ՝ որ կոչեացն §զձեզ ի մասն վիճակի սրբոցն
13 ի լոյս. Որ փրկեացն զմեզ յիշխանութենէ խաւա-
րի, և փոխեաց *զմեզ յարքայութիւն Որդւոյն ի-

* Ի ցուցին էից † Ցոյն՝ յաւուրջագոյն լուարուք
‡ Ցոյն՝ Քրիստոսի § Ցոյն՝ զմեզ

14 րոյ սիրելւոյ. Որում ունիմք զփրկութիւն արեամն
Նորա, *և զթողութիւն մեղացն՝ *մարմնոյն Նորա՚՚.
15 Որ է պատկեր աներեւութին Աստուծոյ՝ անդրանիկ
16 ամենայն արարածոց. Զի նովաւ հաստատեցաւ
ամենայն, որ ինչ յերկինս և որ ինչ յերկրի, որ
երեւին և որ ոչն երեւին, եթէ աթոռք, եթէ տէ-
րութիւնք, եթէ պետութիւնք, եթէ իշխանու-
թիւնք. ամենայն ինչ նովաւ և ի նոյն հաստատե-
17 ցաւ։ Եւ նա է յառաջ քան զամենայն, և ամե-
18 նայն ինչ նովաւ եկաց բովանդակ։ Եւ նա է գլուխ
մարմնոյ՝ եկեղեցւոյ. որ է սկիզբն՝ անդրանիկ ի
մեռելոց, զի եղիցի ինքն յամենայնի յառաջա-
19 ցեալ. Զի ի նմա հաճեցաւ ամենայն լրումն *Ա-
20 ստուածութեանն բնակել. Եւ նովաւ հաշտեցուցա-
նել զամենայն ի նոյն, արար խաղաղութիւն ա-
րեամբ խաչին իւրոյ, որ ինչ յերկրի և որ ինչ
յերկինս։
21 Եւ զձեզ՝ որ երբեմն օտարացեալն էիք, և թշնա-
22 միք խորհրդովք ի գործսն չարութեան՝ Այժմ ա-
ւադիկ հաշտեցոյց անդամովք մարմնոյ իւրոյ ի
ձեռն մահուն *իւրոյ, յանդիման կացուցանել զը-
ձեզ սուրբս և ամբիծս և անարատս առաջի Նորա.
23 Եթէ կայցէք ի հաւատսն արմատացեալք և հաս-
տատեալք, և անշարժք ի յուսոյ աւետարանին՝
զոր լուարուք, քարոզելոյ ընդ ամենայն արարածս
ի ներքոյ երկնից, որոյ եղէ ես Պօղոս պաշտօնեայ։
24 Եւ արդ ուրախ եմ ի չարչարանս իմ վասն ձեր,
և լնում զպակասութիւն նեղութեանցն Քրիստոսի

* Ի ցուցին էից։

'ի մարմնի իմում վասն մարմնոյ նորա , որ է եկեղե-
23 ցի . Որոյ եղէ ես *Պօղոս պաշտօնեայ ըստ անտե-
սութեանն Աստուծոյ , որ տուեալ է ինձ 'ի ձեզ
26 † կատարել զբանն Աստուծոյ . Զխորհուրդն՝ որ
ծածկեալ էր 'ի յաւիտեանցն և յազգաց, որ այժմ
27 յայտնեցաւ սրբոց իւրոց։ Որոց կամեցաւ Աստուած
ցուցանել, թէ ո՞րչէ՞ է մեծութիւն փառաց խոր-
հրդոյ նորա 'ի հեթանոսս . որ է Քրիստոս 'ի ձեզ՝
28 Յոյս փառաց . Զոր մեք քարոզեմք , և խրատեմք
զամենայն մարդ , և ուսուցանեմք զամենայն մարդ
ամենայն *հոգեւոր իմաստութեամբ , զի կացու-
ցուք զամենայն մարդ կատարեալ 'ի Քրիստոս Յի-
29 սուս . Յոր և աշխատիմ պատերազմեալ ըստ յա-
յտնութեան նորա՝ որ յայտնեալ է յիս զօրու-
թեամբ ։

Գլ. Բ

1 Կամիմ՝ զի գիտիցէք դուք՝ որպիսի ճգնութիւն
ունիմ յանձին վասն ձեր և վասն Լաւոդիկեացոց ,
2 և որոց չիցէ տեսեալ զերեսս իմ մարմնով։ Զի սիր-
թարեսցին սիրտք նոցա ‡ տեղեկացեալք սիրով . և
յամենայն մեծութիւն լրութեան հմաստութեան՝ 'ի
գիտութիւն խորհրդոյն Աստուծոյ Հօր § 'ի Քրիս-
3 տոս Յիսուս .՝՝ Յորում ամենայն գանձք իմաստու-
4 թեան և գիտութեան ծածկեալ կան ։ Ա՛յլ զայս
ասեմ՝ զի մի՛ ոք զձեզ զաւանցուսցէ պատիր բա-

* Ի ց--նէն չէ ։ † ց՛ն՝ լնուլ
‡ ց՛ն՝ միացեալք § ց՛ն՝ և Քրիստոսի .

5 ՚ի՛ւք ։ Զի թէպէտ և մարմնով հեռի եմ, այլ հո-
գւով ընդ ձեզ եմ. խնդամ՝ իրրեւ տեսանեմ ըզ-
կարգն ձեր և զհաստատութիւն հաւատոցն ձերոց
6 որ 'ի Քրիստոս *Յիսուս ։ Այդ որպէս ընկալարուք
7 զՔրիստոս Յիսուս զՏէր , նովին գնասջիք . Արմա-
տացեալք և շինեալք 'ի նա և հաստատեալք 'ի
հաւատս՝ որպէս ուսարուքն , առաւելեալք 'ի նմին
8 գոհութեամբ ։ Զգոյշ լերուք մի՛ ոք իցէ որ զձեզ
կողոպտիցէ ճարտարմտութեամբ և անօտի խաբէու-
թեամբ , որք ըստ մարդկան աւանդութեան և ըստ
տարերց աշխարհիս , և ոչ ըստ *Յիսուսի Քրիստո-
9 սի . Զի 'ի նմա բնակէ ամենայն լրութիւն Աստուա-
10 ծութեանն՝ մարմնապէս։ Եւ էք դուք նովաւ լցեալք,
որ է գլուխ ամենայն իշխանութեան և պետութեան.
11 Որով թլփատեցարուք, *հաւատով զանձեռագործ
թլփատութիւնն՝ 'ի մերկանալ զանդամս † մարմնոյ
12 թլփատութեամբն Քրիստոսի ։ Թաղեալք ընդ նմին
'ի մկրտութեանն , որով և ընդ նմին յարեայք հա-
ւատովք Աստուծոյ ազդեցութեանն , որ յարոյց
13 զնա 'ի մեռելոց ։ Եւ զձեզ՝ որ երբեմն մեռեալք էիք
'ի մեղս և յանթլփատութեան մարմնոյ ձերոյ, կեն-
դանացոյց ‡ յանձին իւրում .՝՝ շնորհեաց մեզ զամե-
14 նայն յանցանս մեր , եւ ջնջեաց զձեռագիր մերոյ
հակառակութեանն հրամանաքն *իւրով՝ որ կայր
մեզ հակառակ, եւ արձ զայն 'ի միջոյ և բեւեռեաց
15 ընդ խաչափայտին ։ Մերկեաց զիշխանութիւնս և
զպետութիւնս , յայտ յանդիման խայտառակեաց

* Ի ց--նէն չէ ։ † ց՛ն՝ մարմնոյ մեղաց
‡ ց՛ն՝ ընդ նմա .

նշաւակեալ զնոսա յանձին իւրում *'ի յարու-
թեան իւրում՝՝ ։
16 Մի՛ ոք այսուհետեւ զձեզ դատեսցի՝ ուտելով
կամ ըմպելով կամ մասանէ տօնից , կամ ամա-
17 մտից , կամ շաբաթուց . Որ են ստուերք հան-
18 դերձելոյն , այլ մարմին Քրիստոս է ։ Մի՛ ոք զձեզ
խաբեսցէ , որ կամիցի խոնարհութեամբ և կրօնիւք
հրեշտակաց , զոր չիցէ տեսեալ զբահետ վարել՝
տարապարտ հպարտացեալ 'ի մտաց մարմնոյ իւրոյ.
19 եւ ոչ ունիցի զգլուխն Քրիստոս , ուստի ամենայն
մարմինն յօդիւք և խազալեօք տարբերեալ և
20 խառնեալ՝ աճէ զաճումն Աստուծոյ ։ Եթէ մեռա-
ք բուք ընդ Քրիստոսի 'ի տարերց աշխարհիս , զի՞ եւս
իբրեւ զկենդանիս աստէն յաշխարհի կրօնաւորիք .
21 Մի՛ մերձանար , մի՛ ճաշակեր , մի՛ հուպ լինիր .
22 Որ է ամենայն ինչ 'ի պէտս ապականութեան , ըստ
պատուիրանաց և վարդապետութեան մարդկան .
23 Որ յիմաստութիւն իմն համարէ ինքնակամ կրօ-
նիւք և խոնարհութեամբ և անխնայութեամբ մար-
մնոյ , և ոչ 'ի պատիւ ինչ †լրութեան մարմնոյ ։

Գ.Լ. Գ

1 Եթէ յարեբուք ընդ Քրիստոսի , ապա զվերինն
խնդրեցէք , ուր Քրիստոս նստի ընդ աջմէ Աստու-
2 ծոյ . Զվերինն խորհեցարուք , մի՛ զայս՝ որ յերկրի
3 աստ է ։ Քանզի մեռարուք , և կեանքն ձեր ծած-
4 կեալ են ընդ Քրիստոսի յԱստուած ։ Իսկ յոր-

* Ի ցՈՒՆԷ ԷՒ ։ † ցՈՒՆ՝ 'ի լրութիւն

ժամ Քրիստոս յայտնեսցի՝ կեանքն ձեր , յայնժամ
և դուք ընդ նմա յայտնեսջիք փառօք ։
5 Սպանէք այսուհետեւ զանդամս ձեր զերկրաւորս.
* 'ի բաց ընկեցէք՝՝ զպոռնկութիւն , զպղծութիւն ,
զերծ , զցանկութիւն չարեաց , և զագահութիւնն՝
6 որ է կռապաշտութիւն . վասն որոյ գայ բարկու-
թիւն Աստուծոյ 'ի վերայ որդւոցն անհնազան-
7 թեան . Որովք և դուք երբեմն գնայիք՝ մինչ կեն-
8 դանիք էիք 'ի նոսա ։ Արդ 'ի բաց թօթափեցէք և
դուք զայն ամենայն , զբարկութիւն , զսրտմտու-
թիւն , զչարութիւն , զՀայհոյութիւն , զխեղկա-
9 տակութիւն 'ի բերանոց ձերոց ։ Մի՛ ստէք միմեանց.
10 մերկացարուք զհին մարդն գործովքն իւրովք . Եւ
զգեցարուք զնորն նորոգեալ 'ի գիտութիւն ըստ
11 պատկերի Արարչին իւրոյ . Ուր ոչ է Հրեայ և ոչ
Հեթանոս , թլփատութիւն և անթլփատութիւն ,
խուժ դուժ , Սկիւթացի , ծառայ , ազատ . այլ
12 ամենայն և յամենայնի Քրիստոս ։ Զգեցարուք այ-
սուհետեւ իբրեւ ընտրեալք Աստուծոյ , սուրբք և
սիրեցեալք զգուշ , զողորմութիւն , զքաղցրութիւն ,
13 զխոնարհութիւն , զհեզութիւն , զերկայնմտու-
թիւն . Ներել միմեանց , ընդորհել իրերաց՝ եթէ ու-
քուք զդէմ ոք տրտունջ ինչ իցէ . որպէս †Աս-
տուած Քրիստոսիւ՝՝ շնորհեաց ձեզ , նոյնպէս և
14 դուք ։ Եւ 'ի վերայ այսր ամենայնի զսէրն՝ որ է
15 զօդ կատարմանն . Եւ խաղաղութիւնն Քրիստոսի
հաստատեսցի 'ի սիրտս ձեր , յոր և կոչեցարուքն
16 միով մարմնով . և գոհացողք լինիջիք ։ Զի բանն

* Ի ցՈՒՆԷ ԷՒ ։ † ցՈՒՆ՝ Քրիստոս

Քրիստոսի բնակեսցէ ի ձեզ առատապէս ամենայն
իմաստութեամբ՝ ուսուցանել և խրատել զմիմեանս,
սաղմոսիւք և օրհնութեամբք և երգովք հոգեւորօք՝
17 *և ընորհօք օրհնել ի սիրտս ձեր զԱստուած։ Եւ
զամենայն ղոր և առնիցէք բանիւք և արդեամբք,
զամենայն յանուն Տեառն Յիսուսի արասջիք. դո-
հացողք լինիջիք զԱստուածոյ և զՀօրէն Նովաւ։
18 Կանայք, հնազանդ լերուք արանց ձերոց, որ-
19 պէս և վայել է ի Տէր։ Արք, սիրեցէք զկանայս
20 ձեր, և †մի՛ դառնացուցանէք զնոսա։'' Որդիք,
հնազանդ լերուք ծնողաց ձերոց յամենայնի, զի
21 այն է հաճոյ առաջի Տեառն։ Հարք, մի՛ զայրա-
22 ցուցանէք զորդիս ձեր, զի մի՛ ‡տրամեսցին։ Ծա-
ռայք, հնազանդ լերուք տերանց ձերոց յամենայ-
նի, մի՛ առ ակնակ ծառայութեամբ՝ իբրեւ մարդա-
հաճոյք, այլ միամտութեամբ սրտի երկնչել ի
23 Տեառնէ. Ձոր ինչ առնիցէք՝ սրտի միոք գործեա-
24 ջիք, իբրեւ Տեառն և ոչ իբրեւ մարդկան։ Գի-
տասջիք զի ի Տեառնէ առնուցուք զվաստուցումն
ժառանգութեան *ձերոյ. քանզի Տեառն Քրիստո-
25 սի ծառայէք։ Իսկ ապիրատն ընկալցի ըստ իւրում
ապիրատութեանն, զի չիք ակնառութիւն *առա-
ջի Աստուծոյ''։

ԳԼ. Դ

1 Տեարք, զիրաւունս և զհաւասարութիւն ծառա-

* Ի յոյնն վէ։ † Յոյնն՝ մի՛ դառնասջիք առ նոսա։ ‡ Յոյնն՝ վհատեսցին։

յիկ ձերոյ շնորհեցէք, գիտասջիք զի և ձեր Տէր
դոյ յերկինս։
2 Աղօթից ստէպ կացէք, տքնել ի նմին դոհու-
3 թեամբ։ Աղօթա արարէք միանգամայն և վասն
մեր, զի Աստուած բացցէ մեզ դուռն բանին՝ խօ-
սել զխորհուրդն Քրիստոսի, վասն որոյ և կապեալս
4 կամ, Զի յայտնի արարից զնա՝ որպէս արժան իցէ
5 ինձ խօսել։ Իմաստութեամբ գնասջիք առ արտա-
6 քինն՝ գնոյ առեալ զժամանակս։ Եւ բանն ձեր
յամենայն ժամ լի շնորհօք *Տեառն՝ իբրեւ'' աղնւ-
համեմատ լինի, գիտել որպէս արժան իցէ ձեզ
իւրաքանչիւր ումեք տալ պատասխանի։
7 Ա.յլ որ ինչ զինէն իցէ՝ ցուցցէ ձեզ զամենայն
Տիւքիկոս սիրելի եղբայր և հաւատարիմ պաշտօ-
8 նեայ և ծառայակից ի Տէր. Զոր առաքեցի առ
ձեզ դմին իրի, զի գիտասջիք վասն մեր, և մխի-
9 թարեսցէ զսիրտս ձեր, Ընեսիմաւ հանդերձ եղբարբ
հաւատարմաւ և սիրելեաւ՝ որ է ի ձէնջ. զամե-
10 նայն ինչ ցուցցեն ձեզ՝ որ ինչ ասաէ։ Ողջոյն տայ
ձեզ Արիստարքոս դերեկից իմ, և Մարկոս եղբօ-
րորդի Բառնաբայ. վասն որոյ առէք պատուէր եթէ
11 եկեսցէ առ ձեզ՝ ընկալջիք զնա. Եւ Յիսուս՝ որ
անուանեալն է Յուստոս, որք են ի թլփատութենէ
անտի. զի դոքա միայն գործակից եղեն *ինձ յար-
քայութեանն Աստուծոյ, որք և եղեն իսկ ինձ մե-
12 խիթարութիւն։ Ողջոյն տայ ձեզ Եպափրաս՝ որ ի
ձէնջ ծառայ Քրիստոսի *Յիսուսի է. յամենայն ժամ
պատերազմեալ վասն ձեր յաղօթս, զի կայցէք

* Ի յոյնն վէ։

12 կատարեալք և լցեալք յամենայն կամս Աստու-
13 ծոյ ։ Վ կայեմ նմա , զի բազում աշխատութիւն
ունի վասն ձեր և վասն Լաւոդիկեցւոցն , և վասն
14 այնոցիկ՝ որ Յերապօլիսն են ։ Ողջոյն տայ ձեզ Ղու-
15 կաս բժիշկ և սիրելի և Դեմաս ։ Ողջոյն տայէք եղ-
բարց՝ որ են ի Լաւոդիկիա , և Նիմփայ և որ առ-
16 տընին եկեղեցին է նորա ։ Եւ յորժամ ընթեռնուս-
ցուս առ ձեզ Թուղթդ , արասջիք զի և ի Լաւո-
դիկեցւոց եկեղեցւոջն ընթերցցի . և զառ ի Լաւո-
17 դիկեցւոցն զի և դուք ընթեռնուցուք ։ Եւ ասասջիք
ՅԱրքիպպոս , Զգոյշ լեր սպասաւորութեանդ՝
18 զոր ընկալար ի Տէր , զի զայդ կատարեսցես ։ Ող-
ջոյնդ ձեռնի իմոյ Պօղոսի է . յուշ լիցին ձեզ կա-
պանքս իմ ։ Շնորհք ընդ ձեզ ։ Ամէն ։

Առ Կողոսացիս գրեցաւ ի Հռովմէ ի ձեռն Տիւքիկոսի և Ոնեսիմոսի ։

ԹՈՒՂԹ

ՊՕՂՈՍԻ Առաքելոյ

Ա՛Ր ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՍ Առաջին

Գլ. Ա

1 Պօղոս և Սիղուանոս և Տիմոթէոս՝ եկեղեցւոյդ
Թեսաղոնիկեցւոց ՅԱստուած Հայր մեր և ի Տէր
2 Յիսուս Քրիստոս . Շնորհք ընդ ձեզ և խաղաղու-
թիւն ։

Գոհանամք զԱստուծոյ յամենայն ժամ վասն ձեր
ամենեցուն՝ յիշատակ առնել յաղօթս մեր *ան-
3 դադար . Յիշելով՝ զձեր գործն հաւատոյ և զվաստակ
սիրոյ և զհամբերութիւն յուսոյ Տեառն մերոյ Յի-
սուսի Քրիստոսի՝ առաջի Աստուծոյ և Հօր մերոյ ։
4 Գիտեմք , եղբարք սիրեցեալք ՅԱստուծոյ , զընտ-
5 րութիւնն ձեր . Զի աւետարանն մեր ոչ եղեւ առ
ձեզ միայն բանիւ , այլ և զօրութեամբ և Հոգւով
Սրբով և լրութեամբ բազմաւ , որպէս և գիտէք
իսկ թէ որպիսիք եղեաք ի միջի ձերում վասն ձեր ։
6 Եւ դուք նմանեալք մեզ և Տեառն՝ ընկալեալ զբանն
ի բազում նեղութեան խնդութեամբ Հոգւոյն Սըր-
7 բոյ . Լինել ձեզ օրինակ ամենայն հաւատացելոց՝

* Յոյնն՝ Անդադար յիշել

8 որ են ի Մակեդոնիա և ՅԱքայիա ։ Զի ի ձէնջ
հնչեաց բանն Աստուծոյ , ոչ միայն ի Մակեդո-
նիա և ՅԱքայիա , այլ յամենայն տեղիս հաւատքն
ձեր որ առ Աստուած են՝ սփռեցան , զի այսու-
9 հետեւ ոչինչ է պիտոյ մեզ և խօսել ինչ ։ Զի նո-
քքին իսկ պատմեն վասն մեր , թէ որպէս եղեւ մեզ
մուտ առ ձեզ , և որպէս դարձայք առ Աստուած
ի կռոց անտի՝ ծառայել Աստուծոյ կենդանւոյ և
10 ճշմարտի , եւ սպն ունել Որդւոյ նորա յերկնից ,
զոր յարոյցն ի մեռելոց՝ զՅիսուս , որ փրկելոցն է
զմեզ ի բարկութենէ անտի որ գալոցն է ։

Գլ · Բ

1 Դուք ինքնին գիտէք , եղբարք , զմուտն մեր առ
2 ձեզ , զի ոչ ընդունայն ինչ եղեւ · Այլ յառա-
ջագոյն չարչարեալք և թշնամանեալք , որպէս և
դուք իսկ գիտէք , ի մէջ փիլիպեցւոց , համարձա-
կեցաք Աստուծով մերով՝ պատմել ձեզ զաւետա-
3 բանն Աստուծոյ մեծաւ պատերազմաւ ։ Զի մխի-
թարութիւնն մեր ոչ ի մոլորութենէ է , և ոչ ի
4 պղծութենէ և ոչ նենգութեամբ · Այլ որպէս ըն-
տրեցաք յԱստուծոյ հաւատարիմ լինել աւետարա-
նին , նոյնպէս և խօսիմք , ոչ իբրեւ մարդկան հա-
ճոյ լինել , այլ Աստուծոյ որ քննէն զսիրտս մեր ։
5 Զի ոչ երբեք բանիւք ողբանաց եղեաք առ ձեզ ,
որպէս և դուք իսկ գիտէք , և ոչ ի պատճառս ա-
6 գահութեան , որպէս և Աստուած վկայէ · Եւ ոչ
խնդրեաք փառս ի մարդկանէ , ոչ ի ձէնջ և ոչ
7 յայլոց ։ Կարող եաք իբրեւ Քրիստոսի առաքեալս

ծանրանալ , այլ եղեաք հեզք ի միջի ձերում , որ-
8 պէս դայեակ մի՝ որ սնուցանիցէ մանկունս ։ Նոյն-
պէս և մեք գթայաք ի ձեզ , հաճիլ թուէր մեզ
տալ ձեզ ոչ միայն զաւետարանն Աստուծոյ , այլ
և զանձինս մեր , քանզի սիրելիք մեր եղերուք ։
9 Յիշէք , եղբարք , զվաստակն մեր և զլան , զի զցայդ
և զցերեկ գործեաք վասն չծանրանալոյ ումեք ի
ձէնջ , և քարոզեաք ձեզ զաւետարանն Աստուծոյ ։
10 Դուք ինքնին վկայէք՝ և Աստուած , որպէս սրբու-
թեամբ և արդարութեամբ և ամբծութեամբ ձեզ
11 հաւատացելոցդ եղեաք · Որպէս և գիտէք իսկ , զի
12 զիւրաքանչիւր որ ի ձէնջ իբրեւ հայր զորդիս՝ Մխի-
թարեաք և սփոփեաք և դնեաք վկայութիւն դնել
ձեզ արժանապէս Աստուծոյ , որ կոչեացն զձեզ
13 յիւր արքայութիւնն և ի փառս ։ Վասն այնորիկ
և մեք գոհանամք զԱստուծոյ անպակաս , զի առեալ
զլուր բանին Աստուծոյ առ ի մէնջ՝ ընկալարուք ,
ոչ իբրեւ զբան մարդկան , այլ որպէս ճշմարտիւ՝
զբան Աստուծոյ , որ և յայջողեալ իսկ է ի ձեզ
14 հաւատացեալսդ ։ Զի դուք նմանողք եղերուք ,
եղբարք , եկեղեցեացն Աստուծոյ՝ որ են ի Հրէաս-
տանի ի Քրիստոս Յիսուս . զի զնոյն *չարչարանս
չարչարեցայք և դուք ի ձերոց ազգականաց , որպէս
15 և նոքայն ի Հրէից · Որք և զՏէրն Յիսուս սպանին
և զմարգարէսն , և զմեզ հալածեցին , և Աստու-
ծոյ չհաճոյ եղին , և ամենայն մարդկան հակառակ
16 եղեն · եւ արգելուն զմեզ խօսել հեթանոսաց՝
զի ապրեսցին , զի կատարեսցեն զմեղս իւրեանց

* Ի Յ--ՆԷՆ ԸՔ ։

ժամանակն ժամ. քանզի հասեալ է ի վերայ նոցա
բարկութիւն մինչեւ ի խափան։
17 Ա.ՀԼ մեք, եղբարք, թէպէտ և որբ մնացաք ի
ձէնջ առ ժամանակ մի երեսօք և ոչ սրտիւք, ա-
ռաւել եւս փութացաք տեսանել զերեսս ձեր մե-
18 ծաւ ցանկութեամբ։ վասն այսորիկ կամեցայ գալ
առ ձեզ ես Պօղոս միանգամ և երկիցս, և խա-
19 փանեաց զմեզ Սատանայ։ Քանզի ո՞վ է մեր յոյս
կամ խնդութիւն կամ պսակ պարծանացդ մերոց,
եթէ ոչ դուք *ի Տէր առաջի Տեառն մերոյ Յիսու-
20 սի Քրիստոսի ի նորա գալստեանն։ Զի դուք էք
փառք մեր և խնդութիւն։

ԳԼ. Գ

1 Վասն որոյ ոչ եւս ունիմք ժոյժ, զի բարւոք
2 թուեցաւ մեզ միայն մնալ Աթենս. Եւ առաքե-
ցաք զՏիմոթէոս զեղբայր †մեր և զգործակից աւե-
տարանին Աստուծոյ և Հօրն Քրիստոսի,'' հաստա-
տել զձեզ և մխիթարել վասն հաւատոցն ձերոց։
3 Զի մի' տաղտկայցեք ի նեղութիւնս յայսոսիկ.
քանզի դուք ինքնին իսկ գիտէք՝ զի ի սմն կամք։
4 Քանզի մինչ առ ձեզն իսկ էաք, յառաջագոյն ա-
սէաք ձեզ թէ նեղութիւնք հասանելոց են ի վե-
5 րայ մեր, որպէս և եղեւ իսկ, և գիտացեք։ Վասն
սմնորիկ և ես զի ոչ եւս ունէի ժոյժ՝ առաքեցի

* Ի ցոն. էէ։

† ցոյն՝ մեր և զպաշտօնեայ Աստուծոյ և զգործա-
կից մեր յաւետարանին Քրիստոսի,

գիտել զհաւատսն ձեր, գուցէ արդեօք փորձեաց
և զձեզ փորձիչն, և ընդունայն լինիցի վաստն մեր։
6 Բայց արդ իբրեւ եկն Տիմոթէոս ի ձէնջ առ մեզ,
և եթ մեզ զաւետիս հաւատոցն ձերոց և զսիրոյ,
զի ունիք *ի մտի զմիշատակս մեր բարեաց յամե-
նայն ժամ, ցանկացեալ էք տեսանել զմեզ, որպէս
7 և մեք զձեզ. վասն այնորիկ մխիթարեցաք ի ձեզ,
եղբարք, ի վերայ ամենայն վշտաց և նեղութեանց
8 †ձերոց՝ ի ձեռն հաւատոցն ձերոց. Զի այժմ կեն-
դանի եմք, եթէ դուք հաստատուն կայցէք ի Տէր։
9 Զի՞նչ կարեմք գոհութիւն մատուցանել Աստուծոյ
վասն ձեր ի վերայ ամենայն խնդութեանն՝ զոր
10 խնդամք վասն ձեր առաջի Աստուծոյ մերոյ. Զցայգ
և զցերեկ առաւել եւս աղաչելով տեսանել զերեսս
ձեր, և հաստատել զպակասութիւն հաւատոցն
11 ձերոց։ Ա.ՀԼ ինքն Աստուած և Հայր մեր և Տէր
մեր Յիսուս Քրիստոս ուղղեսցէ զճանապարհս մեր
12 առ ձեզ։ Եւ զձեզ ինքն Տէր բազմապատիկս և ա-
ռաւելս արասցէ սիրով ընդ միմեանս և առ ամե-
13 նեսին, որպէս և մեք ի ձեզ, Հաստատել զսիրտս
ձեր անարատս ի սրբութիւն առաջի Աստուծոյ և
Հօր մերոյ՝ ի գալստեանն Տեառն մերոյ Յիսուսի
Քրիստոսի հանդերձ ամենայն սրբովք իւրովք։

ԳԼ. Դ

1 Ա.յսուհետեւ, եղբարք, աղաչեմք զձեզ և մխի-
թարեմք ‡ի Քրիստոս Յիսուս, զի որպէս ընկալա-

* Ի ցոն. էէ։ † ցոյն՝ մերոց ‡ ցոյն՝ ի Տէր

բուք ի մէնջ, թէ որպէս պարտ իցէ ձեզ գնալ և
հաճոյ լինել Աստուծոյ. որպէս և գնայիք իսկ, զի
2 եւս քան զեւս յաւելցուք ի նոյն։ Եւ գիտէք
թէ որպիսի պատուիրանս տուաք ձեզ ի Տէր Յի-
3 սուս։ Զի այս են կամք Աստուծոյ սրբութիւն ձեր,
4 ի բաց լինել ձեզ ի պոռնկութենէ. Գիտել իւ-
րաքանչիւր ումեք ի ձէնջ զիւր աման ստանալ սըր-
5 բութեամբ և պատուով. Մի՛ ի ցաւս ցանկու-
թեան՝ որպէս և *այլ հեթանոսք որ ոչ գիտեն զԱս-
6 տուած։ Մի՛ զանցանել և զրկել յիրիդ յայդմիկ
զեղբայր իւր, քանզի վրէժխնդիր է Տէր ի վերայ
ամենայնի այդորիկ. որպէս յառաջագոյն ասացաք
7 ձեզ և եդաք վկայութիւն։ Քանզի ոչ կոչեաց զմեզ
8 Աստուած ի պղծութիւն՝ այլ ի սրբութիւն։ Ա-
ստուհետեւ որ անարգէ, ոչ զմարդ անարգէ, այլ
զԱստուած՝ որ և ետ զՀոգին Սուրբ ի ձեզ։
9 Ա Այլ վասն եղբայրսիրութեան չէ ինչ պիտոյ գրել
առ ձեզ, զի դուք ինքնին իսկ աստուածուսոյցք
10 էք առ ի զմիմեանս սիրելոյ։ Քանզի և առնէք իսկ
զդոյն յամենայն եղբարս որ են յամենայն կողմանս
Մակեդոնացւոց. աղաչեմք զձեզ, եղբարք, առա-
11 ւել եւս առաւելուլ և առատանալ. Հանդարտել և գործել զիւրաքանչիւր, և գործել ձեռօք
ձերովք, որպէս և պատուիրեցաք ձեզ, զի գնայ-
ցէք պարկեշտութեամբ առ արտաքինան, և մի՛ իւիք
կարօտեալք իցէք։
12 Ոչ կամիմ, եղբարք, եթէ տգէտք իցէք վասն
ննջեցելոցն, զի մի՛ արտմիցիք որպէս և այլքն՝ որոց

* Ի ց--ին չէ։

13 ոչ գոյ յոյս։ Եթէ հաւատամք եթէ Յիսուս մե-
ռաւ և յարեաւ, նոյնպէս և Աստուած զննջե-
14 ցեալսն ի ձեռն Յիսուսի ածցէ ընդ նմա։ Բայց
զայս *ասեմք Տեառն բանիւ, եթէ մեք որ կենդա-
նիքս եմք մնացեալք ի գալստեանն Տեառն՝ ոչ ժա-
15 մանեմք ննջեցելոցն։ Զի ինքնին Տէր †հրամանաւ՝
ի ձայն հրեշտակապետի և ի փող Աստուծոյ իջա-
նէ յերկնից, և մեռեալք ի Քրիստոս յարիցեն
16 յառաջագոյն։ Ապա և մեք որ կենդանիսդ մնա-
ցեալ եղեմք՝ նոքօք հանդերձ յափշտակեսցուք ամ-
պովք ‡ընդ առաջ Տեառն յօդս, և այնպէս յա-
17 մենայն ժամ ընդ Տեառն լինիցիմք։ Ա Յաստուհետեւ
մխիթարեցէք զմիմեանս բանիւքս այսոքիւք։

Գլ. Ե

1 Ա Այլ վասն ժամուց և ժամանակաց, եղբարք,
2 չէ ինչ պիտոյ գրել առ ձեզ։ Զի դուք ինքնին իսկ
ստոյգ գիտէք, թէ օրն Տեառն իբրեւ զգող գիշե-
3 րի՝ այնպէս հասանէ։ Յորժամ ասիցեն թէ խա-
ղաղութիւն և §շինութիւն է, յայնժամ յան-
կարծակի հասցէ նոցա սատակումն՝ որպէս և երկն
4 յղւոյ, և մի՛ ապրեսցին։ Ա Այլ դուք, եղբարք, ոչ
էք ի խաւարի՝ թէ օրն ձեր իբրեւ զգող ի վերայ
5 հասանիցէ, Զի ամենեքեան դուք որդիք լուսոյ էք՝

* Յ---՝ ասեմք ձեզ
† Յ---՝ հրամանաւ պղծարարութեան
‡ Յ---՝ երանել ընդ առաջ
§ Յ---՝ ապահովութիւն

և որդիք տուննջեան . չեմք դիշերոյ , չեմք խաւարի։
6 Ապա մի՛ զքնով անկանիցիմք՝ որպէս և այլքն , այլ
7 արթունք և զուարթունք եղիցուք ։ Զի որ իննջիննն՝
դիշերի իննջեն , և որ արբենանն՝ դիշերի արբենան ։
8 Այլ մեք զի տուննջեան եմք , արթունք եղիցուք , և
զդեցցուք զզրահսն հաւատոց և զսիրոյ , և *դիցուք
9 զսաղաւարան յուսոյն փրկութեան ։ Զի ոչ †ետ
զմեզ Աստուած ՚ի բարկութիւն , այլ ՚ի փրկու-
թիւն կենդանութեան ՚ի ձեռն Տեառն մերոյ Յի-
10 սուսի Քրիստոսի , Որ մեռաւն վասն մեր . զի եթէ
արթունք իցեմք և եթէ իննջիցեմք , նովաւ հան-
11 դերձ կեցցուք ։ Վասն որոյ միսիթարեցէք զմիմեանս
և շինեցէք զիրերաս , որպէս և առնէքդ իսկ ։
12 Աղաչեմք զձեզ , եղբարք , ճանաչել զվաստակա-
ւորս և զվերակացուս ձեր ՚ի Տէր , և զխրատիչս
13 ձեր ։ Եւ համարեցարուք զնոսա արժանիս առա-
ւել սիրոյ վասն գործոյ նոցա . խաղաղութիւն ա-
14 րարէք ընդ միմեանս ։ Աղաչեմք զձեզ , եղբարք ,
խրատեցէք զստահակս , միսիթարեցէք զկարճամիտս ,
պատռպարան լերուք տկարաց , երկայնամիտ լերուք
15 առ ամենեսեան ։ Զդուշ լերուք՝ գուցէ ոք չարի
չար հատուցանիցէ . այլ յամենայն ժամ զբարւոյ
զհետ երթայք առ միմեանս և առ ամենեսեան ։
16 Յամենայն ժամ ուրախ լերուք ։ (17) Անդադար
18 աղօթս արարէք ։ Յամենայնի գոհացարուք , զի այս
են կամք Աստուծոյ փրկութեանդ ձերոյ ՚ի Քրիստոսէ Յիսուսէ ՚ի ձեզ ։
19 Զհոգին մի՛ շիջուցանէք ։ (20) Զմարգարէութիւնս
21 մի՛ արհամարհէք ։ Զամենայն ինչ փորձեցէք , զբա-

* Ի յոմանս էր ։ † Յայնմ եղ.

22 րին ընկալարուք ։ Յամենայն իրաց չարաց ՚ի բաց
23 կացէք ։ Եւ ինքն Աստուած խաղաղութեան սուրբս
արասցէ զձեզ համօրէնս . և բովանդակ ձեր ոգի
և շունչ և մարմին անարատ ՚ի գալուստն Տեառն
24 մերոյ Յիսուսի Քրիստոսի պահեսցի ։ Հաւատարիմ
է որ կոչեացն զձեզ , որ և արասցէ զնոյն ։
25 Եղբարք , աղօթս արարէք և ՚ի մեր վերայ ։
26 Ողջոյն տաջիք եղբարց ամենեցուն ՚ի համբոյր սըր-
27 բութեան ։ Երդմնեցուցանեմ զձեզ ՚ի Տէր՝ ընթեռ-
նուլ զթուղթդ առաջի ամենայն եղբարց սրբոց ։
28 Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ձեզ ։
Ամէն ։

Ա՛ Թեսաղոնիկեցւոց առաջին թուղթ գրեցաւ յԱթենոյ ։

ԹՈՒՂԹ

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԱՌ ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՍ ԵՐԿՐՈՐԴ

ԳԼ· Ա

1 Պօղոս և Սիղուանոս և Տիմոթէոս՝ եկեղեցւոյդ
Թեսաղոնիկեցւոց յԱստուած Հայր մեր և ՚ի Տէր
2 Յիսուս Քրիստոս . Շնորհք ընդ ձեզ և խաղաղու-
թիւն յԱստուծոյ Հօրէ մերմէ և ՚ի Տեառնէ Յի-
սուսէ Քրիստոսէ ։

3 Գոհանալ պարտիմք զԱստուածոյ յամենայն ժամ
վասն ձեր, եղբարք, որպէս և արժան իսկ է. զի
եւս քան զեւս աճեն հաւատքն ձեր, և յորճախէ
սէր իւրաքանչիւր ամենեցուն ձեր առ միմեանս;
4 Որպէս և մեզ ձեզք պարծել յեկեղեցիսն Աստու-
ծոյ՝ վասն համբերութեան ձերոյ և հաւատոց յա-
մենայն հալածանս ձեր և ի նեղութիւնս, որում
5 դուքն համբերէք. Ցօրինակ արդար դատաստանին
Աստուծոյ, արժանի լինել ձեզ արքայութեանն
6 Աստուծոյ, վասն որոյ և զնդնութիւնդ կրէք. Ե-
թէ պարտ է առաջի Աստուծոյ հատուցանել նեղ-
7 չացն ձերոց նեղութիւն. Եւ ձեզ նեղելոցդ հան-
դիստ ընդ մեզ՝ ի յայտնութեանն Տեառն մերոյ
Յիսուսի, յերկնից հրեշտակօք զօրութեան իւրոյ,
8 ի բոց հրոյ առնուլ զվրէժս յայնցանէ՝ որք ոչ ճա-
նաչէն զԱստուած, և որ ոչ հնազանդին աւետա-
9 րանին Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. Որք տայ-
ցեն վրէժս ի սատակումն յաւիտենից՝ յերեսաց
10 Տեառն և ի փառաց զօրութեան նորա, Յորժամ
գայցէ փառաւոր լինել ի սրբոց իւրոց, և
սքանչելի ի մէջ ամենայն հաւատացելոց, զի հա-
ւատացաք եղեւ վկայութիւնն մեր ի վերայ ձեր
11 յաւուր յայնմիկ. Յոր և աղօթս առնեմք վասն
ձեր յամենայն ժամ, զի զձեզ արժանիս արասցէ
կոչմանն *ձերում Աստուած մեր՝ մինչեւ լցցէ զա-
մենայն հաճութիւն բարութեան, և զգործս հա-
12 ւատոցն զօրութեամբ. Զի փառաւոր լիցի անուն
տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ի ձեզ՝ և դուք

* Ի Յոհ. ԺԷ.

ի նմա, ըստ շնորհացն Աստուծոյ մերոյ և Տեառն
Յիսուսի Քրիստոսի։

Գլ. Բ

1 Աղաչեմ զձեզ, եղբարք, վասն գալստեանն Տեա-
ռըն մերոյ Յիսուսի Քրիստոսի, և մերոյ ժողովելոյն
2 առ նա, Մի՛ վաղվաղակի խռովել ձեզ ի մտաց՝
և մի՛ զարհուրել, մի՛ հոգւով և մի՛ բանիւ և մի՛
թղթովք իբրեւ թէ ի մէնջ, որպէս թէ եկեալ
3 հասեալ իցէ օրն Տեառն։ Մի՛ ոք զձեզ խաբեսցէ
և մի՛ իւիք իրօք. զի եթէ ոչ նախ եկեսցէ ապըս-
տամբութիւնն, և յայտնեսցի մարդն անօրէնու-
4 թեան՝ որդին կորստեան, Հակառակորդն հպար-
տացեալ ի վերայ ամենայնի, որ անուանեալ իցէ
Աստուած կամ պաշտօն, մինչեւ նստել նմա ի
տաճարին Աստուծոյ, և ցուցանել զանձն թէ Ա-
5 ստուած իցէ։ Ո՞չ յիշէք զի մինչ առ ձեզն իսկ էի՝
6 ասէի զայս։ Եւ արդ զուք ինքնին գիտէք զայն՝
7 որ ունին յայտնել նմա յիւրում ժամանակի։ Զի
խորհուրդն անօրէնութեան արդէն իսկ զօրանայ.
բայց յայնժամ մինչ ի միջոյ բարձցի՝ որ այժմ
8 ունի։ Եւ ապա յայտնեսցի անօրէնն. զոր Տէր
Յիսուս սատակեսցէ հոգւով բերանոյ իւրոյ, և
խափանեսցէ յայտնութեամբ գալստեանն իւրոյ։
9 Որոյ գալուստն ըստ ազդեցութեան Սատանայի է
ամենայն զօրութեամբ և նշանօք և արուեստիւք
10 ստովք, Եւ ամենայն պատրանօք անիրաւութեան
ի վերայ կորուսելոցն. փոխանակ զի զսէրն ճշմար-
տութեան ոչ ընկալան՝ զի ապրեսցին, և վասն այ-

նորիկ առաքեսցէ նոցա Աստուած աղդեցութիւն
11 մոլորութեան՝ հաւատալ նոցա ստութեանն ։ Զի
դատապարտեսցին ամենեքեան՝ որ ոչ հաւատացին
ճշմարտութեանն , այլ հաճեցան ընդ անօրէնու-
թիւնն ։
12 Աւյժ մեք պարտիմք գոհանալ Աստուծոյ յամե-
նայն ժամ վասն ձեր , եղբարք սիրեցեալք ի Տեառ-
նէ , զի ընտրեաց *զձեզ Աստուած ի սկզբանէ ի
փրկութիւն սրբութեամբ Հոգւոյն և հաւատովքն
13 ճշմարտութեան . յոր և կոչեաց զձեզ աւետա-
րանաւն մերով ի փրկութիւն փառացն Տեառն մե-
ծոյ Յիսուսի Քրիստոսի ։
14 Այսուհետեւ , եղբարք , հաստատուն կացէք և
պինդ կալարուք զաւանդութիւնն՝ զոր ուսարուք ,
15 եթէ բանիւ և եթէ թղթով մերով ։ Աւյժ ինքն Տէր
մեր Յիսուս Քրիստոս և Աստուած և Հայր մեր , որ
սիրեացն զմեզ և ետ մեզ մխիթարութիւն յաւի-
16 տենից և յոյս բարեաց շնորհօք , Մխիթարեսցէ զսիր-
տս ձեր և հաստատեսցէ յամենայն բանս և ի գործս
բարութեան ։

Գլ· Գ·

1 Այսուհետեւ , եղբարք , աղօթս արարէք ի վե-
րայ մեր , զի բանն Տեառն ընթանայցէ , և փառա-
ւոր լինիցի յամենայն տեղիս՝ որպէս և առ ձեզդ ·
2 Զի ապրեսցուք յանօրինաց և յանզգամաց մար-
3 դոց · զի ոչ ամենեցուն են հաւատք ։ Աւյժ հաւա-

* Յայլն՝ զձեզ

տարիմ է Տէր , որ և հաստատեսցէ զձեզ և պա-
4 հեսցէ ի չարէ անտի ։ Վստահ եմք ի ձեզ Տե-
րամբ , թէ զոր պատուիրեցաքն ձեզ , և առնէք և
5 առնիցէք ։ Աւյժ Տէր ուղղեսցէ զսիրտս ձեր ի սէրն
Աստուծոյ և ի համբերութիւնն Քրիստոսի ։
6 Պատուիրեմ ձեզ , եղբարք , յանուն Տեառն մե-
ծոյ Յիսուսի Քրիստոսի , խորշել ձեզ յամենայն
եղբօրէ՝ որ ստահակն գնայցէ , և ոչ ըստ աւան-
7 դութեանն՝ զոր ընկալարուք ի մէնջ ։ Զի դուք
ինքնին գիտէք թէ որպէս պարտ է ձեզ նմանիլ
8 մեզ · *և ոչ երբէք ստահակեցաք առ ձեզ , եւ ոչ
ձրի զուարուք հաց կերաք , այլ ջանիւ և վաստա-
կով զգայդ և զցերեկ գործէաք՝ վասն չծանրանա-
9 լոյ ումեք ի ձէնջ ։ Ոչ եթէ չունէաք իշխանութիւն ,
այլ զի զանձինս օրինակ արասցուք ձեզ՝ նմանողս լի-
10 նել մեզ ։ Քանզի մինչդեռ առ ձեզն իսկ էաք՝ զայս
պատուիրէաք ձեզ , թէ որ ոչն կամիցի գործել , և
11 կերիցէ մի՛ ։ Աւրդ լսեմք զումանց ի ձէնջ թէ ստա-
հակութեամբ գնան , գործ ինչ ոչ գործեն , այլ
12 յուլացեալ հետաքրքիր շրջին ։ Աւյնպիսեացն պա-
տուէր տամք , և աղաչեմք ի Տէր Յիսուս Քրիս-
տոս , զի հանդարտութեամբ գործեսցեն և զիւ-
13 րեանց հաց կերիցեն ։ Աւյժ դուք , եղբարք , մի՛
14 ձանձրանայք զբարիս գործել ։ Ապա եթէ ոչ ոք
հնազանդեսցի բանիս մերում թղթովդ այդուիկ ,
դուք նշանակեսջիք զնա , և մի՛ խառնակեսջիք ընդ
15 նմա , զի պատկառեսցէ ։ Բայց մի՛ իբրեւ զթշնամի
16 համարիջիք , այլ խրատեսջիք իբրեւ զեղբայր ։ Եւ

* Յայլն՝ քանզի

ինքն Տէր խաղաղութեան տացէ ձեզ խաղաղու-
17 թիւն յամենայն ժամ յամենայն իրս։ Տէր ընդ
ամենեսին ընդ ձեզ։ Ողջոյնս իմով ձեռամբ Պօղոսի
18 է, որ է նշանակ յամենայն թուղթս, այսպէս
գրեմ։ Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի
ընդ ամենեսին ձեզ։ Ամէն։

Ա֊ Թեսաղոնիկեցւոց երկրորդ գրեցաւ յԱթենայ։

ԹՈՒՂԹ

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԱՌ ՏԻՄՈԹԷՈՍ ԱՌԱՋԻՆ

ԳԼ. Ա

1 Պօղոս առաքեալ Յիսուսի Քրիստոսի՝ ըստ հրա-
մանի փրկչին մերոյ Աստուծոյ և Քրիստոսի Յիսու-
2 սի յուսոյն մերոյ. Տիմոթեոսի որդւոյ սիրելւոյ հա-
ւատովք՝ շնորհք, ողորմութիւն, խաղաղութիւն
յԱստուծոյ Հօրէ և ի Տեառնէ մերմէ Յիսուսէ
Քրիստոսէ։
3 Որպէս աղաչեցի զքեզ կալ յԵփեսոս՝ մինչ եր-
թայիր ի Մակեդոնիա, զի պատուիրէր տացես ո-

4 մանց չլինել օտարուսմունս, եւ չհայել յառաս-
պելս և ի տոհմաթիւս անչափս. որ մինաւանդ
խնդիրս յուզեն, և ոչ զտնտեսութիւն Աստուծոյ
5 հաւատովք։ Բանզի դլուխ պատուիրանին սէր է,
ի սրտէ սրտէ և ի մտաց բարեաց և յանկեղծա-
6 սուր հաւատոց։ Յորոց ոմանք վրիպեցան՝ խոտո-
7 րեալք յօնոտութիւն բանից. կամին լինել վար-
դապետք օրինաց, ինքեանք ոչ իմանան զինչ խօ-
8 սին, և ոչ վասն որոց պնդեալն են։ Գիտեմք եթէ
բարւոք են օրէնք, եթէ ոք զնոսա օրինաբար կրեսցէ։
9 Բայց զայս գիտասցէ՝ զի ի վերայ արդարոց օրէնք
ոչ կան, այլ ի վերայ անօրինաց և անհնազան-
դից, ամբարշտաց և մեղաւորաց, անսրբոց և պղծ-
ծոց, *զհայր և զմայր անարգողաց,՝՝ մարդասպա-
10 նաց, պոռնկաց, արուադիտաց, մարդեվաճառաց,
ստոց, ստերդմանց, և եթէ այլ ինչ իցէ հակա-
11 ռակ ողջամիտ վարդապետութեանն, որ ըստ ա-
ւետարանի փառաց երանելւոյն Աստուծոյ է, ո-
12 րում †եղէ ես հաւատարիմ։ Շնորհս ունիմ այնմիկ,
որ զօրացուցանէ զիս ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր.՝՝
զի հաւատարիմ համարեցաւ կարգել ի սպասաւ-
13 որութիւն, որ յառաջագոյն հայհոյիչն էի՝ և
հալածիչ և թշնամանիչ. այլ դարձ ողորմութիւն
զի զգոյն յանգիտութեան և յանհաւանութեան
14 գործեի։ Եւ առաւել եղեն շնորհք Տեառն մերոյ
15 հաւատովքն և սիրովք՝ որ ի Քրիստոս Յիսուս։ Հա-
ւատարիմ է բանս՝ և ամենայն ընդունելութեան

* Յայնս՝ հայրասպանաց և մայրասպանաց,
† Յայնս՝ զնս, Քրիստոս Յիսուսի Տեառն մերում.

արժանի է, զի Քրիստոս Յիսուս եկն յաշխարհ
16 փրկել զմեղաւորս, որոց գլուխն ես եմ ։ Ա.ՀՐ
վասն այնորիկ գտի ողորմութիւն, զի նախ յիս ե-
ցոյց Յիսուս Քրիստոս զամենայն երկայնմտութիւն՝
յօրինակ այնոցիկ՝ որ հաւատալոցն էին ՚ի նա ՚ի
17 կեանն յաւիտենից ։ Ա.ՀՐ թագաւորին յաւիտե-
նից՝ անեղծի և աներեւութի, միոյն Աստուծոյ՝
փառք և պատիւ յաւիտեանս յաւիտենից ։ Ա.ՄԷն ։
18 Զայս պատուիրան աւանդեմ քեզ, որդեակ իմ
Տիմոթէոս, ըստ կանխելոց ՚ի քեզ մարգարէու-
թեանցն, զի գու զնոսօրիցիս նոքօք զգեղեցիկ
19 զնոսօրութիւնն, Ունիցես հաւատս սրբովք միօք,
զոր ոմանք մերժեալ յանձանց իւրեանց՝ նաւակո-
20 ծեցան ՚ի հաւատս, Որոց սակս են Հիմենէոս և Ա-
ղէքսանդրոս, զորս մատնեցի Սատանայի, զի խրա-
տեսցին չհայհոյել ։

ԳԼ· Բ

1 Եւ արդ աղաչեմ՝ նախ քան զամենայն առնել
աղօթս, խնդրուածս, պաղատանս, գոհութիւնս
2 վասն ամենայն մարդկան ։ *Մանաւանդ վասն թա-
գաւորաց և ամենայն իշխանաց, զի խաղաղու-
թեամբ և հանդարտութեամբ վարեսցուք զկեանս
մեր ամենայն աստուածպաշտութեամբ և սրբու-
3 թեամբ ։ Զի այն է բարի և ընդունելի առաջի
4 փրկչին մերոյ Աստուծոյ, Որ զամենայն մարդիկ
կամի զի կեցցեն և ՚ի գիտութիւն ճշմարտութեան

* Ի ցուցին էի

5 եկեսցեն ։ Զի մի է Աստուած, և մի միջնորդ Աս-
6 տուծոյ և մարդկան՝ մարդն Յիսուս Քրիստոս, Որ
ետ զանձն փրկանս ընդ ամենեցուն՝ վկայութիւն
7 ժամանակաց իւրոց ։ Յոր եդայ ես քարոզ և ա-
ռաքեալ ։ Ճշմարիտ ասեմ ՚ի Քրիստոս և ոչ ստեմ,
եղէ վարդապետ հեթանոսաց հաւատովք և ճշմար-
8 տութեամբ ։ Կամիմ՝ զի արք կայցեն յաղօթս յա-
մենայն տեղիս, բառնայցեն զսուրբ ձեռս ՚ի վեր
9 առանց բարկութեան և երկմտութեան ։ Նոյնպէս
և կանայք ՚ի զարդ խոնարհութեան՝ ամօթոտու-
թեամբ և զգաստութեամբ զարդարել զանձինս,
մի՛ ՚ի հիւսս ոսկեմանս ընդելուզեալս մարգարտով՝
10 կամ ՚ի հանդերձս պաճուճեալս, Ա.ՀՐ, որպէս վա-
յել է կանանց զաստուածպաշտութիւն յանձն ա-
11 ռնելոց, գործովք բարութեան ։ Կին մարդ ցածու-
12 թեամբ ուսցի ամենայն հնազանդութեամբ ։ Ա.ՀՐ
ուսուցանել կնոջ մարդոյ ոչ հրամայեմ, և ոչ ճո-
խաբան լինել քան զայր մարդ, այլ ՚ի լռութեան
13 կալ ։ Զի Ադամ նախ ստեղծաւ և ապա Եւայ ։
14 Եւ Ադամ ոչ պատրեցաւ, այլ կինն պատրեցաւ
15 և յանցաւ ։ Բայց կեցցէ վասն որդեծնութեանն,
եթէ կացցեն ՚ի հաւատս և ՚ի սէր և ՚ի սրբութիւն
պարկեշտութեամբ ։

ԳԼ· Գ

1 Հաւատարիմ է բանս, եթէ ոք եպիսկոպոսու-
2 թեան ցանկայ՝ բարւոյ գործոյ ցանկայ ։ Պարտ է
եպիսկոպոսին անաբասա լինել, միոյ կնոջ այր, *հեզ,

* Յայն՝ ղգաստ ,

3 ցած, պարկեշտ, հիւրասէր, ուսուցիչ. Մի՛ *թըզ-
նամանող, մի՛ չարկանող, այլ հանդարտ. մի՛
4 կռուող. մի՛ արծաթասէր. Զի իւրում տանն իսկ
բարւոք վերակացու լեալ իցէ, որդեակս ունիցի՝
որ ի հնազանդութեան կացցեն ամենայն պարկեշ-
5 տութեամբ։ Ապա եթէ ոք իւրում տանն վերա-
կացու չդիտիցէ լինել, զի՞նդ եկեղեցւոյ Աստու-
6 ծոյ խնամակալ լինիցի։ Մի՛ մատաղատունկ, զի
մի՛ հպարտացեալ ի դատաստանս Սատանայի ան-
7 կանիցի։ Ապա պարտ է նմա վկայութիւն բարի և
յարտաքինոցն ունել. զի մի՛ ի նախատինս անկա-
նիցի՝ և յորոգայթս Սատանայի։
8 Նոյնպէս և զաւրկաւագունս պարկեշտս. մի՛ երկ-
9 բանս, մի՛ գինեսէրս, մի՛ զօշաբաղս. Ապա ունի-
10 ցին զխորհուրդ հաւատոցն սուրբ մնօք։ Ինքեանք
նախ փորձեացին, և ապա ի պաշտօնն մատիցեն,
11 †զի անարատք իցեն։ Նոյնպէս և կանայք նոցա
պարկեշտք, մի՛ չարախօսք, ‡հեզք, հաւատարիմք
12 յամենայնի։ Սարկաւագք լինիցին միոյ կնոջ արք,
որք որդւոց իւրեանց բարւոք վերակացու լեալ ի-
13 ցեն և տանց իւրեանց. Զի որ բարւոքն պաշտի-
ցեն՝ աշտիճան բարի անձանց իւրեանց շահին, և
բազում համարձակութիւն ի հաւատն որ ի Քրիս-
տոս Յիսուս։
14 Զայս գրեմ առ քեզ՝ զի ակն ունիմ ի մօտոյ
15 գալ. Ապա թէ յամեցից՝ զի գիտասցես թէ որ-
պէս պարտ իցէ քեզ ի տան Աստուծոյ շրջել, որ
է եկեղեցի Աստուծոյ կենդանւոյ, սիւն և հաս-

* Յոյն՝ արբեցող † Յոյն՝ որ ‡ Յոյն՝ զգաստաբ,

16 տատութիւն ճշմարտութեան։ Եւ յայտնի իսկ
մեծ է խորհուրդն աստուածպաշտութեան. *որ ե-
րեւեցաւ մարմնով, արդարացաւ Հոգւով, յայտ-
նեցաւ հրեշտակաց, քարոզեցաւ ի հեթանոսս,
հաւատարիմ եղեւ աշխարհի և վերացաւ փառօք։

Գ.Լ. Դ

1 Ա.յլ Հոգին Սուրբ յայտնապէս ասէ թէ ի ժա-
մանակս յետինս քակեսցին ոմանք ի հաւատոցն,
և հայեսցին յայս մոլորութեան և ի վարդապե-
2 տութիւնս դիւաց, կեղծաւորութեամբ ստապանք,
3 խարեալք խրեանց խղճիւն մնաց. Որ արգելլե-
ցուն յամուսնանալոյ, և մեկնիցեն ի կերակրոց՝
զոր Աստուած հաստատեաց †ի վայելել հաւատա-
ցելոց, և ոչ հասեալ իցեն ի ճշմարտութեանն
4 վերայ։ Զի ամենայն արարած Աստուծոյ բարի
են, և չիք ինչ խոտան. մանաւանդ որ դոհու-
5 թեամբ ընդունիցին. Զի սրբի բանիւն Աստուծոյ
6 և աղօթիւք։ Զայս խրատ տուեալ եղիցիս՝ բար-
ւոք պաշտօնեայ լինիցիս Քրիստոսի Յիսուսի, սնա-
նիցիս բանիւք հաւատոց և բարւոք վարդապետու-
7 թեամբն՝ զորոյ զհետն իսկ եղեր։ Ա.յլ ի պիղծ
բանից և յառասպելից պառաւանց հրաժարեա-
ջիր, բայց կրթեա զանձն քո յաստուածպաշտու-
8 թիւն. Զի մարմնոյ կրթութիւն առ սակաւ ինչ
օգտակար է. իսկ աստուածպաշտութիւնն առ ա-

* Բառըստ օրինակի Յունին՝ Աստուած
† Յոյն՝ ի վայելել գոհութեամբ

մենայն ինչ օգտակար է, և զաւետիս կենաց ունի
9 զարդիս և զհանդերձելոցն։ Հաւատարիմ է բանս
10 և ամենայն ընդունելութեան արժանի է։ Զի ի
սոյն իսկ վաստակեմք և նախատինս յանձն առ-
նումք, զի յուսացեալ եմք յԱստուած կենդանի,
որ է փրկիչ ամենայն մարդկան, մանաւանդ հա-
11 ւատացելոց։ Պատուէր տայիր զայդ և ուսուցա-
12 նիջիր։ Զի մի՛ ոք զքո մանկութիւնդ արհամարհիցէ. այլ օրինակ լինիջիր հաւատացելոց բանիւք,
13 գնացիւք, սիրով, հաւատովք, սրբութեամբ։ Մինչեւ գամ ես, միա դիր ընթեցուածոց, մխիթա-
14 րութեան, վարդապետութեան։ Մի՛ անփոյթ առներ պնորհացդ որ ի քեզ են, որ տուաւ քեզ մարգարէութեամբ ի ձեռնադրութենէ երիցութեան։
15 Յայդ խորհեաց և ի դոյն կանխեաջիր, զի քո յա-
16 ռաջադիմութիւնդ ամենեցուն յայտնի լիցի։ Զգոյշ լինիջիր անձին և վարդապետութեանդ և ի դմին
յամեաջիր. զայդ եթէ առնիցես, և զանձն ապրեցուսցես՝ և զայնոսիկ որ քեզ լսիցեն։

ԳԼ. Ե

1 Ջծերն մի՛ պատուհասեացես, այլ մխիթարեսջիր
իբրեւ զհայր, զերիտասարդս՝ իբրեւ զեղբարս,
2 Զպառաւսն՝ իբրեւ զմայրս, զմանկամարդս՝ իբ-
3 րեւ զքոյս ամենայն սրբութեամբ։ Զայրիս պա-
4 տուեա՝ որ ատոյդ այրիքն իցեն։ Ապա թէ ոք այրի՝
որդիս և թոռունս ունիցի, ուսանիցին նախ իբրեւանց տանց բարի առնել, և զփոխարէնս հատուցանել ծնողացն. զի այն է բարի և ընդունելի ա-

5 ռաջի Աստուծոյ։ Իսկ որ ճշմարտիւ այրին իցէ և
մենացեալ, յուսացեալ յԱստուած, և կանխեալ
6 յաղօթս և ի խնդրուածս զգայդ և զգերեկ. Իսկ
7 գիրգ այրին կենդանւոյն մեռեալ է։ Զայս պա-
8 տուիրեա զի անարատք իցեն։ Իսկ եթէ ոք իւրոց
և մանաւանդ ընտանեացն խնամ ոչ տանիցի, ի
հաւատոյն ուրացեալ է, և չար եւս քան զանհաւատան է։ Ակրի ընդ այրիս անուանեսցի, որ
9 չլիցի պակաս ի վաթսնամենից, միոյ առն կին լեալ։
10 Եւ ի գործս բարիս վկայեալ, եթէ մանկունս սնուցեալ իցէ, եթէ պնիւրս ընկալեալ իցէ, եթէ զըսրբոց զոտս լուացեալ իցէ, եթէ նեղելոց բաւական լեալ իցէ, եթէ զամենայն գործոց բարեաց
11 պնհետ երթեալ իցէ։ Ա.յլ ի մանկամարդաց այրեացն հրաժարեա, զի յորժամ խայտան զիրիս-
12 տոսիւ՝ ամուսնանալ կամին. Իսկ զդատաստանս ընդունին, զի զառաջին հաւատան արհամարհեցին։
13 Միանգամայն և դատարկանալոնք ուսանին՝ շրջողք տանէ ի տուն. և ոչ միայն դատարկք, այլ և
փսպքուսք և հետաքրքիրք. և խօսին որ լինչ ոչ է
14 պիտոյ։ Կամիմ՝ զմանկամարդսդ ամուսնանալ,
որդիս ծնանել, տնարարս լինել, և մի՛ ինչ պատճառս տալ հակառակորդին ի հայհոյութեան ա-
15 զգաս։ Զի արդէն իսկ ոմանք խոտորեցան զկնի Սա-
16 տանայի։ Եթէ ոք հաւատացեալ՝ այրիս ունիցի,
բաւական լիցի նոցա, և մի՛ ծանրասցի եկեղեցւոյն,
զի ճշմարիտ այրեացն բաւական լինիցի։
17 Որ բարւոք վերակացու լինին երիցունք՝ կրկին
պատուոյ արժանի եղիցին, մանաւանդ որ աշխա-
18 տիցին բանիւ և վարդապետութեամբ։ Գրանզի ասէ

գիր, Մի՛ կապեսցես զցուռկ եղէն կալոտւոյ, և՝
19 Արժանի է մշակն վարձու իւրոյ։ Ձերինսէ չարա-
խօսութիւն մի՛ ընդունիցիս, բայց եթէ երկուք և
20 երիւք վկայիւք։ Իսկ որ մեղանչէնն՝ առաջի ամե-
21 նեցուն յանդիմանեա, զի և այլքն երկիցեն։ Վկա-
յութիւն դնեմ առաջի Աստուծոյ և Յիսուսի Քրիս-
տոսի և ընտրելոց հրեշտակաց, զի զսդ պահես-
ցես առանց մտահաճութեան, մի՛ ինչ առնել ա-
22 չառանօք։ Ձեռս վաղվաղակի յորում մի՛
դնիցես, և մի՛ կցորդ լինիցիս մեղաց օտարաց.
23 զանձն քո սուրբ պահեսջիր։ Ա.յսուհետեւ մի՛ ջուր
և եթ ըմպիցես, այլ սակաւիկ մի և գինի խառ-
նեսջիր վասն ստամաքսի և սակաւ հիւանդութեանց։
24 Են մարդք՝ որոց մեղքն յայտնի են, և յառաջա-
գոյն հասեալ՝ ի դատաստան, և են՝ որոց զկնի
25 երթան։ Նոյնպէս և բարի գործքն յայտնի են. և
որ այլազգ եւս ինչ լեցեն՝ թաքչել ոչ կարեն։

ԳԼ. Ջ

1 Որ միանգամ ընդ լծով ծառայութեան լեցեն,
զիւրաքանչիւր տեարս * պատուի արժանի համա-
2 րեսցին, զի մի՛ անունն Աստուծոյ և վարդապետու-
թիւնն հայհոյեսցի։ Իսկ որ հաւատացեալ տեարս
ունիցին, մի՛ արհամարհեսցեն՝ զի եղբարք են, այլ
առաւել ծառայեսցեն՝ զի հաւատացեալքն են և
սիրելիք, որք զբարերարութիւն յանձինս ունիցին.
3 զայս ուսուցանիջիր և մխիթարեսջիր։ Իսկ եթէ ոք

* Յոյն՝ ամենայն պատուոյ

այլազգի լինէ ուսուցանիցէ, և ոչ անսայցէ ողջմտու-
թեան բանից Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, և
ըստ աստուածպաշտութեան վարդապետութեանն,
4 Ա.յնպիսին հպարտացեալ է և ոչինչ գիտէ, այլ
տապալի ի խնդիրս և ի բանս հակառակութեան.
ուստի լինին նախանձ, հեռ, հայհոյութիւն, կար-
5 ծիք չարեաց, խարդախութիւնք ապականելոց մտաց
մարդկան՝ և օտարացելոց ի ճշմարտութենէ ան-
տի, որ շահավաճառ համարին զաստուածպաշտու-
թիւնն. բայց դու մերժեսջիր յայնպիսեացն։
6 Ա.յլ շահավաճառ մեծ աստուածպաշտութիւն է
7 բաւականութեամբ հանդերձ։ Ձի ոչ բերաք ինչ
8 յաշխարհս՝ *և ոչ տանել ինչ կարասցուք։ Ա.յլ
ունիմք կերակուր և հանդերձս, և այնու շատաս-
9 ցուք։ Իսկ որք կամին մեծանալ՝ անկանին ի փոր-
ձութիւն և յորոգայթ և ի բազում ցանկութիւնս
անմիտս և վնասակարս, որք ընկղմեն զմարդիկ ի
10 սատակումն և ի կորուստ։ Ձի արմատ ամենայն
չարեաց արծաթասիրութիւն է. որում՝ ոմանց ցան-
կացեալ՝ վրիպեցան ի հաւատոցն, և զանձինս ար-
11 կին ընդ բազում ցաւովք։ Ա.յլ դու, ո՛վ մարդ
Աստուծոյ, փախիր յայնցանէ, և երթ զկետ ար-
դարութեան, աստուածպաշտութեան, զհաւա-
12 տոց, զսիրոյ, զհամբերութեան, զհեզութեան. Եւ
մարտիր զբարւոք մարտն հաւատոց, և բուռն կալ
զկենացն յաւիտենականաց յոր կոչեցար, և դա-
ւանեցեր զբարւոք դաւանութիւնն առաջի բազում
13 վկայից։ Պատուիրեմ քեզ առաջի Աստուծոյ՝ որ

* Յոյն՝ և յայտ իսկ է թէ

կենդանի առնէ զամենայն, և Յիսուսի Քրիստոսի՝
որ վկայեաց առաջի Պոնտացւոյ Պիղատոսի զբար-
14 ւոք դաւանութիւնն, պահել քեզ զպատուիրանն
անբիծ, անարատ՝ մինչեւ ի յայտնութիւնն Տեա-
15 ռըն մերոյ Յիսուսի Քրիստոսի. Զոր յիւր ժամա-
նակս ցուցցէ Երանելին և միայն Հզօր, Թագաւոր
16 թագաւորաց և Տէր տերանց. Որ միայն ունի զան-
մահութիւն՝ բնակեալ ի լոյս անմատոյց. զոր ոչ
ոք եհաս ի մարդկանէ՝ և ոչ տեսանել կարող է,
որում պատիւ և զօրութիւն յաւիտեանս. Ամէն։
17 Մեծատանց որ են յայսմ աշխարհի՝ պատուէր
տացիր մի՛ հպարտանալ և մի՛ յուսալ ի մեծու-
թիւն անոտի, այլ Աստուած՝ որ տայ մեզ զամենայն
18 առատապէս ի վայելել, Զբարիս գործել, մեծա-
նալ գործովք բարութեան, առատս, *սիրունս,
19 հաղորդս լինել. Գանձել անձանց հիմն բարի ի
հանդերձեալն, զի բուռն հարկանիցեն զճշմարիտ
կենացն։
20 Ով Տիմոթէ, պահեա զաւանդն՝ խոտորեալ ի
պղծոց և ի նորաձայն բանից և †ի հակառակու-
21 թենէ և ի մոլարանուն գիտութենէ," Զոր ոմանց
յանձն առեալ՝ վրիպեցան ի հաւատոց անտի։
Շնորհք ընդ քեզ, Ամէն։

---

* Ի Յ—ն՝ չ+։ † Յ՝ն՝՝ ի հակառակութեանց մոլարանուն գիտութեան,

Ա— Տիմոթէոս առաքեալ Յիսուսի Քրիստոսի ի Լաւոդիկէա, որ է մայր Փղւոյց Պահպանեայց։

ԹՈՒՂԹ

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԱՌ ՏԻՄՈԹԷՈՍ ԵՐԿՐՈՐԴ

ԳԼ. Ա

1 ՊՕՂՈՍ առաքեալ Յիսուսի Քրիստոսի կամօքն
Աստուծոյ, ըստ աւետեաց կենացն՝ որ ի Քրիս-
2 տոս Յիսուս, Տիմոթեայ որդւոյ սիրելւոյ Շնորհք,
ողորմութիւն և խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ և
3 ի Քրիստոսէ Յիսուսէ Տեառնէ մերմէ։ Շնորհ ու-
նիմ Աստուծոյ՝ զոր պաշտեմ ի նախնեաց մտօք
արբուք, իբրեւ զի անպակաս ունիմ զքեզն յիշա-
4 տակ յաղօթս իմ զգայդ և զցերեկ. Ցանկացեալ
եմ տեսանել զքեզ՝ յիշատակեալ զարտասուսն
5 քո, զի լցայց ուրախութեամբ. Զմտաւ ածեալ
զանխիղճ հաւատսն որ են ի քեզ, որ յառաջա-
գոյն բնակեցաւ ի հանոյ քումդ Լաւադեայ, և ի
մօր քումդ Եւնիկեայ. Հաստատեալ եմ թէ և ի
6 քեզ է։ Վասն որոյ յիշեցուցանեմ քեզ արծարծել
զշնորհսն Աստուծոյ՝ որ են ի քեզ ի ձեռնա-
7 դրութենէ իմմէ։ Զի ոչ ետ մեզ Աստուած հոգի
վհատութեան, այլ զօրութեան և սիրոյ և զգաս-
8 տութեան։ Մի՛ այսուհետեւ ամթի համարիցիս
վկայութիւն Տեառն մերոյ՝ և մի՛ զիս վկապեալ
նորա. այլ կցորդ լեր չարչարանաց աւետարանին

9 ըստ զօրութեանն Աստուծոյ . Որ փրկեաց զմեզ և
կոչեաց ի կոչումն սուրբ , ոչ ըստ գործոց մերոց ,
այլ ըստ իւրում յառաջադրութեանն և շնորհաց,
որ տուաւ մեզ ի Քրիստոս Յիսուս յառաջ քան
10 զժամանակս յաւիտենից , Բայց յայտնեցաւ այժ-
միկ յերեւել փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի .
որ խափանեաց զմահ և լուսաւոր արար զկեանս
11 և զանեղծութիւն ի ձեռն աւետարանին . Որոյ ե-
դայ ես քարոզ և առաքեալ և վարդապետ հե-
12 թանոսաց : Վասն որոյ և զայս չարչարանս կրեմ,
այլ ոչինչ ամօթ համարիմ, քանզի գիտեմ՝ յո
հաւատացեալն եմ, և հաստատեալ եմ թէ կա-
13 րող է զաւանդն իմ պահել յօրն յայն : Ունիցիս
օրինակ ողջմտութեան բանիցն՝ զորս յինէն լսեար,
հաւատովք և սիրով որ ի Քրիստոս Յիսուս :
14 Զքաւոր աւանդն պահեսցիր ի ձեռն Հոգւոյն
15 Սրբոյ ի մեզ բնակելոյ : Զայս գիտասջիր՝ զի մեկ-
նեցան ի մէնջ ամենեքեան որ էին Ասիա , որոց
16 սակս են Փիղեղոս և Հերմոգենէս : Տացէ Աստուած
ողորմութիւն տանն Ընեսիփորայ , զի բազում ան-
գամ հանգոյց զիս , և զկապանս իմ ոչ ամօթ հա-
17 մարեցաւ . Այլ երբեք եկն ի Հռոմ, պնդապոյս
18 խնդրեաց զիս և եգիտ : Տացէ նմա Տէր ողորմու-
թիւն գտանել ի Տեառնէ յաւուրն յայնմիկ . և
որչափ ինչ միանգամ Եփեսոս սպաս կալաւ *ինձ
զայն դուն ինքնին քաջ գիտես :

* ի ցուն՝ ա՛ :

Գլ . Բ

1 Ա՛յլ դուն , որդեակ իմ, զօրացիր շնորհօքն որ ի
2 Քրիստոս Յիսուս : Եւ զոր լուար յինէն բազում
վկայիւք՝ զայն աւանդեսցես հաւատարիմ մարդոց,
3 որք բաւական իցեն և զայլս ուսուցանել : *Վշտա-
կից լեր իբրեւ զբարւոք զինուոր Քրիստոսի Յիսու-
4 սի : Ոչ ոք զինուորեալ աստէն ընդ կեանս աշխար-
5 հիս պատասխանի , եթէ զօրավարին հաճոյ լինիցի : Եւ
եթէ մարտիկ ոք իցէ , ոչ պսակի՝ եթէ ոչ ըստ
6 օրինին մարտիցէ : Եւ հողագործին աշխատելոյ
7 պարտ է նախ ի պտղոյն վայելել : Իմա զինչ ա-
սեմն . տացէ քեզ Տէր իմաստութիւն յամենայնի .
8 Յիշեա զՔրիստոս Յիսուս յարուցեալ ի մեռելոց՝
ի զաւակէ Դաւթի՝ ըստ աւետարանիս իմոմ .
9 Յորում չարչարիմ կապանօք չափ իբրեւ զչարա-
գործ , այլ բանն Աստուծոյ ոչ եթէ կապեալ իցէ :
10 Վասն այնորիկ ամենայնի համբերեմ վասն ընտրե-
լոցն , զի և նոքա փրկութեանն հասանիցեն՝ որ ի
Քրիստոս Յիսուս † երկնաւոր փառօքն հանդերձ :
11 Հաւատարիմ է բանս . զի եթէ ընդ նմա մեռաք ,
12 ընդ նմին և կեցցուք . Եւ եթէ համբերեմք , ընդ
նմին և թագաւորեսցուք . և եթէ ուրանամք՝ և
13 նա ուրանայ զմեզ . Եւ եթէ չհաւատամք , նա
հաւատարիմ մնայ, ուրանալ զանձն իւր ոչ կարէ :
14 Զայս յուշ արասջիր՝ վկայութիւն եդեալ առաջի
Աստուծոյ , մի՛ բանակռիւ լինել յոչինչ պետս ի

* ցուն՝ Վշտակիր † ցուն՝ յաւիտենական

15 կործանումն լսողաց ։ փութասջիր ղանձն քո ընտիր
կացուցանել առաջի Աստուծոյ՝ մշակ առանց ա-
մենեցուն, ուղիղ համառօտել զբանն ճշմարտութեան։
16 Ա.ՀԼ ՝ի պղծոց և ՝ի անոտի խօսից մերժեսջիր , զի
17 առաւել յառաջ գայցեն յամբարշտութիւնս . Եւ
բանք նոցա իբրեւ զգաղցկեղ ճարակ գտանեն . ո-
18 րոց սակի են Հիմենոս և Փիղետոս . Որք վրիպեցան
՝ի ճշմարտութենէ , և ասեն եթէ յարութիւն *մե-
ռելոց արդէն իսկ եղեալ է, և կործանեն զՀաւատս
19 ոմանց ։ Ա.ՀԼ Հաստատուն հիմն Աստուծոյ կայ՝ և
ունի զկնիքս զայս , թէ ծանեաւ Տէր զայնոսիկ՝ որ
իւրն են . և ՝ի բաց լինիցի յանիրաւութենէ ամենայն՝
20 որ անուանէ զանուն Տեառն ։ Ա.ՀԼ ՝ի տան մեծի ոչ
միայն են անօթք ոսկեղէնք և արծաթեղէնք , այլ
և փայտեղէնք և խեցեղէնք . են որ ՝ի պատուի են
21 և են որ յանարգութեան ։ եթէ ոք սրբեսցէ զանձն
իւր յայնպիսեաց անտի , եղիցի անօթ պատուա-
կան՝ սրբեալ և պիտանի Տեառն *իւրում՝ յամե-
22 նայն գործս բարութեան պատրաստեալ ։ Ա.ՀԼ յե-
րիտասարդական ցանկութեանց փախիր , և երթ
զկետ արդարութեան , զհաւատոց , զսիրոյ , զխա-
ղաղութեան , *զսրբութեան , ընդ այնոսիկ՝ որ կար-
23 դան զանուն Տեառն սուրբ սրտիւք ։ Ա.ՀԼ ՝ի յի-
մար և յանխրատ խնդրոց հրաժարեա , գիտասջիր
24 թէ անտի ծնանին կռիւք . Բայց ծառայի Տեառն
ոչ է պարտ կռուել , այլ հեղ լինել առ ամենե-
25 սին՝ ուսուցիչ , անտխակալ . Հանդարտութեամբ
խրատել զկաւառակողսն, թերեւս տացէ նոցա Ա-

* ի ցուն՝ չէ ։

տուած ապաշխարութիւն ՝ի գիտութիւն ճշմար-
26 տութեան . Եւ սթափեսցին յորոգայթէ Սատա-
նայի՝ որսացեալք ՝ի նմանէ ՝ի նորա կամս ։

Գ.Լ. Գ

1 Զայս գիտասջիր եթէ յաւուրս յետինս եկես-
2 ցեն ժամանակք չարք . Զի եղիցին մարդիկ անձ-
նասէրք , արծաթասէրք , հպարտք , ամբարտա-
ւանք, հայհոյիչք , անհնազանդք ծնողաց , անշնորհք ,
3 անսուրբք , Աննուէրք , անգութք , բանսարկուք ,
4 անժուժք, վէսք , անբարեսէրք , Մատնիչք , յան-
դգնութիւնք , ամբարհաւաճք , ցանկասէրք մանաւանդ
5 քան Աստուածասէրք . Որ ունիցին զկերպարանս
աստուածպաշտութեան , և ՝ի զօրութենէ անտի
նորա ուրացեալ իցեն . և խորշեսջիր ՝ի նոցանէ ։
6 Զի՛նքն ՝ի նոցանէ են՝ որ մտանեն տանէ ՝ի տուն ,
և գերեն *զկանայս շեղջակոյտեալս մեղօք՝ վարեալք
7 ՝ի պէսպէս ցանկութիւնս . Որ յամենայն ժամ ու-
սանին , և երբէք ՝ի գիտութիւն ճշմարտութեան ոչ
8 հասանեն ։ Ա.ՀԼ որպէս Յանէսն և Յամբրէս հակա-
ռակ գացին Մովսիսի , նոյնպէս և սոքա հակառակ
կան ճշմարտութեանն . մարդք ապականեալք միօք՝
9 անպիտանք ՝ի հաւատս ։ Ա.ՀԼ ոչ երբէք գայցեն
յառաջ ՝ի լաւ անդր . քանզի անմտութիւն սոցա
յայտնի լինիցի ամենեցուն , որպէս և նոցայն իսկ
10 եղեւ ։ Ա.ՀԼ դու զկետ եկիր վարդապետութեան
իմոյ , առաջնորդութեան , յօժարութեան , հա-

* ցուն՝ զտկարամիտ կանայս

ւատոց, երկայնմտութեան, սիրոյ, համբերութեան,
11 Հալածանաց, չարչարանաց, որպիսիք եղեն ինձ
ի Անտիոք և ի Իկոնիոն և ի Լիւստրոս, որպիսի
հալածանաց համբերի, և յամենայնէ փրկեաց զիս
12 Տէր։ Եւ ամենեքին որ կամիցին աստուածպաշտու-
թեամբ կեալ ի Քրիստոս Յիսուս՝ ի հալածանս
13 կացցեն։ Ա.Յ. մարդք չարք և կախարդք յառաջ
եկեսցեն ի չար անդր. մոլորեալք և մոլորեցուցա-
14 նիցեն։ Ա.Յ. դու հաստատուն կաց յոր ուսար դ-
15 և հաւատարիմ եղեր, գիտես ուստի ուսար. Զի
ի մանկութենէ զգիրս սուրբս գիտես, որ կարող
են իմաստուն առնել զքեզ ի փրկութիւն՝ ի ձեռն
16 հաւատոյն որ ի Քրիստոս Յիսուս։ Ա.ամենայն Գիրք
Աստուածաշունչք և օգտակարք ի վարդապետու-
թիւն են և ի յանդիմանութիւն և յուղղութիւն
17 և ի խրատ արդարութեան. Զի կատարեալ իցէ
մարդն Աստուծոյ յամենայն գործս բարութեան
հաստատեալ։

Գլ. Դ

1 Զայս վկայութիւն դնեմ առաջի Աստուծոյ և
Յիսուսի Քրիստոսի, որ դատելոց է ողկենդանիս և
զմեռեալս ի յայտնութեան իւրում և յարքայու-
2 թեան. Եւ դու քարոզեա զբանն, հաս ի վերայ
ժամու և տարաժամու, յանդիմանեա, սաստեա,
մխիթարեա ամենայն երկայնմտութեամբ և վար-
3 դապետութեամբ։ Քանզի եկեսցէ ժամանակ՝ զի
ողջմտութեան վարդապետութեանն ոչ անասցեն,
այլ ըստ իւրաքանչիւր ցանկութեանց կուտեսցեն

իւրեանց վարդապետս՝ ըստ մարմնջելոյ լսելեաց
4 իւրեանց. Եւ ի ճշմարտութենէ անտի դարձուցա-
5 նիցեն զլսելիս, և յառասպելս կործանեսցին. Ա.Յ.
դու զսպարթ կաց յամենայնի, ճգնեաց, զգործս
աւետարանչի գործեա, զպաշտօնդ քո կատարեալ
6 կալ։ Զի ես այսուհետեւ նուիրեալ եմ, և ժա-
7 մանակ դարձի իմոյ հասեալ կայ։ Զբարւոք պա-
տերազմ պատերազմեցայ, զընթացն կատարեցի,
8 զհաւատսն պահեցի։ Ա.յսուհետեւ կայ ինձ
արդարութեան պսակն, զոր հատուսցէ ինձ Տէր
յաւուր յայնմիկ արդարն դատաւոր, ոչ միայն
ինձ, այլ և ամենեցուն՝ որ սիրեցին զյայտնու-
թիւնն նորա։
9 Փութացիր գալ առ իս վաղվաղակի. զի Դե-
մաս եթող զիս և սիրեաց զաշխարհ, և գնաց ի
10 Թեսաղոնիկէ. Կրեսկէս * ի Գաղղիա, Տիտոս ի
11 Դաղմատիա. Ղուկաս միայն է ընդ իս։ ԶՄարկոս
առեալ՝ ընդ քեզ ածիցես, զի է ինձ պիտանի ի
12 սպասաւորութիւն։ Զտիւքիկոս առաքեցի Եփե-
13 սոս։ Զփիլոնն Թողի ի Տրովադա առ Կարպոսի,
յորժամ գայցես՝ բերջիր և զգիրսն մանաւանդ զը-
14 մատեանսն։ Աղեքսանդրոս [դարբին] բազում չար-
չարանս եցոյց ինձ. Հատուսցէ նմա Տէր ըստ գործս
15 նորա։ Յորմէ և դու անձնասպառ լինիջիր, զի շատ
16 հակառակ եկաց բանից մերոց։ Յառաջնում ատե-
նին ոչ ոք ինձ ի թիկունս եկաց, այլ ամենեքին
17 թողին զիս. մի՛ համարեսցի նոցա այն։ Ա.Յ. Տէր
օգնեաց ինձ, և զօրացոյց զիս, զի ինեւ քարոզու-

* Յայլն՝ ի Գաղատիա,

Թիւնն հաստատեսցի, և լուիցեն ամենայն հեթա-
18 նոսք. և ապրեցայ ես ի բերանոյ առիւծուն։ փըր-
կեսցէ զիս Տէր յամենայն դործոց չարաց, և զեր-
ծուսցէ զիս յարքայութիւն իւր՝ որ յերկինս է,
որում փառք յաւիտեանս յաւիտենից։ Ամէն։
19 Ողջոյն տացէը Պրիսկեայ և Ակիւղեայ՝ և Ընեսի-
20 փորայ տանն։ Երաստոս մնաց ի Կորնթոս. զՏրո-
21 փիմոս Թողի ի Մելիտոս հիւանդագին։ փութաս-
ջիր յառաջ քան զձմեռն գալ։ Ողջոյն տան քեզ
Եւբուղոս և Պուդէս և Ղինոս և Կղօդիա և եղ-
22 բարք ամենեքեան։ Տէր Յիսուս Քրիստոս ընդ ո-
գւոյդ քումմ։ Շնորհք ընդ քեզ։ Ամէն։

Ա՛ Տէրունեա երէցորդ Թուղթ, որ էր Եպեսացւոց երէ-
ցեցւոյն եպիսկոպոս առաքին Յեռնադրեալ, դրեցաւ ի
Հռովմէ՝ յորժամ երէցորդ անգամ եկաց յաթենէ Պօղոս ա-
ռաքեալ Ներոնի կայսեր Հռովմայ։

ԹՈՒՂԹ

ՊՕՂՈՍԻ Ա.Ո.Ա.ՔԵԼՈՑ

ԱՌ ՏԻՏՈՍ

ԳԼ. Ա

1 Պօղոս ծառայ Աստուծոյ և առաքեալ Յիսուսի
Քրիստոսի, ըստ հաւատոց ընտրելոցն Աստուծոյ,
և ի գիտութիւն ճշմարտութեան որ ընդ աստուած-
2 պաշտութեանն է. Յուսով կենացն յաւիտենից,
զոր խոստացաւ անսուտն Աստուած յառաջ քան
3 զժամանակս յաւիտենից. Բայց յայտնեաց իւրովք
ժամանակօք զբանն իւր քարոզութեամբ, որով եղէ
ես հաւատարիմ ըստ հրամանի փրկչին մերոյ Ա-
4 ստուծոյ։ Տիտոսի որդւոյ սիրելւոյ ըստ հասարակաց
հաւատոց, շնորհք և խաղաղութիւն յԱստուծոյ
Հօրէ և ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ փրկչէ մերմէ։
5 Վասն այնորիկ էսկ Թողի զքեզ ի Կրետէ, զի որ
լինչ միանգամ պակաս էիցէ՝ ուղղեսցես, և կացու-
ցես ըստ քաղաքաց երիցունս՝ որպէս և ես քեզ
6 պատուիրեցի։ Եթէ ոք անարատ իցէ, միոյ կնոջ
այր, որդեակս ունիցի հաւատացեալս՝ և ոչ յամ-
բաստանութիւն անառակութեան կամ անհնա-
7 զանդս։ Զի պարտ է եպիսկոպոսին անարատ լինել՝
որպէս և Աստուծոյ տնտեսի, մի՛ յանդուգն, մի՛

բարկացող, մի՛ *թշնամանող, մի՛ հարկանող, մի՛
8 զշաքաղ, Ա.ՀԼ հնւբասէր, բարեսէր, ցած, ար-
9 դար, սուրբ, ժուժկալ, վերակացու լինել հա-
ւատարիմ բանին վարդապետութեան, զի կարող
լիցէ և մխիթարել ողջմտութեամբ վարդապետու-
10 թեանն, և զհակառակորդն կշտամբել։ Քանզի
բազումք են անհնազանդք, զրախօսք և մոլախարք,
11 մանաւանդ որ ի թլփատութենէ անտի են. Զորս
պարտ է բմբերանել որք †ազանոյն տունս կործա-
նեն, և ուսուցանեն զոր չէ արժան՝ վասն զշաշ-
12 քաղութեան։ Ասաց ոմն ի նոցանէ՝ իւրեանց իսկ
մարգարէ, Կրետացիք հանապազաստուք, չարա-
13 ճճիք, դատարկապորք. Եւ ստոյգ է վկայութիւնս
այս. վասն որոյ կշտամբեացես զնոսա խստագոյնս,
14 զի առողջասցին ի հաւատս. Եւ մի՛ հայեսցին ի
Հրէական առասպելս, և ի պատուիրս մարդկան
15 զառածելոցն ի ճշմարտութենէ։ Ամենայն ինչ
սուրբ է սրբոց, բայց պղծոցն և անհաւատից ո-
չինչ է սուրբ, այլ պղծեալ են միտք և խորհուրդք
16 նոցա։ Խոստանան գիտել զԱստուած, և գործովք
իւրեանց ուրանան. պիղծք և անհաւանք և յա-
մենայն գործս բարեաց անպիտանք։

ԳԼ· Բ

1 Ա.ՀԼ դու խօսեաց որ ինչ վայելէ ողջմիտ վար-
2 դապետութեանդ. Ծերոց զղաստս լինել, պար-
կեշտս, ցածունս, ողջմիտս ի հաւատս, ի սէր,

* Յայլն՝ արբեցող, † Յայլն՝ ողջոյն

3 ի համբերութեան, *ի ժուժկալութեան։ Պա-
ռաւանց նոյնպէս ի զգաստութեան, ի սուրբ վա-
յելչութեան, մի՛ բանսարկուս, մի՛ գինեմոլս,
4 այլ բարեխրատս։ Զի զգաստացուսցեն զմանկա-
5 մարդսն՝ այրասէրս լինել, որդեսէրս, ցածունս,
սուրբս, անարատս, բարեգործս, հնազանդս ի-
բեանց արանց. զի մի՛ բանն Աստուծոյ *և վարդա-
6 պետութիւնն՝՝ հայհոյեսցի։ Զերիտասարդս նոյն-
7 պէս աղաչեսջիր՝ ցածունս լինել, †Ամենեցուն
զանձն օրինակ կացուցանել գործոց բարութեան,
վարդապետութեամբ զանեղծութիւն ունել, *զսրբ-
8 բութիւն, զպարկեշտութիւն, Զբանն ողջմտու-
թեան‡, անպարսաւ լինել՝՝, զի որ հակառակորդն
իցէ՝ յամօթ լիցի, և մի՛ ինչ ունիցի ասել զվնաջ
9 չարութիւն։ Ծառայից՝ իւրեանց տերանց հնա-
զանդ լինել և հաճոյս յամենայնի. մի՛ հակառա-
10 կողս, Մի՛ հատուս, այլ զամենայն հաւատս ցու-
ցանել բարութեամբ, զի զվարդապետութիւն փրկ-
չին մերոյ Աստուծոյ զարդարեսցեն յամենայնի։
11 Քանզի երեւեցաւ շնորհն Աստուծոյ փրկիչ ամե-
12 նայն մարդկան. Որ խրատէն զմեզ՝ զի ուրացուք
զամբարշտութիւն և զաշխարհական ցանկութիւնս,
զգաստութեամբ և արդարութեամբ և աստուած-
13 պաշտութեամբ կեցցուք յաշխարհիս, Եւ սպասել-
ցուք երանելի յուսոյն, և յայտնութեան փառաց
մեծին Աստուծոյ և փրկչին մերոյ Յիսուսի Քրիս-
14 տոսի. Որ ետ զանձն վասն մեր, զի փրկեսցէ զմեզ

* Ի Յ—ն էլ։
† Յայլն՝ Յամենայնի ‡ Յայլն՝ զանպարսաւ,

յամենայն անօրէնութենէ, և սրբեսցէ իւր ժողովուրդ սեպհական՝ նախանձաւոր գործոց բարութեան։ Զայդ խօսեաց և մխիթարեա և յանդիմանեա ամենայն սաստիւք, ղի մի՛ ոք իցէ որ զքեզ արհամարհիցէ։

ԳԼ· Գ

1 Եւ յուշ արասջիր նոցա, իշխանութեանց և պետութեանց հնազանդ լինել և հպատակ կալ, և ամենայն գործոց բարութեան պատրաստ գտանել,
2 Մի՛ զրք հայհոյել, անկռիւս լինել, հեզս, զամենայն ցածութիւն առ ամենայն մարդիկ ցուցանել։
3 Զի էաք երբեմն և մեք անմիտք, անհաւանք, մոլորեալք, ծառայեալք ցանկութեանց և պեսպես առնառակութեանց. չարութեամբ և նախանձու շրջէաք, ատելագալք և զմիմեանս ատէաք։ Իսկ յորժամ քաղցրութիւն և մարդասիրութիւն փրկչին
5 մերոյ Աստուծոյ յայտնեցաւ, Ոչ 'ի գործոց արդարութեան՝ զոր արարաք մեք, այլ ըստ իւրում ողորմութեանն ապրեցոյց զմեզ 'ի ձեռն աւազանին միաստնգամ ծննդեանն, և նորոգութեամբ Հոգւոյն Սրբոյ, Զոր եհեղ 'ի մեզ առատութեամբ
7 'ի ձեռն Յիսուսի Քրիստոսի փրկչին մերոյ, Զի արդարացեալք շնորհօքն՝ եղիցուք ժառանգաւորք
8 յուսով կենացն յաւիտենականաց։ Հաւատարիմ է բանս. և 'ի սոյն կամիմ զքեզ *հաստատուն լինել,'' զի փոյթ արասցեն գործոց բարեաց վերա-

* Յոյն՝ հաստատել,

կացուս լինել հաւատացեալքն Աստուած, զի սոյն
9 է բարի և օգտակար մարդկան։ Այլ զյիմարութեան խնդիրս և զտոհմաբանութեան և զկռիւ և զօրինական կռիւսն 'ի բաց մերժեսջիր. զի անօգուտք են
10 և անոտիք։ Զառնէ հերձուածողն՝ յետ միանգամ
11 և երկիցս խրատելոյ՝ հրաժարեսջիր. Գիտասջիր՝ զի թիւրեալ է այնպիսին, և մեղանչէ՝ անձամբ զանձն դատապարտեալ։
12 Այլ յորժամ յղեցից առ քեզ զԱրտեմաս կամ զՏիքիքիոս, փութասջիր գալ առ իս 'ի Նիկոպոլիս,
13 զի անդ՝ եդի 'ի մտի ձմերել։ Եւ զԶենոն զօրինական դպիր և զԱպողոս փութով սրձակեսջիր, զի
14 մի՛ ինչ պակասիցէ նոցա։ Ուսցին և մերքն եւս բարեաց գործոց վերակացուս լինել 'ի պէտս կարեւորս, զի մի՛ անպտուղք լինիցին։ Ողջոյն տան քեզ որ ընդ իս են ամենեքին. ողջոյն տուր սիրելեացս մերոց հաւատովք. շնորհք ընդ ձեզ ամենեսին։ Ամէն։

Առ Տիտոս կղեմեսոյ եպիսկոպոսին Նեռնոպրեոլ եպիսկոպոս գրեցաւ 'ի Նիկոպոլէ Մակեդոնացոց։

ԹՈՒՂԹ

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՑ

ԱՌ ՓԻԼԻՄՈՆ

1 ՊՕՂՈՍ կապեալ Յիսուսի Քրիստոսի, և Տիմոթէոս
2 եղբայր, Փիլիմոնի սիրելւոյ և գործակից մերոյ,
3 Եւ Ապփեայ *քեռ, և Աքիպպոսի զինուորակից
մերոյ, և առանին եկեղեցւոյդ։ Շնորհք ընդ ձեզ
և խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ մերմէ և ի
Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ։
4 Գոհանամ զԱստուծոյ իմոյ յամենայն ժամ յի-
5 շատակել յաղօթս իմ վասն քո, Լսելով զսէր
քո հաւատոյն և զսէր զոր ունիս առ Տէր Յիսուս
6 և առ ամենայն սուրբս։ Զի հաղորդութիւն հա-
ւատոցն քոց արդիւ լինիցի՝ գիտութեամբ ամենայն
բարութեան՝ որ ի ձեզ է ի Քրիստոս Յիսուս։
7 Խնդութիւն յոյժ ընկալայ և մխիթարութիւն ի
վերոյ սիրոյն քո, զի գութք սրբոց քեզ հանգու-
ցեալ են, եղբայր։
8 Վասն որոյ բազում համարձակութիւն ունիմ
9 ի Քրիստոս՝ հրաման տալ քեզ զարժանն, Վասն
սիրոյ մանաւանդ թէ աղաչեմ իսկ, այնպիսի լի-
նել՝ որպէս և Պօղոս ծերացեալ, արդ և կապեալ
10 եւս Յիսուսի Քրիստոսի։ Աղաչեմ զքեզ վասն որ-
դւոյ իմոյ՝ զոր ծնայ ի կապանս իմ՝ զՈնեսիմոս,

* Յոյնն՝ սիրելւոյ

11 Որ երբեմն անպիտան էր քեզ, բայց արդ քեզ և
12 ինձ պիտանի. Զոր յղեցի առ քեզ. և դու զդա
13 ընկալջիր՝ այսինքն է զիմ աղիս։ Զոր կամէի առ իս
արգելուլ, զի զնդ քո ունիցի ինձ սպաս ի կապանս
14 աւետարանին։ Բայց առանց քո կամաց ոչինչ կա-
մեցայ առնել, զի մի՛ բարիքդ քո ի հարկէ լինի-
15 ցին, այլ կամաւ։ Եւ թերեւս վասն այնորիկ մեկ-
նեցաւ առ ժամանակ մի, զի յաւիտեան ունիցիս
16 զդա. Մի՛ եւս իբրեւ զծառայ, այլ ի վեր քան
զծառայ՝ իբրեւ զեղբայր սիրելի. եթէ ինձ այս-
պէս, ո՛րչափ եւս առաւել քեզ մարմնով և Տե-
17 րամբ։ Եթէ զիս քեզ հաղորդ համարիցիս, ընկալ
18 զդա իբրեւ զիս։ Եւ եթէ յանցուցեալ ինչ իցէ
19 կամ պարտիցի, զայն ինձ համարեաց։ Ես Պօղոս
գրեցի իմով ձեռամբ, ես հատուցից. զի մի՛ ասի-
20 ցեմ քեզ թէ և դու զանձն քո ինձ պարտիս։ Այո,
եղբայր, *ես քո փոխանակ եղէց՝ ի Տէր. հանգո
21 զաղիսդ իմ ի Քրիստոս։ Յուսացեալ ի հնազան-
դութիւնդ քո՝ գրեցի առ քեզ, քանզի գիտեմ
թէ առաւել եւս քան զոր ասեմդ՝ առնիցես։
22 Միանգամայն և պատրաստեայ ինձ վանս, քան-
զի յուսամ եթէ աղօթիւք ձերովք շնորհեցայց
23 ձեզ։ Ողջոյն տայ ձեզ Եպափրաս գերեկից իմ ի
24 Քրիստոս Յիսուս, Եւ Մարկոս և Արիստարքոս և Դե-
25 մաս և Ղուկաս՝ գործակիցք իմ։ Շնորհք Տեառն
մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ոգւոյդ ձերում։ Ամէն։

* Յոյնն՝ Եւ օգտեցայց քեզ
Ա֊ փիլիմոնէ ե ա֊ Ապֆիա գեաբա Ընեսիմայ ե ա֊
Աբխպպա աուխաա֊ կողաասյա֊ եկեղեցա֊ն էրեցա֊
ի հ֊ովից ի չեռ Ընեսիմայ ծառայէ։

ԹՈՒՂԹ

ՊՕՂՈՍԻ Ա.Ս.Ա.Ք.Ե.Լ.Ո.Յ

ԱՌ ԵԲՐԱՅԵՑԻՍ

ԳԼ· Ա

1 ԲԱԶՈՒՄ մասամբ և բազում օրինակօք կանխառ
խօսեցաւ Աստուած ընդ հարսն *մեր մարգարէիւք·
2 ի վախճան աւուրցս այսոցիկ խօսեցաւ ընդ մեզ
Որդւովն՝ զոր եդ ժառանգ ամենայնի· որով և ըզ-
3 յաւիտեանսն արար· Որ է լոյս փառաց և նկա-
րագիր էութեան նորա, որ կրէ զամենայն բանիւ
զօրութեան իւրոյ, սրբութիւն մեղաց մերոց †ա-
բարեալ՝ նստաւ ընդ աջմէ մեծութեանն ի բար-
4 ձունս· Այնչափ առաւել եղեալ քան զհրեշտակս,
որչափ լաւ եւս քան զնոսա անուն ժառանգեաց·
5 Զիա՞նգիր եւ երբեք ասաց ի հրեշտակաց, Որդի իմ
ես դու, ես այսօր ծնայ զքեզ· և դարձեալ Թէ
Ես եղէց նմա ի Հայր, և նա եղիցի ինձ ‡Որդի·
6 Եւ‹ Յորժամ միւսանգամ մուծցէ զնդրանիկն
յաշխարհ, ասէ, Երկիր պագցեն նմա ամենայն
7 հրեշտակք Աստուծոյ· Եւ‹ ‡առ հրեշտակն ասէ,

* Ի ՅՈՒՆ ԼԲ·

† ՅԱՅՆ՝ անձամբ արարեալ՝ ‡ ՅԱՅՆ՝ զհրեշտակաց

Ո արար զհրեշտակս իւր հոգիս, և զպաշտօնեայս
8 իւր՝ բոց հրոյ· Իսկ ցՈրդին *ասէ, Աթոռ քո, Ա-
ստուած, յաւիտեանս յաւիտենից, գաւազան ուղ-
9 ղութեան՝ գաւազան արքայութեան քո· Սիրեցեր
զարդարութիւն ևատեցեր զանօրէնութիւն· վասն
այսորիկ օծ զքեզ, Աստուած, Աստուա՛ծ քո իւ-
ղով ուրախութեան առաւել քան զընկերս քո·
10 Եւ դու, Տէր, ի սկզբանէ զերկիր հաստատեցեր·
11 և գործք ձեռաց քոց երկինք են· Նոքա կորնչին՝
և դու կաս և մնաս· ամենեքեան իբրեւ զձորձս
12 մաշեսցին, Եւ իբրեւ զվերարկուս գալարեսցես
†զնոսա իբրեւ զհանդերձ, և գալարեսցին·" բայց
13 դու նոյն իսկ ես, և ամք քո ոչ պակասեն· Յո՞
երբեք ասաց ի հրեշտակաց, Նիստ ընդ աջմէ իմ
մէ, մինչեւ եդից զթշնամիս քո պատուանդան ո-
14 տից քոց· Ո՞չ ապաքէն ամենեքեան հոգիք են
հարկաւորք՝ որ առաքին ի սպասաւորութիւն վասն
այնոցիկ, որ ժառանգելոցն են զփրկութիւն·

ԳԼ· Բ

1 Վասն այնորիկ պարտ է մեզ առաւել եւս ուն-
կընդիր լինել բանիցն ասացելոց՝ զի մի՛ երբեք նուա-
2 զեսցուք· Զի եթէ որ ի ձեռն հրեշտակաց խօսե-
ցաւ բանն՝ հաստատուն եղեւ, և ամենայն յանցա-
աւորութիւն և անհնազանդութիւն ընկալաւ զպա-
3 տիժ պատուհասի· Ա՞րդ զի՞նդ ապրեսցուք հեղ-

* Ի ՅՈՒՆ ԼԲ·

† ՅԱՅՆ՝ զնոսա, և փոխեսցին·

գացեալք յայնպիսի փրկութենէ, որ սկիզբն առ
խօսելոյ ի Տեառնէ, և ի ձեռն այնոցիկ որ լուանն՝
4 ի մեզ հաստատեցաւ. վկայեալ յԱստուածոյ նշա-
նօք և արուեստիւք և պեսպես զօրութեամբք և
մասամբք Հոգւոյն Սրբոյ՝ ըստ իւրոց կամաց։
5 Զի ոչ եթէ հրեշտակաց հնազանդեցուց զՀան-
6 դերձեալ աշխարհն, վասն որոյ մեքս խօսիմք։ վկա-
յեաց ոք ուրեք և ասէ, Զի՞նչ է մարդ՝ եթէ յի-
շեացես զնա, կամ որդի մարդոյ՝ թէ այց արասցես
7 նմա։ փոքր մի խոնարհ արարեր զնա քան զՀրեշ-
տակս. փառօք և պատուով պսակեցեր զնա, և
8 կացուցեր զնա ի վերայ ձեռակերտաց քոց. Ջա-
մենայն ինչ հնազանդ արարեր ի ներքոյ ոտից նո-
ցա. արդ ի հնազանդեցուցանելն զամենայն, ո-
չինչ եթող անհնազանդ ի նմանէ. բայց այժմ ոչ
9 եւս տեսանեմք հնազանդեալ նմա զամենայն։ Այլ
զփոքր մի խոնարհեալ քան զՀրեշտակս տեսանեմք
զՅիսուս վասն չարչարանաց մահուն, փառօք և
պատուով պսակեալ, զի շնորհօքն Աստուծոյ վասն
10 ամենեցուն զմահ ճաշակեսցէ։ Զի վայել էր իսկ
նմա, վասն որոյ ամենայնի՝ և որով ամենայն, բա-
զում որդիս ի փառս ածել՝ և զառաջնորդ փրկու-
թեան նոցա չարչարանօք կատարել։
11 Զի որ սրբէն և որ սրբին՝ ի միոջէ էին ամենե-
քին, վասն որոյ ոչ ամօթ համարի եղբարս անուա-
12 նել զնոսա, և ասել, Պատմեցից զանուն քո եղ-
13 բարց իմոց, ի մէջ եկեղեցւոյ օրհնեցից զքեզ։ Եւ
դարձեալ թէ Ես եղէց յուսացեալ ի նա. և դար-
ձեալ՝ Ահաւասիկ ես և մանկունք *իմ, զոր ետ ինձ

* Ի յՕրէն ՂԶ։

14 Աստուած։ Արդ որովհետեւ մանկունք հաղորդե-
ցին արեան և մարմնոյ, և ինքն իսկ մերձաւորու-
թեամբ կցորդ եղեւ նոցունց. զի մահուն *իւրով
խափանեսցէ զայն, որ զիշխանութիւն մահուն ունէր,
15 այսինքն է՝ զսատանայ. Եւ ապրեցուսցէ զայնոսիկ,
որ մահուն երկիւղիւ հանապազ կէին վտարանդեալք
16 ի ծառայութիւն։ Քանզի ոչ երբեք զՀրեշտակաց
բուռն հարկանէ, այլ զզաւակն Աբրահամու
17 բուռն հարկանէ։ Ուստի պարտ իսկ էր նմա ամե-
նայնիւ եղբարց նմանիլ, զի ողորմած լինիցի և հա-
ւատարիմ քահանայապետ յաստուածակրօն կող-
մանէ անտի, առ ի քաւելոյ զվէրս ժողովրդեանն։
18 Զի որով ինքն չարչարեցաւ, զփորձ առեալ՝ կա-
րող է և փորձանաւորացն օգնական լինել։

Գլ. Գ

1 Ուստի, եղբարք սուրբք, երկնաւոր կոչմանն բաժա-
նորդք, նայեցարուք ընդ Առաքեալն և ընդ Քահա-
նայապետ խոստովանութեան մերոյ ընդ Յիսուս Քրիս-
2 տոս. Որ հաւատարիմ է †արարչին իւրոյ՝ որպես և
3 Մովսէս յամենայն ի տան նորա։ Զի առաւել եւս
փառաց քան զՄովսէս արժանի եղեւ, որչափ ա-
ռաւել պատիւ ունիցի քան զտունն՝ տանն առ-
4 նելի։ Զի ամենայն տուն կազմի՝ յումէ կազմի. իսկ
5 որ զամենայնն արար՝ Աստուած է։ Մովսէս հա-
ւատարիմ է յամենայն տան նորա իբրեւ զծառայ
6 առ ի վկայութենէ բանիցն ասացելոց։ Այլ Քրիս-
տոս իբրեւ որդի ի վերայ տան իւրոյ. որոյ տունն

* Ի յՕրէն ՂԶ։ † Յայնն՝ նմա որ եդ զինքն։

մեք իսկ եմք , միայն թէ զհամարձակութիւն և
զպարծանս յուսոյն մինչեւ ի վախճան հաստա-
տուն ունիցիմք ։
7 Վասն որոյ այսպէս ասէ Հոգին Սուրբ . Այսօր
8 եթէ ձայնի նորա լուիցէք , Մի՛ խստացուցանէք
զսիրտս ձեր իբրեւ ի դառնութեանն՝ յաւուրն
9 փորձութեան յանապատի , Ուր փորձեցին զիս հարք-
քըն ձեր , քննեցին զիս և տեսին զգործս իմ զքա-
10 ռասուն ամ. Վասն որոյ տագնակացայ ազգիս
այնմիկ , և ասացի , Միշտ մոլորեալ են սրտիւք ,
11 և նոքա ոչ ծանեան զճանապարհս իմ. Որպէս եր-
դուայ ի բարկութեան իմում Թէ Մտցեն ի հան-
12 գիստ իմ։ Տեսէք , եղբարք , դուցէ երբէք լինիցի
յոմանք ի ձէնջ սիրտ չար անհաւատութեան՝ ա-
13 պստամբ լինել յԱստուծոյ կենդանւոյ ։ Այլ մխի-
թարեցէք զմիմեանս զօրհնապաղ՝ մինչդեռ այսօրդ
*առաջի կայ" , զի մի՛ ոք խստասցի ի ձէնջ խաբէ-
14 ութեամբ մեղաց ։ Քանզի բաժանորդք եղեալք Քրիս-
տոսի , միայն թէ զսկիզբն հաստատութեան մինչեւ
15 ցվախճան պինդ կալցուք . Ցասելն , Այսօր եթէ
ձայնի նորա լուիցէք , մի՛ խստացուցանէք զսիրտս
16 ձեր իբրեւ ի դառնութեանն ։ Քանզի ոմանք լուան
և դառնացուցին , այլ ոչ ամենեքեան որ ելեալ
17 էին յԵգիպտոսէ ի ձեռն Մովսիսի ։ Ցո՞ւմէ տաղ-
տակացաւ զքառասուն ամն . ո՞չ ապաքէն ի յանցու-
ցեալսն , որոց ոսկերքն անկան յանապատի անդ ։
18 Ո՞ւմ երդուաւ չմտանել ի հանգիստն իւր , եթէ
19 ոչ՝ անհաւատիցն ։ Եւ տեսանեմք զի ոչ կարացին
մտանել վասն անհաւատութեանն ։

* Ցոյն՝ ասի ,

ԳԼ. Դ

1 Երկիցուք այսուհետեւ , դուցէ *ի թողուլ զա-
ւետիսն՝ ի մտանելոյ" ի հանգիստն նորա՝ գտանիցի
2 ոք ի ձէնջ նուազեալ ։ Քանզի եմք աւետարա-
նեալք որպէս և նոքայն . այլ նոցա ոչինչ օգնեաց
լուր բանին , †չմտքելոցն ի հնազանդութիւն հա-
3 ւատոց ։" Այլ մեք մտանեմք ի հանգիստն՝ որք
հաւատացաքս . որպէս և ասացն Թէ Որպէս եր-
դուայ ի բարկութեան իմում , Թէ մտցեն ի հան-
4 գիստ իմ. Թեպետ և արդիւնքն ի սկզբանէ աշ-
խարհի լեալ էին ։ Քանզի ասէ ուրեք վասն աւուրն
եօթներորդի այսպէս . Եւ հանգեաւ Աստուած յա-
5 ւուրն եօթներորդի յամենայն գործոց իւրոց ։ Եւ
աստ դարձեալ ասէ Թէ Մտցեն ի հանգիստ իմ ։
6 Եւ արդ՝ ‡քանզի արգելան ոմանք մտանել" ի նա ,
և որք յառաջագոյն աւետարանեալն էին՝ չմտին
7 վասն անհաւատութեանն , Դարձեալ այլ օր սահ-
մանէ , զայսօրն ի Դաւիթ և ասէ յետ այնչափ
ժամանակաց , որպէս §յառաջագոյնն ասացի , Այ-
սօր եթէ ձայնի նորա լուիցէք՝ մի՛ խստացուցանէք
8 զսիրտս ձեր ։ Զի եթէ զնոսա Յեսուայ հանգուցեալ
էր , ապա վասն այլոյ աւուր ոչ խօսէր յետ այնո-
9 րիկ ։ Արդ ուրեմն ‡նուազեալ է" շաբաթուամն՝ ժողո-

* Ցոյն՝ ի կալ մնալ աւետեացն ի մտանել
† Ցոյն՝ չմտքելոյ հաւատովք լսողացն ։
‡ Ցոյն՝ քանզի կայ մնայ ոմանց մտանել
§ Ի Ցոշ. Դ. ։
* Ցոյն՝ կայ մնայ

10 վըրդեանն Աստուծոյ։" Զի որ եմուտ ի հանդիստն
նորա, և նա հանգեաւ յիւրոց գործոց անտի,
11 որպէս և Աստուած յիւրայնոցն։ Փութասցուք սյ-
սուհետեւ մտանել յայն հանգիստ, զի մի՛ ոք ընդ-
նովին օրինակաւ անհաւատութեանն անկանիցի։
12 Քանզի կենդանի է բանն Աստուծոյ և ազդող և
հատու քան զամենայն սուր երկասյրի, և անցանէ
մինչեւ ցորոշումն շնչոյ և ոգւոյ և յօդից և ուղղոյ,
13 և քննիչ է մտաց և խորհրդոց սրտից. Եւ չիք ա-
րարած աներեւոյթ յերեսաց նորա, այլ ամենայն
ինչ մերկապարանոց կայ առաջի աչաց նորա՝ զոր-
մէ մեր բանքս են։
14 Ունելմք այսուհետեւ քահանայապետ մեծ ան-
ցեալ ընդ երկինս, զՅիսուս զՈրդին Աստուծոյ,
15 պինդ կալցուք զխոստովանութիւնն։ Քանզի ոչ եթէ
ունիմք քահանայապետ՝ որ չիցէ կարող չարչարա-
կից լինել տկարութեան մերոյ, այլ փորձ է ամե-
16 նայնիւ ըստ նմանութեան, առանց մեղաց։ Մա-
տիցուք այսուհետեւ համարձակութեամբ առաջի
աթոռոյ շնորհացն նորա, զի ընկալցուք ողորմու-
թիւն և գտցուք շնորհս ի դէպ ժամանակի օգնա-
կանութեան։

Գլ. Ե

1 Զի ամենայն քահանայապետ ի մարդկանէ ա-
ռեալ՝ վասն մարդկան կայ յաստուածակոյս կողմն
անդր, զի մատուսցէ պատարագս և զոհս վասն
2 մեղաց. Զգաւով չարչարակից կարող է լինել ագի-
տաց և մոլորելոց, քանզի և ինքն լսկ տկարու-

3 թեամբ զգածեալ է։ Վասն այնորիկ հարկ է որպէս
վասն ժողովրդեանն, նոյնպէս և ընդ անձին մա-
4 տուցանել պատարագս վասն մեղաց։ Եւ ոչ եթէ
անձամբ ոք առնու պատիւ, այլ կոչեցեալն յԱս-
5 տուծոյ՝ որպէս և Ահարոնն։ Նոյնպէս և Քրիստոս
ոչ եթէ անձին ինչ շուք եդ լինել քահանայապետ,
այլ որ խօսեցաւն առ նա՝ Թէ Որդի իմ ես դու,
6 ես այսօր ծնայ զքեզ։ Որպէս և ի միւսումն ասէ,
Դու ես քահանայ յաւիտեան ըստ կարգին Մել-
7 քիսեդեկի։ Որ յաւուրս մարմնոյ իւրոյ աղօթս և
պաղատանս առ այն, որ կարող էր ապրեցուցա-
նել զնա ի մահուանէ, սաստիկ գոչմամբ և ար-
տասուօք մատուցանէր, և լսելի լինէր առ լաւու-
8 թեանն։ Թէպէտ և Որդի է, ուսաւ ի չարչարա-
9 նաց անտի զնազանդութիւն. Եւ իբրեւ կատա-
րեցաւ՝ եղեւ ամենայն հնազանդելոց իւրոց պատ-
10 ճառ փրկութեան յաւիտենից. Եւ անուանեցաւ
յԱստուծոյ քահանայապետ *յաւիտենից ըստ կար-
11 գին Մելքիսեդեկի։ Վասն որոյ բազումք են մեզ
բանք, և դժուարապատում ի մեկնել, քանզի
12 խօթամիտք եղերուք լսելոք։ Փոխանակ զի պարտ
էր ձեզ լինել վարդապետս վասն ժամանակին,
դարձեալ պիտոյ է ձեզ ուսանել՝ Թէ զինչ են նշա-
նագիրք սկզբան բանիցն Աստուծոյ. և եղերուք
13 կարօտք կաթին, և ոչ հաստատուն կերակրոյ։ Զի
ամենայն որ կաթնկեր է՝ ագէտ է բանին արդարու-
14 թեան, քանզի տղայ է։ Ա՛յլ կատարելոցն է հաս-

* ի յոյնին չէ։

տատուն կերակուր , որոց *վասն 'ի չափին հասանե-
լոյ՝՝ ճաշակելիքն կիրթ են ընտրութեան բարւոյ և
չարի ։

ԳԼ· Զ

1 Վասն որոյ թողեալ զբան սկզբանն Քրիստոսի ,
'ի կատարումն եկեսցուք . մի՛ միւսանգամ արկա-
նել հիմն ապաշխարութեան և մեռելոտի գործոց
2 անտի , և հաւատոցն որ ՅԱստուած , եւ մկրտու-
թեանցն վարդապետութեան , և ձեռնադրութեան
ձեռաց , և յարութեան մեռելոց , և դատաստա-
3 նին յաւիտենից ։ եւ արդ արասցուք զայն՝ եթէ
4 Աստուած հրամայեսցէ ։ Քանզի անհնար է միան-
գամ †մկրտելոցն , որ ճաշակեցին յերկնաւոր պար-
5 գեւացն , և հաղորդք եղեն Հոգւոյն Սրբոյ , եւ
զգեղեցիկ բանին Աստուծոյ ճաշակս ճաշակեցին ,
6 և զզօրութիւնս հանդերձելոյ աշխարհին , եւ կոր-
ծանեսցին , միւսանգամ նորոգել յապաշխարու-
թիւն , ‡և վերստին 'ի խաչ հանել անձանց զՈր-
7 դին Աստուծոյ , և դարձեալ խայտառակել ։՝՝ Քան-
զի երկիր՝ որ ըմպիցէ զանձրեւ բազում՝ անգամ ե-
կեալ 'ի վերայ նորա , և ծնանիցէ արդիւնս շայե-
կանս նոցա՝ վասն որոյ գործեցին , ընդունի զօրհ-
8 նութիւն ՅԱստուծոյ ։ Իսկ որ բերէ զփուշ և զտա-
տասկ , անպիտան է և մերձ յանէծս , և վախճան նո-

* Յայլն՝ առ ընտելութեան † Յայլն՝ լուսաւորելոցն,
‡ Յայլն՝ վերստին 'ի խաչ հանեալ անձանց զՈրդին
Աստուծոյ և դարձեալ խայտառակեալ ։

9 բա յայլոսն ։ Բայց հաստատեալ եմ վասն ձեր ,
սիրելիք , 'ի լաւ անդր և որ լինի փրկութեամբ ,
10 զի թեպէտ և այսպէս խօսիմք , Ոչ եթէ անիրաւ
ինչ է Աստուած՝ մոռանալ զգործս ձեր և զսէրն՝
զոր ցուցէք յանուն նորա , զի պաշտեիք զսուրբսն
11 և պաշտէք ։ Եւ մեք ըղձանամք զի իւրաքանչիւր
ոք 'ի ձէնջ զնոյն փոյթ ցուցանիցէ 'ի հաստատու-
12 թիւն յուսոյն մինչեւ ցվախճան . Զի մի՛ *հիւան-
դամիտք լինիցէք , նմանողք եղերուք այնոցիկ որ
հաւատովքն և երկայնմտութեամբ ժառանգեցին
13 զաւետիսն ։ Զի Աբրահամու խոստացեալ զաւե-
տիսն՝ Աստուծոյ , քանզի յոյլ ոք 'ի մեծ ոչ դոյր
14 երդնուլ , ցանձն իւր երդուաւ և ասէ , Այո՛ ,
օրհնելով օրհնեցից զքեզ , և բազմացուցանելով
15 բազմացուցից զքեզ ։ Եւ այնպէս երկայնամիտ ե-
16 զեալ եհաս աւետեացն ։ Ապաքէն մարդիկ որ ինչ
'ի վեր է քան զինքեանս՝ յայն երդնուն , և ամե-
նայն հակառակութեան նոցա վճիռ առ 'ի հաս-
17 տատութիւն՝ երդումն է ։ Որով առաւել եւս կա-
մեցեալ Աստուծոյ ցուցանել ժառանգաւորաց ա-
ւետեացն զհաստատութիւն խորհրդոյն իւրոյ , միջ-
18 նորդեաց երդմամբ ։ Զի երկու անփոփոխելի իրօքն՝
որովք անհնարին էջե սուտ Աստուծոյ , հաստա-
տուն մխիթարութիւն ունիցիմք՝ որք ապաստան
եղեաք բռնուն կարկանել զՀանդերձեալ յուսոյն .
19 Զոր իբրեւ զխարիսխ հաստատուն և անշարժ ու-
նիցիմք անձանց մերոց , որ և մտանիցէ 'ի ներքինն
20 կողմն վարագուրին . Ուր կարապետն մեր Յիսուս

* Յայլն՝ հեղգք

եմուտ վասն մեր, ըստ կարգին Մելքիսեդեկի՝ եղեւ քահանայապետ յաւիտենից։

ԳԼ. Է

1 Քանզի այս Մելքիսեդեկ Թագաւոր էր Սաղեմայ, քահանայ Աստուծոյ բարձրելոյ, որ ել ընդ առաջ Աբրահամու, յորժամ դարձեալ դայր ի կոտորածէ թագաւորացն, և օրհնեաց զնա. 2 որում և տասանորդս յամենայնէ ետ Աբրահամ. նախ թարգմանի թագաւոր արդարութեան, ապա թագաւոր 3 Սաղեմայ՝ որ է թագաւոր խաղաղութեան. Անհայր, անմայր, չհամարեալ յազգս, որոյ ոչ սկիզբն աւուրց և ոչ կատարած կենաց, նմանեալ Որդւոյն Աստուծոյ՝ կայ մնայ քահանայ մշտնջենաւոր։

4 Արդ տեսէք որպիսի այր էր սա, որում և Աբրահամ տասանորդս ետ յաւարէ անտի՝ նահապետն։ 5 Եւ որք յորդւոցն Ղեւեայ զքահանայութիւնն առնուն, պատուէր ունին տասանորդել զժողովուրդն ըստ օրինացն, այսինքն է զեղբարս իւրեանց. թէպէտ և ելեալ իցեն յերկանցն Աբրահամու. 6 Իսկ չհամարեալն յազգս ի նոցանէ՝ տասանորդեաց զԱբրահամ, և զնա որոյ զաւետիսն ընկալեալ էր՝ 7 օրհնեաց։ Զի առանց ամենայն հակառակութեան՝ նուաստն ի լաւէ անտի օրհնեսցի։

8 Եւ ասա մարդք մնհկանացուք տասանորդս առնուն. բայց անդ՝ *վկայեցաւ թէ կենդանի է. և 9 որպէս բանիւ կարգ է ասել, թէ Աբրահամու և Ղեւի իսկ՝ որ զտասանորդսն առնոյր, տասանորդեցաւ.

* Յոյնն՝ որ վկայեցաւն

10 Զի դեռ էր հայրն հօր իւրոյ էր՝ յորժամ ընդառաջ եղեւ նմա Մելքիսեդեկ։

11 Իսկ արդ՝ եթէ կատարումն ի ձեռն Ղեւտացւոց քահանայութեանն էր, քանզի ժողովուրդն յայն օրէնս գրեցաւ, զի՞նչ պիտոյ էր ըստ կարգին Մելքիսեդեկի այլոյ քահանայի յառնել, և ոչ ասել թէ ըստ կարգին Ահարոնի։ 12 Այլ ի փոփոխել քահանայութեանն՝ հարկ էր և օրինացն փոփոխումն լինել։ 13 Զի զորմէ այսպէսն ասի՝ յայլմէ ազգէ կալաւ հաղորդութիւն, յորմէ ոչ ոք երբէք եղեւ հաղորդ սեղանոյն։ 14 Արդ յայտ իսկ է թէ յազգէ Յուդայ ծագեաց Տէր մեր, յորմէ ազգէ վասն քահանայից Մովսէս ինչ ոչ ճառեաց։ 15 Եւ էս առաւել յայտ է՝ թէ ըստ նմանութեան Մելքիսեդեկի յառնէ քահանայ այլ, 16 որ ոչ ըստ մարմնաւոր պատուիրանին եղեւ, այլ ըստ զօրութեան կենացն անվախճանից։ 17 Քանզի վկայեցաւ թէ Դու ես քահանայ յաւիտեան ըստ կարգին Մելքիսեդեկի։ 18 Արհամարհութիւն լինէր առաջինն պատուիրանին՝ վասն նորին տկարութեան և անշահութեան. 19 քանզի ոչինչ կատարումն դարձուցին օրէնքն, *և մուտ ապնուական յուսոյն՝ որով մերձենամք առ Աստուած։

20 Եւ այնչափ զի ոչ առանց երդմանն. զի են որ առանց երդմանն կացեալ քահանայք։ 21 Բայց սա երդմամբ ի ձեռն այնորիկ՝ որ ասացն ի նա, Երդուաւ Տէր և ոչ եւս զղջասցի, դու ես

* Յոյնն՝ այլ

22 քահանայ յաւիտեան* : Եւ այնչափ լաւագոյն
ուխտի եղեւ երաշխաւոր Յիսուս :
23 Եւ բազում են կացեալ քահանայք՝ վասն մա-
24 հու արգել լինելոյ ի մշտնջենաւորել : Իսկ սա վասն
յաւիտեան կալոյ՝ առանց անցանելոյ ունի զքա-
25 հանայութիւնն . Ուստի և կենդանի առնել յա-
մբէն կարող է զմատուցեալսն նովաւ առ Աստուած .
քանզի միշտ կենդանի է լինել բարեխօս վասն նոցա :
26 Զի այսպիսի իսկ և վայել էր մեզ քահանայա-
պետ , սուրբ , անմեղ , անարատ , զատեալ ի մե-
27 ղաւորաց և բարձրացեալ քան զերկինս . Որոյ ոչ
հանապազ հարկ է որպես այլոց քահանայապե-
տիցն , նախ վասն իւրեանց մեղացն պատարագս
մատուցանել՝ և ապա վասն ժողովրդեանն . իսկ սա
զայն միանգամայն կատարեաց , զի զանձն իւր մա-
28 տոյց պատարագ : Օրէնքն զմարդիկ կացուցանեն
քահանայապետս ղգածեալս տկարութեամբ , իսկ
բանն երդմանն յետ օրինացն՝ զՈրդի , որ յաւի-
տեան կատարեալ է :

Գ Լ · Ը

1 Եւ բանից գլուխ խօսիցս՝ այնպիսի ունիմք քա-
հանայապետ , որ նստաւ ընդ աջմէ մեծութեան
2 աթոռոյն յերկինս , Սրբութեանցն պաշտօնեայ , և
խորանին ճշմարտութեան՝ զոր Տէրն կանգնեաց և
3 ոչ մարդ : Զի ամենայն քահանայապետ վասն մա-
տուցանելոյ զպահս և զպատարագս կայ . ուստի հարկ

* Յոյն յաւէտ , ըստ կարգին Մելքիսեդեկի :

4 է և նմա ունել ինչ՝ զոր մատուցանիցէ : Զի եթէ
էր *յերկրի , թերեւս չէր իսկ քահանայ . զի †գոյին
5 որ մատուցանէին ըստ օրինացն պատարագ . Որք
առակաւ և օրինակաւ պաշտէին երկնաւորացն ,
որպէս և հրամայեցաւ Մովսիսէ՝ յորժամ գործէ-
լոց էր ‡զվրան ժամուն՝՝ , Տեսջիր , ասէ , արասցես
զամենայն ըստ օրինակին՝ որ ցուցաւ քեզ ի լե-
6 րինն : Բայց արդ առաւելագոյն եւս պաշտամանն
եհաս §Յիսուս , որչափ լաւագոյն եւս ուխտի է միջ-
նորդ՝ որ յաւուրս աւետիսն օրինադրեցաւ :
7 Զի եթէ առաջինն անարատ էր , ապա երկրոր-
8 դին տեղի ոչ խնդրէր : Նա աւասիկ բամբասէ զնո-
սա և ասէ , Ահաւասիկ աւուրք եկեսցեն , ասէ Տէր ,
և կատարեցից ի վերայ տանն Իսրայէլի և ի վե-
9 րայ տանն Յուդայ ուխտ նոր . Ոչ ըստ ուխտին՝ զոր
եդի ընդ հարսն նոցա յաւուրն յորում առի ի ձեռն՝
հանել զնոսա յերկրէն Եգիպտացւոց . և զի նոքա
ոչ կացին յուխտին իմում , և ես անփոյթ արարի
10 զնոցանէ , ասէ Տէր ամենակալ : Ա՛յլ այս է ուխտն՝
զոր եդից տանն Իսրայէլի յետ աւուրցն այնոցիկ ,
ասէ Տէր , տայց զօրէնս իմ ի միտս նոցա , և ի
սիրտս նոցա գրեցից զնոսա , և եղեց նոցա Աստուած ,
11 և նոքա եղիցին ինձ ի ժողովուրդ : Եւ ոչ եւս
ուսուցանիցեն իւրաքանչիւր զքաղաքակից իւր
և իւրաքանչիւր զեղբայր իւր , և ասիցեն թէ Ճա-
նիր զՏէր . զի ամենեքեան ծանիցեն զնա ի փոքրը-
12 կանց մինչեւ ի մեծամեծս նոցա . Զի քաւիչ եղեց

* Յոյն՝ յերկրի ,
† Յոյն՝ գոյին քահանայք
‡ Յոյն՝ զվրանն ,
§ ի Յոյն՝ Ա՛ի :

անիրաւութեանց նոցա , և զմեղս նոցա և զանօրէնութիւնս այլ ոչ եւս յիշեցից ։

13 Արդ ասելովն նոր՝ հնացոյց զառաջինն . և որ հնանայն և ծերանայ՝ մերձ է յապականութիւն ։

ԳԼ· Թ

1 Ունել ունէր և առաջինն իրաւունս պաշտամանն
2 յայնժամ՝ զաշխարհական սրբութիւնն ։ Զի խորանն առաջին հանդերձեցաւ այսպէս , յորում՝ աշտանակն և սեղանն և հացն նուիրեաց , որ Սրբութիւնն
3 կոչէր ։ Եւ յետ երկրորդ վարագուրին խորանն՝ որ
4 կոչէր Սրբութիւն սրբութեանց . Յորումՙ կայր բուրվառն ոսկի , և արկղն կտակարանաց պատեալ ներքոյ և արտաքոյ ոսկւով· յորում սափորն ոսկի լի մանանայիւ , և գաւազանն Ահարոնի՝ որ ծաղ-
5 կեցաւ , և տախտակք կտակարանացն . Եւ ի վերոյ նորա քերովբէքն փառաց՝ որ հովանի ունէին ի վերոյ քաւութեանն , վասն որոյ ոչ է այժմ ասել մի ըստ միոջէ ։

6 Եւ այն ամենայն իբրեւ այնպէս հանդերձեալ կայր , յառաջին խորանն յամենայն ժամ մտանէ-
7 ին քահանայք զպաշտամունն կատարել . Բայց յերկրորդն միանգամ ի տարւոջն քահանայապետն . և զոչ առանց արեան , զոր մատուցանէր վասն
8 իւր և վասն ժողովրդեանն անգիտութեան ։ Զայս ցուցեալ Հոգւոյն Սրբոյ՝ *մինչչեւ յայտնեալ էր՝՝ ճանապարհն սրբութեանցն , †քանզի դեռ՝՝ առա-

*Ցոյն՝ թէ չեւ էր յայտնեալ
† Ցոյն՝ մինչդեռ

9 ջին խորանն ունէր զհաստատութիւն . Որ է առակ ժամանակին՝ որ առաջի կայր , յորում՝ պատարագք և զոհք մատչէին , որք ոչ կարէին ըստ միտս կատարել զպաշտօնեայսն , բայց միայն կե-
10 րակրովք և ըմպելեօք , Եւ պէսպէս մկրտութեամբք՝ մարմնոյ արդարութիւնքն որ մինչեւ ի ժամանակս
11 ուղղութեանն ի վերայ կային ։ Այլ Քրիստոս եկեալ՝ քահանայապետ հանդերձելոցն բարեաց՝ մեծաւն և կատարելով և անձեռագործ խորանաւն ,
12 այսինքն է՝ որ ոչ յայսոյ արարածոց , Եւ ոչ արեամբ նոխազաց և զուարակաց , այլ իւրով արեամբն եմուտ միանգամ ի սրբութիւնն՝ յաւիտենական
13 գտեալ զփրկութիւն ։ Զի եթէ արիւն ցլոցն և նոխազաց և մոխիր երինջոյն ցանեալ՝ զպղծեալսն
14 սրբեր առ ի մարմնոյ սրբութենէ , Ո՞րչափ եւս առաւել արիւնն Քրիստոսի , որ ի ձեռն Հոգւոյն յաւիտենականի մատոյց զանձն անարատ *պատարագ Աստուծոյ , սրբեսցէ զխիղճ մտաց ձերոց ի մեռելոտի գործոց անտի՝ պաշտել զԱստուած կեն-
15 դանի ։ Եւ վասն այնորիկ նորոյ ուխտիս է միջնորդ , զի յորժամ մահ լինիցի ի փրկութիւն վասն առաջին ուխտին յանցանաց , զաւետիս առցեն հրաւիրեալքն
16 ի ժառանգութիւն յաւիտենից , Քանզի ուր կտակ
17 է , հարկ է զմահ ի մէջ բերել զկտակագրին . Զի կտակ յետ մահու հաստատուն է . ապա թէ ոչ՝ զի՞րդ իցէ հաստատուն , մինչ կտակագիրն կեն-
18 դանի է ։ Ուստի և ոչ առաջինն առանց արեան

* Ի ցոյն չէ

19 Նորոգէը ։ Քանզի իբրեւ պատմեցան ամենայն պա-
տուիրանք օրինացն ՚ի Մովսիսէ ժողովրդեանն , ա-
ռեալ զարիւն ցլուցն և նոխազացն , ջրով և բըր-
դով կարմրով և զոպայիւ՝ զկտակարանօքն իսկ և
20 զամենայն ժողովրդեամբն սրսկեաց , եւ ասէ , Այս
է արիւն կտակին՝ զոր պատուիրեաց ձեզ Աստուած ։
21 Եւ զխորանսն և զամենայն կահիւ սպասուն նոյն-
22 պէս սրսկեաց զարիւնն ։ Եւ գրեթէ ամենայն ինչ
արեամբն սրբէր ըստ օրինացն , և առանց հեղման
արեան չլինէր թողուլթիւն ։
23 Ապա հարկ էր *օրինաւորացն այնպիսեաքն սրբել ·
և բուն իսկ երկինսն օրինաւորացն՝ առաւել եւս պատա-
24 րագօք քան զնոսքա ։ Զի ոչ եթէ ՚ի ձեռագործ
սրբութիւնսն եմուտ Քրիստոս յօրինակս ճշմարտու-
թեանն , այլ ՚ի բուն իսկ երկինս , †յանդիման
25 լինել երեսացն Աստուծոյ վասն մեր ։ Ոչ զի բա-
զում անգամ մատուցանիցէ զանձն ‡պատարագ՝
որպէս քահանայապետն որ մտանէր ՚ի սրբութիւն
26 սրբութեանցն ամի ամի արեամբն օտարաւ · Ապա
թէ ոչ՝ պարտ էր նմա բազում անգամ չարչարել
՚ի սկզբանէ աշխարհի · բայց արդ՝ աւասիկ միան-
գամ ՚ի կատարած յաւիտեանց՝ յանարգութիւն
27 մեղաց իւրով պատարագաւն յայտնեալ է ։ Եւ
զոր օրինակ կայ մնայ մարդկան միանգամ մեռա-
28 նել՝ և յետ այնորիկ դատաստան · Նոյնպէս և
Քրիստոս միանգամ մատուցեալ ‡պատարագ առ

* Յայնմ՝ օրինակացն երկինսաւորաց
† Յայնմ՝ այժմ յանդիման
‡ Ի Յոհնէն չէ ։

՚ի բառնալոյ զմեղս բազմաց · իսկ յերկրորդումն ա-
ռանց մեղաց յայտնեսցի այնոցիկ՝ , որ ակն ունիցին
նմա *հաւատովք , ՚ի փրկութիւն ։

Գլ· Ժ

1 Քանզի զստուեր հանդերձելոց բարեացն ունէին
օրէնքն , և ոչ զնոյն կերպարանս իրացն , ամի ամի
զնոյն պատարագս մատուցանեն ցանգ , որք ոչ են
2 կարող զմատուցեալսն կատարել · Ապա թէ ոչ՝ դա-
դարէին ՚ի մատուցանելոյ , վասն և ոչ մի ինչ այ-
նուհետեւ խիղճ մատց ունելոյ պաշտօնեկիցն միան-
3 գամ սրբեցելոցն · Այլ անդէն ՚ի նմին ՚ի յիշա-
4 տակ մեղացն կայցն ամի ամի ։ Քանզի ոչ կարեր
5 արիւն նոխազացն և ցլուց բառնալ զմեղս ։ Վասն
որոյ ՚ի մտանել իւրում յաշխարհ՝ ասէ , Զզոհս և
զպատարագս ոչ կամեցաւ , բայց մարմին հատա-
6 տեցեր ինձ · Ընդ ողջակէզս և ընդ վասն մեղացն ոչ
7 հաճեցար ։ Յայնժամ ասացի Թէ Աւհաւասիկ եկի ,
՚ի ճառս գրոց գրեալ է վասն իմ , առնել զկամս
8 քո Աստուած ։ Վերագոյնն ասէ Թէ Ընդ զոհս և
ընդ պատարագս և ընդ ողջակէզս և ընդ վասն մե-
ղացն ոչ հաճեցար , և ոչ կամեցար՝ որք ըստ օրի-
9 նացն մատչէին ։ Ապա ասէ , Աւհաւասիկ գամ առ-
նել զկամս քո , Աստուած · մերժէ զառաջինն զի
10 զերկրորդն հաստատեսցէ · Որով կամաւք և մեք սրբե-
եցաք՝ ՚ի ձեռն պատարագի մարմնոյն Յիսուսի
Քրիստոսի մինադամ ։

* Ի Յոհնէն չէ ։

41 Եւ ամենայն քահանայապետ կայ հանապազորդ
'ի պաշտամանն. և զնոյն պատարագս մատուցանէ
բազում անգամ, որք ոչ երբէք կարող են *բառ-
42 նալ զմեզս։ Իսկ սա զմին վասն մեղաց մատոյց
պատարագ, և մշանջենաւոր նստաւ ընդ աջմէ Ա-
43 տուծոյ. Եւ այսուհետեւ ակն ունի՝ մինչեւ դիցին
44 թշնամիք իւր 'ի ներքոյ ոտից իւրոց։ Քանզի միով
պատարագաւ կատարեաց զսրբեալսն 'ի մշանջենա-
ւորս։
45 Ա.ՀԼ վկայէ մեզ և Հոգին Սուրբ *յետ ասելոյն
46 յառաջագոյն, Եթէ այս է ուխտն՝ զոր եդից †ընդ
հարս նոցա՝՝ յետ աւուրցն այնոցիկ, ասէ Տէր,
տայց զօրէնս իմ 'ի սիրտս նոցա, և 'ի խորհուրդս
47 նոցա գրեցից զնոսա։ Ապա ‡ասէ Թէ Զմեղս նոցա
և զանօրէնութիւնս նոցա այլ ոչ եւս յիշեցից։
48 Իսկ ուր թողութիւն է, ոչ եւս պիտոյ է վասն մե-
ղաց պատարագ։
49 Ունիմք այսուհետեւ, եղբարք, համարձակու-
թիւն 'ի մուտս սրբութեանցն արեամբն Յիսուսի,
20 Զոր նորոգեաց մեզ ճանապարհ նորոգ և կենդանի
'ի ձեռն վարագուրին, այսինքն է՝ մարմնոյ իւրոյ.
21 Եւ քահանայ մեծ 'ի վերայ տանն Ա.տուծոյ,
22 Մատիցուք ճշմարիտ սրտիւք, լրութեամբ հաւա-
տոյ, լուացեալ զսիրտս 'ի խղճէ չարեաց և մկըր-
23 տեալ զմարմին 'ի ջուրն սրբութեան։ Պինդ կալ-
ցուք զխոստովանութիւն ‡անշարժ յուսոյն, զի
24 հաւատարիմ է որ խոստացաւն։ Եւ զդուշասցուք

* Յոյն՝ քանզի յետ
† Յոյն՝ ընդ նոսա
‡ Ի Յոյն չէ։

միմեանց յորդորմամբք սիրոյ և գործոյ բարեաց.
25 Եւ մի՛ թողուք զժողովս միմեանց, որպէս և սո-
վոր են ոմանք. այլ միմեանս բարեսցուք, և այնչափ
եւս առաւել՝ որպէս տեսանիցէք զօրն մերձեալ։
26 Զի կամակոր մեօք եթէ յանցանիցեմք յետ ըն-
դունելութեան գիտութեան ճշմարտութեանն՝ այ-
նուհետեւ ոչ եւս պիտոյ է վասն մեղաց պատա-
27 րագ. Ա.ՀԼ ահեղ ակնկալութիւն դատաստանին,
և նախանձ հրոյն՝ որ ուտիցէ զհակառակորդսն։
28 Անհամարհեալ ուրուք զօրէնն Մովսիսի, առանց
ողորմութեանց՝ առ երկուք կամ երիւք վկայիւք
29 մեռանէր. Իսկ ո՞րչափ սաստիկ պատժոյ արժանի
համարիցիք զայն, որ զՈրդին Ա.տուծոյ առ ոտն
եհար. և զարիւն *նորոյ ուխտին խառնակ համա-
րեցաւ՝ որով և սրբեցաւն, և զՀոգին շնորհաց թըշ-
30 նամանեաց։ Ա.ՀԼ գիտեմք զայն որ ասացն, Իմ
են վրէժխնդրութիւնք, և ես հատուցից՝ ասէ
Տէր. և դարձեալ Թէ Դատի Տէր զժողովրդիւր իւր։
31 Ա.Հ մեծ է անկանիլ 'ի ձեռս Ա.տուծոյ կենդա-
նւոյ։
32 Այդ յիշեցէք զաւուրսն զառաջինս, յորս լու-
սաւորեալք բազում ճգանց և չարչարանաց համբ
33 բերէք. Մերթ 'ի նախատինս և 'ի նեղութիւնս
խայտառակեալք, մերթ կցորդք այնպիսեաց վաս-
34 տակաւորացն լինել։ Քանզի և ընդ կապեալս չար-
չարեցարուք, և զյափշտակութիւն ընչից ձերոց
խնդութեամբ ընկալարուք, քանզի գիտէիք Թէ
լաւագոյն եւս ստացուածս ունիք անձանց յերկինս՝

* Ի Յոյն չէ։

35 ուր կանն և մնան : Արդ մի՛ մերժէք ի ձէնջ զՀա-
մարձակութիւնն ձեր , յորում կայ մեծաց վար-
36 ձուց հատուցումն : Պիտոյ է ձեզ համբերութիւն ,
զի զկամս Աստուծոյ արարեալ՝ հասջիք աւետեացն :
37 Ջի փոքր միւս եւս քան որչափ որ գալոցն լցէ՝ և-
38 կեսցէ , և ոչ յամեսցէ : Ջի արդարն *իմ ի հա-
ւատոց կեցցէ . և եթէ †յերկմիտս ոք լցէ ,՚՚ ոչ
39 հաճեսցի ընդ նա անձն իմ : Բայց մեք ոչ եթէ
‡երկմտութեամբ եմք՚՚ ի կորուստ , հաւատովք ի
փրկութիւն հոգւոց :

ԳԼ· ԺԱ

1 Ջի՞նչ են հաւատք , եթէ ոչ՝ յուսացելոց իրաց
հաստատութիւն , և յանդիմանութիւն՝ որոց ոչն
2 երեւին : Ջի նովաւ վկայեցան առաջինքն :
3 Հաւատովք խոնամք հաստատեալ զյաւիտեանն
բանիւ Աստուծոյ , յաներեւութից զերեւելիս ե-
4 ղեալ : Հաւատովք լաւ պատարագս Հաբէլ քան
զկայէն մատուցանէր Աստուծոյ , որով վկայեցաւ
իսկ արդար լինել . զի ի վերայ պատարագացն եղեւ
նմա վկայութիւն Աստուծոյ . զի թէպէտ և մե-
5 ռաւ ի նմին , սակայն տակաւին խօսի : Հաւատովք
Ենովք փոխեցաւ՝ զի մի՛ զմահ ճաշակեսցէ . և ոչ
ուրեք գտանէր , քանզի փոխեաց զնա Աստուած .
և յառաջ քան զփոխելն նորա վկայեցաւ հաճոյ
6 լինել Աստուծոյ : Բայց առանց հաւատոյ անհնար

* ի ց-ն. էփ :
† ց-ն՝ յոտս կացցէ ‡ ց-ն՝ կամք յոտս

է հաճոյ լինել . այլ հաւատալ արժան է այնմ որ
մերձենայ առ Աստուած՝ թէ է *Աստուած . և որ
7 խնդրեն զնա՝ լինի պարգեւատու : Հաւատովք ա-
ռեալ Հրաման Նոյի վասն չեւ եւս երեւելեացն ,
զայնմ հարեալ կազմեր զտապանն ի փրկութիւն
տան իւրոյ , որով դատեցաւ զաշխարհ , և հաւա-
8 տոցն արդարութեան եղեւ ժառանգաւոր : Հաւա-
տովք որ Աբրահամն կոչեցաւ՝ ունկնդիր եղեւ ե-
լանել ի տեղին , զոր առնուլոց էր ի ժառանգու-
9 թիւն . եւ դնաց , և ոչ գիտեր յոլ երթիցէ : Հա-
ւատովք պանդխտեցաւ յերկրին աւետեաց իբրեւ
յօտարութեան , խորանօք բնակեաց Սահակաւ և
Յակոբաւ հանդերձ՝ ժառանգակցօք նոցին աւե-
10 տեաց : Քանզի ակն ունէր հիմամբք հաստատելոյ
քաղաքին , որոյ ճարտարապետ և արարիչ Աս-
11 տուած է : Հաւատովք և ինքն Սառա՝ *որ ամուլն
էր ,՚՚ զօրութիւն առնուլոյ զսերմն *որդեծնութեան՝
ընդունէր , և ի տարաժամ հասակի ծնանէր . քան-
զի հաւատարիմ համարեցաւ զայն՝ որ խոստացաւն ,
12 վասն որոյ և ի մէնջէ ծնանէին , և այն՝ †ի յան-
ցեալ ժամանակի ,՚՚ իբրեւ զաստեղս երկնից բազ-
մութեամբ , և իբրեւ զաւազ առ ափն ծովու ա-
13 ռանց թուոյ : Ըստ հաւատոց մեռան ամենեքին
սոքա , և չեւ եւս ընկալեալ զաւետիսն . այլ ի
հեռուստ տեսին զնոսա՝ և ‡ցնծացան , և խոստո-
վան եղեն եթէ օտարք և պանդուխտք են յերկրի ,
14 Ջի որք զայնպիսիսն խօսին , յայտ առնեն եթէ

* ի ց-ն. էփ : † ց-ն՝ որպէս ի մեռելոյ ,
‡ ց-ն՝ ողջունիւր ընկալան

15 գաւառս իմն խնդրէին ։ Զի եթէ զոյն յիշէին ուսանի
16 ելլիցն , գոյր ժամանակ դառնալոյ անդրէն ։ Նա
ւանիկ աղնուականի իմն ցանկացեալ են, այսինքն
է՝ երկնաւորին . վասն որոյ ոչ ամենի համարի Ա-
տուածծ կոչել նոցա Աստուածծ , քանզի պատրաս-
17 տեաց նոցա քաղաք ։ Հաւատովք մատոյց Աբրա-
համ ի փորձութեան իւրում զԻսահակ *պատա-
րագ . և զմիածնին մատուցանէր , որոյ զաւետիսն
18 ընկալեալ էր . Որում ասացաւն , Թէ Սահակաւ
19 կոչեցի քեզ զաւակ . Եդ ի մտի իւրում Թէ և
ի մեռելոց կարող է յարուցանել Աստուածծ . ուստի
20 և յառակս իսկ ընկալաւ զնա ։ Հաւատովք վասն
հաղորձելոց իրաց օրհնեաց Իսահակ զՅակովբ և
21 զԵսաւ ։ Հաւատովք Յակովբ ի մեռանելն իւրում
զիւրաքանչիւր որ յորդւոցն Յովսեփու օրհնեաց ,
22 և երկիր եպագ ի ծագ գաւազանի իւրոյ ։ Հաւա-
տովք Յովսէփ ի վախճանել իւրում , յիշեաց զելս
որդւոցն Իսրայէլի , և վասն ոսկերաց իւրոց պա-
23 տուիրեաց ։ Հաւատովք՝ Մովսէս իբրեւ ծնաւ ,
Թաքուցաւ ամիս երիս ի հարց իւրոց , քանզի
տեսին կայտառ զմանուկն , և ոչ զանգիտեցին ի
24 հրամանէ թագաւորին ։ Հաւատովք Մովսէս իբրեւ
աճեաց՝ ուրացաւ կոչել որդի դստերն փարաւոնի .
25 Լաւ համարեցաւ չարչարել ընդ ժողովրդեանն Ա-
տուծոյ , քան առ ժամանակ մի վայելել ի մեղս ։
26 †կարեւոր համարեցաւ զնախատինսն Քրիստոսի
քան ‡զհնծութիւն գանձուցն՝՝ Եգիպտացւոց , զի

* Ի ցաւին չէ ։ † ցայնմ՝ առաւել մեծութիւն
‡ ցայնմ՝ զդանձս

27 հայեցեալ աչն ունէր վարձուցն հատուցման ։ Հա-
ւատովք Թողոյր զերկիրն Եգիպտացւոց , և ոչ
երկնչէր ի ցասմանէ թագաւորին , զի զաներ-
ւոյթան իբրեւ զտեսեալ համբերութեամբ համա-
28 րեցաւ ։ Հաւատովք արար զզատիկն և զկեղծումն
արեանն , զի մի՛ սատակիչն անդրանկաց մերձենայ-
29 ցէ ի նոսա ։ Հաւատովք անցին ընդ ծովն կարմիր
իբրեւ ընդ ցամաք երկիր . զորոյ զփորձ առեալ Ե-
30 գիպտացւոցն՝ ընկղմեցան ։ Հաւատովք պարիսպքն
Երիքովի անկան , շուրջ եկեալ զնոքօք զեօթն օր ։
31 Հաւատովք Բախաբ պոռնիկ ոչ կորեաւ ընդ ան-
հաւատսն , որոյ ընկալեալ էր զլրտեսսն խաղաղու-
թեամբ ։

32 Եւ արդ զինչ եւս ասացից . զի չէ բաւական
ժամանակս պատմելոյ վասն Գեդէոնի , Բարա-
կայ , Սամփսոնի, Յեփթայեայ, Դաւթի և Սամուե-
33 լի և *այլոց մարգարէիցն . Որք հաւատովք պար-
տեցին զթագաւորութիւնս , գործեցին զարդարու-
թիւն , հասին աւետեաց , խցին զբերանս առիւ-
34 ծուց , շիջուցին զզօրութիւն հրոյ , սպրեցան ի
բերանոյ սրոյ , զօրացան ի տկարութենէ , եղեն
զօրաւորք ի պատերազմի , †առին զբանակս օտա-
35 րաց ։ Ընկալան կանայք ի յարութենէ զմեռեալս
իւրեանց . ‡նոք կոչմամբեցան՝ և չեւ եւս ընկալեալ
զփրկութիւն , զի լաւագոյն յարութենէն հասա-
36 նիցեն ։ Եւ ոմանք ‡զտանջանաց և զդանից զփորձ
37 առին , զկապանաց և զբանտից ։ Քարկոծեցան ,

* Ի ցաւին չէ ։
† ցայնմ՝ ցրուեցին ‡ ցայնմ՝ զթշնամանաց

սղոցեցան, փորձեցան, սպանմամբ սրոյ մեռան,
շրջեցան լշկամաշկօք և մորթովք այծենեօք. կա-
38 րօտեալք, նեղեալք, չարչարեալք. Զորս ոչ արժէ
աշխարհս. յանապատի մոլորեալք և ի լերինս և
39 յայրս և ի փոսարս երկրի: Եւ սոքա ամենեքին
վկայեալք ի հաւատոցն, չեւ եւս ընկալան զաւե-
40 տիսն. Աստուծոյ վասն մեր *լաւագոյն համարեալ,''
զի մի' առանց մեր կատարեսցին:

ԳԼ. ԺԲ

1 Ա.Յոսէհետեւ և մեք որ այսչափ շուրջ զմեօք մա-
ծեալ ունիմք զբազմութիւն վկայից, †զհպարտու-
թիւն զամենայն ի բաց ընկիցուք՝ և զմեղս կարե-
լւորս. համբերութեամբ ընթացցուք ի պատերազմ՝
2 որ առաջի կայ մեզ. Հայեցուք ի զօրագլուխն հա-
ւատոյ և ի կատարիչն Յիսուս, որ փոխանակ ու-
բախութեանն՝ որ նմա առաջի կայր, յանձն առ
գխաչն, արհամարհեաց զամօթն, նստաւ ընդ աջմէ
աթոռոյն Աստուծոյ:
3 Ածէք զմտաւ, որ զայսպիսի համբերութիւն
ի մեզաւորաց հակառակութենէ անտի կրեաց, զի
մի' աշխատ լինիցիք անձամբք ձերովք և լքանիցիք:
4 Զի չեւ եւս արեամբ չափ պատերազմեալք՝ հակա-
5 ռակ կացէք մեղացն. Եւ մոռացարուք զմխիթա-
րութիւնն, որ ընդ ձեզ իբրեւ ընդ որդեակս խօսի,
Որդեակ իմ, մի' լքանիր ի խրատու Տեառն, և

* Յ՚ոյնն՝ լաւագոյն եւս պատրաստեալ յառաջա-
գոյն,

† Յ՚ոյնն՝ զծանրութիւն

6 մի' վշատիցիս յանդիմանեալ ի նմանէ: Զի զոր
սիրէ Տէր՝ խրատէ, տանջէ զամենայն որդի՝ զոր ըն-
7 դունի: Ի խրատու համբերութեան կաց, իբրեւ
յորդիս մատուցեալ է ի ձեզ Աստուած. ո՞ր որդի
8 է՝ զոր ոչ խրատիցէ հայր: Զի եթէ առանց խրա-
տու լինիցիք, որով ամենեքին բաժանորդք եղեն,
9 ապա խորթք էջէք և ոչ որդիք: Զի եթէ ի մար-
մնաւոր հարցն մերոց՝ զոր ունիմք խրատիչս՝ պատ-
կառեմք, ո՞րչափ եւս առաւել հնազանդեսցուք
10 Հօրն հոգւոց և կեցցուք: Զի սոքա առ սակաւ
ժամանակս ըստ կամաց իւրեանց խրատեն, իսկ
նա վասն օգտի, *առ ի ընդունելոյ զսրբութիւն
11 նորա:'' Ամենայն խրատ առ ժամանակն ոչ ուրա-
խութեան թուի՝ այլ տրտմութեան, բայց յետոյ
պտուղ խաղաղութեան նովաւ կրթելոցն հատու-
ցանէ †յարդարութիւն:
12 Վասն որոյ զձեռս լքեալս՝ և զծունկս կթոտս
13 հաստատեցէք. Եւ ղշաւիղս ուղիղս արարէք ոտից
ձերոց, զի մի' որ կաղն խցէ՝ դլորիցի, այլ մանա-
14 ւանդ բժշկեսցի: Զխաղաղութեան ղհետ երթայք
ընդ ամենեսին և զսրբութեան, առանց որոյ ոչ ոք
15 տեսանիցէ զՏէր. Զդոյշ լերուք՝ դուցէ ոք յետնեալ
դտանիցի ի շնորհացն Աստուծոյ. մի' ոք արմատ
դառնութեան ի վեր երեւեալ նեղեցէ, և նովաւ
16 բազումք պղծիցին: Մի' ոք պոռնիկ և պիղծ իբրեւ
զԵսաւ, որ ընդ միոյ կերակրոյ զանդրանկութիւնն
17 վաճառեաց: Գիտէք զի թէպէտ և յետոյ կամե-

* Յ՚ոյնն՝ առ ի լինելոյ հաղորդ սրբութեան նորա:

† Յ՚ոյնն՝ արդարութեան:

ցաւ ժառանգել զօրհնութիւնան, խոտան դուռ. զի ապաշխարութեան տեղի ոչ եգիտ, թէպէտ և արտասուօք խնդրեաց զնա։

18 Զի ոչ էք մատուցեալ առ լեառն շօշափելի, որ հրոյն վառեալ էր, *և միգով և մառախղով և խա-
19 ւարաւ և մթով. Ուր փողն հնչէր և բարբառ՝ պատգամացն. ուստի որք լսեանն՝ †հրաժարեցին,
20 զի մի՛ կրկնեացի առ նոսա բանն։ Քանզի ոչ հանդարտէին հրամանին. Թէպէտ և գազան մերձե-
21 նայր՝ի լեառն՝ քարկոծ լինէր։ Եւ այնպէս ահագին էր տեսլին, զի և Մովսէս ասէր երեթ Զահի
22 հարեալ եմ և դողամ։ Այլ մատուցեալ էք՝ի Սիովն լեառն, և՝ի քաղաք Աստուծոյ կենդանւոյ, Երուսաղէմ յերկինս, և՝ի բիւրաւոր բանակս
23 հրեշտակաց, ‡Եւ յեկեղեցիս անդրանկաց գրելոց յերկինս, և առ դատաւորն ամենեցուն Աստուած,
24 և յոգիս արդարոց կատարելոց. Եւ՝ի նորոց կտակարանաց միջնորդն Յիսուս, և՝ի հեղումն արեան նորա՝ որ առաւել խօսի քան զԱբելն։
25 Զգոյշ լերուք՝ գուցէ հրաժարիցէք յայնմանէ՛ որ խօսեցաւն. զի եթէ նոքա ոչ կարացին զերծանել, հրաժարեալք յայնմանէ՛ որ յերկրին հրա-
ման տայր, ո՞րչափ եւս առաւել մեք, եթէ յեր-
26 կնաւորէն թիկունս դարձուցանիցեմք։ Որոյ ձայնն զերկիր շարժեաց յայնժամ, և այժմ խոստացեալ է և ասէ, Միւսանգամ շարժեցից ոչ միայն զեր-

* Յօրն՝ և ոչ՝ի մէգ և՝ի խաւար և՝ի մրրիկ և՝ի հնչումն փողոյն և՝ իբարբառ
† Յօրն՝ աղաչէցին ‡ Յօրն՝ Եւ՝ի ժողով և

27 կիր՝ այլ և զերկինս։ Ա.Յլ միւսանգամն յայտ առնէ զշարժելոցն՝ իբրեւ զեղելոց փոփոխումն, զի
28 հաստատուն կացցեն անշարժքն։ Վասն որոյ թագաւորութիւն անշարժ ընկալեալ՝ պինդ կալցուք զշնորհն, որով պաշտեմք զԱստուած հաճոյութեամբ՝
29 ահիւ և դողութեամբ. Քանզի Աստուած մեր հուր ծախիչ է։

ԳԼ. ԺԳ

1 Եղբայրսիրութիւն հաստատեսցի *առ ձեզ։
2 Զօտարսիրութիւն մի՛ մոռանայք, զի այնու ոմանք
3 յանդիտս ընկալան զհրեշտակս։ Յուշ լերիք ձեզ կապեալքն՝ որպէս թէ դուք ընդ նոսա կապեալ իցէք. և չարչարեալքն, որպէս և դուք իսկ մարմնաւոր էք։ Պատուական է ամենեցուն ամենեւին՝ և սուրբ՝ անկողինք. բայց զշունս և զպոռնիկս դատի Աստուած։
5 Բարք անարծաթասէրք լինիցին, բաւական համարել որչափ ինչ՝ի ձեռս իցէ. քանզի ինքն իսկ ասաց, Ոչ թողից զքեզ և
6 ոչ ընդ վայր հարից. Որպէս համարձակ լինիցուք ասել, Տէր է իմ օգնական, և ես ոչ երկեայց, զի՞
7 արասցէ ինձ մարդ։ Յիշեցէք զառաջնորդս ձեր որ խօսեցան ձեզ զբանն Աստուծոյ, հայեցեալք յելս
8 գնացից նոցա՝ նմանողք եղերուք հաւատոցն։ Յիսուս Քրիստոս երէկ և այսօր, նոյն և յաւիտեանս։
9 Յուսամանն պէսպէսս և յօտարաձայնս մի՛ դանդաչիք. զի լաւ է շնորհօք հաստատել զսիրտս՝ և

* Ի Յոհ. ՂԶ։

ոչ կերակրովք . որովք ոչինչ օգտեցան՝ որ այնպէսն
10 գնացին : Ընդիմք մեք սեղան , ուստի ոչ ունին իշ-
խանութիւն ճաշակել որք պաշտեն զպաշտօն խո-
11 րանին : Զի որոց անասնոց մատչէր արիւնն ի սրբ-
բութիւնն վասն մեղաց ի ձեռն քահանայապե-
տին , նոցունն մարմինք այրէին արտաքոյ բանա-
12 կին : Վասն որոյ և Յիսուս՝ զի սրբեսցէ իւրով ա-
րեամբն զժողովուրդն , արտաքոյ դրանն չարչարե-
13 ցաւ : Արդ եկայք ելցուք առ նա արտաքոյ բանա-
14 կին , առեալ յանձն զնախատինս նորա : Քանզի
ոչ եթէ ունիմք քաղաք որ աստէն մնալոց իցէ ,
15 այլ զՀանդերձեալսն խնդրեմք : Արդ ի ձեռն նորա
մատուսցուք պատարագ օրհնութեան յամենայն
ժամ Աստուծոյ . այսինքն է՝ զպտուղ շրթանց խոս-
16 տովանելոց յանուն նորա : Զբարերարութիւն և
զհաղորդութիւն մի՛ մոռանայք , զի ընդ այնպիսի
17 պատարագս հաճի Աստուած , Ընկնդիր լերուք
առաջնորդաց ձերոց , և հպատակ կացէք *նոցա ,
զի նոքա տքնին վասն ոգւոց ձերոց , որպէս թէ
համարս տալոց իցեն *ընդ ձեր" . զի խնդութեամբ
արասցեն զայն և մի՛ յոգւոց հանելով , զի այն ոչ
18 յօգուտ ձեր է : Աղօթս արարէք վասն մեր , զի
հաստատեալ գիտեմք եթէ բարւոք միտս ունիմք ,
19 յամենայնի կամիմք բարւոք դնացս ցուցանել : Եւ
առաւել աղաչեմ՝ զի զայն առնիցէք , զի վաղա-
գոյն պատսպարեցայց ձեզ :
20 Եւ Աստուած խաղաղութեան՝ որ երհան ի մե-
ռելոց զՀովիւն հօտից՝ զմեծն արեամբ յաւիտենա-

* Ի ՑՈՒՆԻՆ՝ ՎԽ :

21 կան ուխտին զՏէր մեր Յիսուս , Հաստատեսցէ ըզ-
ձեզ ի դործս բարութեան՝ առնել զկամս նորա .
և արասցէ *ի մեզ զՀաճոյսն առաջի իւր՝ ի ձեռն
Յիսուսի Քրիստոսի , որում փառք յաւիտեանս
Ամէն :
22 Աղաչեմ զձեզ , եղբարք , անհաւ բանիս մխի-
23 թարութեան , քանզի սակաւուք գրեցի ձեզ : Եւ
ճանաչէք զեղբայրն † մեր զՏիմոթէոս զարձակեալն
†առ ձեզ . ընդ որում , եթէ վաղագոյն գայցէ ,
24 տեսից զձեզ : Ողջոյն տաջիք ամենայն առաջնոր-
դաց ձերոց և ամենայն սրբոց . ողջոյն տան ձեզ՝
25 որ ի կողմանս Իտալիացւոց են : Շնորհք ընդ ամե-
նեսին ձեզ : Ամէն :

Ա՜ ԵԲՐԱՅԵՑՒՆ ԳՐԵՑԱ՜ ԱԻԳՈՒՍՏՈՍ Ի ՅԵՌՈՒՏԱԼԵՄ :

ԹՈՒՂԹ

ԿԱԹՈՒՂԻԿԵԱՑ

ՑԱԿՈՎԲՈՒ ԱՌԱՔԵԼՈՑ

ԳԼ· Ա

1 ՅԱԿՈՎԲՈՍ Աստուծոյ և Տեառն Յիսուսի Քրիս-
տոսի ծառայ , երկոտասան ազգացդ որ ի սփիւռս
էք , ողջոյն :

* ՑՈՒՆԻՆ՝ Ի ՁԵԶ

† Ի ՑՈՒՆԻՆ ՎԽ :

2 Ա֊
յնպէս ուրախութեան արժանի համարիջիք,
եղբարք, յորժամ ի պէսպէս փորձութեանց ի մէջ
3 անկանիջիք, Գիտասջիք զի հանդէս ձերոց հաւա֊
4 տոցն յօրինեալ գործէ զհամբերութիւն։ իսկ համ֊
բերութիւնն գործ կատարեալ ունիցի, զի իցէք
ողջանդամք և կատարեալք, և ոչ իւիք նուա֊
զեալք։
5 Ապա թէ ոք ի ձէնջ իցէ նուազեալ յիմաստու֊
թենէ, խնդրեսցէ Աստուծոյ՝ որ տայն ամենայնի
6 առատապէս և ոչ նախատէ, և տացի նմա։ Բայց
խնդրեսցէ հաւատովք և մի՛ երկմտեսցէ. զի որ երկ֊
միտն է՝ նման է հողմակոծեալ և տատանեալ ա֊
7 լեաց ծովու. Մի՛ ակնկալեցի մարդն այն առնուլ
8 ինչ Աստուծոյ. Զի այր երկմիտ առանց հաստա֊
տութեան է յամենայն ճանապարհս իւր։
9 Պարծեսցի եղբայր խոնարհ ի բարձրութիւն իւր,
10 Եւ որ մեծատունն իցէ՝ ի խոնարհութիւն իւր.
11 զանզի իբրեւ զծաղիկ խոտոյ անցցէ. Զի ծագեաց
արեւ հանդերձ խորշակաւ և ցամաքեցոյց զխոտն,
և թօթափեցաւ ծաղիկն նորա, և կորեաւ վայել֊
չութիւն երեսաց նորա. նոյնպէս և մեծատունն
*հանդերձ շահիւքն իւրովք՝ թարշամեսցի։
12 Երանեալ է այր որ համբերիցէ փորձանաց. զի
եթէ ընտիր եւս գտանիցի, առցէ զպսակն կենաց՝
13 զոր †խոստացաւն սիրելեաց իւրոց։ Մի՛ ոք որ ի
փորձութեան իցէ՝ ասիցէ Թէ Աստուածոյ փորձիմ.
զի Աստուած անփորձ է չարեաց, փորձէ նա և ոչ
14 զոք։ Իւրաքանչիւր ոք փորձի առ յիւրոյն ցան֊

* Ցայնմ՝ ի գնացս իւր † Ցայնմ՝ խոստացաւ Տէր

15 կութեանց ձգեալ և պատրեալ։ Ապա այնուհետեւ
ցանկութիւնն յղացեալ՝ ընդդէմ ծնանի, և մեղքն
16 կատարեալ՝ զմահ ծնանին։ Մի՛ խաբիք, եղբարք
17 իմ սիրելիք. Զի ամենայն տուրք բարիք և ամե֊
նայն պարգեւք կատարեալք ի վերուստ են, իջեալ
առ ի Հօրէն լուսոյ, յորում չիք փոփոխումն և
18 կամ շրջելոյ ստուեր։ Կամեցեալ ծնաւ զմեզ բա֊
նիւ ճշմարտութեանն, լինել մեզ *պտուղ ինչ
19 առաջնածոց նորա։ Գիտասջիք՝՝, եղբարք իմ՝
սիրելիք, եղիցի ամենայն մարդ արագ առ ի լսել,
և ծանր առ ի խօսել, և ծանր առ ի բարկանալ։
20 Զի բարկութիւն մարդոյ զարդարութիւն Աստու֊
21 ծոյ ոչ գործէ։ Որով ի բաց թօթափեալ զամե֊
նայն աղտեղութիւնս և զյաւելուածս չարեաց,
հեզութեամբ ընդունիջիք զբանն ընդարմս, որ կա֊
րող է կեցուցանել զոգիս ձեր։
22 Լինիջիք առնելիք բանին, և մի՛ լսելիք միայն՝
23 †համարեսջիք զանձինս։ Զի թէ ոք լսող միայն իցէ
բանին՝ և ոչ առնելի, նման է նա մարդոյ, որ
պաշուցեալ հայիցի ընդ երեսս իւր՝ որ ծնանիցին ի հա֊
24 յելոջ. Զի հայեցեալ հասս զինքն և զանց արար,
25 և անդէն մոռացաւ թէ որպիսի ոք էր։ Իսկ որ յա֊
ռեալ ի կատարեալ օրէնս ազատութեանն հայի֊
ցի, և ի նմին կացցէ, ոչ եղեալ նա լսող մոռացու֊
թեան՝ այլ առնելի գործոյն, նա՝ յառնելն իւ֊
26 րում լիցի երանելի։ Եթէ ոք կամիցի կրօնաւոր լի֊

* Ցայնմ՝ երախայրիք ինչ արարածոց նորա։ Ուստի
† Ցայնմ՝ խաբելով

նել՝ և ոչ սանձահարիցէ զլեզու իւր , այլ *զբաղե-
ցուցանիցէ զսիրտն իւր , այսպիսւոյն վայրապար է
27 կրօնաւորութիւնն ։ կրօնաւորութիւն սուրբ և ա-
նարատ՝ †առ ի Աստուծոյ և ի Հօրէ՝ այս է ,
այցելել լինել որբոց և այրեաց ի նեղութեան իւ-
րեանց , անարատ պահել զանձն յաշխարհէ ։

ԳԼ· Բ

1 Եղբարք իմ, մի՛ աչառութեամբ ունիցիք զՀա-
2 ւատսն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի , ‡որ Տէրն
է՝ փառաց ։ Եթէ մտանիցէ ի ժողովուրդ ձեր այր՝
որ ունիցի մատանի ոսկի և հանդերձս պայծառս ,
մտանիցէ անդր և աղքատ որ ի հանդերձս աղտե-
3 ղիս , Հայեիցէք ընդ այն՝ որ ունիցի զՀանդերձն
պայծառս , և ասիցէք եթէ Դու նիստ ասա պա-
տուով , և ցաղքատն ասիցէք եթէ Ցոյն կաց դու
այսր , կամ թէ՝ Եկ նիստ առ պատուանդանիս
4 իմում. Ո՞չ խղճիցէք յանձինս և լինիցիք դատա-
5 ւորք չարեացն խորհրդոց ։ Լուարուք †ինձ, եղբարք
իմ սիրելիք , ո՞չ ապաքէն Աստուած ընտրեաց զաղ-
քատս աշխարհիս , որ են մեծատունք հաւատովք ,
և ժառանգաւորք արքայութեանն՝ զոր խոստացաւ
6 սիրելեաց իւրոց ։ Եւ դուք անարգէք զաղքատս .
ո՞չ մեծատունքն յաղէտահարեն զձեզ , և նոքա
7 քարշեն զձեզ ի դատաստան ։ Ո՞չ նոքա հայհոյեն
8 զքաջաբուխ անունն՝ որ կոչեցեալ է ի վերայ ձեր ։ Ապա

* Ցոյնն՝ խաբիցէք † Ցոյնն՝ առ Աստուծոյ և Հօր
‡ Ի Ցունին չէ ։

թէ զօրէնն կատարիցէք զարքունականն ըստ գրոց ,
Եթէ սիրեսցես զընկեր քո իբրեւ զանձն քո , բարւոք
9 առնէք։ Իսկ եթէ աչառիցէք , մեղս գործէք՝ յանդի-
10 մանեալք յօրինացն իբրեւ օրինազանցք ։ Որ ոք զա-
մենայն օրէնսն պահիցէ , և միով իւիք ինչ գթի-
11 ցէ , եղեւ ամենայն օրինացն պարտապան ։ Զի որ
ասացն թէ Մի՛ սպանանիցես , ասաց թէ՝ Եւ մի՛
չնայցես . զի եթէ սպանանիցես ոչ՝ բայց չնայցես ,
12 եղեր յանցաւոր օրինացն ։ Այնպէս խօսեցարուք
և այնպէս արարէք , որպէս զի ազատութեան օրի-
13 նօքն իցէք դատելոց ։ Զի անողորմ դատաստան լի-
նելոց է այնմ , որ ոչ առնիցէ ողորմութիւն՝
*քանզի բարձրագլուխ պարծի ողորմութիւն առ
դատաստանաւն ։
14 Զի՞նչ օգուտ իցէ , եղբարք իմ, եթէ ասիցէ ոք
հաւատս ունել և գործս ոչ ունիցի . միթէ կարի-
15 ցե՞ն հաւատքն ապրեցուցանել զնա ։ Եթէ եղբայր
ոք կամ քոյր իցեն մերկ կամ կարօտեալ աւուրն
16 կերակրոյ , Ասիցէ ոք ի նոսէնջ ցնոսա , Երթայք
խաղաղութեամբ , ջեռարուք և յագեցարուք . և
ապացէք ոչ նոցա զպէտս մարմնոյն , զի՞նչ օգուտ
17 իցէ ։ Սոյնպէս և հաւատք եթէ գործս ոչ ունիցին ,
18 մեռեալ են առանձինն ։ Այլ թերեւս ասիցէ ոք ,
Եթէ դու հաւատս ունիս , և ես գործս ունիմ .
ցոյց ինձ զՀաւատսն քո առանց գործոց , և ես ցու-
19 ցից քեզ ի գործոց իմոց զՀաւատս ։ Դու հաւա-
տաս զի մի է Աստուած , բարւոք առնես . և դեւք
20 հաւատան և սարսեն ։ Կամի՞ս գիտել , ով մարդ

* Ցոյնն՝ և

անուտի , ղի հաւատաք առանց գործոց *դատարկ են։
21 Աբրահամ հայր մեր ո՞չ ապաքէն 'ի գործոց արդարացաւ՝ հանեալ 'ի սեղան ղերդին իւր զիսահակ
22 †պատարագ ։ Տեսանե՞ս ղի հաւատքն եղեն գործակից գործոց նորա, և 'ի գործոց անտի հաւատքն
23 կատարեցան ։ Եւ կատարեցաւ գիրն որ ասէ , Հաւատաց Աբրահամ Աստուծոյ , և համարեցաւ նմա յարդարութիւն . և կոչեցաւ բարեկամ Աս-
24 տուծոյ ։ Տեսանե՞ք զի 'ի գործոց արդարանայ մարդ,
25 և ոչ 'ի հաւատոց միայն ։ Այսպէս և Բաղխաբ պոռնիկ ո՞չ ապաքէն 'ի գործոց արդարացաւ , ընկալեալ ղլրտեանն՝ և ընդ այլ ճանապարհ արձակեաց։
26 Զոր օրինակ մարմին առանց հոգւոյ մեռեալ է , այսպէս և հաւատք առանց գործոց մեռեալ են ։

Գլ. Գ

1 Մի՛ բազումք վարպապետք լինել , եղբարք իմ, գիտասջիք զի մեծ դատաստան ընդունելոց եմք .
2 բանղի բազումք լինչ յանցանեմք ամենեքեան . եթէ ոք բանիւ ոչ յանցանիցէ՝ նա է մարդ կատարեալ, որ կարողն է սանձահարել զամենայն մարմին իւր ։
3 Տես զի ձիոց սանձս 'ի բերան դնեմք՝ առ անսալոյ նոցա մեզ, և զամենայն մարմինս նոցա նուաճեմք։
4 Ա՛հաւասիկ և նաւք որպիսի լինչ են , և 'ի սաստիկ հողմոց վարին . և փոքր թեւոովք շրջին՝ յոր կոյս և
5 միտք ուղղչին կամիցին ։ Այսպէս և լեզուս փոքր լինչ անդամ է և մեծամեծս բարբառի . ահա և

* Յայլն՝ մեռեալ

† Ի Յոհ. էր ։

6 սակաւ լինչ հուր զորպիսի անտառս հրդեհէ ։ Եւ լեզուս հուր՝ զորդ անիրաւութեան, լեզուս հաստատեալ է յանդամս մեր , որ զամենայն մարմինն ապականէ , և վառէ հրով զանիւ ծննդեան , և
7 բորբոքեալ առնորի 'ի գեհենի ։ Ամենայն բնութիւն գազանաց և թռչնոց և սողնոց և որ 'ի ծովս են , հնազանդեալ է և հնազանդի մարդկեղէն բնու-
8 թեան ։ Բայց զլեզուս մարդկան ոչ ոք կարէ հնազանդել՝ չարն և զանկարգ և զի թունաւոր մահա-
9 բերին ։ Նովաւ օրհնեմք զՏէրն և զՀայր . և նովաւ անիծանեմք զմարդիկ՝ որ ըստ նմանութեան Աս-
10 տուծոյ արարան ։ Ի նմին բերանոյ ելանեն օրհնութիւնք և անէծք . ոչ է պարտ , եղբարք իմ, այսմ
11 այսպէս լինել ։ Միթէ աղբիւր անդստին 'ի միոյ ա-
12 կանէն բղխիցէ՞ քաղցր և դառն ։ Միթէ մարթի՞նչ իցէ , եղբարք իմ, թզենւոյ ձէթ բերել, կամ որթոյ թուզ, †և ոչ աղտաղտին տեղւոյ ջուր քաղ-
13 ցր առնել ։'' Ո՞վ իցէ իմաստուն և հանճարեղ 'ի ձեզ, ցուցցէ 'ի բարւոք գնացից զգործս իւր հեզութեամբ իմաստութեանն ։ Ապա եթէ նախանձ
14 և դառնութիւն և հակառակութիւն ունիցիք 'ի սիրտս ձեր , մի՛ պարծիք սուտ առնել զճշմարտու-
15 թիւնն ։ Ոչ է իմաստութիւնս այս իջեալ 'ի վե-
16 րուստ , այլ երկրաւոր , հնչաւոր և դիւական ։ Զի ուր հեւ և նախանձ , անդ է անկարգութիւն և ա-
17 մենայն իրք չարք ։ Իսկ վերին իմաստութիւնն նախ

* Յայլն՝ 'ի գեհենի ։

† Յայլն՝ նոյնպէս և ոչ նմին աղբեր ջուր քաղցր և աղտաղտին առնել ։

զի սուրբ է, ապա խաղաղարար, հեզ, դիւրահաւան, լի ողորմութեամբ և պտղովք բարեաց, ան-
18 խիղճ, առանց կեղծաւորութեան։ Պտուղ արդարութեան խաղաղութեամբ սերմանի այնոցիկ՝ որ առնեն զխաղաղութիւն։

ԳԼ. Դ

1 Ուստի՞ պատերազմունք, և ուստի՞ կռիւք ի ձեզ. ո՞չ յայդպիսի ցանկութեանց ձերոց՝ որ զօրացեալ
2 են յանդամս ձեր։ Ցանկանայք և ոչ ունիք. սպանանէք և նախանձիք՝ և ոչ կարէք հասանել. պատերազմիք, կռուիք և ոչ ունիք, վասն զի ոչ խընդրէք. խնդրէք և ոչ առնուք, վասն զի չարաչար
3 խնդրէք. զի անդէն ի ցանկութիւնս ձեր մաշեսջիք։
4 Շնացողք, ո՞չ գիտէք զի սէր աշխարհիս այսորիկ թշնամութիւն է առ Աստուած. զի որ ոք կամիցի սիրել զաշխարհ՝ թշնամի առնէ զանձն իւր Աստու-
5 ծոյ։ կամ թէ վայրապա՞ր համարիցիք՝ զոր ասէ Գիրն, Առ նախանձ ինչ *որում փափագէ հոգին՝
6 որ բնակեաց ի մեզ. †Տալ զառաւել շնորհն. վասն որոյ ասէ, Տէր ամբարտաւանից հակառակ
7 կայ, տայ շնորհս խոնարհաց։ Հնազանդեցարուք այսուհետեւ Աստուծոյ. և կացէք հակառակ չա-
8 րախօսին, և լիցի փախստական առ ի ձէնջ։ Մերձեցարուք առ Աստուած, և մերձեսցի առ ձեզ։ Սրբեցէք զձեռս, մեղաւորք, և ուղղեղ սրտիք
9 զսիրտս, երկմիտք։ Տառապեցարուք, սգացարուք

* Ի ցանկին էին։ † Ցայն՝ Սակայն տայ

և լացէք. ծաղր ձեր ի սուգ դարձցի, և ուրախու-
10 թիւն ձեր՝ ի տրտմութիւն։ Խոնարհեցարուք առաջի Տեառն և բարձրացուսցէ զձեզ։
11 Մի՛ բամբասէք զմիմեանս, եղբարք. որ բամբասէ զեղբայր կամ դատի զեղբայր իւր, զօրէնսն բամբասէ և զօրէնսն դատի. իսկ եթէ զօրէնսն դատի-
12 ցիս՝ ոչ առնելի օրինացն ես, այլ դատաւոր։ Մի է օրէնսդիր և դատաւոր, որ կարող է փրկել և կորուսանել. դու ո՞ ես՝ որ դատիս զընկերն։
13 Ահաւասիկ են, որ ասեն, Այսօր և վաղիւ երթիցուք յայս անուն քաղաք, եղիցուք անդ տարի մի,
14 վաճառեսցուք և շահեսցուք Որք ոչ գիտէք զվաղիւն,
15 Ո՞րպիսի ինչ իցեն կեանք ձեր զի իրրեւ զշրիկ *էք, որ առ սակաւ մի երեւեալ՝ և ապա ապականեալ. փոխանակ զի ասէիք. Եթէ Տէր կամեսցի, և կեց-
16 ցուք. արասցուք զայս ինչ կամ զայն։ Եւ արդ պարծիք յամբարտաւանութեան ձերում. ամենայն
17 ինչ այսպիսի պարծանք չարութեան են։ Որ ոք գիտիցէ զբարին և ոչ առնիցէ, մեղք են նմա։

ԳԼ. Ե

1 Արդ այսուհետեւ, մեծատունք, լացէք և ողբացէք ի վերայ թշուառութեանցն, որ գալոց են ի
2 վերայ ձեր։ Զի մեծութիւնդ ձեր ցոչինչ է, և
3 հանդերձք ձեր՝ կերակուր ցեցոյ։ Արծաթ ձեր և ոսկի՝ ժանգաշահ, և ժանգ նոցա լիցի ձեզ ի վկայութիւն, և կերիցէ զմարմինս ձեր իբրեւ զհուր.

* Ցայն՝ է։

4 դանձեցէք աւուրցն յետնոց ։ Ահաւասիկ վարձք
մշակաց՝ որ գործեն զանդս ձեր , *առ ձեզ են՝, ղըր-
կեալն ի ձէնջ աղաղակէ , և բողոք հնձողացն եհաս
5 յականջս Տեառն զօրութեանց ։ փափկացայք ի
վերայ երկրի և զբօսայք , սնուցէք զսիրտս ձեր իբ-
6 րեւ աւուր սպանմանն ։ †Զրկեցէք , սպանէք զար-
դարն , որ ոչ կայր ձեզ հակառակ ։

7 Երկայնամիտ լերուք , եղբարք *իմ՝, մինչեւ ի գա-
լուստն Տեառն . ահա մշակ երկայնամտեալ սպասէ
պատուական պտղոյն երկրի , մինչեւ առցէ ‡ղկա-
8 նուխ և զանգան ։ Երկայնամտեցէք և դուք , և
հաստատեցէք զսիրտս ձեր . զի գալուստն Տեառն
9 մերձեալ է ։ §Մի արամեցուցանէք զմիմեանս,՝՝ եղ-
բարք , զի մի՛ դատիցիք . ահաւասիկ դատաւորն առ
10 դուրս կայ ։ Օրինակ առէք , եղբարք , չարչարանաց
և երկայնմտութեան զմարգարէսն , որ խօսեցան յա-
11 նուն Տեառն ։ Ահաւասիկ երանեմք համբերողաց .
զհամբերութիւն Յովբայ լուարուք , և զկատարումն
Տեառն տեսէք , զի բազմագութ է Տէր և ողորմած ։
12 Յառաջ քան զամենայն ինչ , եղբարք իմ՝, մի՛
երդնուցուք , մի՛ յերկինս , մի՛ յերկիր , մի՛ յայլ
ինչ երդումն , այլ եղիցի ձեր այոն այո , և ոչն՝
ոչ , զի մի՛ ‡ի կեղծաւորութիւն ինչ՝՝ անկանիցիք ։
13 Վշտանայցէ ոք ի ձէնջ , յաղօթս կացցէ . բեր-
14 կրեսցի ոք , սաղմոս ասասցէ ։ Հիւանդանայցէ ոք ի

* Ի Յ--նէն ՝՝ ։ † Յ՚՚՚՝ դատապարտեցէք ,
‡ Յ՚՚՚՝ զանձրեւ զկանուխ
§ Յ՚՚՚՝ Մի՛ հառաչէք առ միմեանս ,
‡ Յ՚՚՚՝ ընդ դատաստանաւ

ձէնջ՝ կոչեսցէ զերիցուսն եկեղեցւոյն , և արասցեն
ի վերայ նորա աղօթս, օծցեն իւղով յանուն Տեառն։
15 Եւ աղօթքն հաւատովք փրկեսցեն զաշխատեալն ,
և յարուսցէ զնա Տէր . և եթէ մեղս ինչ իցէ գոր-
16 ծեալ՝ թողցի նմա ։ Խոստովան եղերուք միմեանց
զմեղս , և աղօթս արարէք ի վերայ միմեանց՝ որ-
պէս զի բժշկեսջիք . քանզի յոյժ զօրաւոր են աղօթք
17 արդարոյ *յօգնականութիւն ։ Եղիա մարդ էր իբ-
րեւ զմեզ չարչարելի . և յաղօթս եկաց† , և ոչ տե-
18 ղաց յերկիր զերիս ամս և զվեց ամիս ։ Եւ դար-
ձեալ եկաց յաղօթս , և ետուն երկինք զանձրեւ ,
և բուսցյց երկիր զպտուղ իւր ։
19 Եղբարք իմ՝, եթէ ոք ի ձէնջ մոլորիցի ի ճշմար-
տութեան ճանապարհէն՝ և դարձուսցէ ոք զնա ,
20 գիտասցէ զի որ դարձուսցէ զմեղաւորն ի մոլորու-
թեան ճանապարհէն իւրմէ , փրկեսցէ զոգի ‡իւր ի
մահուանէ՝ և ծածկեսցէ զբազմութիւն մեղաց ։

* Յ՚՚՚՝ յազդեցութիւն
† Յ՚՚՚՝ յա--ելը-- , զի մի՛ տեղասցէ ,
‡ ի Յ--նէն ։էր ։

ԹՈՒՂԹ

ԿԱԹՈՂԻԿԵԱՑՑ

ՊԵՏՐՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ ԱՌԱՋԻՆ

ԳԼ· Ա

1 ՊԵՏՐՈՍ առաքեալ Յիսուսի Քրիստոսի, ընտրե-
լեցդ նժդեհից, որ ի սիւնաս Պանտացւոց, Գաղա-
տացւոց և Կապադովկեցւոց և Ասիացւոց և Բիւ-
2 թանացւոց, Ըստ կանուխ գիտութեանն Աստուծոյ
Հօր, սրբութեամբ Հոգւոյն, ի հնազանդութիւն
և ի հեղումն արեանն Յիսուսի Քրիստոսի· շնորհք
ընդ ձեզ և խաղաղութիւն բազմասցի։
3 Օրհնեալ է Աստուած և Հայր Տեառն մերոյ Յի-
սուսի Քրիստոսի, որ ըստ բազում ողորմութեան
իւրում ծնաւ զմեզ վերստին ի յոյսն կենդանի՝ ի
ձեռն յարութեանն Յիսուսի Քրիստոսի ի մեռելոց,
4 Ցանեղծ և յանարատ և յանթառամ ժառանգու-
5 թիւնն՝ որ պահեալ է յերկինս ի ձեզ· Որ զօրու-
թեամբն Աստուծոյ պահեալ էիք հաւատովք ի
պատրաստեալ փրկութիւնն, յայտնեալ ի յետին
6 ժամանակս։ Որով ուրախ լինիջիք՝ որք այժմ սա-
կաւիկ ինչ ըստ պատշաճի իրացդ տրտմեալ էք ի
7 պէսպէս փորձութիւնս։ Զի հանդէս ձերոյ հաւա-

տոցն առաւել քան զոսկի կորստական պատուա-
կան է, *որ հրով փորձեալ գտաւ՝՝ ի գովութիւն
և ի փառս և ի պատիւ ի յայտնութեանն Յիսու-
8 սի Քրիստոսի։ Զոր ոչն տեսէք և սիրեցէք, ընդ որ
այժմ ոչ հայեցեալք բայց հաւատացէք, և ուրախ
9 էք անճառ և փառաւորեալ խնդութեամբն. Ընկ-
կալեալ զկատարումն հաւատոցն ձերոյ՝ զոգւոցն
10 փրկութիւն։ Վասն որոյ փրկութեան խնդրեցին և
քննեցին մարգարէքն, որք վասն որոյ ի ձեզ լինե-
11 լոց էին շնորհքն՝ մարգարէանալին. Քննէին յո-
րում և յորպիսի ժամանակի գուշակէր ի նոսա
Հոգին Քրիստոսի, որ նախ զչարչարանացն Քրիս-
12 տոսի վկայէր, և յետ այնորիկ զփառացն։ Որոց և
յայտնեցաւ իսկ· զի ոչ ևթէ անձանց, այլ մեզ
մատակարարք լինէին նոցին, որք այժմ պատմեցան
այնոքիւք՝ որ աւետարանեցինն ձեզ Հոգւովն Սրբով,
որ առաքէրն յերկնից· զոր ցանկալին տեսանել
†դոնեայ ընդ աղօս՝՝ հրեշտակք։
13 Որով պնդեալ զմէջս մտաց ձերոց, զսւարթա-
ցեալք, բովանդակ սպասեցէք հասելոցն ձեզ շնոր-
14 հաց ի յայտնութեանն Յիսուսի Քրիստոսի, իբրեւ
զորդիս հնազանդութեան, մի՛ կերպարանեալք ա-
ռաջին ձերովք անգիտութեանն ցանկութեամբք.
15 Այլ ըստ Սրբոյն որ կոչեաց զձեզ՝ և դուք սուրբք
16 յամենայն գնացս †ձեր լինիջիք։ Վասն որոյ գրեալ
17 է ևթէ Եղերուք սուրբ, զի ես սուրբ եմ։ Եւ ևթէ
Հայր կոչիցէք զոյն, որ առանց ակնառութեան
դատի ըստ իւրաքանչիւր գործոց, ապա երկիւղիւ

* Յայլն՝ և . . . գտանիցի † ի Յունէն ևս։

զձերոցն պանդխտութեան ժամանակս գնասջիք ։
18 Գիտասջիք զի ոչ ապականացու արծաթեղինօք և
ոսկեղինօքն փրկեցարուք ի ձերոց ունայնութեան
19 հայրենատուր գնացիցն, Այլ պատուական ա-
րեամբն Քրիստոսի՝ իբրեւ անբիծ և անարատ գա-
20 ռին . Որ յառաջ ծանօթ էր նախ քան զիսկզբանէ
աշխարհի , և երեւեցաւ ի վախճան ժամանակաց
21 վասն ձեր , Որք նովաւ հաւատացիք Աստուած՝
որ յարոյց զնա ի մեռելոց , և ետ նմա փառս . զի
22 հաւատքն ձեր և յոյս իցեն Աստուած ։ Զան-
ձինս ձեր սրբել հնազանդութեամբ ճշմարտու-
թեանն* , յեղբայրսիրութեան առանց կեղծաւո-
րութեան , ի սուրբ սրտէ սիրել սերտիւ զմիմեանս ։
23 Ծնեալք վերստին ոչ յապականութեան սերմանէն ,
այլ յանապականացուէն՝ կենդանի և մշտնջենական
24 բանիւն Աստուծոյ ։ Քանզի ամենայն մարմին իբ-
րեւ զխոտ է , և ամենայն փառք մարդոյ իբրեւ
զծաղիկ խոտոյ . խոտն ցամաքեցաւ և ծաղիկն թօ-
25 թափեցաւ . Եւ բան Տեառն մնայ յաւիտեան ,
այսինքն է բանն՝ որ ի ձեզ աւետարանեցաւ ։

ԳԼ· Բ

1 Ի բաց թօթափել այսուհետեւ զամենայն չարու-
թիւն և զամենայն նենգութիւն և զկեղծաւորու-
թիւնս և զնախանձ և զամենայն չարախօսութիւն,
2 իբրեւ զարդի ծնեալ մանկունս՝ խօսուն և անխար-
դախ կաթինն փափաքիցէք , զի նովաւ աճիցէք ի
3 փրկութիւն . Եթէ ճաշակիցէք զի քաղցր է Տէր .

* Յոյն՝ յաւէտ , ի ձեռն Հոգւոյն

4 Առ որ մատուցեալ ի վէմն կենդանի , որ թէպէտ
ի մարդկանէ անարգեալ , այլ առ ի Աստուծոյ
5 ընտրեալ և պատուական է . Եւ դուք իբրեւ զվէմն
կենդանիս շինիք տաճար հոգեւոր, յանարատ քա-
հանայութիւն , մատուցանել զհոգեւոր պատա-
րագս հաճոյս Աստուծոյ ի ձեռն Յիսուսի Քրիս-
6 տոսի : Քանզի կայ իսկ ի գրի եթէ Ահաւասիկ
դնեմ ի Սիովն վէմ ընտիր՝ գլուխ անկեան պա-
տուական , և որ ի նա հաւատասցէ՝ մի՛ ամաչեսջ
7 ցի : Զձեզ այսուհետեւ հաւատացելոց է վէմ պա-
տուական , իսկ անհաւատիցն՝ վէմն զոր անարգե-
8 ցին շինողքն , նա եղեւ գլուխ անկեան . Եւ վէմ
գլորման և վէմ գայթակղութեան , որ գայթա-
կղին ապստամբելոք ի բանէն՝ յոր և եդանն ։
9 Այլ դուք ազգ էք ընտիր , թագաւորութիւն ,
քահանայութիւն , ազգ սուրբ , ժողովուրդ սեպ-
հական , որպէս զի *զձեր առաքինութիւնս նուի-
րիցէք այնմ ,՚՚ որ զձեզ ի խաւարէն կոչեաց յիւր
10 սքանչելի լոյսն : Որք երբեմն չժողովուրդ , բայց
արդ ժողովուրդ Աստուծոյ . որք չողորմեալք, այժմ
11 ողորմութիւն գտէք : Սիրելիք , աղաչեմ՝ իբրեւ
զպանդուխտս և զնժդեհս ի բաց մերժել ի մար-
մնաւոր ցանկութեանցն , որ զընդդէմ
12 ոգւոց : Զվարս ձեր ի մէջ հեթանոսաց պարկեշտս
ցուցանել , զի որով բամբասիցեն զձեզ իբրեւ ըզ-
չարագործս , ի բարւոք գործոցն ձերոց դիտեալ
փառաւոր առնիցեն զԱստուած յաւուրն այցելու-
13 թեան : Հնազանդ լերուք ամենայն մարդկեղէն

* Յոյն՝ զնորին առաքինութիւնս ցուցանիցէք ։

տեղծուածոյ վասն Տեառն , եթէ թագաւորի՝ իբ-
14 րեւ առաւել ումիք , եթէ դատաւորաց՝ իբրեւ ի
նմանէ առաքելոց ի վրէժխնդրութիւն չարագոր-
15 ծացն և ի գովութիւն բարեգործացն : Զի այսպէս
են կամք Աստուծոյ , բարեգործացն պապանձեցու-
16 ցանել զանգիտամ մարդոց զանգիտութիւն : Իբրեւ
զազատս լինել , և մի՛ իբրեւ պատրուակ չարու-
թեան ունել զազատութիւնն , այլ իբրեւ Աստու-
17 ծոյ ծառայք : Զամենեսեան պատուեցէք . զեղբայր-
սիրութիւն սիրեցէք . յԱստուծոյ երկերուք . զը-
թագաւորս պատուեցէք :
18 Ծառայք հնազանդ լինել յամենայնի երկիւղիւ
տերանց , ոչ միայն բարեբարոյն և հեզոյն , այլ և
19 կամակորացն : Զի այս՝ շնորհք *Աստուծոյ են ,
եթէ բարւոք ինչ †մտօք տանիցի զբ վշտաց յա-
20 նիրաւի : Քանզի զի՞նչ երախտիք իցեն , եթէ յոր-
ժամ մեղանչիցէք՝ տանջիցիք և համբերիցէք . այլ
թէ բարիս գործիցէք՝ չարչարիցիք և համբերիցէք ,
21 այն շնորհք ‡յԱստուծոյ են :՚՚ Քանզի ի դոյն իսկ
կոչեցարուք , զի և Քրիստոս վասն ձեր §մեռաւ ,
և ձեզ եթող օրինակ՝ զի զհետ երթայցէք հետոց
22 նորա . Որ ոչն արար մեղս և ոչ գտաւ նենգու-
23 թիւն ի բերան նորա . Որ բամբասեալ , և ոչ փո-
խարէն բամբասէր . չարչարեալ , և ոչ պահէր
սպառնալիս , բայց իրաւամբք ‖մատնէր դատաւո-

* Ի ց-ն. չ+ † ց-ն՝ մտօք առ Աստուած
‡ ց-ն՝ են առ Աստուած : § ց-ն՝ չարչարեցաւ ,
‖ ց-ն՝ տայր զանձն որում՝ դատէրն արդարու-
թեամբ .

24 րին . Որ զվէր մեղս իւրով մարմնովն վերացոյց ի
խաչափայտն , զի լիցուք զերծեալք ի մեղաց ան-
տի , և իցեմք արդարութեանն կենակիցք . որոյ
25 վիրօքն բժշկեցայք : Քանզի էիք իբրեւ զչխարս մո-
լորեալս , այլ այժմ դարձարուք առ Հովիւն և Տե-
սուչ ոգւոց ձերոց :

Գլ. Գ

1 Սոյնպէս և կանայք հնազանդ լինել արանց ի-
բեանց , զի եթէ իցեն նոքա ապստամբք ի բանէ
անտի , յաղագս կանանց դնացից և առանց բա-
2 նին իսկ շահեցին , Դիտել *երկիւղիւ զձեր՚՚ պար-
3 կեշտ դնացս : Որոց լինիցի ոչ արտաքուստ հիւսիւք
և ոսկեհուռ ծամակալօք կամ պաճուճեալ զգես-
4 տուք զարդ . Այլ ծածուկ սրտին մարդն՝ անեղ-
ծութեամբ հեզութեան և հանդարտութեան հո-
գւոյն , որ է առաջի Աստուծոյ բազմապատիկ :
5 Քանզի այսպէս երբեմն և †կանայք որ յուսացեալ
էին յԱստուած՝ զարդարէին զանձինս հնազանդել
6 իւրեանց արանց : Որպէս և Սարրայ զի հնազանդ էր
Աբրահամու , և տէր իւր կոչէր զնա . որոյ եղերուք
դուք ‡որդիք . բարեգործք էիք և ոչ կասկածէիք՚՚
7 և ոչ ի միոջէ ինչ երկիւղէ : Սոյնպէս և արք իմաս-
տութեամբ բնակեսցին ընդ նոսա , իբրեւ տկար ա-
նօթոյ առնիցեն պատիւ կանանց՝ իբրեւ ժառան-
գակցաց շնորհացն կենաց , զի մի՛ խափան լինիցին
աղօթիցն ձերոց :

* ց-ն՝ զձեր երկիւղիւ † ց-ն՝ սուրբ կանայք
‡ ց-ն՝ որդիք բարեգործք լեալ և ոչ կասկածեալք

8 Եւ գլուխ ամենայնի՝ զի համամիտք իցէք, հա-
մակարիք, եղբայրասէրք, ազնուագութք խոնարհք,
9 Մի՛ չար փոխանակ չարի հատուցանել, կամ բամ-
բասանս ընդ բամբասանաց. այլ զսորին հակա-
ռակն օրհնել, զի յայս իսկ կոչեցարուք, զի զօրհ-
10 նութիւն ժառանգիցէք: Զի որ կամիցի զկեանս
սիրել և տեսանել զաւուրս բարութեան. լեզուս-
ցէ զչեղուլ իւր ի չարութենէ, և զշրթունս իւր ի
11 խօսելոյ զնենգութիւն. խոտորեսցի ի չարէ և ա-
րասցէ զբարի, խնդրեսցէ զհաշտութիւն և երթիւ-
12 ցէ զկնի նորա: Զի աչք Տեառն ի վերայ արդա-
րոց, և ականջք նորա՝ յաղօթս նոցա. երեսք Տեա-
13 ռըն ի վերայ չարագործաց: Եւ ո՞ իցէ որ չարչա-
րիցէ զձեզ, եթէ դուք բարւոյն նախանձաւորք լի-
14 նիցէք: Այլ թէ և չարչարիցէք եւս յաղագս ար-
դարութեան, երանելի էք. բայց յերկիւղէ նոցա
15 մի՛ երկնչիցէք և մի՛ խռովեսջիք: Այլ զՏէր *զնոյն
զՔրիստոս՝ սուրբ ունիջիք ի սիրտս ձեր. պատ-
բաստ իցէք տալ պատասխանի ամենայնի որ խըն-
16 դրիցէ զբանն՝ որ է վասն յուսոյն †ձերոյ, Այլ
հեզութեամբ և երկիւղիւ. ունիցիք բարս քաղ-
ցուցանս.՝՝ զի որով չարախօսիցեն ‡զձենջ՝ յամօթ
լիցին որք բամբասեն զձեր բարւոյդ գնացս ի Քրիս-
17 տոս: Զի լաւ է բարեգործաց, եթէ կամիցին §ըստ

* Ց՝՝՝

4 թեամբք, անօրէն կռապաշտութեամբք։ *Որով
օտարացեալք՝ ոչ ընդ ձեզ վարին՝՝ ի նոյն անկար-
5 դութեան զեղխութիւն, և հայհոյեն։ Որ տայցեն
պատասխանի այնմ, որ ի պատրաստին ունի դա-
6 տել զկենդանիս և զմեռեալս։ Զի ի սոյն իսկ և
մեռելոց †խոստացեալ է,՝՝ զի դատեսցին ըստ
մարդկան մարմնով, և կենդանի լիցին ըստ Աստու-
7 ծոյ հոգւով։ Ամենեցուն վախճան մերձեալ է.
զգաստացարուք այսուհետեւ և լերուք զուարթունք
8 յաղօթս։ Նախ քան զամենայն սէր սերտ ունել
ընդ միմեանս. զի սէր ծածկէ զբազմութիւն մե-
9 ղաց։ Օտարասէրք լինել ընդ միմեանս առանց տըր-
10 տընջելոյ։ Իւրաքանչիւր որ որպէս և ընկալաւ շնորհս
ինչ, ի միմեանս զնոյն մատակարարել իբրեւ զբա-
րուրս հաղարապետս պէսպէս շնորհացն Աստուծոյ։
11 Եթէ ոք խօսեցի՝ իբրեւ զԱստուծոյ պատգամս.
եթէ ոք մատակարարիցէ՝ իբրեւ ի զօրութենէ զոր
շնորհէ Աստուած. զի յամենայնի փառաւորեսցի
Աստուած ի ձեռն Յիսուսի Քրիստոսի. որում փառք
և զօրութիւն յաւիտեանս յաւիտենից։ Ամէն։
12 Սիրելիք, մի՛ օտարոտի համարիլ զեռանդն ինչ,
որ ի փորձութիւն ձեզ լինիցի, որպէս թէ օտար
13 ինչ իրք ձեզ դիպիցին. Այլ իբրեւ հաղորդեալք
Քրիստոսի չարչարանացն՝ ուրախ լինիջիք, զի և ի
յայտնութեան փառաց նորա ցնծացեալք բերկրես-
14 ջիք։ Իսկ եթէ նախատիցիք եւս վասն անուանն Քրիս-
տոսի, երանելի էք. զի փառացն և զօրութեան

* Յ՚ննն՝ ընդ այս զարմացեալք, զի ոչ ընթանայք
ընդ նոսա

† Յ՚ննն՝ աւետարանեալ է,

*անուն և Աստուծոյ հոգին ի վերայ ձեր հանգու-
15 ցեալ է։ Մի՛ ոք ի ձէնջ չարչարեսցի իբրեւ զսպա-
նող, կամ իբրեւ զգող, կամ իբրեւ զչարագործ,
16 կամ իբրեւ զօտարատեսուչ։ Ապա եթէ իբրեւ
զքրիստոնեայ՝ մի՛ ինչ ամաչեսցէ. այլ փառաւոր
17 առնիցէ զԱստուած *անուամբն այսմիկ։ Զի ժա-
մանակ է սկիզբն լինելոյ դատաստանին ի տանէն
Աստուծոյ. զի եթէ նախ ի մէնջ, իսկ զի՞նչ կա-
տարած այնոցիկ իցէ՝ որ ոչ հաւանեցան Աստու-
18 ծոյ աւետարանին։ Եւ եթէ արդարն հազիւ կեցցէ,
19 իսկ ամբարիշտն և մեղաւորն ո՞ւր գտանիցի։ Որ-
պէս զի որ չարչարին ըստ Աստուծոյ կամացն, հա-
ւատարիմ հաստչին աւանդեսցեն զիւրեանց ոգիս
բարերարութեամբք։

Գլ. Ե

1 Զերիցուսն †յաւուրհետեւ աղաչեմ՝ իբրեւ զերի-
ցակից և վկայ չարչարանացն Քրիստոսի, որ և հան-
2 դերձեալ փառացն յայտնելոց հաղորդ. Արածեցէք
որ ի ձեզ հօտ է Աստուծոյ, վերակացու լինել
մի՛ իբրեւ ակամայ, այլ կամաւ *ըստ Աստուծոյ՝՝.
3 մի՛ զօշաքաղութեամբ, այլ յօժարութեամբ. Մի՛
իբրեւ տիրելով վիճակացն, այլ լինել օրինակ հօ-
4 տին. Զի յերեւել Հովուապետին ընդունիջիք զան-
թառամ փառացն պսակ։
5 Սոյնպէս և, երիտասարդք, հնազանդ լերուք ծե-
րոց. ամենեքեան ընդ միմեանս՝՝ զխոնարհութիւն

* Ի Յ՚ննն չէ։

† Յ՚ննն՝ որ ի ձեզ

‡ Յ՚ննն՝ հնազանդեալ միմեանց՝

ուն[ի]ցիք · զի Աստուած ամբարտաւանից հակառակ
6 կայ , տայ շնորհս խոնարհից ։ Խոնարհեցարուք
ընդ հզօր ձեռամբն Աստուծոյ , զի զձեզ բարձրա-
7 ցուսցէ ի ժամանակի ։ Զամենայն հոգս ձեր ընկե-
ցէք ի նա , զի նա է որ հոգայ վասն ձեր ։
8 Արթուն լերուք , հսկեցէք , զի սատան ձեր Սա-
տանայ իբրեւ զառիւծ *գոչէ , շրջի և խնդրէ թէ
9 զո՛ կլանիցէ ։ Որում ի դիմի հարկանիցէք հաստա-
տեալք հաւատովք · գիտասջիք զնոյն անցս չարչա-
րանաց եղբայրութեան ձերոյ յաշխարհի յանձինս
10 կատարել ։ Եւ Աստուած ամենայն շնորհաց՝ որ կո-
չեաց †զձեզ յիւր ի յաւիտենական փառն Քրիս-
տոսիւ Յիսուսիւ , ‡որում՝ փոքր մի եղերութ չար-
չարակից՛ք՝՝, Նա կազդուրեցուսցէ , կարողացուսցէ ,
11 հաստատիմն §արասցէ ։ Նմա իշխանութիւն և
փառք յաւիտեանս ։ Ամէն ։
12 Ի ձեռն Սիղուանոսի հաւատարիմ եղբօր , որ-
պէս կարծեմ , փոքր ի շատէ գրեցի առ ձեզ՝ մխի-
թարել և ի վերայ սորին վկայել , զի և այս ճըշ-
մարիտ շնորհք Աստուծոյ են՝ յոր հաստատեալ
13 կայցէք ։ Ողջոյն տայ ձեզ որ ի Բաբելոն ընտրեալ-
14 կից *եկեղեցի է , և Մարկոս որդի իմ ։ Ողջոյն տա-
ջիք միմեանց ի համբոյր ‖սրբութեան ։ Խաղաղու-
թիւն ընդ ձեզ ամենեսին , որ էք ի Քրիստոս Յի-
սուս ։ Ամէն ։

* Յայլն՝ մնունդ † Յայլն՝ զմեզ
‡ Յայլն՝ յետ փոքր մի չարչարեալ գոլոյ
§ Յայլն արասցէ զձեզ ։ * Ի Յ—ին ԼԲ ։
‖ Յայլն՝ սիրոյ ։

ԹՈՒՂԹ
ԿԱԹՈՂԻԿԵԱՅՑ
ՊԵՏՐՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ ԵՐԿՐՈՐԴ

ԳԼ · Ա

1 Շմաւոն Պետրոս ծառայ և առաքեալ Յիսուսի
Քրիստոսի , որոց հանգիստապատիւ մեզ հասեալք
հաւատոց յարդարութիւն Աստուծոյ մերոյ և Փրկ-
2 չին Յիսուսի Քրիստոսի ։ Շնորհք ընդ ձեզ և խա-
ղաղութիւն բազմասցի գիտութեամբն Աստուծոյ և
Յիսուսի *Քրիստոսի Տեառն մերոյ ։
3 Որպէս ամենայն ինչ մեզ իւրոյ աստուածեղէն
զօրութեանն առ ի կեանս և յաստուածապաշտու-
թիւն շնորհեալ ի ձեռն գիտութեան այնորիկ , որ
կոչեացն զմեզ †յիւր ի փառն և ի վայելչու-
4 թիւն ։՝՝ Որով մեծամեծքն և պատուական աւետիք
պարգեւեալ են մեզ , զի նոքիմբք աստուածեղէն
բնութեան լինիցիմք հաղորդակիցք , փախուցեալք
§ ի ցանկութեանց աշխարհիս և յապականու-

* Ի Յ—ին ԼԲ ։
† Յայլն՝ ի փառս և յառաքինութիւն ։
§ Յայլն՝ յապականութեանց որ ի ցանկութենէ
յաշխարհի ։

5 Թեանց,'' եւ ամին այսմիկ զամենայն փոյթ ի մէջ առեալ՝ ձերովք հաւատովքն մատակարարեսջիք զա-
6 ռաքինութիւն, և առաքինութեամբն զդիտութիւն,
եւ գիտութեամբն զժուժկալութիւն, և ժուժկալու-
թեամբն զհամբերութիւն, և համբերութեամբն
7 զաստուածպաշտութիւն, եւ աստուածպաշտու-
թեամբն զեղբայրսիրութիւն, և եղբայրսիրութեամբ
8 բըն զսէր։ Զայսոսիկ ձեր յանձին կալեալ՝ և ի սոյն
յառաջանալ, ոչ դատարկս և անպտուղս հաստատի-
ցեն զձեզ ի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի գի-
9 տութիւնն։ Իսկ յոր ոչն իցեն սոքա մերձ, կոյր է
և զաչացուց. ի մոռացօնս դարձուցեալ զըրբու-
10 թիւն առաջնոց իւրոցն յանցանացն։ Վասն որոյ,
եղբարք, առաւել փութասջիք՝ զի †բարեացն գոր-
ծովք'' հաստատուն զձեր կոչումն և զընտրութիւն
պահիցէք. զայս արարեալ՝ ոչ երբեք յանցանիցէք.
11 Զի այսպէս առատապէս շնորհեսցի ձեզ մուտ ի
յաւիտենական արքայութիւն Տեառն մերոյ և
Փրկչին Յիսուսի Քրիստոսի։

12 Որով պատրաստիցեմ միշտ ձեզ յիշեցուցանել
վասն սոցին, առաւել եւս գիտակացն և հաստա-
13 տելոցն՝ եկեալ հասեալ ճշմարտութեանն։ Քանզի
իրաւունս համարիմ մինչդեռ եմ ի մարմնի աստ՝
14 զարթուցանել զձեզ յիշատակիւք։ Գիտեմ թէ
վաղվաղակի է լինելոց մերկանալ յինէն մարմնոյս.
15 որպէս և Տէր մեր Յիսուս Քրիստոս եցոյց ինձ։ Եւ
փութամ ճեպիմ միշտ *զձեզ յորդորել,'' զի և
յետ իմոյ ելանելոյ յաշխարհէս՝ առնիցէք զյիշա-

* Ի ցանկն չէ։

16 տակս այսոցիկ։ Քանզի ոչ եթէ պաճուճեալ ինչ
առասպելաց ղկետ երթեալ՝ ցուցաք ձեզ զՏեառն
մերոյ Յիսուսի Քրիստոսի զզօրութիւնն և զգա-
լուստան. այլ *մեղեն եղեալ ականատեսք նորա մե-
17 ծութեանն։ Քանզի առեալ յԱստուծոյ *և ի Հօ-
րէ զփառս և զպատիւ, յեկեալ յայնպիսի բար-
բառոյ ի մեծվայելչութեան փառացն անտի, եթէ
18 Դա է որդի իմ սիրելի, ընդ որ ես հաճեցայ։ Եւ
զայս բարբառ մեք իսկ լուաք եկեալ յերկնից՝ որ
19 ընդ նմա իսկ էաք ի սուրբ լերինն։ Եւ ունիմք
հաստատագոյն զբանն մարգարէական, որում եթէ
անսայցէք՝ բարւոք առնէք, իբրեւ ճրագի որ տայ-
ցէ լոյս ի խաւարչտին տեղւոջ, մինչեւ տիւն լու-
սաւորեսցէ և արուսեակն ծագեսցէ ի սիրտս ձեր։
20 Բայց նախ այսմ գիտակ լինիջիք՝ զի ամենայն մար-
21 գարէութիւն իւրոց գրոց լուծումն ոչ ունի։ Քան-
զի ոչ եթէ ըստ կամաց մարդկան տաւաւ մարգա-
րէութիւն երբեք, այլ ի Հոգւոյն Սրբոյ կրեալք՝
խօսեցան †մարդիկ յԱստուծոյ։

Գլ. Բ

1 Լինէին և սուտ մարգարէք ի ժողովրդեանն, որ-
պէս և այժմ ի ձեզ լինիցին սուտ վարդապետք,
որք սպրդեալ մուծանեն հերձուածս կորստեան, և
զեր Տէր գնեացն զնոսա՝ ուրացեալ, ածեն ի վերոյ
2 անձանց զարագահասն կորուստ։ Եւ բազումք ան-
կեալ երթիցեն զկետ նոցա անառակութեանցն,

* Ի ցանկն չէ։ † Ցանկ՝ սուրբ մարդիկ

վան որոյ ճշմարտութեանն ճանապարհ հայհոյիցի ։
3 Եւ ագահութեամբ մնացածին բանիւք *առնիցեն
զձեզ վաստանգի ։'' որոց դատաստանն ի բնէ ոչ
դատարկանայ , և կորուստն նոցա ոչ նիրհեցէ ։
4 Զի եթէ ի հրեշտակսն յանցուցեալս Աստուած
ոչ խնայեաց , այլ խաւարին կապանօք արկեալ ի
5 տարտարոսն՝ ետ պահել ի դատաստան ։ Նա՝ և
ոչ խնայեցին աշխարհի խնայեաց . բայց զուարթ-
բորդն հնոյ՝ զարդարութեանն քարոզ պահեաց ի
6 յրհեղեղել աշխարհի ամբարշտելոցն յածեալ ։ Եւ
զքաղաքս Սոդովմացւոցն և Գոմորացւոց դարձու-
ցեալ յամ[illegible]ն դատեցաւ , օրինակ առ յապայ
7 ամբարշտելոցն կացուցանելոյ ։ Եւ զարդարն զղ[illegible]ոլտ
ձանձրացեալ յանկարգ դիւրութեան գնացից՝ փըր-
8 կեաց . գանգղ ականատես և ականջալուր արդարն
բնակեալ ի մէջ նոցա , օր ըստ օրէ զիւր սուրբ
9 ոգիսն նոցա անօրէն գնացիւքն տանջէր ։ Գիտէ Տէր
զաստուածապաշտս փրկել ի փորձութենէ , և զա-
նիրաւս պահել ի տանջանս աւուրն դատաստանի ։
10 Մանաւանդ՝ որ զհետ մարմնոյ պղծալից ցանկու-
թեանց իցեն երթեալ , արհամարհողք տէրութեանն ,
ժպիրհք , յանդգնութք , չզանգիտեն զփառսն հայ-
11 հոյել ։ Ուր հրեշտակք զօրութեամբ և կարողու-
թեամբ քան զնոսա մեծամեծք չածեն զնոքօք ի
12 Տեառնէ զհայհոյութեանն դատաստան ։ Այլ որք
իբրեւ զանխօս անասունս ըստ բնածին բարուցն
*[illegible]եղծումն և յապականութիւն , որոց չենն գիտակ՝

* Ց՝՚՚՚՝ ի վաճառ արկցեն զձեզ ։ † Ց՝՚՚՚՝ յորս

հայհոյեն , յապականութեան իւրեանց *և տպակա-
13 նեսցին , Տանջեալք ի վարձուց'' անիրաւութեան .
որ ցանկութիւն զաւուրն փափկութիւն համարին .
բծկանք , արատաւորք , փափկացեալք ի պատիրս
14 իւրեանց՝ լեալ ձեզ խրախճանակիցք . Աչս ունին
հանգոյնս պոռնկաց՝ անդադարս ի մեղաց , պատ-
րեն զանձինս յողդողդաց . որ ունին սիրտ հարեալ
15 զագահութեան , մանկունք անիծից , Թողեալ զուղ-
ղորդ ճանապարհն՝ մոլորեցան . զհետ երթեալ ճա-
նապարհին Բաղաամայ Բէովրեան՝ զվարձս անիրա-
16 ւութեան սիրեցին . Ուր կշտամբանս իւրոյ անօրէ-
նութեանն †ստացաւ զէշն անխօսուն ։'' մարդկեղէն
բարբառովն բարբառեալ՝ արգել զմարգարէին զա-
17 նօրէնութիւն ։ Աւազախիչքն են աղբիւրք անջրդիք
և մեգք վարեալք ի մրրիկ , որոց աղջամուղջք
18 խաւարին յաւիտեան պահեալ կան ։ Գանգղ մե-
ծաբանս մնառեալ պատրեն գիշա-
թեամբք , ցանկութեամբք մարմնոյ զայնոսիկ՝ որ ըս-
տուգն փախչիցին յայնցանէ՝ որ ի մոլորութեանն
19 շրջիցին . Նոցա ազատութիւն խոստանան , և ին-
քեանք ապականութեանն ծառայք են . զի որով
20 իւիք յաղթիցի ոք , նորին և ծառայ է ։ Զի եթէ
փախուցեալք ի պղծութենէ աշխարհի գիտու-
թեամբ Տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստո-
սի , և դարձեալ ընդ նոյնս շաղեալք պատիցին ,
21 եղեւ նոցա վախճանն չար քան զառաջինն ։ Զի լաւ
էր նոցա եթէ ընդ ճանուցեալ զարդա-

* Ց՝՚՚՚՝ ապականեսցին Ընկալեալք վարձս
† Ց՝՚՚՚՝ ստացաւ . էշն անխօսուն

բութեանն ճանապարհ· քան՝ ղի ծանեան և յետս
կացին ի սուրբ պատուիրանէն որ նոցա ասացեալ էր
22 ցաւ, եկեալ ի դէպ նոցա ճշմարիտ առակին զօ-
նութեան, եթէ Շուն դարձեալ անդրէն ի փսխած
իւր, և խոզ լուացեալ՝ ընդ տիղմ թաւալեալ։

Գլ· Գ

1 Ձայս ձեզ, սիրելիք, երկրորդ թուղթ գրեմ, ո-
րով զարթուցից ի յիշատակ զհաստատուն միտս
2 ձեր, Յիշել զյառաջագոյն ասացեալ պատգամս ի
սրբոց մարգարէից և յառաքելոցն ձերոց, զպա-
3 տուէրս Տեառն և փրկչին· Բայց զայս նախ գիտաս-
ջիք, ղի յաւուրս յետինս եկեսցեն արհամարհողք,
այպանողք, որ ըստ իւրեանց ցանկութեանց գնայ-
4 ցեն. Եւ ասիցեն, Ո՞ւր են աւետիք գալստեան նո-
ցա· ղի յորմէ հետէ հարքն ննջեցին՝ ամենայն ինչ
5 նոյնպէս կայ մնայ ի սկզբանէ արարածոց· Եւ զայն
մոռացեալ իցէ նոցա որ զայն կամին, եթէ եր-
կինք եղեն ի սկզբանէ, և երկիր ի ջրոց և *ջրով
6 հաստատեալ բանիւն Աստուծոյ· Վասն որոյ եր-
բեմն աշխարհ ջրհեղեղաւ ապականեալ կորեաւ·
7 Եւ այժմ երկինք և երկիր նովին բանիւ գանձեալ
են, հրոյ պահեալք յօրն դատաստանի և կորըս-
8 տեան ամբարիշտ մարդկան· Եւ այս եւս մի՛ լինի
ի ձէնջ ծածեալ, սիրելիք, ղի մի օր Տեառն իբ-
րեւ ղհազար ամ է, և հազար ամ իբրեւ ղմի օր·
9 Ոչ յամեցուսցէ Տէր զաւետիսն՝ որպէս ոմանք յամր

* Ց՚ոյնն՝ Ջուրըք

համարին, այլ երկայնամիտ լինի առ *ձեզ· քան-
ղի ոչ կամի՝ եթէ ոք կորիցէ, այլ զամենեցուն հա-
10 սանել յապաշխարութիւն· Այլ եկեսցէ օր Տեա-
ռըն իբրեւ զգող· յորում երկինք †տարագնապաւ
անցցեն, և ընութիւնք հրով կիզեալ լուծցին, և
11 երկիր՝ և որ ի նմա գործք գտանիցին· Եւ ի լու-
ծանել այսպէս այսր ամենայնի, որպիսի՞ ինչ պարտ
իցէ ձեզ §տանել, այլ սուրբ և աստուածապաշտ
12 կարգաւ ակն ունել, եւ՚՚ փութալ հասանել գալուս-
տեան աւուրն Տեառն· յորում երկինք հրայրեացք
13 լուծանիցին, և ընութիւնք հրգեհեալ հալիցին·
Նորոց երկնից և նորոյ երկրի ըստ աւետեացն հայե-
ցեալ սպասիցեմք, յորս արդարութիւնն բնակէ·
14 Վասն որոյ, սիրելիք, այսոցիկ սպասեալ, փոյթ
յանձին ունիջիք՝ անբիծք և անարատք գտանել
15 ‡նմա ի խաղաղութիւն· Եւ զՏեառն երկայնմտու-
թիւնն փրկութիւն համարիջիք· Զոր օրինակ և սի-
րելի եղբայրն մեր Պօղոս ըստ շնորհելոյ իմաստու-
16 թեանն նմա յԱստուծոյ՝ գրեաց ձեզ· Որպէս և
յամենայն իսկ թուղթսն խօսի վասն այսոցիկ· յորս
գտանի ինչ ինչ դժուարիմաց, զոր անուսմունքն
և յողդողդքն կամակորեն· որպէս և զամենայն իսկ
17 գիրս առ իւրեանց անձանցն կորուստ· Դուք այ-
սուհետեւ, սիրելիք, իբրեւ զկանխագէտս զգու-
շասջիք, ղի մի՛ անառակ մոլորութեամբն զգա-

* Ց՚ոյնն՝ մեզ· † Ց՚ոյնն՝ շառաչմամբ
§ Ց՚ոյնն՝ գտանել սուրբ և աստուածապաշտ կար-
գաւ, ակն ունել եւ
‡Ց՚ոյնն՝ նմա զձեզ

ձեալք՝ անկանիջիք *յաստեաց հաստատութեանն ։"
18 Աճեցէք շնորհօք և գիտութեամբն Տեառն մերոյ և
Փրկչին Յիսուսի Քրիստոսի. նմա փառք և այժմ և
յօրն յաւիտենից ։ Ամէն ։

ԹՈՒՂԹ
ԿԱԹՈՂԻԿԵԱՑ
ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՅ ԱՌԱՋԻՆ

ԳԼ. Ա

1 Որ էրն ի սկզբանէ, զորմէ լուաքն, որում ակա-
նատեսն իսկ եղեաք, ընդ որ հայեցաքն, և ձեռք
2 մեր շօշափեցին ի վերայ բանին կենաց։ Եւ կեանքն
յայտ անեցան, և տեսաք և վկայեմք և պատմեմք
ձեզ զյաւիտենական կենացն, որ էր առ Հօր և
3 երեւեցաւ մեզ։ Զոր տեսաքն և լուաք՝ պատմեմք
և ձեզ, զի և դուք հաղորդութիւն ունիցիք ընդ
մեզ, և մեր հաղորդութիւնն իցէ ընդ Հօր և ընդ
4 Որդւոյ իւրում Յիսուսի Քրիստոսի։ Եւ զայս գրեմք
ձեզ. զի ձեր ուրախութիւնն կատարեալ լիցի ։
5 Եւ այս են աւետիքն՝ զոր լուաք առ ի նմանէ
և պատմեմք ձեզ, զի Աստուած լոյս է, և խաւար

* Յոյն՝ յառաքելոցն հաստատութենէ ։

6 ի նմա չիք և ոչ մի։ Եթէ ասիցեմք եթէ հաղոր-
դութիւն ունիմք ընդ նմա և ի խաւարի շրջիցիմք,
7 ստեմք և ոչ առնեմք ճշմարտութիւն։ Իսկ եթէ
ընդ լոյս գնայցեմք՝ որպէս և նա ի լոյս է, հաղոր-
դութիւն ունիմք ընդ միմեանս. և արիւնն *Յի-
սուսի Որդւոյ նորա սրբէ զմեզ յամենայն մեղաց ։
8 Եթէ ասիցեմք՝ եթէ Մեղս ինչ մեք ոչ ունիմք,
զանձինս խաբեմք, և ճշմարտութիւն ի մեզ ոչ
9 գոյ ։ Ապա եթէ խոստովան լինիցիմք զմեղս մեր,
հաւատարիմ է նա և արդար առ ի թողուլ զմեղս
մեր, և սրբել զմեզ յամենայն անիրաւութենէ ։
10 Եւ եթէ ասիցեմք՝ եթէ Ոչինչ մեղաք, սուտ առ-
նեմք զնա, և բան նորա ոչ է ի մեզ ։

ԳԼ. Բ

1 Որդեակք իմ, զայս գրեմ ձեզ զի մի՛ մեղիցէք ։
Եւ եթէ մեղիցէ ոք, ունիմք բարեխօս առ Աստուած
2 զՅիսուս Քրիստոս՝ զարդարն †և զանարատ"։ Եւ
նա է քաւութիւն մեղաց մերոց, և ոչ եթէ մերոցն
միայն՝ այլ և ամենայն աշխարհի ։
3 Եւ յայսմիկ գիտեմք՝ եթէ ծանեաք զնա, եթէ
4 զպատուիրանս նորա պահիցեմք ։ Որ ասիցէ եթէ
Ծանեայ զնա, և զպատուիրանս նորա ոչ պահիցէ,
5 սուտ է և ճշմարտութիւն ի նմա ոչ գոյ ։ Իսկ որ
պահիցէ զբան նորա, արդարեւ ի նմա կատարեալ
է սէրն Աստուծոյ. այսուհիկ ճանաչեմք եթէ ի նմա
6 եմք ։ Որ ասիցէ ի նմա բնակել, այնպէս պարտի
գնալ՝ որպէս և նայն գնաց ։

* Յոյն՝ Յիսուսի Քրիստոսի † Ի Յոանէն վ։ ։

7. Սիրելիք, ոչ եթէ նոր ինչ պատուիրան գրեմ
ձեզ, այլ զհին պատուիրանն՝ զոր ի սկզբանէ ու-
նէիք, և հին պատուիրան բանն է զոր *լուարուք ։
8 Դարձեալ նոր պատուիրան գրեմ ձեզ՝ որ է ճըշ-
մարիտ ի նմա և ի ձեզ. զի խաւարն անցանէ,
9 և լոյսն ճշմարիտ արդէն իսկ երեւի ։ Որ ասէ եթէ
ի լոյսն իցէ՝ և զեղբայր իւր ատիցէ, †սուտ է՝ և՝
10 ի խաւարի է տակաւին ։ Որ սիրէ զեղբայր իւր, ի
11 լոյս բնակէ, և գայթակղութիւն ի նմա չիք ։ Իսկ
որ ատեայ զեղբայր իւր՝ ի խաւարի է, և ընդ խա-
ւար շրջի. և ոչ գիտէ յո երթայ, զի խաւարն
12 կուրացոյց զաչս նորա ։ Գրեմ ձեզ, որդեակք, զի
թողեալ են ձեզ մեղքն ձեր վասն անուան նորա ։
13 Գրեմ ձեզ, հարք, զի ծանեայք դուք զայն որ ի
սկզբանէն է ։ Գրեմ ձեզ, երիտասարդք, զի յաղ-
14 թեցէք դուք չարին ։ Գրեցի ձեզ, մանկունք, զի
ծանեայք դուք զՀայրն ։ Գրեցի ձեզ, հարք, զի
ծանեայք դուք զայն որ ի սկզբանէն է ։ Գրեցի ձեզ,
երիտասարդք, զի կք դուք հզօրացեալք, և բանն
Աստուծոյ ի ձեզ բնակէ, և յաղթեցէք դուք չա-
15 րին ։ Մի՛ սիրէք զաշխարհ, և մի՛ որ ինչ յաշխար-
16 հի է ։ Եթէ ոք սիրէ զաշխարհ, ոչ է ի նմա սէր
Հօր. զի ամենայն որ ինչ յաշխարհի է՝ ցանկու-
թիւն է մարմնոյ և ցանկութիւն է ակաց և ամ-
բարտաւանութիւն աստի կենացս, որ ոչ է առ ի
17 Հօրէ, այլ յաշխարհէ աստի է ։ Եւ աշխարհս ան-
ցանէ և ցանկութիւնն նորա, իսկ որ առնէ զկամս
Աստուծոյ՝ մնայ յաւիտեան ։

* Ցոյն՝ ի սկզբանէ լուարուք ։ † Ի Ցովհ. է։ ։

18 Որդեակք, յետին ժամանակ է, և որպէս լուա-
րուք՝ եթէ Նեռն գալոց է, և արդէն իսկ նեռինք
բազումք եկեալ են, որով մարթեմք իմանալ՝ եթէ
19 յետին ժամանակ է ։ Ել ի մէնջ եղեն, այլ ոչ
էին ի մէնջ. զի եթէ ի մէնջ էին՝ ապա առ մեզ
մնային. այլ զի յայտնի լինիցին՝ եթէ ոչ էին ա-
20 մենեքեան նոքա ի մէնջ։ Եւ դուք օծութիւն ունիք
21 առ ի Սրբոյն, և գիտէք *ամենեքեան ։ Ոչ գրեցի
ձեզ՝ եթէ ոչ գիտէք զճշմարտութիւնն, այլ թէ
գիտէք զնա. և թէ՝ զի ամենայն ստութիւն ոչ է
22 ի ճշմարտութենէ անտի ։ Իսկ ո՞ իցէ սուտ, եթէ
ոչ՝ որ ուրանայ եթէ Յիսուս չէ Քրիստոս. նա իսկ
23 է Նեռն, որ ուրանայ զՀայր և զՈրդի ։ Ամենայն
որ ուրանայ զՈրդի, և ոչ զՀայր ընդունի. իսկ որ
24 խոստովանի զՈրդի, նա և զՀայր ընդունի ։ Դուք
զոր լուարուքն ի սկզբանէ՝ ի ձեզ բնակեսցէ. զի
եթէ ի ձեզ բնակեսցէ՝ զոր ի սկզբանէն լուարուք,
25 և դուք ի Որդի և ի Հայր բնակեսջիք ։ Եւ այս են
աւետիքն զոր աւետարանեաց նա մեզ՝ կեանսն
26 յաւիտենական։ Զայս գրեցի ձեզ, զի մի ոք զձեզ
27 մոլորեցուցանիցէ ։ Եւ դուք օծութիւնն զոր ընկա-
լարուք ի նմանէ՝ բնակեսցէ ի ձեզ. և չէ ինչ
պիտոյ՝ թէ ոք զձեզ ուսուսցէ, այլ որպէս †զի նո-
րա օծութիւնն ուսուցանիցէ՝ զձեզ վասն ամենայ-
նի, և ճշմարիտ է՝ և չէ սուտ. և որպէս ուսոյցն
զձեզ, §կայք ի նա ։
28 Եւ այժմ՝ որդեակք, կացէք ի նմին, զի եթէ

* Ցոյն՝ զամենայն ։ † Ցոյն՝ օծութիւնն այն ուսուցանէ
§ Ցոյն՝ կացէք

յայտնեսցի, ունելիքիմք համարձակութիւն, և մի
29 ամաչեսցուք ի նմանէ ի գալստեանն նորա։ Զի եթէ գիտիցէք՝ եթէ արդար է նա, իմասջիք եթէ
ամենայն որ առնէ զարդարութիւն՝ առ ի նմանէ
է ծնեալ։

Գլ. Գ

1 Տեսէք՝ ո՛րպիսի սէր շնորհեաց մեզ Հայր, զի որ-
դիք Աստուծոյ կոչեսցուք և մեք. վասն այսորիկ
աշխարհ ոչ ճանաչէ զմեզ, քանզի ոչ ծանեաւ
2 զնա։ Սիրելիք, այժմ որդիք Աստուծոյ եմք, և չեւ
եւս է յայտ՝ եթէ զինչ լինելոց իցեմք. գիտեմք՝
զի յորժամ նա յայտնեսցի՝ նման նմա լինելոց եմք,
զի տեսանելոց եմք զնա՝ որպէս և էն։
3 Եւ ամենայն որ ունի զայս յոյս *յանձին՝ սրբէ
4 զանձն իւր՝ որպէս և նայն սուրբ է։ Ամենայն որ
զմեղս գործէ, նա և զանօրէնութիւն առնէ, և
5 ինքն իսկ մեղքն անօրէնութիւն է։ Եւ †գիտեմք՝
զի նա յայն սակս յայտնեցաւ՝ զի §զմեղս բարձցէ,
6 և ի նմա մեղք ոչ են։ Ամենայն որ ի նմա է հաս-
տատեալ՝ ոչ մեղանչէ. և ամենայն որ մեղանչէ,
7 ոչ ետես զնա և ոչ ծանեաւ զնա։ Մանկունք, մի՛
ոք զձեզ խաբեսցէ. որ առնէ զարդարութիւն, ար-
8 դար է՝ որպէս և նայն արդար է։ Եւ որ առնէ զմե-
ղսն՝ ի սատանայէ է, զի ի սկզբանէ սատանայ
մեղանչէ. վասն այսորիկ յայտնեցաւ Որդին Աս-

* Յոյնն՝ ի նմա
§ Յոյնն՝ զմեղս մեր

† Յոյնն՝ գիտէք՝

9 տուծոյ՝ զի լուծցէ զգործս սատանայի։ Ամենայն
որ յԱստուծոյ է ծնեալ՝ մեղս ոչ առնէ, զի սերմն
նորա ի նմա մնայ. և ոչ կարէ մեղանչել, զի յԱս-
10 տուծոյ է ծնեալ։ Ասյսուիկ յայտնի են *ի միմեանց
որդիք Աստուծոյ և որդիք սատանայի։ Ամենայն
որ ոչ առնէ զարդարութիւն՝ չէ նա յԱստուծոյ,
11 և որ ոչ սիրէ զեղբայր իւր. Զի այս է պատուի-
րանն զոր լուարուք ի սկզբանէ՝ զի սիրեսցուք ըզ-
12 միմեանս։ Ոչ որպէս կայէնն ի չարէ անտի էր՝ և
սպան զեղբայրն իւր. և յո՞ր սակս սպան զնա. զի
13 իւր գործքն չար էին, և եղբօրն՝ բարի։ Եւ մի՛
ինչ զարմանայք, եղբարք, եթէ աշխարհ զձեզ
14 ատեայ։ Մեք գիտեմք՝ զի փոխեցաք ի մահուանէ
ի կեանս, քանզի սիրեմք զեղբարս. իսկ որ ոչն †սի-
15 րէ, անդէն ի մահուն մնայ։ Ամենայն որ ատեայ
զեղբայր իւր՝ մարդասպան է. և գիտէք՝ զի ամե-
նայն մարդասպան ոչ ունի կեանս յաւիտենականս
16 յանձին հաստատեալ։ Ասյսուիկ գիտացաք զսէրն
*Աստուծոյ, զի նա զանձն իւր եդ վասն մեր. և
մեք վասն եղբարց *մերոց պարտիմք դնել զանձին-
17 նըս։ Որ ունիցի զկեանս լինչ զաշխարհիս՝ և տե-
սանիցէ զեղբայր իւր կարօտեալ իւիք՝ և փակիցէ
զդուռն իւր առ ի նմանէ, զկա՞րդ սէրն Աստու-
18 ծոյ ի նմա իցէ բնակեալ։ Որդեակք, մի՛ բանիւք
և լեզուօք սիրեսցուք, այլ արդեամբք և ճշմար-
տութեամբ։
19 Եւ այսուիկ լինցուք ծանուցեալք՝ եթէ ի ճշմար-
տութենէ անտի իցեմք, և առաջի նորա արասցուք

* Ի Յունին չէ։ † Յոյնն՝ սիրէ զեղբայրն,

լմբ. որ զԱստուած ճանաչէ՝ լսէ մեզ, և որ չէ
ՅԱստուծոյ՝ ոչ լսէ մեզ. այսուհիկ ճանաչեմք զՀո-
գին ճշմարտութեան և զՀոգին խաբէութեան։
7 Սիրելիք, սիրեսցուք զմիմեանս, զի սէր ՅԱս-
տուծոյ է. և ամենայն որ սիրէ՝ ՅԱստուծոյ է ծը-
8 նեալ՝ և ճանաչէ զԱստուած։ Եւ որ ոչն սիրէ՝ ոչ
9 ճանաչէ զԱստուած, զի Աստուած սէր է։ Եւ զի
յայտ երեւեցաւ սէրն Աստուծոյ ի մեզ, զի զՈր-
դին իւր միածին առաքեաց յաշխարհ, զի եղիցուք
10 նովաւ կենդանիք։ Յայսմ է սէրն, ոչ զի մեք սի-
րեցաք զԱստուած, այլ զի նա սիրեաց զմեզ, և
առաքեաց զՈրդին իւր ի քաւութիւն մեղաց մե-
11 րոց։ Սիրելիք, եթէ Աստուած այնպէս սիրեաց մեզ,
ապա և մեք պարտիմք զմիմեանս սիրել։
12 ԶԱստուած ուրուք երբէք չէք տեսեալ. եթէ սի-
րեսցուք զմիմեանս՝ Աստուած ի մեզ բնակէ, և
13 սէր նորա ի մեզ կատարեալ է։ Այսուհիկ գիտեմք,
եթէ մեք ի նա եմք բնակեալ՝ և նա ի մեզ, զի ի
14 Հոգւոյն իւրմէ ետ մեզ։ Եւ մեք տեսաք՝ և վկա-
յեմք, զի Հայր առաքեաց զՈրդին իւր Փրկիչ աշ-
15 խարհի։ Որ ոք խոստովանեսցի՝ եթէ Յիսուս է Որ-
դի Աստուծոյ, Աստուած ի նմա բնակէ՝ և նա ՅԱս-
16 տուած։ Եւ մեք հաւատացաք՝ և ծանեաք զսէրն
Աստուծոյ՝ զոր ունի առ մեզ։ Աստուած սէր է, և
որ կայ ի սէրն՝ բնակեալ է ՅԱստուած, և Աս-
17 տուած ի նմա բնակէ։ Յայսմիկ կատարեալ է սէրն
*նորա ի մեզ. զի համարձակութիւն ունիցիմք յա-
ւուրն դատաստանի. զի որպէս և նայն է՝ նոյնպէս

---

* Ի յՈ–ՆԷ ԼԱ։

20 հանդէս սրտից մերոց։ Եթէ ատգտանիցեն զմեզ
սիրտք մեր, այլ Աստուած մեծ է քան զսիրտս մեր՝
21 և գիտէ զամենայն։ Սիրելիք, եթէ սիրտք մեր ըզ-
մեզ ոչ ատգտանիցեն, համարձակութիւն ունիմք
22 առ Աստուած. Եւ զոր ինչ հայցեմք, առնումք ի
նմանէ. զի զպատուիրանս նորա պահեմք, և զհա-
23 ճոյս առաջի նորա առնեմք։ Եւ այս է պատուի-
րան նորա, զի հաւատասցուք յանուն Որդւոյ նո-
րա Յիսուսի Քրիստոսի, և սիրեսցուք զմիմեանս,
24 որպէս և ետ մեզ պատուէր։ Եւ որ պահէ զպատուի-
րանս նորա, ի նմա է հաստատեալ՝ և նա ի սմա.
և յայսմանէ գիտեմք եթէ բնակէ ի մեզ ի Հոգւոյ
անտի զոր ետ մեզ։

Գ.Լ · Դ

1 Սիրելիք, մի՛ ամենայն հոգւոյ հաւատայք, այլ
ընտրեցէք զՀոգիսն՝ եթէ ՅԱստուծոյ իցեն. զի բա-
2 զումք սուտ մարգարէք ելեալ են յաշխարհ։ Եւ
այսուհիկ ճանաչեմք զՀոգին Աստուծոյ. ամենայն
հոգի որ խոստովանի զՅիսուս Քրիստոս մարմնով ե-
3 կեալ, ՅԱստուծոյ է նա. Եւ ամենայն հոգի որ
ոչ խոստովանի զՅիսուս մարմնով եկեալ, չէ նա
ՅԱստուծոյ. և այս Նեռինն է, զորմէ լուարուք
4 եթէ գալոց է, և արդէն իսկ յաշխարհի է։ Դուք
ՅԱստուծոյ էք, որդեակք, և յաղթեցէք նոցա.
զի մեծ է որ ի ձեզդ է քան զայն որ յաշխարհին
5 է։ Նոքա յաշխարհէ են, վասն այնորիկ յաշխարհէ
6 խօսին, և աշխարհ լսէ նոցա։ Մեք ՅԱստուծոյ

18 և մեք եմք յաշխարհիս յայսմիկ ։ Երկիւղ ոչ դոյ
ի սէր , այլ սէրն կատարեալ ի բաց մերժէ զերկիւղն , զի երկիւղ ընդ տանջանաց է . իսկ որ եր-
19 կնչէն , չէ կատարեալ ի սէրն ։ Մեք *սիրեսցուք
20 զԱստուած ,՚՚ վասն զի նա նախ սիրեաց զմեզ ։ Եթէ ոք ասիցէ՝ եթէ սիրեմ զԱստուած , և զեղբայր իւր ատիցէ , սուտ է . որ ոչ սիրէ զեղբայր իւր՝ զոր տեսանէ, զԱստուած զոր ոչն տեսաւ՝ զնա՞րդ
21 կարիցէ սիրել ։ Եւ զայս պատուէր ունիմք առ ի նմանէ , զի որ սիրէ զԱստուած՝ †սիրէ նա և զեղբայր իւր ։

Գլ. Ե

1 Ամենայն որ հաւատայ՝ եթէ Յիսուս է Քրիստոս , յԱստուծոյ ծնեալ է . և ամենայն որ սիրէ
2 զծնողն , սիրէ և զծնեալն ի նմանէ ։ Այսուիկ ճանաչեմք՝ եթէ սիրեմք §զորդին Աստուծոյ, յորժամ զԱստուած սիրեսցուք և զպատուիրանս նորա ա-
3 րասցուք ։ Քանզի այս է սէրն Աստուծոյ , եթէ զպատուիրանս նորա պահեսցուք . և պատուիրանք
4 նորա չեն ինչ ծանրունք ։ Զի ամենայն որ յԱստուծոյ ծնեալ է , յաղթէ աշխարհի . և այս է յաղթութիւնն՝ որ յաղթէ աշխարհի , հաւատքն մեր ։
5 Եւ ո՞ իցէ՝ որ յաղթիցէ աշխարհի . եթէ ոչ՝ որ
6 հաւատայցէ՝ եթէ Յիսուս է Որդի Աստուծոյ ։ Սա է՝ որ եկն ջրով ‖ և հոգւով՝ և արեամբ , Յիսուս

* Յոյն՝ սիրեմք զնա ,
† Յոյն՝ սիրեսցէ
§ Յոյն՝ զորդիս
‖ Ի Յունին չէ ։

Քրիստոս . ոչ ջրով միայն , այլ և արեամբ և ջրով . և Հոգին է՝ որ վկայէ , զի Հոգին իսկ է ճշմարտու-
7 թիւն ։ Զի երեք են որ վկայեն [յերկինս . Հայր ,
8 Բանն և Հոգին Սուրբ , և երեքքին մի են ։ Եւ երեք են որ վկայեն յերկրի] . Հոգի , ջուր և ա-
9 րիւն , և երեքքին *մի են . Եթէ զմարդկան ընդունիմք վկայութիւն , ապաքէն Աստուծոյ վկայութիւնն մեծ իցէ ։ Այս է վկայութիւնն Աստու-
10 ծոյ , զի վկայեաց ի վերայ Որդւոյն իւրոյ ։ Որ հաւատայ յՈրդին Աստուծոյ , ունի յանձին զվկայութիւնս զայս . որ ոչ հաւատայ †Որդւոյ Աստուծոյ, սուտ առնէ զնա . քանզի ոչ հաւատայ վկայու-
թեանն՝ զոր վկայեաց Աստուած ի վերայ Որդւոյն
11 իւրոյ ։ Եւ այս իսկ է վկայութիւնն , զի կեանս յաւիտենական ետ մեզ Աստուած , և այս են
12 կեանքն՝ որ յՈրդին նորա են ։ Որ ընդունի զՈրդին, ընդունի և զկեանս . և որ ոչ ընդունի զՈրդին Աստուծոյ , և ոչ զկեանս ընդունի ։
13 Զայս գրեցի §ձեզ՝ զի գիտասջիք եթէ կեանս յաւիտենական ունիք , և զի հաւատայցէք յանուն
14 Որդւոյն Աստուծոյ ։ Եւ այս է համարձակութիւնն զոր ունիմք մեք առ նա , զի զոր ինչ հայցեսցուք
15 ըստ կամաց նորա , լսէ մեզ ։ Զի եթէ գիտեմք՝ եթէ լսէ հայցուածոցն մերոց , ապա գիտեմք՝ եթէ առնումք զհայցուածսն՝ զոր հայցեմք առ ի նմանէ ։
16 Եթէ ոք տեսցէ զեղբայր իւր մեղուցեալ մեղս՝

† Ի Յունին չէ ։
§ Յոյն՝ ձեզ հաւատացելոցդ յանուն Որդւոյն Աստուծոյ ,

որ ոչ առ ՚ի մահ, խնդրեսցէ՝ և տացէ նմա կեանս
մեղուցելոյն ոչ առ ՚ի մահ. են մեղք՝ որ մահու
չափ են, ոչ վասն այնորիկ ասեմ եթէ *խնդրես-
17 ցես։ Ամենայն անիրաւութիւն մեղք են. և են
մեղք՝ որ մահու չափ †են։
18 Գիտեմք եթէ ամենայն որ յԱստուծոյ է ծնեալ՝
ոչ մեղանչէ. այլ որ յԱստուծոյն է ծնեալ՝ պահէ
19 զնա՛ն, և չարն առ նա ոչ մերձենայ։ Գիտեմք
եթէ յԱստուծոյ եմք, և աշխարհ ամենայն ՚ի չա-
20 րի կայ։ Եւ գիտեմք եթէ Որդին Աստուծոյ եկն,
ևետ մեզ միտս, զի ծանիցուք զՃշմարիտն. և
եմք §՚ի Ճշմարտին Որդւոյ նորա Յիսուսի Քրիստոսի.
զի՛՛ նա է Ճշմարիտ Աստուած և կեանք յաւիտե-
նական։ Որդեակք, պահեցէք զանձինս ՚ի կուա-
պաշտութենէ։

* Յայլն՝ խնդրեսցէ։ † Յայլն՝ չէն։
§ Յայլն՝ ՚ի Ճշմարտի, յՈրդի նորա ՚ի Յիսուս Քրիս-
տոս.

ԹՈՒՂԹ

ԿԱԹՈՂԻԿԵԱՑ

ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՅ ԵՐԿՐՈՐԴ

1 Յերիցուկ՝ առ ընտրեալ կիւրիա և առ որդեակս
իւր, զոր եսդ սիրեմ Ճշմարտութեամբ, և ոչ եթէ
ես միայն, այլ և ամենեքեան՝ որք գիտակ են
2 Ճշմարտութեանն. վասն որոյ Ճշմարտութեանն՝
որ ՚ի մեզ հաստատեալ է, *զի և ընդ ձեզ իցէ.՛՛
3 և դուք յաւիտենից ընդ մեզ իցէք։ Շնորհք, ո-
ղորմութիւն, խաղաղութիւն յԱստուծոյ ՚ի Հօրէ
և ՚ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ Որդւոյն Հօր,
Ճշմարտութեամբ և սիրով եղիցին ընդ ձեզ։
4 Ուրախ եղէ յոյժ, զի գտի յորդեկացդ քոց՝ որ
գնան Ճշմարտութեամբ, ըստ պատուիրանին զոր
5 առաք ՚ի Հօրէ։ Եւ այժմ աղաչեմ զքեզ, կիւրիա,
իբրեւ ոչ եթէ նոր ինչ պատուիրան գրեմ քեզ,
այլ զոր ՚ի սկզբանէն ունէաք, զի սիրեսցուք զմի-
6 մեանս։ Եւ այս է սէրն, զի գնասցուք ըստ պա-
տուիրանաց նորա. և այս է պատուիրանն, զի որ-
պէս լուարուք ՚ի սկզբանէ՝ ըստ նմին գնասջիք։
7 Զի բազում մոլորեցուցիչք ելին յաշխարհ, †որ ոչ

* Յայլն՝ և ընդ մեզ իցէ յաւիտեան։
† Յայլն՝ որ ոչ խոստովանին

ոչ խոստովանի՝ զՅիսուս Քրիստոս եկեալ մարմնով, նա մոլորեցուցիչ է և ընդդէմ ։ Զգոյշ լինիջիք
8 անձանց՝ զի մի *կորուսանիցէք՝ զոր վաստակեցէքն, այլ զի առնուցուք՝" լրովանդակ վարձս ։ Ամենայն
9 որ յանցանէ և ոչ կայ ի վարդապետութեանն Քրիստոսի, զԱստուած ոչ ճանաչէ. որ կայ ի վարդապետութեանն, նա՝ և զՈրդի և զՀայր ընդունի ։
10 Եթէ ոք գայցէ առ ձեզ՝ և զվարդապետութիւնս զայս ոչ ունիցի, մի՛ ընդունիցիք զնա ի տուն, և
11 մի՛ ողջոյն տայցէք նմա ։ Որ տայցէ նմա Ողջոյն՝ կցորդ լինի չարաց գործոց նորա ։
12 Բազում՝ ինչ ունէի գրել առ ձեզ՝ այլ ոչ կամեցայ քարախիւս և դեղով գրել. զի ակն ունիմ ինձէն իսկ գալ առ ձեզ, և բերան ի բերան խօսել. զի
13 ուրախութիւնն մեր իցէ կատարեալ ։ Ողջոյն տան քեզ որդիք քեռ քո ընտրելոյ ։ †Շնորհք ընդ ձեզ ։"

*Յոյն՝ կորուսանիցեմք զոր վաստակեցաքն, այլ զի առնուցուք ։
† Յոյն՝ Ամէն ։

ԹՈՒՂԹ

ԿԱԹՈՒՂԻԿԵԱՑ

ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՅ ԵՐՐՈՐԴ

1 Յերիցումէ առ Գայիոս սիրելի. զոր եսք սիրեմ
2 ճշմարտութեամբ ։ Սիրելի, վասն ամենայն իրաց քոց յաջողութեան և առողջութեան աղօթս առնեմ. որպէս է իսկ *յաջողութիւն անձինդ քո ։"
3 Յոյժ ուրախ եղէ ի գալ եղբարց՝ և լինել վկայ քոյդ ճշմարտութեանդ, որպէս դնաս դու ճշմար-
4 տութեամբ ։ Մեծ եւս ինչ ուրախութիւն քան զայս ոչ ունիմ, զի լսեմ եթէ իմ որդեակքն ճըշ-
5 մարտութեամբ գնան ։ Սիրելի, հաւատարիմ գործես զոր, զոր †եթէ առնիցես առ եղբարս՝ զդոյն
6 և առ օտարս ։" Որք վկայեցին զքո սիրոյդ առաջի եկեղեցւոյ. որոց բարիս արարեալ յուղարկես ար-
7 ժանիս Աստուծոյ ։ Զի վասն անուանն ելին, և ո-
8 չինչ յումեքէ առնուն §ազգեթանոսականացն ։ Մեք այսուհետեւ պարտիմք ընդունել զայնպիսիսն, զի գործակից լիցուք ճշմարտութեանն ։
9 Գրեցի ինչ եկեղեցւոյն. այլ որ յառաջադիմն
10 ի նոցանէ է Դիոտրեփէս, ոչ ընդունի զմեզ ։ Վասն այսորիկ եթէ եկից՝ յիշեցուցից զգործս նորա՝ զոր

*Յոյն՝ յաջողութեան անձն քո ։
† Յոյն՝ զոր առնես առ եղբարս և առ օտարս.
§ Յոյն՝ ի հեթանոսաց ։

առնէ, բանիւք չարեօք շատախօսութեան առնէ զմեզ
աշխատ. և ոչ այսօրիւբ շատացեալ, ոչ ինքն ըն-
դունի զեղբարս, և զայնոսիկ որ ընդունինն՝ արգե-
11 լօ, նաեւ յեկեղեցւոյ եւս հանէ։ Սիրելի, մի՛ լե-
նիցիս նմանող չարի, այլ բարւոյ. զի որ զբարիս
առնէ՝ Յաստուածոյ է. և որ զչարիս գործէ՝ նա ոչ
12 եառես երբեք զԱստուած։ Ջդեմետրեայ վկայեալ է
յամենեցունց *և յեկեղեցւոյն՝ և ի ճշմարտութենէ,
և մեք վկայեմք. և դու գիտես զի ճշմարիտ է մեր
վկայութիւնն։
13 Բազում ինչ ունէի գրել քեզ, այլ ոչ կամիմ
14 քարտիսիւ և դեղով գրել. Յի ակն ունիմ ի մե-
տոյ իսկ տեսանել զքեզ, և բերան ի բերան խօ-
15 սել, խաղաղութիւն ընդ քեզ։ Ողջոյն տան քեզ
սիրելիք։ Ողջոյն տացիր սիրելեաց *մերոց լուբաքան-
չիւր յանուանէ։

ԹՈՒՂԹ

ԿԱԹՈՒՂԻԿԵԱՅՑ

ՅՈՒԴԱՅԻ ԱՌԱՔԵԼՈՑ

1 Յուդա Յիսուսի Քրիստոսի ծառայ, և եղբայր
Յակովբոսի, †հեթանոսաց՝ որ՝՝ Յաստուծոյ Հօրէ եք
սիրեցեալք, և Յիսուսի Քրիստոսի պահեալք և

* Ի յոյնն չէ։ † Յոյնն՝ որոց

2 *ընտրեալք, Ողորմութիւն ձեզ և խաղաղութիւն և
3 սէր բազմասցի։ Սիրելիք, զամենայն փոյթ յանձին
կալեալ գրել ձեզ վասն մերոյ հասարակաց փրկու-
թեան, հարկ յանձին կալայ գրել ձեզ, և աղա-
չել՝ զի ճգնիցիք ի վերայ հաւատոցն, որ միանգամ
4 աւանդեցաւն սրբոց։ Գիտեմք սպրդեցին մարդ ո-
մանք, որ յառաջագոյն իսկ †կատարեալ էին ի
սոյն դատաստան. ամբարիշտք, որ զԱստուածոյ մե-
րոյ շնորհն դարձուցին յանկարգութիւն. և զմի
միայն Իշխանն՝ և զՏէր մեր Յիսուս Քրիստոս ու-
5 րացեալք։ Յիշեցուցանել ձեզ այսուհետեւ կամ
է ինձ՝ որ գիտէիք §զամենայն, զի Աստուած մի-
անգամ զժողովուրդն փրկեաց Յեգիպտոսէ, երկ-
6 րորդ անգամ զանհաւատսն կորոյս։ Եւ զհրեշտակս՝
որ ոչ պահեցին զիւրեանց իշխանութիւնն, այլ
թողին զիւրեանց բնակութիւնն, ի դատաստանս
մեծի աւուրն՝ մշտնջենաւոր կապանօք պահեաց ի
7 խաւարի։ Որպէս Սոդոմ և Գոմոր և որ շուրջ զնո-
քօք քաղաքքն, որ ըստ նմին օրինակի պոռնկեցան
զհետ բնկերացն մարմնոյ, կան առաջի օրինակ՝ ըղ-
8 յաւիտենական հրոյն բնկալեալ զդատաստան։ Ըստ
նմին օրինակի և սոքա իբրեւ քնով դանդաչեալք՝
զմարմին պղծեն, զտէրութիւնս քամահեն, զփառս
9 հայհոյեն։ Ուր Միքայէլ հրեշտակապետ յորժամ
բանսարկու Սատանայի վիճեալ տայր պատասխանի
վասն Մովսիսեան մարմնոյն, ոչ ժպրծեցաւ հայհո
յութեան դատաստանին հանդուրժել. այլ ասէ,
10 Սատեսցէ ի քեզ Տէր։ Իսկ սոքա զոր ինչ ոչն ի-

* Յոյնն՝ կոչեցեալք, † Յոյնն՝ գրեալ § Յոյնն՝ զայս,

մանան՝ հայհոյեն. և զայլն եւս՝ զոր ընտրեամբ
իբրեւ զանխօս անասունս դիտեն, ի նոսին ապա-
11 կանեսցին։ Վա՛յ է նոցա, զի ըստ ճանապարհին
Կայենի գնացին, և ըստ մոլորութեանն Բաղաամայ
ղեղխեցան զհետ վարձուց, և ըստ հակառակու-
12 թեանն Կորխայ կորեան։ *Սոքա են ատեցեալք
շոգմոգք՝ երթեալ զհետ ցանկութեանց իբրեանց,
ի սէրս իբրեանց խարդախութեամբ, լինին ընդ
ձեզ ուրախակիցք, աներկիւղ՝ զանձինս ճարակեն.
ամպք անջրդիք հողմակոծեալք, ծառք պտղակո-
րոյսք անպտուղք կրկնամեռք՝ խլեալք արմատաքի.
13 Անասատ ալիք ծովու, որ միշտ փրփրեն զխրեանց
զանձանց զամօթ. աստեղք մոլորք, որոց †վիհ խա-
14 ւարին յաւիտենից պահեալ է։ Մարգարեացաւ
վասն նոցա և եօթներորդն յԱդամայ Ենովք, և
ասէ, Այհասուիկ եկն Տէր բիւրովք սրբովք §հրեշ-
15 տակօք, Առնել դատաստան ըստ ամենայնի, և
յանդիմանել զամենայն ամբարիշտս վասն գոր-
ծոց իւրեանց՝ զոր ամբարշտեցին. և վասն ամենայն
խիստ բանից՝ զոր խօսեցան ընդմանէ մեղաւորք և
16 ամբարիշտք։ Սոքա են տրտնջողք և շոգմոգք, եր-
թեալք ըստ իւրեանց անձանց ցանկութեանց, և
բերանք նոցա զամբարտաւանս բարբառին, առ-
նեն ակն երեսաց վասն օգտի։
17 Բայց դուք, սիրելիք, յիշեցէք զկանխասաց բանս
զառաքելոցն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

* Յոյն՝ Սոքա են ի սէրս ձեր արատք, խրախճա-
նակից լեալ ձեզ աներկիւղ,
† Յոյն՝ աղջամուղջ § Յոյն՝ իւրովք,

18 Զի ասէին ձեզ երթէ ի յետին ժամանակս եղիցին
մարդք արհամարհողք, երթեալք ըստ իւրեանց
ամբարշտութեանցն ցանկութեանց։
19 Սոքա են *նշաւակելք, շնչաւորք, որ զՀոգին
20 ոչ ունիցին։ Ա՛յլ †մեք, սիրելիք, եղիցուք՝ շինեալ
զանձինս սրբութեամբն հաւատոց ի Հոգին Սուրբ.
21 §կացցուք յաղօթս, պահել զանձինս սիրովն Ա-
ստուծոյ ակն ունել ողորմութեանն Տեառն մերոյ
Յիսուսի Քրիստոսի ի կեանսն յաւիտենականս։
22 ‖Եւ ոմանց դատապարտելոց լինիջիք կշտամբիչք.
23 Եւ զոմանս ապրեցուցանիջիք՝ յափշտակեալ ի
հրոյ. և ոմանց ողորմելիք երկիւղիւ դատել, և
24 զպատմուճանն՝ որ ի մարմնոյն իցէ աղտեղեալ։ Եւ
այնմ՝ որ կարող է պահել զձեզ §անսարատս և՝
անբիծս, հաստատել առաջի իւրոց փառացն ††ա-
25 ներկեւան ցնծութեամբ. Միոյն Աստուծոյ փրկչին
մերոյ Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ, փառք մե-
ծութիւն, զօրութիւն և իշխանութիւն յառաջ
քան զամենայն յաւիտեանս, և այժմ և յամե-
նայն յաւիտեանս։ Ամէն։

* Յոյն՝ որ զատուցանին զանձինս,
† Յոյն՝ դուք, սիրելիք, եղերուք
§ Յոյն՝ կացէք
‖ Յոյն՝ Եւ ոմանց ողորմելիք ընտրութիւնս արա-
րեալ. Եւ զոմանս ապրեցուցանիջիք երկիւղիւ՝ յա-
փշտակեալ ի հրոյ. ատելեալ և զպատմուճանն
‡ ի Յուդէն չէ։ †† Յոյն՝ անարատս

ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ

*ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՅ

ԵՒ

ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ ԱՒԵՏԱՐԱՆՉԻՆ

ԳԼ. Ա

1 ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ Յիսուսի Քրիստոսի, ի ձեռն ո-
րոյ ետ Աստուած ցուցանել ծառայից իւրոց՝ որ
ինչ լինելոց է վաղվաղակի, և նշանակեաց առաքե-
լով ի ձեռն հրեշտակի իւրոյ առ ծառայ իւր Յով-
2 հաննէս։ Որ վկայեաց զվկայութիւնն բանին Ա-
ստուծոյ, և զվկայութիւն Յիսուսի Քրիստոսի՝ զոր
եառես, †և որ էր՝ և որ լինելոցն էր յետ այնորիկ՝։
3 Երանի որ կարդասցէ §կամ լուիցէ զբանս մարգա-
րէութեանս, և պահեսցէ՝՝ զոր ի սմա գրեալ է.
զի ժամանակս մերձաւոր է։
4 Ի Յովհաննէս առ եօթն եկեղեցիս՝ որ են ՚ի Ասիա,
Շնորհք՝ ընդ ձեզ և խաղաղութիւն ‖Աստուծոյ՝
Յինէն՝ և որ էն՝՝ և որ գալոցն է, և յօթն *ոգւոց
5 առաջի աթոռոյն իւրոյ. Եւ

* Յայնմ՝ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԻ
† Ի Յ—ՆԷ ԷԻ։ § Յայնմ՝ և որ լուիցեն... պահեսցեն։
‖ Յայնմ՝ ՚ՒՆՄԱՆԷ՝ որ էն և որ էրն
* Յայնմ՝ հոգւոց որ են

ի Յիսուսէ Քրիստոսէ հաւատարիմ վկայէն, որ է
անդրանիկ ի մեռելսն, և իշխան թագաւորու-
թեանց երկրի. որ սիրեաց զմեզ, և *ելոյծ զկա-
6 պանս մեղաց՝՝ մերոց արեամբն իւրով. Եւ արար
զմեզ թագաւորս և քահանայս Աստուծոյ և Հօր
իւրոյ. որում փառք և զօրութիւն՝ †յաւիտեան և միշտ
և՝՝ յաւիտեանս յաւիտենից։ Ամէն։
7 Ահաւասիկ գալոց է ընդ ամպս. և տեսցէ զնա
ամենայն աչք, †և տեսցեն զնա ծագք երկրի,՝՝
և որք խոցեցին զնա †ամենեքեան յերկրի՝՝ և կո-
8 ծեսցին ի վերայ §նորա։ Այս, ամէն։ Ես եմ Ալֆ
և Ես եմ Քէ, ասէ Տէր Աստուած, որ էն և որ ‖է
և որ գալոցն է՝ Ամենակալ։
9 Ես Յովհաննէս եղբայր ձեր և հաւասարակից
նեղութեան և արքայութեան և համբերութեան
որ ի Քրիստոս Յիսուս. եղէ ես ի կղզւոջն որ ա-
նուանեալ կոչի Պատմոս՝ վասն *բանին և վասն
10 վկայութեանն Յիսուսի Քրիստոսի։ Եւ եղէ յիս
Հոգի ի կիւրակէի աւուր, և լուայ զձայն զկնա
իմ զմեծ իբրեւ զձայն փողոյ, որ ասէր ցիս, Ես
11 եմ Ալֆա և ††Ովմ. առաջինն և վերջինն. Զոր տեսա-
նես՝ գրեա ի գիրս, և տուր տանել յեօթն եկե-
ղեցիս, որ ՚ի Եփեսոս և ի Զմիւռնիա ի Պերգամոն
և ի Թիւատիր և ի Սարդիկէ ի Փիլադելփիա,
12 և ի Լաւոդիկեա։ Եւ դարձայ տեսանել զձայնն՝
որ խօսէր ցիս. և ի դառնալն իմում տեսի եօթն

* Յայնմ՝ լուաց զմեզ ի մեղաց † Ի Յ—ՆԷ ԷԻ։
§ Յայնմ՝ նորա ամենայն ազգք երկրի ‖ Յայնմ՝ էր
* Յայնմ՝ բանին Աստուծոյ †† Յայնմ՝ Օմեգա

13 ճրագարան ոսկի։ Եւ ի մէջ եօթնճրագարանացն նմանն
Որդւոյ մարդոյ, զգեցեալ պատմուճանի պճղնաւոր.
14 և գօտեւորեալ առ ստեամբքն գօտի ոսկեղէն. Եւ
գլուխ նորա և հերքն իբրեւ զսպիտակ՝ և որ-
15 պէս զձիւն. և աչք նորա որպէս բոց հրոյ. Եւ ոտք
նորա նմանեալ պղնձոյ ծխելոյ ի մէջ հնոցի հրա-
շէկ. և ձայն նորա իբրեւ զձայն ջուրց բազմաց։
16 Եւ ունէր յաջոյ ձեռինն իւրում՝ աստեղս եօթն,
և ի բերանոյ նորա ելանէր սուր երկսերանեան. և
երեսք նորա իբրեւ զարեգական ճառագայթեալ
17 *երեւելին։ Եւ իբրեւ տեսի զնա՝ անկայ առ ոտս
նորա իբրեւ զմեռեալ. և եդ ի վերայ իմ զաջ իւր՝
և ասէ ցիս, Մի՛ երկնչիր, ես եմ առաջինն, և ես
18 եմ յետինն. Եւ ես եմ կեանք՝ և ես նոյն որ մե-
ռայ, և եմ կենդանի †յաւիտ և միշտ և՝ յաւի-
տեանս յաւիտենից. ամէն. և ունիմ զփականս
19 մահու և դժոխոց։ Գրեա զոր տեսանես՝ որ էն, և
20 որ հանդերձեալ է լինել յետ այնորիկ. Զխոր-
հուրդ եօթն աստեղացդ՝ զոր տեսերդ յաջս իմ, և
զեօթն ճրագարանս ոսկիս. եօթն աստեղքն հրեշ-
տակք եօթն եկեղեցեացն են, և ճրագարանքն եօ-
թերն եօթն եկեղեցիքն են։

ԳԼ. Բ

1 Ա՛ հրեշտակ Եփեսացւոց եկեղեցւոյն գրեա.
Այսպէս ասէ †կարողն՝ որ ունի զաստեղս եօթն
յաջու ձեռին իւրում, և շրջի ի մէջ եօթն աշտա-

* Յ՟ԺԱ՛՝ զօրութեամբ իւրով։ † ի Յ՟ՃՂԴ՛։

2 նակի ոսկւոյ։ Գիտեմ զգործս քո և զվաստակս քո
և զհամբերութիւն քո. և զի *ոչ բառնաս զչարս,՝
և փորձեցեր՝ որ ասեն զինքեանս առաքեալս և ոչ
3 են, †և չերբայեցեր՝ և ասեն։՝ Եւ համբերեցեր
և վշտացար վասն անուան իմոյ՝ և §չձանձրացար։
4 Այլ ‖ասեմ առ քեզ, զի զսէրն քո զառաջինն թո-
5 ղեր. Յիշեա այժմ ուստի անկարն՝ և ապաշաւեա,
և զառաջինն գործս *քո արա. ապա թէ ոչ՝ գամ
ես վաղվաղակի, և շարժեցից զաշտարակս քո ի
6 տեղւոջէ իւրմէ՝ եթէ ոչ ապաշխարեցես։ Այդ
զայս ††արա՝ զի ատեցեր՝՝ զգործս Նիկողայոսի,
7 զոր ես ատեմ։ Որ ունի ականջս լսելոյ, լսիցէ
զինչ ասէ Հոգին առ եկեղեցիս. որ յաղթէն, տաց
նմա ուտել ի փայտէն կենաց՝ որ է ի մէջ դրախ-
տին Աստուծոյ։

8 Եւ առ հրեշտակ §§Զմիւռնացւոց եկեղեցւոյն գրեա.
Այսպէս ասէ Անսկիզբնն և Անվախճանն, որ եղեւ
9 մեռեալ և կենդանացաւ։ Տեսի զգործս քո և զնե-
ղութիւնն և զաղքատութիւնն, (§§այլ աղքատութիւն
քո մեծութիւն եղիցի.՝) և զՀայհոյութիւնն, որ ա-
սէին զինքեանս Հրեայս գոլ և չէին ինչ, այլ ժո-
10 ղով Սատանայի։ Մի՛ երկնչիր, ***վասն որոյ կամիս
չարչարիլ.՝ ահա հանդերձեալ է Բանսարկուն ար-

* Յ՟ԺԱ՛՝ ոչ կարես տանել չարաց,
† Յ՟ԺԱ՛՝ և գտեր զնոսա սուտս։
§ Յ՟ԺԱ՛՝ ոչ թուլացար։ ‖ Յ՟ԺԱ՛՝ ունիմ
* ի Յ՟ՃՂԴ՛։ †† Յ՟ԺԱ՛՝ ունիս զի ատես
§§ Յ՟ԺԱ՛՝ (այլ մեծատուն ես,)
** Յ՟ԺԱ՛՝ յորոց կրկղոյն իցես.

կանել ՚ի ձէնջ ՚ի բանտ , զի փորձիցիք , և ունիք
նեղութիւն աւուրս տասն . լեր հաւատարիմ մին-
11 չեւ ՚ի մահ , և տայց քեզ զպսակն կենաց : Որ
ունի ականջս լսելոյ՝ լուիցէ զինչ Հոգին Սուրբ ասէ
առ եկեղեցիս . Որ յաղթէ , *ոչ անվրաւի՚՚ յերկ-
րորդ մահուանէն :
12 Եւ առ հրեշտակն՝ որ ՚ի Պերգամոյ եկեղեցին ,
գրեա , Այսպէս ասէ որ ունի զսուրն երկսայրի
13 սրեալ , Գիտեմ գործս քո՝ և զի բնակեալ ես ուր
աթոռն է Սատանայի , և ունիս զանուն իմ , և ոչ
ուրացար զհաւատս իմ յաւուր յորում Անթիպաս
վկայն իմ հաւատարիմ †եղեւ . զի վկայ է իմ հա-
ւատարիմ ամենայն հաւատացեալ՝ որ սպանաւ ՚ի
14 ձէնջ , որ կայ՚՚ ուր Սատանայ է բնակեալ : Այլ
ունիմ առ քեզ սակաւ , զի §կայ առ քեզ վար-
դապետութիւնն՚՚ Բաղաամայ , որ ուսոյց զԲաղակ
դնել գայթակղութիւն առաջի որդւոցն Իսրայէլի ,
15 ուտել նոցա զոհեալ և պոռնկել : Այսպէս և դու
ունիս զվարդապետութիւնն Նիկողայեցեաց՝ զոր ես
16 ատեմ : Արդ ապաշխարեա , ապա թէ ոչ՝ գամ
վաղվաղակի , և պատերազմեցայց ընդ նոսա սրով
17 բերանոյ իմոյ : Որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ
զինչ Հոգին ասէ առ եկեղեցիս . Որ յաղթէ՝ տայց
նմա ուտել ՚ի մանանայէն թաքուցելոյ , և տայց
նմա *զդիրն սրբութեան ,՚՚ և գրեալ անուն նոր

* Յոյնն՝ ոչ կրեսցէ զրկանս
† Յոյնն՝ սպանաւ առ ձեզ ,
§ Յոյնն՝ ունիս անդ զոմս ունին զվարդապետութիւնն
* Յոյնն՝ խիճ սպիտակ ,

*՚ի գիրն , զոր ոչ ոք գիտէ՝ բայց միայն որ առնուն :
18 Եւ առ հրեշտակն որ ՚ի Թիւատիրոյ եկեղեցին՝
գրեա , Այսպէս ասէ Որդին Աստուծոյ , որոյ աչք
իւր են իբրեւ զբոց հրոյ , և ոտք նորա նման պղ-
19 ղընձի ծխելոյ . Գիտեմ զգործս քո և զսէր և զհա-
ւատ և զպաշտօն քո համբերութեամբ , զի բազում
20 է վաստակ քո վերջինն քան զառաջինն : Այլ †ա-
ւեմ առ քեզ բազում .՚՚ զի թողեր զկինն զՅեզա-
բէլ , որ ասէր զինքն մարգարէ , և ուսուցանէր
մոլորութիւն զծառայս իմ՝ պոռնկել և ուտել զզ-
21 ոհեալ : Եւ ետու §նոցա ժամանակ ապաշխարել
‖զպոռնկութենէն իւրեանց և ոչ ապաշխարեցին :՚՚
22 Այսուասիկ ես արկանեմ զնա *՚ի հիւանդ , և զգոր-
ծակիցս իւր ընդ որս չնացաւ՝ ՚ի նեղութիւնս մե-
ծամեծս , եթէ ոչ ապաշխարեսցեն ՚ի գործոց իւ-
23 րեանց : Եւ զորդիս ††նոցա սպանից մահուամբ , և
ծանիցեն ամենայն եկեղեցիք թէ ես եմ որ քան-
դիմանեմ զերիկամունս և զսիրտս , և տամ ձեզ
24 իւրաքանչիւր ըստ գործոց իւրեանց : Այլ ձեզ
ասեմ որք ՚ի Թիւատիրէ , և ոչ ունիք զվարդա-
պետութիւնս զայս , որ ոչ ծանեայք զխորս Սա-
տանայի՝ զոր խօսին , Ոչ արկից զձեզէ ծանրու-
25 թիւն : Այլ զոր ունիք, պահեցէք մինչեւ ես գամ :
26 Եւ որ յաղթէ և պահէ զգործս իմ մինչեւ ցվախ-
ճան , տայց նմա իշխանութիւն ՚ի վերայ ազգաց :

* Յոյնն՝ ՚ի վերայ խճին
† Յոյնն՝ ունիմ ինչ առ քեզ, §Յոյնն՝ նմա
‖ Յոյնն՝ ՚ի պոռնկութենէ իւրմէ և ոչ ապաշխարեաց
* Յոյնն՝ ՚ի մահիճս ††Յոյնն՝ նորա

27 եւ հովուեսցէ զնոսա գաւազանաւ երկաթեայ՝ եւ
28 իբրեւ զանօթ բրտի փշրեսցէ զնոսա։ Որպէս եւ ես
ընկալայ ի Հօրէ իմմէ, եւ տայց նոցա զաստղն ա-
29 ռաւօտուն։ Որ ունի ականջս լսելոյ՝ լսիցէ զինչ
Հոգին ասէ առ եկեղեցիս։

ԳԼ. Գ

1 Եւ առ հրեշտակ Սարդիոսացւոց եկեղեցւոյն գրեա,
Այսպէս ասէ որ ունի զեօթն Հոգին Աստուծոյ եւ
զեօթն աստեղս. Տեսի զգործս քո, զի անուն կեն-
2 դանւոյ ունիս եւ մեռեալ ես։ Լեր արթուն եւ հաս-
տատեա այսուհետեւ, զի հանդերձեալ ես մեռա-
նել. քանզի ոչ գտի զգործս քո կատարեալ առա-
3 ջի Աստուծոյ։ *Արդեօք յիշեա թէ որպէս լսեար,
եւ պահեա եւ ապաշխարեա. ապա թէ ոչ զուար-
թանաս՝ գամ որպէս գող. եւ ոչ †ոք իմանայ՝ զգա-
4 լուստ իմ առ քեզ։ Ունիս սակաւ §մի զանուն
Սարդիսացւոցն՝, որք ոչ աղտեղացուցին զհանդեր-
ձեալս իւրեանց, եւ ‖շրջին՝ ի սպիտակս որովք՝ ար-
5 ժանի եղեն։ Որ յաղթէ՝ այսպէս զգեցցի սպիտա-
կաւ, եւ ոչ ընկեսցի անուն նորա ի գրոց կենաց.
եւ խոստովանեցայց զանուն նորա առաջի
6 Հօր իմոյ եւ առաջի հրեշտակաց։ Որ ունի ական-
ջս լսելոյ՝ լսիցէ զինչ ասէ Հոգին առ եկեղեցիս։
7 Եւ առ հրեշտակն փիղադելփեայ եկեղեցւոյն
գրեա, Այսպէս ասէ Սուրբն, Ճշմարիտն՝ որ ունի

* Յայլս՝ Արդ † Յայլս՝ իմասցիս
§ Յայլս՝ անուանս ի Սարդիկէ,
‖ Յայլս՝ շրջեսցին ընդ իս ի սպիտակս, քանզի

զփականսն Դաւթի. բանայ՝ եւ ոչ ոք է որ փակէ,
8 եւ փակէ՝ եւ ոչ ոք է որ բանայ։ Տեսի զգործս քո.
ահա եւս առաջի քո դուռն բացեալ, զոր ոչ ոք
կարէ փակել. զի սակաւիկ ունիս զօրութիւն, եւ
պահեցեր զբանս իմ, եւ ոչ ուրացար զանունն իմ։
9 Ահաւասիկ ես տամ քեզ զժողովն Սատանայի,
որք ասեն զինքեանս Հրեայս գոլ՝ եւ ոչ են, այլ
ստեն. արարից զնոսա՝ զի եկեսցեն եւ երկիրպագ-
ցեն առաջի ոտից քոց, եւ ծանիցեն զի ես սիրեցի
10 զքեզ։ Զի պահեցեր զբան համբերութեան իմոյ,
եւ ես պահեցից զքեզ՝ ի ժամ փորձութեան քո.
որ հանդերձեալ է գալ յամենայն տիեզերս՝ փոր-
11 ձել զամենայն բնակեալս յերկրի։ Ահա
գամ վաղվաղակի, կալ զոր ունիս, զի մի՛ ոք
12 առցէ զպսակ քո։ Որ յաղթէ՝ արարից զնա սիւն
տաճարի Աստուծոյ իմոյ, եւ արտաքս այլ մի՛ եւս
ելցէ. եւ գրեցից ի վերայ նորա զանունն Աստուծոյ
իմոյ, եւ զանունն քաղաքի Աստուծոյ իմոյ՝ զնորն Ե-
րուսաղէմ, որ իջանէ՛ր է յերկնից Աստուծոյ ի-
13 մմէ, եւ զանունն *նորա նոր։ Որ ունի ականջս՝ լսիցէ
զինչ ասէ Հոգին առ եկեղեցիս։
14 Եւ առ հրեշտակն Լաւոդիկեայ եկեղեցւոյն գրեա,
Այսպէս ասէ Ամէնն, վկայն հաւատարիմ եւ ճըշ-
մարիտ, Սկիզբն †սկզբան արարածոց Աստուծոյ։
15 Գիտեմ զգործս քո՝ զի ոչ ցուրտ ես եւ ոչ ջերմ.
16 պարտ էր քեզ ցուրտ լինել եւ կամ ջերմ։ Այլ
զուտ գաղջ ես, եւ ոչ ջերմ եւ ոչ ցուրտ, հանե-
17 ւթ գերձեալ ես փսխել ի բերանոյ իմմէ։ Զի ասես,

* Յայլս՝ իմ † Ի Յոհ. ԺԷ։

Մեծատուն էի և մեծացայ , և ոչ իւիք կարօտ եմ. և ոչ գիտես եթէ դու ես ողորմելի և *հեզդ և աղ-
18 քատ , մերկ և կոյր : Արդ ես խորհրդակից եղէց քեզ , առ , գնեա յինէն ոսկի փորձեալ 'ի հրոյ՝ զի մեծասցիս , և հանդերձս սպիտակ՝ զի զգեցցիս , զի մի երեւեսցի անվայելչութիւն մերկու-
թեան քո . և դիր դեղ յաչս քո զի տեսցես :
19 Ես զոր սիրեմ , յանդիմանեմ և խրատեմ. նախանձ-
20 ձեա այժմ և ապաշխարեա : Ահաւասիկ կամ ես առ դուրս և բախեմ. եթէ ոք լուիցէ ձայնի իմում և բանայցէ զդրուանն , մտից առ նա և ընթրիս
21 արարից առ նա , և նա ընդ իս : Որ յաղթէ՝ տաց նմա նստել ընդ իս յաթոռ իմ , որպէս և ես յաղ-
22 թեցի և նստայ յաթոռ Հօր իմոյ : Որ ունիցի ա-
կանջս՝ լուիցէ զինչ ասէ Հոգին առ եկեղեցիս :

Գլ. Դ

1 Եւ յետ այսր ամենայնի տեսի՝ և ահա դրունք երկնից բացեալ էին , և †ձայն փողոյն առաջնոյ զոր լուայ՝՝ խօսէր ընդ իս և ասէր , Ել այսր , և ցուցից քեզ զինչ լինելոց է յապա ժամանակս :
2 Եւ ժամանակ յիս Հոգի , և տեսի աթոռ մի՝ զի
3 կայր յերկինս : Եւ 'ի վերայ աթոռոյն նստեր նման
4 տեսլեան ականց յասպսով և սարդիոնի : §Եւ քա-
հանայք շուրջ զաթոռովն նմանք՝՝ տեսլեան զմրըխ-
մի , և շուրջ զաթոռովն աթոռք քսան և չորք ,

* Ց՛ոյն՝ հէք † Ց՛ոյն՝ ձայնն առաջին զոր լուայ՝ էր իբրեւ զփողոյ , որ
§ Ց՛ոյն՝ Եւ ծիածան շուրջ զաթոռովն նման

և 'ի վերայ աթոռոցն նստեին քսան և չորք երի-
ցունք՝ զգեցեալ հանդերձս սպիտակս , և 'ի գլուխս
5 իւրեանց պսակս ոսկիս : Եւ յաթոռոյ անտի ելա-
նէին փայլատակմունք և ձայնք և որոտմունք . և
եօթն ջահերք հրոյ բորբոքելոյ առաջի աթոռոյն ,
6 որ են եօթն հոգիքն Աստուծոյ . Եւ էր առաջի
աթոռոյն ծով ապակեղէն՝ նման սպիտակութեան
սառնոյն , և 'ի մէջ *աթոռոյն չորք կենդանիք՝ և
7 լի էին աչօք առաջոյ և յետոյ : Եւ էր կենդանին
առաջին նման առիւծու , և երկրորդ կենդանին՝
նման զուարակի , և երրորդ կենդանին ունէր երեսս
մարդոյ , և չորրորդ կենդանին՝ նման արծուոյ թռու-
8 ցելոյ : Եւ չորից կենդանեացն էին միոյ միոյ 'ի
նոցանէ վեց թեւք , շուրջանակի և 'ի ներքոյ լի
էին աչօք , ոչ հանգչէին ոչ զտիւ և ոչ զգիշեր՝
ասելով , Սուրբ , Սուրբ , Սուրբ , Տէր Աստուած
9 Ամենակալ , †որ էն և ես և որ գալոց ես :՝՝ Եւ յոր-
ժամ տային կենդանիքն փառս և պատիւ և գո-
հութիւն նստելոյն 'ի վերայ աթոռոյն՝ կենդանւոյն
10 յաւիտեանս յաւիտենից , (Անկանէին քսան և չորք
երիցունքն առաջի նստելոյն յաթոռն , և երկիր
պագանէին կենդանւոյն յաւիտեանս յաւիտենից .)
և դնէին զպսակս իւրեանց առաջի աթոռոյն ասե-
11 լով , Արժանի ես , Տէր §Աստուած մեր սուրբ՝՝ , առ-
նուլ փառս և պատիւ և զօրութիւն , զի դու ըս-
տեղծեր զամենայն , և 'ի կամէն քո ստեղծան և
կան հաստատուն :

* Ց՛ոյն՝ աթոռոյն՝ և շուրջ զաթոռովն
† Ց՛ոյն՝ որ էրն և որ էն և որ գալոյն է :
§ ի Ց՛ոյնն չէ :

Գլ· Ն

1 Եւ տեսի ՚ի ձեռս աջոյ որ նստեր ՚ի վերայ աթոռոյն գիրբք գրեալ ներքոյ և արտաքոյ, և կընքեալ եօթնիւ կնքովք։ 2 Եւ տեսի հրեշտակ մի զօրաւոր՝ զի քարոզէր ՚ի ձայն մեծ, Ո՞ է արժանի բանալ 3 նալ զգիրքս և լուծանել զկնիք նորա։ Եւ ոչ ոք կարէր ոչ յերկինս և ոչ յերկրի և ոչ ՚ի ներքոյ 4 երկրի բանալ զգիրքն, *զի ոչ տեսին զնա։" Եւ ես լայի ուժգին՝ զի ոչ ոք գտաւ արժանի բանալ 5 զգիրքն և հայել ՚ի նա։ Եւ մի յերիցանցն ասէ ցիս, Մի լար, ահաւասիկ յաղթեաց Առիւծն յազգէն Յուդայ յարմատոյն Դաւթի՝ բանալ զգիրքն և լուծանել զեօթն կնիքսն նորա։ 6 Եւ տեսի ՚ի մէջ աթոռոյն և ՚ի մէջ չորից կենդանեացն և ՚ի մէջ երիցանցն գառն կայր †զվենեալ, որ ունէր եօթն եղջիւրս և աչս եօթն, որ են եօթն հոգիք Աստուծոյ, որ են առաքեալ ընդ ամենայն երկիր։ 7 Եւ եկն §ընկալաւ յաջոյ ձեռանէ նորա՝ որ նստեր 8 ՚ի վերայ աթոռոյն։ Եւ յորժամ առ զգիրքն, չորք կենդանիքն և քսան և չորք երիցունքն անկանէին առաջի գառինն. և ունէին իւրաքանչիւր քնար՝ և բուրվառ ոսկի լի խնկով, որ է աղօթք սրբոցն։ 9 Եւ օրհնէին երգս նորս և ասէին, Արժանի ես առնուլ զգիրքն և բանալ զկնիք դորա, զի զվնասեր և գնեցեր զմեզ Աստուծոյ՝ արեամբդ քով յամենայն

* Յայնս՝ և ոչ հայել ՚ի նա։
† Յայնս՝ իբրեւ զվենեալ, § Յայնս՝ և առ զգիրքն

ազգաց և ՚ի լեզուաց և ՚ի ժողովոց հեթանոսաց։ 10 Եւ արարեր զսոսա Աստուծոյ մերոյ թագաւորս և քահանայս՝ թագաւորել ՚ի վերայ երկրի։ 11 Եւ տեսի, և լուայ զձայն հրեշտակաց բազմաց՝ որք կային շուրջ զաթոռովն և զէրբիւքն կենդանեօքն և զքահանայիւքն. և էր թիւն նոցա բիւրք բիւրուց և հազարք հազարաց։ 12 Աւետին ձայնիւ մեծաւ, Արժան է Գառնդ զվեհեալ առնուլ զմեծութիւն և զիմաստութիւն և զզօրութիւն և զպատիւ և զփառս և զօրհնութիւն։ 13 Եւ զամենայն արարածս՝ որ են յերկինս և *յերկրի և՚՝ ՚ի ծովս և որ ՚ի նոսա՝ լուայ զի ասէին, Որ նստիս յաթոռն և Գառնն՝ օրհնեալ, բարձրացեալ և փառաւորեալ յաւիտեան յաւիտենից։ 14 Եւ չորք կենդանիքն ասեն, Ամէն. և երիցունքն անկանէին առաջի նորա և երկիրպագանէին։

Գլ· Զ

1 Եւ տեսի զի †գառնդ զմին ՚ի կնիքացն, և լուայ ՚ի միոյ ՚ի չորից կենդանեացն իբրեւ զձայն որոտման՝ 2 զի ասէր Թէ §Գամ։ Եւ տեսի՝ և ահա ձի սպիտակ, և որ հեծեալն էր ՚ի նմա՝ ունէր աղեղն. և տուաւ նմա պսակ, և ‖եկն յաղթողն՝ զի յաղթեսցէ։ 3 Եւ յորժամ եբաց զկնիքն երկրորդ, լուայ յերկրորդ կենդանեացն՝ զի ասէր, §Գամ։ Եւ եղ այլ

* Յայնս՝ յերկրի և ՚ի ներքոյ երկրի և որ
† Յայնս՝ Գառնն եբաց § Յայնս՝ եկ և տես
‖ Յայնս՝ ել

ձի կարմիր. և որ հեծեալն էր ի վերայ նորա՝ տուաւ նմա առնուլ զխաղաղութիւն յերկրէ, զի զմիմեանս զննցեն. և տուաւ նմա սուր մի մեծ։

5 Եւ յորժամ եբաց զկնիքն երրորդ՝ լուայ զերրորդ կենդանւոյն՝ զի ասէր թէ *Գամ. և տեսի՝ և ահա ձի սեաւ, և որ նստեալն էր ի վերայ նո-
6 ցա՝ ունէր կշիռս ի ձեռին իւրում։ Եւ լուայ ձայն ի միջոյ չորից †կենդանեացն, կապիճ մի ցորեան՝ դենարի միոջ, և երեք կապիճ գարի՝ դենարի միոջ. և ձէթ և գինի մի ինասեցջես։

7 Եւ յորժամ եբաց զկնիքն չորրորդ, լուայ ձայն
8 ի չորրորդ կենդանւոյն՝ զի ասէր թէ *Գամ։ Եւ տեսի՝ և ահա ձի չլոռաս, և որ նստէրն ի վերայ նորա՝ §ունէր զմահ,՚՚ և դժոխք երթային զհետ նորա. և տուաւ նմա իշխանութիւն չորրորդ մասին աշխարհի՝ սատակել սրով և սովով և մահուամբ և գազանօք երկրի։

9 Եւ յորժամ եբաց զկնիքն հինգերորդ՝ տեսի ի ներքոյ սեղանոյն զհոգիս ամենայն մարդկան զեներ վասն բանին Աստուծոյ և վասն վկայութեան
10 նորա զոր ունէին։ Որք ասէին ի ձայն մեծ, Մինչեւ յե՞րբ, Տէր սուրբ և ճշմարիտ, ոչ դատիս, և խնդրես զվրէժ արեան մերոյ ի բնակչաց երկրի։
11 Եւ տուաւ նոցա արկանելիս սպիտակս, և ասացաւ նոցա զի հանգիցեն փոքր մի ժամանակ, մինչեւ լցցին ծառայակիցք նոցա և եղբարք նոցա՝ որք հանդերձեալ են կատարիլ իբրեւ զնոսա։

* Յայտ՝ Նկ և տես։ † Յայտ՝ կենդանեացն՝ որ
§ Յայտ՝ անուն նմա մահ, ասէր,

12 Եւ տեսի յորժամ եբաց զկնիքն վեցերորդ՝ եղեւ շարժումն մեծ, և արեգակն եղեւ սեաւ իբրեւ զկապերտ այծեայ, և լուսինն բոլորովին եղեւ ա-
13 բիւն։ Եւ աստեղք երկնից թօթափեցան ի յերկիր, որպես *տերեւ թզենւոյ զի ուժգին շարժիցի
14 ի հողմոյ։՚՚ Եւ երկինն իբրեւ զմագաղաթեայ դիրս դալարեր. և ամենայն լերինք և կղզիք ի տեղւոյ
15 իւրեանց շարժեցան։ Եւ թագաւորք երկրի և իշխանք, հաղարապետք և մեծամեծք և զօրաւորք և ամենայն ծառայք և ամենայն ազատք թագուցին
16 զինքեանս յայրս և ի ծերպս վիմաց։ Եւ ասէին †լերանց թէ Անկերուք ի վերայ մեր, և ցբլուրս
17 թէ ծածկեցէք զմեզ։՚՚ Զի եկն օր մեծ բարկութեան նորա, և ո՞վ կարէ կալ առաջի նորա։

Գլ. Է

1 Եւ յետ այնորիկ տեսի չորս հրեշտակս՝ զի կային ի չորս անկիւնս երկրի, և ունէին զչորս հողմս երկրի՝ զի մի՛ շնչեսցէ հողմ ի վերայ երկրի և մի՛ ի
2 ծովս և մի ծառս։ Եւ տեսի այլ հրեշտակ՝ զի ել յարեւելից, և ունէր զնիք Աստուծոյ կենդանւոյ, և աղաղակեաց ձայնիւ մեծաւ առ չորս հրեշտակսն՝ որոց §առեալ էր իշխանութիւն՚՚ ապականել զերկիր

* Յայտ՝ թզենի ընկենու զպտուղս իւր, ի սաստիկ հողմոյ շարժեալ։
† Յայտ՝ լերանց և ապառաժից թէ Անկերուք ի վերայ մեր և ծածկեցէք զմեզ յերեսաց այնորիկ որ նստի ի վերայ աթոռոյն՝ և ի բարկութենէ Գառնին։ § Յայտ՝ տուեալ էր

3 և զծով . եւ ասէր , Մի՛ վնասէք երկրի , մի՛ ծովու,
մի՛ ծառոց , դադարեցէք մինչեւ կնքեցից զծառայս
4 Աստուծոյ իմոյ ի ճակատս նոցա : Եւ լուայ զթիւ
կնքելոցն՝ հարիւր քառասուն և չորք հազարք յազ-
5 գէ որդւոցն Իսրայելի . Յազգէն Յուդայ՝ երկոտա-
սան հազար կնքեալ , յազգէն Ռուբենի՝ երկոտա-
սան հազար կնքեալ , յազգէն Գադայ երկոտասան
6 հազար կնքեալ , Յազգէն Ասերայ՝ երկոտասան հա-
զար կնքեալ , յազգէն Նեփթաղիմայ՝ երկոտասան
հազար կնքեալ , յազգէն Մանասէի՝ երկոտասան
7 հազար կնքեալ , Յազգէն Շմաւոնի՝ երկոտասան
հազար կնքեալ , յազգէն Ղեւեայ՝ երկոտասան
հազար կնքեալ , յազգէն Իսաքարայ՝ երկոտասան
8 հազար կնքեալ , Յազգէն Զաբուղոնի՝ երկոտասան
հազար կնքեալ , յազգէն Յովսեփայ՝ երկոտասան
հազար կնքեալ , յազգէն Բենիամինի՝ երկոտասան
հազար կնքեալ :

9 Եւ յետ այսորիկ տեսի՝ և ահա ժողովուրդ բա-
զում՝ որոց ոչ գոյր թիւ , յամենայն հեթանոսաց
և յամենայն ազգաց և յամենայն լեզուաց և յա-
մենայն ժողովրդոց , որք կային առաջի աթոռոյն և
առաջի Գառնին՝ արկեալ զիւրեանց հանդերձս
10 սպիտակս՝ և արմաւենիս ի ձեռս իւրեանց : Աղա-
ղակէին ի ձայն մեծ և ասէին , Փրկութիւն Աս-
տուծոյ մերոյ՝ որ նստի ի վերայ աթոռոյն , և Գա-
11 ռնին : Եւ ամենայն հրեշտակք կային շուրջ զա-
թոռովն և զերիցամբքն և զչորիւքն կենդանեօքն , և
անկանէին յերեսս առաջի աթոռոյն և երկիրպա-
12 գանէին Աստուծոյ , Ասելով , Ամէն . օրհնութիւն
և փառք և իմաստութիւն և գոհութիւն և պատիւ

և զօրութիւն և *շնորհք Տեառն Աստուծոյ մերոյ
13 յաւիտեանս յաւիտենից : Ամէն : Եւ ասէ ցիս մի
ի ծերից անտի . Սոքա որ զգեցեալ են զհանդերձս
14 սպիտակս՝ ո՞յք են , և կամ ուստի՞ գան : Ես ա-
սացի ցնա , Տէր , դու դիտես . և ասէ ցիս , Սոքա
են՝ որ գան ի վշտաց մեծաց , և լուացին զարկա-
նելիս իւրեանց և սպիտակացուցին արեամբ Գառ-
15 նէն : Վասն այնորիկ են առաջի աթոռոյն Աստու-
ծոյ , և պաշտեն զնա զտիւ և զգիշեր ի տաճարի
նորա , և որ նստի ի վերայ աթոռոյն՝ †բնակեալ է
16 ի նոսա : Ոչ քաղցիցեն և ոչ ծարաւիցեն , և ոչ
17 ոք մեղիցէ նոցա ոչ արեգակն և ոչ տօթ : Եւ Գառ-
նէն՝ ի միջի աթոռոյն իւրոյ հովուեսցէ զնոսա , և
առաջնորդեսցէ նոցա §ի կենաց աղբիւր ջրոյ կեն-
դանւոյ : քանզի եհատ Աստուած զամենայն ար-
տօսր յերեսաց նոցա :

Գլ· Ը

1 Եւ յորժամ եբաց զկնիք եօթներորդ՝ եղեւ լը-
2 ռութիւն յերկինս որպէս կէս ժամու : Եւ տեսի
հրեշտակս եօթն , որ առաջի Աստուծոյ կային . և
3 տուաւ նոցա եօթն փող : Եւ այլ հրեշտակ եկն
եկաց առ սեղանն , և ունէր խնկանոց ոսկի , և
տուաւ նմա խունկ բազում՝ զի մատուսցէ ‖աղօթս

---

* Յայլն՝ կարողութիւն
† Յայլն՝ տարածեսցէ զխորան իւր ի վերայ նոցա :
§ Յայլն՝ յաղբիւրս կենդանիս ջրոց .
‖ Յայլն՝ ընդ աղօթս

ամենայն սրբոց 'ի վերայ ոսկեղէն սեղանոյ առաջի
4 աթոռոյն ։ Եւ ել ծուխ խնկոցն՝ *աղօթք սրբոցն
5 'ի ձեռաց հրեշտակացն առաջի Աստուծոյ ։ Եւ ելից
հրեշտակն զխնկանոցն 'ի հրոյ սեղանոյն՝ և արկ զնա
յերկիր . և եղեւ որոտումն և ձայնք և փայլատա-
6 կումն և շարժումն մեծ ։ Եւ եօթն հրեշտակքն որ
ունէին եօթն փողս՝ պատրաստեցին զինքեանս առ
'ի հարկանել ։
7 Եւ առաջին հրեշտակն եհար զփողն, և եղեւ կար-
կուտ և հուր և արիւն խառնեալ՝ և անկաւ յեր-
կիր , և զերրորդ մասն երկրի այրեաց , և զերրորդ
մասն ծառոց այրեաց , և զամենայն դալար խոտոյ
8 այրեաց ։ Եւ երկրորդ հրեշտակն փողեաց , և իբրեւ
զլեառն մի մեծ հրդեհեալ անկաւ 'ի ծով , և եղեւ
9 երրորդ մասն ծովու արիւն . Եւ սատակեցաւ եր-
րորդ մասն †լուղակաց , և որ ունէր շունչ կենդանի
ապականեցաւ ,'' և երրորդ մասն նաւուց ընկղմե-
ցաւ ։
10 Եւ երրորդ հրեշտակն փողեաց , և անկաւ յեր-
կնից աստղ մի մեծ՝ բորբոքեալ իբրեւ զղամբար , և
11 անկաւ յերրորդ մասն գետոց և աղբերաց . Եւ եր
անուն աստեղն §Դառնութիւն . և բազումք մե-
ռան 'ի դառնութենէ ջուրցն ։''
12 Եւ չորրորդ հրեշտակն փողեաց , և վիրաւորեր եր-

* Յոյն՝ ընդ աղօթս
† Յոյն՝ արարածոց որ 'ի ծովու , որոց էր շունչ ,
§ Յոյն՝ Աւշինդր , և երրորդ մասն ջուրց եղեւ քաւ-
շինդր , և բազումք 'ի մարդկանէ մեռան 'ի ջուրցն,
զի դառնացան ։

րորդ մասն արեգական և երրորդ մասն լուսնի և
երրորդ մասն աստեղաց . *և խաւարեր'' երրորդ մա-
սըն նոցա , †և երրորդ մասն գիշերոյ'' նոյնպէս ։
13 Եւ տեսի և լսեայ ձայն հրեշտակի թռուցելոյ 'ի
միջ երկնից՝ զի ասէր 'ի ձայն մեծ , վա՛յ , վա՛յ ,
վա՛յ , որ բնակեալ են յերկրի , յորժամ լինիցի
ձայն երիցն եւս փողոց՝ զոր կամիցին հրեշտակքն
հարկանել ։

Գլ. Թ

1 Եւ հինգերորդ հրեշտակն փողեր , և տեսի զի
աստղ մի անկաւ յերկնից , և տուաւ նմա բանա-
2 լի գբոյն անդնդոց . ‡Եւ ելանէր ծուխ 'ի գբոյն որ-
պէս զծուխ հնոցի մեծի . և խաւարեցաւ արեգակն
3 և §օդ ։ Եւ 'ի գբոյն'' ելանէր մարախ 'ի յերկրի .
և տուաւ նոցա իշխանութիւն իբրեւ զիսկթոցս
4 կարճի . Եւ ասացաւ նոցա՝ զի մի մեղիցեն խոտոյ
երկրի ‖և մի ամենայն ծառոց, բայց միայն **մարդ-
կացն երկրայնոյ,'' որ ոչ ունիցին ††դնիքք 'ի վերայ ճա-
5 կատաւ իւրեանց ։ Եւ տուաւ նոցա §§հրաման՝ զի

* Յոյն՝ զի խաւարեսցի
† Յոյն՝ և տիւն մի ծագեսցէ երրորդ մասն նորա ,
և գիշեր
‡ Յոյն յօ-ել-ա , Եւ ելաց զգուբն անդնդոց և
§ Յոյն՝ օդ 'ի ծխոյ գբոյն ։ Եւ 'ի ծխոյն
‖ Յոյն յօ-ել-ա , և մի ամենայն դալարեաց և
** Յոյն՝ մարդոց ,
†† Յոյն՝ զինիք Աստուծոյ §§ Ի Յոյնն լիւ ։

մի՛ սպանանիցեն զնոսա, այլ չարչարեսցեն զնոսա
ամիսս հինգ. և չարչարանք նոցա իբրեւ *ղեխպո-
6 ցըս կարճի որ հարկանիցէ զմարդ. եւ յաւուրսն
յայնոսիկ խնդրեսցեն մարդիկ զմահ՝ և մի գտցեն.
և ցանկասցեն մեռանել՝ և փախիցէ ի նոցանէ մահ.
7 Եւ նմանութիւն մարախոյն՝ նմանութիւն ձիոյ
պատրաստեալ ի պատերազմ. և ի վերայ գլխոց
նոցա իբրեւ զպսակ՝ նմանեալ ոսկւոյ, և երեսք
8 նոցա իբրեւ զերեսս մարդոյ. Եւ հերք նոցա իբրեւ
զհերս կնոջ, և ատամունք նոցա իբրեւ զառիւծու.
9 Եւ ունէին զրահս իբրեւ զզրահս երկաթի. և ձայն
թեւոց նոցա իբրեւ զձայն կառաւարաց ձիոց բազմաց՝
10 որ արշաւեն ի պատերազմ. Եւ ունին պոչս ըստ
նմանութեան կարճի, և խայթոց չագիս նոցա. և
ունէին իշխանութիւն չարչարել զմարդիկ ամիսս
11 հինգ. Եւ ունին թագաւոր ի վերայ իւրեանց զՂ-
հրեշտակն գժոխոց. և անուն նորա Եբրայեցերէն
12 Աղբադոն, որ կոչի †ի Հայ բարբառ կորուստ։" Ա-
հաւասիկ վայ մի եանց, և վայք երկու գալոց են։
13 Եւ վեցերորդ հրեշտակն հարկանէր զփողն, և
լուայ ձայն ի չորից §կենդանեացն՝ որ էին առաջի
14 սեղանոյն" Ասացոյց, Զի ասէր ցհրեշտակն վեցե-
րորդ՝ որ ունէր զփողն, Լոյծ զչորս հրեշտակսն զՂ-
15 կապեալսն ի վերայ գետոյն Եփրատայ։ Եւ լուծան
չորք հրեշտակքն՝ պատրաստեալք ի ժամ և յօր
և յամիս և ի տարի, զի սպանցեն զերրորդ մասն

* Յայլն՝ զչարչարանս
† Յայլն՝ ի Յոյն բարբառ Աբոլլիոն։
§ Յայլն՝ եղջերաց սեղանոյն ոսկւոյ՝ որ առաջի

16 մարդկան։ Եւ համարք հեծելոց զօրաց նոցա՝ *բիւրք
բիւրուց և հազարք հազարաց՝" լուայ զթիւ նոցա։
17 Եւ տեսի ձիս ի տեսլեանն, և հեծեալս ի նոսա՝
որք ունէին զրահս հրեղէնս և †յակինթեայ հրդե-
հեալս ծծմբով." և գլուխք ձիոցն իբրեւ զգլուխս
առիւծուց. և ի բերանոյ նոցա հուր ելանէր և
18 ծուխ և ծծումբ։ Եւ ի հարուածոցս յայսցանէ
մեռաւ երրորդ մասն մարդկան՝ ի հրոյն և ի ծխոյն
19 և ի ծծմբոյն որ ելանէր ի բերանոյ նոցա։ Զի իշ-
խանութիւն ի բերանս է նոցա և յագիս նոցա,
և պոչք նոցա նմանութիւն օձի. և ունէին գլուխս՝
20 որով ‡սատակէին զանիրաւս։" Եւ այլք ի մարդ-
կանէ որ ոչ մեռան ի հարուածոցս յայսցանէ, ոչ
ապաշխարեցին և ոչ դարձան ի գործոց ձեռաց
իւրեանց, յերկրպագութենէ դիւաց և կռոց
յոսկեզինաց և յարծաթեղինաց և ի պղնձայ և ի
քարէ և ի փայտէ, որք ոչ տեսանել կարեն և ոչ
21 լսել և ոչ գնալ. Եւ ոչ ապաշխարեցին ի մար-
դասպանութենէ և ի դեղատուութենէ և ի պոռ-
նկութենէ և ի գողութենէ իւրեանց։

Գլ. Ժ

1 Եւ տեսի այլ հրեշտակ զօրաւոր՝ զի իջանէր յեր-
կնից, և զգեցեալ էր ամպ և ծիածան ի գլուխ
նորա. և երեսք նորա իբրեւ զարեգակն, և ոտք

* Յայլն՝ երկու բիւրք բիւրուց
† Յայլն՝ յակինթեղէնս և ծծմբեղէնս.
‡ Յայլն՝ վնասէին։

2 Նորա որպէս սիւն հրոյ ։ Եւ ունէր ի ձեռին իւր
բուռ գրքոյկ մի բացեալ. և եդ զոտն իւր զջ ի
3 վերայ ծովու, և զձախն ի վերայ երկրի ։ Եւ աղա-
ղակեաց ի ձայն մեծ, դոչեաց իբրեւ զառիւծ. և
յորժամ աղաղակեաց՝ խօսեցան եօթն որոտմունք
4 յիւրեանց ձայնս ։ Եւ յորժամ խօսեցան եօթն
որոտմունքն՝ կամէի գրել. և լուայ ձայն յերկնից
ղէ ասէր, Կնքեա զոր խօսեցան եօթն որոտմունքն,
5 և մի՛ գրեր ։ Եւ հրեշտակն զոր տեսի, որ եդ զոտն
իւր ի վերայ ծովու և զհիւսն ի ցամաքի, համբարձ
6 զձեռն իւր զջ յերկինս. Եւ երդուաւ ի կեն-
դանին յաւիտենից՝ որ *Հաստատեաց զերկիր և որ
7 ի նմա, զղ ոչ եւս կայ՞ այլ ժամանակ. Այլ
յաւուրս ձայնի եօթներորդ հրեշտակին՝ յորժամ
հարցէ զվիզն, կատարեսցի խորհուրդն Աստուծոյ՝
որ աւետարանեցաւ †ի ձեռն ծառայից իւրոց մար-
8 գարէից ։ Եւ ձայնն՝ զոր լուայ յերկնից՝ դար-
ձեալ խօսեցաւ ընդ իս և ասէ, Երթ, առ զգրո-
քոյկն՝ զոր ունի հրեշտակն բացեալ ի ձեռին իւ-
9 րում, և կայ ի վերայ ծովու և ցամաքի ։ Եւ եա
երթեալ առ հրեշտակն՝ խնդրեցի ի նմանէ. և ասէ
ցիս, Առ զսա և կեր զդոյն, և դառնասցի յորո-
վայն քո, այլ ի բերան քո է քաղցր իբրեւ զմեղր։
10 Եւ առի զգրքոյկն ‡բացեալ ի հրեշտակէն՛՛ և կլայ
զնա. և էր ի բերան իմ որպէս մեղր. և յորժամ
11 կերայ, դառնացաւ որովայն իմ։ Եւ ասէ ցիս,

* Յոյնն՝ Հաստատեաց զերկինս և որ ի նմա, և զերկիր
և որ ի նմա, և զծով և որ ի նմա, զղ ոչ եւս իցէ

† Ի Յոանէն ԺԲ ։ ‡ Յոյնն՝ ի ձեռաց հրեշտակին

Հասանէ քեզ դարձեալ մարգարէանալ ի ժողո-
վուրդս և ի հեթանոսս և ի լեզուս և ի թագա-
ւորս *երկրի ։

ԳԼ. ԺԱ.

1 Եւ տուաւ ինձ եղէգն նման գաւազանի. և կայր
հրեշտակն և ասէր ցիս, Արի և չափեա զտաճարն
Աստուծոյ և զսեղանն՝ և զերկրպագուսն որ ի նմա։
2 Եւ զդաւիթն որ արտաքոյ տաճարին՝ թող զնա և
մի՛ չափեր, զի տուեալ է զնա հեթանոսաց. և
զքաղաքն սուրբ կոխեսցեն ամիսս քառասուն և եր-
3 կուս ։ Եւ տաց երկուց վկայից իմոց՝ և մարգա-
բեսացին աւուրս հազար երկերիւր և վաթսուն
4 զգեցեալ քուրձ ։ Սոքա են երկու ձիթենիքն՝ և
երկու ճրագք, որ կան առաջի †Աստուծոյ յերկրի։՛
5 Եւ որք կամիցին վնասել նոցա, հուր ելցէ ի բե-
րանոյ նոցա՝ և կերիցէ զթշնամիս նոցա. և որք
կամիցին մեղանչել նոցա՝ այսպէս սատակեսցին ։
6 Սոքա ունին իշխանութիւն փակել զերկինս՝ զի մի՛
տեղասցէ զաւուրս մարգարէութեան նոցա. և ու-
նին իշխանութիւն ի վերայ ջուրց՝ դարձուցանել
զնոսա յարիւն, և հարկանել զերկիր յամենայն
7 հարուածս՝ քանիցս անգամ և կամիցին ։ Եւ յոր-
ժամ կատարեսցեն զամենայն աւուրս վկայութեան
իւրեանց, յայնժամ գազանն որ ելանէ յանդնդոց՝
տացէ ընդ նոսա պատերազմ, և յաղթեսցէ նոցա
8 և սպանցէ զնոսա ։ Եւ դի նոցա *անկեալ կայցէ՛՛

* Ի Յոանէն ԺԲ ։ † Յոյնն՝ Աստուծոյն երկրի ։

'ի մէջ հրապարակաց քաղաքին *նոցա մեծի, որ
անուանեալ կոչի ըստ հոգւոյն Սոդոմ և Եգիպ-
9 տոս, ուր և Տէրն նոցա խաչեցաւ։ Եւ տեսցեն
զնոսա ամենայն ցեղք և ժողովուրդք և ամենայն
լեզուք և հեթանոսք, զի դի նոցա անկեալ կայցէ
զերիս աւուրս և կէս. և ոչ տայցեն թաղել 'ի
10 գերեզմանս զոսկերս նոցա։ Եւ որ բնակեալ են
յերկրի՝ ուրախ լինեն և խնդան 'ի վերայ նոցա,
մինչեւ ընծայս և պատարագս տանել միմեանց.
վասն զի սոքա երկոքեան մարգարէքս †չարչարեցան
11 զբնակիչս երկրի։ Եւ յետ երից աւուրց և կիսոյ՝
հոգի կենդանի յԱստուծոյ մտցե 'ի նոսա. և յա-
րիցեն կացցեն 'ի վերայ ոտից իւրեանց, և ահ և
երկիւղ մեծ անկաւ 'ի վերայ ամենեցունն՝ որ սպա-
12 նինն զնոսա։ Եւ լուայ ձայն մեծ՝ որ ասէր ցնո-
սա, Վերացիք՝ ելէք ասա. և վերացան՝ ելին յեր-
կինս ամպովք, և տեսին զնոսա թշնամիք իւրեանց։
13 Եւ 'ի ժամուն յայնմիկ շարժումն մեծ եղեւ, և
տասներորդ մասն քաղաքին ընկղմեցաւ, և մեռան
'ի շարժմանէն արք եօթն հազար. և յետ այնորիկ
ահ մեծ եղեւ յամենեսեան, և փառս տային Ա-
14 ստուծոյ երկնաւորի։ ԱՀաւասիկ վայն երկրորդ էանց,
և վայն երրորդ գայըց է վաղվաղակի։
15 Եւ յորժամ եօթներորդ հրեշտակն հարկանէր
զփող, եղեւ ձայն յերկինս և ասէ, Եղեւ թա-
գաւորութիւն *ամենայն տիեզերաց Տեառն մերոյ
և *Յիսուսի Քրիստոսի իւրոյ. և թագաւորեսցէ
16 *'ի վերայ ամենայնի՝՝ յաւիտեանս յաւիտենից։ Եւ

* Ի ցաւն էէ։ † Յայնմ՝ չարչարեցին

քսան և չորք երիցունքն՝ որ նստէին յաթոռս իւ-
րեանց առաջի Աստուծոյ, անկանէին 'ի վերայ ե-
րեսաց իւրեանց և երկիրպագանէին Տեառն Աս-
17 տուծոյ, և ասէին, Գոհանամք զքեզ, Տէր Աստուած
Ամենակալ, որ էն և ես և առեր զզօրութիւն քո
18 մեծ, և թագաւորեցեր։ Եւ հեթանոսք բարկա-
ցան, և եկն բարկութիւն քո, և ժամանակ մե-
ռելոց՝ զի դատեսցին. և տաս վարձս ծառայից
քոց մարգարէից և սրբոց երկիւղածաց անուան
քոյ՝ փոքունց և մեծամեծաց, և ապականես զա-
պականիչս երկրի։
19 Եւ բացաւ տաճարն Աստուծոյ որ յերկինս, և
երեւեցաւ տապանակն Աստուծոյ 'ի տաճարն իւր,
և եղեն փայլատակմունք և ձայնք և որոտմունք և
շարժումն և կարկուտ մեծամեծ։

ԳԼ. ԺԲ

1 Եւ նշան մեծ երեւեցաւ յերկինս. կին մի ար-
կեալ զլուսիս զարեգակն, և լուսին 'ի ներքոյ ոտից
նորա. և 'ի վերայ գլխոյ նորա պսակ աստեղեայ
2 յերկոտասանից։ Եւ էր յղի, և ճչէր յերկնէն,
3 և բազում վշտօք մերձ էր 'ի ծնանել։ Եւ երեւե-
ցաւ այլ նշան յերկինս, և աՀաւասիկ վիշապ մի
մեծ հրեղէն, որոյ էին գլուխք եօթն և եղջիւրք
4 տասն. և 'ի վերայ գլխոյ նորա եօթն խոյրք։ Եւ
տուան նորա քարշէր զերորդ մասն աստեղաց եր-
կնից, և արկ զնոսա յերկիր. և վիշապն կայր ա-
ռաջի կնոջն որ հանդերձեալ էր ծնանել, զի յոր-
5 ժամ ծնցի կինն զորդի իւր՝ կլցէ զնա վիշապն։ Եւ

ծնաւ *կինն սրուս՝ որ հանդերձեալ է հովուել զա-
մենայն հեթանոսս գաւազանաւ երկաթեայ. և
յափշտակեցաւ որդի նորա առ Աստուած և առ
6 աթոռ նորա։ Եւ կինն փախեաւ յանապատ՝ ուր
էր տեղի նմա պատրաստեալ յԱստուծոյ, զի կե-
րակրեսցի անդ աւուրս հազար երկերիւր և վաթ-
7 սուն։ Եւ եղեւ պատերազմ յերկինս, Միքայէլ
և հրեշտակք իւր կռուէին ընդ վիշապին. և վի-
8 շապն պատերազմէր զօրօք իւրովք։ Եւ ոչ կարա-
ցին կալ ընդդէմ՝ և տեղի ոչ գտաւ նոցա յեր-
9 կինս։ Եւ անկաւ վիշապն մեծ՝ օձն առաջին, որ
անուանեալ կոչի †Սատանայ, որ մոլորեցուցէ զամենայն տիեզերս երկրի. և հրեշտակք
10 նորա ընդ նմա անկան։ Եւ լուայ ձայն մեծ յեր-
կնից՝ որ ասէր, Արդ եղեւ զօրութիւն և փրկու-
թիւն և արքայութիւն Աստուծոյ մերոյ, և իշխա-
նութիւն Օծելոյ նորա. զի անկաւ չարախօսն եղ-
բարց մերոց, որ չարախօսէր զնոցանէ առաջի Ա-
11 ստուծոյ զտիւ և զգիշեր։ Եւ նոքա յաղթեցին
նմա արեամբ Գառնին, և բանիւ վկայութեան
‡նորա. և ոչ հաճեցան ընդ վիշապն՝ մինչեւ՝ ի
12 մահ։ Վասն այսորիկ ուրախ լերկինք և ա-
մենայն որ բնակեալ են ի նմա։ Վայ երկրի և
ծովու՝ զի անկաւ բանսարկուն առ ձեզ, որ ունի
զցասումն բազում, §և կացցէ առ սակաւ մի ժա-
13 մանակս։'' Եւ յորժամ ետես վիշապն թէ անկաւ

* Ի ց–ն՝ չ+։ † ց՝՝՝՝ Բանսարկու
‡ ց՝՝՝՝ իւրեանց. և ոչ սիրեցին զսգի իւրեանց
§ ց՝՝՝՝ գիտացեալ եթէ ունի սակաւ ժամանակ։

յերկիր, զկետ եղեւ կնոջն՝ որ ծնաւ զմանուկն
14 արու։ Եւ տուաւ կնոջն երկու թեւք արծուոյ մե-
ծի՝ զի թռիցէ յանապատ ի տեղի իւր. ուր կե-
րակրէր անդ ժամանակ և ժամանակս և կէս ժա-
15 մանակի՝ յերեսաց օձին։ Եւ եհեղ օձն ի բերա-
նոյ իւրմէ զկետ կնոջն ջուր՝ զի ընկղմեսցէ զնա։
16 Եւ օգնեաց երկիր կնոջն, և երաց երկիր զբերան
իւր և եկուլ զջուրն՝ զոր եհեղ վիշապն ի բերա-
17 նոյ իւրմէ։ Եւ ցասաւ վիշապն ընդ կնոջն, և
գնաց պատերազմել ընդ այլ զաւակս նորա՝ որք
պահէին զպատուիրանս Աստուծոյ, և ունէին զը-
18 կայութիւնն Յիսուսի։ Եւ կաց ի վերայ աւազոյ
ծովուս.

Գլ. ԺԳ

1 Եւ տեսի զի գևլանէր ի ծովէն գազան, և ունէր
գլուխս եօթն և եղջիւրս տասն, և ի վերայ եղջե-
րաց նորա տասն խոյր, և ի վերայ գլխոյ նորա ա-
2 նուն հայհոյութեան։ Եւ գազանն զոր տեսի՝ նմանն
ընձառս, և ոտք նորա իբրեւ զարջառ, և բերան նո-
րա որպէս զառիւծու. և ետ նմա վիշապն զզօրու-
թիւն իւր՝ և զաթոռ իւր և զիշխանութիւն մեծ։
3 Եւ մի ի գլխոց նորա վիրաւորեալ էր ի մահ. և
վէր մահուան նորա ողջանայր։ Եւ զարմացաւ ա-
մենայն երկիր ընդ գազանն, *զի ետ նմա վիշապն
4 զիշխանութիւն իւր։'' Եւ երկիրպագին վիշա-
պին՝ որ ետ զիշխանութիւնն գազանին, †և ասէին,''

* Ի ց–ն՝ չ+։
† ց՝՝՝՝ և երկիրպագին գազանին և ասէին,

Ո՞վ իցէ նման գազանիս. կամ ո՞վ կարիցէ պա-
5 տերազմել ընդ դա։ Եւ տուաւ նմա բերան խօ-
սել զմեծամեծս և զհայհոյութիւն. և տուաւ
նմա իշխանութիւն գործել քառասուն և երկու։
6 Եւ երաց զբերան իւր հայհոյութեամբ առ Ա-
տուած, և հայհոյաց զանուն նորա և զխորանն
7 նորա, և *զերկնայինն խորանն։" Եւ տուաւ նմա
իշխանութիւն առնել պատերազմ ընդ սուրբս և
յաղթել նոցա. և տուաւ նմա իշխանութիւն ի
վերայ ամենայն ազգաց և լեզուաց և ժողովրդոց։
8 Զի երկիրպագցեն նմա ամենայն որ բնակեալ են
ընդ երեսս երկրի. որոց ոչ են գրեալ անուանք նո-
ցա ի գլուխս կենաց Գառնին զնկեղ ի սկզբ-
9 բանէ աշխարհի։ Ոյք ունին ականջս լսելոյ՝ լսի-
10 ցեն։ †Զի են ոմանք՝ որք ի գերութեան վարեսց-
ցին, և են ոմանք՝ որ սրով մեռցին, և են ոմանք՝
որ անձամբ զանձինս սպանանեն։" աստ է համբե-
11 րութիւն և հաւատ սրբոց։ Եւ տեսի այլ գազան՝
զի ելանէր յերկրէ, և ունէր եղջիւրս երկու նման
12 գառնին, և խօսէր իբրեւ զվիշապն։ Եւ զիշխանու-
թիւն զամենայն զառաջնոյ գազանին գործէր ա-
ռաջի նորա. և առնէր զերկիր և զամենայն բնա-
կիչս նորա՝ զի երկիրպագանիցեն գազանին առաջ-
13 նոյ, ‡մինչեւ ողջացեալ վէր մահու նորա։" Եւ առ-
նէր նշանս բազումս, և տայր հրոյ իջանել յեր-

* Յայն՝ զրոս յերկինս բնակիչն։
† Յայն՝ եթէ ոք ի գերութիւն վարէ՝ ի գերութիւն
վարեսցի. եթէ ոք սրով սպանանէ՝ սրով սպանցի։
‡ Յայն՝ որոյ ողջացեալ էր վէրք մահու նորա։

14 կնից յերկիր առաջի մարդկան։ Եւ մոլորեցու-
ցանէր զորս բնակեալ են յերկիր՝ նշանօքն որ տուեալ
են ի ձեռս նորա՝ առնել առաջի գազանին. *ասէն
ցնա բնակիչք երկրի, Արա՝՝ զպատկեր գազանին,
15 որ ի վերայ սրոյն եկեաց։ Եւ տուաւ նմա †իշ-
խանութիւն, զի տացէ հոգի պատկերի գազանին,
և զի խօսեսցի պատկերն. և երկիրպագցեն նմա
ամենայն բնակիչք երկրի, և որ ոչ պագցէ երկիր
16 պատկերի գազանին, սպանցի զնա։ Եւ արասցէ
զամենայն՝ զփոքրունս և զմեծամեծս և զմեծատունս
և զաղատս և զաղքատս և զծառայս, զի տացէ
նոցա դրոշմ յաջոյ ձեռին՝ ‡և ի վերայ ճակատուս
17 նոցա։ Եւ ոչ ոք կարասցէ գնել և վաճառել՝ եթէ
ոչ ունիցի զդրոշմ՝ զդրոյն՝ ‡և զանուն գազանին ‡և
18 զթիւ անուան նորա։ Աստ է իմաստութիւն. որ
ունի միտս՝ համարեսցի զթիւ գազանին. թիւ է-
զեալն մարդոյ, և թիւ անուան նորա է այս, վեց
հարիւր վաթսուն և վեց։

Գլ. ԺԴ

1 Եւ տեսի՝ և ահա Գառն կայր ի վերայ լերինն
Սիովնի. և ընդ նմա հարիւր քառասուն և չորք
հազարք, որ ունէին զանուն նորա և անուն Հօր
2 նորա գրեալ ի վերայ ճակատուց նոցա։ Եւ լուայ
ձայն յերկնից՝ որպէս զձայն ջուրց բազմաց և ձայն
որոտման մեծի. և լուայ իբրեւ զձայն քնարահա-

* Յայն՝ ասելով բնակիչս երկրի առնել
† Ի Յունին էր։ ‡ Յայն՝ կամ

3 բաց, զի Հարկանէին զքնարս իւրեանց։ Եւ երգէին զերգս նորս առաջի աթոռոյն և առաջի չորից կենդանեացն և առաջի երիցանցն. և ոչ ոք
4 կարէ գիտել զերգս նոցա, բայց միայն Հարիւր քառասունն և չորք Հազարքն, որք ազատեալ են
5 յերկրէ։ Սոքա են՝ որք ընդ կանայս ոչ խառնակեցան, և են կուսանք. սոքա զկնի երթան Գառինն՝ ուր և երթիցէ. սոքա *ընտրեցան ի մարդկանէ առաջի՛՛ Աստուծոյ և Գառինն։ Եւ ի բերան նոցա ոչ գտաւ սուտ, զի ամբիծք են։
6 Եւ տեսի այլ հրեշտակ թռուցեալ ի մէջ երկնից. և ունէր աւետիս յաւիտենական՝ աւետարանել ամենայն ազգաց և լեզուաց որ բնակեալ
7 են յերկրի։ Եւ ասէր ի ձայն մեծ, երկերկուք զԱստուածոյ և տուք փառս նմա, զի եկն ժամ դատաստանի նորա. և երկիրպագէք արարչին երկնի և երկրի և ծովու և աղբերաց ջուրց։
8 Եւ այլ հրեշտակ երկրորդ գայր զկետ նորա և ասէր, Անկաւ, անկաւ Բաբելոն մեծն, †ի գինւոյ սրբեցուցիչն՝ ի ցասմանէ՝ ի պոռնկութենէ իւր-
9 մէ՝ որ արբեցոյց զամենայն հեթանոսս։՛՛ Եւ այլ հրեշտակ երրորդ գայր զկետ նոցա, և ի ձայն մեծ ասէր, Ով՝ որ երկրպագեաց գազանին և պատկերի նորա՝ և կամ ղդրոշմ նշանի նորա առ ի ճակատ
10 իւր և կամ ի վերայ աջոյր ձեռին իւրոյ, Անկցի-սին սրբեցե ի բաժակէ ցասմանն Աստուծոյ՝ արկե-

* Յայլս՝ գնեցան ի միջոյ մարդկան յերախայրիս

† Յայլս՝ զի ի գինւոյ ցասման պոռնկութեան իւրոյ սրբեցոյց զամենայն ազգս։

լոյ յանապակէ բարկութեան բաժակին, և տանջեսցի հրով և ծծմբով առաջի Աստուածոյ և Գա-
11 ռինն։ Եւ ծուխ *նոցա ելցէ յաւիտեանս յաւիտենից. և ոչ ունին հանգիստ որք երկիրպագին գազանին ի տուէ և ի գիշերի, և որք երկիրպագին պատկերին, և առնիւ զդրոշմ և զանուն նո-
12 րա։ Եւ համբերութիւն սրբոցն աստ է. այս՝ որք պահեն զպատուիրանս Աստուծոյ և զՀաւատս Յի-
13 սուսի։ Եւ լուայ ձայն յերկնից՝ որ ասէր ցիս, Գրեա, երանի մեռելոցն որք ի Տէր ննջեցին՝ †այժմիկ վաղվաղակի.՛՛ զայս ասէ Հոգին, քանզի հանգեան յաշխատութենէ իւրեանց. §բայց միայն՛՛ գործք իւրեանց չգան զկետ նոցա։
14 Եւ տեսի՛ և ահա ամպ սպիտակ, և ի վերայ ամպոյն նստեր նման Որդւոյ մարդոյ, և ի գլուխ իւր պսակ ոսկի, և ի ձեռին իւրում՝ ունէր զերանա-
15 գի սրեալ։ Եւ այլ հրեշտակ ելանէր յերկնից, աղաղակէր ի ձայն մեծ և ասէր, Որ նստիդ ի վերայ ամպոյդ՝ առաքեա զդերանդիդ քո և հնձեա, զի եկն ժամանակ հնձոց, և հասեալ են հունձք
16 երկրի։ Եւ արկ որ նստեր ի վերայ ամպոյն՝ զդերանդին իւր յերկիր, և հնձեր զամենայն բնակիչս
17 երկրի։ Եւ այլ հրեշտակ ելանէր ի տաճարէն՝ որ
18 յերկինս, և ունէր և սա զերանագի սրեալ։ Եւ այլ հրեշտակ ելանէր ի սեղանոյն որ ունէր իշխանութիւն ի վերայ հրոյ, և աղաղակեաց ի ձայն մեծ առ հրեշտակն որ ունէր զդերանդին սրեալ

* Յայլս՝ տանջանաց նոցա † Յայլս՝ այսուհետեւ.
§ Յայլս՝ և

և ասէր , *կթեա զղկոյդս յայգւոյ երկրէ, զի հա-
19 սեալ է խաղողդ ի դմա : Եւ արկ հրեշտակն զգե-
րանդի իւր յերկիր , և կթեր զխաղող նորա , և
20 արկանէր †ի հնձանն Աստուծոյ ի մեծ : Եւ կոխե-
ցաւ հնձանն արտաքոյ քաղաքին , և ելանէր ի
հնձանէն արիւն մինչեւ ի սանձս ‡ձիոյն և երկոյ-
նուԹիւն նորա՝՝ հազար և վեց հարիւր ասպարէզ :

Գլ· ԺԵ

1 Եւ տեսի այլ նշան յերկինս մեծ և սքանչելի .
հրեշտակս եօթն՝ որք ունէին եօթն վէրս զնի . զի
2 նոքօք կատարեր բարկութիւն Աստուծոյ : Եւ տե-
սի որպէս ծով ապակեղէն խառնեալ հրով . և որք
յաղթեցին գազանին և Թուոյ անուան նորա և
պատկերի նորա և դրոշմի նորա , նոքա կային ի
վերայ ծովուն ապակեղինի , և ունէին զքնարս Աս-
3 տուծոյ . Եւ երգէին զերգս Մովսիսի §առաջի Աս-
տուծոյ , և զերգս Գառինն՝ ասելով Թէ մեծամեծ
և սքանչելի են գործք քո , Տէր Աստուած Ամենա-
կալ , արդար և ճշմարիտ են ճանապարհք քո ,
4 Թագաւոր ‖ազգացն հեթանոսաց : Եւ ո՞վ որ ոչ
‖երկիցէ և փառաւորեսցէ *զանուն քո . զի
դու միայն սուրբ , *և արժանի երկրպագելոյ ,՝՝ զի
ամենայն հեթանոսք եկեսցեն և երկիր պագցեն ա-

* Յ՟ԺԱ՝ Զգեա զդերանդիդ սրեալ և կթեա
† Յ՟ԺԱ՝ ի հնձան ցասմանն ‡ Յ՟ԺԱ՝ ձիոց
§ Յ՟ԺԱ՝ ծառային ‖ Ի Յ՟ՒՆ ԷԻ ։
* Յ՟ԺԱ՝ երկիցէ ի քէն

ռաջի քո, Տէր, *յորժամ արդարութիւն քո յայտ-
նեսցի ։՝՝
5 Եւ յետ այսորիկ տեսի՝ և բացաւ տաճարն խո-
6 րանին վկայութեան՝ որ էր ի յերկինս : Եւ ելա-
նէին եօթն հրեշտակք որք ունէին եօթն հա-
րուածս , և զգեցեալ էին ի տաճարին կտաւս մա-
քուրս և պայծառս , և գօտեւորեալ էին առ ըս-
7 տեամբք իւրեանց գօտիս ոսկեղինս : Եւ ի չորից
կենդանեացն տուաւ եօթն հրեշտակացն եօթն
†սկաւառակս լի ցասմամբն Աստուծոյ կենդանւոյն
8 յաւիտեանս յաւիտենից : Եւ լցաւ տաճարն ծխով
փառացն Աստուծոյ և զօրութեան նորա . և ոչ ոք
§կարէ մտանել ի տաճարն՝ մինչեւ կատարեսցին
եօթն հարուածքն յեօթն հրեշտակացն :

Գլ· ԺԶ

1 Եւ լուայ ձայն մեծ ի տաճարէն՝ զի ասէր եօթն
հրեշտակն , երթայք՝ հեղէք զեօթն սկաւառակսդ
2 ցասմանն Աստուծոյ յերկիր : Եւ գնաց առաջին
‖հրեշտակն և եհեղ զսկաւառակ իւր յերկիր . և
եղեւ հարուածք չարաչար ի վերայ մարդկան , որ
ունէին զդրոշմ գազանին , և երկիրպագին պատ-
3 կերի նորա : Եւ երկրորդ հրեշտակն եհեղ զսկա-
ւառակ իւր ի ծով , և *դարձան ջուրքն յարիւն
մեռեալ .՝՝ և ամենայն շունչ կենդանի որ էր ի ծո-

* Յ՟ԺԱ՝ զի արդարութիւն քո յայտնեցաւ ։
† Յ՟ԺԱ՝ սկաւառակս ոսկեղինս
§ Յ՟ԺԱ՝ կարէր ‖ Ի Յ՟ՒՆ ԷԻ ։
* Յ՟ԺԱ՝ եղեւ արիւն իբրեւ զմեռելոց ։

4 վռւ՝ սատակեցաւ ։ Եւ երրորդ հրեշտակն եհեղ
զսկաւառակ իւր ՚ի գետս և յաղբերս ջուրց , և
5 եղեւ արիւն ։ Եւ լուայ *՚ի հրեշտակէն՝ զի ասէր ,
Արդար ե՝ որ էնն և է , և սուրբ ՚ի գործս իւր՝ զի
6 այսպէս դատեցաւ . վասն զի զարիւն սրբոց և
զարիւն մարգարէից հեղին ամպարիշտք . վասն այ-
նորիկ արիւն ետ ըմպել նոցա ըստ արժանւոյն ։
7 Եւ լուայ ՚ի սեղանոյ անտի զի ասէր , Այո , Տէր
Ամենակալ , արդար և ճշմարիտ են դա-
8 տաստանք քո ։ Եւ չորրորդ հրեշտակն եհեղ ՚ի
9 սկաւառակէ իւրմէ ՚ի վերայ արեգական ։ Եւ տուաւ
նմա խորշակահար առնել զմարդիկ հրով . և տա-
պացան մարդիկ ՚ի տապ մեծ , և հայհոյեցին զԱ-
տուածն՝ որ ունի իշխանութիւն ՚ի վերայ հարուա-
ծոցս այսոցիկ . և ոչ ապաշխարեցին ՚ի փառս Ա-
10 տուծոյ ։ Եւ հինգերորդ հրեշտակն եհեղ ՚ի սկա-
ւառակէ իւրմէ ՚ի վերայ աթոռոյ գազանին , և ե-
ղեւ թագաւորութիւն նորա խաւարեալ . և ծա-
11 մէին զլեզուս իւրեանց յախտէ ցաւոցն , Եւ հայ-
հոյեցին զԱստուածն երկնից ՚ի ցաւոց իւրեանց և
յախտէ դառնութեանն , և ոչ ապաշխարեցին ՚ի
12 գործոց իւրեանց ։ Եւ վեցերորդ հրեշտակն եհեղ
՚ի սկաւառակէ իւրմէ ՚ի վերայ գետոյն մեծի Եփ-
րատայ , և ցամաքեցան ջուրք նորա՝ զի պատրաս-
13 տեսցի ճանապարհ †թագաւորի ելիցն արեւու ։ Եւ
տեսի՝ զի ելանէր ՚ի բերանոյ վիշապին և ՚ի բերա-
նոյ գազանին և ՚ի բերանոյ սուտ մարգարէին ոգիք

* Յայնմ՝ ՚ի հրեշտակէն ջուրց՝

† Յայնմ՝ թագաւորաց

14 երեք անսուրբք իբրեւ զգորտս ։ Քանզի նորա էին
ոգիք դիւականք , որք առնէին զնշանս և երթային
առ թագաւորս ամենայն երկրի՝ ժողովել զնոսա ՚ի
պատերազմ յօրն մեծ Տեառն Ամենակալի . * քանզի
15 այսպէս ասաց Տէր . " Ահա գամ իբրեւ զգող , երանի
որ իցէ արթուն , և պահեսցէն զհանդերձս իւ-
րեանց . զի մի մերկ շրջեսցին , և երեւեսցին ամօ-
16 թանք իւրեանց ։ Եւ ժողովեցին զնոսա ՚ի տեղի մի ,
17 որ կոչի Եբրայեցերէն՝ Արմագեդոն ։ Եւ եօթներ-
րորդ հրեշտակն եհեղ ՚ի սկաւառակէ իւրմէ ՚ի վե-
րայ օդոյ . և ել ձայն մեծ յերկնից և յաթոռոյն
18 ասելով , եղեւ ։ Եւ եղեն փայլատակմունք և ձայնք
և որոտմունք . և եղեւ շարժուածն մեծ , որպիսի չէր
եղեալ ՚ի սկզբանէ յորմէ հետէ եղեւ մարդ ՚ի վե-
19 րայ երկրի այնպիսի շարժուածն մեծ ։ Եւ եղեւ քա-
ղաքն մեծ յերիս մասն , և քաղաքք ազգացն ան-
կան . և Բաբելոն մեծ յիշեցաւ առաջի Աստու-
ծոյ , տալ նմա զբաժակն գինւոյ ցասման բարկու-
20 թեան նորա ։ Եւ ամենայն կղզիք փախեան , և
21 լերինք ՚ի միջոյ բարձան ։ Եւ կարկուտ մեծ իբրեւ
կշիռ տաղանդոյ մերկ իջանէր յերկնից ՚ի վերայ
մարդկան . և հայհոյեցին մարդիկ զԱստուած յեր-
կինս վասն հարուածոյ կարկտին , զի մեծ էր հա-
րուածն և սաստիկ ։

Գլ. ԺԶ

1 Եւ ելն մի ՚ի ման յեօթն հրեշտակացն՝ որք ունէին
զեօթն սկաւառակսն , խօսեցաւ ընդ իս և ասէ ,

* Ի Յովն. Ա՛։ ։

եկ այր, և ցուցից քեզ զդատաստանս մեծ պոռնը-
2 կին՝ որ նստի ի վերայ ջուրց բազմաց ։ Ընդ որում
պոռնկեցան թագաւորք երկրի , և արբեցան բնա-
կիչք երկրի ի գինւոյ արբեցութեան պոռնկութեան
3 նորա ։ Եւ առ , տարաւ զիս յանապատ հոգւովն.
և տեսի կին մի զի նստեր ի վերայ կարմիր գազա-
նի , և լի էր անուամբ հայհոյութեան . և գազանն
զոր տեսի՝ ունէր գլուխս եօթն և եղջիւրս տասն ։
4 Եւ կինն զգեցեալ էր ծիրանիս և կարմիրս , և
զարդարեալ ոսկւով և մարգարտով և ակամբք
պատուականօք , ունելով բաժակ ոսկի ի ձեռին
իւրում՝ , և լի էր գարշելի և անմաքուր պոռնկու-
5 թեամբ ։ Եւ ի ճակատն նորա գրեալ * անուն՝
խորհրդով.՝՝ Մեծն Բաբելոն՝ մայր պոռնկաց և
6 գարշելեաց երկրի ։ Եւ տեսի զկինն արբեցեալ յա-
րենէ սրբոց և յարենէ † ամենայն վկայիցն .՝՝ և
7 զարմացայ՝ տեսեալ զնա՝ զարմացումն մեծ ։ Եւ ա-
սէ ցիս հրեշտակն , Ընդէ՞ր զարմացար , եա՛ ասա-
ցից քեզ զխորհուրդս կնոջն, և զգազանին որ բար-
ձեալ ունի զնա . որ ունի զեօթն գլուխն և զտասն
8 եղջիւր ։ Եւ գազանդ զոր տեսեր , որ էր և § չէր ,
և հանդերձեալ է ելանել ի գԱբեղոյ՝ և ի կորուստ
երթալ . և ‡ զարմացան ամենեքեան որ՝՝ բնակեալ
են ի վերայ երկրի , որոց ոչ էր գրեալ անուանք
նոցա ի գիր կենաց ի սկզբանէ աշխարհի , ‖ զոր
տեսանելիր՝՝ զգազանն զի էր և չէ , և մերձ է ։

* Ց՚ննն՝ անուն՝ խորհուրդ ,
† Ց՚ննն՝ վկայիցն Յիսուսի .
§ Ց՚ննն՝ չէ,
‡ Ց՚ննն՝ զարմացին որք
‖ Ց՚ննն՝ տեսեալ

9 *Աստ է իմաստութիւն՝ որ ունի միտս .՝՝ և եօթն
գլուխն եօթն լերինք են , ուր կինն նստեալ էր ի
վերայ նոցա . և նոքին թագաւորք են եօթն , և
10 թագաւորք եօթն գոլով , չինդն անկան , և մինն
եկաց , և մինն ոչ է եկեալ . և յորժամ գայ՝ սա-
11 կաւիկ մի ժամանակ ունի ։ Եւ գազանն որ էր և
չէ , և նա ութերորդ է . և է յեօթանց անտի ,
12 և ի կորուստ երթալոց է ։ Եւ տասն եղջիւրն զոր
տեսեր՝ տասն թագաւորք են , որոց չեւ եւս է ա-
ռեալ զթագաւորութիւն , այլ † առնուն և կան
իշխանք ի մի ժամ. և՝՝ առնուն նորա զիշխանու-
13 թիւն ընդ գազանին ։ Սոքա մի կամս ունին , և
14 զզօրութիւն և զիշխանութիւն գազանին տան ։ Եւ
ընդ Գառնին պատերազմին , և Գառնն յաղթէ
նոցա . զի Տէր է § նոցա և Թագաւոր թագաւո-
րաց , ‡ և որք ընդ նմա կոչեցեալք են , ընտրեալք
15 և հաւատացեալք ։՝՝ Եւ ասաց ցիս , Եւ զջուրն
զոր տեսեր՝ ուր նստէր պոռնիկն , ժողովուրդք են
16 և բազմութիւնք և ազգք և լեզուք ։ Եւ տասն եղ-
ջիւրքն զոր տեսեր ‖ գազանին , նոքա տեսցեն զպոռ-
նիկն և առեսցեն զնա ,՝՝ և զմարմին նորա կերի-
17 ցեն և այրեսցեն զնա հրով ։ Քանզի Աստուած եդ
ի սիրտս նոցա առ ի լինել նոցա մի կամս , և

* Ց՚ննն՝ Ահա միտք որոյ է իմաստութիւն .
† Ց՚ննն՝ իբրեւ զթագաւորս զմի ժամ
§ Ց՚ննն՝ տէրանց ‡ Ց՚ննն՝ և որք են ընդ նմա,
կոչեցեալք, ընտրեալք և հաւատարիմք են ։
‖ Ց՚ննն՝ ի վերայ գազանին , նոքա տեսցեն զպոռ-
նիկն և ամայի արասցեն զնա և մերկ ,

տալ զթագաւորութիւն գաղանին մինչեւ կատա-
18 րեսցի բանն Աստուծոյ : Եւ կինն զոր տեսեր՝ է
քաղաքն մեծ , որ ունի զթագաւորութիւն ՚ի վե-
րայ թագաւորութեանց երկրի :

ԳԼ. ԺԸ

1 Եւ յետ այսորիկ տեսի այլ հրեշտակ իջեալ
յերկնից՝ որ ունէր իշխանութիւն մեծ , և երկիր
2 լուսաւորեցաւ ՚ի փառաց նորա : Եւ աղաղակեաց
՚ի ձայն մեծ՝ ասելով , Անկաւ Բաբելոն մեծն , *որ
եղեալ էր՚՚ բնակութիւն դիւաց և արգել ամենայն
այսոց պղծոց , և բանտ պահպանութեան ամենայն
3 ոգւոց անսրբոց և առեցելոց : Վասն զի ՚ի բարկու-
թենէ գինւոյ պոռնկութեան նորա արբին ամենայն
ազգք և թագաւորք երկրի՝ որ ընդ նմա պոռնկե-
ցան . և վաճառականք երկրի ՚ի նորա զօրութեանն
4 յօրանալոյ մեծացան : Եւ լուայ ձայն յերկնից՝ զի
ասէր , Ելէք ՚ի միջոյ դորա , ժողովուրդ իմ , զի մի՛
հաղորդ լիցիք մեղաց դորա , և մի՛ զհարուածս դո-
5 րա ընդունիցիք . Զի հասին՝ կցեցան մեղք դորա
մինչեւ յերկինս . և յիշեաց Աստուած զանիրաւու-
6 թիւնս դորա : Եւ †հատուցանէ դմա՝ որպէս և
հատոյցն մեզ . և §տուք դա՚՚ երկպատիկ ըստ գոր-
ծոց իւրոց . և զբաժակն որով խառնեացն՝ խառ-
7 նեցէք դմա կրկին : Եւ որչափ փառաւորեաց զինքն
և խայտաց , այնչափ հատուցէք դմա ‡ տուք . զի ՚ի

* Ցայլս՝ և եղեւ † Ցայլս՝ հատուցէք
§ Ցայլս՝ հատուցէք դմա ‡ Ցայլս՝ տանջանս և տուք .

օրտի իւրում՝ ասէր թէ ՅամենայնՅ ժամ՝ նստայց
8 ես թագուհի , և այրի ոչ եւս եղէց : Վասն այնո-
րիկ ՚ի միում աւուր եկեսցեն ՚ի վերայ դորա հա-
րուածք՝ մահ և սուգ և սով , և ՚ի հուր այրեսցի .
զի հզօր է Տէր ԱստուածՅ՝ որ դատեցաւն զդա :
9 Եւ լայցեն և կոծեսցեն ՚ի վերայ դորա թագաւորք
երկրի , որք ընդ դմա պոռնկեցան և խաղացին . և
հեծեսցեն՝ յորժամ տեսցեն ծխոյ կիզման տան-
10 ջանաց դորա , ի հեռաստանէ կայցեն վասն երկիւ-
ղի տանջանաց դորա և ասասցեն , Վայ քաղաքիդ
մեծի Բաբելոնի , քաղաք հզօր , զի ՚ի միում ժա-
11 մու եկին հասին դատաստանք քո : Եւ վաճառա-
կանք երկրի ողբասցեն և սգասցեն ՚ի վերայ *քո ,
12 զի զբեռն նոցա ոչ ոք գնէ : †Եւ շահք որ ի քէն՝
ոչ եւս իցեն ,՚՚ ոսկւոյ և արծաթոյ և ականց պա-
տուականաց և մարգարտոյ և բեհեզոյ և ծիրա-
նւոյ և ոսկեթելի և որդան , և ամենայն փայտ
խնկոյ և ամենայն անօթ փղոսկրեայ և ամենայն ա-
նօթ ՚ի փայտէ պատուականէ և ՚ի պղնձոյ յերկա-
13 թոյ և ՚ի կճոյ , Եւ կինամոմն և ամենայն խունկ
և իւղ և կնդրուկ և գինի և ձէթ և նաշիհ և ցո-
րեան , և §ստացուածք ամենայն ,՚՚ արջառ և ոչխար .
և երիվարաց և կառաց ‡ որ վայել է մարմնոյ՚՚ և
14 ոգւոց մարդկան : Եւ ամենայն ցանկութիւն ան-
ձին քո գնաց ՚ի քէն , և ամենայն լուսափայլ վա-
յելչութիւնն §, պարարան և գերն և սպիտակն՚՚
15 գնաց ՚ի քէն , և ոչ եւս գտցես զայդ : Եւ ամե-

* Ցայլս՝ նորա , † Ցայլս՝ լբեռն § Ի Ցայլսն վր .
‡ Ցայլս՝ և մարմնոյ

նայն շահավաճառք այսոքիւք մեծացեալք՝ ի քէն
ի բաց կացցեն վասն երկիւղի տանջանաց քոյ՝ լա-
16 լով և սուգ առնելով. Եւ ասացեն, Վա՛յ, վա՛յ,
քաղաք մեծ, որ զգեցեալ էիր բիսեղս և ծիրա-
նիս և որգան, և ոսկեզօծս և քարինս պատուա-
17 կանս և մարգարիտս. Զի ի միում ժամու պակա-
սեցաւ այսչափ մեծութիւն քո. և ամենայն նա-
ւավար և ամենայն որ ի տեղիս տեղիս նաւեն, և
նաւազք և որք միանգամ ուռկանաւ գործեն՝ ի
18 հեռաստանէ կայցեն *լալով, Եւ աղաղակեսցեն՝
տեսանելով զծուխ կիզման նորա, ասելով, Ո՞
19 նման է քաղաքիս այսմիկ մեծի: Եւ արկցեն հող
ի վերայ գլխոց իւրեանց, և գուժալով ձայնիւ մե-
ծաւ՝ լալով և սգալով ասասցեն, Վա՛յ, վա՛յ,
քաղաք մեծ, †որով ամենեքեան մեծանային՝ որք
ունէաք զնաւս ի ծովս վասն պատուականութեան
քո, զի ի միում ժամու ապականեալ կործանե-
20 ցար։" Ուրախ լերուք ի վերայ նորա, երկինք և
սուրբ առաքեալք և մարգարէք, զի դատեցաւ
21 Աստուած զդատաստան ձեր ի դմանէ: Եւ առ
հրեշտակն հզօր՝ քար մի իբրեւ զերկան մեծ, և
ընկէց ի ծով ասելով, Այսպէս յարձակմամբ անկ-
ցի Բաբելոնն քաղաք մեծ, և այլ ոչ եւս գտցի:
22 Եւ ձայն քնարերգաց և երաժշտականաց, §արուես-

* Ի Յ—ՒԷ ԼԲ:

† Յոյն՝ յորում մեծացան ամենեքին որ ունէին նաւս ի ծովս վասն պատուականութեան նորա, զի ի միում ժամու աւերեցաւ:

§ Յոյն՝ սրնգահարաց

տականաց և փողահարաց *և թմբկի՛" այլ ոչ եւս
23 լսեցի ի քէզ†. Եւ լոյս ճրագի և ձայն երկանի
այլ ոչ եւս երեւեսցի ի քէզ, և ձայն փեսայի և
ձայն հարսին այլ ոչ եւս լսեցի ի քէզ. և ոչ
վաճառականք քո՝ փառաւորք և մեծամեծ երկրի,
որ զընաբճացեալ էին ի քէզ, վասն զի կախար-
դութեամբ դեղատուութեան քո մոլորեցան ամե-
24 նայն ազգք: Եւ ի քէզ ամենայն արիւն մարգա-
րէից և սրբոց գտաւ, և ամենայն դրելոց յերկրին
կենդանեաց:

Գլ. ԺԹ

1 Եւ յետ այնորիկ լուայ ձայն մեծ բազմութեան
յերկինս ասելով, Ալէլուիա, փրկութիւն և փառք
2 և պատիւ և զօրութիւն Աստուծոյ մերում. Զի
ճշմարիտ և արդար են դատաստանք նորա. զի դա-
տեաց զպոռնիկն մեծ §՝ի պոռնկութեան իւրում՝
և խնդրեաց զվրէժ արեան ծառայից իւրոց՝ ի ձե-
3 ռաց նորա: Եւ կրկին անգամ *օրհնեցին և՛" ա-
սացին, Ալէլուիա. և ծուխ նորա ելանէր յաւի-
4 տեանս յաւիտենից. Եւ անկան քսան և չորք երի-
ցունքն և չորք կենդանիքն, և երկիրպագին Աս-
տուծոյ՝ որ նստէրն յաթոռ *փառաց, ասելով,
5 Ամէն, Ալէլուիա: Եւ ձայն յաթոռոյն ելանէր՝

* Ի Յ—ՒԷ ԼԲ:

† Յոյն յ—Ի—, և ամենայն արուեստագէտ ամե-
նայն արուեստի մի՛ եւս գտցի ի քէզ.

§ Յոյն՝ որ ապականեաց զերկիր՝ ի պոռնկութեան

ասելով, Օրհնեցէք զԱստուած մեր ամենայն ծա-
ռայք նորա, և որք երկնչիք ի նմանէ՝ փոքունք և
6 մեծամեծք։ Եւ լուայ ձայն բազմութեան մեծի՝
իբրեւ զձայն ջուրց բազմաց, և իբրեւ զձայն հզօր
որոտման, ասելով *Դարձեալ, Ալէլուիա, վասն
զի թագաւորեաց Տէր Աստուած մեր Ամենակալ։
7 Խնդամք և ցնծամք և տամք փառս նմա, զի եկն
հարսանիք Գառնին, և կինն՝ *հարսն նորա պատ-
8 բաստեաց զինքն։ Եւ տուաւ նմա զգենուլ բեհեզս
սպիտակս սուրբս և լուսափայլս. որ է բեհեզն ար-
9 դարութիւն սրբոցն։ Եւ *մի յերիցանցն՝՝ ասէր
ցիս, Գրեա *զայդ, Երանելիք են ամենեքեան՝ որ
10 կոչեցեալ են յընթրիս հարսանեաց Գառնինն†։ Եւ
ես §անկեալ առաջի ոտից նորա, երկիրպագի՝՝ նմա։
Եւ ասէ ցիս, ‖Ասա, մի՛ անկանիր առաջի իմ,
քանզի և ես՝՝ ծառայակից քո եմ և եղբարց քոց
որք ունին զվկայութիւնն Ցիսուսի *Քրիստոսի.
Տեառն՝՝ Աստուծոյ *միայն երկրպագեա. քանզի
**հաստատութեամբ Ցիսուսի է տեսիլդ և հոգի մար-
գարէութեանդ, զի վկայութիւն Ցիսուսի է հո-
գւովն Սրբով՝ որ ի մարգարէսն էր։՝՝
11 Եւ տեսի զերկինսն բացեալ և ահա ձի սպիտակ,

* Ի ՑԱՅԼՆ ԷՒ։
† ՑԱՅՆ ՅԱՒԵԼՈՒ, և ասէ ցիս, Ահա բանք ճշմարիտք
են Աստուծոյ։
§ ՑԱՅՆ՝ անկայ . . . երկիր պագանել։
‖ ՑԱՅՆ՝ Տես, մի՛.
** ՑԱՅՆ՝ վկայութիւնն Ցիսուսի է հոգին մարգարէ-
ութեան։

և որ հեծեալն էր ի նմա՝ Հաւատարիմ և ճշմա-
րիտ, և արդարութեամբ դատի և պատերազմի։
12 Եւ աչք նորա բոց հրոյ, և ի վերայ գլխոյ նորա
պսակս բազումս. և ունէր անուն գրեալ, զոր ոչ
13 ոք գիտէ՝ բայց միայն ինքն։ Եւ արկեալ զիւրեաւ
հանդերձ ներկեալ արեամբ. և կոչէր անուն նորա
14 Բան Աստուծոյ։ Եւ զօրավարք երկնից և զօրք եր-
կնից զհետ երթային նորա ձիովք սպիտակօք, զգե-
15 ցեալ բեհեզս սուրբս և սպիտակս։ Եւ ի բերանոյ
նորա ելանէր սուր սրեալ, զի նովաւ հարցէ զազգս.
և նա հովուեացէ զնոսա գաւազանաւ երկաթեաւ,
և նա կոխեացէ զհնձան գինւոյ բարկու-
16 թեան Աստուծոյ Ամենակալի։ Եւ ունէր ի վերայ
պատմուճանի իւրոյ և ի վերայ *անդամոյ իւրոյ՝՝
գիր գրեալ, ԹԱԳԱՒՈՐ ԹԱԳԱՒՈՐԱՑ ԵՒ ՏԷՐ
ՏԷՐԱՆՑ։
17 Եւ տեսի այլ հրեշտակ՝ որ կայր ի վերայ արե-
գական, զի աղաղակեաց ի ձայն մեծ ամենայն հա-
ւուրց թռուցելոց ընդ մէջ երկնից՝ ասելով, եկայք
18 ժողովեցարուք յընթրիս մեծին Աստուծոյ, եւ կե-
րիջիք զմարմինս թագաւորաց, †և զմարմինս հզո-
րաց, և զմարմինս երիվարաց և ամենայն հեծելոց
ի նոսա, և զմարմինս ազատաց և ծառայից մեծի
և փոքուն։
19 Եւ տեսի զգազանն և զթագաւորս երկրի և զզօրս
նոցա ժողովեալս՝ առնել պատերազմ ընդ այնմ որ
20 հեծեալն էր ի ձին սպիտակ՝ և ընդ զօրս նորա։ Եւ

* ՑԱՅՆ՝ ազդեր իւրոյ
† ՑԱՅՆ՝ և զմարմինս հազարապետաց և

ըմբռնեցաւ գազանն և որ ընդ նմա սուտ մարգարէն՝ որ առնէր զնշանսն առաջի նորա, *և զորս մոլորեցոյց և ետ առնուլ՝ զդրոշմ գազանին, և զերկրպագուսն պատկերի նորա. և կենդանւոյն արկին †զնոսա ի լիճ հրոյ այրեցելոյ ծծմբով։ 21 Եւ այլքն մեռան ի սրոյ հեծելոյն ի վերայ ձիոյն, որ ելանէր սուրն. և ամենայն թռչունք յագեցան ի մարմնոց նոցա։

ԳԼ. Ի

1 Եւ տեսի այլ հրեշտակ՝ զի իջանէր յերկնից, և ունէր զփականս դժոխոց և շղթայս մեծ ի ձեռին 2 իւրում. Եւ ըմբռնեաց զվիշապն՝ զօձն առաջին, որ է Բանսարկուն և Սատանայ, և կապեաց զնա 3 հազար ամ. Եւ արկ զնա յանդունդս դժոխոց, և փակեաց և կնքեաց զնա, զի այլ մի՛ եւս մոլորեցուսցէ զազգս, մինչեւ կատարեսցի հազար ամն. և յետ այնորիկ պարտ է լուծանել նմա սակաւ մի ժամանակ։

4 Եւ տեսի աթոռս, և նստան ի վերայ նոցա. և դատաստանութիւն տուաւ նոցա. §ընտրել զհոգիս չարչարելոցն վասն վկայութեանն Յիսուսի և վասն բանին Աստուծոյ, և զորս ոչ երկրպագին գազանին, և ոչ առին զդրոշմ նորա ի ճակատս իւրեանց և ոչ ի վերայ աջոյ ձեռին իւրեանց. և կացին և թագաւորեցին ընդ Քրիստոսի հազար ամ։

* Յ՟ԺԱ՟՝ որովք մոլորեցոյց զորս առին
† Յ՟ԺԱ՟՝ զվերկոսին զնոսա § Յ՟ԺԱ՟՝ նաեւ

5 Եւ *յետ այսորիկ ի մեռելոց ոչ ոք եկաց,՚՚ մինչեւ 6 կատարել հազար ամին. սյս է յարութիւն առաջին։ †Երանի սրբոցն, որք ունին՚՚ բաժին ի յարութեանն առաջնում. ի վերայ սոցա երկրորդ մահն ոչ ունի իշխանութիւն. այլ եղիցին քահանայք Աստուծոյ և Տեառն Յիսուսի Քրիստոսի, և թագաւորեսցեն ընդ նմա հազար ամ։

7 Եւ յետ հազար ամին ‡լուծցէ զԱտանայ և հանցէ ի բանտէ անտի.՚՚ եւ ելցէ և մոլորեցուսցէ զազգս աւենայն ընդ չորս կողմանս երկրի, և զԳոգ և զՄագոգ §առցէ ի ձեռս՚՚ ժողովել ‖նոքօք զամենայն զօրս՚՚ ի պատերազմ. որոյ թիւ նոցա իբրեւ զաւազ ծովու։ 8 Եւ ելեալն ի լայնութիւն երկրի, և պատեսցեն՚՚ շուրջ զբանակս սրբոցն և զքաղաքին սիրելւոյ։ Եւ ††իջցէ հուր յերկնից առ ի Աստուծոյ՝ և կերիցէ զնոսա և զզօրագլուխն նոցա զԱտանայ՝ որ մոլորեցոյց զնոսա. և արկցէ՚՚ զնոսա ի ծովն հրոյ և ծծմբոյ, ուր էր գազանն՝ և 10 սուտ մարգարէն. և չարչարեսցին զտիւս և զդիշերս §§։

11 Եւ տեսի աթոռ սպիտակ մեծ, և ի վերայ նորա նստեալ՝ յորոյ երեսացն երկնչէին և փախչէին երկինք և երկիր, և տեղի ոչ գտաւ նոցա։ 12 Եւ տեսի զմեռեալսն մեծամեծս և զփոքրուկսն, որ կային առա-

* Յ՟ԺԱ՟՝ այլք ի մեռելոց ոչ եկեցին,
† Յ՟ԺԱ՟՝ Երանելի և սուրբ է, որ ունի
‡ Յ՟ԺԱ՟՝ լուծցի սատանայ ի բանտէ իւրմէ. և
§ Ի Յ՟ՒՆ՟Ի ՀՖ։ ‖ Յ՟ԺԱ՟՝ զնոսա
* Յ՟ԺԱ՟՝ ելին . . . պատեցին
†† Յ՟ԺԱ՟՝ ՀՂ . . . եկեր . . . Էարկ
§§ Յ՟ԺԱ՟ յաւելու, յաւիտեանս յաւիտենից։

ջի աթոռոյն . և գրեանք բանայիւն , և այլ դիրք
բացաւ կենաց . և դատեցան մեռեալք ՚ի գրելոցն
13 ըստ գործոց իւրեանց ։ Եւ ետ ծով զմեռեալս իւր ,
և մահ և դժոխք զիւրեանց մեռեալս . և դատե-
14 ցան իւրաքանչիւր ըստ գործոց իւրեանց ։ Մահ և
դժոխք մտանեցան ՚ի լիճ հրոյն . այս է մահն եր-
15 կրորդ ։ Եւ որ ոչ ոք գտաւ ՚ի դիրն կենաց գրեալ՝
արկաւ ՚ի լիճ հրոյն ։

Գլ· ԻԱ.

1 Եւ տեսի երկին նոր և երկիր նոր . քանզի առա-
2 ջինն երկինք և երկիր էանց . և ծով ոչ դոյր ։ Եւ
զքաղաքն սուրբ տնորն երուսաղէմ տեսի՝ զի իջա-
նէր յԱստուծոյ և յերկնից , զարդարեալ և պատ-
3 րաստեալ որպէս հարսն առն իւրոյ ։ Եւ լուայ ձայն
յերկնից՝ որ ասէր , Ահաւասիկ խորանն Աստուծոյ
՚ի մէջ մարդկան , և բնակեսցէ ընդ նոսա . և նոքա
4 ժողովուրդ նմա . և սա Աստուած *նոցա ։ Եւ ջնջե-
ջեսցէ զամենայն արտօսր յաչաց նոցա . և մահ ոչ
եւս †դոյ , ոչ սուգ և ոչ աղաղակ , ոչ ցաւք §և
ոչ աշխատանք՚՚ ոչ եւս ‖դոյ , զի առաջինն էանց ։
5 Եւ ասաց ցիս որ նստէր ՚ի վերայ աթոռոյն , Ահա-
ւասիկ առնեմ զամենայն նոր . և ասէ ցիս , Գրեա ,
6 այս բանք ճշմարիտ են և հաւատարիմք ։ Եւ ասէ
ցիս , Եղէ՛ ես Ալիփա և Ովմեգա , Սկիզբն և կատարած .
ես ծարաւելոցն տամ յաղբերէ ջրոյ կենաց ձրի ։
7 Որ յաղթէ , ժառանգեսցէ զայս ամենայն . և ես

* Ց՚՚՚՝ ընդ նոսա , Աստուած նոցա ։
† Ց՚՚՚՝ լցէ , § Ի Ց՚՚՚՝ չէ ։ ‖ Ց՚՚՚՝ լցեն,

եղէց *նոցա Աստուած , և նոքա եղիցին ինձ որ-
8 դիք ։՚՚ Եւ †ծուլացն և անհաւատից՝ §պաղնողաց և
պոռնկաց՝ և կախարդաց և կռապաշտից՝ ‖և գե-
ղատուաց՚՚, և ամենայն ստոց՝ ‖ամբարշտաց , որոց՚՚
բաժինն իւրեանց ՚ի լճին այրեցելոյ հրով և ծծմբ
բով , որ է մահն երկրորդ ։
9 Եւ եկն առ իս մի յեօթն հրեշտակացն , որք ու-
նէին զեօթն սկաւառակսն լցեալս եօթն ‡վախճա-
նաւ կատարածովք՚՚, խօսեցաւ ընդ իս և ասէ , Եկ՛
10 ցուցից քեզ զՀարսնն ‖և զկին Գառինն ։ Եւ առ
տարաւ զիս ՚ի լեառն մի բարձր և մեծ՝ հոգւովն ,
և եցոյց ինձ զքաղաքն մեծ և սուրբ՝ երուսաղէմ .
11 զի իջեալ էր յերկնից առ ՚ի յԱստուծոյ . Եւ ու-
նէր զփառս Աստուծոյ . և էր ՚ի նմա լուսաւորու-
թիւն նմանեալ ականց պատուականաց՝ քար յաս-
12 պիս սառնատեսակ ‖և կենդանի՚՚ ։ Եւ էին պարիսպք
նորա մեծ և բարձր , և ունէր դրունս երկոտասան .
և ††յերկոտասան դրունսն՚՚ երկոտասան հրեշտակս ,
և անուանք §§իւրաքանչիւրոցն ՚ի վերայ դրանցն
գրեալ էին՚՚ ըստ երկոտասան ցեղից Իսրայելի ։
13 Յարեւելից կողմանէ դրունք երեք , և ՚ի հիւսիսոյ
կողմանէ դրունք երեք , և ՚ի հարաւոյ կողմանէ
դրունք երեք , և յարեւմտից կողմանէ դրունք երեք ։

* Ց՚՚՚՝ նմա Աստուած և նա եղիցի ինձ որդի ։
† Ց՚՚՚՝ երկչոտաց
§ Ց՚՚՚՝ և պղծոց և սպանողաց ‖ Ի Ց՚՚՚՝ չէ ։
‡ Ց՚՚՚՝ հարուածովք վերջնովք
†† Ց՚՚՚՝ ՚ի վերայ դրանցն
§§ Ց՚՚՚՝ գրեալք ՚ի վերայ՝

14 Եւ պարիսպ քաղաքին ունէր հիմունս երկոտասան, և ի նոսա երկոտասան անուանք երկոտասան առա-
15 քելոց Գառնին։ Եւ որ խօսէրն ընդ իս, ունէր եղեգն ոսկի ի ձեռին իւրում՝ զի չափեսցէ զքաղաք-
16 քըն և զդրունս նորա և զպարիսպս նորա։ Եւ էր քաղաքն քառակուսի, և որչափ երկայնութիւն նորա՝ նոյնչափ և լայնութիւն *և բարձրութիւն
17 հաւասար, և էր չափ երկայնութեան նորա երկոտասան հազար ասպարէզս. և լայնութիւն նորա և բարձրութիւն միաչափ կիւլօս։" Եւ չափեաց զպա-
18 րիսպն նորա հարիւր և քառասուն և չորս †ասպարէզս. չափ մարդոյ՝ որ է հրեշտակի։ Եւ էր շի-
19 նուած պարսպաց քաղաքին յասպիս. և քաղաքն էր ոսկի մաքուր՝ նման սուրբ և սպիտակ ապակւոյ։
Եւ հիմունք §քաղաքին յամենայն ականց պատուա-
կանաց‖. հիմն առաջին ‡պարսպին յասպիս, երկ-
րորդն շափիղա, երրորդն պղնձագոյն, չորրորդն
20 զմրուխտ, հինգերորդն եղեգնաքար, վեցերորդն սարդիոն, եօթներորդն ոսկեքար, ութերորդն բիւ-
րեղ, իններորդն տպազիոն, տասներորդն քրիսոպ-
րասոս, մետասանն յակինթ, երկոտասանն ամե-
21 թիստ։ Եւ էին երկոտասան դրունք յերկոտասան մարգարտաց՝ ‡միաձեւ. և իւրաքանչիւրոյն

* Յ՚՚՚՝ և չափեաց զքաղաքն եղեգամբ ասպարէզս երկոտասան հազար. երկայնութիւն և լայնութիւն և բարձրութիւն նորա հաւասար էին։
† Յ՚՚՚՝ կանգուն. § Յ՚՚՚՝ պարսպաց քաղաքին
‖ Յ՚՚՚ յա-ե-ը-, զարդարեալք. ‡ Ի Յ՚՚՚ն չէ։

դրունքն էին մի մի դուռն՝ ի միոյ միոյ մարգարտէ. և ընդարձակութիւն քաղաքին ոսկի մաքուր՝ որպէս
22 ապակի պայծառ։ Եւ տաճար ոչ տեսի ի նմա, քանզի Տէր Աստուած Ամենակալ տաճար էր ի
23 նմա և Գառնն։ Եւ քաղաքին չէին պէտք արեգական և լուսնի, զի լուսաւորեացն զնա. քանզի փառքն Աստուծոյ լուսաւորէին զնա Յամենայն
24 ժամ՝ և ճրագ ի նմա՝ Գառնն։ Եւ գնայցին հեթա-
նոսք ի լոյս նորա. և թագաւորք երկրի *լուսա-
25 զգեաց լինէին ի փառաց նորա։" Եւ դրունք նորա ոչ †փակեին ի տուէ և ի գիշերի, այլ բաց կա-
յին հանապազորդ. և գիշեր ոչ եւս լինէր ի նմա.
26 Այլ փառք և պատիւ ազգաց։" (27) Եւ ոչ մտցէ անդ ամենայն §չարակամ՝ և պիղծ և ստութիւն,
բայց միայն որ գրեալ են ի գլխոյ կենաց Գառնին։

ԳԼ· ԻԲ

1 Եւ եցոյց ինձ մաքուր գետ կենդանի ջրոյ սառ-
նատեսակ, որ ելանէր յաթոռոյն Աստուծոյ և Գա-
2 առնին։ Եւ գնայր ի մէջ հրապարակաց ‖քաղաքին. և ըզերեք պտուղս երկոտասան. ըստ միոյ միոյ ամսոյ տային զպտուղս իւրեանց. և տերեւ ծառոյն էր

* Յ՚՚՚՝ զփառս և զպատիւ իւրեանց բերցեն առնա-
† Յ՚՚՚՝ փակեսցին ի տուէ, զի գիշեր ոչ երթիցի անդ.
եւ բերցեն զփառս և զպատիւ ազգաց առ նա։
§ Յ՚՚՚՝ խառնակ ‖ Ի Յ՚՚՚ն չէ։

3 բժշկութիւն հեթանոսաց ։ Եւ նզովք անդ ոչ եւս
էին . և աթոռն Աստուծոյ և գառին նորա էր ի
4 նմա , և ծառայք նորա *պաշտեին զնա . Եւ *տե-
սանէին զերեսս նորա . և անուն նորա գրեալ *էր
5 ի ճակատս նոցա ։ Եւ գիշեր ոչ անդ՝ և չէր ինչ
անդ պէտք ճրագի և լուսոյ արեգական , վասն զի
Տէր Աստուած *լուսաւորէր՝՝ զնոսա . և թագաւո-
րեսցեն յաւիտեանս յաւիտենից ։

6 Եւ ասէ ցիս , Ա.յս բանք հաւատարիմ են և ճշմ-
մարիտ . և Տէր Աստուած մարգարէից սրբոց ա-
ռաքեաց զհրեշտակ իւր՝ †ծառայիդ իւրում՝՝ ցուցա-
7 նել՝ զոր լինելոց է վաղվաղակի ։ Ա.հա գամ վաղվա-
զակի . երանի որ պահէ զբան § մարգարէութեանս
զայս ։՝՝

8 Եւ ես Յովհաննէս լուայ և տեսի զայս ամենայն .
և յորժամ լուայ և տեսի , անկայ և երկիրպագի
9 հրեշտակին՝ որ ցուցանէր ինձ զայս ամենայն ։ Եւ
ասէ ցիս , ‖ Մի՛ անկաներիր առաջի իմ և երկիրպա-
գաներ .՝՝ քանզի և ես ծառայակից քո եմ և եղ-
բարց քոց՝ որ պահեսցեն զբան մարգարէութեան
10 գրոյս այսորիկ . Աստուծոյ երկիրպագ ։ Եւ ասէ
ցիս դարձեալ , Մի՛ կնքեր զբանս մարգարէական
11 գրոյս այսորիկ , քանզի ժամանակս մերձ է ։ Որ
ամպարշտեսցի՝ ամպարշտեսցի , և որ աղտեղա-
նալոցն է՝ աղտեղասցի , և որ արդարանալոցն է՝
12 արդարասցի , և որ սրբելոցն է՝ սրբեսցի ։ Ա.հա գամ

* Յ՚՚՚՚՝ պաշտեսցեն . . . տեսցեն . . . եղիցի . . .
լուսաւորեսցէ
† Յ՚՚՚՚՝ ծառայից իւրոց
§ Յ՚՚՚՚՝ զբանս մարգարէութեան մատենիս այսորիկ։
‖ Յ՚՚՚՚՝ Տես , մի՛ .

վաղվաղակի , և վարձք իմ ընդ իս՝ հատուցանել
13 իւրաքանչիւր ըստ գործոց իւրեանց ։ Ես եմ Ալփա
և Ովմ՝ սկիզբն և կատարած , առաջինն և վերջինն ։
14 Երանելիք են՝ որ պահեն զպատուիրանս նորա . նո-
քա ունին իշխանութիւն *ուտել ի փայտէն՝՝ կեա-
15 նաց՝ և մտանել ընդ դրունս քաղաքին ։ Ա.յլ †ելե-
ցեն արտաքս շունք և դեղատուք §և պոռնկք և
կռապաշտք , և ամենեքեան որ սիրեն ‖զպատրանս ։
16 Ես Յիսուս առաքեցի զհրեշտակ իմ վկայել զայս
ձեզ եկեղեցեացդ . ես արմատ և սեռ՝ ի Դաւթեայ ,
17 և աստղ պայծառ առաւօտին ։ *Եւ Հոգի , և փե-
սայն՝ որ գալոցն եմ . և որ լսէ՝ ասելով թէ Ե՛կ ,
և որ ծարաւի իցէ՝ եկեսցէ , և որ ոք կամի առ-
նուլ զկեանս ի բաց ։՝՝
18 Վկայեմ և ես ամենայնի որ լսէ զբանս մարգա-
բէութեան գրոյս այսորիկ . Թէ ոք յաւելցէ ՚ի
սա , յաւելցէ Աստուած ՚ի վերայ նորա †զեօթն
19 հարուածսն գրեալս ՚ի գիրս յայս ։ Եւ եթէ ոք
պակասեցուսցէ ՚ի բանից մարգարէութեան գրոյս
այսորիկ՝ պակասեցուսցէ և հատցէ Աստուած զբա-
ժին նորա ՚ի ծառէն կենաց և ՚ի քաղաքէն ††սրբոց՝

* Յ՚՚՚՚՝ ՚ի վերայ փայտին
† Ի Յ՚՚՚՚՝ ՚ի ։
§ Յ՚՚՚՚՝ և պոռնիկք և
‖ Յ՚՚՚՚՝ և առնեն զպատրութիւն ։
‡ Յ՚՚՚՚՝ Եւ Հոգի և Հարսն ասեն , Եկ . և որ լսէն՝
ասասցէ , Ե՛կ . և որ ծարաւի իցէ՝ եկեսցէ , և որ
կամիցէնն՝ առցէ զկեանս ի բաց ։
†† Յ՚՚՚՚՝ սրբոց , և ՚ի գրելոցն ՚ի մատենիս յայսմիկ ։

20 որ գրեալ է ՚ի գիրս յայս ։՚՚ Ասաց որ վկայեացն զայս , Գամ ես վաղվաղակի ։ Ամէն , Եկ , Տէր Յի-
21 սուս Քրիստոս ։ Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ՚ի վերայ ամենայն սրբոց ։ Ամէն ։

ՎԱԽՃԱՆ

ՆՈՐՈՑ ԿՏԱԿԱՐԱՆԻ



1295

53

999

37

1295
Ազգային գրադարան
NL0028391
1295

